
ԱՒԱԲԵԼ ԴԱՒԻԹԵԱՆ

ԳԻՐՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ


ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

«МАТЕНАДАРАН»
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМ. МАШТОЦА
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР

АРАКЕЛ ДАВРИЖЕЦИ

КНИГА ИСТОРИИ

Сводный критический текст,
предисловие, комментарий
Л. А. ХАНЛАРЯН

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ԵՐԵՎԱՆ 1990

947.925

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՌԱՔԵԼ, ԴԱՎՐԻԺԵՑԻ

ԳԻՐՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

1960

Աշխատասիրությամբ
Լ. Ա. ԽԱՆԼԱՐՅԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1990

ԳՄԴ 63.3(2Հ)
Ա 706

Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր, բանաս. գիտ. դոկտոր Գ. Վ. Արզումյան

Գիրքը հրատարակության են նախապատրաստել գրախոսներ
պատմ. գիտ. թեկնածու Լ. Գ. Դանեղյանը և
փիլ. գիտ. դոկտոր Հ. Ղ. Միրզոյանը

Առաքել Դաւրիժեցի

Ա 706 *Գիրք պատմութեանց /Աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի; [Պատ. խմբ.՝ Գ. Վ. Աբգարյան]; Մատենադարան—ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մաշտոցի անվ. հին ձեռագրերի ին-տ.—Եր.: ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1990.—596 էջ, 1 թ. նկ.*

Առաջին անգամ գիտական հասարակայնությանն է ներկայացվում հայ ականավոր պատմագիրներից մեկի՝ Առաքել Դավրիժեցու (XVII դ.) «Գիրք պատմութեանցի» գիտահամեմատական բնագիրը: Առաքել Դավրիժեցու երկը հարուստ աղբյուր է ոչ միայն հայ ժողովրդի և Հայաստանի, այլև հայկական գաղթօջախների, ինչպես նաև Հայաստանի հարևան երկրների՝ Վրաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի, Իրանի պատմության:

Ա $\frac{0505040000}{703(02)—90}$ *101—88*

ԳՄԴ 63.3(2Հ)

© Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն, 1990

Ս. ՌԱՋԱՐԱՆ

XV դ. վերջերին և XVI դ. սկզբներին Հայաստանը գտնվում էր Ասիայի երկու հզոր տերությունների՝ Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի տիրապետության տակ։ Երկու պետությունների նպատակները և նվաճողական քաղաքականության միտումները շատ կողմերով համընկնում էին. կարևոր տնտեսական ու ստրատեգիական դիրքերի նվաճում Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում, Անդրկովկասով, մասնավորապես Հայաստանի տարածքով, անցնող առևտրական ճանապարհների և ռազմաստրատեգիական հաղորդակցության ուղիների գրավում։ Համանման նպատակներն անխուսափելի էին դարձնում մրցակցությունն ու բախումը երկու տերությունների միջև։ Ամբողջ XVI դ. ընթացքում և XVII դ. սկզբին, ոչ մեծ ընդմիջումներով, նրանց միջև արյունահեղ պատերազմներ էին մղվում։ Անդրկովկասի հարուստ, ծաղկուն շրջանները դարձան պատերազմների ռազմադաշտ, պատերազմներ, որոնք անլուր արհավիրքներ բերեցին ժողովուրդներին, հատկապես՝ հայ ժողովրդին[1]։ Ողջ Հայաստանը ոտնատակ եղավ, ավերվեց ու կողոպտվեց։ Շատ քաղաքներում ու բնակավայրերում նվաճողները կազմակերպում էին համատարած ջարդեր։ Պատերազմական գործողությունների ընթացքում Իրանի ռազմական ուժերը գլխավորող շահ Աբբաս Ա-ն ծրագրեց իրագործել ստրատեգիական և տնտեսական նպատակներ հետապնդող հրեշավոր մի միտք։ Նա որոշեց կիրառել այսպես կոչված «այրած հողի» տակտիկան[2], այսինքն՝ ամայացնել ու անմարդաբնակ դարձնել Հայաստանի մի շարք շրջաններ, տեղահան անելով բնակչությանը, որպեսզի թուրքական զորքերը Հայաստան գալով երկիրը գտնեն ամայացած և մնան առանց սննդի, անասնակերի, օժանդակ աշխատուժի։ Շահ Աբբասը միաժամանակ ծրագրում էր իր երկրի մի քանի մարզեր բնակեցնել Հայաստանից գաղթեցված աշխատասեր ժողովրդով, հույս

---

[1] *Մասնագիտական գրականության մեջ ընդգծվում է, որ այդ պատերազմները և նրանց հաջորդած իրադարձությունները մեծագույն ժողովրդական աղետ էին Անդրկովկասի ողջ բնակչության և հատկապես հայերի համար (տե՛ս И. П. Петрушевский*, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—нач. XIX вв., Л., 1949, стр. 82; *М. С. Иванов*, Очерк истории Ирана, М., 1952, стр. 67. *Հ. Դ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հ. 1-ին, Հրովարտակներ, պ. 2-րդ, Երևան, 1959, Առաջարան, էջ 8; Լեո, Հայոց պատմություն, երկերի ժողովածու, հատոր 3-րդ, գիրք 1-ին, Երևան, 1969, էջ 241; «Հայ ժողովրդի պատմություն», հատոր 4-րդ, Երևան, 1972, էջ 98; Լ. Դ. Դանիելյան, Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի 17-րդ դարի պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1978, էջ 81—88*։

[2] *Այստեղ հայ պատմիչի հաղորդածը համընկնում է պարսկական աղբյուրների տվյալների հետ (տե՛ս Հ. Դ. Փափազյան, նշված աշխ., էջ 7—9; Լ. Դ. Դանիելյան, նշված աշխ., էջ 81—85; А. А. Рахмани*, „Тарих-и алам арай-и Аббаси" как источник по истории Азербайджана, Баку, 1960, стр. 101; *В. А. Байбуртян*, Армянская колония Новой Джульфы в XVII в., Ереван, 1969, стр. 10—12).

տածելով՝ հիմնականում հարուստ վաճառականների և հմուտ արհեստավորների, հողագործների միջոցով, նրանց ջանքերով ու կապիտալով՝ նպաստել Իրանի տնտեսական ու մշակութային վերելքին[3]։

Չնայած ավերիչ պատերազմներին ու պաղիին և դրանց հաջորդած սովին ու ավերմունքին, հայ ժողովուրդն իր մեջ ուժ գտավ մաքառելու օտար նվաճողների դեմ ու հետո՝ նաև վերականգնելու իսպառ քայքայված երկրի տնտեսությունը, պայքարելու տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի հետագա զարգացման համար։ Ազգային ու կրոնական հալածանքի պայմաններում ժողովուրդը կարողացավ պահպանել իր ինքնուրույնությունը, մայրենի լեզուն և ազգային մշակույթը։

Այս իրողությունն է արտացոլում Առաքել Դավրիժեցու պատմական երկը՝ «Գիրք պատմութեանցը», որն ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը 1602-ից մինչև 1662 թվականները։ Դրանից զատ հեղինակն անդրադառնում է այնպիսի իրադարձությունների, որոնք տեղի են ունեցել Հայաստանի աշխարհագրական ու նշված ժամանակագրական սահմաններից դուրս։ Այստեղ և լվովահայերի պայքարն է՝ ընդդեմ Հռոմի հավակնությունների, և նոր Ջուղայի բնակչության կյանքը, և տարերային աղետները Թավրիզում, Վանում ու Կոստանդնուպոլսում։ Մի քանի գլուխ նվիրված է օտար տիրակալների իշխանության տակ գտնվող վրաց ժողովրդի պատմությանը, Գևորգ Սաակաձեի գլխավորած ազատագրական պայքարին։ Կան նաև սրբազնանական ու հրեա ժողովուրդների պատմությանը վերաբերող գլուխներ։ XVII դ. մեծ տարածում գտած ժանրին՝ սուրբ վկաների վարքագրությանը հատկացված գլուխներում պատմվում է «աստվածային հրաշքների», սրբերի մասունքների և հավատուրացներին հասած պարմանահրաշ պատիժների մասին։ Դրքում տեղ է գտել նաև թանկարժեք քարերի ու նրանց հատկությունների նկարագրությունը։ Ընդարձակ գլուխներից մեկում պատմված է հայ ժողովրդի պատմության 561—1667 թթ. վերաբերող իրադարձությունների ժամանակագրությունը։ Ամփոփ աղյուսակների ձևով շարադրված գլուխներում և հատվածներում ներկայացված են օսմանյան կամ պարսից թագավորների սերնդաբանության կարևորագույն իրադարձությունների ժամանակագրությունը, հայ կաթողիկոսների ու փառաբանված վարդապետների ցանկը և այլ նյութեր։

Գլուխներից մի քանիսը Առաքել Դավրիժեցին քաղել է ուրիշներից (նա ինքն է շեշտում այդ հանգամանքը և, երբ հնարավոր է, հիշատակում է իր օգտագործած հեղինակներին), այդուհանդերձ, դրանք դրքի անքակտելի մասն են կազմում և օրգանապես կապված են ողջ շարադրանքին։ Դրանցից են, օրինակ, 55-րդ գլուխը («Պատմութիւն Աղուանից աշխարհին, արարեալ Յարեցի Յովհաննէս վարդապետին»), ակնագործ Հալեպցի քահանա Սարգսի

---

[3] *Ավելի ուշ (1618 թ.) Իրանում եվրոպական առաջին հանապարհորդներից մեկը՝ Պիետրո դելա Վալլեն միանգամայն իրավացիորեն կնկատի, որ հայերը նույնքան անհրաժեշտ են պարսից շահին, որքան ճենովացիները՝ իսպանական թագավորին [„Sono (gli Armeni)in somma al Re di Persia appunto come i Genovezi al Re di Spagna, che nè essi posson viver sensa il Re, nè il Re, senza loro"] մեջբերումը ըստ Դ. Ալիշանի. «Սիսական», Վենետիկ, 1893, էջ 142], դրանով իսկ ընդգծելով, հայ առևտրական կապիտալի դերը Իրանի այն ժամանակաշրջանի տնտեսական ու մշակութային կյանքում։ Համմ. А. А. Рахман, նշված աշխ., էջ 148—149։ В. А. Байбуртян, նշված աշխ., էջ 7—25։*

պրչին պատկանող 53-րդ պլուխը («Վասն անուանց և որպիսութեանց պատուական ականց»), «Այլ ևս կարդ վարդապետաց» հատվածը, որի հեղինակը Կարապետ Բաղիշեցին է։

Շատ հատվածներ պատմիչն արտագրել է առանց փոփոխության, անմիջականորեն հայկական ձեռագրերի հիշատակարաններից[4]։ Այդպիսին է պրիմի ամբողջ 30-րդ պլուխը, նվիրված հայոց եկեղեցում պաշտվող մասունքներից մեկին՝ Լուսավորչի աջին։

Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանցը» հայ ժողովրդի XVII դ. պատմության ուսումնասիրման համար բացառիկ սկզբնաղբյուր է։ Նրա բովանդակած նյութն առավել արժեքավոր է դառնում այն պատճառով, որ հեղինակն ականատես է իր նկարագրած շատ իրադարձությունների և ջանում է ճշտել փաստերը, անունները և թվականները։ Սույն աղբյուրը կարևոր է վրացիների[5], աղրբեջանցիների, պարսիկների[6], թուրքերի[7] պատմության ուսումնասիրման համար։ Նրանում կարելի է տեղեկություններ գտնել նաև դերբերի (պարսիկ կրակապաշտների), հրեաների, քրդերի պատմության վերաբերյալ։ Հեղինակը որոշ դեպքեր է պատմում լեհ ժողովրդի կյանքից, այս կամ այն առիթով հիշատակում մաջարներին և ֆրանկներին, ալաններին, լեզգիներին, թուշերին և փշավներին, ռուսներին, հույներին, վենետիկցիներին և նույնիսկ հնդավոր խորհրդիններին։

Առաքել Դավրիժեցու երկն իրավամբ համարվում է Անդրկովկասի և Միջին արևելքի ժողովուրդների քաղաքական պատմության հավաստի և փաստերով հագեցված աղբյուրներից մեկը։

Հայ պատմագրության մեջ XVII դ. իրադարձություններն արտացոլվել են հիմնականում ձեռագրերի հիշատակարաններում, մանր ժամանակագրություններում և ականատես պատմիչների երկերում, որոնցում առաջին տեղը պրավում է, անշուշտ, Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանցը»[8]։ Առանձնապես կարևոր են պատմիչի հաղորդած տեղեկությունները Հայաստանի տարածքում Սեֆյան Իրանի և Օսմանյան Թուրքիայի ռազմական գործողությունների, քայքայված երկրում տիրող ավերի ու սովի մասին։ Գրքում հիշատակվում են զորապետների անուններ, նկարագրվում ճակատամարտեր, պատերազմող կողմերի սպառազինությունը և ռազմական հանդերձանքը, բերվում են նախապես ստուգված ու ճշգրտված թվեր ու թվականներ։ Հատուկ տեղ է դրավում այսպես կոչված «մեծ սուրգունի»՝ Արաքսի ձախափնյա շրջանների խաղաղ բնակիչների բռնի տեղահանման և նրանց

---

[4] *Ի դեպ, նրանցից մի քանիսը պահպանվել են և գիտության սեփականությունը դարձել շնորհիվ Առաքել Դավրիժեցու ընդօրինակությունների. այն ձեռագրերը, որոնցում դրանք ընդգրկված են եղել, մեզ չեն հասել (տե՛ս Аракел Даврижеци, Книга историй, М., 1973, пп. 30, ծանոթագր. 5, 11—13, 20, 22, 24, 30)։*

[5] *Ն. Կուցիա, Առաքել Դավրիժեցու տեղեկությունները Վրաստանի մասին, Թբիլիսի, 1974, Նախաբան (վրացերեն)։*

[6] *Իրանի XVII դ. պատմության ուսումնասիրման համար Առաքել Դավրիժեցու երկի նշանակության հարցին է նվիրված Լ. Գ. Դանեղյանի նշված մենագրությունը (մասնավորապես էջ 6—8)։*

[7] *Տե՛ս Մ. Ղուլալյան, Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI—XVII դդ.), Երևան, 1966։*

[8] *«Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, էջ 495։*

Իրանի խորքը քշելու նկարագրությունը։ Թվարկված իրադարձություններին նվիրված գլուխներն առանձին հետաքրքրություն են ներկայացնում՝ ինչպես նրանցում ընդգրկված փաստական նյութի, այնպես էլ գեղարվեստական առումով։ Ջավթիչների դեմ զայրույթով լեցուն և հայրենիքի հանդեպ սիրով տոգորված հեղինակի բարձրարվեստ նկարագրություններում դրսևորվում է պատմագրի արտակարգ վարպետությունը։

Առաքել Դավրիժեցին վերլուծում է շահ Աբբաս Ա-ի քաղաքականությունը։ «Գիտէր ի միտս իւր,—գրում է պատմիչը,—թէ ոչ կարէ պատերազմաւ զդէմ ունիլ Սինան փաշային ... վասն որոյ հրամայեաց զամենայն բնակիչս աշխարհին Հայոց, ե՛թէ քրիստոնեայ, ե՛թէ հրէայ, ե՛թէ մահմետական. քշել յաշխարհն Պարսից։ Զի եկեալ օսմանցւոցն անբնակ ձգտանիցեն ներկիրն ի մարդկանէ։ Եւ ոչ գտցի կերակուր և ոռճիկ... և առ ի չգոյէ հարկաւորաց վտանգեսցին զօրքն օսմանցւոց։ Նաև տարեալ ժողովուրդքն լինիցին նմա անպերծանելի հարկատուք՝ ծառայք և հողագործք մինչև ցյաւիտեան»[9]։ Իսկ ավելի ուշ, երբ տարագրյալները հասան Պարսկաստան, «արհնեցին ի նոցունց ղբարագործ արուեստաւորն զամենայն, և տարան ի քաղաքն Սպահան վասն արուեստին, որ պիտոյանայր անդ ի գործս շինութեանց տան թագաւորին և համօրէն ազգն պարսից»[10]։ Մնացածներին բնակեցրին այլ քաղաքներում ու գյուղերում, նրանց ամրացնելով հողին, մահվան սպառնալիքով արգելելով տեղափոխությունն այլ վայրեր[11]։ Ձարգացնելով այդ թեման և պատմելով հետագա իրադարձությունների մասին, Դավրիժեցին բացահայտում է պարսից շահի գործողությունների դրդապատճառները, նրա շրթներին դնելով այնպիսի խոսքեր, որոնք կոչված են ապագա սերունդներին բացատրելու նույնիսկ ժամանակակիցներին անհասկանալի որոշ արարքներ։

Պատմելով Սպահանին մերձակա Նոր Ջուղայի հայ մեծահարուստ խոջաներին շնորհված արտոնությունների և այն մասին, թե ինչպես շահը «ինքն յորդորէր զքրիստոնեայսն շինել զնկեղեցի» և «պէս պէս կերպիւ հաճեցուցանէր շահն զմիտս քրիստոնէից»[12], պատմիչն ընդգծում է, որ այդ ամբողջի հետևանքով «վշտանային ազգն պարսից՝ և նոցին կարդացողքն և մեծամեծքն»[13]։ Տեսնելով նրանց հուզումը, շահը «յայտնեալ էր զիսորհուրդս սրտի իւրոյ նոցա», ասել էր, որ ինքն այդ բոլորը գիտակցաբար է անում՝ «զի աշխարհս մեր շինեսցի և ազգն մեր յաւելցի»[14] և կոչ էր արել նրանց վարվել նույն սկզբունքով։

Հետաքրքրական է, որ այս պատմելաձևը Առաքել Դավրիժեցին օգտագործում է նաև այլ դեպքերում։ Այսպես, Շահ Աբբաս Ա-ի զորապետներից մեկը՝ Զուլֆեդար-խանը, մարտից առաջ դիմելով Նախիջևանի բերդում պաշարված ավազանուն, հորդորում է հանձնվել և ասում է. «...Որո՞յ յուսոյ և կամ որո՞ւմ աւուր սպաս կալեալ մնայք... Ինքնակալ թագաւոր բազում զո-

---

9 Առաքել Դավրիժեցի, *Դիրք պատմութեանց*, սույն հրատարակություն, էջ 38։

10 *Անդ, էջ 456։*

11 *Անդ, էջ 456—457։*

12 *Անդ, էջ 65։*

13 *Անդ, էջ 65—66։*

14 *Անդ, էջ 66։*

րօք նկեալ զՀայրենի աշխարհն իւր խնդրէ»[15]: Այս խոսքերի արձագանքն է պարսկական պատմագրության մեջ տարածում գտած այն թեզը, թե Շահ Աբբասը դեպի Անդրկովկաս արշավանքներ ձեռնարկելով «վերականգնում էր արդարությունը», ձգտում պարսկական թագին վերադարձնել իր «ժառանգական մուլքը»[16]: Շահ Աբբաս Ա-ի «ժառանգական հողերը» վերադարձնելու ցանկության մասին են գրել իրանական շատ հեղինակներ, այդ թվում՝ Խաքանդար Մունշին[17], Աբդլդաման Սահաբը, Մուհամմադ Փարանգը[18]: Նրանց աշխատություններում (մասնավորապես Խաքանդար Մունշու «Աբբասյան աշխարհազարդ պատմության» մեջ՝ գրված Շահ Աբբաս Ա-ի կենդանության օրոք) այդ բոլոր իրադարձությունները ներկայացվում են խեղաթյուրված, նույնիսկ հայրենիքից արտաքսված բնակչության ողբերգությունը մեկնաբանվում է իբրև պարսկական շահի «հոդատարություն»՝ հանդես եկած խաղաղ բնակչության: Իբր ժողովուրդը հնարավորություն ստացավ փրկվելու այն օրերի ողբերգական իրադարձություններից և ապաստարան գտավ «դրախտային Մազանդարանում»[19]:

Միջազգային հարաբերությունների և Առաջավոր Ասիայի երկու խոշոր տերությունների հակամարտության հետ կապված արտաքին քաղաքական պատմությանը զուգընթաց, Առաքել Դավրիժեցին վերլուծում է նաև Հայաստանի ներքին քաղաքական դրությունը, խոսում հասարակության տարբեր հոսանքների ու խմբավորումների մասին, պատմում, թե ինչպես հայ մեծահարուստ վաճառականների պարսկատիրաբար տրամադրված մասը վճռական միջոցներ է ձեռնարկել՝ դիմելու պարսից շահին, խնդրելով օգնել ազատվելու օսմանյան լծից և պարսիկներին[20] *հրավիրել Հայաստան՝ խոստանալով նրանց օգնություն ու համագործակցություն:*

«Գիրք պատմութեանցում» արտացոլված է նաև հոգևորականության վերին խավերում կաթողիկոսական աթոռի համար մղված կատաղի պայքարը: Ընդհանուր առմամբ օբյեկտիվ փաստեր բերելով, անաչառ նկարագրելով իրադարձությունները, հեղինակը գույներ չի խնայում բնութագրելու համար այս կամ այն բացասական կամ իր տեսակետից դրական անձնավորությանը, անխնա բացահայտում է կաթողիկոսական աթոռի առանձին հավակնորդների շահախնդրությունն ու անհեռատեսությունը, հայրենիքի ճակատա-

---

15 *Անդ, էջ 23:*

16 Լ. Դանեղյան, *նշված աշխ., էջ 65:*

17 *«Աբբասյան աշխարհազարդ պատմության» մեջ հեղինակը խոսում է շահ Աբբաս Ա-ի մտահղության մասին՝ «վերադարձնելու Ադրբիջանը Սեֆևիների հարստության սիրույթների շարքը» (տե՛ս Л. А. Рахман, նշված աշխ., էջ 96—96, 98):*

18 Լ. Դանեղյան, *նշված աշխ., էջ 65—80:*

19 *Անդ, էջ 65:*

20 *Ա. Ա. Ռահմանին նշված աշխատության 95-րդ էջի ծանոթագրությունում գրում է. «Առաքել Դավրիժեցին սեֆյան զորքի շարքային զինվորին այդ շրջանում անվանում է «տաջիկ», որն այն ժամանակ նշանակում էր «պարսիկ»: Այս ծանոթագրությունը ճիշտ չէ: Պարսիկներին Առաքել Դավրիժեցին անվանում է հենց «պարսիկ» (Պարսից թագավոր, Պարսից աշխարհ, Պարսկաստան և այլն): «Տաճիկ» (ոչ՝ «տաջիկ») բառը հայկական աղբյուրներում համարժեք է «արաբ», «թուրք», «մոնղոլ» և, ավելի լայն իմաստով, «մահմեդական» բառերին: Այսպես, Առաքել Դավրիժեցին, որը գերադասում է «մահմեդական», «օրենք Մահմեդի» արտահայտությունը, երբեմն գրում է. «սկսան բռնութեամբ ածել ի տաճկութիւն» (էջ 478):*

դրի նկատմամբ նրանց արհամարհանքը: «...Ոչ թէ մի էր, այլ երեք և չորս կաթուղիկոսք, վասն մի յաղագս միաւորմանն, և ապահովմանն... պարտ լայիւ և հարկիւ ի պարսից թագաւորէն առնուին զիշխանութիւն կաթուղիկոսութեանն՝ և զտուրբ Սիոնն էջմիածին... Եւ կաթուղիկոսքն՝ որպէս ինքեանք արծաթով և կաշառօք ընկալեալք զաստիճան կաթուղիկոսութեանն, սոյնպէս և ինքեանց ձեռնադրեալ եպիսկոպոսունքն և քահանայքն, ապէսք, խոստանք, և անպիտանք, քան առաքմոսին, որք էին լեալ պաշտօնեայք որովայնի՝ հանապազ ի դիւնեբրուս դիպերնալք... յառաւօտ մինչև ցերեկոյ հետևեալ կատակաց և լիսի բանից՝ և պատարկութեանն»[1]:

Վրաստանի պատմութեանը վերաբերող գլուխներում հեղինակը նկարագրում է Անդրկովկասի այդ անկյունում իրանա-թուրքական մրցակցության հետ կապված արտաքին քաղաքական իրադարձությունները, պարսկական դրքերի կողմից վրացական թագավորությունների հաջորդական նվաճումը, վրաց ժողովրդի ազատագրական պայքարն ընդդեմ զավթիչների: Առաքել Դավրիժեցին քաջ տեղյակ է հարևան Վրաստանի գործերին և ցույց է տալիս, որ տեղական հարստությունների ներկայացուցիչների պլուավորած առանձին թագավորությունների և իշխանությունների միջև եղած երկպառակությունները (որոնք հմտորեն հրահրվում էին ու սրվում դրսից) առավել ևս խորացնում էին երկրի առանց այն էլ դժվար կացությունը: Պատմական փաստերով հիմնավորելով, ինչպես նաև դիմելով դեղարվեստական արտահայտաձևերի, հեղինակը ցույց է տալիս շահական ճնշման դեմ տեղական իշխանների երկարատև դիմադրությունը, շահի խարդավանքն ու երդմնազանցությունը: Այս կապակցությամբ պատմիչը դրվատիներ է շարադրում Իրանի և Մոսկովյան պետության միջև դիվանագիտական հարաբերությունների պատմությունից[22], խոսում է ռուսական ցարի միջամտության մասին: Ցարի դեսպանները ներկայանալով պարսկական շահին, «ընդ յոլով խընդրուածոցն, վասն Լատասափին[23] ևս խնդրեցին, որպէս դի դարձցի ի տեղի իւր և կացցէ ի հրամանի և ի հնազանդութեան շահին»[24]: Շահը խոստացավ արձակել գերված Լուարսաբին և, այսպիսով, թուլացնելով քրիստոնյա տերության զորությունը, ինքն արագացրեց հաշվեհարդարը վրաց թագավորի նկատմամբ:

Շարադրելով ավատականորեն մասնատված Վրաստանի՝ Իրանի ագրեսիայի դեմ դիմադրության ընդարձակ պատկերը, ինչպես նաև ներկայացնելով խոշոր ֆեոդալական տների տարաձայն, երբեմն՝ հակատական գործողությունները, Առաքել Դավրիժեցին ընթերցողին աստիճանաբար մոտեցնում է այն մտքին, որ պատահարը ժողովրդի կյանքում վնասակար ու կործանիչ դեր ունի և՝ որ անհրաժեշտ է ուժերի համախմբում ընդդեմ արտաքին թշնամիների: Պատմիչը լավ է հասկանում, որ վրաց թագավորներն անելանելի դրության մեջ էին, քանզի «ոչ են ինքնակալք ի ընդդէմ կարիցեն կալ

---

21 «Դիրք պատմութեանց», էջ 289—290:

22 Առաքել Դավրիժեցու տեղեկությունները թույլ են տալիս ուշադրություն դարձնել իրանական պատմագրության որոշ ներկայացուցիչների այս պրոբլեմի լուսաբանման մեջ: Ըստ այդ հեղինակների՝ Ռուսաստանը մինչև Պետրոս Ա-ն Իրանի հետ կապեր չի ունեցել (տե՛ս Լ. Դանեղյան, նշված աշխ., էջ 156, ծանոթ. 4):

23 Իմա՝ Լուարսաբին:

24 «Դիրք պատմութեանց», էջ 140—141:

օսմանցւոց և պարսից՝ այլ են սկզբք և անկումն. վասն որոյ հարկ է զի միում ի սոցունց ընդ ձեռամբ լիցին»[25] և արձանագրում է, որ միայն միաբանությունը երկու բազավորների միջև՝ Լուտրաաբի, «որ էր ակր Թիֆլիսու և Քաութայ» և Բեյմուրադի, «որ էր ակր Կախեթու և Գրիմայ», նրանց փոխօգնությունը հնարավորություն կտա «դիմակալել պարսից», քանզի նրանք բազմիցս արդեն կրել էին «զվնաս բաժանման և վերկացութեան», ճաշակել «զվիշտ և զիշնամութիւն ազգին պարսից» և «տոկոսով չափ» հոժար էին «ի միաբանութիւն»[26]:

Առաքել Դավրիժեցու երկը առաջնակարգ սկզբնաղբյուր է նաև հայ և հարևան ժողովուրդների սոցիալ-տնտեսական պատմության[27]:

«Գիրք պատմութեանցի» մեջ հայերի գրության մասին ասվում է. «Յաւարառուաց և ի գերչաց և ի հարկապահանջողաց ցիր և ցան եղեալ... տառապեալ և կապեալ չաղբատութեան... Տալիս ամենայն որ զպարզաստ իւրոցն կենաց հայթայթէր»[28]: Ժողովրդի տնտեսական ծանր վիճակն առավել սաստկանում էր օսմանների անընդհատ կողոպուտներով ու պատերազմներով, ջալալիների հարձակումներով, շարունակ կրկնվող անբերրիությամբ և այլ տարերային ու սոցիալական աղետներով: Դավրիժեցին թվարկում է հարկերը և նրանց դանձման ձևերը, ցույց է տալիս հարկահավաքների ագահությունն ու դաժանությունը, նրանց չարաշահումները: Այդպես անկարող լինելով կրել օսմանյան լուծը, հայ ժողովրդի ներկայացուցիչները դիմեցին պարսից շահին «զի թերևս նովաւ դիւրութիւն գտցեն, վերծանել ի ծառայութենէն օսմանցւոց»: «...Վասն զի,— ասում է պատմիչը,— յոյժ չարաչար նեղութեամբ նեղէին զնոսա ազգն օսմանցւոց ծանր հարկապահանջութեամբ և կնդեքմամբ զրկէին, և կողոպտէին, և հաւատոց կուռչութիւն առնէին, և այլ բազում տառապանօք չարչարէին»: «Ոչ միայն զազգս հայոց, այլև զազգն վրաց և զմահմետականաց»[29]: Եվ թվարկում է անդրկովկասյան ժողովուրդների մի խումբ մնծամնծներին, որոնք օգնության են գիմել շահին՝ հայեր և աղբրբիջանցիներ, վրացիներ ու մարեր (քրդեր): Ընդ որում, պատմիչը չի մոռանում նշել և այն սոցիալական խմբավորումները, որոնց շահերն էին ներկայացնում բանագնացները. դրանք էին՝ «յաշխարհէ Աստրպատականի իշխանք և կոմսնականք մահմետականք և քրիստոնեայք», «մնծ իշխան և կոմսնական աշխարհին Մարաց, նեղեալ յազգէն օսմանցւոց», «թագաւորքն վրաց»[30], հայ մելիքներ ու բեկեր Աղվանքից ու այլ գավառներից, մնծատաղտուտ վաճառականներ Դիզակից ու Քշտաղից, Դաշտից և Ապուհիցից, և,

---

[25] «Գիրք պատմութեանցց», էջ 100:

[26] Անդ, էջ 115:

[27] Ի. Պ. Պետրուշևսկին գրում է. «...Առաքել Դավրիժեցու երկն առաջնակարգ սկզբնաղբյուր է մեր թեմայի (XVI—XIX դդ. սկզբին Ադրբեջանում և Հայաստանում ֆեոդալական հարաբերությունների պատմության—Լ. Ա.) համար: Ջերծ լինելով պարսկական բոլոր ազբյուրների (բացի «Շերեֆ-Նամեից») իրանական պաշտոնական կառավարական հայեցողությունից՝ Առաքել Դավրիժեցու վկայությունները հնարավորություն են ընձեռում ստուգելու պարսկական ազբյուրների ավյալները: Պետք է նշել նաև Առաքելի զգույշ ու քննադատական վերաբերմունքը այն տեղեկությունների հանդեպ, որոնց մասին նա լսել է և որոնք հաղորդում է մեզ» (И. П. Петрушевский, Очерки..., стр. 49—50):

[28] «Գիրք պատմութեանցց», էջ 3:

[29] Անդ, էջ 15:

[30] Անդ:

անշուշտ, բարձր հոգևորականությունը՝ կաթողիկոսների գլխավորությամբ, եվ որպեսզի կասկած չլինի, Առաքելը ճշգրտում է. «Զանուանս արանցս՝ զոր յիշեցաք, ամենևքեան էին արք նշանաւորք»[31]:

Մխանգամայն որոշակի է խոսվում նաև այն պատճառի մասին, որը նրանց դրդից այդպիսի վճռական քայլի. «Ու եղեալ են ամենևքեան յոյժ չքաւորք, և պարտաւէրք, և մնացեալ են անճար: Վասն որոյ փախուցեալ գնացին յերկիրն Պարսից»[32]: Հոգևորականության և նրա միաումների մասին պատմիչը խոսում է առավել որոշակի. «...կաթուղիկոսքն երկոքին ... և արքն, որք ընդ նոսա, ...խորհէին՝ խոկային, երկնէին, դի գոնեա հնար իմն գտանիցի, դի մի՛ ի կաթուղիկոսութենէն զրկիցին, այլ մնասցէ կաթուղիկոսութիւնն ի ձեռս իւրեանց, և այլ իմն կերպիւ վերծցին ի ձեռաց պարտատուացն: ...Սահմանեցին հաստատութեամբ ի միջի իւրեանց դի գնասցեն ի Սպահան առ թագաւորն Պարսից...»[33]: Էջմիածնի աթոռի օսմանցիներին տրվող դրամական պարտավորությունը տարեցտարի աճում ու բազմապատկվում էր և այդ տարիներին հասել էր 50 հազար ղուռուշի[34]: Կաթողիկոսներն ի վիճակի չէին այն վճարել: Շատերը հույս էին տածում, որ անցնելով պարսից իշխանության ներքո, կազատվեն օսմանյան ծանր ճնշումից: Սակայն, պարսից զորքի մուտքը, հակառակ սպասումների, բոլորովին չբարելավեց նրանց դրությունը: Երկու թշնամի բանակների գործողությունները Հայաստանի տարածքում իսպառ քայքայեցին երկիրը. «Ու ի շարժմանէ այսցըս երկուց տիեզերակալացս՝ որք զարթուցեալք են ի պատերազմ..., թէ որքան աւերումն և քանդումն եղև աշխարհի, թէ ի դալն և թէ ի դառնալն, թէ որքան ծանրաբեռն հարկապահանջութիւն եդեալ ի վերայ ժողովրդեանն և բռնութեամբ առին, նոյնպէս և զսուրսաթն՝ որ ղկնի զօրացն բերեալ տային, և թէ զօրքն՝ և ի ձմեռն երիվարօքն իւրեանց ղշլաղ տային, կամ զքանդումն տանց և այգեստանաց, և զկոխումն արտորէից՝ և զհանումն համբարաց՝ ցորենոյ և զայլ սերմանեաց, և աւարումն, և յափշտակումն ընչից և ստացուածոց, զուստերաց և զդստերաց, և սպանումն անպարտ անձանց, զորս ի յայտնի և զորս ի գաղտնի, և զայլ ամենայն չարիսն, զոր ածին ի վերայ աշխարհի, մեզ ոչ գոյ կար թուելոյ»[35]:

Այնուհետև պատմիչը նկարագրում է, թե ինչպես պարսից զորքերը «առանց պատերազմի, և բնաւին իսկ թարց աշխատանաց»[36] տիրեցին Հայաստանի քաղաքներին ու բերդերին և շուտով օսմանյան լծին փոխարինելու եկավ պարսիկների տիրապետությունը, որը չթեթևացրեց Հայաստանի ո՛չ ժողովրդի, ո՛չ էլ ավատական վերնախավի վիճակը: Երկրի նոր տիրակալը, իր մոտ կանչելով կաթողիկոսներին, հայտարարեց, որ այն ամենը, ինչ Էջմիածնի աթոռը պարտք էր օսմաններին անհապաղ ու անվերապահորեն պետք է վճարվի, միայն այդ դեպքում նրանց հանդիստ կթողնեն: «Այս կաթուղիկոսքն վասն պարտուցն փախեան և ապաւինեցան ի շահն, զի թերևս շահն զնոսա ազատեսցէ ի պարտատերացն. արդ այժմ շահն ինքն յառաջ

---

31 Անդ, էջ 17:
32 Անդ:
33 Անդ, էջ 14—15:
34 Անդ, էջ 8:
35 Անդ, էջ 78—79:
36 Անդ, էջ 25:

ածեալ պահանջէ ի նոցունց զպարտքն, սրդ այս է օգնութիւն շահին յոր ապաւինեցին նոքա»[37],—ասում է պատմիչը: Թեև նշված իրադարձությունների նախօրյակին երկրի ֆեոդալական վերնախավի առանձին ներկայացուցիչներ գնում էին խոնարհվելու Շահ Աբբասին, խնդրելով օգնել իրենց՝ Թոթափելու օսմանյան լուծը, և շահը սկզբնապես օգտվում էր տեղական բնակչության օժանդակությունից, այդուհանդերձ պատերազմելով Հայաստանի տերիտորիայում, նա «ոչ զգայարէր յաւերելոյ զաշխարհս, և դերելոյ զազգս հայոց»[38]:

Հաջորդ գլուխներում Դավրիժեցին հանդամանորեն նկարագրում է. «Պատմութիւն նեղութեանց, որս կրեցին ազգն Հայոց յառաջին Շահաբաս թագաւորէն», «Սկիս ևս պատմութիւն նեղութեանց, զոր կրեցին ազգն Հայոց յԱռաջնոյ Շահաբաս թագաւորէն» և այլն: Նա ցույց է տալիս, թե ինչպես հետևողականորեն կենսագործելով իր ծրագրերը, շահ Աբբասը տարբեր մոտեցում էր ցուցաբերում հայ հասարակության առանձին շերտերի նկատմամբ: Գաղթեցվածների ողջ զանգվածը քշեցին Իրան, այնտեղ առանձնացրին քարագործ արհեստավորներին և բնակեցրին Սպահանում՝ Սեֆևիների նոր մայրաքաղաքում, որտեղ շինարարական աշխատանքների համար նրանք շատ էին անհրաժեշտ[39]: Մնացածներին հարկադրեցին գնալ այլ վայրեր, ոմանց տեղավորեցին քաղաքում, ոմանց՝ գյուղերում[40]: Սպահանում բնակեցրին նաև հայ հարուստ վաճառականներին[41], որոնց ձեռքում էր մետաքսի միջազգային առևտուրը[42]: Այստեղ հստակորեն դրսևորվում է շահի տնտեսական քաղաքականության ուղղությունը: Տիրակալը ձգտում էր հասնել Իրանի կենտրոնական շրջանների արտադրողական ուժերի զարգացմանը և այդ շրջանների հարստացմանը ի հաշիվ նվաճած երկրների[43]: Նույն նպատակին էր ծառայում նաև Ջուղայի՝ «մետաքսի առևտրի բորսայի» ավերումը և այնտեղի խոջաների տեղափոխումը Սպահան, որոնց օգնությամբ շահը հույս ուներ առևտրի քարավանային ճանապարհները մոտեցնել իր մայրաքաղաքին: Նոր վայրում գաղթականները, բացի Երևանի և Ջուղայի հարուստ վաճառականներից, կարճ ժամանակում աղքատացան: Սակայն նոր բնակեցված հայերի օգնությամբ երկրում առևտրի ծաղկմանը զարկ տալու հույսը չէր լքում շահին: Նա առաջարկեց վարկ տալ հայերին հետևյալ պայմանով. «զի դուք այնու առեալ գանձին առևտուր արարեալ շահիցէք»[44]: Այս դործողությունը, սակայն, ցանկալի արդյունք չտվեց: Հա-

---

37 *Անդ, էջ 28:*

38 *Անդ, էջ 29:*

39 *Անդ, էջ 457:*

40 *Անդ:*

41 *Այդ մասին տե՛ս* В. А. Байбуртян, *նշված աշխ., էջ* 18—22; Н. Г. Куканова, Очерк по истории русско-иранских торговых отношений в XVII-первой половине XIXв., Саранск, 1977, стр. 67.

42 *Այդ հանգամանքը որոշակի դեր էր խաղում շահ Աբբաս Ա-ի քաղաքականության մեջ: «Գաղթեցնելով հայերին,—գրում է պատմաբան Մ. Ս. Իվանովը,—շահ Աբբաս Ա-ն ձգտում էր ապահովել իր մայրաքաղաքը հայ հմուտ արհեստավորներով, ինչպես նաև տեղաշարժել մետաքսի առևտրի քարավանային ճանապարհները»...* (տե՛ս М. С. Иванов, *նշված աշխ., էջ* 67; В. А. Байбуртян, *նշված աշխ., էջ* 11—17).

43 И. П. Петрушевский, Очерки..., стр. 82.

44 *«Գիրք պատմութեանց», էջ 149:*

յերը ծախսերին վարկն իրենց կարիքների համար. ի հատուցումն շահն ուզում էր բոնի կերպով ստիպել նրանց՝ մահմեդականության ընդունել[45]։

Առաքել Դավրիժեցին շատ փաստեր է բերում Սեֆյան Իրանի հարկային քաղաքականության վերաբերյալ. նկարագրում է, թե ինչպես նվաճված շրջաններն էին ուղարկվում շահի ներկայացուցիչները, որոնք անմիջապես կազմում էին հարկացուցակներ և դրանց հիման վրա դանձում հարկերը կամ պրանցում գումարները «ի բուն մատեան արքունական պիտանի», որտեղից «անհնար էր նզծանել» գրվածը[46]։

Ուշագրավ են Առաքելի տեղեկությունները նաև հարկման առանձին կատեգորիաների մասին։ Հիշատակվում են այնպիսի տուրքեր, ինչպիսիք են՝ ջիզյան, խարաջը և սուրսաթը, մուղատան և քոչավը, իրավունքը և հասույթը, կոսը և բաջը։ Հետաքրքիրը պատմում է, թե ինչպես և ինչ պարհակներ էին գանձվում ժողովրդից, ինչպես «հարկապահանջութիւն այլազգեաց ծանրացեալ էր ի վերայ քրիստոնէից»[47], *նշում հարկերի դանձումը «արտաքոյ նոմոսաց իւրեանց»*[48]։ *Խոսում է այն մասին, թե ինչպիսի դաժանությամբ էին գանձվում հարկերը դաղիկլվածնևրից. մատնացույց անում հարկերի թեթևացման հաղվադեպ դեպքերը*[49]։

15-րդ գլխում հանդամանորեն խոսում է քոչավ (չոբանբեկի) կոչված պարհակի մասին, որը Պարսկական Իրաքի (ըստ Առաքելի՝ Ադրբեջանի) բնակիչներին հասցրել էր ծայր աղքատության։ Իրանի կենտրոնական շրջանների արտադրողական ուժերն ըստ ամենայնի զարգացնելու իր քաղաքականությանը համապատասխան[50], *շահը հրամայեց վերացնել հատկապես այն ծանր հարկերը, որոնց գանձման ժամանակ թույլ տրվող չարաշահումների հետևանքով, ժողովուրդը վերջնական աղքատացման էր հասել։ Պատմիչն այդ «բարութեան» մասին միամտորեն գրում է. «անկաւ զայն և ողորմ ի սիրտ Շահաբաս թագաւորին, վասն որոյ և եբարձ զբօզատն...»*[51]։

Առաքել Դավրիժեցու երկը տեղեկություններ է հաղորդում նաև այն պարհակների վերաբերյալ, որոնք պարտադրվում էին ժողովրդին պատերազմների ընթացքում և խաղաղ ժամանակ (օթևանատպարհակ և սայլապարհակ, աննդամթերք և անասնակեր տրամադրելու պարտականություն և այլն)[52]։ *Որոշ տերմիններ մատնանշում են ֆեոդալական նվիրատվության ձևեր (օրինակ՝ արփալըխ, օլոֆա), վարչական միավորներ (վուշալըք, ղասաբե), պաշտոնատեսար անձինք (է՛թեմադ-օղ-դովլե, սուբաշի, զուլլաբաղասի, դիվանբեկի, դարուղա, մոհրդար և այլն), զրամական միավորներ (զուռուշ, ռեալ, ֆլորին), կշիռներ ու չափեր (մոդ, քիլա, ֆարասանգ, հալաբի), եկեղեցական հանդերձանք ու կահկարասի (փիլոն, ուրար, եմիփորոն) և այլն։ Երբեմն տերմինը ուղեկցվում է համառոտ բացատրությամբ, երբեմն էլ՝ մանրամասն բնութագրով, հաճախ պատմում է այս կամ այն պաշ-*

---

45 *Անդ, էջ 150—162։*

46 *Անդ, էջ 221։*

47 *Անդ, էջ 6։*

48 *Անդ, էջ 617։*

49 *Տե՛ս, օրինակ, անդ, էջ 64։*

50 *Այս քաղաքականության մասին խոսում է նաև Իսբանդար Մունշին (տե՛ս A. A. Рахмани, նշված աշխ., էջ 144)։*

51 *«Դիրք պատմութեանց», էջ 175։*

52 *Անդ, էջ 172։*

առնառատ անձի գործունեության, նրա իրավունքների ու պարտականությունների մասին[53]: *Այսպես, օրինակ, նա գրում է. «Հանդիպեցաւ քահանային հրէից, զոր խաչամ կոչեն»*[54] *կամ. «Ճանապարհի պահողն, զոր ռահդար կոչեն»*[55], *«նպարզոս թագաւորին, զոր ինքեանք էմիմալ-զովլաթ առնն»*[56]: *Առաքել Դավրիժեցին երբեմն տալիս է ոչ միայն տերմինի բարգմանությունը կամ համառոտ բացատրությունը, այլև հանգամանորեն նկարագրում է բոլոր արարողությունները՝ կապված այս կամ այն փառատիղերի (օրինակ՝ ոսպամի) ձեռնարկման, որևէ պարհակի (օրինակ՝ քոդավի կամ մուզտպայի) պանձման և կամ որևէ պաշտոնյայի (օրինակ՝ վապիրի, էֆենամ-օղ-զովչիի) իրավունքների ու պարտականությունների շրջանակի հետ*

Առաքել Դավրիժեցու երկը առատ նյութ է բովանդակում նաև ժողովրդի իրավական գրության վերաբերյալ: Այսպես, պատմելով Իրանի Ջահրապատի (Ջահարադ) գավառի հայ գաղթականների կյանքի մասին, պատմիչը փառատոնին նկարագրում է հոգին ամրացված գյուղացիների գրությունը. նոր բնակավայրում կյանքի ծանր պայմանները բնակչությանը հարկադրում էին հետանալ, փախչել ուր պատահի, սակայն դա անհնար էր, «քանզի պատուէր ունէին ի թագաւորէն Ճանապարհի պահողք..., թէ որք գան և մտանեն յաշխարհն Ջահրապատու՝ մնալ, և որք ելանել և գնալ կամին՝ ոչ թողուլ. և թէ գտանիցեն զոք թաքուն գնացեալ ըմբռնեալ սպանիցեն...»[57]:

Նույնիսկ ժամանակավորապես հետանալու համար հատուկ թույլտվության էր պետք, այն էլ միայն որևէ մեկին իր փոխարեն նրաշխիք թողնելու դեպքում[58]: *Փախչել ոչ ոք չէր կարող, իսկ բնակչությունը կոտորվում էր, այնպես որ շուտով 10 հազար ընտանիքից մնաց ընդամենը 400-ը*[59]:

Նոր բնակավայրում հայերը ոչ մահմեդական մյուս ժողովուրդների հետ միասին ենթարկվում էին կրոնական ճնշման ու խարականության: Բացի այն զրկանքներից, որոնք ամբողջապես նվիրված են հայերի բռնի մահմեդականացմանը, վերջն առատ փաստեր է պարունակում հայերի իրավազուրկ, կախյալ դրության մասին: Նրանց ենթարկում էին վիրավորանքի, ստորացման, պատիժների (ընդհուպ մինչև կյանքից զրկելը) ոչ միայն իշխանությունների ներկայացուցիչները, մահմեդական հոգևորականությունը, այլև հասարակ, պատահական մարդիկ, իսկ երբեմն էլ՝ հենց իրենց հավատակից քրիստոնյաները, որոնք սեփական դավանանքից հրաժարվելու և մահմեդականություն ընդունելու գնով ձեռք էին բերել իշխանությունների աջակցությունը: Այս նորաթուխ մահմեդականները, այսպես կոչված Իման Ջաֆարի օրենքի[60] *համաձայն, իրենց քրիստոնյա ապգականների ունեցվածքը ժառան-*

---

53 *Տե՛ս, օրինակ, անդ, էջ 241—247:*

54 *Անդ, էջ 470:*

55 *Անդ, էջ 456:*

56 *Անդ, էջ 443:*

57 *Անդ, էջ 456:*

58 *Անդ, էջ 456—457:*

59 *Անդ, էջ 456:*

60 Հ. Գ. Փափազյան, *Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, պր. 2-րդ (1601—1650), Երևան, 1959, վավ. 16, էջ 101 (այսուհետև՝ ՄՊՀ)*: *Նույնի՝ Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը («Բանբեր Մատենադարանի», 1956, № 3, էջ 85—99)*: *М. К. Зулалян*, Армения в первой половине XVIв., М., 1971, стр. 45—51.

գևլիս օգտվում էին որոշակի արտոնություններից։ Առաքել Դավրիժեցին բազմիցս ցույց է տալիս Իսամ Ջաֆարի օրենքը գործողության մեջ[61], ընդ որում, այդ օրենքը տարածվում էր ոչ միայն քրիստոնյաների, այլև հրեաների վրա։ Նա հիշատակում է նաև Հայաստանի վրա իրենց տիրապետությունը հաստատած պետությունների ասիմիլյատորական քաղաքականության մեկ այլ միջոցի, այսպես կոչված՝ «դևշիրմեի»[62] մասին։ Օսմանյան կայսրությունում պարբերաբար անց էր կացվում ծագումով քրիստոնյա տղաների հավաքագրում, որոնցից հետագայում կազմվում էին կանոնավոր բանակի զորամասեր։ Այս պարտադիր հարկը Հայաստանի վրա առաջին անգամ տարածվեց 1464 թ. և տևեց մինչև XVII դ. սկիզբը։ Հերթական մանկահավաքն իրականացնող իշխանությունների բռնությունն ու կամայականությունն առաջացնում էին բնակչության բուռն դայրույթն ու ընդվզումը։ XVI դ. կեսին հայ վարդապետ Մաղաքիա Դերջանցուն հաջողվեց շարժել սուլթան Սուլեյմանի գութը և նա հրամայեց վերացնել մանկաժողովը Դերջանում, Բաբերդում, Կամախում ու նրանց շրջակայքում[63]։ Պատմիչը փոքր-ինչ ավելի հանդամանորեն է ներկայացնում Օսմանյան կայսրության մեջ ոչ մահմեդական ժողովուրդների նկատմամբ խտրականության մասին վկայող մեկ այլ օրենք։ Սուլթան Մուրադ Գ-ի (1574—1603) հրամանով քրիստոնյաներին ու հրեաներին խստորեն արգելվում էր մահմեդականների հետ միանման գլխարկ ծածկել[64]։ Իսկ մինչ այդ, դեռևս իլխան խարբանդայի (Մուհամմադ Խուդաբանդա Օլջեյթու (Ուլջայթու) 1304—1317) օրոք վերջիններիս հրամայված էր ուրանալ իրենց հավատը կամ էլ վճարել գլխահարկ՝ խարաջ, և անտրտունջ կրել ամեն տեսակ ծաղրուծանակ՝ թուք ու ապտակ դեմքին, մորուքի փետում և այլն։ Քրիստոնյաները պարտավոր էին աջ ուսին կրել տարբերակիչ նշան՝ սև կարկատան։ Սակայն դա քիչ էր։ Խարբանդա-խանը հրամայեց. «Կամ զամենեսեան ներքինիս առնել կամ զմի ակն հանել, կամ դառնալ ի ... դաւանութիւնն Մահմետի։ Եւնմք, թէ բազումք մեռան յայսմանէ հարուածոյ...»[65],— եզրակացնում է հեղինակը։

«Գիրք պատմութեանցում» հատակորեն արտացոլված է Սեֆյան տիրակալների ազգային քաղաքականությունը։ Հեղինակը ցույց է տալիս պարսից շահերի դասակարգային-կանխամտածված վերաբերմունքը նոր բնակավայրերը գաղթեցված քրիստոնյա բնակչության տարբեր շերտերի՝ մելիքների և հարուստ վաճառականության ու հասարակ ժողովրդի նկատմամբ։ Սակայն այսպիսի վերաբերմունքը մշտապես երաշխավորված չէր։ Գրքում նկարագրված ամբողջ ժամանակաշրջանում տեսնում ենք, որ Իրանի կառավարողների ազգային քաղաքականությունը լուրջ էվոլյուցիա է ապրում։ Եթե «մեծ սուրգունից» հետո առաջին տարիներին հայ, վրացի, հրեա և ոչ մահմեդական այլ ժողովուրդների ներկայացուցիչների հանդեպ շահերը դրսևորում էին ազգային ու կրոնական հանդուրժողականություն, ավելին՝ փորձում էին

---

61 Տե՛ս, օրինակ, «Գիրք պատմութեանց», էջ 67, 474 և այլն։

62 Այդ մասին տե՛ս Մ. Ջուլայան, «Դևշիրմե»-ն (մանկահավաքը) Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների («Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3)։ Նույնի՝ Армения в первой половине XVIв., стр. 47—51.

63 «Գիրք պատմութեանց», էջ 572, 582—583։

64 Անդ, էջ 568։

65 Անդ, էջ 626։

պաշտպանել նրանց իրավունքները և նույնիսկ որոշ արտոնություններ շնորհել[66], ապա XVII դ. կեսից, Առաքել Դավրիժեցու տվյալներով, նկատվում է կարուկ բևեռում: Իրանի ֆեոդալական վերնախավը անցավ գաղթեցված բնակչության անընդհատ շահագործման, ապգային ու կրոնական հալածանքների, ձուլման, ընդհուպ մինչև ֆիզիկական ոչնչացման:

Սոցիալ-տնտեսական բնույթի հարուստ նյութ են բովանդակում պատմիչի նկարագրած պատերազմի, սովի, երկրաշարժի, հրդեհների և այլ աղետների ժամանակ ժողովրդի կենցաղի կենդանի պատկերները: Գրքում տեղեկություններ կան մահարբեր համաճարակների, աննպամբերքի գների և այլ մանրամասնությունների մասին: Երկը նվիրված է ժողովրդի լայն խավերի կյանքին[67], մի բան, որ ընդհանրապես հատուկ չէ ավատական շրջանի պատմագրությանը: Այս իմաստով «Գիրք պատմութեանցը» իրեն արտերկա ժամանակաշրջանին նվիրված պատմական երկերի շարքում առանձնահատուկ տեղ է գրավում: Հայ պատմագիտական գրականության մեջ բավմիցս ընդգծվել է Առաքել Դավրիժեցու երկի պարբակական կառավարական-պաշտոնական հայեցողությունից ելած լինելը, նյութի հարստությունն ու բազմակողմանիությունը, փաստերի ակնհայտ հավաստիությունը, ինչպես նաև հեղինակի զգույշ ու քննադատական վերաբերմունքը ներկայացվող փաստերի նկատմամբ[68]:

Պետք է ավելացնել, որ Առաքել Դավրիժեցին հատարակ ժողովրդին շատ մոտ կանգնած պատմիչ է, և նրա երկի նյութը մեծ չափով քաղված է ժողովրդի բերանից:

«Գիրք պատմութեանցը» մասնագետներն իրավացիորեն համարում են կարևոր սկզբնաղբյուր Հայաստանի XVII դ. մշակույթի, մասնավորապես, պիտության և լուսավորության պատմության վերաբերյալ[69]:

Առաջին հերթին պետք է նշել հեղինակի ցանկությունը՝ արձանագրել և ապագա սերունդներին ժառանգել հարուստ ժողովրդի նյութական ու հոգևոր մշակույթի պատմությանը վերաբերող բոլոր փաստերն ու տարեթվերը: XVI դ.

---

66 Շահ Աբբաս Ա-ի ֆերմանի համաձայն, Իրանի քրիստոնյաներին շնորհվում էին այնպիսի իրավունքներ ու արտոնություններ, որոնք կոչված էին օտարերկրյա կապիտալը Իրանի առևտրի մեջ ներգրավելու: Ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնյեն պատմում է, որ շահի ընտանիքի մեծաշնորհ մեսրոպի առևտուրը շահ Աբբաս Ա-ն ժամանակին հանձնարարել է իրանցի վաճառականներին, որոնք, սակայն, չեն արդարացրել միապետի վստահությունը: Համոզվելով, որ իրանցիներն այդ գործում պիտանի չեն, շահն իր երկրի համար այնքան կարևոր առևտրի բնագավառը հանձնել է հայ առևտրական կապիտալի տնօրինությանը (տե՛ս Լ. Դանիելյան, նշված աշխ., էջ 146—147):

67 Տե՛ս Ի. Պ. Петрушевский, Очерки..., стр. 48—49.

68 Նույն տեղում, էջ 48—50: А. С. Тверитинова, Восстание Кара Языджи-Дели Хасана в Турции, М.—Л., 1946, стр. 19-20, 54, 66, 72; Մ. Զալալյան, Զալալինների շարժումը..., էջ 28—30: Նույնի՝ Армения в первой половине XVIв., М., 1971, стр. 7—8; Լ. Դանիելյան, նշված աշխ., էջ 20—21:

69 Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. II, Երևան, 1959: Ն. Ակինյան, Մովսես Գ Տաթևացի հայոց կաթողիկոսը և իր ժամանակը, Վիեննա, 1936: Նույնի՝ Բազեշի գպրոցը (1500—1704), Վիեննա, 1952: В. К. Чалоян, Развитие философской мысли в Армении, М., 1974.

Վ. Դ. Առաքելյանը (տե՛ս «Առաքել Դավրիժեցի», «Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 3) ընդգծում է. «Ամենից կարևորը մեզ համար մեր մատավոր գործունեության պատմությունն է, որ այնպես մանրամասնորեն նկարագրել է պատմիչը...» (էջ 36):

վերջի և XVII դ. սկզբի կործանարար իրադարձությունների հետևանքով Հայաստանը քաղաքական, տնտեսական ու մշակութային խոր ճգնաժամ էր ապրում։ Քայքայվել էր երկրի տնտեսությունը, ավերվել էին քաղաքներն ու գյուղերը, բնակչությունը սրի մատնվել ու գերեվարվել։ Երկրի վրա կախվել էր կործանման և ժողովրդի իսպառ ձուլման վտանգը։ «Սակայն, անձնըվեր պայքարով հայ ժողովուրդը փրկվեց վերջնական ֆիզիկական ոչնչացումից։ Նա թուրք ու պարսիկ տիրիչյաուրներից համառորեն պաշտպանում էր և պաշտպանեց իր լեզուն, իր հարուստ հոգևոր մշակույթը, ազգային զարգացման իր իրավունքը»[70]։

1639 թ. հաշտության պայմանագրով Հայաստանը բաժանվեց Իրանի և Թուրքիայի միջև։ Երկիրը օտարների կարճատև խաղատեղյունից, ոտնից բուժել վերքերը։ Վերականգնվում էին պատերազմներից ու ասպատակություններից ավերված վանքերն ու եկեղեցիները։ Վերականգնման և նոր ձեռնարկվող շինարարական աշխատանքները Իրանի իշխանության տակ գտնվող, պետականությունից զուրկ երկրում կապված են երկու կաթողիկոսների՝ Մովսես Սյունեցու (1629—1632) և Փիլիպոս Աղթամարցու (1633—1655) անունների հետ։ Առաքել Դավրիժեցին նշում է, թե երբ և ինչպիսի վերականգնման աշխատանքներ են կատարվել, ում նախաձեռնությամբ և ում միջոցներով, մանրամասն նկարագրում է այդ աշխատանքները՝ վանքի պատերի, վանգակատան կառուցում, խաչի կանգնեցում, զավթի, խցերի, սրճատեսական շենքերի շինարարություն և այլն, տեղեկություններ տալիս շինանյութերի (քար, աղյուս, փայտ, տաշած կամ անմշակ քար) և նրանց հայթայթման վայրերի վերաբերյալ, խոսում վարպետանքների՝ սյուների, կամարների, որմնանկարչության, զարդատեղադրների մասին։ Առանձնապես հանգամանորեն է շարադրված Էջմիածնի վանքի վերականգնման պատմությունը։ Հեղինակը նկարագրում է շինարարական աշխատանքների ընթացքը, նույնիսկ տալիս է տաճարի ու վանքի բակի չափսերը։ Տեղեկություններ կան նաև կամուրջների և աղբյուրների վերականգնման ու կառուցման վերաբերյալ։ Այստեղ ևս պատմիչը չի սահմանափակվում Արևելյան Հայաստանի աշխարհագրական սահմաններով, բերում է օրինակներ Թավրիզում, Վանում և նրանց շրջակայքում կատարված շինարարական աշխատանքներից։

Առաքել Դավրիժեցին խոսում է Հայաստանի մշակույթի և լուսավորության ապարեզում տիրած խավարի ու տգիտության երկար ժամանակաշրջանի մասին։ Անվերջանալի պատերազմներից քայքայված և ավերված երկրում մոռացության էին մատնվել և անհետ կորել բազմաթիվ արժեքներ։ Պատմիչը սրտի ցավով պատմում է, որ հայերը «ցայն վայր ի խոր խաւարի անգիտութեան նստեալ կային»[71]։ Օտար տիրակալության և ֆիզիկական ոչնչացման մշտական սպառնալիքի ներքո «դխաւար անգիտութիւն... սրմռնեալ է ի վերայ ժողովրդեան»[72], դպիրները ըստ ամենայնի խուսընդոտում էին գրի ու գրականության տարածմանը, լուսավորության զարգացմանը։

---

[70] «Очерки истории СССР». Под ред. Н. М. Дружинина, А. Л. Сидорова, А. М. Панкратовой и др. Период феодализма, М., 1955, стр. 854.

[71] «Գիրք պատմութեանց», էջ 269։

[72] Անդ, էջ 273։

Շահ Աբբասը հետևողականորեն կենսագործելով ձուլման քաղաքականությունը, ոչնչացնում էր հայերի ազգային մասունքները՝ գրքերը։ Հայկական բոլոր պատառներն ուղարկվում էին վինվորների ջոկատներ, որոնց հրամայված էր «շրջիլ յամենայն գիւղօրայս, և ըմբռնել զամենայն երիցունս՝ և սպառնալիօք ահացուցանել զնոսա, և առնուլ ուխտ և պայման ի բերանոց նոցա, զի մի՛ պահեսցեն զդիրս ինչ ի գրեանց իւրեանց...»[73]։ Եվ գրքերն ընկած, էին անկյուններում՝ փոշով ու մոխրով պատած. մարդիկ «ո՛չ գիրս գիտէին և ո՛չ զօրութիւնս գրոց...»[74]։ Դրա մեջ է Առաքելը տեսնում ժողովրդի տգիտության և բարքերի անկման պատճառը, իսկ գրքերի ու լուսավորության տարածման մեջ՝ մշակույթի վարպետի ու հետապա առաջընթացի երաշխիքը[75]։

Առաքել Դավրիժեցու պատմության մեջ գիրքը առանձնահատուկ տեղ է գրավում։ Հեղինակը երբեք առիթը բաց չի թողնում՝ գրքի մասին որևէ խոսք ասելու և այն դասում է ազգային կարևոր հարստությունների շարքը։

Ուշագրավ է Փերի դավաճի հայ գաղթականներին բռնի մահմեդականացման դեմ տեղի ունեցած ելույթների առաջնորդ Գրիգորի մասին հեղինակի պատմածը։ Գրիգորը «քաջալերեալ յորդորեաց զամենայն ժողովուրդսն և ասէ գլուխ և առաջնորդ նոցա»[76]։ Ականատեսները պատմում են, որ նա գնում է շահի մոտ խնդրելու, որ հայերն իրենց կրոնը դավանեն և կրթվեն ոչ թե մահմեդական կրոնավորի, այլ հայ քահանայի մոտ։ Միաժամանակ նա խնդրում է որպեսզի «ողորմեսցի թագաւորն և շնորհեսցէ նոցա պիտանից գրեանս, զորս յափշտակեալ բերեալք են»[77]։ Չնայած այս խընդրանքը թանկ նստեց. հայերից գանձեցին հսկայական գումար, որի հետևանքով Գրիգորը և նրա համախոհները «եղեն չքաւորք և աղքատք կարի չոյժ, բայց ... ուրախ են և գոհանան զՏեառնէ Աստուծոյ»[78]։

Դավրիժեցին հպարտությամբ ու հիացմունքով է խոսում գիտնական վարպետների անօրինակ սիրանքի մասին։ Նրանք իրենց ողջ ուժերը ներդրեցին գտնելու համար «զամենայն ճանապարհս և զդրունս չքնաղ և պանծալի գիտութեանս այսմիկ»[79], նրանց մտահոգության առարկաներն էին Հայաստանում մոռացության մատնված «արտաքին գիտությունները»՝ փիլիսոփայությունը, տրամաբանությունը, քերականությունը և ընդհանրապես հին հունական հեղինակների ստեղծագործությունները։ Պատմիչը քաջ գիտակցում է կրթության ու գրքի դերը ժողովրդի կյանքում։ «Գիրք պատմութեանցի» 29-րդ գլուխն ամբողջությամբ նվիրված է գիտության, կրթության, կերպարվեստի ու շինարարության զարգացմանը Հայաստանում։ Այն սկսվում է Բաղեշի դպրոցի և նրա առաջնորդ Բարսեղ Գավառցի վարպետի գործունեության նկարագրությամբ։ Այս հոանդուն գործիչը «մեծաւ տարփանօք ըղձայր թերևս հասանել այնմ (արտաքին—Լ. Խ.) գիտութեան, ոչ

---

[73] *Անդ, էջ 167։*

[74] *Անդ, էջ 290։*

[75] *Г. З. Апресян*, Из истории армянской эстетической мысли, т. I, Ереван, 1973 стр. 253.

[76] *«Գիրք պատմութեանց», էջ 168։*

[77] *Անդ, էջ 169։*

[78] *Անդ, էջ 170։*

[79] *Անդ, էջ 394։*

միայն վասն իւր, այլ մանաւանդ վասն ազգին, զի արծարծեալ ափսեացի ի մէջ ազգիս Հայոց, որպէս զի ամենեքեան հասցին այնմ շնորհաց և փառաց»[80]: Խոսվում է նաև փիլիսոփայության վիճակի մասին, հիշատակվում են հայտնի գիտնականների՝ Մովսես Սյունեցու, Խաչատուր Կևսարացու, Սիմեոն Ջուղայեցու, Ստեփանոս Լեհացու և ուրիշ շատերի անուններն ու գործերը, հին հունական փիլիսոփաների այն երկերը, որոնց մեկնությանն ու թարգմանությանը ձեռնամուխ էին եղել հայ վարպետները, ներկայացվում է «արտաքին փիլիսոփայությունների» ջատագով Մխիթարի վարպետի սահմանը՝ չսահմանափակվել ինքնակրթությամբ, այլ փոխանցել գիտելիքները այլոց, և անդուլ կերպով աշխատել[81]:

Պատմիչը մանրամասնությամբ նկարագրում է ժամանակի հաշակավոր ջուղայեցի նկարիչ Մինասի գործունեությունը[82], շահի պալատում նրա վայելած համբավը, միաժամանակ տեղեկացնում է այն մասին, թե նա ինչպես էր աշխատում, ինչ նյութ և ինչպիսի նկարեր էր օգտագործում, ո՞ւմ և ինչպիսի հոգևոր վիճակում էր պատկերում[83], ինչ հաջողություններ հասավ արվեստում[84] և այլն:

Պատմիչը գեղանկարչության մեջ տարբերակում է պիմանկարչությունը, բնանկարչությունը, անիմալիզմը, հատկապես առանձնացնելով գրքերի պատկերազարդման և շահի ու տեղական մեծահարուստների բնակարանների ինտերիերների զարդարման արվեստը: Մատնագիտներին Առաքել Դավրիժեցուն անվանում են այդ բնագավառի առաջամարտիկը[85]: Նույն՝ 29-րդ գլխում որոշ տեղեկություններ են տրված նաև տպագրական գործի մասին (հեղինակը հպանցիկ հիշատակում է Խաչատուր Կևսարացուն, «որ յոլով հարանց վարք և ժամագիրք տպագրեաց»)[86]:

Այլ գլուխներում Առաքելը պատմում է Հայաստանի տարբեր վայրերում բացված դպրոցների մասին[87]: Գործի սկիզբը դրվել էր այսպես կոչված Մեծ անապատի վերանորոգմամբ: Այստեղ Սարգիս և Կիրակոս վարդապետները Մովսես Սյունեցու և այլ հոգևորական անձանց օգնությամբ վերաշենցնեցին հին կարգերը և սկսեցին ուսուցանել երիտասարդությանը: Նրանց յուրաքանչյուր քայլը հանդիպում էր կատաղի դիմադրության՝ ինչպես երկրի այ-

---

80 Անդ, էջ 391:

81 Անդ, էջ 399—400:

82 Մ. Ղազարյան, Հայ կերպարվեստը XVII—XVIII դարերում, Երևան, 1974, էջ 25—30:

83 «...Հայ գեղագիտական մտքի պատմության մեջ Դավրիժեցին մեկն է նրանցից, ովքեր կարողացան առավելագույն խորությամբ հասկանալ արվեստի մարդագիտական էությունը և ռեալ մարդկանց ու նրանց արարքները պատկերելու նրա հնարավորությունները» (Г. З. Апресян, նշված աշխ., էջ 252):

84 «Գիրք պատմութեանց», էջ 409—413: Առաջին հրատարակության մեջ (Ամստերդամ, 1669) վերոհիշյալ հատվածը բացակայում է: Հր. Միրզոյանի կարծիքով, Ոսկան Երևանցին «գործելով ժամանակի ամենազարգացած երկրում՝ Հոլանդիայում, լավ ծանոթ էր հոլանդական առաջավոր ու բարձրարվեստ գեղանկարչությանը, որի համեմատությամբ Դավրիժեցու պատմածները նրան հավանաբար թվացել են միամտություն, իսկ գրանց տպագրությունը՝ ավելորդ» (տե՛ս Հր. Միրզոյան, Առաքել Դավրիժեցու Պատմության առաջին հրատարակությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 1, էջ 191):

85 Г. З. Апресян, նշված աշխ., էջ 264:

86 «Գիրք պատմութեանց», էջ 402:

87 Անդ, էջ 307, 355 և այլն:

լացեղ սիրակալների, այնպես էլ տեղական հոգևորականության, նույնիսկ կաթողիկոսների կողմից[88]: Սակայն դա չխանգարեց Մեծ անապատի դործունեությանը, և այստեղից լուսավորությունն սկսեց տարածվել Հայաստանով մեկ: Դպրոցներ էին բացվում երկրի տարբեր մասերում «զի ի շրջակայ գեղօրէիցն անդր ժողովեցին մանկունք առ ի յուսումն»[89]: Առաքելը հիշատակում է Աստաբաղ, Շոռոթ, Ագուլիս[90] բնակավայրերի դպրոցները, Մովսես Այոնեցու ջանքերով Հոմհաննավանքին կից բացված դպրոցը[91] և այլն: Հետաքրքիր է, որ այդ դպրոցների կազմակերպիչներն իրենց վրա էին վերցնում սովորողների ծախսը և կաբիների հոգսը, որպեսզի «մանկունքն անպրազ և անխափան ուսանէին...»[92]: Խոսելով հաչատուր կնասրացու մասին, պատմիչը նշում է. «զամենայն աշակերտս իւր ի մարմնական գործոց յապահով պահէր, զսոյն և աշակերտքն միշտ և հանապազ ի կարդալ և յընթեռնուլ կային»[93]: Այդ դպրոցների սանները «եղեն ամենեքեան արք պիտանիք և օգտակարք աշխարհի»[94]: Դավրիժեցու ամբողջ Պատմության մեջ խոսվում է այն մասին, որ երկիրը մեծ պահանջ ուներ լուսավորիչ գիտնականների ու մանկավարժների[95]: Հայ պատմագրության մեջ չկա մեկ այլ աղբյուր, որի մեջ մի ամբողջ պատմական ժամանակաշրջանի մշակույթը, գիտությունը և դպրոցական գործը ներկայացված լինեն այնքան մանրամասն ու հանգամանալից, այնպես լիովին ու գործիմացությամբ, ինչպես Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանցում»[96]:

Սակայն, պետք է նշել, որ տալով գիտնականների և լուսավորիչների սխրանքի կոնկրետ պատկերը, բերելով հավաստի փաստեր, թվեր, Առաքել Դավրիժեցին՝ լինելով իր դարաշրջանի և միջավայրի զավակը, շատ անգամ իր բացատրություններին կրոնական երանգ է տալիս (տե՛ս, օրինակ, 29-րդ գլուխը՝ Սիմեոն Ջուղայեցու երազի մասին[97], կամ՝ թե ինչպես «սուրբ հոգին» պիտելիրներ շնորհեց Բարսեղ Գավառցուն և այլն):

«Գիրք պատմութեանցում» ոչ քիչ տեղ է հատկացված նաև հասարակական շարժումներին. հակաֆեոդալական ժողովրդական շարժմանը օսմանյան Թուրքիայում, որը պատմության մեջ է մտել ջալալիների ապստամբություն անվամբ, նրա տարածմանը Հայաստանի և Ադրբեջանի տարածքում, օտար զավթիչների դեմ վրաց ժողովրդի ազատագրական պայքարին՝

---

88 Անդ, գլ. ԻԴ, ԻԷ և այլն:

89 «Գիրք պատմութեանց», էջ 355:

90 Անդ:

91 Անդ, էջ 307:

92 Անդ:

93 Անդ, էջ 402:

94 Անդ, էջ 307:

95 «Նա իր «Պատմութեան» մեջ հսկայական տեղ է հատկացրել կրթության ու դաստիարակության միջոցով անհատի կատարելագործման թեմային: Անհատի լուսավորությունից դուրս, առանց խորապես ըմբռնելու նրա ներքնաշխարհը և ակտիվորեն նրա վրա ներգործելու, գիտնականը չէր պատկերացնում մարդուն, սեփական ժողովրդի ճակատագիրը» (տե՛ս Г. З. Апресян, նշված աշխ., էջ 253):

96 Վ. Առաքելյան, Առաքել Դավրիժեցի, էջ 36—37:

97 Հետաքրքրական է, որ «Գիրք պատմութեանցի» առաջին հրատարակության մեջ Ոսկան Երևանցին սույն հատվածը չի տպագրել: Այդ մասին Հ. Միրզոյանի կարծիքը տե՛ս նշված հոդվածում, էջ 191:

Գեորգի Սահակաձեի գլխավորությամբ, լվովի հայ համայնքի երկարատև դիմադրությանն ընդդեմ Հռոմի եկեղեցու ոտնձգությունների, օտար տիրապետության դեմ հայ ժողովրդի ազգային-ազատագրական ելույթների առանձին փաստերին ու դրվագումներին, Իզմիրում սկսված մեսիական շարժմանը՝ կապված իրեն նոր Մեսիա հռչակած Սաբաթայ-Ցևիի հետ և այլն։

Առաքել Դավրիժեցու նկարագրած ժամանակաշրջանում, երբ Հայաստանը մաս-մաս էր լինում Իրանի և Թուրքիայի միջև, չկար հայ ֆեոդալների մի այնպիսի միաձույլ դասակարգ, որն ընդունակ լիներ պայքարի ելնել օտարերկրյա գավթիչների դեմ հանուն իր իրավունքների և այդ պայքարի մեջ ներգրավել գյուղացիական մասսաներին, նրանց տանել իր ետևից։ Հոգևորականությունը, փաստորեն, պատակված էր. նրա ստորին, պլեբեյական շերտերը «կանգնած էին եկեղեցու ֆեոդալական հիերարխիայից դուրս և նրա հարստություններից բաժին չունեին»[98], էապես չէին տարբերվում քաղաքային ու գյուղական ստորին շերտերից, իսկ վերին շերտերն զբաղված էին իրենց արատնությունների խղճուկ մնացորդները պահպանելու հոգսերով և երկպառակություններով։ Այսպիսի պայմաններում, թվում է, ժողովուրդն անտրտունջ պետք է հաշտվեր անվերջանալի պատերազմների և օտարների լծի ծանրության հետ։ Սակայն «Գիրք պատմութեանցը» բավականաչափ տեղեկություններ է բովանդակում գյուղացիական հուզումների և «մեծ սուրգունի» ժամանակ ծավալված դիմադրության մասին։ Այսպես, Ամիր-Գունա խանի գլխավորած պարսկական զորքերին արշավանքի հենց սկզբում կատաղի դիմադրություն ցույց տվեցին Գառնի գյուղի բնակիչները։ Սրերով ու բրիչներով, մահակներով ու, պարզապես, քարերով, զինված նրանք հսկայական բազմությամբ հարձակվեցին պարսիկ զինվորների վրա, կոտորեցին, իսկ մնացածներին փախուստի մատնեցին։ Գազազած Ամիր-Գունա խանը շուտով հաշվեհարդար տեսավ ապստամբների հետ[99]։

Առաքել Դավրիժեցին նկարագրում է նաև Փահրան գյուղի բնակիչների դիմադրությունը շահ Աբբասի հրամանին։ Գյուղի տանուտեր Նուրիջանը սկզբում առաջարկեց զինված ուժով դիմավորել շահի զինվորներին և չթողնել նրանց գյուղ մտնել։ Սակայն մերժում ստանալով գյուղացիներից, որոնք, դիմադրության պասսիվ ձևը գերադասելով ակտիվ պայքարից, փախան ու թաքնվեցին լեռներում, նա զինվեց և միայնակ դիմավորեց պարսիկ զինվորներին նետերի տարափով[100]։ Գրքում կան գյուղացիական մասսաների բացահայտ զինված պայքարի այլ օրինակներ ևս, որտեղ ազգային-ազատագրական շարժման յուրահատուկ գծերը սերտորեն միահյուսվում են պարզորոշ արտահայտված հակաֆեոդալական շարժմանը բնորոշ գծերի հետ։

«Գիրք պատմութեանցում» մեծ տեղ է հատկացված ջալալիների շարժմանը, թուրք ժողովրդի այդ հզոր հակաֆեոդալական ապստամբությանը, որն սկսվեց XVI դ. Օսմանյան կայսրության արևելյան վիլայեթներում, ապա տարածվեց Հայաստանում և Ադրբեջանում։ Ինչպես հայտնի է, գյուղացիա-

---

[96] *Ф. Энгельс,* Крестьянская война в Германии; —*К. Маркс, Ф. Энгельс,* Соч., т. 7, М., 1956, стр. 352.

[99] *«Գիրք պատմութեանց», էջ 47—48։*

[100] *Անդ, էջ 166—167։*

կան չարժմանը հետապահում միացան մանր ֆեոդալները և ֆեոդալական աշխարհազորի՝ ռազմական գործողությունների թատերաբեմը լքած զինվորները։ XVII դ. սկզբին ապստամբների դեկավարներն սկսեցին անցնել կառավարության կողմը. նրանց ջոկատները կազմալուծվեցին և վերածվեցին առանձին ավազակախմբերի։ Ջալալիները հակայական վնաս հասցրին Անդրկովկասի՝ առանց այն էլ քայքայված անտեսությանը, կողոպտեցին հայկական հարուստ վանքերը, քաղաքներն ու գյուղերը, անմեղ ժողովրդին։ Առաքել Դավրիժեցու երկը, որն ընդհանուր առմամբ բացասական տրամադրությամբ է նկարագրում այդ իրադարձությունները, արժեքավոր նյութ է բովանդակում ջալալիների հուդումներով բռնկված տերիտորիայի մասին, տալիս է նրանց դեկավարների անուննները, ապստամբությանը հարելու տարիքին, ջոկատների քանակը, շարժման երթուղին, այն շրջանները, որտեղ նրանք գործում էին։ Հաղորդում է մանրամասնություններ այն մասին, թե ինչպիսի հալածանքի ու բռնության էր ենթարկվում տեղի բնակչությունը, ինչպես էին ջալալիները կողոպտում վանքերի գանձերն ու նշխարները, որոնց թվում նաև՝ գրքերը, «որք էին ամենեքեան պատուական դրեանք վարդապետականք»[101]։

Պատմական դեպքերի շարադրանքում տեղ-տեղ հանդիպող առանձին տեղեկություններից զատ Առաքել Դավրիժեցին շորս գլուխ է հատկացնում Հարևան վրաց ժողովրդին (որը հայերի պես տառապում էր կրկնակի լծի տակ՝ իր և եկվոր կեղեքիչների, բաժան-բաժան էր լինում թուրք և պարսիկ նվաճողների կողմից), վրացական Քարթլիի և Կախեթի թագավորությունների քաղաքական պատմությանը, նրանց պայքարին՝ ընդդեմ օտար զավթիչների[102]։ Այդ շորս գլուխներից ամենաընդարձակը՝ 11-րդը, հետաքրքիր տեղեկություններ է բովանդակում XVII դ. Վրաստանի՝ Գեորգի Սահակաձեի գլխավորած ազգային-ազատագրական պայքարի պատմության վերաբերյալ։ Այդ տեղեկությունները լի են այնպիսի մանրամասնություններով, որոնք բացակայում են վրացական աղբյուրներում[103]. վրացի մասնագետները գտնում են, որ «Վրաստանին վերաբերող նյութի լիությամբ, պատմական իրադարձությունների օբյեկտիվ լուսաբանմամբ և ժամանակագրական

[101] «Գիրք պատմութեանց», էջ 81։ Այս նյութերը լայնորեն օգտագործվում են սովետական այն արևելագիտների կողմից, որոնք զբաղվում են մասնավորապես ջալալիների շարժման ուսումնասիրությամբ (Տե՛ս А. С. Тверитинова, Восстание Кара Языджи-Дели Хасана; Մ. Կ. Ջուլալյան, Ջալալիների շարժումը...)։

[102] Վրաց հետազոտողները նշում են. «...Առաքելը հիանալի տեղյակ էր Վրաստանի քաղաքական զարգացմանը..., պատմիչի տեղեկատուների մեջ կային ... անձինք, որոնք սեփական աչքերով տեսել էին իրադարձությունները... Վրաստանում..., բացառված չէ, որ որոշ տեղեկություններ Առաքելը քաղել է վրացիներից»։ Տե՛ս Կ. Կուցիա, Առաքել Դավրիժեցու տեղեկությունները Վրաստանի մասին, էջ 7 (վրացերեն)։ Նշվել է նաև Դավրիժեցու քննադատական վերաբերմունքը նյութին. «...Նա համեմատում էր պատմությունները միմյանց հետ, քննադատաբար էր դիտում...» (նույն տեղում, էջ 6)։ Պատմիչը կարողանում է ճիշտ կողմնորոշվել քաղաքական իրադրության, նվաճողների նպատակների ու խնդիրների մեջ. «Առաքել Դավրիժեցին հրաշալի հասկանում է շահ Աբբասի քաղաքական նպատակները...» (նույն տեղում, էջ 5)։

[103] Համմ. օրինակ, «История царства грузинского Вахушти Багратиони» համապատասխան մասերը, Թբիլիսի, 1976։ Կ. Կ. Կուցիան Առաքել Դավրիժեցու երկի Վրաստանի մասին գլուխների վրացերեն հրատարակության առաջաբանում գրում է, որ պատմիչը մատուցում է նաև «իմ նուրույն բնույթի տեղեկություններ» (ընդգծումը մերն է—Լ. Խ.), էջ 8։

ճշգրտությամբ XVII—XVIII դդ. հայկական պատմական ոչ մի երկ չի համեմատվի Առաքել Դավրիժեցու «Պատմության» հետ»։ Դրանով էլ բացատրվում է Առաքելի երկի նկատմամբ հետաքրքրությունը, որի շնորհիվ վրաց պատմաբանները ուսումնասիրել, վրացերենի են թարգմանել, ծանոթագրել և տպագրել են հայ պատմիչի երկը[104]։

Հատարակական շարժումների և ազատագրական պայքարի ուսումնասիրությամբ զբաղվող պատմաբանների համար անտարակելի հետաքրքրություն են ներկայացնում Առաքել Դավրիժեցու երկի այն հատվածները, որոնք նվիրված են Լվովի քաղաքի հայ համայնքի տասնամյակներ տևած դիմադրությանը Հռոմի ոտնձգություններին։ «Գիրք պատմութեանցը» կարևոր աղբյուր է այս պրոբլեմն ուսումնասիրողների համար[105]։ *28-րդ գլխում առկա փաստերը լվովահայերի XVII դ. 20—50-ական թթ. կյանքի և հակառևմբորական պայքարի վերաբերյալ մեզի են ընկնում արտակարգ հավատարժությամբ ու հուսալիությամբ*[106]։ *Այս կապակցությամբ հայտնվել է այն կարծիքը, թե պատմիչը նշված դիմի տեղեկությունները կարող է քաղած լինել Լվովի գաղթավայրի ազդեցիկ ներկայացուցիչների նամակներից, ինչպես նաև՝ նրանց հետ ունեցած անմիջական պրուչյուններից*[107]։

Ի դեմս Լվովում կաթոլիկ եկեղեցու դրածո արքեպիսկոպոս Նիկոլ Թորոսովիչի Առաքել Դավրիժեցին սուր քննադատության է ենթարկում ֆեոդալական լեհաստանում տիրող կարգերը, որոնց ներքո հայկական գաղթօջախների ժողովրդական զանգվածները ստիպված էին ամբողջ տասնամյակներ հանդուրժել հետապնդումներն ու հալածանքները, իրենց տարրական իրավունքների ոտնահարումը, հավատի ծանակումը[108]։ *Գրքի ակնհայտ հաջողությունը, այն էլ՝ այնպիսի մի գրքի, որը պատմագրքերի շարքում առաջիններից մեկն է, որ հրատարակվել է տպարանային եղանակով և տալիս է ժամանակակից կյանքի ու դևռևս կենդանի մարդկանց պատկերները, չէր կարող որոշակի արձագանք չգտնել*[109]։ *Վաճառքի համար Լվով ուղարկված «Գիրք պատմութեանցի» վրա արգելք դրվեց «քանզի էին ի մատենին բանք բազումք անպատշաճք ղպատինացւոց և ղհռոմէականաց հաւատոց»։ Հռոմի պապի ներկայացուցիչը հայտարարեց. «թէ ոչ կարէ ինքն, գոլով ծառայ առաքելութեանն, հաւանիլ ընդ վաճառումն և ընդ ծաւալումն գրոց, յորս են բանք անարդանաց ղհռովուէն իւրեանց»*[110]։

---

[104] Կ. Կուցիա, *Առաքել Դավրիժեցու տեղեկությունները Վրաստանի մասին։*

[105] *Я. Р. Дашкевич*, Армянские колонии на Украине в источниках и литературе XV—XIX вв., Ереван, 1962, стр. 77.

[106] *Г. П. Пинагрян*, „История" Аракела Даврижеци и ее источники об антиунитатском движении в армянских колониях на Украине в 20-х—50-х гг. XVII в. *Հեռնյալ ժողովածուի մեջ՝* „Исторические связи и дружба украинского и армянского народов", вып. 3, Ереван, 1971, стр. 367—368.

[107] *Я. Р. Дашкевич, նշված աշխ., էջ 76—77։*

[108] *Անդ, էջ 78։*

[109] *Լեոն գրում է, որ Առաքելի երկը առաջին դիրքն էր, որ փոթորկալի կրքեր հարուցից և հետապնդվեց (տե՛ս «Երկերի ժողովածու», հ. III, գ. I, Երևան, 1969, էջ 440*; *Նույնի՝ Հայկական տպագրություն, հ. I, Թիֆլիս, 1904, էջ 269—270)։*

[110] *«Բանի մի՛ութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռոմայ», Սանկտ-Պետերբուրգ, 1884, էջ 215։*

Առաքել Դավրիժեցու երկի մեջ, իբրև առանձին գլուխ, ընդգրկված է ժամանակին ողջ հրեական աշխարհն ալեկոծած այն շարժման պատմությունը, որը սկսվել էր Իզմիր քաղաքում, և որը գլխավորում էր իրեն Մեսիա հռչակած ոմն Սաբբաթայ-Ցևի: Այդ հուզումները, որոնք պատմիչը նկարագրում է բեև բավականաչափ մանրամասնությամբ, բայց ոչ բարեկամական դիրքերից, հանդիսանում են Օսմանյան կայսրության քաղաքային ստորին խավերի՝ մեսիականությամբ ձևակերպված հատակորեն արտահայտված բողոքն ընդդեմ սոցիալական անարդարության և չեն կարող չհետաքրքրել մասնագետներին:

Այսպիսով, թվարկված բոլոր փաստերը՝ գալթիչների դեմ հայ գյուղացիների պայքարը, քաղաքային ու գյուղական բնակչության դիմադրությունը բռնի մահմեդականացմանը, Լվովի գաղթօջախի բնակիչների պայքարին բողոքն ընդդեմ Նիկոլ Բորբոսովիչի, որը ձգտում էր հայ Լեհեցին Հռոմին ենթարկել, այս ամենը ոչ այլ ինչ էին, քան տիրող կարգերի դեմ ժողովրդական մասսաների մղած պայքարի քողարկված ձևեր: Ինչպես հայտնի է, միջին դարերում «դասակարգային պայքարն ընթանում էր ... կրոնի քողի տակ» և «առանձին դասակարգերի շահերը, կարիքներն ու պահանջները թաքնվում էին կրոնական շղարշի ներքո»[111]: Ժամանակի պայմանների ներգործությամբ պայքարը դրսևորվում էր մերթ զինված ապստամբությամբ, մերթ բացահայտ ներձվածողությամբ, մերթ միստիկայի տեսքով[112]:

Առաքել Դավրիժեցու գրքում քիչ չեն նաև դասակարգային ու ազգային հետապնդումների դեմ ուղղված ժողովրդական զանգվածների բողոքը վկայող փաստերը, բողոք, որն իր արտահայտությունն է գտել միջնադարի համար բնորոշ միստիկայի ձևով: Այստեղ առաջին հերթին պետք է նշել գրքի այն մասերը, որոնք նվիրված են «սուրբ հայրերի հրաշքներին» և «հանուն հավատի նահատակներին» (գլ. 44—48), նրանց շիրիմների վրա երևացած «նշաններին», հավատուրացների դժբախտություններին (գլ. 49) և այլն: Հեղինակը, իր դարի և իր միջավայրի զավակը, չէր կարող, անշուշտ, իր գըրբում շրջանցել միստիկան. մանավանդ, որ վարքագրական գրականությունը «հրաշքների» և «նահատակությունների» նկարագրությունները (ինչպես թարգմանական, այնպես էլ ինքնուրույն) Հայաստանում հնուց գրավել են գրագետ մարդկանց ուշադրությունը: Բացի դրանից, երկի այդ մասերում արտացոլվում է հեղինակի աշխարհայացքը: Նշված գլուխներում, սակայն, Առաքել Դավրիժեցին, որպես ընդհանրապես գերարվեստական ճաշակի տեր վարպետ պատմող, սլաքուշաճ բարձրության վրա չէ: «Սրբերի» վարքերն ու նահատակությունները, ենթարկվելով վարքագրության ժանրի համար վաղուց ի վեր հաստատված կանոններին[113], մեծ մասամբ գրված են որոշ չափով վերամբարձ ոճով, ստերեոտիպ են, շատ նման ոչ միայն միմյանց, այլև

---

[111] *Ф. Энгельс*, Крестьянская война в Германии:—*К. Маркс, Ф. Энгельс*, Соч., т. 7, стр. 360.

[112] *Անդ, էջ 361:*

[113] *Корюн*, Житие Маштоца, Ереван, 1962; *Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի առաջաբանը, էջ 27—28*; *Համմ. նաև* „Памятники армянской агиографии", вып. I, Ереван, 1973; *Ռ. Ս. Տեր-Դավթյանի առաջաբանը, էջ 9—13 և К. М. Мурадян*, Древнеармянский перевод „Эпитафии" Григория Назианзина, „Кавказ и Византия", вып. II, Ереван, 1980, стр. 158—159 *և այլն:*

վարքագրական գրականության այլ նմուշներին: Դավրիժեցու կերտած կերպարներն անդեմ են և ավելի շուտ նահատակների սիմվոլներ են, քան կենդանի մարդիկ: Նահատակների մասին պատմություններն աչքի չեն ընկնում ընդհանուր առմամբ Դավրիժեցու երկին բնորոշ գեղարվեստական ճաշակով և հուզականությամբ, երբեմն թվում են փոխառված[114] և վատեղված «Գիրք պատմութեանցում» առանց քննական վերլուծման, որը, ընդհանուր առմամբ, երկի բնորոշ դիծն է: Ու թեև նահատակությունների նկարագրությունները սակավ հանրաճանաչ փաստերի արձանագրման տպավորություն են թողնում, բայց նրանց պատմական ֆոնը հայ ժողովրդի անալ կյանքն է օտար տիրապետության ներքո: «...Այդ վկայաբանության մեջ,— գրում է Մ. Աբեղյանը,— մեզ պատմագիրը չի տալիս երևակայական կամ առասպելական զարդարյալ պատմություն, այլ մի իրական թշվառ աշխարհի նկարագիր»[115]: Նշված գլուխները «պայծառ կերպով ներկայացնում են այն սոսկալի պայմանները, այն ընդհանուր մթնոլորտը, որոնց մեջ ապրում էր քրիստոնեությունը մահմեդական աշխարհում»,— ասում է Լեոն[116]:

Բացի նրանից, որ այս գլուխներում արժեքավոր նյութեր կան հայ եկեղեցու պատմության, պատմական աշխարհագրության, ինչպես նաև հայոց լեզվի՝ դրաբարի ու բարբառների պատմության վերաբերյալ, դրանք կարող են լրացուցիչ աղբյուր ծառայել նաև Հայաստանում քաղաքական իրադարձությունների ուսումնասիրման համար[117]: Նրանցում մեծ ճշտությամբ հաղորդվում է դարաշրջանի ոգին, Հայաստանի աշխատավոր մասսաների չափազանց ծանր դրությունը, մասսաներ, որոնք ենթարկվում էին ֆեոդալական շահագործման, աղգային ու կրոնական հալածանքի: Առաքել Դավրիժեցու այս պատմություններում արտացոլվում են նաև Հայաստանի աշխատավոր ժողովրդի ընդվզումներն ընդդեմ աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների բռնության, ընդդեմ Հայաստանում իրենց տիրապետությունը հաստատած Իրանի և Թուրքիայի իշխող ֆեոդալների դաժի իշխող կրոնի: Հայ եկեղեցին, ինչպես ցույց է տալիս պատմիչը, ոչ միայն չէր արգելում ժողովրդի այդ պայքարն ընդդեմ մահմեդական կրոնի (բուն Հայաստանում) և կաթոլիկական ռեակցիայի (Լվովի հայկական գաղթօջախում), այլև ոգեշնչում, ղեկավարում էր այն: Այդ այդպես էր, որովհետև՝ ինչքան էլ որ միջնադարյան քրիստոնեության (ինչպես և յուրաքանչյուր այլ կրոնի) հիմնական խնդիրն էր՝ ճնշվածներին «հեղափոխական գործողություններից» հետ պահելը, «նրանց հեղափոխական վճռականությունը»[118] ջախջախելը, այնուամենայնիվ աշխարհիկ իշխանության կամ մրցակից եկեղեցու դեմ պայքարի ժամանակ քրիստոնյա հոգևորականությունը, որն իր ձեռքին էր պահում ժողովրդի պատենցիալ ակտիվության հսկայական տարերքը, երբեմն այդ ակտիվության մի ոչ մեծ բաժին հանդուրժելով՝ թույլ էր տալիս ժողո-

---

114 Լեոն այն կարծիքն է հայտնում, որ վկաներին նվիրված հինգ գլուխները այլ հեղինակների գրչին են պատկանում (տե՛ս «Երկերի ժողովածու», հ. III, գ. I, Երևան, 1969, էջ 353):

115 Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 520:

116 Լեո, Երկերի ժողովածու, հ. III, գ. I, էջ 344:

117 Այդ մասին տե՛ս „Памятники армянской агиографии", Առաջարան, էջ ճ:

118 Վ. Ի. Լենին, Նշվ., հ. 26, էջ 286:

վրդին հանդես գալ իր թշնամու դեմ[119]: Հավատարմությունն իր կրոնին՝ մոլեգին դիմադրությունն այլ կրոններին և, հատկապես՝ իսլամին, վաղուց ի վեր եղել են հայ ևկեղեցու ավանդույթներում[120]:

Այսպիսով, կրոնական երանգ կրելով հանդերձ՝ դրական գնահատականի են արժանի «Գիրք պատմութեանցի» այն գլուխները, որոնք նվիրված են «հավատի նահատակներին», նրանց անձնազոհ պայքարին ընդդեմ մահմեդական հոգևորականության ճնշման և հանուն ազգային կրոնի, ինչպես նաև այն գլուխները, որոնցում մանրամասն շարադրված է լվովահայերի՝ կաթոլիկության տարածմանը ցույց տված դիմադրության պատմությունը. դիմադրություն, որը փաստորեն պայքար էր հանուն ազգային անկախության:

«Վկայությունների» և «Հրաշքների» հետաքրքրաշարժ պատմությունները XVII դարի ընթերցողի համար կարող էին առավել հետաքրքրություն ներկայացնել և բացառված չէ, որ հենց այդ գլուխները մեծ ժողովրդականություն բերեցին «Գիրք պատմութեանցի» առաջին հրատարակության: Գիրքը դարձավ հայ ընթերցողի ամենասիրած գրքերից մեկը:

Առաքել Դավրիժեցու երկի այդ մասերը կոչված էին արթնացնելու հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը: Նրանք հայրենիքի հանդեպ ժողովրդին հավատարմության և անկախության համար պայքարի կոչ էին անում: Հանրահայտ է, օրինակ, որ ռուսական ևկեղեցու ստեղծած՝ «հանուն հավատի նահատակների» հերոսական կերպարները և ընդհանրապես վարքագրական ժանրը արդեն XIII դ. օգտագործվում էին որպես միջոց՝ արտահայտելու ազգային բողոքն ընդդեմ Ռուսիայի թաթարական լծի[121]: Հայ իրականության մեջ, որտեղ վարքագրական գրականության հանդես գալը հետազոտողները կապում են քրիստոնեության հաստատման հետ[122], «վկաներ» և հանուն հավատի մարտնչած անձանց կերպարները հնուց ի վեր ծառայում էին ժողովրդի դաստիարակության: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում դրությունը ավելի վատթարացավ, որովհետև կաթոլիկոսությունը և իրենք՝ կաթոլիկոսները, ենթակա վիճակում էին, նրանց գոյությունն ամբողջությամբ կախված էր օսմանյան ու պարսկական տիրակալներից: Դավրիժեցին բերում է բազմաթիվ ծանր ու ծանակի, ֆիզիկական ու բարոյական խոշտանգումների փաստեր, որոնց ենթարկվում էին հայ ևկեղեցու ծերունի սպասրիարքները[123]: Դրանց նախաձեռնողը պարսից շահ Աբբաս Ա-ն էր, որին իրանական (և ոչ միայն իրանական) պատմա-

---

[119] *Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Б. Ф. Поршнев*, Феодализм и народные массы, М., 1964, стр. 380—411.

[120] *Ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Շարդինը, որը XVII դ. երկրորդ կեսին եղել էր Արեվելքում, գրել է. «Դա զարմանալի և, եթե կուզեք, հրաշալի բան է. չնայած որ նրանք (հայերը—Լ. Խ.) վաղուց գտնվում են մահմեդական տիրապետության տակ..., այսուհանդերձ հաստատ են իրենց հավատքի մեջ. նրանք պաշտպանում են այն և չեն ուզում ընդունել այլ դավանանք, դիմակայելով ինչպես նրանց տիրակալների՝ մահմեդականների, ոտնձգություններին, այնպես և Հռոմի ևկեղեցու միսիոներներին» (մեջբերումն ըստ Մ. Կ. Զուլալյանի «Армения в первой половине XVI в.», стр. 88):*

[121] „История русской литературы", т. II, М.—Л., 1945, стр. 13.

[122] *Տե՛ս К. С. Тэр-Давтян*, Памятники армянской агиографии, стр. 6.

[123] *«Գիրք պատմութեանց», էջ 29, 208—209, 218—219, 246—247 և այլն:*

գրությունը[124] բնորոշում է իբրև քրիստոնեասեր միապետ, հռչակելով նրան էջմիածնի գրեթե փրկիչ[125] և «պետավոր հովանավոր»[126]: Սրան հակառակ, ոչ մեկի մեջ կասկած չի կարող հարուցել այն, որ շահի սիրախաղը քրիստոնյա հոգևորականության ներկայացուցիչների հետ, նրա թույլ տված «դավանանքի ազատությունը», ինչպես նաև Իրանում այլադավան բնակչության իրավունքներն ու արտոնությունները պաշտպանող ֆիրմանները (որոնք վերաբերում էին առաջին հերթին վաճառականներին ու հոգևորականությանը) կոչված էին Իրան ներմուծելու օտարերկրյա կապիտալը՝ նրա արտաքին առևտրի խթանման ու զարգացման համար[127]:

Սեֆյան հարստության հզոր միապետներից մեկի՝ շահ Աբբաս Ա-ի բարդ, լեգենդներով պարուրված կերպարը գրավել է ժամանակակիցների ուշադրությունը, և Դավրիժեցին բացառություն չէ: «Գիրք պատմութեանցում» բազմիցս հանդիպում են շահին բնորոշող առանձին արտահայտություններ և ամբողջ պարբերություններ: Մեր առջև կանգնում է պատմիչի նկարագրած բազմակողմանի, շատ բանով հակասական կերպարը. խիստ ակտիվ կառավարող ու զորապետ, նոսն, գործունյա, շահագրգռված իր տերության բարգավաճմամբ, շրջահայաց, խելամիտ և հոգատար, բարեհաճ դեպի քրիստոնյաները, որոնց հորդորում էր նկեղեցիներ կառուցել և սիրաշահում զանազան միջոցներով. ու այս ամենի կողքին նաև՝ «վիշապն անդնդային..., որ ի սկզբանէ զբարս օձի ունի բնաւորեալ յինքեան ընդդէմ քրիստոնէից», «խարդախ, աշխարհաւէր, խորամանկն ի հնարս չարեաց. անվթար կամակատարն սատանայի, հանճարեղն ի խորհուրդս չարեաց», «աւերիչն աշխարհաց և վատնիչն քրիստոնեայ աղանց՝ բնակարանն Նեսարայ» և այլն: Կարծում ենք, այս բնորոշումներն ընդհանուր առմամբ ճիշտ են արտացոլում ժամանակակիցների մեջ տարածված կարծիքը պարսից շահի մասին[128]: Ի պատիվ Առաքել Դավրիժեցու պետք է ասել, որ հայերի նկատմամբ շահ Աբբաս Ա-ի քաղաքականությանը տված նրա դնահատականը ճիշտ է և բռնել է ժամանակի քննությունը: Շահը կազմակերպեց «մեծ սուրգունը»՝ ինչպես տնտեսական, այնպես էլ ստրատեգիական նպատակներ հետապըն-

---

[124] Մ. Աբեղյանը գրում է. «Ժամանակակիցները չեն հասկացել այդ բազավորին և նա զանազան գրույցների հերոս դարձած, նույնիսկ քրիստոնեասեր է համարվել» («Երկեր», հ. Դ, էջ 522): Սակայն, հարկ է նշել, որ այնքան էլ շատ չեն այն ավանդությունները, որոնցում շահ Աբբասը բնութագրված է որպես արդարադատ, մարդասեր արքա (Համմ. Ա. Տ. Դանալալյան, Ավանդապատում, Երևան, 1969, № 77, 147, 502, 587, 760, 761, 827 և 105, 622, 670գ, 833, 886):

[125] Իրանական պատմաբան Մուհամմադ Փարանդը շահ Աբբաս Ա-ին նվիրված աշխատության մեջ փորձում է ապացուցել, որ պարսից շահի արտաքին քաղաքականությունը Կովկասի ժողովրդին փրկություն էր բերում: Նրա աշխատության գլուխներից մեկն այդպես էլ կոչվում է. «Թավրիզից մինչև Շամախի կամ Ադրբեջանի և Կովկասի փրկության շրջանը» (տե՛ս Լ. Դանեղյան, նշված աշխ., էջ 208, ավելի մանրամասն՝ էջ 65—80):

[126] Ցավոք, այդ բնորոշումը, առանց անհրաժեշտ քննական մոտեցման, կրկնում են նաև մեր օրերի որոշ պատմաբաններ: Տե՛ս *М. Х. Гейдаров*, Замечания о предисловии и комментариях Л. А. Ханларяна к сочинению Аракела Даврижеци „Книга историй" (Известия АН Азерб. ССР, серия истории, философии, права, 1975, № 2, Баку, стр. 106), ինչպես նաև մեր պատասխանն այդ դիտողություններին (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1977, № 6, էջ 79—92):

[127] *М. С. Иванов*, Очерк истории Ирана, стр. 70.

[128] Համմ. Լ. Դանեղյան, նշված աշխ., էջ 172—188:

դելով։ Արդեն մեզ ծանոթ են պատմիչի տեղեկություններն այդ մասին. «զի եկեալ օսմանցւոցն անբնակ գտանիցին զերկիրն ի մարդկանէ։ Ու ոչ գտցի կերակուր և ոճիկ և այլ ինչ պիտոյք նոցա և անասնոց նոցա, և առ ի չգոյէ հարկաւորաց վտանգեսցին զօրքն օսմանցւոց։ Նաև սարեալ ժողովուրդքն լինիցին նմա անզերծանելի հարկատուք՝ ծառայք և հողագործք մինչև ցյաւիտեան»[129]։ «Բազում ծախիւք, ջանիւք և հնարիւք հալիւ» կարողանում է նա պարսից աշխարհ բերել վաճառականների, արհեստավորների և հասարակ աշխատավոր բնակչության հոկայական զանգվածներ՝ «ոչ թէ վասն օգտի նոցա՝ այլ վասն օգտի մեր՝ զի աշխարհս մեր շինեսցի և ազգն մեր յաւելցի»[130]։ Հայ գաղթականները հարկավոր էին շահին, ուստի վերջինս, շահագրգռված նրանցով[131] «պատրաստ և ողորմէր ի վերայ Հայոց՝ և սէր ցուցանէր և թէպէտ սուտ և անօտի և ոչ ճշմարտութեամբ, սակայն սէր ցուցանէր»[132]։ Բայց հենց որ գաղթականները հաստատվեցին նոր վայրում, շահը նրանց նկատմամբ սկսեց կիրառել այլ մեթոդներ. կարկանդակի քաղաքականությունն իր տեղը զիջեց մտրակի քաղաքականությանը։ Սակայն դա չէր վերաբերում ջուղայեցի մեծահարուստ վաճառական-խոջաներին, որոնց նկատմամբ շահը շարունակում էր բարեհաճ լինել։ Ավելին. նրա հաջորդները նույնպես շարունակում էին լավ հարաբերությունները նրանց հետ[133]։

Առաքել Դավրիժեցու կերտած դիմանկարների մեջ շահ Աբբաս Ա-ի դիմանկարը թերևս ամենացայտունն է։ Պատմիչը մեծ սիրով ու ջերմությամբ է խոսում Մովսես Սյունեցի կաթողիկոսի (1629—1632) մասին, որը մեծ ջանք էր ներդրել հայ ժողովրդի հոգևոր կյանքի վերածնման ու հետագա զարգացման գործում։ Սիրով է խոսում պատմիչը նաև նրա հաջորդների ու գործը շարունակողների՝ Փիլիպպոս Աղբակեցի (1633—1655) և Հակոբ Ջուղայեցի (1655—1680) կաթողիկոսների մասին։ Նրանց ջանքերով, ինչպես ցույց է տալիս Առաքել Դավրիժեցին, ավերակների միջից աստիճանաբար վերականգնվեց էջմիածինը, որն այն ժամանակ հայերի համար ոչ միայն կաթողիկոսական նստավայրը էր, այլև հոգևոր ու մշակութային կյանքի կենտրոնը, որտեղից լուսավորության շողը ափովում էր տարբեր երկրներում ապաստան գտած բոլոր հայ համայնքների ու գաղթօջախների վրա և որն աստիճանաբար վերածվում էր պետականությունից զրկված երկրի քաղաքական իշխանության ու մշակույթի կենտրոնի։ Այստեղ կարելի է գտնել կաթողիկոսների ու գիտնական-վարդապետների, Իրանի ու Թուրքիայի թագավորող տների ներկայացուցիչների, Կախեթի ու Քարթլիի վրաց թագավորների, վրաց ժողովրդի ազատագրական շարժման հերոս Գեորգի Սաակաձեի և ջալալիների կերպարները։ Վշտալի, բայց պայծառ գույներով պատ-

---

129 «Գիրք պատմութեանց», էջ 38։

130 Անդ, էջ 66։

131 Եվրոպական ճանապարհորդներից մեկը գրել է. «Այս հայերին նա բերեց իր մայրաքաղաքը որպես հպատակների, որոնք ամենից ավելի լավ էին ընտելացած՝ առևտուր անելու ինչպես թուրքերի, այնպես էլ քրիստոնյաների հետ, քանզի առաջինները նրանց ատում են ոչ այնքան, որքան պարսիկներին, իսկ երկրորդները նրանց դավանակից են (տե՛ս „Voyages du Chevalier Chardin en Perse“, մեջբերումն ըստ Ն. Գ. Կուկանովայի մեկնագրության, էջ 67)։

132 «Գիրք պատմութեանց», էջ 68։

133 Անդ, էջ 410—411։

կերված են «Հանուն հավատի նահատակների» դիմանկարները, որոնց հակադրվում են հավատուրացների «աստվածամոտ (պիղծ) տիպարները»: Այս կերպարները տարբերվում են ոչ միայն հերինակի՝ նրանց նկատմամբ ունեցած վերաբերմունքով, այլև նկարագրման եղանակով. պատմիչը ոմանց լոկ անվանում է կամ նկարագրում երկու-երեք տողով, ոմանց մասին խոսում է քիչ ավելի մանրամասն, ոմանց էլ տալիս է ազատիչ բնութագիր: Անշուշտ, վերջիններս ոչ միշտ են անաչառ: Դավրիժեցին՝ էջմիածնի միաբանության անդամը և ազգային եկեղեցու նախանձախնդիրը, որն իր գրքում հանդես է գալիս որպես քրիստոնեության և հայ-լուսավորչական հավատի ջատագով և որը խորապես հավատում է այդ կրոնի իսկությանն ու մահմեդականության համեմատությամբ նրա ունեցած առավելությանը և շարունակ ընդգծում է այդ, չէր կարող միատեսակ վերաբերվել մահմեդական տիրակալներին, որոնք ասպատակել են նրա հայրենիքը, և պետական վարպետներին:

«Գիրք պատմութեանցի» ընթերցողների առջև հառնում է նաև մեկ դիմանկար, իր իսկ՝ հերինակի դիմանկարը. վեհանձն, աշխատասեր, բարեխիղճ պատմիչն, որն անհունորեն սիրում էր իր ժողովրդին և ձեռնամուխ եղավ ուժից վեր աշխատանքի՝ նկարագրելու այն իրադարձությունները, որոնց ժամանակակիցն էր ինքը, դիմանկարը մի մարդու, որը տարիքի և մարմնական տկարության տակ կքավով, իր վրա վերցրեց հարեւանա ժողովրդի պատմության վշտալի իրադարձությունների լի ժամանակաշրջանի հավերժացման գործը, ոչ միայն կաթողիկոսի սուրբգրական հանձնարարությամբ, այլև սրտի թելադրանքով. «Տեսնելով զաւերս Հայաստան աշխարհին, և զնուազիլն մերոյս ազգին, և ղչարութիւն մահմետականաց, կսկծալի մորմոքմամբ այրիւր սիրտ իմ, վասն որոյ յօժարեցայ յարձանագրութեան սոցին»[135]: Սույն կերպարի մեջ անթակտելիորեն միահյուսված են ավանդական հայ պատմիչ-տարեգրիչը, որը, նստած վանքի ներսում, նկարագրում է երկրի վրա տեղացած ցավալի իրադարձությունները և պատմիչ-հետազոտողը, որն անդուլ կերպով նյութ է որոնում, ձգտում է ճշմարտությանը, ջանում գտնել փաստերի իսկությունը իր հետաքրքրությունների առարկան դարձած պատմական դեմքերի գնահատման մեջ, և որը շատ երկրներ է շրջագայել՝ ստուգելու այդ փաստերը: Ու թեև դիմանկարը տրված է լոկ մի քանի ստվերագծով, ընթերցողի առջև ելնում է կենդանի կերպարը ծերացած, հիվանդ վարդապետի, որը, կորցնելով տեսողությունը, իր կարողություններից վեր աշխատանքի մեջ ջանում է առավելագույն հավատարմությամբ արձանագրել նվաճողների գաղանությունները, «զգեղչին և զվատնին քրիստոնէից», «զանշքանալն և զաւերն» էջմիածնի, չի խնայում նույնիսկ իր ժողովրդի՝ երբեմն շատ բարձր դիրք գրավող ներկայացուցիչներին, որոնք հատանձնության են ենթել թշնամու հետ: Առաքել Դավրիժեցու միայն արտաքին կերպարը չէ, սակայն, որ մենք տեսնում ենք նրա երկում: Պատմիչի առանձին արտահայտություններից, ստեղծագործության ամբողջ ոգուց և նրանից, թե նա ինչպես է լուսաբանում այս կամ այն փաստն ու երևույթը, կարելի է դատել պատմիչի անձնավորության մասին, նրա պատմական ու

---

135 «Գիրք պատմութեանց», էջ 669:

հասարակական-քաղաքական հայացքների, մատենագրության և աշխարհայացքի մասին:

«Գիրք պատմութեանցի» «նախադրության» մեջ Առաքել Դավրիժեցին, հավատարիմ մնալով պատմահայր Մովսես Խորենացու պատգամներին և քաջ գիտակցելով, որ «ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան», շարադրում է այն սկզբունքները, որոնցով ինքն առաջնորդվելու է, ընդգծում, որ յուրաքանչյուր պատմական երկի հիմքը հավաստի ժամանակագրությունն է. «...Զսա պահանջելոյ հարկին աստանօր պարտ է դնել զբուականն իւր զհին, և ապա յարել ի նոյն պատմութիւն, որպէս զշինուածս, ըստ օրինի պատմագրաց»[136]: Եվ ամբողջ աշխատության ընթացքում նա ջանում է պահպանել այս սկզբունքը՝ բերել ստուգված ու ճշգրտված թվականներ: Դրա համար նա դիմում է զանազան անձանց, որոնում գրավոր հուշարձաններ, համեմատում, բաղդատում, զրանցում... Հանուն դրա նա կատարել է «զայսպիսի յոգնաշխատ և զբազմաներկ և զաւժանելի գործս... աւուրս յոլովս ի սմին դնգնելով և ի յոյզ երկիբս և յաշխարհս շրջագայելով ի խնդիր զրուցաց պատմութեան»[137]: Ինչպես ինքն է ասում, «զմի պատմութիւն տասն անգամ և այլ աւելի կրկնելով գրեցի, և զամս ինն ի սմին դնգնելով, և զինչս ծախելով, հազիւ թէ զայսքան պատմութիւնս ի մի վայր հաւաքեցի և գրեցի»[138]: Նրա երկի բազմաթիվ էլուխներ բովանդակում են շատ արժեքավոր վավերագրեր[139]: Այս կամ այն իրադարձությունը նկարագրելու համար նյութ քաղելով ականատեսների բանավոր պատմություններից, Առաքել Դավրիժեցին համեմատում ու վերլուծում է տվյալները և գրանցում առավել հավաստին, բայց հաճախ, ի վիճակի չինելով ինքնուրույն ընտրություն կատարելու մի քանի միմյանց հակասող տեղեկություններից, նա բերում է բոլոր տարբերակները, ընտրությունը թողնելով ընթերցողին[140]: Իրադարձություններին ու պատմական գործիչներին տված իր գնահատականներում նա ձգտում է լինել անաչառ ու բարեխիղճ: Հարազատ ժողովրդի պատմության մեջ աննպաստ դեր կատարած և միայն իրենց շահի մասին հոգալով՝ էջմիածնի պարտքերը բազմապատկած կաթողիկոսներին բնութագրելիս Առաքել Դավրիժեցին մռայլ գույները չի խնայում: Նա ընդգծում է անձնապաշտ գործիչների ոնայնությունը, աշխարհիկ վայելքների հանդեպ նրանց թուլությունը, շահախնդրությունը, անխնա հարազանում խարդախություններն ու մեքենայությունները, նրանց գովբռուտցները պատրիարքական աթոռին տիրանալու համար: Հայերին և քրիստոնյա այլ ժողովուրդներին ճնշող մահմեդական տիրակալները գնահատվում են խիստ բացասաբար, սակայն պատմիչը երբեք չի մոռանում նաև իր բարի խոսքն ասել այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է նրանց գործողություններին, որոնք օբյեկտիվորեն ծառայել են ժողովուրդների շա-

---

136 «Գիրք պատմութեանց», էջ 3:

137 Անդ, էջ 669—670:

138 Անդ, էջ 670:

139 Օրինակ, Սարգիս-Ձևիի շրջաբերականը, Լուսավորչի աջին նվիրված հիշատակարանները (տե՛ս Լ. Խաչիկյան, Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. I, էջ 144—145, 500, 515, 517, 536, 548 և այլն), Լեհաստանի հայոց արհավիրքների հետ կապված գրեթե բոլոր տվյալները, բացի՝ Վրաստանի պատմությանը վերաբերող նամակները և այլն:

140 «Գիրք պատմութեանց», էջ 219, 370:

հերին։ Այսպես, չթաքցնելով հակակրանքն իր հայրենիքն իրենց մեջ բաժանած Իրանի և Թուրքիայի կառավարողների նկատմամբ, միաժամանակ գոհունակությամբ արձանագրում է. «...Ամենայն աշխարհք արևելեայք և արևմտեայք օրհնեն և ողորմի տան երկուց թագաւորացն» (շահ Սեֆուն և սուլթան Մուրադին—Լ. Խ.), քանզի նրանք երեսուն տարով հաշտություն են կնքել և ժողովուրդներին հնարավորություն տվել շունչ առնել. չէ որ «նախ քան զպարսիցն ի փախստեան և ի թաքստեան կային, ի չափշտակութեան և յաւարառութեան, ի գերութեան և ի սպանութեան, ի սով և ի սուր, և մանաւանդ ողորմելի ազգս Հայոց»[141]։

Ջերմորեն սիրելով իր ժողովրդին, ցավակցելով նրա վշաերին, պատմիչը միևնույն ժամանակ տեսնում է նրա թերությունները և խարազանում դրանք[142]։

«Գիրք պատմութեանցի» պլխավոր հերոսը ժողովուրդն է։ Ինչ իրադարձություններ էլ նկարագրվին լինի հեղինակը, ինչ ժամանակահատված և աշխարհագրական սահմաններ էլ ընդգրկի, առաջին հերթին նա տեսնում է ժողովրդին, դրում նրա տառապանքի ու պայքարի, հույսերի ու երազանքների, նրա ստեղծարար աշխատանքի ու խաղաղ սխրանքի մասին։

Եվ ոչ միայն հայ ժողովրդի ցավն է հուզում մարդասեր պատմիչին. նրա գրքի էջերում կարելի է հանդիպել մի ամբողջ շարք ժողովուրդների ճնշված ու ստրկացված ներկայացուցիչների։ Միայն նրանց թվարկումը վկայում է շատ բան։ Դրանք հայերի հետ մշտապես շփվող մերձավոր հարևաններ են, հայերին ապաստան տված երկրների բնակիչներ, ոմանք էլ՝ «Գիրք պատմութեանցում» պատահաբար տեղ գտած ժողովուրդներ։ Որ խոսքը վերաբերում է ժողովրդական զանգվածների ծանր վիճակին, պատմիչն իր հայրենակիցների կողքին համակրանքով ու մեծ կարեկցանքով հիշատակում է նաև այլ ժողովուրդների՝ վրացիներին[143] և «ոչ դավանակից մահմեդականներին», հրեաներին, գերքերին ու պարսիկներին։ Հայաստանի աշխատավոր ժողովրդի նկատմամբ սոցիալական անհավասարության փաստերն արձանագրելիս Առաքել Դավրիժեցին բոլոր դեպքերում ընդգծում է. «եթէ՛ քրիստոնեայ, եթէ՛ մահմետական», «ոչ միայն զքրիստոնեայս, այլ և զմահմետականս»։ Նույնիսկ չալալիներին նվիրված գլխում, պատմիչը նրանց համարում է ավազակներ (իր հայրենիքը քայքայելու, խաղաղ բնակչությանը թալանելու համար), նշում է, որ «պայպուխի գործս գործէին» ոչ միայն մահմեդականները, «այլ և ի քրիստոնէից ազգէ՝ արք ոմանք...»[144]։ Պատմելով երևի հայ հանրահայտ գործչի մահվան մասին, Առաքելը, ընդգծելով վրացիների, աղբեջանցիների ու պարսիկների կարեկցությունը հայերին, ասում է, որ վշտացած էին ոչ միայն հայերը, այլև նրանց հարևանները։ Փիլիպոս կաթողիկոսի մասին ասում է, որ նրա համբավը տարածվել

---

141 Անդ, էջ 576։

142 Համեմ. Ս. Զամինյան, Հայ դրականության պատմություն, Նոր Նախիջևան, 1914, էջ 240։

143 Կ. Կոստիան գրում է. «Առաքել Դավրիժեցին չափազանց մեծ համակրանք է դրսևորում վրաստանի և վրացիների նկատմամբ և սրտի ցավով է նշում, որ պարսիկների ներխուժման արդյունքը եղավ հարուստ ու ծաղկուն Քարթլի-Կախեթի ավերումը» («Առաքել Դավրիժեցու տեղեկությունները...», էջ 7)։

144 «Գիրք պատմութեանց», էջ 85։

էր ողջ աշխարհում՝ «ոչ միայն ի մէջ Հայոց, այլ և մահմետականաց և վրաց»[145]: «Գիրք պատմութեանցի» առանձին դրվագներում ցույց են տրված տարբեր էնիկական խմբերի, տարբեր պետականության՝ կողք կողքի ապրող ներկայացուցիչների փոխօգնությունը, բարեկամությունը: Այսպես, Խաչատուրի նահատակության վերաբերյալ պատմում հեղինակը հիշում է ադրբեջանական մեծ բանաստեղծ Իմամզադին՝ նույնպես նահատակված XV դ. սկզբին: Խաչատուրին խոշտանգում էին նույն կերպ, ինչպես Նասիմին, և նա բարձրաձայն երգում էր Նասիմի երգերը[146]: Մեկ այլ նահատակի՝ Միխիթարին, մահից փորձում էին փրկել Վան քաղաքի նրա մահմեդական բարեկամները[147]: Իր հայրենիքի մահմեդական պետիչների կողքին Առաքել Դավրիժեցին նշավակում է նաև այն քրիստոնյաներին, որոնք, թեև հավատարիմ էին մնում իրենց կրոնին, բայց վիշտ ու ավերածություն էին պատճառում հայ ժողովրդին[148]: Նրա այս վերաբերմունքը կարմիր թելի պես անցնում է ամբողջ երկով: Աղքատության ու հուսալքման պատճառով իրենց կրոնից հրաժարվածներին պատմիչը խղճում է և կայունության ու արդարացման խոսքեր գտնում նրանց համար[149], իսկ ովքեր «դարձան ի հաւատոցն իւրեանց» հոժարակամ, հանուն բարեկեցության և նյութական շահի ակնկալության, այդպիսիները երբում առաջացնում են միայն զայրույթ ու պարսավանք[150]:

Հոգևորականությանը մերկացնող փաստերը, հայ եկեղեցու (որի ներկայացուցիչն է ինքը՝ Առաքել Դավրիժեցին) որոշ սպասավորների անպատշաճ վարքագծի բացահայտ դատապարտումը, մահմեդական առանձին կառավարողների գովաբանումը, հավատուրացներից ոմանց արդարացնելու ձգտումը, այս ամենը ոչնչով չի փոխում հեղինակի ընդհանուր բնութագիրը իբրև ուշ միջնադարի հայ պատմագրության տիպիկ ներկայացուցչի, որի սոցիալական հայացքները չէին տարբերվում և չէին էլ կարող առանձնապես տարբերվել նրա դասի սոցիալական հայացքներից: Սակայն բոլոր թերություններով հանդերձ, պատմիչի անկեղծությունն ու անաչառությունը, նրա բարեխղճությունն ու ճշմարտությունը գտնելու ձգտումը, ընթերցողին ներկայացվող նյութի նկատմամբ քննադատական վերաբերմունքը, պահանջկոտությունն իր նկատմամբ, օբյեկտիվությունը փաստերի ու անձանց գնահատման ժամանակ, ժողովրդասիրությունն ու ինտերնացիոնալիզմը խոսում են այն մասին, որ «Գիրք պատմութեանցի» հեղինակը կարողացել է վեր բարձրանալ իրեն վիճակված հասարակական դերից: Այնպիսի մի դարաշրջանում, երբ պատմիչները հիմնականում զբաղված էին այս կամ այն տիրակալին գովաբանելով, միապետերի ու զորապետերի «վաստահեղ» արշավանքները նկարագրելով, նա ստեղծել է իր տեսակի մեջ բացառիկ մի ստեղծագործություն, որն արժանորեն ձևրք է բերել Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի և Իրանի XVII դ. սկզբից մինչև 60-ական թթ. պատմության հավաստի աղբյուրի համբավ և առ այսօր իրավացիորեն

145 Անդ, էջ 325:
146 Անդ, էջ 534—537:
147 Անդ, էջ 549:
148 Անդ, էջ 49:
149 «Գիրք պատմութեանց», էջ 133:
150 Անդ, էջ 67—68, 134—135:

համարվում է «ոչ թե ռազմական ու դինաստիական պատմություն, այլ հայ ժողովրդի պատմություն՝ նրա հարևանների պատմության վերաբերյալ էքսկուրսներով»[151]:

Առաքել Դավրիժեցու՝ ժողովրդին մոտ լինելու հանգամանքը և նրա երկի անկախությունը «իրանական պաշտոնական կառավարական տեսակետից»[152] հնարավորություններին թույլ են տալիս ոչ միայն առանց տատանվելու օգտվել պատմիչի տվյալներից, այլև լրացնել ու նրանցով ստուգել այլալեզու աղբյուրների տեղեկությունները[153]:

Առաքել Դավրիժեցու երկը կարևոր է նաև նրանով, որ այն, բացի տեղեկություններից, փաստերից, անուններից, դեմքերից ու թվականներից պահպանել և սերունդներին է հասցրել այդ փաստերի գնահատականներն ու վերլուծությունները, հեղինակի, որպես անհատականության և իր դասի ներկայացուցչի, աշխարհայացքը:

Ժամանակակիցները նրա պիտելիքների և կրթվածության մասին գրել են հարգանքով[154]: Բազմակողմանի զարգացած լինելու մասին են վկայում մի շարք փաստեր: Ուշագրավ է Աստվածաշնչից օգտվելու նրա եղանակը: Պատմիչը հաճախակի արված բառույթ մեջբերումների կողքին շատ անգամ այլաձևում կամ իր խոսքերով է հաղորդում սուրբ գրքի իմաստը, երբեմն վկայակոչում է, ըստ երևույթին, հիշողությամբ: Նրա երկի տեքստը լի է աստվածաշնչական ասույթներով ու կիրպարներով: Աչքի են զարնում նաև հեղինակի լայն մտահորիզոնը, նրա իրազեկությունը և աշխույժ հետաքրքրությունը ոչ միայն իր հայրենիքի ու հարևանների, այլև երբեմն Հայաստանից շատ հեռու երկրների մասին[155]:

Բոլոր դեմքերին և դեպքերին Առաքելը տալիս է իր սեփական գնահատականը՝ լինի դա ջալալինների ապստամբություն, թե՛ մեհրական շարժում Օսմանյան կայսրության հրեանների միջավայրում, վրաց թագավորների երկպառակությունը, թե՛ «մեծ սուրգունը», փոխարինաբար վերցված պրոմը, թե՛ մահմեդական ագրեսիայի դեմ քրիստոնեական պետությունների տարանջատվածության պրոբլեմը, մոլորով Գևորգի Սահակաձեն թե՛ շահ Աբբաս Ա-ն,

---

151 *И. П. Петрушевский*, Очерки..., стр. 48· 49.

152 *Անդ, էջ 49:*

153 *Անդ, էջ 49—50*; *А. С. Тверитинова*, Восстание Кара Языджи-Дели Хасана... стр. 19—20; **Մ. Կ.** *Գուլսյան, Ջալալինների շարժումը..., էջ 29 և այլն:*

154 *Ստեփանոս Լեհացին իր գործերից մեկի հիշատակարանում գրում է. «...Բազում էին երևելի վարդապետք (յէջմիածին) քաջարանք, բանաստեղծք աստուածային գրոց, քաջք, գիտունք և հմուտք, յորոց մի է և Առաքել վարդապետն» (Գ. Զարպհանալյան, Պատմութիւն հայերէն դպրութեան, հ. Բ, Վենետիկ, 1878, էջ 172): Ի դեպ՝ սույն հիշատակարանի ինքնագիրը, որը հայտնաբերել է Հր. Միրզոյանը, պահվում է Մաշտոցի անվ. Մատենադարանում (ձեռ. № 5171, թ. 369ա); Զաքարիա Քանաքեռցին (Պատմագրութիւն, հ. III, Վաղարշապատ, 1879, էջ 4, 6, 8 և այլն) բազմիցս հիշում է Առաքելին, վկայակոչելով նրան որպես հավաստի ու գիտակ պատմիչի, որից նա շատ բան է սովորել:*

155 *Այսպես, գերբերի, զպարների, հունգարների (մաջարներ, ունկրուզներ) վենետիկցիների և այլոց կողքին Առաքել Դավրիժեցին իր ժամանակագրության մեջ հիշատակում է նաև խորեզմցիներին, որոնք քրիստոնեություն ընդունեցին շնորհիվ հայր Հովհանի (էջ 623): Հավանաբար այստեղ խոսքը այսպես կոչված «պրեսբիտեր Հովհանի թագավորության» մասին է (տե՛ս Լ. Ն. Гумилев, Поиски вымышленного царства, М., 1970, էջ 133—139... Նույնն է վկայում և հրեա Սաբաթայի մասին գլուխը. տե՛ս «Գիրք պատմութեանց», էջ, 631—665):*

կաթողիկոսները, Նիկոլ Թորոսովիչը, թե՛ հայ ժողովրդի լուսավորիչները Բարսեղ վարդապետի գլխավորությամբ, գեղանկարիչները, տպագրիչները և այլն։ Սրանց վերաբերյալ պատմություններում ու գնահատականներում արտացոլվում են Առաքել Դավրիժեցու աշխարհայացքի տարբեր կողմերը, նրա հայացքները հասարակության սոցիալական կյանքի այս կամ այն կողմի նկատմամբ։ Այս տեսանկյունից հետաքրքիր է պատմիչի բաղմիցս դրսևորվող վերաբերմունքը երկրում միասնական կենտրոնական իշխանության անհրաժեշտության և ժողովրդի ու երկրի համար այդպիսի իշխանության բացակայության կործանարար հետևանքների նկատմամբ։

Ինքնուրույն պետականության կորուստը վաղուց ի վեր ողբացող և հետագա դժբախտություններն ու փորձանքները պետականության բացակայությամբ բացատրող հայ պատմագրության համար սույն թեման կարծես թե դարձել էր ավանդական։ Խորենացին «Հայոց պատմության» մեջ զետեղել է հատուկ «Ողբ վասն բառնալոյ թագաւորութեանն Հայոց...», ուր ասվում է, որ ներքին ու արտաքին թշնամիների դեմ հայ ժողովուրդը մնաց առանց այնպիսի մի իւորհրդատուի և ղեկավարի, որն ընդունակ լիներ միավորել նրա ուժերը և առաջնորդել դեպի մարտ[156]։ Կիրակոս Գանձակեցին զանգատվում է, որ, ի տարբերություն այլ պատմիչների, որոնք իրենց պատմությունն սկսում են փառաբանված թագավորի կամ նշանավոր տոհմի կառավարումից, ինքն ստիպված է այլ կերպ սկսել իր խոսքը, որովհետև Հայաստանում ինքնուրույն պետականությունը «վազ ուրեմն բարձալ..., և իշխանք ոչ ուրեք երևեալ Հայկազնի, բայց թէ ուրեք ուրեք ղօղեալք և թաքուցեալք յօտար աշխարհի»[157]։ Այդպես է վարվում նաև Առաքել Դավրիժեցին, որն իր երկի գլուխներից մեկը սկսում է հայերին կշտամբելով. «Ազգս Հայոց, որք մատամբն և կամօքն իւրեանց կուրացուցին զաչս իւրեանց, զի ինքեանք կործանեցին զթագաւորութիւնն իւրեանց՝ ննգութեամբ և անհնազանդութեամբն իւրեանց և հղեն ոտից կոխան, և ծառայք և գերիք այլոց ազգաց և թագաւորաց և ի ժամանել նեղութեանց իրիք ի վերայ ինքեանց, իբրև ոչ գտանեն օգնութիւն յուստեքէ, անճար մնացեալ փախստական լեալ ճողոպրին այսր և անդր»[158]։ Նման հատվածներ «Գիրք պատմութեանցում» շատ են. դրանք սփռված են ամբողջ երկում, որը տոգորված է հայ պետականության և ազգային անկախության կորստյան վշտի զգացմամբ. կորուստ, որը դարձավ պատճառ երկրի քայքայման, աղքի ջլատման ու տարանջատման և հայերի հարազատ հողում այլազգիների տնօրինության։ Թշնամուն հակահարված տալու համար ուժերի քաղաքական համախմբան անհրաժեշտության այդ նույն գաղափարն անցնում է Առաքել Դավրիժեցու՝ նաև Վրաստանի պատմությանը նվիրված ամբողջ պատումի միջով[159]։

* * *

Առաքել Դավրիժեցու հետաքրքրությունների և հաղորդած տեղեկությունների լայն ու բազմակողմանի ընդգրկմամբ է կանխորոշվում ընթերցողի

---

156 *Տե՛ս* Մովսես Խորենացի, *Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, գ. Գ, գլ. ԿՀ, էջ 360։*

157 Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 9։*

158 *«Գիրք պատմութեանց», էջ 147։*

159 *Անդ, էջ 7—8։*

վերաբերմունքը «Գիրք պատմութեանցի» նկատմամբ[160]: Մենք արդեն նշել ենք «Գիրք պատմութեանցի» մատուցած ծառայությունները այն մասնագետներին, որոնք հետազոտում են Ադրբեջանի սոցիալ-տնտեսական պատմությունը[161], ինչպես նաև վրաց ժողովրդի քաղաքական պատմությունն ու հասարակական շարժումները, որոնց բավական մեծ տեղ է հատկացված այն ժամանակվա իրադարձությունների ընդհանուր շարադրանքում, ժամանակագրության մեջ և հատուկ գլուխներում[162]: Երկը տեղեկություններ է բովանդակում նաև Իրանի և Թուրքիայի պատմության, այդ երկրներում ապրող հրեաների ու այլ ազգային փոքրամասնությունների պատմության վերաբերյալ: Հետաքրքիր են պատմիչի բերած փաստերը լվովահայերի, Լվովի և Լեհաստանի մասին[163]: Ընթերցողն Առաքել Դավրիժեցու երկում կարող է գտնել առանձին տեղեկություններ նաև Արտապատանի (Պարսկական Իրաք) մասին, հիշատակություններ միջինասիական ժողովուրդների[164], Աֆղանստանի, Հեռավոր Հնդկաստանի և այլ երկրների մասին:

Դավրիժեցու տեղեկությունները անշուշտ չեն կարող հիշյալ երկրների ու ժողովուրդների պատմության համար անվերապահ վկայություններ հանդիսանալ, սակայն բազմաթիվ են այն դեպքերը, երբ մատենագիտներն օգտվել են՝ հիմնական աղբյուրների շարադրանքի առանձին մասեր լրացնելու, ճշտելու, երբեմն նաև՝ ուղղելու համար[165]: Ընդ որում, ճշգրտումներն ու

---

160 *Տե՛ս* Վ. Առաքելյան, նշված հոդվածը, էջ 43։

161 *Ի. Պ. Պետրուշևսկին Ադրբեջանի XVI—XIX դդ. սկզբի սոցիալ-տնտեսական պատմության վերաբերյալ հետազոտության մեջ պարսկալեզու պատմական, հատկապես՝ սակավ բովանդակալի, աղբյուրների ու փաստաթղթերի կողքին օգտագործել է նաև հայկական աղբյուրների և, առաջին հերթին, «Գիրք պատմութեանցի» ավյալները։ Գիտնականը հայ պատմիչի երկը շատ բարձր է գնահատում (տե՛ս* «Очерки...», стр. 48—50).

162 *Տե՛ս «Գիրք պատմութեանց» գլ. 9—12։*

163 *Ուկրաինայի հայկական գաղթօջախների վերաբերյալ ծանրակշիռ աշխատության հեղինակ Յ. Ռ. Դաշկևիչը գրում է. «Հայ նշանավոր պատմիչը, ի դեմս արքեպիսկոպոս Նիկոլի, ցասումով մերկացնում է ֆեոդալական լեհահաստանում տիրող ամբողջ կարգը, որի ժամանակ հայերի ստորին խավերն ստիպված էին տառապանքներ շարունակ կրել հռոմի հռանդուն կամակատարների ու նրանց արբանյակների բռնություններից, հետապնդումներից, անարգանքից» (Տե՛ս* «Армянские колонии на Украине в источниках и литературе XV—XIX вв», стр. 78).

164 *Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների ինստիտուտի աշխատակից Լ. Ք. Տեր-Մկրտչյանը հրատարակության է պատրաստել հայկական աղբյուրների տեղեկությունները Միջին Ասիայի մասին 1979 թ. լույս տեսավ V—VII դդ. աղբյուրներն ընդգրկող մասը. Առաքել Դավրիժեցու ներկայացրած նյութերը զետեղված են այդ աշխատության հաջորդ հատորում (տե՛ս* «Армянские источники о Средней Азии VIII—XVIII вв.» М., 1985).

165 *Ի. Պ. Պետրուշևսկին նույն ժամանակաշրջանին նվիրված՝ Բաքանդար Մունշու երկի մասին խոսելիս ընդգծում է. «Շատ անգամ հեղինակը որոշ չափով օրյեկտիվ է երևում։ Բաքանդար Մունշու տեղեկությունների ճշտությունն ու ստուգությունը մի շարք դեպքերում հաստատվում են XVII դ. հայ պատմիչ Առաքել Դավրիժեցու տեղեկություններով... Մինչդեռ, հազիվ թե կարելի է կասկածել այն բանում, որ Առաքել Դավրիժեցին պարսկալեզու պատմագրության գիտակ չէր և չի օգտվել Բաքանդար Մունշու երկից» («Очерки...», էջ 35); Լ. Դանիելյանը Մունշու և Առաքել Դավրիժեցու տվյալների համեմատությամբ համոզիչ կերպով ապացուցում է, որ հայ պատմիչը չի օգտվել Մունշու երկից։ Ինչ վերաբերում է այս երկու հեղինակների բերած փաստերի համընկնմանը, ապա դա, ըստ հրևույթին, մի ավելորդ անգամ խոսում է երկու հեղինակների տեղեկությունների անաչառության ու հավաստիության մասին (տե՛ս նշված աշխ., էջ 22—24)։*

ուղղումները վերաբերում են ոչ միայն մատենակի հարցերին (առանձին թվերի, թվականների ու փաստերի), այլև պիտավորին՝ այն տեսանկյանը, որով պիտվում ու մեկնաբանվում են փաստերն ու իրապարձութիւնները։

«Գիրք պատմութեանցի» փաստերը հիմնականում համերաշխ են, համաձայնում են, երբեմն էլ առաջիորեն համընկնում պարսկական, թուրքական, լհհական, վրացական աղբյուրների տվյալների հետ[166]։ Սակայն մանրակրկիտ համեմատական ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ կան նաև տարբերութիւններ[167]։ Ընդ որում, անհրաժեշտ է ընդգծել մի բնորոշ առանձնահատկութիւն. միևնույն իրապարձութիւնները լուսաբանվում են տարբեր կերպ, կախված հեղինակի բռնած դիրքից[168]։ Աչքի է ընկնում ևս մի հանգամանք. Առաքել Դավրիժեցու երկում երբեմն դանում ենք որոշ իրապարձութիւնների ու փաստերի վերաբերյալ բերվող պանդան ուեակնկանները, որոնց արտացոլմամբ հայ պատմիչը միաժամանակ բացահայտում է իր վերաբերմունքը նրանց նկատմամբ։

* * *

«Գիրք պատմութեանցում» վետեղված են, ինչպես արդեն ասվել է, նաև հատվածներ, գրված ոչ իր՝ Առաքել Դավրիժեցու կողմից։ Դա առաջին հերթին վերաբերում է ԽՆ (55-րդ) գլխին՝ «Պատմութիւն Աղուանից աշխարհին, արարեալ Մարեցի Յովհաննէս վարդապետին»։ Այնուհետև, թանկարժեք քարերին ու նրանց հատկութիւններին նվիրված գլուխները, գրված Հալեպցի ակնագործ Սարգիս քահանայի և երկու այլ՝ անանուն հեղինակների ձեռքով։ Ծ (50-րդ) գլուխը՝ «Յաղագս մատենական հրկիզութեան, որ եղև ի Կոստանդնուպոլիս մեծ քաղաքին», որի հեղինակն է նկարագրված աղետի ականատես էջմիածնի միաբանութեան անդամ Ստեփանոս վարդապետը, ԼԲ (32-րդ) գլխին կցված ոչ մեծ հատվածը՝ գրված Փարխինդ գյուղի բնակիչ Կարապետ Բաղիշեցու կողմից և վերնագրված «Այլ ևս կարճ վարդապետաց»։

«Գիրք պատմութեանցի» 56-րդ գլուխը յուրօրինակ ժամանակագրութիւն է։ Որոշ հայագետներ ենթադրել են, թե այդ գլուխը նույնպես այլ

---

[166] *Տե՛ս Հ. Գ. Փափազյան, ՄՊՀ, պր. 1, էջ 272։ Լ. Դանեղյանը նշված մենագրության մեջ (էջ 70—76) համաձայնում է այդ ավյալների համընկնումը։ Մ. Զուլալյանը ջալալիների շարժմանը նվիրված աշխատութեան մեջ (տե՛ս էջ 20—21) տալիս է այդ շարժման բնութագրումը թուրքական աղբյուրների կողմից, որը քիչ բանով է տարբերվում Առաքել Դավրիժեցու տված բնութագրից։ Վերջ թաղաքի արհեստների ավյալների հետ Առաքել Դավրիժեցու տեղեկութիւնների համընկնման մասին են խոսում Յ. Ռ. Դաշկևիչը (տե՛ս նշված աշխ., էջ 76—77) և Գ. Պ. Պիոտրովսկին (տե՛ս վկայակոչված հոդվածը, էջ 367—368)։ Կ. Կուցիան առաջաբանում ասում է. «Առաքել Դավրիժեցու բերած տեղեկութիւնները ... անկասկած վստահութեան են ներշնչում, քանի որ նրանք հաստատվում են ինչպես վրացական (Բերի Էգնատեշվիլու «Նոր Քարթլիի կյանքը», Թիմոթեոզի «Քնթեան թագուհու նահատակութիւնը», Վախուշտիի «Վրաստանի կյանքը»), այնպես էլ պարսկական (Իսքանդար Մունշու «Աբբասյան աշխարհակալող պատմութեանը») աղբյուրների տեղեկութիւններով» (տե՛ս էջ 8)։*

[167] *Լ. Դանեղյանը «Գիրք պատմութեանցի» միջոցով ուղղում և ճշգրտում է Իսքանդար Մունշու հաղորդած տեղեկութիւնները (օրինակ՝ Զարեհյարուխ բերդի գրավման հանգամանքները (նշված աշխ., էջ 68), Երևանի բերդի պաշարման տևողութիւնը (էջ 73—80) և այլն)։ Թիչ չեն նաև այլ հեղինակների օգնութեամբ Առաքել Դավրիժեցու բերած հատուկ անունների և առանձին փաստերի ուղղման դեպքերը։*

[168] *Լ. Դանեղյան, նշված աշխ., էջ 74։*

հեղինակի գրչին է պատկանում[169]: Սակայն բնագրի ուշադիր ընթերցումը ցույց է տալիս, որ դա Առաքել Դավրիժեցու բանաքաղությունն է: Հայագիտությանը հայտնի են դեպքեր, երբ պատմիչները մանր ժամանակագրությունները կրճատից փրկելու համար կցել են իրենց երկերին[170]: Առաքել Դավրիժեցին այդպես է վարվել «Պատմութիւն Ազուանից աշխարհին...» հետ, բացի դրանից ի մի է հավաքել հայտնի ու անհայտ հեղինակների մի քանի ժամանակագրություններ[171] և նրանց հիման վրա ստեղծել նոր ժամանակագրություն, «կարգավորել է», ինչպես ինքն է ասում, զանազան հեղինակների տվյալներ և իր կողմից ավելացրել լրացուցիչ տեղեկություններ[172]: «Բազմականաւ նշանակեալ համառօտ բանիցս... մեք կարդաւորեցաք, ... ժողովեցաք ի մի վայր զորս և գտաք, ... և զոր ինչ ի մեր ժամանակս գործեցաւ նշանաւոր բանք՝ զայնս ևս ընդ սոցին պատաւորեալ զրեցաք զիւրաքանչիւրսն յիւրում տեղւոջ...»[173]:

Աշխատությունում մի գլուխ վերնագրված է «Պատմութիւն անցից հրէից ազգին և Սապէթայ անուն ջհտին, որ ասէր, թէ ես եմ Քրիստոս փրկիչ հրէից ազգին. եւ արդ՝ եկի եւ յայտնեցայ՝ զի փրկեցից զնոսա, եւ այլոց իրակութեանց, որք սոցունց հետեւեցան»: Գրքի առաջին հրատարակության մեջ այս գլուխը չի ընդգրկվել այն պատճառով, որ այն բացակայում էր Դ (Վիեննայի) ձեռագրում, որի հիման վրա, ինչպես մենք թվում է, հրատարակել է գիրքը Ոսկան Երևանցին: Սույն գլուխը բացակայում է նաև Բ (№ 1772) ձեռագրում, ընդօրինակված նույն գրչի՝ Ավետիս Երեցի կողմից: Այդ գլուխը, ձեռագրի վրա աշխատանքն ավարտելուց հետո, ամբողջությամբ մրցրվել է Դ (№ 1773) ձեռագրի մեջ: Ընդ որում, նշված գլխի ձեռագրերը նույնանման է այն ձեռագրերին, որով գրված են հետագայի ընդմիջարկությունները և որով ուղղումներ ու հավելումներ են արված 1772 և 1773 ձեռագրերի տեքստում: Նկատելի է նաև այն, որ խնդրո առարկա գլխի ոճը և ուղղագրությունը համապատասխանում են ամբողջ «Գիրք պատմութեանցի» ոճին ու ուղղագրությանը: Եվ քանի որ «Հրեա Սապեթային» նվիրված գլխում նկարագրված իրադարձությունները, ճիշտ այնպես, ինչպես հավելագրություններում արձանագրված իրադարձությունները, վերաբերում են 1662 թ. հետո ընկած ժամանակաշրջանին[174], երբ պատմիչն արդեն ավար-

---

169 *Տե՛ս* Հ. Ս. Անասյան, *Հայկական մատենագիտություն ե—ԺՀ դդ.*, հ. I, Երևան, 1959, էջ 1145:

170 *Տե՛ս* Վ. Ս. Հակոբյան, *Մանր ժամանակագրություններ*, հ. I, էջ 12—13:

171 *Անդ*, հ. I, էջ 148—149, 167, 302—303, հ. II, էջ 262—263, 429 և այլն:

172 «Գիրք պատմութեանց», էջ 619: Այդ մասին մանրամասն տե՛ս 56-րդ գլխի ծանոթագրություններում:

173 «Գիրք պատմութեանց», էջ 619:

174 Սաբաթայ-Ցևիի (1626—1676) անվան հետ կապված շարժումն առանձնապես լայն թափ ընդունեց XVII դ. 60-ական թթ. երկրորդ կեսին, իսկ 1666 թվականը Սաբեթայի հետևորդներն անվանեցին «մեսիայի» գալստյան տարի: Նույն 1666 թ. օսմանյան կառավարությունը Նորահայտ «փրկչին» բանտարկեց Աբիդոս ամրոցում: Առաքել Դավրիժեցին, որ քաջատեղյակ էր ժամանակակից իրադրությանը, չէր կարող անուշադիր թողնել այդքան աղմուկ բարձրացրած դեպքերը: Շարադրանքն ավարտվում է Սաբաթայ-Ցևիի դատավարությամբ, իր գաղափարներից հրաժարվելու և մահմեդականություն ընդունելու պատմությամբ: Սաբաթայի հետագա ճակատագիրը հայտնի չէ: Առաքել Դավրիժեցուն, որը քննարկվող գլուխը եզրափակում է երկնկայում 1667 թ. նոյեմբերի 14-ին և Արդարիլ, Թավրիզ, Երևան, Թիֆլիս, Գյան-

տել էր իր պատմության շարադրանքը և դեռ ողջ էր, այս փաստը նույնպես միանալով վերոհիշյալ մյուս հանգամանքներին, թույլ են տալիս ենթադրելու, որ Սաբաթայի վերաբերյալ գլուխը, ինչպես նաև 1662 թ. հետո տեղի ունեցած իրադարձություններին վերաբերող հատվածները Պատմութեան մեջ ներառվել են հենց Առաքել Դավրիժեցու ձեռքով[175], այն բանից հետո, երբ հեղինակն արդեն ավարտել էր երկը և հանձնել էր ընդօրինակողներին՝ բազմացնելու համար։

Յայոք ե (7296) ձեռագիրը, որը մեզ հասած ձեռագրերից ամենահարուստն է Գ (1773) ձեռագրին և ընդհանուր առմամբ լավ է պահպանված։ Աղվանքի վերաբերյալ գլխի կեսից ընդհատվում է (613 էջ՝ ըստ երրորդ հրատարակության) այնպես որ մենք չդիտենք, եղե՞լ է արդյոք այդ ձեռագրում նշված գլուխը, թե ոչ։ Սաբաթայի մասին գլուխը առկա է № 5025 ձեռագրում, սակայն նրա վերջը չի պահպանվել. ձեռագիրն ընդհատվում է ըստ երրորդ հրատարակության 656 էջով, բայց, ինչպես արդեն ասվել է, այս ձեռագիրը 1773 ձեռագրի ուշ ընդօրինակություններից է և բնագրագիտական հետաքրքրություն չի ներկայացնում։

«Գիրք պատմութեանցում» առկա են հայ վարդապետների ու կաթողիկոսների սերնդաբանությանը նվիրված հատուկ գլուխներ, ինչպես նաև օսմանյան սուլթանների ու պարսկական շահերի տոհմաբանական աղյուսակներ։ Վերջիններս, սակայն, ոճով և բովանդակությամբ խիստ տարբերվելով «Գիրք պատմութեանցի» հիմնական գլուխներից, որոշ հայագետների հիմք են տվել կարծելու, որ դրանք Առաքել Դավրիժեցու կողմից չեն գրված[176]։ Ուրիշների կարծիքով Առաքել Դավրիժեցին, այդ գլուխների հեղինակը լինելով հանդերձ, հնարավորություն չի ունեցել աշխատանքն ավարտել և վերջնականապես մշակել։ Եվ իրոք, աղքատիկ նյութով ու թվականներով ներկայացվող սխեմատիկ տվյալները, ինչպես նաև Սսի ու էջմիածնի կաթողիկոսների ցանկերը թողնում են սոսկ մի այնպիսի հենքի տպավորություն, որի վրա հեղինակը պատրաստվել է ստեղծել կենդանի պատումի հյուսվածքը, բայց չի հասցրել ավարտուն տեսքի բերել իր գործը։

* * *

XVII դարում գրական լեզուն Հայաստանում ինչպես քերականական կառուցվածքով, այնպես էլ բառապաշարով աղավաղված և լատինաբանություններով աղճատված գրաբարն էր։ Առաքել Դավրիժեցին դիտակցաբար հրաժարվում է այդ լեզվից։ «Գիրք պատմութեանցի» լեզուն տարբերվում է թե՛ դասական գրաբարից և թե՛ ժամանակի լատինաբանություններով հագեցված գրական լեզվից։ Երկը շարադրված է հասարակ, կենդանի խոսակցական լեզվով։ Եվ եթե նախորդ շրջանի պատմիչների գործերում ոճի պարզությունն ու լեզվի մատչելիությունը դիտվում էր որպես պարզունակության նշան և համարվում էր թերություն, ապա ներկա դեպքում այդ հատկություն-

---

ջա, Շամախի, Դամուր-Ղափու քաղաքներում ու նրանց շրջակայքում 1668 թ. հունվարի 4-ին տեղի ունեցած երկրաշարժերի և նրանց պատճառած ավերածությունների համառոտ նկարագրությամբ։

175 Տե՛ս «Գիրք պատմութեանց», Յառաջաբան, էջ Ը։ Համմտ. Հր. Միրզոյան, նշված հոդվածը, էջ 190—191։

176 Տե՛ս Գ. Ջարպհանալյան, Պատմութիւն հայերէն դպրութեանց, հ. II, էջ 176։

ները (որոնք բնորոշ են նաև Առաքել Դավրիժեցու մյուս ժամանակակիցներին՝ Զաքարիա Քանաքեռցուն և Դրիդոր Դարանաղցուն) դիտվում են որպես հեղինակի դեմոկրատիզմի և լուսավորչական ձգտումների արտահայտություն, թեև երկը գնահատողներն այս հարցում այնքան էլ միաբան չեն։ Բանասերներից ոմանք, ընդհանուր առմամբ բարձր գնահատելով Առաքել Դավրիժեցու գործը, բացասաբար են արտահայտվում նրա ոճի և լեզվի մասին[177]։ Հետադարձում այդ տեսակետը վերանայվեց և պատմիչի լեզուն ու ոճը ստացան ըստ արժանվույն բարձր գնահատական[178]։

Առաքել Դավրիժեցու Պատմության արտահայտիչ և օտար բառերով մատակարարված լեզուն երբեմն իր տեղը պիջում է վերամբարձ ոճի և դասական դրաբարին։ Սակայն սա հանդիպում է շատ հազվադեպ և արտահայտվում է չափազանց մեղմ ձևով, բխելով ավյալ հատվածի բովանդակությունից, թելադրված նրա բովանդակությամբ[179]։ Ընդհանրապես պատմիչը դեմ է ճոռոմ ոճին և անհատականալի լեզվին[180]։ Ընդհակառակը, նա քաջալերում է իր այն ժամանակակիցներին, որոնք ջանք են թափում ավելի հասկանալի դարձնելու համար հայ մատենագրությունը։

Պատմելով Սիմեոն Ջուղայեցու և Ստեփանոս Լեհացու մասին, մանրամասն նկարագրելով նրանց գործունեությունը գիտության և լուսավորության բնագավառներում, Առաքել Դավրիժեցին ցույց է տալիս ինչպես հայ մշակույթի երախտավորներն ակտիվ են վերստին հայերեն թարգմանել հնում արդեն թարգմանված գործերը, մեկնաբանում և ծանոթագրում, քանի որ դրանք «դժուարաւ ըմբռնի մտաց մարդկան և բաղում աշխատութեան պէտք են»։ Նոր թարգմանություններն ու մեկնությունները կոչված էին օգնելու ժամանակակից և գալիք սերունդների ընթերցողներին «առանց ուսուցանողի.. դիւրաւ հասկանալ և ի վերայ հասանիլ»։ Առաքելը նշում է, որ նախկին թարգմանությունների լեզուն անմատչելի էր և շատ դեպքերում աղճատում էր գրքի իմաստը, բովանդակությունը, դրա հետևանքով «ընթերցողն աշխատութիւն կրէր և օգուտս սակաւ գտանէր», իսկ նոր թարգմանիչների շահումները «բազում օգտութիւն շնորհէ մտաց մարդոյ»։ Ընդունելով որպես գլխավոր սկզբունք լեզվի բնականությունը, մատչելիությունը, հեղինակը չի հրաժարվում երբեք այդ սկզբունքից, գրում է ժողովրդի համար, ժողովրդին հասկանալի լեզվով[181]։

---

177 Գ. Զարպհանալյանը (տե՛ս «Պատմութիւն հայկբէն պարսից», մ. Բ, Վենետիկ, 1878, էջ 178) ասում է. «Ընթիր լեզու մը ունենալէն շատ հեռու կը սեպուի»։ Գ. Ջամինյանի բնութագրությամբ (տե՛ս «Հայ գրականութեան պատմութիւն», Նոր Նախիջևան, 1914, էջ 240) «Լեզուն տկար գրաբար է, խառն ժողովրդական և այլազգի բառերով»։

178 Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 514; Վ. Առաքելյան, նշված հոդվածը, էջ 42։

179 Խոսքը օտար զավիչների կողմից ավերված և ամայացված չքնաղ հայրենիքի մասին է. տե՛ս էջ 53—55։

180 Վ. Առաքելյանը իրավացիորեն նկատում է. «17-րդ դարի հեղինակը, որ ծնվել է ու կրթվել լատինաբան հայերենի շրջանում, առիթ չի փախցնում այդպիսի հայերենը քննադատելու։ Նա սրանք գրքի առաջին թերությունը համարում է նրա ճոռոմաբանությունը, անհասկանալիությունը» (տե՛ս նշված հոդվածը, էջ 39)։

181 Առաքել Դավրիժեցու լեզվի և ոճի մասին ավելի մանրամասն տե՛ս Վ. Առաքելյան, նշված հոդվածը, էջ 39—43։

Գրքին յուրահատուկ կոլորիտ հաղորդող օտար բառերի առկայությունը բացատրվում է ժամանակակից խոսակցական լեզվի մեջ այդ բառերի գործածությամբ։ Պատմիչը երբեմն գիտակցաբար է գործածում բառը, որպեսզի այն թարգմանի և ընթերցողին ներկայացնի նրա հայերեն համարժեքը ևս։ Այսպիսով, խոսակցական, տեղ-տեղ տիպականացված լեզուն և հստակ արտահայտված պատմողական ոճը Առաքել Դավրիժեցու Պատմության ակընհայտ առավելություններն են։ «Ամեն պատմություն կամ պրույցների ժողովածու, ինչպես է Առաքելի Պատմությունը, յուր կենդանությունը, գույնն ու երանգը առանում է միայն ժամանակի կենդանի լեզվով պատմվելով»[182]։

* * *

Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանցը» լինելով ոչ միայն XVII դ., այլ նաև նրան նախորդած մերձավոր շրջանի (որը որևէ լուրջ պատմագրական երկ չի տվել) ամենանշանակալից ստեղծագործությունը, նկատվել և բոլոր արժանվույն գնահատվել է ժամանակակիցների կողմից[183]։ *Հետագայում Առաքել Դավրիժեցու նկարագրած ժամանակահատվածին վերաբերող բոլոր պատմական երկերը այս կամ այն չափով հենվում էին նրա ներկայացրած նյութի վրա*[184]։ *Այստեղ հարկ չկա մեկ առ մեկ թվարկելու բոլոր այն գրքերն ու հոդվածները, որոնցում օգտագործված է Առաքելի երկը, մանավանդ, որ նրանց լրիվ մատենագիտական ցուցակը արդեն կազմել և հրատարակել է Հ. Ս. Անասյանը «Հայկական մատենագիտության» առաջին հատորում*[185]։ *Մեր կազմած՝ օգտագործած գրականության ցուցակում ներկայացվում է նաև գրականությունը, որը լույս է տեսել «Հայկական մատենագիտության» հրատարակումից հետո, կամ էլ՝ չի մտել Մատենադրության մեջ։*

ՆԵՐԿԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Առաքել Դավրիժեցու երկը պարունակող ձեռագրերից չորսն ընդօրինակված են մայր ձեռագրից, որը չի պահպանվել։ Դրանց թվում է նաև Վիեննայի ձեռագիրը (Դ), որը, մեր կարծիքով, հիմք է ծառայել Ոսկան Երևանցու անդրանիկ հրատարակության համար։ Վերջինս խմբագրական ու սրբագրական նշումներով գրեթե ամբողջությամբ համապատասխանում է Ոսկանի հրատարակությանը։ Ջգալի տարբերություններ ունեն Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող № 1772, 1773, 7296 ձեռագրերը։ Ոսկանը նկատելի փոփոխություններ է կատարել բնագրում. ջնջել է առանձին բառեր, տողեր և պարբերություններ, վերադասավորել է նախա-

---

182 Մ. Աբեղյան, *Երկեր*, հ. Դ., էջ 514։

183 Վերը մենք արդեն խոսել ենք նրա նկատմամբ Ստեփանոս Լեհացու և Զաքարիա Քանաքեռցու վերաբերմունքի մասին, բերել նրանց արտահայտած կարծիքները։ Այստեղ ավելացնենք, որ ձեռագրերից մեկի (№ 7296) հիշատակարանում (էջ 217) պատմիչի երկը բնութագրվում է որպես «վարդապետական»։

184 Պետք է նշել, որ Առաքել Դավրիժեցու տվյալների առաջին օգտագործողը եղել է Ոսկան Երևանցին, որը պատմիչի երկի առաջին հրատարակությանը կցված ինքնակենսագրության մեջ նկարագրում է Առաքել Դավրիժեցու հիշատակած իրադարձություններից մի քանիսը, որոնց ականատես ու մասնակիցն էր ինքը՝ Ոսկանը (տե՛ս Ամստերդամ, 1669 էջ 629—638)։

185 *Տե՛ս* հ. I, էջ 1145։

դասութիւններ, ինչպես ինքն է ասում, «զՊատմագիրս նոր՝ զարարեալն յԱռաքելոյ վարդապետէ, ...ոչ միայն տպագրեաց, այլև սրբագրեալ ուղղեաց ըստ քերականութեան արհեստի, զաղաւաղեալն ի դրչաց[186] անմտաց»[187]։ Հետագա հրատարակիչները հրաժարվել են Ոսկանի միջամտություններից, հիմք ընդունելով Դավրիժեցու երկի 2 պահպանված (այժմյան № 1772=Բ և № 1773=Դ) ձեռագրերը։ Ներկա հրատարակությունը պատրաստելիս մենք ձեռքի տակ ունեցել ենք, բացի նշված Բ և Դ ձեռագրերից, նաև Առաքել Դավրիժեցու օրոք ընդօրինակված հինգ դրչագրերից ևս երկուսը (№ 7296=ե և Վիեննայում պահվող 137 ձեռագրի միկրոժապավենը) (Մաշտոցի անվան Մատենադարանի № 678=Դ)։

Նշված չորս ձեռագրերից յուրաքանչյուրն ընդօրինակված լինելով մայր ձեռագրից, առանձին վերցրած ունի իր արժեքն ու նշանակությունը։ Այդ իսկ պատճառով էլ ձեռագրերից որևէ մեկը՝ որպես ամենակատարյալը ընտրելու և նրա հիման վրա բնագիրը կազմելու տարբերակը մեզ չի ներկայացել։ Բնագիրը լրացրել և ճշգրտել ենք մյուս ձեռագրերի և հրատարակությունների համապատասխան տվյալներով։ Լայնորեն օգտագործել ենք նաև ձեռագիր ժամանակագրություններ (ձեռ. № 10200, Ամիրաս Երզնկացու ժամանակագրությունը) և տպագիր երկեր (Թանկագին քարերին նվիրված Սարդիս քահանայի գործը, «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.»), որոնք Առաքել Դավրիժեցու պատմագիրքը չի պարունակում։ Տողատակին ներկայացված են ինչպես ձեռագրերի, այնպես էլ տպագրերի տարընթերցվածքները։ (Ա տառանիշով նշել ենք Ոսկան Երևանցու 1669 թ. Ամստերդամի հրատարակության ընթերցվածքները, է-ով վաղարշապատի երրորդ (1896 թ.) հրատարակությունը։ Երկրորդ և երրորդ հրատարակությունների միջև գրեթե տարբերություն չկա, այդ պատճառով 1884 թ. հրատարակության ընթերցվածքները տողատակում չեն բերվում)։ Ըստ որում՝ ոչ բոլոր դեպքերում է, որ անհրաժեշտ ենք համարել նշել տարընթերցվածքները։ Չեն նշված, օրինակ, անձնանունների և տեղանունների տարընթերցվածքները։ Պատահում են դեպքեր, երբ միևնույն անձնանունը կամ տեղանունը տարբեր է տառադարձված ոչ միայն տարբեր գրչագրերում, այլև միևնույն գրչագրի միևնույն էջում, երբեմն՝ միևնույն տողում։ Մեծ աշխատանք է տարվել բնագրում՝ տեղանունների և անձնանունների ուղղագրությունը ընդհանուր տեսքի բերելու առումով։ Նախապես որոշված էր տեքստում տալ Առաքել Դավ-

---

186 *Գրչագրերի ակնհայտ վրիպումները և ուղղագրական սխալները նոր պատրաստած հրատարակության մեջ ցույց չենք տալիս։*

187 *Հ. Միրզոյանը ենթադրում է, որ Ոսկանը ձեռքի տակ ունեցել է «Դիրք պատմութեանցի» անավարտ, նախնական մի օրինակ. նրա կարծիքով, այդ օրինակում բացակայում էին ժամանակագրության և պարսից թագավորների ազգաբանության վերջում գտնվող հավելումները, ինչպես նաև Սարթային նվիրված գլուխը (տե՛ս Հ. Միրզոյան, Առաքել Դավրիժեցու պատմության առաջին հրատարակության մասին, էջ 190)։ Եվ իրոք, Վիեննայի ձեռագիրը (Դ)—Ավետիս Երեցի ձեռքով գրված մյուս ձեռագրի (Բ) հետ միասին այդ հավելումները չունի։ Սակայն Դ ձեռագրում առկա են մի շարք հատվածներ, որոնք չեն մտել առաջին հրատարակության մեջ և վերականգնվել են երկրորդ և երրորդ հրատարակություններում ըստ № 1773 ձեռագրի։ Սա առաջացրել է բավականին նկատելի տարբերություն մի կողմից Դ ձեռագրի և առաջին հրատարակության, մյուս կողմից էլ՝ երկրորդ և երրորդ հրատարակությունների և մյուս ձեռագրերի միջև։ Այս ամենը Ոսկանի կողմից գիտակցորեն կատարված գործողությունների արդյունք է։*

րիժեցու ժամանակաշրջանին համապատասխան տեղանունների և անձնանունների առավել տարածված և այլ աղբյուրներում վկայված գրությունը, իսկ տարընթերցվածքները ներկայացնել տողատակում, սակայն տարընթերցվածքների բազմազանությունը մեզ ստիպեց հրաժարվել այդ սկզբունքից և բավարարվել անունների գրության բազմօրինակության մասին առաջաբանում հայտնվող սույն տեղեկություններով։

Գրության բազմազանության օրինակներ են տալիս հատկապես ստորև բերվող անունները։ Յոհաննէս[188]*, Յովհաննէս, Յովհաննէս, Յօհաննէս, Յովհաննը՝ Յովհաննն, Յովհան, Յօհան, Յոհան։ Համապատասխանաբար, Յոհաննջան, Յօհաննջան, Յովսէփ, Յօսէփ, Յովսեպոս, Յօսէպոս, Յակոբջան, Յակոբճան, Յակովբ, Յակոբ, Յակօբ, Ռօհիջան, Ռուհիջան, Ղոհիջան, Ղոճիջան և այլն։ Հասկանալի է, որ այս ամենը տողատակում մանրամասն ներկայացնելը իմաստ չուներ։*

Շատ են Օ և Ո տառերի խառը գործածության օրինակները (Կօվկաս-Կովկաս, Գօշ—Գոշ, Սիմէօն—Սիմէոն, Պօղոս—Պողոս, Թօմայ—Թովմայ, Մօսէ—Մովսէս, Նիկօղայոս—Նիկողայոս)։ Կանոնավոր ձևերի (Մատթէոս, Բադէոս, Անդրէաս, Գայանէ) կողքին կան նաև բարբառայիններ (Մաթէոս, Բաթէոս, Անդրիաս, Գայիանէ)։

Հաճախակի են նաև ե—է տառերի խառը գործածությունը (Մելքիսէթ—Մէլքիսէթ), ինչպես նաև անվան վերջում յ-ի հավելման (Ագարիայ, Վասոյ) դեպքերը, որոնք առանձնապես նկատելի են մուսուլմանական անուններում (Լալա—Լալայ, Էվլիա—Էվլիայ, Իսմաել—Իսմաէլ, Ամիրգունա—Ամիրգունայ և Ամիրգօնայ, Ապաղա—Ապաղայ)։ Առավել տարածված են հետևյալ ձևերը. Ահմէտ—Ահմատ, Մահմետ—Մահմատ, Ղարապաշ—Ղարաբաշ, Մաքսուտ—Մախսուդ, Ջիվանշայ—Ջհանշահ—Ջրհանշայ—Ջահանշայ, Սէֆի—Սաֆի, Խուտաբանտա—Խուդաբանդա։

Նույնչափ բազմազան են տեղանունների տարընթերցվածքները, որոնք նույնպես տողատակում չեն նշված. Հռոմ[189]*—Հռօմ, Բաբելօն—Բաբելոն—Բաբիլոն—Բաբիլովն, Սիովն—Սիօն, Լով—Իլով, Յոհաննավանք—Յօհաննավանք—Յօհաննաւանք, Դուին—Դւին, Երևան—էրէվան, Արտաւէլ—Արտաւիլ, Սպահան—Ասպահան, Ստամբօլ—Ստանբօլ, Սալմաստ—Սալամաստ, Թիֆլիս—Թիլֆիս—Տփխիս, Վրացստան—Վրացստուն, Հայոցձոր—Հաւուձոր—Խաւուձոր*[190]*, Հաւուց թառ—Հաւոց թառ, Ամիթ—Յամիթ—Համիթ, Ֆահրատապատ—Ֆահրապատ*[191]*։ Առանձին դեպքերում որոշ անձնանունների կամ տեղանունների գրության մեջ հրաժարվել ենք մեր ընդհանուր սկզբունքից, հաշվի առնելով դրանց գրության աղբյուրային տարբերությունները (Թաւրէզ—Թաւրէժ—Թաւրիժ, Պայազիտ—Բայազիտ—Պայազիթ, Աղուբ—Եաղուբ և այլն)։*

---

188 *Նշենք, որ Յովհաննէս (նաև՝ Մահմետ) անձնանվան գրության նկատմամբ մենք հետևողական չենք եղել նկատի ունենալով, որ հայ մատենագիտության մեջ դարերի ընթացքում, կարծես, մշակվել է այդ անձնանվան տարբեր գրության ինչ-որ ավանդույթ։*

189 *Վիեննայի ձեռագրում ամենուրեք Հռովմ գրությունը վերածված է Հռոմի։*

190 *Քնրականության պատմության համար հետաքրքրություն ներկայացնող նման դեպքեր նշել ենք նաև տողատակի ծանոթագրություններում։*

191 *Այս քաղաքը իրականում կոչվել է Ֆարահաբադ, սակայն ձեռագրերը տալիս են վերը նշված ձևերը։ «Ֆահրապատ» ձևը հայկական միջավայրում ավելի ընդունված է եղել, ուստի, բնագրում մենք կիրառել ենք այն՝ տողատակում բերելով տարընթերցվածքները։*

Նշված տարընթերցվածքների թվին է պատկանում տեղանունների և անձնանունների հոլովական վերջավորություններն մի մեծ խումբ։ Մենք թողել ենք բոլոր տպագիր բնագրերում նախընտրված «էջմիածնի», «Գայիանայ» և «Հռիփսիմեայ» ձևերը (ձձ-ում՝ «էջմիածնայ», «Գայիանայ» և «Հռիփսիմայ»)։ Գրելին նույնը կարելի է ասել «աղան», «փաշան» ձևերի մասին. ձեռագրերը տալիս են «աղէն», «փաշէն», որոնցից հրատարակիչները, կիրառելով «փաշայն», «աղայն» ձևերը։ Մենք հետևել ենք նախորդների օրինակին փակագծերի մեջ տողատակում չբերելով տարընթերցվածքները։

Տողատակում ցույց չեն տրված նաև «Ներսէս» և «Մովսէս» անձնանունների ուղղագրության շեղումները (Ներսէսի—Ներսիսի, Մովսէսի—Մովսիսի), ինչպես նաև անորոշ դերբային վերաբերող ուղղագրական տարընթերցվածքները (լինել—լինիլ, պատահել—պատահիլ, շրջագայել—շրջագայիլ և այլն)։

Որոշ տարընթերցվածքներ արդյունք են խուլ և ձայնեղ բաղաձայնների խառը գրության. Պոնդոս—Պոնտոս, Շաղախ—Շատախ, Քաֆա—Կաֆա, Խլաթ—Ղլաթ։ «Արարատ» տեղանունը բոլոր ձեռագրերում (մի երկու բացառությամբ) հանդիպում է «Արարադ», երբեմն «Այրարադ» ձևով։ Հիմնականում այդպես է նաև Ոսկանի տպագրության մեջ։ Սակայն երկրորդ և երրորդ հրատարակությունները կիրառում են «Արարատ» ձևը։ Մենք պահպանել ենք այդ հրատարակությունների դրությունը, տողատակում տալով տարընթերցվածքները։ Գրելին նույնը կարելի է ասել նաև մեր ընդունած «Գեղարքունի» (այս ձևն են տալիս հրատարակությունները) տեղանվան տառադարձության մասին. բոլոր գրչագրերը տալիս են «Գեղարդունի» ձևը։

Տողատակում չարտացոլված ընթերցվածքների մի մեծ խումբ վերաբերում է ւ տառի բացակայությանը. կենդանոյ, ոսկոյ, թշնամոյ, տեղոյն, նկեղեցոջն և այլն։

Չեն նշված նաև վ—ւ—ու անկանոն գործածության դեպքերը. թիվ—թուական—թւին, ջարդվեցաւ—ջարդուեցաւ և այլն։

Չնշված ընթերցվածքների մի մեծ խումբ վերաբերում է բ-ի ուղղագրությանը։ Նկատի ունենք հիմնականում հետևյալ դեպքերը՝ ա) Բառասկզբում ստ, սպ, շտ, շպ, գբ, գդ տառակապակցություններից առաջ. բստացումն, բսպասյազօր, բսպուշաւոր։ բ) «Զ» նախդիրից առաջ և հետո. բզյիշատակարանս, բզվինւոր, բզհաց, բզձկէ, բզսա, ևբսպիտակութիւն, ևբսքանչելի, ևբսկիզբն։ գ) Հայերենի համար ոչ բնորոշ ղ և ռ տառերով սկսվող բառերից առաջ. բղընկունքն, բռուսաց, բռիաթ, բուամիկ։ դ) «Ր» գաղտնավանկի դեպքում. նբսեմ, ևբրդհալ, նբւագին, հբուշակ։ ե) Վերջին վանկում. ս, դ, ն հոդերից առաջ. վառաստաղբն, գեղջբս, բէկբն։ զ) Բառամիջում, երբ բ-ն լսվում է որպես հնչյունափոխության հետևանք. խբդի, մբրաց, անդընդային, պատբուղ։ է) Կրկնակ բաղաձայնի միջև, երբ բ-ն գաղտնավանկի նման է լսվում. քնբնիչ, ծնբնդական, վտրտեալք, ևբնբնեալք։ ը) Միմյանց կողք խմբված բաղմաթիվ բաղաձայնների մեջ. դղրդբդմամբ, բբլբբլկեալ, շբխշաբանցիք, թբնդմամբ։ թ) Բառասկզբում «ց» նախդիրից հետո. ցբյուլիս, ցբքամակն։

Տարընթերցվածքների բաժնում չեն նշված նաև յ-ի հավելագրության

հետևյալ դեպքերը. ա) Սոքա, դոքա, նորա, նմա, դմա, քո, նա, դա և նման դերանունների վերջում: բ) Եզակի թվի հրամայական եղանակի բայերի վերջում (գնա—գնայ, արա—արայ, ասա—ասայ, հատո—հատոյ, բացեա—բացեայ, մատո—մատոյ, նկատեա—նկատեայ, պիա—պիայ): գ) Հատուկ անունների վերջին ա-ից հետո (Երեմիա, Ամիբրունա, Քոսա):

Նկատվում է նաև հակառակը. պրիշները անհարկի բաց են թողնում «յ» ասող բառավերջում (քրիստոնեա, ժամանակեա), սեռական հոլովում այ վերջավորությունն ասացող բառերում (վանա վիս վանայ) և այլն: Այս կարգի տարբերությունները նույնպես չեն նշված:

Նույնը վերաբերում է նաև ո և օ տառերի իտալ դործածությանը փոխառյալ բառերում (նոմոս—նօմոս, կանոն—կանօն, սաղմոս—սաղմօս), հոգնակի թիվ կազմող վերջածանցներում (գեղորայք—գեղօրայք, վանորայք—վանօրայք), գործիականի վերջավորությունում (ժողովրդովքն—ժողովրդօքն, դառնովք—դառնօվք—դառնօք), բայարմատներում (խոսել—խօսել), նեղկայի ներգործական դերբայի վերջավորությունում (նախախնամօղն, աղօթող, ծնօղ) և այլ դեպքերում (լվօղ, փառաւօր):

Ոչ շատ հաճախ, բայց և այնպես բնագրում հանդիպում է նաև օ·տառի և աւ տառակապակցության իտալ գործածությունը: Ըստ որում՝ աւ-ը ձեռագրերում հանդիպում է չափազանց հազվադեպ: Նման դեպքերում բնագրի հրատարակիչները որպես կանոն այն դարձնում են օ, կիրառելով իրենց ժամանակի ուղղագրության կանոնները: Ջնջին բացառությունները նշված են տողատակում:

Ձեռագրերում նկատելի են նաև ե—է, իտան գրության դեպքեր անցյալ կատարյալի եզակի թվի երրորդ դեմքում (եհաս—էհաս, եմուտ—էմուտ), անցյալ անկատարում (որհներ—օրհնէր, մատներ—մատնէր, վարեին—վարէին), հրամայականի եզակի թվի ժխատականում (մի կորուսաներ—մի կորուսանէր), անորոշ դերբայի վերջավորությունում (քարոզել—քարոզէլ) և բազմաթիվ այլ դեպքերում (նեա—նէա, դեպ—դէպ, մեկուսի—մէկուսի, զգեստ—զգէստ, լեհաց—լէհաց, ոսկեթել—ոսկեթէլ, համշենցի—համշէնցի, լեալ—լէալ):

Ձափազանց խայտաբղետ է բնագրում հանդիպող օտար բառերի տառադարձությունը, ըստ որում ինչպես արևելյան լեզուներից փոխառված բառերին, այնպես էլ եվրոպական ծագում ունեցողների: Դրանցից են, օրինակ, փադշահ—փաթշահ—փաթիշահ—փաջահն, սուլտան—սուլթան, մօլայ—մօնլայ, զուռուշ—զուռիշ, մաշխ—մչխ, մինարէն—մնիրէն, մազուլ—մանզուլ, զաֆխանայ—զահվայխանայ, սիջիլ—սիճիլ, պերիարմենիաս—պերիարմէնիաս, եղվայիդ—եղվայիթ—եղվայիտ, բեզամայ—բէզամայ, ոիաթ—ըռիաթ, զաւթարդար—զավթարդար:

Առավել շատ են օտարազգի բառերում և հատուկ անուններում հանդիպող խուլ և ձայնեղ բաղաձայնների իտան գործածության հետ կապված ընթերցվածքները. ֆալաղայ—ֆալախայ, զադի—զատի, բաղալ—պաղալ, քալբաթին—քալփաթին, տիլիբէճանայ—տիլիպէչանայ, Ղարաբաղ—Ղարապաղ, Ջալդրան—Ջալտրան: Այս առումով հետաքրքրական է թուրքերեն մի նախադասության տառադարձումը տարբեր ձեռագրերում և տպագիր օրինակում: Երրորդ հրատարակության 216 էջում կարդում ենք. «Փաթշահում,

Զանկի չայինտան մանայ պիր իչում սու վերմատիլար»: ԲԳԴ ձեռագրերում գրված է. «Փաչահում Զանկի չայինդան մանայ» և այլն, ինչպես երրորդ հրատարակությունում: Ոսկան Երևանցու հրատարակությունում նույնպես բաղաձայններն այնքան հետևողականորեն չեն տառադարձված: Այստեղ կարդում ենք. «Փաչահում Զանկի չայինտան մանայ բիր իչում սու վերմատիլար»: Իսկ № 7296 ձեռագրում ավելի հստակ և հետևողականորեն է արտացոլված ընդօրինակողի բարբառը. «...Զանկի չայինդան մանա բիր իչում սուր վերմադիլար»:

Տողատակի ծանոթագրություններում չարտացոլված տարընթերցվածքների մի մեծ խումբ վերաբերում է թվականների գրությանը: «Գիրք պատմութեանցի» դրեթե բոլոր էջերում հանդիպում են բազմաթիվ թվեր: Այստեղ ինչպես հայկական տառերը, այնպես էլ արաբական թվանշաններն օգտագործված են պատասան թվականների նշանակությամբ (թագավորների և կաթողիկոսների կարգ, այսինչերորդ դար, տարի և այլն): Դրանք շատ բազմազան են: Ներկա հրատարակությունում մենք նպատակահարմար ենք գտել բնագրում տալ տարեթվերի և թվականների միօրինակ գրություն, անկախ գրչագրերում ընդունված ձևերից:

Որոշ տարընթերցվածքներ, որոնք մեր կարծիքով, գիտական հետաքրքրություն կարող են ներկայացնել, բերել ենք տողատակում: Ինչպես օրինակ, վատանգ—վատանկ, խանդարել—խանկարել, փլավ-բլավ բառերի գրությունը: Ձեռագրերը չնչին բացառությամբ՝ տալիս են վտանկ, բլավ ձևերը: Սակայն, նկատի ունենալով, որ ձեռագրիրը երբեմն տալիս են նաև վտանգ, խանգարել, փլել ճիշտ ձևերը, նախորդ հրատարակիչները կիրառել են այդ ուղղագրությունը: Մենք հետևել ենք նրանց:

Վերոշարադրյալից դժվար չէ կռահել, որ տողատակի տարընթերցվածքների բաժնում չեն ընդգրկված այնպիսի տարընթերցվածքներ, որոնք բնագիրը կազմելու գործում էական դեր խաղալ չէին կարող:

Անդրադառնալով Ոսկան Երևանցու անդրանիկ հրատարակությանը, նշենք, որ այն լեզվական առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Արդեն ասվից, որ նրանում տեղ են գտել հրատարակչի բազմաթիվ միջամտություններ: Եվ քանի որ Ոսկան Երևանցին ժամանակակից է Առաքել Դավրիժեցուն, նրա հրատարակությունը դասել ենք ձեռագիր ընդօրինակությունների շարքը և բաղդատել ընդհանուր հիմունքներով:

Եթե մեզ հասած ձեռագրերը բոլորն էլ գրեթե նույնատիպ են և հիմնականում հավասար արժեք ունեն, ապա Ոսկան Երևանցու հրատարակության մասին նույնը չի կարելի ասել: Վերջինս աչքի է ընկնում այնպիսի ներմուծումներով, որոնք բնագրին հաղորդում են ինքնուրույն տեսք, ինչպես լեզվաոճական, այնպես էլ իմաստային առումներով:

Ոսկանի միջամտությունները կարելի է բաժանել հինգ խմբի:

1) Հայցական հոլովում որոշ բառերի (գոյականներ, թվականներ, ածականներ, անորոշ դերբայներ) առջև ավելացված է «զ» նախդիրը:

2) Հոլովված են (ածականներ, թվականներ և այլն) ձեռագրերում չհոլովված բառեր. վաղուց (փխ. վաղ) ժամանակաց, պայծառու (փխ. պայծառ) զդեստուր (փխ. զգեստու), քսան հազարաց (փխ. հազար), կորովօվք (փխ. կորովի) խելօքն: Ապա՝ «անճառելեաւ խնդութեամբ», «զեղեցկազանու»,

«անդադարին», «սրբոյ», «քրիստոնէականի հաւատոյս», «մահմետականօք կրօնիւք», «բազմաւ ստիպով», «բազմօք խորհրդովք», «յոլովից ժամանակաց» և այլն:

Ձեռագրերում անցյալ դերբայը գոյական անվան հետ (և առանց նրա) հոգնակի թվում չի հանդիպում, իսկ Ոսկանի հրատարակություններում, ընդհակառակը, հանդիպում են անցյալ դերբայի հոգնակի թվի գործածության բազմաթիվ դեպքեր. «քանդեալք, խարխալեալք և խրամատեալք», «ճգնատուրք կանայք», «թաղեալք են», «խոցեալք են», «վիրաւորեալք», «թաքուցեալք և թալկացեալք», «վհատեալք» և այլն:

3) Ոսկանի հրատարակություններում, ի տարբերություն ձեռագրերի, գործածվում են դասական գրաբարին ավելի հարազատ բառաձևեր և վերջավորություններ. «հայք (փխ. հայկն), «ՀՀայոցն պաշտեցուց» (փխ. պաշտեցի հայերուն, հայերոյն), «բարձու» (փխ. բարձր), «քաղցու» (փխ. քաղցր): Գրչագրերի անցյալ անկատար բայի շնշտաւղուրկ –կ վերջավորությունը Ոսկանը հաճախ փոխարինում է շնշտավոր –նց վերջավորությունով. ձեռնագրեանց, քաշեանց, ջարդեանց, լմբռնեանց: Ուշագրավ է, որ Վաղարշապատի երկու հրատարակությունների նախաձեռնողներն էլ նման դեպքերում հետևում են Ոսկանի օրինակին և հրաժարվում ձեռագրերի առաջարկած բայաձևից:

Ոսկան Երևանցու հրատարակած բնագրում –ն խոնարհման անցյալ անկատար բայերի եզակի թվի երրորդ դեմքում հաճախակի հանդես է գալիս «իւր» վերջավորությունը (թաքչիւր, փախչիւր, երևիւր, ոչ բղխիւր, հեղանիւր, պապակիւր)[192]:

Ժամանակի խոսակցական լեզվին բնորոշ բայաձևերը Ոսկանը փոխարինում է ավելի կանոնավոր, դասական գրաբարի ուղղագրության օրենքներին համապատասխանող ձևերով: Նկատի ունենք անցյալ կատարյալ բայերի երրորդ դեմքի եզակի և հոգնակի թվերը: Այսպես օրինակ, ձեռագրերի «նկաւ», «առաւ», «եդիր», «տուին» բայաձևերը Ոսկանը փոխարինում է «նկն», «էառ», «եդ», «ետուն» ձևերով (երրորդ տպագրությունն այս դեպքերում հետևում է ձեռագրերին)[193]:

4) Ոսկան Երևանցին, առանձին բառաձևեր դասական գրաբարին ավելի հարազատ ձևերով փոխարինելով, ձգտում է Առաքել Դավրիժեցու երկի լեզուն մոտեցնել գրական լեզվին: Նույն նպատակով նա ջանում է ազատել այդ լեզուն «հասարակ», «ռամկական» բառերից, վերջիններս փոխարինելով հայ գրական լեզվից փոխառված համարժեքներով: Օրինակ. ձեռագրերի «էբէց» (էրեց, երեց) բառը նա փոխարինում է «այրեց»-ով, «վերուցեն»-ը՝ «բարձին»-ով: Կան նաև «այլւի—վերստին», «ղրկեց—առաքեաց», «զարնուին—հարին» և այլ փոխարինություններ: Հաճախ ու-ի փոխարեն գործածում է և շարկապը:

Միևնույն սկզբունքն է նա կիրառում նաև օտարամուտ բառերի նկատմամբ: Ըստ երևույթին ժողովրդի մեջ շատ գործածական դարձած և խոսակ-

---

[192] Գրչագրերում (№ 1772, 1773, 7296) և երեք տպագրություններում հանդիպում է «կասիւ» ձևը, որը Վիեննայի ձեռագրում ուիշի ձեռքով ուղղված է «կասէր»-ով, բայց այդ ուղղումը չի համապատասխանում Ոսկանի տպագրությանը:

[193] Ոսկան Երևանցու որոշ ուղղումները Առաքել Դավրիժեցուն հարազատ համարելով՝ թողել ենք նույնությամբ (օրինակ, «տվէր»—«ետուր»):

ցական լեզվից գրական լեզու ներթափանցած օտար բառերը Ոսկանը փոխարինում է հայերին համարժեքներով: Այսպես, «բարիշութիւն», «խասիաթքն», «նաթայ», «համամ», «խաչալամ» բառերը փոխարինում է «հաշտութիւն», «բարքն», «խոց», «բաղնիր», «խաչվառ» բառերով:

5) Ոսկան Երևանցու կատարած միջամտությունները չեն սահմանափակվում միայն լեզվաոճական բնույթի ուղղումներով: Քաղաքական և այլ նկատառումներից դրդված, հրատարակիչը փոքր ինչ հարթում է սուր անկյուններըդուրս նետելով բնագրից մուսուլմանական կրոնի և Մուհամմեդ մարգարեի, կննդանի և արդեն մահացած մահմեդական սիրակալների և խոշոր պաշտոնյանների հասցեին այնպիսի սուր մակդիրներ, ինչպիսիք են «անօրէն», «մոլար», «հիմնատուն» և նման այլ բառեր: Երբեմն նա կոպիտ բառերը փոխարինում է ավելի մեղմ, կամ չեզոք բառերով: Այսպես, երբորդ հրատարակության 475 էջում Շահ Աբբաս Ա-ին բնութագրող «անվթար կամարան սատանայի» արտահայտությունը, որն անփոփոխ անցել է նրշագրերից երկրորդ և երրորդ տպագրությունների մեջ, Ոսկանը փոխարինել է «անվթար նենգախոհ» արտահայտություններով: Մի ուրիշ դեպքում «ուրացողի» բառը փոխարինված է «քրիստոնէի» բառով, «սիրեն և ուրացողն այն» արտահայտությունը առհասարակ բաց է թողնված, իսկ ՕՐ գլխի վերջում հրատարակչի կողմից ավելացված է ժամանակակից պարսիկ Շահ Աբբաս Բ-ին դրական բնութագրող ամբողջ նախադասություն. «որ էր կարի քրիստոնէասէր և ուղղատես»:

Առհասարակ Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանցի» առաջին հրատարակիչը բավականին ազատ է վարվել բնագրի հետ[194]: Նա բաց է թողել առանձին բառեր և արտահայտություններ, նախադասություններ և պարբերություններ, երբեմն՝ նույնիսկ մի քանի էջ իրար հետից:

Ոսկան Երևանցին հաճախ բնագրից դուրս է գցում ավելորդ կրկնություններ, «հրաշքներին» նվիրված մանրամասնություններ, փաստաբանություններ[195]: Կարելի է միայն ենթադրություններ անել, թե ինչպիսի նկատառումներով էր առաջնորդվում Ոսկան Երևանցին նախնական բնագիրը խմբագրելիս: Պատճառները կարող էին լինել կրոնական, գրաքննչական, քաղաքական և այլ բնույթի: Կասկածից վեր է, սակայն, որ այդ խմբագրումը կատարվել է ոչ պատահականորեն, այլ կանխամտածված, քանի որ ձեռագրերում առկա բոլոր նշված հատվածները, ինչպես նաև առանձին բառեր ու նախադասություններ (բացառությամբ այն հատվածների, որոնք կան միայն № 1773 ձեռագրում), ինչպես պարզ երևում է մանրամասնական

---

[194] *Ոսկան Երևանցու ամբողջ խմբագրական և սրբագրական աշխատանքը ենթարկված է տպագրության ժամանակի տեսակետից խիստ նպատակահարմարության: Այսպիսի մոտեցման դրդապատճառների համոզիչ բացատրությունը տես Հ. Միրզոյանի նշված հոդվածում, էջ 191: Եթե իրոք, ինչպես մենք ենք ընդունում, Ոսկանին նախագաղափար է ծառայել Վիեննայի ձեռագիրը (այս տեսակետը ժամանակին հայտնել է ակնավանի հայագետ Հ. Տաշյանը) ապա պարզ է, որ ոչ թե Ոսկանի օգտագործած նախագաղափարն է եղել նախնական և անավարտ, այլ ինքը Ոսկանն է վերամշակել ունեցած տարբերակը և հասցրել այժմյան վիճակին:*

[195] *«Քիչ թե շատ ծանոթ լինելով եվրոպական դիտությանն ու մշակույթին, Ոսկանը ջանացել է որքան հնարավոր է Դավրիժեցու գիրքը բեռնաթափել այնպիսի մտքերից, որոնք անհամապատասխան բացահայտ արտահայտության էին» (տե՛ս Հ. Միրզոյանի նշված հոդվածը, էջ 191):*

վրա, եղել են Վիեննայի Մխիթարյանների ձեռագրի նախնական բնագրում և ջնջված են (վրանները գիծ է քաշված) մեկ ուրիշի ձեռքով։

Այսպիսով, այդ ձեռագրի բնագիրը ստացել է Ոսկան Երևանցու տպագրությանը համապատասխան տեսք։

ՁԵՌԱԳՐԵՐԸ

Առաքել Դավրիժեցու 1662 թ. ավարտված[196] երկի ինքնագիրը, ինչպես ասվեց, չի պահպանվել։ Սակայն, մեզ հասել են այնպիսի ձեռագրեր, որոնք արտագրվել են հեղինակի կենդանության օրոք, նրա «հոգաբարձությամբ, ծախիք և արդեամբը»[197]։ Գրիչներն ընդօրինակել են հեղինակի հանձնարարությամբ և մշտական հսկողությամբ, որից հետո Դավրիժեցին անձամբ սրբագրել է ընդօրինակվածը[198]։ Հեղինակի անմիջական հսկողությամբ արտագրված հինգ օրինակներից այդ չորսն ունեն գրեթե ինքնագրի արժեք (մեկ օրինակը չի պահպանվել)։

Առաքել Դավրիժեցու երկի մեզ հայտնի ձեռագրերն են.

1. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1773, գրիչ՝ Աթանաս պապիր։ Ընդօրինակված է ինքնագրից հայոց ՌՃԺԲ (=1663) թվականին, Արարատյան երկրի «Կարբի գիւղաքաղաքում»։ Այս օրինակն, անշուշտ, պահպանվածների մեջ ամենաարժեքավորն է։ Մեր հրատարակության մեջ այն ներկայացված է Գ տառով։

2. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1772, գրիչ՝ Ավետիս երեց, ընդօրինակված է ինքնագրից հայոց ՌՃԺԸ (=1666) թվականին, Երևանում «ի դուռն սրբոյ Լկեղեցւոյս, որ կոչի կաթուղիկէ»։ Մեր հրատարակության մեջ ներկայացված է Բ տառով։

3. Վիեննայի Մխիթարյանների Մատենադարան, ձեռ. № 137[199]։ Ձեռագրի մանրաժապավենը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, 678 համարի տակ։ Ընդօրինակված է ինքնագրից։ Գրիչն է Ավետիս երեցը։ Ձեռագրի առաջին թերթը չկա։ Վերջում գտնվող ընդարձակ հիշատակարանից պարզվում է, որ այն չորրորդ գիրքն է, որ պատմիչի «ձեռագիր օրինակէն գաղափարեցաւ»։ Ձեռագիրն ընդօրինակված է 1665 թ. Երևանում, «հրա-

---

196 Ընդհանուր առմամբ գործը, ինչպես երևում է հեղինակի հիշատակարանից, ավարտվել է 1662 թ.։ Բայց շարադրանքի մեջ կան հետագայում ավելացված հատվածներ, որոնք վերաբերում են նաև 1666—1667 և անգամ 1668 թթ. դեպքերին։

197 Տե՛ս Ավետիս երեցի հիշատակարանը, Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ (III հրատ.) էջ 673։

198 Գ (№ 1773) և Ե (№ 7296) ձեռագրերում շատ պարզ երևում է, որ անհայտ մեկը սրբագրել է բնագիրը, ուղղել և հշգրտել այն, ավելացրել պակասները։ Նույն ձեռքով ավելացված են նաև այնպիսի հատվածներ, որոնք ժամանակագրական առումով դուրս են գալիս պատմիչի շարադրանքի շրջանակներից և վերաբերում են 1662 թ. հետո տեղի ունեցած դեպքերին։ Այդ կատորները, որոնք բացակայում են Ոսկանի հրատարակությունում, ինչպես նաև № 1772 (Բ) և Վիեննայի Մխիթարյանների (Դ) ձեռագրերում, ներմուծվել են երկրորդ և երրորդ հրատարակություններում։ Կարծիք կա, որ այդ բոլոր ներմուծումները կատարված են հեղինակի ձեռքով (տե՛ս Առաքել Դավրիժեցու երկի երկրորդ հրատարակությունը՝ «Ձեկուցում», նորորդ հրատարակությունը՝ «Յառաջաբան», էջ Ը։ Հր. Միրզոյան, նշված հոդվածը, էջ 190։

199 Տե՛ս Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց ի Վիեննա, 1895, № 137։

մանաւ Առաքել վարդապետին»: Մեր հրատարակության մեջ ներկայացված է Գ տառով:

4. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 7296, ընդհանուր առմամբ լավ պահպանված, բայց սկզբից և վերջից թերի, չունի ընդօրինակողի անունը և գրչության վայրը ցույց տվող հիշատակարաններ[200]: Անուղակի ապացույցների (ձեռագիր, թանաքի գույն, ուղղագրության, սխալների նույնության և դրագաշտում բաց թողնված անկեր) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ ձեռագիրը նույնպես, նախորդների նման, արտագրված է ինքնագրից: Այս ձեռագիրը, որը ներկայացված է Ե տառով, հարում է ամենահին (1663 թ.), ամենալրիվ և ամենալավ պահպանված ձեռագրին (Ե): Ներմուծումները և սխալների ուղղումները արված են, ինչպես և Գ ձեռագրում, հեղինակի ձեռքով:

Այսպիսով, եթե երրորդ հրատարակությունը ձեռնարկող հրատարակիչներին հայտնի էին ինքնագրից արտագրված վերոհիշյալ հինգ ձեռագրերից միայն երկուսը՝ այժմ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են երեք ձեռագիր և չորրորդի միկրոժապավենը: Անհայտ են մնում մայր ձեռագիրը և հինգ ընդօրինակությունների մեկը:

5. Մաշտոցի անվան Մատենադարանի № 5025 ձեռագիրը նույնպես պատկանում է Առաքել Դավրիժեցու երկը: Իր բովանդակությամբ այն մոտենում է Գ և Ե ձեռագրերին: Բնագրագիտական առումով այս ձեռագիրը հետաքրքրություն չի ներկայացնում (սխալաշատ է, ունի բազմաթիվ բացթողումներ և հավելագրումներ, ուստի նրա տարբերությունները մենք չենք նշել):

6. Մաշտոցի անվան Մատենադարանի № 5959 ձեռագիրը բովանդակում է Առաքել Դավրիժեցու երկի չորրորդ գլխին (երրորդ հրատ. էջ 86—92) և օսմանյան թագավորների ազգաբանությանը (երրորդ հրատ. էջ 581—583) համապատասխանող հատվածները: Ազգաբանությունն արտագրված է «Այլ ես բան և կարգ Օսմանցոց թագաւորացն» խորագրի տակ: Այս ձեռագիրը ոչ իր բովանդակությամբ, ոչ էլ ուղղագրությամբ ոչ մի հետաքրքրություն չի ներկայացնում և ոչինչ չի ավելացնում եղածին: Ուստի նրա տարբերությունները նույնպես չեն նշված մեր սույն հրատարակության մեջ:

7, 8. Մաշտոցի անվան Մատենադարանի № 4998 ձեռագիրը ժողովածու է, որում վետեղված է նաև Առաքել Դավրիժեցու երկի առաջին (1669 թ.) հրատարակությունից 1723 թ. կատարված մի ընդօրինակություն: 5081 համարի տակ պահվում է Կարապետ Եղյանին պատկանած «Գիրք Պատմութեանցի» Ամստերդամյան հրատարակության մի օրինակ, որի էջերին փակցված թերթիկների վրա կատարված է լուրջ և մանրակրկիտ աշխատանք՝ ձիրագործված հրատարակության համար: Այդ դիտողությունների համեմատումը երկի երկրորդ և երրորդ հրատարակությունների բնագրերի հետ ցույց է տալիս, որ առաջին հրատարակության մեջ տեղ գտած սխալները նկատվել են և ուղղվել հետագա հրատարակություններն իրագործողների կողմից, թերևս՝ անկախ Կ. Եղյանի դիտողություններից: № 4998, 5081 ձեռագրերի բնագրերն ուսումնասիրված են, սակայն նրանց տարբերությունները վե-

---

[200] *1725 թ. հուլիսի 11-ին գրված հիշատակարանը (էջ 217ա) մեջ հետաքրքրող ոչ մի հարցի չի պատասխանում. այն պատկանում է, ըստ երևույթին, ձեռագրի հետագա սեփականատերերին: Ձեռագրի սկզբում նշած է 1666 թ.:*

ըոհիշյալ պատճառներով ներկա հրատարակությունում չեն բերված։ Է տասով ներկայացված է երրորդ հրատարակությունը (1896 թ.)։

Թվարկված ձեռագրերին ու տպագրերը վերջին հաշվով բոլորն էլ փաստըբեն կրկնում են գաղափար օրինակը, որը պակասավոր է եղել, ուստի նկատված բացերը լրացնելու համար հարկ է եղել դիմելու օժանդակ աղբյուրների[201]։ Համապատասխան ձեռագրերի օգնությամբ կատարված շտկումները հնարավորություն են ընձեռել կազմելու Առաքել Դավրիժեցու ինքնագրին համեմատաբար ավելի հարազատ մի բնագիր։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» երկը հրատարակվել է երեք անգամ, մի քանի ձեռագրերի բազդատությամբ։ Առաջինը 1669 թ. Ամստերդամում Ոսկան Երևանցու ջանքերով իրագործված մեզ արդեն ծանոթ հրատարակությունն է։ Այդ հրատարակության մեջ տարբերվածքները ցույց չեն տրված։ Միևնույն ժամանակ, ինչպես ասվեց, այն պարունակում է հրատարակչի ներմուծած բազմաթիվ լեզվաոճական և բնագրային փոփոխություններ։ Այդ տպագրությունը նախնական բնագրի վերականգնման տեսակետից մեծ արժեք չներկայացնելով հանդերձ կարող է որոշ հետաքրքրություն ներկայացնել որպես նույն ժամանակաշրջանին պատկանող մի աշխատանք, ուր արտացոլված են լեզվական ու գրական այլևայլ երևույթներ։

Անցյալ դարի ութսունական թվականներին Առաքել Դավրիժեցու երկի առաջին հրատարակությունն արդեն դարձել էր մատենագիտական հազվադյուտ նմուշ[202]։ Էջմիածնի Սինոդի հատուկ որոշմամբ 1884 թ. վաղարշապատում լույս է տեսնում երկրորդ հրատարակությունը, հիմք ընդունելով 1663 թ. ընդօրինակված ձեռագիրը (Մաշտոցի անվան Մատենադարան, № 1773), մեկ այլ՝ 1666 թ. ընդօրինակված (№ 1772) ձեռագրի և առաջին հրատարակության համեմատությամբ[203]։ Այդ տպագրությունը ևս շատ շուտ սպառվեց և 1895 թ. կաթողիկոսի հրամանով պատրաստվեց նոր՝ երրորդ հրատարակությունը, որը լույս տեսավ 1896 թ. Վաղարշապատում։

* * *

1. Առաքել Դավրիժեցու երկը դեռևս անցյալ դարում լույս է տեսել ֆրանսերեն թարգմանությամբ (տե՛ս M. Brosset, Livre d'histoires, composé par le vartabied Arakel de Tauriz,—Collection d'historiens arméniens, t. 1, St-Pbg., 1874.

2. 1973 թ. Մոսկվայում, «Наука» հրատարակչությունը լույս է ընծայել «Գիրք պատմութեանցի» ռուսերեն թարգմանությունը (տե՛ս Аракел Даврижеци, Книга историй, М., 1973)։

3. 1981 թ. Վարշավայում լույս է տեսել նույն գրքի լեհերեն թարգմա-

---

201 Նկատի ունենք, հատկապես, ժամանակագրության (գլ. ԾԶ) շարադրանքի բացերը (երրորդ հրատ. էջ 625, 627, 628 և այլն)։

202 *Տե՛ս* Ֆր. Միքլեր, *Առաքել Դաւրիժեցի, «Հանդէս ամսօրեայ», 1889, էջ 139—141։*

203 *Երկրորդ հրատարակության լուսանցքներում նշված են ներկա № 1772 և 1773 ձեռագրերի, ինչպես նաև առաջին հրատարակության մեջ նկատված տարբերությունները։*

նութ յունը (տե՛ս Arakel z Tebryzu, Księga Dziejów, Państwowy Instytut Wydawniczy, Warszawa, 1981).

* * *

Ա.—Ամստերդամի (1669 թ.) հրատարակութ յուն։ Գիրք պատմութեանց, շարադրեալ վարդապետին Առաքելոյ Դաւրէժացւոյ, յԱմսթէլդամ, 1669։

Բ—Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. № 1772 (1666 թ.)

Գ—Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. № 1773 (1663 թ.)

Դ—Վիեննայի Մխիթարյանների Մատենադարանի ձեռ. № 137 (1665 թ.) Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան № 678 միկրոժապավեն։

Ե—Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. № 7296 (1666 թ.)

Է—Վաղարշապատի (1896 թ.) հրատարակութ յուն, Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896։

ԳԻՐՔ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

«Աւգնեա մեզ Աստուած Փրկիչ մեր. վասն մեծի փառացդ անուան քո՝ Մի՛ մեզ ասէր, մի՛ մեզ. այլ անուան քում տուր զփառս, վասն ողորմութեան եւ ճշմարտութեան քո: Հոգիդ քո սուրբ ներեցէ առ մեզ եւ լուսաւորեալ զմիտս մեր կատարեցէ զսկսեալս ի մէնջ, ի վաս եւ ի զովեստ սրբոյ երրորդութեանդ ամէն»:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՍՅ ԴՐՈՑՍ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Պատմութիւն անցից Հարուածոց, որք ներին ի վերայ աշխարհիս Հայոց ի յետին ժամանակիս ի թագաւորէն Շահաբաս կոչեցելոյ և ի նորին ազգէն որք են Պարսիկք: Նաև յաղագս անշքանալոյ սրբոյ աթոռոյն Էջմիածնի և նորին կաթուղիկոսացն: Այլ և վասն ապաւաղելոյ կարգաց և կրօնից քրիստոնէութեան: Ընդ սոցին և այլ ևս բանք պատմութեան դիպուածոց քաղաքաց և գաւառաց, որք պատահեցան ի թագաւորաց և յիշխանաց և ի կաթուղիկոսաց և յայլոց, զոցս աստ բաժանեալ ի գլուխս գլուխս ըստ բերման ժամանակին:

Այլ և գիտելի է, զի ըստ պահանջելոյ Հարկին աստանօր պարտ է գնել զթուականն իբր զհիմն, և ապա յարել ի նոյն զպատմութիւն որպէս զինուածս, ըստ օրինի պատմագրաց: Բայց քանզի ազգս մեր յաւարառուաց և ի գերչաց և ի հարկապահանջողաց ցիր և ցան եղեալ են, կոշկոճեալ և կաշկանդեալ, տառապեալ և կապեալ յաղքատութեան որպէս յերկաթս՝ ըստ Սաղմոսին, և հազիւ ամենայն ոք պատրաստ իրացն կենաց հայթայթէր, ոչ պատառ գիտող այլ այնպիսի, որ զի ընդ պատմութեանն և զթուականն ևս ծանուցեալ էր: Բայց մեք յոլով աշխատութեամբ խոյզ արարեալ՝ զորս գտաք, կարգեցաք ընդ պատմութեանն և զթուականն ևս, և զորս ոչ գտաք, առանց թուականի պատմեցաք և դու ընկալ զայս այսպէս առանց մեկտորիլոյ և չիշեա՛ յաղօթս քո զաշխատօղքս ի սմա:*

Սաղմ. ՃՀ, 10

1-5 Ա. չիք
10 Ա. *կրօնիս փխ կարգաց և կրօնից*
14 Ա. չիք *գիտելի է զի·*
14-15 Ա. *նգաւ փխ պարտ է գնել... յարեալ*
5 Ն *զպատմութիւնն*
17-18 Ա. *ցիր և ցանք եղեն* Ա. չիք *կոշկոճեալ*
18 Ա. *կաշկանդեալք, տառապեալք և կապեալք*
19 Ան չիք և
20 Ա. *հայթայթել, վասն որոյ ոչ գտաք զգիտօղ* չիք *այլ*
20-21 Ա. չիք *որ* Ա.ՈՐԴԻ: *պատմութեան*
21 Է *մեր*
22 Ա. *զորս կարացաք գտանել*
23 Ա. *և զորս ոչ կարացաք* չիք *գտաք:* Ա *իսկ դու փխ և դու*

ԳԼՈՒԽ Ա

ՅԱՂԱԳՍ ՏԱՌԱՊԱՆԱՑ՝ ՉՈՐ ՈՒՆԷԻՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՔՆ Ի ՀԱՐԿԱՊԱՀԱՆՋՈՒԹԵՆԷ ԲՌՆԱԻՈՐԱՑ

Արդ ի ժամանակս յետինս յորում նուաղելոյն ազգքն, որք էին քրիստոնէական հաւատոյս պաշտօնեայք, և զօրացան ազգքն, որք էին մահմետական կրօնիւք: Ի կողմս արևելեան՝ Պարսիկք և ի կողմն արևմտեան՝ Օսմանցիք, որք առին զհռչակաւոր քաղաքն զԿոստանդնուպօլիս յաղգէն Հոռոմոց ՋԲ. թուին Հայոց:

Եւ յետ առնլոյ Օսմանցոցն զԿոստանդնուպօլիս՝ և ևս մեծացան և զօրացան, և ձգեցաւ իշխանութիւն նոցա յարևելից կողմանէ, և եհաս մինչ ի Թարվէզ. քանզի Օսմանցւոց փաշայք նստէին ի Թարվէզ և յԵրևան և ի Գանջայ, և ի Շամախի և ի Դամուրղափուն: Եւ մինչև ի Խուդաֆրին ունէին ընդ իշխանութեամբն իւրեանց: Նաև զվրաստուն աշխարհն ընդ ձեռամբ և հարկատու էին արարեալ:

Եւ ի ժամանակս յայս՝ էր կաթուղիկոս սրբոյ աթոռոյն էջմիածնի Տէր Առաքեալ[1] ի նոյն գեղջէն էջմիածնի. այր բարեսէր և պահացող և պարկեշտ և բարեձև յամենայն իրս՝ ի գործս և ի բանս և ի հանդերձս, որոյ վարեալ զկաթուղիկոսութիւնն ի կեանս իւր յաւելաւ առ Տէր:

Յետ սորա նկաց կաթուղիկոս սուրբ էջմիածնի տէր Դաւիթ, և սա ևս ի նոյն գեղջէն էջմիածնի, իրրև էա՛ռ սա զկաթուղիկոսութիւնն, վարէր ըստ բերման ժամանակին և ըստ իւրում կարի, որ և յամս ինչ վարեաց, բայց մինչդեռ էր կենդանի և յիշխանութեան կաթուղիկոսութեան, ձեռնադրեաց ինքն միւս ևս կաթուղիկոս, որում անուն էր Մելքիսէթ, որ էր ի գաւառէն Դաունոյ, ի գեղջէն, որ ասի Աղջոց վանք: Զսա ձեռնադրեաց այնու չուսով, որպէս զի լիցի ինքեան օգնական, իսկ նա նովն իսկ ընդկան և հակառակ նմա, որպէս և զկնի պատմութիւնքն ցուցանեն: Եւ Դաւիթ կաթուղիկոսն, որ զՄելքիսէթն օրհնեաց

1-3 Ա.ՈՒ *Պատմութիւնք ժամանակաց հաւաքեալ ումանն Առաքեալ անուամբ վարդապետի, որում տէր ողորմեսցի*
4 Ա. *ազգն*
5 Ա. *քրիստոնէականի*
6 Ա. *մահմետականաւք* Ա. *ի կողմանս* Ա. *ի կողմանն*
10 Ա. *յարևելս կոյս*
13 Ա. *խուդաիրինն*
13 Ա. *վրացուուն*
14 Ա. *առնալ*
24 Ա. *որոյ անունն էր* ՐԳ *անուննն*
25 ԱԴՆ *գաւառէն փխ ի գաւառէն*
25 Ի *Գաունոյ է Աղջոց վանք*
27 Ի *խոչնդակն*
28 Ա. *ձեռնադրեաց փխ օրհնեաց*

կաթուղիկոս, ամա ասեն երկուս պատճառս: Ոմանք ասեն յաղագս օգնելոյ և ընկերելոյ ինքեան օրհնեալ, քանզի Հարկապահանջութիւնն այլապէս ծանրացեալ էր ի վերայ քրիստոնէից՝ որք կեղեքէին զկեանս նոցա, որ և ի կաթուղիկոսէն ևս պահանջէին ինչս յոլովս. և նա զորս կարէր՝ տայր, և զորս ոչ կարէր՝ հալածական լինէր և թաքչէր ի պահանջողացն: Եւ այսպէս հալածական և դադաստոպի կենօք կացեալ ի ժամանակս ինչ, որոյ ձանձրացեալ ի տառապելի կենաց՝ որ հանապազ փախչէր և թաքչէր՝ մտախոհ եղեւ ի սրտի իւրում առնել զոմն ընկեր ինքեան, զի լիցին միմեանց օգնական և վշտակից, զի թերևս կարիցեն երկոքեանն՝ ոմն յայս կողմն և ոմն յայն կողմն շրջագայել և պատրաստել ինչս առ ի բաւական լինելոյ կարեաց և պակասութեան կաթուղիկոսարանին: Ոմանք ասեն այսու պատճառաւ օրհնեաց Դաւիթն զՄելքիսէթն կաթուղիկոս, զի լիցի օգնական ինքեան:

Իսկ այլք ոմանք ասեն թէ Մելքիսէթ կաթուղիկոսն էր այր փառամոլ և հետևող նախապահ իշխանութեան, յորոյ պատճառէ բաշխեր առատութեամբ ինչս ամենեցուն, և զամենեցուն զսիրտսն Հանդուցանէր առ ինքն, և զամենեսեան առնէր ինքեան բարեկամ ըստ նմանութեան Աբիսողոմայ. որպէս զի օգնասցեն ինքեան և կամակից լիցին լինել նմա ի կաթուղիկոս, որ և նա ինչս բազումս իշխանի տեղւոյն առ ի լինել կաթուղիկոս: Իսկ իշխանն չեա առնլոյ ընչից, բռնապատեաց զԴաւիթ կաթուղիկոսն հարկիւ, զի օրհնեսցէ զՄելքիսէթն: Իսկ Դաւիթն անճար եղեալ թէ կամայ՝ և թէ չոչ կամայ օրհնեաց զՄելքիսէթն կաթուղիկոս: Ոմանք այսպէս ասեն: Արդ թէ այսպէս և թէ այնպէս՝ եղեն երկու կաթուղիկոսք միոյ աթոռի ի միում ժամանակի:*

ԳԼՈՒԽ Բ

ՅԱՂԱԳԱՍ ԳԱԼՍՏԵԱՆ ՍՐԱՊԻՈՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ Ի ՍՈՒՐԲ ԱԹՈՌՆ ԷՋՄԻԱԾԻՆ ԵՒ ԼԻՆԵԼՈՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Թէպէտ եղեն երկու կաթուղիկոսք, որպէս որ ասացի՝ զի թերևս թիւրեալցուսցեն զսպարտոն, և ևս առաւել բաղմացուցին, զի մինչ ցարդ մի էր կաթուղիկոսն, և մի էր մախող, այլ այժմ եղեն երկու կաթուղիկոսք և երկու մախողք: Արդ եթէ ի ծախելոյն նոցա և թէ ի հարկապահանջութենէ ժամանակին, և թէ յայլ ինչ պատճառէ, սակայն բազմացաւ, բարդեցաւ, դիզացաւ պարտքն ձեռամբ նոցա ի վերայ սրբոյ աթոռոյն էջմիածնի: Եւ ասեն, թէ մինչ ի Ծն. դուռուշ հետ

* *Բ Թագ. ԺՆ, 5—6*

3 Ս. *որք և*
5 Ս. *թաքչիւր*
8 Ս. *փախչիւր*
8 Ս. *թաքչիւր Ի մատաղոհ*
9 Ս.Բ *ինքեան ընկեր*
11 ԲԳՆԼ *ինչ*
12 Ս. *թէ այսու փխ այսու*
14 Ս. *չիք ոմանք*
16-17 Ս. *չիք զամենեցուն զսիրտսն Հանդուցանէր առ ինքն՝ Ն զսիրտս*
23 ԲՆ *Դաւիթ*
24 Ս. *չիք ոմանք այսպէս ասեն*
29 Ս. *որպէս ասացաւ*
33 Ս. *չիք սակայն*
34 Ս. *չիք բարդեցաւ*

պարտքն, և ոչ կարէին վճարել: Եւ յորժամ լինէր որ պային տուողք պարտուցն և խնդրէին զիւրեանց տուեալ պարտսն, նաև թագաւորական և իշխանական հարկահանքն, յորժամ եկեալ պահանջէին զդիմոսական հարկն, և կաթուղիկոսքն ի չքաւորութենէ ոչ ունէին զոյք առ ի վճարել: Վասն որոյ հանապազ ի փախստեան և ի թաքստեան կային, և ոչ կարէին ի միում տեղւոջ կալ աւուրս երկուս կամ երիս, և կամ լուսով տուընջեան ի շինէս յայս՝ ի միւս չէնն երթալ, այլ ի պիշերի երթային: Եւ յայժ ողորմելիք էին կեանք նոցա յայնմ ժամանակին՝ որպէս և պատմեն տեսողքն, որոց անճառ լեալ ի նեղութենէ վշտացն և ի ծանրութենէ հարկացն հանապազ ի տարակուսի կային, զի թերևս հնար լիցի փրկութեան: Եւ ի բազում ժամանակս խորհելոյ և մտայոյզ լինելոյ յաղագս խորհրդոյս այսմիկ, ապա երկոքին կաթուղիկոսքն կամօք իւրեանց և ամենայն խորհրդակցաց իւրեանց, առնեն նպրակացութիւն խոկմանց՝ այնպիսի խն յեղանակաւ. որպէս զի զրևացն նամակ մեծարանաց սիրով և ողջունիւ առ մեծ վարդապետն Սրապիոն, որ էր առաջնորդ քաղաքին Տիգրանակերտու, զի եկեալ վճարեսցէ զպարտքն: Եւ էր զրեալ ի նամակին, թէ ահա մեք մերովք կամօք ի բաց կամք ի կաթուղիկոսութենէս, եթէ գաս և վճարես զպարտքն, քեզ լիցի աթոռն և կաթուղիկոսութիւնն:

Եւ էր վարդապետն Սրապիոն տեղեաւ ի քաղաքէն Ուրհայոյ, բարեպաշտ ծնողաց և յոյժ մեծատուն զաւակ, որոյ զկնի մահուան ծնողացն մնացին ինչք բազումք և ստացուածք յոլովք, բայց նա սիրեալ զկեանս սուրբս և զվարս առաքինիս, հետևեցաւ սուրբ գրոց ընթերցման, և եմուտ յաշակերտութիւն մեծ վարդապետին Ղուկասայ Կեղեցւոյ՝ որ էր գլուխ ամենայն վարդապետաց ժամանակին: Եւ կացեալ յաշակերտութեան նորա և եղև այր կատարեալ ամենայն իմաստութեամբ և Աստուածաշունչ գրովք. զորոյ զարժանաւորութիւնն տեսանելով Ղուկաս վարդապետին, և ամենայն ժողովրդոց, որք վկայեին առաջի Ղուկասու վարդապետին, վասն որոյ եւս նմա գաւազան վարդապետական ի յԱմիթ քաղաքի ի մերում Թուականիս Ռվե. ի փետրվար ամսոյ ի., որ ի քարոզել Բանին կենաց աղբիւրաբար ուռոգանէր զպատաքեալ ոպիս ժողովրդոց: Եւ ժողովուրդքն ամենեքեանք հաճեալ և հաւանեալ նմա կացուցանեն զնա առաջնորդ քաղաքին իւրեանց: Եւ նա ըստ բանի առաքելոյն զպաշտօնն իւր փառաւոր առնէր՝ քանզի ըստ հանդիսի երկնայնոցն էր ժամակարգութիւն նորա՝ գեղեցիկ և

Հռոմ. ԺԱ., 13

1-2 ՍԲՆ *տուողք ... տուեալ* Գ *տուօղք*
3 Ս. *չիմ յորժամ եկեալ*
4 Ս. *չիմ ի չքաւորութենէ*
4 Ս. *զի ոչ*
7 ԱԳԲՆԷ *տունջեան* Ս. *յայսմանէ* փխ *յայս*
8-9 Ս. *ժամանակի*
12 Ա. *չիմ ապա*
13 Ս. *նպանակաւ*
14 Ս. *չիմ սիրով և ողջունիւ ի սիրոյ*
16 Ս. *պպարտսն*
20 ԲԳԲՆԷ *որ փխ որոյ* Ս. *մահու*
21 ԲԳԲՆԷ *յոլովք վարդապետին*
21 ԲԳԲՆԷ *որոյ սիրեցեալ փխ բայց նա սիրեալ*
25 Բ *նորին փխ նորա*
27 Ս. *չիմ ամենայն* Ս. *չիմ որք*
29 Գս *ի Յամիթ*
31 ՆԳ *ամենեքեան*
31-32 Ս. *հաճեալք և հաւանեալք*
32 Ս. *չիմ նմա*
34 Բ *երկնայնոցն*

սաստաշճատուր կարդատորութիւնամբ, երկօք և եղանակօք, պանձիւք և մեղեդիւք, խոտատրօք և ալէլուիւք։ Իսկ դաս և քարող իւր զսովորական դործ արարեալ իւր, հանապազօր Բարց իմիք հեղգութեան ասէր զդասն և զբարողն։ Այլև ժուժկալութիւնամբ և պահօք անցուցանէր զկեանս իւր իւր զանազանատուրս։ Որոյ իմաստութեան և առաքինութեան համբաւ ելեալ հռչակեցաւ ընդ ամենայն տեղիս։ Վասն որոյ դիմեալ պային առ նա յամենայն աշխարհաց ի մանկանց ևկեղեցւոյ ցանկացողք իմաստութեան, առ ի յուսումն սուրբ Գրոց, և նա իբրև զջուր ապրեր կենդանւոյ՝ զպատգամն ամենեցուն զովացուցանէր, քանզի կարդեաց դասատուն զրոց աշակերտաց՝ և ուսուցանէր զամենեսեան, որք մատնէին յաշակերտութիւն նորին։ Յորոյ աշակերտացն բազումք եղեն արք երևելիք և անուանիք։

Յորոց էր Կնաբարացի Գրիգոր վարդապետն՝ այր գիտնական նրբիւ և արտաքնոյ, և յաղթող ախոյեան ընդդէմ մաքառողաց ճշմարտութեանն, եթէ մերսահից և թէ այլոց աղգաց։ Եւ Բարսեղ վարդապետն մեծահոդի՝ որ զկնի Սրապիոն վարդապետին, նա նստաւ առաջնորդ քաղաքին Տիգրանակերտու, այսինքն յԱմթայ[2]։ Եւ Յովհաննէս վարդապետն Ուրհայեցի, որ եղև Ուրհայոյ առաջնորդ, որ աստեղաբաշխութեան և ամենայն համարողական արհեստի էր քաջ հմուտ։ Եւ Տարօնացի Արիստակէս վարդապետն, որ էր կատարեալ գիտող նրաժշտական երդոց և եղանակաց։ Եւ Յովսէփ և Յովհաննէս վարդապետքն ի Հղուտ։ Եի միւս Յովհաննէս վարդապետն ի Քաջբերունւոյ՝ այսինքն յԱրճիշոյ։ Եւ Մովսէս կաթուղիկոսն ի Սիւնեաց աշխարհէն, որ եղև լուսաւորիչ արևելեայ մասին աշխարհիս, և նորոգող սուրբ էջմիածնի՝ զորոյ զարդեանց զպատմութիւնն առնելոց եմք յառաջիկայ։

Եւ զի՞ ևս երկարեցից, էր սուրբ վարդապետն Սրապիոն երևելի և փառաւոր յաշս ամենեցուն՝ ոչ միայն ի մէջ մերոյ աշխինս Հայոց, այլև Հոռոմոց և Ասորւոց, և մահմետականաց, որ ոչ տկարանայր առ նա գործ՝ զոր ինչ և կամէր կենցաղական։ Յաղագս որոյ պրկեցին առ նա երկոքին կաթուղիկոսքն նամակ ողջունի և սիրոյ, և առնն «Ահաւասիկ մեք տկարացաք, և ոչ ևս կարեմք վճարել զբազմութիւն պարտուցս՝ յորս խորասուզեալ ընկղմեցաք, ահա մեք մեզէն մերովք կամօք ի բաց կամք ի կաթուղիկոսութենէ և ի տիրութենէ սրբոյ Աթոռոյս, արդ քեզ շնորհեալ է ամենայն՝ որպէս և եսք արժան, կաթուղիկոսութիւնն և աթոռն։ Արդ խնդրեմք ի քէն մի՛ անփոյթ առնիցես գալ ի փրկութիւն մեր, և մանաւանդ ի վերականգնումն ծեր և հոգևոր ծնողին քում սրբոյ աթոռոյն էջմիածնի»։

3 Ա. *ինքեան* փխ *իւր*
7 Ա շիմ *ի մանկանց ևկեղեցւոյ*
15 Ի: *եթէ* փխ *թէ*
19-20 Ա. *Տարոնեցի*
22 ԲԳՆ *Հղուտոյ*
22 ԲԳՆ *Քաջբերունոյ*
24 Ա. *սրբոյ*
25 Ե *պատմութիւն*
25 Գ Ի: *առնելոց եմ*
28 ԱԳ *զի ոչ*
32 ԲԳՆ Ի: *յոր*
32 Ա. *վասնորոյ* փխ *ահա* Գ *ահա վասնորոյ*
33 Ի *ի տիրոդութենէ* Ր *ի տէրութենէ*
33 Ի: *ա.* փխ *սրբոյ*
34 ԲԳՆ *ամենայնն*
36 ԱԳ *քոյ* փխ *քում*

Իսկ վարդապետն Սրապիոն իբրև լուաւ զանունն սուրբ էջմիածնի՝ յօժարեցաւ ի գալ. ոչ թէ յայգագս կաթուղիկոսութեան և փառաց, քանզի նա փառասիրեալ էր յԱստուծոյ և ի մարդկանէ, այլ վասն փրկութեան լուսաւորութիւն աւրոյն, վասն զի ցաւեաց նմա, իբր որդւոյ հարպատի ի վերայ ծնեցեալ ծնողի: Վասն որոյ եկեալ ի Տիգրանակերտ և ճանապարհ արարեալ ի վերայ քաղաքին Վանայ, եկեալ հասանէ ի վերին աշխարհն Հայոց ի գիւղաքաղաքն Ջուղայ, որ էր մեծ և երեսփ շէնն այն ի ժամանակին յայնմիկ ի մէջ արեւելեայ աշխարհիս, զի առաքին ոչ էին վարեալ յաշխարհն Պարսից յայնմ ժամանակի, և եկեալ անդ ի Ջուղայ զադարէ: Եւ համբաւ պալատեան նորա հռչակեցաւ ընդ ամենայն տեղիս, որք լուսկալ կաթուղիկոսացն երկոցունց, և առեալ զոմանս յիւրեանց խորհրդակցացն՝ զՄանուէլ եպիսկոպոսն Հաւուց Թառայ՝ և զմիւս Մանուէլ եպիսկոպոսն Խոր-Վիրապայ, և զԱստուածատուր եպիսկոպոսն Գեղարդայ, և զոմանս ի մարմնաւոր ազգականաց իւրեանց, և եկեալ հասին ի գիւղն Ջուղայ, յորում և վարդապետն Սրապիոն եկեալ կայր: Եւ յետ անցանելոյ աւուրց ինչ, յառաջ արկին բան յաղագս գործոյն, որոյ սակս և բերեալ էին զվարդապետն. և այն ինչ մինչդեռ ի խօսսն կային, և բանն ի մէջ նոցա յառաջանայր, շնամին արդարութեան և հակառակն ճշմարտութեան բանսարկուն, որ հանապազ փնտռէ զկնկղեցին Քրիստոսի, յանկարծակի էարկ ի մէջ նոցա հերկպառակութիւն և խռովութիւն, քանզի արքն՝ որք կաթուղիկոսանք էին, ոչ հաճեցան ընդ սուղ ինչ եպերական բանս վարդապետին, վասն որոյ և արարին շփոթ և աղմուկ: Որոց Հաւուց Թառայ Մանուէլ եպիսկոպոսն իւրովի իսկ յոտին կացեալ ի հանդիսի անդ, բարձրաձայն աղաղակաւ աղմուկ շփոթի էարկ ի մէջ նոցա, և խանգարեաց զասել և զլսել, յորոյ անհնարէ ներգործեալ իրակութեանց վերայ խոժոռեալ ամենեցուն՝ որոց նատէին, տաղտկացեալ ի բաց լքին զամենայն, և իբրև զատկիս միմեանց հրեալ՝ տրոհեալ անջատեցան ի միմեանց, իւրաքանչիւրք ըստ կամաց անձանց իւրեանց:

Ուստի յարուցեալ կաթուղիկոսքն և արք իւրեանց գնացին ի գաւառն Սիւնեաց ի վանքն Տաթեւու: Իսկ վարդապետն Սրապիոն անդէն ի Ջուղայ կացեալ աւուրս ինչ, իբրև զբարձրաբարբառ աւետարանիչ նորոյ Սիոնի, հանապազօր ուսուցանէր և լուսաւորէր զամենեսեան լու-

1 Ի զանուն
8 Ա չիմ շէնն այն Գ ջնջված է շէնն այն
9 ԱԲԳՆ վարեալք
9-10 ԱԳ չիմ յայնմ ժամանակի և Բ ժամանակին
10 Ա զադարի
11 ԱԳ զոր լուեալ
12 ԱԳ չիմ և Ա առին
13 ԱԲԳՆ Խորվիրապայ փխ Հաւուց Թառայ
13 ԱԲԳՆ Հաւուց Թառայ փխ Խորվիրապայ
15 ԱԳ եկեալ
17 ԱԲ բանս
18 ԲԼ ի խօսն
20 ԱԲԳՆ զնկղեցիս
21 Ա հերկպառակութիւնս և խռովութիւնս
26 ԲԳՆ խանգարեաց ԱԲԳ զասելն և զլսելն ԲԳՆ որոյ
27 ԱԳ որք նստէինն՝ տաղտկացեալքն ԲԳՆ նստէինն
27-28 Ա լքան ամենեքեան
28 Ա հրեալք Գ տրոհեալք
28-29 Ա չիմ տրոհեալ անջատեցան ի միմեանց
29 ԱԳ իւրաքանչիւր ոք ըստ կամաց անձին իւրոյ գնաց
30 ԱԲԳՆ կաթողիկոսունքն Բ արքն

սասփիւռ վարդապետութեամբ, առ որ հաճեալ և հաւանեալ Քուղայեցւոցն և ամենայն արեւելեայց ուրախացեալք օրհնութիւն ի բարձունս վերառաքէին։

Որոց առեալ զվարդապետն ածին ի բարձրագահ Աթոռն ի սուրբ էջմիածին, և ժողովեալ զամենայն ժողովուրդ երկրին՝ զհանդիսական և զպաշխարհականս, և եղեալ սիւնհոդոս մեծ, և այնպիսի մեծախումբ հանդիսիւ ձեռնադրեցին զվարդապետն Սրապիոն կաթուղիկոս ամենայն Հայոց և յաջորդ սրբոյ Աթոռոյն էջմիածնի, ի թուականութեան մերում ՌՄԲ. յօգոստոս ամսոյ ԻԴ։ Եւ յաւուր ձեռնադրութեան նորա մակագրեցին զանուն նորա Գրիգոր ըստ կոչման սուրբ լուսաւորչին, զի թէպէտ ազօթիւք նորին և սա ի վերջինս աւետիսուրնացել գՀայաստան՝ որպէս և նա ի նախկինն, որ յաւուրս մեր կատարեցաւ այս խորհուրդ և մատածութիւն։

ԳԼՈՒԽ Գ

ՅԱՂԱԳՍ ԳԱԼՑՏԵԱՆ ՇԱՀԱԲԱՍԱՅ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՊԱՐՍԻՑ ՅԱՇԽԱՐՀԻ ՀԱՅՈՑ ԵՒ ՈՒՆԵԼՈՅ ՋԱՄԵՆԱՅՆ, ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՍՐԱՊԻՈՆԻ ԴԱՌՆԱԼՈՅ ԱՆԴՐԷՆ Ի ՏԵՂԻ ԻՒՐ

Իսկ Կաթուղիկոսքն երկոքին՝ Դաւիթ և Մելքիսէթ, և արքն, որք ընդ նոսա, իբրև տեսին, թէ ոչ եղև միաբանութիւն ի մէջ ինքեանց և Սրապիոն վարդապետին, և մանաւանդ թէ փոխանակ միաբանութեանն խռովութիւն ևս անկաւ, եկեալք ի Ջուղայոյ գնացին ի վանքն Տաթեւու, և անդէն զտեղի առեալ աւուրս տասն, խորհէին՝ խոկային, երկնէին, զի գոնեայ հնար իմն գտանիցի, զի մի՛ ի կաթուղիկոսութենէն զրկիցին, այլ մնասցէ կաթուղիկոսութիւնն ի ձեռս իւրեանց, և այլ իմն կերպի վերծցին ի ձեռաց պարտաւորուաց։ Խորհեցան խորհուրդ՝ և ոչ տեւրամբ ըստ գրեցեալումն[*], *ի կորուստ անձանց իւրեանց, ի կործանումն և ի ստպակումն աշխարհին, և ի ջնջումն ազգին իւրեանց, քանզի սահմանեցին հաստատութեամբ ի միջի իւրեանց զի գնասցեն ի Սպահան առ թագաւորն Պարսից՝ որում անունն էր Շահաբաս։*

Եւ պատճառ գնալոյ սոցա առ շահն այս էր, զի հաւաստեաւ և ստոյգ գիտէին, թէ շահն պատրաստեալ է գալ ի յաշխարհս Հայոց, քանզի յառաջ քան զառաս բազումք ամանք յաշխարհէս Ասորպատականի՝ իշխանք և կոմմնակալք մահմետականք և քրիստոնեայք, գնացեալ էին առ թագաւորն Պարսից, վասն զի յոյժ չարաչար նեղութեամբ նե-

* *Եսայի, ի, 1*

1 ԹՂ *վարդապետութեամբն*
5 ԱԴ *էջմիածինն*
6 ԱԴ *եղև*
7-8 Ա. *ամենից*
9 ԱԴ *յօգոստոսի*
10 Ի *մակագրեցին*
10 ԱԴ *սրբոյ*
17 ԱՐԴՆ *Սրապիոնի*
20 ԹՊՆ *Սրապիոն*
20 ԱԴ *չիք թէ ն միաբանութեան*
22 Դ *տեղ*
23 Գ *ի կաթուղիկոսութենէն*
26 Ա *չիք ի (կործանումն)*
29 Ա. *չիք որում անունն էր Շահաբաս*
30 Ա. *չիք առ շահն*

ղէին զնոսա ազգն Օսմանցւոց ծանր հարկապահանջութեամբ, և կեղեքմամբ զրկէին և կողոպտէին, և հաւատոց կուռէճութիւն առնէին, և այլ բազում տառապանօք չարչարէին, ոչ միայն զազգս Հայոց, այլև զազգն Վրաց և զՄահմետականաց, և վասն այնր նեղութեան գնացին
5 *առ թագաւորն Պարսից, զի թերևս նովաւ դիւրութիւն գտցեն զերծեալք ի ծառայութենէն Օսմանցւոց։*

Զազգի խան անուն ումն յազգէն քրդաց՝ որ էր մեծ իշխան և կողմնակալ աշխարհին Մարաց, նեղեալ յազգէն Օսմանցւոց, զի կամէին սպանանել զնա Օսմանցիքն, և յինքեանս զրաւել զիշխանութիւն նորա,
10 *վասն որոյ և նա առաքեաց զՀաւատարիմն իւր՝ որ խան-Աւգալ ասէին, առ շահն, զի եկեալ փրկեսցէ զինքն, և ինքն լինիցի ի կողմն շահին։*

Սոյնպէս և միւս իշխան յազգէն Մարաց՝ որում ասէն Ուլամայ օղլի Հայրաթլէկ, սա ոչ թէ զայլս առաքեաց, այլ ինքն գնաց առ շահն։ Նաև թագաւորքն վրաց ունէին կամք, զի Պարսիկք ունիցին զիշխանու-
15 *քանզի ոչ ով չափ վշտացեալք էին յՕսմանցւոց՝ ոչ միայն վասն նեղութեանց Օսմանցւոց, այլ մանաւանդ վասն ըմբռնմանն մեծ Սիմօն խանին, թագաւորին իւրեանց՝ զոր ըմբռնեալ Օսմանցիքն տարան ի Ստամբօլ և անդ սպանին։ Այլև զՊռուն սուրա ևս խաբեով տարան ի Ստամբօլ, և զնա ևս սպանին։ Այլև այս թագաւորացս Վրաց յոլով*
20 *պատանդք կային առ թագաւորն Պարսից, որ էր դուստր և որդին վերոյ յիշեցեալ Սիմօն խանին Թիֆլիսոյ, նաև որդին Աղէքսանդր թագաւորին Կախեթոյ, որում անունն էր Կոստանդին։ Նաև եղբայր Աթաբէկ իշխանին Սամխէթոյ՝ որում անունն էր Թահմազղուլի։ Եւ այլք յոլովք կային յազգէն Վրաց առ թագաւորն Պարսից։*
25 *Իսկ յաշխարհէն Ադուանից՝ և յազգէն Հայոց գնացին Սարուխան բէկն և իւր եղբայր Նազարն ի յՄսկանապատ գեղջէ. Օղլան քէշիշն և իւր եղբայր Ղալաբէկին ի Հաթերք գեղջէ։ Ջալալ բէկն իւր եղբօր որդուովքն ի Խաչենոյ։ Մելիք Սուջումն ի Դիզակայ. Մելիք Փաշիկն ի Քօչիզ գեղջէ. Մելիք Բաբէն ի Բրեախս գեղջէ. Մելքիսէթ եպիսկոպոսն ի*
30 *վերին Ջաւախայ ի Մելիքպատայ գեղջէ. Մելիք Հայկազն ի Քշտաղս երկրէն՝ ի Խանաձախ գեղջէ։ Այլև չորս գեղ ի Դիզակայ երկրէն միահաղոյն չունեցին և գնացին յերկիրն Պարսից, և շահն բնակեցոյց զնոսա ի քաղաքն Սպահան։ Այլև երեք մասն ի ժողովրդոց՝ Դաշտ կոչեցեալ տեղին՝ որ է ի գաւառին Գողթան՝ մերձ յԱգուլիս՝ գնացին յեր-*

2 ԲԳ չիմ և (*կողոպտէին*)
5 Ս. *զդիւրութիւն ինչ*
5 Է *զնզծնալք*
10 Ս. չիմ *վասնորոյ և նա*
12 ԱԲԳ *ասէին*
13 ԱԲԳՏ *ինքնին*
15-16 Ն *նեղութեանցն*
16 Գ *ըմբռնմանն*
17 ԱԲԳ *օսմանցիք*
19 ԱԳ չիմ *այս* Բ չիմ և
20 ԳՏ *պանդանդք* Գ *պանտանդք* ԱԳ *որդի*
21 ԱԳ *որդի*
22 Ս. *անուն էր*
23 Ա. *որոյ անունն էր*
24 ԱԳ *առ թագաւորն*
27-28 ԲԳՏՑ *որդովքն ի Խաչենայ*
29 Ի *Բրեախս*
33 Գ «*Ասպահան*» և «*Այլ և երեք*» բառերի միջև գրիչը սխալմամբ ավելացրել է «*եւ է պատճառ*»
34 ԲԳՏՑ *դեղին*
34 Գ *ու մերձ Ագուլեաց*

կիրն Պարսից, և շահն պնոսա ևս բնակեցոյց ի քաղաքն Սպահան։ Եւ է պատճառ Դիղակեցւոց և Դաշտեցւոց գնալոյն՝ ծանր հարկապահանջութիւնն, կնղնքելն և կողոպտելն և կուէճութիւն առնելն, և անխնայ սպանանելն զքրիստոնեայսն։

Եւ եղեալ են ամենեքեան յոյժ չքաւորք, և պարտատէրք, և մնացեալ են անճար։ Վասն որոյ փախուցեալ գնացին յերկիրն Պարսից։ Զանուանս արանցն՝ զորս յիշեցաք, ամենեքեան էին արք նշանաւորք։ Սոքա և առաւել քան զսոսա յոլովք գնացեալ էին առ շահն, զորս գիտէին կաթուղիկոսքն, այլև անվկայեալք էին թէ շահն հաւանեաւ գալոյ ի յաշխարհն Հայոց, վասն որոյ և նոքա ևս կամեցան գնալ, զի մտերիմք եւևնոցին առաջի շահին. զոյգ թերևս դիւրութիւն և օգտութիւն ինչ գտանիցեն ի նմանէ՝ նեղութեանց և պարտուց իւրեանց։

Յայնմ ժամանակի ի գրաւ ամենայն խորհրդոց Դաւիթ Կաթուղիկոսն և Խոյվիրապայ Մանուէլ եպիսկոպոսն մնացին յաշխարհն Հայոց։ Իսկ Մելքիսէթ Կաթուղիկոսն և Հաւուց Թառայ Մանուէլ եպիսկոպոսն և Գեղարդայ Աստուածատուր եպիսկոպոսն, երեքեան ի Տաթևու, պատճառանօք իմն գնացին յաշխարհն Պարսից։ Եւ ևղև իրրև նոքա հողոպրեցան ի մասն բաժնի երկրին Պարսից և անյապաղ փութացան ի գնալ՝ մինչև հասին ի քաղաքն Սպահան և երևեցան Շահաբաս թագաւորին և վկուցին նմա զխորհուրդս իւրեանց։ Իրրև զայն լուաւ շահն և ծանեաւ, ցնծացաւ ի յոգի, բերկրեցաւ ի միտս, զուարթացաւ ի մարմին, զի մեծ եղև նմա ուրախութիւն յաւուր յայնմիկ, քան զամենայն աւուրս կենաց իւրոց, և ըստ խորամանկ բարուց իւրոց Շահաբաս սկսաւ մեծարել և պատուել զնոսա տրօք և պարգեւօք երեքեւիք, և օր ըստ օրէ կոչեալ զնոսա առ ինքն՝ խօսէր ընդ նոսա ըստ մտաց նոցա, և զսիրտս նոցա յինքն յանկուցանէր և զինքն նոցին հաւատարիմ և բարեկամ ձեռացուցանէր, և խոստանայր մեծաց բարեաց հասուցանել զնոսա, և այնքան սնոտի և պատիր խաբէութեամբ կնղծաւորեալ զինքն նոցին մտերիմ ցուցանէր, մինչ զամենայն խորհուրդս սրտից նոցա յինքն գողացաւ. և զամենայն որպիսութիւն աշխարհաց նոցա զել և զմուտ և զաշխարհակալ արանց իմացաւ։ Եւ իբրև գիտաց, թէ ճշմարտիւ և սիրաք նոցա այնպէ՛ ֆ, որպէս և բերանով խօսին, ապա հրաման ետ զօրավարաց իւոց պատրաստել զզօրսն առ ի գնալ. և իսկոյն վազվազակի կատարեցաւ հրաման։ Խաղայ այնուհետև ամենայն զօրքն գալ ի Թարվէզ ի վերայ զօրացն Օսմանցւոց, որք անդէն բնակեալ էին և ունէին զԹարվէզ և զգաւառս նորա։

1 Դ *իսկ փխ և (շահն)*
1 Ա. *չիմ Այլև... Սպահան*
4 ԱՊ *սպանանել*
5 Ա. *եղեալք էին Դ եղեալ էին*
5 Ս. *պարտատէրք Դ չիմ և*
5-6 Ա. *մնացեալք էին անճարք Դ մնացեալ էին անճարք*
6 Ա. *փախուցեալք*
7 Է *զոր*
10 Դէ *գալոց է*
10-11 Ա. *չիմ զի մտերիմք եւևնոցին առաջի շահին, գուցէ*
12 Ա. *չիմ ի նմանէ*
19 Դ *Շահաբաս*
21 ԱՊ *յոգի փխ ի յոգի*
22 Թև *աւուրն այնմիկ*
23 ԱՊ *Շահաբասն*
28 Դ *նոցին նոցին փխ նոցին*
31 Գ *և իբր*
32 ԱՊ *որպէս բերանով*
34 ԱՊ *զօրօքն*
35 Ա. *բնակեալք էին*

Եւ յորժամ շահն ել ի Սպահանայ գալ ի Թարվէզ՝ ել ի վերոյ յանուանէ յիշեցեալ զարան զամենեսեան ընդ իւր էառ, և փութագնաց և օդապարիկ երիվարօք ելեալ ի Սպահանայ վաղվաղակի ի սակաւ աւուրս հասանէ ի Թարվէզ: Բնաւ ոչ պիտացեալ զօրացն Օսմանցւոց զպալն Պարսից, քանզի ոչ թէ ի բաղում, այլ ի սակաւ աւուրս եհաս ի Թարվէզ: Իսկ ի հասանել Շահաբասին ի Թարվէզ, աջողակ գտաւ գործն առաջի նորա, վասն զի ակն Թարվիզու, որում անունն էր Ալի փաշայ, որ իշխան էր ամենայն զօրացն Օսմանցւոց, որք պահապան էին աշխարհին, փաշայն և զօրքն ամենայն ի ժողովեցան և ի միասին գնացին ի գաւառն Սալմաստայ ի վերայ նախկի յիշեցեալ քուրդ պարոնին՝ Զազի խանին, վասն զի յայտնի եղեալ էր Օսմանցւոցն՝ որ Զազի խանն բաժանեալ է ի միաբանութենէ Օսմանցւոց, և միաբանեալ է ընդ Պարսից, և զհաւատարիմն իւր վխան-Աւդալն առաքեալ է առ շահն. վասն այսորիկ ժողովեցան զօրքն Օսմանցւոց և գնացին ի Սալմաստ ի վերայ Զազի խանին: Իսկ Զազի խանն նախ քան զհասանելն զօրացն Օսմանցւոց, ել ի Սալմաստայ և գնաց յՄրմի գաւառ և եմուտ ի յանառիկ բերդն՝ որ ասի Գօգաբչին զալասի, որ է ի մէջ ծովակին Որմւոյ, և անդ ամրացաւ: Իսկ Ալի փաշէն և զօրքն Օսմանցւոց եկեալ ի Սալմաստ տեսին զի Զազի խանն գնացեալ էր յՄրմի, և նոքա ոչ գնացին յՄրմի, զի կամեցան նախ զայն երկիրն Սալմաստու և զբերդն ընդ իւրեանց իշխանութեամբ պրատել և ապա գնալ յՄրմի ի վերայ Զազի խանին, և քանզի էր ամուր բերդ մի յերկրին Սալմաստու, որում ասեն Ղառնիևարուխ, և շուրջ զնովաւ յարդարեցին պատերազմ, և մինչև ցերիս ամիսս կացին անդէն զօրքն Օսմանցւոց և պատերազմէին ընդ բերդին և ոչ կարացին առնուլ:

Յաւուրս յայսոսիկ՝ յորում Օսմանցիք ի վերայ Ղառնիևարուխ բերդին պատերազմէին, ևկն շահն և եհաս ի Թարվէզ, եմոզ զբաղաքն և անցեալ ևկն ընդդէմ զօրացն Օսմանցւոց: Իսկ Օսմանցիք իբրև զգացին զգայն Պարսից և իմացան ստուգիւ թէ շահն ինքն է,—քանզի յառաջ համարեցան թէ զօրապետ ոմն իցէ,—և իսկոյն թողեալ զպատերազմն բերդին, դարձան և ևկին մերձ ի դիւղն Սօֆիան և անդէն ի դաշտին Սօֆիանու խմբեցան ի պատերազմ յանդուգն բախմամբ: Եւ ի նմին պատերազմի երևելի քաջութիւնս գործեաց Ուլամայ օղլի Հայբաթ բէկն, զի քան զլուխ եբեր առաջի շահին յայնմ. պատերազմի, և իբրև

2 Ա.ՐԳ *փութագնայ*
4 Ա. *հասին*
6 Ա. *ի հասանիլ*
6 Գ *յաջողակ*
7-8 Ա.Գ *«Ալիփաշայ» և «որ իշխան էր»* բառերի միջև ավելացված է. *«զօրաժողով արարեալ արանց իբրև քսան հազարաց գնաց ի գաւառն...»*
9 Բ *ժողովեցան քսան հազար: Գն ժողովեցան ի՛ն և*
11 Ա.Գ *Զազիխանի*
11 Ա.Գ *զի փխ որ*
12 Ա.Գ *Օսմանցւոցն*
15 Ա. *զհասանիլ*
17 Ա.ՐԳ *Գօգաբչին*
19 Ա.Գ *իսկ փխ Է*
20 Ա. *շիմ զայն Գ զայն (ջնջված է)*
21 Ա.Գ *իշխանութեամբն*
22 Ա. *զի փխ քանզի*
23 Ա.Գ *զպատերազմ*
24 Գ: *անդրէն Ա. պատերազմիալք Գ պատերազմեալ*
25 Ա. *շիմ և*
26 Բ *յաւուրսս Ա. յորս փխ յորում:*
30 Ա.Գ *շիմ և*
34 Է *բէգն*

զպիշախանձ և անյագուրդ զազան՝ յաւել ևս և եմուտ ի պատերազմն։ Եւ վասն առաւել արշաւանացն և աշխատանացն խոնջեալ էր երիվար նորա. և զօրացն Օսմանցւոց պատեալ շուրջ զնովաւ բազմապատիկ սրաբին զնա ի մէջ իւրեանց՝ և անդէն հարեալ սպանին զՀայբաթի բէկին, և զայն տեսեալ զօրացն Պարսից երկիւղակիր լեալ զանդիտելին, որով առ ինչ պարտեալ երեսիւ կողմն Պարսից։ Եւ իսկոյն կոչեալ շահն առաջի իւր զմեծ խանն Զրլիխլար՝ և բաջալերեալ տրհացոյց զնա՝ և հրամիրեաց ի պատերազմն. իսկ նա ի բաջալերանաց շահին զօրացեալ զօրութեամբ եմուտ ի հանդէսն ի մէջ պատերազմին և հարեալ խոտակաց զօրիզ զօրութեամբ զզօրսն Օսմանցւոց։ Եւ զայն տեսեալ զօրացն Պարսից առհասարակ յամենայն կողմանց զիմեալ ի վերայ՝ հարեալ ի սուր առնելի չնչեալ առհասարակ զամենեսեան տապաստ դաշտացն արկանէին, և մնացեալքն փախստեամբ կորնչէին։

Իսկ Ալի փաշէն իբրև հասս զպատերազմին իւրոյ կողմանն, և զայն ևս թէ առուգիւ շահն ինքն է, էառ ընդ իւր զորդին իւր՝ և եկեալ անկաւ յոտն շահին, և ապաչէր վասն ապստամբեանն։ Իսկ շահն սիրով և գթով ընկալաւ զնա՝ և մեծաւ պատուով պահէր առ ինքն, և ընդ իւր առեալ ի Սպահան։

Եւ յետ վանելոյ պատերազմին եկն շահն՝ և եմուտ ի Թաւրէզ. և կալեալ սիրեաց քաղաքին և ամենայն զառաջացն։ Եւ զբերդն որ էր ի մէջ քաղաքին քարայատակ արարեալ բակեաց ի հիմանց զբովանդակն. կացեալ անդէն աւուրս ինչ մինչև զամենայն երկիրն նուաճեաց ընդ ձեռամբ, կարգեաց իշխանս և գործակալս յամենայն սահմանս նորա։

Իսկ մնացեալ զօրքն Օսմանցւոց, որք ի քաղաքէն Թաւրիզու փախեան և որք ի պատերազմէն զերծան, գնացեալ ժողովեցան ի քաղաքն Նախչուան։ Եւ ընդ զօրացն Նախչուանու խորհեցան խորհուրդ, թէ Թագաւորն Պարսից վասն այսմ աշխարհիս եկեալ է, և զիարդ է իցէ վերջն այն է, որ նա տանջոց է զաշխարհս զայս ի ձեռաց մերոց։ Արդ՝ նախ քան զգալն նորա մեք կողոպտեալ և աւարեալ յաւիշատակեացուք ի զեղօրէից գաւառիս որքան կարեմք և առեալ գնացուք։ Եւ այս խորհուրդ յայտնեցաւ զեղակամաց գաւառացն, և մանաւանդ Ջուղայու. զոր յաւէտ վասն Ջուղայու էր խորհուրդն այն, վասն որոյ ամենեքեան եկեալք ի բնակութեանց և ի շինամիջէ փախեան, և եկին ի լերինս՝ յայրս և յամուր վայրս անառանալ զվերջն թէ որպէս լինելոց է։

Եւ լուրս այս հասեալ եկն առ շահն ի Թաւրէզ, յաղագս որոյ կարգեաց զօրավար զՋրաղ Սուլթանն և բազում զօրօք առաքեաց ի պահպանութիւն գաւառականացն Նախչուանու։ Եւ նա եկեալ հասս ի Ջուղայ։ Իբրև զայն տեսին Օսմանցիք խռովանացան ի խորհրդոց իւրեանց։

1 ՍԳ մտանել փխ եմուտ Ս. պատերազմ։
2 Ս. շիմ և աշխատանացն
2-3 ՍԳ խոնջեալ երիվարին լքաւ փխ խոնջեալ էր երիվար նորա
3 ՍԳ բոմբափակ
4 ԲԼ բէգն
6 ՍԳ և պարտեալ
9 ՍԳԼ շիմ զօրութեամբ
12 ԱԲԳԳ չնեալ չնչեալ
26 ԱՍԳ գխորհուրդ
31 Ն շիմ խորհուրդ յայտնեցաւ մինչև էջ 67 տող 29—30, գի մի Օսմանցիքն ներառնել
31 32 ՍԳ գի փխ զոր Գ Ջուղայ ... Ջուղայոյ
37-38 ԲԳ ի Ջուղայ էհաս փխ եհաս ի Ջուղայ
38 ՍԳ Օսմանցիքն

Բայց թէպէտ ոչ առաւել՝ այլ զոր ինչ և կարացին Օսմանցիքն կողոպտել ի մերձակայ գեղօրէից, կողոպտեալ աւարեցին՝ և ժողովեցան ի Նախչուան։

Իսկ բնակիչքն Նախչուանայ լեռ ապայալօրք, և թէ ամիկք՝ իբրև լուան զառումն Բարվիղու՝ և զվանումն որ անդէն զօրացն, և զայն ևս՝ որ հանդերձեալ են Պարսիկք գալ ի վերայ իւրեանց, իբրև զջուր լեալ յերկիր հեղան, լքան ի սիրտս, և լուծան ի ձեռս։ Իսկ այն զօրքն Օսմանցւոց, որք փախեան ի Բարվիղու և ակին ի Նախչուան, ոչ կարացին մնալ անդէն՝ և կալ ընդդէմ, այլ երկիւղիւ մեծաւ բմբռնեալ ի սիրտ և յոտի, հապճեպ առպնապաւ եղեն ի Նախչուանայ՝ և ժառանգեալ անկանէին ի քաղաքն Երևան։ Եւ ի հարաւային կողմն բերդին Երևանայ կից ընդ նմա պատին պարիսպ և շինեցին միւս ևս բերդ, և մարին ինքեանք ի նեբս պատերազմական զինուք։

Եւ ի առպնապահլի յաւուրս յայսոսիկ, ապղն Օսմանցւոց՝ որք պարտք էին տանել Դաւիթ կաթուղիկոսին և Մելքիսէդ եպիսկոպոսին, կալան զՍրապիոն կաթուղիկոսն և ի նմանէ պահանջէին զինչս իւրեանց՝ առնելով. «Պարտք մեր ի վերայ Աթոռոյն է՝ որոյ դու այժմ յաջորդ ես և կաթուղիկոս, և քեզ հարկ է զի դու վճարեացես մեզ»։ Եւ նա թէպէտ բազում բանս արդար իրաւամբք տայր պատասխանի նոցա, սակայն նոցա ո՛չ լինէր լսելի։ Նաև կամէին զնա ևս առնուլ ընդ ինքեանս ի բերդն, բայց ողորմութիւնն Աստուծոյ օգնեաց. զի ոմանց յոլով և ոմանց սակաւ ևս ինչս՝ և զկնի ի ձեռաց նոցա, որ ոչ առին ի բերդն. և մնաց ի պատարին մինչև ակն շահն Երևանայ։

Եւ անտի ի Բարվիղու Շահաբասն նախ քան զինքն առաքեաց զԶըլֆիղար խանն ի Նախչուան կալ անդէն, և տիրել քաղաքին մինչ ինքն գայցէ, որ և գնացեալ Զըլֆիղար խանն՝ արար այնպէս։ Եւ ևիեալ մերձ բերդին Նախչուանու բանակ եղեալ նստաւ, այնքան մերձ, որ թէ թֆանք ձգէին հասանէր։ Յաղագս որոյ ասացին բարեկամքն Զըլֆիղար խանին ցնա, թէ զգուշութեամբ պահեա զքեզ՝ զի մի Օսմանցիքն թֆանքով հարցեն զքեզ։ Որոց արարեալ պատասխանի ժպտելով և զՕսմանցիսքն եպեպանս առնելով, թէ «Թֆանք նոցա չյչս իմ պատահեցի»։ Ապա յաւուրն երկրորդի առաքեաց պատգամս առ իշխանս քաղաքին Նախչուանու, թէ մի ձգէք թֆանք կամ նետ, զի ես սակաւ արամբք գամ առ ձեզ խօսել ընդ ձեզ բանս ինչ իրաւամբ և դատաստանաւ։ Եւ առեալ ընդ իւր արս քանս՝ ելեալ ի բանակէն հետիոտս գնաց ի քաղաքն, և հասեալ ի դուռն քաղաքին նստաւ անդէն. իբրև

1 Ա.Գ չիմ և
5 Գ զվանում
6 Ա. զի հանդերձեալք
6 Ա.Գ պարսիկքն։ Ա.Գ ինքեանց փխ իւրեանց
9 Ա. բմբռնեալք
14 ԲԳ յաւուրս Ա.Գ աւուրս այսոսիկ
17 Ա.Գ պարսս
19 Ա.Գ չիմ արդար
20 Ա. չիմ նոցա
22 Ա.Գ զի ոչ ասին փխ որ ոչ առին
24 Գ Շահապասին։ ԲԳԳ նախկի քան
25 Բ կեալ անդէն
26 Գ Զլֆըղար
28-29 Ա.Գ բարեկամք Զլֆըղար
29-30 Ա.Գ օսմանցիք
32 Գ առ իշխան
33 Ն նէմ
34 Ծ.Գ.Ն խօսիլ ԲԳԳՆ բան ԲԳՆ իրաւամբք

ժոդովեցան առ նա ամենայն իշխանք քաղաքին, յայնժամ Զըլֆիղար խանն սկսաւ ասել իշխանացն Օսմանցւոց. «Արդ որո՞յ յուսոյ և կամ որո՞ւմ աւուր սպաս կալեալ մնայք, զի ո՛չ թէ ես եմ եկեալ պատերազմիլ ընդ ձեզ, և կամ թէ նման ինձ խան մի, այլ ինքնակալ թագաւոր բազում զօրօք եկեալ պահպանիլ աշխարհն իւր խնդրէ: Եվ դուք որո՞վ զօրութեամբ կարէք ընդդիմակայիլ և պատերազմիլ ընդ նմա: Արդ՝ բանս բարեկամի առեք ձեզ, զի ինձ այսպէսն զոլ բարի թուի, և թէ ձեզ ևս բարի թուի՝ արդէն իսկ եկէք դուք ամենեքեան ձերովք ընտանեօք և ընչիւք և խաղաղութեամբ գնացէք, և մի յամառեալ զիմադարձիք և պատերազմիք, զի մի գուցէ յաղթեալ պարտիցիք՝ և մատնիցիք զուք ի սպանումն, և բնաւանիք ձեր ի գերութիւն, և ինչք ձեր յաւար»:

Յայնժամ Հաւանեալ բանից նորա իշխանքն և ազգն Օսմանցւոց, խնդրեցին ի նմանէ աւուրք ժամադրեալ՝ յորս եկանիցեն ի քաղաքէն, և խանն արար այնպէս: Այնուհետև սկսան ամենայն ազգն Օսմանցւոց եկանել ի քաղաքէն նախշուանայ՝ և բանակ եղին ի կողմն ինչ քաղաքին՝ մինչ որ ամենեքեան ժողովեցան անդր: Եւ մինչ եկանէին Օսմանցիքն ի քաղաքէն, յայնժամ եկին զօրականք ի զօրացն Զըլըպաշին՝ և կացին ի դրան քաղաքին, միայն պահպանք եղեալ զէնն առնուին յՕսմանցւոց՝ և ոչ այլ ինչ, և բայց ի նմանէ զամենայն ինչս և զգէնս իւրեանց առեալ Օսմանցւոցն գնացին: Եկին բազում աւուրք ի զօրականաց քաղաքին առ խանն Զըլֆիղար և ասացին «Սոքա, որք եկանէն ի գնալ, ո՛չ են բնիկ բնակեալ ի քաղաքէ սմա, վասն որոյ և գնան, իսկ որ մեզ եմք բնակեալ ի քաղաքէս եմք, և ո՛չ կամիմք գնալ սմա. մինչև յարդ սէրութիւն և իշխանութիւն խոնդքարին էր, նմա ծառայեաք, արդ՝ որովհետև եղև սէրութիւն և իշխանութիւն Շահարասին՝ կամիմք սմայն կալ և մնալ և նմա ծառայել»: Եւ առ այս բան յոյժ հաւանեցաւ խանն, սիրով և գթով ընկալաւ զնոսա՝ և հրամայեաց այնպէս լինել, որ և եկեալ զինուորացն վաղվաղակի հանին զՕսմանցւոց ձեռն չինքեանց, և Հարթեցին զերկայն մօրուսն իւրեանց և զգեցան զկերպս Զըլըպաշի, և եղեն որպես զրազմաժամանակեայ Զըլըպաշք: Այլև հրամայեաց խանն եկանել մունետիկ և բարձրաձայն քարոզել ի մէջ քաղաքին, թէ այսուհետև եղև սէրութիւն և իշխանութիւն և աշխարհակալութիւն շահին. ով ոք սիրէ զշահն՝ կացցէ սմա անհոգութեամբ, և ով ոք կամի գնալ՝ գնացէ խաղաղութեամբ զբաստարհս իւր: Եւ կա-

3 ԲԳՆ *մնաք*
5 Ա. *բազմօք զօրօք և զարօք*
6 ԱԴԵ *պատերազմիլ*
7 ԲՆ *Քրւի*
8 ԲԵ *Քրւի*
8-9 ԲՆ *ընդանեօք* Ա. *ընչիւք խաղաղութեամբ*
11 Բ *ընդանիք*
13 Բ *ազգն* ԱԴ *աւուրս*
14 ԱԴ *ժամադրեալս* ԲԳՆ *ժամադրեալք*
17 Ա. *չիք որ*
18 ԱԴ *չիք յայնժամ* Գ *զզլպաշին*
20 ԱԴ *յայնմանէ փխ ի նմանէ*
22 ԳԴՆ *Զլֆիղար* ԳԴԵ *սոցա փխ սոքա*
23-24 ԱԴ *իսկ մեք բնակեալ*
28 ԱԴԵՆ *լինիլ*
30 Գ *մուրուսն*
32 ԲԳՆ *մունեդիկ*
33 ԲՆ *չիք և իշխանութիւն*

ցին այսու աւանդութեամբ մնացեալ արք քաղաքին, մինչ որ եկն շահն ինքն ի նախչուան։

Եւ ինքն շահն մինչ էր ի Թաւրէզ՝ յոյժ շուտափոյթ ճեպով յարդարեաց զամենայն որպիսութիւն կոզմանցն այնոցիկ։ Եւ իսկոյն հրամայեաց սպայապետաց իւրոց, զի չու արարեալ պնասցեն դէպ ուղիղ ի քաղաքն Նախչուան։

Եւ ի գալն, յորժամ հասին ի գիւղաքաղաքն Ջուղայ, ամենայն բնակիչքն Ջուղայու, բազում և զանազան, և պէսպէս յօրինուածովք պատրաստութիւնս հաղացեալ ելին ընդ առաջ շահին, որպէս վայել է թագաւորի։ Իշխանք և ծերք և երիտասարդք, ի զարդ և ի զէնս ոսկեհուռն սերասանիով հանդերձիւ պճնազարդեալք, ընդառաջ ընթանային։ Եւ նորաբողբոջ դեռահաս մանկունք ոսկի բաժակաւ զանուշահամ և զազնիւ գինի մատուցանէին։ Լուցեալ մոմեղինօք և խնկօք և կնդրկօք քահանայք և մարմնաւոր երկեցիկք առաջի ընթանալով յարմարական ձայնիւ նուագէին։ Եւ զճանապարհն անցից արքայի զարդարեցին. և յելէբէ դեռայն մինչև ցապարանս խոջայ Խաչիկին արկին փայանդազ առաքուր թագաւորին, պատուական և վայելուչ կոմաշս, որոց վերայ էանց թագաւորն՝ և գնաց ի տուն խոջայ Խաչիկին։ Եւ ի տան անդր, խոջայ Խաչիկն զոսկի սկուտեղ լցեալ ոսկւով եդեալ ի ձեռն որդւոյ իւրոյ մատուցց առաջի թագաւորին, նոյնպէս և ամենայն մնծամնծքն Ջուղայու մատուցին, որպէս վայել է թագաւորի։ Եւ զատուրս երեք եկաց անդ շահն, և Ջուղայեցիք պատուեցին զնա համադամ կերակրօք և ծաղկեհամ գինեաւ։

Իսկ վիշապն անդընդային Շահաբաս՝ որ ի սկզբանէ զբարս օձի ունէր բնաւորեալ չինքեան ընդդէմ քրիստոնէից, իբրև տեսանէր զայնքան հարստութիւն՝ և զբարեվայելչութիւն քրիստոնէից՝ մախայր. և զղայրէր ի սրտի՝ թէ վիարդ պատճառ և ժամ գտցէ նենգել զնոսա։ Բայց առ ժամն ծածկեալ զթոյնան առ երեսս արատահաճուկ լինէր։

Եւ յետ երից աւուրց դնալ ի Ջուղայոյ գնաց ի Նախչուան և մտեալ ի քաղաքն տիրէ նմա առանց պատերազմի և բնաւին իսկ թարց աշխատանաց, և կացեալ անդէն աւուրս սակաւս, և կարգեաց իշխանս և գործակալս յամենայն սահմանս նորա։

Եւ ինքն շահն յառաջ գնալ ամենայն բանակաւն իւրով գնալ՝ խաղալ՝ գնալ ի վերայ քաղաքին Երևանու. և իբրև հասս յԵրևան, սպառնալ պաշարեաց զբերդն շուրջանակի. և ամենևին առանց իմիք վտանգի և աշխատանաց նստուցանել կայր ի վերայ նորա, քանզի ղշրջակայ երկիրն ընդ իւրով իսկ հրամանաւն ունէր զրաւեալ՝ որ էր շէն և լի ամենայն բարիօք՝ ուստի լցեալ լինէր ամենայն պիտոյք բանակին

1 Ա. *մնացեալք*
11 Բ *յառաջ*
12 ԲԳԵ *անուշահամ*
13 ԲԳԵԷ *ազնիւ*
16 Ե *խոճայ*
17 ԲԳԵ *կոմաշք*
19 ԲԳԵԷ *ոսկի*
21 Ա. *ընծայս*
21 ԲԳ *թագաւորին*
25 ԲԳԵ *չինքն* ԱԳ *ունիւր* ԲԳԵԷ *ունի փխ ունէր*
27 ԱԳ *նոցա*
28 Գ *զթունան* Ե *առ երես*
31 ԱԳ *չիմ և (կարգեաց)*
36 Ա.ԲԳԵ *վտանգի*
38 Բ *բարեաւք*

Պարսից, մարդկան և անասնոց. և այսպիսի հանդարտութեամբ պահէ առնալ կայր: Էր ոմն երբեմն խոստոյնս պատերազմէր, և էր ոմն թուլադոյնս. և էր երբեմն ոմն բանս խաղաղութեան դաշանց և ուխտի՝ աստ երդմամբ և պատիր բանիւք ի ներքս ի բերդն առաքէր, ոմն զբերդն միայն նմա տայցեն և ինքեանք առնել պատասխանի իւրեանց խաղաղութեամբ գնայցեն յաշխարհն իւրեանց: Բայց զօրքն Օսմանցւոց ոչ առնուին յոմանկն զբանս շահին, այլ տակաւին տնէին յաստ՝ ոմն գուցէ յաստանէք ժամանիցէ փրկութիւն նոցա:

Եւ յաւուրս յայսոսիկ հրամայեաց շահն զօրացն Պարսից գնալ յերկիրն Այրարատու՝ և յամենայն շրջակայ գաւառս նորա, Հանել յամենայն տեղեաց սրա՝ որ ասի բուդաթ, կիզ ի բրիտանէից իցէ, և կիզ ի մահմետականաց, որոյ և իցէ ազգայ, ժողովել և բերել ի բանակն Պարսից, զի ընդ զօրացն Պարսից մարտակից լիցին, զսիբայն քշել և այլ գործակցութեամբ օգնական լինել զօրացն Պարսից: Եւ ի ժամ պատերազմին յորժամ կրիշ առնէին և կամ զսիբայն ի վեր քշէին, զբրիտանեան յաւաջ խաղացուցանել ընդդէմ հրոյ և սրոյ մատուցանէին, որովք կոտորեալք լինէին ազգն Հայոց յերկուց կողմանց՝ յաւաջուստ յՕսմանցւոց՝ և յետուստ ի Պարսից:

Եւ յորժամ էառ շահն զԹաւրէզ՝ և մինչ ինքն ևս անդ էր, անտի առաքեաց զԱմիրգունայ խանն ի Գանջայ՝ զի կացեալ անդ զգէմ ունիցի Օսմանցի զօրացն, զի մի յանկարծակի եկեալ վտանգ ինչ հասուցանիցեն բանակին Պարսից: Եւ նա գնացեալ ի Գանջայ եկաց ամիսս երկուս, և իբրև գիտաց թէ սակաւ են Օսմանցիքն՝ և ո՛չ կարեն զայն առնել, յայնժամ զերկիրն Գանձակայ՝ ուր և կարաց հասանել, հրոյ ճարակ տուեալ և սրով մաշեալ, զորս կոտորեաց և զորս աւարեալ զերեաց աղխիւք և ընտանեօք և բերեալ էած յԵրևան ի լիութիւն և ի յզփութիւն բանակին Պարսից:

Այլև մինչ նստեալ էր շահն ի վերայ Երևանայ բերդին և պատերազմէր, յայնժամ նա զՆերևանայ երկիրն Ամիրգունայ խանին՝ և զնա կարգեաց խան երկրին այնմիկ:

Եւ յորժամ եկն շահն յԵրևան՝ ամենայն բնակիչք երկրին եկին յերկրպագութիւն և յողջոյն թագաւորին, և ընծայաբերք լինէին ըստ կարի իւրեանց: Որև կաթուղիկոսն Սրապիոն եկեալ ընծայիւք երևեցաւ առաջի թագաւորին, և ի հարցանելն շահին թէ ո՞վ ոք է, և ուստի՞ է, պատասխանեալ նմա թէ կաթուղիկոսն է Հայոց՝ և է յերկրէն յԱմթայ: Իսկ շահն անտես արար զնա՝ և ոչ խօսեցաւ ընդ նմա. վասն զի ո՛չ

2-3 Բ *Մոլլապոյնս*
5 Բ *նմա միայն*
6 ԱԲ *գնացեն*
8 ԱԳ *ուսանիք և ուսանիլ*
10 Ա. *Արարատու* ԲԳԴԵ *Այրարատու է Արարատու*
11 Ա. *ոտպան*: ԲԳ *և թէ*
12 ԱԳԵՒ *մահմետականաց վխս ի մահմետականաց* ԱԳ *չիք որոյ և իցէ ազգայ* Բ *որոց*
13 ԱԳ *չիք ընդ*
14 Ա. *լինիլ*
15 ՆԳ *առնէին*
19 ԱԳ *չիք ևս* ԲԳԴԵ *—անդի*
21 Ա.ԲԳԴԵ *վասնզ*
23 Ա. *սակաւք են*
24 ԲԳԵՒ *յերկրէն* Ա.Է *Հասանիլ*
26 ԴԵ *ընդհանօք*
33 ԲԳԵ *Սրապիոն*
35 Ա. *կաթուղիկոս է*

ընկալաւ զնա, զի կամէր զՄելքիսէդէկ կարգել կաթուղիկոս, որ ընդ իւր ունէր և շահիսէվան էր ձեռացեալ։ Իսկ Սրապիոն իբրև հաւս թէ ո՛չ ընկալաւ զինքն շահն, նզնալ յերևանայ գնաց ի Ջուղայ՝ զի անտի գնասցէ ի տեղի իւր։

Եւ յաւուրն յայնմիկ հանճարեղն ի խարհուրդս չարեաց Շահաբասան կոչեաց զԴաւիթ կաթուղիկոսն և զՄելքիսէդէկ կաթուղիկոսն առաջի իւր՝ և ասաց. «Սովորութիւն է թագաւորաց և կարգ, նաև յայտնի է ձեզ թէ որպէս նիկիբս յառաջն Օսմանցւոց էր, և այժմ մեր եղև, այնպէս և ամենայն ինչք և սեպհականութիւնք նոցա՝ որ անակն մնացեալ են, պարտի լինել արքունական, այսինքն միրիմալի։ Արդ առ ձեզ գոն բազումք գանձք Օսմանցւոց՝ զոր գուք պարտք առեալ էք ի նոցունց, և պարտիք վճարել առանց իմիք պատճառի, քանզի պարտք են, և վճար գանձուցէք ի գանձարանս արքունի պարտի լինել քանզի սեպհականութիւնք Օսմանցւոց է. որպէս զկերիր նոցա կալաք, այնպէս և ամենայն ինչք նոցա միրիմալի պարտի լինել։ Եւ յորժամ գուք վճարէք ի գանձարանս արքունի, ևս ասաց ձեզ զԲուդի ապատութիան դիւանաւ և պատասխանաւ՝ թէ ևս առի զամենայն գանձն՝ զոր պարտ էին դոքա, և մի՛ ոք լիցի պահանջող ի նոցունց զի ինձ վճարեցին»։

Այս կաթուղիկոսքս վասն պարտուցն փախեան և ապաւինեցան ի շահն, զի թերևս շահն զնոսա ապատնասցէ ի պարտատիրոջն. արդ այժմ շահն ինքն յառաջ ածեալ պահանջէ ի նոցունց զպարտսն, արդ ա՞յս է օգնութիւն շահին յոր ապաւինեցան նոքա։ Եւ կաթուղիկոսքն դիտացին զի ո՛չ զերծանին ի ձեռաց նորա. քանզի ծանեան զագահութիւն նորա, թէ կամաչ և թէ ոչ, վճարեցին զամենայն պարտսն Շահաբասին ում ումեք և պարտ էին։ Եւ ի պատճառս այս յիշեալ եղև և Սրապիոն կաթուղիկոսն, վասն որոյ ասաց շահն ընդ կաթուղիկոսացն. «Ահա ևս զոմն ի ծառայից իմոց այս անուն առաքեմ զկնի այնմ կաթուղիկոսին, և գուք ևս պատրաստեցէք զոմն այլ ի ձեր կողմանէ, զի ընդ իմում առաքեալ առնս երթիցեն՝ և հասցեն նմա. և որքան անկ է նմա առեալ բերցեն։ Եւ ի պատճառս այս կաթուղիկոսքն զոմն ի պաշտօնէից իւրեանց ուղեւորեցին ընդ թագաւորական ծառային զկնի Սրապիոն կաթուղիկոսին։ Եւ նոքա գնացեալ ի Ջուղայ գտին զՍրապիոն կաթուղիկոսն, ըմբռնեցին զնա, և արարին ի կալանս և պահանջէին ի նմանէ զանձս յոլով։ Եւ նա թէպէտ ըստ կարին ասացր, նոքա այնու ոչ շատանային. այլ բարս տմարդիս և անպատշաճս չինքեանս բերեալ, ածեալ զՍրապիոն արկին ի վտանգս չարչարանաց հարուա-

2 Ա.Գ զոր է Շահիսէվան
Ա. չիմ և Շահիսէվան էր ձեռացեալ
ԳԴՆ Սերապիոն
3 Բ չերևանաց ԲԳԴՆ անդի
8 Բ մեզ
9-10 Ա.ԲԳՆ մնացեալ է։ Ա.Գ լինիլ
11 ԲՆ բազում
12 Ա.Գ պարտքն և վճար
13 Ա. զի փխ քանզի Ա.ԳՉ լինիլ Ն պարտ ի լինել
14 Ա. Օսմանցւոց են
16 ԲԳ Թուղթ
21 ԲԳԴՆ զպարտքն
28 Ա.Գ ի ձեռմէ
29 Ա.Գ իմոյ փխ իմում։ Ա.Գ առնն
31-32 Բ Սերապիոն ԳԴՆ զՍերապիոն
33 Ա.Գ ի կալանի
34 Ա.Գ Իսկ նա
36 Բ Սերապիոն ԳԴՆ զՍերապիոն։ Ա.ԲԳԻՆ վտանգս

ծոց և դանիցն եւ զպատուելին զայն այր՝ արարեալ յոյժ անպատիւ, մինչև՝ ի գահի ի հրապարակի կախեալ յոտից բրածեծ առնէին զնա ուժդին՝ աւուրս յոլովս։ Իբրև հասս Արապիոն ի՛ յոչ ուսանել զոյ ակնկալութիւն փրկութեան, բազում դանձս առեալ փոխ և նա նոցա, մինչև լցան աչք նոցա դանձիւք և կաշառօք ըստ նմանութեան Յուդայի՝ և ապա թողին զնա։ Եւ նա զկնի՛ծեալ ի նոցունց իբրև զգառն ի բերանոյ գայլոց, հալիւ ուրեմն ճողոպրեալ ի ձեռաց նոցա, եկեալ ի Զուղայոյ գնաց ի վան քաղաք, թախծեալ ոգւով և արտմեալ սրտիւ, անմխիթար սգով և դառն հեծեծանօք. և անտի ի քաղաքն Ամիդ։ Եւ եկեաց աւուրս մի, և յերկրորդումն աւուրջ՝ վախճանի աստի մահուամբ՝ և յաւելու ի Տէր հանգստեամբ։ Եւ եղև վախճան սորա ի միում թուականիս ՌԾԵ. ամի յապրիլի ամսոյ ԻԹ. և հանգուցին զնա ի տապանի անդէն յԱմիդ քաղաքի։ Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի՝ և աղօթիւք նորա Տէր մեզ ողորմեսցի, ամէն։

Իսկ շահն մինչ նստեալ ի վերայ բերդին Երևանու պատերազմէր, ոչ դադարէր յաւերելոյ զաշխարհն և գերելոյ զազգս Հայոց. քանզի առաքեաց զօրապետս բազում զօրօք ի կողմն Արղրումայ, որք գնացեալ աւերեցին զերկիրն Բասենու և զխնուսայ և զաշտն Արզրումայ և զայլս ուր և կարացին հասանել, քանդեալ, աւերեալ, այրեալ և սպականեալ զերկիրն և զշէնսն, և զինչս և զստացուածս կողոպտեալ, և զարս սպաննեալ, և զկանայս և զմանկունս գերեցուցեալ, բերին յՆրևան ի բանակն իւրեանց։

Սոյնպէս և յերկիրն Արճիշու առաքեաց զօրս, որք գնացեալ արարին ըստ վերոյասացելումդ աւար և գերութիւն և սպականութիւն ազգին Հայոց ի ժամանակս ձմերայնոյ։

Այլև ի սոյն ժամանակի, մինչ նստեալ շահն ի վերայ բերդին և պատերազմէր, նկն Ալահվէրտի խանն ի Շիրազայ յԵրևան առ շահն, յորոյ դալստենէ բազում օգտութիւն եղև ազգին Պարսից։ Եւ շահն առաքեաց զԱլահվէրտի խանն ի վերայ քաղաքին Արծկէոյ. և պատճառ առաքելոյ զսա յԱրծկէ այս է։

Յորժամ էր թուականն Հայոց ՌԽԹ, մեծ Սիմօն խանն, թագաւորն Վրաց, ապստամբեցաւ յՕսմանցւոց տէրութենէն և կոտորեաց զբերդապան Օսմանցիսն, որք կային յերկիրն Վրաց։ Վասն որոյ հրաման եղև ի Սուլթան Մահմատ խոնդքարէն ի վերայ Ջաֆար փաշային, որ իշխան էր Թաւրիզու, ժողովել զօրս բազումս և գնալ ի վերայ Սիմօն խանին։ Եւ ըստ հրամանաց թագաւորին գնաց Ջաֆար փաշայն բազում զօրօք ի վերայ Սիմօն խանին։ Եւ եղև զի ըմբռնեալ եղև Սիմօն խանն ի ձեռս Օսմանցւոց, և Ջաֆար փաշայն նա զՍիմօն խանն փա-

2 Ա. *ի գահի և ի հրապարակի*
3 ԳԹՆ *Սերապիոն* ԱՐ *ոչ փխ յոչ*
Բ *յուսանել*
7-8 Բ *ի Զուղայու*
10 Ն *էկաց*
11 Գ *վաղճան*
12 Ա. *ՌԾԵ-ին ապրիլի*ՈԲԻ *յապրիլ*
17 ԳՆ *որ*
19 ԱԳԻԼ *հասանիլ*
21 ԱԳ *գնրացուցնել*
23 ԲԳՆ *որ*
24 Ա. *գաւար և գգերութիւն և գապականութիւն*
26 ԱԳ *չիբ և*
32-33 Ի *գրերդապահ*

շայի միոյ, որում անունն էր Մահմատ փաշայ, տանել ի Կոստանդնուպոլիս առ խոնդքարն. և իբրև հասոյց այն Մահմատ փաշային ղՍիմօն խանն առ խոնդքարն, և խոնդքարն պարգևաց նմա խիլայ ղփաշայութիւնն Արզրումայ և ղվանայ փաշայութիւնն ևս նմա արփալըղ։ Եւ ըստ հրամանաց Թագաւորին ելեալ Մահմատ փաշայն յԱրզրում վարէր զփաշայութիւնն։ Իսկ քաղաքն Վան և այլ շրջակայ գաւառքէն, ոչ հաճեցան յայս գործ, քանզի ծանր Թուեցաւ նոցա թէ Վան քաղաք իրովք բերդովք այնքան նուաստացաւ՝ որ լիցի Արզրումայ արփալըղ վանն որոյ և ո՛չ կամէին հնազանդիլ Մահմատ փաշային։ Իսկ Մահմատ փաշայն ելեալ յԱրզրումայ եկն ի Վան քաղաքն, և հաւանեցուցեալ զնոսա ի կամս իւր հնազանդեցոյց։ Եւ ելեալ անտի զի և զշրջակայ գաւառքէն ևս հաւանեցուսցէ, և շրջելով կարգաւ մինչ և հասա յԱրծկէ։ Իսկ իշխանն Արծկէոյ որում անունն այլուի Մահմատ փաշայ էր, ո՛չ կամեցաւ հնազանդիլ. այլ յորժամ լուաւ զգալ նորա ժողովեալ զօրս բազումս և կերակուրս յոլովս և մտեալ ի բերդն ամրացաւ, և ո՛չ հնազանդեցաւ՝ զի բերդն ամուր էր։ Իսկ եկող Մահմատ փաշայն պաշարեաց զբերդն և մարտ եղեալ ընդ նմա հզօրեղապէս մարտնչէր։ Եւ միւս Մահմատ փաշայն, որ էր ի մէջ բերդին, յաղագս զպատերազմն ի բաց մերժելոյ չինքննէ, խորհուրդ արարեալ ընդ համախոհս իւր, և առաքեաց զարս ոմանս յիւրոց հաւատարմաց՝ որ դաղտագողի գնացիւք հասանին առ շահն, որ յայն աւուրսն շուրջ զբերդին երևանայ նստեալ պատերազմէր։ Առ որ հասեալ սրքն ասեն ցնա. «Թագաւոր, յաւիտեան կեա՛ց, Մահմատ փաշայն՝ որ կայ ի բերդին Արծկէոյ, կամի շահիսէվան լինիլ և տալ զբերդն շահին. իսկ Վանայ փաշայն ո՛չ կամի զայս, այլ եկեալ պատեալ է զբերդն, և կամի չինքն գրաւել։ Վասն որոյ առաքեաց զմեզ Մահմատ փաշայն առ տէրութիւն քո և խնդրէ ի քէն, զի զօրս առաքեսցես յօգնութիւն ինքեան զի փրկի ինքն, և զերկիրն և զբերդն տացէ զօրավարին քումմ»։

Իսկ հանճարեղն ի խորհուրդս չարեաց Շահաբաս հրամայեաց Ալահվէրտի խանին առնուլ զօրս բազումս և գնալ յայն գործ։ Եւ պատուիրեաց նմա. «Թէ տացեն զբերդն և զերկիրն քեզ, բարւոք է, տիրեսցես երկրին և նստցիս ի բերդին. ապա թէ խաբէութիւն ինչ առնիցեն ընդ քեզ, և դու զոր ինչ վնաս կարիցես առնել նոցա, արասցես. և յեսոյ զերկիրն զերեցուցեալ դարձցիս այսրէն»։ Իսկ Ալահվէրտի խանն ելեալ յերևանայ գնաց յԱրծկէ։ Եւ Մահմատ փաշայն, որ զբերդն պատեալ էր, իբրև լուաւ զգալ խանին, չունալ անտի և գնաց յերկիրն Մշոյ։ Եւ խանն եկեալ յԱրծկէ սպասէր Թէ բերդի միջի եղեալ Մահմատ փաշայն եկեալ առ ինքն զխոստմունսն կատարեսցէ։ Իսկ նա ո՛չ եկն

4 Ա.ԲԳԴ *արփալը*
8-9 Ա.ԳԲՆ *արփալը*
10 ԱԴ *քաղաք*
12 Ա.Ի չԻ *ևս*
14 Ա.Ն *գգալն*
20 Ա.Ի *զի փխ որ*
21 ԲԳՆ *հասին*
22 Ա. *պատերազմիւր*
27 Ա. չԻ և ԱԴ *զգօրս*
30 Է *զգօրս*
34 ԳՆ *դներացուցեալ*
35-36 Ր *պատալ էր*
36 ԳՆ *գգալն* ԲԳՆ *անդի*ԱԴ չԻ և
37 ԱԴ *իսկ փխ և*
38 ԲԳՆԷ *զխոստմունքն* ԱԴ *բայց փխ իսկ*

աւ խանն և ո՛չ նա պբերդն. այլև պատրաստակաւ ընդ խանին ի պատերազմ: Եւ խանն երիշ արար ի վերայ բերդին և փաշային զօրօք ելեալ ի բերդէն փախստական արարին զզօրս խանին՝ յառաջնում նուագին: Եւ յերկրորդում նուագին, որ կամէին երիշ առնել և վերայ բերդին, կացոյց խանն պարանակալս, պատուիրեաց պարանակալացն, թէ. «Պուք զօղնալ կացջիք ի պարանի այդր, և մեք դնացեալ կռուիմք ընդ բերդին՝ և յելանել բերդականացն մեք փախստական լինելով առաջի նոցա հեռացուցանեմք ի բերդէն: Յայնժամ պուք յարուցեալ յետուստ կողմանէ և մեք յառաջուստ ի մէջ առեալ կոտորեսցուք զնոսա»: Իբրև այսպէս արարին, ի մէջ առեալ կոտորին զվէնալ զօրսն ի բերդէն. և մնացեալ զօրքն, որք ի մէջ բերդին էին, փակեցին զբերդն և ո՛չ եաան խանին:

Իբրև եաես խանն զամուր միաս բերդականացն, թէ ո՛չ ասն զբերդըն, դարձաւ ի բերդէն՝ և յարձակեցաւ ի վերայ պատառաց աշխարհին, և զամենայն երկիրն Արծկէոյ հաւասար աւերեաց և հրդէհ արկեալ այրեաց. և զամենայն արու արս կոտորեաց՝ և զինչս, և զստացուածս՝ զուսերս և զդստերս և զկանայս յաւար և ի գերութիւն առեալ: Եւ եղեալ անտի ևկն յԱրճէշ՝ և ի Բերկրի, և ի վան և զամենայն գաւառս նոցա արար այնպէս: Եւ որպէս ակր և իշխան գաւառին՝ որ առանց ահի և կասկածանաց շրջեցի ի գաւառի իւրում, սոյնպէս և սա շրջեր, և քանդեր, և աւերեր զաշխարհն, յորա և հասանէր: Եւ բազում ատուրս կացեալ ի տեղիան, վասն զի ոչ ոք էր, որ կարէր ի դիմի հարկանել նմա: Եւ զոր ինչ կամեցաւ՝ և կարաց առնել՝ արար: Եւ ժողովեալ զամենայն գերեալսն, և հօրանս անդէոց, և ջոկս ոչխարաց, և երամակս ձիոց, իբրև մեծ և յորդեալ հեղեղ զամենեսեան վարեալ ածեալ բերեալ հասուցին չերեան ի լիութիւն բանակին Պարսից: Արդ՝ յայսպիսէ պատճառէ գնաց Ալահվէրտի խանն յԱրծկէ. որովք գիտեցան այսքան անձինք բրիստոնէից. զորոց թիւն ԻԳՈ. ասեն զոմ՝ թող զսպանեալսն:

Բայց զօրքն Օսմանցւոց որք էին ի մէջ բերդին Երեանու, որոց գլուխ էր Սայիտ փաշայն, և Սուլէյման փաշայն որդի Խալը փաշային, քաջութեամբ զդէմ կալեալ արքային և զօրացն Պարսից, պատերազմէին. և դիմակաց եղեն յամիս Ը. և չիննևերորդում ամսեանն՝ անճար մնացեալ հասան զբերդն: Քանզի մտահոգ եղեալ Օսմանցւոցն տեսանէին զի ոչ ուստեքէ զոյ նոցա ակնկալութիւն օգնութեան. ո՛չ ի քաղաքացն, որք շուրջ զիրեանցբք են՝ և ո՛չ ի Դրանէ թագաւորին իւրեանց, քանզի Դուռն թագաւորին խառնակ էր: Զի Սուլթան Մահմատ խոնդքարն մեռաւ ի նոյն ամի. և սորին որդին Սուլթան Ահմատ՝ զոր թագաւոր կարգեցին՝ էր տղայ հասակաւ երկուտասան ամաց, թագաւորն էր նոր, և այն ևս տղայ: Այլև իշխանքն ո՛չ ունէին ընդ միմեանս

3 Բ զօրան ԳԴ զզօրան
5 ԱԴ և պատուիրեաց
11 Դե որ ի մէջ
20 Ա. շրջի
23 ԲԴ զոր ինչ և փխ և զոր ինչ
26 ԱԴ յայսպիսւոյ
30 Դե որդին ԱԴ Խորփաշային Բ որդին Խրտրփաշային
35 Բե որ
35 ԲԴե չ փխ ևն
37 Դե որդի
38 Ա. Երիտասանից

ակր և միաբանութիւն, և ընդ ամն թագաւորին մտերմութիւն։ Այլև ապատամբ Ջալալիք բազումք և յոլովք էին յարուցեալ ի մէջ աշխարհին՝ որք աւերէին զքաղաքս և զերկիրս թագաւորին. և նոքա այնու էին պատապեալք՝ և ո՛չ կարէին օգնել զօրացն՝ որք յերևան։ Զայս Ջալալոց անուանքն յիշեալ եմք յառաջիկայդ ի մէջ ճառին, որ վասն սովին պրեալ եմք. և զորպիսութիւն Ջալալոցս պիտասցես զայն ճառն ընթեռնուլով։ Եւ հանդերձ վերոյասացեալովք պատճառովքդ և այլ ևս յոլովից նեղութեանց վասն, զոր կրեցին զօրքն Օսմանցւոց՝ որք պաշարեալք կային ի մէջ բերդին Երևանու, նեղեալ և անյոյս լեալք յօգնողաց և ի փրկողաց՝ վասն որոյ նաև զբերդն զօրացն Պարսից։

Եւ յորժամ էառ շահն զբերդն, հրամայեաց նա մունետիկաց քարոզել և հրատարակել ի մէջ բանակին Պարսից և Օսմանցւոց. «Հրաման է ի մեծ արքայէն Շահաբասայ, որ ոք սիրէ զայս աշխարհս և զշահն, և կամիցի կալ ի հայրենիս իւր՝ սիրով կացցէ, և ի շահէն պատիւս և ընդունելութիւն գայցէ ըստ արժանւոյն. և որ ոք գնալ կամիցի յաղգ և ի ժողովուրդ իւր, խաղաղութեամբ երթիցէ իւրովք ընչիւք և ստացուածովք»։ Եւ Սայիտ փաշայն նզև շահիսէվան և խնդրեաց ի շահէն պիշխանութիւն և զվերակացութիւնն Իմամուտուզին. և ընկալաւ ի նմանէ զինդրելին իւր. և գնաց ի Խորասան ի սպասաւորութիւն Իմամուտուզին[3]։ Եւ Սուլէյման փաշայն խնդրեաց ի շահէն գնալ յաղգ իւր. որև հրամայեաց շահն գնալ նմա։ Եւ նա և ի գնալ՝ և ընդ նմա հինգ հազար հեծեալ՝ և բազում ևս ժողովուրդ։ Իսկ զիւանման զօրքն Պարսից գունդս գունդս ընթացեալք զհետ նոցա, գաղտագողի գնացիւք ժամանեալք բախչին ի վերայ նոցա. զորս հարեալ սպանանէին և զորս փախուցեալք ցրուէին և զինչս նոցա կողոպտեալ՝ դառնային ի բանակն իւրեանց։

Արդ այս ամենայն, որ գործեցաւ ի թագաւորէն Պարսից, և լուեալ ազգին Օսմանցւոց և թագաւորի նոցա, որ ի Կոստանդնուպոլիս, միաբանեցան և նոքա՝ և շարժեցան ի գործ արութեան ելանել և զիշնամեաց ի դիմի հարկանել։ Որև կարգեցին զոմն պլուխ և սարդար, որում անուն էր Սինան փաշայ, զոր մականունամբ Ջղալօղլի կոչէին, որ գումարեաց զօրս բազումս՝ որովք ելեալ ի Կոստանդնուպոլսէ զիմեալ զայր յաշխարհս արևելեան։

Այլև յետ առման բերդին, հրամայեաց շահն, թէ որքան ժողովուրդք, որք զարիպականքն են և պանդուխտք, և այնք ևս որք ի գերութենէ ազատեալք են,—եթէ քրիստոնեայք իցեն, եթէ մահմետականք,

1 Ա. զսէր և զմիաբանութիւն Ա. զմտերմութիւն
2 Ա. ապատամբք
3 ԲԳ որ
5-6 Ի. սորին փխ սովին
7 ԱԲԳՆ պատճառօքդ
8 ԱԳ չիմ վասն
8-9 Բ պաշարեալ
9 ԳՆ նեղեալք
10 Ա. չիմ վասն որոյ
11 ԲԳՆ մունեդիկաց ԱԳ մունեդիկայ
18 Ա. Իմամուտզին ԲՆ իմամուտզին
19 20 Ա. իմամուտզին ԲՆ իմամուտզին
29 Ա. չիմ և (շարժեցան)
30-31 ԲԳՆ անունն ԱԳ անուամբ փխ որում անուն էր
35 ԲԳՆ որ զարիպական են և պանդուխտ Ի. որք զարիպական են և պանդուխտք

եթէ եբրայեցի,—զոր բերին խաներն, որք պնացին յաստաւածութիւն և յաւարտուիւն չիւրաքանչիւր պնացեալ տեղիւն. եթէ Ամիրդունա խանն որ եկեր ի Գանջայու երկիրն, եթէ Ալահվէլթի խանն, որ եկեր յԱրծիկոյ և յԱրճիշոյ և ի Բերկրու և ի վանայ, եւ թէ միւս խաներն,
5 *որք միւսանգամ բերին յԱրճիշոյ, ի Մանազկերտու, յԱլաշկերտու, և ի Մակուայ, եթէ միւս խաներն որք բերին ի Կարսայ, ի Կաղզվանայ, ի Բասենու, յԱրզրումայ, ի Խնուսայ. և զայլս զամենեսեան, որք յայլ ուստեքէ լեալ էին, զաստա զամենեսեան հրամայեաց զի խոյզ արարեալ զացեն յերկիրին Երևանու: Զամենեսեան վարեցան յաշխարհն*
10 *Պարսից: Որ և փութով կատարեցաւ հրամանս այս. զի որքան կային այնպիսի ժողովուրդք, զամենեսեան վարեալ քշեցին յաշխարհն Պարսից:*

Այլև յորժամ շահն էառ զԹարվիզ՝ և մինչ անդ ի Թաւրիզ էր. հրաման արար զանգ եղեալ զարիպականան քշել յաշխարհն Պարսից.
15 *և արարին այնպէս:*

Եւ յորժամ եկեալ ի Թարվիզու եկեալ էանց ընդ նախշուան և եկն յԵրևան. լուան զարիպականքն նախշուանու թէ շահն զղարիպականան Թարվիզու քշեց տարաւ ի Պարսից աշխարհն: Էաւ իմն գործ զայն ինքեանց համարեցան. ոմանք ի նոցանէ եկին յԵրևան և ծանուցին շա-
20 *հին թէ մեք ևս շահիսէվանի եմք՝ և կամիմք գնալ յաշխարհն Պարսից: Եւ շահն վասն հաճելոյ գմիտս նոցա՝ և զնոցին նման անմտացն պատրելոյ, հրամայեաց խլզաթ տալ նոցա և նոսուն հինգ խլզաթ. և կարգեաց ի վերայ նոցա վարիչս՝ որք տարան զնոսա ևս յաշխարհն Պարսից:*

25 *Եւ այս ամենայն եղեալ է ի մէջ երկուց ամաց. վասն զի գալն Սրապիոն կաթուղիկոսին յէջմիածին և լինելոյ կաթուղիկոս. և ի նոյն ամի գալն շահին և ունելոյ զԹարվէզ՝ և զնախշուան՝ և զԵրևան, և դառնալոյ Սրապիոնին ի տեղի իւր, և այլ բանք՝ զոր յայսմ հատի պատմեցաք, ի մէջ երկուց ամաց եղեալ է, որ էր թուականն մեր ՌՄԲ և ՌՄԳ:*

1 Ա.Գ *զորս*
2 ն *թէ փխ եթէ*
3 Գ: *Գանջու*
4 Ա.ԲԳՆ *և յԱրճիշոյ ի Բերկրու* ԲԳՆ *եթէ փխ եւ թէ* Ա. *եթէ միւս խաներն*
5 ԲԳՆ *որ* Գ *յԱրճշոյ* Է *յԱրճշու* Ա.Գ *չիմ և*
6 Ա.Գ *խաներն*
Ա.Գ: *որ փխ որք* Ն *ի Կաղզվանայ*
10 ԲՆ *որքան և կային*
11 Ա.Է: *վարեալք*
13 Գ *անդի ի Թաւրէզ*
16 Ա.Գ *էլ փխ էլեալ*
18 Ա. *քշեալ փխ քշեց*
22 Ա.Գ *չիմ նոցա* Ա. *գհինգ*
23 ԲԳՆ *որ*
28 Ա.Գ *այլք բանք, զորս*
30 Ն *չիմ և*

ԳԼՈՒԽ Դ

ՅԱՂԱԳՍ ԱՒՈՒՋԻՆ ԴԱՒԻԹ ՋՂԱԼՕՂԼԻՈՅՆ, ՅՈՐՈՅ ՊԱՏՃԱՌԻ ՉՇԵԱՑ ՇԱՀՆ ԲԱԼՈՐՈՎԻՆ ԲՈՎԱՆԴԱԿ ՁԵՐԿԻՐՆ ԱՐԱՐԱՏՈՒ, ԵՒ ՁՆՈՐԻՆ ՄԵՐՁԱՒԱՅ ՍԱՀՄԱՆԱԳԻՑ ԵՐԿԻՐՍԱՆ ԸՆԴ ՆՄԻՆ

Եւ յետ կատարելոյ այս ամենայն գործոց և իրակութեանց՝ զորս արար շահն, չունալ այնուհետև յերևանալ ամենայն բանակաւն իւրով յատաջ խաղաց գնալ ի վերայ բաղաքին Կարսայ առնուլ և զայն ևս։ Եւ իբրև հասս ի գաւառն Շիրակվանայ, և ընդ բաղում համբաւոյ գալոյ Ջղալօղլւոյն, զոր հանապազ բերէին գնացեալ լրտեսքն, անդէն ակին այլ ևս լրտեսք՝ և բերին ստոյգ համբաւ թէ, ահաւասիկ ակեալ Ջղալօղլին եհաս ի գաւառն Կարնոյ՝ որ է Արզրում։ Իբրև լուաւ շահն զայս համբաւ, զարձոյց զկնճռս իւր՝ և ակն յներանգակերան հին, որ այժմ ասի Աղջաղալայ։

Եւ զոր ի վաղ ժամանակաց ունէր ի մաի զքշնէն ազգին քրիստոնէից և զաւերեն աշխարհին Հայոց անդ յայտնեաց խորհրդակցաց իւրոց։ Քանզի գիտէր ի միտս իւր, թէ ո՛չ կարէ պատերազմաւ զդէմ ունել Սինան փաշային, այսինքն Ջղալօղլի Սարդարին։ Վասն որոյ հրամայեաց զամենայն բնակիչս աշխարհին Հայոց, եթէ քրիստոնեայ, եթէ հրէայ, եթէ մահմետական, քշել յաշխարհն Պարսից։ Զի եկեալ Օսմանցւոցն անբնակ գտանիցեն զերկիրն ի մարդկանէ։ Եւ ո՛չ գոցի կերակուր և ոճխիկ և այլ ինչ պիտոյք նոցա և անասնոց նոցա, և սո ի չդոյէ հարկաւորաց վատնդեսցին զօրքն Օսմանցւոց։ Նաև տարեալ ժողովուրդն լինիցին նմա անզերծանելի հարկաւոր՝ ծառայք և հողագործք մինչև ցյաւիտեան։ Եւ նա մինչ ի վարանս խորհրդոց կայր, լուաւ թէ Ջղալօղլին եկ ի Կարնոյ. յայնժամ կոչեաց առաջի իւր զմեծամեծս երկրին Հայոց՝ և զինքն կեղծաւորաբար ցաւակից ցուցանելով ազգին Հայոց, ասէր ընդ մեծամեծան և ընդ աւագան Հայոց. «Լուաք թէ եկեալ է Ջղալօղլին՝ և ահաւասիկ պայ մտանէ յերկիրս ձեր անհուն զօրօք։ Նաև ի մերս կողմանէս անթիւ են զօրք. և գիտէք՝ զի բազումք գոն ի սոսա յերկոսին կողմանս յայսպիսում ժամանակի արք դառնացողք հոգւով՝ ելուզակք, և աւաղակք, և սրիկայք, զորոց ո՛չ գիտեմք զովն և զուսաին։ Գուցէ ոմանք ի նոցունց, որք անփոյթ արարեալ իցեն զկենաց իւրեանց և զհրամանաց իշխանաց, յանկարծակի ի վերայ բախեալ հարկանիցեն զմասն ինչ երկրի և զժողովրդեան ձերոյ կամ սահմանաց կամ ընտանեաց, աւարումն արարեալ՝ առեալ ի բաց ճողոպրիցին, և լինիցի ժողովուրդն ձեր ի կորուստ և ի գերութիւն։ Վասն որոյ ողորմեալ ձեզ՝ հնարիմ փրկել զձեզ այսու կերպիւ. զի գա-

3 ԱՊ *զրոյր* փխ *բոլորովին* Բ *բոլորին* ԱԲԳԴՆ *Արարատու*
5 ԱՊ *այսց ամենից* ԲԳՆ *զոր*
7 ԱՊ շիմ *և*
9 Դ *Ջղալոզլոյն* Դ *Ջղլաօղլոյն* ԱՊ շիմ *զոր հանապազ բերէին գնացեալ լրտեսքն*
14 Ա. *ի վաղուց*
17 ԱԳԷ *անիլ*
22 ԱԲԳԴՆ *վտանկեացին*
25 ԲԳԴՆ *նլաւ*
27 Ա.Է *ընդ մեծամեծս*
29 ԱՊ *կողմանէ*: Ա *անթիւք*
31 Է *և զորոց* փխ *զորոց*
32 Ա. շիմ *որք*
35 ԲԳՆ *ընդանեաց*

*առաւականք՝ և բնակիչք երկրի ձերոյ հլեալք ի տեղեաց իւրեանց, առակս ինչ յառաջ խաղացեալ, գնացին առ ինչ ճանապարհ. և մեք աստէն զդէմ կալեալ պատերազմիմք ընդ Օսմանցիսն. և եթէ մեզ տացէ Տէր, յայնժամ դառնայք ի տեղիս ձեր և լինիք մեզ ի ժողովուրդք, և եթէ նոցա տացէ Տէր, մեք զանց արարեալ դնամք, և դուք դառնայք ի տեղիս ձեր՝ և լինիք նոցա ի ժողովուրդք»: Զայս իրրև ասաց շահն ընդ առաջնորդին Հայոց, որոց պիտուրի անունն էր Տէր Յովանէս, որ պերճական մակդրութիւնամբ անուանէին Ազայ Տէր-ակբ, և նոքա ծանեան զպատճառեալ նենգութիւնն և ո՛չ Հաճեցան ի բանս նորա, այլ պատճառակով պատճառս, մատուցեալ առ նախարարս շահին և ասացին. «Ահա ժամանակս աշուն է (բանզի յետ ոտնի սբոյ խաչին էր, յոտժամ բշկին վերկիրն). ամենայն բնակիչք երկրիս չունին պատրաստութիւն ճանապարհիս, զպատս և այլ բեռնակիր, առ ի բառնալ զպատացուածս և զմանկունս. զի թէպէտ ժիրքն և կարօղքն հեռիստս գնացին, իսկ ծերքն և մատաղ մանկտիք ոչ կարեն գնալ: Վասն որոյ խնդրեմք յարքայէ այժմ ներել մեզ. այլ զայդ հրաման յաջողելովն Աստուծոյ ի գարունն կատարեսցուք»: Զայս ասէին, զի թերևս անցցէ ժամն ի նոցանէ:

Իսկ աւերիչն աշխարհաց և վատնիչն քրիստոնեայ ազանց, բնակարանն նեսարայ, թագաւորն Շահաբաս ո՛չ անասց բանից Հայոց: Այլ կոչեաց զնախարարս իւր առաջի իւր և կարգեաց ի նոցանէ վերակացուս և վարիչս բնակչաց երկրին, իւրաքանչիւր գաւառաց իւրաքանչիւր իշխան իւրովք զօրօք վարող և քշող ժողովրդեանն:

Եւ զԱմիրգունայ խանն՝ յաւուրս քաղաքին Երևանայ և երկրին Արարատու և նորին մերձակայ մանուցեր գաւառացն: Եւ հրամայեաց նոցա շահն, ուր և կարասցեն ձեռն արկել, արտաքսման արարեալ վարեսցեն և ո՛չ Թողուցուն ամենևին շունչ կենդանի,—եթէ քրիստոնեայ և թէ մահմետական,—զհատանելոյն բանիւ, և զոչ հատանելոյն և զաւուրգանուղոն հրամանաց թագաւորին, սրով՝ և մահուամբ և պրութեամբ:

Եւ զօրապետացն՝ յետ ընդունելոյ զայսպիսի զաշխարհակործան և զասսպիս հրաման ի թագաւորէն, լինել իւրաքանչիւր զօրավար իւրով գնդաւն՝ զիմեցին իւրաքանչիւր հրամայեալ գաւառաց աշխարհիս Հայոց: Եւ իբրև հողմնահատոն հուր ընդ եղէգն ընթացեալ, հասցնել տագնապաւ վազվազակի զամենայն բնակիչս գաւառացն կորչելոյ իւրաքանչիւր բնակութենանց և արտաքսման արարեալ իւրաքանչիւր տեղեաց, իբրև զջրոյ բազմութենան հոսից և անդէնց գառաջնոյ արարեալ, բռնութեամբ վարեալ, ածեալ բերեալ հասուցին ի գաւառն

3 Ա.Դ *պատերազմիցիմք*
4 Ա.Դ *զարձջիր*· Ս. *լինիցիք* Դ *լինիջիք*
5 Դ և թէ Ա. *արարեալք* վխ *արարեալ*
7 Ի չիմ *էր*
10 Ա.Դ.Ի չիմ և
12-13 Ա.Դ *զպատրաստութիւն ճանապարհի*
13 ԲԳՆ *ճանապարհի*
16 Դ *զմեզ* ԲԳՆ *աջողելովն*
23 ԲԳՆ *ժողովրդեան*
25 Ա.ԲԳԴՆ *Արարատու* Ա. *մանուցերաց*
28 Ա.Դ *դհատանօզան* Ա.Դ *ոչ հատանօզան*
29 Ա.Դ *զաւուրգանօզան*
33 Ս. *աշխարհին*
34 Ա.Դ չիմ և Դ *հողմախառն*
38 Ս. չիմ *բերեալ*

Արարատու, և պլայնանիան պաշտն նորա լցին ծագէ ի ծագ։ Քանզի ի սաստրատ լերանցն Գաւնուոյ մինչ ի յելքն Երասխայ մեծի գետոյն, լայնութիւնն էր բանակին. իսկ վերկայնութիւնն զովիմբ կշռանաց դու, բայց ևս ասեմ աւուր միոյ ճանապարհ. և յայլուր տեսի, որ հինգ աւուր ճանապարհ էին պրևալ։ Եւ էր նոր փոխանակ Թուականն Հայոց և մտանալ ի ՈՒԴ յառաջնում ամսեանն Հայոց նաւասարդի, որ քշեցին վերկիրն։ Եւ Պարսիկ զօրքն, որք գնացին ի քշել վերկիրն, ուստի և Հանեալ զժողովուրդան քշին, եթէ ի կեզրէից և թէ ի քաղաքաց, զամենայն շէնս, զաւուն և զինակութիւնս հարք այրեալ անխնայաբար հրկէզ առնէին։ Այլն զհամբարս խոտոյ և գյարդի՝ գոչխանոյ և գպարսոյ և զայլ պիտոյից, զամենայն այրեալ վառնէին։ Այսպէս առեալ թափուր արարին գաշխարհն վառն զօրացն Օսմանցւոց՝ զի մի մնասցէ ինչ առճիկ նոցա, և վառնկևացին նոքա։ Այլև եկեալ ժողովուրդքն գայն առևտալ սրտակատուրք լիցին, և մի գարձցին յետս։

Արդ՝ զօրքն Պարսից, որք կարգեցան վարիչք ժողովրդեանն, մինչ վարեալ զժողովուրդսն բերեալ Հասուցին ի դաշտն էջմիածնի, Շահաբաան ի յԱղջապալէն էր. և Սարդարն Օսմանցւոց Ջղալօղլին իւրովք զօրօքն հնաս ի Կարս։ Եւ Շահաբաան գիտէր, որ ոչ կարէր դէմ յանդիման պատերազմաւ գիմակալիլ Օսմանցւոցն, զանգիտեալ ի բազմութենէ նոցա, վասն որոյ գարձուցեալ զերեսս իւր չուեաց ամենայն բանակաւն իւրով հետևեալ զՀետ բանակի ժողովրդեանն դէպ յերկիրն Պարսից։ Նաև զօրքն Օսմանցւոց չու արարեալ հետևեցան զկնի բանակին Պարսից։ Եւ եղեն երիք բանակք մեծամեծք և անհունք. առաջին՝ բանակն ժողովրդեանն, երկրորդն՝ բանակն Պարսից, երրորդն՝ բանակն Օսմանցւոց։ Եւ այնպէս դիպեցաւ պատահումն՝ զի յորժամ չուէր բանակ ժողովրդեանն, իջեալ բանակէր ի Հանդրուանս նոցա Շահաբաան զօրօքն Պարսից. և ի չուելն նոցա բանակէր ի նոյն տեղին Ջղալօղլին զօրօքն Օսմանցւոց, և այսպէս զՀետ միմեանց կրնկակոխ գնալով գնացին, մինչև Հասին ժողովուրդքն և Պարսիկքն ի գեղն Ջուղայ, և Օսմանցիքն Հասին ի նախչուան։ Եւ այնուհետև ո՛չ թողացուցին Պարսիկքն ժողովրդեանն զկայ առնուլ՝ և ոչ ժամ մի, այլ կարի սաստիկ տագնապաւ նեղէին զժողովուրդն, զամանս մահու Հարուածով գանելով, և զամանց զունչս և զականջս Հատանելով, և զամանց զգլուխքն կարեալ ի ձող ցցէին, որպէս զեղբայր Առաքել կաթուղիկոսին, որում անունն էր Յօհաննէս, զորա և զայլոյ ումեմն առն զգլուխան կարեցին և ի ձող ցցեցին յելը գետոյն Երասխայ։ Ջայսոսիկ և առա-

1 Ա.ԲԳԴԵ *Արարատու*
3 Ե *լայնութիւն Բ զովիմ*
10 Ա.Գ *զօրինոյ*
11 Ա.Գ *այլոց*
13 Ա.ԲԳԴԵ *վառնկևացին*
18 Ա.Գ *զի փխ որ։ Բ կարէ փխ կարէր*
20 Ա.Գ *չիբ վասն որոյ*
22 Ա.Ե *զօրք*
24 Ա.Գ *բանակ Ա.Գ երկրորդ բանակ Պարսիցն*
24-25 Ա. *երրորդ, բանակ*
26 ԲԳԵ *բանակն*
28 Գ *զօրքն... կրընկակոխ, Ե կրրընկնակոխ*
33-34 Ա.ԲԳ *գլուխն*
34 Ա.Գ *ցցելով Գե զնզբայրն Գե զնզբայրն Ա. կաթուղիկոսին Առաքելոյ ԲԳ Առաքեալ*
35 Ա. *չիբ առն ԲԳԴԵ առնն*
36 Բ *և զայսոսիկ*

ել քան զայսոսիկ խոշտանգանս կատանաց ածէին ի վերայ ժողովըրդեանն, ի յահ և յերկիւղ ժողովրդեան և տեսողացն, զի փութանակի անցցեն զկնին։ Զայս ամենայն վտանգս ածէին ի վերայ ժողովրդեանն խորամանկ ազգն Պարսից յահէ Օսմանցւոց, որք զկնի նոցա գային. վասն զի հայէին Պարսիկքն ի բանակն ժողովրդեանն զի անթիւք էին, նոյնպէս և չիւրեանց բանակն հայէին, զի յոլովք էին, և մինչ յանցանել այսքան բազմութեանս ընդ գետն, աւուրք բազումք ի վերայ անցանէին։ Երկնչէին ի զօրացն Օսմանցւոց, թէ մի գուցէ յայնքան աւուրս յանկարծակի բաղխեալ ի վերայ բանակին Պարսից բնկուզն ինչ և վնաս առնիցեն իւրեանց և կամ զժողովուրդն յափշտակեալ ի նոցանէ չկտս դարձուցանիցեն, և չար առաջարկութեան նոցա խափանումն լիցի։ Վասն որոյ ստպնատպատ ստիպէին զժողովուրդն անցանել զգետն։ Եւ ի բազմութենէն ո՛չ բաւէր նոցա նաւ կամ տուփ որով անցցեն զգետն, թէպէտ և յայլ տեղեաց այլ ևս նաւս բերին, և անդէն ևս յոլով աւուր շինեցին, սակայն բանակն ժողովրդեանն և բանակն Պարսից յոլովք էին, և տակաւին ո՛չ լինէր բաւական։ Եւ ի զօրացն Պարսից՝ որք վարիչք էին կարգեալք ժողովրդեանն, շրջապատեալ զժողովրդեամբն պահէին՝ զի մի՛ ոք փախիցէ, այլ և փայտիւ գանեալ՝ հարեալ՝ բեկեալ՝ մղեալ ի գետ անդր լնուին. և այսպէս վտանգն և վիշտն սաստկանայր ի վերայ ժողովրդեանն։

Իսկ ոգորմելի ժողովրդեանն հայէին յառաջ՝ զանհուն գետն տեսանէին իբրև ցծով՝ որ խնդրէր, և չհաւատա՝ զսուրն Պարսից, որ սպառնանէր, և ճարակ փախչելոյ ո՛չ գտանիւր. և առհասարակ ապիրատք ոգոյս, և յորդ արտասուս յաչաց հեղեալ առնէին երկրորդ նեռանս. Եւ ձայն լալեաց, և հառաչանաց, ճչանաց, վայոց, կսկծանաց, մորմոքանաց ընդ միմեանս խառնեալ դոչեցուցանէին ուժգին աղաղակաւ. իսկ ոգորմութիւն և փրկութիւն ոչ ուստեքէ էր։

Աստանօր կարի հարկիւ պիտոյ եղև մեզում ժողովրդեանն հինն Մովսէս՝ և նորին աշակերտան Յեսու առ ի փրկել զնորս Իսրայէլ ի ձեռանէ երկրորդիս Փարաւոնի, և կամ դաղարեցուցանել զուղիս յորդահոսան և լայնատարած գետոյն մեծի. և ոչ եղև գտնել, քանզի յորդութիւնք մեզաց մերոց փակեցին ընդդէմ մեր զդուռն ողորմութեան գթածին Աստուծոյ։*

Եւ անողորմ զօրացն Պարսից վարեալ զժողովուրդն լնուին ի գետն, և նոքա ի մէջ գետոյն ևս քան զևս բազմացուցանէին զձայն աղաղա-

* *Տե՛ս ելք, ԺԹ—ԺԸ.*

1 Ա. *զսոսա փխ զայսոսիկ*
3 Ա.ԲԳԴՆ *վտանկս*
4 Գն *որ*
5 ԱԴ *բանակ*
6-7 ԲԳն *ցրանցանել փխ յանցանել Դ մինչ ի անցանել*
9 ԲԳն *բախեալ*
10 ԱԴ *չիք իւրեանց*
14 Բն *նաւ*
15 Ա.Դ *բանակ*
17 Բ *կարգեալ ժողովրդեան*
19 Ա.ԲԳն *վտանկ Դ վտանկն*
21 Ա.Դ *հայեցեալ*
22 Գն *իբր ԲԳ սուրն*
23 Ա.Դ *Որք առհասարակ փխ և առհասարակ*
24 ԱԴ *զկերկրորդ*
25 Բն *ձայն լալեաց, հառաչանաց*
28 Բ *ժողովրդեան*
30 Ա.ԲԳՆ *Փարաւոնի* ԲԳն *գուխս*

կին և զողրոցն ի վտանգէն։ Եւ ոմանք ի նոցանէ կալեալ զեզերս նաւացն, և ոմանք զտփոցն, և ոմանք զագիս ձիոց՝ և զեզանց, և զզօմշոց, և ոմանք իւրովի լողեալք անցանէին։ Եւ որք անհմուտք էին լողելոյ և անլօրք, ծերք և պառաւունք, տղայք և աղջկունք, և մասաղ մանկտիք լցեալք էին յերեսս ջրոյն. և գետն առեալ տանէր զնոսա իբրև զիտուխ ի ժամանակս գարնայնոյ։ Եւ գետատար մարդով ծածկեալ էր երեսն գետոյն։ Եւ թէպէտ անցին, որք անցինն, այլ բազումք այնք էին, որք հեղձամամբ ջրոյն մեռան։

Եւ հեծեալք ոմանք ի զօրացն Պարսից, որք ունէին ուժիզ ձիս, և ինքեանք արք արի և կարող, շրջելով ի մէջ քրիստոնէից տեսեալ նկատէին զուստերս և զդստերս քրիստոնէից, և որոց հաւանեալ սիրաւ իւրեանց, ևթէ կանանց, ևթէ աղջկանց, և ևթէ տղայոց. էր զի խաբէին պահարան, թէ տուր՝ զի վասն քո անցուցից ընդ գետն յայնկոյս, և իբրև անցուցանէր, ո՛չ դնէր անդէն ի գետնի, այլ առեալ երթայր յո և կամէր։ Եւ այլք գողութեամբ առեալ տանէին։ Եւ այլք յափշտակութեամբ և սպանութեամբ առեալ ի տեարցն տանէին։ Եւ բազում մարք զղայս և տեարք զհիւանդս ի ճանապարհին ընկեցիկ սպարեալ լքեալ թողեալ գնային, վասն անհանդուրժելի և անշմբերելի վտանգին, որ ժամանեալ էր ի վերայ նոցա։ Եւ միանգամայն ասեմ՝ զի թշուառութիւնք և արհաւիրք անտանելիք հասին ի վերայ ազգիս մերոյ։ Եւ ոչ բաւեմ թէ որով տարազու հիւսեցից ոչխս զամբանականս և աշխարանաց ի վերայ բնկման հայկական տեռից, որք այսքան չարակրութեանց եղեն ընդունակք։ Զի թէպէտ ըստ սպառասի հնոյն Իսրայէլի լինէին վարեալք գերի ձեռամբ երկրորդիս Բաբելացւոց, այլ ոչ զոյր երեմիա, որ խրատէր, և ո՛չ Եզեկիէլ, որ լուսաւորէր, և ո՛չ Յեսու կամ Զօրաբաբէլ, որ զդարձն առաջնորդէր։ Այլ եղեալք իբրև զխօտս անհովիւս, ցրուեալք և հալածեալք առաջի գայլոց պատառողաց և գիշատող գազանաց, որք վարէին բռնութեամբ։ Եւ նոքա երթալով երթային և լային, որք բարձեալ տանէին զսերմանս իւրեանց*։

Իսկ յաջորդ սորին, ո՛չ եղև տեսանելի՝ որ ասէ. «Գալով եկեսցեն, և ցնծասցեն», վասն զի ոչ եկին և ոչ եղև ցնծութիւն, այլ անդէն մնացին ուր և տարեալ արգելին, այսինքն յաշխարհն Պարսից։

Եւ եղև զի ամենայն ժողովուրդն էանց զգետն, էանց ընդ նոսին խառն և բանակն Պարսից։ Եւ մինչ ցայս վայր Ամիրգունայ խանն էր քշող ժողովրդեանն, և յայնմ վայրի Շահաբաան հրամայեաց նմա գնալ ընդ իւրում բանակին։ Եւ կարգեաց վարող ժողովրդեանն զխալիֆալու էլիազ սուլթանն, և հրամայեաց նմա փութով և ճեպով վարել

* *Սաղմ., ՃԻԸ, 5—6*

1 Ս. *աղաղակեցեն* ԱԴ *ողբոցն*
1-2 Ս. *Նաւուցն*
3 ԲՆ *լօղնալ* Դ *լողեալ*
6 Ս. *գարնանոյ* ԱԴ *երես*
9 Ս. *զուժեղ*
10 ԱԴ *արիք և կարօղք* Բ *կարողք*
12 ԲԴ *չիք և*
14 ԱԴ *յո՞*
16 Ս. *մարդիկք վխ մարք*։ ԱԲԳՆ *բազումք մարք*
17 ԱԴ *չիք լքեալ։*
18 ԱԴ *և թողեալ* ԱԲԳՆ *վտանկին*
21 Դ *զամբանակս*
22 ԲՆ *որ*
23 ԲԳՆ *ընդունակ*
24 ԱԲԳԴ *Բաբիլացւոց* Ե *Բաբիլացոյ*
30 Ս. *զոր*

ղժողովուրդն՝ և հետացուցանել ի գօրացն Օսմանցւոց՝ և հաստուցանել յերկիրն Պարսից։ Եւ ինքն շահն ամենայն բանակաւն Պարսից ընդ արքունի ճանապարհն, այսինքն ընդ ջապահն յուղի անկեալ գնացին ի քաղաքն Թաւրվէզ, բայց ղժողովուրդն ո՛չ ընդ նոյն արքունի ճանապարհն տարան ի Թաւրվէզ վասն երկիւղին Օսմանցւոց՝ մի՛ մի գուցէ ղկնի ժամանեալ յափշտակիցեն ի Պարսից։ Այլ հրամայեաց շահն Էլիաղ սուլթանին, ղի ընդ նով և նորա և ընդ ղժուարին վայրս տարցէ՝ ընդ որ ոչ կարացին գնալ բանակն Օսմանցւոց ղկնի նոցա։ Եւ նա չուեցուցեալ ղժողովուրդն տարաւ ընդ ճանապարհն ձորոյն՝ յորում գնան Սրասխ գնալ ղգնացս իւր, ընդ ղժուարին եւ ի էջս լերանցն, և ձորոցն, և ընդ կածան տեղիսն։ Եւ բազում տատապանօք և չարակրութեամբ անցին ղժուարին վայրս լերանցն. և անցուցեալ ղժողովուրդն ղժուարին վայրօքն, տարան յերկիրն, որ ասի Թարտմիսալխալ, և Ահար, և Մուշկուն, և ի մերձակայ վայրս տոցա, և անդէն գնահեցուցին գնասս ամիսս մինչ վասն սաստկասաստայց և գառնաշունչ ցրտոյ ձմերան՝ որոյ սակս ոչ կարէին գնալ։

Իսկ ի հաստանել քաղցրաշունչ օդոյ գարնայնոյ, գայլ ամն իշխան կարգեցին վարիչս ժողովրդեանն՝ որում անունն էր Աբուխուրաք բէկ, որ վերստին սկսաւ վարել ղժողովուրդն մինչև տարեալ հաստց ի քաղաքն Սպահան։ Եւ անդէն՝ որք քաղաքացիք էին, ի նմին քաղաքի գնահեցուցեալ բնակեցուցին, և որք շինականք էին և գեղականք՝ ի շրջակայ գաւառսն քաղաքին Սպահանու բնակեցուցին՝ ի Լինջան, և յԱլինջան, ի Գանդիման, և ի Ջղախոռ, ի Փարիսայ, և ի Բուրվարի. և անդէն բնակեցան, և կացին մինչև ցայսօր։ Քանզի արքն հին, որք յաշխարհէն Հայոց էին գնացեալ և գիտէին ղվայելչութիւն աշխարհին Հայոց, նոքա մնուան անդէն. և որք անդ ծնան, և սնան, և վարժեցան նոյն աշխարհին և հաճեցան և ընդհալացան, ղի նովաւ վարժեցան. վասն որոյ անդէն կացին և մնացին մինչև ցայսօր։

Այլև յայսմ ժողովրդենէս Հայոց՝ զոր տարան ի Սպահան, հինգ հարիւր տուն բաժանեցին և տարան յերկիրն Շիրազու, և անդ բնակեցուցին։ Քանզի Ալահվէրտի խանն, որ էր տէր Շիրազու՝ խնդրեաց ի Շահաբասէն շնորհել նմա մասն ինչ յազգէն Հայոց վասն բարեմասութեան և հաւատարմութեան ազգին Հայոց, ղի լիցին նմա ի ժողովուրդ. և թագաւորն շնորհեաց նմա ղխնդիրն, և նա տարեալ բնակեցոյց ի գաւառն Շիրազու։

Դարձեալ դարձցուք ի սկիզբն պատմութեանս մերոյ. ղի յորժամ հրամանաւ թագաւորին հանդերձեցաւ Ամիրգունայ խանն քշել զերկիրն Արարատու, առաքեաց զմասն ինչ ի զօրաց իւրոց ի գաւառն Գառնւոյ՝

3 Ա.ՐԴ *ուղի*
3-4 Ի *ի քաղաքն ի Թարվէզ*
6 Ա *յափշտակիցեն յինքեանց*
9 Ա. *որով փխ յորում Գ ընդ որով փխ յորում*
11 Ա *բազմօք*
12 ԳԴՆ *անցուցեալք Դե զժողովուրդն Գ ժողովուրդն*
14 Գ *անտէն*
17 Ա. *Հաստանիլ*
23 Ա. *չիմ և (անդէն բնակեցան)*
24 ԱԳ *մնացին փխ կացին Ա. հինք*
27 ԱԳ *աշխարհին հաճեցան*
28 Գ *կէցին*
29-30 Ի *տողը կրկնված է*
38 ԳԴՆ *Արարատու*

զի զնոսա ևս չուեցուսցեն, ածցեն, խառնեսցեն ի չուս ժողովրդեանն: Իսկ գնացեալ զօրքն նախ մտեալ ի նոյն ինքն ի գիւղն Գառնի, և ոչ ըստ հրամանաց թագաւորին առնէին, այլ որպէս զգևրևվարս և աւարառուս սկսան յափշտակել զինչս և զպատկս քրիստոնէից: Եւ զայն տեսեալ բնակչաց գեղջն ձայն առեալ միմեանց՝ և արարեալ ամբոխ մեծ, սրով և բրով՝ քարիւ և փայտիւ հարեալ վիրաւորեալ կառափնատեացն զնոսա՝ և ի բաց վարեցին յինքեանց, և ինքեանք անդէն կացին անհոգ իբր ի ժամանակս Մօրկայ՝, և ոչ փախեան յայլ ուրեք. և կամ թէ ոչ գնացին առ խառն ծանուցանել զյափշտակութիւնն նոցա: Իսկ Հայոց ծակատն զօրացն գնացեալ առ Ամիրգունայ խառն՝ սկսան ամբաստանել զժողովրդենէն՝ և մեծամեծ վնասս ի վերայ նոցա յօդել: Որոյ սրտմտեալ բարկութեամբ մեծաւ, առեալ ընդ իւր զօրս յոլովս եկն ի գաւառն Գառնւոյ, և նախ գնոյն Գառնւոյ գեղջ պարսն ըմբռնեալ էարկ ի խոշտանգանս չարչարանաց Հարմամբ գանից, և Հատմամբ յօդից, և իսկոյն չուեցուցեալ նա ի ձևոս զօրականաց իւրոց տանել խառնել զնոսա ի չուս ժողովրդոցն ի մեծ բանակն: Զոր և տարեալ խառնեցին ի չուս ժողովրդեանն, որք ընդ նոսին գնացին յաշխարհն Պարսից: Եւ անդէն ի Գառնի ապրեցին Ամիրգունայ խառնին, թէ կան և այլք գիւղք ի գաւառին Գառնւոյ, որք ամրացեալք են յամուր վայրս լերանց երկրիս՝ յայրս և ի ծերպս քարանձաւաց: Եւ յանուանէ յիշեցին զՄանուէլ եպիսկոպոսն Հաւուց Թառայ վանիցն, և զԱստուածատուր եպիսկոպոսն Գեղարդայ վանիցն, թէ մտեալք են յայս նիշ այրս և անդ ամրացեալք: Քանզի սոքա երկոքին եպիսկոպոսքս, յորժամ լուան զբշնէլն երկրին, հոգացին զպէտս կարեաց կարեւոր իրաց, կերակրոց և ըմպելեաց, և առեալ զարս ոմանս ի մերձաւորաց իւրեանց՝ կարգաւորս և աշխարհականս և նոքումբք եկեալ գնացին ի ձորն Գեղարդայ՝ և մտեալ յայրմի քարանձաւացն դադարեցին: Քանզի բազումք գոն ի ձորն Գեղարդայ փորուածու այրք և ամրոցք ի հին ժամանակաց: Եւ ի լսելն զայս Ամիրգունայ խառնին առեալ զզօրսն՝ որք ընդ իւր էին՝ և եկն ի ձորն Գեղարդայ, և ինքն եկեալ եկաց առաջի այրին յորում էին եպիսկոպոսն. և ձայնեալ ի բարձունս խօսէր ընդ նոսա խաղաղութեամբ գալ ի հնազանդութիւն հրամանաց թագաւորին: Իսկ նորա բանս տգեղս առնարգանաց, հայհոյանաց, և եպերանաց ի բարձանց անտի ձայնեալ ասէին խառնին, այլ և քար և նետ արձակեալ ձգեցին դէպ առ խառնն: Իսկ խառն իբրև նետս թէ խաղաղութեամբ ո՛չ գան ի հնազանդութիւն, յայնժամ հրամայեաց իւրոց զօրացն՝ զոր ինչ կարեն առնել արասցեն:

1 Ր *ժողովրդեան*
2 Գ *զնոզն փխ գիւղն*
8 Ա.Է չիՀ *կամ թէ* Գ *կամ թէ (ջնջված է)*
10 Ն *անբաստան*
11 Ա.Է *լինիլ*
15 Ա.Գ.Է *տանիլ*
17 ԳԳ *ժողովրդեան* ԲԳ *որ*
18 Ն *այլ*
19 ԲԳՆ *ամրացեալ են*
22 ԲԳՆ *մտեալ են* ԲԳՆ *ամրացեալ*
24 ԲՆ *ըմպելեաց*
26 Ա.Է *ելեալք*
28 Գ *ամրոց* Ա. չիՀ *ի (լսելն)*
29 Ա.ԲԳ *իւրն փխ իւր* Ա.ԲԳ չիՀ *և (ևկն)*
32 Ն *բան փխ բանս*
33 ԲՆ չիՀ *և է* չիՀ *ի բարձանց*
34 Ա.Գ.Է *զքար և զնետ*

Եւ ի զօրականաց խանին այլ ոմանք քարապնացք ելին ի գլուխ լեռանն, յորում էր այրն, և ունելով զժայռս քարանցն իջին մինչ ի կոզմն ինչ դրան այրին հնարաւոր գնացիւք։ Եւ ևկեալ ոմն ի քարապնաց տաճկացն ևկաց ի դուռն այրին՝ յորում էր Մանուէլ եպիսկոպոսն, և հայեցեալ ի ներքս նմա զեպիսկոպոսն նստեալ, և բարբառով տաճկաց նախ ողջոյն նա եպիսկոպոսին, իսկ եպիսկոպոսն ո՛չ կարաց պատասխանել ինչ՝ քանզի ափշեալ մնաց, և տաճիկն արիացեալ սրտով և գործով՝ եմուտ ի յայրն, և իսկոյն զվարպետարն՝ որ զմիջով իւրով ածեալ ունէր, սրատաքարշեալ հեծ՝ և սպան զեպիսկոպոսն անդէն. և կարեալ զգլուխն էառ ի վայր առաջի խանին։ Եւ ապա այլոց ևս զօրացն Պարսից արիացեալ փութանակի ելին յայրն, և զայլ ևս ընկերս եպիսկոպոսացն կալեալ իջուցին ի վայր առաջի խանին և սպանին զամենեսեան անդէն։ Եւ ապա ի նոյն ձորն մեծաւ յուզմամբ խոյլ արկեալ ռրոնեցին, և զամենայն գաղթականն, որք ի խոռոչս և ի ծակս վիմացն թաքուցեալք էին, զամենեսեան գտին, մինչև նոցա աւար հարին, և զոմանս ի նոցանէ կոտորեցին, և զորս Քողին կենդանի, տարեալ խառնեցին ի չուս բուն բանակի ժողովրդեանն։

Արդ՝ առաւօտ յայնմ իսկ երևեցաւ արդար դատաստանն Աստուծոյ, որ բաժանէ մինչև ցօրոշումն շնչոյ՝ և ուղղոյ՝ և օդոյ ի վերայ երկուց այոց եպիսկոպոսացս, որք գնացեալ ի Սպահան՝ բերին զազգն Պարսից, որք աւերեցին զաշխարհս Հայոց, և ինքեանք ևս նոցին սրովն սատակեցան, զի յորս յուսացան՝ նոքին եղեն ինքեանց սատակիչք։ Ըստ գրեցելումն յօրէնսն. «Որով և մեղանչէ ոք, նովիմբ և տանջեցի»։ Ո՛չինչ օգտեալք յունայն առաջարկութեանց իւրեանց և յամբարիշտ գործոց իւրեանց, այլ մնացին պարտական Աստուծոյ արդար դատաստանին, յաղագս աւերման աշխարհին Հայոց և կործանման ազգիս, և կորստեան անմիաց անձանց, և այնքան անպարտ արեանց հեղմանց, և խաւարման սրբոց եկեղեցեաց, և այլ ևս ազգի ազգի չարաչար պատահմանց, և զկնի ամենայնի ինքեանք ևս սատակեցան սրովն Պարսից։*

Յետ այսմ ամենայնի ժողովեաց խանն զամենայն զօրս իւր՝ և գնաց ի վերայ այլոց ևս գաղթականաց ի նոյն գաւառին Գառնւոյ, և զորս ո՛չ կարացին առնուլ՝ թողեալ ի բաց գնացին, և զորս կարացին առնուլ՝ աւար հարին, և սպանին՝ և վարեալ տարան ընդ իւրեանս։ Եւ գնալով գնացին մինչև հասին ի մեծ ձորն՝ զորոյ զանունն Քօռադարայ ասեն. և թէպէտ բազումք կային անդէն ի ձորն այրք և ամրոցք, յորում թաքուցեալք էին քրիստոնեայք, թողեալ զայլսն զամենայն՝ դիմեցին ի վերայ անուանի այրին՝ որում Նախըշխան այր ասէին. զի

* *Իմաստ. Սող., ԺԱ, 17*

1-2 ՍԼ *լերինն*
3 Գ *ի քարագնայ*
5 ՍԳ *բառբառով*
7 ՍԼ *այլ փխ քանզի*
14 Ս *զամենեսեան* Բ *խոռոչս*
19 ԲԳՆ *չիբ և (ուղղոյ)*
20 ԲԳՆ *այս ն եպիսկոպոսաց* ՍԳՆ: *գնացեալք*
21 ԲԳՆ *որ*
22 ԲԳՆ *իւրեանց սատակիչ*
26 ՍԳ *աշխարհիս*
28 ՍԲԳՆ: *չիբ և*
32 ՍԼ: *Գառնւոյ*
35 ՍԳ *անունն*

վասն ամբութեան նորին բազում էին անդ ժողովեալք արք և կանայք քրիստոնեայք, անձինք իբրև հազարք։ Եւ զճանապարհս այրին զգուշութեամբ պահէին քրիստոնեայքն։ Իսկ զօրացն Պարսից թէպէտ բազում ժամս մարտ եղեալ կուէին նետաձգութեամբ և թֆանքով, սակայն ոչինչ կարացին սանանել, քանզի յոյժ բարձր էր ի ներքուստ կողմանէ։ Եւ ապա չարաշնար ապգն Պարսից հնարեցին այլ իմն հնարըս, և բաժանեցին ի զօրացն իւրեանց արք երկերիւրք, ելին ի ձորէն, և գնացին ի գլուխ քարափանն, և վասն զի քարափունքն և վէմքն ձորոյն էին ի վերոյ միմեանց զօտի զօտի։ Եւ կապեալ զբազում պարանս ընդ իրեարս և այնպէս իջուցանէին զմիմեանս, և այսպէս իջուցանելով զմիմեանս զօտէ ի զօտի, և զօտէ ի զօտի մինչև հասին ի գլուխ զօտոյն՝ յորում էր այրն, և անդ բնրնալ ապուցին չորս մարդոյ երկաթի զրահս՝ և արարին զնոսա երկաթապատս յոտից մինչև ցգլուխս, և ի մէջս իւրաքանչիւրոցն կապեցին չորս և հինգ թուր, որպէս զի ի բնականել միոյն պատրաստ լիցի միւսն, և նմին ի ձեռս նոցա սուսերս մերկս, և կապեցին ի մէջս իւրաքանչիւրոց նոցա երկու և երեք պարանս զի ի հատանել միոյն կալցէ զնա միւսն։ Եւ ապա յանբաւ բարձրութենէն ի վայր կախեցին զնոսա՝ մինչև եկեալ հասին յայրն, և մտին ի մէջ այրին և դիմեալ ի վերայ արանց և կանանց մերկ սուսերօքն սկսան անխնայ կոտորել զնոսա՝ որպէս զդայլս, որ մտեալ ի մակադատնս խաշանց կոտորէ թարց անխայելոյ։ Եւ ողորմելի քրիստոնէիցքն տեսեալ զանողորմ սուրն Պարսից ի կոտորել զինքեանս, սկսան ի ձայն բարձր աշխարանաց, գուժի, աղաղակի, կականաց լալ՝ և ողբալ՝ և կոծել զկորուստն անձանց իւրեանց։ Եւ ամբոխեալ և աղմկեալ իբրև զխռովեալ ծով յուզմամբք զմիմեամբք ել և ելս առնէին, և ի կողմանէ ի կողմն դիմեալ զերծանել հնարէին, և տեղի փախստեան ոչ դոյր։ Եւ արանցն, որք պահէին զճանապարհս դրան այրին, լուեալ զաղաղակն և գիտացեալ զեղելն, թողեալ զպահպանութիւնն, և առ պութս ընտանեացն իւրեանց զիմեցին ի ներքս ի յայրն՝ առ ի փրկել զընտանիսն։ Եւ յարուաքուստ կուսէ Պարսիկքն իբրև տեսին զգնալ պահապանացն, ժողովեալք ի միասին մտին ի յայրն, և սկսան սատակել զքրիստոնեայսն մարդախողխող սրովն, ի դրանէ այրին մինչև ցբուն իսկ ներսի յանկիւնս այրին, իբրև զխոտահար զամենևսեան ջարդեալ ի վայր թափեցին։ Վասն զի զարուսն և զպատուսն և զոչ հաճոյսն իւրեանց սպանին, և ծովացաւ յատակ այրին արեամբ քրիս-

1 ԲԳԴ *ժողովեալ*
6 Ա *զայլ*
7 ԱԴ *արս երկերիւրս*
8 ԱԲ չիք և *(վասն զի)* ԲԴ *քարափունքն և վէմք*
9 ԲԳԴ և *զօտի*։ ԲԳԴ *բազում*
10 ԱԴ չիք և *այնպէս*
11 ԱԴ *ի զօտէ ի զօտի*։ ԱԴ չիք և *զօտէ ի զօտի*
11-12 ԲԳԵ *զուսոյն*
12 ԲԳԵ *բնրին* և
14 ԲԳԴ *թիւր*
18 Ա *յայրին*
23 Դ չիք *կականաց*
24 ԱԼ *զկորուստ*
25 Դ *յուզմամբ*
25-26 Բ և *կողմանէ ի կողմ* ԴԵ չիք *ի (կողմանէ)*
26 Ա *զերծանիլ*
29 ԲԵ *ընդանեաց* ԱԴ չիք *իւրեանց*
30 ԲԵ *զընդանիսն* Դ *զնդանիսն*
33 Ա *անկիւնս*
35 Դ *քրիստոնէիցն*

սոնէից՝ և ամենայն քարինքն ներկեցան։ Եւ պատրաստ մանկունս ի գրկաց մարցն խլէին և յայրէ անտի ի վայր ձգէին։ Եւ ոմանք կանայք՝ և տղայք և աղջկունք՝ որք մնացին ի սպանմանէն, իբրև տեսին պինքեանս մատնեալս ի ձեռս անիրաւ մարդապէտ պատանաց՝ որ վարեն զնոսա ի գերութիւն՝ և պէսպէս աղտեղութեամբ ապականեն զսրբութիւն նոցա, վասն որոյ լաւ համարեալ զսրբութեամբ մահն իւրեանց քան զապրուստ սուղ ինչ ժամանակեայ կենաց, որ այն ևս մեզօք և չարակրութեամբ. բաղումք ի նոցանէ սպատէին զերեսս փականդամբ և ձորձով իւրեանց և յանբաւ բարձրութեանէն ի յայրէ անտի ի վայր արկանէին զինքեանս և մեռանէին։ Եւ վասն զի ի մէջ ձորոյն էր մայրի անտառախիտ ծառոց, և ոմանք յայնց՝ որք զինքեանս ի վայր արկանէին յայրէ անտի՝ նկճեալ պատահէին ծայրից ոստոց ծառոց և արկելուին ի նոսա, ոմանց ևս ընդ փորն մտեալ ի քամակն ելանէր ճիւղն, և ոմանց ի սիրտն մտեալ ի թիկունս ելանէր։ Սոքա ևս այսպիսի տաժանելի և դառն մահուամբ վճարեցան։ Իսկ զմնացեալս ի նոցանէ գերի արարեալ տարան, և զինչս և զստացուածս նոցա աւարեալ յափշտակեցին, և բաժանեցին չիւրեանս ի լիութիւն ինքեանց։ Եւ զօրացն Պարսից ելեալ անտի առեալ ընդ իւրեանս զամենայն գերիսն՝ նկին ի բուն բանակն Պարսից։

Եւ զայս ամենայն լսելով և դիտելով մեր, ճմլին սիրտք մեր, և գալարին աղիք որովայնի մերոյ, և աչք մեր վտակս արտասուաց թորեալ իջուցանեն, վասն նկելոյ հասելոյ թշուառութեանս ժողովրդեանս մերոյ։ Եւ ոչ բաւեմք աստանօր՝ թէ որո՞վ օրինակաւ՝ և կամ որո՞վ տարրաղու ողբս առեալ աշխարհացուք ի վերայ բեկման ապգին և աշխարհին մերոյ, յաղագս որոյ ել հրաման մահաբեր ի բերանոյ երկրորդ Սաբիւռոսին և շունչ հրահասն յրունգաց նորին՝ և նկեր զեղենափայտս Լիբանանու*, քանզի անմարդաբնակ արար միահաղոյն դամենալի և դյուռթի աշխարհս Հայոց։ Վասն զի ի քշելն զերկիրս՝ ո՛չ թէ զմի կամ զերկու գաւառս վարեաց ի Պարսկաստան, այլ զբազումս։ Եւ սկսեալ ի սահմանացն Նախչուանու և անցեալ ընդ Եղեգաձոր, առ եզերբ Գնդամայ, և Լօռւոյ, և զՀամզաչիման գաւառն, զԱպարան, զՇարապխանէն, զՇիրակաւան, զՋարիշատ, և մասն ինչ ի գեղօրէից Կարսայ, և զձորն Կաղզվանու բնաւին, և բովանդակ զերկիրն Ալաշկերտու, և զգեղօրայն Մակուայ, և զերկիրն Աղբակու և զՍալամաստու և զնոյայ և զՈրմի, և որ ինչ պանդխտաբ և զարիսպականք մնացեալք էին ի քաղաքն և ի գեղօրայն Թարվիզու, զդաշտն Արարատու բովանդակ, և

* *Համմ. Դատ., Թ, 15*

1 Ա*Ր զսոնդիայ* Բ*ն զբսոբընդիայ*
2 Ն *ի յայրէ* Գ *անդի*
4 Դ *որք*
6 Գ *համարեցան*
7 Ա. չիք *որ* Բ*ն որն*
11 Բ*Գ որ*
12-13 Ա*Դ արգելանէին*
13 Բ*Գն* չիք *ևս* Ա*ՐԳՆն ճուղն*
14 Գ *ի թիկունան* Բ*Գն եւ սոքա*
17 Ա*Դ* չիք *ինքեանց*
18 Բ *իւրեան*
26 Ա*Դ յորնկաց* Բ*Գն յրունկաց*
29 Ա*Դ* չիք *եւ*
30 Դ *Եղեգաձորն*
31 Ա*ՓԳՆն Լօռւոյ Գն* չիք *և (զՀամզաչիման)*
35 Ա*Դ և զՈրմեայ* Գ *զոր փխ որ*

զերևան քաղաք, զերկիրն Ղրխբուլաղայ, զՄաղկունուց ձոր, զԳառնու ձորն, զՈւրծաձորն: Եւ յառաջ քան զայս՝ զպատուան Կարնոյ, և զԲասենու, և զնիւսայ, և զՄանազկերտու, և զԱրծկէոյ, և զԱրճշոյ, և զԲերկրու, և զվանայ ատարով և փերուխեամբ բերեալ էին յերևան, և ընդ սո-
5 սա քշեցին և տարան:

Ապա՝ զայս ամենայն գատուածս՝ և որք ընդ սոքօք էին, հրամայեաց շահն, որ քշեցին և տարան յաշխարհն Պարսից, և արար աւերակ և անմարդաբնակ զվայելուչ աշխարհս Հայոց:

Որ և այժմ տեսանեմք զարդատնդ և զերկրի զհողս, զարտ և զան-
10 դաստանս սորա, և զաւերակս բազմապատիկ դեղօրէիցն և զմեծանիստ աւանացն:

Նա և զաւերումն և զտապալումն և զքայքայումն զանառիկ և զամուր և զհաստատհղոյս վիմարկեամբք և կրով մածուցեալ զանմատոյց բերդօրէիցն:

15 Եւս առաւել զմեծափառ և զհռչակաւոր վանորայսն, զտեղի և զհանգըստարան սրբոցն Աստուծոյ:

Եւ զերկնանման և զքարձրաբերձ և զգմբեթաշէն կոփածու և հաստահղոյս վիմօք կառուցեալ զեկեղեցիս աշխարհիս Հայոց: Յորում յօրինեալ զանազան և պէս պէս նկարս և տեսակս շուշանաց և կեն-
20 դանակերպից, զեղեցիկ յօրինուածովք քանդակեալք ի վէմս՝ պէս պէս հնարակերպութեամբ: Որոց ձևն և զիր շինուածոյն և սիւնքն և ախաւեղագէսք կամարացն ապշի ապշի, և լուսանցոյցքն և դրունքն, և ամենայն ինչ խորհրդական:

Նա և զբարեհամ և զականակիտ զմշտահոսան աղբերակունս ջուր-
25 ցըն: Եւ զկարկաջահոս ծիծաղախիտ յաւէտընթաց յառաջախաղաց վտակս ջուրցն, որ ի գլխոց ձիւնաբարդ սպիտակափայլ բարձրաբերձ լերանց առ ի ստորև հոսեալ իջանէ ի դաշտ անդր և զշինութիւն նոցին մատակարարէ:

Նա և զբազպրաշունչ և զառողջարար և զկենդանապարգև զօդ և
30 զհողմն սորին: Եւ զայլ ամենայն վայելչութիւնս սորա տեսանելով հիղձամղձուկ եղեալ փղձկիմք՝ և հարեալ յարտասուս ողբամբ և աշխարեմք՝ զի անապատ եղև վայելուչ և քաղցր աշխարհս մեր: Եւ ազգ և ժողովուրդ մեր խլեալք ի տեղեաց և անջատեալք ի հայրենի և ի բնիկ ժառանգութենանց, և յօրհնեալ յերկրէ, որ լի է նշխարօք սրբոց
35 Աստուծոյ, և ուրախալ արեամբ սրբոց վկայից՝ և օրհնեալ քարոզութեամբ սրբոց առաքելոց՝ եղեն վտարանդեալք և տարամերժեալք յեր-

1 ԱՐԲ Ղրխբուլախայ Ա. զՄաղկնուց ձոր Գ ձորն Դն զԳառնու ձոր
2 Բ զՈւրծայձոր Գն զՈւրծայձորն Դ զՈւրծաձոր
4 Ա բերեալք էին
6 ԲԳն որ
7 Ա զորս Դ զորս որ
9 ԱԲԳԴն զհող
10 Գ զաւերակ
12 Դ նայև
17 Ա. զգբեթաշէն
18 ԱԲԳԴն զեկեղեցիս
20 ԱԲԳԴն յօրինուածով ԲԳԴն քանդակեալ
21-22 Ա. ախաւաղագէսք Գ ախաւեղագեսքն
23 Ի խորհրգական
25 ԱԲԴ յառաջխաղաց
27 Դ ի դաշտան
30 Դ զհողմ
34 Դ երկրէ

կիր օտար և յազգ այլասեր և այլալեզու, որ և թշնամիք հոգւոյ և հաւատոյ, և արեան ծարաւիք մարմնոյ։ Որք և անդէն օր աւուր առ սակաւ սակաւ նուազին, ոմանք մահուամբ և կորստեամբ, և ոմանք հաւատոյ ուրացութեամբ, որք դառնան յանօրէն օրէնս պղծոյն անապատի։

Եւ յաղագս երկնանման և ապինաստաս եկեղեցեաց պ՚ինչ ասացից՝ որք ի խաւարի մնացեալ և ի բնակչաց թափուր եղեալ՝ մերկացեալ ի զարդուց՝ եղեալ հանդրուանք համբարուաց և ջայլամաց ըստ նայեայ տեսանողի*, որջք աղուհեաց և նապաստակաց, մակաղատեղք խաշանց և անդէոց, բոյնք թռչնոց և աւերաբնակ բուոց։ Փոխանակ օր աւուր նորոգման, օր ղհետ աւուր խարխափել և քայքայիլ աւերեալ փլուզանի. փոխանակ բուրման խնկոց անուշից՝ լցեալ ագբովք՝ լռեալք ձայնք փառաբանչաց, և կատարմունք ծանից տարեկանաց, և մատուցմունք փրկական պատարագաց։

Արդ՝ պիտոյ է մեզ աստանօր հինն Երեմիաս, զի ողբասցէ զնորս Իսրայէլ. վասն զի ըստ քերթողահօրն Մովսիսի ողբերգակի, ոչ ևս դառնայ առ մեզ փիսայն, այլ անդարձ գնացիւք հեռացաւ ի մէնջ։ Արդ՝ կարղասցուք զանուն ազգիս մերոյ վայքաբովք, քանզի բարձեալ են փառք յիսրայէլէ ըստ ի հնումն ասացեալսն։

Դարձեալ՝ դարձցուք ի յոճ նախկին պատմութեան մերոյ, ի բանն, զոր հաւուցաք զՋղալօղլին ի Նախչուան, և զշահն տարաք ի Թարվէզ։ Արդ՝ շահն գնաց ի Թարվէզ՝ և անդ ձմերեաց զօրօքն Պարսից, քանզի հեռացաւ ի նմանէ ահն Օսմանցւոց։

Իսկ Ջղալօղլին՝ որ գայր զկնի բանակին Պարսից, յորժամ եհաս ի Նախչուան՝ լուաւ թէ շահն դարձեալ ժողովուրդսն անցուցեալ ընդ գետն Երասխ և տարաւ յաշխարհն Պարսից։ Նաև զՋուղայեցիսն զամենայն վարեալ և տարեալ է, և զքինուածսն հրդեհեալ։ Եւ մեծաւ զարմացմամբ հիացեալ ապուշ մնաց, թէ զիա՞րդ վազվազակի ի սուղ ինչ աւուրս զայդքան մեծամեծ գործ կարացին կատարել Պարսիկք։ Վասն որոյ պատրաստեաց լրտեսս երկուս՝ և հրամայեաց նոցա գնալ մինչ ի Ջուղայ տեսանել և իմանալ զիսկն բանից և բերել նմա համբաւ ճշմարիտ։ Իսկ լրտեսացն գնացեալ տեսին զամենայն ըստ ասացեալումն բանին ղրաւեալ, նաև շինուածքն Ջուղայու հրդեհեալք, որ տակաւին ծխէին խանձողքն, և անտի դարձան առ Ջղալօղլին, թէ ստոյգ են ամենայն ասացեալքն։ Եւ անդէն մտախոհ եղեալ Ջղալօղլին ի սրտի խորում ոչ գնալ ընդ ճանապարհն Ջուղայու և անցանել զգետն Երասխ և միտել զհետ Պարսից։ Նախ՝ զի կասկած կրեալ և երկուցեալ

* Համմտ. Եսայի, ԺԴ, 21 Երեմիայ, Ծ, 39

1 Դ: այլասեռ
6 Բ չիմ և
7 Ա.Ն: ջայլամանց
8 Դն աղուհաւց
8-9 Բ մակաղատեղ
9 Ա.Դն բուաց Բ բուց
11-12 Ն: ողբովք փխ աղբովք
12 Ն լռեալ
15 Դե քերդողահօրն
17 Գ դառնայն Ա.Ն: բարձեալք են
18 Ա.Դ յիսրայիլէ
19 Ա.Դ չիմ ի (յոճ) ԲԴե նախկի
20 ԲԴն որ
29 Ա.Դ չիմ և
30 Ա. դհամբաւ
31-32 Ա. ասացելոյ ԲԴե ասացեալում
32 Ա.Դ զի փխ որ
35 Ա.Դ անցանել ընդ գետն

ի հնարիցն Պարսից, զի մի գուցէ դարձցին ընդ կրունկն և յանկարծակի բաղխեալ ի վերայ Օսմանցւոց փակեսցին ընդդէմ երասխայ և ձորոցն՝ և կոտորեսցեն։ Երկրորդ՝ զի պատրեալ ժողովուրդսն ընդ այլ ճանապարհ ուղևորեցին, ընդ որ ո՛չ կարեն գնալ ծանր բանակն Օսմանցւոց՝ թէ կամեսցին։ Երրորդ՝ զի նշանաւոր օր դարձի նոցա՝ որ Դասում գիւնի՝ ասեն մնրձեալ էր։ Զայսոսիկ և որ սոցին նման խորհեալ՝ ո՛չ գնաց յայնժամ ի Թարվէզ, այլ չուեալ ի նախչուանայ, և մնրձ գնդջն Աստապատու էանց զնրասխեն՝ և գնաց ի քաղաքն Վան ամենայն բանակաւն իւրով, և անդ ձմերեաց մինչ ի գարունն։

ԳԼՈՒԽ Ե

ՅԱՂԱԴՍ ՔՇԵԼՈՅ ՉԱՄՆՆԱՓԱՐԹԱՄ ԳԻՒՂԱՔԱՂԱՔՆ, ՋՈՒՂԱՅՈՒ ՅԵՐԿԻՐՆ ՊԱՐՍԻՑ

Եւ արդ յետ այսց ամենից զոր պատմեցաք՝ որ գործեցաւ ի Շահաբաս թագաւորէն ընդ աշխարհս և ընդ ազգս Հայոց՝ զոր վարեաց յաշխարհն Պարսից, ժամ է այսուհետև պատմել մեզ վասն մեծի և անուանելոյ դիւղաքաղաքին Ջուղայու, զի զնախկին ամբարեալ դառնութեան թոյնսն և զչարակնութիւնն, որ վասն Ջուղայու քողաբորբեալ ունէր ի սրտի իւրում շահն, աստանօր պատճառ գտեալ արտայայտեալ երևեցոյց՝ քանզի բերեալ յինքեան զվտրհուրդն նախահաւտն իւրոյ Սաբիւռոսի։ Վասն զի որպէս պատմեցաք ի նախկին ճառին՝ թէ կարդեաց շահն ի զօրացն Պարսից չուեցուցանողս ազգին Հայոց, և առաքեաց յամենայն երկիրն Հայոց որք հանին և չուեցուցին. սոյնպէս և արար Ջուղայու։

Քանզի կոչեաց առաջի իւր զՀանիս Թահմազղուլի բէկն, որոյ վասն յառաջագոյն պատմեցաք, թէ եղբայր է Աբաբէկին, և տուեալ էր սա պատանդ յազգէն Վրաց թագաւորացն Պարսից, որ առ նոսին սնեալ՝ ուրացաւ զհաւատն։ Եւ այժմ շահն կոչեաց զայս Թահմազղուլիս առաջի իւր, զրեաց նոմոս հրամանի և ետ ցնա, և հրամայեաց նմա գնալ ի Ջուղայ և միահազդն քշել զնոսա՝ և ոչ թողուլ ի նա բնակիչ՝ և ո՛չ զմի։ Եւ Թահմազղուլին եկեալ յերեսաց արքային, սրընթաց արշաւմամբ հնհատակի աճապարեալ ի Ջուղայ, և կոչեալ զաւագանիսն և մեծաւ ցասմամբ սպառնացաւ նոցա, սարսռելի և տաժանելի մահուամբ կոտրտանել զնոսա՝ թէ ո՛չ առժամայն և վաղվաղակի զհրամանս թագաւորին կատարեսցեն։ Այլ և զնոմոս հրամանաց թագաւորին հանեալ

1 Ա.ԲԳԴ չի՛ *զի*
2 Դ *բախեալ*
3 Բ *ժողովուրդն*
Ա. *զոր*
6 Ա.ԲԳԴ *Գունի*
8-9 Ա. *ամենայնիւ բանակաւն է չի՛ ամենայն*
12 Ա.ԲԳԴ *Ջուղայոյ*
13 Գ Դ *ամենայնիւ* Ա. *զորս*
13-14 Գ *Շահապաս*
14 Ա. *զորս*
16 Ա.ԲԳԴ *անուանոյ* **Ա.ԲԳԴ** *Ջուղայոյ*
Ա.ԲԳԴ *նախկի*
20 Գ *Սաբիռոսի* Բ Գ Դ *նախկի*
22 ն *յերկիրն* Բ Գ Դ *որ*
26 Բ Գ Դ *պանդանդ*
31 Ա. *մեծաւ փխ և մեծաւ*

առաջի ամենայն ժողովրդեանն ընթերցան, յորում պրեալ էր թէ՝ հրամայ է ի թագաւորութենէս մերմէ ձեզ Քուղայեցւոցդ ելանել ի տեղեաց ձերոց և դնալ ի Պարսկաստան աշխարհ։

Եւ յետ այնորիկ հրամայեաց Թահմազդուլի բէկն ելանել մունետիկ՝ որ է ջառչի, և կանչել ի մէջ շինին Քուղայու յամենայն տեղիս։ «Հրաման է ի մեծ թագաւորէն Շահաբասայ, ձեզ, ամենայն բնակչացդ Քուղայու, ելանել ի բնակութենէ ձերմէ և գնալ յաշխարհն Պարսից։ Արդ՝ մինչև ցերիս աւուրս ձեզ ներումն լիցի, որ ելանէք, և ով որ յետ երից աւուրցն աստ գտցի, գինքն սպանանեն և զընտանիս և զինչս նորա զերեն. այլ և թէ որ փախիչ կամ թաքիչ, որ որ զայնպիսին ցուցանիցէ, սպրանքն նորա՝ ցուցողին լիցի՝ և գլուխն՝ թագաւորին»։ Եւ զայս հրաման միշտ հրատարակեալ գոչէր մունետիկն և ահացուցանէր զամենեսեան, և յահէ սպառնալեաց մահուան ոչինչ դանդաղեցին Քուղայեցիքն՝ այլ առժամայն կատարեցան առ նոսա հրաման թագաւորին և պատրաստեցան չելանել։ Բայց վասն փութով և յանկարծակի ելանելոյն ոչ գտանէին զրաստ և բեռնակիր անասուն, յոյժ վտանդէին ժողովուրդքն, զի ինչք և ստացուածք նոցա ցրուեալ անկեալ կայր առաջի իւրեանց. և ո՛չ կարէին բառնալ ի տանիլ առ ի չգոյէ գրաստուց։ Եւ զոր ինչ կարացին բառնալ՝ բարձին, և զոր ոչ կարացին բառնալ՝ իւրաքանչիւր որ պահուստ և թաքուստ արարեալ թաղեցին։ Բայց ընչից նոցա յոլովքն ի կորուստ և յափշտակութիւն գնաց, քանզի ոչ միայն այն օրքն որ ընդ Թահմազդուլի բէկն էին եկեալ՝ նոքա միայն հարկէին ժողովուրդն վասն փութով ելանելոյ, այլ և բազումք ի մահմետականացն՝ որք ի շրջակայ գեղօրէիցն գային, և որք ի գօրացն Պարսից՝ որք ի բուն բանակէն իւրեանց յառաջեալ գային և խառնեալ լինէին ընդ գօրացն Թահմազդուլի բէկին, և օր աւուր յաճելանային Պարսիկք ի մէջ Քուղայու և գումարեալ մահմետականացն ի միասին, էր, որ՝ տասն, էր որ՝ քսան, էր որ՝ երեսուն մտանէին ի տունս քրիստոնէիցն, զնոսա սոսկալի էլանել և գնալ, հարկանէին սաստիկ հարուածով, այլ և յընչից և ի կարասեաց ինքեանք յափշտակէին, որոց միտք իւրեանց հաւանէին՝ և զայլսն ցրուէին, որ այլք յափշտակէին, և այսպէս յափշտակումն և կորուստ էր ընչից քրիստոնէիցն։

Եւ ի գառնագոյն չարեացն Պարսից, զոր սոսկին ի վերայ ժողովրդեանն, հարկանել և կեղեքել և հարստահարել, անճարակ լեալ ամենայն բնակչացն Քուղայու ակամայ կամօք իւրաքանչիւր որ ելին ի գնալ։ Եւ թէպէտ կարողքն մարմնով՝ և կամ որք ունէին զոյք ստացուածոց, նոքօք հանդերձէին ի գնալ, բայց որք էին սակաւք, այսինքն

4-5 Ա.ՐԳԴԵՍ *մունեդիկ*
5 Ա.ԳԴԵԼ *Քուղայոյ*
9 ԴՆ *զընդանիս* Դ *զնտանիս*
11 ԱԴ *սպրանք*
12 Ա.ՐԳԴԵ *մունեդիկն*
13 Բ *սպառնալեացն* Ա *մահուն*
16 Ա. *զգրաստ*
16-17 Ա.ՐԳ *վտանկէին*
17 Ա.Է *ցրուեալ և անկեալ կայր*
18 ԳԴՆ *ի տանել*
19 Ա.Դ *բարձին*
24 ՐԳՆ *որ*
25 ՐԳՆ *որ*
30 Գ *ի չնչից*
31 ՐԳՆ *հաւանէր* Ա. *զորս*
33 Ա.Դ *զորս* ՐԳ *որ*
34-35 Ա *ամենից*
35 Ա.ՐԳ *յակամայ* Ն *յակամա* ՐԳԴԵ *իւրաքանչիւրք* Գ *չիք ոք*

տանակք, և այրիք, և ծերք, ոչ կարէին ի դնալ, աղաղակ բարձեալ ա-
ղիողորմ ձայնիւ արտասուօք և աշխարական կականիւ առհասարակ
ողբային: Ոմանք զտունս և զյարկս, ոմանք զբնակութիւնս և զհայրե-
նիս, ոմանք զեկեղեցիսն, ոմանք զնահնի Տարց զերեզմանս և զդամ-
բարանս, և ոմանք զանկարութիւն մարմնոյ առ ի գնալ՝ լային և ողբա-
յին. և յորդ արտօսր յաչաց հեղուին, ոչ ոք էր, որ ողորմէր նոցա և
օգնէր՝ քանզի փակեալ էր դուռն ողորմութեան գթածին Աստուծոյ ընդ-
դէմ նոցա:

Եւ զբանալի եկեղեցւոյն՝ զոր վերին Կաթան ասէին՝ առին քա-
հանայքն, և յորժամ եկին ընդ դուռն պարսպին Ջուղայու, և ի հասա-
նելն առաջի եկեղեցւոյն, որ անուամբ Աստուածածնին կայ շինեալ
արտաքոյ Ջուղայու. իբրև հայեցան, և տեսին զԱստուածածին
եկեղեցին, և բազում քրիստոնեայք եկեալ խառնեցան ընդ քահա-
նայսն. որ և նոքա ևս բերին զբանալիս տանց իւրեանց, և ի միա-
սին զաղաղակ բարձին աղիողորմ ձայնիւ, փղձկեալ սրտիւ և ար-
տասուալի աչօք գոռային՝ և լային, և աղաղակելով կանչէին ընդդէմ
Աստուածածնին, և ասէին. «Ո՛վ սուրբ Աստուածածին, այս բանալիք
սրբոյ եկեղեցւոյ մերոյ՝ և տանց մերոց քեզ յանձն լիցի. և դու դար-
ձուսցես զմեզ ի տեղիս մեր յօտար երկրէն ուր տանին»: Եւ զայս ա-
սացեալ արկին զբանալիսն ի գետն, և մորմոքալով յոլով ժամս ձայն
բարձեալ լացին. և ապա գնացին:

Եւ այսպէս ժողովուրդքն Ջուղայու հարուստք և չքաւորք ելին ի
Ջուղայու՝ և գնացին յետս գետոյն Երասխայ առ ի անցանել զգետն, և
անդէն բանակեալ զետեղեցան մինչև ամենայն ժողովուրդքն ելին ի
դեղջէն՝ և ժողովեցան ի ժողովետղն յեզր գետոյն: Եւ յորժամ սպառե-
ցաւ գալն ժողովրդեան, յայնժամ հրաման եղև ի Պարսից առ ժողո-
վուրդն, թէ անցէք զգետն: Եւ յաւուրս յայսոսիկ թագաւորն Շահաբաս
հասեալ էր ի Ջուղայ և բանակեալ յափն գետոյն Երասխայ. և յայնմ
ժամու իբր թէ առ ի յողորմել և յօգնել ժողովրդեանն Ջուղայեցւոց,
թագաւորն Շահաբաս հրամայեաց զօրապետաց իւրոց զի և նոքա հրա-
մայեսցեն իւրեանց զօրացն՝ զի օգնեսցեն ժողովրդեանն՝ և անցուսցեն
յայնկոյս գետոյն երիվարօք և ուղտուք: Եւ ի յանցուցանելն հնձելոցն
Պարսից զժողովուրդսն քրիստոնէից, որոց և հաւանէին սիրտք իւ-
րեանց, եթէ կանանց՝ եթէ աղջկանց՝ եթէ տղայոց՝ եթէ ապրանաց,
որոց և հաւանէին՝ առեալ գնային ուր և կամէին, և տեարք նոցա ո՛չ
կարէին գնալ զկնի նոցա՝ և նոքա գնային ի կորուստ և ի գերութիւն:
Եւ որք տկարք էին թափեալք լինէին ի ջուրն և ծփալով և ճչալով գնա-

1 ն *անակք* Ա *դաղաղակ բարձեալք*
2 Ա *աշխարականիւ*
10-11 Ա *ի հասանիլն*
12 ԴԹն *Ջուղայոյ* Գն *և իբր*
13 Ա *բազումք*
15 Ա *աղիողորմիւ*
17 Աէ *այսորիկ փխ այս*
18 Ա.ԲԴԹն *յանձին*
22 ԴԹն *Ջուղայոյ*
23 է *Ջուղայոյ* ԱԴն *ի յանցանել*
24-25 Բ *և մինչև* ԲԴ *ի գեղջէն*
25 ԲԴն *ի յեզր*
27 ԴԹն *յաւուրսս*
29 Ա *ի յողորմիլ*
34 ն *աղչկանց*
37 ն *ծրփալով*

յին ընդ երեսս ջրոյն. և յոլովք հնդձնուին ի ջուրն՝ և մեռանէին։ Եւ յերկու կողմէ յեղերս գետոյն ցրուեալք էին պէշք և պիք մարդկան խնդելոց ի ջրոյն։ Եւ այսպէս տառապանօք անցին ժողովուրդքն զգետն Եբրասիա, և սակաւ ինչ յառաջ գնացեալ բանակեցան մինչև ամենեքեան ժողովեցան ի բանակատեղն[6]։

Եւ ի նմին ի տափաստանի աւուրան հանճարիէն ի խորհուրդս չարեաց Շահաբաս, նորադոյն չարիս խորհեալ վասն Ջուղայու, կոչեաց առաջի իւր զնոյն Հանիս Թահմազդուլի բէկն և հարցանէր՝ թէ յետ հաննելոյ քո զբնակիչսն Ջուղայու՝ այլեցե՞ր ղշինուածս նորա. իբրև պատասխանեալ եղև ի նմանէ՝ թէ ո՛չ էր հրամայեալ մեզ ի թողուելն՝ վասն որոյ և ո՛չ այլեցաք։ Եւ անդէն յետ բաղում մեղադրանաց՝ հրամայեաց իսկոյն գառնալ յոլովք զօրօք և այրել զամենայն շինուածս զառանց և զայլոց յարկաց։ Որոյ շնչատակի հասեալ ի Ջուղայ բաղում հրոսակօք և առեալ ի ձեռս իւրեանց ջահս լուցեալս և զամբարս եղեգանց, և նաւթիւ կազմեալ լապտերս, և սկսան այրել և հրդեհել, և քանդել զառաստաղս և տապալել զշինուածս որմոց։ Եւ ո՛չ բնաւ թողին յարկ ծածկեալ կամ շէն, այլ յաւեր և յապականութիւն դարձուցին։ Իբրև կատարեցին զչարեաց գործս իւրեանց, զարձան և եկին ի բուն բանակն՝ և յանդիման եղեալ արքայի պատմեցին՝ թէ եղև ամէն զոր հրամայեցեր։

Այնուհետև հրամայեաց շահն Թահմազդուլի բէկին թէ մի՛ ևս թողուցուս զժողովուրդն Ջուղայու նստիլ, այլ վարեալ և տարեալ հաստուցես ի Թարվէդ, և նորա եկեալ իսկոյն չուեցուցեալ զժողովուրդն յինտղէն յորում բանակեալ կային։ Եւ ի յօրն և ի ժամն յորում բառնայր իւրաքանչիւր ոք զբեռն իւր, երկինք և օդք իւր ի միասին խռովեցան ի վերայ ժողովրդեան քրիստոնէից՝ քանզի խառնակեցան ամպք՝ և խռովեցան օդք, և մթացան երկինք, հնչեցին հոլմք ուժդնակի, փայլատակեաց կայծակն մեծաւ ճայթմամբ, տեղացին ձիւնախառն անձրեւք, և հարեալ տանջեցին զքրիստոնեայսն։ Եւ որք էին կարողք մարմնով կամ գրաստիւ՝ գնացին, իսկ տկարքն յետ աւուրց ապա եկեալ հասանէին բաղում տառապանօք և չարաչրութեամբ. և բաղում վշտիւք և տաժանմամբ բերեալ հասուցին ի քաղաքն Դաւրէժ որ է Թարվէդ։

Եւ անդէն ի Թարվէդ չարք ոմանք ի չար դանձուց սրտից իւրեանց խօսեցան զբանս չարս վասն Ջուղայու ընդ չարին Թահմազդուլի բէկին. վասն զի յիշեցին թէ տակաւին կան ի Ջուղայ մնացեալ ժողովուրդք, զի յոլովք ոմանք փախստականք եղեալք ի լերինս և ի ձորս, և այլք պատճառեալք են զգաւրութիւն, և ոմանք զծերութիւն, ոմանք

7 Գ *Ջուղայոյ*
9 ԱԲԳԴԵ *Ջուղայոյ*
12 ԲԳԴ *յոլով*
13 ԱԴ *տանց և այլոց*։ ԲԳԴ *զտանց և զայլ յարկաց*
15 ԲԳԴԵ *նօթիւ*
17 Գ *յայլ*
18 ԲԳԴ *գործն*
21-22 ԱԲԳԴԵ *թողուցուս* Ե *զժողովուրդքն*
24 Բ *և ի յաւուրն*
26 **Բե** *ժողովրդեանն*
27 Ե *ուժդնակ*
32 Է *չիմ Դաւրէժ, որ է*
34 ԲԳԴ *բանս չար* Գ *բանս չարս*
35 Ա. *մնացեալք*
36 Բե *եղեալ*
37 ԲԳԴԵ *պատճառեալ*

զաղքատութիւն, և այլք այլ ինչ պատճառանօք ոչ եկին՝ այլ անդէն մնացին՝ և այժմ կան ի Ջուղայ։ Եւ ի լսելն զայս Թահմազղուլին զայրացաւ յոյժ սաստիկ բարկութեամբ, բայց ոչ կարէր չար ինչ առնել՝ զի ո՛չ էր ձեռնհաս, և թողին մնալ մինչ ի դարուն։ Եւ ի սկսանել գարնանն՝ պատրաստեաց զայր ոմն երևելի յիւրոցն արանց՝ որում անուն կոչէին Համդամ աղայ, յոլով զօրօք, այլ և զՀրամանի առնալ ի թագաւորէն նա ի ձեռս նորա և առաքեաց ի Ջուղայ՝ բերել զմնացեալ ժողովուրդն։ Եւ եկեալ Համդամ աղայն ընդ իւր զօրօք ի Ջուղայ կոչեաց զմնացեալ ժողովուրդն առաջի իւր և խօսեցաւ ընդ նոսա սաստիւ և բռնութեամբ, եթէ հնազանդեալ անսայք Հրամանաց թագաւորին ելէք ձերովք ընտանեօք և առացուածովք զի ի միասին երթիցուք, և թէ ո՛չ կամիք գնալ, զարուս և զկարդս ձեր արով կոտրեմք՝ և զինչս և զընտանիս ձեր ի գերութիւն առնումք։ Այլ և գնացեալ ի լերինն և ի ձորս ի տեղիս փախստէից զտին զփախուցեալսն, և բերին ի Ջուղայ, և յինանց երկրորդում կիրակէի երկուշաբաթ օրն չուեցուցին ի Ջուղայոյ՝ և ուղևորեցին դէպ ի Բարվէդ։ Եւ անցուցեալ զայնու բերեալ Հասուցին առաջին բանակին ժողովրդեանն ի քաղաքն Ղապլին։ Եւ ընդ նոսա զևտեղեցուցին անդէն ի քաղաքին Ղապլինու և ի գիղօրայս նորա վասն ցրտոյ ձմերան, յորոյ պատճառէ ոչ կարէին գնալ։ Եւ ի շնչել հողմոյն գարնայնոյ վերստին վարեցին զնոսա մինչև տարեալ Հասուցին ի քաղաքն Սպահան՝ և անդէն բնակեցուցին զնոսա՝ տուեալ նոցա տեղի շինութեան. որք շինեցին յարկս և բնակութիւնս ինքեանց՝ հրաշալի յօրինուածովք, կամարակապ փողոցօք, թևաւոր ապարանօք, և ամարաստն հովանոցօք, բարձրաբերձ և արքայակերպ շինուածօք, զարդարեալ և յօրինեալ ի ծաղիկս ոսկւոյ և լաջվարդի՝ և պէս պէս երանգաց ակնախտիղ տեսողաց։ Սոյնպէս շինեցին և զեկեղեցիսն հրաշալան յօրինուածովք ըստ արժանւոյն փառացն Աստուծոյ, երկնանման խորանօք, և գերամբարձ կաթուղիկէիւք, բովանդակ ծաղկեալ պէս պէս երանգովք ոսկւով և լաջվարդով, անօրինականօք Տեառն և պատկերովք սրբոց։ Եւ ի գլուխ կաթուղիկէից ամենայն եկեղեցեաց կառուցեալ զնշան սրբոյ խաչին նոցին եկեղեցեացն ի պսակ և ի պարծանս քրիստոնէից։

Եւ ժողովուրդքն Ջուղայու նաև ամենայն հայազունք՝ որք գնացին ի քաղաքն Սպահան, և անդէն բնակեալ մնացին՝ բազում ունի պատճառ։ Վասն զի թագաւորն Շահաբաս էր բազմահանճար՝ և խելացի, և նախահոգած. հնարեցաւ բազում և պէս պէս հնարս վասն ազգին Հա-

1 Ա.Դ *յայլ ինչ*
4 Է *ի սկսանիլ*
5 Գ *յիւրոց... անունն*
8 Ա.ԲԳԴՆ *Համդամ աղէն* Ա.Դ չԻՓ *ընդ իւր ն զօրօքն*
10 Ա.ԲԳԴՆ *թէ* Ա.ԲԳԴՆ *անսաք*
11 ԲՆ *ընդանեօք*
13 Բ *զնդանիս* ԳԴ *զնտանիս ն զընդանիս*
16 ն *ի Ջուղայու*
17-18 ԴՆ *ընդ նոսին*
19 ն *որոյ* Ա.Դ չԻՓ *յորոյ պատճառէ ոչ կարէին գնալ*
24 ն *շինուածօվք*
26 Ա. *ակնախտղիտ* ԲԳԴՆ *ակնախտիղտ*
27 Ա.ԲԳԴՆ *ըստ արժանւոյն*
30 Գ *կաթողիկէից*
31 Գ *ի պսակս*
33 Գ *ժողովուրդն*
34-35 Ա. *զրազումս ունի պատճառս*
35 ԳԴՆԷ չԻՓ *և (նախահոգած)*

յոց՝ զի մնասցեն յաշխարհն Պարսից, զի թէ ո՛չ էր այնպէս հնարեալ՝ ո՛չ մնային նախ՝ զի ինքն Շահաբաս առնէր սէր ընդ ազգին Հայոց՝ և մեծարանս նոցա. և մանաւանդ ընդ Ջուղայեցւոց, որոց գլխաւորի անունն էր Խոջայ Սաֆար, և սորին եղբօրն՝ Խոջայ Նազար և որդւոց սոցին. Մելիք ազայ, և Սուլթանում, և Սարգիսպէգ Եւ հանապազ ինքն շահն գայր ի տունս նոցա, ուտէր և ըմպէր ընդ նոսա գկերակուրս նոցա առանց խարելոյ, որպէս սովորութիւն է Պարսից առնել խարութիւն ընդ քրիստոնէից. այլ և ինքն շահն կոչէր զնոսա ի տուն և ի սեղան իւր, և պատուէր ընդ մեծամեծս իւր. այլ և պատուիրեալ էր իւրոց նախարարաց նոյնպէս առնել: Երկրորդ՝ զի գիպատուրական հարկն, զոր տային քրիստոնեայքն, թեթև առնոյր՝ որպէս և քրիստոնեայք ախորժէին: Երրորդ՝ եթէ դիպէր կապ և կռիւ և խռովութիւն ինչ քրիստոնէից ընդ մահմետականաց, և կամ այլ ինչ գործ դաս առաւանի՝ եթէ մեծ և եթէ փոքր, զքրիստոնեայս իբաւացուցանէր և զմահմետականս դատապարտէր: Չորրորդ՝ յորժամ զքրիստոնեայս բերեալ հասոյց ի Սպահան և ի գեղօրայս նորա, բազում մահմետականս արուարձանաց ի տեղեաց և ի բնակութեանց իւրեանց. և զտունս և զանդաստանս նոցա ետ քրիստոնէից: Հինգերորդ՝ յօժար կամօք Հրամայեաց եկեղեցիս շինել յամենայն տեղիս, և Ջուղայ և ի գեղօրայս, նաև ի մէջ բերդի քաղաքին, մեծամեծս և բարձրաշէնս. և այնքան յօժարութեամբ մինչ զի և ինքն յորդորէր զքրիստոնեայսն շինել զեկեղեցիս եւ յաւուրս մեծամեծ տօնից՝ Յարութեան և Համբարձման և յայլսն, գայր յեկեղեցիսն՝ և ուրախանայր ընդ քրիստոնէից: Վեցերորդ՝ զամենայն կարգ և զաւանդութիւնս քրիստոնէական համարձակութեամբ կատարէին քրիստոնեայքն. կոչնակ հարկանել, պժամ կանչել. և ղչրօրհնէքն մեծաւորաւմբ հանդիսիւ առնել, այլ և ինքն շահն ևս գայր ի ջրօրհնէքն և խրախանայր ի տեսութիւնն: Եւ զմեռելսն խաչալամով և ձայնիւ շարականաւ հանեալ ի քաղաքէն անցուցանէին ընդ մէջ շուկային՝ և տանէին ի թաղել՝ և ո՛չ ոք ի պարսից ազգէն նախատանաց և հայհոյանաց բանս ասէր: Եւ այսու օրինակաւ բազում և պէս պէս կերպիւ հաճեցուցանէր շահն զմիաս քրիստոնէից՝ որովք մնացին յաշխարհն Պարսից: Եւ այնքան համարձակութիւն ետ շահն քրիստոնէից մինչ ի հրապարակս և ի շուկայս, թէ հանդիպէր կապ և կռիւ քրիստոնէից ընդ մահմետականաց, համահաւասար զմիմեանս հարկանէին՝ և հայհոյէին առանց երկիւղի: Ընդ որոյ վշտանային ազգն Պարսից՝ և նոցին կարգացողքն և մեծամեծքն. մինչ զի ընդ շահին ասացեալք էին. թէ ընդէ՞ր այնքան

3 Գ *չիմ և (մանաւանդ)*
4 Գ *եղբաւրն Գ խոճայ*
6 Գ *գնայր*
6-7 ԱԳ *չիմ զկերակուրս նոցա*
8 Գ *ի տունն*
10 Ե *այնպէս*
11 ԲԳ *քրիստոնեայքն (ախորժէին)*
18 ԱԲԳԴՆ *եկեղեցիք*
21 ԲԳՆ *եկեղեցի*
22 Բ *Համբարձմանն*
23 Ե *քրիստոնէիցն*
25 Ա. *կոչել*
27 Ա. *խաչվառով փխ խաչալամով*
29 Ե *ի պարսիկ ազգէն*
30 Բ *այու փխ սյսու*
31 ԲԳԵ *որով*
32 Ա. *զհամարձակութիւն*
36 ԲԳԴԵ *ասացեալ*

Թոյլ տաս քրիստոնէից համարձակիլ, և կամ ընդէ՞ր ոչ դարձուցանես ի մոլար օրինացն այն ի ճշմարիտ օրէնս Մահմետի։

Իսկ ի տեսանել շահին զվշտանալն սրտից նոցա՝ յայտնեալ էր զիարձուրդս սրտի իւրոյ նոցա՝ և ասացեալ էր. «Դուք ընդ սուղ ինչ անտի սէրն իմ, զոր առնեմ ընդ նոսա, մի՛ վշտանայք՝ և մեղադրէք ինձ, զի ես բազում ծախիւք, ջանիւք և հնարիւք հազիւ թէ կարացի բերել զնոսա յայս աշխարհ. ո՛չ թէ վասն օգտի նոցա՝ այլ վասն օգտի մեր՝ զի աշխարհս մեր շինեսցի՝ և ալկն մեր յաւելցի։ Եւ այժմ եթէ զմարդիկս ապգին քրիստոնէից որք յաշխարհէն իւրեանց եկեալ են՝ և այժմ կան, եթէ զամենեսեան դնոսա մասն մասն կոտորեալ յօդ յօդ բաժանէք, ո՛չ ոք ի նոցանէ դառնայ յօրէնս մեր։ Նա և այլքն խրտուեցեալ սկսանին մի մի թաքնաբար փախչել՝ և դառնալ յաշխարհն իւրեանց. և վաստակն մեր լինի ընդունայն։ Եւ վասն այնորիկ առնեմ ես զայս սէրս ընդ նոսա, զի այսու կապեալ մնայցեն յաշխարհս մեր, և նոցին հին մարդիկքն, որք յաշխարհին Հայոց ծնեալք են և եկեալ ասա՝ նոքա ամենեքեան մեռանիցին. և ի նոցանէ ծնեալքն՝ որք յայս աշխարհս ծնանին, նոքա ամենեքեան առանց մեր կոչելոյ և աշխատելոյ ինքեանք ինքեանց յօժարութեամբ գան յօրէնս մեր։ Արդ՝ եթէ դուք ես կամիք զօգուտն ապգին մերոյ՝ դուք ես արարէք զայս և ես առնեմ»։ Եւ ապա նոքա հաճեալ ի բանս շահին, և գովելով զիմաստութիւն նորա գնացեալ են ի բաց։

Եւ այս բանս Շահարասին՝ զոր ասացեալ է ընդ մեծամեծս իւր՝ այժմու ժամանակիս լցեալ կատարեցաւ յաւուրս մեր. վասն զի արքն հին՝ որք յաշխարհին Հայոց ծնեալք էին, և անտի եկեալ յաշխարհն Պարսից՝ մեռան նոքա ամենեքեան. և թէպէտ ունէին ի մտի դառնալ յաշխարհն իւրեանց՝ և ո՛չ կարացին վասն վերոյասացեալ պատճառացն, նա և ո՛չ թողուին Պարսիկք։ Իսկ ի նոցանէ ծնեալքն՝ որք յաշխարհին Պարսից ծնան, անդէն և սնան, և այնմ աշխարհին հաճեցան. վասն որոյ կան ի նմին և մնան, և թէպէտ ոմանք ի նոցանէ՝ որք երկիւղածք և բարեբարոյք, կամին գնալ յաշխարհն Հայոց, ո՛չ թողուն գնալ Պարսիկք։ Եւ ոմանք ի նորաժամայն զաւակացն քրիստոնէից՝ թողեալ զլուսապայծառ հաւատս քրիստոնէութեան, դարձան՝ և տակաւին ևս դառնան յանօրէն օրէնս Մահմետի վասն թերահաւատութեան և դողութեան և բոզութեան իւրեանց. և միաբանեալ ընդ Պարսից ի նեղ արկանեն զքրիստոնեայս բազում և պէս պէս հնարիւք։ Եւ մանաւանդ այնու՝ զի տան կաշառս Մահմետականաց՝ և կացուցանեն սուտ վկայս, և քարշեն զքրիստոնեայս առ դատաւորս Մահմետականս ի դատաս-

2 Ն *առէնս*
3 ՐԳՆ *ի տեսանելն*
5 ՐԳՆ *որ*
6 Գն *ջանիւ* ԱԴ *չիմ թէ*
7 ԱՐԻՒ *յաշխարհ*
8 ՐԳՆՆ *աշխարհն*
10 Ր *յաւդ յօդ*
11 Ն *ոչ ոք դառնայ ի նոցանէ*
15 Ա *հինք* Ս. *եկեալք*
16 ԱԴ *չիմ նոքա.*
17-18 Ա. *չիմ և աշխատելոյ*
21 Ա՛Ի *գնացեալք են*
22 ՐԳՆՆ *բանքս*
23 ԱԴ *կատարի փխ կատարեցաւ*
24 Ս. *հինք*
25 ԱԴ *չիմ նոքա*
31 ԱԴ *նորաժաման*
33 Ս. *չիմ յանօրէն*

տան, և պահանջեն ի քրիստոնէից զոր ինչ և հնարիլ կարեն: Յոմանց թէ պարտք պարտիս ինձ, հատո՛ զպարտան քո: Եւ յոմանց թէ ազգական քո եմ, ամենայն ինչք և ստացուածք քո ինձ հասանի՝ տուր ինձ: Եւ այլ զրպարտութիւն, զոր ինչ կարեն հնարիլ: Եւ պատուիրէն ըստ անօրէն օրինաց իւրեանց իրաւացուցանեն զբանս ուրացողացն, թէ որովհետև նա եկեալ է յօրէնս Մահմետի, նմա հասանին ամենայն ինչք իւրոց ազգականաց[8]: Եւ այսպէս զրկեալ զոզորմելի քրիստոնեայն՝ յափշտակեալ զամենայն ինչս և տան ուրացողացն այնոցիկ: Եւ ո՛չ թէ զթեթև ինչս, այլ մինչ ի հինգ հարիւր թումանի տունս՝ անիրաւ իրաւամբս այսոցիկ իրաւացուցեալ զբանս ուրացողացն, յափշտակեցին զժառանգութիւնս քրիստոնէից և հատն ուրացողացն. զոր մերով աչօք տեսաք: Այլ և ի մեռեալ քրիստոնէից ազգականացն ոմանք ուրացողք չեն զբաւելոյ յինքեանս զտունս և զամենայն ինչս քրիստոնեայ մեռելոյն, ևկին սիրեցին ինքեանց. զորդիս և զդստերս և զաղախնեայս մեռելոցն: Եւ ժողովուրդքն Ջուղայեցւոց թէպէտ բազում աշխատեցան ի զբունս իշխանաց դևկերելով վասն փրկութեան տղայոցն, և ո՛չ եղև, վասն զի ամենեքեան Մահմետականք զոլով՝ ի կողմն իւրեանց հակէին: Եւ զու այսու երկու բանիս՝ զոբս վասն օրինակի զբեցի քեզ՝ զամենայն կիրս վտանգիցն ի միտ ածեալ զիտասցես՝ զոր կրեն քրիստոնեայքն ի յօձաբարոյ ազգէն Պարսից:

Եւ որպէս ասէ Գիրն աստուածային, թէ վախճանեցաւ Յովսէփ և ամենայն հղբարք նորա և ամենայն ազգն այն. ևկաց այլ թագաւոր՝ որ ոչ ճանաչէր զՅովսէփ, և ասէ ցազգն իւր. «Եկայք, հնարեսցուք ինչ ազգին Իսրայէլի»*: Ըստ այսմ օրինակի պատահեաց և մերոյս ազգի՝ զի թագաւորն Շահաբաս՝ թէ որքան վշտիւք տարեալ էր զազգն Հայոց յաշխարհն Պարսից, զիտէր զայն ամենայն վիշտն՝ զոր ինքն էած ի վերայ ազգին Հայոց՝ յաղագս սրոյ և գթայր, և ողորմէր ի վերայ Հայոց՝ և սէր ցուցանէր. և թէպէտ սուտ և անոսի և ոչ ճշմարտութեամբ, սակայն սէր ցուցանէր. վախճանեցաւ նա, և ամենայն իշխանք և արք ժամանակին այնմիկ:

Եւ զկնի Շահաբասին թագաւորեաց Թոռն նորին Շահէֆի, և նա ևս միջակօրէն անցոյց ընդ ազգին քրիստոնէից. քանզի ոմանք ի նախարարաց Շահաբասին կային տակաւին առաջի նորա՝ որք յուշ առնէին նմա զվարիլն Շահաբասին, որ ընդ Հայոց ազգին. այլ և զբարեմտութիւնն Հայոց՝ որք ունէին ընդ նախնիս նորա, և յայսմ պատ-

* *Եսթ.* Ա, 6, 8—10

1 Գ *զոր ինչ և* (ջնջված է)
2 ԲԳԴՆ *հատոյ*
3 Է *ինչ*
6 Դն *հասանի*
7 ԲԳՆ *ազգականացն*
8 ԲԳՆ *ինչսն* ԱԳ չիմ և
11 ԱԳ *մերովք*
13 ԳԴ *յինքն (հանս)* փակագծերի միջինն ավելացված է այլ ձեռքով
14 ԱԳՆ *զաղախնեայս*
16 ԱԳ չիմ և
17 ԲԳԴՆ *մահմետական*
18 ԳՆ *զոր*
19 ԱԲԳԴՆ *վտանկիցն*
21 Ն *վաղճանեցաւ*
24 ԱԳ *պատահեցաւ*
26 ԲԳ *վիշտսն*
28 Ա. *զսէր* Ս. չիմ և *(թէպէտ)*
34 ԲԳՆ *վարելն*: ԱԳ չիմ *որ*

ձառէ թևին կային ազգն Հայոց ի վշտաց. վախճանեցաւ և Շահէֆին և ամենայն արքն նախնիք։ Իսկ զկնի Շահէֆոյն թագաւորեաց Նորին որպին՝ զորոյ անուն կոչեցին զարձեալ Շահաբաս՝ ըստ անուան Հաւոյն իւրոյ. վասն որոյ զսա կոչեմք երկրորդ Շահաբաս։ Սա թէպէտ լսէր պիրակութիւնս՝ որք անցին ընդ ազգին Հայոց, այլ ոչ էր աչօք տեսեալ. նաև ոչ սորին նախաստաքն՝ որք կային գործակալք թագաւորութեան սորա։ Վասն որոյ ոչինչ փոյթ ունէին զազգէն Հայոց՝ կամ հոգալ՝ կամ ողորմիլ՝ այլ այն միայն էր նոցա փոյթ՝ զինչ և իցէ պատճառանօք զարձուցանել զՀայս ի կրօնս Մահմետի։ Վասն որոյ յարեան ի վերայ քրիստոնէից որք արիւնարբուք, անօրէնք, զինք, և շուայտք, որք՝ որք զմարմնոյ ցանկութիւն և զփափկութիւն բարերջանիկ կեանս համարին. ամանք, որք յազգէն Հայոց ուրացեալք էին, և ամանք որք բուն Պարսիկք էին, նեղէին և բռնադատէին, գարշեցուցանէին և բռնութեամբ վարկին ընդ քրիստոնէից։ Այլ և ի զատկացն քրիստոնէից, որ ոք և հաճոյ իւրեր աչացն Պարսից՝ եթէ տղայ, եթէ աղջիկ, եթէ հարան՝ բռնութեամբ յափշտակէին և տարեալ ի տունս թագաւորին, և անուանէին թագաւորական ծառայ, և ոչ ևս զարձուցանէին առ տեարս իւրեանց. և զարձուցանէին ի Հաւատոցն Քրիստոսի ի Հաւատն Մահմետի։ Նախ՝ վասն պիղծ գործոց իւրեանց. և երկրորդ՝ զի յաւելումն լիցի թագաւորական ծառայից և զպին Պարսից. և երրորդ՝ զի զկնի ժամանակաց ի պատճառէ այսց տարեալ զատկացս, գերումն և գերփումն և յափշտակումն լինէր տանց և տեղեաց՝ ընչից և ապրանաց յետնամնայ ընտանեաց նոցա՝ քրիստոնէից։

Եւ մինչև ցայսօր և ցժամանակս, յորում հասաք, ո՛չ պիտէին Ջուղայեցիքն, նա և ամենայն Հայազուն ազգն այն՝ որք կային յաշխարհին Պարսից, զօձարարոյ ննջեցուածութիւն ազգին Պարսից, որ առ ինքեանս։ Եւ արդ ծանուցեալ հեծեն, յորոց հանեն, հաշին և մաշին, զի թևիս զերծցին յաշխարհէն Պարսից՝ կամ յայտնի և կամ ի ծածուկ գնալ յաշխարհն Հայոց՝ և ո՛չ կարեն։ Քանզի ո՛չ տան թոյլ Պարսիկքն գնանել յերկրէն իւրեանց, որպէս Եգիպտացիքն՝ զազգն Իսրայէլի*։ Միթէ նոյն բարձրանալ բազուկ՝ և հզօր ձեռն Տեառն և զսոսա հանցէ՞ աստի, որպէս զնոսա անտի՝ մաղթանօք մեծաց նախնի նահապետացն և Մովսիսի մարգարէին. և մեծի լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի։

* *Տե՛ս* եւլք

1-2 Ն *վախճանեցաւ Շահէֆին և ամենայն*
2 Գ *թագաւորեց*
3 Գ *զանունն* Ն *զանուն*
10 ԱՆ *արեանարբուք* Ն *զեղխք*
11 ԲԳ *կեանք*
13 Գ *ընութեամբ* փխ *բռնութեամբ*
22 Ա *յետնմնաց*
22-23 ԲՆ *ընդանեաց*
24 Ա *Եւ մինչև ցայս ժամանակս* ԲԳՆ *զժամանակս այս*
25 ԲԳՆ *այնք*
27 Ա *ծանուցեալք*
29 Ա *չիք և* Ա *և ոչ փխ ոչ*
33 Ա *Մօսէսի մարգարէի*

ԳԼՈՒԽ Զ

ՎԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԴԱՆԻԱՅՆ ՋՂԱԼՕՂԼԻ ԱԱՐԴԱՐԻՆ, ԵՒ ՊԱՐՏԵԱԼ ԼԻՆԵԼՈՅՆ ԵՒ ԴԱՌՆԱԼՈՅՆ

Եւ յորժամ ևհաս Ջղալօղլի Սարդարն ի Վան. և գնահատեաւ անդն իւրովք զօրօքն. քանզի զամենայն զօրսն իւր հրամայեաց զշղթայ տալ ի վերայ բնակչաց երկրին. և բաժանեցին զամենայն զօրսն յերկիրն Վանայ և յամենայն շրջակայ գաւառս նորա։ Իսկ զօրքն, որք նստան զշղթայ ի վերայ երկրին, իբրև գգպպանն տեսանէ Դանիէլի՝ կեցան, և մանրեցին. և զնացորդսն ոսից կոխան արարին[*]*. փոխանակ շինելոյ զերկիրն՝ աւերեալ թալչեցին՝ և ի վերջին թշուառութիւնն հասուցին, թէ անօգուտ կեղեքելով և թէ այլ պղծագործութիւնամբ։*

Եւ Ջղալօղլին իբրև հաւս թէ շահն չներհանայ երկրէն գարձաւ ի Թաւրէզ՝ և երկիրն Երևանայ անտէր մնաց. զոմն ի նշանաւոր արանց՝ որում անունն էր Օմար աղայ, կարգեաց պլուխ՝ և ընդ նմա զօրս բազում, և առաքեաց յերկիրն Երևանայ՝ զի սիրեսցէ երկիրն. և նա եկեալ բնակեցաւ ի Նախչուան՝ և պահէր զերկիրն։ Իսկ շահն՝ որ էր ի Թաւրէզ, իբրև լուաւ զայս գործ՝ և նա ևս առաքեաց զԱմիրգունայ խանն բազում զօրօք ի վերայ Օմար աղային. որ եկեալ մարտեաւ ընդ Օմար աղային և սպան զնա՝ և կոտորեաց զզօրս նորա. և զբազումս ի զօրացն ձերբակալ արարեալ կենդանի, և զայսոսիկ զկենդանի կալեալսն՝ և զգլուխս սպանելոցն առաքեաց ի Թաւրէզ առ շահն, և ինքն արձանացեալ նստաւ ի տեղի Օմար աղային ի Նախչուան՝ և պահէր զերկիրն որպէս և հրամայեալ էր նմա շահն։

Եւ Ջղալօղլին կելով ի Վան քաղաքի, անդէն անցոյց զզրաստատոյց նղանակս ձմեռան, իբրև հաս ի ժամանակս գարնանոյ. հաս զամենայն լրամակս երիվարաց, զիւրն և զրանակին իւրոյ յարօտ ի վերայ կանաչի՝ զի զգարնան թալչան առցեն երիվարքն։ Իսկ հանճարեղն ի խորհուրդս չարեաց Շահաբաս՝ որ յայնմ ժամանակի նա ի Թաւրէզ էր, կազմեաց զԱլահվէրտի խանն զօրօք բազմօք՝ և առաքեաց ի Վան ի խնդիր երիվարաց Սարդարին, այլ և զոր ինչ առնել կարիցէ արասցէ։ Եւ Ալահվէրտի խանն եղեալ ի Թաւրիզու յանկատած և յանկարծելի իմն աւուր հաս ի գաւառն Վասպուրականի՝ այսինքն Վանայ։ Եւ նախ քան զամենայն գործ՝ հաս ի վերայ ժողովոյ երիվարացն Օսմանցւոց՝ և ի նոցանէ զորս ի յարձակի եգիտ՝ աւար հարեալ տարաւ ի բանակն իւր, և զորս եգիտ ի շղթայս և յոտնակապս, զամենեսեան ջլատեաց և կոտորեաց՝ և ինքն ի մէջ երկրին բանակ եդեալ և արձանացեալ նստաւ։

[*] *Դանիէլ, է, 1—7*

4 Ա.Ն *զետեղեցաւ*
5 Ա. *զամենեսեան* Ա. *զշղթաս* ԲԳԴԵ *շղթաս*
6 Բ *բանակէցաւ* Ա. *զամենեսեան*
7 Բ *որ։*
8 Ա.ԲԳԴԵ *շղթաս*
8-9 Ա. *կերին*
10 Ն *թշուառութիւն*
18 Ա. *բազմօք*
20 Ն *ձեռբակալ*
20-21 ԳՆ *կալեալսս*
24 Ա.Գ *կալով*
36 ԳՆ *չիմ և (արձանացեալ)*

Իբրև հասս Ջղալօղլին եթէ Ալահվէրտի խանն եկեալ գայ ինչ գործեաց, հանդերձեալ պատրաստեաց և նա զօրս բազումս՝ և կարգեաց նոցա զօրագլուխս զվանայ փաշայն։ Եւ յորժամ եհաս օր մարտին, ելին ընդդէմ միմեանց պատերազմել ի մէջ դաշտին յանդիման վանայ բերդին, որ և Ջղալօղլին ինքն հատեալ ի վերայ պարսպի բերդին հայելը ի վերայ մարտկացն՝ զի ոչ կարի հեռի էր ի բերդէն տեղի պատերազմին։ Իբրև խառնեցան երկոքեան կողմանքն ի միմեանս, եղև անդէն սաստիկ գործ պատուիրեան և անհնարին կոտորուածք, զի իբրև զհող և զքար անկեալ կային դիք մարդկան ընդ երեսս դաշտին։ Եւ պարտեցաւ կողմն Օսմանցւոց՝ և զօրացաւ կողմն Պարսից, և արարին փախստական զզօրսն Օսմանցւոց մինչ ի դուռն վանայ բերդին։ Որ և ի հալածելն զՕսմանցիսն, երկուք ոմանք Պարսիկք զՀետ մտեալ Օսմանցւոց և վարելով հասուցին մինչ ի դուռն բերդին, և ի մտանելն Օսմանցւոցն ի մէջ պարսպին, մտին և Պարսիկքն. և անդէն ի մէջ երկուց պարսպացն՝ զրօս սան սիրհաճ, զմի Պարսիկն կալան Օսմանցիքն և տարան։ Իսկ միւս Պարսիկն անդէն սպան զայր մի Օսմանցի՝ և էառ ինքն գլուխ Օսմանցւոյն։ Եւ ապա էառ նոյն պարսիկն ինքն զդաստառակն իւր՝ և ձգեաց ընդ երկինս ի վեր, և ի ներքուստ կողմանէ ածեալ ինքն զառուներն իւր՝ և հատեալ յերկուս բաժանեաց զդաստառակն իւր առաջի զօրացն Օսմանցւոց՝ և առաջի Ջղալօղլւոյն, զոր իւրով աչօքն եահս Ջղալօղլին, քանզի նատեալ կայր ի վերայ պարսպին մերձ տեղւոյն այնմիկ։ Եւ ի տեսանելն զայն՝ Ջղալօղլւոյն, զդաստառակն իւր եդեալ ի վերայ աչաց իւրոց յարտասուս հարեալ եղաց, քանզի ծանեաւ յոգի իւր զբեկումն իւրոյ ազգին՝ և գյաչողութիւնն Պարսից։ Եւ Պարսիկն որ՝ հարեալ ձրովն իւր եհատ զդաստառակն իւր եւ եդեալ ի պարսպին գնացեալ խառնեցաւ ի գունդն իւր, ի զօրսն Պարսից։

Եւ յետ վանելոյ Ալահվէրտի խանին զզօրսն Օսմանցւոց, եղեալ այնուհետև ի մէջ երկրին յաւարել և յապականել, ըստ սովորելոյն Տեառն, թէ նախ զհզօրն կապիցէ՝ և ապա զտուն նորա աւար հարկանիցէ*, այնպէս և սա արար, քանզի զամենայն համբարս ցորենոյ և գայլ պաշուց, և զխոտոյ և զչարդի, և զշինուածս տանց զամենայն այրեցին հրով։ Եւ ուր և կարացին հասանել՝ զամենայն բնակիչս գաւառացն՝ որք և անկան ի ձեռս՝ զարիսն կոտորեցին և զայլսն գերեցին։ Եւ մեծ բանակ արարեալ եթէ զմարդ և եթէ զանասունս, միահաղոյն վարեալ, ածեալ, բերեալ հասուցին ի Թարվէզ ի լուսիսն ազգին Պարսից։

Իսկ Ջղալօղլին իբրև հասս զայսպիսի մեծ բեկումնս, ելեալ ի վա-

* Համմ. Մարկոս, Գ, 27

4 ԱՊՒ պատերազմիլ
5 Ա. պարսպին
5-6 Ա. շիմ բերդին
7 Բ երկոքին
8 Ա. կոտորուած
9 ԱՊ կայր դի ԲԳՆ կայր դիք
11 ԳԴՆ զգգօրսն
15 ԲՆ որ
18 Ն շիմ և (ձգեաց)
24 ԲԳ զաջողութիւնն Ն զաջողութիւն
31 Ա. զխոտոյ փխ և զխոտոյ
32 Ա. Եւ ուր կարացին է Ուր և կարացին ԱՆՆ հասանիլ ԱՊ շիմ զամենայն ԱՊ զբնակիչս
33 Ն զարիսն
34 Գ և թէ

նայ, եմուտ ի նաւ և ծովով գնաց յԱթծիէ՝ և անտի ի Խնուս և անտի յԱթպրում, և նստաւ անդ։ Եւ կոչնայ առ ինքն զամենայն շրջակայ իշխանս, եթէ գկոչմանցն վրաց, եթէ գկոչմանցն Մարաց, ընդ որս էր և մեծ իշխանն ազգին Մարաց՝ որոյ անունն էր Միհրշապհ. և այսպէս
5 զամենայն կուսակալս և գկոչմանցն տանմանացն այնոցիկ ժողովեաց ի քաղաքն Կարնոյ՝ այսինքն յԱրքրում։ Եւ հրամայեաց նոցա զի խրախանձիւրք խրնանց զօրօքն պատրաստք լիցին ամենայն կազմուածովք և պատերազմական գործոք, զի յորժամ ինքն Ջալօղլին ի վան հասանիցի, և նոքա ևս անդր գտանիցին՝ զի խառնեալ ի միասին գնասցեն ի Բարվէզ պատերազմել ընդ Պարսից։

Ապա եւեալ Ջալօղլին ի Կարնոյ եկեալ ի Տիգրանակերտ, որ է Ամիթ. և անդ ևս գկաց առեալ հոգայր զպատրաստութիւնն պատերազմին, և ժողովէր ինքեան զզօրս ամենայն Միջագետաց գաւառաց, զԱխոյ և զՄիջագետաց։

Յորում ժամանակի մեծ և անուանի փաշայն՝ զոր Նասիֆ փաշայ ասէին, որ էր ինքն ի քաղաքին Բերիոյ՝ որ է Հաչապ, և սա ևս եկն ի յԱմիթ առ Ջալօղլին. և ի միասին հոգային գնոսա պատերազմին, զի և սա համապատիւ էր Ջալօղլուին։ Սոքա երկոքեան ժողովեցին ի վերայ ինքեանց զամենայն զօրս աշխարհին Օսմանցւոց՝ և եկեալ ի Տիգրանակերտ եկին միասնագամ ի վան, և անդ ևս ժողովեցին զքրդսատանայ՝ և զԱլբրումայ կողմանցն զօրան ի վերայ իւրեանց. և եղեն մեծ և անթիւ բանակ։ Եւ եկեալ ի վանայ ուղղեցան դէպ ի Բարվէզ, և հասին ի սահմանս նորա մերձ ի գիւղն, զոր Սօֆիան ասեն, և անդ ի դաշտին յարդարեցին զպատերազմ, և պարտեցան զօրքն Օսմանցւոց։

Քանզի բազմահնարն Շահաբաս զսօրան Պարսից բաժանեաց ի չորս գունդս, զգունդն առաջին եւս ի ձեռս Ալահվէրտի խանին, և հրամայեաց նմա, զի դէմ յանդիման և ակնկալ եղել ի պատերազմ ընդ բանակին Օսմանցւոց։ Իսկ զերկրորդն եւս Զալֆիդար խանին, և զերրորդն Փիրպուտաղ խանին. և առաքեաց հրամայեաց զի թաքնաբար պատանակալք լիցին յերից կողմանց։ Իսկ ինքն շահն իւրովք ծառայիւքն ի գլուխս հեռի լերանց զօրեալ զդադարեալ կայր։

Եւ յորժամ եհաս պայմանեալ օր մարտին, եկեալ Ալահվէրտի խանն իւրով դնդատն և երևեցաւ դէմ յանդիման զօրացն Օսմանցւոց, և ի տեսանել զնոսա Օսմանցւոցն, կարծեալ չինքեանս թէ միայն այն է զօրքն Պարսից՝ որք երևին, վասն որոյ ուրախութեամբ ի վերայ դի-

1 Ա.Գ *ծովու*
2 Գն *յԱրքրում նստաւ անդ*
4 ԲԳն *որում*
7 Ա.Գ *իւրաքանչիւր օք*
7-8 Ա. *ամենայնքումբք... պատերազմականօք*
8 Գն *Ջզալօղլի.*
9 ԲԳԳն *Հասանիցէ* Բ չիմ և
10 Ա.Գն *պատերազմիլ*
13 Գ *ըզզօրս*
15 Գն և *մեծ փս մեծ*
21 Ա.Գ *ի վերայ ինքեանց*
22 Ա.Գ չիմ և *(եւեալ)*
23 Գ *գիղն*
24 ԲԳն *պատերազմ* Գն *ըզզօրսն*
30 Ա.ԲՆ չիմ *նա*
35 Ա.Գ չիմ և
36 Գն *անուանէն*
37 Գն *երևինն*

մեցին՝ և սկսան պատերազմել։ Յայնժամ կողմն Պարսից վաղվաղակի ըստ պայմանելոյն իրեանց բարձրացուցին զծուխ նշանին, և ի տեսանել զարանամուտ Պարսիցն զծուխն, փութանակի ելեալք յիւրաքանչիւր տեղեաց, դիմեցին ի վերայ զօրացն Օսմանցւոց՝ և ի չորից կողմանց ի մէջ փակեալ կոտորեցին, դիսաւատալ արարեալ զամենեսեան տապաստ արկին դաշտին։ Եւ եղև անհնարին աղէտ և օր դառնութեան։

Եւ Սարգարն ի մէջ իրում բանակին կայր, բայց վշտագին ցաւօք իւր սկին ծննդական պատառուր երկօք և ո՛չ առնոյր յոյժ և զադաբ ի միում տեղւոջ, այլ վարանեալ սրտիւ հայէր, և դիտէր զճանապարհս մարտիկ զօրացն՝ թէ գուցէ դառնիցի ոք, որ եկեալ բարի համբաւբեր նմա լիցի՝ և ոչ գոյր։

Կայր և մերձ Սարգարին մեծ պարոնն Քուրդ Միրշարաֆն՝ զոր կանխաւ յիշեցաք, և նա պիտաց յոգի իւր, թէ պարտեցաւ կողմն Սարգարին, վասն որոյ ոչ ևկն Համբաւ. և ջանայր, և հնարէր, մի կերպիւ ինչ հեռասցի ի Սարգարէն՝ մի թերևս փախիցի։ Եւ սկսաւ ասել ցՍարգարն կեղծաւոր բանիւ և պճոյճ. «Ինդրեմ ի վեհական տերութենէդ քումմէ, մի և ինձ տացես հրաման մատանել ի պատերազմ. մի թերևս պատահեցայց ի պատերազմի անդ՝ շահին»։ Եւ ի բազում խնդրելոյն հրամայեաց գնալ, իսկ Միրշարաֆն իբրև հեռացաւ ի բանակէն, դարձոյց զերեսս դէպ ուղիղ յաշխարհն իւր, ուր և գնաց անդադանալի։

Եւ զօրքն Պարսից յաղթեցին զօրացն Օսմանցւոց և դարձուցին ի փախուստ զկապ ի բանակն Օսմանցւոց՝ և ինքեանք զկնի հալածելով և կոտորելով, մինչ բերեալ լցին ի մէջ իսկ բուն բանակին՝ որ և ի մէջ այնմ բանակին մտին Պարսիկքն և կոտորէին զՕսմանցիսն. և Ղառչղայ խանն գնացեալ մերձ սո վրանն Սարգարին եղարկ թրով զշրջապատ վրանի Սարգարին, եհատ՝ և ընդ մէջն անցեալ գնաց. և ոչ ոք կարաց ընդդէմ ելանել նմա։ Եւ մինչև ցկրկնոյ ո՛չ դադարեցաւ գործն արիւնահեղութեան, զորս կոտորեցին, և զորս փախուցին, և զորս ձերբակալ արարին՝ և ածին առաջի շահին, քանզի ասէին, երեսուն և չորս անուանի իշխանք ըմբռնեալք եղեն, Փաշայ, Քէհիայ, Ղուլար Աղասի, Սանջախ բէկի և այլք յոլովք։

Իբրև էառ գործն կատարումն իւր ըստ ասացեալումս օրինակի, և տեսեալ Ջղալօղլւոյն թէ պարտեցան զօրքն իւր՝ և ոչ ևս կարէ միւսանգամ կազմել ռազմ և պատերազմել, նաև մնացեալ զօրքն իւր գաղտագողի չտես փախչէին։ Մտահոգ եղեալ՝ թէ մի գուցէ ինքն ևս ըմբռնեսցի ի ձեռս Պարսից՝ խորհեցաւ մի դարձցի անդրէն ի վան քաղաք։ Եւ յայնմ դիշերի եղեալ Սարգարն և ամենայն զօրքն իւր սկսան չտես

1 Ա.ՐՊԴ *ի պատերազմիլ* փխ *պատերազմել*
Գն *ի պատերազմել* փխ *պատերազմել*
Լ *պատերազմիլ*
8 Ա.Դ *ոչ* փխ *և ոչ*
10 Ա.Դ *չիմ թէ*
11 ՐԳ *չիմ լիցի*
13 Լ *չիմ իւր*
14 Ր *հնարէր* փխ *և հնարէր*
15 ԳԴն *փախիցէ*
17-18 Լ *պատահեցայց*
19 Գն *Միրշարաֆ*
2 ՐԳն *զզօրսն*
28-29 ՐԳն *ձեռաբակալ*
30 Գն *Ղուլլար*
34 Ա.ՐԴԼ *պատերազմիլ*
34-35 ԳՐ *գաղտագողի*
35 Ա.Դ *և ինքն* Ա.Դ *չիմ ևս*

դառնալ, և իբրև այս այսպէս եղև, ամենայն որ պապրուստ անձին իւրոյ ջանայր, և փութայր հապճեպ տապնապատ՝ պի ինքն քան զընկերն իւր կանխաւ փախիլ, պի մի՛ գուցէ չհասուստ ժամանեացն Պարսիկք՝ և կոտորեացեն զինքեանս: Եւ յայսմ տապնապալի փախստեանն պատճառէ Թոդին զամենայն ինչս իւրեանց, վկայ և վկարասխս, զուգաս և զգրաստս, զմթերս կերակրոց, և զպանձս անդիով, և տապաստով. քանզի զհրաժոնսն վառնալ Թոդին և զվրանսն կառուցանել՝ որպէս կանխաւ կառուցեալ էր, այնպէս Թոդին, և զամենայն ինչ զոր ունէին չինքեանց ի բաց լքին, և զարձուցեալ զերեսս ի չհաս ճեպելին ի փախուստ, և մինչև ցլուսանալ այգուցն ոչ մնաց և ոչ մի: Իսկ ի լուսանալ առաւօտին ծանուցեալ եղև զօրացն Պարսից փախուստն Օսմանցւոց. իբրև զնկուցին Շահաբասին, չայնժամ հրամայեաց զօրացն Պարսից մտանել ի բանակն Օսմանցւոց և աւար հարկանել, որք և առ ժամայն չափշտակեալ իրացուցին ի լիութիւն անձանց իւրեանց, և զարձան ուրախութեամբ ի Թարվիզ և անդ դնեցին շահն և զօրքն իւր: Իսկ Սարդարն եղեալ ի Սօֆիանայ՝ գնաց փախստեամբ մինչ ՀՀաս ի վան քաղաք, և անտի մտեալ ի նաւ էանց զծովն և գնաց ի չամիթ և անդէն մնաւաւ: Պատերազմն ի Հոկտեմբերի քսան և հինգն եղև, և ինքն գնաց ի չամիթ՝ և մնաւ՝ ի Փետրվարի ամսոյ վեցն: Ասի ևս յոմանց թէ ինքն զինքն դեղակուր արար վասն ամօթոյ պարտութեանն:

Արդ՝ գալն Ջղալօղլի Սարդարին երկու անգամ եղև, առաջին գալն ի սկզբան ՌՃԴ. թուին, յորում նոր էր մուտ Նաւասարդի ամսոյն՝ որ եկն ի Նախչուան, և անտի գնաց ի քաղաքն վան: Եւ երկրորդ գալն այս է՝ որ եկն ի Սօֆիան և չաղթեցաւ՝ և դարձաւ, ՌՃՏ. թուին, ի սկիզբն տարեմտին ի ժամանակս առաջնոյ աշնան:

Եւ ի շարժմանէ այսց երկուց տիեզերակալացս՝ որք զարթուցեալ են ի պատերազմ, եթէ Սարդարն՝ որ եկն չարեամտից, և թէ շահն՝ որ ի կողմս արեւելից՝ թէ որքան աւերումն և քանդումն եղև աշխարհի, թէ ի գալն և թէ ի դառնալն, թէ որքան ծանրաբեռն հարկապահանջութիւն եդեալ ի վերայ ժողովրդեանն և բռնութեամբ առին, նոյնպէս և զուրուսաքն՝ որ զկնի զօրացն բերել տային, և թէ զօրքն՝ որ ի ձմեռն երիվարօքն իւրեանց ղշլաղ տային, կամ դքանդումն տանց և այգեստանաց, և զկոխումն արտորէից՝ և զհանումն համբարաց՝ ցորենոյ և զայլ սերմանեաց, և սւարումն, և չափշտակումն ընչից և տաւարածոց, դուստերաց և դստերաց, և սպանումն տնտարա անձանց, զորս ի

2 ԲԴ *զնկերն*
3 ԱԴ *մի գուցէ դի*
4 Ն *այսմ փխ չայսմ*
8 ԱԴ *չիմ այնպէս Թոդին*
13 ԲԴՆ *որ և առժամայն իսկոյն*
16 Գն *մինչև ՀՀաս*
17 ԱԲՆ *և անդ ե անդի*
19 ԲԴԴՆ *չիմ և: Բ ի փետրվար Գ ի փետրուարի*
20 Ն *պարտութեան*
22 ԱԲԳԴՆ *չրսկզբան*
23 ԱԲԴՆ *անդի*
25 ԲԴՆ *առաջին*
26 Գ*Դն այս ԲԴՆ որ*
26-27 ԲԴ *զարթուցեալ են Գ թէ սարդարն*
28 ԱԴ *ի կողմն*
29 ԲԴՆ *չիմ և*
30 ԱԴ *չիմ և*
30-31 ԱԴ *զուրսաքն*
31 Ի *և ի ձմեռն*
32 Ա *ղղշլախ Բ ղբշլախ ԳԴՆ ղշլախ*

յայանի և զորս ի զաղանի, և զայլ ամենայն չարիսն զոր ածին ի վերայ աշխարհի. մեզ ոչ զոյ կար թուելոյ, այլ այնմ, որ թուէ զբազմութիւն ասահղաց, և սահղծ զայնքան անձինս որք մատնեցան անողորմ և մարդապէմ զազանացն այնոցիկ։

5 ԳԼՈՒԽ Է

ՅԱՂԱԴԱՍ ՅԱՅՏՆԵԼՈՅ ՋԱԼԱԼՈՑՆ ԵՒ ՍԱՍՏԻԿ ՍՈՎՈՒՆ ԵՒ ՄԱՐԴԱԿԵՐ ԴԱՅԼՈՑՆ, ԵՒ ԱՅԼ ԵՒՍ ԱՒԱՐԱՌՈՒԹԵԱՆՑՆ՝ ՈՐՔ ԺԱՄԱՆԵՑԻՆ Ի ՎԵՐԱՅ ԱՇԽԱՐՀԻ

Եւ ի մէջ երկուց տիեզերակալացս այսոցիկ, այսինքն շահին և Ջալօղլուն, ամայի մնաց երկիրն Արարատու իւրովք մասնաւոր գաւառօքն. քանզի շահն փնաց ի Թարմէզ՝ և ո՛չ է ձեռնհաս. և Սարդարն Օսմանցւոց մեռաւ, և ինքեանք ի մէջ իւրեանց ի խռովութեան կան, պի ոչ են միաբանք։ վասն որոյ պարոնայք ոմանք՝ որք խրախուսեալ յուսային ի զօրութիւնս անձանց իւրեանց, գային և տիրէին երկրին Արա-
15 *րատու՝ այսինքն Երևանայ։ Որպէս պարոնն՝ զոր Քանաքրլու Մահմատ ասէին, նմանապէս տիրացաւ աշխարհին։*

Եւ զկնի սորա այլ ոմն Ջալալի փաշայ՝ զոր Թօփալ Օսման փաշայ ասէին, որ էր Զիալ փաշայի որդին՝ սա նմանապէս մարտեաւ ընդ Քանաքրլու Մահմատին ի գաւառին Կոտէից, որ այժմ ասի Ղրխբուլաղ՝ մերձ
20 *ի գիւղն Առինճ. և փախոյց զՔանաքրլու Մահմատն։ Եւ ինքն Օսման փաշային հաւաքեալ առ ինքն բազում արս սրիկայս՝ արար իւր զօրս իբրև հազարաց և կալեալ իւր կայան զգիւղն Կարփի՝ և անդ նստէր. և զձմեռն զայն անդ ձմերեաց։ Ուստի առաքէր զզօրս իւր ի շրջակայ գաւառս և ի գիւղս բերել ինքեանց և անասնոց իւրեանց կերակուրս։ Եւ*
25 *գնացեալ արքն՝ յոր շէն և մտանէին, ոչ շատանային բաւականանն, զի յետ հոգալոյ զբաւականն՝ աւելորդաց ձեռն արկանէին, քանզի կալեալ զարան կախէին, զոմանս յոտից՝ և զոմանս ի բազկաց և զոմանս յերկուորեաց, և անողորմ գանին հարեալ բրածեծ առնէին՝ մինչ անշունչ լեալ իբր զմեռեալս գառնային. և ոմանք ևս ի տանջանս մեռանէին։*
30 *Ոմանց զականջս կտրէին, և ոմանց ընդ քիթն ներս հարեալ շրջեցուցանէին։ Եւ այսպէս չարաչար տանջանօք չարչարէին ցուցանել նոցա համբարս ցորենոյ և գարւոյ. դարանս և պահարանս գանձուց և ստացուածոց։ Եւ զյատակս տանց և զայլ շինուածոց փորեալ բրբրէին վասն գիւտի ընչից, և փլուցեալ զորմս և զծածկոյթս յարկաց յուզէին՝ և ո-*

6 ԲԳԴՆ *սովոյն*
10 ԱԳԴՆ *Արարատու Ա. մասնաւորօք*
11 ԱԴ *ոչ էր Գ ձեռնհաս*
12 ԱԴ *ի մէջ ինքեանց ԱԴ կայինն*
12-13 Ա.Դ *զի ոչ էին*
13 ԲԳԴՆ *միաբան*
14-15 ԱԲԳԴՆ *Արարատու*
15 Դ *Քանաքրլու*
18 ԲՆ *Զիալ փաշի*
18-19 Ա *Քանաքրլու*
19 ԱԲԴ *Ղրխբուլախ*
20 Բ *Առինջ*
23 Դ *բզզօրս*
24 Դ *բերելս Դ կերակուր*
30 ԲԳՆ *և զոմանց Ն զականջսն*

բոնէին ինչս. և յայսմ պատճառէ աւերութիւնս բազումս գործէին: Եւ նախ զգիւղն Կարփի այսպէս արարին, և զայր մի ի նոյն գեղջէն՝ վասն պահանջելոյ ընչից բազում աւուրս ի բանտի և ի կապանս պահեցին. յոլով օրինակաւ տանջեցին, և չեռոյ սպանին՝ և ընդ մէջն չերկուս հերձեալ կախեցին զորմով ի վերայ ճանապարհին յահ և երկիւղ տեսողաց գաւառականացն:

Եւ գնացեալ ոմանք ի Ջալալոցս այս ի մեծափառ ուխտն Յոհաննավանք. յորոց տեսեալնէ բնակիչք վանիցն ամենեքեան փախեան, բայց զտկար և զհիւանդ աբեղայ մի կալան՝ և խնդրէին ցուցանել զարան և զպահարան: Եւ չաւուրս երիս կախեալ զաբեղայն ի բազկացն՝ ծեծէին. և իբրև ոչ եցոյց պահուստ ինչ՝ զայրացեալ Ջալալոցն որպէս զգազան կատաղի՝ իջուցեալ ի բազկացն չերկուսեանցն կախեցին և չարաչար տանջէին. և նա տնճար մնացեալ եցոյց նոցա զդարանն, և մտեալ ի ներքս ի դարանն կողոպտեալ չափշտակեցին զամենայն ինչսն, և զկնի՝ զաբեղայն ևս սպանին՝ և արկին ի խոր մի վանիցն: Եւ անտի ի դարանէն հանին բազում ինչս, ևթէ շորնղէն, ևթէ պղնձեղէն, ևթէ անօթք, խաչ, սկիհ, շուրջառ, բուրվառ և զրհանք, որք էին ամենեքեան պատուական զրհանք վարդապետականք: Այլ և էին ի դարանի աստ սրբութիւնք վանիցն. որ էր վարշամակ երեսացն Քրիստոսի, և մասն ինչ ի փուշ պսակէն Քրիստոսի. և աջն սրբոյն Ստեփաննոսի նախավկային: Եւ այլ ևս սրբութիւնք և աւրք նշանք, զորս առեալ զամենեսեան Ջալալիքն՝ և տարեալ կորուսին. և զանուն գլխաւորի սոցա, Արդուղզման Մուսալիմ ասէին:

Եւ ի գիւղն Ուշական կալեալ զայլ ոմն այր կախեալ չերկուրեանցն տանջէին ցուցանել պահուստ, և զայն տեսեալ միւս գեղականացն առեալ զբնտանիս իւրեանց փախեան ի գաւառն Գեղարքունի: Եւ այսպէս արարին զամենայն շրջակայ գեղիւղն և զգաւառսն Կարփու: Զմսպարանու երկիրն, զՂրխբուլաղայ երկիրն, զԾաղկունաց ձորի երկիրն, զԳառնուոյ ձորն, զՈւրծայ ձորն և չայնկոյս գետոյն Ծրասխայ՝ զՄահաթայ երկիրն՝ զԿողբ և զԱղջաղալէն:

Ոմանք չայսմ Ջալալոցս գնացին ի գաւառն Գառնուոյ և գտին փորածու այր մի, յորում բազում քրիստոնեայք չահէ նոցա փախուցեալք թաքեալ կային: Եւ էր այրն այն գետնափոր և մեծ. որոյ միայն մուտ կայր, և ոչ չայլ ուստեքէ ծակ կամ շնչահան կամ հովամուտ, որ ի վաղեմի ժամանակաց չիշխանաց փորեալ և նստմեալ էր վասն իւ-

4 ՐԳԵ և յոլով
5 Գե չերկիւղ
7 ԱՀ այսց
7-8 Ր Յոհաննայ վանք Գ վանացն
11 ԱԴ չիմ և
13 Ա. չիմ և (նա)
15 ՐԳԵ անդի
16 Ե պղնձեղեն
17 Ր չիմ և
18 ՐԳՆ էր փխ էին
20 ԱԴ յոջ
22 Ա. Արդուղզմար
26 ՐԴ զբնդանիս Ե զնդանիս ՐԳՆ Գեղագունի
28 Ա.Ր զՂրխբուլախայ Գ զՂրրուլաղայ Ա. զԾաղկուց
28-29 ՐԳԵ զԳառնուձոր
29 Ե զՈւրծաձորն Գ ձոր
30 Գ զԿոխբ
32-33 Ա. փախուցեալ և թաքեալ ԳԵ փախուցեալ թաքեալ
33-34 ԱԴ միայն մի մուտ
34 Ա. և փխ որ

բանց ինչ պիտոյից. և արդ սոքա մտին անդ և թաքեան յահէ Ջալալոյն։ Իբրև եկին Ջալալիքն և պահն՝ և ի բազում աւուրս մարտնչէին, և ոչ կարէին առնուլ զայրն զայն։ Ապա արարին Հնարս. զի բերին Տուր, և վառեցին առաջի դրան այրին, որպէս զի ծուխ հրոյն մտանել ի 5 յայրն վառանգասէ դնասա, որք ի ներքս իցեն. և ի վերայ հրոյն արկին ժահահոտ զէշ ինչ՝ զորոյ հոտն տանէր օդն ի ներս ի յայրն։ Եւ էին յայրին մարդիկք բազումք իբրև հինգ հարիւր կամ ևս աւելի. և վասն խաւարչտին և նեմոթեան յարկին հրապոյնք էին վառեալ։ Եւ ի ժահահոտութենէ դիշոյն, զոր արկեալ էին ի վերայ հրոյն՝ որ ի յայրն 10 մտանէր՝ սկսան ապականիլ օդն, որ ի մէջ այրին. և քարինքն ամենայն բրտնեցան՝ և հոսէին ի քարանցն քրտունքն որպէս պղուր. և ճրագունքն ամենայն սկսան նուազել մինչև ամենևին շիջան, և մարմինք մարդկանցն սկսաւ ուռիլ և բշտիլ և դնդին ջուր հոսիլ. և ամենևքեան շընչարգելք եղեալ նուազեցան, և թուլացեալ թալկացեալ անշնչացան իւ- 15 րաքանչիւր յիւրում տեղւոջ և առհասարակ արք՝ և կանայք, ծերք և տղայք՝ և մատաղ մանկտիք ի միասին մնոան. և ի նոցանէ ո՛չ ոք եվ արտաքս։ Եւ Ջալալիքն, որք զդուռն այրին պահէին. դիտացին թէ ոչ հնազանդեցան նոցա դաղթեալ արքն՝ որք ի մէջ այրին, վասն որոյ երկմիտ եղեալ ի տարակուսի կային։ Եւ յայնժամ կալան Ջալալիքն զայլ 20 ումն այր ի նոյն գաւառէն՝ և բռնադատէին ցուցանել զապրանս. և նա յահէ սպանմանն ասաց. «Եկայք ընդ իս զի գնասցուք ի Քօռադարէն՝ և անդ ցուցից ձեզ զապրանս»։ Իբրև նորա գնացին, յայնժամ նախանամութեամբն Աստուծոյ արք ամանք, որք ի նոյն դարանէն ելեալ էին յառաջագոյն, և վասն իւրեանց ինչ գործոյ գնացեալ էին յայլ ու- 25 րեք, ի նմին ժամու եկեալ ի հետաստանէ դիտեցին թաքնաբար զդուռն այրին՝ զի ոչ կայր անդ ոք. ապա եկին ի դուռն այրին, տեսին զայս ամենայն հղեալ և փութացեալ զհուրն ի բաց ցրուեցին. և վառեցին ճրագ՝ և մտին ի ներքս ի յայրն և տեսին զամենեսեան իբրև զմահաբեկեալ ոչխարս յիւրաքանչիւր տեղիս մեռեալ՝ հայր զորդւով՝ և մայր 30 զպատերբ և հղբայր զեղբարբ՝ զմիմեանցբք գիրկս ածեալ և մեռեալ։ Եւ փութացեալ նոցին նախ՝ զընտանիս իւրեանց արտաքս քարշեալ ձգեցին ի դուրս ի յայրէն և ապա՝ զայլս, որքան կարացին արտաքս բերին. և զորս արտաքս բերէին, և հոգ տուրեալ ապաստուրէին, զձին և զջուր ի վերայ հիզուին, շնորհօքն Աստուծոյ կենդանանային. և այս- 35 պէս զբազում արտաքս բերեալ ապրեցուցին ի դառն մահուանէն. բայց

1 Ա.Է *իւրոց*
5 Ա.ԲԳՆ *վառանգեսցէ* ԲԳՆ *զորս փխ զնոսա*
6 Ա. *որոյ հոտն* ԲԳՆ *զորոյ զհոտն... ի ներքս*
8 Ա *այրին փխ յարկին*
9 ԲԳՆ *որ*
10 Բն *ապականել*
12 ԲԳՆ *սկսաւ* ԳՆ *նուազիլ* ԱԷ *նուազիլ*
12-13 Գ *մարդկացն*
14 Ա. *հղեալք* Ա *թուլացեալք թալկացեալք*
16 Ա *չիք ի միասին*
17 Գ *որ*
18 ԲԳ *որ* ԱԳ *չիք վասն որոյ*
19 Ա.Է *հղեալք*
20 ԲԳՆ *ապրանք* Գ *ապրանս*
22 ԲԳՆ *ապրանք* Գ *ապրանս*
23 24 Ա *հղեալք էին*
24 Ա.Է *գնացեալք էին*
26 ԲԳ *որ փխ զի*
31 ԲԳՆ *զընդանիս*
33-34 ԲԳ *ձիւն և ջուր*

զորս ոչ կարացին արտաքս բերել, ամենևքեան մեռան այսպիսի մահ-
ուամբ։ Եւ որք ելեալ ի դարանէն ոչ ևս կարացին կալ ի տեղին յոհ
Ջալալոցն, այլ փութանակի մեկնեալք ի տեղւոյն փախեան յայլ ու-
րեք ապրելոցանել պանձինս։ Եւ այսպէս զամենայն գկզօրայս դաւա-
5 ռացն Արարատեան յաւետ և յաւտենականութիւն զարձուցին. և ի կերակրելի
սերմանեաց և ի բնակչաց բազում արարին։

Եւ ապա խորհեցան Ջալալիքն գնալ յերկիրն Գեղամայ՝ որ է Գե-
ղարքունի, քանզի դիտէին իբ անդ են համբարք ցորենոյ և գարւոյ, և
ջոկք ոչխարաց և անդրոց, որ է պահարէք՝ յոլովք գոն։ Վասն որոյ յո-
10 լովք ի զօրացն Ջալալոց ելեալ գնացին յերկիրն Գեղամայ. և զբազում
դիւղս կողոպտեալ աւար հարին։ Եւ բացեալ զհամբարս նոցա գցորենոյ
և զգարւոյ, և նոցին տեարց ձեռօքն բարձին նոցին անասնոցն, և գնո-
սին կալան պահակ՝ որ է կոռ, վարող և քշող բեռնակիր անասնոցն,
որովք բերէին գցորեանն ի բնակարանս իւրեանց։ Այլ և գկանայս, և
15 զտղայս գերեցուցին բերին ընդ ինքեանս. որպէս զի տեարք գերեացն
արծաթ և ոսկի վասն նոցին գնոցն բերեալ զարձուսցեն զգերիսն. և
իբրև բազում բազձանաց սրտից իւրեանց զոր ինչ և կամեցան, արարին.
և ապա չուեցուցեալ զգերեալ կանայսն և զտղայսն, և պահակ կալեալ
արամբքն բարձեալ նոցին զրաստուցն և եղանցն զամենայն բեռինսն.
20 և զբազմութիւն անասնոցն՝ որք էին ջոկով ոչխարք՝ և պահարէք և երա-
մով ձի՝ վարեալք բերէին։ Իբրև ևկին երկուց աւուրց ճանապարհ և
գի էր գործառնութիւնս այս ի ժամանակս ձմերայնոյ, այլ և ձմեռնն
այն ծանրաձմեռն և ձիւնամեծ էր, վասն որոյ բեռնակիր անասունքն
ամենեքեան վաստակեալ մնացին ի ճանապարհին, և ի թանձրութենէ
25 և ի յոլովութենէ ձեանն ոչ կարէին գնալ։ Յաղագս որոյ զմնացեալ
գրաստուց բեռինսն բաժանեցին շալակ շալակ. և շալակեցուցին գե-
րեացն արանց և կանանց և տղայոց. և այսպէս անցուցեալ զսարն՝
հասուցին ի Կարփի գիւղն։ Բայց թէ որքան գառն աղէտիւ վտանգ էր
ողորմելի ժողովրդեանն՝ որք պատահեցան այսմ գործոյ. գի զոմանց
30 գձեռս և գոտս և գունչս տարաւ ցուրան, որք չօգաթափիք եղեն ի մա-
տանց մարմնոյ։ Եւ այլք ի շնչմանէ ցրտաստաղոյ գառնաշունչ օդոյն
սառուցեալք անդէն իսկ ի ճանապարհին մնային՝ և մեռանէին. և այլք
ոմանք ասէին վասն կանանցն, որք զգօրեանն շալակեալ ունէին ի
բազում վաստակոյն խոնջեալ և ի ցրտոյն սառուցեալ և քաղցոյն նքո-
35 ղեալ պակասեալ ի զօրութենէ և վհատեալ ի կենաց ոչ կարէին գնալ.

1 Ր *բերեալ* Ա. *այսպիսեաւ*
5 Ա.ԲԳԴԵ *Արարատու* Ա. *կերակրելեաց*
6 Ր *բանակչաց*
7-8 ԲԴԵ *Գեղարքունի*
8 ԱԳԴԵ *անդէն*
9 Ա. *պահարէ*
10 Ա. *Ջալալեանց*
11-12 Ա. *ցորենոյ և գարւոյ*
12 Ա.Դ *ձեռօք*
14-15 ԲԳԴԵՒ *կանայս և տղայս* ԲԴԵՒ *գերեացուցին* Ա.Դ *գերացուցեալ*
17 Ր շիմ և
18 Ա.Դ *կանայս*
21 Ա.Դ *ձիք* ԲԳԴԵ և *վարեալ*
24 Ա.Դ *վաստակեալք*
25 Ա.Դ շիմ և ի *յոլովութենէ* Ա. *զմնացելոց*
28 Ա.ԲԳԴԵ *վտանգ*
29 Գ *ժողովրդեան* Ա.Դ *ոմանց*
31 Ա.Դ շիմ *գառնաշունչ*
32 ԲԳԴԵ *սառուցեալ* Ա.Դ *մնացին և մեռան*
32-1 Ա.Դ շիմ *եւ այլք ... և մեռանէին*
34 Ա.ԴԵՒ շիմ *սառուցեալ և քաղցոյն*

նստէին շալակովն ի վերայ ձիանն և մնային և մնային։ Եւ այսպէս՝ որք մնան ի ճանապարհին՝ մնան, և որք մնացին՝ զամենեսեան բերեալք հասուցին ի Կարփի. զոմանս վաճառէին արծաթով և զոմանս պահէին ի ծառայութիւն գործոց իւրեանց։ Եւ Ջալալիքն կացին այսպէս մինչ ի գարունն՝ և հասին մերձ յաւուրսն Համբարձմանն։ Եւ ապա ելնալք անտի գնացին յերկիրն Ախլցխու. և անդ ևս զայն գործ կատարէին։

Եւ ոչ միայն այս Ջալալիքն այսպէս առնէին. զոյին և այլք Ջալալիք՝ ոմանք յոլով՝ և ոմանք սակաւք. որք ի տեղիս տեղիս վկայ առեալ և որջացեալք էին՝ զայսպիսի գործս գործէին։ Այլ և ի քրիստոնէից ազգէ՝ որք ոմանք, որք ոչ ունէին վերկիւղն Աստուծոյ յինքեանս. իբրև տեսանէին թէ այլազգիքն այսպէս առնեն, ինքեանք ևս սկսան այսպէս առնել. վասն զի աչօք տեսին և սրտիւ չօժարեցան. նէթ յայտնի յափըշտակութեամբ՝ և թէ գաղտնի գողութեամբ այնպէս առնէին. քանզի երկիրն անտէր և ամայի էր յաշխարհակալ բռնաւորաց. և ամենայն որ զախորժակս կամաց իւրոց կատարէր։ Արդ՝ որպէս պատմեն տեսողք ժամանակին, զի բնաւ ոչ գոյր նշոյլ բարութեան յաւուրսն յայնոսիկ բաց ի թշուառութեանցն, որպէս պատմեցաք, և տակաւին ևս պատմելոց եմք։ Վասն զի թագաւորն արեւելից Շահաբաս զօրօքն Պարսից զբաժին արեւելեայ աշխարհիս յաւեր դարձոյց։ Սոյնպէս և Ջալալիքն՝ որք ի մասն բաժնի արեւելեայ երկրիս դերագոյն քան զնոսա աւերիչք և ապականիչք։ Եւ Սարդարն Օսմանցւոց նոցին զօրօքն ի Միջերկրայս՝ սկսեալ ի Կոստանդնուպօլսէ մինչ ի Յերևան քաղաք աւերեցին. սոյնպէս և Ջալալիքն, որք էին յաւուրսն յայնոսիկ ի կողմանս երկրին Օսմանցւոց, զերագոյնք քան զնոսա աւերիչք։ Եւ սոքա էին արք անուանիք՝ և յաղթողք՝ և քաջ պատերազմողք՝ և անպարտելի ախոյեանք։ Եւ զի էին Ջալալիքս այսորիկ բազումք, վասն որոյ հարկաւոր համարիմ շարադրել զանուանս նոցա, որով մարթասցիս վերահասու լինիլ աւերման աշխարհաց՝ որ ի նոցունց եղև. թէ որքան եղեալ է և զոր ինչ լուաք յականատես պատմողաց՝ զայն գրեմք։

Նախ Ղարայ Եազիչին[9] բազում հնծելօք, որ ի Ռեխ. Թուին ապստամբեցաւ ի թագաւորէն, և եկեալ յՈւրհայ քաղաք եմուտ ի բերդն, և ամրացաւ։ Եւ հրամայեցաւ ի թագաւորէն ի վերայ սորա Սարդար դալ. և Սարդարն եկեալ ետ. մարդով ոչինչ կարաց ստնանել՝ դարձաւ։ Եւ ապա Եազիչին եկեալ ի բերդէն՝ և այլ ևս զօրս ժողովեաց ի վերայ իւր, և նոքօք սկսաւ աւերել զաշխարհս, և նախ զՈւրհայ քա-

2 ԱԴ *իսկ փխ և*
2-3 ԲԳԴՆ *բնեալ*
6 Ո *անդր։ Գ ի յերկիրն Ախլցխու։ Ն յերկիրն Ախլցխու*
8 ԲԳՆ *այլ*
9 Է *որ փխ որք*
12 Է *որպէս փխ այսպէս (առնեն)*
17 ԲԳՆ *նշոյլք*
21 Ա *մասին փխ ի մասն*
22 Ա *եղեն աւերիչք*
22-23 Ա *ի մէջ երկրայս*
25 Ր *գերագոյն*
26 ԲԳ *յաղթող Ս. անպարտելիք Ա. չիմ ախոյեան Ըն ախոյեանք Գ անպարտելիք ախոյեանք*
28 ԲԳՆ *լինել*
29 Գ *չիմ և*
31-32 Ա *բազումք Է ամպստամբեցաւ*
35 ԱԳ *և դարձաւ*
36 Ըն *յաւերել Գ նոքօք ... յաւերել*
ԲԳԳՆ *զաշխարհ Է զՈւրհոյ։*

զաք և ապա պայլս՝ պՕխաթ, պԱբատիայ, պԲուրսայ, պԱնկիւրիայ և այլ ուր և Հանդիպեցաւ։ Եւ պիտաջն զոր Հանապազ թագաւորն առնոյր ի ժողովրդոց, այս Եապիչիս պերկու տարւոյ խարաջն ինքն էառ, և իւրոց զօրացն ոսճիկս բաժանեաց։

Հոռէյին փաշայ՝ ՌԽՐ Քուին ապստամբեցաւ ի թագաւորէն։ Քօսայ Սաֆար ՌԽՐ. Քուին ապստամբեցաւ։ Ահմատ փաշայ ՌԽ. Քուին ապստամբեցաւ։ Ինջաղան ՌԾԴ. Քուին ապստամբեցաւ։ Յուլարպըստին ՌԾԴ. Քուին ապստամբեցաւ։ Քաւուն ԺՔՌ. մարդով ՌԾԲ[10]. Քուին ապստամբեցաւ։ Այս Քաւուիս նեղբայրն՝ զորոյ անունն ոչ գտաք։ Մահմատ փաշայ ԻՌ. մարդով։ Մանօղլի։ Ջանփօլատօղլի Ալի փաշայ։ Սորին նեղբայրն՝ զորոյ անունն ո՛չ գտաք։ Քօսողլի, այս այն Քօսօղլին է, որ բաղում խաղ է ասացեալ՝ զոր այժմ աշղներն նղանակեն[11]։ Գզիրօղլի Մուստաֆայ բէկ Ռ. մարդով. և սա ևս ընկեր է Քօսօղլւոյն՝ զոր յոլով տեղիս ի մէջ իւր խաղին զսա յիշէ։ Միւս Մուստաֆայ բէկ։ Ղարադաշ։ Դալունտարիպ։ Եօլայ Սըղմազ, Թանղրի Թանիմազ։ Գօկապախան։ Ջըփլախ։ Քեսաքեան։ Քրլու Ղարաահաթ։ Աղաջղանփիրի։ Սոքա ամենեքեան Ջալալիք էին, որք ոչ հնազանդէին թագաւորին. և ո՛չ ի տեղի ուրեք կկայ առնել բնակէին, այլ աշխարհաւերք և աշխարհակործանք. և ուր և լսէին զհամբաւ շինութեան, դիմեալ անդր հասանէին, աւարեալ կողոպտէին և զշինուածսըն հրդեհեալ այրէին։

Ի մերձակայից Կոստանդնուպօլսի՝ մինչև ցերեան քաղաք. ի Բաղդատայ մինչև ցԴամուրղափուն, զՍպիտակ ծովու մէջն և զՍեաւ ծովու մէջն. այս եղերբս՝ զորս ծրագրեցի, զսոցա մէջն պայսքան աշխարհս յաւեր և յապականութիւն դարձուցին։

Եւ յայսմ պատճառէ հողագործք և երկրագործք՝ որք յիւրաքանչիւր տեղիս գոյին, չերկիւղէ և յահէ սոցա փախուցեալք ի բերդս և ի դղեակս, և ի փապարս լերանց ամրանային. և ոչ կարէին առնել զերկրագործութիւն, վասն որոյ սերմանել և հնձել և կալ և կուտ բարձաւ ամենեին։ Եւ սկսաւ լինել սղութիւն հացի և ամենայն ուտելի իրաց և ո՛չ գտանիւր. և թէ ուրեք ուրեք ևս գտանիւր, և այն ևս ծանր գնոյ։ Եւ ի ժամանակի սղութեանս այս ևկն մարախ յընդհանուր Միջերկրայս և եհար միանգամայն զամենայն երկիրս և եկեր զխոտ, զբոյս, և զայլ կանաչ՝ որ երևիւր։ Յորոյ չեռագայ եղև սով սաստիկ. և բնաւին ոչ երևիւր հաց և կերակուր և այլ ինչ ուտելի։

1 ԲԳՔ *չիմ և (ապա)*
3 Գ *տարու*
9 Ա *Քաւուլոյ*
10 ԲԳՔ *զանունն*
11 ԲԳՔ *զանունն*
12 Ն *Քօսողլի... Քօսօղլին է...*
13 Ն *աշըղներն* ԱԳ *Մուստաֆայ բէկ*
14 Դն *Քօսողլոյն*
14-15 Ա *չիմ զսա* Ա *յիշեալ է* ԲԳԴԵ *յիշեր է*
15 Գ *Սըմազ*
17 ԲԳՆ *որ*
19 ԱԳ *չիմ և (ուր)* ԲՇԴԵ *համբաւ*
20-21 ԲԵ *զշինուածս*
22 ԱԳ *չերևան*
23 Ն *զբասպիտակ* ԲՆ *գան*
24 Ա *այսօրիկ փխ այս* ԲԳՆ *զոր*
25 Գ *զարձուցին*
26 Ա *յայսմանէ*
28 Բ *զեղեակս*
28-29 ԲԳԴՆ *երկրագործութիւն*
30 Ա.Ի *լինիլ* Ա *ամենից ուտելեաց իրաց*
33 ԲԳՆ *երկիրս*
34 ԲԳ *զոր* Ա *Որոյ*

Եւ յայսմ ժամանակի եղեն ցիր և ցան ազգն Հայոց և գնացին իւրաքանչիւր ոք հանդիպ երեսաց իւրոց գտանել տեղի կելոյ և ապրելոյ։ Ոմանք յՈւռումելի, ոմանք ի Բուղդան, ոմանք ի Լէհ, ոմանք ի Կաֆայ, ոմանք ի ծովեզերան Պոնտոսի, ոմանք ի Թարվէզ և յԱրտաւիլ՝ և ի գաւառս սոցա։ Զի յազգէն Հայոց՝ որքան զարիպականք կան յասացեալ գաւառս, յայս ժամանակիս և յայս պատճառէս են գնացեալ։ Եւ Շահարաս թագաւորն որ ի Հայոց ազգէն այնքան բազում քրիստոնեայս քշեաց և տարաւ յերկիրն Սպահանայ և Ֆահրապատու, նոքա ամենեքեան յայս ժամանակիս էին եկեալ՝ զոր շահն տարաւ։

Եւ ըստ ասացելումս ի ժամանակի սովիս՝ որք ցրուեցան և գնացին՝ գնացին, և որք մնացին ի Միջերկրայս, ի չգոյէ հացի՝ սկսան ուտել զկենդանիս՝ զարջառս և զոչխարս։ Եւ ի սպառել սուրբ կենդանեացն՝ սկսան ուտել զանասուրբ կենդանիս՝ զձի, և զջորի և զեշ և զայլ անասուրբ կենդանիս. մինչև զշուն, և զկատու, և այլ ինչ որ ի ձեռս անկանէր վասն կարեաց կերակրոյն։ Եւ իբրև այլ առաւել սաստկացաւ սովն, սկսան ուտել զմեռեալս՝ և ոչ թաղէին՝ այլ ուտէին. քանզի զօրացեալ էր ի վերայ աշխարհի սովն։ Եւ բազումք և բազում տեղիս զկենդանի մարդս ըմբռնէին և ուտէին։

Որպէս պատմեցին մեզ թէ յերկիրն Արարատու ի գիւղն որ կոչեն Ուշական, այր ոմն արարեալ էր վիհ ինչ ի մէջ տան իւրոյ թաքնաբար, որ զայր զարիպական խաբեալ բերէր ի տուն իւր և սպանանել պահէր ի վիհն յայն՝ և յաւուրս յաւուրս սակաւ սակաւ ուտէր. զոր յեւոյ իմացան բնակիչք գեղջն՝ և հալածեալ փախուցին ի գեղջէն։

Եւ ի գիւղն՝ զոր Բջնի ասեն, ճանապարհորդք ոմանք՝ որք ընդ այն անցանէին, տեսանէին զի ծուխ ելանէր ի տանէ միոյ. և նիշ արարեալ գնացին ի տունն՝ տեսին կանայս երիս ի տանն՝ որ կառուցեալ էին պոյտն և եփէին կերակուր. իբրև ի վեր առին զխուփն՝ տեսին ձեռս և բազուկս և այլ մխ մարդոյ, որ եփէին զի կերիցեն։ Իբրև բրռնադատեցին զկանայսն խոստովանել զայն. յայնժամ նոքա զստոյգն ասացին, թէ «վասն հարկի սովուն՝ որ ոչ ունիմք ինչ զի կերիցուք, վասն որոյ զանցորդ մարդիկս, որք ընդ այս անցանեն, խաբելով բերեմք ի տուն՝ և սպանանեմք եփեմք և ուտեմք»։

Այլև յԱրզրում քաղաքի սմին օրինակաւ այսպիսի գործ եղեալ էր՝ զոր տեսողքն պատմեցին ինձ, թէ կանայք չորք միաբանեալ էին. և ի

4 ԲԳեվ Պոնդոսի
5 Ն որքան որ զարիպականք
6 ԲԳԴն գաւառս Ա. յայսմանէ Ա. գնացեալք
7 Ա. չիմ բազում Ա. զայնքան
7-8 ԲԳն քրիստոնեայք քշեց Գ քշեց
10 Ա. սովուս Բ որ փխ որք
10-11 է գնացին փխ գնացին՝ գնացին Ա Միջերկրեայս
12 Ա սրբոյ
18 Ա մարդն
19 ԱԲԳԴն Արարատու ԱԳ կոչի
22 ԱԳ օրըստօրէ փխ յաւուրս յաւուրս
23 ԲԳն ի գեղէն
24 ԱԳ չիմ որք
25 ԱԳ զանցանելով
26 Ա կանայս Ա որք կառուցեալք Գ որք կառուցեալ
27 ԱԳ պոյտն ... կերակուր
28 ԱԳ զոր փխ որ
29 Ա խոստովանիլ ԲԳն կանայքն փխ նոքա
30 ԳԴն սովոյն Ա զինչ
31 ԱԳ չիմ որք ընդ այս անցանեն Ա խաբեալք Գ խաբեալ
34 Ա միաբանեալք

ատան միում արարեալ ինքեանց բնակութիւն, որ մի և երկու ի նոցանէ աւուրց յաւուրս ելեալ արտաքոյ շրջելին և խաբէին զմարդիկ պատրողական բանիւք՝ և բերեալ ի տուն, ըմբռնեալ զմարդն սպանանէին, ուտէին և ուտէին։ Եւ եղև ի միում աւուր պի զայր ոմն տարան ի տուն, և մինչ կամէին ըմբռնել զայրն՝ և այրն իմացեալ զխորհուրդս նոցա փութանակի ի բաց ոտնաւ, զերծաւ ի ձեռաց նոցա և փախուցեալ էլ ի տանէն, և գնացեալ առ փաշային, որ իշխան էր քաղաքին և ծանոյց նմա. և իշխանն հրամայեաց պինուորաց գնալ ընդ առնն՝ և ըմբռնել զկանայսն. և պինուորացն գնացեալ ըմբռնեցին զկանայսն։ Ապա ակն առան խուզել զտունն, իբրև մտին ի ներքսագոյն տունն, տեսին իւր. պլուխք մարդոյ՝ զոր սպանեալ և կերեալ էին, և պինուորքն բռնադատէին և խոշտանգէին զկանայսն առնել առաւել զգործս իւրեանց. և նոքա պատմեցին թէ վասն վատնդի սովուս խաբանօք բերեմք զմարդիկս առ՝ և սպանեալ ուտեմք։ Եւ կալեալ զկանայսն տարան առ փաշային. և փաշային հրամայեաց սպանանել զչորեսին կանայսն. և այնպէս արարին։

Եւ մերձ Բասենոյ երկրին է գաւառ մի, զորոյ զանունն խալիեազի ասեն՝ որ այժմ անբնակ է գտանեն այն. ուստի էր այր ոմն հաւատարիմ և բանագէտ. սա պատմեաց թէ ի ժամանակս այս սովիս՝ տղայք երկուք առ մեզ բնակէին՝ պի մեզ զոյր ցորեան ուտէյր։ Եւ եղև օր ինչ, որ ո՛չ երևեցան տղայքն. և ակն առ իս կարծիք՝ թէ մի գուցէ անկան ի ձեռս մարդակեր արանց՝ և կերեալ եղեն, և վասն սմի մարդակեր արանցն առի ընդ իս արս երկուս ևս, քանզի և ևս երկնչէի միայն գնալ առ նոսա, և գնացի ի կարծեցեալ տեղին, ուր էին ժողովեալ բազում սովալլուկ մարդիկ, արք և կանայք, յորոց զոյր կարծիք մարդակերութեան։ Իբրև մտի ի տունն տարցի ցնոսա՝ և նոքա յուրաստ եղեն, և էր Թոնիրն ի վառ և պոյան ի վերայ, յորում եփէին կերակուր. և առեալ ի բաց զխուզին հայեցայ ի մէջ պատուհին՝ տեսի զոտն տղային, ապա եկեալ եղբայր տղային և ասաց՝ թէ զեղբայրն իմ մորթեցին և կերան. և այդ նորին ոտն է։ Եւ ես չիտ բազմաց կսկծանաց՝ առեալ զմնացեալ տղայն տարայ ի տունս մեր՝ որ ապրեցաւ։ Այլ և սոյն այր ասէր՝ թէ տեսի զի երկու պատառ կանայք՝ որք կային զիտրբր աղջիկ մի, խեղդեցին և կերան, և ես զայս ծանուցի Սարգիս անուամբ առն միոյ. և նա սպան զերկոսին պատառսն։ Եւ բա-

2-3 Ա. *պատրողականիւք*
4 Բ *որ փխ զի*
5 Ն *ըմբռնեալ*
7 ԱԳ *չիմ և (ծանոյց)*
9 Ի *ըմբռնեցին*
11 ԲԳՆ *զոր*
11-12 Ա. *բռնադատեալ խոշտանգէին*
12 ԲԳՆ *խոշտանգէին*
13 Ա. *վտանգի* Բ *վտանգի սովոյն* ԳՆ *վտանգի սովոյս* ԲԳՆ *զմարդիկ*
15-16 ԱԳ *չիմ և այնպէս արարին*
17 Ա. *անունն խալիազի*
19 ԱԳ *սովուս* Բ *այսովիս*
21 Ա. *զի ոչ երևացան*
22 Ա. *մարդակերաց* Ա. *կերեալք*
23 Ա. *մարդակերաց*
25 Ա.Ի *մարդիկք*
29 Ա. *չիմ և (ասաց)*
30 Ա.Ի *կերին*
30-31 ԲՆ *բազում*
33 ԲԳՆ *որ կային փոքր* Ա.Ի *կերին*
34 Գ *անուամբ*

զումք ի բազում տեղիս այսպէս արարեալ էին. որսացեալք զմարդիկ և կերեալ։

Եւ ո՛չ միայն զայլ օտար մարդ ուտէին՝ այլ և արք և կանայք զզաւակս իւրեանց կերեալ են։ Որպէս լուաք թէ յերկիրն Սեբաստիոյ 5 ոմանք զզաւակս իւրեանց կերեալ են։ Այլ և յայլում գաւառի կին ոմն իւր երկու որդիս և զմի դուստրն կերեալ է։

Եւ ոմանք հարկեալք ի կարեաց սովուն ելանէին՝ և շրջէին ի շինամիջին և վաճառ պակասելոյ զօրութեան, ճնշեալ՝ և մաշեալ, և նքո-զեալ ո՛չ կարէին գնալ, անկանէին ի շինամիջի և յանցս ճանապար- 10 հաց և յանկիւնս որմոց և մռնչելով և նուաղով և հեծելով մեռանէին։

Եւ ոմանք եկեալ միաբանէին արք ժ. և ի. և լ. և գնային ի գեղջէ ի գիւղ և յերկրէ յերկիր խնդրել կերակուր և ո՛չ կարէին գտանել, զի իբրև զԱստուածատաք պատուհաս ի վերայ ընդհանուր աշխարհի սրփոռնալ էր սովն, ըստ բանի մարգարէին. «Կոչեաց սով յերկիր նոցա և 15 ջամենայն զօրութիւն հացի եբեկ»*։ Էր զի ոմանք ի նոցանէ հասանէին ի շէնս, և էր զի ի ճանապարհին մեռանէին։

Եւ ի պիսականց մեռելոցս այսոցիկ կերան վայրի գազանք և անընդելք կենդանիք, մանաւանդ թէ գայլք. և ուտելով զմեռեալս, սովորեցան և զկենդանի մարդ ուտել՝ զոր մարդագայլ ասէին։ Եւ այնքան 20 սովորեցան և համարձակեցան գայլք ի վերայ մարդոյ մինչև զկենդանի մարդս պատառէին և ուտէին։ Եւ յայսմ պատճառէ երթևեկութիւն գնացից ճանապարհաց խափանեցաւ յահէ մարդագայլոցն։ Եւ այնքան վատահացան գալք ի վերայ մարդոյ՝ որք գային ի մէջ շինին և մտանէին ի տունս, և որում և պատահէին ևթէ յանկողնի ննջեալ տղայի, 25 և թէ ի մէջ օրօրոցի, և թէ ի գիրկս մարցն, ի վերայ արձակէին և բռնութեամբ կորզեալ ի գրկացն և յօրօրոցէն յափշտակեալ՝ առեալ փախչէին՝ և տարեալ ուտէին։ Այսմ գործոյս տեսողք յոլովք և բազումք գոյին, որք զիւրաքանչիւր տեսեալն պատմէին գործս զարմանալիս և սարսռելիս։ Որ և այնմ ժամանակեան գայլատար մանկանցն բազումք 30 գոն այժմ՝ որք եղեալք են արք կատարեալք և ծերացեալք, որոց ի գլուխն և յերեսն և յայլ տեղիս մարմնոցն տեսանի սպիք վիրացն պա-

* *Սաղմ., ՃԻ, 16*

1 Ա. *արարեալք էին* Բն *որսացեալ*
2 Ա. *կերեալք*
4 Ա. *կերեալք են*
5 Ա. *կերեալք են*
6 Ա. *գերկու* ԱԳՊ *որդին* Բ *դուստր*
7 ԳԴն *սովոյն*
8 ԲԴ *չիմ և... ի*
10 ԱԴ *չիմ և հեծելով* Բն *և մռնչելով նըւաղով և հեծելով* Գ *և մռընչելով նըվաղով և հեծելով* Գ *որմոց մռնչալով և նըւաղով*
11 Աէ *եկեալք*
11-12 Բ *չիմ և (գնային) ի գեղէ ի գեղ* ԲԳԻն *գեղէ ի գեղ*
12 Ա. *զկերակուր*
14 Գ *մարգարէի*
16 ԱԴ *չիմ ի ճանապարհին* Բ *ի ճանապարհին* (*ավելացված է այլ ձեռքով*)
17 Աէ *կերին*
17-18 ԲԳԴն *անընդել*
19 ԲԳն *մարդն* ԲԳԴն *մարդս* Աէ *մարդս փխ մարդ*
23 ԳԴն *որ փխ որք*
24 ԱԴ *ի տունս, որում և պատահէին*
25 ԲԴն *որորոցի* Գ *օրօրոցի*
26 ԱԲԴն *յորորոցէն* Գ *յօրորոցէն* ԱԴ *չիմ առնալ*
27 Ա. *չիմ և բազումք*
30 ԲԳԴն *եղեալ*
31 Ա. *սպի*

տառոտանալ և դիշատանալ զոր արարեալ են պայլքն՝ որոց ի հարցանելն մեր վասն դիշատակաց տեղեացն, պատասխանեն թէ «Գայլն յափշտակեալ տարաւ պիս յուտել և ժողովեալ արանց բազմաց ապատեցին պիս ի բնտանոյ գայլոյն»։

Եւ եղև սովս այս ի միջ երկուց մեծ ծովուցն, այսինքն Սպիտակ ծովուն, և Սեաւ ծովուն ի մերձակայ գաւառացն Կոստանդնուպօլսոյ մինչև ի գաւառն Թարվիզու, ի Բազդատայ մինչև ի Դամուրգափուն, այնքան եղերացս մէջն եղև սովն և աստուկացաւ, այնքան որ պշուն և պկաւոտ և զայլ անասուրբ կենդանւոց, և զմարդոյ միս կերան մարդիկ, որպէս և պատմեցաք։ Եւ եղև սկիզբն սովուս ի ՌՇՆ. Քուին, յայսմ ամի Քոյլ էր սովն և ոչ էր խիտ, իսկ ի մատանեն ՌՇԶ. Քիւն, և ի ՌՇԷ. Էարի աստուկացաւ, և ի մատանեն ՌՇԸ. Քուլացաւ, և ի ՌՇՔ. բարձաւ բնաւին ողորմութեամբն Աստուծոյ ամենախնամողին՝ որ ոչ խոպան բարկանայ տեղծուածոց իւրոց՝ և ոչ յաւիտեան պահէ ոխս՝ որում փառք յաւիտեանս ամէն։

ԳԼՈՒԽ Ը

ՅԱՂԱԳՍ ԱՌՄԱՆ ՀԱՂԱՔԱՑՆ ԳԱՆՋԱՅԻՒ ԵՒ ՇԱՄԱԽԻՒ

Յետ երկրորդի գալստեան և գառնալոյ Ջալալըլի Սարգարին, որ եկն ի Սօֆիան և պատերազմեցաւ ընդ Պարսից և պարտեալ զարձաւ ի յԱմիթ և մեռաւ։ Թագաւորն Պարսից Շահհարաս ամենայն զօրօքն իւրովք կայր ի Թարվէզ քաղաքի զձմեռն զայն՝ իսկ ի շնչել հոտմոյն հարաւոյ՝ ի ժամանակս գարնան ժողովեաց զամենայն զօրս իւր՝ և գնաց ի վերայ զօրացն Օսմանցւոց՝ որք տակաւին էին ի քաղաքին Գանձակայ՝ որ է Գանջայ, յորում ամի էր Թուականն մեր ՌՇՌ. և ի հասանելն անդր շրջապատեալ զբերդն նստաւ ի վերայ։ Եւ զկիրկիրն ամենայն պրաեալ ընդ իւրով իշխանութեամբն և պահէր ի խաղաղութեան, հրաման արարեալ իւրոց զօրացն մի՛ զոք խռնել՝ և մի՛ զոք բռնադատեալ ի բնակչաց երկրին, ուստի լցեալ լինէր ամենայն պիտոյք նոցա՝ մարդկան և անասնոց։ Եւ ինքն շահն ուշ եդեալ գործոյ պատերազմին՝ զի առցէ զբերդն սէկ սէկ հնարիւք։ Երբեմն սիբայ բարձրացուցեալ ի վերուստ ծնծէին. երբեմն ի ներքուստ զյատակս պարբսպացն փորեալ նաղմն առնէին, և զայն լնուին բարուխով հրդեհէին, և զպարիսպն ի վեր առեալ ընդ երկինս ցնդէին։ Եւ երբեմն սուտ երդումն

* *Համմ. Սաղմ. 102, 8—9*

1 Ս. *արարեալք են*
2 Բ *գայլոցն*
5 Ս. *մեծաց*
5 6 ԴՆ *չիմ այսինքն Սպիտակ ծովուն և Սեաւ ծովուն*
8-10 ԱԴ *չիմ այնքան որ... և պատմեցաք*
9 ԲՆ *մարդիկք*
10 ԲԳԴՆ *սովոյս* Ս. *յորում փխ յայսմ*
14 Ս. *զսխս*
17 Ս.Է *Գանջայոյ* Է *Շամախւոյ*
20 Ս. *ամենիւք*
25 Ս.Է *հասանիլն*
27 Ս. *գ'հրամանս* ԲԴՆ *խռնել*
29 Ս. *մարդկանց*
30 Ս. *զսիբայ*
31 Ն *բդյատակս*
32 Ս. *գնադմն* Բ *նադմ* ԱԴ *և հրդեհէին*

և զաշն խաղաղութեան զրեր շահն՝ և առաքեր ի մէջ բերդին, թէ դուք ամենևքեան ձերովք ընչիւք և ամենայն ընտանեօք ելեալ գնացէք յաշխարհն ձեր՝ և մեք ձեզ ինչ ո՛չ մեղանչեմք, միայն թե զբերդն տուք մեզ: Իսկ զօրքն Օսմանցւոց ոչ տային՝ այլ երկայնամտեալ համբերէին, և քաջութեամբ պատերազմեալ դիմակայէին: Իսկ Պարսիկ զօրքն ո՛չինչ կրէին վտանգ՝ կամ կերակրոյ կամ ցրտոյ և կամ ի շրջակայ ինդամեաց՝ և կամ յայլ իրաց, այլ կային առանց պակասութեան և հանապազ պատերազմէին: Եւ մինչ հաս շահն թէ սակաւ ինչ երկարի գործ պատերազմին[12] ձուլեաց անդէն երկուս թօփս մեծամեծս, հզօրս և ուժգնաբաղխս որոց ի ձգելն կարի փլուցանէր զպարիսպ բերդին. և սոսկալ յոյժ վտանգ լինէր Օսմանցւոցն: Ի վերջոյ ամենայն պատերազմին՝ բնակիչք բերդին զօրքն Օսմանցւոց հայէին շուրջ դինքեամբ, զի ոչ յուսահատէ զոյր նոցա օգնական՝ ոչ յիւրեանց շրջակայ քաղաքացւոցն, նաև ոչ ի դրանէ թագաւորին իւրեանց. զի Ջալալիք բազում կային ի մէջ երկրին Օսմանցւոց՝ զորոց զանուանեան յանցնել ճառիդ յիշեցաք, և նոքա այնու էին պատատղալք: Այլ և փաշայն Գանջայու անկեալ էր ի պատերազմին՝ որոյ անունն էր Ջընջիլղռան Ալի փաշայ[13]: Այլ և նոր ձուլեալ թօփն կարի փլուցանէր զպարիսպն. վասն որոյ յամենայն կողմանց ի նեղ անկեալք Օսմանցիքն եւտուն զբերդն Պարսից: Իբրև էառ շահն զբերդն Գանձակայ՝ տիրեաց ամենայն երկրին և կարգեաց անդէն իշխեցող զեմն՝ որում անունն էր Ազսաղ Մահմատ խան:

Եւ մինչև ցայժմ առ ինքն ունէր շահն զթոռն Ազէքսանդրու թագաւորին Կախեթու զԹամրազն. և այժմ արձակեաց զնա գնալ յաշխարհն իւր Հայրենի, տուեալ նմա հրաման իշխանութեան տիրել իւրոյ Հայրենի աշխարհին՝ և վարել զգործ թագաւորութեան իւրոյ: Բայց կալ ի միաբանութեան և ի հնազանդութեան թագաւորութեանն Պարսից. և Թամրազն գնաց ի Կախէթ ի Հայրենիս իւր, վարէր զիշխանութիւն թագաւորութեանն, և կայր ի հնազանդութեանն Պարսից:

Այլ և ոմանք ասացին թէ յետ առնլոյ շահին զԳանջայ, կային ի գաւառին Գանջայու Մահմետական Հաւատով ազգ մի, զոր ինքեանք էլ անուանէին, և զանունն այս էլիս Ջէկիրլու ասէին. որք էին գաւանութեամբ և կրօնիւք Օսմանցւոյն՝ զոր Սուննի ասեն: Հրաման արար վասն սոցա շահն ժողովել զամենեսեան ի մի վայր ի տեղի ինչ՝ որ էր տեղի հեղեղատի, որոյ մուտն նեղ էր՝ զոր պահէին Պարսիկք. և

2 ԲԳ *ընդանեօք* Ե *ընդանեաւք*
5 ԱՐ *Պարսիկք*
6 ԱԲԳԴԵ *վտանգ*
10 ԲԳԴԵ *ուժգնաբախս*
11 ԱԲԳԴԵ *վտանգ* Ա. *ամենայնի*
12 Ա. *զինքեամբք*
13 Գ *ուսանէք* Ա. *շրջակայից*
14 ԱԳ *բազումք*
15 Գ *գանուանս*
17 ԲԳԴԵ *որում* Ա. *Ջնջիլղռան*
18-19 Ա. *յամենից*
19 ԱԲԳԵ *չիր օսմանցիքն*
20 Ա. *ամենայնի*
23 ԲԳԵ *զԹամրազ*
23 24 Գ *յաշխարհ*
24 Ե *տուեալ* Ա. *զհրաման*
26-27 ԲԳԵ *թագաւորութեան... Թամրազ*
27 ԱԳ *գնացեալ*
28 ԲԳԵ *հնազանդութեան*
30 Ա. *մահմետականաւ* ԲԳԵ *հաւատովն*
31-32 ԲԳԵ *գաւանութեամբն և կրօնիւքն օսմանցւոյն*
32 Գ *օսմանցոցն* ԱԲԳԵ *Սուննի*

որքան վկայ ի ներքս երթայր լայնկր և շուրջանակի բարձր փուլ, յորմէ ոչ կարէին ելանել և փախչել: Հրամայեաց շահն գնոսա զամենեսեան անդէն ի սուր սուսերի մաշել՝ պարս և վկանայս, զծներս և զպղայս. և մինչև ցմատաղ մանկունս կոտորեցին, և բնաջինջ արարին:

Իսկ թագաւորն Շահաբաս յետ առնլոյ զերդն Գանձակայ և ոչնչելոյ ամենայն երկրին, սկսաւ Ջանապարհ ելանել և գնալ ի կողմանս վրաց, ի քաղաքն Թիֆլիս: Էառ ընդ իւր զմնացեալսն ի զօրացն և յազգին Օսմանցւոց՝ որք մնացին ի կոտորմանէ բերդին: Եւ արկաց գնոսա պատրուակական բանիւք, առեալ նոցա յոյս անուտի՝ առնլով՝ «Եկայք դուք ի կին բանակին իմոյ, զի մի՛ գուցէ ելուզակ մարդիկ գնասս ինչ առնիցեն ձեզ, այլ ի մերոց զօրացս կարգիցից ձեզ զօրս պաշտպան, զի խնամելով և հովուելով առնիցին մինչև հասուցանիցին ի տան մերն երկիրն ձերոյ»: Եւ այսպիսի պատրանօք առեալ տարաւ գնոսա ընդ իւր. և հասեալ ի գաւառն Ախալցխու և բանակեցաւ ի ձորն՝ զոր ինջայու ձոր ասեն՝ ի վերայ ջրոյն: Եւ անդէն հրամայեաց զօրացն Պարսից կոտորել զամենայն մնացեալսն Օսմանցւոց՝ և սուր արարեալ զինչս և զստացուածս և զկանայս և զմանկունս նոցա: Եւ արարեալ կատարեցին ըստ հրամանաց շահին՝ զամենայն:

Յետ այսորիկ Շահաբաս ամենայն բանակաւն իւրով չունալ յերկրէն ինջայու գնաց ի քաղաքն Թիֆլիս, խաղաղութեամբ եմուտ՝ և խաղաղութեամբ ելեալ գնաց, զի միաբանութիւն էր ի մէջ Պարսից և վրաց:

Ելեալ շահն ի Թիֆլիսու գնաց ի գաւառն Գեղամայ և բանակեցաւ անդէն բանակն արքունի. և ինքն Շահաբաս իջևանեցաւ ի տան մէկիք Շահնազարին, որ էր ի գիւղն Մազրայ, բնակեան ի նոյն գեղջէն: Եւ էր մէկիք Շահնազարս յազգէն Հայոց՝ և հաւատով քրիստոնեայ, իշխան հզօր և փառաւոր, որ արար հիւրընկալութիւն շահին որպէս վայել է թագաւորի՝ և էր ինքն բարեկամ և մտերիմ և այգոյ առաջի թագաւորին: Վասն որոյ և թագաւորն պատուական և ազնիւ դիւանտուք շքեղացուցեալ խիլացաց. և պարգեւաց նմա պիշխանութիւն մէկիքութեան գաւառին, և այլ ևս դաստակերտս և դեղօրայս ետ նմա և հղբարց նորա: Եւ հաստատուն նոմոս գրեաց և կնքեաց թագաւորական կնքով և ետ նոցա զի անփոփոխ լիցի ժառանգութիւնն այն նոցա և զաւակաց նոցա յազգէ յազգ մինչև յաւիտեան:

Եւ անտի յարուցեալ կամկար գնացիւք հնաս ի Թարվէզ ամենայն զօրօքն իւրովք, հկաց մինչև եմուտ ի միւս տարին. յորում էր թուա-

1 Ա. *լայնանայր*
2 ԱԴԷ *փախչիլ*
6 Ս. *ամենայնի* ՐՆ և *սկսաւ*
7 ԱԲՊԵՆ *և զմնացեալսն փխ զմնացեալսն*
8 Գ *որ փխ որք*
9 Ա. *պատրուակականիւք*
10 ԱԲՊՆ *բանակի* Ա. *ելուզակք* ԱԲՊԵՆ *մարդիկք*
12 ԱԴ *տանիցեն զձեզ*
14 Ս. *չիմ և (բանակեցաւ)*
15 ԲՊՆ *ջրին*
16 Ս. *զամենեսեան*
19 Ս. *ամենայնիւ*
24 ԱԴ *բանակ* ԱԲՊՆ *իջևանեցաւ*
27 Ս. *դհիւրընկալութիւն*
28 Ս. *ինքնն* ԲՊՆ *ինքս* ԴՆ *յարգոյ*
31 ԱԲՊՆ *չիմ ետ*
32 Ս. *դհաստատուն* Ս. *թագաւորականաւ*
34 ԱԴ *գաւառին* ՐՆ *տգէ*
35 Ս. *կամնար փխ կամկար* Ս. *ամենիւք*

կանն մեր ՌՃՁ., ապա առեալ պատճառն զօրս իւր գնաց ի վերայ Շամախոյ՝ և նստաւ ի վերայ բերդին, շրջապատեալ և պաշարեալ զնա։ Եւ որպէս պատմեցաք վասն Գանջայոյ՝ նովին օրինակաւ պատերազմեալ ընդ Շամախու էառ զնա յՕսմանցւոց[14]։ Եւ զլօրսն Օսմանցւոց սրով կոտորեաց. և զընտանիս և զինչս աւարեալ յափշտակեաց։ Եւ կաթողեաց ի նմա իշխան զՋըլֆիղար խանն, և ինքն չոյ արարեալ բանակաւն իւրով գնաց ի Բարվէզ։ Եւ ի մտանելն ի Թուսկանն ՌՃՂ. գնաց չոյն ի Սպահան քաղաք։

ԳԼՈՒԽ Ը

ԹԷ ՈՐՊԻՍԻ ՊԱՏՃԱՌԱՆՈՔ ԿՈՉԵԱՑ ՇԱՀԱՍԲԱՍ ՋՔՍԳԱՒԻՐՍՆ ՎՐԱՑ ԱՌ ԻՆՔՆ ԵՒ ՀՆԱՐԻՒՔ ԴԱՒԵԱՑ ՉՆՈՍԱ

Ի ժամանակս թագաւորութեան Շահթահմազին՝ որ էր թագաւոր ազգին Պարսից. և եղև զօրանալ այս Շահթահմազիս և բռնանալ ի վերայ այլոց ազգաց՝ որք շրջաբնակ են զինքեամբ, որ և բռնացաւ ի վերայ ազգին Վրաց և էառ պատանդս ի թագաւորաց նոցա։ Ի թագաւորէն Թիֆլիսու՝ որ էր մեծ Սիմօն խանն, զդուստր նորա և զեղբայր նորա։ Եւ ի թագաւորէն Կախէթու, որ էր Աղէքսանդրն՝ զորդի նորա, որում անունն էր Կոստանդին։ Այլ և գոյին այս Աղէքսանդր թագաւորիս այլ ևս որդիք երկու՝ Դաւիթ և Գօրգի, սոքա երկոքինս կային առ հայրն իւրեանց յԱղէքսանդր։ Իսկ Կոստանդին, որ տուեալ եղև պատանդ թագաւորին Պարսից Շահթահմազին՝ մնաց անդէն՝ և անաւ առ նոսա, մեծացաւ՝ և եղև այր երևելի ի դրան թագաւորին. քանզի դարձուցին զնա ի քրիստոնէական հաւատոցն ի կրօնս մոլար առաջնորդին։ Մեռաւ Շահթահմազն՝ և թագաւորեաց որդի նորա Շահհսմայիլն տարի և կէս՝ և սպանին զնա։ Յետ նորա թագաւորեաց եղբայր նորա Շահխուդաբանդայ ինն տարի։ Յետ սորա թագաւորեաց սորին որդին աշխարհատէրն Շահարաս։ Եւ Կոստանդինս այս մնաց մինչ ի ժամանակս այս Շահաբասիս, և յորժամ եկեալ շահն ի Բարվէզ՝ և ի Նախիջուան և յԵրևան և գրաւեաց զնոսա ընդ իւրով իշխանութեամբն, այս Կոստանդինս ընդ շահին էր։

Եւ յաւուրսն՝ յորում էր Շահն յԵրևան և պատերազմէր ընդ Օսմանցիսն՝ որք կային ի մէջ բերդին Երևանու[15] հարուստն ի խորհուրդս չարեաց Շահաբաս խորհեցաւ, զի և զթագաւորսն Վրաց ածցէ առ

1-2 ԱՐՊԻՍ *Շամախոյ* է *Շամախուոյ*
3 ԲԳՆ *օրինակաւն*
4 ԲԳՊՆ *Շամախոյ* է *Շամախուոյ*
11 Ա. *գրաւեաց* փխ *դաւեաց*
14 Ա *շրջաբնակք էին* ԲԳՆ *որ շրջարնակէն*
15 ԲՇՆ *պանդանդս* ԱԴ *պանտանդս*
16 ԲԳՆ *զդուստրն*
16-17 Ա*ն զեղբայրն*
18 ԱԴ *չիմ այլ*
19 ԲՆ *Գօրգի*
20 ԱԴ *կոս տանդինն և տուեալ*
21 ԳՆ *պանդանդ* Դ *պանտանդ*
23 Ա. *ի քրիստոնէականաց*
24 Ա*է նոցա* փխ *նորա*
26 Գ *Խուդաբանտայ* Ն *Խուդայբանտայ*
28 Ա. *էկն* փխ *եկեալ*
31 ԱԴ *յորս*

ինքն[16]*, վասն որոյ առաքէ նոցա կոչնականս զ՝ ի նոցանէ առնուլ պատանդս՝ յորոց մի է այս Կոստանդին՝ որ առաքեաց կոչնականս վինքըն իւրում հօրն Ազէքսանդրի*[17]*: Եւ զՀանիս Թահմազդուլին, որ էր եղբայր Աբասէկին, զոր նախադոյն յիշեցաք՝ առաքեաց կոչնական Գօրգի թագաւորին Թիֆլիսու: Եւ Գօրգի թագաւորս էր որդի մեծ Սիմոն խանին, որ յետ ըմբռնման Սիմոն խանին, զայս Գօրգիս կարգեցին ի տեղի նորա թագաւոր Եւ շահն, որ առաքեաց առ թագաւորն վրաց՝ յիշեցոյց նոցա և ասաց, եթէ Հաստատուն կայք ի վերայ կանխադոյն դաշանցն, զոր նախնիքն մեր պայմանեալ Հաստատեցին, պարտիք աշխատիլ՝ և գալ յօգնութիւն մեզ՝ որ կամք ի պատերազմիս թշնամեաց:*

Իսկ թագաւորքն վրաց առ այսմ գործ վարանեցան, քանզի ո՛չ կամէին գալ, բայց զկնի բազում խոհման և մտածութեան յանձն առին զգալն, ո՛չ թէ յիրեանց կամաց՝ կամ յանգիտութենէ, այլ յանհարակութենէ: Վասն զի ոչ են ինքնակալք զի ընդդէմ կարիցեն կալ Օսմանցւոց և Պարսից՝ այլ են տկարք և անզօրք. վասն որոյ Հարկ զի միւմ ի սոցունց ընդ ձեռամբ լիցին: Յառաջ ընդ ձեռամբ էին Պարսից ի ժամանակս Շահթահմազին. իսկ ետես փուշէն, որ էր Օսմանցւոց Սարդար՝ եկեալ կալաւ զքաղաքն վրաց՝ և շինեաց ի նոսա բերդորայս[18] *և կարգեաց ի բերդսն զնիզիչարիս. քանզի փախուցեալ զՍիմոն խանն: Եւ յետոյ միւս զօրավարն Օսմանցւոց Ջաֆար փաշէն եկեալ ըմբռնեաց զՍիմոն խանն՝ և առաքեաց առ խոնդքարն՝ ի Կոստանդնուպօլիս*[19] *և անդ սպանին զՍիմոն խանն և զթօռն նորին. և այսպիսի պատճառաւ ի բաց կացին վրացիք յապրէն Օսմանցւոց: Եւ արդ շահն պահանջէ ի սոցունց գալ ի հնազանդութիւն. և պատճառս յօժ գկանխաւ դաշնադրութիւնն՝ որ ի ժամանակս նախնեացն եղեալ է: Եւ սոքա ոչ թէ վասն դաշնադրութեանն՝ և ոչ թէ յանգիտութենէ՝ և ոչ թէ կամաւ՝ այլ յանճարակութենէ. զի մի՛ գուցէ շահն ատարտեալ զպատուհասմն Օսմանցւոց, դառնայցէ ի վերայ վրաց. խորհեցան այնու հաճել զկամս նորա՝ զի թերևս այնուիկ դարձուսցեն զնա յինքեանց, զի մնայցեն ի խաղաղութեան. և զայն ոչ գիտէին թէ յապագայն նորին ձեռամբըն է լինելոց կորուստ և զրուա ինքեանց՝ և ազգին իւրեանց:*

Արդ երկոքին թագաւորքս Վրաց Ազէքսանդր և Գօրգի՝ եկեալ եկին յերևան, տեսին զշահն: Իսկ շահն՝ որպէս բնաւորեալ զոյ յազգն նոցա խորամանկութիւն, յառաջագոյն սիրով և մեծարանօք ընկալաւ զնոսա, և խիլայեալ պատուեաց՝ զի հաճեցուսցէ զմիտս նոցա և զտեսողացն յինքն. և խաղաղութեամբ պահեաց մինչ որ էառ զբերդն Երևանայ[20]*:*

1 ԲԳՆ *զզ՝ի նոցանէ* Ն *տալ*
1-2 ԲԳՆ *պատանդան* Գ *պանատանդան* ԱԳ *մի էր* ԱԳ *զոր փխ որ*
2-3 ԱԳ *իւրոյ փխ զինքն իւրում*
4-5 Ն *կոչնականս* Բ *Գօրգի*
7-8 Է *կոչնակս* ԴՆ չիք *առ* Ա. *թագաւորցն* Բ *թագաւորաց* ԳԴՆ *թագաւորացն*
13 Ա. *բազմի*
14 Ա. չիք *թէ*
17 Ա. *միոյ*
22-23 ԱԳ չիք *ի Կոստանդնուպօլիս*
23 Ա. *և այսպիսեաւ*
25-26 Գ *զկանխաւ*
26 ԲՆ *դաշնադրութիւն*
27 ԲՆ *դաշնադրութեան*
34 Ա. *տեսանել*

Եւ ապա ըստ դիմաւկան և ըստ կախարդական արհեստին իւրեանց դնել ինչ մահարար ջամբեցուցանել է Գօրգի թագաւորին՝ զի չեա սուղ ինչ աւուրց մնացի[21]. *և Գօրգի թագաւորս առ ժամանն ոչ է գիտացեալ զայսպիսի հնարակերտութիւնս, զոր առ ինքն ներգործեալ է շահն։ Եւ զինի այսմ իրագործութեանս սիրով և պարգեւօք արձակեաց շահն զԳօրգին գնալ ի տեղի իւր։ Եւ նա լինել չներհանայ գնաց ի Տփխիս՝ ի քաղաք իւր, և ի սակաւ աւուրս կենցալ մնաւ, ըստ ներգործելոյ և ըստ բաղձանաց շահին։ Եւ ազգն և իշխանք՝ որք տեղւոյն էին՝ թագաւորեցուցին ի տեղի Գօրգոյն զորդի նորա վլատասափ՝ մանուկ տիօք։ Այլ՝ զրաւ Գօրգի թագաւորին այսպէս եղև ներգործութեամբ շահին։*

Իսկ զԱղէքսանդր թագաւորն կալաւ շահն առ ինքն և ոչ եթող գնալ. այլ ընդ իւր տարեալ շրջեցոյց այսր և անդր. և խնդրէր ի նմանէ պատանդս։ Եւ սակս այսորիկ Աղէքսանդր չտնտնարս անկեալ եթէ կամաւ և թէ չակամայ բերեալ զԹոռն իւր, որում անունն էր Թամրազ՝ մանուկ տիօք՝ նա ի պատանդ շահին, ապա շահն հրաման նա նմա գնալ. և Աղէքսանդր արձակեալ ի շահէն գնաց ի տեղի իւր, և թոռն նորին Թամրազ մնաց ի դուռն շահին. և Թամրազս էր որդի Դաւթին, որոյ Աղէքսանդրիս[22]։

ԳԼՈՒԽ Ժ

ՄԻԻՍ ԵԻՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԴԱԻԱՃԱՆՈՒԹԵԱՆ ՇԱՀԱԲԱՍԻՆ, ՋՈՐ ՄԻՍԱՆԳԱՄ ԱՐԱՐ ԸՆԴ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՎՐԱՑ

Վերոյասացեալ թագաւորն Կախեթու Աղէքսանդր իւրով կամաւն աւուեալ էր զթագաւորութիւնն իւր որդւոյ իւրում Դաւթի[23], *և Դաւիթն վարէր զիշխանութիւն թագաւորութեանն։ Իսկ միւս որդին Աղէքսանդրու Գօրգի որպացաւ ընդ այն՝ և ապան զկղբայրն իւր զԴաւիթ՝ զի ինքն լիցի թագաւոր։ Եւ Աղէքսանդր հայր նոցին կենդանի էր՝ ո՛չ նա զթագաւորութիւնն Գօրգոյ՝ այլ յինքն զրաւեաց՝ և ինքն վարէր զթագաւորութիւնն*[24]։

Ջայսու ժամանակաւ խորամանկն ի հնարս չարեաց Շահաբաս, խորհեցաւ զնոր իմն հնարս կործանման և երկպառակութեան արկանել ի մէջ թագաւորութեանն քրիստոնէից։ Կոչեաց առաջի իւր զկանխաւ առացեալ զուրացողն Կոստանդին՝ զորդին Աղէքսանդրիս, որ առ շահն էր, և խօսեցաւ ի սիրտ նորա ըստ ախորժակաց նորա և ըստ հաճոյից,

3 Գ: *աւուր* Բ *Գօրգի* Ա. *առ ժամանն*
5-8 Ա. տողերի նեռատաչդյուն (*«զնաց»* բառից հետո. *«ի սակաւ աւուրս կենցալ մնաւ. ի Տփխիս ի քաղաք իւր, ըստ ներգործելոյ և ըստ բաղձանաց շահին»*)
7 Բն *կացեալ*
8 Գ *իշխանքն* Գն *որ փխ որք*
9 Ա.Գն *նորին*
10 Ն *Գօրգի*
13 Գն *պանդանդս* Ա.Գ *պանատանդս*
13-14 Բն *կամայ*
15 Ա *պատանդս* Բ *պանդանդս* Գ *պանդանդս* Դն *պանատանդս*
23 Ն *զթագաւորութիւն*
25 Գ *ըսպան*
27-28 Ն *զթագաւորութիւն*
30 ԲԳԴն *նոր*
31 Ն *թագաւորութեան*
32 ԲԳԴն *զուրացող*

և ասաց նմա. «Ահա ընդ քեզ զօրս ըստ բաւականի ի մերոց զօրացս՝ զոր տամ քեզ՝ և գնա յերկիր քո հայրենի, և հնարեալ ապանցես զմայր քո զԱղէքսանդր՝ և զեղբայր քո զԴօրպի, զի դու լիցիս թագաւոր ի տանդ հօր քո՝ և վարեսցես զքո հայրենի թագաւորութիւնն»:

Բայց այժմ եթէ ի մէջ մերոյ ազգիս և քէ անդ ի մէջ վրաց ազգին, մի՛ ձեացուսցես ի սակս գնալոյդ քո, թէ դեամ յաշխարհն իմ մի անդ կեցից, այլ ձեացուսցես զքեզ և երեսի պատճառ զայս խօսեսցիս առ ամենայն ոք, թէ. «Առաքեալ է զիս շահն այսու զօրօքս՝ զի գնացից ի Շամախի առնուլ զնա», և ի ժամանելն քո յերկիր քո՝ որ որ և յաջողեսցի քեզ զայն արասցես, եթէ սպանումն հօր և եղբօր քո՝ և թէ առումն Շամախու:

Արդ՝ զայսպիսի պատուէր ընկալեալ օձն դարանակալ, ելեալ զօրօք գնաց յերկիրն Կախեթու առ հայրն իւր Աղէքսանդր, և յայնմ ժամու ո՛չ կարաց դաւել՝ զի կարծիս անկաւ ի միտս վրաց՝ տեսանելով զանուղղայ գործս նորա, որ և ինքն ի նմին ժամու պատրաստակեաց զմթերեալ խորհուրդս սրտի իւրոյ: Եւ յաղագս զինքն ուղիղ և աննենգ ցուցանելոյ և հաճելոյ զմիտս վրաց, ի զօրաց հօր իւրոյ, յաղթէն վրաց յոլով զօրս էառ ընդ իւր և եկեալ գնաց ի վերայ Շամախու: Եւ ազգն վրաց յայժ կամէին զկորուստ նորա, վասն որոյ ի ժամ պատերազմին յեւս յեւս կային և ո՛չ հաւատարմաբար պատերազմէին, զի գուցէ յայնմ պատերազմի ձեռամբ Օսմանցւոցն լիցի կորուստն նորա: Իսկ չարն Կոստանդին ծանեաւ զայս իրակութիւն յոգի իւր, և զայն ևս գիտէր թէ զօրօքն Պարսից ոչ կարէ յաղթել զօրացն Օսմանցւոց, և մինչ ի խմբի պատերազմին մարտնչէին ընդ Օսմանցւոցն, թողեալ լքեաց զգործ պատերազմին՝ և փախեաւ դէպ ուղիղ յաշխարհն Պարսից՝ և գնաց առ շահն: Եւ Օսմանցիք առեալ ի մէջ՝ զմնացեալ զօրսն Պարսից, իսպառ կոտորեցին զնոսա, և աւար հարին զամենայն ինչս նոցա:

Իսկ շահն կրկին անգամ ևս զօրս Կոստանդնին իբրև լուր. և կրկին առաքեաց ի հայրենի յերկիր իւր՝ նովին դիտաւորութեամբ: Եւ իբրև եհաս Կոստանդին ի հայրենի յերկիր իւր, ձեացուցանէր զինքն իբրև ղղջացեալ յուրացութենէն, և կամի վերստին դառնալ ի քրիստոնէութիւն, վասն որոյ իբր զբարեպաշտ ոք յօժարեցաւ սրտիւ ի շրջապայիլ յեկեղեցիս և ի վանորայս վրաց, և այսու հնարիւք ժողովեաց զբազում անօթս յեկեղեցեաց անտի, խաչ՝ սկիհ՝ բուրվառ՝ և այլ, զոր ինչ կամեցաւ և յետոյ զամենայն զանօթսն պայնոսիկ խորամանկաց, և բաշխեաց ոտճիկս զօրացն Պարսից՝ որք ընդ իւր եկեալ էին: Իբրև զայն

1 Ա.Դ *զորս*
2 ՐԳՆ *գնասցես*
6 Ս. չիք *մի ձեացուսցես սակս գնալոյդ*
7 Ս. *կացից*
10 Գ *աջողեսցի*
11 ՐԳՆ *առնումն* Ա.Է *Շամախոյ*
14 ՐԳՆ *վրացեացն*
15 ԴՆ *զանուղղա*
16 Գ *խորհուրդ*
17 ՐՆ *վրացեաց* Գ *վրացեացն*
18 Է *Շամախոյ* Ա.ՐՆ *Շամախոյ*
21 Է *յայնմիկ* ՐԳՆ *յայնմի*
24 Գ *ընդ Օսմանցոց* Ն *ընդ Օսմանցւոց*
27 Է *նորա* փխ *նոցա*
28 ՐԳՆ *Կոստանդնի*
29 ԴՆ *դիտաւորութեամբն*
30 ՐՈ *իբր*
31 ԴՆ *ղղջացեալ*: Ա. *յուրացութենէ*
33 34 Բ *վրացւոց* ԴՆ *վրացւոց... բազում անօթս...*
34 Ա. *վասն զսկիհ՝ զբուրվառ*
36 ՐՇՆ *ոտճիկս... որ* փխ *որք* Ա. *եկեալք*

ահին աղգն Վրաց՝ ի սիրտ և յոգի խոցեցան՝ և իսկոյն կամեցան՝ բառնալ զնա ի կենաց. և խորհուրդ արարեալ ընդ Աղէքսանդրի հօր նորա զի սպանցեն զնա, իսկ Աղէքսանդր յապաղէր յայս գործ, և տակաւին մտաւարժէր վասն կատարման նիւթից։ Եւ մինչ Աղէքսանդր յայսմ խոհման կայր՝ յայտնեցաւ այս խորհուրդ Կոստանդնի, և Կոստանդինս փութացաւ նախաժամայն և սպան զՀայր իւր զԱղէքսանդր՝ և զեղբայր իւր զԳօրգի, և ի ձեռն իւր գրաւեաց զիշխանութիւնն, և բռնացաւ ի վերայ երկրին[26]։

Յետ այսորիկ դարձեալ գումարեաց Կոստանդին զզօրսն իւր, և զերկիրն՝ որ յազգէն Վրաց, և նոքունքրք եկեալ զնաց ի վերայ քաղաքին Շամախու։ Իբրև աւուրք ինչ ճանապարհ զնացին, յայնժամ միաբանեալ զօրքն Վրաց՝ մինչ զճանապարհ այն զնային՝ յարեան ի վերայ Կոստանդնի սրախողխող արարեալ կտոր կտոր յօշոտեցին զնա՝ և բարձին զչարն ի միջոյ[27]։ *Իսկ զօրքն Պարսից՝ որք ընդ Կոստանդնու եկեալ էին, սաստիկ խոժոռեալ ընդ այն, կամեցան յառնել ի պատերազմ ընդ զօրացն Վրաց։ Իսկ զօրքն Վրաց ցուցին զթուղթ ինչ գրեալ, իբր թէ ի շահէն առաքեալ առ նոսա առնել զայն, որով պատասխանեցին Վրացիքն Պարսից՝ թէ հրամանաւ շահին արարաք զայս, և ապա թուլացան կռոմն Պարսից՝ և ոչ պատերազմեցան, այլ ցրուեալք ի միմեանց գնացին յաղգն իւրեանց և ի տեղիս։ Եւ եղև առաջին և երկրորդ գալն և սատակումն Կոստանդնիս այս ի թուականութեան մերում ՌԽԴ. թուին։*

Իսկ զիշխանութիւն թագաւորութեանն կախէթու ընկալաւ յիւր հրաման, Հարսն Աղէքսանդրու-կինն Դաւթի, և այս յաղագս երկուց պատճառաց։ Նախ՝ զի այնպէս կամեցան իշխանք աշխարհին, զի կին էր Դաւթի, որում տուեալ էր Աղէքսանդր զթագաւորութիւնն։ Եւ երկրորդ՝ զի մայր էր Թամրազին՝ որ էր մնացեալ ժառանգ թագաւորութեանն, իբրև պատանդապահ պահելով զթագաւորութիւնն որդւոյ իւրոյ Թամրազին՝ որ տակաւին ի պատանդի կայր առ շահն[28]։ *Որ և զկնի առման բերդին Գանջայու որպէս յառաջագոյն նշանակեցաք, առաքեաց շահն զԹամրազ ի Կախէթ՝ որ եկեալ թագաւորեաց ի տեղի Հարց իւրոց։*

Եւ պատճառ առաքելոց Թամրազին ի Կախէթ այս է, զի Շահաբասն յորժամ իւրով հնարաւոր ներգործութեամբն սպանանել ետ զպապն Թամրազին երկնից որդւովքն նորա իրեարց ձեռօք, և մնաց տեղին նոցա ունայն՝ և Թամրազ էր ժառանգ տեղւոյն՝ և կայր առ շահն ի պատանդի. վասն որոյ զնա առաքեաց։ Այլ և քաջ գիտէր շահն՝ զի թէ յազգէն Պարսից առաքեսցէ իշխող աշխարհին Կախէթու, ո՛չ ընդունին իշխանքն Կախէթու, վասն որոյ զԹամրազ առաքեաց[29]։

5 6 Գ *Կոստանդղընի*։ Դ *Կոստանդնի և Կոստանդինս*
6 Ա *նախաժամայն*
7 Ըն *զիշխանութիւն*
11 Է *Շամախւոյ*
13 ԱԸԳԴն *յօշոտեցին*
16 ԸԳԴ *թուղթ*
21 Աէ *այսորիկ փխ այս*։
22 Ա.Դ *չիմ թուին*
28 Ն *զթագաւորութիւն*
29 Գն *ի պանդանդի*
32 ԸԳ *Շահաբաս*
33 Ա *հնարաւորիւ* ԸԳն *սպանել*
34 ԸԳն *որդովքն... ձեռօքն*
35-36 Կն *ի պանդանդի* Դ *ի պանտանդի*

ԳԼՈՒԽ ԺԱ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏՃԱՌ ԱԻԵՐՄԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՎՐԱՅ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ԼԱԻԱՍԱՓ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՆՈՅՍ, ՈՐ ԵՂԵՒ ԶԵՌԱՄԲ ԱՌԱՋԻՆ ՇԱՀԱԲԱՍԻՆ

Յորժամ պարձաւ Գօրդի թագաւորն վրաց յերևանալ՝ և դնացեալ հնաս ի Թիֆլիս՝ ո՛չ ապրեցաւ. այլ փութով մնաւ, քանզի պիղծալ էր ղնա Շահաբասն, որպէս ի վեր անդր պատմեցաք։

Եւ իշխանքն վրաց կարգեցին ի տեղի Գօրդի թագաւորին զնորին որդին՝ թագաւոր, որում անունն էր Լաւասափ, ի տիս տղայութեանն։ Եւ եղև ղի հրամանաւ Լաւասափ թագաւորիս կարգեցաւ այր ոմն ի վերայ քաղաքին Թիֆլիսոյ ի գործ մուրուվութեան, որում այժմ տարուղայ ասեն. և էր մուրով կարգեալ այրս այր հանճարեղ բանիւ և կորովի խորհրդով, և խնամուտ ի գործս իւր, այլ և հակայաձև, և ուժգնդակ, քաջ պատերազմող և անպարտելի ախոյեան[30]. որ ի կողմն՝ յոր և միաբանէր՝ զմիւս ներհակ կողմն յաղթէր. և զընդդիմակայ զօրսն իբրև զբանջար կոտորեալ ընդ երեսս դաշտացդ թափէր, որոյ քաջութիւնն յառաջիկայդ ի բազում տեղիս լինի լիշեալ, յորոց դհատաստիս իմանասցուք։ Այլ այրս այս մուրով՝ ո՛չ էր ինքն ապնիորդի, և կամ իշխանազուն՝ և յերևելի յաղգէ՝ այլ ի հասարակ և ի խոնարհ ազգէ՝ զոր ազգն վրաց դլեխի[31] ասեն։ Կայր և քոյր մի այս մուրովիս՝ նորահաս կոյս՝ չքնաղ և գեղեցիկ, բարեհասիլ և բարեյօդ դիւք մարմնոյն և հասակին[32]։

Իսկ թագաւորն Լաւասափ զարգացեալ հնաս ի չափ հասակի հընդհատեան և վիշտասան ամաց աւելի կամ պակաս, յորում ժամանակի շարժումն ցանկական մասին զօրանայ ի մարդն՝ և ընդ իւրով իշխանութեամբ գրաւեալ յածեցուցանէ։ Ի սոյն ժամանակի թագաւորն Լաւասափ հաճեալ ի քոյրն մուրովիս՝ մոլիգին շաղաշարութեամբ սիրէր զնա՝ և խաղայր ընդ նմա ի ծածուկ. բայց ոչ էին զուգաւորեալք. այլ էին կոյսք երկոքեանն՝ Լաւասափն և աղջիկն։ Եւ զբծծա այս թէպէտ ի ժամանակս ինչ մնաց ի ծածուկ՝ այլ չհաւոյ յայտնեցաւ. քանզի հրամանաց Տեառն, թէ ոչինչ է ի ծածուկ որ ոչ յայտնեսցի. որ և չհաւոյ հնաս չկանջս մուրովին լուաս այս։ Այլ և ոմանք՝ որք էին նախանձաւորք և ոխակալք ընդ մուրովին, որդիք չարեաց և յուզողք խռովութեանց. լիշեցին զայն առաջի մուրովին, և երևծնծանք արարին նմա, և մուրովն յայսմ պատճառէ վշտացեալ ոգւով չափ և թախծեալ սրտիւ, զմահ անձին խնդրէր և ոչ գտանէր։ Եւ դիպի բազմաժամանակեայ տրտնջանաց, որ ի ծածուկ. տրտնջէր մուրովն, ապա յայտնի և համարձակ*

* *Մատթ., ժ, 26*

3 Գ *թագաւորի*
11-12 ԲԵ *տարօղայ*
13-14 Ա.ԲԳ *ուժգնդակ փխ և ուժգնդակ*
17 Ա *լիշեցնալ* Ա.ԲԳԵ *դհատաստին*
18 ԲԵ *Այլև*
19 ԳԻԵ *երևելի*
21 Ե *բարեյօդ*
25 ԲԳԵ *մասինն*
27 ԲԳԵԻ *ի քոյրս*
29 ԲԵ *երկոքեան* Ե *Լաւասափ*
35 Ա *յայսմանէ*
36 ԲԳԵ *անձինն*
37 Ա.Գ *չիմ տրտնջէր մուրովն* ԲԵ *մուրով*

ընդ ամենեսեան խօսէր, և ասէր, թէ ես ապանիլոց եմ վկաւասափ, բանդի ո՛չ կարեմ տանիլ զայսպիսի նախատինս՝ որ ընդ երեսս իմ առնեն. զի ամօթալի սոսկ եղէ ի մէջ աշխարհի: Իսկ իշխանք և մեծիմք թագաւորին վկաւասափու իբրև լսէին զբանս մովրովին, երկուցեալ խուսափէին ի նմանէ. քանզի պիտէին, թէ կարող է առնել գործով, որ և բանիւ ասէ: Վասն որոյ ի դիպող և ի պատշաճաւոր ժամու ապաշէին վկաւասափ ողորմած և մարդասէր՝ ի բաց կալ յայնպիսի գործոյ, որ ոչ իսկ բնաւ վայել է թագաւորական անուան: Նա և բանք ապառնալացն մովրովին մի՛ գուցէ թէ գործով արդիւնասցին: Եւ ի բազում թախանձանաց իւրոց զարհեցեալ վկաւասափ սուաց. «Ոչ կարեմ ի բաց կալ ի կուսէն յայնմանէ, քանզի ոգով չափ սիրեալ եմ ես զնա. բայց որովհետև այդպէս ասէք. ահա որպէս և պիտակ իսկ էք, զի ոչ ես կին արարեալ եմ՝ և ոչ կոյսն այն այլ, այլ՝ խօսեցաւուք զնա օրինաւոր կարգօք ինձ ի կնութիւն. և զիք զնշան զի արասցուք հարսանիս. և բարձցի արտունջն ի ձէնջ»[33]: Եւ ի բանս յայս վկաւասափին հաճեցան իշխանքն ամենեքեան. նա և մովրովն իսկ. և ուրախացեալ փառս մատուցանէին Աստուծոյ՝ զի բարձաւ խռովութիւնն ի միջոյ. և այսու բանիւ եդին զնշան աղջկանն այնմիկ վասն կնութեան վկաւասափու[34]: Իսկ եղբայր աղջկանն մովրով՝ յոյժ ուրախացեալ ընդ գործն այն՝ և գոհանայր վկաւասափէն. ասէր զինքն ծառայ և պաշտօնեայ նմա, և թէ զանձն իմ և զկեանս եդեալ եմ ի հանապարհս և ի հրամանս նորա. որովհետև ո՛չ արհամարհեաց զանտոհմութիւնս իմ, զի ինձ որպի զկնի ասէին. այլ այնչափ հաճեցաւ յիս՝ մինչ որ զքոյրն իմ էառ ի կնութիւն և ի բազուհութիւն ինքեան:

Իսկ բիրտ և հպարտ և ինքնահաճ ապգն վրաց՝ որ զտոհմաթիւս և զնախնի հարց սնոտ քննեն՝ և խուզեալ որոնեն. ոչ հաճեցան ընդ այս բանս քանզի կանայք իշխանացն՝ և ազնիւորդուցն՝ և թաւատացն, որք էին մեծապոփք և զտեղք իշխանաց յառաջն և արդեանս ամանակի կին և մարք իշխանաց: Ընդ սոցին և արք ոմանք ևս, ո՛չ բնաւ հաճեցան՝ և ոչ եղեն կամակից այսմ գործոյ. քանզի երևելի կանայքն ասէին արանց և որդւոց իւրեանց. «Զիա՞րդ մարթի մեզ՝ որ եմք զբաւեալք այս անուն ազնիւորդեաց, և կանայք և մարք այս անուն իշխանաց՝ զնալ յերկրպագութիւն և յողջոյն աղջկան միոյ՝ որ զուարթ է զկնի առն միոյ շինականի: Արդ՝ եթէ հաւանեցուցանէք զթագաւորն զառնալ յայդմ խորհրդենէ՝ և առնուլ իւր կին ի զուարթաց թագաւորաց՝ բարւոք է. ապա թէ ո՛չ այսպէս՝ մեք ևս ոչ կամիմք զնալ յողջոյն

2 Ա.Է առանել Ա.Գ զոր Բն որև
5 Ա.Գ լթէ կարօղ է Բն եթէ կարող է
6 Է պատճառաւոր
7-8 Ա.Գ յայնպիսւոյ գործոյն Բն յայնպիսոյ գործոյ
8 Ա. թագաւորականի
10 Բ թախանձանացն
13 Բ զկին
14 ԲԳԲն նշան
15 ԲԳն արտունջդ Ա.Գ չիմ յայս
17 Բն խռովութիւն
18 Ն ի միջւոյ ԲԳԲն նշան
19 Ն աղջկանն
23 Բն որ վխ զի
28 Բ իշխանացն
28-29 Է ժամանակի
29 Բ իշխնացն
31 ԲԳն թէ զիա՞րդ
33 Է չիմ աղջկան
34 ԲԳԷ հաւանեցուցէք
35 ԲԳԲն կին

ջայն և յերկրպադութիւն պղնիի աղջկան միոյ. պի ծանր է մնդ գործդ այդ, և եթէ կամիք արձակնցէք զմնդ ի կնութենէ ձերմէ, և այլ կին առացէք»։ Եւ եղև այս շփոթ և աղմուկ և խռովութիւն մեծ և անիրաւանդի ի մէջ ազգին վրաց զբազում առուրս։ Եւ որքան հնարէին կողմն հատանողացն ո՛չ կարէին ի հաւան ածել զանհաւան կողմն. վասն որոյ յանհնարս անկեալ խաղաղասէրքն անկանէին յոտս Լաւասափին, և աղաչէին, պի թերևս խաղաղութեամբ արասցէ նմս իրացն։ Իսկ Թագաւորն ևս անճար մնացեալ առ այսմ, ասաց նոցա. «Դուք դիտէք», և իշխանքն առաքեցին յերկիրն Դադիանու[35] և զղուսարն Դադիանու Թագաւորին նշանեցին վասն կնութեան Լաւասափին։ Եւ այսու պատճառաւ ի բաց նկաց Լաւասափ ի մովրովի քուներէն։

Եւ մովրովս այս՝ որ յառաջնում նուագին պմի ունէր բնակեցուցեալ յինքեան ի զօրացն չար այսու. և արդ՝ այսն այն առաջին, զեօթն այլ այսս չարաղջնս քան զինքն առեալ ընդ ինքեան, եկեալ բնակեցաւ ի մովրովս յայս. և եղև սորայս վերջինն չար քան զառաջինն։ վասն պի փոնդայր իբրև զպատերազմասէր երիվար, և զոչէր իբրև զառիւծ. և շնչէր իբրև զհրաշունչ վիշապ ի վերայ Լաւասափու և խընդրէր սպանանել զնա յաղագս երկուց պատճառացս։ Առաջինն՝ վասն նախկի իայտառականաց քնոն իւրոյ, և երկրորդ՝ վասն վերջին անարգանացն նմին. և խնդրէր, թէ զիարդ ի գէպ ինչ գացէ, պի հարնալ սպանցէ զԼաւասափն։*

Իսկ իշխանքն մտերիմք՝ և ցաւակիցք բարեկամքն զղուշանային, և պահէին զԼաւասափն. և զղուշացուցանէին զնա՝ պի պահնացէ զինքն ի մովրովէն։ Այլ և խրատէին զնա պի սպանցէ զմովրով[36]։ Եւ իբրև հաստատեցին իշխանքն և Լաւասափն ի մէջ իւրեանց զխորհուրդ սպանման մովրովին, այսու դիտաւորութեամբ, յաւուր միում ի պինարբու խրախութեան արբուցին բազում գինի մովրովին՝ պի զուցէ փոքր ինչ լուծցի ի զօրութենէ, որպէս զի դիւրաւ սպանցեն զնա։ Իբրև եհաս ժամն՝ եկ Թագաւորն արտաքս, և յիշխանացն, ով ոք գիտակք էին, նա քա ևս եկին մի մի արտաքս. և կոչեցին առ Լաւասափ զոմն պահիճ, որ հրամայէր նմա Լաւասափ գնալ ի ներքս և սպանանել զմովրով։ Եւ ի ժամուն մինչ նա ընդ դահճին զայն խօսէր. լուաւ զայն բանն ոմն ի ծառայիցն մովրովին, որ էր յառաջընթաց փայեակ նորին, զոր ասեն շաթր[37]. և իբրև պիռնուն Թուրցիաւ ի ներքս ի տուն անդր, ուր էր մովրով՝ և ասաց նմա. «Ահաւասիկ դան առ ի սպանանել զքեզ, քանզի այսպէս հրամայեցաւ վասն քո ի Թագաւորէն»։ Իսկ մովրով՝ իբրև լուաւ ի սաստիկ երկիւղէն այնպէս եթող գինին որպէս թէ ո՛չ իցէ բնաւ արբեալ գինի։ Եւ էր յայնմ ժամու գօտեզօծ և պլուխ ի բաց

* *Տե՛ս Մատթ., ժԲ, 45*

1 Ն *աղչկան*
6 Գ *անհնարս*
11 ԲՆ *քվերէն Գ քըւերէն*
13 ԲԳԴՆ *եօթն*
14 Ն *և հկնալ*
16 ԲԴՆ *փըրընդայր*
18 Ա. *պատճառաց։ ԱԳԴՆ առաջին։*
19 20 ԳԴՆ *անարգանաց։ է պի փխ. թէ*
22 ԲԳ *ցաւակից*
28 ԱԳՆ *Եւ իբրև*
31 Ն *Լաւասափին*
32 Ի: *չիմ նա*
33-34 ԲԳՆ *փայեկն, որ ասեն շաթըր*
37 Ա. *նա զդինին Գ նա դինին*

նատնալ. և ի տապնատէն այնպէս բոկոտամբ՝ և գօտկլոյծ՝ և պլոխ ի բաց՝ ի վեր ոտնալ ի տեղոյն ընթացաւ յախուռ երիվարաց թագաւորին. որ արքունի երիվարքն կապնալ կային՝ քանզի մերձ էր: Եւ ղի ինքն մովրով փորձէր պիտէր ի երիվարացն, որ ոք է փութագնաց և սրընթաց՝ կարկ դանդանավանդ ի բերան երիվարին. և ի ներքս ի յախուռն անդ հնծաւ ի վերայ երիվարին ջղով միայն առանց թամքի, վասն երկիւղի մահուան՝ ղի մի՛ ըմբռնեալ սպանցի, և այնպէս հնծնալ յերիվարն և արտաքս ի յախուռն, թոյլ տուեալ վերնատնակ երիվարին և մտրակեաց զնա՝ ղի առնալ ղինքն փախիցէ: Իսկ օդապահ երիվարն այն, իբրև զկնկնագնաց թռչուն առնալ զնա ընթացմամբ գնայր ո՛չ իբրև ի վերայ երկրի, այլ իբր ընդ երեսօք օդոյ: Եւ թէպէտ աղումք ի գօրաց Լատատափին ելին յերիվար և ընթացեալ գնան, ո՛չ ոք ի նոցանէ կարաց հասանել՝ բայ յերկուց ոմանց: Իսկ մովրով իսոնցաւ ընդ նոսա կալ՝ և զտնդի ունել պահ մի. իբրև կացին նկօզքն, սկսաւ իսոնել ընդ նոսա մովրով բանս մաղթանաց, որպէս ղի մի՛ ըմբռնեսցեն զինքն՝ այլ թոյլ տացեն նմա գնալ. և այնքան իսօսեցաւ մինչև էարկ զդուխ և զդորմ ի սիրտս նոցա՝ որք ո՛չ ըմբռնեցին՝ այլ թոյլ ետուն[8]: Եւ նա անցեալ գնաց ի քաղաքն Թիֆլիս. ի գիշերին եմուտ և ի նմին գիշերին ել. էառ ընդ իւր զայր ոմն թարգման, ղի ինքն ո՛չ գիտէր զայլազգեացս լեզուն: Գնաց ի գաւառն Ախստեւու առ Սուլթանն Ղաղախաց՝ որ նստէր ի նմին գաւառի, և ծանոյց նմա զամենայն անցուածս իւր՝ և խնդրեաց ի նոցունց առաքել զինքն առ Շահաբաս: Եւ նոքա լցան անպատում ուրախութեամբ՝ պատրաստեցին զինքեանց արս յոլով. և առեալ զնա հասուցին առ շահն՝ որ էր յայնժամ ի Ղըզլաշաճ անուանեալ տեղին՝ որ է յերկրին Շամախու:

Եւ Ղաղախ զօրականքն՝ որք տարան զմովրով՝ յանդիման կացուցին Շահաբասին. և շահն իսօսէր ընդ մովրովին՝ և հարցանէր զովն և զուստին և զվասն էրն՝ և մովրով ամենայն հարցուածոց առնէր զպատասխանի կարգաւոր իսօսիւք: Եւ ասէր. «Եթէ ընդ հովանաւ տէրութեան քո ընկալեալ ընդունիցիս զիս, ես բազում գործոց և իրաց պիտոյանամ ի ծառայութիւն քո»: Եւ կացեալ ժամանակս ինչ անդէն շահն իրով բանականաւն. և ապա չուեալ անտի դնալ ի Սպահան. տարաւ ընդ իւր և զմովրովն. և օր աւուր յառաջ խաղալով հանդարտութեամբ գնացին, մինչև հասին ի Սպահան: Եւ յամենայն դիպող ժամու շահն իսօսէր ընդ մովրովին և տեղեկանայր ի նմանէ զորպիսութիւն աշխարհին՝ և ազգին վրաց, զամրութիւն երկրին, և զիմաստութիւն թագաւորացն, և իշխանացն, զբազմութիւն ազգին, և զդաշտութիւն գօրացն.

3 Ա.Է *կապնալք*
4 ՐՆ *փութագնայ*
5 ՐԳՆ *դանդանավան*
7 Է *այնպէսի* ՐԳՆ *այնպիսի*
11 Ր *իբր... իբր* Ա *ընդ երեսս*
13 ԱՐ *հասանիլ*
14 Ա.Է *ունիլ*
15 ԱԴԷ *խոսիլ*
17 ՐԳԻՆ *գուխ և ողորմ* ԲԳ *որ*
20 Գ *զայլազգաց* ՐԳՆ *Ախստեւու*
28-29 ԴԳՆ *պատասխանի*
29 Ա *կարգաւորօք*
30 ՐՆ *ունդունիցես* Ա *բազմաց*
32 Գ *անդի*
33 ՐՆ *իրն*
34 Ա *յամենայնի*
35 Ն *զորպիսութիւնն*
36 Գ *զամրութիւնն*

և այլ զոր ինչ կամէր։ Եւ կացին անդէն ի Սպահան. էանց այն ամն՝ և մահն յամն երկրորդ. առէ շահն առ մովրով. «Ահա անցին աւուրք յոլովք, արդ՝ որո՞վ կերպիւ յօդևացուք զպատճառս՝ որպէս զի այնու պատճառաւ զօրաժողով լինել դնասցուք ի վերայ ազգին Վրաց»։

Իսկ մովրով յամենայնի կամէր զայն քէնն առնուլ ի Լատառափէն, որ վասն վատանունութեան և անարգանաց բուռն էր. որոյ սակս և եկեալն իսկ էր՝ ըստ նմին ճանապարհի և կերպի խօսեցաւ՝ և առն նա Շահաբասին՝ և ասաց. «Է՛ Լատառափին քոյր մի թագաւորացն, նորահաս կոյս չքնաղապէս և գեղեցկատեսիլ, և ամենայն որպիսութեամբ վայելուչ, որ վայել է ոչ ումեք՝ բայց միայն առանն իմում արքայի. արդ՝ խնդրեա դնա քեզ ի կնութիւն և յետ գալոյ կուսին զմայրն ևս խնդրեսցես պատճառաւ կուսին. և յորժամ եկեսցէ մայրն՝ զմայրն ևս արգելցես առ պատճառաւ կուսին. և նոքօք դիւրին է որսալ զվատասափ ի կորուստ։ Արդ՝ եթէ այս խորհուրդ այսպէս առցէ զկատարումն՝ բարւոք է. զի դիւրին է և հեշտ. և եթէ ո՛չ լսիցեն, և ոչ ասցեն զաղջիկն քեզ, յայնժամ չասէն նոցա եղիցի քեզ պատճառ դնալոյ ի վերայ նոցա»[39]։

Իսկ անվթար կամարարն սատանայի՝ երկրորդ Սաբիւռոս այս Շահաբաս՝ յետ ընդունելոյ զայսպիսի խրատս ի մովրովէն, զրնաց առ Լատառափ և առ մայր նորա վասն քեռ Լատառափին թուղթ սիրոյ և ողջունի. որ ի վերոյ ունէր բանս իբրև զկնաց. բայց ի ներքոյ լրիւ հրաւէր մահու։ Եւ գոյացութիւն բանի թղթոյն էր ըստ այսմ օրինակի։

«Կամիք ճշմարտութեամբ՝ զի հաստատուն և անպրդուելի լիցի թագաւորութիւնն մերս և ձերդ. և սէր և միաբանութիւն երկուցս ազանց Պարսից և Վրաց. և մեք զամենայն իշխանաց և աշխարհաց կոմսանցդ այսոցիկ զվերակացութիւն յանձնեսցուք ի ձեզ. զի զուք հոգայցէք՝ և վարիցէք զթագաւորական իշխանութիւն հիւսիսական կոմսանցդ՝ և մեք զայլ ևս կոմսանս հոգասցուք։ Եւ սմին այսմիկ միաբանութեան նշան և պատճառ լիցի այս. զի զօրիորդ դուստրդ ձեր բերիցէք առ մեզ։ Նախ զի լիցի կատարումն գործոյս այս նշան և շարկապ միութեան երկուց ազանցս. երկրորդ՝ զշխոյ և թագուհի ամենայն ազգին արեաց»։ Արդ ըստ այսմ օրինակի գրեալ զթուղթն առաքեաց յաշխարհն Վրաց ի քաղաքն Տփիս առ Լատառափ՝ և առ մայրն նորա։

Իբրև ընթերցան զգիրն, ծանեան զի թեւակրութեամբ և իշնամութեամբ մովրովին պատճառանութիւն էր ամենայն բան թղթոյն։ Ոչ զինքեանց դնալն և ո՛չ զաղջկան տալն կամեցան. քանզի ասաց մայրն Լատառափին. «Ի ժամանակին՝ յորում էիր չնևան քաղաքի ի պատե-

3 Ն *պատճառս*
6 Ս. *քեռն* ԲԳԴՆ *քվերն*
7 Գ *ճանապարհի* Ս. *գասն*
9 Ս. *ամենայնիւ*
11 Բ *ի բնդ փխ քնդ*
14 ԲԳՆ և *թէ*
15-16 ԲՆ *զաղջիկն*
19 Ա.ԲԳԴՆ *գրեալ*
20 Ս. *գթուղթ*
22 Ն *գոյութիւն*
24 Բ *թագաւոր* Ն *թագաւորութիւն* ԲԳԴՆ *երկուց ազանցս*
27 Ս. *գիշխանութիւն* Ս. *իսկ փխ և*
30 Ա.Ն *այսորիկ*
31 Գ *զշխոյ* Ս. *թագուհի լիցի ամենայնիւ*
35 ԳԴՆ *բանք*
36 Գե *զաղջկան* Ս. *մայր*

բազմի, կոչեցեր զմեզ առ քեզ բարեկամութեան պատճառաւ. և մեք անկեղծ սրտիւ իբրև ի ճշմարիտ բարեկամ և ի Թագաւոր եկաք առ քեզ և դու զպրծ ընդունեցեր զմեզ. քանզի դեղով զայրն իմ ապաներ՝ և պիս խայտառակեցեր. արդ՝ մեք, որ զայսպիսի գործս անաւաք ի քէն. զիա՞րդ վատահաւատութ միտանգամ գալ առ քեզ: Արդ՝ եթէ առուպիս զհատատաւութիւն և զհանգիստն մեր կամիս, որպէս ասացեր, մի նեղեր զմեզ՝ և մի խռովեցուցաներ վրդովեր վհատութիւնն մեր, այլ թող զմեզ կալ ի հանդարտութեան, զի այս փոքր իշխանութիւնս մեր բաւական է մեզ ի պէտս կարեաց մերոց. ողջ լեր»: Եւ պատասխանիս այս եկեալ առ Շահաբան մինչ էր ի Սպահան, յորում ինքն և մովրովն խորհէին և խոկային զօր հանապազ զաւեր աշխարհին վրաց՝ և զանկումն Թագաւորութեան նոցա: Եւ զպատգամս՝ զոր նախ գրեաց առ նոսա շահն, երկիցս և երիցս կրկնեաց. և առաքեաց առ Լատասափ և առ մայրն նորա. զի թերևս կամ զԼատասափ կամ զմայրն և կամ զքոյրն ածցէ յիւր ձեռն՝ և ո՛չ կարաց:

Յետ երից անգամ դնալոյ և դալոյ պատգամացն՝ իբրև ո՛չ եկին, այնուհետև զերեսս իւր դարձուցեալ շահն դէպ յաշխարհն Վրաց. ժողովեալ զլօրս իւր չու արարեալ ի Սպահանայ ընդ իւր ունելով զխրատատուն չարեաց և զաշխարհաւերն զմովրով. և եկեալ ի Սպահանայ կամկար և հանդարտ դնացիւք հասին մինչև յերկիրն Ղարաբաղու ի քաղաքն Գանջայ. և անդէն զտեղի առեալ կացին զամառն: Եւ ասէր շահն ընդ մովրովին. «Արդ՝ անցին ի վերայ ժամանակք բազումք, ե՛րբ լինիցի զի տարցես զմեզ ի Վրացաստան»: Պատասխանեալ ասէր մովրովն. «Տակաւին համբերեա՛ զի արդ ևս ոչ է ժամանակ, և յորժամ եկեսցէ ժամանակն, ես ինքնին յուշ առնեմ քեզ գնալ անդ»: Եւ զայս վասն այն ասէր մովրովն թէ ոչ է ժամանակ՝ զի ամառն անցցէ և ձմեռն եկեալ ի վերայ հասցէ՝ և ծառք մայրեացն տերևաթափք լիցին, զի դիւրին լիցի զօրացն Պարսից ձիով խաղալ մտանել յաշխարհն Վրաց[40]: Այլ և ազգն Վրաց՝ որք փախուցեալք և ամրացեալք և գաղթեալք իցեն յամուր վայրս և ի փապարս և ի դժուարին տեղիս աշխարհին, ի խաւսեննէ ցրտոյ և ձեռն ձմերային ժամանակին, և ի նեղութենէ սովու և այլ կարեաց, ո՛չ կարասցեն տևել ցրտոյն և կալ յամրոցսն, այլ դարձցին ի բնակութիւնս իւրեանց ի ձիախաղաց տեղիսն, որպէս զի դիւրին լիցի զօրացն Պարսից յափշտակողաց և աւարչաց խաղալ ձիովք և առնուլ յաւարի զնոսա: Որ և առ յապայն կատարումն գործոյն ըստ օրինակի նախագոյն խորհրդեան նորա կատարեցաւ:

Իսկ ազգն Վրաց իբրև լուան զգալն շահին ի վերայ իւրեանց, սկսան մտախոհ լինել վասն եղից իրացն, և խորհեցան զմիաբանու-

3 Ա. *զի փխ քանզի*
10 ԲԳՆ *Շահաբաս մինչ էրն ի Սպահան*
11 ԲԳՆ *զաւերն*
16 ԲԳՊ *երից անգամաց*
17 Բն *աշխարհն*
19 Ա. *աշխարհաւերն չիմ և (եկեալ)*
21 Բ *գնոնզի*
22 Ա.Է *բազում*
31 ԲԳՊԵ *ձմեռնային*
32 ԲԳՆ *սովոյ*
35 Ա.ԲԳՆ *ձիօք*
39 ԳՊՆ *լինել* ԲՊ *միաբանութիւն*

թին առնել ընդ իրեարս երկոքին թագաւորքն. Լատասափ՝ որ էր ակր Բիֆիլիաս և Քաթլայ, և Թամրաղ, որ էր ակր Կախէթու և Գրիմայ, որպէս զի իրերաց օգնականութեամբ կարասցեն դիմակալել Պարսից: Եւ ի պատճառս այս՝ առարեցին Լատասափ և իւրքն ի Կախէթ՝ և կո-
5 չեցին զԹամրաղ ի Բիֆիլիս վասն միաբանութեան: Իսկ Թամրաղ՝ զի զվնաս բաժանման և վերկացութեան բազում անգամ կրեալ էր. նա և զքէիշա և զքշնամութիւն ազգին Պարսից՝ որ յոլով անգամ արարեալ էին նմա. զիաէր. Հոգով չափ չօժար էր ի միաբանութիւն: Վասն որոյ յարուցեալ ելին ի Բիֆիլիս. որոյ գալն եղև ուրախութիւն անպատմելի
10 Լատասափին և իւրոցն: Որ և առարին ուխտ և դաշինս լինել միաբան և մխիթարհոգիս. և պանձիս դնել ի վերայ իւրեանց՝ և մեռանիլ վասն անուանն Քրիստոսի[1]:

Յաւուրս յայսոսիկ, որ ելին Թամրաղ ի Տփիսիս, լրանեաք շաՀին զոր ինչ լուան և տեսին, գնացեալ տարան զՀամբաւն Շահաբասին:
15 Եւ կամաչօժար կամարարն անկելոյ արուսեկին Շահաբաս առեալ նիւթ ի նմանէ, նորագիւտ հնարս կործանման և երկպառակութեան առնէ թագաւորութեանն քրիստոնէից: Քանզի մինչ էր ի Գանջայ քաղաք գիտեղեալ իւրովն բանակաւ, սկսաւ ատել և առաքել թուղթս պատրանաց և խարէութեան, որպէս յառաջագոյն ի Սպահանայ. այնպէս և
20 այժմ ատէ. որ ի վերոյ ունէր ողջոյն, սէր և խաղաղութիւն, և ի ներքոյ՝ պատրանս և խաբէութիւն և նենգութիւն. գոնեա՛ զի յերից զմինն արկցէ ի ցանցս իւր. կամ զԼատասափ, կամ զմայրն, և կամ զքոյրն, և ո՛չ կարաց:

Եւ նորագիւտ հնարն այս էր. զի զթուղթն պատգամաց՝ զոր յայտ-
25 նի առաքէր, ընդ նմին ծածկաբար միւս այլ թուղթ ծածկեալ խորհրդոց և նենգութեանց գրէր առ Լատասափ և առ Թամրաղ ծածուկ ի միմեանց: Եւ առ Լատասափ գրէր թէ. «մի հաւատար դու Թամրաղիդ՝ և մի միաբանիր ընդ նմա՝ զի դա թշնամի քո է՝ և կամի բարեկամութեամբ դաւել և սպանանել զքեզ՝ և տիրել աշխարհին քում, որպէս ինձ ծանու-
30 ցեալ է դայս խորհուրդ. արդ մինչդեռ չես սպանեալ՝ փութացեալ դու սպան զնա և դու տիրեսցես երկրին քում և նորա. նա և ես քեզ օգնական եմ. եթէ զօրք պիտոյանան քեզ՝ և թէ գանձ. զի ինձ գոյ յօժարութիւն, զի դու տիրեսցես երկրի նորա»: Սոյնպէս և ըստ այսմ օրինակի գրէր և առ Թամրազն ծածուկ ի Լատասափէն. «Դու սպան զվա-
35 տասափ՝ և դու տիրեսցես երկու աշխարհին»: Երեք անգամ առաքեաց առ նոսա զայս թղթերն ղայտնին և զդաշտնին ի միասին. և Լատասափ և մայրն իւր ո՛չ ինքեանք գնացին, և ո՛չ զաղջիկն առաքեցին:

7-8 Ս. *արարեալք էին*
10 ԱՒ. *լինիլ*: Ս. *ուխտ և դաշինս*
11 Դ *մեռանիլ*
13 Բ *այս* ԳՆ *յայս և յաւուրս*
14 ԱԲԳՆ *շահին* փխ *Շահաբասին*
15 Ս. *զնիւթ*
18 Ս. *զթուղթս և թուխթս*
20 ԵՒ. *ի վերայ* Ս. *զողջոյն զսէր և զխաղաղութիւն*
21 ԲԳՆ *պատրանք*
25 Ս. *զթուղթ ծածկեցեալոց*
28 ԱԴ *ընդ զմա* Բ *բարեկամութեամբ*
29 Դ *սպաննեալ*
31 Ս. *զի փխ և (դու)*
32 ԲԳՆ *պիտոյանայ* Բ *գինձ*
33 ԲԳՆ *որ փխ զի*
34 ԲԴ *առ Թամրազ*
36 Ա. *գայսոսիկ թուղթս* ԲԳՆ *զայս թղթերս*

Իսկ զծածուկ թուղթըն՝ որ վասն միմեանց ընկալեալք էին Թամրաղ և Լատասափ՝ պահեալ ունէին առ ինքեանս. և տակաւին մտավարժ լինէին իմանալ զճշմարիտն և զսուտն։ Եւ ի խնամոցն Աստուծոյ երկոքեան թագաւորքն յայտնեցին զխորհուրդս զայս միմեանց, նա և ցուցին զթուղթըն՝ զոր առաքեալ էր նոցա շահն։ Եւ ի տեսանելն իմացան՝ և ծանեան առուգիւ զիշնամութիւն շահին՝ որ առ ինքեանս։ Եւ փոխանակ իշնամութեանն սէր անխզելի և բարեկամութիւն անքակտելի հաստատեցին ի միջի իւրեանց։ Վասն զի Լատասափ զքոյրն իւր՝ զոր խնդրէր շահն՝ նա ի կնութիւն Թամրազին. զի նախկին կինն Թամրազին մեռեալ էր։ Եւ արարին անդէն հարսանիս Թամրազին և քեռ Լատասափին՝ որում անունն էր Փարի[42]։ Յետ հարսանեացն՝ Թամրազ և Լատասափ գնացին ի Մցխիթայ՝ որ է աթոռ և պատրիարգարան իւրեանց, և կրկնակի երդուան, միաբան և միախորհուրդ լինել և պատերազմել ընդ Պարսից։ Եւ ի լինելն այսմ ամենայնի, թղթաբերքն Պարսից՝ որք յայտնի եկեալ էին, և լրտեսքն, որ ի ծածուկ, գնացեալ պատմեցին շահին. և նա ի խոր խոցեալ լինէր ի սիրտ և յոգի։ Զի ինքն քանիցս անգամ խնդրեաց զաղջիկն, և այսքան զօրօք վասն նորա եկն. ինքեան ո՛չ եառն, այլ եառն Թամրազին։

Կոչեաց շահն զմովրովն և ասէ ցնա՝ «Այս ամենայն զօրօքս ածեալ բերեր զմեզ մինչև ցայս վայր. և զաղջիկն, զորմէ ասէիր, ահա տեսեր զի ո՛չ եառն ինձ այլ Թշնամւոյ իմոյ, որ և ծառայից իմոց հազիւ թէ հաւասարիւ Արդ՝ ծագր և այսպն կատականաց արարեր զիս ամենայն աշխարհի. և եթէ ո՛չ տարեալ մուծցես զիս յաշխարհն վրաց, և ի ձեռս իմ զրաւեսցես զերկիր նոցա. գիտեա դու յանձն քո՝ զի չես մնալոց կենդանի. այլ յօդ յօդ բաժանելոց է մարմին քո ամենայն»։ Եւ մովրով նա պատասխանի՝ «Եթէ ո՛չ տարայց զքեզ յերկիրն յայն՝ այդպէս առնես. և թէ տարայց՝ զի՞նչ առնես»։ Ասէ ցնա շահն. «Ամենայն խորհրդական և նախկին նախարարաց իմոց բուն իսկ գլուխ՝ և նախապատիւ՝ և գերագոյն քան զամենեսեան դու ես լինելոց»։ Եւ խրատուէն մովրովի համբերեցին մինչև ի Դեկտեմբերի ամիսն, մինչ ի յաւուգ տօնին. որ եկեալ եհաս ձմեռնային ժամանակն՝ և ցուրտն սաստկացաւ. և եկեալ ձիւնն կալաւ զգլուխս լերանցն և զճանապարհս փախրատանն։ Եւ ի չամրոց մտեալ արքն՝ նեղեալք ի ցրտոյ իջին ի շէնս և ի գեղորայս. և տերևք ծառոցն թափեցան, որ ամենայն տեղի աչաց ակնարև տեսանելի եղև։ Ապա ասաց մովրովն ցշահն. «Արդ՝ ահա

1 Ա. զորս
7 ԲԳՆ թշնամութեան Ա. զսէր... և զբարեկամութիւն
9 ԳՆ նախկի
12 Ա.Է պատրիարքարան
13 Ա.Է լինիլ Գ միաբան միախորհուրդ
13-14 Ա.Է պատերազմիլ
14 Ա.Է լինիլն
15 Ա. էկեալք էին ԱԳ որք
16 Գ և ի յոգի
17 ԲԳՆ զաղջիկն
18 Ա. ոչ եառն, այլ Թամրազին
19 Է չիմ շահն։ ԱԲԳ և ասաց։ Ա. այսօքիւք ամենիւք
21 ԲԳՆ թշնամւոյ
23 Ա. ամենայնի
25 ԳՆ յօդ և յօդ
27 Է և եթէ տարայց քեզ
28 Ա. նախկնաց ԲԳՆ նախկի
30 Գ դեկտեմբեր
30-31 ԲԳՆ յաւաք ԱԳ տօնան
34 Է գիւղօրայս ԲԳՆ տեղիք
35 ԲԳԴՆ մովրով

այժմ գնացուք յաշխարհն վրաց՝ ըստ այժմ է ժամանակին». և չուեալ ի Գանձակ քաղաքէն եկին ի սահմանս Կախէից՝ որ է երկիր Թամբապին:

Եւ հանապարհ երկրին Կախէից ի մէջ ձորոյ մտանէր՝ ընդ որ անցանէին և ապա մտանէին յերկիրն. և էր այն նեղ և նուրբ և գժուարին վարել. իսկ երկու կողմունք ձորին բարձր և քարափք լերինք, և մացառուտ և բուռ մայրի, ընդ որ մարդ և ձի ո՛չ կարէին գնալ: Ձոր Թամբապ և Լաւասափ եկին բաղում գօրօք կալան զկիրճս ձորոյն՝ և կանգնեցին պարիսպ ամուր քարիւ և փայտիւ. և ի նեղսն կողմանէ չինեցին անկի պատեհապահ, ուստի ի նեղքս կալով ինքեանք պատեհապահեցին ընդ թշնամեացն՝ որք արտաքոյ:

Եւ բանակն Պարսից յարձակ վայրն հանդիպ ձորոյն բանակեալ էր: Իբրև տեսին թէ վրացիքն կալան զանցս հանապարհին, անճար եղեալ ի տարակուսի մնացին: Եւ շահն պարձեալ կոչեաց զմովբդ և ասացեալ նմա մահ. նա և մովբդն ինքն ևս մնաց ի տարակուսի: Եւ յետ երկուց աւուրց ասէ մովբդն շահին. «խորհեալ իմ պատ ի կողմն որք հանապարհ. բայց երկուց աւուրց հանապարհ հետի է ասէ. այլ և պիտոյ է կացնատուր և բահատուր և մրճատուր, որ զմայրին կատարեն և զպժուարին տեղիսն հարթեալ դիւրին»: Իբրև լուաւ զբանս զայս շահն մեծաւ ուրախութեամբ ցնծացաւ՝ և հրամայեաց զօրաց իւրոց առնուլ բաղում կացին և բահ և այլ ինչ գործի, և գնալ ի տեղին և բանալ հանապարհ. և նոքա գնացեալ կատարեցին զմայրին՝ և դիւրացին զդժուարին տեղիսն՝ և բացին հանապարհ. և եկեալ ծանուցին շահին թէ եղև զոր հրամայեցեր:

Եւ շահն հրամայեաց բանակին իւրոյ. զոր օրինակ մինչ ցայնժամ կազմեալ հարեալ կառուցեալ էին զվրանքն՝ և ուստ և բեռնակիր անասունքն, և օրտու բազաբչիք և այլ ամենայն ինչ, որպէս յառաջն կային, սոյնպէս կացցեն ի տեղիս իւրեանց. որպէս զի համարեսցին վրացիքն թէ տակաւին անդ են զօրքն Պարսից: Բայց միայն մարտիկ զօրքն Պարսից իւրեանց պատեհապահական դիմուքն և երիվարօքն պանծալ և թաքուն լինել գնացեալ, ընդ բացեալ հանապարհն մտցին յերկիրն Կախէից: Յայնժամ եկին պատեհապահական զօրքն Պարսից և գնացեալ ընդ նոր բացեալ հանապարհն մտին յերկիրն Թամբապին՝ և հասին ի շէնս և ի պիւղս. և սկսան կոտորել զազգն Վրաց անխնայ: Իսկ Թամբապ և Լաւասափ, որք նստէին զօրօքն Վրաց ի բերան ձորոյն, ո՛չ գիտէին զարարմունսն Պարսից. մինչ յանկարծակի տեսին զայր մի գլուխն և մարմինն վիրաւորեալ և հառաչն ամենայն արեամբ թա-

2 Ս. *քաղաքէ*
4 ԲԳԵ *հանապարհն*
6 Ս. *վայրերու, իսկ կողմունք ձորին*
8 Ս. *բազմօք*
9 Ս. *զպարիսպ* Ա. *ի ներսին*
10 Ս. *զտեղի*
11 ԲԳԵ *որ*
15 Ս. *զմահ*
16-17 Ս. *զի զկողմն յորմէ*
21 Ս. *զրագում* Ա. *զրահ և զայլ ինչ* ԲԳ *գնալ վին և գնալ*
22 Ս. *զհանապարհ*
23 Ս. *զհանապարհ*
26 Ա. *կառուցեալք էին վրանքն*
30 Ս. *պատեհապահականօք և զինունքն*
32 Ս. *պատեհապահականք*
34 Գ *գիօղս*
36 ԲԳԵ *զարարմունքն*

Քաւեալ, որ փախուցեալ ի սպանմանէն Պարսից և եկեալ զուժկան և համբաւաբեր վասն գալոյն Պարսից և մատնելոյն յերկիրն Վրաց: Եւ ի լսելն զայս Թամրապին և Լաւասափին՝ և որոց ընդ նոսա, ափշեալ յիմարեցան՝ և ո՛չ այլ ինչ կարացին առնել. ո՛չ սուացուածք կամ ապրանք բառնալ՝ և բնաւ ոչինչ: Այլ և իւրաքանչիւր ոք զընտանիս և զկարեւոր սիրելիս իւր առեալ ընդ ինքն հապճեպ տագնապաւ աճապարեալք ի բաց փախչէին, զի մի անկցին ի ձեռս Պարսից: Այլ՝ յայսմ պատճառէ Թամրապն և Լաւասափն ատեն փախուցեալք անկանէին ի Թիֆլիս, և անտի ի Գօրի. և անդ ևս ո՛չ կարացին կալ, այլ ընդ ճանապարհն Կոլբայոյ անցին զլեառն Կովկաս՝ որ է Նալբուղ սարն և գնացին ի Պաշիաչուխի[43] աշխարհն: Վասն զի մայրն Լաւասափին դուստր էր Պաշիաչուխի թագաւորին. վասն այսորիկ Թամրապն և կինն իւր՝ և Լաւասափ և մայրն իւր, և այլ ընտանիք սոցա փախուցեալք ի Պաշիաչուխ՝ զերծան ի ձեռաց Պարսից:

Եւ գօրքն Պարսից՝ որ ի միւս կողմանէ եկեալ մտին յերկիրն Թամրապին, եկին մինչև ի բերան ձորոյն, զոր կապեալ էին Վրացիքն, քակեցին զկապն՝ և բացին լայն և ընդարձակ ճանապարհ, ընդ որ եկին բանակն Պարսից՝ մտին յերկիրն Թամրապին. և անդէն բանակեցան և կացին մինչև յաւուրս յիսուն՝ և ո՛չ ելին յերկրէն: Եւ այսքան աւուրս՝ որ կացին անդէն, թէ զինչ գործեցին, բերան ո՛չ բաւէ խօսել և ո՛չ լեզու ճառել, զու մտօք խորհեալ խելամուտ լեր. թէ զորքան զանպարտ անձինս բրիստոնէից սրախողխող արարեալ վիրաւորեցին կամ թէ գլխովին իսկ սպանին. և զանմեղսն գերեցին և խայտառակեցին. և զինչս և զսուացուածս յափշտակեցին, և զշինուածս հրդեհեալ այրեցին և քանդեցին, և զեկեղեցիսն քակեցին, զսեղանն սուրբ՝ և զնշան սրբոյ խաչին կործանեցին: Եւ զգերեալսն պահէին ի մէջ բանակին առ իւրեանս. և պէսպէս վշտօք տառապեցուցանէին՝ ցրտով և մերկութեամբ՝ քաղցիւ և ծարաւով՝ և այլ բազում կերպիւ:

Եւ յորժամ եմուտ Շահաբաս յերկիրն Կախէթու և ետես թէ փախուցեալք են Թամրազն և Լաւասափն և մնաց երկիրն և ժողովուրդքն ի ձեռս իւր: Յայնժամ հանճարեղն ի խորհուրդս չարեաց, և այլ ևս աշխարհաւեր հնարս ներգործեաց, քանզի հրամայեաց յամենայն գաւառս և ի գիւղս Կախէթու մունետիկք շրջեսցին՝ և քարոզեսցեն բարձր ձայնիւ ի բազում աւուրս՝ և ասասցեն, թէ «Հրաման է ի հզօր և ի խաղաղասէր և յաշխարհաշէն թագաւորէն Շահաբասայ, զի ամենայն բնակիչք աշխարհիս Կախէթու, եթէ իշխանք, եթէ հեծեալք, եթէ արուես-

5 ԱԲԳԴՆ չիմ և *(իւրաքանչիւր)* ն զընդանիս
6 ԱԴ *ինքեանս*
8 Ա. *յայսմանէ*
10-11 ԳՆ *Կովկաս*
11 Գ *Պաշիաչուղի*
13 14 ԲՆ *ընդանիք*
17 Ա. *զլայն*
18-19 ԲԳՆ *բանակեցան կացին մինչև*
19-20 Ա. *յայսքան ... զոր կացին Գ յայսքան*
20 Ա՝ *խօսիլ*
21 ԱԲԳՆ *մտօքդ՝ խ անպարտ*
22 ԱԴ *զանձինս*
24 ԳԴ *զինչ*
28 Ա *բազոմաւ*
29 ԳՆ *Շահաբասն*
30 ԲԳՆ *ժողովուրդն*
32 Ա. *յամենեսեան*
33 ԱԲԳՆ *մունետիկք Ա բարձու*
35 ԲԳՆ *ի յաշխարհաշէն Ա. ամենեքեան*

տաւորք, եթէ ամրոյն ժողովուրդք, և ամենայն որ, որ եկեալ ամրացեալ է ի լերինս և ի մայրիս, ի բերդս և յամենայն ամուր տեղիս, պարզին, և եկեսցեն ի տեղիս և ի բնակութիւնս իւրեանց՝ և կացցեն ի խաղաղութեան և մի կրճատցեն զերկիւղ և զկատակածանս ինչ ի զօրացն Պարսից. քանզի հրամայեալ է նոցա թագաւորն. մի զոք նեղել՝ և մի զոք խուճել ի ժողովրդենէ աշխարհիս, որք զան ի հնազանդութիւն շահին՝ և լինին շահիսէվան, ո՛չ լինի նոցա վնաս ամենևին, այլ կեան ի խաղաղութեան: Իսկ որք յամառանալք դիմադարձ լինին հրամանաց թագաւորին, տապարկոց է թագաւորն ի վերայ նոցա զօրս բազումս, որք զամբոցն նոցա առնուլ տեղեացն, և զինքեանս սպանցեն, և զընտանիսն զերեսցեն, և զինչան յափշտակեսցեն: Արդ՝ եկէք ի յամբոցաց, և եկէք ի հնազանդութիւն, և լիցուք շահիսէվան, և կացէք ի խաղաղութեան: Եւ յիշխանաց և ի նշանաւոր արանց ով որ յառաջեալ վաղվաղն գայցէ, շնորհելոց է նմա թագաւորն զփառս և զպատիւ՝ և զարարիս բազումս, և զպետութիւն իշխանական»:

Իսկ բնակիչք երկրին Կախեթու իբրև լուան զբանս քարոզութեան մունետկացն, ոմանք պատրաստեալք հնազանդեցին, եկին և եղեն շահիսէվանս: Ոմանք չերկիւղ սպանութեան և զերութեան եկին և եղեն շահիսէվանս: Ոմանք վասն բազմօրեայ կեցոյն անպէն ի մէջ երկրին Պարսից, անճար մնացին, եկին և եղեն շահիսէվանս: Ոմանք տեսին զի զայս անուն ամբոց առին, և զայն անուն ամբոց առին, և արարին զսպանութիւն և զզերութիւն ընդ բնակողաց ամրոցին, ահաբեկ և երկիւղալից եղեն, թէ մի գուցէ և ինքեանց ևս այնպէս պատահիցի, վասն որոյ իջեալ յամրոցաց՝ եկին և եղեն շահիսէվանս:

Այլ և հրամայեաց շահն վասն շահիսէվան եղելոցն զի բնակիցուսցեն զնոսա յիւրաքանչիւր շէնս և ի տեղիս, և յատուկ և փոչխարութիւնամբ մեծաց բարեաց իսօսեցին ընդ նոսա. և զանուանս նոցա զարանց և զկանանց, զուսաերաց և զդստերաց, և ամենից ընտանեաց գրեցին ի քարտիս, և առ ինքեանս պահեցին Պարսիկք: Այլ և կացուցին ի վերայ նոցա պահապանս ի զօրացն Պարսից յամենայն տեղիս՝ զի մի գուցէ ոք ի նոցանէ փախիցի յայլ ուրեք: Բայց խաբէին զնոսա և ասէին. «վասն այնորիկ կարգեմք ձեզ պահապանս՝ զի մի ոք ի Պարսից արանց զձեզ նեղիցէ, կամ զինչս ձեր յափշտակիցէ»: Եւ ով ոք եկն ի շահիսէվանութիւն, այսպէս արարին որպէս պատմեցաք:

3-4 Ա. կացցեն խաղաղութեամբ զերկիւղ և զկատակածանս ինչ.. մի կրճատցեն Գ Նոցա-ցեն խաղաղութեամբ
4 ԲԳԴՆ երկիւղ ԲԳԴՆ կատակածանս
6 ԲՆ խըլել Գ խուճ
7 ԱԳ շահիսէվան ԳԴՆ վնաս նոցա Ա. այլ կայ Գ կեայ
8 ԲԳՆ յամառեալ
10 ԲԳ որ
10-11 ԲՆ զընդանիսն
14 ԲԳԴՆ փառք և պատիւ
15 ԲԳԴՆ պարգեւք բազում և պետութիւն
17 Ա.ԲԳԴՆ մունետկացն Բ պարտեալք
19 Ա. կալոյն
19-20 ԱԳ պարսից
22 ԲԳԴՆ ազանութիւն և զերութիւն
22-23 ԱԳՆ երկիւղալից
23 ԱԳ չիմ թէ
24 ԲԳԴՆ իջեալք Գ յամբոցացն ԱԳ չիմ և
28 Ա. արանց Ա.Ն կանանց
Ա.Ն ուսաերաց և դստերաց Բ ընդանեաց ԳՆ և զամենայն ընդանեաց
30 Ա. յամենևեսեան
31 ԲԳԴՆ փախիցի
32 Ա. զպահապանս

Եւ որք ո՛չ եկին, այլ մնացին յամուրս իւրեանց, եւին Պարսիկքն ի վերայ ամրոցաց նոցա, և զբաղում աւուրս սէս սէս հնարիւք մարտ եղեալ ընդ ամրոցացն մինչև յաղթեալ առնուին, և սուր ի վերայ եդեալ անխնայ կոտորէին, իբրև պաշտօն բարի մատուցանել Աստուծոյ հա-
5 մարէին*, ըստ վկայութեան Տեառն: Ապա զինչս և զստացուածս կողոպտեալ յաւարի առնուին, և զմնացեալ կանայս և զմանկունս նոցա գերեալ ածէին ի բանակն իւրեանց: Եւ որպէս ասացի, յաւուրս յիսուն կացեալ անդէն, ո՛չ մնաց ամրոց՝ որ ոչ առին. և կամ տեղի, որ ոչ աւերեցին, և միաձայնեալ յաւեր և յապականութիւն դարձուցին զամե-
10 նայն և գյուսիսի և զբազմամարդ աշխարհն Կախէթու և Գրիմու:

Եւ գԿախէթու և գԳրիմու եկեղեցեաց անօթն և զարբութիւնսն, խաչ՝ և սկիհ՝ և աւետարան՝ և բուրվառ՝ և շուրչառ՝ և զայլ անօթս և զարբութիւնս, որք էին մեծաձախք և ծանրագինք, և զանազան յօրինուածովք ակամբք և մարգարտովք յօրինեալք, հրամայեաց շահն վառ-
15 նոցա՝ զի մի խորտակեսցին, այլ առնել ի քաղաքն Սպահան և դնել ի գանձարանն արքունի. և կայ անդէն ի գանձարանին արքունական մինչև ցայսօր. որ բազում ի մերոց ազգացս վկայեցին՝ զոյով սկանաւանաք այնց արբութիանց: Այլ և զանկար պատմուճանն Քրիստոսի ընդ այսց արբութիանցս անտի տարեալ են, և կայ ի նոյն գանձարանին
20 ի Սպահան քաղաքի. որ դեռ ևս լոյս վառեն առաջի նորա, և այսմ իսօսիցս առնեն, ինքեանք իւրեանց աչօքն տեսեալ էին, և էին արք հաւատարիմք:

Յետ բազում աւերութեանց աշխարհին այնորիկ չունալ անտի և եկեալ ի սինօտ երկուց աշխարհացն Կախէթու և Քառթլայ՝ և անդ բա-
25 նակեցաւ շահն. և հրամայեաց արար իւրոց զօրացն մի նեղել և մի խռովել զբ ի բնակչաց աշխարհին Քառթլայ, և զօրացն Պարսից, եթէ պիտոյացայի իւր ինչ՝ որ կարիք է մարդկան և անասնոց, գնով գնեցեն ի պատառականացն. և ըստ կամաց վաճառողին տացեն զգինն: Այլ և հրամայեաց շահն՝ զի եկցեն մունետիկք և շրջեցցին յամենայն գա-
30 ւառան Քառթլայ՝ և աղաղակելով քարոզեցցեն թէ «Հրամայեաց է ի մեծ և յաշխատասիրաշէն թագաւորէն Շահաբասայ, զի աշխարհս Քառթլայ ամենայն պատառականօք իրովք՝ իշխանօք և ռամկօք իրովք ի խաղաղութեան և յանպորրութեան կացցեն. և ամենայն որք եկեալ են ի բերդ

* *Առակք Սոլ., Ա, 7*

3 Ա. *զսուր*
6 Գ *զմանկտիս*
8 ԱԳ *զոր* Ա. *զանդի, զոր* Գ *զոր*
11 ԱԳ *չիք զկախէթու և զԳրիմու* ԲԳՆ *առնթքն* ԲԳՆ *արբութիւնքն* Գ *արբութիւնս*
12 Ա. *զխաչ և զսկիհ, և զաւետարան և զբուրվառ և զշուրչառ*
12-13 ԲԳԴՆ *այլ անօթք և արբութիւնք*
13 Ա. *զանազանիւք*
15 ԱՒ *տանիլ* ԲԳԴՆ *Ասպահան*
16 Ա. *արքունականի*
17 Ա. *որք*
17-18 Բ *ակամնատես*
19 ԱՒ *ընդ այլոց արբութեանց* Ա. *տարեալք են*
20 Ա. *զլոյս*
21 Ի *ինքեանք և իւրեանց* Ա. *տեսեալք*
23 Ա. *բազմաց*
24 Գ *անդի*
25 Ա. *զհրամայեաց* ԲՆ *խրել* Գ *խռել*
26 Բ *զոր և բնակչաց*
27 ԲՆ *ինչք*
29 Ա. *յամենեսեան* ԲԳՆ *մունեդիկք*
Ա. *ամենայնիւք*
32 Գ *և իշխանօք* ԲԳՆ *բոամկօք*
33 Ա. *եկեալք են*

և յամուր տեղիս, վասն երկիւղի զօրացն Պարսից, այսուհետև մի երկիցեն, և մի կասկածանս ինչ կրիցեն. այլ իջցեն ի բնակութիւնս իւրեանց՝ և կացցեն ի գործս իւրեանց և ի շինարարութիւնս. և եղիցի սէր և խաղաղութիւն, և երթևեկութիւն ի մէջ ազգին Պարսից և Վրաց. քանզի զաշխարհս Քառթլայ իմ պիտամ, և ո՛չ աւերեմ վասն իմ և վասն լաւասափայ թագաւորին. վասն զի զնա ինձ որդի, և եղբայր և բարեկամ պիտամ. և յորժամ պակաս նա զնորին աշխարհն ինքն յանձնելոց եմ՝ և նա զնամ յաշխարհն իմ: Արդ եթէ կամեսցի լաւասափ թագաւորն և պակաս՝ այսպէս առնեմ, և թէ ո՛չ պակաս աւասիկ մովրովն՝ որ է յաշխարհէս Քառթլայ և յապգէն Վրաց՝ որ և ահա ընդ մեզ է, զաշխարհս Քառթլայ տամ մովրովին՝ և նա զնամ յաշխարհն իմ»:

Այլ և պատուիրեաց շահն մովրովին, զի և նա յիւրոց ծառայիցն առաքեսցէ յամենայն տեղիս աշխարհին՝ զի ըստ սմին օրինակի խօսեսցին առ ամենայն բնակիչս գաւառացն առ ի հաւատացուցանել զնոսա՝ նա և անոտի և պատրուակաւ յուսով զմովրովն ևս խաբեաց ասելով. «լաւասափն թէ պակաս և թէ ոչ՝ քեզ տամ զիշխանութիւնն Քառթլայ», որ և ծառայք մովրովին այնպէս խօսէին ընդ գաւառականացն: Եւ այսպիսի օրինակաւ՝ սուտ և պատիր բանիւք խաբեցին զամենայն գաւառականան՝ որ ոչ պատերազմաւ և ոչ խռովութեամբ, այլ սիրով և խաղաղութեամբ ածին զամենայն գաւառականան ի հաւանութիւն՝ և իջուցին յամրոցացն, և բնակեցուցին ի դիւղօրայսն: Ուստի լցեալ լինէր ամենայն պիտոյք բանակին Պարսից՝ մարդկան և անասնոց, և ոչինչ կողմանէ ունէին վատնդ ինչ զօրքն Պարսից: Այլ յամենայն կողմանէ կային ի խաղաղութեան և յանդորրութեան:

Բայց բնակիչք աշխարհին Քառթլայ երկիւղիւ կասկածանս կրէին՝ եթէ դուցէ ո՛չ պակաս լաւասափն և ի պատճառ այնմ քինու, հրամայեսցէ շահն իւրոց զօրաց աւարել և կիրել զաշխարհ սէրութեան լաւասափու. և զայս բան զօրքն Պարսից ևս ասէին և խօսէին ընդ գաւառականացն. այլ և ասէին՝ եկայք դուք ևս զրենցարուք շահիսէվան՝ զի մի մատնիցիք ի գերութիւն, որպէս զժողովուրդն Կախէթու՝ զի որք գրեցան շահիսէվան, ոչ մատնեցան ի գերութիւն: Եւ յայսմ պատճառէ բազումք յաշխարհէն Քառթլայ եկին և գրեցան շահիսէվան. և որք գային ի շահիսէվանութիւն՝ զիւրեանց և զամենայն ընտանեաց անուանս գրէին ի քարտիսի, և առ ինքեանս պահէին Պարսիկք: Եւ զգրեալ շահիսէվանն բնակեցուցանէին յիւրաքանչիւր տեղիս՝ յուսով մեծագոյն բարեաց և խաղաղութեան:

9 Գ *եթէ* փխ *թէ*
13 Ս. *յամենեսեան*
14 Ս. *ամենեսեան*
15 Ս. *պատրոպականաւ*
16 ԲՆ *զիշխանութիւն*
18 Ս. *այսպիսեաւ* Ս. *սոսվք*
18-19 Ս. *զամենեսեան*
20 Ս. *զամենեսեան*
21 Ս.Բ *զիւղորեայսն* Գ *զիղորայսն* ԴՆ *զիւղորայսն*
23 Ս.ԲԳԴՆ *վատնդ* Է *չիմ ինչ*
23-24 Ս. *յամենայնէ*
26 Ս. *քինոյ*
27 Գ *զօրացն* ԲԳՆԷ *յաւարել և ի գերել* Գ *սէրութեանն*
29 ԲԳՆ և *զուք*
31 Ս. *յայսմանէ*
33 Ս.Է *իւրեանց և ամենայն* ԲԳՆ *ընդանեաց*
34 Ս. *զանուանս* ԴՆ *պարսիկքն*
36 Ս. *մեծագունից*

Եւ մինչ նստեալ կայր շահն ի մէջ սահմանի երկուց աշխարհացն՝ արար միւս ևս նոր հնարս. քանզի զմի ոք յիւրոց խորհրդակցացն՝ որ էր մեծագոյն իշխան և փառաւոր նախարար՝ որում անունն էր Սարու խօջայ՝ կարգեաց զնա հրեշտակ խաղաղութեան. և սիրոյ նամակաւ առաքեաց ի Պաշիաչուխ առ Լաւասափ. և գիր պատգամացն էր ըստ այսմ օրինակի։

«Յարեաց արքայէ Շահաբասէ բազում սիրով ողջոյն հասցէ արքային Վրաց Լաւասափու. բազում անգամ գրեցաք առ քեզ սիրով՝ և ցուցաք զմեր սրտի բարեկամութիւնն որ առ քեզ, բայց դու ո՛չ անսացեր և Տաւատացեր բանից մերոց։ Արդ՝ ահա ի գործոյն ի միտ ա՛ռ և Տաւատաց որպէս և տեսանես զի վերկիրն Թամրազին աւերեցի. իսկ զքոյն ահաւասիկ շէն և ամբողջ պահեալ եմ վասն քո. և սպասեմ գալըստեան քո։ Արդ մի դանդաղիր ի գալ. և մի անմիտ և անհանճար խրատատուաց լսեր. և քեզ ի թագաւորութենէդ զրկեր, քանզի ոչ ունիմ ոխս և նենգութիւն յիմում սրտի ի քոյդ կողմանէ, որպէս և դու ոչինչ բնաւ վնաս գործեալ ես առ իս։ Այլ զգալն քո յաղագս այնորիկ խնդրեմ, զի որպէս նախնեօքն մերովք էր միաբանութիւն ի մէջ երկուց ազանց, սոյնպէս կամիմ զի և ի մեր ժամանակս լիցի. և մեք զամենայն կողմս հիւսիսային՝ որ յայսկոյս է գետոյն Երասխայ, յանձնեսցուք ի քեզ. զի դու լիցիս վերակացու և հրամանատար ի վերայ ամենայն իշխանաց կողմանցս այսոցիկ. որպէս զի քո զայս կողմս հոգալով՝ և մեք անհոգ եղեալ զմիւս կողմանսն հոգասցուք և թշնամեաց զդէմս կալցուք. ողջ լեր»։ Զայս թուղթս գրեալ ետ ցՍարու խօջային. և այլ բազում բանս և հնարս խարդախութեան՝ զոր ամբարեալ ունէր յիւրում սրտին՝ բանիւ պատուիրեաց նմա. թէ որով հնարիւք և իցէ հաւանեցուսցէ զԼաւասափ գալ առ շահն։ Իսկ Սարու խօջային գնացեալ ի Պաշիաչուխ՝ յանդիման եղեալ Լաւասափու, մատոյց զողջոյնն և զթուղթն. իբրև ընթերցան զթուղթն՝ գիտացին զի ամենայն բանքն պատրանք են. ո՛չ հաւանեցան թէ՛ Լաւասափն՝ թէ՛ մայրն՝ թէ՛ քոյրն՝ և թէ Թամրազն։ Թէպէտ Սարու խօջային բազում և զանազան կերպիւ յորդորէր զԼաւասափ, սակայն ո՛չ հաւատացին։

Զկնի աւուրց ինչ՝ պատասխանի արարին բանից շահին՝ ըստ այսմ օրինակի։ «Թէ ճշմարիտ է բանքն քո՝ և սուտպիւ կամիս, որ ի մեր մէջն բարեկամութիւն լինի, ահաւասիկ նշան սիրոյ քո և խաղաղութեան այն լիցի, զի դու շէն և ամբողջ թողցես զաշխարհն մեր և ժողովուրդն մեր յիւրաքանչիւր տեղիս կացցեն և դու փոխանակ քո ի քոյդ իշխանաց զմի ոք թողցես այդր՝ որպէս զի զամենայն սէր և զմիաբանութիւն և զդաշնադրութիւն, զոր դու կամիս, միջնորդութեամբ

2 Ա. *դնոր*
3 Ա. *որոյ անունն*
7 ԱԲԳԴԵ *Արևաց* Ա. *յարքայէ*
11 ԱԴԵ *աւարեցի*
14 ԱԲ *խրատատուաց* Բ *լսել*
15 Ա. *դոխս և գննգութիւն*
19 Ա. *կողմնս*
21 Ա. *ամենից* Բ *կողմանս*
22 ԲԳԵ *չիմ և (մեք)* Ա. *կողմնս* Բ *կողմանս*
22-23 Դե *գթշնամեաց*
28 ԲԳ *որ փխ զի*
29 ԲԳԴԵ *Լաւասափ*
30 ԲԳ *չիմ և* Դ *Թամրազ*
Ա. *խօջային բազմաւ և զանազանիւ*
32 Ա. *պատասխանի*
38 ԲԳԴե *միաբանութիւն և դաշնադրութիւն*

նորին հաստատեցուք ընդ քեզ. և դու ելեալ յաշխարհն մերմէ գնացես. և մեք եկեալ տիրեցուք աշխարհին մերոյ՝ և կացցուք ընդ քեզ ի սէր և ի միաբանութիւն. ողջ լիր»: Յետ բազում հնարաւոր խօսից՝ Սարու խօջային իբրև հաւս ել ոչ հաւատացին. առեալ պիուղին Լաւասափ՝ և եկեալ առ շահն ծանոյց նմա զամենայն բանս և զհաստատուն միաս նոցա:

Յետ լսելոյ Շահաբասին զայս բան պատասխանուց, չուեաց ամենայն բանակաւն և եկեալ ի վերոյ բան գԴօբի ի վերայ ճանապարհին, որ գնայ ի Պաշիաչուխ, և անդ ի վերայ ճանապարհին բանակեցաւ: Պատճառ յայսմ տեղւոջ բանակելոյն այս է՝ զի թէ որ յապղէն վրաց՝ իշխան կամ ռամիկ՝ թէ կամիցի փախչիլ և գնալ ի Պաշիաչուխ, մի կարասցէ գնալ:

Եւ ասաի ևս առաքեաց շահն զՍարու խօջային կրկին անգամ առ Լաւասափ բանիւ և դրով՝ զի թերևս պատրեալ դայցէ և ո՛չ եկն:

Յաւել երրորդ անգամ առաքել զնոյն Սարու խօջային առ Լաւասափ՝ և ոչ եկն:

Եւ ի բազում դալոյն և գնալոյն ձանձրացան Լաւասափ և իւրքն. յայսմ ի վերջին նուագիս գալոյն՝ արարին զործ անարգանաց ընդ Սարու խօջային՝ զի մի ևս առաքեսցէ առ նոսա շահն հրեշտակ: Եւ անարգանաց զործն, զոր արարին այս էր՝ զի զամենայն ինչս նորա յափըշտակեցին, և բնաւին մերկացուցին ի զարդուց և ի պինուց, ի հանդերձից և յերիվարաց, մինչ զի և զջորին ևս զոր ինքն հնծեալ էր, առին. և զինքն հետևակ արձակեցին ի գնալ, և պատուիրեցին մեծաւ սպառնալեօք մի՛ ևս յաւելուլ ի գալ և այսպիսի անարգութեամբ Սարու խօջային եկն առ շահն: Եւ շահն երկայնամտեալ համբերէր ի տեղւոջն. և մտավարժեալ խոկայր ի խորհուրդս չարեաց և Էննդութեան Լաւասափին և Թամրազին:

Մինչ շահն այսպէս վարանեալ կայր՝ և ո՛չ գտանէր նէս իրացն, ի սոյն աւուրս այր ոմն ի քաղաքէն Թիֆխոյ գործօնեայ չարեաց՝ և որդի անիծից՝ շարժեալ ի դիւաց ըստ ապերջանութեանն սատանայի, եկեալ ի Տփխիսոյ և եկն ի բանակն արքունի՝ և ծանոյց շահին, թէ խնդիր է սէրութիւն քո բերել վաւասափ. արդ եթէ սուտիւ կամիս և վնաս ոչ առնես, ես գնացեալ ածից զնա առ քեզ: Եւ ի վերոյ այսմ բանի առնն, մեծ պարմացումն կալաւ զշահն. հարց ցայգն թէ դու զիա՞րդ կարես բերել զնա. և այն ասաց. «Մեք ապրականք եմք Լաւասափին, քանզի նա ինձ սան է ի կնքաւորութեան կողմանէ. և ի մէջ մեր մեծ

3 Ա.ՈՊ ի միաբանութիւն
Ա. Յետ բազմաց հնարաւորաց
5 Ա. զամենեսեան
7-8 Ա. զամենայնիւ
10 Ա.Պ այս էր
11 ԲՊԼ բռամիկ... փախչիլ
13 Ա.ԲՊԼ կրկնակի փխ կրկին անգամ
14 Բ պատրեալ
15 Է երկրորդ անդամ
18 Է յայսմ վերջին նուագիս
20 Ա. զգործն Ա. զամենեսեան
24 Ա. առ ի գալ... այսպիսեաւ
24-25 Ա. խօջային
28 ՈՆ այսպիսի Ա. վկս
29 Է գործունեայ
30 ԴՆ ապերջանութեան
33-34 Ա.Է այսր բանի
35 Բ ապրական եմք
36 Ա. զմեծ

հաւատարմութիւն ունիմք առ միմեանս. վասն որոյ պիտի մի նա հաւատայ բանից իմոց: Իսկ շահն ի վերայ այսմ բանի անպատում ցընծութեամբ լցեալ եղև. մի գուցէ ղոր ինքն բազում աշխատութեամբ ջանայր՝ և ո՛չ լինէր. և որում ի յոլով ժամանակաց ցանկայր և ոչ հասանէր, արդիս յոյժ դիւրութեամբ լինի. վասն որոյ խոստացաւ առնն այնմիկ բազում պանձս և բազում պարգևս՝ և բազում ևս փառաց հասուցանել, եթէ բերցէ վաւաշափին:

Իսկ չարաբաստ այրն այն վաւաշուէր՝ որ եղև պատճառ կործանման թագաւորութեանն քրիստոնէից, գնացեալ ի Պաշխաչուխ առ Լաւասափ և առ Թամրազ՝ և առեալ բազում խօսիցս ընդ Լաւասափին հաւանական և մեղկացուցիչ բանիւք, մինչ որ թուլացոյց ի պնդութենէ զմիտս նորա: Բայց Թամրազ՝ և մայր և քոյր Լաւասափին՝ և ամենայն հաւատարիմք նոցա ո՛չ հաւանէին բանից առնն, այլ քամահէին, քանզի պիտէին առուգիս, եթէ կախարդաբար հնարքն է շահին: Բայց այրն սատանայաբնակ՝ որպէս զօձն նենգի՝ հակեալ դարձոյց զմիտս Լաւասափին գնալ առ շահն: Իսկ մայրն Լաւասափին, և քոյրն, և Թամրազն և իշխանքն, և ամենայն բարեկամքն լային արտասուօք և ողբային, և ասէին. «Մի մատներ զքեզ ի ձեռս թշնամւոյ քո, զի նա քո թշնամի է և ոչ բարեկամ. և ի կորուսանել զքեզ ջանայ»: Եւ Թամրազն ասէր. «Մի հաւատար անհաւատիդ այդմիկ և խորամանկ դաղանիդ, զի գա զկորուստն մեր ջանայ»: Իսկ միաբ Լաւասափին՝ բանից չարեաց արբանեակ առնն առաւել հաւանէր, քան թէ բանից բարեկամաց իւրոց: Եւ զայս առնէր ամենեցուն պատասխանի՝ թէ ահաւասիկ շահն եկեալ և նստեալ կայ ի մէջ մերոյ երկրին, և խնդրէ զիս առնել խաղաղութիւն. և թէ ոչ գնացից, զամենայն երկիրն աւերեալ ապականէ և գերեվարեցիան քանդէ, և զքրիստոնեայսն սպանանէ, և գերէ[44], և այս ամենայն լինի ի պատճառս իմ. քան թէ կեցից ի ժամանակս ինչ խղճմտանօք և այնքան անձանց պարտական, լաւ է ինձ գնալ առ շահն և զաշխարհն ամենայն ազատել. զի մի ևիցի իմով պատճառաւ աւերումն աշխարհի. յանդգնեալ յԱստուած գնամ առ նա ուղղութեամբ, և անդէն զինչ և պատահեսցի ինձ, եթէ մահ և եթէ կեանք, եղիցի կամք Տեառն օրհնեալ:

Արդ՝ այսպիսի բանիւ զգուշացեալ խելօք ոչ լաւ Լաւասափ բարեկամաց իւրոց, այլ հաւատաց բանից և երդման շահին, եկեալ ի Պաշխաչուխէն գալ առ շահն[45]: Եւ յորժամ բերին զաւետիս գալստեան նորա առ շահն՝ ո՛չ գիտէր թէ որով օրինակաւ ցնծացէ սիրտ նորա:

Եւ յորժամ եկեալ Լաւասափ մերձ եղև բանակին Պարսից շահն ինքն եկեալ ընդ առաջ նորա ամենայն իշխանօք և զօրօք, և ի տեսա-

2 Ն. *այսր* փխ *այսմ*
4 Ա. *ի յոլովից* Դ *ի յօլով*
6 Ա. *զբազում պանձս և զբազում պարգևս*
8 Ա. *վաւաշուէր* ԲԳՆ *վաւաշըէր*
9 ԲՆ *Բագաւորութեան*
9-10 Բ *առ Լաւասափն և առ Լաւասափըն*
10 ԱԴ *յաւուրս*
11 Ա. *հաւանականաւ և մեղկացուցչաւ բանիւ* ԱԴ *պնդութենէ*
12 Ա. *ամենեքեան*
17 Ա. *ամենեքեան*
24-25 Ա.Ն *պիտպղութիւն*
36 Ն *նգանակաւ* փխ *օրինակաւ*
38 Ա. *ամենայնիւք*

նելն միմեանց սիրով և խնդութեամբ և բազում շուք դնելով ողջոյն տային իրերաց։ Իսկ որ շահն էր ցնծայր ի սիրտ և յոգի իւր, զի մեծ եղև նմա օրս այս, քան զամենայն աւուրս կենաց իւրոց. զի կատարումն եղև չար կամացն, զոր ի բազում ժամանակաց բազձայր։ Եւ որպէս սովորութիւն է խորամանկ և օձաբարոյ ազգին Պարսից, և մանաւանդ այս շահիս՝ բազմահնար վիշապիս, զառաջինն՝ բազում սիրով և մեծարանօք ընկալաւ զնա. և հանապազ աւուր և անուտի պատրաստական բանիւք ըստ հաճոյից կամաց նորա խօսէր, մինչև համբաւն այնպէս տարածեցաւ յամենայն աշխարհն վրաց՝ թէ շահն, որ խնդրէր զևաւտափ, ո՛չ վասն այլ ինչ պատճառի էր, քան թէ վասն սիրոյ և միաբանութեանն։

Ապա չունալ անուտի իրով բանակաւն շահն գնաց ի Տփխիս, տարաւ ընդ իւր և զևաւտափ՝ և պահէր զնա իւր հաւատար մեծաւ փառօք, և հանապազ խօսէր ըստ ախորժակաց մտաց նորա՝ բանս հաճոյականս նմա, և զինքն հաւատարիմ ցուցանէր նմա[46]։

Այս ևաւտափ՝ ի ժամանակին յորում նոր նստեալ էր թագաւոր, և զկնի ամաց ինչ, և չորս և հինգ ամաւ յառաջ քան զշահի գալն, եղև երբեմն ի կարգս զրուցաց պատմութիւն զպատկէն ևաւտափիս զՍիմոն խանէն, զոր ըմբռնեցին Օսմանցիք, տարան ի Ստամբօլ սպանին և անդէն թաղեցին[47], որոյ վերայ նոցա արիւնն ևաւտափին՝ և ըզձացաւ առ ի բերել զնշխարս պապուն իւրոյ զՍիմոն խանին և ի հայրենի գերեզմանատունս իւրոց՝ թաղել ընդ այլ ևս նախնեացն և ընտանեաց իւրոց։ Եւ իբրև տեղեկացեալ եգիտ զարս ոմանս՝ որք գիտէին զտեղին յորում թաղեալ կայր նշխարք Սիմոն խանին ի քաղաքին Կոստանդնուպօլսի։ Եւ իսկոյն զգիտող զարան զայնոսիկ առաքեաց առ ի բերել զնշխարս Սիմոն խանին. և նոքա գնացեալ ի Կոստանդնուպօլիս՝ հանին զնշխարս նորա և բերեալ հասուցին ի Թիֆլիս։ Եւ ի զալ արանցն՝ որք բերին զնշխարս Սիմոն խանին՝ պատահեցաւ յայսմ ժամանակիս զի շահն ի Թիֆլիս էր, որ և գիտաց շահն թէ զնշխարս Սիմոն խանին բերին. և լցեալն խորհրդովն և խարդախութեամբն սատանայի, որ այնքան թշնամի է քրիստոնէից, մինչ զի և արեան նոցա ծարաւի է՝ որ սպանմամբ և գերութեամբ կենդանեացն ո՛չ շատացաւ, այլ այժմ ընդ ոսկերաց մեռելոցն ևս արար թշնամութիւնն, վասն զի սաստիկ հրամանաւ հրամայեաց իսկոյն բերել առաջի իւր։ Եւ իբրև կատարեցաւ հրամանն, ասաց. «Ջսա ևս առնել պատուիմ և փառաւորիմ քան զձեզ, զի դուք ո՛չ գիտէք զարժանաւոր պատիւ թագաւորաց, և կամիմ

1 Ա. *զողջոյն*
3 Ա. *զամենեսեան*
4 Ա. *բազմաց*
5 ԲՆ *օձաբարոյ*
6 Ա. *բազմաւ*
7-8 Ա. *զսուտ և զսնոտի պատրոզականիւք*
12 ԲԳՆ *անդի*
14 Ա. *զբանս*։ ԲԳՆ *հաճոյական*
17 Ա.ԲԳՆ *գալս*։ ԱԴ *եւ եղև*
19 ԲԳՆ *սպանեցին*
21 Ա. *Սիմոնն*։ ԱԴ *չիմ և*
22 Ա.ԲԳՆ *իւրեանց* Ա. *այլոց* ԲՆ *ընդանեաց*
23 Ա.ԲԳՆ *իւրեանց*
27 ԲԳՆ *Եւ գալն* Գ *և ի գալն*
29 ԳՆ *որ շահն*
30 Ա.Ի *խարդովն և խարդախութեամբ*
31 Ա. *չիմ է (որ)*
33 Է *մեռելոյն* Ա. *զթշնամութիւն*

առաքել զսա յիմամուղէն՝ ալ ընդ նախնեացն մերոց թագաւորաց և պետաց փառաւորեցայ»։ Արդ՝ այսպիսի կախարդասար բանիւք առաքեաց զսակերան Սիմոն խանին ի Պարսկաստան, և ո՛չ կիտող թաղել ի հողն վրաց, և ո՛չ ոք գիտաց թէ վինչ արարին կամ ուր տարան և այսպէս անյայտ արարեալ կորուսին[48]։

Եւ յայսքան ժամանակս՝ որ եկաց շահն ի Վրացտուն, ընդ իրով իշխանութիւնեմբն զբաւեաց զամենայն աշխարհն։ Բայց վերիկին Թամրազին զբովանդակն՝ յայտնապէս արար ալ լիցի ընդ իշխանութիւնեամբն Պարսից՝ իբր թէ ինքն իրով առեալ զայն, վասն որոյ առաքեաց զղօրս ի Պարսից՝ որ շինեցին վերիկին Թամրազին զբերդօրայս՝ և կացոյց ի նոսա զօրս ի Պարսից, և զՄէլիմ խանն, և զՓէքար խանն, և զԲէգդաշ խանն կարգեաց անդէն իշխան և զօրագլուխ՝ ալ պատնեցն վերիկին ընդ իշխանութիւնեամբն Պարսից։

Եւ զբնակիչսն Կախէթու և Գրիմայ սպառեաց, զոմանս սպանմամբ, զոմանս գերութիւնեամբ. և որք մնացին և զրեցան շահիսէվան հրաման արար վասն նոցին զամենեսեան արտասահման առնել և քշել տանել ի Պարսկաստան։ Եւ կարգեաց ի վերայ այսմ գործոյ վիշխանս և զօրս որ առաջին գրովն և թղթովն, զոր գրեցին զանուանս նոցա և առ ինքեանս ունէին, այն գրովն սկսան քննել զամենեսեան ընտանեօք իրեանց, և զամենայն զնոսա իրեանց ընտանեօք և ստացուածովք յիւրաքանչիւր տեղեաց հանել. և զորս հանէին բերեալ բանակեցուցանէին յաւին Կուր գետոյն՝ ի տեղին, որ անուանի Ղազբին[49]. քանզի անդէն սահմանեցին բանակեցոյ, այսպէս արարին մինչև զամենայն շահիսէվան զրեալքն հանին։ Եւ յորժամ եղև զրաւ հանելոյն՝ նոյն գրովն և մատենիւն չուեցուցեալ անտի՝ և քշեցին տանել յաշխարհն Պարսից, և բերեալ հասուցին մինչև ի Ղազբին քաղաք. և անտի տարան ի քաղաքն Ֆահրապատ[50]։ Յորժամ հասուցին ի Ֆահրապատ, զոմանս ի նոցանէ ի մէջ Ֆահրապատու քաղաքին բնակեցուցին, թէ ի վրաց և թէ ի Հայոց, թէ ի Մահմետականաց, թէ ի Ջհուտաց, և զայլս բազումս ի նոցանէ բնակեցուցին ի գեղօրայսն, և նոյն սոցա ամենեցուն զահիւս տանց և այգեստանաց՝ և անդաստանաց. Եւ այսու կերպիւ աւերեաց զաշխարհն վրաց, Կախէթու և Գրիմու, և տարեալ ելից վերիկին Ֆահրապատու։

Բայց դնացեալ ժողովուրդքս այսոքիկ ո՛չ աճեցին յաշխարհին յայնմիկ, վասն զի ոչ էին ընտելք զէջ և զաժան, շնչարգել և մգաճոտ

1 Ե *զսա* Ա *յիմամզղէն*
2 Ա *կախարդասարիւք*
9-10 ԴԲԳ *զօրս* Ա.Գ *որք շինեցին*։ Ա.Գ *վերիկին* ԲԳԴԵ *բերդօրայս*
11 Ա.Բ *զզօրս*
12 Բ *զԲէգդաշ* Ա. *զիշխան և զզօրագլուխ*
16 Ա. *զհրաման*
17 Ա.Է *տանիլ*
17-18 Դե *իշխանս*
18 Ա. *զզօրս* Ա.Է *որ*
20 Բե *ընդանեօք* Ա.ԲԳԴե *զամենեսեան* Բե *ընդանեօք*
20-21 Գ *բոլացուածովք*
22 Գ *որ փխ որ*
22-23 ԲԳԴե *Ղարբին* Ա. *Ղարբին ... զբանակեցոյ* Բ *բանակեցոյ*
25 Ա.Է *տանիլ*
29 ԳԴե *չիմ և (թէ)*
30 Գ *զգեղօրայս*
30-31 Բե *տվին սոցա ամենեցունց տեղիս* Գ *տվին սոցա ամենեցունց տեղիք*
34 Ա.Է *աճեցան*
35 Ա. *ընդելք* ԲԳԴե *ընդել* Դե *մգոտոտ*

օդոյ երկրին. նա և ոչ ուտելեաց և ըմպելեաց, և այլ կենցաղավարութեան երկրին: Վասն որոյ ակաան կատարել և մեռանիլ. և ի սակաւ ժամանակաս այնքան կատարեալ մեռան, Տպիւ թէ ի տասնէն մէկն մնայ: Եւ այնք, որք մնային՝ չեա ժամանակաց ի հիւանդութենանց և ի ցաւց ճնշելք և մաշելք և ցաւագարելք եղեն, որ ոչ կարէին գործ ինչ մարմնական գործել յօգուտ կենցաղավարութեան իւրեանց: Նա և ի պանդխտութենէ և ի նժդեհութենէ եղեն ապրատ և չքաւորք՝ և զոր ինչ ունէին վաճառեալ կերան. և ի պատճառէ չքաւորութեան բոզք բարձին ազգն վրաց առ շահն, որ յաւուրն յայնմիկ ի Ֆահրատատ էր, վասն չքաւորութեան և սովուն զոր կրէին: Եւ շահն պատասխանի արար նոցա, թէ որպէ՞ս զձեր հատանեմ, և լերուր օրինօրն Մահմետի, և ես տամ ձեզ յոլով ինչս, որով ապրիք՝ և ուտէք: Եւ նոքա հարկեալք ի կարեաց սովուն՝ արարին զհրամանս շահին, և եղեն Մահմետականք. և շահն ոչ եա նոցա պինչս յոլովս քան իրում խաւսմանն՝ այլ ստեաց, քանզի խաբեաց զնոսա: Բայց իւրաքանչիւր անձին, եթէ մեծաց, եթէ փոքունց եա դմէն մի գահեկան, և արձակեաց ի տունս իւրեանց:

Արդ՝ որք գոլեն շահս թէ քրիստոնէասէր և աշխարհաշէն և խաղաղարար թագաւոր էր, այս է նորա քրիստոնէասիրութիւնն, որ զամենայն աշխարհն քրիստոնէից՝ զՀայոց և զՎրաց աւերեաց, և զամենեսեան սպառնաց սրով և սովու և գերութեամբ. և զմնացեալսն վաւրնալ տարաւ ի Ֆահրատատ և ի Սպահան, որ նոքա եւս օր աւուր անդէն սպառին պէս պէս կերպիւ: Եւ ով որ որ գոլով կամի գնա, թող յառաջ հայիցեալ նկատեսցէ զարարեալ գործս նորա, զոր արար ընդ քրիստոնէից՝ և ապա գոլեսցէ գնա:

Արդ՝ որով օրինակաւ պատմեցաք, զոր արար շահն ընդ ժողովրդեանն, որք գրեցան շահիսէվան ի Թամրապէ երկրէն, սոյն օրինակաւ և արար ընդ ժողովրդեանն, որք գրեցան շահիսէվան ի Լաւասափի երկրէն: Վասն զի ի վերայ նոցա եւս կարգեաց զօրս և զզօրապետս՝ որք առաջին գրովն և քարտիսին չուեցուցին յիւրաքանչիւր տեղեաց և վաւրնալ տարան ի Պարսկաստան: Բայց զայս ժողովուրդս, որք էին յերկրէն Քաոթէլայ, ո՛չ տարան ի Ֆահրատատ, այլ տարան ի Սպահան և բնակեցուցին ի սար գեղջական Սպահանու, ուր և զպզդն Հայոց բնակեցուցեալ էին: Եւ այժմ յարդիանս ժամանակիս՝ որ է Թուականս մեր ՈՀԷ, յորում գրէաք զպատմութիւնս, այս վրացիքս ամենեքեան պարձան ի հաւատոցն իւրեանց ի կրօնս Մահմետի, և այնքան կուէճք և գահիճք էին քրիստոնէից, որ ի պատահիլն մեր նոցա ի ճանապար-

5 Ս. գործ
7 Գ պանդխտութենէ ԲԳԴՆ նչդեհութենէ
8 ԱՆ կերին: Ս. զրոզոք
10 ԱՆ; սովուն զոր Ս. զպատասխանի
12 Ս. յոլով գինչս
13 ԱՆ սովուն
13 14 ԲԳՆ մահմետական ԲԳԴՆ ինչս
15 Ս. խաբեաց
16 ԲԳԴՆ մէն փխ գմէն
18 ԲԳՆ քրիստոնեայսէր
19 ԲԳ քրիստոնեայսիրութիւնն Ն քրիստոնեայսիրութիւն
21 ԲԳՆ սովով Գ սովով և սրով
28 ԱՆ; ժողովրդեան
29 Ս. չիմ եա Ս. զզօրս Գ զօրապետս ԲԳ որ
31-32 ԱՆ; ժողովուրդս ... Քաոթէլայ
33 ԴՆ; գիւղօրայսն
34 Ս. բնակեցուցեալք ԲՆ ի գիւղականն
36 37 Ս. կուէճք և գահիճք են ԲԳՆ կուէճ և գահիճ են Գ կուէճ և գահիճք են

հի ուրեք՝ զբարին մեր ոչ առնուն, մեզք համարելով իւրեանց զբարև առնուլն։ Այլ և հայհոյեալ անարգին զՏարս և զնախնիս իւրեանց՝ թէ նոքա անհաւատք էին և անհաւատ մնային. այլ և ի վերայ նոր հաւատոյն իւրեանց զոհանան զԱստուածոյ, թէ այս է ճշմարիտ հաւատ՝ զոր այժմ առացաք։ Այլ և յայսմ վրացի ժողովրդենէս՝ ի ժամանակին՝ յորում նոր բերին ի Սպահան, բաժանեցին մասն ինչ և յառաջ խաղացուցեալ տարան յերկիրն Շիրազու՝ և յերկիրն, զոր անուանեն Աստփատ։ Որ և սոքա ևս սպառնացան պէս պէս կերպիւ, և մնացեալքն ամենեքեան միաձայնդն զարձան յանօրէն յօրէնսն Մահմետի։

Զայսու ժամանակաւս՝ յորում շահն ի Տփղիս էր և սո ինքն ունէր զխաւսափ. վասն որոյ խնդայր և բերկրեալ զուարճանայր, զի ըմբռնեաց զնա ի ցանցս իւր։ Բայց վասն Թամրազին տրտմէր, զի ոչ կարաց ըմբռնել, որ և վասն նորա խոկայր ի սննեակ սրտի իւրոյ ի խշտին Բեհմովթայ՝ թէ զիարդ կարասցէ կորուսանել զնա։

Վասն որոյ և յաղագս նորա հնարէ այսպիսի իմն որոգայթ, զի հաւանեցոյց զայր ոմն և առաքեաց ի Պաշիաչուխ, եցոյց նմա զամենայն ճանապարհս հնարից՝ պատուիրելով պնդապէս թէ որով և իցէ օրինակաւ սպան դու զԹամրազն թէ՛ յայտնի և թէ՛ ի ծածուկ։ Եւ զայս այր, որ առաքեաց ի ծածուկ սպանանել զԹամրազն, թաքուն և գաղտնի յամենայն նախարարաց իւրոց արար՝ որ ոչ ոք գիտէր։ Եւ այրս այս գնացեալ հնաս ի Պաշիաչուխ. և յաւուրս ինչ ել և մուտ արար ի տեղիսն, ուր էր Թամրազն, և գիտեալ նկատեաց զամենայն ինչ. զճանապարհն և զտեղին, ուր ի գիշերի ննջէր Թամրազ. քանզի տեղին էր վերնատուն, որ փայտեայ սանդխով ելանէին և իջանէին։ Եւ յաւուր միում ի ծածուկ և անգիտելի ումեք այրն այն սպաս կալեալ հսկեաց զգիշերն, զի ժերևս գտանիցէ դիպող ժամ առ ի սպանանել զԹամրազն։ Եւ ի հաւաքակել գիշերոյն՝ գիտաց թէ ամենեքեան ննջեալք են, նա և գիշերապահ արքն՝ որք են քեշիկչիքն, ննջեալք են, եկեալ այրն այն գանխուլ և թաքուն, և ընդ փայտեայ սանդուխն ել ի վերնատունն, ուր ննջէր Թամրազ, և հասս զի ի կողմն մի վերնատանն ննջեալք էին որիք երկու ի միում անկողնի, և ի միս կողմն ննջեալք էին այլ ևս որիք երկու ի միում անկողնի։ Եւ սոքա, որք ննջեալք էին ի վերնատանն ի միում անկողնի, էին Թամրազ և կինն իւր, և ի միւսում անկողնոյն էին երկու ազախնայք՝ որք վասն սպասաւորութեան մերձ առ նոսա ննջեալք էին ի միում անկողնի։ Իսկ այրն, որ եկեալ էր վասն

* *Տե՛ս Յովր., ե, 10—19*

Ա. *Նորայ*
6 Ա. *զմասն*
9 ԱԳ *չիւ յանօրէն* ԲԳ *օրէնս*
14 Ա. *Բեհմովթայ* Գ *Բեհիմովթայ*
17 ԱԴԳ *պնաապէս* Ն *պընպապէս*
18 ԲԳՆ *զԹամրազ*
19 ԲԳՆ *զԹամրազ*
20 Ա. *յամենից*
22 ԴՆ *Թամրազ*
24 ԱԳ *զոր*
25 Ա. *զսպաս*
26 Ա.Է *զգիշերայն* ԱԳ *զգիպող*
Գ *ժամանակ սպանանել* ԲԳՆ *զԹամրազ*
28 Է *զգիշերապահ* Ն *քեշիկչիքն*
ԲԳՆ *ննջեալ* Գ *նընջեալ էին*
31 ԲԳԴՆ *յանկողնի* ԲԳՆ *ննջեալ* Գ *նընջեալ*
32 ԲԳԴՆ *յանկողնի*
33 ԲԳԴՆ *յանկողնի*
33-34 ԳԴՆ *յանկողնոջն*
34 ԲԳՆ *ազախնայք*
35 ԲԳԴՆ *յանկողնի*

սպանութեան, ոչ կարաց առաւել վերահասու լինել, թէ որ ոք ի նոցանէ իցէ Թամրազն: Վասն որոյ ոչ համարձակեցաւ ի սպանութիւն, զի մի գուցէ սպանանէն այլ ոք իցէ և ոչ Թամրազն: Վասն որոյ խորհեցաւ ծողով զգործ սպանութեան յայնմ գիշերի և գնալ, և յառաջ-
5 *կայ առաւօտն գիտացէ՝ և առաւել ի վերայ հասցէ, թէ որ ոք ի նոցանէ իցէ Թամրազն. և ապա ևկեալ անվրէպ գնա հարեալ սպանցէ: Եւ զայս խորհուրդ Աստուած էարկ ի սիրտ առնն այնմիկ՝ և գործոյց գնա՝ որպէս զի մի սպանցի թագաւորն բրիտոնէից, այլ և զխորամանկ չարութիւնն շահին յայտնեալ՝ գնա խայտառակեաց: Արդ՝ այսու*
10 *խորհրդով այրն գործաւ ի վերնատանէն. և սկսաւ իջանել ընդ փայտեայ սանդուխն ընդ որ ելեալն էր, և մինչ իջանէր այրն, նորին ինքեան ձուրն՝ որ զմիջով իւրով ածեալ ունէր նոյն այրն՝ հարաւ ի սանդուխն, յորմէ հնչեաց ձայն, և ի ձայնէն արթնացաւ շունն քէշիկչոց՝ և սկսաւ հաչել առ այրն. և ի հաչելոյ շանն արթնացան պահապանքն,*
15 *և տեսին զայրն և շրջապատեալ ըմբռնեցին գնա. և որք տեսին զայրն, զահի հարեալ ապուշ մնացին ամենեքեան: Եւ ի վաղիւն Թամրազն և այլք չիշխանաց կոչեցին զայրն առաջի իւրեանց՝ և հարցմամբ տեսկեանային. և այրն զամենայն առաւօտեամբ խոստովանեցաւ, թէ շահն առաքեաց զիս, թէ գնացեալ սպանցես զԹամրազն:*
20 *Յայնժամ Թամրազն ի խորոց սրտէ հառաչելով ասաց «Արդ՝ տեսէք եղբարք, զի շահն զերկոսին որպիսի իմ յինէն առեալ տարաւ առ ինքն՝ և արար ներքինիս, և զմայրն իմ տարեալ կորոյս ի խորին Պարսկաստան. և այժմ զերկիրն իմ բնաւին աւերեաց՝ և զամենայն ժողովուրդն իմ և զազգն իմ գերեալ տարաւ, և ես զգլուխ իմ միայն առեալ*
25 *փախուցեալ կամ ի պանդխտութիւնս, և նա այնու ամենայնիւ ոչ շատանայ. այլ դեռ ևս ջանայ ի հետաստանէ սպանանել զիս. արդ՝ նա որ այսքան ջանայ սպանանել զիս՝ և ես որո՞վ յուսով համարձակեցայց գնալ առ նա»: Եւ ամենեքեան որք տեսին զայն գործ՝ և լուան զբանս Թամրազին, իրաւացուցանէին զիւօսս նորա: Եւ Թամրազ ողոր-*
30 *մեալ առնն՝ ոչ սպան զնա. այլ արձակեաց, որ գնաց զճանապարհս իւր: Բայց ինքն ևս ոչ վստահացաւ կալ ի Պաշիաչուխ, զի մի գուցէ այլ ևս որոգայթս հնարեսցէ նմա շահն, այլ ելեալ անտի գնաց յերկիրն Դադիանու՝ և հետացաւ ի շահէն:*

Արդ՝ զորպէսն ամենայն չարահնար գործոց, զոր արար շահն ընդ
35 *աշխարհին Վրաց, չէ կար մեզ ճառել, զի ի վեր են քան զճառ բանից, քանզի զողջ ամ մի՝ ևկաց նա ամենայն բանակաւն Պարսից՝ անդ յաշխարհին Վրաց. և զկնի ամին խորհեցաւ ելանել յաշխարհէն Վրաց և գնալ յաշխարհն Պարսից:*

Բայց ի վարանս և յուզմունս խորհրդոց կայր շահն թէ վիա՞րդ

1 ԲԳՆ *լինել*
2-3 Ի: *չիմ վասն որոյ ոչ համարձակեցաւ ի սպանութիւն, զի մի գուցէ սպանանէն այլ ոք իցէ և ոչ Թամրազն*
12 Ա.ԲԳՆ *թիւրն* Ա.Ի: *չիմ նոյն*
13 ԲԳՆ *քէշիքչոցն*
15 Ա. *տեսանել*
17 Գ *չիշխանացն*
18 Ա. *զամենեսեան*
20 ԲԳՆ *Թամրազ*
24 Ա.ԲԻ: *զազգն փխ զազգն իմ*
28 ԲԳՆ *գործն*
31 Ա.Ի: *ոչ ևս*
33 Գ *Դատիանու*
35 Ա.Ի: *վեր է Բ քան ... զողջ*
36 Ա. *ամենայնիւ բանակաւն*

կարացէ կորուանել վաւասափ։ Եւ յաղագս այսորիկ բանս եղ նախարարաց իւրոց ասել ընդ Վաւասափու, թէ որովհետև բարեաւ և յաջողմամբն Աստուծոյ նիւթ գու ի տեսութիւն շահին. և եղև սէր և միաբանութիւն ի մէջ ձեր, արդ՝ յաղագս հաստատութեան սիրոյ և ուխտի պաշտանցն, նա և վայելուչ է և պատշաճաւոր, որովհետև շահն գլանէ ի գնալ յերկրէն քումմէ, պատահ է քեզ գնալ ընդ նմա երից և չորից աւուրց ճանապարհ որպէս գուղեսր՝ ընդ նմա մինչև ի սահմանս երկրի քո. և ապա դարձիս յամեռս քո։ Եւ գայապիսի բանս շահն ինքն ևս ասաց ի կարգս գրուցաց ընդ Վաւասափին. և Վաւասափ քանզի ոչ ունէր կնդծաւորեալ խորամանկութիւն ի սրտի իւրում, որպէս յատուկ է քրիստոնէից, հաճեցաւ առնել զասացեալն նոցա։

Եւ յորժամ չուեաց շահն ի քաղաքէն Թիֆլիզու, էառ ընդ իւր և զվաւասափ ըստ յառաջագոյն կարգեալ պայմանին իւրում։

Եւ յորժամ գնացին երից և չորից աւուրց ճանապարհ, նոր իմն բանս եղ շահն նախարարաց իւրոց ասել ընդ Վաւասափու. «Որովհետև այսքան աւուրց ճանապարհ նիւթ՝ և յոյժ բարւոք արարեր, արդ՝ խնդրեմք զի մի Թուխցի քեզ ծանիր, այլ ևս յառաջել և գալ մինչև ի քաղաքն Գանձայ, զի անտէն ի Դաւնջայ հղեալ է շահն ի մտի իւրում կոչել առաջի իւր զամենայն իշխանս կողմանցս այսոցիկ, զՇամախու և զԵրևանայ, և զամենեսեան կամի կարգել, զի կացցեն ընդ իշխանութեամբ քո և զքեզ վերակացու և հրամանատար ի վերայ ամենեցուն՝ զի քո հրամանաւ արասցեն զամենայն, զոր ինչ և առնելի է»։ Եւ այսմ ևս հաւանեցաւ Վաւասափ և գնաց ընդ շահին մինչև ի Գանձայ։ Եւ անտէն ի Գանձայ իբրև անցին աւուրք յոլովք ոչ երևեցաւ նշան բանից ասացելոց նախարարաց շահին. այլ և ո՛չ երևի նշան և նշմարանք արձակման իւրոյ։ Յայնժամ գիտաց Վաւասափ յոգի իւր թէ հնարիւք Հանին գնա յերկրէն իւրմէ՝ և ոչ ևս թողուն գնալ յերկիր իւր. վասն որոյ ի մնծի արամութիւնն և ի վարանս խորհրդոց կայր Վաւասափ, և թէպէտ խորհէր՝ այլ ոչինչ կարէր առնել զհնարս փրկութեանն[1]։

Այլ և բազմարուեսա հնարագործ այրն Շահաբաս, ի ննգաւոր կարծիս իւր խորհնալ թէ մի գուցէ կամ ի գիշերի, կամ ի տունջեան՝ դիպող ժամ զտնալ հնարիւք իմն փախիցէ Վաւասափ։ Եւ ի սակս այսմ կարծեաց արար նոր ևս հնարս ըստ այսմ օրինակի. զի շահն պարգևեաց Վաւասափին զմէկ հատ ջորւոյ՝ զոր ի գլուխս իւրեանց Հարուն իշխանք. և էր յոյժ աղնիւ և պատուական, գեղեցիկ և մեծագին։ Եւ ընդ պարգևել ջորւոյին՝ պատուիրեաց սիրով Վաւասափին թէ, յարաժամ ի գալն քո առ իս եղիցի սա ի պուխս քո, և Վաւասափ ևս այնպէս առնէր հանապազ ի գնալն իւր առ շահն։

2-3 ՊԳՊ աջողմամբն
7 ԱՊ չիմ ընդ նմա
10 Ա. վհորամանկութիւն
11 Բ ի քրիստոնէից
12 ՈՆ Թիֆլիսու
14 ԱՊ գնոր
17 Բ Թուխցի Ա չիմ քեզ Գ գնալ վխ գալ
19 Ա. զամենեսեան
21 ԱՊՒ յոլ (և)
24-25 Գ չիմ ասացելոց
29 ՊԳ հնարս
31 ԲՆ ի սրբընջենի Գ և կամ ի սրբընջենի
33 Ա գնոր
34 ԲՆ մեկ
38 ԴՆ ի գալն

Եւ զկնի աւուրց ինչ հրամայեալ է շահն զորոցն իւրոց՝ զոր հանապազ ընդ ինքն պահէր, քանզի բազում ասա, որ բռնամնաւոր զօրք էին, վասն սէր սէր հնարից առ ինքն պահէր շահն. որպէս և այժմ ահա արար, վասն զի պատուիրեաց նոցա զանխտել և թնարան ի դիշերի մտանել ի վրանն Լատասափու և զորանալ յատուկ զոյն ջուայն և զայլ ևս ինչս, և զորքն արարին որպէս ուսան ի շահէն, զի զորացան զջուայն և զյոլով յրնչից նորա: Եւ յատուր միում յորժամ կոչեցին զԼատասափ առ շահն բուռ հանապազորդ կոչմանն, և ի գալն Լատասափու և ի բազմելն՝ ոչ էր ջուայն ի պուխ նորա որպէս յառաջն լինէր: Եւ ի տեսանելն զնա շահին՝ իբր անդէտ զարմացեալ. «Ընդէ՞ր զջուայն ոչ եղեալ ես ի պուխ քո». իբրև լուաւ թէ զորացեալ են, յայնժամ շահն ի չքմեղս եղեալ և իբր բարեկամ և ցաւակից զինքն ձևացուցեալ, մորմոքայր և ափսոսայր: Եւ ապա պարձուցեալ զգանս իւր առ նախարարս իւր՝ որք անդն կային. բարկանայր նոցա և յանդիմանէր՝ և մահ սպառնայր, և ասէր. «Ընդէ՞ր ոչ բարւոք հոգաբարձութեամբ և հպատակութեամբ արարիք ծառայութեան սմա և այնքան անհոգ և պղերգ էք, մինչ զի զորք ևս մատանն ի վրան սորա և առնուն զորութիւն, և մանաւանդ զայնպիսի երևելի և պատուական ինչ». և զայս ասէր վասն ջուային: Եւ ապա առաց՝ «Արդ՝ մի գուցէ միաւանգամ եկեալ զորոց զորանայցին այլ ևս ինչ յնչից սորա յաղագս անհոգութեան ձերոյ. և լինիցի մեզ կրկին ամօթ: Արդ՝ պատրաստեցէք զուք սոյն քաջս և զգուշս, զի յամենայնի զիշերի զիշերապահ պահպանութեամբ պահեսցեն զվրանն սորա շուրջանակի՝ զի մի վնաս ինչ պատահիցէ սմա, ապա թէ ոչ՝ զձեզ զամենեսեան բնաջինջ առնեմ»: Յետ ընդունելոյ նախարարացն զայսպիսի առաւել հրամանս, այնուհետեւ կացուցին պահապանս շուրջ զնովաւ՝ որք ի տուէ և ի զիշերի պահէին զնա զգուշութեամբ:

Զայսպիսի հնարս գործեաց շահն՝ և կացոյց ի վերայ Լատասափին պահապանս, զի մի գուցէ փախիցէ, և այսպիսի պահպանութեամբ բնակեալ հասոյց ի Թարվէզ, և տարաւ ընդ իւր ի Զազրին, և ի Ֆահրապատ, և ի Սպահան, և անտի առաքեաց ի Շիրազ քաղաքն ունել զնա ի պահեստի, և անդէն ևս կարգեալ ի վերայ նորա պահապանս, որք պահէին զգուշութեամբ[52]:

Եւ եղև՝ զի յետ յոլովից ամաց եկին դեսպանք ի Ռուսաց թագաւորէն վասն սիրոյ և բազում գործոց[53]. և ընդ աւուրսն այնոսիկ գնացեալ էր շահն ի գաւառն Սպահանայ՝ և նստեալ կայր ի վերայ գետոյն, զոր անուանեն Աւիքուրան[54], և կամէր զջուր գետոյն այնորիկ

5 Գ *Լատասափին*
6 ԴԿ *այլ*
9 ՍԳՆ *յառաջ*
12 ԲԿ *եկեալ* Գ *եղեալ իրր*
13 ԳԳ *ափսոսէր*
14 Ս. *զմահ*
15 Գ *բարոք*
17 Գ *վրանն* ՍԿ *զգուշութեան*
18 Կ *զայնպիսի իսկ*
20 Բ *և զորանայցին*
21 Ս. *զարս*
22 ԳՆ *յամենայն* ՍԿ *զիշերապահ*
23 Ն *նորա փխ սորա* Գ *պատահեսցի*
26 ԲԳԴՆ *որ*
31 ՍԿ *քաղաք*
34 ԲԳՆ *յրուսաց* Գ *ռուսաց փխ ի ռուսաց*
35 Ս. *բազմաց* ԴՆ *յատուրսն* ԲԳՆ *յայնոսիկ*

բերել և խառնել ի գետն Սպահանայ[35]. քանզի ջուրն Սպահանայ սառկաւ է, և բազում արուեստաւորք և գործաւորք գործէին ի ճանապարհս ջրոյն, և ինքն ևս շահն յայսմ պատճառէ անդէն վերադիալ կայր: Եւ հիւանդ վեցտասներորդ յայսմ տեղւոջ հիւանդիպեցան տեսուԹեան շահին՝ և ընդ յոյսով խնդրուածոցն, վասն հաւատարիմին ևս խընդրեցին, որպէս զի զարձցի ի տեղի իւր և կացցէ ի հրամանի և ի հնազանդուԹեան շահին: Եւ խորամանկն խորհրդով Շահնաբաս խնդուԹեամբ ընկալաւ զբանն զայն, և յօժարուԹեամբ և ուշալրջուԹեամբ յանձին կալաւ կատարել զխնդիր զայն՝ առաքել զհաւատարի ի տեղի իւր. և այսպիսի կերպիւ հանձնուցեալ պղեսպանն՝ ուղևորեաց յերկիր իւրեանց:

Յետ անցիցս այսոցիկ՝ հրաշեաց շահն առաջի իւր զիշխանն, առ որ յանձին կայր հաւատարի, առ ցնա. «Ո՛վ, կրօտհան և սպանման արժանի դու՝ ընդէ՞ր Թողեալ ես զհաւատարի կեալ կենդանի մինչև ցժամանակս այս, որ այժմ առքա եկեալ խնդրեացին զարձակումն նորա. ա՛րդ ելիր ոչ փութանակի եկեալ բերցես զհամբաւ կրօտհան նորա, զոր քոյովքն հանդերձ բնաջինջ լինելոց ես»: Իսկ իշխանն առեալ զայսպիսի հրաման վաղվաղակի հասանէր ի քաղաքն Շիրազ, և ձեռացուցանէր զինքն առ հաւատարի սիրոյ և խաղաղուԹեան ապագաւ եկեալ:

Եւ յաւուր միում ելին ի միասին հաւատարի և իշխանն ի զբօսանս յեզերս գետոյն, յորում և սկսան ձուկն որսալ, և նախ Պարսիկ իշխանն էառ ի ձեռս զվարմն զի կապմեալ արկցէ ի գետն յորս ձկանց, և ինքն իւրով կամօքն անյարմար կապմեաց և Թիւր և Թեք ձգեաց ի գետն, երևեցուցանել զինքն որպէս Թէ ոչ գիտեմ: Իսկ հաւատարի ոչ ունելով զկարծիս ինչ ի մտի և ոչ ունելով խիղճ զանձնէ, յինքն էառ զվարմն ի ձեռանէ իշխանին, որպէս Թէ ինքն այլ ևս լաւագոյն արկցէ զվարմն ի գետն. և մինչ զգլուխն կորացուցեալ և խոնարհեալ ի վերայ վարմին յարգարէր զվարմն ի ձևին իւրում, յեռուստ կողմանէ Պարսիկ իշխանն հանեալ զսուրն, զոր զմիջով իւրով ածեալ ունէր, ածեալ բախեաց յանկարծակի ի վերայ պարանոցի հաւատարիին, յորմէ բախմանէ գլուխ հաւատարիին անջատեալ՝ յինքենէ Թռուցեալ անկաւ ի բացեայ[36]: Եւ նոյն Պարսիկ իշխանն առեալ զգլուխ հաւատարիին բերեալ ի նախկին ասացեալ տեղին, յԱփբուրան կոչեցեալն, ի բանակն արքունի՝ և երեր առաջի շահին: Եւ շահն ի տեսանելն զգլուխն՝ և յիմանալն Թէ հաւատարիին է, ի դաժանութենէ սրտին իւրոյ շարժեցաւ ի ցաւումն և ի բարկուԹիւն ի վերայ գլխոյն, անարգեր, և հայհոյեր, և քամահանօք հարեալ այր և անդր ձգձգէր: Եւ յորվ ժամս այնպէս անցուցեալ ընդ գլխոյն ի ցաւմանէ սրտին, և ապա կալեալ զականջէ

3 Ա. *յայսմանէ*
4 ԱԲԳՔ *չիմ եկեալ*
4-5 Ի *չիմ տեսութիան*
5 Ա. *յոյսիվից* ԲՆ *խնդրուածոցն*
9 ԱԳԲՆ *զխնդիրն*
10 Ա. *այսպիսեաւ*
15 ԲԳԲ *յայս փխ այս* Ա.Ի *զի փխ որ*
21 ԲԳԲՆ *գետոյ*
21 Ա.Ի *զձուկն*
25 ԲԳՆ *կարծիս*
29 ԲԳԲՆ *որ* Գ *միջով*
31-32 ԲԳ *ի բացեա*
33 ԳԲՆ *նախկի* Ա.ԲԳԲՆ *յԱփբուրան*
34 Բ *ի տեսանել*
34-35 Գ *յիմանալ*

զվիռոյն ձգնաց ի բացեայ՝ և զպատան պղծեալ եբթայր զատ ի վայր, քանզի զատ ի վայր էր տեղին։ Արդ՝ այսպէս եղև զրան կենաց Լատատափ Թագաւորին Տիխիտու, զի չարաշնարն Շահաբատ այսպիսի օրինակաւ կորոյս զնա, և զնորին աշխարհն զրաւեաց ընդ իւրով իշխանութեամբ։

ԳԼՈՒԽ ԺԹ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՄԵՐ ԹԱՄՐԱԶԻ, ԹԱԳԱՒՈՐԻՆ ԿԱՒՆԹԻՒ, Ի ՆՈՅՆ ՇԱՀԱԲԱՏԻ

Մինչ կայր Թամրազ Թագաւորն յերկրի իւրում ի Գախէթ՝ և վարէր զիշխանութիւն իւր խաղաղութեամբ, և կայր ի հնազանդութեանն Պարսից, զի տակաւին չէր եկեալ շահն յաշխարհն Վրաց՝ և փախուցեալ զԹագաւորն և տեղեալ զաշխարհն՝ զոր ինչ յանցեալ ճառիւ պատմեցաք։ Այլ կայր Թամրազ յիւրում երկրին և շահն ի Պարսկաստան. առաքեաց շահն առ Թամրազ և խնդրեաց պատանդ, և նա առաքեաց զմի յորդոց իւրոց, յանել շահն միանգամ խնդրել պատանդ, և Թամրազ առաքեաց զմիւս ևս որդին. յանել շահն երրորդ անգամ խնդրել պատանդ. և Թամրազ առաքեաց զմայրն իւր[1]։ Իսկ շահն զկնի որդիսն Թամրազին արար ներքինի[2], զի մի ընծայեցի ի նոցանէ զատակ՝ զի մի գուցէ յինիցի ժառանգ Թագաւորութեան նոցա։ Իսկ զմայրն Թամրազին յետ խորին Պարսից առաքեաց ի Շիրազ քաղաք առ Իմամղուլի խանն, ունել զնա ի պահեստի։ Եւ այսպէս հրամանաւ Շահաբասին կայր ի պահեստի մայր Թամրազին, որոյ անունն էր Մարիամ[3]։ Բայց յետ ժամանակաց վկայեաց Քրիստոսի առաքելութեանն և նահատակութեամբ կատարեցաւ վասն Քրիստոսական հաւատոցս ի նոյն Շահաբասէ, այսպիսի պատճառաւ։ Վասն զի կային այլ ևս մեծազգի կանայք յապդէն Վրաց յերկիրն Պարսից՝ գերեալք ի Պարսից։ Սոյնպէս և որդիք սոցա գերեալք էին ի Պարսից, և կարգեալք էին ծառայք Թագաւորին մեծ և առաջին Շահաբասին, զի վասն մեծազգութեան սոցա հանապազորդ սպասաւորք և առաջիկայք կացուցեալ էին զնոսա Թագաւորին։ Եւ յաւուր միում շահն բանս ինչ խօսից խօսեցեալ ընդ ծառայիցս այսոցիկ, և ի մէջ փորձ ի փորձ խօսիցն ա-

1 Բ *ի բացեա* Ա.ԲԳԴՆ *զվռան*
2-3 Ա.Դ.Ն *Լատատափ*
3 Դ.Ն *որ փխ զի* Ա. *այսպիսեաւ*
4-5 Ա.Դ.Ն *իշխանութեամբն*
7 ԲԳԴՆ *Թամրազու*
8 Գ *Շահաբասէն*
10 Ե *ի հնազանդութեան*
13 Ա.ԲԳԴՆ *Թամրազն*
14 Ա. *զպատանդ* ԲԳԴՆ *պանդանդ*
15 ԲԳԴՆ *պանտանդ*
17 ԲԳԴՆ *պանդանդ*
18 Ա.ԲԳԴՆ *ներքինիս*
19 Ե *լեզի*
20 Գ *ևս փխ յետ*
22 Բ *Թամրազի* Գ.Դ.Ն *որում*
23-24 Ա.ԲԳԴՆ *առաքելութեան*
24 Ա. *քրիստոսականաց*
25 Գ *հաւատոյս*։ Ա. *այսպիսեաւ*
28 Ա. *առաջնոյ*
29 Ա. *կացուցեալք*
30 Ա. *զրանս*

ացեալ է նոցա, թէ ընդէ՞ր զմարան ձեր թողուք մնալ ի քրիստոնէութեան՝ որոյ կատարումն է կորուստ, և ո՛չ առնէք հաւատով և կրօնիւքըն Մահմետի՝ որոյ կատարումն է վայելչութիւն արքայութեանն եւ ծառայքն ասեն. «Բազում անգամ ասեմք, և ոչ դառնան»: Ասէ արքայ. «Ընդէ՞ր ոչ դառնան»: Իսկ ծառայքն, քանզի յերկիւղէն անճար մնացին և ո՛չ գիտեն թէ զինչ պատճառս յօդէն, կամ զինչ տացեն պատասխանի: Բայց ոմն ի նոցանէ ասացեալ է, ոչ թէ գիտութեամբ, այլ անգիտութեամբ. «Յորժամ ասեմք մարդ մերոց թէ տաճկացիք, նոքա ասեն մեզ՝ մայր Թամրազին քրիստոնեայ է՝ մեք ընդէ՞ր տաճկանամք»:

Յայնժամ խորամանկն Շահաբաս զայս բանս ի սրտի իւրում պատրուեալ է, և չեհ աւուրց ինչ զմն յիշխանաց իւրոց առաքեալ է, զի կամ պարձուսցէ զդիզօփալն ի քրիստոնէութենէ յօրէնս Մահմետի, և կամ չարաչար մահուամբ կորուսցէ[60]: Եւ իշխանին գնացեալ ի Շիրազ քաղաք, և մերձ կացեալ ի դուռն դիզօփալին կոչեաց զնա, և առանց երես-երես տեսանելոյ չեհուսա կուսէ դրանն բօսեցաւ ընդ նա՝ և ասէ:

«Հրամայեաց թագաւորին այսպէս է, զի հարկ է քեզ տաճկանալ. եթէ յօժարիս յոյժ բարի է, և թէ ոչ յօժարիս, լեզուովդ մէկ բան ասա և սրտովդ պահեա զքո հաւատն. առ յաչս մարդկան ձևացո՛ իբր թէ հղեր օրինօքն Մահմետի, և ի ծածուկ պաշտեա զքո հաւատն, զի և մեք մնասցուք ազատ ի խղճմտանացն՝ որ ի քոյդ կողմանէ»: Զայսպիսի բանս ասէր իշխանն և լայր[61] նմանց դահճին Հերովդի, որ գնաց պլխատել զՅովհաննէս Մկրտիչն:

Իսկ դիզօփալն ասաց ի նենգուստ. «Դու իմ եղբայր, և իմ որդի, ընդէ՞ր թաքուն խօսիս ընդ իս, մ՛կ յանդիման խօսեաց, զի ես թագաւորի դուստր եմ, թագաւորի կին եմ, թագաւորի մայր եմ, և ես իսկ անձամբ իմով թագաւորութիւն վարեալ եմ չեհ առնն իմոյ՝ մինչ որ տղայն իմ զարգացաւ, սակայն անցաւոր և ընդունայն է մեծութիւն աշխարհիս. եթէ թագաւորն քո բովանդակ արքայածոցս տէր լինի, և զամենեցուն թագաւորութիւնն ինձ տայ, ես ոչ ուրանամ զՔրիստոս Աստուածն իմ, և ոչ փոխանակեմ ընդ սիրոյ նորա՝ զոր ունիմ առ նա. և դու զոր ինչ առնելոց ես՝ դու գիտես»:

Կային ընդ դիզօփալիս երկու քահանայք Վրացիք և այլ ևս ծառայք և ազախնայք. դարձաւ դիզօփալն առ նոսա և ասաց՝ «եթէ դիս անդամ անդամ յօշեն, ես ոչ թուլանամ ի սիրոյն Քրիստոսի և ոչ դառնամ ի նորին հաւատոցն, իսկ զձեր օգուտն դուք ընտրեցէք»: Եւ նոքա առ հասարակ գոռալով լային, և ողբային ըզդրկուիլն իւրեանց ի բարեփառ տիկնոջէն:

1-2 Ր *քրիստոնութեան*
2 ԲԳԵ *հաւատովն*
5 ԱԴ չիմ *քանզի*
5-6 Ա. *մնացեալ ոչ գիտացին Դ ոչ գիտէին*
6 Ա. *յօդեացեն* ԲԳԴԵ *տան փխ տացեն*
6-7 Ա. *պատասխանի*
11 ԱԴ չիմ է Ա. չիմ և
15 Է *երես փխ երես-երես*
16 ԲԴԵ *որ հարկ է*
17 Ա. չիմ *մէկ բան*
18 Գ *ձևացոյ*
21 Ա. *Հերոդի*
26 Գ *առն Դ զթագաւորութիւն*
27 Գ *մինչև տղայն*
29 ԲԵ *թագաւորութիւն*
33 Է *ազախնայք*
35 Ր *ընդրեցեք*

Եւ ապա յետ բազում խօսից ողոքանաց և սպառնալեաց՝ իբրև հետև՝ եկեալ իշխանն վհատութեան միտս նորա, հրամայեաց երկաթի ճանկօք խզրատել զմարմին նորա՝ և կարի վիրաւորել. և նա պոհանայր զԱստուծոյ և արտասուօք հայցեր ինքեան համբերութիւն ի Տեառնէ։

Յետ այսորիկ հրացուցին զտաղաւարտ պղնձի և եդին ի պուխ նորա. և ոչ այնու կարացին հատանիցուցանել զնա։

Եւ ապա բերին երկաթեայ բահ, որով զերկիր փորեն, և զայն բահն սաստիկ հրացուցին և եդին ի մէջ սահանց դիպօփային, ի վերայ կրծիցն և արտին. և նա այնու աւանդեաց զանուշահոտ հոգին իւր առ Աստուած.

Եւ մինն ևս ի բահանայիցն մարտիրոսացաւ անդէն ընդ նմա, և այլքն ցրուեցան։

Այս դիպօփալս յառաջագոյն պատուիրեաց, թէ յորժամ սպանանիմն զիս, զմարմին իմ մի ընկենուք արտաքս ի տեսութիւն ամենից, բայց յետոյ փոշիմանեալ ասաց. «Ես որ զանն Քրիստոսի Տեառնէ ոչ մարտիրոսանամ, զմարմին իմ զոր ինչ և կամին արասցեն»։ Եւ յորժամ սպանին՝ զպատուական նշխար մարմնոյն ընկենին արտաքս կերակուր լինել շանց և գազանաց։ Բայց Աստուած փառաւորեաց զնա երկնաւոր նշանօք. վասն որոյ, ֆռանկ պատրիկքն, որք կային ի քաղաքին, զգեղացան զպատուական մարմին նորա, զկէսն պատեցին մաքուր կտաւօք, խնկօք և զմռսօք՝ և ուղարկեցին ի Ֆռանկստան, որ անդէն պատուի մեծաւ փառօք։ Սոյնպէս և զմիւս ևս զկէսն պատեցին մաքուր կտաւօք, խնկօք և զմռսօք և տարան առ որդին նորա Թամրապ յաշխարհն վրաց. և նա անպատմելի խնդութեամբ լցեալ գոհութեամբ մեծաւ փառաւորէր զՔրիստոս Աստուածն մեր, որ արժանի արար զմայրն իւր վկայական մահուան։ Եւ ասաց. «Սորին բարեխօսութեամբն զմեր թագաւորութիւնս Աստուած հաստատուն պահեսցէ»։ Եւ նմ պատուով յեկեղեցին իւր։ Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի և աղօթիւք նորա ողորմեսցի Տէր ամենայն քրիստոնէից։ Եղև նահատակութիւն դիդօփալիս ի մերում թուականին ՈՀԴ[62]. ամին, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս ամէն։

1 Ս. *բազմաց*
3 Բ *զմարմինն*
6 ԲԵ *սաղաւարտ պղընձի Գ սաղաւարտ պղընձի։ Գ պղընձի*
15 Բ *զմարմինն* ԲԳՆ *բռամկաց*
16 Գ *Հատուցն Քրիստոսի*
18 ԲԳՆ *նշխարքն*
19 Ա *լինիլ*
20 Ա. *երկնաւորօք* ԱՎ *ֆռանկք պատրիք* ԲԳՆ *պատրիքն*
21-22 Ս. *մաքրօք*
22 ԲՆ *զմրսօք Ի զմռօք*
24 Ա. *մաքրօք Ի զմռօք* ԲՆ *զմրսօք* ԲՆ *Թամրազն*
27 Ս. *վկայականի*
28 Ի *նա*
30 Ս. *ամենից*
31 Ս. *շիմ ամին*
32 Ս. *շիմ օրհնելոյն յաւիտեանս ամէն։* Գ *շիմ օրհնելոյն յաւիտեանս*

ԳԼՈՒԽ ԺԴ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՆԳԱՒԹԵԱՆՑ, ԶՈՐՍ ԿՐԵՑԻՆ ԱԶԳՆ ՀԱՅՈՑ ՅԱՌԱՋԻՆ ՇԱՀԱՒԱՍՆ ԹԱԳԱՒՈՐԷՆ

Ազգս Հայոց որք մատամբն և կամօքն իւրեանց կուրացուցին զաչս իւրեանց, զի ինքեանք կործանեցին զթագաւորութիւնն իւրեանց՝ ննջգութեամբ և անհնազանդութեամբն իւրեանց, և եղեն ոտից կոխան, և ծառայք և վկայիք այլոց ազգաց և թագաւորաց, և ի ժամանել նեղութեանց իւրեանց ի վերայ ինքեանց, իբրև ո՛չ գտանէին օգնութիւն յուստեքէ, անճառ մնացեալ փախստական լեալ ճողոպրին այսր և անդր։

Արդ՝ ևթէ յայսմ պատճառէ, և թէ կանխաւ պատմեալ մեծ սովին և Ջալալոց պատճառէն, ամենայն ազգն Հայոց եղեալ վտարանդի, եղեն չիւրաքանչիւր տեղեաց, ի հայրենի բնակութենանց և յաշխարհաց, և ստարափէմ գնացեալ ընդդէմ հրեսաց՝ ցիր և ցան եղեալ սփռեցան ընդ ամենայն աշխարհ, ի Կիպրոս, ի Կոստանդնուպոլիս և ի քաղաքս, որք շուրջ են վնովաւ, յՈւռումէլի, ի Բուղդան, յերկիրն Իլախաց, ի կղզին Կաֆայու, ի Ծովեզերեան Պոնտոսի։ Այլ և բազումք՝ յաշխարհն Ատրպատականի, յԵրևան, ի Գանջայ, ի Թարվէզ՝ յԱրտաւիլ, և ի շրջակայ գաւառս սոցա։

Եւ յայսկէն Հայոց ժողովուրդք, որք ևկեալ զետեղեցան յաշխարհն Ատրպատականի, մեծ և առաջին Շահաբասն Պարսից թագաւորն զամենեսեան ղնոսա վարեալ քշեաց, տարաւ յաշխարհն Պարսից, զկէս բաժին մի ի Ֆահրապատ, և զկէս բաժին մի ի Սպահան քաղաք և ի գաւառս նորա։ Եւ զայս գործ, որ զազգն Հայոց քշեաց և տարաւ, ո՛չ թէ մի անգամ կամ երկիցս և երիցս արար և եկաց, այլ գտի հաւատեալ բազում արս՝ որք ինքեանք իսկ քշածք էին, յորոց հարցեալ տեղեկացայ, նա և ի յիշատակարանաց գրոց՝ զորս ընթերցայ, զի հօրն և ուրն անգամ որիշ որիշ զկնի միմեանց քշեալ և տարեալ էր։ Եւ զյոլովս ոմանս յայսմ ի Սպահան տարեալ ժողովրդենէս, առ ներկայ աւուրսն յայնոսիկ զետեղեալ բնակեցուցին ի Փութկայն՝ որ է քարվանսարայ, զոր և Գէչգունի քարվանսարայ անուանեն։ Եւ այս ժողովուրդս ո՛չ ի միասին ևկեալ էին, այլ որիշք ի միմեանց, վասն որոյ և երկու դասք էին, միոյ դասուն պետ և գլուխ կարգեալ էր շահն զայր ոմն ի նոցունց ի վերայ նոցա մելիք, որում անունն էր Մուրատ, զոր մականուամբ Ղըրխեալան ասէին նմա, և միւսում դասուն մելիք էր

2 ՐԳՆ *զոր փխ զորս*
3 Ա. *յառաջնոյ*
4 ԱԳ *մատամբ*
6 Ն *ննգութեամբն*
8 Ա. *զոգնութիւն*
10 Ա *յայսմանէ* Ա *մեծի սովուն*
11 ԱՐ *եղեալք* ԱՒՒ *վտարանդիք*
12 Ա. *իւրաքանչիւրոց* Ա. *և հայրենեաց և բնակութենանց*
13 Ա. *եղեալք*
15 Բ *որ փխ որք* Գ *ի Բուղտան*
16 Գ *ի Ծովհրան Պոնդոսի*
21 ՐԳՆ *քշեց*
25 Ա. *գրազում*
26 ԳԴՆ *չիմ ի*
28 ԱԳ *չիմ յայսմ*
30-31 Ա *ժողովուրդ*
31 ՐԳՆ *որիշ*
33 ՐԳ *զայր* ՐԳԴՆ *անուն էր*

կարգեալ Յովսէփ անուամբ այր ոմն, զոր մականուամբ Դարատաշ մկրտիչ ասէին։

Եւ ազգն Հայոց՝ որք եկին ի Սպահան, զաս ի Ջուղայեցւոց և յերևանցւոց ամենևքեան չքաւորեցան, վասն զի որպէս յայտ է ամենեցուն, զի ի Սպահան քաղաքն ամենայն ինչ՝ թէ ուտելի և թէ զգենլի և թէ այլ ինչ, ամենայն ծանրավաճառ և թանկագին է, և յայսմ պատճառէ այս եկեալ ժողովուրդս չքաւորեցան՝ զի զոր ինչ ունէին վաճառեցին և կերան։ Եւ մանաւանդ առաւել չքաւորեցան այս յիշատակեալ երկու դասք ժողովուրդս, որք վասն չքաւորելոյն և սովելոյն իւրեանց այսր և անդր գնացեալ և առ որում և պատահեալ ծանուցանէին զչքաւորութիւն իւրեանց, և մանաւանդ իւրեանց վերս կացու Պաբսիկ իշխանին, և զինուորաց նորին, վասն զի շահն զմի ոք յիւրոց իշխանացն՝ նոցա վերակացու կարգեալ էր, առ ի պահել և իմանալ զամենայն անցուածս բանից և գործոց նոցա, այլ և մի զուցէ թէ երանիցն ի Սպահանայ և գնասցին յերկիրն Ատրպատականի՝ և կամ յայլուր։

Եւ ևհաս համբաւ չքաւորութեան նոցա առ շահն ի ձեռն վերակացու իշխանացն՝ որոց էին անուանք, առաջապունին՝ Ագաշահաբ, և երկրորդին՝ Ուղուրլու բէկ, զորս ապաշխին քրիստոնեայքն ծանուցանել զչքաւորութիւնն իւրեանց՝ շահին, և խնդրել ի նմանէ ինչս առ ի պարէնս պիտոյից, կերակրոց և այլ կարիսաց իւրեանց։ Եւ իշխանքն ծանուցին. վասն որոյ շահն կոչեաց զերկու դասու ժողովրդեանս մելիքներն, և զայլս ոմանս ի նոցունց, ասաց նոցա. «Տամ ես ձեզ պանձըս և գինչս ի դանձարանէ թագաւորական, առ ի պատճառս կերոյ և ապրելոյ ձեր. բայց պայման դնեմ և այն պայմանաւն տամ։ Եւ պայմանն այս է, զի զոր ինչ և տամ փոխ տամ ձեզ երեք ամեայ ժամանակաւ, զի չեմ երից ամացն գարձուցանիցէք ի միոջ, և զայս փոխս ոչ թէ շահով և տոկոսիւք տամ, այլ առանց շահի տամ փոխ, զի զուք այնու առեալ դանձին առաւաւր արարեալ շահիցէք, և նորին շահն եղիցի ձեզ պարգեւալ՝ զի մի մնայցէք ի մէջ ննդութեանց. այլ պատճառ ձեզ առիւարի շահելոյ և կերոյ նովաւ, և զկնի լրման երից ամացն զգլուխս պարտուցն գարձուցանիցէք անդրէն ի դանձարանս թագաւորին. զի այդ թագաւորական դանձ է, որում ոչ է հնար կորնչելոյ և ոչ փողի միոյ. և յորժամ վճարիցէք զամենայն, առէք ձեզ գիր ապաւութեան և վճարման՝ այսինքն զղաբս։

Արդ՝ ամենայն ոք ի ձէնջ, որ ոք և առցէ ի թագաւորական գանձէս, յորժամ բերցէ զառեալ դանձն՝ և վճարեսցէ ի դանձարանս թագա-

1 Ի Դարաբաշ
3-4 ԲԳ Ջուղայեցւոց և Երևանցոց Դն յերևանցոց
5 ԲԳՆ որ յԱսպահան Դ որք յԱսպահան ԱԲԳՆ Թէ ուտելի
6 Ս. յայսմանէ
7 Ս. ժողովուրդս
8 ՍԴ կերին
9 ՍԴ դաս
10 Ս. չիմ և առ
10-11 ԲԳԴ վչքաւորութիւնն
13 Ս. գամենեսեան
17 ԲԳԴՆ առաքապունին
19 ԲՆ վչքաւորութիւն
21 Գ Կոչեաց շահն ԲԳՆ դասուց
22-23 ԲԳՆ գանձս և ինչս Դ գանձս և ինչ
23 Ս. թագաւորականէ
25-26 Ս. երիւք ամօք ժամանակօք
27 Ս. զփոխս
33 Ս. զզիր
34 ԲԳԴՆ զարգ

տրին, եղիցի ապատ. և նմին իսկ ոք, որ ոչ վճարիցէ զառեալ գանձն, այլ կերեալ և վատնեալ և կորուսեալ իցէ զդրամն, և ոչ ունիցի ինչ զի տացէ, արդ այնպիսին, փոխանակ գանձին, կամ գարձցի յիւրոց հատուցցեն յօրէնս Մահմեթի, և կամ զորդին և զդուստրն տացէ առ ի լինիլ թագաւորական ծառայ»: Եւ զսոցին ևս զդինն յայտ արար. զդինս ուսանելոց չորս Թուման տացէ և զդինս գաւառաց երիք Թուման. զի որ ոք ոչ ունիցի զրամ առ ի տալ փոխանակ չորս Թումանի զորդին տացէ, և փոխանակ երիք Թումանի զդուստրն տացէ:

Եւ այսու պայմանաւ ետ շահն այս երկու գասուց ժողովրդեանս չորս հարիւր Թուման. զի մինչև ցերիս ամս առևտուր արարեալ շահնացին, և յետ երից ամաց գարձուցանն ի գանձարանս թագաւորին:

Իսկ արբշիռ, և անագորոյն, և անիմաստ, և անասնաբարոյ ազգս Հայոց՝ ո՛չ ի սկիզբն խորհեցան, և ո՛չ ի վերջն հայեցան՝ թէ զի՞նչ է լինելոց վերջ գործոցս այսորիկ. այլ իբր անբան և անմիտ անասուն գոլով՝ գնացին և առին զթագաւորական գանձն, որ էր որպէս զմահաբար թոյնս օձի, և պատճառ նոցին կորստեան. և ոչ եղեն մտախոհ, թէ որպէս զփուշս օձի է գանձն այն մահացուցանող: Այլ երկոքին մելիքն իւրեանց ժողովրդովքն առին զթագաւորական գանձն, Ղարապաշ մելիքի ժողովուրդն առին երիք հարիւր Թուման, Ղըրխեալան մելիքի ժողովուրդն առին հարիւր Թուման, և լաւ իմն զիւտ բարւոյ համարեցան զայն անձանց իւրեանց:

Եւ յամին, յորում ետ շահն զդանձս զայս ժողովրդեանն Հայոց՝ էր Թուականն մեր ՌԾէ. և հասին մինչև ի Թուականն ՌԿԲ, և յայնժամ շահն, որ անմոռաց ունի զյիշատակս չարեաց ի միտս իւր, յիշեաց զայն. և խնդիր արար առնել գանձին: Իսկ առողք գանձին եղնաբարոյ ազգն Հայոց՝ ո՛չ միայն ոչ շահեցուցին, այլ և զդլուխն ևս կորուսին, զի ոմանք ի չքաւորութենէ. և ոմանք յանհանճարութենէ, և ոմանք յանտիղեկութենէ առևտրոյ քաղաքին՝ կերան և վատնեցին, ցընցխեցին, և կորուսին զառեալ գանձն Թագաւորին:

Եւ զՈւղուրլու բէկն, որ վերակացու էր ժողովրդեանն, գարձեալ կարգեաց շահն ի վերայ նոցա. զի զթագաւորական գանձն առնել ի ժողովրդենէն յանձնեսցէ ի գանձարանս Թագաւորին, որոյ եկեալ զօրականօք նստեալ ի վերայ ժողովրդեանն ճշդիւ պահանջէր զգանձն, իսկ ժողովուրդն զիղեալ գործն պատասխանէին թէ ոչ ունիմք, զի չքաւորք և աղքատք էաք և առ ի վատնգէ սովուն՝ զամենայն կերեալ վատնեցաք:

1 Գ և թէ
2 Գ և վատնեալ կորուսեալ իցէ Ս. զինչ
3 ԱԳ չիմ արդ
5 ԲԳՆ լինել
7 Ս. զդրամ
8 Գ հրամ
9 Ա այսց երկուց
10 Ս. զչորս ԲԳ ամացն
13-14 Գ վերջն... վերջն ԲԳՆ այսմիկ
16 ԱԳ թոյն
17 ԱԳ զփուշ
18 ԱԳ ժողովրդոջն ՌԻ: Ղարաբաշ
19 Ս. զերիս Ա.Գ.Ն և Ղըրխեալան փխ Ղըրխեալան
20 Ս. զհարիւր
22 Բ ժողովրդեան
25 Ա. զխնդիր Ե եղնաբարոյ
28 Ս. առիևարոյ ԲԳՆ առի և արի ԱԳ կերին
28-29 ԲԳՆ ցնցխեցին
29 ԲՆ զամեալ
32 Ա.Գ.Ն ի գանձապանս
35 Ա.ԲԳՆ վատնկէԳ սովոյն Ս. զամենեսեան

Եւ վերակացու իշխանն իւրովք զօրականօքն հանապազօր բռնադատէին զժողովուրդսն, և չարչարէին, կախէին, հարկանէին, բանտարգել առնէին. և էին ժողովուրդքն ի մէջ մեծի նեղութեան, և թէպէտ ոչինչ ունէին, և զոր ինչ ունէին, զայն ևս ի ծախս զինուորացն վատնեցին. զի մասն ինչ տային ի ծածուկ կաշառս՝ և մասն ինչ տային յայտնի մուհլաթանայ. և մասն ինչ ի պէտս կերակրոյ զինուորացն և երիվարացն, և այլ ևս ինչ պատճառէ վատնեալ ապաւինին, և նոքա իսպառ աղքատք և չքաւորք: Իսկ Ուղուրլու բէկն իբրև ետես թէ ոչինչ կարաց առնուլ ի Հայոց, ապա ծանոյց թագաւորին զչքաւորութիւնն ժողովրդեանն. վասն որոյ հրամայեաց շահն կոչել զժողովուրդն Հայոց առաջի իւր, խօսեցաւ ընդ նոսա՝ և ասաց. «Դուք մի համարիք և ամբաստանողք լինիք զինէն, թէ ես թագաւորական բռնութեամբ և իշխանութեամբ խնդրեմ և առնում ի ձէնջ դանձ, այլ դատաստանաւ և իրաւամբք խօսիմ, զի ես ձեզ փոխ եառու զդանձն զայն, և այժմ զնոյն փոխ առեալ գանձն խնդրեմ ի ձէնջ, և ոչ թէ նոր ինչ խնդրեմ, այլ զիմ առեալ փոխն և զայն առանց վաշխից և տոկոսաց խնդրեմ, զդլուխն միայն: Արդ՝ եթէ այս բանք իրաւամբք թուի ձեզ՝ տո՛ւք զառեալ փոխն ձեր, ապա թէ ոչ՝ ահաւասիկ դատաւորք և դատաստանք պոն ի քաղաքի աստ, ես և դուք երթիցուք ի միասին ի դատաստան առ դատաւորս, և զոր ինչ հրաման ելցէ ի դատաւորաց ընդունելի լիցի ինձ և ձեզ»: Եւ յոր կողմն և խօսէին՝ կողմն Հայոց պարտեալ գտանէին:

Եւ զբազում աւուրս ժողովուրդքն Հայոց՝ զբազում իշխանս բարեխօս արկեալ առ թագաւորն արզայով և բազում աղաչանօք խնդրեցին ի թագաւորէն զթալ ի տառապանս չքաւոր և աղքատ ժողովրդեանն, և ներումն առնել և թողուլ զպարտսն զայն, և նա ոչ կամեցաւ ներել:

Իբրև կարի սաստրանկևալ խոնարհեցաւ կողմն Հայոց, ժողովեցին զամենայն զուստերս և զդստերս իւրեանց ժողովուրդքն, և ածեալ կացուցին առաջի թագաւորին ասելով. «վասն զի ոչ ունիմք դրամ զի տուեալ ի պարտս թագաւորին վճարեսցուք. զուստերս և զդստերս մեր տամք թագաւորին, որպէս և յառաջագոյն սահմանադրեցաք»: Ընդ ուստերաց և դստերաց՝ զորս հարք նոցա ածեալ էին՝ և առ դուք աղէսի նոցա եկեալ էին և ամենայն ազգականք նոցին, մարք, և հղբարք և այլք, որք միագումար կային և բարձրակական ողբովք և արտասուօք լային՝ որ գտեսողացն ամենեցուն զսիրտ և զաղիս մորմոքմամբ ճմլեցուցանէին: Զոր տեսեալ թագաւորն յայնպիսի չողբս և ի հառաչանս՝ հրաժարեցաւ յառնղոյ գաղտեան և ոչ էառ. և յայսմիկ գործոյ՝ որ ոչ

1-2 Դ *բռնադատէր*
5 Ա. *զմասն* ԲԳՆ *կաշառք* Ա. *զմասն*
6 Ա *զմասն*
7 ԴԷ *չինչ*
8 Ա. *զոչինչ*
11-12 ԱԴ *ամբաստանօղք*
12 Ա.ԲԳՆ *զչինէն*
13 Ա. *զգանձ*
14 Ա. *զնոր*
20 Ա. *հրամայելոց է* Դ *հրամանելոց է*
22 Ա.Դ *ի բազում*
23 Ա. *բազմօք*
27 Ա. *զամենեսեան*
31 Ր *հարքն* ԲԷ *աղեսի*
31-32 Ա. *ածեալք էին... եկեալք էին*
32 Ա. *ամենեքեան*
32-33 Բ *մարք, հղբարք և այլք*
33 Ա. *բարձրակականօք*
35 Ա.ԲԳՆ *Զորս*
36 Գ *այսմիկ փխ յայսմիկ*

էառ թագաւորն զաղաչան, երկուս ասեն պատճառս. ոմանք ասեն թէ տեսեալ զարտասուս ժողովրդեանն, երկեաւ յԱստուծոյ, վասն որոյ ոչ էառ, և ոմանք ասեն ոչ էառ զաղաչան զի զժողովուրդսն զամենեսեան միահաղոյն զարձուսցէ ի տաճկութիւն: Եւ յետոյ կարծիքս յիրաւ դոլ
5 *թուի երկու վկայութեամբ. նախ՝ զի բարկացաւ ի վերայ Ուղուրլու բէկին, որ զնոսա սպեալ էր՝ և ասաց. «Ձի՞նչ օգուտ է մեզ յաճելն քո զաղաչան, զի կամիմ ես զամենեսեան զարձուցանել ի տաճկութիւն»: Երկրորդ՝ զի վճիռ եհատ և ասաց՝ «եթէ վճարեսցեն զամենայն փոխն՝ բարի է, եղիցին ազատք, և թէ ոչ վճարեն, զարձցին յիւրեանց հաւա-*
10 *տոցն՝ և եղիցին հաւատաւոլն Մահմետի, և ես զառնալ պարտական նոցա՝ շնորհեմ նոցա, և ի վերայ այնր այլ ևս ձիրս պարգևանց բաշխեմ նոցա»: Զայս վճիռ հատեալ՝ ասաց, և առիսկայ առնուլ զպարտսն, որով երևի թէ յետոյն կարծիքն իրաւի է:*

Իսկ վինուրացն յետ ընդունելոյ պայսպիսի հրամանի ի թագաւո-
15 *րէն, սկսան յոյժ ճշդիւ խնդրել զպարտսն ի քրիստոնէից, կախէին, հարկանէին, բանդարգել առնէին, և բազում կերպիւ նեղէին. զի թերևս ի վատանգ նեղութեանն դառնայցեն ի հաւատոցն. և ժողովուրդքն տեսէին, և տանէին ամենայն վշտացն, և ի հաւատոց ոչ դառնային: Եւ այնուհետև ողորմելի ժողովուրդքն Հայոց՝ որդւովք և ընտանեօք շրջէին*
20 *ի պղտոտայս և ի փղոցս քաղաքին առ ամենայն ոք լալով և ողբալով՝ զի թերևս յուսահատել յիցի հնար օգնութեանն կամ փոխուլ և կամ ողորմութեամբ:*

Եւ շրջադայելով գնացին ի վանօրայս Ֆռանկաց, որք են ի մէջ քաղաքին Սպահանու. և ոմն եպիսկոպոս յաղգէն Ֆռանկաց, եկեալ էր
25 *յայնմ ժամանակի ի Սպահան, և բնակէր ի վանքն Ֆռանկաց՝ որոյ Հուսինիայ[63] անուն կոչեն: Եվ էր այս եպիսկոպոսս այր երևելի և փարթամ՝ զոր բազում անգամ կոչեալ ընծա շահն առ ինքն և խօսէր՝ և զսէր առնէր ընդ նմա: Եւ այս եպիսկոպոսս, իբրև նտես զարտասուսն Հայոց և հարցեալ տեղեկացաւ ամենայնի, խօսեցաւ ընդ նոսա յու-*
30 *սադրական բանիւք և ասաց. «Մի երկնչիք, այլ հաստատուն կացէք ի վերայ քրիստոսական հաւատոցն ձերոց, և ես զոր ինչ ունիմ տամ ձեզ՝ ոչ թէ փոխ, այլ վասն սիրոյն Քրիստոսի, և նորին հաւատոցն. և դուք տուք շահին, և վճարեցէք զպարտսն ձեր և ի հաւատոց ձերոց մի*

36-5 ԱԴ չիմ «և ոչ էառ... նախ զի»· Հաջորդ Նախադասությունը սկսվում է «բայց բարկացաւ» բառերով:
4 Գ *իրաւ*
8 Ա չիմ «*երկրորդ՝ զի վճիռ եհատ և ասաց*»· Սկսվում է «*վանորոյ ասաց*» բառերով:
8-9 Դ չիմ «*երկրորդ՝ զի վճիռ եհատ և ասաց թէ վճարեսցեն զամենայն փոխն բարի է*»· Նախադասությունը սկսվում է «*վասն որոյ հղիցին ազատք*» բառերով
9 ԲԳՆ *ազատ* ԱԴ *վճարեսցեն*
9-10 Բ *հաւատոց*
10 ԲԳՆ *զպարտսն*
12 13 ԱԴ չիմ «*որով երևի թէ յետոյն կարծիքն իրաւի է*»
15 ԲԳՆ *զպարտսն*
17 ԱԲԳՆ *վանակ* Ն *նեղութեան*· ԲԳՆ *ի հաւատոց* Բ *ի հաւատոցս*· Ա *իսկ փխ և*
18 Ա. *ամենից*
19 Բ *որդովք և ընդանեօք* Գ *որդովք* Ն *որդովք և ընդանեաւք*
23 Ն *շրջակայելով*
26 ԱԴՆ *Հուսէնիայ* ԲԳ *Հուսէինիայ* Գ Ն *եպիսկոպոս*
27 ԲԳՆ *որ*
28 ԲԳՆ *սէր* Ն *եպիսկոպոս*
29 30 Ա *յուսադրականօք*
31 Ա *քրիստոսականաց* ԳՆ *ձեր*

դառնայք»։ Իսկ ժողովուրդքն Հայոց արտասուօք օրհնէին զԱստուած և զեպիսկոպոսն, և շնորհակալութեամբ պահանային զնմանէ. զի ի մէջ անհնարելի նեղութեանցն յօգնութիւն ժամանեաց նոցա։

Որ և ըստ իւրում խոստմանն եա եպսիկոպոսն դանձս երկուց դասուց ժողովրդեանն, ձեռամբ Դարապաշ մելիքին՝ նորին դասուն երկու հարիւր թումանս զուտ արծաթի դրամ։ Եւ միւսում դասուն, որոց էր գլուխ Զրխևալան մելիքն, և այլ ոմն քահանայ Բաղդասար անուամբ՝ այր հանճարեղ և իմաստուն և հասուտասուն ճշմարտութեամբ և հաւատովն Քրիստոսի, սոցին ձեռօքն եա սուրբն դասուցն չիսուն թումանս զուտ արծաթի դրամ. որ և երկոցունց դասուց ժողովրդոցն տարեալ եաուն վերակացու իշխանին ի վճարս պարտուց իւրեանց. և վասն մնացորդաց պարտուցն խնդրեցին աւուրս ինչ ներել, զի զայն ևս դտեալ յուսանէք վճարեսցեն։

Եւ որպէս զՔրիստոսի մատնիչ Յուդայն, որ բաժանեալ անջատեցաւ ի գնդէ երկոտասանիցն, այրք երկու յազդէն Հայոց՝ և յայսմ ժողովրդենէ ի դասուց Դարապաշ մելիքին, միոյն անունն Բաղդասար և միւսոյն Ախիջան, եղեն արբանեակք սատանայի և աման չարին, հակառակք եղեն քրիստոնէից և ասեն. «Եթէ տաք մեզ իւրաքանչիւրոցս տասն տասն թումանս ի դանձէդ, զոր եա Յոհանէս եպիսկոպոսն, բարի է՝ ոչինչ ասեմք, և թէ ոչ տայք, գնամք առաջի իշխանացն, նա և թադաւորին իսկ, և ասեմք. «Սոքա դնացեալ Յոհանէս դարձան, վասն այնորիկ եա սոցա Եպիսկոպոսն զդանձս. զոր բերեալ եաուն ձեզ»։ Իսկ միւս արքն աղաչէին և ասէին. «Այժմ ներեցէք մեզ՝ զի զայս գանձս տամք ի պարտս թագաւորին, զոր ահա ձերով իսկ աչօք տեսանէք՝ թէ որպէս կարի ճշդիւ պահանջեն յարդեան աւուրս, և չետոյ ի մէնջ յամենայն ժողովրդենէս ժողովեմք և տամք ձեզ՝ որպէս և կամք ձեր հաճի»։ Եւ նոքա ո՛չ եղեն ժուժկալք՝ և ո՛չ անսացին բանից և աղաչանաց նոցա, այլ հևալ գնացին առ իշխանս Մահմետականս, սուտ խօսեցան զՀայոց և ասացին, թէ Հայք գնացին առ Յոհանկան, և դարձան ի հաւատս նոցա, և առին զդանձս զայս և բերեալ վճարեցին ձեզ։ Այլ և ինքեանք մատնիչք արքն երկոքին ամենայն ընտանեօք իւրեանց դարձան յօրէնս Մահմետի, և պնդութեամբ կալան զայն հաւատն, զի ամենայն ընտանեօք իւրեանց թլպատեցան։

Եւ ի վերայ այսմ բանի յոյժ խոժոռեցան իշխանքն Մահմետականք՝ և ասելով զբանն ընդ միմեանս, մինչև հետս բանն յունկն թագաւորին, որոյ կարի ծանր և դառն թուեցաւ։ Որ և հրամայեաց բերել առաջի իւր զմելիքներն. և նախ զԴարապաշ մելիքն գտեալ տարան յայնմ աւուր, ընդ որում խօսեցաւ արքայ և ասաց մեղադրանօք և

4 Ա. *զդանձս*
5 Ի. *Դարաբաշ*
7 Դե *Բաղդասար*
12 Ա. *զաւուրս*
15 Ա. *յայսմանէ*
16 Բե *անուն* Դե *Բաղդասար*
17-18 ԲԴե *հակառակ*
22 ԲԳ *զանձս*
28 ԱԳ *ևևալք*
30 ԱԳ *առնալ փխ և առին*
31 Դե *մատնիչ* Ա. *ամենիւք* Բե *ընդանեօք*
32 ԱԴԳ *պնդութեամբ*
33 Ա. *ամենիւք* Բե *ընդանեօք* Բե *թլփատեցան*
34 Ի. *այսր*
35 ե *մինչ*

սպառնալիօք: «Ո՛վ ազգ ապերախտ և չար, արժանի բնաջինջ կոտորման, ես ողորմեալ ձեզ եառու այսքան պանձ, և ձայսքան ամաց շահն ես շնորհեցի ձեզ, և խոստացայ այլ ես շնորհել, եթէ դառնայք ի հաւատս մեր, և դուք ասացիք. «վասն դանձի ո՛չ դառնամք ի մերոց հաւատոց». և այժմ ո՞վ ըզդձեալ էք ի հաւատն Քրիստոսի, և առեալ էք ի նոցունց դանձ. արդ՝ եթէ վասն դանձի դառնայիք հաւատոց ի հաւատս, ո՞վ էր նուաստութիւն և արատ մերում հաւատոյ յոր ո՛չ դարձայք»: Պատասխանեալ մելիքն իւրովք ընկերովքն. «Ո՛վ հրաշալեան և սիրելեաւկալ արքայ՝ քաւ լիցի մեզ դառնալ ի մերոյս հաւատոյ, ոչ եմք դարձեալ, այլ կամք ի հաւատան մեր որպէս և էաք յառաջն, և որք զբանս զայս ասացեալ են զմէնջ առաջի քո սէրութեանդ՝ նոքա աստ են ասացեալ. և զպանձն զոր ի Քրիստոսէ առաք փոխ առաք, զոր և բերեալ տուաք ի տեղի պարտուցն»: Պատասխանեալ ասաց արքայ. «Ո՛չ է ճշմարիտ խօսքդ ձեր, քանզի պատճառանօք է փոխոյ այդ, զի եթէ ստուգիւ փոխ էր՝ յայլոց ազգաց ո՞վ ոչ առնուիք, այլ միայն ի Քրիստոսէ»:

Եւ թէպէտ ի բաղում աւուրս բազում կերպիւ խօսեցան ժողովուրդքըն, այնուհետև բնաւ ոչ ետ տեղի բանից նոցա արքայ: Այլ որպէս նախ էր ասացեալ, սոյնպէս և այժմ ասաց. «եթէ դառնայք յօրէնս մեր՝ յոյժ բարւոք առնէք, զի զոր ինչ և պարտիք զայն ամենայն շնորհեմ, և ի վերայ այնր բազում և այլ ևս պարգևս և զձիրս բաշխեմ ձեզ: Ապա թէ ո՛չ դառնայք, մատնեմ զձեզ ի տանջանս անզերծանելի, զի ի մէջ տանջանաց վատնեալ սպառեսցին ոգիքն ձեր՝ և ընդ վայր սատակեսջիք»: Զոր և իսկոյն մատնեաց ի ձեռս դահճաց, զի թարց իմիք ներելոյ հանապազ տանջեսցեն մինչ կամ դառնան կամ մեռանին:

Եւ այնուհետև ևկն ևհաս ի վերայ ողորմելի ժողովրդեանն մէդ, մատաղուղ և խստար անփարատելի, զի վազվազակի փութացեալ անօրէնն դահճացն այսր և անդր գտին զամենայն արս ի ժողովրդենէ անտի՝ կալան, և սկսան յանխնայ չարչարել, հարկանել և վիրաւորել, ի կախաղանի և յորսայս, ի շղթայս և ի կոճեղս, ի բանտս և յարդելանս, սովով և ծարաւով զբազում աւուրս, և սպառակ ժողովրդոցն, լալ և կոծ արանց և կանանց ընդ իրեարս խառնեալ չերկիցիս հաւանէր:

Եւ զՂարապաշ մելիքն կախեալ պխիվայր՝ այնքան բրածեծ արարին, որ ոտից ըղնգունքն թափեցան, և չարենէն ամենայն մարմինն թաթաւեցաւ՝ և եղև անշունչ իբրև զմեռեալ, վասն զի կարի չաւէտ անօդորմ հարին՝ չահ և չերկիւղ միւս քրիստոնէից ըմբռնելոց. և ընտա-

1-2 Ա.Բ *բնաջնջի և կոտորման* ԳԲՆ *բնաջինջ և կոտորման*
2 Ա. *զայսքան* Ա *զպանձ*
6-7 ԱԴ *ի հաւատոց* փխ *հաւատոց*
7 Ա. *մերոյ*
8 ԳՆ *զարձաք*
11 Ա.Ի *ասացեալք են* Ա.ԲԳԴ *քում* փխ *քո*
12 Ա. *զսուտ* ԲՆ *զանձն* Ա. *զփոխ*
15 ԲԳՆ *թէ* փխ *եթէ*
17 Ա *բազմաւ*
18 Ա. *զանձի*
21 ԲԳԴՆ *ձիրս*
22 Ա. *անզերծանելիս* ԲԳԴՆ *որ* փխ *զի*
23 ԱԴ *ոգիք*
26 ԳՆ *ևկն չհաս* Ի *ևկն և հասս*
30 ԲՆ *բանդս*
31 ԱԴ *սովու*
32 ԱԴ *իրեար* ԲԳՆ *իրար*
34 Ա.Դ *ոտից ըղնկունքն* ԲԳՆ *ոտից ըղնկունքն*
36 Դ *քրիստոնէիցն*

նիք նորա տարնալ ծածկեցին ի մէջ փայտին։ Եւ Պարսիկ զօրականքն, որք չարչարէին զժողովուրդսն, վասն խաբելոյ զայլ ժողովուրդսն, համբաւ հանին, թէ Դարեհաշէն մելիքն տաճկացաւ։

Եւ Պարսիկքն, որ զայս ամենայն ածին ի վերայ նոցա՝ իմացան զհաստատուն միտս նոցա՝ և ծանեան նեղ մնանելն կամին և ո՛չ դառնալ յօրէնսն Մահմեթի, այնուհետև բռնութեամբ ի վայր կոխեալ թլպատէին, և առնէ տային զդաւանութիւն հաւատոյն իւրեանց, և բազումք ի քրիստոնէիցն կաշառս ետուն զօրականացն և թլպատողացն և վերծան ի թլպատութենէ։

Եւ ապա գնացեալ տացին շահին, թէ Դարեհաշէն մելիքն և իւր ժողովուրդքն կատարեցին զհրամանն թագաւորին. զի թլպատեցան, և դաւանեցին զմեր դաւանութիւնն, և եղեն մուսուլմանք։

Յայնժամ զուարճացեալ շահն հրամայեաց, թէ զոյս ամենեցուն՝ որք եկին ի հաւատս, թողէք զառաջին պարտսն, զորս տալոց էին, վասն զի շնորհեցի, և այլ ևս պարգևս նոր այժմ տո՛ւր, զի մխիթարեսցին ի վերայ վշտացն՝ զոր կրեցին։ Եւ յայսմ հրամանէ թագաւորին լուծին զնոսա զամենևևան ի կապանաց, և ետուն նոցա պարգևս իւրաքանչիւր տան առանձին երիք թուման դրամ, և առ սոսա այսպիսի կերպիւ վճարեալ զիրակութիւն գործոյն, դարձան ի տունս իւրեանց, զի երևելոյացեալ էր օրն։

Եւ զկնի սոցա ևհաս կարգն ի Ղրխեալան մելիքն՝ և ի ժողովուրդս նորա. և յայնմ երեկոյին եկեալ դահճացն կալան զՂրխեալան մելիքն և տարան, որում հրամայեցաւ ի թագաւորէն, թէ դարձիր յօրէնս Մահմետի, և ա՛ռ քեզ պարգևս, և մեծութիւնս. և զևտական իշխանութիւնս, և մի մատներ անմտաբար զանձն քո տանջանաց և ի կեր առիւծուց՝ և շանց, որ և զգազանս պատրաստական անդէն կապեալ ունէին։ Իսկ Ղրխեալան մելիքն եթէ յահարկութենէ և յամօթոյ թագաւորական առնենին՝ և թէ յերկիւղէ տանջանացն, և թէ ի պատրանաց խոստմանց, յանձն էառ կատարել զհրամանս թագաւորին՝ որ և անդէն իսկ դաւանեցուցին նմա զդաւանութիւն հաւատոյն Մահմետի՝ և տաճկացաւ։ Իսկ իշխանքն և այլ մահմետականքն սկսան գովել զնա և ասել. «Զայդ բարւոք արարեր՝ զի եկիր ի ճշմարիտ հաւատս, և ի վերայ այդմ պարտ է քեզ, զի զժողովուրդսն քո զամենայն բերցես ի հաւատս

36-1 ԲՆ *ընդանիք* Ա. *փայինի* ԱԴ *պարսիկք*
2-3 Ա. *զհամբաւ*
4 ԱԲԳԴՆ *պարսիցն*
5 Դ *թէ փխ եթէ* ԱԲԴՆԵԿ *մնռանիլ*
6 Դ *յօրէնս*
6-7 ԲՆ *թլփատէին*
8 ԲԳՆ *կաշառք*
8-9 Ն *թլփատողացն... ի թլփատութենէ*
11 ԱԲԳԴՆ *զհրամանս* ԲԳՆ *թլփատեցան*
12 ԲՆ *դաւանութիւն* ԱԲԳԴՆ *մուսուլմանք*
13 ԲԳՆ *դուարճացաւ*
14 Ա. *հաւատս* ԲԳՆ *պարտքն, զոր տալոյ էին* Դ *տալոյ էին* ԱԴ *չիմ վասն*
15 ԱԴ *նորս*
16 ԱԴ *զորս* Ա. *յայնմանէ*
17 Ա. *զպարգևս*
18 Ա. *այսպիսեաւ*
19 ԲԳԴՆ *իրակութիւն*
23 ԱԴԳ *չիմ թէ*
24 Ա. *զպարգևս և զմեծութիւնս և զպետականն*
25 ԲԳ *առիւծոց*
26 ԱԲԳԴՆ *զդազանսն*
28 Դ *չերկիղէ*
28-29 ԲԳՆ *խոստմանցն*
29 Դ *չանձ էառ*
33 Ն *այդր փխ այդմ*
ԱԲԳՆ *զի և զժողովուրդսն* Ա. *զամենեսեան*

յայս»։ Իսկ Ղրխևալան մելիքն սկսաւ անիմաստ և անգէտ բարբանջելով խօսիլ, և ընդ խօսիլն զտէր Բաղդասարն մատնել. քանզի ասաց՝ «կարծիս ունիմ, թէ ժողովուրդքն ամենևքեան դառնան և ոչ դիմադարձին, և թէ դիմադարձի՝ Բաղդասար երէցն միայն. և թէ նա դառնայ, ժողովուրդքն ամենևքեան դառնան»։

Եւ մահաբերաւէր լուրս՝ և դառնահամբաւ բօթս այս յայսմ իսկ երևոյի ետես առ Բաղդասար երէցն և առ ժողովուրդսն, որք և յաւէն հասին ի դրունս գժոխոց։

Իսկ բահանայն Բաղդասար յայնմ պիշերի ղյոյս և զհաւատս արիական հաստատութեամբ ժողովեալ առ ինքն, հաւաքեալ զամենայն ժողովուրդս քրիստոնեայս յաղօթանոց տունն՝ զոր ի քարվանսարայի անդ սահմանեալ էին և սկսաւ քարոզել ժողովրդեանն զմարդաւէր դիմութիւնն և զողորմութիւնն Աստուծոյ՝ զոր ինչ պիտէր, և յորդորեաց զամենեսեան յաղօթս և յաղաչանս բազմահառաչ և մեծակական ողբով և աղբիւրահոս արտասուօք խնդրել ի Տեառնէ, ի հնչտալոյ և յանոխակալէ, պի դարձուցէ զցասումն բարկութեան սրտի թագաւորին ի դութ ներողութեան ընդդէմ նոցա. և ամենայն ժողովուրդքն մեծաւ պաղատանօք կային մինչև յառաւօտն յաղօթանոցի անդ խնդրել ի Տեառնէ զգութ և զողորմութիւն։

Եւ ինքն Բաղդասար քահանայն, յերեկորեայ սկսաւ ցայգապաշտօն սաղմոսերգութեամբ զպիշերային աղօթսն կատարել, և անդէն ժողովուրդսն խոստովանեցուցանել և մատոյց դասատուածային պատարագն՝ հաղորդեաց զարժանաւորսն ի պատուական մարմնոյ և յարենէ Որդւոյն Աստուծոյ։ Եւ յայդ առաւօտին՝ մինչև էր բաժանեալ զմուխն և զլոյսն, ամենայն աղօթական կարգացն աւարտումն արարեալ կատարեցին։

Իսկ ընդ լուսանալ առաւօտին շեշտակի ձիընթաց արշաւմամբ եկին դինուորք և զօրականք իբրև զչար գազանք պատեցան շուրջ զտէր Բաղդասարիւ՝ քարշեցին արտաքս, և ձգեցին առաջի երիվարացն՝ ընթացմամբ վաղէին փութանակի հասանել ի դիւան թագաւորին։ Եւ ի հասանելն ի դուռն թագաւորին՝ շուրջ զնովաւ պատեալ մարդագէմ գազանքն կրճտէին պատամունսն, և խրոխտական բանիւք ջանային ատամամբք քանցել զմարմին նորա։

Իբրև նստաւ թագաւորն յաթոռն, տարան առաջի զտէր Բաղդասարն. ընդ որում խօսեցաւ արքայ՝ վասն դառնալոյ նմա ի քրիստոսա-

2 Ա.Ի *խօսիլ... խօսիլն*
3 ՐԳԴԵ *կարծիք* ԲԵ *դառնա*
4 Ե *Բաղդասար* ԴԵ *էրէցն*
7 ԳԴԵ *էրէցն*
9 Գ *Բաղդասար*
15 ԲԵ *արտասուաւք*
ՐԳԴԵՆ *հնչտալոյր փխ հնչտալոյ*
17 Ա. *ամենևքեան* Ա. *մեծիւք*
18 ԱԴ *յառաւօտն*
20 Գ *Բաղդասար*
22 Բ *խոստովանեցուցեալ* Ա. *չիՐ և*
23 Ա. *ի պատուականէ*
24 ԱԴԳԵ *այդ* Ա.Ի *առաւօտուն*
25 ԲԳ *զլոյսն* Ա. *ամենից աղօթականաց կարգաց զաւարտումն*
27 Ա.Ի *առաւօտուն*
28 Ա.Դ *գազան*
29 ԱԴ *Բաղդասարիւն* Ե *Բաղդասարիւ*
30 Ա.Ի *հասանիլ*
31 Ա.Ի *ի հասանիլն*
32 Բ *զատամունս* Ա. *խրոխտականիւք*
31-35 ԲԵ *Բաղդասար*
35 Ա. *քրիստոսականաց*

կան Հաւատոցն, և թէ յամառեալ ոչ Հաւանիս՝ շանց և առիւծոց կիրակուր լինիս. որ և վասն զնոսա անդադարեալ անդէն պատրաստական ունէին զպատանան։

Եւ անշուշտ խոստումն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի առաքեալ կատարեալ ցուցաւ՝ որ ասաց. «Յորժամ առնիցին զձեզ առաջի դատաւորաց և թագաւորաց՝ մի հոգայցէք, և մի վշտասջիք, թէ զինչ պարտ իցէ ձեզ խօսել. զի տացի ձեզ բան և իմաստութիւն ի ժամուն յայնմիկ՝ զոր ինչ պարտ իցէ խօսել. զի ոչ եթէ դուք իցէք, որք խօսիք, այլ Հոգին Հօր ձերոյ խօսացեալ ի ձեզ»։ Որով տուեալ պատասխանի Բաղդասար քահանայն թագաւորին և ասաց. «Եթէ ասես ինձ իմովք կամովք դառնալ յիմոյս Հաւատոց, ես կամովք իմովք ոչ դառնամ. և թէ բռնութեամբ դարձուցանես, ոչ է այդպէս հրամայեալ քեզ օրինադիրն քո. և թէ վասն պարտուցն քոց ասես և խնդրես, զլուծն տուեալ եմք, և որ ինչ մնացեալ է, զայն ես այսօր և ի վաղիւն վճարեմք»։ Եւ զոր օրինակ ջուր ցուրտ հեղեալ ի մէջ եռանդնոտ կաթսայի՝ նոյնժամայն նսեմացանէ զնորին փրփրալի եռանդն, այսպէս բանք աէր Բաղդասարին ցածոյց զբարկութիւն թագաւորին. յորոյ պատճառէ այլ ոչինչ ասաց արքայ, բայց միայն զայս՝ թէ դնացեալ տուր զմնացեալ պարտսըն քո։*

*Արդ՝ Տէրն Քրիստոս որ ասաց. «Ուր երկու և երիք ժողովեալ են յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա»**, նոյն ինքն և այժմս ես նայեցաւ ի ժողովս սոցա, և ի ցայգապաշտօն արտաստուալի յաղօթս նոցա, և ցածոյց զբարկութիւն թագաւորին, յորմէ զերծան տէր Բաղդասարն և ժողովուրդքն յերկուց վտանգից, ի տանջանաց, և յուրացութենէ։ Այնուհետև վճարեցին զմնացորդս պարտուց թագաւորին, առին դիր ազատութեան, և դոհանալով զՏեառնէ կային խաղաղութեամբ։*

Իբրև այս ամենայն կատարեցաւ ի վերայ ժողովրդոյն՝ որք զմասըն ինչ ի նոցունց և զմիլիքնևրն դարձուցին ի պատանութիւնն Մահմետի. այնուհետև վերոյասացեալ Ֆռանկ եպիսկոպոսն եկեալ առ թագաւորն Շահաբաս ասաց. «Ունիմ ընդ քեզ պատասխանիս խօսք ինչ, զի դու խնդրեցեր ստուգել պարտսն քո ի Հայոց, և նոքա ոչինչ ունէին զի տուեալ վճարեսցեն, և ես վասն քրիստոնական Հաւատոցն եաւու նոցա դրամ, զի տացեն ի պարտսն քո, և կացցեն ի քրիստոնական

* *Տե՛ս Մատթ. ժ, 18—20, Մարկոս, ԺԳ, 11, Ղուկաս ԺԲ, 11*

** *Մատթ., ԺՀ, 20*

1 Ա.ՐԴԵ *առիծուց*
2 Բ *անդրէն*
7 Ա.Ի *խօսիլ*
8 Ա.Ի *խօսիլ* Դ *լեթէ փխ եթէ*
ԲԳՆ *որ* Ա.Դ *խօսիցիք*
9-10 Գ *տալեալ... Բաղտասար*
10-11 Ա. *իմօք կամօքս ... կամօք իմօք* ԲՆ *կամօքս ... կամօք* Դ *իմով կամովքս... Հաւատոցս կամօք* Ի *կամօք... կամովք* Դ *իմովք կամօքս ... Հաւատոցս... ես կամօք իմովք... ն Հաւատոցս*
12-13 Ի *օրինադիրն*
15 Դ *զօրօրինակ*
16 Ա. *տեառն*
17 ԴՆ *որոյ*
20 Ա. *ժողովեալք*
22 Ա. *ի ժողովս նոցա*
23 Դ *Բաղտասար* Ն *Բաղդասար*
24 Ա.Դ *վտանգից*
25 Ա. *զգիր*
27 ԲԳՆ *որ*
28 Ն *ի պատանութիւն*
33 Ա. *զդրամ*

հաւատաս, զոր և բերեալ եառն քեզ և վճարեցին պատարտան քո: Իսկ դու յետ առնլոյ զգրամն ոչ թողեր ի հաւատս Քրիստոսի, այլ դարձուցեր ի հաւատն ձեր՝ որովհետև այսպէս արարեր, իրաւունք դատաստանին վկայեն վասն իմոյ առեալ զանձին առ իս պառնալ. արդ խընդրեմ յարքայէ զի զգանձն իմ առ իս դարձուցէ»: Իսկ Թագաւորին մտախոհ եղեալ եառն զի իրաւամբք էր բան եպիսկոպոսին, զերկու Հարիւր Թուման զրամն դարձուցանել առ եպիսկոպոսն վճարեաց նմա:

Իսկ Ղարապաշ մելիքն և ժողովուրդքն՝ զոր բանութեամբ դարձոյց շահն յօրէնս Մահմետի, այն միայն էր զի յաւելի անդ ասացին զդաւանութիւն տաճկաց, զկնի այնորիկ այլոյն կային ի վերայ քրիստոնական հաւատոց, և ևս առաւել հաստատուն, քան զառաջինն, վասն խղճմտանաց ուրացութեանն: Քանզի զաղային մկրտէին, զմեռեալսն քահանայիւ թաղէին, և չկիզանէին հանապազ գնացեալ աղօթէին՝ և խոստովանեալ հաղորդէին. և մահմետականացն ոչինչ փոյթ էր նոցին այնպէս առնէն, որոց զկնի որպիք նոցին ամենեքեան քրիստոնեայք են այժմ և ի ժողովուրդս քրիստոնէից բնակեալք:

Իսկ խղճմտանք Ղրխանալան մելիքին առաւել սաստկանալ յանդիմանանաց զնա. որ և զկնի ամաց ինչ անցանելոյ, էառ զկին իւր իրիք ինչ պատճառանօք՝ թէ գնամ ի Բարվէզ, և անցեալ զայնու՝ գնաց յերուսաղէմ, կատարեաց զամենայն ուխտ անօրինականացն Քրիստոսի. և մնացին անդէն ինքն և կինն իւր: Եւ վասն զի արուեստիւ քարագործ էր, վասն սուրբ Երուսաղէմայ գործէր առանց վարձու, ակն ունելով ի Տեառնէ վարձուց Հաւատոյման և զամենայն ժամանակս կենաց իւրոց զորս եկաց, այնպէս եկաց և անդէն ի քաղաքին Երուսաղէմ վախճանեցան, և թաղեցան Ղրխանալան մելիքն և կինն իւր, որոց արասցէ Տէրն Քրիստոս վներումն և զթողութիւն իւրով անբաւ ողորմութեամբն. ամէն:

ԳԼՈՒԽ ԺԴ

ՄԻԻՍ ԵՒՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԵՂՈՒԹԵԱՆՑ, ՋՈՐ ԿՐԵՑԻՆ ԱՋԳՆ ՀԱՅՈՑ ՅԱՌԱՋՆՈՅ ՇԱՀԱՓԱՍ ԹԱԳԱՒՈՐԷՆ

Եւ եղև յաւուրս ժամանակաց, յորում ամի էր Թուականն մեր ՌԿԹ. զի թագաւորն Շահաբաս մեծն և առաջինն, ելեալ ի քաղաքէն Սպահանու գնաց յերկիրն Փարիսայ և ի Բուրվարի, յորում զազգն Հայոց բնակեցուցեալ էր:

1 Գն *որ*
2 Ա. *զզրամին* ԲԳՆ *զրամին*
9 ԲԳՆ *որ փխ զի*
10 Ա. *այնմիկ փխ այնորիկ* ԲԳՆ *այնմիկ այլոյ*
10-11 Ն չիմ *«այնորիկ այլոյ... ևս»* (ձեռագիրը պատռված է)
12 Ն *ուրացութեան*
13 Գ *գնացեալ հանապազ*
16 Ա.Է *քրիստոնեայքն են*
22 Ա. *սրբոյ երուսաղէմի:* Բ *սրբոյ երուսաղէմայ*
23 Ա. չիմ *և*
24 Ա. չիմ *այնպէս եկաց* Ա.Է *եկեաց:* ԲԳՆ *զորս էկաց այնպէս էկաց*
26 ԲԳՆ *ներումն և թողութիւն* Բն *ամբաւ*
28-29 Ն չիմ *«Միւս եւս ...Հայոց յաո»* (ձեռագիրը պատռված է) Ա. *զորս*
29 ԲԳՆ *յառաջին*
32 ԲԳՆ *և գնաց փխ գնաց*

Եւ ըստ սովորութիւն էր այս Շահաբասիս երբեմն երբեմն, ըստ այսակերպակալ ինքն՝ ձեռնայր իբրև ըմբ ի զօրականաց՝ և գնայր ի տեղին ուր գնալոց էր, և քան այսմ սովորութեան չայսմ նուագի ևս արար, ըստ ինքն միայն և իւր չառաջընթաց փայլակն, նախ քան զամենայն զօրան՝ ելին չառաջին գիւղն երկրին Փարիոյ՝ զոր Դարբնի գիւղ անուն։ Որում հանդիպակալ կին ումն ի նոյն գնդէջէն, և կինն ոչ գիտէր զնա թէ շահն էր, խօսեցաւ շահն ընդ կնոջն և ասաց. «Սիրէ ունիս հաւ վաճառիոյ՝ քեր առ ինս ըստ գնիցիս». իբրև լուր կինն զհաւն, և ի պատճառ հաւին բազում խօսս և զրանս առաչարկեալ փորձ ի փորձ ընդ կնոջն, խօսէր զնանրութիւն և ի սիրտս իւր ժողովէր զանօրէնութիւն։ Եւ ի կարգս խօսիցն ասաց շահն. «Տաան փող տամ քեզ ի կինս հաւիս՝ և թէ դու սիրես զշահն, տուր մեզ զհաւս», և կինն ասաց. «Զինչ լաւագոյն բարիս և զերախտիս տեսաք մեք ի շահէն՝ որ զաան սիրոյ շահին տաց քեզ զհաւս»։ Եւ շահն ասաց. «Զինչ այլ ևս բարիս արասցէ ձեզ շահն, ըստ չայսպիսում լաւ և վայելուչ երկրի բնակեցուցեալ և չապահով պահէ զձեզ չամենից նեղութեանց, և քաղցրութեամբ և պիով վարի ընդ ապգիդ ձերում»։ Եւ կինն ասաց. «Երանի թէ ոչ էր բերեալ զմեզ՝ ըստ վտարանդի արտրեալ հհան զմեզ ի նախնի աշխարհէն մերմէ, ի բնիկ տեղեաց, և ի հայրենի ժառանգութենանց, և բերեալ առեալ չօտար աշխարհի բնակեցոյց պանդխտութեամբ»։

Եւկ այս բան կնոջն իբրև զերկաւարի առ պատահեցաւ ի սիրտս շահին, զաան զի կարի ծանր և դառն թուեցաւ նմա, մինչև ի սիրտ և ի հոգի խոցեալ լինէր, և չառաւել բարկութենէն լռեալ կայր՝ և ոչինչ խօսէր։ Եւ ի ժամս չայս ելին և հասին առ շահն նորին նախապատիւ և փառաւոր նախարարքն, Սպանդիարբէկն և այլք, և ի տեսանելն զնա այնպէս զայրագին բարկութեամբ լցեալ՝ ոչինչ խօսեցան, այլ լռեալ կային ի բացեայ։

Եւ ահա գայր, և անցանէր առ նոքօք երէց գիղջն այնմիկ՝ որում անուն էր տէր Աւետիս, որ ի հողագործութենէ անդին եկեալ գնայր ի տուն իւր։ Իբրև տեսս զնա շահն՝ կոչեաց առ ինքն՝ հհարց, թէ ինչ մարդ ես. ասաց երէցն. «Հայ եմ». ասաց շահն՝ «Եւ դի՞ զաան երկայն է մորուդ». ասաց երէցն. «Գիղիս երէցն եմ». ասաց շահն. «Եկ մուսուրման եղիր». ասաց երէցն. «Ես այր գեհհիկ եմ, և մանաւանդ ծերացեալ եմ, և ոչ կարիմ կատարել զարարողութիւնս մուսուրման օրի-

1-2 Ա *դի երբեմն փխ երբեմն երբեմն դի* Դ *դի երբեմն երբեմն այլակերպակալ*
3 ԲԳ *գնալոյ էր ն սովորութեանն*
4-5 Ա *կամենեսան*
8 Ա. *զհաւ*
9 ԲԴՆ *բանս*
11 Ա. *զտաան*
13 ԲԳԴՆ *երախտիս*
14 Դ *բարի*
15 Բ *այսպիսում*
16 Ա. *չապահով* փխ և *չապահով* ԴՆ *չամենայն*
18 Դ *մեզ* Ա *ի նախնեաց*
19 Ա. *ի հայրենեաց*
21 ԲՆ *բանք* Բ *ի սիրտ*
22-23 ԲԳՆ *և չոգի* Դ *և ի չոգի*
24 Բ *եկին հասին առ շահն*
24-25 Ա. *նախապատիւք և փառաւորք*
25 ԲԳՆ *այլքն*
28 ԳՆ *երէց* Դ *երեց*
28-29 Ա. *որոյ անուն* ԲԳՆ *որում անունն էր*
31 ԳՆ *էրէցն է էր զաան* փխ *զի զաան*
32 Գն *մուրուդ... էրէցն* Դ *էրէցն... էրէցն*
33 ԳԴՆ *էրէցն*
33-34 ԲԳՆ *ծերացեալ* փխ *ծերացեալ եմ*
34 Դ *օրինացն*

նաց»: Եւ զայրագին սրամտութիւն թագաւորին կարի յորդեալ առաւելաւ՝ որ և ոչ հանդուրժեալ ի բարկութենէ իւրմէ շահն, այլ էառ ի ձեռաց փայեկին զկացնակն, որ է նաջախն՝ և նովաւ ուժգին բախմամբ հնար զղլուխ երիցոյն և կարի պատառեաց: Որոյ վիրացն և բախմանն չհանդուրժեալ ևեթ երիցոյն, այլ ուշաթափ և խելապնաց եղեալ՝ անկաւ անշնչացեալ իբրև զմեռեալ. և ի սաստիկ բարկութենէ իւրմէ շահն անդէն ի նմին ժամու հրամայեաց մերձակայիցն թլպատել զնա, որ և վաղվաղակի թլպատեցին, թէպէտ երէցն իբր զմեռեալ անդգայ էր: Եւ թողեալ զերէցն այնպէս ինքն անցեալ գնաց ի բանակատեղն ի վրանն իւր:

Եւ այնուհետև բարձաւ գութ և ողորմ ի սրտէ թագաւորին ընդդէմ Հայոց, և կոչեաց առաջի իւր զվէզիրն, ըստ նմին և զշհին, որում անունն էր Միր-Ասղուլլայ, և հրամայեաց նոցա ծօրականօք մատանել ի գաւառսն յայնոսիկ, և ծագէ ի ծագ տաճկացուցանել և թլպատել: Եւ որ ոք կամօք և յօժարութեամբ հնազանդեսցի՝ բարւոք է, և որ ոք ոչ հնազանդեսցի, տանջանօք և բռնութեամբ թլպատեսցեն, և զարձուսցեն ի կրօնս մոլար առաջնորդին: Եւ բազում սաստիւք և սպառնալեօք պատուէր առեալ նոցա կատարել զամենեսեան հրամանս իւր, և ինքն դարձեալ ի Փարիոյ ևկն ի քաղաքն Սպահան:

Եւ յայսմ հրամանէ թագաւորին հալածումն մեծ եղև ի վերայ Հայոց, զի թողեալ զտունս և զընտանիս, և զինչս, և ելեալք ցրուեցան իւրաքանչիւր ոք հանդէպ երեսաց իւրոց, ի լերինս և յանապատս, և յանմարդաձայն տեղիս. և բազումք գնացեալ ի հեռաւոր գաւառս, փոխեալ զանունս և զձևս, և այնպէս կային անգիտելի ումեք, և ոմանք ի նոցանէ զբազում աւուրս քաղցեալ և սովալլուկ լեալ թափառական շրջէին ի լերինս, և ոչ կարէին ի շէնս մտանել՝ կամ ումեք երևել, վասն ահի թագաւորին և թլպատողաց:

Եւ իշխանքն, որք կարգեցան թլպատողք՝ մտին ի գաւառսն, և զորս գտին, սաստիւ և սպառնալեօք տանջանաց՝ և բռնութեամբ զամենեսեան թլպատեցին, ևթէ աշխարհական և թէ երէց:

Ըստ սասցելումս օրինակի առնելով Հասին ի Փառչիւ գիւղն, և անդ ևս կատարեալ զգործս իւրեանց անօրէնութեան, ելեալ անտի կամէին գնալ ի գիւղն Փահրան, և տանուտէր գեղջն Փահրանու՝ որում անունն էր Նուրիջան, ասաց ընդ իւրում գեղակացսն. «Եկայք զինուրեսցուք և միաբանութեամբ զդէմ կացեալ պատերազմեսցուք ընդ այլ-

5 ԱՐԳՆ տևիլ Գ տևիլ իրիցոյն
ԱԴ չիք և խելագնաց
6 ՐԳԵ իւրոյ փխ իւրմէ
7 ԴԳՆ թլփատել
8 ԴԳՆ թլփատեցին... երէցն Գ իբրև
12-13 Ա որոյ անունն էր
13 ԱՀ Աւղուլայ
14 Դն թլփատել
14-15 Գ և որք ոչ
16 ԳԴՆ թլփատնսցեն
17 Ա բազմօք ՐԳԴՆ սաստիւ
18 Ա զպատուէր Դն զամենայն
20 Ա յայսմանէ
21 ՐՆ զընդանիս ԳԴՆ ելեալ
23 ԱԴ գնացեալք
26 ԱՐԳԴՆ հրևիլ
27 ԱԲ թլպատողացն ԴԳՆ թլփատողացն
28 ԳԴՆ թլփատողք
30 ԳԴՆ թլփատեցին
31 Դն Փառչիս ՐԳ գեղն
32 Ր կատարեալ
33-34 Ա որոյ անունն էր

ազգի թլպատողացն, և մի թողուցուք մատանել ի դիպս մեր»: Եւ զեղականացն ոչ լինալ միաբան և ընկեր նմին, այլ փախուցեալք գրուեցան ի լերինս: Իսկ Նուիրջանն ինքն միայն ածեալ զիւրեաւ տուսեր, և առեալ նեաւ և ազեղն, և գնացեալ զկէս ճանապարհին, և եկեալ ի գլուխ փոքր և բոլորակ բլրի միոյ, առ որոյ ստորոտովն ճանապարհն անցանէր: Եւ թլպատողքն եկեալք ի Փառիշոյ յուզի անկեալ գնային ի Փահրան, իբրև մերձ եղեն առ ստորոտս բլրին, և ահա յանկարծակի ահագին գոչմամբ ձայն արձակեալ Նուիրջան՝ և յիւրում դարանեալ տեղւոջն սկսաւ նետաձիգ լինել առ նոսա, և այնպիսի նետաձգութեամբ արկել՝ և կացոյց զնոսա ի գնալոյ, և ապա արտաքս եկեալ ի դարանէն սակաւ նետաձգութեամբ և հալածական առնելով չետս դարձուցեալ անդրէն ի Փառիշ՝ եղից ի մէջ զեղջն, և ինքն դարձաւ ի զիւն իւր ի Փահրան:

Իսկ թլպատողքն՝ որք դարձան ի Փառիշ, կացին մինչև ցերեկոյն, և ապա առաքեցին լրտես պիտանալ, թէ ուրանօր իցէ Նուիրջանն, և լրտեսն եկեալ պատմեաց թէ չիւրումն տան կայ աւանիկ: Յայնժամ ամենայն Պարսից սպատապետալք զգիշերայն եկեալ գնացին ի Փահրան՝ և պատեցին զտունն Նուիրջանին. և կալեալ կապեցին զնա, և ի լուսանալ առուրն արկին յորսայս և սկսան բրածէծ առնել զնա, և այնքան հարին որ ամենևին ողջ անդամ ոչ մնաց ի մարմնի նորա՝ և եղև իբրև զմեռեալ, որ և անդէն առ ժամայն թլպատեցին և ապա ի բաց կացին ի նմանէ: Եւ զեղական կանայքն տարեալ թաղեցին ի մէջ փայտնի մինչև ցերիս աւուրս. և մնաց Նուիրջանն այնու ցաւով հիւծեալ մարմնով յանկողնի ամիս չորս, որ ոչ կարէր կանգնիլ ի վերայ ոտից:

Եւ այսպէս թլպատող իշխանքն շրջեցան յերկոսին գաւառսն, ի Փարիսոյ և ի Բուրվարի, զորս և գտին թլպատեցին, թէ աշխարհական և թէ հրէց, և ի պրատել ամենայնի՝ դարձան ի Սպահան քաղաք՝ և պատմեցին թագաւորին: Եւ շահն հրամայեաց արար վասն թլպատեալ հրէացանցն, թէ յաբբունական գանձէ իւրաքանչիւր հրէից տացեն զքառասուն ոչխար, և արարին այնպէս: Շահն զայս ոչխարքս վասն այնր նա հրէացանցն, զի ոմանք յհրէացանցն ապահեալ չինչն հնշատացին այնու տրօք, և մի գրգռեսցեն զժողովուրդս իւրեանց դառնալ ի տաճկութենէ և ոմանք, որք կերեալ և վատնեալ իցեն, յերկիւղէ վճարելոյն կացցեն ի տաճկութեան:

Յետ այսորիկ խորհրդով նախաչարին լցեալ շահն առաքեաց այլ ևս իշխանս զօրականօք, և հրամայեաց նոցա գնալ յերկոսին գաւառսն,

1 ԳԴՆ *թլփատողացն*
1-2 ԱԼ *զիւզականացն*
3 ԲԳՆ *Նուրիջան*
4 Ա. *զնոսա և զաղեղն*
6 Գն *թլփատողքն եկեալ*
8 Ա. *զձայն*
9 ԲԳՆ *տեղոջէն* ԱԲԼ *լինիլ* Ա. *այսպիսեաւ*
12 ԱՊ *Փառիս* ԲԳԴՆ *զեղին*
14 ԳԴՆ *թլփատողքն*
17 Ա. *ամենից* ԱՊ *եկեալք*
18 Պ *չիբ և (պատեցին)*
21 ԱԳԴՆ *թլփատեցին*
23 ԲԳԴՆ *ցաւօքն*
25 ԱՊ *թլփատողն* Շն *թլփատող*
26 ԱԳՆ *թլփատեցին*
27 **ԲԳԴՆ** *քաղաքն*
28 ԱԳԴՆ *թլփատեալ*
29-30 ԲԳՆ *քառասուն*
30 ԱԲԳԴՆ *այն փխ այնր*
32 ԲԳՆ *տրօքն* ԲԳԴՆ *գազտնացն*
33 Ա. *կերեալք և վատնեալք* Պ *կերեալք*

շրջիլ յամենայն գեղերայս, և լմբռնել զամենայն երիցունս՝ և սպառնալիօք ահացուցանել զնոսա, և առնուլ ուխտ և պայման ի բերանոց նոցա, զի մի պահեսցեն զգիրս ինչ ի գրեանց իւրեանց. և թէ իցէ ոք, որ պահեալ իցէ՝ և որ ոք զայն յայտնեսցէ, զկնի պատուհին թագաւորական եղիցի. և ամենայն ինչք և ընտանիքն ցուցողին եղիցին: Զայս հրաման առեալ զօրականացն գնացեալ շրջեցան յերկոսին գաւառսն, զգրեանսն և զեկեղեցական անօթսն՝ զրոս և զոսին՝ բռնութեամբ յափրշտակեալ ի քրիստոնէից և առեալ բերին ի Սպահան քաղաք՝ և ծանուցին շահին, և շահն ասաց պահել զամենայն:

Չկնի այսորիկ առաքեաց շահն բազում մօլլայ յաղգէն Պարսից ի Փարիայ և ի Բուրվարի, զի անգէն կացցեն, և զբէնս Մահմետի ուսուցցեն Հայոց, և ժողովեցեն յամենայն աւուր ի մաշիդ առ ի յաղօթել, և զմանկունս քրիստոնէից Պարսկերէն կարդացուցանեն: Եւ մօլլայքն նկնեալ ցրուեցան ի գեղերայս գաւառացն, ուր երկու և ուր երեք, և բռնաբարելին զքրիստոնեայսն գալ ի մաշիդ՝ և ճառանել յօրէնս Մահմետի մոլար առաչնորդին: Իսկ քրիստոնէիցն զժուարեալ ընդ այն՝ ոչ հնազանդէին, այլ զիմագրաւեալ բանաւէճ լինէին, և օր աւուր առաւելեալ ի վէճս և ի բանս այնքան, մինչ զի ի մօլլայիցն զերիս և զչորս սպանին, և զայն տեսեալ այլոց մօլլայիցն երկուցեալք ի սպանմանէն՝ փախստական եղեն ամենեքեան՝ և գնացին ի տեղիս իւրեանց: Եւ ողորմելի քրիստոնէիցն կացեալ ի Հալածանս և ի չարչարանս ի ձեռս Պարսից զամս երկու:

Եւ ապա այր ոմն քրիստոնեայ՝ անունն Գրիգոր, որ էր նախկին նա ի վայոց ձորոյ՝ զոր Եղեգաձոր ասեն, ի գեղջէն Արփայու, և այժմ ի գաւառին Փարիոյ գոլով՝ բնակէր ի գիւղն զոր Ներքին Խոյիկան ասեն, և էր սա մարմնովն պարթևահասակ և յաղթանդամ և սրտիւն արի, բանիւք և խելօքն հանճարեղ. և հաւատովն և սիրովն Քրիստոսի հաստատ և ջերմագոյն: Այս Գրիգոր ելեալ շրջեցաւ ի գեղերայս գաւառին՝ և քաջալերեալ յորդորեաց զամենայն ժողովուրդսն և եղև զլուխ և առաջնորդ նոցա, էառ ընդ իւր արս հօմն և եկն ի քաղաքն Սպահան. և գնացեալ էառ զբազում գանձս ի փոխ և բերեալ նա իշխանաց շահին կաշառս, և հաւանեցոյց զամենեսեան, զի ի պատեհ ժամու բարիս խօսեսցին վասն նոցա առաջի թագաւորին:

Ապա ինքն գրեաց արզայ աղաչանաց և մատոյց առ թագաւորն ոչ թէ միանգամ կամ երկիցս, այլ հնգիցս և վեցիցս. այնքան խօսեցաւ յառեան և ի դիւան թագաւորին՝ մինչև ձանձրանալ թագաւորին և ա-

1 Ա. *յամենեսեան* Ւ *գիւղօրայս*
Ա. *զամենեսեան*
2 Ս. *զուխտ և զպայման*
3 ԲԳԻՆ *գիրք* Ն *ի գրենաց*
4 Ա.ԲԳԻ *գլուխն*
5 Ա. *ամենեքեան*։ Գն *ընդանիքն* Ն *եղիցի*
10 Ա. *զրազում*
12 ԳԳն *մաշիթ*
13-14 ԲԳն *մօլայքն*
15 ԳԳն *մաշիթ*
18 Բ *մօլայիցն* Բ *զչորս* Գ *չորս*
20 Ա.Դ *փախստականք*
21-22 Գ *ի ձեռն պարսից*
22 ԲԳն *պարսիցն*
23 Բն *անուն* ԲԳԻն *նախկի*
24 Գն *վայոյ ձորոյ*
25 ԲԳն *Ներքի*
27 ԲԳԻ *բանիւ և խելօքն*
28 Ա.ԲԼ *գեղօրայս*
29 Ա. *զամենեսեան*
30 Ա. *զարս* Բ *եկին*
31 Գն *բազում*
34 Ա *զարզայ*

սել՝ «Թողի զձեզ ի կամս ձեր, գնացեալ պաշտեցէք զհաւատան ձեր». և Գրիգոր ազաչէր, պաղատէր, ի ծունր իջեալ լալով խնդրէր ի շահէն՝ և ասէր, թէ զհրամանագ, զոր բանիւ ասես, մատամբ միով թղթիւ շնորհես մեզ:

Եւ յաւուր միում, յորում շահն ելեալ յապարանից իւրոց գնայր ի Հազարաչրիսպ այգին. առացին թէ հինգ անգամ ելեալ առաջի շահին և զնոյն թուղթն խնդրեցաց, յորոյ անձանձիր խնդրոյն ձանձրացեալ շահին, պրեալ նմոս թագաւորական կնքով ետ ցԳրիգորն, թէ հրաման ետու ամենայն քրիստոնէից բնակելոց ի գաւառին Փարիոյ և Բուրվարի՝ զի համարձակ պաշտեսցեն զքրիստոնէութեան հաւատան իրեանց:

Այլ և յետ այսորիկ խնդրեաց Գրիգորն ի շահէն, զի այցելութիւն արարեալ ողորմեցի թագաւորն, և շնորհեսցէ նոցա զիւրեանց զրեանսն, զորս յափշտակեալ բերեալ էին. և զայն ևս շնորհեաց նոցա արքայ: Եւ Գրիգորն և ընկերքն իւր առեալ զթուղթն և զքրեանսն իւրեանց և ուրախութեամբ գնացին յիւրեանց և ի ժողովուրդ իւրեանց:

Յաղագս պատճառիս այսմիկ թագաւորն Շահարաս էարկ տուգանս ի վերայ քրիստոնէիցն ասելով. «Որովհետև ո՛չ հնազանդեցան հրամանաց թագաւորի, տացեն տուգանս ի դիւանն թագաւորի հազար թումանս»: Եւ յիրևելի իշխանաց իւրոց առաջիկայից զոմն՝ զոր խոսրով սուլթան կոչէին, կարգեաց վիրակացու՝ զի առեալ ի ժողովրդենէն յանձնեսցէ ի գանձապահս թագաւորին. որ և ելեալ խոսրով սուլթանն բազում զօրականօք, արար և կատարեաց զհրամանս թագաւորին:

Եւ ողորմելի քրիստոնեայքն վասն քրիստոսական հաւատոցն, զայս հազար թումանս, և զայն պարտն՝ զոր Գրիգորն և ընկերքն իւր ի Սպահան արարին, և այլ ևս զոր ինչ ծախք լեալ էին, զամենայն վճարեալ հատուցին, և եղեն չքաւորք՝ և աղքատք կարի յոյժ, բայց կալեալ ի հաւատս Քրիստոսի ուրախ են՝ և դոհանան զՏեառնէ Աստուծոյ:

Իսկ Գրիգոր այրս այս՝ օր յաւուր յաւելոյր ի հաւատս և ի բարեգործութիւնս, նա և հաստատէր զայրս ի վերայ հաւատոցն Քրիստոսի և նախանձախնդիր լինէր վասն քրիստոսական օրինաց, ասո որ նախանձաբեկ լեալ արիւնարբու մահմետականաց, և պղպատեցին ի մահ զԳրիգորն՝ քանզի զոմն մահմետական յիւրեանց ժողովրդենէն ինքեանք սպանին, և բերեալ ի ծածուկ արկին յանդն Գրիգորին, ևկին դատախազք և բերեալ կացուցին առաջի վկայս, թէ Գրիգորն սպանեալ է զայս մեռեալս: Եւ առեալ տարան յանուղղայ դատաստանն իւրեանց առաջի դատաւորաց, որոյ վերայ վճիռ հատին թէ, որովհետև զայդ արարեալ է դորա՝ կամ ուրասցի, կամ սպանցի: Եւ այսու դրպարտու-

5 Ր *ցապարանից*
6 ԱԴ *չիմ ասացին թէ* ԲԳՆ *նկատ*
7 ԱԴ *չիմ և*
8-9 Ա *գհրամանն* ԱՔԼ *ամենից*
9-10 ԲԳՆ *Փարիայ* Ա. *Բուրվարույ* ԴՆ *ի Բուրվարի*
11 Ա. *զայցելութիւն*
12-13 ԲԳ *գրիանքն, զոր*
13 Ա.Նէ *բերեալք են*
14 ԲԳ *գրեանքն*
14-15 Ա. *իւրեանց ուրախութեամբ գնացին*
20 ԲԳՆ *վիրակացուս*
22 Ն *գհրամանն*
24 Ն *Գրիգոր*
25 Ա. *լեալք էին զամենեսեան*
28 ԱԴՆՆ *օրաւուր*
34 Ա. *զսուտ վկայ*
36 Ա. *զվճիռ*

թևամբս պատապարտևալ սպանին զքրիստոսասէր զայրն Գրիգոր։ Եւ բազումք վկայեցին վասն նորա, թէ Տէր փառաւորեաց զնա երկնաւոր նշանօք լուսոյ երկնից։ Որում տացէ Քրիստոս զխոստացեալ արքայութիւնն իւր, և զմեզ ևս ընկալցի ի մասնակցութիւն սրբոց իւրոց իւրով
5 *ողորմութեամբն. ամէն։*

ԳԼՈՒԽ Ժ

ՎԱՍՆ ԷՐ ՈՋ ԳՈՅ ՈՋԽԱՐԱՑ ՔՈՒԱՒ ՅԱՇԽԱՐՀԻՆ, ՈՐ ԱՐԱՂԱՏԱՆ[a] ԿՈՉԻ

Արքայն Շահաբաս առաջինն յոյժ սիրեաց զքաղաքն Ֆահրապատ,
10 *վասն որոյ յամենայն աշխարհաց ժողովեաց զժողովուրդ և էած անդ՝ որպէս պի մեծասցի քաղաքն։ Եւ ինքն որքան ի՛ւր յապահովս ի թըշնամեաց պատերազմէ՝ զձմեռնային ժամանակս անդ գնացեալ անցուցանէր։ Եւ ըստ հանապազորդ սովորութեան իւրոյ Շահաբաս, որ գնայր ի Ֆահրապատ, նովի երբեմն մինչ գնայր՝ եկեալ հասս ի սահ-*
15 *մանս Ղազբին քաղաքին, ի գաւառն՝ որ ասի Թարիմ, ի գիւղն՝ որ կոչեն Խոռամապատ, և անդ իջևանեալ բանակեցաւ բանակն արքունի։*

Իսկ ինքն Շահաբաս ըստ հանապազորդ սովորութեան իւրոյ՝ որ այլակերպեալ վինքն ձևանայր, որպէս զմի ոք ի զինուորաց՝ և գնայր ի մէջ արանց և ժողովրդոց՝ իմանալ և պիտենալ բան ինչ։ Այսպէս ա-
20 *րար և յայսմ նուագի. պի ինքն և իւր փայեկն յառաջ քան զամենայն զօրան եկին ի Խոռամապատ ասացեալ գիւղն իբրև զմի ոք ի զօրականաց հնձելոցն, ևանս ի պվխաւորաց գեղջն զարս ոմանս, որք կային ի փողոցի՝ և ընդ հարկահանաց իշխանացն հոգային զհոգս կարեաց արքայի՝ և այլոց իշխանաց. խօսեցաւ ընդ նոսա շահն և ասաց. «Ես*
25 *և ձիս և փայեկս միայն համ՝ և ոչ համ յոլովք, պի ծանրաբեռն թուիցուք ձևդ, խնդրեմ ի ձէնջ վասն սիրոյ շահին՝ տուք մեզ տեղի յայսմ պիշերի». իսկ արք գեղջն ոչինչ կալան փոյթ զնորին բանէն, քանզի հոգովք թագաւորական կարեաց պատաղեալք էին։*

Ապա կին ոմն բազմամեայ պառաւ՝ որ ի նոյն գեղջէն էր, ասաց
30 *առ շահն. «Եկ որդեակ՝ ե՛կ պի երթիցուք ի տուն մեր՝ և լեր մեզ հիւր». և առեալ կինն զշահն և տարաւ ի տունն իւր. եկաց անդէն շահն մինչև ցերեկոյ։ Իսկ ընտանիք պառաւին ամենեքեան մեռեալք էին՝ և ունէր միայն մի որդի որոյ անունն էր Լալայ, և այն ևս վասն կարի աղքատութեան իւրեանց նախրորդ էր մտեալ գեղջն։ Եւ ընդ ժամանել*
35 *երեկոյին, Լալայն բերեալ զնախիրն էած ի գեղն, և ըստ սովորութեան*

2 Ա *Երկնաւորօք*
3-4 Ն *արքայութիւն*
10 Ա *յամենից* ԲԳԴՆ *ժողովուրդ*
16 ԱԲԳԴՆ *Խոռամաբատ* ԲԳԴՆ *իջուանևալ*
19 ԱԷ *գիտել պրան*
25-26 ԲԳՆ *թվևցուք*
26 Ա *զտեղի*
27 Ա *զոչինչ*
28 ԱԳԴՆ *կարեացն*
30 Բեէ *տունն*
32 ԲԳՆ *ընդանիք*
33 Ա *զմի* ԲԳԴՆ *որում*
34 ԱԴ *իւրոյ է գիւղն*

իւրում ի տանց գեղջն սկսաւ ժողովել յիւրաքանչիւրոցն մի մի հաց, և ժողովեաց տասն և հինգ հաց, զոր և ունէր ի վերայ բազկաց իւրոց, եբեր ի տունն իւրեանց. և իբրև եառնու թէ հիւր կայ ի տանն՝ զամենայն հացսն բերեալ էարկ առաջի հիւրին, որ էր շահն ինքն: Իսկ պատուն բացեալ զթոնիրն ետան պուտկով եփեալ կորկոտապուր՝ զոր ոմանք վոջ ասեն, և շահն այն հացովն եկեր զայն կերակուրն, և խօսեցաւ և հարցումն արար ընդ նոսա բանս բազումս, և յերեկոյին ի մթանալ դիշերոյն՝ եկեալ գնաց ի տեղի իւր:

Անտի չուեալ շահն գնացեալ եհաս ի Ջահրատատ, և յորժամ դարձաւ ի Ջահրատատ, և եհաս ի նոյն գեղն՝ այլով այնպէս այլակերպեաց պինքն՝ և խնդրեաց պիջևանս ի գեղականացն՝ և ոչ եառնու: Իսկ նոյն պատուն դարձեալ եկեալ առաջի նորա ասաց. «Դու մեր ես ծանեօթ և հիւր, որպեսզի, ե՛կ և այժմ զի երթիցուք ի տունն մեր», և գնաց շահն ի տունն պատուին, և պատուն կերակրեաց զնա ըստ օրինակին որպէս և նախ պատմեցաք. մնաց անդէն շահն մինչև յերեկոյն, զրազում բանս՝ որ ինչ ունէր ի մտի, եհարց ի նոցանէ:

Ապա ասաց շահն ցնոսա. «Բան ինչ կամիմ հարցանել ի ձէնջ, թէ սիրէք զշահն, զատոյգն ասացէք ինձ, ահաւասիկ այս տունս ձեր յորում նստեալ եմք, ինքն և որք միւս յարկք են յայն և ընդարձակ և մեծաշուք երևին, որպէս և ինքեանք իսկ ցուցանեն պինքեանս. այնպէս և ձեր խօսք՝ և բանք և շարժմունք իբր զմեծատան երևի, բայց տեսանեմ զձեզ կարի չքաւոր և զտունս բնաւին զատարկ, զսորին պատճառն, խնդրեմ, զատոյգն ասացէք ինձ»:

Իսկ պատուն յորոց հանեալ հառաչեաց մեծապէս՝ և սկսաւ ասել. «Տեսանես որպեսզի զայս ամենայն, ատոյգ ասացեալն ի քէն, թէ տունս և որք ընդ սովաւ յարկք են, մեծաշուք երևին, ստուգիւ՝ էաք մեծատունք և ընչեղք, որ բազումք կարօտեալք և պանդխտականք այս տամբս հովանաւորեալք ապրէին, և չքաւորք և աղքատք սովաւ լինէին ատացուածոց և գոյից տեարք, և ունէաք ջոկով ոչխար հազար և հինգ հարիւր գլուխ, և վերամակս մատակ ձիոց, և զրազում անդեայք լծկան և կթան, արտ և այգի, և ջրաղաց, զոսկի և զարծաթ, և զտան կահս և զկարասիս յոլովս. և այն ամենայն մերժեալ ի մէնջ գնաց՝ և ոչ մնաց և ոչինչ. քանզի զմասն ինչ վաճառեալ տուաք յարքունական հարկն,

1 ԲԳՆ *յիւրաքանչիւրցն* Ա. *զմի մի:*
2 Ա. *գտասն*
3 Ա. *և երեր* ԱԴՆ *չիմ և* Ս. *զամենեսեան*
6 Ա.ԲԳ *չիմ և (խոսեցաւ)*
7 Ա. *զբանս*
10 Է *պիւղն* Ա.Է *վերսին փխ այլով այնպէս*
11 Գն *իջևանս* Ա.Է *իջևանս*
13-14 Բ *տուն... տուն* Գն *տունն... տուն*
15 Է *յերկոյ*
15-16 ԳԴն *բազում*
16 ԲԳն *ի մտին*
19 ԲԳ *որ*
20 ԱԴ *չիմ որպէս և ինքեանք իսկ ցուցանեն* Ա.ԲԳն *սոյնպէս փխ այնպէս*
21 ԲԳն *խոսեցաւ* Գ *իբրև*
26 Գն *որ փխ որք*
26-27 ԲԳն *մեծատուն և ընչեղ*
27 ԲԳԴն *բազում* Գ *պանդխտականք*
28 Գն *հովանաւորեալ*
29-30 Ս. *գոչխարս, զհազար և զհինգ հարիւր գլուխս* Բն *ոչխարք*
30 ԲԳԴն *հրամակս* Դ *բազում*
30-31 Ա. *անդեայս լծկան և զկթան, զարտ և զայգի, և զջրաղաց*
31 ԲԳԴն *ոսկի և արծաթ*
31-32 ԲԳԴն *տան կահ և կարասիք հոլովք*

և զմասն ինչ վաճառեալ տուաք պարտատուաց. և զմասն ինչ ի պէտս կարեաց մերոց, և եղաք յոյժ չքաւորք: Եւ յետոյ այրն իմ և իւր եղբարքն, և այլ ընտանիք, և որդիք նոցին ամենեքեան մեռան. և այժմ մնացեալ եմք ես և որդիք իմ, որոյ միրձ է զոլ երեսնամեայ, և վասն աղքատութեան ոչ կարեմ ածել զմա կին, և յայլմէ ուստեքէ ոչ ունիմք ապրելոյ ճար, վասն որոյ զորդիս իմ արարի նախիրարդ զեղիս, որ յամենայն երեկոյի ժողովեալ գՀայ վարձու իւրոյ բերեալ կերակրիմք որպէս և տեսեր, և այսպէս անցուցանեմ զաւուրս իմ, սպասելով մահու՝ զի թերևս նա հանդուսցէ զիս ի տառապանաց իմոց»:

Զարմանք մեծ կալաւ զշահն ի վերայ ասացեալ բանից պառաւին: «Բայց,—ասաց շահն,—պայդ զոր ասացեր, թէ այրն իմ և ամենայն ընտանիքն մեր մեռան, այդ ի ձեռին Աստուծոյ է զի նա պահէ և մեռուցանէ. այլ վասն ձերոյ ընչից՝ զոր ասացեր թէ գնաց ի ձեռաց մերոց՝ և եղաք չքաւորք, սորին զի՞նչ է պատճառն»:

Ասաց պառաւն. «Ոչխարի քօղան է, զոր թագաւորական հարկահանքն եկեալ ոչխարաց քօղաւ առնուն, զի տարէց տարի գնալով զկնի միմեանց՝ որքան գնաց, ծանրացաւ քօղան, և այնքան ծանրացաւ, որ զնոյն ինքն զոչխարսն զամենայն վաճառեալ տուաք ի քօղան, և այնու ոչ կարացաք դերծանիլ, զպարտս ևս առաք յայլոց և տուաք քօղաւ, և ապա զինչս և զստացուածս օր յաւուր վաճառելով, զորս ի քօղան տուաք, և զորս պարտատուարցն վճարեցաք, ոչինչ մնաց, քանզի կարի յոյժ ծանր է հարկն քօղաւին: Եւ զայս ոչ դիտէ արքայն, և նորին նախարարքն, այլ գրեն զորքանութիւն քօղաւին և տան ի ձեռս զօրականաց, և նոքա եկեալ թէ կամայ թէ յակամայ բռնութեամբ առնուն, ասելով՝ ի դիւանէն թուղթն այնպէս գրեալ՝ և տուեալ՝ և հրամայեալ եղև մեզ, վասն որոյ այսպէս առնումք և ո՛չ պակաս. զի թէ պակաս առնումք, մեզ տան վճարել զպակասն, ասելով թէ՝ դուք դողացեալ էք: Եւ յայսմ պատճառէ չքաւորեցաք, ոչ միայն մեք զոր տեսանես, այլ և բազում մեծատունք այսպէս եղեն, ոմանք ի մեր դեղջէս՝ և այլք յայլոց գեղորէից գաւառիս», որ և սկսաւ պառաւն զայնոսիկ զամենեսեան յանուանէ յիշել:

Ասաց շահն. «Ընդէ՞ր ոչ գնան դիտուն և ճարտարախօս մարդիկք յաշխարհէս ձերմէ՝ և ծանուցանեն շահին, և ես դիտեմ, յորժամ վերստաւոյ լինի շահն այդոցիկ՝ բառնայ զծանրութիւն հարկիդ այդմիկ, քանզի շահն աշխարհաշէն թագաւոր է՝ և ոչ կամի թէ ումեք զրկանք

2 Ա.Դ *եղեաք*
3 Ա.Դ *այլք* ԲԳՆ *ընդանիք* Ա. *չիք այժմ*
5 Ա. *զկին* Բն *ունիմ*
6 Ա. *զճար* Է *որդիս... գեղջս*
7 Է *կերակրեմք*
11 Ա. *ամենեքեան:*
12 Բն *ընդանիքն*
13 ԲԳԴՆ *որ*
14 Ա. *եղեաք*
15 Ա. *զքօղաւ*
16 Ա. *տարեաց*
18 Է *ոչխարսն*
19 ԲԳՆ *պարտք առաք:* Դ *պարտք ևս առաք* Ա.Է *չիք յայլոց*
20 Դ *ստացուածս* Ա.ԴՆ *աւուր*
21 Ա. *զքօղաւ*
22 Դ *արքայ*
24 Ա. *և թէ*
25 Բ *այսպէս*
28 Ա. *յայսմանէ*
29 Ա. *բազումք* Դ *չիք ի*
29-30 ԲԳԴՆ *գեղջէս... գեղորէից*
33 Բ *չիք և (ծանուցանեն)*

լինի»։ Ասաց պատասն. «Բազում անգամ գնացեալ ապաղաչեցին, այլ ոչ կարացին հանել ի դիւանական մատենից զորբանութիւն քօղային»։ Եւ մնաց շահն ի տուն պատսին մինչև ցառաւօտն, և յառաւօտին ի մէին ժամու ելեալ գնաց ի վրանն իւր։

Եւ յետ աւուրց ինչ առաքեաց զքննիչս չիրկիրն յայն զի զամենայն որպիսութիւն աշխարհին դիտասցեն առուղութեամբ. որոց գնացեալ տեսեալ՝ և եկեալ պատմեցին շահին ասելով թէ կարի առատ է նեղութեան միջի կան բնակիչք աշխարհին այնորիկ, վասն զի սէգ սէգ պատճառի, և մանաւանդ վասն քօղային. որով պատ իրաւ զոլ ամենայն ասացեալքն ի պատուէն այն։ Եւ այս եղև պատճառ զի անկաւ դէմ և ողորմ ի սիրտ Շահաբաս թագաւորին, վասն որոյ հրամայ զքօղան՝ ոչ միայն ի Ղաղբինու աշխարհէն, այլ և յամենայն Արաղստան աշխարհէ, զի ոչ զոյ այժմ քօղաւ յամենայն աշխարհ, որ Արաղստան անուանի։

Այլ և առաքեաց զիշխանս ի դիւղն Խոռամապատ. սա ի սպանանել զարսն, որք ոչ ընկալան զնա, և առ ինքն ժողվել զպատանն, և զորդին իւր զվալայն. և իշխանն գնացեալ արար ըստ հրամանաց շահին՝ զի յարանց գեղջն զերիսն սպան, և զվալայն և զմայրն առեալ էած առ շահն։ Իսկ շահն նա լալային փառս և պատիւս՝ և պետական զիշխանութիւնս, և ի դրան իւրում մեծապատիւ և հաւատարիմ նախարար կարգեաց, որ յետ այնորիկ կոչեցաւ Լալաբէկ։ Այլ և յետ սորա որդիքն իւր էին հաւատարիմք և նախապատիւ ի դուռն թագաւորացն Պարսից. որ և միում յորդուց սորա՝ որոյ անունն էր Մահմատղուլի բէկ, նա թագաւորն իշխանութիւն խանութեան, որ կոչեցաւ Մահմատղուլի խան, և առաքեաց ի քաղաքն Շիրուան, որ եկեալ տիրեաց երկրին յամս ինչ։

Ասի պատմութիւն վասն այս Լալաբէկիս, թէ ումանք յառաջակայից Շահաբասին ի պատճառս նախանձու՝ չարախօսութիւն արարին վասն Լալաբէկին առաջի շահին, և շահն կամեցաւ կողոպտել զնա՝ և յառաջին աղքատութիւնն իջուցանել։ Որ և շահն ինքն եկեալ ի տուն Լալաբէկիս սկսաւ զամենայն գոյսն գրել՝ և ինքն գրաւել. և ի գրելն՝ տեսին սնդուկ մի՝ ոսկի կողպայ ի վերայ եղեալ և փակեալ. որոյ ասացին՝ թէ բաց. և Լալաբէկն ոչ եբաց, այլ ասաց շահին. «Զայդ ամենայն, զոր գրեցեր՝ և զոր տակաւին գրելոց ես, բովանդակ ամենեքեան քո են՝ և ոչ իմ. իսկ այս միայն է իմ, քանզի ի հայրենի տանէ իմմէ բերի զայս։ Արդ՝ խնդրեմ, զի զքոյն յորժամ առցես՝ զիմս ինձ շնորհեսցես»։ Ապա հարկի բանալ նոյն սնդուկն և տեսին զի ոչինչ

3 Աէ: յառաւօտուն
5 ԴԹՆ քննիչս
6 Բ զորպիսութիւն
7 ԱԴ չիմ ասելով
8 ԳԹԵ այնմիկ
10 Ս. ասացեալն ԱԴ ի պատուէն յայնմանէ է: չիմ այն
11 Ա որով փխ վասն որոյ Աէ և եբարձ. Դ Շահապաս
12 Բ ամենայն
13 ԱԲէ չիմ զի
14 ԲԴԹՆ իշխանս է: Խոռոմապատ
18-19 Ս. զիւառս և զպատիւս և զպետական զիշխանութիւնս ԲԴԹՆ իշխանութիւնս
21 Ս. նախապատիւք
22 ԲԹՆ յորդոց ... որում Դ որում
23 Ս. զիշխանութիւն
26 Ս. զչարախօսութիւն
28 ԲՆ աղքատութիւն
29 Ս. զամենեսեան գոյսն ԲԴԹՆ գոյսդ
30 Ս. զսնդուկ ԲԴԹՆ կողպայ
33 Ս. քոյք են

կայր ի նմա, բայց միայն մէկ չուխա մաշեալ և չորացեալ տրեխ՝ որ է չարուխ, և հնոտի և պատառոտեալ հնակիք, և ամենեքեան նղեն զարմացեալք առ այն, վասն որոյ հարցանէին թէ զի՞նչ է այս։ Ասաց Լալարէկն. «Այս այն տրեխն է, զոր ի հայրենի տան իմում զգեցուի, և արդ՝ եդեալ եմ աստ՝ և հանապազ նկեալ տեսանեմ, և յիշեմ, և ասեմ, «Դու այն ես, որ զայս միայն ունէիր. և շահն բերեալ զքեզ յայդպիսի յաղքատութենէ յայսքան մեծութիւն հասոյց. արդ՝ զգոյշ լեր մի դուցէ գացի նենգութիւն ի սիրտ քո վասն շահին. և այլոց չարախօսաց դնմանել մի լիցիս համաձայն, և մի մոռանայցես զերախտիս նորա, զի մի այս ամենայն զառնայցէ քեզ հարամ, և լինիցիս սևերես առաջի Աստուծոյ և մարդկան»։ Իբրև լուաւ և ետես զայս շահն՝ իմացաւ թէ վասն նախանձու չարախօսացին զնա, զամենայն ինչս նորա ոչ էառ՝ այլ շնորհեաց իւրն, և ևս առաւել պատուով փառաւորեալ շքեղացոյց զնա, և դերադոյն հաւատարիմ ունէր ի դրան իւրում զնա՝ առաւել քան զամենեսեան, զամենայն աւուրս կենաց իւրեանց։

ԳԼՈՒԽ ԺԶ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՆՇԽԱՐԱՑ ՍՐԲՈՒՀԻՒՅ ԿԻՒՍԻՆ ՀՌԻՓՍԻՄԵԱՅ, ԹԷ ՈՐՊԷՍ ԳՏԵԱԼ ԵՒ ՀԱՆԵԱԼ ԵՂԵՒ ՆԱ Ի ՖՌԱՆԿԱՑ ԵՒ ԹԷ ՈՐՊԷՍ ՏԱՐԵԱԼ ԵՂԵՒ Ի ՍՊԱՀԱՆ ՔԱՂԱՔ

Ի ժամանակս առաջնորդութեան Մելքիսէթ Կաթուղիկոսին, յետ մեծ սուրպունին, ելին ի Ֆռանկաց աշխարհէն Ֆռանկ Պատրիք յաշխարհս Հայոց, և մտին ի գաւառսն Արարատու, և սկսան շրջիլ ի վանօրայսն Հայոց՝ որք կան ի գաւառին։ Եւ պարզամիտ ազգն Հայոց, ոչ գիտէին, թէ զինչ դիտաւորութեամբ շրջին նոքա, բայց նոքա ըստ մարդելոյն և նրհատակ և խաբուսիկ բարոյից իւրեանց զամենեսեան հաճեցուցանէին ջինքեանս. որք և պատահեցան կաթուղիկոսին Մելքիսէթի՝ և ետուն նմա աղերս, և ոսկի դահեկանս, զի մի լիցի հետաքննութիւր և կամ վրէժխնդիր գործոց նոցա. զոր առ յապայն առնելոց էին։

Ունէին Պատրիքն ընդ իւրեանս զիրք մի որպէս զաշխարհացոյց իւրեանց գրովն և լեզուաւն, որ հաւաստեաւ և անվրէպ ցուցանէր, թէ ուրանօր իցեն գերեզմանք և գամբարանք սրբոցն՝ որք կան և ի վանօրայս Հայոց, և զորպիսութիւն շինուածոց մատուռացն և թէ յո՞ր կողմն իցէ գուռն և լուսամուտն։ Եւ ի շրջիլն իւրեանց ի վանօրայսն, այն

4 ԲԳՆ *լալարէկ* ԱՐԴԻՒ *որ*
6-7 Ա. *յայդպիսւոյ*
7 ՈՆ *աղքատութենէ* Գ *զգուշ*
8 Գն *ի սիրտս*
18 ԲԳՆՆ *Հռիփսիմայ (ամենուրիք այսպես Տես Առաջաբան)*
20 ն *Մելիքսէթ* (լուսանցքում ավելացված է *«տեղեաւ Երիւանցի»*)
21 Ա. *մեծի* ԱԴ *Ֆռանկք ի պատրիկք*
22 ԱՐԴԻՒ *Արարատու*
25 ԱՐԴԻՒ *մարդելուզ*
26 ԲԳՆ *որ*
27 Ա.ԲԳԴՆ *չիմ և (ոսկի)* Ա *զոսկի*
30 ԴԻ *պատրիկքն* Ա *զգիրս*
32 ԱԳՆ *իցէ* ԱԴ *գերեզման և գամբարան*
33 ԱԴ *մատրանացն*
34 ԲԳՆ *ի շրջելն*

դրովն գտանէին զնշխարս սրբոցն, և տային ինչս բնակչաց վանիցն՝ և զնշխարան առնուին։

Եւ ի շրջագայիչն իւրեանց նկին ի գիւղն Կարնխիս, իջին ի վանքն Առաքելոց[65], որ ի մէջ ձորոյն է շինեալ, և այն պրովն գտին զպլուխն 5 *Անդրէի առաքելոյն, որ մինչև ցայն ժամանակն ոչ գիտէին բնակիչք վանացն՝ նա և ամենայն գաւառականքն, թէ ուրանօր իցեն գերեզմանք առաքելոցն. այլ միայն աւանդութեամբ լուեալ էին որպիք ի հօրէ և հաւուց՝ թէ անդէն կան գերեզմանք սուրբ Աւետարանչին Մատթէոսի և Անդրէի առաքելոյն, բայց զտեղին բնաւ ոչ գիտէին։ Իբրև զնացին* 10 *Պատրիքն ի վանքն, և փորեցին ի ներքոյ բեմին տեղի մի՝ ուր գիրն իւրեանց տայր զնշան. և ահա տեսին բացեալ և յայտնեալ եղև գլուխ Անդրէի առաքելոյն որպէս և գիրքն տայր նշան յաղագս գլխոյն. և ընդ հանել գլխոյն, սոսկումն և զարհուրումն իմն անկեալ է ի վերայ Պատրիացն։ Իբրև հանեալ եղև գլուխն, նոյնժամայն եպիսկոպոս վա-* 15 *նացն յափշտակեալ է զգլուխն ի ձեռաց Պատրիացն և ոչ է տուեալ, այլ զնոսա դատարկ արտաքս առաքեալ է ի վանացն։ Եւ սուրբ գլխոյն Անդրէի առաքելոյն կայ այժմ ի նոյն վանքն, որ բազում անգամ ուխտ արարեալ և համբուրեալ եմք զնա։*

Իսկ Պատրիքն գկնի շրջագայութեանց յորովից կամ սակաւուց 20 *եկին ի սուրբ սիոնն էջմիածին, և անդ օթևանս կալեալ կացին գրաւոմ աւուրս, և ըստ մարդկոյդ հնարից իւրեանց հաւատարիմք երևեալք յաչս վանականացն և դիղակականացն՝ հաճեցուցեալ են զնոսա չինքեանս։ Եւ յամենայն աւուր գնային և գային Պատրիքն ի տաճար սրբոց կուսանացն Գայիանեայ և Հռիփսիմեայ. և երիքին տաճարքս այ-* 25 *սոքիկ, եթէ էջմիածին, եթէ Գայիանեայ, և եթէ Հռիփսիմեայ, էին աւերեալ, խախտեալ և խարխլեալ և անշքացեալ, իբրև զտաղտար յայգւոջ մրգապահաց և իբրև զհովանի ի մէջ սեխեննաց ըստ մարգարէին Եսայեայ**։ *Եւ էջմիածին կային միայն միարանք սակաւք, և այնք ևս յոյժ սգալտ և դառնհիկք։ Իսկ Գայիանեայ և Հռիփսիմեայ* 30 *ամենևին անբնակ և անպարիսպ, նա և գրունք ևս ոչ գոյին եկեղեցեացն և խորանացն, և յարտաքուստ կողմանէ տանիսն բովանդակ և երեսք որմոցն քանդեալ, և հիմունքն խարխլեալ և խրամատեալ. և ի ներսի կողմանէ բեմն և յատակ եկեղեցւոյն քանդքանդեալ և բովանդակ*

* *Համմտ. Եսայի, Ա, 8*

6 Բ վանիցն Ա ամենեքեան
7 Ա. լուեալք ԲԳԴՆ որպի
8 Դն և ի հաւուց Ա սրբոյ
8-9 ԱԴՆ Մատթէոսի ... առաքելոյ Բ Մատթէոսի
10 Է պատրիկքն Ա զտեղի
11 Դն նշան ԲԳԴՆ գլուխն
12 Ա զնշան
14 ԲԳԴՆ պատրոցն
15 Է չիր է (զգլուխն) Բ տալեալ
19 Է պատրիկքն
21 ԱԲԳԴՆ մարդեկուզ՝ ԲԳԴՆ երևեալ
23 Է պատրիկքն
24 ԱԲԳԴՆ Գայիանայ (գրեթե ամենուրեք այսպես. Տես Առաջաբան) ԲԳԴՆ Հռիփսիմայ
25 ԱԳՆ էջմիածնի Ն չիր և
26 Ա. աւերեալք, խախտեալք և խարխլեալք և անշքացեալք։ ԲԳԴՆ խարխլեալ
27 ԲԳՆ յայգոջ
28 Ն ի էջմիածին
32 ԱԳ քանդեալք
32 ԱԳ խարխլեալք և խրամատեալք։ ԲԳՆ խարխլեալ
33 ԱԳ քանքանդեալք

Եկեղեցին և խորանքն աղբովք անասնոց լցեալ, վասն զի յաւուրս ամառայնոյ և ձմերայնոյ անասունք, որպէս եղինք և ոչխարք մակաղէին ի մէջ եկեղեցեացն, և Գայիանեայ տաճարի տանիքն բովանդակ իջեալ էր, և արմունքն միայն կային կանգնեալ և ոչ այլ ինչ։

Եւ ըստ սովորութեան իւրեանց Պատրիքն անխափան երթայրին և գային ի տաճար սրբուհոյ կուսին Հռիփսիմեայ. և մատուռն գնեզմանին Հռիփսիմեայ խոր ի մէջ գետնոյն շինեալ կայր ի ներքոյ աւագ բեմին, և պբեմն ի վերուստ կողմանէ ի վերայ մատրանն կառուցեալ կազմեալ էին ի տեղւոջ իւրում ի մէջ աւագ խորանին։ Իսկ զդուռն կամ պատուհանուստ մատրանն ոչ ոք էր տեսեալ, զի ոչ էր յայտնի, քանզի շինող մատրանն և եկեղեցւոյն իմաստութեամբ էր արարեալ զառնելն իւր. զի զդուռն մատրանն և զնորին ճանապարհն ի կողմանէ էր թողեալ ի մէջ հիւսիսային խորանի եկեղեցւոյն. և ըստ չափու երկայնութեան և լայնութեան դրան մատուռին, մեծ և անշարժելի վէմ մի, զոր ո՛չ ոք կարէր շարժել, կոփեալ էին և սահմանեալ ի մէջ դրան մատրանն կափարիչ նմին. և այնպէս իմաստութեամբ հնարեալ էին, որ ոչ ոք իմանայր և կամ համարէր յայնմ տեղւոջ գոլ դուռն կամ զվէմն կափարիչ նմին, այլ համարէին զվէմն իբրև զմի ի շարեալ վիմաց որմոյն։ Եւ ի մերս աղգէս ոչ ոք էր տեղեակ սոցա՝ ոչ մատրանն և ոչ դրան նորին։ Եւ Ֆռանկ Պատրիքն գրով իւրեանց պտեալք էին զդուռն մատրանն և գրագրում երկս և զաշխատանս կրեալք են ի վերայ կափարիչ վիմին թէ ի բաց բարձցեն, և ոչ են կարացեալք. և չեն բաղում աշխատանաց, խոհմանց և մտածութեանց, որ վասն բանալոյ դրանն, իբրև զփորձ առեալ են թէ ոչ լինի, ապա թողեալ են զդուռն մատրանն, և եկեալ գնեալ են ի բեմն ի յաւագ խորանն, և ի վերուստ կողմանէ բեմին առաջի և ի ներքոյ խորհրդանոցին, ըստ նշանակելոյ գրոյն իւրեանց զճանապարհ դրանն, հանդէպ նմին փորեալ են այնքան, մինչ ծակեալ են զառաստաղ ճանապարհի դրանն, և իջեալ ի ներքս ի մէջ ճանապարհին. և ապա այնքան աշխատեալ են ի ներքուստ և յարտաքուստ, մինչ որ զկափարիչ վէմն ոստուցեալ են ի տեղւոյն և արտաքս ձգեալ ի մէջ հիւսիսային խորանին։

1 Ա *լցեալք*
2 ԲԳԴՆ *որպէս թէ*
3 ԲԳԴՆ *տաճարին*
4 ԱՎ *կանգնեալք*
5 Ի *պատրիկքն*
6-7 ԱԳԴ *Հռիփսիմէի... Հռիփսիմէի* ԲՆ *Հռիփսիմէի (խոր)*
7 ԴՆ *աւագ*
8 ԲԳՆ *մատուռին*
9 Ս. *կազմեալք* ԲԳՆ *աւագ*
10 ԲԳԴՆ *մատուռին*
10-11 Գ *շինօղք* ԲԳՆ *մատուռին*
12 ԲԳԴ *մատուռին*
13 ԲԳՆ *չափոյ*
14 Ա.Ի *մատրանն*
14-15 ԲԳ *զոր ոք ոչ կարէր*
15 ԲԳԴՆ *մատուռին*
18 Ա.Է *զմի շարեալ*
19 Գ *յաղգէս* ԲԳԴՆ *մատուռին*
20 Է *պատրիկքն* Ս. *գրոք* Գ *գրքովն* ԳՎ *գտեալ*
21 ԲԳԴՆ *մատուռին* ԲԳԴՆ *բազում* ԲԳՆ *աշխատանս* Գ *աշխատանաց* Ս. *կրեալք էին* ԳԴՆ *կրեալ են*
22 ԲԳԴՆ *կարացեալ* Ս. *բազմաց*
24 Ա *առեալք* ԲԳԴՆ *մատուռին։*
24-25 Ս. *թողեալք... գնեալք*
25 ԲԳՆ *յաւագ*
27 Գ *զճանապարհ*
27-28 Ա *փորեալք... ծակեալք*
28 ԲՆ *զառաստաղն* Գ *զառաստաղքն*
29 Ս. *աշխատեալք*
30 Ս. *ոստուցեալք*

Յետ այսորիկ իջեալ են ի մէջ մատուռի գերեզմանին և զտապանարար գերեզմանին թաւալեցուցեալ են ի բաց, և փորեալ զգերեզմանն կուսին Հռիփսիմեայ այնքան, մինչ հասեալ են ի տապան, յորոյ մէջի կայր եդեալ սուրբ նշխարքն Հռիփսիմեայ և առեալ ևս փորեալ են մինչ զտապան նշխարացն ոստուցեալ են ի բնական տեղւոյն և յամրութենէն։ Եւ ապա զտապանն լի նշխարօքն ի մատուռէն արտաքս բերեալ են ի մէջ մեծ եկեղեցւոյն՝ և կամեցեալ են առնուլ զնշխարսն։

Եւ ի խնամոց և յողորմութենեանցն Աստուծոյ և յաղօթից սրբոյ Հուսաւորչին, ի նմին ժամու նոյն աւուրն երկուք ոմանք եպիսկոպոսացն սուրբ էջմիածնի, մին՝ անուն Գրիգոր եպիսկոպոս, և միւսն՝ Վարդան եպիսկոպոս, եղեալ են ի պբօսանս շրջապատիլ. և շրջելով հասեալ են ի տաճարն սրբոյն Հռիփսիմեայ, և յայնմ ժամու պատահեալ են ի վերայ՝ որ Պատրիքն զտապանն նշխարօքն բերեալ են ի մէջ եկեղեցւոյն՝ և կամէին առնուլ զնշխարսն, և ի հարցանելն եպիսկոպոսացն ընդ պատրիացն վասն իրացն՝ և նոքա թէպէտ բանս ինչ յօդեալ և բարբանջեալ են, այլ անյարմար։ Իսկ եպիսկոպոսացն շրջեալ յեկեղեցին և զամենայն տեսեալ, ի վերուստ դծակն, և ի կողմանէ դղրուն, և զմատուռն, և թաւալեցուցեալ զտապանաքարն, և փորեալ զգերեզմանն, խոռվմամբ և զայրացմամբ եկեալ են առ Պատրիսն և արարեալ կագ և կռիւ և աղմուկ ընդ նոսա մինչ զմիմեանս հարկանել և վիրաւորել, որ և զգլուխ Վարդան եպիսկոպոսին հարեալ էին Պատրիքն և վիրաւորեալ. զի պատրիքն երեք են լեալք, և եպիսկոպոսունքն երկու, և զսպի և զտեղի վիրացն եցոյց մեզ ի ժամանակս յայս, որ և զպատմութիւնս զայս նա պատմեաց մեզ, որոց ինքն ականատես էր, որոյ Տէր ողորմեսցի և թողեալ զյանցանս նորա։ Եւ եպիսկոպոսունքն ոչ են թողեալ առնուլ զմասն ինչ ի նշխարացն Պատրիքն յայնմ ժամու. և յետ մարտնչելոցն և կռուելոյն, երկոքին եպիսկոպոսքն բարձեալ են զտապանն լի նշխարօքն՝ և բերեալ են էջմիածին, և պատրիչքն ևս եկեալ են ընդ նոսա էջմիածին։ Իսկ եպիսկոպոսքն զտապանն նշխարօքն լի եդեալ են ի մէջ հրապարակի, և ի լսել միաբա-

1 Ա *իջեալք են*
2 Ա *թաւալեցուցեալք*
2-3 ԲԳՆ *զգերեզմանն Հռիփսիմայ Դ Հռիփսիմայ*
3 Ա *հասեալք են ի տապանն։ ԳԴՆ ի տապանն*
4 Ս. *սուրբք*
4-5 Ա. *փորեալք... ոստուցեալք*
5 ԳՆ *զտապանն*
7 ԱՊ *չիմ են (ի մէջ)* ԱՊ *մեծի*
Ա. *կամեցեալք են* ԲԳՆ *զնշխարքն*
8 Գ *խնամոցն Դ յԱստուծոյ*
9 Ա. *նոյնում աւուր* ԲԳՆ *նոյնում աւուրն*
Բ *երկունք*
10 Ա *սրբոյ*
11 Ա *եղեալք*
11-12 Ա. *հասեալ... Հռիփսիմէի*
12 ԲԳՆ *ի տաճար սրբուհոյն։ Դ ի տաճար*
12-13 Ա. *պատահեալք են ի վերայ մինչ պատրիքն*
13 ԱԷ *պատրիկքն* Ա. *բերեալք*
14 ԲԳԴ *կամին առնուլ զնշխարքն*
Ն *զնշխարքն*
15 ԱԴ *չիմ և*
15-16 Ս. *յօդեալք և բարբաջեալք*
16-17 Ա. *շրջեալք... տեսեալք* Բն *տեսեալք*
19 Ա. *եկեալք են ն պատրիկն*
20 Ա. *գկագ և գկռիւ և զաղմուկ*
21 Ա. *հարեալք էին*
22 Ս. *վիրաւորեալք է պատրիկքն։ ԲԳԴ լեալ*
26 Ա. *ըողեալք* ԲԳՆ *մասն*
Ա. *պատրեացն* ԱԷ *պատրիկքն*
27-28 Ա. *բարձեալք Բ բարձրեալ են*
28 Ս. *բերեալք։*
28-29 ԱԷ *պատրիքն է պատրիկքն* Ա. *եկեալք*
30 Ա. *եղեալք*

Էին ժողովեալ ևն ի վերայ. այլ և դեղականքն, և կաթուղիկոսն Մելբիսէթ ինքն իսկ: Եւ որք եկեալ տեսանէին և իմանային, հիացեալ զարմանային և ասէին. «Մեք՝ որ ի հարց և ի հատուց աստ ծնեալ եմք և սնեալ, յայսքան ժամանակս բնաւին ոչ եմք տեղեակ սոցա, և սոքա արք օտարք նաև պանդխտաբ, ւիա՞րդ կարացին գտանել և առնել զայսպիսի գործ»: Եւ յաւուրս եղելոյ գործոցս եպիսկոպոսունքն և միաբանք վանացն յոյժ սրտմտութեամբ և սաստիկ բարկութեամբ վէճ եղեալ՝ և աղմուկ արարեալ կռուէին ընդ պատրիացն. և մնային կաթուղիկոսին, թէ պատապարտեսցէ զպատրիսն, և վրէժխնդիր լինիցի նոցա. իսկ նա որ առեալ էր ի պատրիացն զոսկի դահեկանսն, ոսկեաւն այնու: կաշառակուր լեալ էր տեսարան մտաց նորա, ոչ եղև վրէժխնդիր, այլ թոյլ առեալ անհոգ էր:

Եւ յայնմ ժամու պատրիչքն ունէին ընդ ինքեանս՝ յառաջագոյն քսակս կազմեալ ի մոմլութէ՝ այսինքն ի մուշամբայէ. վստահացեալ յերեսպաշտութիւն կաթուղիկոսին, եկեալ յառաջ ի վերայ նշխարալի տապանին, և բացին զքսակն, և ոմն ի պատրեացն պատեաց զձեռն իւր մաքուր և սպիտակ դաստառակաւ՝ և առեալ ի նշխարացն ելից ի քսակն, և կամէին զամենայն նշխարսն առնուլ. և ի տեսանելն զայն եպիսկոպոսացն՝ լի եղեն ցասմամբ և բարկութեամբ, ի վերայ եկեալ հարին զպատրիսն և ի բաց վարեցին. և ոչ թողին այլ ևս առնուլ ի նշխարացն՝ այլ յոլովն մնաց ի մէջ տապանին, և զգլուխն ևս առեալ էին պատրիչքն, զայն ևս յափշտակեցին եպիսկոպոսքն և նդին ի մէջ տապանին: Եւ ասէր վերոյիշեալ Վարդան եպիսկոպոսն, թէ ցորքան ոչ էին մերձեցուցեալ ձեռս ի նշխարսն, որակն և գոյն նշխարացն սպիտակ էր, և յորժամ ձեռն մերձեցուցին՝ գոյն նշխարացն դարձաւ ի դեղնութիւն:

Եւ ի վերայ այսց ամենայնից սկսան լալ և ողբալ եպիսկոպոսունքն. և ասել առ կաթուղիկոսն բանս տրտնջանաց և մեղադրանաց, թէ արդարադատն Աստուած լիցի քեզ վրէժխնդիր յաղագս նշխարաց սրբոցս, զի յաւուրցն սուրբ Լուսաւորչին մինչ ցայսօր ոչ էին խախտեալ կամ ուրեք ցրուեալ նշխարք սրբոցս այսոցիկ, և սոքա էին սկիզբն և հաստատութիւն հաւատոյս Հայաստանեայց, և լիութիւն և բարութիւն աշխարհիս, և դու այսօր ցրուեցեր: Եւ չետ լալոյ և սգալոյն իրեանց՝ եպիսկոպոսունքն բարձին զտապանն մնացեալ նշխարօքն և պարձեալ տարան ի տաճար սրբուհւոյն Հռիփսիմեայ, և իջու-

1 Ա *ժողովեալք*
2 Ա *եկեալք*
4 Ա *աննալք... տեղեակք* Ա *չիք սոցա*
5 Դ *պանդուխտք*
6 Ի *եղելոց* ԱՐՆԵ *գործոյս*
7 Ա *զվէճ*
8 Ա *զաղմուկ* ՐԴԻՆ *պատրոցն* Ի *պատրիկան*
9 ՐԴԻՆ *ի պատրոցն*
11 ՐԴԻՆ *այնմիկ*
13 Ա. *պատրիքն* Ի *պատրիկքն*
14 Ի *քըսակս* Ա *վստահացեալք*
15 Դ *ի յերեսպաշտութիւն*
16 ՐԴԻՆ *պատրոցէ*
20 Ի *պատրիկան*
22 Ա. *պատրիքն* Ի *պատրիկքն*
23 ԱԴ *վերոյիշեացեալ*
24 Ա *զձեռս... որակ*
27 Դ *վերա* Ա *ամենից* ՐԴԻՆ *ամի*
28 Ա. *զբանս*
29 ՐԴԻՆ *նշխարացս*
30 Դ *սրբոց* ԱՐԴԻՆ *սրբոյ* Ի *մինչև*
30-31 Ա. *խախտեալք... ցրուեալք*
32 ՒԻՆ *Հայաստանեացս* Դ *Հայաստանեաց*
35 ՐԴԻՆ *սրբուհւոյն*

ցեալ ի մէջ մատուռին, և խորագոյն փորեալ զգերեզմանն եդին զնըշխարալի տապանն ի մէջ գերեզմանին, և յամենայն կողմանց կրով և խճով մածուցեալք ամրացուցին. և ծածկեալ զգերեզմանն եդին ի վերայ զտապանաքարն։ Իսկ զդուռն մատուռին ո՛չ խցին, այլ մնաց ի բաց, որպէս և արդ տեսանի. և զծակն, զոր ի վերուստ ի բեմէն ծակեցին, զայն խցին, բայց խուզողացն յայտնապէս երևի ի ներքոյ ի ճանապարհէն բանզի ի վերայ ծակին եղեալ քարինքն դեռ ևս սպիտակ էն։

Իսկ պատրիքն առեալ զբսակով նշխարան սրբոյն Հռիփսիմեայ և գնացին ի քաղաքն Երևան, և խորհէին, թէ ընդ որ ճանապարհաւ տարցեն յաշխարհն իւրեանց, քանզի Հռոմոց աշխարհաւն ոչ կարէին գնալ վասն երկիւղին Օսմանցւոց, զի մեծ թշնամութիւն և սաստիկ մարտ պատերազմի գոյր յայնմ ժամանակի ի մէջ Օսմանեան և Ֆռանկաց[66], և յայսմ պատճառէ ոչ կարէին Օսմանցւոց աշխարհաւն գնալ։

Եւ ապա ելին պատրիքն Երևանայ և զնշխաւրն ընդ ինքեանս առեալ՝ եկին յերկիրն Նախչուանայ, ի գաւառն Երնջակու, ի գիւղն Ֆռանկաց Ապարաներ[67]. և անդ զնշխարան արարեալ էն երկու և երեք բաժին. և պատրիչքն ինքեանք մնացեալ էն անդէն, և զերկու մասն նըշխարացն կալեալ էն առ ինքեանս և զմի մասն ընդ հաւատարիմ արս իւրեանց առաքեալ էն ի քաղաքն Սպահան, ի վանքն Ֆռանկաց, զոր Հուսէնիայ անուն կոչէն. քանզի երեք վանք կայ Ֆռանկաց ի մէջ քաղաքին Սպահանու. և բերողք նշխարացն բերեալ հասուցեալ էն զնըշխարսն ի Հուսէնիայ վանքն Ֆռանկաց, և սնդկով ի տան միում պահեալ էն, և սպասէին դիպող ժամու, զի առեալ տարցեն ի վերայ Բանդարու ի քաղաքն Գուայ՝[68] յերկիրն Փուրթուկէշին, զի անտի նաւով տարցեն ի բուն իսկ ի Ֆռանկստան։

Եւ Դաւիթ կաթուղիկոսն այս ամենայն եղելոցս ոչ էր գիտակ, քանզի յաւուրսս յայսոսիկ բնակեալ էր նա ի քաղաքն Սպահան. ունէր և Դաւիթ կաթուղիկոս ի Հայոց աղգէն՝ իր հաւատարիմ սպասաւոր այր մի՝ որում անունն էր Գրիգոր, ճարտար և զգոյշ ի սպասաւորութիւնն և ի գործ իւր։ Եւ գիտէր այրս այս զլեզու Ֆռանկաց՝ որ միշտ գնայր ի վանքն Ֆռանկաց՝ և առնէր նոցա սպասաւորութիւն վասն մարմնաւոր օգտի իւրոյ. և յաւուր միում ի յղմակել գինւոյ, ի խնամոցն Աստուծոյ քաղցրացեալ էն ի մէջ խօսիցն՝ և ընդ բաղմաց բանիցն զայն

2 Ս. յամենից
3 ՐԳԴՆ մածուցեալ
7-8 ԱՐ սպիտակք էն
9 Է պատրիկքն ՐԳԴՆ նշխարս
14 ԱԴ չիք ... և այսմ պատճառէ ոչ կարէին օսմանցւոց աշխարհաւն գնալ
15 Է պատրիկքն ԱՐ յերևանայ
16 Դ գիւղն
18 Ա պատրիքն մնացեալք Է պատրիկքն
19 Ա կալեալք Ս. հաւատարմաց արանց
22 Ս. բերեալք հասուցեալք
22-23 ՐԳԴՆ զնշխարքն
23-24 Ս. պահեալք ՐԳԴՆ սպասեն
25 Ս. Գրուայ ... անդի նաւու ՐԳԴ Գրուայ՝ ի յերկիրն անդի ն անդի Դ նաւու
26 Գ Ֆռանգստան
27 Ս. ոչ գիտակ էր
29 ԱԴՆ կաթուղիկոս ՐԳ ի հայոց ազգէ։ ԱԴ չիք իր Ա. զսպասաւոր
30 ՐԳԴՆ զգոյշ
31 Գ զլեզուն ֆռանկաց ն զլեզուն
32-33 Ս. զսպասաւորութիւն ... մարմնաւորի
33 Գ ի յմսկել գինւոյ
34 ԱԴ քաղցրացեալք ՐԳԴ բազում

ևս ասացեալ է նշխարաց բերող սպասաւորն Ֆռանկաց ընդ կաթուղիկոսի սպասաւոր Գրիգորին, թէ գնացաք յաշխարհն ձեր և տեսաք զաթոռն ձեր զէջմիածին՝ և անտի տանաք զնշխարս սրբուհւոյ կուսին Հռիփսիմեայ և բերաք աստ, և ահաւանիկ կայ յայն իմն տան անդրով և կամիմք տանել յերկիրն Փուրթուկէշին, զի անտի տարցուք ի քուն իսկ ի Ֆռանկաստան։

Իսկ իմաստուն և խոհական այրն թաքուցեալ է զբանն ի սրտի իւրում առ ժամուն՝ և հաճեալ զմիտս ասողին, բայց յերկրորդումն առուր գնացեալ է առ կաթուղիկոսն Դաւիթ՝ և յայտնեալ է զբանն՝ զոր լուաւ ի Ֆռանկացն։

Եւ ի ժամանակիս յայսմիկ յԱրարատեան երկրին բազում քրիստոնեայք ի Հայոց աշխարհն և մանաւանդ Երևանայ քաղաքի ժողովուրդքն բնակեալ էին ի մէջ քաղաքին Սպահանու, վերևելիս և զհատատարիմ. ոմանս ի նոցանէ կոչեաց Դաւիթ կաթուղիկոսն առ ինքն՝ յայտնեաց նոցա զբանն. և նոքա յոյժ տրտմեցան և շարժեցան ի նախանձ վրէժինդրութեանն։ Եւ կաթուղիկոսն և նոքա ի միասին գնացին ի մէջ Ջուղայեցւոց առ իւօջայ Սաֆարն[69] որ էր աւագ Ջուղայեցւոց, ոչ միայն Ջուղայեցւոց, այլ և ամենայն ազգին Հայոց՝ որք կային ի հնարքոյ թագաւորութեանն Պարսից. քանզի յոյժ ընդունելիք էին իւօջայ Սաֆարս՝ և եղբայրն իւր իւօջայ Նազարն առաջի Պարսից թագաւորին և խշխանաց նորա, և ծանուցին իւօջայ Սաֆարին զայն գործ։ Եւ իւօջայ Սաֆարն՝ և կաթուղիկոսն՝ և աղայ տէրտէրն, որ էր աւագ՝ Երևանեցւոց, ի միասին գնացին առ քաղաքապետն՝ որում անունն էր Միրզայ Մահմատ, զոր շահն կարգեալ էր քաղաքապետ Սպահանու, վասն զի շահն ոչ էր Սպահան յայսմ ժամանակիս, այլ ի Թարվէզ էր, նաև իւօջայ Նազարն ևս անդ էր առաջի շահին։ Եւ յետ ծանուցանելոյ քաղաքապետին՝ առեալ զօրականս ի նմանէ գնացին յանկարծակի ի վանքն Ֆռանկաց՝ և բացեալ զասացեալ տան դուռն՝ գտին զնդուկն նշխարուին։ Եւ առեալ բերին զնշխարալի անդուկն առ քաղաքապետն և նա կնքեալ է զնդուկն իւրով մատանեաւն և տուեալ ցիւօջայ Սաֆարն յաւանդ՝ առ ի պահել զնա մինչև զգալն շահին. և ի խնդրել զնա։

Զայս ամենայն գործոց անցուածք և որպիսութիւնք իւօջայ Սաֆարն և Դաւիթ կաթուղիկոսն գրով ծանուցեալ են իւօջայ Նազարին՝ որ էր ի Թարվէզ։ Եւ իւօջայ Նազարն, քանզի համարձակ էր առաջի շահին, ծանոյց նմա, և խնդրեաց ի շահէն զթուղթ հրամանաց և ծա-

4 ԱԳ *Հռիփսիմէի*
5 Է *կամիմք* փխ և *կամիմք* ԱԷ *տանիլ*
6 Գ *Ֆռանգստան*
7 ԱԷ *թաքուցեալ* փխ *թաքուցեալ է*
8 ԲԳԽ *առ ժամուն*
10 Գ *ի Ֆռանկաց*
11 ԲԳԽՆ *Արարատու* Ա *բազումք*
13 Ա *բնակեալք*
17 ԲԳԽ *աւաք*
18 Ա *ամենայնի*
19 ԲՆ *թագաւորութեան*
21 ԱԷ *իշխանացն*
22-23 ԲՆ *աւաք Երևանցոց* Գ *աւաք Երևանեցոյ*
23 Ա *որոյ*
24 ԲԳԽՆ *Միրզամահմատ*
28 ԲԳԽՆ *զդուռն*
30 Գն *տվեալ*
33 Ա *ամենից*։ ԲԳՆ *որպիսութիւն*
34 Ա *ծանուցեալք*
36 ԲԳՆ *թուղթ*

ռայ թագաւորական առաքել զկնի պատրեացն՝ որք զնշխարսն Հանին, զի կալեալ զնոսա ածցէ առաջի թագաւորին, և շահն արար զամենայն կամս խօջայ Նազարին։ Բայց գործն այսպէս Հանդիպեցաւ, զի զթագաւորական ծառայն, զոր պատրաստեցին ի գնալ՝ ազգաւ Հայ էր և Հաւատով քրիստոնեայ, զաւանութեամբն Հայոց՝ որոյ բնական անունն էր Աւետիք, բայց միւս ևս մականուն մականբնալ էին նմա Ալթուն. և զամենայն զոր ինչ պատշաճ էր գործառնութեանն այնմիկ, խօջայ Նազարն պատուիրեաց Ալթունին և Ալթունս այս զնացեալ Հնաս ի գաւառն Նախչուանու՝ և Հմուտ ի գիւղն Ֆռանկաց Ասպարանէր, և նոյնժամայն զեպիսկոպոսն և զերիցունն և զերևելիս ի ժողովրդականացն Ֆռանկաց կալեալ կապեաց՝ և արկել ի կալանս, և պահանջէր ի նոցունց ցուցանել զնշխարսց Հանող պատարիսն, իսկ նոքա ոչ կամէին ցուցանել։ Բայց Ալթունն չարշարէր զնոսա և կախեալ բազմծիծ առնէր, իսկ նոքա յակամայ ցուցին զնշխարսց Հանող պատրիսն, որոց անուանքն էին պատարի Գէլէում, և պատրի Աբգանջէլի։ Այնուհետև կարի սաստիկ պահանջէր զնշխարսն ի նոցունց, իսկ նոքա ոչ կամէին ցուցանել, Հայց Ալթունն սկսաւ կախել և ւաստիկ բազմծիծ առնել, և խստագոյն չարչարել, և տանջել զնոսա. և այնպէս զբազում աւուրս անդադրմ չարչարէր զնոսա, զի ոչ ցուցանէին զնշխարսն։

Եւ յաւուր միում մինչ կախեցին ի զեղական երիցանց զկոչն այնմիկ զոմն երէց և զբազում ժամս Հարկանէին անդադրմ, կայր և երիցուն այնմիկ Հղբօրորդի մի փոքրիկ տղայ, որ առ ընթեր նորա կանգնեալ ապիոդրմ լայր. և տղայս այս Հարցանէր զնոսանն, որք անդր կային, թէ զի՞ վասն կախեալ Հարկանեն զէրեարէրն իմ, և արքն նոսուն պատասխանի մանկանն, թէ նշխարք սրբոց բերելք են ի գիւղս՝ և զայն խնդրեն ցուցանել, և մեք ոչ ևմք տեղեակ որ ցուցանեմք, վասն այնորիկ կախեալ են և Հարիանեն։ Եւ տղայն կրկնեալ ասաց նոցա. «Ապա զի՞նչ է այն, որ կայ ի նեղքսագոյն տան մերում, որ յամենայն աւուր ճրագ վառեն առաջի նորա»։ Եւ մինչ ցայս վայր Ալթունն բնաւ ոչ է խօսեցեալ Հայերէն, և կամ զինքն Հայ ձևացուցեալ, և ինքն ևս ի մէջ արանցն կանգնեալ էր, յորժամ տղայն ասաց զայն բանն։ Եւ ի լսելն իւր Ալթունն ի տղայէն զբանն զայն, ի նմին ժամու դարձաւ առ տղայն և խանդաղատանօք խօսեցաւ ընդ նմա՝ և ասաց. «Զի՞նչ ասացեր որդի, մէկ էլ ասա»։ Եւ տղայն կրկնեալ միւսանգամ ասաց զբանն

1 ԱՐԳԻՆ *պատրոցն*
5 Ա.ՐԳԻՆ *Հաւատովն*
6 Գ *անուն էր* Ա. *զմականուն մակագրեալք* Ի *մակագրեալ*
7 ԲՆ *գործառնութեանն*
9 Գ *ի գեօղն*
12 ԱԼ *պատրիկան*
14 Ի *պատրիկան* ԲԳԻՆ *պատրիքն*
15 Ի *Գէլէում*
16 ԲԳԻՆ *զնշխարն*
18 Գ *խստագոյնս*
20 Ն *երիցանցն*
21 Ա.ՐԳԻՆ *էրէց* Ի *կրնց*
21-22 ԲՆ *երիցոյն* Գ *իրիցոյն*
22-23 Բ *կանգնեալ*
23 Ի *ի Հարցանէր* փխ *Հարցանէր* Գ *որ* փխ *որք*
25 Ա. *զպատասխանի* ԲԳԻՆ *բերելք են* Գ *գեօղս*
28 Ա. *ի նեղսագոյն*
29 Ա. *զճրագ*
31 Բ *կանգնեալ*
32 ԲԳԻՆ *Ալթուն*
33 ԳՆ *խանդաղատականօք*
34 Ա *միւսանգամ ասաց*

Եւ ապա ասաց Ալփոնն առ տղայն. «Եթէ պատուհասդ ցուցանես ինձ, զտէրտէրն քո արձակեալ Յողում. և քեզ և քո տէրտէրին կապայ հագուցանեմ խլզաթ. ապա թէ ոչ՝ այնչափ ծեծեմ զտէրտէրն քո, որ ի ներքոյ փայտի մեռանիս»: Ապա ինքն Ալփոնն կալեալ զձեռանէ տղային. ասաց. «Ես որդեակ՝ երթիցուք ի տունն ձեր և պատուհասդ ցոյց ինձ»: Եւ հասեալ ի տունն մտին տանէ ի տուն մինչև ցներքսագոյն տունն՝ ուր կայր նշխարքն. և հանս Ալփոնն զի ի բարձր տեղւոջ հանգուցեալ էին՝ և մաքուր զգեստուք ծածկեալ՝ և ճրագն առաջի նորա ի վառ կայր: Եւ Ալփոնն ի բաց էառ զամենայն ծածկոյթն և հանս, որ առաջ նշխարքն էր: Եւ ինքնին առեալ ի գիրկն իւր ի դուրս եբեր. և բառ իւրում խոստմանն որ առ տղային, եթող զնէրէցն. և պատուհասեալ կապայան պարզևանաց երիցուն և տղային:

Եւ այնուհետև սկսաւ Ալփոնն խոստագոյնս շարշարել զայլ կալանաւորսն՝ և մանաւանդ զնշխարաց հանող պատրիսն, և չոչ ըմբերել զառն տանջանացն, ասացին՝ թէ այլ ոչ գոյ բայց յայնմ միոյն, զոր ի լեառն պահեալ եմք, այժմ ի ցերեկի համբերի, զի ոչ լինի. և ի գիշերի գնացեալ ի տեղին՝ հանեալ տացուք քեզ: Եւ զանուն լերինն յորում գնշխարսն թաքուցեալ են՝ Բօլու կոչեն ամենայն աշխարհն այն, որ մերձ է դեղչն Ապարաներու, որ է բարձր քարանձաւ լեառն: Եւ յորում գիշերի գնացին պատրիքն ի լեառն, գնաց և Ալփոնն ևս ընդ նոսա: Եւ յորժամ զնշխարն թաղեալ են անդ, նշանօք բևեռաստեղն թաղեալ են. և այժմ ևս սկսան նշանօք բևեռաստեղն երթևեկս առնել, և այնքան երթևեկս արարին այսր և անդր, մինչ հաւաստեաւ ի վերայ թաղեալ տեղւոյն եկեալ կացին և ապա հրամայեցին սպասաւորացն փորել զտեղին. և ի զրաւ փորելոյն տեսին արծաթեայ թաս մի լի նշխարօք, և առեալ զայն ևս հանեն Ալփունին: Եւ Ալփոնն առեալ զնշխարսն և պատուիրան դարձաւ ի գիւղն Ապարաներ. և պահանջէր ի նոցանէ զայլ ևս նշխար. և նոքա առաջի անկեալ լային և սոսկալի երդմամբ երդնուին, թէ այլ ոչ գոյ:

Եւ ինքն Ալփոն էր ի գեղջէն Աստապատու՝ որոյ և տունն անդ էր, եւեալ յԱպարանէր գեղչէն՝ ընդ իւր առեալ զնշխարքն և զնշխարաց հանող պատրիսն, և եկեալ ի գիւղն իւր յԱստապատ:

Յաւուրս յայտնիկ պատահեցաւ սրբոյ վարդապետին Պօղոսի լինիլ ի գիւղն Աստապատ, և զպատմութիւն այս վարդապետիս արարեալ եմ յառաջիկայդ յայսմ շարադրութեանս, առ որ գնացեալ Ալփունին

2 Ա. *զկապայ*
3 Ա. *մինչ գի փխ որ*
5 ՐՆ *ի տուն*
6 Ա.Ի. *ցներսագոյն*
7 Ա.Դ.Ի. *չիմ զի*
8 ՐԳԴՆ *զգեստիք*
11 ՐՆ *խոստման Ր զերիցն Դն զերէցն*
12 Ր *կապայն Ա.Դ.Ն երիցոյն Ր երիցոյն*
13 ՐԳԴՆ *Ալփուն*
14 Ի. *պատրիկն*
17 Ա. *զի փխ եւ*
18 ՐՆ *զնշխարսն Դ.Ր զնշխարն Ա. թաքուցեալք են*
19 Ա.Դ. *Ապարանու*
20 Ի. *պատրիկքն*
21 Ա. *թաղեալք են*
23 Դ. *մինչև*
27 Ա.Ի. *զպատրիկն*
27-28 Դ.Ն *այլ ևս*
31 Դ.Ն *գիղչն*
32 Ա.Ի. *պատրիկն*
33 ՐԳԴՆ *յաւուրսս*
33-34 ՐԳԴՆ *լինել*
35 Ի. *շարադրութեանս*

և տարեալ առաջի զամենայն նշխարան և առաց վարդապետին առնուլ իւր բաժին, և վարդապետն առեալ ի նշխարացն մասն մի ի չափ մատին մերոյ. և զայլն ժողովեաց Ալթունն առ ինքն: Ձայս ևս առաց Ալթունն առ վարդապետն. «Եթէ ոչ լինիս ինձ մեղադիր վասն պատ-
5 *բեացս, զմարմինս սոցա առաւէն թողեալ, և բարձեալ ի սոցունց զգլուխսն միայն տարայց առ Թագաւորն»: Իսկ վարդապետն սուրբ՝ իբրև ի վերայ քրիստոնէից՝ պիացեալ ի վերայ պատրեացն ո՛չ եթող Ալթունին առնել զասացեալն:*

Եւ զմասն նշխարացն, զոր էառ վարդապետն յձեռ ամաց ինչ գնաց
10 *ի քաղաքն Նախչուան, և է մեծ նմին քաղաքի փոքրիկ գիւղ մի, զոր Քուլթափայ կոչեն. և մինչև ցժամանակն յայն ոչ գոյր ի գիւղն յայն եկեղեցի. և անդէն հիմն արկեալ եկեղեցւոյ, եղ ի հիմունս եկեղեցւոյն զնշխարսն զայն. և ի վերայ նորա շինեալ աւարտեաց զեկեղեցին: Եւ յաւուր օծման եկեղեցւոյն անուանեաց զանուն եկեղեցւոյն սուրբ*
15 *Հռիփսիմեայ: Եւ կան այժմիկ ասկաւ Հայաստան քրիստոնեայք ի գիւղն յայն՝ հաստատեալ ի վերայ եկեղեցւոյն:*

Իսկ Ալթունն եղեալ յԱստապատու՝ առեալ ընդ իւր զպատրիսն և զնշխարն և գնացեալ հնաս ի Թաւրէզ՝ և մատոյց առաջի խոջայ Նազարին զնշխարսն և զպատրիսն. և խոջայ Նազարն ծանուցեալ շահին, և
20 *խնդրեաց ի շահէն, և ասաց. «Յաչխոդումն բախտի Թագաւորիդ մերոյ ո՛չ եթող գնալ նշխարացն այնոցիկ ի Ջուանկատան. զի թէ գնացեալ էր, ամենայն ազգն Հայոց զկնի նորա գնային, քանզի ազգն Հայոց ամենեքեան կախեալ կան զնմանէ, և մանաւանդ ժողովուրդքն Ջուղայեցւոց և Գողթան գաւառին, յորոց բազումք են վաճառականու-*
25 *թեամբ այժմ ի Ջուանկատան, և Հաղիւ թէ գառնային նոքա յայս աշխարհ: Եւ խնդիր մեր այս է յարքայէ, մի գուցէ բաժանեսցի մասն ինչ ի նշխարացս յայսցանէ, և թէ իցեն Ջուանկուենքն առեալ ի սմանէ, զայն ևս առեալ ի նոցանէ մեզ տացէ», զայս բան նախ քան զօր քննութեան գատաստանին ասաց խոջայ Նազարն ընդ շահին: Իսկ շահն*
30 *արար պատասխանի, թէ որովհետև յօժարութիւն կամաց Ջուղայեցւոց այդպէս է. յաղագս յօժարութեան նոցա, և ի շնորհ երեսաց քոց արարից որպէս ասացեր:*

Եւ յաւուր յորում նստաւ շահն ի դատաստան, եբեր Ալթունն զնշխարն և զպատրիսն առաջի շահին, և շահն հարցեալ տեղեկացաւ
35 *ամենայնի. և զպատրիսն եթող առանց պատուհասի, քանզի ի ժամանակին յայնմիկ դաշն խաղաղութեան ուխտեալ և հաստատեալ էին շահն և Թագաւորն Ջուանկաց ընդ միմեանս, և ի շնորհուկս առնելով*

1 Ա. *չիք և*
2 Ա. *զմասն*
7 ԲԳԲ *պատրոցն*
11 ԲԲ *այն*
12 ԲԳԲ *և եղ*
12-13 Ր *եկեղեցւոյ և զնշխարսն*
15 Գ *ի գեղն*
17-18 Ա.Է *զպատրիսկան Գ զնշխարսն*
19 Ա.Է *զպատրիսկան*
20 ԲԳԲ *Աչոդումն*
21 ԲԳԲ *այնմիկ*
26 Ա. *բաժանեսցէ զմասն* ԲԳԲ *բաժանեսցէ*
27 Գ *յայսոսանէ*
31 Գ *յօժարութեանց*
33 Գ *Ալթուն՛*
34 Ա.Է *զպատրիսկան* Ա.Է *շահին (Հարցեալ)*
35 ԱԳ *չիք ամենայնի* Ա. *չիք զպատրիսն* ԲԳԲ *զպատրիսն*

նոցա ոչ պատժեաց զպատրիան, այլ ի բաց արձակեաց առանց պատժոց: Իսկ պատրնաց դհամարձակութիւն առեալ ի ներողութենէ շահին, ասացին առ շահն. «Զայսքան աշխատութիւն և զնեղութիւն՝ զոր կրեցաք մեք չարագս նշխարացդ, խնդրեմք զի զմասն ինչ ի նշխարացդ պարգեւեսցէ մեզ արքայ»: Պատասխանի արար նոցա շահն հիացական մեղադրութեամբ ասելով. «Զորո՞ց դինչան առեալ տաց ձեզ, զի զայս նշխար՝ զոր խնդրէք, Հայոց է, և որ իրաւունք վկայեն թէ զինչս նոցա առեալ ձեզ տաց». և ապա շահն արար զհրաման տալ զնշխարսն պահեանդն ցխոջայ Նապարն, որ եղև այնպէս:

Ետ այսորիկ կամեցեալ է շահն առաքել զնշխարն ի քաղաքն Սպահան՝ և խոջայ Նապարին ևս ասացեալ է թէ՝ այսպէս կամիմ առնել, և նա ևս հաւանութիւն տուեալ է այսմ: Եւ ապա պրեալ է շահն թուղթ ի Սպահան առ խոջայ Սաֆարն, թէ չարագս շնորհի երեսաց ձերոց՝ և ըստ չօժարութեան սրտից ձերոց, առ զնշխարս սրբոցն ձերոց ի Ծռանկաց՝ և պարգեւեցի ձեզ, և արդ՝ առաքեցի առ քեզ չաւանդ պահեստի. արդ՝ ընկա՛լ զդա և պահե՛ց ցորժամ խնդրեցից, բերցես առաջի իմ: Եւ խոջայ Սաֆարն առեալ և ընկալեալ զնշխարսն և ի տան իւրում պատրաստեալ տեղի պատշաճաւոր, և անդ էր հանդուցեալ, և ըստ արժանւոյն սրբութեանցն չամենայն աւուր պաշտէր զնոսա անուշահոտ խնկօք և պատեաւ մոմեղինօք, որքան ինքն և որպիքն կային, և այժմ թոռունքն իւր, և կայ անդէն մինչև ցայսօր:

Արդ՝ նշխարք սրբուհւոյն Հռիփսիմեայ այսպէս հանեալ եղև ի Ծռանկաց, և այսպէս եկեալ եղև ի Սպահան քաղաք:

Իսկ նշխարաց հանող պատրիքն զորս արձակեաց շահն, եկին ի Թարւիզու և գնացին միւսանգամ ի Նախչուան՝ զի վերստին գնասցեն ի պատան Աւտարատեան ի խնդիր նշխարաց սրբոց:

Եւ պատրիքն մինչ տակաւին էին ի գաւառին Նախչուանու՝ չաւուր միում պատահեցան տեսութեան Մախսուտ սուլթանին՝ որ էր իշխան Նախչուան քաղաքին և ամենայն գաւառաց նորին, և ի չաճախել բանից և խօսից ի մէջ նոցա, որ վասն հաւատոց, ասացեալ է սուլթան ընդ պատրիան. «Ապա զպատգամաբերն մեր զՄահմէտ ամենևին ո՞չ պատուէք և ընդունիք»: Եւ ի նմին ժամու հանդէպ նոցա նստեալ էր շուն մի, և ոմն ի պատրեացն ձգելով զձեռն հանդէպ շանն՝ ասաց. «Զի՞նչ է Մահմէտ զի պատուհասցուք զնա՝ եթէ Մահմէտ և եթէ շունն այն զուգահաւասարք են»: Եւ ի վերայ այսմ բանի՝ սուլթանն և ամենայն արք և ծառայք նորա ի խոր խոցեալ են և մահու չափ վիրաւորեալ, բայց զոմն ի սիրտս իւրեանց թաքուցեալ են առ ժամանն և ոչ բերեալ չերեսս:

1 Ա.ՐԻ: *զպատրիկան*
2 ԲԳԴՆ *պատրնացն համարձակութիւն*
8 ԲԳԴՆ *հրաման*
10 Ա.ԲԳԴՆ *այսոցիկ*
3 Ա *զթուղթ*
18 ԲԳ *անդէն և անդ էր (հետագայում «էր»ը ուղղված է «էն»ի)*:
19 Ա.ԲԳԴՆ *արժանոյ*
20 Ա *անուշահոտօք*
22 ԳԴՆ *սրբոյն*
24 Ա.ԵՒ *պատրիկքն*
27 Ա.Ի *պատրիկքն*
30 ԳԴՆ *սուլթանն*
31 Ա.Ի *պատրիկան*
33 ԲԳԴՆԻ *և ասաց*

Իսկ պատրիքն չեռ աւուրց յոլովից կամ սակաւուց՝ հլեալ ի նախահաւանայ գնացին յՆրիան, և անտի հլեալ են ի գնացեն ի Գնդարքունի, և յորժամ հասեալ են ի լեառն զոր Սուլէյմանայ սար ասեն, չեռաւսա կողմանէ հկեալ են վրիպ նոցա արք հինգ հեծեալք՝ ազգաւ Ղզլպաշ, հասեալ են պատրեացն, և մինչ խօսելով ընդ նոսա եբթային զճանապարհացն, և անդէն չանկարծակի հարեալ են սրով և սպանեալ վերկուսին պատրիքն՝ որք էին Հոխիսիմանց հշխարաց հանդերձ:

Կայր այլ և մին աշխարհական այր ընդ նոսա, որ էր սպասաւոր պատրեացն, և անուն նորա Ագամիր, չՍպրակունիս պնդչէն Փոռնակաց, և այրս այս ի սպանանելն պատրեացն ինքն փախուստ առեալ է ի կողմն քարանձաւի միոյ, և ոմն ի Ղզլպաշ պինուորացն ընթացեալ պինի նորա, և անդէն հարեալ է զնա սրովն, ի գլուխն, ի պարանոցն, չուռն և ի չարմունկն. և վիրաւորեալ այրն անկեալ ի գետնի ձևացուցեալ պինքն թէ մեռեալ. և պինուորին նա համարեալ է զնա թէ սուտիս մեռեալ է, վասն որոյ հարեալ է զայրն ոտիւքն և ի բարձանց ի գլխոյ քարանձաւին արկեալ է զնա ի ներքոյ վիմին, և ինքն գնացեալ առ ընկերս իւր. և պինուորքն՝ որք զայս գործեցին, ասին պինչս նոցա՝ որոց և հաւանեցան. և գնացին ուր և կամեցան:

Եւ այս Ղզլպաշ պինուորքս՝ որք պատրիսն սպանին՝ ամանք ասացին, թէ ի Մախսուտ սուլթանի զօրականացն էին, որք վասն անարգանաց Մահմետին, զոր անարգեցին պատրիքն՝ և ասացին, հաւասար գոլ զնա շան, առաքեաց Մախսուտ սուլթանն՝ թագուն սպանանել զնոսա, և պինուորացն հկեալ այնպէս արարին: Եւ ամանք ասացին, թէ այն պատրիսն սպանող զօրականքն էին ի զօրականաց Ամիրզունայ խանին, որ էր տէր զաւառին էջմիածնի, առաքեաց պինի պատրեացն սպանանել զնոսա, վասն երկու պատճառի: Նախ՝ ի վրէժխնդրութիւն հշխարաց սրոցն Հոխիսիմանց որ չերկչէն Ամիրզունայ խանին Շանին զնշխարան և առեան չայլուր և երկրորդ՝ ասացին թէ լուեալ էր Ամիրզունայ խանն, թէ ընդ պատրեացն այնպիսի կան բազում պանձ ոսկւոյ և արծաթոյ, վասն պանձուցն առաքեալ զօրականս և սպան զնոսա և էառ զպանձն: Արդ՝ եթէ ի Մախսուտ սուլթանէն, և թէ Ամիրզունայ խանէն՝ և թէ ուստի և իցէ, եկին պինուորք ոմանք՝ և սպանին զպատրիսն, և զսպասաւոր պատրեացն վիրաւորեալ արկին ի ներքոյ քարանձաւին:

Եւ մեք չորժամ հկեալ ի խնդիր պատմութեանց շրջէաք, գնացաք

1 Ա.Ի: *պատրիկքն*
2-3 ԲԳԴՆ *Գնդապունի*
4 Ա.Ի: *հեծեալ*
7 Ա.Ի: *պատրիկան*
8 Ն *կայր և այլ*
10 Գ *ինք*
12 ԲԳԴՆ *ի ուսն*
17 ԲՆ *որ*
19 Ա.ԲԳԴՆ *զայս* Ա.Ի: *զպատրիկան*
20 ԲԳ *որ փխ որք*
21 Ա.Ի: *պատրիկքն*
22 Բ *սպանել*
24 Ա.ԲԳԴՆ *պատրի*
25 ԲԳԴՆ *պատրոցն*
27 Ր *զնշխարքն* ԱԳ *Հոխիսիմիէ* Ա. *զի չերկրէն*
28 ԳՆ *զնշխարքն*
30-31 Ա. *զօրականս սպան զնոսա*
33 Ա.Ի: *պատրիկան* ԲԳՆ *և սպասաւորն* Գ *և զսպասաւորըն*
35 Բ *հրնալ փխ հլեալ*

յերկիրն Նախչուանու ի գաւառն Երնջակ, և ի գիւղն Ասպարանէր. պատահեցաք և առնս այսմիկ Աղամիրս, և տեսաք զինքն և զտեղիս, և պատմեցին, և նա պատմեաց մեզ զպատմութիւնս զայս: Եւ զկնի ասացի՝ Թէ յորժամ արկին զիս ի քարանձաւէն ի վայր՝ ընկեցայ ես ի մէջ չրոյ գետոյն և էր գետն այն զոր Կոթայ գետ առնեն, և ջուր գետոյն առեալ տարաւ զիս՝ և էարկ ընդ դէմ վիմի միոյ, և վէմն այն եղև արգելիչ ինձ, և արգել զիս մինչ ի մթանալ երեկոյին ցելս աստեղաց: Եւ այս ամենայն եկին ի վերայ իմ, և ես կայի կենդանի շնորհօքն Աստուծոյ, և զիտէի զառնեցն, որ ինչ պատահէր ինձ. և ողորմութեամբն Աստուծոյ ոչ խեղդեաց զիս ջուր գետոյն: Եւ ընդ մթանալ երեկոյին, ելի ի գետոյն և գնացի. և ոչ գիտէի թէ ուր գնամ, բայց ի գնալն իմ պատահեցայ բազմադնաց ոտնակոխ ճանապարհի միոյ, և խորհեցայ յանձն իմ, թէ ի վերայ ճանապարհիս կացից, գի ի յանցորդաց տեսին Հարցնել գիտացից թէ զինչ պարտ է ինձ առնել. և եղև գի ընդ արշալոյս առաւօտին եկին արք ոմանք դրաստուք՝ Հայ ազգաւ, և գնային ի գիւղ ուրեմն. և ես ելեալ խառնեցայ ընդ նոսա. և նոցա գիտացեալ զամենայն պատահումն, որ առ իս, եդին զիս ի վերայ գրաստու՝ և Հասուցին ի գիւղ մի՝ և ես պատմեցի գեղականացն զամենայն: Եւ ի գեղականացն ոմանք դնացին ի տեղի սպանման պատրեացն, և տեսին զպատրիսն սպանեալ, և ամենայն զրհանք, և թուղթք, և զգեստք նոցա ցրուեալք ընդ երեսս անապատին: Եւ անդէն ի վերայ Ճանապարհին փորեցին վիհ և ընդ հողով արարեալ ծածկեցին զնոսա. և ես մնացի ի գիւղ մինչև ողջացան վէրքն իմ և ապա ելեալ եկի ի տուն իմ: Արդ՝ այս Աղամիր անուն այրս, որ տեսող էր ամենայն գործոցն՝ պատմեաց մեզ ի տեղւոյն, որ ելեալ են ի Նախչուանայ մինչև ցայս վայր:

Իսկ զկնի սոցա, զոր արդ պատմեմք, Մարտիրոս անուամբ ոմն եպիսկոպոս պատմեաց՝ զոր ինքն էր աչօք տեսեալ: Ասէր՝ Թէ յաշխարհէն Ֆռանկաց եկն միւս այլ պատրի, անուն Մելքիոր. և պատահեցաւ տեսութեան շահին, որ էր յայնժամ ի Թարվէզ. և ի Թարվիզու ելեալ շահն ամենայն բանակաւն իւրով եկն յերկիրն Գեղամայ, եկն ընդ նոսա և պատրին Մելքիոր, քանզի իբր զդեսպան եկեալ ձեռնայր, և պատիւ ունէր ի շահէն, և էր այր մեծազգի և փառաւոր՝ և յոլով խօսէր ընդ նմա շահն: Եւ ի մէջ խօսից յաւուր միում ասացեալ է Մելքիորն ընդ շահին, Թէ յառաջն ժամանակաւ ոմանք ի մերոց պատրեացն եկեալ են յայս երկիրս, և յաւուրսակաց սպանեալ են և թաղեալ կան ի լերինս,

1 Ա.ԲԳՆ չիմ և Գ գնօղն Գ Ասպարանէր
2 Ս. Աղամիրի
5 Ա.ԲԳՆ գետին Ա.Գ չիմ և էր գետն այն
6 Ր արկ
7-8 Ս. Եւ այսոքիկ ամենեքեան
8-9 Գ Քրիստոսի փխ Աստուծոյ
14-15 Ա.ԲԳՆ արշալոյս Ա.Գ՝ առաւօտուն
20 Ա.Գ՝ զպատրիսն
23 Գ գնօղն
24 Ս. ամենից գործոց Ր գործոյն Գ գործոցս
25 Ս. որք ելեալք են Գ որք
27 Ա. զկնի
29 Ր եկեալ ԴԳՆ եկաւ
31 Ս. ամենայնիւ ԲԳՆ եկաւ
32 է պատրիկն Ա.Գ պատիւ
34 ՐՆ խօսից
35 Ա. յառաջնով ՐԳ յառաջ
36 Գ աւազակաց Ա.ԲԳ սպանեալք են և թաղեալք ԴՆ սպանեալք Ն թաղեալք կան

և արդ՝ յօժարի կամք իմ հանել զոսկերս նոցա և տանել ի հայրենի վերնմանատունս իւրեանց: Իսկ շահն հնմանոց զոլով օրինօք և ապատ, և ոչինչ ունելով զիտոյ զոսկերաց մնալոց, պատասխանեալ է նմա. «Դու գիտես»: Եւ ապա Մկրտիչն առաքեալ է զոմանս ի տեղին, որ հանեալ են զոսկերս Դէլեումին և զընկերին, և առ ինքն բերեալ, և ինքն ընդ իւր տարեալ է ի բուն Ֆռանկաստան յերկիրն իւրեանց՝ իբրև գնշխարս մարտիրոսի: Եւ այս ևս այսպէս:

Եւ ժամանակ՝ յոր այժմ կամք մեք, ի Բուսկանն մեր Հայոց Ծովէ, յորում և զպատմութիւնս շարադրեալ զրեցաք, պատահեցաւ մեզ զալ ի մեծահռչակս քաղաքն Սպահան. քանզի եկեալ էր առ խոհականն, և մեծատոհմ, և արժանաժառանգ հայրապետն ամենայն Հայոց, ւմիթուղիկոսն սրբոյ էջմիածնի տէր Յակոբ առ ի տեսութիւն և յայցելութիւն բանաւոր Տօմին Քրիստոսի՝ որ Տաւուտացաւ նմա, այլ և ի նուիրակութիւն սրբոյ էջմիածնի. այլ և ի գործոց մարմնավանաց յարդարումն, որ ի դուռն արքունի. որոյ ի սպասաւորութիւն եկեալ էաք յոլովք. որով և զնացաք ի առն խօջայ Սոփարին յոմեռ և յեկեղեցապատութիւն նշխարաց սրբուհւոյն Հռիփսիմեայ, և այլ յոլով նշխարաց՝ որք կան անդր, և բարեկամ զնշխարսն տեսաք զամենեսեան՝ և կատարեալ զուխան՝ արժանացաք օրհնութեանց սրբոցն: Ոմանք յերեսելի արանց Ջուղայեցոց ասացին մեզ զայլ ևս պատմութիւնս սակաւս. և շարադրութիւնս պատմութեանց նոցա էր այսպէս:

Յետ ժամանակաց անցելոց պատմութեանցդ՝ զոր յառաջ պատմեցաք, եկեալ է շահն ի Սպահան, և ըստ հանապազորդ սովորութեան իւրում եկեալ է ի առն խօջայ Սաֆարին, պատահեալ են և անդ ոմանք պատրիք Ֆռանկաց՝ որք էին ի կարգէ վերոյասացեալ պատրի Դէլեումին. և ի մէջ խօսիս յիշեալ են զնշխարս սրբոյ Հռիփսիմեանց, և բերեալ են զամենայն նշխարս սրբուհւոյն Հռիփսիմեայ առաջի շահին ի տեսութիւն ամենեցուն: Եւ յորժամ բացեալ են զնշխարն, յայնժամ պատահ ժամ գտեալ են պատրիքն. և ի շահէն խնդրեալ են իբրև զպարգեւս տալ նոցա մասն ինչ ի նշխարացն այնոցիկ: Եւ շահն ինքն առեալ է ոսկր մի յոսկերացն, և զայն ևս պանակաւն հարեալ է և կոտրեալ, ակէս ոսկերն դարձեալ ձգեալ է ի մէջ այլ ևս նշխարացն, և զկէսն տուեալ է ի պատրիսն, և նոքա առեալ են և ամփոփեալ յինքեանս: Եւ զայլ ևս նշխարն զհասարակն, հրամայեալ է խօջայ Սաֆարին տանել և պահել. և նա բարձեալ ի միջոյ՝ և տարեալ ի տեղին ուր յառաջն եղեալ էր, և կայ անդէն մինչև ցայսօր: Իսկ վասն մասին, զոր այժմ առին պատրիկքն՝ տարեալ են ի Բանդարայ աշխարհն՝ ի քաղաքն, որ

1 ԱՊԻ *տանիլ*
3 Ա *զիտոյ ոսկերաց*
4 Ա *չիմ և*
5 Ա *որք հանեալք են Գ որք*
6 Գ *Ֆռանգաստան*
8 ԲԳԳ *որ* ԱՊ *Հայոց*
11 Ա *ամենից*
12 ԳԳԻ *սուրբ*
20 Բ *Ջուղայեցոյ* ԲԳԳ *այլ*
21 ԳԳԻ *շարադրութիւն*
25 ԱՒ *պատրիկք* Ի *պատրիկ*
26 Ա *չիմ և*
27 ԲԳԳԻ *սրբոյն*
29 ԱՒ *պատրիկքն*
30 Ր *ինք*
33 ԱՒ *ի պատրիկն*
34 ԱՊ *տանիլ*
37 ԲԳԳԻ *պատրիքն*

կոչի Գուտայ, շինեալ են վանք ի նմին քաղաքի, և զմասն այն եղեալ են ի հիմունս եկեղեցւոյ այնմ վանացն. և է վանքն այն այժմ կուսանաց վանք, յորում բնակեալ են բազում ճգնաւոր կանայք: Արդ՝ օրհնեալ է Աստուած յամենայն ժամ:

5 ԳԼՈՒԽ ԺԷ

ԹԷ ՈՐՊԷՍ ԿԱՄ ՅԻՆՉ ՊԱՏՃԱՌԻ ՏԱՐԱՆ Ի ՍՊԱՀԱՆ ՔԱՂԱՔ ՉԱՋՉ ՍԲՐՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՄԵՐՈՅ ԼՈՒՍԱՒԻՐՉԻՆ ԵՒ ՉՔԱՐԻՆՔՆ ՍԲՐՈՅ ԱԹՈՒՈՅՆ ԷՋՄԻԱԾՆԻ

Մեծ թագաւորն Պարսից առաջին Շահաբաան, որ զազգս Հայոց արտաստմանն արար ի բնիկ աշխարհէն Հայոց, և վարեաց յաշխարհն Պարսից, այնու դիտաւորութեամբն՝ որպէս զի աւելեսցի աշխարհն Հայոց՝ և շինեսցի աշխարհն Պարսից, և նուազեսցի ազգն Հայոց՝ և բազմասցի ազգն Պարսից: Եւ զի էր Շահաբաան ինքն այր ազգոյշ և նախահոգած, և յար և հանապազ խորհէր և խոկայր, թէ ո՛րպիսի
15 *հնարս հնարեցից վասն ազգին Հայոց՝ զի մի զարձցին յաշխարհն իւրեանց, այլ մնասցեն յաշխարհն Պարսից: վասն զի ժողովուրդքն Հայոց, այնք, որք յաշխարհին Հայոց ծնեալ էին, յոյժ բազձային դնալ յաշխարհն Հայոց, վասն որոյ յաղագս դիտաի հնարից խոնարհեալ զիջանէր ի վհատական փառասիրութենէ իւրմէ Շահաբաան, և խօսէր ընդ*
20 *ազգին Հայոց որում և պատահէր, ևթէ նշանաւոր և երևելի արանց, և թէ փարթամաց՝ և ևթէ աղքատաց, խօսեցուցանէր զժողովուրդսն, և ինքն յակճիռս կացեալ մտօք ունկն դնէր բանից նոցա, և ի սիրտ իւր ժողովէր զանօրէնութիւնն, և յղանայր զգաստ:*

Եւ որպէս յառաջդ ասացաք, այլակերպէր զինքն շահն, և շրջէր
25 *ի փողոցս և ի պողոտայս ի լսել, թէ զինչ ասեն: Մտանէր ի տունս տունս, և որում և պատահէր բանս ինչ առաջարկեալ խօսէր ի կողմանէ շահին՝ և ի կողմանէ ռիաթին, ևթէ շահն խաղաղասէր և արդարադատ է, և ոչ թողու իշխանաց որ զուլում առնեն ռիաթին: Եւ մանաւանդ առաւել խնամակալ է ազգին Հայոց, որ զամենայն զգործ և*
30 *զբանս նոցա բատ կամաց նոցա կատարէ. և ընդէ՞ր ազգն Հայոց ոչ են ջերմագոյն և յօժար կալ ի յաշխարհիս Սպահանայ. զի շէն աշխարհ է և իչէլի է. իսկ աշխարհն Հայոց աւերակ է և բնակեան թշնամւոյ, և հանապազ աւար և գերութիւն:*

1 ԲԳՆ *Գրեալ*
3 Ա. *բազումք ճգնաւորք*
3-4 ԱԳ *չիւ Արդ՝ օրհնեալ է աստուած յամենայն ժամ*
7 ԱԳ *զԱջ* Ա*Գ զբարինս*
12 Ա*Գ ազգս*
13 ԲԳՆ *գգուշ*
15 Ա. *հնարեցից*
17 ԱԲԳՆ *ծնեալք*
19 Ա. *ի վհատական*
20 Ա*Գ չիւ և (երևելի)*
21 ԲՆ *և թէ փս և ևթէ*
22 ԱԲԳՆ *սիրտս*
25-26 Ա*Գ տունս, որում և պատահէր*
26 Գ *յառաջարկեալ*
27 ԲԳՆ *ըռիաթին*
28 ԱԲԳՆ *դուլմ* ԲԳՆ *ըռաթին*
32 Ն *ի չէլի է Գ թշնամոյն*

Եւ բաղում անգամ լուեալ է պատասխանի թէ յաշխարհին Հայոց ամենայն բարեաց լիութիւն և առատութիւն է, և թեթեւագին է, և աստուղ է, և թանկագին. և անդ գերեզմանատունք հարց և նախնեաց նոցա. և վանորայք, և ուխտատեղիք, ուր գամբարանք են սրբոց, և մա-
5 *նաւանդ մեծահանդէս Աթոռն սուրբ էջմիածին, ուր կայ սուրբ Աջն Գրիգորի Լուսաւորչին, որով օրհնի սուրբ մեռոնն. ուստի պնացեալ սփռէ յաղգս Հայոց յամենայն աշխարհ, ուր և իցեն. վասն որոյ ամենայն ազգն Հայոց հնազանդին սրբոյ Աթոռոյն էջմիածնի և կաթուղիկոսի նորա՝ որ անդ նստի: Եւ զայս բանս ոչ թէ տպկաք և աննշանք ոմանք*
10 *միայն ասացեալ են. այլ և նշանաւորք և պիտունք: Այլ և լուաք յոմանց թէ զայն ևս ասացեալ են, թէ կամի շահն որ հաստատուն մնան ազգն Հայոց յաշխարհի Պարսից. պարտ է նմա բերել զԱջն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ի Սպահան, և անդ շինել նոր էջմիածին, զի լիցի օրհնել մեռոն, և անդ նստի կաթուղիկոսն և ապա ազգն Հայոց կայա-*
15 *ւորեալ մնասցեն. քանզի ի վերայ Աջին և էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կան:*

Արդ օձն զարանակալ և խորամանկ թշնամին կենաց, և Հոգւոց, և հաւատոց քրիստոնէից, որ յար հանապազ ի տարակուսի կայր վասն ազգին Հայոց. արդ ի նոցանէ լուաւ զատոյգ լուծումն տարակուսանացն:
20 *Այնուհետև հաստատուն և անփոփոխելի նգ ի մտի իւրում բակիլ զսուրբ էջմիածինն՝ և խափանել որ անդ զկաթուղիկոսութիւնն. և բերել զԱջն Լուսաւորչին, և զբարինան էջմիածնի ի Սպահան, և անդ շինել նոր էջմիածին. զի անդ նստցի կաթուղիկոսն, և անտի ապուսպ մեռոն ընդ ամենայն աշխարհ. որպէս զի այնու մնասցեն ազգն Հայոց ի*
25 *Պարսկաստան. այլ և շահք և մուրք ամենայն աշխարհաց ժողովեսցի ի քաղաք և յազգ իւր: Վասն որոյ ի մէջ քաղաքին Սպահանու նշանակեալ զատոյց տեղի՝ ուր շինել կամէր էջմիածին. և էր տեղին այն մերձ այնմ այգւոյն որ բարբառովն Պարսից Բաղիզրիշկ ասեն, այսմ այգւոյ յարևմտից կուսէ յհաւասար կողմանէ նորին; կից նմին այգւոյ:*
30 *Եւ յաւուր միում գնաց շահն ի նշանակեալ տեղին, էր ընդ նմա և խօջայ Նազարն՝ և այլք ոմանք ի Հայոց, ասաց շահն ընդ խօջայ Նազարին. զվասն ձեր շինեմ աստ էջմիածին, զի մի վասն այնմ էջ-*
միածնի կաթուղիկութիւն կրեալ ճմլիսցին սիրտք ձեր, և հրամայեմ գնալ բազում ուղտ և ջորի և սայլ, զի զբար և զհոգ այնր էջմիածնի բան-
35 *դեալ բերցեն աստ, զի այնու քարով և հողով շինեսցի այս էջմիածինս,*

2 Գ *և թեթեւագին, և աստ*
4 Ա.ԲԳԴՑ *ուխտատեղք*
5 Ա. *էջմիածնի*
6 ԲԳԴՑ *մեռոն* Ա.ԲԳԴՑ *սփռի*
7 Գ *յաղագս փխ յազգս*
9 ԲԳԴՑ *բանքս*
11 ԱԳ *մնայ*
12 Ա. *զաջ*
13-14 Ա.ԲԳՑ *զի անդ լիցի օրհնեալ մեռոն*
14 Ա.ԲԳՑ *նոցայի*
15 ԱԳՑ *Աջոյն*
16 Ա. *կապեալք*
18 Ա. *իւր և յանապատ*
21 ԲԳՑ *էջմիածին* ԲՑ *զկաթողիկոսութիւն*
22 ԲԳՑ *զբարինեան* Գ *անա*
23 Գ *մեռօնն*
25 Ա. *Պարսկաստան* Ա. *ամենից*
26 Գ *ի յազգ*
27 Ա. *զէջմիածին*
28 ԱԳ *շիմ այնմ այգւոյն* ԲԳ *այգոյ*
32 Ա. *զէջմիածին*
34 Ա.Ի *ուղտ ջորի փխ ուղտ և ջորի*
32-35 ԲԳՑ *այնմ... այնմ քարով*
35 ԱԳ *այնմԳ քարովն և հողովնԲԳՑ հողովն*

պատճառս ի մանկ իմմէ երկրպագութեան Տաճատեանցին սիրտք ձեր ի վերայ նոր շինեցուցա»: Եւ այսու կերպիւ հնարեալ կամէր քանդել զսուրբ Էջմիածինն: Իսկ յոջայ Նազարն քանզի ոչ կամէր զքանդումն սուրբ Էջմիածնի, զի կակիծ էր սրտի նորա. և առ ի խափանելոյ զխորհուրդ շահին, պատասխանեալ է այսպէս. «Թագաւորն ողջ կայցէ, եթէ կամք քո յօժարեսցի շինել զէջմիածին գեղեցիկ և հաստատ, կարող ես տրծաքիոյ և յոսկւոյ շինել, թող թէ ի քարէ. և զինչ հարկ է յաղագս քարի և հողոյ զայնքան աշխատութիւնս կրել, և զայնքան ծախս ծախել ի վերայ նորա, որպէս զի ի հեռու և յօտար աշխարհէ քար և հող բերել: Բաւական և բարւոք է այս աշխարհիս քարն և հողն, եթէ կամիս շինել, սոքօք շինեա, և ընդունելի է մեզ»:

Իսկ ամենաթագաւորն Աստուած՝ որոյ թագաւորութիւնն միայն է յաւիտենական, որ և զանց առնէ զբազում խորհրդովք մարդկան, թագաւորաց, ազգաց և ազանց ըստ դրեցեալումն թէ. «Տէր ցրուէ զխորհուրդս հեթանոսաց, անարգէ Տէր զխորհուրդս ժողովրդոց, և արհամարհէ Տէր զխորհուրդս իշխանաց: Այլ խորհուրդ Տեառն յաւիտեան մնայ, և խորհուրդ սրտի նորա յազգ ազգ, ոչ կամեցաւ զկատարումն խորհրդեան շահին յայնժամ, թէպէտ և անփոփոխելի պոյր հաստատեալ ի միտս նորա: Այլ խափանեցաւ խորհուրդ Նորա այսու պատճառաւ. զի հանդիպեալ էր նա գնալ յաշխարհն Վրաց ի վերայ թագաւորաց և ազգին նոցա, և բազում զօրօք, և յոյժ պատրաստութեամբ ելեալ ի Սպահանայ գնաց յաշխարհն Վրաց: Եւ նախ ի Կախէթ եհմուտ և զթագաւորն Կախէթու զԹամրազ փախոյց և զերկիրն աւերեաց. և եկեալ եհմուտ յերկիրն Քառթլայ և բանակեցաւ ի վերին կողմն քաղաքին Գօրու, ի վերայ ճանապարհին, որ գնայ ի Պաշիաչուխ. և խոկայր և ապաստեր թէ որով հնարիւք ի բուռն ածեալ ըմբռնեսցէ զթագաւորն Վրաց: Զի թէպէտ թագաւորն Կախէթու Թամրազ և թագաւորն Թիֆլիսու Լաւառսափ փախեան երկոքին ի Պաշիաչուխ, այլ Թամրազն ոչ խաբեցաւ և ոչ եկն առ շահն, իսկ Լաւառսափ խաբեցաւ և հաւատաց շահին և եկն առ նա և նա տարեալ զնա ի Պարսկաստան՝ կորոյս, որպէս և յառաջագոյն զամենայն որսիւթիւնն պատմեցաք. արդ՝ այսորիկ այսպէս: Այժմ առաւցուք զպատճառ հակառակութեան կաթուղիկոսացն, զի նոցին հակառակութիւնն է պատճառ ի Սպահան տանելոյ քարանցն Էջմիածնի և Լուսաւորչի Աջին:*

Ի ժամանակին՝ յորում շահն զմեծ սուրգունն արար և զազգս Հա-

* *Սաղմ., ԼՒ, 10—11*

2 Գ *շինեսցէ*
3 Կ *Էջմիածին*
4-5 ԲԳԴՍ *զխորհուրդն*
5 Գ *չիք է* ԲԳ *կացցէ*
5-6 Գ *թէ կամք քո*
6 Բ *կամքս* ԱԳԴՍ *Էջմիածին*
9 Ա. *դրար և դհող*
10 Գ *բաւական է և բարւոք էւ ն յաշխարհէ*
13 Ա. *բազմօք*
17 Ն *ազգէ*
19 Ա. *արդ փխ այլ*
21 Գ *ազգի* Ա. *բազմօք զօրօք*
26-27 ԴՆ *զթագաւորսն*
27-31 ԱԴ *չիք Զի ... որպէս*
28 Ն *Թիֆլիսու*
31-32 Կ *այդոքիկ*
33 ԲՍՆ *որ փխ զի*
34 Կ *Աջոյն*

լոց վարեալ տարաւ ի Սպահան, դնաց ընդ նոսին և Դաւիթ կաթուղիկոսն ի Սպահան՝ և անդ կայր. Մելքիսէթ կաթուղիկոսն ևս գնաց ընդ սուրգունին, բայց ի կէս ճանապարհէն դարձաւ՝ և ևկն յէջմիածին՝ և առնէր զկաթուղիկոսութիւնն։ Բայց ինքն Մելքիսէթ կաթուղիկոսն ոչինչ բնաւ փոյթ ունէր վասն շինութեան, և պաշտաւութեան, և ժամակարգութեան, և հաստատութեան էջմիածնի. այլ իւր տեղի բնակութեան կալեալ յերևան քաղաքի ի Կաթուղիկէ եկեղեցւոջն, և ի վերայ իւր ժողովեալ զազգականս և զմերձաւորս իւր և նոքօք յօրանայր լոյծ և ընդարձակ կենօք, մսիւքն և արդեամբքն սրբոյ Աթոռոյն էջմիածնի։

Կային յայնմ ժամանակի և եպիսկոպոսք ոմանք ի սուրբ էջմիածին ի նոյն դեղջէն էջմիածնի, որոց անուանքն էին Կարապետ՝ և Մարտիրոս և Յօհան, ընդ որս և այլք ևս եպիսկոպոսունք և արհեպս, սոքա հոգային վասն էջմիածնի և ցաւէին հանապազ՝ վասն անշքութեան, և ունայնութեան նորին, և զայրանային ընդ արարս Մելքիսէթ կաթուղիկոսին։ Եւ բազում անգամ ազաչանօք՝ տրտնջմամբ՝ և զայրացմամբ ասացին, թէ մի թողուր զաթոռն այնպէս ունայն և անշուք, այլ յաթոռն նստելով կաց ըստ քում ախորժակաց, զոնեա զի միայն աստ լինիցիս, և այն ևս բաւական է մնել և Աթոռոյս։ Իսկ Մելքիսէթ յօրացեալ և ստուարացեալ զոլով պետական իշխանութեամբն՝ ստունդանէր և անկուշէր զամենայն ասացեալս նոցին։ Իսկ եպիսկոպոսացն սրտնեղեալ ընդ ազօութիւն և ընդ անշքութիւնն էջմիածնի՝ և ընդ քամահանս բանից իւրեանց։ Միակամ եղեալ ամենեքեան՝ ծանուցին իշխանի աշխարհին, Ամիրգունայ խանին, որոց ամբաստանութեամբն կալաւ խանն զՄելքիսէթ կաթուղիկոսն, և էառ վաթսուն թումանս տուգանս, որոյ վերայ սպառնայ լեալ կաթուղիկոսն ի խանէն՝ եթէ գնաց ի Վրացտուն իբր խռովեալ ի խանէն։ Եւ յաղագս գնալոյ կաթուղիկոսին իշխանք և բարեկամք խանին մեղադիրք եղեն նմա, վասն որոյ և խանն զարս ոմանս առաքեաց զկնի Մելքիսէթին կոչնականս նմա, խոստանալով նմա պահել զնա պատուով՝ և կատարել զամենայն կամս նորա։ Եւ ապա Մելքիսէթն դարձաւ՝ և ևկն յերևան. և խանն առ ի շահել զսիրտն Մելքիսէթի՝ կալաւ զեպիսկոպոսունսն և էառ տուգանս։ Այնուհետև Կարապետ եպիսկոպոսն եթող զաշխարհ և գնացեալ յանապատ կրօնաւորեցաւ. այս այն Կարապետ եպիսկոպոսն է զոր ի ճառի մեծ անապատին յիշեցաք, թէ ևկեալ բնակեցաւ ի Սևան

3 Ի *կէս* փխ *ի կէս*
5 Ա. *զփոյթ*
6 Ա. *ինքեան* փխ *իւր*
7 Գ *յեկեղեցւոջն*
8 ԱԳ *շիմ և*
9 ԱԳ *մսիւք և արդեամբք*
11 ԴԻ *եպիսկոպոսունք*
13 ԱԲԳՆ *եպիսկոպոսք*
14 ԲՆ *էջմիածնայ հանապազ և ցաւէին* Ի *հանապազ և ցաւէին* Ա. *հանապազ և ցաւէին վասն*
16 ԲՆ *ազաչանօք և տրտնջմամբ*
20 Ա. *իշխանութեամբ*
21 ԲՆ *ասացեալովք* Գ *ասացեալօվք*
22 Բ *անշքութեան* Ն *անշքութիւն*
25 Բ *զՄելքիսէթն*
25-26 Ա. *զատուգանս* ԲԳՆ *տուգանք*
28 Գ *բարեկամքն*
29 ԲԳՆ *զՄելքիսէթի*
29-30 ԱԳ *կոչնականս, խոստանալով նմա*
31 ԲԳՆ *Մելքիսէթ*
32 Բ *զեպիսկոպոսունքն*
33 Ա. *զատուգանս* ԲԳՆ *տուգանք*
34 Գ *յանապատին*

կղզին։ Իսկ վասն Մարտիրոս եպիսկոպոսին՝ Մելքիսէք կաթուղիկոսն խնդրեաց ի խանէն, զի արտասահման արարեալ վարեսցէ Այրարատեան աշխարհն, և խանն արար այնպէս. զի զղինուոր ոմն կարգեաց ի վերայ Մարտիրոս եպիսկոպոսին վարիչ, որ վարելով զնա տարաւ մինչև ցՏին Ջուղայ, զկնան Երասխ անցոյց յայնկոյս, և ապա դարձաւ զինուորն։

Իսկ Մարտիրոս եպիսկոպոսն ոչ ուրեք արգելաւ՝ այլ գնաց ի Սպահան, և նմուտ, և յարևցաւ առ Դաւիթ կաթուղիկոսն, և օր աւուր ի ժամու և ի տարաժամու պատմէր առաջի նորա զարարսն Մելքիսէքի, և զաւերութիւն և զամայութիւն էջմիածնի։ Սոյնպէս և առաջի ժողովրդականացն Ջուղայեցւոց և Երևանցւոց հանապազ խօսէր և ծանուցանէր. իսկ Ջուղայեցիք, և Երևանցիք կարի վշտացան ընդ արարսն Մելքիսէքի և ընդ ամայութիւն էջմիածնի, ժողովեցան առ Դաւիթ կաթուղիկոսն և հարկեցին զնա գնալ յէջմիածին սիրել և հոգալ զշինութիւն նորա, ասելով. «Մեք օժանդակեմք քեզ յամենայն գործս և ի բանս»։ Եւ Դաւիթ կաթուղիկոսն եկեալ ի Սպահանայ ընդ որում և Մարտիրոս եպիսկոպոսն եկին յԵրևան քաղաք և յէջմիածին։ Եւ յաւուրս յայսոսիկ՝ յորում շահն ի Գօրի բանակ եղեալ նստեալ կայր, Դաւիթ կաթուղիկոսն և Մելքիսէք կաթուղիկոսն երկոքեան ի միասին էին ի սուրբ էջմիածին. բայց նախանձն, և ոխակալութիւնն, և հակառակութիւնն ոչ սակաւ յորդեալ առաւելեաւ ի մէջ նոցա այսու պատճառաւ։

Քանզի Դաւիթ կաթուղիկոսն յառաջագոյն և նախ էր լեալ կաթուղիկոս քան զՄելքիսէքն. և աւուրբք և ալեօք ևս ծեր էր, նա և Դաւիթն էր օրհնեալ զՄելքիսէքն կաթուղիկոս, զի լիցի ինքեան ընկեր և ձեռնտու, բայց նա եղև խռչընդակն։ Եւ յետ ամաց ինչ, որ յառաջեաց Մելքիսէքն յանուն և ի գործ կաթուղիկոսութեան, միանգամայն ջինքն կորզնել զրաւեալս զիշխանութիւն կաթուղիկոսութեան և ինքն վարէր, և զԴաւիթ հարստահարեալ և արտաքսեալ ի բացեայ սրար յիշխանութենէ։ Իսկ որ Դաւիթն էր՝ ասէր ցՄելքիսէքն, «Թէպէտ և ի բաց կացուցեր զիս յիշխանութենէ կաթուղիկոսութեան, այլ զոնեա թերևս ծերութեան իմոյ զթա և խնայեա. և տուր ինձ օր աւուր դարման պիտոյից պարենի կերակրոց և զգեստուց, զի անցուցից զսակաւ մնացեալ ժամանակս ծերութեան իմոյ և մի վշտացուցաներ զծերութիւնս իմ»։ Իսկ Մելքիսէք զիրացեալ՝ և սառարացեալ և յօրացեալ յիշխանութեան միջի, ոչ կամէր լսել Դաւթի. ըստ սէրունական առակին՝ որ վասն այրուձն և անիրաւ դատաւորին պատմէ*, զի զոր ինչ ասէր Դաւիթ՝ զբանիւ նորա Մելքիսէքն ստունգանէր։ Այլ և սրբ, որք Մելքիսէքեանք էին, եթէ խորհրդակիցք, և եթէ սպասաւորք, ի չմարդի կալեալ զԴա-

* Ղուկաս, ԺՀ, 2—4

1 ԱԴ չիճ *Մելքիսէք*
3 Ն *բղզինուոր*
5 Գ *յայնկոյսն*
7 Բ *եպիսկոպոս*
11 Ե *Երևանցոց*
12 ԱԳՒ *Ջուղեցիք* Ե *էրևանցիք*
17 Գ *եպիսկոպոս* ԳՆ *յաւուրսս*
19-20 Ա *էջմիածինն*
23 Բ *Մելքիսէք* ԴՆ *զՄելքիսէք*
28 Ե *հարստահարէալ*
29 ԲԳՆ *ցՄելքիսէք*
31 Ա *զդարման*
36 ԲԳՆ *այրոյն*
37 ԲԳՒՆ *Մելքիսէք*

ւիթ, արհամարհանօք ունէին զնա, և բանս նսեմութեան՝ և քամահանաց առնէին ասէին նմա, ոչ թէ ի ծածուկ՝ այլ յայտնի, և յերեսս իւր և ի վերայ սուղ ինչ կարեաց և պիտոյից վշտացուցանէին զնա ընդ վայր: Եւ ընդ յոլով ժամանակաց ամարպութեան նոցա գործ, յոյժ 5 *պատնացաւ Դաւիթ, զի բնաւ ոչ թուլանային ի բերմա բարուց իւրեանց. և մահու չափ վշտացեալ յողի իւր. այնուհետև խոնջեալ սրտիւ եղեալ գնաց ի Գօբի ի բանակն շահին. զի յանդիման եղեալ շահին ամբաստան լիցի զՄելքիսէթ կաթուղիկոսէն: Զի յայսմ ժամանակի տակաւին շահն ի վրացոտն էր, մերձ քաղաքին Գօրու բանակեալ էր և նստեալ:* 10 *Եւ ինքն շահն զերկոսին կաթուղիկոսան կարի քաջ ճանաչէր, բայց զԴաւիթ առաւել ընդունէր քան զՄելքիսէթ, վասն զի ի ժամանակին՝ յորում զմեծ սուրգունն ազատ շահն երկոքին կաթուղիկոսունքն գնացին ընդ սուրգունին, և յորժամ հասին յԱհար և ի Մուշկուն կոչեցեալ դաշտն, անտի Մելքիսէթ կաթուղիկոսն առանց պիտելոյ շահին դարձաւ* 15 *յերևան և յէջմիածին՝ և վարէր զիշխանութիւն կաթուղիկոսութեան թարց հրամանաց շահին: Իսկ Դաւիթ կաթուղիկոսն գնաց ընդ սուրգունին ի Սպահան, և անդ ի Սպահան բազում անգամ հանդիպեալ շահին և շահն ընդ նմա զբօսն և քաղցրութեամբ խօսէր՝ մինչ որ հայր ևս կոչէր զնա շահն. նաև կնդծաւորութեամբ և թէ ճշմարտութեամբ:* 20 *Արդ՝ դարձն Մելքիսէթին յերևան՝ ծանր թուեցաւ շահին, և գնալն Դաւթին ի Սպահան դիւր թուեցաւ նմա վասն այսորիկ առաւել ընդունէր շահն զԴաւիթ: Իսկ Դաւիթ կաթուղիկոսն գնացեալ եհաս ի բանակն արքունի, և յաւուր միում եկեալ յանդիման եղեալ շահին, և ի տեսանելն զնա շահն ըստ նախկին սովորութեան զբօսն և քաղցրութեամբ* 25 *խօսէր ընդ գնմա, և հարցանէր թէ զիա՞րդ կեաս ի կեանս քո դիւրութեամբ և անդորրութեամբ: Եւ Դաւիթն պատասխանեալ ասաց. «Թագաւոր, յաւիտեան կեցցես, թէպէտ և իցեն ինձ նեղիչք, և պատնացուցիչք, այլ տեսանելով զբազցրութիւն և զվայելչութիւն երեսաց և զմխիթարութիւն բանից քոց, մոռացումն և փարատումն լինի ամենայն վըշ-* 30 *ատց իմոց»: Եւ շահն հարցանէ՝ «Ո՞վ է այն այր, որ զքեզ վշտացուցանէ». պատասխանեալ է Դաւիթ բարբառովն այլազգեաց՝ թէ ամուկ սաթան խալիֆէն, որ է ոսկերաց ծախող խալիֆայ: Եւ ամուկ սաթան ասելով սկսեալ է յամբաստանութիւնն Մելքիսէթի՝ զի զարարս նորա յիշեալ է առաջի շահին, որ զնշխարս արքեպիսկոպոսին Հռիփսիմեայ* 35 *յաղտոտ կաշառաց թոյլ ետ Ֆռանկաց՝ զի տարան: Այլ և սրբ ոմանք ասացին, թէ Դաւիթն զայս բանս ևս ասացեալ է առաջի շահին. «Եթէ ո՛չ երթիցէ Աջն Լուսաւորչին, և քարինքն էջմիածնի ի Սպահան, ան-*

1 Ր *քահամանաց*
2 Ա. *նորին փխ իւր*
4 Ա. *յոլովից*
7 ԱԴ *ի բանակ*
9 ՐԴՆ *վրաստան*
10 Դ: *կաթողիկոսքն*
12 Ր*ն կաթողիկոսքն*
14 ՐԴԴ *անդր*
21 Ա. *չիմ թուեցաւ նմա*ՐԴՆ *շահին փխ նմա*
24 Ր *գնա շահին ըստ նախկին*: ԴՐՆ *նախկին* Դ *սովորութեանն*
29 Ա. *ամենից*
31 Ի: *այլազգաց*
32 Դ *խալիֆայն* ԱԴ *չիմ խալիֆայ* Ա.ՐԴՆ *եւ ամուկ*
33 Ր *անբաստանութիւն* Ն *յանբաստանութիւն*
35 ՐԴԴ *որ տարան*
37 Ա. *Աջ*

հնար է մնալ ազգին Հայոց ի Սպահան»: Իբրև լուաւ շահն զնշխարացն ծախելն՝ հնարքրքիր եղեալ տեղեկացաւ ամենայն որպիսութեանցն. և ի վերայ արարմանցն Մելքիսէթի տխրեցաւ՝ և ի ցաւումն և ի պայրացումն շարժեցաւ՝ այնքան մինչ ի պատիժս և ի տանջանս մատնեաց զՄելքիսէթ:

Ի սոյն ժամանակի տարաւ առ ինքն շահն զԱմիրգունայ խանն՝ մինչ էր ի վրացաւն, ասելով «եկեալ ընդ մեզ կացցես ի գործս պատերազմիս ընդ դէմ թշնամեացս», և նա դնացեալ ի վրացաւն կայր ի բանակի շահին: Եւ շահն փոխանակ և տեղապահ Ամիրգունայ խանին առաքեաց զորգի նորին, որում անունն էր Թահմազղուլի բէկ, որոյ եկեալ յերևան քաղաք նմուտ ի բերդն՝ և անդ նստեալ պահէր զաշխարհն:

Եւ շահն ցասմամբ մեծաւ հրամայեաց պրկել նոմոս աբգունի հրամանաց ի վերայ Թահմազղուլի բէկին, և առաքել յերևան առ նա. և էր դոյացութիւն պրեալ բանին այսպէս. «Հրամայեալ է քեզ Թահմազղուլի, զի զՄելքիսէթ կաթուղիկոսն կալեալ տանջանօք չարչարեսցես, և զինքեան իսկ զմարմնոյ զմիսն կտրեալ ինքեան ուտեցուսցես: Եւ ապա զՄելքիսէթն կապանօք, և զՀայոց ազգի Լուսաւորչի Աջն առիս առաքեսցես մեզ»: Եւ զայս դիր եառն իշխանի ումեմն Նազղի բէկ անուամբ, որ փութանակի հասոյց յերևան առ Թահմազղուլի բէկն: Եւ Թահմազղուլի բէկն վազվազակի ի ձեռն ածեալ ըմբռնեաց զՄելքիսէթ կաթուղիկոսն՝ և սկսաւ չարչարել՝ և բազում ստիպով խնդրէր զԱջն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին: Իսկ կաթուղիկոսն և իւր միաբանքն անճար մնացին և ոչ գիտէին հնարել ինչ, վասն զի սաստիկ տագնապաւ խոշտանգէր զնոսա Թահմազղուլին. վասն որոյ ածին առաջի Թահմազղուլի բէկին զԱջն սուրբ Լուսաւորչին, այլ և ընդ նմին մէկ ոսկեայ և մեծագին աւետարան, և մէկ արծաթեայ խաչ: Եւ Թահմազղուլին առեալ զսոսա և զՄելքիսէթ կաթուղիկոսն, և եկն յերևան քաղաք:

Յետ այսորիկ բերին զՄելքիսէթն յերևանայ բերդի մէջն և ի վերայ գետնոյ տարածեցին զնա, և ի չորից կողմանց քարշեալ պրկեցին զնա՝ կապեալ ի ցից, և արկին յորացս. և առեալ զբևեռաքաշ այսինքն քալաթին, և այնու կարեցին զմիսն ծղեացն, որ է թևերն, և զայն կտրեալ միսն եդին ի բերան նորին. և չերկուց կողմանց կանգնեալ փայտաւորք հարկանէին զնա և ասէին՝ «Ծամեա՛ և կուլ տուր». և Մելքիսէթն թէպէտև և ոչ կամէր՝ սակայն ի վտանգէն անճար մնացեալ՝ ծամեաց և կլուզ: Եւ ապա ապազակաց մունետիկն՝ թէ կատարեցաւ հրաման թագաւորին ի վերայ խալիֆային, զի զմիսն իւր ծամեաց և կլուզ

2 Ս. *ամենից*
4 ՐԳՆ *մատնել*
7 ԱՊ *վրացաւան*
8 ՐԳՊ *վրաստան*
9 ՐԳ *բանակին*
10 ՐՆ *զորդին* Ս. *որոյ*
13 Ս. *զնոմոս*
21 ՐԳՆ *բէկն բէկ(վազվազակի)Գ ըմբռնեալ*
22 Ս. *բազմաւ*
23 ԱՊ *զԱջ*
27 Ս. *զմէկ*
33 Գ *քալփաթին*
34 Ր *կանգնեալք*
35 ՐԳՆ *Մելքիսէթ*
36 ԱՐԳԴՆ *վտանգէն*
37 ԱՐԳԴՆ *մունեդիկն*

Զայս գործս և տանջանս արարին այլազգիքն ընդ Մելքիսէթին, յաւուրս պահոց փոխման Աստուածածնին[10]։

Զկնի այսց գործոց, Բահմապղուխ բկին պատրաստանաց զօրականս, որոց գլխաւորի անունն էր Նաչիրլու Ղուրթ ապայ, և նա ի նոսա զՄելքիսէթ կաթուղիկոսն կապանօք, ընդ նմին և զԱջն Լուսաւորչին, և զաւետարանն, և զխաչն։ Եւ նոքա սարիալ հասուցին ի բանակն արքային, և ծանուցին շահին, և նա հրամայեաց բերել առաջի իւր. և բերեալ բացին առաջի շահին զԱջն, և զաւետարանն, և զխաչն։ Եւ շահն մի մի ի ձեռս իւր առեալ տեսանէր. զաւետարանն, և զխաչն, և ապա զԼուսաւորչի Աջն. և հարցանէր, թէ սուրբ ա՞յս է Լուսաւորչի Աջն, և պատասխանեալ ասացին, թէ սուրբ այդ է և ապա համբուրեալ զԱջն եդ ի վայր։ Իսկ վասն Մելքիսէթ կաթուղիկոսին հաստատեալ էր շահն զկամս իւր զի սպանցէ զնա, բայց Ամիրզունայ խանն յոյժ ընդունէր զՄելքիսէթն՝ զի բարեկամ էր նմա. յորոգս այնորիկ հնարեաց՝ զի զերեսին որպիսի իւր՝ որք էին նորաժամայն տղայք՝ առաքեաց առաջի շահին, որ առ ժամայն անցանէր ընդ մէջ բանակին. և տղայքն զիրս իրեանց արկեալ էին ի վերայ պարանոցի իրեանց զորս ի տեսանելն շահին և ի հարցանելն՝ իմացաւ որ վասն Մելքիսէթին ազաչեն, զի մի սպանցէ, այլ և իմացաւ թէ Ամիրգունայ խանն հնարեալ է զայն. վասն որոյ զիջաւ ի կամաց սպանանելոյն։ Զայս գործ, որ արար Ամիրգունայ խանն յոլով աւուրբք յառաջ էր քան զբերելն Մելքիսէթին առաջի արքային, որոյ պատճառ ոչ արար շահն հրաման սպանանելոյ կամ տանջելոյ զՄելքիսէթ. յաւուրն յորում յանդիման կացուցին զՄելքիսէթ, և զարբութիւնան առաջի թագաւորին։ Այլ չեա տեսանելոյ արբութիւնանցն, դարձուցեալ զբանս իւր շահն առ Մելքիսէթ կաթուղիկոսն ցասմամբ և զայրացմամբ՝ բազում բանիւ յանդիմանեաց զնա։ Եւ ի զրուս բանին ասաց. «Դատաստանն քո աստ ոչ լինի տանել, զի վնասն քո մեծ է, այժմ պարտ է քեզ գնալ ի Սպահան և անդ կալ մինչև ես եկեալ անդ՝ արարից զդատաստանն քո»։

Արդ՝ աստանօր պարտ է մեզ սքանչանալ և հիացմամբ զարմանալ ընդ հաստուցումն գործոցս՝ որ կատարեցաւ ի վերայ Մելքիսէթ կաթուղիկոսին. զի սա նախ՝ զԱստուածոյ օգնութիւնն անտես արարեալ՝ ի մարդ յուսացաւ, և առանդանեաց զբանս օրինացն, որ ասէ. «Անիծեալ որ դիցէ զյոյս իւր ի մարդ»։ Եւ երկրորդ՝ զի արհամարհեաց*

* *Երեմիայ, ԺԷ, 5*

1 ԲԳՆ *Մելքիսէթի*
3-4 Ա. *զզօրականս*
5 ԱԴ *զԱջ*
9 Դ *զաւետարան*
10 Բ *սուրբ*
10-11 Ի չիճ *Լուսաւորչի Աջն, և պատասխանեալ ասացին, թէ սուրբ այդ է*
12 ԳՆ *կաթուղիկոսի*
15 ԴԴ *զորպիսի* Ա. *Նորաժամայնք*
17 ԱԲԴԳՆ *զթիւրս իրեանց*
19 ԲԴԴ *Մելքիսէթի*
20 ԱԲԴԳՆ *իջաւ փխ դիջաւ*
20-21 Դ *սպանելոյն*
21 Ա. *Այս... զոր*
22 ԲԴՆ *Մելքիսէթի*
23 ԱԴ *զՄելքիսէթն*
24 Դ *առաջ*
25 Ա. *Որև փխ այլ*
26 Բ *ցայտմամբ* Ա. *բազմաս*
32 ԱԲ *գործոյս*
33 Ա. *նա փխ սա*

զԱրապիոն վարդապետն, որ վասն վճարելոյ զպարտսն սրբոյ Աթոռոյն էջմիածնի և վասն նորին նորոգութեան եկեալ էր ի յԱմթայ. այլ զյոյս իւր եղեալ ի շահն, ապաստան սրտի իւրոյ զնա արարեալ գնաց առ նա ի Սպահան, զի յապագայ ժամանակս բարութիւնս բազումս ընկալ-
5 *ցի ի նմանէ, և անտի բերեալ զնա յաշխարհս Հայոց զամենայն աշխարհ աւերեալ ծագէ ի ծագ անմարդաբնակ արար: Եւ այսօր ինքն ևս զհատուցումն երախտեաց՝ և ակնկալութեան իւրոյ զայս չարշարանս ընկալաւ ի նմանէ՝ ըստ որում պատմեցաք, և տակաւին ևս պատմելոց ենք փոքր ի շատէ: Եւ այսպիսեօք լինի կատարումն բանին որ գրեալ է*
10 *թէ. «որով և մեղանչէ ոք, նովիմբ և տանջեսցի»*, *կամ թէ «մի յուսայք յիշխանս, և մի յորդիս մարդկան, զի ոչ գոյ փրկութիւն ի նոսա»***:

Եւ դարձեալ ասասանօր երեւի լինել կատարումն բազմաժամանակեայ բաղձանաց շահին, քանզի նա՝ որ ի վաղուց ժամանակաց ցան-
15 *կայր, խորհէր, և խոկայր, թէ որով հնարիւք քակեսցէ զսուրբ էջմիածինն, և խափանեսցէ զանդ եղեալ կաթուղիկոսութիւնն, և ի Սպահան շինեսցէ զէջմիածինն, և անդ կարգեսցէ զկաթուղիկոսութիւնն. արդ ահա եղիտ պատճառ ըստ յաժարութեան կամաց իւրոց: Վասն զի դարձոյց զՄելքիսէթ կաթուղիկոսն յերևան առ Թահմազղուլի խանն, և*
20 *դրեաց նամակ հրամանաց ի վերայ նորա այսպէս, և ըստ այսմ օրինակի: «Ծանիր Թահմազղուլի, զի ահա դարձուցաք առ քեզ զՄելքիսէթ կաթուղիկոսն, և զուսաւորչի Աչն, և զաւետարանն, և զխաչն: Այլ և գնասցես յէջմիածին, և գնշանաւոր քարինան էջմիածնի քակեալ հանցես ի տեղւոջէն. և զայն քակեալ քարինսն էջմիածնի, և զուսաւորչի*
25 *Աչն, և զաւետարանն, և զխաչն, և զՄելքիսէթ կաթուղիկոսն, զամենեսեան զսոսա առաքեսցես գնալ ի քաղաքն Սպահան»: Եւ ի հասանել հրամանաց թագաւորին առ Թահմազղուլի խանն, կամակար մտօք պատրաստեցաւ՝ զամենայն անթերի կատարել, որպէս զի այնու հաճոյական ծառայ երևեսցի առաջի շահին:*
30 *Եւ նախ քան զքարինսն էջմիածնի՝ զուսաւորչի Աչն կամեցաւ Թահմազղուլի խանն յառաջագոյն առաքել, վասն զի մտօք դիտեալ նկատեաց՝ զի մինչ ի քակել քարանցն և մինչ ի պատրաստել զամենայն կահս տանելոյ նորա, նա և գնացումն քարանցն յամրագոյն և ծանր լինի, բազում աւուրք ի վերայ անցանեն և անագանի, վասն*
35 *այսմ պատճառի կամեցաւ զԱչն յառաջագոյն առաքել: Յաղագս որոյ պատրաստեաց զօրականս զի տարցեն զաչն ի Սպահան. այլ և Յովհաննէս անուամբ զոմն քահանայ աշխարհիկ, որ էր այր ճարտար և*

* *Իմաստ. Սոզ., ԺԱ, 17*
** *Համմտ. Սաղմ., ՃԺէ, 8—9*

5-6 ԱՊ չիմ և անտի բերեալ զնա յաշխարհս Հայոց զամենայն աշխարհ աւերեալ ծագէ ի ծագ անմարդաբնակ արար
6 Ե և անմարդաբնակ
13 ԱՊէ լինիլ
16 Ա. խարանեսցէ
17 ԱՐՊԴՏ էջմիածին
18 Ա. զպատճառ
20 Ա. զնամակ
20-21 ԱՊ չիմ և ըստ այսմ օրինակի
23 ԱՊէ քարինս
26 ԳԴԵ ի հասանելն
32 ԱՊէ չիմ մինչ (ի)
32-33 Ա. զամենեսեան
34 Ա. բազումք
35 Դէ այսր փխ այսմ
36 Ա. զզօրականս զի տարցին

իմաստուն ի բանս և ի գործս, որ ի նոյն դպղչէն էջմիածնի էր, զոր հրամայեաց Բահմազդուկի խանն գնալ ընդ զօրականացն վասն սպասաւորութեան Աջին։ Ապա կարգեալ զօրականքն և տէր Յովհաննէսն առին զխուսաւորչի Աջն, և գայն ոսկեհուռի աւետարանն և գայն արծաթիայ խաչն, գայս երեքս ի միասին առին և ելին չքուանայ՝ և գնացին մինչ որ հասին ի քաղաքն Սպահան։ Եւ յորժամ մերձ եղեն քաղաքին Սպահանու. ամենայն ազգն Հայոց, որք կային ի քաղաքն Սպահան. որոց և հրաման արարեալ էր շահին, ելին ընդ առաջ Խուսաւորչի Աջին՝ խաչվառով, և աւետարանաւ, խնկօք և մոմեղինօք, և երգօք եղանակօք, և բազում պատուով բերեալ հանգուցին ի տուն խոջայ Սաֆարին, ընդ նշխարաց սրբուհւոյ կուսին Հռիփսիմեայ, և ընդ այլոց սրբութեանցն, որք անդէն կային։ Արդ՝ Աջն սրբոյն Գրիգորի մերոյ Խուսաւորչին, այսպիսի պատճառաւ և կերպիւ գնաց ի Սպահան։

Իսկ Բահմազդուկի խանն՝ յետ Խուսաւորչի Աջին առաքելոյ, բազում ջանիւ հոգայր զքարխինն առաքել, վասն որոյ ինքն յոլով զօրականօք գնաց ի յուրբ էջմիածին, և ընշանաւոր քարխինն էջմիածնի քակեալ հանին ի տեղւոյն, որք են այսորիկ. տուրբ սեղանն, յորոյ վերայ պատարագն սուրբ մատչէր, և այս սեղանոյս սիւնն. Քրիստոսի իջման սեղեաց քարն. Աւազանն, մէկ քար ի հարաւային կողման աստիճանի բեմին. և մէկ քար ի հիւսիսային կողման աստիճանի բեմին, վասն զի աւազ բեմի աստիճանքն չորկուց կողմանց են՝ ի հիւսիսոյ և ի հարաւոյ. չորս քար ի չորից անկեանց ևկեղեցւոյն՝ ի պրուց կողմանէ. երկու քարէ մոմդան որ մեծ իւղաբերից մոմ դնեն ի մէջն և վասն. երեք այլ սրիշ քարինք ի սալայարկ քարանց բեմին. ընդ սմին սուն և հինգ քար։ Զայս քարինքս քակեցին, և հանին չէջմիածնէ և ելին ի մէջ կաշւոյ և կարեցին։ Եւ ապա պատրաստեցին արս զօրականս, որոց դլխաւորի անունն էր Նազդի բէկ. և գայն տէր Յովհաննէսն, որ ընդ Խուսաւորչի Աջին առաքեցին վասն սպասաւորութեանն Աջին, նա ի Սպահանայ դարձեալ էր և եկեալ, գնա միաբանգամ կարգեցին գնալ ընդ քարանցն վասն նոցին սպասաւորութեանն։ Ապա պատրաստեցին ըստ բաւականի քարանցն սայլ, բարձին ի վերայ սայլի, լծեցին գոմէշ և քարշեալ տարան մինչ որ հասուցին ի քաղաքն Սպահան։ Բայց ի քաղաքն ո՛չ մուծին, այլ արտաքոյ քաղաքին մերձ Թոխչի դարվազին, այլազգի մահմետականաց գիւղ կայ, զորոյ զանունն Բաթուն կոչեն,

3 Ա.Ի: *Աջոյն*
6 Ա.Դ չիՐ *մինչ որ հասին*
7 Ա. *յամենայն*
9 Ա.Ի: *Աջոյն*
10 Ա. *բազում* ԲԳՆ *տունն*
11 ԲԳՆ *այլ*
12 Գ *որ անդէն* Ա. *Աջ*
13 Ա. *այսպիսիաւ*
14 Ա.Ի: *Աջոյն*
15 Ա.Ի: *յոլովուք*
16 Ա. *էջմիածինն* Բ *քարիսն*
18 Ա.Դ *մատչիր*: Ա. *սեղանոյ* ԲԳՆ *սեղանիս*
19 ԳԴ *տեղաց*
Ա.Ի: *ի կողման հարաւայնոյ (հարաւային)*
20 Ա.Ի: *ի կողման հիւսիսայնոյ*
21 ԲԳՆ *աւազ*
24 Ե *ընդամէն*
26 Ա. *զարս*
27 Ադ *զոր*
28 Ա. *Աջի է Աջոյն (առաքեցին)*
31 Ա.Դ չիՐ *բարձին ի վերայ սայլի, լծեցին գոմէշ*
32 Ա.Դ չիՐ *մինչ որ՝ հասուցին*
33 Ա. *Թոխչոյ* ԲԳՆ *Թոխչի*

յայս պիւղս հասուցեալ զքարինան՝ հղին ի մէջ գմբէթին որ մերձ ի պիւղն շինեալ կայր։ Եւ յորժամ քարինքն եկեալ մերձ հղեն գեղջն այնմիկ ամենեքեան որք ի Հայոց ազգէն բնակեալ կային ի քաղաքն Սպահան՝ հրամանաւ քաղաքապետին ելին ընդ առաջ քարանցն, խաչիւ և աւետարանաւ, խնկօք և մոմեղինօք, և երգօք հղանակօք, մինչ որ բերեալ ի պիւղն Բաթուն՝ հղին ի մէջ գմբէթին։

Եւ մնացին քարինքն անդէն ի մէջ գմբէթին. ոմանք ասացին երկու աւր, և ոմանք ասացին եօթն աւր, և ոմանք աւելի և պակաս ասացին։ Եւ ապա բնակիչքն Բաթունայ գնդջն արձակ տուին շահին, թէ խնդրեմք յարքայէ, զի հրաման տացէ վասն քարանցն էջմիածնի հանել ի գնդէն մերմէ և տանել յայլ տեղի, վասն զի սրք գնդջս մերոյ մեռանին, և անդք մեր ոչ ևս տան պատուղ որպէս առաջն տային, վասն որոյ հրամայեաց շահն, զի հանցեն անտի զքարինան և տարցեն ի մէջ Ջուղայեցւոց, զոր և արարին այնպէս։ Եւ ի բերելն քարանցն, յորժամ մերձ եղեն Ջուղայու, ըստ առաջին օրինակի ամենայն եկեղեցականք և աշխարհականք խաչիւ և աւետարանաւ, խնկօք և մոմեղինօք, և երգօք հոգևորօք, բերեալ հղին ի հօջենց եկեղեցին և կայ անդէն մինչև յայսօր։ Զայս քարինքս յորժամ հանեալ էջմիածնէ ուղևորեցին գնալ ի Սպահան՝ Թուականն մեր ՌԿԳ էր, և յորժամ եհաս ի Սպահան փոխեալ էր տարին և մտեալ էր ի ՌԿԴ. և յորժամ եկաք մեք ի Սպահան՝ տեսաք աչօք մերովք զքարինան, և թուեցաք և ապա դրեցաք։

Սոյնպէս և ՚ովՄելքիսէթ կաթուղիկոսն բերին ի Սպահան քաղաք ղօրականքն զոր նմա տանող էր կարգեալ Թահմազղուլի խանն և անուն աւադի նոցա Թահմազղուլի բէկ։ Յորժամ եհաս Մելքիսէթ կաթուղիկոսն ի Սպահան՝ շահն համարէր զնա թէ ի բանտի արգելեալ կայ ի կալանս, բայց նա կայր յընդարձակի և վարէր զիշխանութիւն կաթուղիկոսութեան ի վերայ Հայազոն քրիստոնէիցն բնակելոցն ի քաղաքին Սպահանու, և յամենայն՝ շրջակայ գաւառս նորա։ Արդ՝ զքարանց տանելոյ Թուականն գտաք և գրեցաք, իսկ զԱստուածուրչի Աչին տանելոյն, և զՄելքիսէթ կաթուղիկոսի տանելոյն՝ ոչ գտաք, վասն որոյ և ոչ գրեցաք։ Եւ այս ևս այսպէս։

1 Ի *ցայս* ԲՆ *գնրէթին*
2 Գ *գեօղն*
3 ԱԴԲ *բնակեալք ի քաղաքին Ասպահանայ* ՐԳ *բնակեալք* Գ *ի քաղաքին*
4 Բ *ընդ յառաջ*
5 Ա. *չիք մինչ որ*
6 Գ *գեօղն*
7-8 ԱԴ *չիք ոմանք ասացին երկու ամ, և ոմանք ասացին*
8 ՐԳ *չիք և... և*
9 ԱԴ *բնակիչք* ԲԳՆ *գեղին* ԱԴ *գարզայ հաուն*
11 ԱԴ *տանիլ*
12 Ա. *պատուղ* ՐԳ *յառաջն*
13 ԱԴ *տարցին*
14 ԱԴ *չիք այնպէս։* ԱԴ *ի բերել*
15 ԱԴ *եղեն* Ա *ըստ առաջնոյ օրինակին ամենեքեան։* ԲԳԴՆ *օրինակին*
17 Դ *կան անդէն*
18 ԱԴ *Զայսոսիկ* Ա *քարինս* ՐԳՆ *քարերս* Դ *քարինք*
20 ԲԳԴՆ *գտարին*
24 ՐԳ *աւաքի*
25 Բ *բանդի*
28 ԲԳԴՆ *զքարերաց*
28-29 **ԲՆ *տանելու***
29 Ի *Աջոյն* ԱԴ *տանելոյ* ՐԳՆ *տանելուն* ՐԳՆ *տանելուն*

ԳԼՈՒԽ ԺԸ

ՅԱՂԱԳՍ ՀԱՐԻՒՐ ԹՒԻՄԱՆ ՄՈՒՂԱՊԱՅԻՆ, ԶՈՐ ՇԱՀԱՆ ԵՒ Ի ՎԵՐԱՅ ՄԵԼՔԻՍԵԼԷԹ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Արդ՝ որպէս կանխաւ պատմեցաք վասն Դաւիթ կաթուղիկոսին, 5 թէ գնաց ի դուռն շահին և արար ամբաստանութիւն վասն Մելքիսէդ կաթուղիկոսին, և շահն բարկացաւ ի վերայ Մելքիսէդի, ընկէց ի կաթուղիկոսութենէ և առաքեաց ի Սպահան: Իսկ Դաւիթ կաթուղիկոսն մնաց անդէն ի բանակին, ի դուռն շահին: Անդ էր և Ամիրգունայ խանն, որ էր տէր և իշխան ամենայն գաւառին Աբարատու և սուրբ 10 էջմիածնի:

Եւ յաւուր միում յորժամ հանդէս արարեալ էր շահն՝ և նստեալ կայր ի հանդիսին, և առաջի նորա կային կանգնեալ ամենայն նախարարք և իշխանք իւր, էր յայնմ հանդիսի և Ամիրգունայ խանն և Դաւիթ կաթուղիկոսն: Խօսեցաւ շահն առ Դաւիթ կաթուղիկոսն քաղ- 15 ցրութեամբ ասելով. «Շնորհեցաք քեզ զկաթուղիկոսական իշխանութիւնն էջմիածնի, արդ գնացեալ նստիս յէջմիածին և վարեսցես զիշխանութիւն կաթուղիկոսութեանն»: Յայնժամ Դաւիթն խնդրանօք ասացեալ է առ շահն. «Թագաւոր իմ, դիս ի խանէն ամանաթէ, դիս ի խանէն ամանաթէ». ապա դարձուցեալ շահն զբանս իւր առ Ամիրգունայ խանն՝ 20 յանձն արար նմա զԴաւիթ կաթուղիկոսն, թէ բարւոք խնամակալութեամբ պահեսցես զքաւլիֆայ հայրդ մեր: Իսկ Ամիրգունայ խանն խոնարհեալ միջովք չափ, և եղեալ զձեռն իւր ի վերայ գլխոյ իւրոյ պատասխանեալ բանից շահին ասելով. «Ի վերայ գլխոյ իմոյ ունի պատուի հանգստեան»:

Որքան շահն ի վրացաւն էր՝ անդ էին կաթուղիկոսն և Ամիրգունայ խանն, և յորժամ շահն եկեալ դնաց յերկիրն Պարսից՝ դարձան և 30 եկին Ամիրգունայ խանն և Դաւիթ կաթուղիկոսն յԵրևան, խանն ի խանութիւն իւր, և կաթուղիկոսն ի կաթուղիկոսութիւն իւր: Որքան շահն յերկիրն Ատրպատականի էր՝ ի մերձակայ քաղաքս և յերկիրս, պատուէր Ամիրգունայ խանն զԴաւիթ կաթուղիկոսն և քաղցրութեամբ խօսէր ընդ նմա վասն երկիւղի շահին. և յորժամ հեռացաւ շահն՝ բարձաւ երկիւղն ի սրտէ խանին, և սկսաւ խոշորել ընդ Դաւիթ կաթուղիկոսին, ոչ պատուէր, և ոչ խօսէր. և յորժամ խօսէր՝ խրոխտանօք խօսէր, քանզի զԴաւիթ էջմիածին նստին ոչ կամէր՝ այլ զՄելքիսէդին. 35 վասնորոյ ձառագէմ երևէր և խօսէր խանն ընդ Դաւթին. և ոմանք

2 Ի: *Առ*
4 Գ *կանխեաւ* Գ *կաթուղիկոսին*
5 Գ *Մելքիսէդին*
6-7 ԱԳ *ի կաթուղիկոսութենէն*
9 Ա. *ամենայնի Արարատու և սրոյ* ԲԳԴ *Այրարատու*
12 ԱՒ *առաջի փխ և առաջի* Գ *ի Հանդիսին* Ա. *ամենեքեան*
16 Գ *յէջմիածինն*
17 Ե *կաթուղիկոսութեան*
18 Ա. *չիմ դիս ի խանէն ամանաթէ*
20 ԲԳԵ *և յանձն*
22 Ա. *միջօք*
24 Ա. *զտեղի*
25 Բ *և կաթուղիկոսն*
31 Բ *երկուղի*
32 ԱՒ: *խոշորել*

ասացին, թէ ջանայր ևս խանն թէ ի ծածուկ հնարիւք իմն սպանցէ զԴաւիթ։ Եւ այս գործոյ խոովութեան, զոր խանն առնէր ընդ Դաւթին, ոմանք ասացին պատճառ զծածուկ ներքնագործ հնարակերտութիւն Մելքիսէք կաթուղիկոսին, քանզի թէպէտ նա կայր ի Սպահան, այլ հանապազ ի ծածուկ թուղթ և աղերս՝ նշան սիրոյ ոչ պակաս առնէր ի խանէն՝ այլ միշտ առաքէր։ Նա և ի մէջ կաթուղիկոսական իշխանութեանն Մելքիսէքին առաւել ձեռնբաց և բազմատուր էր դրամօք և այլ իրօք՝ իշխանաց և պինդուորաց, և իւրոց համախոհից, վասն որոյ խանն և այլք ամենեքեան զՄելքիսէքի կաթուղիկոսութիւնն կամէին, և ոչ զԴաւթին։

Եւ ի ժամանակին՝ յորում եկն Սարդարն Օսմանցւոց՝ որում անունն էր Օրուզահմատ փաշայ[71] ի վերայ Երևանայ բերդին, եկն և շահն յԵրևան վասն օգնութեան բերդին, և կայր ի լերինս Գառնւոյ, և յորժամ դարձաւ Սարդարն յԵրևանայ յԱրզրում, և շահն տակաւին ի լերինս պատառացն էր բանակեալ։ Իսկ Դաւիթ կաթուղիկոսն զանգիտեալ յերկիւղէ խանին, մի գուցէ թէ ի ծածուկ դաւեալ սպանցէ զնա, անճարակ լեալ ի վտանգէն, թարց գիտելոյ խանին միւսանգամ գնաց առ շահն և երևեցաւ նմա, և ի հարցանելն շահին զորպիսութենէ Դաւթին, ասաց Դաւիթն այլազգեաց բարբառովն. «Փաթշահում, Զանկիչայինան մանայ պիր իշում սու վէրմատիլար»[72]. Զանկիչայ Երևանայ մեծ գետն է, որ ի բերդի ներքևէն անցանէ։ Ի վերայ այսր ամբաստանութեանս գիտաց շահն, զի Ամիրգունայ խանն է՝ որ ոչ տայ հանգիստ Դաւթի, և ոչ ընդունէ զնա, և զայն ևս ծանեաւ, որ ի պատճառս Մելքիսէքին ոչ ընդունի խանն զԴաւիթ, վասն որոյ ոչ բարկացաւ խանին՝ սուտ ինչ ակնառութիւն ևս առնելով նմա, այլ Մելքիսէք կաթուղիկոսին բարկացաւ յոյժ բարկութեամբ. զի գայն ևս ծանեաւ որ Մելքիսէքն ի Սպահան յընդարձակի կալով վարէ կաթուղիկոսական իշխանութիւնն առանց հրամանաց շահին։ Վասն որոյ հրամայեաց պատրաստել զօրականս՝ զի գնասցէ ի Սպահան և կալեալ զՄելքիսէքն կապանօք բերցէ առ շահն. զոր և իսկոյն առաքեցին զոմն թագաւորական ծառայ՝ անունն Զարքազ Իբրահիմ, որոյ հասեալ ի քաղաքն Սպահան, ոչ եգիտ անդ զՄելքիսէք կաթուղիկոսն, վասն զի գնացեալ էր ի Գանդիման գաւառն։ Եւ Զարքազ Իբրահիմն ևս գնաց ի Գանդիման, և եգիտ զկա-

3 ԲԳՆ *հնարակերտութիւնն*
4 Ա. *կաթուղիկոսին գոլ, քանզի*
5 Ա. *զթուղթ և զաղերս՝ զնշան*։ Դ *զնշան*
6 Ա. *կաթուղիկոսականի*։
6-7 ԲՆ *իշխանութեան*
7 ԲՆ *բազմատու էր*
9 Դ *Մելքիսեդի*
11 Ա. *որոյ (անունն)*
12 Դ *փաշային* ԱԴՆ *ևկաւ*
13 ԲԳՆ *լերինսն* ԱԲԳՆ *Գառնու*
14 ԱԲԳ *ի յԱրզրում*
15 Ի *բնակեալ*
17 ԱԲԳՆ *վտանկէն*
19-20 ԲԳԴ *փաշահում ... չայինդան*
19-20 Ն *փադշահում ... չայինդան մանա բիր իշում վէրմադիլար*
20 Բ *մանա* ԱԲԳ *բիր* ԲԳ *վէրմադիլար*
ԲԳԴՆ *Զանկիչայի* Գ *յԵրևանայ*
21 ԳՆ *այսմ*
22 Ա. *զհանգիստ*
23 ԱԳԴՆ *ոչ ընդունի*
23-24 ԲԳՆ *Մելքիսէքի*
24 ԱԳ *զԴաւիթն*
27 ԱԳ *զկաթուղիկոսական*
ԲԳԴՆ *իշխանութիւն*
29 Բ *զՄելքիսէք*
31 ԲԳ *անուն*
33 Ն *Իբրահիմ*

թուղիկոսն ի գիւղն Քաթակ, զոր կալեալ կապանօք երեր ի Սպահան, և անտի երեր առ շահն, որ էր յայնմ ժամանակին եկեալ ի վայոց ձոր, այսինքն յՆղեգաձոր. յորում տեղւոջ բնակեալ Զարքթալ Իբրահիմն զՄելքիսէթ կաթուղիկոսն ի բանակն արքունի, և ծանոյց շահին. բայց շահն անառնս արարեալ զպատասխանիս Մելքիսէթի՝ երթոյ մնալ ի կապանս. չուեաց շահն ի վայոց ձորոյ և եկն ի Նախչուան:

Մինչ ցայս վայր Դաւիթ կաթուղիկոսն ընդ բանակի շահին էր ցգալն Մելքիսէթ կաթուղիկոսին. և իբրև հասս Դաւիթ կաթուղիկոսն թէ շահն թողեալ անտնս արար զՄելքիսէթն մնալ ի կապանս, իմացաւ յոգի իւր, թէ կարի երկարաձգի ի յոլով աւուրս անտնտութիւնն այն, վասն որոյ խորհեցաւ հրաժարիլ ի կաթուղիկոսութենէն, և գնալ ի Սպահան. որ և մատուցեալ առ շահն և խնդրեաց հրամանն գնալոյ իւրոյ ի Սպահան, և շահն ետ նմա հրաման. և գնաց Դաւիթ կաթուղիկոսն ի Սպահան, և կայր ի լուելեայն, քանզի շահն պարգեւեաց նմա գիւղ մի դարման կինաց նորա ի գաւառին Ջղախուռ, որում անուն կոչէին Ծոնգիկան. զի կերիցէ զմուտս գեղջն այնմիկ և աղօթեսցէ վասն կենաց թագաւորին. և նա գնացեալ ի Սպահան կայր այնպէս: Իսկ Մելքիսէթ կաթուղիկոսն մնաց ի բանակին արքունի, ի կապանս շղթայից:

Եւ շահն չուեալ ի Նախչուանայ գնաց ի դիւղաքաղաքն Ագուլիս, յորում ժամանակի նահատակեաց զտէր Անդրէաս քահանայն[73]. և զՄովսէս վարդապետն՝ և զՊօղոս վարդապետն՝ զսոսա երկոսեան կալեալ արար ի կապանս, և պահանջեալ տուգանս ի նոցանէ՝ էաւ երեք հարիւր թուման. և նոքա տուեալ զտուգանքն ազատեցան:

Արդ՝ որպէս կալեալ շահն զՄովսէս և զՊօղոս վարդապետսն, էաւ երեք հարիւր թուման, սոյնպէս և զՄելքիսէթ կաթուղիկոսն կալեալ պահանջէր երեք հարիւր թուման տուգանս՝ վասն երից յանցանացն: Նախ՝ վասն նշխարաց սրբոցն Հռիփսիմեայ, որ թոյլ տալովն Մելքիսէթի տարան Ֆռանկնքն, զոր բաղումք ասէին թէ վասն կաշառացն՝ զոր էաւ Մելքիսէթ, թոյլ նա: Երկրորդ՝ վասն դառնալոյն ի մեծ աւուրգոնէն. որ առանց հրամանաց շահին գարձաւ՝ և եկեալ յէջմիածին վարէր զիշխանութիւն կաթուղիկոսութեանն, և այն ևս առանց հրամանաց շահին: Երրորդ՝ յորժամ շահն ընկէց ի կաթուղիկոսութենէ զՄելքիսէթն, և առաքեաց ի Սպահան, համարէր շահն զնա թէ ի կալանս կայ, բայց Մելքիսէթն յընդարձակի կալով վարէր զիշխանութիւն

2 Գ *անդի*
7 ԴՆ *մինչև* ՐԴՆ *բանակին*
9 ՐԴԴՆ *զՄելքիսէթ*
10 Ա. չիք *յոլով աւուրս*
12 ԳԴՆ *զոր և* Ա. *զհրաման* ԱԴ չիք *և*
13 Ա. *զհրաման*
15 Ա. *զգիւղ*
16 ԱԴ *Քոնդիկան* ԲՆ *Ֆրոբնդիկան* Գ *Ֆռընդիկան*
17 Գ *կայր*
21 ԱԴ չիք *և*
22 ՐԴՆ *զերկոսեան*
22-23 ԱԴ չիք *զսոսա երկոսեան կալեալ*
23 ՐԴՆ *տուգանք*
23-24 ԱԴ չիք *և պահանջեալ տուգանս ի նոցանէ՝ էաւ երեք հարիւր թուման և նոքա տուեալ զտուգանքն ազատեցան*
26 Ա. *զերեք*
27 Ա. *զերիս* ՐԴՆ *տուգանք*
29 Է *Ֆռանկքն*
30 ԱԴ չիք *զոր էաւ Մելքիսէթ*
32 ՐԴԴՆ *կաթուղիկոսութեան*

կաթուղիկոսութեան, և այն ևս առանց հրամանաց շահին: Վասն այսքան յանցանաց կալեալ էր շահն զՄելքիսէթն և կամէր սպանանել, իսկ վասն բարեխօսութեան Ամիրգունայ խանին ներեաց և ոչ սպան. բայց պահանջէր երեք հարիւր թուման տուգանս, վասն որոյ ի կապանս երկաթեայ պահէր ի կալանի, մի զայն վճարեսցէ, և գնացեալ պատարեսցի յուրեք՝ լռեալ յիշխանութենէ կաթուղիկոսութեանն:

Ելեալ շահն յԱգուլեաց՝ գնալով ետես ի Դանդի, ի Սպահանայ մինչև ցայսր կապանօք կայր Մելքիսէթ կաթուղիկոսն, և այնպէս շրջէր ընդ բանակին արքայի: Ու յայսմ տեղւոջ երկիցս և երիցս Մելքիսէթ կաթուղիկոսն արզայ գրեաց՝ և հասոյց ի ձեռն շահին, և ծանոյց պատասպանս իւր՝ թէ յայսպիսում վտանգի կամ, խնդրեմ յարքայէ անդորրութիւն առնել իմոցս տառապանացս՝ եթէ մահուամբ և եթէ կենօք: Իսկ շահն պատասխանի էր արարեալ Սպանդիար բէկովն. «Ոչ սպանանեմ և ոչ թողում, այլ այնպէս կապանօք պահեմ, մինչև կամ մեռցի և վերծցի, և կամ տացէ զերեք հարիւր թուման դրամն՝ զոր հրամայեալ եմ նմա և ազատեսցի»:

Իսկ ի ժամանակին յայնմիկ արք խորհրդականք և երևելիք, որք էին ի դուռն արքային, եթէ յայլազգեաց, որ էր Սպանդիար բէկն, եթէ Ուղուրլու բէկն և այլք յոլովք, և եթէ ի քրիստոնէից մեծամեծք, որ էր խօջայ Նազարն, և խօջայ Սուլթանումն, և Միրվէյսին, և մելիք Հայկազն, և այլք բազումք, ասացին զՄելքիսէթ կաթուղիկոսն. «Անհնար եղև գործդ քո՝ այլ պարտիս տալ և զերծանիլ ի ձեռաց սորա»:

Արդ՝ պատմութիւն ճառիս յաղագս հարիւր թուման մուղադային է, և մինչև ցայս վայր միաշաւիղ էր պատմութիւնս, զոր և անտարակոյս գրեցաք, այլ յայսմ հետէ յերկուս շաւիղս բաժանի և երկատութիւն պատմութեանս մեզ աշխատանս յաւելու, և վասն ոչ ումեք գիտելոյ վիսկն պատմութեանս՝ հարկ եղև մեզ զերկոսինն ևս գրել: Քանզի ոմանք ի պատմողաց, մանաւանդ թէ բազումք, պատմեցին՝ թէ Մելքիսէթ կաթուղիկոսն ունելով իւրն ոսոխ զԴաւիթ կաթուղիկոսն հանապազ առնէր իւրն ներհակութիւն, կանգնի ախոյեան, և դրդեալ գայթակղէ զիշխանութիւնն Մելքիսէթի՝ և ոչ տայ հանգիստ և անդորրութիւն, վասն որոյ խորհեալ Մելքիսէթն եմուտ ի ներքոյ ծանրաբեռն հարկի, զի վասն ծանրութեան հարկին ոչ ևս իշխեսցէ Դաւիթ կաթուղիկոսն յառաջ կալ դրդել և խառնակել զմէջն, այլ ի բաց կացցէ, որոյ ի բաց կալն՝ Մելքիսէթն անվրէպ վարեսցէ զիշխանութիւն կաթուղիկոսութեան. և յայսմանէ պատճառէ գրեաց Մելքիսէթն արզայ առ

1 Ա.Դ *կաթողիկոսութեանն*
2 Ա.Դ.Դ *յանցանացս* Բն *յանցանացն* Բ.Դ *զՄելքիսէթ*
4 Ա. *վերիս* Բ.Գն *տուգանք*
5 Ա.Բ.Գ.Դն *երկաթեաց*
6 Բ.Գն *կաթուղիկոսութեան*
9 Գ *տեղւոջս* ն *տեղոջ*
10 Ա. *զարզայ*
11 Ա.Բ.Գ.Դն *վտանգի*
12 Ա.Բ.Գ.Դն *իմոյս* Բն *տառապանաց*
13 Ա. *Սպանդիարի*
14 Ա.Դ *չիֆ կամ*
21 Ա. *այլք բազում* ն *այլ բազումք*
25 է *երկարութիւն*
27 Գ *զերկոսին*
29 Գ *կաթուղիկոս* Բ.Գն *իւր*
30 Գն *առնէ*
30-31 Ա.Դ *գայթագղէ*
31 Բն *զիշխանութիւն*
31-32 Ա.Դ *զհանգիստ և զանդորրութիւն*
32 Բ.Գն *Մելքիսէթ*
35-36 Ա.Դ *կաթողիկոսութեանն*
36 Բ.Գ.Դ *յայսմ* Ա. *զարզայ*

շահն։ «Եթէ քաղցրասցի ի վերայ մեր կամք թագաւորին՝ և արասցէ մեզ այցելութիւն, և տացէ զիշխանութիւն կաթուղիկոսութեան մեզ, մեք տամք ամ յամէ ի դիւան թագաւորին յիւրաքանչիւր տարի հարիւր թուման ոճիկս ծառայից թագաւորին»։ Իսկ թագաւորին տեսանելով օգուտս յոլովս իւրոյն կողմանն, վասն որոյ խոնարհեալ զիջաւ ի բանս Մելքիսէթին և կատարեաց զխնդրուածս նորա, զի եւս նմա զիշխանութիւն կաթուղիկոսութեան՝ հանդերձ թագաւորական նոմոսիւ գրեալ և կնքեալ։ Որով ելեալ Մելքիսէթն յամենայն երկիր վարէր զկաթուղիկոսութիւնն ի վերայ ամենայն հայկազուն ժողովրդոց, և Դաւիթ կաթուղիկոսն կայր ի բացեայ՝ մախալով նհանջեալ ի ներհակութենէ, և իբր զգազան կապեալ ի գառագեղի, սպասէր և ըղձայր դիպող ժամու։ Արդ՝ զոր ասացաք վասն պատմութեանս, թէ յերկուս ոճս բաժանեցաւ, մինն այս է, զոր գրեցաք զոր ոմանք և մանաւանդ թէ բազումք այսպէս պատմէին։

Իսկ այլք ոմանք ի պատմողաց ասացին, թէ շահն երեք հարիւր թուման տուգանք էարկ ի վերայ Մելքիսէթին, և զայն ևս ոչ կարէր տալ Մելքիսէթն, բայց զի մնաց յանհնարս և ի հարկէ նեղութեանցն ակամայ կամօք ասաց տամ, վասն որոյ գրեաց զթուղթ և առաքեաց առաջի շահին ըստ այսմ օրինակի։

«Հրամայեալ է սէրութիւն ինքնակալիդ վասն մեր՝ թէ երեք հարիւր թուման տացէ, յանձին կալայ տալ ձերոք հարիւր թումանն, բայց յերեք տարին տամ, յիւրաքանչիւր ամի հարիւր թուման, մինչև ցերեք տարին վճարեմ և աւարտեմ, քանզի ի միում ամի ոչ կարեմ վճարել»։ Իսկ շահն առեալ էր զայս ձեռագիրս Մելիքսէթ կաթուղիկոսին, և արձակեալ էր զնա ի կապանաց. և տուեալ էր նմա հրաման և իշխանութիւն կաթուղիկոսութեան։ Բայց ի բոն մատեան արքունական դիւանի ոչ ըստ օրինակին էր գրեալ՝ որպէս որ էր ձեռագիր կաթուղիկոսին, թէ երեք հարիւր թուման տամ, և ոչ այլ ինչ աւելի. այլ գրեալ էր շահն, թէ Մելքիսէթ կաթուղիկոսն խնդրեաց զչջմիածնի կաթուղիկոսութիւնն, և խոստացաւ ի տարին հարիւր թուման մուղաղայ տալ ի դիւան թագաւորին, վասն որոյ և մեք շնորհեցաք նմա զիշխանութիւն կաթուղիկոսութեան, զի նա վարեսցէ։ Եւ զայսպիսի գրելս շահին ոչ ոք գիտէր, ոչ կաթուղիկոսն և ոչ այլ ոք ի Հայոց, և յորժամ գիտացին, ոչ ոք կարաց օգնել ինչ, զի անհնար էր եղծանել զհրամանն այնպիսւոյ խրոխտ թագաւորի, և կամ արտահանել ի թագաւորական և ի պիւանական մատենից, յորս գրեալն էր։ Մինչև ցայս վայր երկրորդ ոճն

2 Ա. *զայցելութիւն*
3-4 Ա. *տարւոջ զհարիւր թուման Գ տարւոջ*
4 ԱԴ *ի ոճիկս Բ յոճիկս*
5 ԲԳԴՆ *իջաւ*
6 ԲԳՆ *Մելքիսէթի*
8 ԲԳՆ *Մելքիսէթ*
9 Ա. *ամենից Հայաստնեաց*
9-10 Ն *կաթուղիկոս*
10 Դ *նըհանջեալ*
16 Ի. *տուգանս* ԲԳՆ *Մելքիսէթի*
17 ԲԳՆ *Մելքիսէթ*
18 ԱԲԳՆ *յակամայ* ԲԳԴՆ *թուղթ*
25-26 Ա. *զհրաման և զիշխանութիւն*
26 Ա. *արքունականի*
27 Ի. *չիմ որ*
28 Ն *էրնք*
33 ԱԴ *և ոչ այլք ի Հայոց*
34 Գ *ըզհրաման* ԲԳՆ *զայնպիսւոյ*
34-35 Ա. *զայնպիսւոյ խրոխտի*
35-36 Ա. *թագաւորականաց և պիւանականաց... յորում*։
35 Ն *թաւգաւորական*
36 ԳԴ *յորում*

պատմութեան՝ զոր ոմանք այսպէս պատմեցին, և դու ընկալ որոյ և հաւանիս, և կամ թէ զոր ինչ տեսութիւն մատց քոց յերկուցս պատմութեանցս արտաբերիցէ։

Արդ՝ եթէ այնպէս և թէ այսպէս. ստուգիւ և հաստատութեամբ, հարիւր թուման մուղադայ եղաւ ի վերայ Մելքիսէթ կաթուղիկոսին, զոր տայր թագաւորին ամ յամէ, և ի նորին պատճառէ անկաւ մուղադայն ի վերայ սրբոյ Աթոռոյն էջմիածնի, և մնաց Աթոռն ի ներքոյ զաբալի։ Եւ այս եղև բեռն ծանր և լուծ տաժանելի և անուր անխզելի ի վերայ սրբոյ Աթոռոյն էջմիածնի ի զուր և ի տարապարտուց. և ամենայն ապին Հայկայ սուգ անմխիթար և տրտմութիւն անփարատելի եկեղեցականաց և աշխարհականաց։

Իսկ Մելքիսէթ կաթուղիկոսն յետ արձակելոյն ի կապանաց և առնելոյ զիշխանութիւն կաթուղիկոսութեան՝ ջանայր բազում ջանիւ զի զխոստացեալ հարկն վճարեսցէ, որպէս զի ազատեսցի, վասն որոյ ելեալ է ի շրջագայութիւն յաղգս Հայոց յաղագս ժողովքի, և նախ ի Տըփխիս գնաց, և անտի ի Թարվէզ, և անտի ի Սպահան։

Եւ յորժամ տարին բոլորեցաւ, շահն անմոռանալի ունէր զայն ի մտին, վասն որոյ ի թագաւորական ծառայից իւրոց արս չորս գլխաւորս, որոց անուանքն էին Ջիալ բէկ, Ասաթ բէկ, Ջրաղ բէկ, Բահրամ բէկ, առաքեաց ի վերայ Մելքիսէթին՝ թէ զմուղադայն՝ զոր խոստացար տալ ի դիւանն արքունի, տո՛ւր թագաւորական ծառայիցդ ի սակս կարգեալ ռոճկաց իւրեանց։ Եւ այս եղև վտանգ և աղէտ դառնագին, և անուր անխզելի ի վերայ կաթուղիկոսարանին, զի բեռն ի վերայ բեռին բարձեալ եղև։ Քանզի ոչ դոյր առ ձեռն պատրաստ դրամ, զի տացեն ղուլերուն, ի սակս որոյ մնային ղուլերն և նստէին ի վերայ կաթուղիկոսին, ծառայիւք և երիվարօք իւրեանց. և զամենայն պիտոյս իւրեանց զկերակրոց և զայլ կարեաց ի կաթուղիկոսէն առնուին։

Իսկ կաթուղիկոսն վասն թագաւորական մուղադային և վասն պիտոյից այս ղուլերուս, ելանէր և շրջէր յազգս Հայոց, և ուր և շրջէր կաթուղիկոսն, ղուլերն ևս ընդ նմա շրջէին. և ծանրանային ի վերայ ժողովրդեանն վասն պէս պէս կարիաց ինքեանց և երիվարաց իւրեանց. և սեղանք նոցա յամենայն աւուր ոչ էր առանց գինւոյ, և ծախք նոցա ոչ թէ սակաւ, և ժամանակ գիներբութեանն միշտ։

Եւ ի շրջագայիլն իւրում կաթուղիկոսն յամենայն երկիր ի մէջ ժողովրդեանն, ուր և լինէր իրաւամբք հասոյթք իւր զայն առնոյր. և իբրև ոչ լինէր այն բաւական ծախուց իւրոց և ղուլերուն և մուղադային,

2 Ա չիմ թէ Ր յերկուց
4 ԱԴ չիմ և (այնպէս)
6 ԲԳԴՆ մուղադէն
7 Ա. զաբալայի
9 Ս. ամենայնի
15 Ր չիմ է Ս. ժողովոց
18 Ա զարս
18-19 ԲԴՆ արք չորք գլխաւորք
20 ԲԳՆ Մելքիսէթի
21 ԲԳՆ ի դիւան Ս. թագաւորականաց
է ծառայից
22 ԲՆ ըռոճկաց Գ յըռոճկաց ԱԲԳԴՆ վտանգ
23 ԱԴ չիմ ի
26 Ա. զամենեսեան
28 Ա. թագաւորականի
29 Ա. այսոցիկ ղուլացս ԲԳԴՆԼ ղուլերոյս
33 Ա. չիմ թէ Ն գիներբութեան
34 Գ յերկիր
35-36 ԱԴ որ և փխ և իբրև
36 է ղուլերոյն

վասն որոյ զարս անպարտս, եթէ եպիսկոպոս լինէր, եթէ արեղայ, եթէ երէց, եթէ աշխարհական, կալեալ զնոսա թարց իմիք պարտեաց և վնասու՝ անիրաւաբար յօդէր բարուրս ի վերայ նոցա և պահանջէր դրամ, և մատնէր ի ձեռս զինուորաց զուլերուն, որք կախէին յոտիցն և բրածեծ առնէին, մինչև ըստ կամաց իւրեանց առնուին դրամս և ապա արձակէին։

Այլ և այսու պատճառաւ մտին բաղում անկարգութիւնք և օրինազանցութիւնք յաղգս Հայոց՝ կաշառօք անարժանից ձեռնադրութիւն տալ՝ եթե եպիսկոպոսաց, և թէ քահանայից, և կաշառօք զսեպհական վիճակն այսմ վանացս կտրել և այլում վանաց շնորհել. և չհասի, և մեղօքի, և կնաթողութեան, և երկակնութեան համարձակ հրամայն տալ ամուսնութեանն։ Զայսոսիկ և որ սոցին նման բաղում անկարգութիւնս գործէին կաթուղիկոսն և եպիսկոպոսունքն իւր, և ոչով չափ գոն գործեալ եթէ իրաւամբք և եթէ անիրաւութեամբ հնարէին ժողովել ինչս, զի թերևս բաւականասցի ծախուց իւրեանց և զուլերուն, և վճարման մուղադային, սակայն ոչ լինէր, զի ոչ Աստուծով, այլ մարդկային հանճարով հնարէին կատարել գործ. վասն որոյ ոչ կատարիւր՝ ըստ վկայութեան Սաղմոսին, թէ ո՛չ Տէր շինէ զտուն, ի նանիր վաստակին շինողք նորա*։

Բայց կաթուղիկոսն ոչ թուլանայր և դադարէր ի շրջապատութենէ, զի թերևս վճարեսցէ զխոստմունսն, վասն որոյ ելեալ ի Սպահանայ գնաց ի Ֆահրաւպատ, և անտի ի Նախչուան. և անտի զարձեալ ի Սպահան. և ապա ի բազում վշտացն՝ զոր զուլերն վշտացուցանէին զկաթուղիկոսն և խնդրէին գանձս ի նմանէ, արդայով ծանուցեալ էր կաթուղիկոսն շահին զվիշտն իւր, և շահն անտես արարեալ էր զբանս կաթուղիկոսին, վասն որոյ մնացեալ էր յանհնարելի տարակուսանաց միջի. և ապա գնացեալ և անկեալ ի շահի թաւլէն և ծանուցեալ էր շահին՝ թէ ութն հարիւր թուման տուեալ եմ, այլ ո՛չ ունիմ կար տալոյ։ Իսկ շահն ասացեալ էր, թէ ես յայդ հարիւր թուման մուղադայէդ մէկ փող ինչ է որ չեմ անցներ, այլ թէ մէկ այրի պառաւ լինի մնացեալ որ ես կառնեմ։ Եւ ապա ելեալ Մելքիսէթն ի Սպահանայ եկն յԵրևան և յէջմիածին, շահի զուլերն ևս եկին ընդ կաթուղիկոսին, և խնդրէին զիւրեանց տօնլուղն, զոր շահն բարաթ էր արարեալ ի վերայ կաթուղիկոսին տալ նոցա՝ ի կողմանէ հարիւր թուման մուղադային. և ուր և շրջէր կաթուղիկոսն, ընդ նմա շրջէին և զուլերն, և ծանրաբեռն լի-

* Սաղմ., ՃԻՀ, 1

2 ԴԳՆ *երէց*
4 ՍԴ *զդրամ* ԲԳՆԼ *զուլերոյն*
9 Ի *եթէ քահանայից փխ և թէ քահանայից*· ԲԳՆԼ *սեպհական*
10 ՍԴ *վիճակ*
11 ԱԷ *կնաթողութեան փխ և կնաթողութեան* Ա *զհրամանն*
12 ՍԴ *որք... բաղում*
14-15 Ի *զինչս*
15 Ի *զուլերոյն*
16-17 Ա *մարդկայնով*
17 Ա *զգործ*
21 Դ *չիք զի* ԲԳՆ *զխոստմունքն*
22 Ն *ի Ֆահրատապատ*
23 Ա *ի բաղմաց*
24 Ա *զգանձս*
26 Ա *անհնարելնաց*
27 ԲՆ *թաւլէն*
30 Ա *փող մի չեմ անցանիլ* ԲԳՆ *անցներ* Դ *չեմ անցանիլ* Դ *չիք որ*
30-31 ՍԴ *մնացեալ, ես առնելոց եմ*
31 ԲԳՆ *կառնիմ*

նէին ի վերայ ժողովրդեանն, վասն հարկաւոր կարեաց իւրեանց, և անխնայաբար շռայլութեամբ ցնդէին զինչս ժողովրդեանն. և այս վըտանգ յոյժ էր ի վերայ ժողովրդեանն, զի ղկենցաղավարութիւնս իւրեանց զհոգեւութեամբ և շռայլութեամբ վարէին, վասն որոյ ամենեքեան ձանձրացան և սրտիւ լքին զկաթուղիկոսն և զիւրսն՝ և ի բաց կացին ի նոցունց: Եւ այնուհետև ո՛չ ըստ իրաւանց և կանոնական կարգի, այլ այլազգեաց իշխանութեամբ ի իբր զաբեալաւոր հարկատու բըռնանային ի վերայ ժողովրդեանն, և առանց իրաւանց կեղեքեալ կոդոպտէին զժողովուրդսն: Եւ թէպէտ կեղեքելով առնուին՝ և թէպէտ ըստ իրաւանց, սակայն ո՛չ լինէր բաւական ծախուց իւրեանց: Վասն որոյ ի կարիաց պակասութենէ, և ի հարկելոյ զուլերուն դնացին առ շահակիր փոխատուս, և յոլով տոկոսիօք առնուին փոխ ի նոցունց, յոլովակի յայլազգեաց՝ քան թէ ի քրիստոնէից, զի քրիստոնեայք ո՛չ հաւատային ի տալն:

Եւ եղև այժմ ի ներկայիս յերկուց կողմանց յաւելուլ պարտուցն, նախ՝ ի կողմանէ հարիւր թուման մուղադային, զոր ոչ կարէին տալ, վասն որոյ մնաց ամ յամէ և ետաս մինչև ցվեց հարիւր թուման բաղի. և երկրորդ՝ իւրեանց արտրևալ պարտսն, զոր ի պարտատուացն առեալ էին վասն կարեաց զուլերուն և ինքեանց:

Արդ՝ վասն յաճախութեան պարտուցն և այլոց ևս նեղութեանցն, զոր կրէր կաթուղիկոսն, նա և անընդունակ լինելոյն յազգէն Հայոց, խորհեցաւ ի միտս իւր զի բարձևալ յինքենէ յայլոյ վերայ դիցէ զանուն կաթուղիկոսութեան, ընդ նմին և զպարտսն: Վասն որոյ ասաց ընդ Մովսէս վարդապետին, որ ի ժամանակին յայնմիկ բնակէր յերեվան քաղաքի առ դամբարանի սրբոյ առաքելոյն Անանիայի, որ կայ յեղր քաղաքին. «Ահա աղգս Հայոց մեծ և փոքր երես դարձուցին յինէն, և զքեզ սիրին և ընդունին՝ և մանաւանդ զի ծերացեալ իսկ եմ. և հարկն արքունի պարտք եղև և բազմացաւ ի վերայ իմ. արդ՝ տամ քեզ սուրբ Աթոռն էջմիածին և զկաթուղիկոսութիւնն, դու վարեա այսուհետև զկաթուղիկոսութիւնն, որպէս և եսդ արժան, և ինձ տուր ամ յամէ դարման պիտոյից, և զմի ի վանորէիցդ, զի անդ նստայց լռելեայն, և վճարեցից զծերութիւնս իմ»: Իսկ Մովսէս վարդապետն ոչ էր յանձին կալեալ, այլ հրաժարելով հրաժարեալ էր:

Եւ էր եղբօրորդի մի Մելքիսէթ կաթուղիկոսիս, որում անունն էր Սահակ, ի նմանէ եպիսկոպոս էր ձեռնադրեալ՝ և կայր ի սպասու նո-

1 Ա. *վասն հարկաւորաց*
2-3 ԱԲԳԴՆ *վտանգ*
4 Բն *զնեխութեամբ*
5 Դ *զզիւրսն* Ե *զզգիւրսն*
6 Ա. *կանոնականի*
8 Ա. *կեղեքեալք*
9-10 ԱԴ *թէպէտ ոչ ըստ իրաւանց*
11 ԱԳԴՆ *զուլերոյն* Գե *զնային*
12 Ա. *զփոխ*
13 է չիք *թէ* Աէ *քանզի փխ զի* Դե *քրիստոնէայքն*
15 Ա. *յաւելանալ*
18 ԲԳԴՆ *պարտքն*
19 ԱԴՆէ *զուլերոյն*
21 Ա. *զորս*
22 Գ *յայլոց*
23 ԲԳՆ և *զպարտքն* Բե և *ասաց*
24 Բե *բնակեալ էր*
26 Ա. *զնրես*
27 է չիք *իսկ*
29 Գ *վարեաց*
30 ԱԴ չիք *զկաթուղիկոսութիւնն*
31 Բե *վանորէիցն*
34 Ա. *որոյ փխ որոմ*
35 Բ և *ի նմանէ*

բին. որոյ հասուցեալ բանս առ կաթուղիկոսն Մելքիսէթ, թէ կաթուղիկոսութիւնդ այդ քո է՝ եթէ առնես դու, յոյժ բարւոք է, արասցես, և եթէ ոչ առնես դու՝ ընդէ՞ր այլոց շնորհես և ոչ ինձ, որ եմ ժառանգ և որդի քո. յայսմ բան և բարեկամքն իւրեանց յորդորեալ էին զկաթուղիկոսն։ Իսկ Մելքիսէթ կաթուղիկոսն հաճեալ ի բանս Սահակին և բարեկամացն, և հաւանութեամբ և միաբանութեամբ բարեկամաց իւրեանց տարեալ էր զՍահակն յէջմիածին և ի հրեշտակապետաց կիրակի օրն օրհնեալ էր զնա կաթուղիկոս, և առեալ նրբեր ի քաղաքն Երևան, և ծանուցումն արարեալ զայս բան ամենայն ժողովրդեանն։ Այլ և գրեաց կոնդակ, և նա ցՍահակ կաթուղիկոսն, թէ ծանուցումն լինի ամենայն ազգին Հայոց՝ զի նա ծերացեալ եմ և անկարացեալ, վասն որոյ հրաժարեցայ ի կաթուղիկոսութենէս, և օրհնեցի զՍահակ որդիս իմ կաթուղիկոս, և կարգեցի ի տուրբ Աթոռն էջմիածին. արդ՝ ով ոք հնազանդէ մեզ և խնդրող օրհնութեան մերոյ, յօժարութեամբ հնազանդեսցի հրամանաց դորա։ Եւ այսպէս քարոզեաց զնա կաթուղիկոս ի մէջ ամենայն ազգին Հայոց, առաջի վարդապետաց և եպիսկոպոսաց։ Նա և տարաւ առաջի Ամիրգունայ խանին կացոյց և ասաց, թէ նոու զկաթուղիկոսութիւնն սմա, որում խանն ևս հաւանեցաւ. և ի խանէն ևս խնդրեաց Մելքիսէթ կաթուղիկոսն, զրկել խնդրանաց թուղթ առ շահն, զի նմա տացէ զկաթուղիկոսութիւնն. և ինքն Մելքիսէթ ևս գրեաց աղաչանաց թուղթ առ շահն՝ թէ ևս ծերացեալ եմ, և ոչ եմ բաւական վարել զիշխանութիւնս. սա իմ որդի է՝ խնդրեմ զի սմա շնորհեսցես զկաթուղիկոսութիւնն։

Զկնի ամենայնի այսոցիկ, զի կարգեցաւ Սահակն կաթուղիկոս, և ընկալաւ հրաման ի Մելքիսէթ կաթուղիկոսէն և յԱմիրգունայ խանէն՝ այնուհետև սկսաւ Սահակն վարել զիշխանութիւն կաթուղիկոսութեանն. և շահի զուլերն ևս ժողովեցան ի վերայ Սահակ կաթուղիկոսին և ընդ նմա շրջագայէին։

Զկնի աւուրց ինչ Սահակն առեալ զթուղթն Մելքիսէթ կաթուղիկոսին և զԱմիրգունայ խանին և գնաց ի դուռն շահին, առ ի սեպհականացուցանել ի վերայ ինքեան զկաթուղիկոսութիւնն։

Իսկ Մելքիսէթ կաթուղիկոսն մնաց էջմիածին, և պարտաւորքն յոյժ ճշդիւ պահանջէին ի նմանէ զիւրեանց տուեալ պարտսն. և յամենայն աւուր եկեալ կանխէին առ նա, և անհանգիստ արարեալ խլնդրէին զտուեալ պարտսն, և նորա ոչ գոյր ինչ զի տացէ, այլ և ոչ ոք

2 Ա.Դ *արա փխ արասցես*
3 Ա.Գ.Դ *և թէ փխ և եթէ ն չիմ և (եթէ)*
4 Ա.Դ *բանի և բարեկամք ... յորդորեալք* Բ.Գ.Ն *յորդորեալք*
5 Ն *Սահակայ*
7-8 Ն *կիւրակի*
10 Ա *զկոնդակ*
11 Գ.Ն *որ ևս ծերացեալ եմ*
12 Բ.Ի *կաթուղիկոսութենէ*
13 Ա.Դ *յէջմիածին*
17 Ա.Դ *տարեալ*
19 Ա *զթուղթ*
21 Ա *զթուղթ*
24 Դ *չիմ այսոցիկ* Բ.Գ.Ն.Ի *որ փխ զի*
25 Ա *զհրաման*
26-27 Բ.Գ.Ն *կաթուղիկոսութեան*
27 Ա *ի վերայ Իսահակայ*
29 Ա *զթուղթս* Բ.Գ.Ն.Ի *զՄելքիսէթ*
30 Ա.Դ *Ամիրգունայ* Ա.Դ *չիմ և (գնաց)*
30-31 Գ.Ն *սեպհականացուցանել*
33 Բ.Գ.Ն *պարտքն*
35 Բ.Գ.Ն *պարտքն*

հաւատայր տալ նմա պարտս, և ոչ յայլ ուստեքէ գոյր ակնկալութիւն: վասն որոյ զսպատասպուռ մնացեալ անօթոյն սրբոյ էջմիածնի, զոր ինչ և գտանիւր, նա և զԱջն Արիստակէսի հայրապետին որդւոյ սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին, նա և զԱջն Աղջոց վանաց սրբոյն Ստեփաննոսի, զայսոսիկ զորս ասացի, բերեալ եդ գրաւ առ այլազգի մահմետականս՝ և առեալ դրամ նա պարտատուացն, և զնոսա այնու կերպիւ ի բաց արար յինքենէ:

Եւ այնուհետև կասկած կրեալ յինքեան Մելքիսէթ կաթուղիկոսն, թէ գի մի գուցէ միւս այլ պարտատուքն ևս եկեալ նեղեսցեն զինքն: Նա և վասն թագաւորական մուղադայքն պիտեալ ի միտս և ծանուցեալ հաւատասեաւ, թէ ոչ կարէ վճարել, և այլ ևս նեղուիեանցն վասն, որք շրջապատեալ էին զինքեամբ, խորհեցաւ ի կողմն ինչ ճողոպրել թաքնաբար: վասն որոյ յաւուր միում ընդ մերձենալ երեկոյին՝ ելեալ էջմիածնէ, պատճառ արարեալ, թէ գնամ յնրևան, ինքն և սպասաւորն. և ի հասանելն իւր ի կէս ճանապարհին, դարձուցեալ զերեսանակ երիվարին դէպ ուղիղ յերկիրն Սահմայ՝ որ է յայնկոյս գետոյն Եփրատայ ի կողմն Կողբայ, և անտի գնացեալ ի Կաղզվան, և անտի յԱրզրում: Եւ այսպէս թաքնաբար պաղատագրի գնացութեամբ զերծաւ Մելքիսէթ կաթուղիկոսն ի մասն բաժնի աշխարհին Օսմանցւոց: Ես ելեալ ի Կարնոյ քաղաքէն կամկար գնալով եհաս և մեծ քաղաքն Կոստանդնուպօլիս: Եւ անդ ևս ոչ ընկալան զնա ժողովուրդք և վարդապետք ժամանակին վասն իրիք ինչ պատճառի: Ապա ելեալ անտի գնաց ի քաղաքն Իլով[7], և ժողովուրդք քաղաքին Իլովայ ընկալան զնա յոյժ պատուով և մեծաւ փառօք, և եկաց անդէն սակաւ ժամանակս, և պակասեալ աստի, յաւելաւ առ հարս իւր ի մերում թուականիս ՌՀԵ. ամի. անդէն վախճանեցաւ և անդէն թաղեցաւ. բայց մինչ կենդանի էր Մելքիսէթն ձեռնադրեաց Իլովացւոցն եպիսկոպոս Նիկողայոս անուամբ զոմն, որ էր ի նոյն քաղաքէն Իլովայ. և Նիկողայոսս այս յետ սուղ ամաց բազում նեղութիւնս հասոյց ժողովրդեանն, զորոյ զորպիսութիւն ծանիցես ի նոցին պատմութենէ, զոր զկնի առնելոց եմք:

1 Ա *զպարտս* ԲԳԴՆ *պարտք*
2 ԲԳԴՆ *զբսպատրսպուռ* Ա *զանօթն* ԲԳԴ *սուրբ* Է *որ փխ զոր*
3 ԱԴ *զԱջ* ԲԳ *զԱրիստակիսի ... զորդոյ*
3-4 ԴՆ *մերոյ զորդւոյ*
4 ԱԷ *աղջուց* ԲԷ *վանից*
4-5 Գ *Ստեփանոսի*
5 ԲԴՆ *զոր*
9 ԱԴՆ չԻՀ *զի*
10 Ա *թագաւորականի* ԲԳԴ *դիտեալ*
11 ԱԲԳԴՆ *ոչ կարին* ԱԴ չԻՀ *վասն* ԲԴՆ *որ*
12 ԳՆ *շրջապատեալ էր* Է *զինքեամբք*
ԱԲԳԴՆ *ճողոպրիլ*
12-13 Է *թագնաբար*
13-14 ԲԴՆ *էջմիածնայ*
14 ԱԴ *պատճառեալ* փխ *պատճառ արարեալ*
15 ԱԷ *հասանիլն* Է *զնրասանակ*
17 Ե *ի կողմ* ԱԲԳԴՆ *Կաղզվան* ԱԲԳԴՆ *անդի*
18 ԱԷ *թագնաբար*
24 ԱԴ չԻՀ և *(պակասեալ)*
27 ԲԳԴՆ *Մելքիսէթ*
28-29 Ա. *սղոց ամաց զբազում*
29 Ա. *որոյ* ԱԴ *զորպիսութիւնն*

ԳԼՈՒԽ ԺԹ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԵՒ ՓԱՒՍՏՆԱՆ ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Որպէս կանխաւ պատմեցաք թէ Սահակն ընկալաւ պատիճան կաթուղիկոսութեան, նաև Թուղթ աղաչանաց ի Մեկքիսէդէն և յԱմիրդունայ խանէն առ շահն. և միւս ևս Թուղթ գրեաց Ամիրդունայ խանն առ որդին իւր Թահմազղուլի խանն, որ հանապազ ի պատաս շահին կայր՝ զի մերձաւոր էր շահին: Այս այն Թահմազղուլին է, որ էջմիածնի քարինսն հրամանաւ շահին հաննալ առաքեաց ի Սպահան, և յայսմ ժամանակիս առ շահն ի պատաս կայր. առ որ գրեաց Ամիրդունայ խանն, թէ զայս Սահակս երևեցուցանս արքայի, և զամենայն խընդրուածս սորա ծանուցանս նմա, և խնդրեցաս տալ սմա կաթուղիկոսութիւնն: Եւ Սահակն առեալ զԹուղթս զայսոսիկ և գնաց ի Ֆահրապատ, քանզի անդ էր շահն ի ժամանակին յայնմիկ: Եւ իբրև հասաւ առ Թահմազղուլի խանն, բազում բանս յուսադրանաց լուաւ ի նմանէ՝ թէ մի ինչ հոգար, զինչ և խնդիր ունիս յարքայէ՝ զամենայն կատարեցից: Եւ յետ աւուրց ինչ յանդիման արքայի կացուցանել է զՍահակն, և շահն հարցմամբ տեղեկացեալ էր վասն նորա. և ընթերցեալ էր զԹուղթն զԱմիրդունայ խանին և զՄեկքիսէթ կաթուղիկոսին. նա և իմացաւ շահն թէ Սահակն եղբօրորդի է Մեկքիսէթին: Եւ ինքն ևս Սահակն ընծայ ինչ ըստ կարողութեան իւրոյ մատուցանել էր առաջի արքայի, ընդ որս էր և ձի մի պատուական: Իբրև մատուցին զպատարագն Սահակայ առաջի թագաւորին, եհարց թագաւորն թէ՝ զմնացորդս պարտուցն, զոր ի կողմանէ մուղալային տալոց է Մեկքիսէթ կաթուղիկոսն ի դիւան արքունի, յանձն առնո՞ւս տալ՝ թէ ոչ. և Սահակն յանձին կալաւ զտալն. վասն որոյ արքայ հաճեալ և հաւանեալ էր բանից, խընդրանաց նոցա՝ և տուեալ էր Սահակին զկաթուղիկոսական իշխանութիւնն, և ասացեալ էր՝ «Շնորհաւոր լիցի քեզ կաթուղիկոսութիւնդ», այլ և զՍահակի ընծայ բերեալ ձին՝ նմին պարգեւօք շնորհեալ էր: Եւ հրաման արար շահն գրել յաղամ, զոր և գրեցին, բայց մնաց կնքելոյ և սաֆթ առնելոյ, քանզի թագաւորն և իւր քարիւանէն ելեալ ի Ֆահրապատայ գնաց ի Ղազբին: Եւ յաւուրսն յայնոսիկ զՖահրապատու նուիրակն սկիզբն էր արարեալ և առնոյր Սահակն: Ասաց Թահմազղուլի խանն Սահակին. «Զրաղամն տուր ցիս, զի ընդ իս տարեալ իս

8 Ա. *մօհրդար* ՐԴ *մուհրդար* Գն *մուհրդար*
8-9 ՐԳն *զէջմիածնայ քարիրն*
10 Ա. *ժամանակի*
10-11 ն *Ամիրդունախանն* Դ *խան*
12-13 ՐԴ *զկաթուղիկոսութիւնն*
13 Գն *զԹուղթս* Դ *զԹուղթսս*
13-14 Ա.Ր՝ն *Ֆահրատապատ*
16 Ա. *զամենեսեան*
20 ՐԴ *Մելքիսէթի*
24 Ա.Ն: *զորս*
27 Ն: *Սահակայ*
27-28 ն *իշխանութիւն*
29 Ա.Ն: *Սահակայ* Ա. *զձին* Ա.ՐԴ *պարգեւք*
30 Ա. *զրաղամ*
31-32 Ա. *Ֆահրատապատայ*
32 Ա.Ր՝ն *Ֆահրատապատու*
33 Ր՝ն *նուիրակն* Ն: *առնուլ* Ա.Դ *չիք և*
34 Ա.Ն: *Սահակայ* Ա.Ր՝ն: *զրաղամն (զրաղամն)*

կնքել տամ. և դու կաց ի Ֆահրապատ զնուիրակդ արա, յետոյ գաս և քեզ տամ»: Այսպէս արարեալ՝ Սահակն մնաց ի Ֆահրապատ, և զրաղամն Թահմազդուլին տարաւ ընդ իւր ի Ղալքին, և շահն և իւր օրդուն անտի եկին ի Սուլթանիայ և յԱրտաւիլ և դարձեալ ի Սուլթանիայ: Եւ մինչ Սահակն զՖահրապատայ ժողովան արար և եկն ի Սուլթանիայ՝ Թահմազդուլի խանն յառաջագոյն գնացեալ էր յԵրևան, քանզի Ամիրդունայ խանն հիւանդ կայր ի վիրէն, զոր առեալ էր ի վրաց աղգէն ի պատերազմի, վասն այսորիկ առաքնդին զԹահմազդուլին յԵրևան զի տիրասցէ երկրին: Եւ յետ գնալոյ Թահմազդուլի խանին, եկն Սահակն ի Սուլթանիայ, իբրև ոչ եգիտ զԹահմազդուլի խանն, հարցեալ զնորին ծառայսն և խնդրեաց զրաղամն, և նոքա ասացին թէ ոչ գիտեմք:

Եւ իբրև անճար մնաց Սահակ կաթուղիկոսն վասն բաղամին, հարկեալ ի նեղութենէ վերստին արդայ ետ շահին այլ իմն հնարիւ թէ՝ հիւանդացայ հուքմն կորեաւ, և շահն ասացեալ էր թէ դնա առ Դիւան բէկին: Իսկ Դիւան բէկին վասն թամահի խստութեամբ էր պատասխանեալ Սահակին, մինչ որ թամահն իւր լցեալ էր, և ապա գրեալ էր նոր բաղամ, բայց ոչ էր կնքեալ. և մինչ այսպէս կայր, դարձեալ՝ ելեալ թագաւորն և գնաց ի Բաղդատ, գնաց զկնի և Սահակն: Եւ իբրև մեծամեծք ոչ կատարէին զխնդիրսն Սահակին, հարկ եղև նմա միւսանգամ տալ արդայ շահին, և իբրև եառնս զարդայն թագաւորն, ասաց. «վաղուրեմն տուեալ եմ քեզ զխալիֆութիւն և զրաղամ». ասաց Սահակն՝ «Այո՛, թագաւոր, տուեալ ես, բայց զրաղամն ո՛չ կատարեն, քանզի նոքա յոլով խնդրեն ինչս՝ և ես զի ոչ ունիմ կարողութիւն տալոյ, վասն որոյ և նոքա յապաղեն ի մուհրել և ի սափթ առնել»: Յայնժամ կոչեաց շահն փայտակալ ծառայ մի առաջի իւր և ասաց. «եթէ այսօր զամենայն գործ և որպիսութիւն բաղամի դորին պարտիս կատարել՝ և ի վաղիւն չինքն տալ»: Իսկ դինուորն ըստ հրամանաց թագաւորին զամենայն որպիսութիւն գրոյն հոգաց, և ետ ի Սահակ կաթուղիկոսին զրաղամն: Եւ Սահակն առեալ զթուղթն և եկն ի Սպահան ի մէջ Ջուղայեցւոց, և ոչ ընկալան զնա Ջուղայեցիքն, ոչ միայն զնուիրակ ոչ եառն, այլ և հարևանցի պատիւ ևս ոչ արարին նմա:

Ի սոյն ժամանակի Դաւիթ կաթուղիկոսն ի Սպահան էր, ասացին նմա Ջուղայեցիքն, թէ մեք ոչ կամիմք, որ սա լինի կաթուղիկոս, այլ զքեզ, դու գնա ի դուռն շահին, և առ զիշխանութիւն կաթուղիկոսութեան, և զոր ինչ և խարջ լինի, քեզ՝ ընկեր եմք: Եւ Դաւիթ կաթուղի-

1 Ոն *զնուիրակդ*
2 ԱՐՆ *Եւ այսպէս*
4 Ր *անդի*
5 ՈԳԴՆ *ժողովքն*
10 ՈՒ *Սուլթանիա*
14 Ա *զարդայ*
15 Գ *հուքմն*
17 ԳԴՒ *Սահակայ*
18 Ա *զնոր*
20 ՈԳՆ *մեծամեծքն* Ա՚ *Սահակայ*
22 Ր *խալիֆութիւն և բրաղամ* Գ *խալիֆայութիւն և բաղամ* Դ *բաղամ* Ն *բրաղամ*
24 ԳՆԵ *ինչ*
25 Գ *մուհրելն* ԳՆԵ *առնել*
26-27 Ան *թէ այսօր*
30 Ոն *կաթուղիկոսն*
32 Ոն *նուիրակ* ԳԴ *նուիրակ* Ա *զհարևանցի*
36 ՈՐՆ *և զոր ինչ խարջ լինի*

կոսն իբրև հաւանեցաւ խորհրդեանս այսմիկ, և պատրաստեցաւ գնալ ի Բաղդատ ի դուռն շահին. իմացաւ զայս խորհուրդս Սահակ կաթուղիկոսն, և նա ևս ել գնալ ի դուռն շահին, տեսանել զկատարումն գործոյն։ Եւ վասն այսմ խորհրդոյ խօսեցաւ Սահակն ընդ Դաւթին թէ՝ ընդէ՞ր առնես զհակառակութիւն և գործես զչարդ, և Դաւիթն պատճառս յօդեալ էր, թէ ոչ վասն հակառակութեան ինչ քեզ՝ գնամ, այլ վասն գործոյ իմոյ. քանզի այն չուխլուկն[75] զոր շահն պարգեւեալ է ինձ, ոմանք յիշխանաց բռնութեամբ և պատճառանօք իմն հարկ առնուն վասն նորա. վասն այն երթամ ի դուռն թագաւորին, որ ազատութեան թուղթ առնում չուխլուկին։

Եւ ի հասանելն նոցա ի Բաղդատ, յառաջ Սահակն գնացեալ երեւեալ էր շահին, և ի հարցանելն շահին թէ ինչ կամիս. և Սահակն ասաց՝ թէ զհրաման թագաւորի ոչ ընկալան. ետուրց շահն թէ ո՛վ. և Սահակն վասն երկիւղի յանուանէ ոչ յիշեաց՝ այլ միայն ասաց թէ՝ յայտնի է թագաւորին։ Եւ շահն իմացաւ, որ խօջայ Նազարն է, վասն որոյ ասաց՝ «Գիտեմ ի քօն է», և քօռ անունս շահն խօջայ Նազարին ասէր։ Զկնի աւուրց և Դաւիթ կաթուղիկոսն ևս եկեալ երևեցաւ շահին, բայց վասն կաթուղիկոսական իշխանութեան ոչինչ խօսեցաւ, քանզի ի հոգւոջ իւրում ծանուցեալ գիտաց՝ թէ ոչ լինի, վասն որոյ և ոչինչ խօսեցաւ։ Այլ խօսեցաւ վասն չուխլուկին, որ և էառ զհրաման տիրելոյ զնա ազատ ի հարկաց արքունի։ Եւ յետ այսոցիկ Սահակ կաթուղիկոսն և Դաւիթ կաթուղիկոսն ելեալք ի Բաղդատայ, դարձեալ եկին ի Սպահան, և Ջուղայեցիք այլևս ոչ ընկալան զՍահակ կաթուղիկոսն։ Եւ յորժամ՝ ելին երկոքեան կաթուղիկոսքն ի Բաղդատայ, շահն ևս յետ սակաւ աւուրց ելեալ ի Բաղդատայ գնաց ի Ֆահրապատ։

Եւ ամաւ միով յառաջն շահն առ ինքն էր կոչեալ զՄովսէս վարդապետն ի Բաղդատ. վասն սպիտակացուցեալ մոմին, և հարցեալ տեղեկացաւ վասն արուեստին, թէ որպէս սպիտակացուցանեն զմոմն։ Եւ ապա ի թագաւորական ծառայից իւրոց երեք ծառայ տուեալ էր նմա յաշակերտութիւն, և հրամայեալ էր, թէ գնա ի Սպահան և վարուեսդ զայդ ուսո ծառայիցդ մերոց և բեր առ իս ուր և իցեմ ես։ Եւ Մովսէս վարդապետն եկեալ ի Սպահան՝ ուսոյց զծառայսն, և ղբազում մոմս պայծառագոյնս սպիտակացոյց[76], և յորժամ լուաւ, թէ շահն գնաց ի Ֆահրապատ՝ առեալ ընդ իւր զսպիտակացուցեալ մոմսն, և զուսուցեալ ծառայսն գնաց ի Ֆահրապատ. և մատոյց թագաւորին. իբրև եհաս

1 ԲԳԴ *ի գնալ*
3 ԲԳԴ *ի գնալ*
4 Ի *այսր*
5 ԲԳԴ *հակառակութիւն*
5-6 Ս. *զպատճառս*
7 Բ *գործ*
8 ԲԳԴ *յիշխանացն* ԲԳԴ *կառնուն*
9 Ի *այնր փխ այն*
10 Ս. *զթուղթ*
11 ԱԻ *հասանիլն*
15 Գ *խօջա*
18 Ս. *կաթուղիկոսականի*
19 Ա.Գ *յոգւոջ* ԲԳԴ *յոգոջ*
19-20 Ա.Գ *չիմ վասն որոյ և ոչինչ խօսեցաւ*
20 ԲԳԴ *զոր ... հրաման*
21 Ս. *նմա փխ զնա*
23 ԲԳԴ *այլուի ոչ Գ այլուի ոչ է այլուի ևս*
24 Ա.ԲԳԴ *երկոքին*
25 Ս. *սակաւուց* ԲՆ *Ֆահրատապատ*
29 Ս. *թագաւորականաց*
32 ԲԳ *բազոմ*
34 ԲԳԴՆ *Ֆահրատապատ*
35 ԲԳՆ *և գնաց*

թագաւորն զսպիտակացուցեալ մոմսն, կարի պայծառ և հրճուալի, այլ և վասն յարմարադոյն թափելոյն, յոյժ հաճեալ և հաւանեալ էր. նա և վասն ուսանելոյ ծառայիցն առաւելապէս ուրախացեալ էր՝ և զուարթացեալ խնդայր։

Եւ յետ սուղ ինչ աւուրց հասեալ էր ի վերայ աւուրք մեծի տօնի յայտնութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Եւ յաւուրս յայսոսիկ Ջուղայեցի իսօջայ Նազարն ևս ի Ֆահրապատ էր, հրամայեաց շահն իսօջայ Նազարին, թէ պատուիրեա՛ վարդապետին, լաւագոյն իմն հոգաբարձութեամբ տեսանել զպատրաստութիւն՝ որ վասն Ջրօրհնէքին, զի հանդիսաւոր լիցի։ Եւ յաւուր տօնին՝ յորժամ եկեալ էր վարդապետն Մովսէս ի վերայ գետոյն յօրհնել զջուրն. ընդ գեղեցիկ յարմարումն զարդուցն, և ընդ կարգաւորաբար շարժումն, և ի կանգնիլն պաշտօնէիցն յոյժ հաճեալ և հաւանեալ էր արքայ, և խանդաղատեալ ի վերայ Մովսիսի։ Եւ զայս իմանամք առնել խնամ ամենակալին Աստուծոյ՝ որ զսիրտ ամենայն թագաւորաց ունի ի ձեռին, և ոչ թէ հաճոյական արարմունքն Մովսիսի, այլ և իսօջայ Նազարն ևս բանս բարիս յոլով իսօսեցեալ էր ընդ շահին՝ վասն Մովսէս վարդապետին։ Իսկ շահն հարցեալ էր ի իսօջայ Նազարէն թէ, զի՞նչ խնդիրք ունի վարդապետն ի սրտի իւրում, զի կատարեսցուք. ոսկի, արծաթ և այլ ինչ, զոր կամի. իսկ վարդապետն և ոչ միոյ իրաց հաճեալ էր, քանզի ասէր. «Ոչ ունիմ ևս կարիս մարմնաւոր իրաց, զի զպէտս իմ Տէրն իմ հոգայ օր ըստ օրէ»։

Եւ յետ աւուրց ասաց իսօջայ Նազարն առ արքայ. «Զլուսարարութիւն էջմիածնի եթէ շնորհես սմա, յոյժ բարւոք առնես, քանզի ինքն ևս զայն խնդրէ»։ Եւ խնամօքն Աստուծոյ թագաւորն շնորհեալ էր զայն խնդիրն, այլ և գրեալ զրաղամ՝[1] տուեալ էր Մովսէս վարդապետին. և Մովսէս վարդապետն ելեալ ի Ֆահրապատայ գնաց յէջմիածին։

Իսկ Սահակ կաթուղիկոսն մինչ էր ի Սպահան, լուաւ թէ Մովսէս վարդապետն էառ զլուսարարութիւնն էջմիածնի, ելեալ եկն Սահակ ի Ֆահրապատ ի դուռն թագաւորին վասն այսց իրաց, իբրև մատուցեալ առ դիւան բէկին, ծանոյց նմա զվտանգն իւր՝ և ասաց թէ զուգ արարեալ էք ինձ, որ զէջմիածինն տուեալ էք Մովսիսին. և դիւան բէկին արար զպատասխանի. «Թէպէտ տուաք նմա զէջմիածինն, զնորին լուսարարութիւնն տուաք՝ և ոչ զկաթուղիկոսութիւնն. կաթուղիկոսութիւնն քո է, և լուսարարութիւնն նորա, դու զքոյն վարեա՝ և նա զիւրն»։ Այլ և ի դրունս մեծամեծաց բազումս շրջեցաւ Սահակն, սակայն ոչինչ օգտեցաւ։ Իբրև ետես թէ ոչինչ օգնէ, ելեալ ի Ֆահրապատայ և եկն ի Թաւրէզ. եկին ընդ Սահակին և շահի զուլերն, որ զմուղադայ հարիւր

2 Ա յարմարագունոյ
3 Ա չիք էր
5 ԱՐԳԴՆ յաւուրսս
9 Ա չիմ որ
10 ՐԳԴՆ հանդիսաւորս
14 ՐԳԴՆ խնամք
15 Ա ամենից
19 Ա զոսկի, զարծաթ և զայլ ինչ
21 Ա մարմնաւորաց
27 ՐԳՆ Ֆահրատապատայ
28 ԱԴ չիմ Սահակ ՐԳՆ Սահակն
30 ՐԳԴՆ այնմ
31 Ըն և ծանոյց՝ ԱՐԳԴՆ վտանգն
33 ՐԳԴՆ պատասխանի
37 ԱԴ չիմ և
38 Ի Սահակայ

Թումանն պահանջէին, և առքօք ելեալ ի Թարվիզու ևկին յերկիրն Խոյայ։

Եւ Սահակն խորհրդով ներարամադրեալ մտացն հայեցեալ նկատեաց թէ, ամենայն ազգն Հայոց հեռացեալ ի բաց կացին յինքենէ. այլ և Աթոռն էջմիածին այնու կերպիւ դրաւեցեալ ի ձեռն Մովսէս վարդապետին։ Եւ մուղադայ հարիւր Թումանն որ ամ յամէ բազի մնաց, մնացեալ բազին մինչև յոլին հարիւր Թումանն ևհաս, և տակաւին օր աւուր բազմանայ, դիտաց հաստատեաւ, զի ոչ այլ ինչ իրօք լինի փրկութիւն նմա, եթէ ոչ փախստեամբ։ Վասն որոյ ևկեալ է ի Խոյ, զի կամէր ի Խոյայ փախչիլ Թաքուն ի զուլերէն ի քաղաքն Վան յիշխանութիւն և յերկիրն Օամանցւոց։

Մինչ Սահակն ի վերայ այսր խորհրդոյ մտայոյզ լիներ՝ և կայր ի վարանման՝ թէ որպէս արասցէ, ոմանք ի հին բարեկամաց նորա, յորոց էին Մանուէլ եպիսկոպոսն Խոր Վիրապայ, և Մկրտիչ եպիսկոպոսն Հաւուց Թառայ, սոքա այլօքն հանդերձ, որք կային յերկիրն Երևանայ, առաքեցին Թուղթս յուսադրական բանիւ առ Սահակն ի Խոյ, թէ մի երկնչիր, այլ ևկ յԵրևան քաղաք, քանզի Բահմազդուլի խանն գթով է ընդ քեզ, և մեք ամենեքեան համախոհք քո եմք, վասն որոյ ևկ առ մեզ ասա, և ապա զպատշաճն գործոց խորհեսցուք։ Եւ յայսց յուսադրական բանից քաջալերութիւն ընկալեալ Սահակ կաթուղիկոսն՝ յայնժամ ոչ փախեաւ, այլ ևկն յԵրևան. և շահի զուլերն ևս ընդ նմա։ Իբրև շրջեցաւ ընդ երկիրն ամենայն յայս կողմն և յայն կողմն, ոչ ոք ընդունէր զնա, և հայէր յԵրևս նորա՝ մինչ որ զհիւրընկալութիւնն նորա հարևանցի և վեր ի վերոյ առնէին։ Իսկ զուլերն հանապազ նեղէին զնա, թէ զթագաւորական պարտն վճարեա՝ և զմեր տօնդուղն տուր, և նա՝ զի ոչ ունէր ինչս և յամենից կողմանց վհատեալ էր և անճար մնացեալ. և յուսադրող բարեկամքն իւր ոչինչ կարացին օգնել նմա, վասն որոյ հաստատուն եղեալ ի մտի զի հնարիւք իմն զերծեալ փախիցէ։

Եւ յաւուրսն յայնոսիկ ևկն ևհաս տօն յայտնութեան Տեառն, որ յամենայն ամի Մովսէս վարդապետն զտօնն զայն մեծախումբ հանդիսիւ և հրաշալի փառաւորութեամբ կատարէր. և էին ամենեքեան յԵրևան քաղաքի, Մովսէս վարդապետն, և Սահակ կաթուղիկոսն, և շահի զուլերն։ Գնացեալ Սահակն ասաց ընդ զուլերսն՝ թէ խանն հրամայեաց զտօն Ջրօրհնեացն բազմազան և մեծահանդէս կատարել, վասն որոյ ասաց ինձ Մովսէս վարդապետն. «Գնա՛ դու էջմիածին՝ և զամենայն պատուական և զվաղեմի անօթսն՝ զոր դուք պահեալ էք ի դարանի՝ բեր ասա, զի զտօնն կատարեսցուք». և զայս ասելով հա-

1 Գ *սօքօք* Դ *ելեալք*
5 Ա. *Մովսէսի*
6 ԲԳԴ *Թուման*
9 Ա.Դ *ևկն ի Խոյ* ԲԳԴ *Խոյ*
10 ՐԳԴ *ի Խոյայ փախչել*
12 ԲԳԴ *այսմ*
15 Ի *այլովքն*
16 Ա.Ի *զթութիւն* Ա. *յուսադրականաւ* Ա. *առ Սահակն Խոյ*
19 ԳԴ *յայսմ*
20 Ա. *յուսադրականաց ... զքաջալերութիւն*
22 ՐԳԴ *կողմ .... կողմ*
25 ԲԳԴ *պարտքն*
26 Ա. *դինչս* ԲԳԴ *յամենայն*
31-32 Ա. *մեծախումբով ... և հրաշալեաւ*
35 Դ *ջրօրհնեացն* Ի *ջրօհնեացն*

տանեցոյց զնոսա՝ զի Քոյլ տացեն նմա գնալ. և նոքա հաւատացին նմա և Քողին։

Իսկ Սահակն, քանզի ունէր զպատուական ձին՝ զոր շահն նմա պարգև էր տուեալ, հնծեալ ուղեցաւ ընդ ճանապարհն էջմիածնի, իբր 5 *թէ գնալոց է յէջմիածին և բերելոց է զանօթսն։ Եւ ի հասանելն ի կէս ճանապարհին՝ փոխեալ զձև զգեստոյն ի ձև և ի կերպ զօրականի, և դարձուցեալ զերեսանակ երիվարին, և զիմեալ զէպ ի Նախչուան քաղաք և ի սահմանս նորա։ Իսկ ի մտրակել օպապարիկ և քաջազօրիզ և բարձրապարանոց երիվարին, ո՛չ թէ զերեսաք երկրի, այլ ընդ երկ-* 10 *նիւք և ի վերայ թևոց ամպոց առեալ ածէր զնա չհշտակի ի սահմանս երկրին Նախչուանայ. և հիեալ ի նաւահանդն Դարաշամբայ գեղչն՝ և նաւով անցեալ զգետն Երասխ, և գնացեալ ի Ջորս՝ յորմէ ի խոյ, և անտի ի վան քաղաք։ Եւ այսու կերպիւ ճոպղրեալ փրկեցաւ Սահակ կաթուղիկոսն ի ձեռաց զուլերուն, և գնաց ի մասն բաժնի երկրին* 15 *Օամանցւոց։*

Յետ այսոցիկ իբրև զգացին շահի զուլերն զփախուստն Սահակայ՝ եկին առ Մովսէս վարդապետն, թէ դու առաքեալ ես զՍահակն յէջմիածին վասն անօթի. և Մովսէս ասաց՝ «Ես զՍահակն ոչ տեսեալ եմ և ոչ առաքեալ, այլ նա այդու բանիւդ զձեզ խաբեալ է և փախեալ»։ 20 *Եւ զուլերն թէպէտ բազմաւ կերպիւ կողմէ ի կողմ անկան, երբեմն առ խանն գնալով, և երբեմն առ շեխն, և երբեմն առ դատաւորն, և երբեմն առ Մովսէս վարդապետն, ոչինչ կարացին պատուաստել ի վերայ Մովսէս վարդապետին. այլ ամենայն կողմանց վհատեալք, դարձան և գնացին ի տեղիս իւրեանց զուլերն ամենեքեան։ Եւ այս ևս* 25 *այսպէս**։

ԳԼՈՒԽ Ի

ՎԱՍՆ ՀԱԿԱՌԱԿՈՒԹԵԱՆ ՍԱՀԱԿ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ, ԶՈՐ ԱՐԱՐ ԸՆԴ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ԸՆԴ ՄՈՎՍԷՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ

Յետ փախստեան Սահակ կաթուղիկոսին յաշխարհ տէրութեան 30 *Օամանցւոց, մեռաւ Թագաւորն Պարսից Շահաբաս՝ որ զհարիւր ֆու-*

4 ԲԳԴԵ *պարգևք*
5 ԱՒ *ի հասանիլն*
7 Ի *զերասանակ*
11 Դ *զԴարաշամբայ* ԲԳՆ *գեղին*
12 ԱՐԳԴՆ *Ջորս ... խոյ*
14 ՍՒԼ *զուլերոյն*
16 ԱՐԳԴԵ *Սահակին*
18 Ի *անօթոյ*
19 ԲԳԴԵ *փախուցեալ*
20 ՐԳԴՆ *բազում* ԲԳԵ *կողմն*
23 ԲԳԵ *յամենայն* ԱԴ *ամենից*

* *Այստեղ երկրորդ և երրորդ հրատարակութիւնները տողատակում կրկնում են Գ ձեռագրում զետեղված հետևյալ նախադասութիւնը. «Կերայ դառնիճ և արբի լեղի, ոչ՝ էր դառն, քան զաղքատութիւնն. բարձի զուլ և զարճիճն ի վերայ, ոչ՝ էր ծանր, քան զպարտս մարդոյն»։*

ման մուղադային եղեալ էր ի վերայ կաթուղիկոսացն, և փոխանակ Շահաբասին թագաւորեաց Բոռն նորին Շահսէֆի:

Իսկ ազգն Հայոց ամենեքեան՝ արեւելեանք և արեւմտեանք, հանապազ հնձէին, և երկնէին և յոգւոց հանէին վասն հարիւր թուման մուղադային, որ ի տարապարտուց եղաւ ի վերայ աթոռոյն, զի սուտ անմխիթար և տրամութիւն անփարատելի կայր ի վերայ ամենեցուն, և միահաղոյն տրամութեամբ զպածեալ ի տարակուսի կային, և որքան մտածէին, ո՛չ կարէին գտանել թէ որով հնարիւք բարձցին զայսպիսի ծանրը և զսուտար լուծս ի պարանոցէ աթոռոյն: Եւ ի խնամոցն Աստուծոյ գտին ժամանակս զայս, յորժամ թագաւորեաց Շահսէֆին, քանզի նոր թագաւոր էր և մանուկ տիօք. և ամենայն նախարարքն և իշխանքըն՝ որք կային ի դուռն նորա, ճանաչէին ի քրիստոնէից զարս երևելիս, և մանաւանդ զիւօջայ Նազարն՝ որ նախապատիւ էր քան զամենեսեան. զոր և այս իւօջայ Նազարս գրէ ի Սպահանայ առ Մովսէս վարդապետն, և փայլկաւ հասուցանէ ի նա՝ որ էր ի սուրբ էջմիածին յայնժամ, գալ փութանակի ի դուռն արքային, զի թերևս հնարեսցեն բառնալ զհարիւր թուման մուղադայն:

Յայնժամ Մովսէս վարդապետն աճապարեալ ելաս ի Սպահան, և միջնորդութեամբ իւօջայ Նազարին բազում դանձս ծախեալ, և յոգնակի աշխատութիւնս կրեալ, հազիւ թէ կարացին բառնալ զհարիւր թուման մուղադայն, որ ծանր բեռն անկաւ ի վերայ կաթուղիկոսարանին՝ զի Շահսէֆին հրամայեաց և դեր ևս թէ՝ անցայ ի հարիւր թուման մուղադայէն:

Յետ այսորիկ քրիստոնեայքն խնդրեցին ի Շահսէֆի թագաւորէն վասն Մովսէս վարդապետին հրաման կաթուղիկոսութեան, և շահն ևս զհրաման և թուղթ կաթուղիկոսութեան Մովսէս վարդապետին: Ապա ամենայն ազգն Հայոց, որք յարևելս և յարևմուտս կային՝ միաբանեցան թղթով և բանիւ, և արարին զՄովսէս վարդապետն կաթուղիկոս, և հաստատեցին ի սուրբ Աթոռն էջմիածին:

Իսկ չարն սատանայ՝ զՄովսէս վարդապետի կաթուղիկոսութիւնն ծանր թուեցոյց ի սիրտ Սահակ կաթուղիկոսին, զի համարէր ի սրտի իւրում, թէ Մովսէսն առանց իրաւանց, հնարիւք իմն ևհան զաթոռն և զկաթուղիկոսութիւնն ի ձեռանէ իմմէ, և չինքն կորուսեալ ընկալաւ զկոչեանն. և հանապազօր նախանձ կրեալ ի սրտի իւրում, վասն որոյ սկսաւ նախանձախնդիր լինել:

Եւ Մովսէս վարդապետն, որ եղև կաթուղիկոս, ունէր միաբանս և աշակերտս բազումս, և վասն նորոգութեան սրբոյ էջմիածնի՝ որ նոր

1 ԱՐԳԴԵ *մուղադէն*
2 Բ *թագաւորեց*
8 Բ *դայնոիսի*
9 Գ *ստուար*
10 Գ *ժամանակ* ԲԳԴԵ *Շահսէֆի*
11 Ա. *ամենեքեան*
15 Բ *էջմիածինն*
17 ԱՐԳԴԵ *մուղադէն*
19 Ա. *գրագում*
19-20 ԱՐԳԴԵ *յոքնակի*
21 ԱՐԵ *մուղադէն* Գ *մուղադայէն*
22 Ա. *դղիր*
25 Ա. *Մովսէսի ... զհրաման*
26 Ա. *զթուղթ* ԲԳԴԵ *հրաման*
31 ԳԴԵ *ի սիրտն* Ա. *Սահակայ*
33 Գ *զկաթուղիկոսութիւն*
36-37 Ա. *զմիաբանս և զաշակերտս*
37 Գ *նորոգութեամբ* ԲԳԴԵ *սուրբ*

էր սկսեալ, առաքեաց զաշակերտան իւր ի նուիրակութիւն՝ ըմբռնել ինչս յօժանդակութիւն նորոգման սուրբ Աթոռոյն էջմիածնի։ Եւ Փիլիպպոս վարդապետն՝ որ էր և սա մի յաշակերտացն Մովսիսի, որոյ հրամանաւ գնաց ի նուիրակութիւն յԱրզրում և ի Բաղէշ և ի Վան, և մինչ էր Փիլիպպոս վարդապետն ի Վան քաղաքի, գտաւ անդ և Սահակ կաթուղիկոսն՝ որ շրջագայէր այսր և անդր, և դեռ նոր սկսեալ էր յակիզրն գործոյ հակառակութեան և Փիլիպպոս վարդապետն և երկեքին արքն՝ որք ի Վան քաղաքին կային, որ էր նահանգ խոջայ Ամիրխանն, և խոջայ Թումէն. այլ և խոջայ Շիրաքն, և խոջայ Միրաքն, և խոջայ Փոլատն, և խոջայ Սարուխանն, և այլք բազումք, խօսեցան ընդ Սահակ կաթուղիկոսին, զի դադարեսցէ ի պատուհասէն և ի պատուիրանէն զոր ետ, և մի՛ ի պրոնս այլազգեաց զնգնելով ցրուեսցէ զինչս քրիստոնէից։ Եւ Փիլիպպոս վարդապետն համակամութեամբ դոլվաթատրացն միաբանեալ յանձն առին՝ որ ի սուրբ էջմիածնէ տացեն ի տարին զերիս հարիւր դուռուշս յամենայն ամի անխափան Սահակ կաթուղիկոսին, որքան ինքն կենդանի է՝ ի պէտս ծախուց իւրոց կարեաց. և զդուռուպաշայ վանքն իւրովք մարդիքն նոյն նմա, զի անդէն նստեալ կացցէ ի խաղաղութեան. և թէպէտ Փիլիպպոս վարդապետն և խոջաներն ի բազում աւուրս բազմակի խօսեցան զխաղաղութիւն, այլ Սահակ կաթուղիկոսն ոչ հաճեցաւ և ոչ դարձաւ ի չար դիտաւորութենէն խորհրդոց իւրոց, այլ դնաց ի դուռն վէզիրին՝ առ ի կատարել զխորհուրդս սրտի իւրոյ։

Մինչ շրջէր Սահակն ի մէջ ազգին Հայոց՝ որք կային ընդ իշխանութեամբն Օսմանցւոց, այսր և անդր յաշխարհս և ի քաղաքս, զարս ոմանս ի վարդապետաց և յեպիսկոպոսաց ևգիտ իւրոց խորհրդոցն կամակից. յորոց մի էր և Պօղոս անուն վարդապետ ոմն, որ էր ի Սսոյ կաթուղիկոսարանէն՝ ևդբօրորդի Յովհաննէս կաթուղիկոսին Սբսոյ. թէպէտ յոլովք կային չարի խորհրդեանն համախոհք, այլ կատարիչք չար գործոյն սոքա երկոքեանս էին, Սահակ կաթուղիկոսն և Պօղոս վարդապետն։

Եւ Պօղոս վարդապետն գնաց ի մեծ քաղաքն Կոստանդնուպօլիս առ Զաքարիա վարդապետն, և էր Զաքարիա վարդապետս յերկրէն Վասպուրականի՝ և էր յայսմ ժամանակի առաջնորդ ազգին Հայոց՝ որք կային ի Կոստանդնուպօլիս, զի անուամբ պատրիարգութեան՝ և թագաւորական մուղադայիւ և հրամանաւ նստեալ էր առաջնորդ ի Կոստանդնուպօլիս։ Եւ էր սա յոյժ ներհակ Մովսէս կաթուղիկոսին, և ձեռնտու և օգնական Սահակ կաթուղիկոսին, վասն որոյ զրկաց արքայ, և մատոյց առաջի թագաւորին Սուլթան Մուրատի, որ ի նմին

1 ԲԳԴՆ *զաշակերտս*
2 Ա. *զինչս* ԱԲԳԴՆ *սրբոյ*
2-3 Ա. *Փիլիպպոս*
6 ԱԲԳԴՆ *յԵսկիզբն*
8 ԲԳՆ *որ*
11 ԲԳԴՆ *զխոռովութիւն*
13-14 ԱԳԴՆ *զօլվաթատրացն ... սրբոյ*
14 Ա. *ի տարւոջ։*
14-15 ԲԳՆ *երեք ... զուռուշ* Դ *զուռուշ*
16 ԲԳՆ *իւր*
20 Ա *ի չարեաց*
22 ԲԳՆ *Սահակ*
23 Գ *ի քաղաք*
25 Է *որ փխ որ էր*
27 ԲԳՆ *չար*
28 ԲԳՆ *երկոքեան*
34 Ա. *թագաւորականաւ*
36-37 Ա. *Սահակայ ... զարզայ*

աւուրան ի Կոստանդնուպօլիս էր. «Ինդիրք մեր, Հայոցն քրիստոնէից, այս է ի թագաւորէն, զի շնորհեսցէ Հրոմոյ կաթուղիկոսութեան Սահակ կաթուղիկոսին, զի հովուեսցէ մերովք օրինօք զամենայն քրիստոնեայս՝ որք իցեն ազգաւ Հայ, որք կան ընդ իշխանութեամբ ինքնակալ թագաւորութեանդ Օսմանցւոց»: Եւ թագաւորն եա Հրոմոյ և թուղթ կաթուղիկոսութեան Սահակին, որպէս ի խնդրեաց Զաքարիա վարդապետն, և զայս թուղթ իշխանութեան՝ Զաքարիա վարդապետն եա ցՊօղոս վարդապետն, և առաքեաց առ Սահակ կաթուղիկոսն, և պատուիրեաց ոչ թուլանալ և ոչ կասել ի շար պիտուրութենէն, այլ ջանալ և աշխատիլ մինչև ցկատարումն: Եւ ի ժամանակին՝ յորում զայս թուղթս եհան Զաքարիա վարդապետն ի թագաւորէն, ոչ էր անդ առ թագաւորն թագաւորի մեծ վէզիրն, որում անունն էր Խոսրով փաշայ, այլ բազմահանճար և խրախուտ իշխան, և բնաւ ոչ էր տեղեակ վէզիրն այսմ գործոյ. և որպէս յայտ է ամենեցուն՝ զի կարգ և սահմանք է Օսմանցւոց, զի զամենայն գործ և զորպիսութիւն ազգաց և ազանց, իշխանաց և պետաց, կղմնականաց և կուսակալաց վէզիրն հոգայ, տայ և առնու, որոյ սակս և կարգեալ է, և սոքա զանց արարեալ վէզիրեան, և առ թագաւորն գնացեալ առին հրոմոյ կաթուղիկոսութեան: Եւ այնու թղթովն Սահակ կաթուղիկոսն և Պօղոս վարդապետն եկին ի քաղաքն Տիգրանակերտ՝ որ է Ամիթ՝ առ մեծ վէզիրն Խոսրով փաշայ, զի ի նմանէ ևս առցեն հրոմոյ և թուղթ կաթուղիկոսութեան:

Իսկ բարեպաշտ քրիստոնեայքն՝ որք յայգկէն Հայոց բնակեալ էին ի քաղաքն Ամիթ, որ էր խօջայ Երեմիայն, և խօջայ Մախտուն, և Վանեցի խօջայ Ռօհիջանն, որ էր այս վէզիրիս քուրքի պաշի և հաւատարիմ և հաճոյական ոսպասաւոր առաջի նորա: Այլ և Բարսեղ վարդապետն, որ էր նոյն քաղաքին առաջնորդ, և էր առ բարեկամ սուրբ էջմիածնի և Մովսէս կաթուղիկոսին, քանզի և առ յաշակերտաց Սրապիոն կաթուղիկոսին էր, վասն որոյ և յիշեցաք ի ճառի Սրապիոնին: Եւ այլ ևս օրհնաբանութք և վարդապետաւք բազումք ժողովեցան ի Ամիթ քաղաք ի կողմանէ սուրբ էջմիածնի՝ և ջանային խափանել զՍահակ կաթուղիկոսի չար դիտաւորութիւնն:

Վասն զի Սահակ կաթուղիկոսն և ամենայն համախոհքն իւր սահմանեալ էին ի մէջ իւրեանց, թէ Սահակ կաթուղիկոսն առցէ զիշխանութիւն կաթուղիկոսութեան ի վէզիրէն, և դնացեալ ի Մշու սուրբ Կարապետն՝ իւր աթոռ կալեալ անդ նստցի, և անդ օրհնեսցէ մեռոն, և անտի առաքեալ բաժանեսցէ յայդս Հայոց, որք կան ընդ իշխանու-

2 Ա. զհրոմոյ
3 ԲՆ հովրնեսցէ ԴԳՆ մերովք Ա. զամենասնան
4 Գ քրիստոնեայսն
5 Ա. ինքնակալի
5-6 Ա. զհրոմոյ և զթուղթ
6 Է Սահակայ
9 Ա. ի չարեաց
10 Ա.ԲԳԴՆ աշխատիլ
12 Ա. որոյ փխ որում
18 Ա. զհրոմոյ
21 Ա. զհրոմոյ և զթուղթ
22 Ա.Գ բնակեալ են
23 Ա.ԲԳՆ Մախտուն Գ Մախտոմն
24 Բ Ռոօֆիջանն ԴՆ Ռոհիջանն
26 Ա. սրբոյ
28 ԲԳՆ որոյ և վասն յիշեցաք ի ճառին Գ որոյ վասն և յիշեցաք ի ճառին
30 Ա. սրբոյ
31 Ա. զչար
35 Ա. զմեռոն
36 Ա.ԲԳԴՆ անդի

թևամբն Օսմանցւոց, և զվազելմի սահմանեալ զթիմն և զվիճակն սուրբ էջմիածնի հատանել շարժեցել չինքն, և ընդ իւրով իշխանութեամբ պրատնցել բռնութեամբ թագաւորական իշխանութեան. և խափանեցել զնուիրակն և զիշխանութիւն սուրբ Աթոռոյն էջմիածնի:

Իսկ քրիստոնեայք ամենեքեան՝ թէ եկեղեցականք և թէ աշխարհականք ի բազում աւուրս զնացին առ Սահակ կաթուղիկոսն, աղաչէին և խնդրէին, մի մատնել զազգս Հայոց ի բերան այլազգի բռնաւորաց՝ և մաքառէր գաղանաց: Եւ խոստացան Սահակ կաթուղիկոսին, թէ ի քաղաքաց կամ ի վանօրէից որում և հաճեսցի՝ ինքեան լիցի թևամբ և վիճակօք, որքան ինքն կենդանի իցէ. և նուիրակ էջմիածնի մի մատչէ ի նա, այլ և ընդ սմին համապատիւ յամենայն սմի ի տարին հինգ հարիւր զուսուշ էջմիածնի նասդն տայ Սահակ կաթուղիկոսին վասն իւր օր աւուր խաթջին: Արդ այսպէս և ըստ այսմ օրինակի բազմակի և յոլովակի՝ գուն գործեալ հնարեցան, և մաղթէին զալ ի խաղաղութիւն Սահակ կաթուղիկոսն և Պօղոս վարդապետն, և նոքա ոչ եկին:

Եւ Մովսէս կաթուղիկոսն՝ որ էջմիածինն էր, և Փիլիպպոս վարդապետն՝ որ տաճատին ի վան էր, ոչքա ևս յիւրաքանչիւր տեղեաց գրեցին թուղթ մաղթանաց առ Սահակ կաթուղիկոսն, և երևելի արամբք առաքեցին՝ զի զդարմունն արասցէ խռովական գործոյն: Եւ այլ ևս թուղթ առ բարեկամս իւրեանց, որպէս թէ համոզել զՍահակն ի խաղաղութիւն և կատարել զհաճոյս կամաց նորա, զինչ և խնդրեցէ:

Իսկ Սահակ կաթուղիկոսն և Պօղոս վարդապետն բնաւին ոչ եղեն ունկնդիրք, այլ գրեցին արդայ յիւրեանց կողմանէ և միջնորդութեամբ Նադուր փաշային հասուցին ի ձեռն վէզիրին, և գոյացութիւն բանի արդային էր ըստ այսմ օրինակի. «Ձայս լիցի մեծի և անպարտելի սէրութեան հզօրիդ, խնդրեմք զի շնորհեսցես մեզ զիշխանութիւն կաթուղիկոսութեան ազգին Հայոց, եթէ լիցի այս բան հաճոյ կամաց վեհիդ՝ և արժանացուսցես զմեզ այսմ սպասաւորութեան, մեք յաւելումք ի դանձարանն արքունի սմ յամէ իւրաքանչիւր տարւոջ ԺՈ. զուսուշ, որ սմ յամէ տամք: Նաև յաղագս այսմ գործոյ ի թագաւորէն ևս խնդրեցաք թուղթ հրամանի և նա պարգևեաց, զոր ահաւասիկ ունիմք առ մեզ. և արդ՝ ի քումմէ մեծութենէ ևս խնդրեմք, զի հաստատուն լիցի գործս մեր քոյով հովանաւորութեամբն»: Զայս թուղթս արդայի Նադուր փաշայն մատոյց առաջի վէզիրին. և վէզիրն ընթերցաւ և մտօքն հաւանեցաւ, բայց բանիւ ինչ ոչ ասաց:

Եւ յայլում աւուր՝ արքն, որք ի կողմանէ էջմիածնի էին, նոքա ևս գրեցին արդայ և մատուցին վէզիրին ի պատշաճ ժամու, և գոյացութիւն բանից արդային էր այս. «խնդրեմք յաշխարհաշէն և ի խաղաղարար

1 Ա. *զթիմ և զվիճակ սրբոյ* ԲԳՆ *զթիմ*
3 Ա. *թագաւորականի*
4 Գ *զիշխանութիւնն* Ա.ԲԳՆ *սրբոյ*
7 Ա.ԲԳՆ *մատնել* Ա. *այլազգաց*
8 Ա. *մարդազիմաց*
10 Ա. *չիմ և (նուիրակ)*
17 ԲԳՆ *էջմիածին*
18-19 Ա. *յիւրաքանչիւրոց ... զթուղթ*
20 Ա. *խռովականի* Ա. *զայլ*
24 ԲԳՆ *անկնդիր* Ա. *զարդայ*
32 Ա. *զթուղթ*
35 Գ *նադուպ*
39 Է *այս էր* Ա. *ի խաղաղարարէ*

աէրութենէ հզօրիւ՝ զի մի ամենևսին զաղքատ և զաւտապիալ ժողովուրդս ի ձեռս դոցա, զի զոքա վասն փառամոլութեան և ագահութեան իւրեանց մատնեն զողորմելի ազգն ի ներքոյ ծանր հարկի, որ է ժողովրդեանն մեծ սիրամարդ և գործողացն մեղք»: Եւ յետ ընթերցման ապղաչիս՝ պատասխանեալ է վէզիրն արանցն մատուցանողաց արզային. «Անթեղք հայեր, զի՞րդ ոչ տամ նոցա զկաթուղիկոսութիւն, զի նոքա ի տարւոջն չժի. զտուղ յաւելուն ի գանձարան թագաւորին»: Իսկ իսոջայ Ռուհիջանն՝ որ վասն հատատարմութեան իւրոյ համարձակութիւն ունէր առաջի վէզիրին, ասաց առ վէզիրն .«Փառաւոր տէր իմ, լիթէ զողորմելի և զաւտապիալ ազգն Հայոց վասն գանձի վաճառես նոցա, ինձ վաճառեա, և ես ոչ թէ ժի զտուղ, այլ իի. զտուղ տամ:

Եւ ամենաթագաւորն Աստուած՝ որ ունի ի ձեռին զսիրտ ամենից թագաւորաց և իշխանաց՝ ըստ Սողոմոնի, ի վերայ բանից Ռուհիջանին հրաց զանասարան մատոյ վէզիրին, որ կրկնակի հարցումն արար. և իսոջայ Ռուհիջանն զամենայն որ ինչ պատաշաճ էր ծանուցանելոյ առաց անդէն. և վասն նախանձ արկանելոյ ի սիրան վէզիրին՝ զայն ևս յուշ արարեալ է նմա, թէ ամենայն պետք, և իշխանք, կողմնակալք և կուսակալք ազգին Օսմանցւոց խոնարհին ընդ աէրութեամբ քով և առ քեզ զան խնդրել և առնուլ պատիւ և իշխանութիւն, իսկ սոքա զանց արարեալ զքեզ առ թագաւորն զնացեալ՝ առեալ են զիշխանութիւն կաթուղիկոսութեանն: Եւ յետ վճարման ամենայն բանից արձակեցան իսոջայքն ի վէզիրէն՝ և ի բաց զնացին:*

Եւ յաւուրն յորում նստաւ վէզիրն յաւետեան բազմախոտուն հանդիսիւ, առնէր դիւան՝ եաղուբ փաշայն, որ էր միջնորդ և յարդարիչ գործոց Սահակ կաթուղիկոսին, զՍահակ կաթուղիկոսն և զՊօղոս վարդապետն ածեալ ի հանդէսն յանդիման կացոյց առաջի վէզիրին:

Եկին ի նոյն հանդէս և արքն՝ որք ի կողմանէ էջմիածնի, էին արք բազումք. որոց գլխաւորն էր իսոջայ Երեմիայն, և իսոջայ Մախսուտն, և իսոջայ Ռուհիջանն, և Բարսեղ վարդապետն: Ասեալ սկսաւ վէզիրն առ Սահակ կաթուղիկոսն և առ Պօղոս վարդապետն՝ և ասաց. «Ջի՞նչ է յօժարութիւն կամացն ձեր, ո՛վ արք, որք դիգիրիք ի դրունս իշխանութեանս»: Պատասխանեաց Սահակն. «Զոր ինչ արդեայ թղթովն մատուցաք առաջի Տեառն մերում» և վէզիրն հրամայեաց զարդեան ընթեռնուլ, յորում գրեալն էր՝ թէ ի թագաւորէն ընկալաք հրաման կաթուղիկոսութեան, և արդ՝ ի քէն ևս խնդրեմք: Եհարց վէզիրն զՍահակն, թէ արդեարև ընկալա՞ք էք թուղթ կաթուղիկոսութեան ի թագա-

* *Համմ. Առակք, ԻԱ, 1*

3 ԲԳՆ *ըռիաթն*
5 Ա.Ի *զարգային* ԲԳ *մատուցողաց*
6 Ա. *Հայք*
6-7 ԲԳԴՆ *կաթուղիկոսութիւն ... ի տարին*
8 ԲԳՆ *ըռօհիջանն*
12 ԲԳԴՆ *ամենայն*
17 Ա. *ամենեքեան*
19 Ա.Դ *զպատիւ և զիշխանութիւն*
ԲԳՆ *իշխանութիւն*
21 Ա. *ամենից բանիցն*
24 ԲԳ *փաշէն* ԴՆ *եաղուպ փաշէն*
25 Ա. *Սահակայ*
27 Ա. *(էին արք)* բառերը տրված են վերագծերում
28 ԲԳՆ *գլխաւորէր*
31 Ա. *ձերոց*
34 Ա.Դ *զհրաման*
36 Ա. *զթուղթ*

տրէն. և նա ասաց. «Այո՛, մատնեաք առ թագաւորն և առաք զհրամանն»: Ասաց վէպիրն. «Դուք յորո՞մ աւուր ծանուցիք մեզ զորպիսութիւն ձեր՝ և մեք անփոյթ արարեալ ոչ կատարեցաք զխնդրուածս ձեր, որ զանց արարեալ զմեօք գնացիք առ թագաւորն ձանձրացուցանել զպլուխս նորա»: Եւ նոյնժամայն հրամայեաց վէպիրն որոց կային առաջի իւր, ապտատուրաց և պահճաց դնել զՍահակ կաթուղիկոսն և զՊօղոս վարդապետն ի ֆալախայ և բրածէծ առնել. և այնչափ հարկանել մինչև կամ զառնալ ի հաւատոց իւրեանց յանօրէն օրէնս Մահմետի, և կամ ի ներքոյ փայտի մեռանիլ: Իսկ սպատուրք վէպիրին առժամայն կատարեցին զհրամանն. զի զՍահակ կաթուղիկոսն և զՊօղոս վարդապետն եդին ի ֆալախայ և չերկուց կողմանց կանգնեալ արանց հասա բրօք սկսան անողորմ հարկանել, միշտ հարկանէին և միշտ ասէին. «Արդ՝ զարձէք ի մոլար հաւատոց ձերոց՝ և մտէք ի ճշմարիտ օրէնս մեր՝ և զկրծքիք ի տանջանաց՝ և ի զառն մահուանէ, ապա թէ ոչ՝ ոչ զադարիմք ի հարկանելոյ մինչև ցմահն ձեր»:

Եւ իբրև եղև՝ զի մատնեցան ի հարուածս զանից Սահակ կաթուղիկոսն և Պօղոս վարդապետն, և զինուորքն անողորմ և ուժգին հարկանէին, զի թեւս ի վատնգէ տանջանացն զառնայցեն չիւրեանց հաւատոցն: Յայնժամ խօջայ Երեմիայն և ընկերքն իւր խորհեցան՝ զի մի զուցէ ոչ կարիցեն տևել տանջանացն՝ և զառնայցեն ի հաւատոցն՝ և լինիցի նոցա խիղճ մատց և ապգին Հայոց մեծ ամօթ և նախատինք, որ և առաջնոյն նոքին խօջայքն այսր և անդր ընթացան առ նախապատիւ իշխանս վէպիրին, և խոստացան նոցա արծաթս բազումս, զի բանս մաղթանաց խօսեսցին առաջի վէպիրին վասն փրկութեան Սահակ կաթուղիկոսին և Պօղոսի վարդապետին: Եւ իշխանքն ըստ պատշաճին խօսեցան առաջի վէպիրին բարեխօսութիւն, որով ցածեաւ բարկութիւն վէպիրին, և հրամայեաց արձակել ի տանջանաց, և ի բաց վարել ի զրանէ պիտանին: Եւ զինուորքն չետ արձակելոյն, հարկանելով և ձաղկով զկատափուն նոցա վարեցին արտաքս ի հանդիսէն:

Եւ իբրև այսպէս եղև կատարումն գործոյ Սահակ կաթուղիկոսին և Պօղոսի վարդապետին, այնուհետև նկն ի վերայ նոցա ամօթ և պատկառանք. և անկան երեսք նոցա, և ոչ ևս կարէին հայիլ չերեսս քրիստոնէից, և ոչ համարձակէին շրջիլ ի մէջ մարդկան վասն ամօթոյ:

Եւ ապա Պօղոս վարդապետն գնաց ի մեծ քաղաքն Կոստանդնուպոլիս, և անտի յՈւռումէլի, և անտի յաշխարհն Իլախաց, և կացեալ ժամանակս ինչ և ապա վախճանեցաւ, և անդէն թաղեցաւ: Սոյնպէս և Սահակ կաթուղիկոսն, սակաւ սակաւ գնալով եհաս ի գաւառն Կարնոյ, և անտի յաշխարհն Վրաց, և անտի յԱրարատ գաւառ և ի սուրբ

1-2 ԲԳԴն *հրամանն*
7 Գ *ֆալաղայ*
8 ԱԳ չիմ *յանօրէն*
11 ԲԳԳ *ֆալաղայ*
12 Ա. *հաւատիւք*
13 ԲԳն *զարձջիք* Գ *զարձիք*
15 ԳԳն *զադարիմք*
18 ԱԲԳն *վատնիկ*
19 ԲԳԳն չիմ *խորհեցան*
23-24 Ա. *զարծաթս ... զբանս*
24-25 Ա. *Սահակայ*
31 ԲԳԳն *նորա փխ նոցա*
32 ԲԳն *հայիլ* Գ *յերես*
33 ԲԳն *չրջիլ*
38 Գ *անտի ... անդի յԱրարատ* Գն *յԱրարատ*

էջմիածին, և մնաց անդէն ի սուրբ աթոռն էջմիածին։

Եւ ըստ ցաւակիր բնութեանն մարդկան պատահեցաւ ցաւ իմն ոտից Սահակ կաթուղիկոսին, և օր աւուր յաւելաւ ցաւն, յորմէ պատճառէ ուռան երկոքին ոտքն նորա, և օր աւուր յաւելաւ ուռուցն, և հասս մինչև ի փորն և բաղում աւուրս մնաց այնպէս, և ցաւն այն յոյժ ցաւէր, և կարի վշտացուցանէր զնա։

Իսկ ի նեղութենէ ցաւոյն՝ յաւուր միում առաց Սահակ կաթուղիկոսն, բառնալ զինքն և տանել ի տաճար սուրբ էջմիածնի, և անկեալ ի վերայ իջման տեղեացն Քրիստոսի, յորում տեղի Քրիստոսն իջեալ է. և բաղում հառաչանօք և փղձկեալ սրտիւ և յոտքաբուխ արտասուօք և ցաւագին անձամբ զերեսս ի գետին փարելով, ի բաղում ժամս ելաց զառնապէս, և ընդ արտասուացն մաղթողական բանիւ ասաց։ «Ո՛վ Տէր իմ և Աստուած իմ Յիսուս Քրիստոս, պատապարանակ ծառայ քո եմ և մեղուցեալ հոգւով և մարմնով, եթէ կամք քո հաճի կեալ ինձ կենդանի, փութով փրկեա զիս ի ցաւոյս՝ և տո՛ւր ինձ առողջութիւն. և եթէ կամք քո հաճի մեռանել ինձ, փութով տուր ինձ զմահ, զի հանգեայց ի տառապանաց ցաւոյս»։ Եւ անդէն ի նմին տեղւոջ ի մէջ եկեղեցւոյն կոչեալ առ ինքն զամն ծեր եպիսկոպոս և խոստովանեալ զամենայն յանցանս մեղաց իւրոց, և հաւատով և յուսով հաղորդեալ ի պատուական մարմնոյ և յարենէ Որդւոյն Աստուծոյ։ Եւ ապա բարձեալ տարան ի տունն, յորում կայր հիւանդ, և ի գիշերին յայնմիկ հասանէ նմա մահ՝ և աւանդէ զհոգին, և վճարէ զկեանս իւր, և հանդչի ի տառապանաց ցաւոյն ըստ խնդրանաց իւրոց։ Եւ կատարեալ զկարգ թաղմանն ի վերայ նորա՝ տարեալ թաղեցին ի դիս պերճմանացն։ Արդ զրաւ կենաց Սահակ կաթուղիկոսին և Պօղոս վարդապետին այսպէս եղև, որոց ողորմեալ Տէրն Քրիստոս ներումն արասցէ նոցա՝ անբաւ մարդասիրութեամբն իւրով. ամէն։

1 Դ *էջմիածինն*
4 ԲԳՆ *ուռաւ Ի ուռոյցն*
8 ԲԳՆ *տաճարն* ԱԲԳԴԵ *սրբոյ էջմիածնին*
9 ԲԳՆ *անդացն* Ն *Քրիստոս*
10 Ա. *բազմօք հառաչանօք և փղձկելով* ...
յորդաբղխովք Դ *յորդաբուղս*
11 Ա. *ցաւագնիւ* ԲԳՆ *և զերեսս* Դ *ի գետինն*
13 Ի. շիմ *իմ (Յիսուս)*
15 ԲԳԴԵ *ցաւէս* ԱԴ *զառողջութիւն*
16 ԱԴԵՆ *մեռանիլ* ԲԳԴՆ *մահ*
18 Բ *գոմ*
18-19 Ա. *պամեննսան*
19 ԲԳՆ *անցանս*
20 Ա. *պատուականէ*
22 Ի. *գոդին*
25-27 ԱԴ շիմ «*Արդ զրաւ կենաց Սահակ կաթուղիկոսին և Պօղոս վարդապետին այսպէս եղև, որոց ողորմեալ Տէրն Քրիստոս ներումն արասցէ նոցա՝ անբաւ մարդասիրութեամբ իւրով. ամէն*» Դ «*Յիշնջէք ի Քրիստոս զգծագրող սորին Աւետիս ... քահանայ*»—ջնջված է։

ԳԼՈՒԽ ԻԱ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԱԳՈՐԾ ԱՐԱՆՑ ՍԱՐԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԵՒ ՏԷՐ ԿԻՐԱԿՈՍԻՆ, ՈՐՔ ԵԿԱՆ ՍԿԻԶԲԸՆ ՇԻՆԱԿԱՅՔ ԵՒ ՀԱՍՏԱՏԱԿԱՅՔ ԱՆԱՊԱՏԱՑ: ՈՐՈՎՔ ԵՒ ՊԱՏՃԱՌՔ ԱՄԵՆԱՅՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՎԱՆՈՐԷԻՑ ԵՒ ԿԵՑՎԱԾՔՆ ԵՒ ՆՈՅԻՆ ԲՆԱԿՈՒԹԱՑ

Այս Սարգիս եպիսկոպոսս էր յաշխարհէն Արարատեան, ի գաւառէն Ամբերդայ, որ է Արագածոտն, ի գիւղէն, որ ասի Յարենի[78]*, որ է մերձ ի գիւղն Կարփի, և այժմ է աւերակ և անմարդաբնակ. բայց ի ժամանակս Հարց մերոց էր շէն գիւղս յայս Յարենի, ուստի էր այս Սարգիս եպիսկոպոսս: Որոյ եկեալ բնակեցաւ ի մեծափառ ուխտն Սպիտակաւանից, լեալ սպասաւոր բազմահատոյց սրբութեանցն՝ որք կան անդր, որ և գինի առատ եւ առաջնորդ նոյն վանացն:*

Բայց գոյր մերձ այս վանիցս գիւղ մի փոքրիկ, ուստի այր ոմն բրիստոնեայ՝ որսորդ գոլով շրջէր աւուրց յաւուրս ի լերինս որսալ երէ վայրիս: Եւ եկեալ յաւուր միում դնալ առնս այսմիկ ի մեծ լեառն Արագած վասն որսոյ, և ի շրջելն իւրում ի գլուխս լերինն, պատահեցաւ առն ումեմն ճգնաւորի, որ ի խոստոջս վիմացն նստեալ կայր գճկեալ, ունելով ի գլուխն վիզար և զիւրև՝ փիլոն. և մօտ եկեալ առ ի ստուգիւ գիտել թէ գինչ իցէ այն, եւս գի մարդ էր հաւատառեալ, և մեռեալ էր, և այնպիսի նստեալ կայր, և մարմինն անապական: Եւ ի տեսլենէս յայսմիկ անկաւ երկիւղ և սոսկումն ի վերայ առնս այս որսորդի, և ոչ ևս կարաց ժուժել ի տեղին յայն, այլ զարձ արարեալ անտի եկն ի տուն իւր: Եւ եկեալ ի Սպիտակաւանք պատմեաց ամենեցուն զննջումն ճգնաւորին, որ պատահեցաւ նմա ի գլուխ լերինն: Իբրև լուաւ զայս Սարգիս եպիսկոպոսն և ուրախացաւ, վերահասու եղև, թէ յորում տեղւոջ իցէ:

Եւ յաւուր միում յանձնեալ զանձն իւր Աստուծոյ Սարգիս եպիսկոպոսն՝ յուսացեալ յառաջնորդութիւնն Աստուծոյ, եկեալ գնաց ի լեառն Արագած, և շրջեալ այսր և անդր յաւուրս երիս, եգիտ գվախճանեալ ճգնաւորն, և բազում փափաղանօք և ջերմեռանդն սիրով համբուրեր զձեռս և զոտս նորա, և յետ հնդման բազում արտասուաց՝ ամփոփեալ թաղեաց զնա նորին զգեստիւն. զարձաւ և եկն ի վանքն:

Եւ եղև այս պատճառ զղջման Սարգիս եպիսկոպոսին և հրաժա-

2 Ս. *առաքինապործոց ... Սարգսի* ԲԳԴՆ *արանցն*
3 Ս. *տեառն*
4 Բ *անապատանցն* Ս. *չիք ամենայն*
6 ԱԳ *չիք այս, Սարգիս եպիսկոպոս ոմն, որ էր ի եպիսկոպոս* Ա.ԲԳՆ *Արարատեան*
7 Գ *Անբերդոյ ի յԱրենի*
9 ի *այս յԱրենի*
10 ի *եպիսկոպոս*
11 Ս. *Սպիտակաւանից* Ս. *բազմահատուցիցն*
14 Ա.Ս. *էրէ* ԳԴՆ *էրեա*
15 Ս. *այսորիկ*
16 Ա.ի *շրջիլն* Գ *ի գլուխ*
18 Գ *գիւրեաւ* Ս. *մօտեալ փխ մօտ եկեալ*
19-20 Ս. *այնպէս փխ այնպիսի*
20 Գ *տեսլենէս* Ս. *այսմանէ* ԲԳՆ *այսմիկ*
21 Ա. *այսորիկ փխ այս*
28 ԲՆ *յառաջնորդութիւն*
30 Ս. *բազմօք ... ջերմեռանդիւ* ԳՆ *փափաքանօք*
31 Ա. *բազմաց* Գ *արտասուց*
32 ԲՆ *և զարձաւ*

ընդոյ յաշխարհէս, քանզի տաղտկալի թուեցաւ յախորժակս սրտի նորա պատիր և ընդունայն, խնդիր և խաբուսիկ վայելչութիւն աշխարհիս այսորիկ։ Եւ յայնմ օրէ և առ յապա խնդրէր Սարգիս եպիսկոպոս հեռանալ յաշխարհէ, և հնարիլ լուսաշաւիղ երկնաւոր ճանապարհին
5 *առաքինական վարուց։ Բայց ոչ դոյր ի ժամանակին յայնմիկ անապատ և կամ գիտող կարգաց կրօնաւորական վարուց, վասն բազում հինից Թշնամանաց եկելոց ի վերայ և վրդովմանց՝ և աւերանաց աշխարհիս Հայոց, ամենևին բնաջինջ եղեալ էր և բարձեալ նշոյլ և նըշմարանք առաքինի գործոց՝ և բարի կարգաց յաշխարհէն Հայոց։ Եւ*
10 *մինչ կայր ի մէջ այսմ վարանմանս Սարգիս եպիսկոպոսն, եղ ի մտի իւրում գնալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ յերկրպագութիւն անօրինականաց Քրիստոսի Աստուծոյ մերոյ. և եղեալ գնաց յԵրուսաղէմ։*

Դարձեալ ի սոյն ժամանակի դտեալ եղև միւս ևս այլ ոմն այր, որում անունն էր տէր Կիրակոս, որ կամօք և յօժարութեամբ նման գոյր
15 *կամաց և յօժարութեան Սարգիս եպիսկոպոսին։ Եւ էր տէր Կիրակոս այս ի քաղաքէն Տրապիզոնայ, մտեալ ի կարգ աշխարհի, բայց ոչ վայելեալ, քանզի զկնի սակաւ աւուրց վախճանեալ ամուսնոյ նորա, և ինքըն մենացեալ իբրև զատատրակ ողջախոհ, և հանապազօր խոհայր ի պատուիրանս Աստուծոյ, և անձանձիր ընթեռնոյր զգիրս աստուածա-*
20 *չինս և ի միտ առնոյր զպատգամս նոցա, և ջանիւք և երկօք կրթէր զանձն ըստ հրամանի գրոցն կենսատալաւարիլ։*

Ի սոյն ժամանակի յայսպիսում խորհրդեան գոլով տէր Կիրակոսիս՝ լուաւ յոմանց վասն Սարգիս եպիսկոպոսի, թէ՝ և նա զղջացեալ է յաշխարհէ, և կամի հրաժարել՝ և հնարիլ առաքինի վարուց, վասն որոյ
25 *տէր Կիրակոսն եկեալ ի Տրապիզոնայ և եկն յերկիրն Արարատոյ ի Սաղմոսավանք՝ առ ի միաբանիլ ընդ Սարգիս եպիսկոպոսին. և ոչ կարաց տեսանել զնա, զի գնացեալ էր յԵրուսաղէմ։ Վասն որոյ և սա եղ ի մտի իւրում գնալ յԵրուսաղէմ, և գարձեալ ի Սաղմոսավանից եկն ի Տրապիզոն, վաճառեաց զամենայն ինչս իւր. զմասն ինչ նա ազքատաց.*
30 *և զտունն և զանդաստանն իւր աւանդեաց եկեղեցւոյն Տրապիզոնայ, և զմասն ինչ էառ ընդ իւր Թոշակ ճանապարհին, և եկեալ գնաց յԵրուսաղէմ. և պատահեցան սոքա երկոքեանս միմեանց, Սարգիս եպիսկոպոս և տէր Կիրակոս, և յետ աւուրց ինչ առ միմեանս կելոյ, գոհ գիրեարս*

2 ՐԳԻ; *խնդիր* ՐԳԲ *վայելչութիւնք*
3 Ս. *յայնմանէ*; ԱԳ *եպիսկոպոսս*
4 Ա.ԲԳԲ *հնարիլ* Ա. *երկնաւոր*
5 Ս. *առաքինականաց*
6 Ա. *կրօնաւորականաց* Ա. *բազմաց*
7 Ա. *աւերմանց*
8 ԲԳԲ *բարձեալ էր*
8-9 Ա.Ի; *նշմարան*
9 Ս. *առաքինեաց ... և բարեաց*
10 ԱԳ *յայսմ փիս այսմ*
11-12 Գ *անօրինականացն*
12 ԱԳ *որ և եկեալ գնաց* ԱԳ *չիք յԵրուսաղէմ*
13-14 Ա. *չիք այր, որում անունն էր*
15 Ա. *Սարգսի*
17 Ա. *սակաւուց աւուրց է աւուր*
20 ԱԳ *ջանօք*
21 ԱԳ *կենսատալաւարելով*
22 Ա. *տեառն*
23 Ա. *Սարգսի* ՐԳԲ *եպիսկոպոսին*
Ա. *թէ նա ղզջացեալ է*
24 Ա.ԲԳԲ *հրաժարիլ և հնարիլ* Ա. *առաքինեաց* Բ *հնարիլ*
25 ԱԳ *չիք և* Ա.ԲԳԲ *Արարատու*
29 Ա. *զամենեսեան*
30 Բ *եկեղեցւոյն*
31 Ա. *պիոշակ* ՐԳԲ *չիք և*
32-33 Ա.ԲԳԲ *եպիսկոպոս ... Կիրակոս*
33 Բ *Կիրակոս*

միով դիտաւորութեամբ՝ և միով յօժարութեամբ և կրիւք ախտացեալս. և միակամ և միաբան և միախորհուրդ եղեալ յայնմ օրէ և առ յապա կենցաղավարիլ ի միասին:

Բայց խնդրին տեղի անքոյթ և պատշաճաւոր անապատի, և հեսի ի շփոթմանց աշխարհի, և լուեալ յամանց դիտողաց թէ այսպիսի տեղիք բազումք գոն յարևելեայ մասն աշխարհին Հայոց, և մանաւանդ յերկրին Սիւնեաց՝ որ և ի հին ժամանակաց անապատ եղեալ է յաշխարհին յայնմիկ, որոց տեղիքն արդէն ևս երևին: Եւ իբրև առաւսեին զբանն, ելեալք յՆրուսաղեմէ յօժարութեամբ դիմեցին և եկին յաշխարհս արևելեան՝ յերկիրն Սիւնեաց, և հասին ի մեծափառ ուխտն Սաաթէ առաքելոյն[79] որ այժմ ասի Տաթևու վանք: Եւ առ ժամանակս կացեալ անդ, գնացին ի տեղին, որ անուանի Զորոյ վանս, որ ասի Յրուանց. և ակնի առ ժամանակաց գնացին անտի ի տեղին, որ անուանի Բանահատի վանք. և անտի ևս ելեալ որոնէին առաւել ևս անքոյթ և անշփոթ և յապահով տեղի, մինչև գտին զտեղին, յորում այժմ շինեալ կայ Մեծ անապատն: Եւ անդ շինեցին եկեղեցի և վանուցս ըստ պատշաճի անապատի, և միաձնակեցի, որպէս ցուցանէ գիրք Հարանց վարուց և այլ ճգնաւորաց, նման և մին և փոքրագոյն. և սկսան անդ զնտնդիլ:

Իսկ Տէրն աէրանց՝ և Աստուածն աստուածոց՝ որ միշտ զբարին կամի և յառաջացուցանէ, յաջողէր և ուղղէր զգործս նոցա՝ և ինքն ձեռնտու և օգնական լինէր. վասն զի ի վերայ բարի համբաւոյ նոցա սկին բազումք և յարեցան ի նոսա և եղեն նոցա միաբանք և բնակիչք տեղւոյն. ոչ միայն աշխարհականք և աննշանք, այլ և եկեղեցականք և անուանի արք՝ վարդապետք, եպիսկոպոսք և քահանայք: Որ էր Պօղոս վարդապետն Մոկացին, և Մովսէս վարդապետն Սիւնեցին, որ զկնի եղև կաթուղիկոս, որ և զերկուցս պատմութիւնսն և զարդիւնսն յայլում ճառի երկար պատմելոց եմք[80]: Եւ Ներսէս վարդապետն Մոկացին, որ զկնի գնաց ի կղզին Լմայ և անդ շինեաց անապատ: Եւ Թումայ եպիսկոպոսն Տաթևու, որ զկնի եղև վարդապետ, և գնաց յերկիրն Շամախու հովուել և առաջնորդել ժողովրդեանն աշխարհին: Եւ Կարապետ եպիսկոպոսն էջմիածնեցի, որ զկնի գնաց ի Սևան կղզին, և զայն տեղին շինեաց անապատ՝ և կայ հաստատ մինչև ցայսօր: Եւ Շամբեցի Արիստակէս վարդապետն, որ զկնի եղև առաջնորդ նոյն Մեծ անապատին, և անդ եկաց մինչև ցվախճան կենաց իւրոց և անդէն թաղեցաւ: Եւ միւս տէր Արիստակէսն, որ էր ի պատուէն Բարկաշատայ, որ զկնի գնաց ի տեղին զոր

2 Ս. *յայնմանէ*
3 ԲՆ *կենցաղաւարել*
4 Ս. *զտեղի*
6 ՍԳ *մասին*
9 ՍԳԲՆ *յնրուսաղեմայ*
10 ՍԳ *Սաաթէի* ԲԳԲ *Ըսաաթէի*
12 Գ *ուր անուան* ԳԲՆ *չիք որ ասի*
13 Ս. *սղոց* Գ *ուր անուանի*
14 Ի *հկնալ* փխ *հլնալ*
16 ՍԳ *զկնկնեցի* ԲՆ *խըցնր* ԳԲ *խցնր*
17 ԲԳԲՆ *գիրքն*
17-18 Ս. *այլոց ճգնաւորացն*
18 ԲԳԲՆ *ճգնաւորացն* ԲԳԲ *փոքրագոյն* փխ *և փոքրագոյն*
20 ԳԵ *յառաջնցուցանէ* ԳԲ *աջողէր*
21 Ս. *բարւոյ*
21-22 Ե *հկին բազումք յարեցան*
23 ԱԳ *անուանիք*
25 Ս. *Մոկացի* Ս. *Սիւնեցի*
27 Ս. *Մոկացի*
28 Ս. *զանապատ*
33 Ս. *մեծի*
35 ԲԳԲ *որ* փխ *զոր*

անուանն Տանձափարախ, և շինեաց անապատ՝ և անդ եկաց մինչ ցվախճան կենաց իւրոց՝ և անդէն թաղեցաւ և տեղին անապատ կոչ Հաստատուն մինչև ցայսօր։ Եւ Դաւիթ եպիսկոպոսն՝ որ էր ի Շամբուռ ձորէն՝ և ի ցեղէ իշխանաց, զոր Զարամանենց կոչեն, սա ևս եկեալ եկաց ի Մեծ անապատս, և ապա եկեալ գնաց ի ձորն Շամբուռ՝ և անդ շինեաց անապատ, զոր կոչեն Զարինբաղեաի անապատ, որ է բազմաժողով եղբարց բնակութիւն, և յոյժ հաստատուն ամենայն կարգօք և սահմանօք անապատի մինչև ցայսօր. և ինքն Դաւիթ եպիսկոպոսն անդէն վախճանեցաւ, և անդէն թաղեցաւ։ Եւ այլք բազումք ի յոյովք՝ որք անդէն կացին՝ և սա ակր փոխեցան, և որք յայլ տեղիս գնացեալ շինեցին անապատս և վանօրայս,

Քանզի իբրև զմայրն Սիոն՝ զորմէ ասէ մարգարէն Եսայի, թէ ի Սիոնէ ելցեն օրէնք և բան Տեառն՝ յԵրուսաղեմէ*. սոքա երկոքին արբս եղեն սկիզբն անապատիս, և անապատս եղև մայր և ծնող ամենայն անապատաց, և տուիր լուսաւորութեան ազգիս Հայոց։

Վասն զի, որպէս ասացի, ասա վարժեալ ուսաւ Մովսէսի նեռնէս վարդապետն զվարս կրօնաւորական, և ելեալ գնաց ի դաւառն Վասպուրականի, և հմուտ ի կղզին Լմայ ի մէջ ծովուն, և անդ ժողովեցան առ նա բազմութիւնք եղբարց, և եղև անապատ հաստատուն ամենայն կարգօք և կրօնիւք միաբանութեան վարուց. և ինքն Նեռնէս վարդապետն անդէն կացեալ կրօնաւորական ժուժկալութեամբ՝ կատարեաց զընթացս իւր առաքինի վարուք, անդէն վախճանեցաւ և անդէն թաղեցաւ, և վախճանն նորա եղև ի թուին ՈՒՀԶ. ամի։

Եւ զկնի նորին յաջորդեաց զառաջնորդութիւն տնկեալ զնկեր նորին Սահիանենոս վարդապետն։ Եւ յայսմ ժամանակիս և ևս աճեցին միաբանք Լմայ անապատիս, վասն որոյ ամանք եղեալ ի Լմայ՝ գնացին ի տեղին՝ որ անուանի Կաուց՝ որ և սա կղզի է ի մէջ նոյն ծովուն, և անդ ևս շինեցին անապատ և եղբայրանոց և է այժմ հաստատ ամենայն կրօնաւորական կարգօք։

Են և այլ ևս մանունք անապատք շինեալք այսր և անդր, բայց մեք գնշանաւորսն յիշեցաք, որ յայս Մեծ անապատէս ուսեալ և վարժեալ գնացին յայլ տեղիս՝ և հաստատեցին. որոց ամենեցուն եղեն սկիզբն և պատճառ վերոյգրեալ երկոքին արբն. Սարգիս եպիսկոպոսն և տէր Կիրակոս։ Քանզի միանգամայն յամենայն սրտէ լքին ի բաց զաշխարհ, և բարեաւ մնալ ասացին ամենայն կենցաղական հոգոց սորա, և արարին զինքեանս խաչեալ աշխարհի, և զաշխարհ ինքեանց, ըստ խրատու

* *Եսայի, Բ, 3*

1 Ս. *զանապատ* ԲԳ *մինչև*
3 Է *չիք էր*
7 Ս. *ամենիւք*
11 Ս. *զանապատ և զվանորայս*
12 ԲԳԴԵ *Սիոնէն* ԲԳԴԵ *ի Սիոնէ*
17 Ս. *կրօնաւորականս*
19 ԲԳԴԵ *բազմութիւն* Ս. *ամենիւք*
20 Ս. *միաբանութեանց*
21 Ս. *կրօնաւորականաւ* Գ *զնիմաս*
22 ԱԳ *չիք անդէն*
22-23 ԱԲԳԵ *վախճան*
25 ԱԳ *աճեցան*
28 Ս. *զանապատ և զեղբայրանոց*
28-29 Ս. *ամենիւք կրօնաւորականիւք*
29 Գ *կրօնական*
30 ԲԳԴԵ *մանր*
31 Ս. *ուսեալք և վարժեալք*
34 Ս. *յամենայնի*
35 Ս. *ամենից կենցաղականաց*

առաքելոյն. որով ինձ աշխարհ ի խաչ հնհալ է, և ես աշխարհի*: Վասն դի պայդ և պնդեիկ յինքեանս կրեալ ունէին վիրիսաոս յընդունարանս սեռնեի հոգւոց իւրեանց, որ ոչ միայն ի ժամ աղօթից և յեկեղեցւոջ, այլ և ի խցի ժուժկալեալ արդելուին զինքեանս, պարապելով յաղօթս և ի խոսակցութիւնս Աստուծոյ**, և յընթերցումն սուրբ գրոց, զաղօթս արարեալ կերակուր, և զարտասուս ըմպելիս:

Եւ Հոգին սուրբ՝ որ քննիչ է խորոցն Աստուծոյ՝ և վերակացու տնտութեան իմաստից գրոց, բանայր առաջի մաքուր մտաց նոցա զգրունս գիտութեան, և խնդամուտ առնէր զնոսա շաւղաց գրոց, որով լուսաւորեցան ինքեանք, և լուսաւորիցին զմնացեալսն և նոքօք՝ զաշխս Հայոց Քանզի մինչև ցայս վայր սպիտութեամբ խոպանացեալ և կորպացեալ էր սիպս Հայոց, և ոչ միայն ոչ ընթեռնուին, այլ և ոչ զգիրս գիտէին, և ոչ զպօրութիւնս գրոց. վասն զի անպիտանացեալ էր զիրքն յաչս մարդկան, և իբրև զկռճեղս փայտից անկեալ յանկեան ուրեք՝ լցեալ հոգով և մոխրով: Եւ իբրև սոքա մարին ընդ չծով ծառայութեան առաքինի գործոց, յօժարութեամբ ընթեռնուին զգրոս և կամակար մտօք կրթէին զինքեանս, գործովք կատարել զընթերցեալն բանիւ. վասն զի անդրկբայ մտօք հաւատային գրոց բանիցն՝ թէ Աստուծոյ պատգամք են: Եւ սոքա երկոքին արքս վերոյասացեալ արամբքն, գորոց անուանս յիշեցաք, վարդապետաց և եպիսկոպոսաց, սկսան յընթերցմանէ և յուսուցանելոյ գրոց վերատին նորոգել և յարդարել զամենայն կարգս բարիս, անապատաց՝ և վանօրէից, և ժամատեղաց՝ օգնութեամբ և օժանդակութեամբ Հոգւոյն սրբոյ, որ վերակացու է խորոց իմաստից գրոց, բանայր, և յայտնէր, և ծանուցանէր առաջի տնտութեան մտաց նոցա զիմաստութիւն, և զուղիղ կարգս, որում ի խնդիր էին:

Որով սահմանեցին՝ թէ պարտ է անապատաւորաց միայն կալ՝ և ժուժկալ ի խցի. և պահել զմիաս և զխորհուրդս սուրբս ամենայն անմաքուր մտածութեանց հոգեկանաց և մարմնականաց. և թողուլ զկամս իւր և լինել հնազանդ և կատարող կամաց առաջնորդին, և ոչ լինել ումեք սատցուած առանձին, այլ ամենայն ինչ հասարակաց լինել. և առաջնորդն հոգասցէ զամենայն եղբարց պէտսն, և բաշխեսցէ ում և պիտոյասցի. և ինչ ոչ ունել ի խցի՝ և կամ ուտել. և հանապազօր ի տարին պահօք անցուցանել, բաց ի շաբաթէ և ի կիրակէ և ի տէրունական տօնից: Եսպատ հրաժարեալք ի գինւոյ և ի մսոյ. և յամենայն աւուր յայդն և յեկեղեցին խոսսովանիլ անխափան զանցսատծս և զմտածութիւնս աւուրն. և յամենայն շաբաթ օր և ի կիրակի օր, և ի տէրունական աւուրս զգիշերն պաշտամամբ անցուցանել մինչև ցառաւօտն, և ի սոյն

* Գաղա., Ջ, 14 ** Ա. Կորն., Բ, 10

2 Գն ի յընդունարանս
3 ԳԴն սննեկին ոգւոյ Ն չիմ և
5 Ա. սրբոց
8 Ա. մաքուրց
9 Բ և որովք
13 Ի անպիտացեալ էր
16 Ա. առաքինեաց Ա. կամակարիւք
18 Ա. անդրկբայիւք Ա. բանից
19 ԸԳԴ գանուանան Ն գանուանս
20 Գ ի յընթերցմանէ Ե ի յընթերցմանէ
21 Ա. զամենեսեան
27 Գ յամենայն
27-28 Ա. ամենից անմաքրից
29 ԱԴԻ լինիլ ... լինիլ
30 Ա. ամենեցուն ԱԴԻ լինիլ
32 Ի ունիլ
33 Ի կիւրակէէ
33-34 Ա. տէրունականաց
35 Ա.Ի գյանցսատծս

աւուրս անխափան մատուցանել պատարագ. և հաստարակ ամենևքեան մնծք և փոքրքք, ի միասին գալ ի մարմնաւորաց գործոց կաշնական, և ի անդանան մարմնաւոր, և ի տեղի ազօթից, և իւրաքանչիւրոց առանձին ունել զմարմնաւոր կիրակուրն, և ի մնծէ մինչև փոքրունս միաչափ սոյնպէս և զբաժանելն մրգոց՝ միաչափ։

Այլ և զորպիսութիւն և զձև զգեստուցն պարին ի պրոց, զբուսիթայն, որ է զխոյ ծօփին, և զբատակուսին[81], և զսաքմնն, և զպսպխան, որ է մաղևղէնն, ի ներքոյ զգեստուցն ի վերայ մերկ մարմնոյն, և հաստարակ ամենեցուն զգեստ բովանդակ աստեղէն լիցի՝ և ոչ բամբկեղէն. և զատուեղէն շապիկին երկայն պճղնաւոր առնել մինչ ի յոտն. և զօտի մաշկեղէն։ Եւ սահմանեցին ամենեցուն թէ իւրաքանչիւր որ իւրովք զգեստուքն շրջեսցի, եթէ միայնակեաց իցէ՝ քուսիթայիւն և քառակուսովն. եթէ երէց իցէ՝ փիլոնաւն, եթէ սարկաւագ իցէ՝ փիլոնաւն և վեղարաւն։ Այս կրօնաւորական զգեստ ամենեքին անշնար լնալ էր, և այժմ սոքա գործ, իսկ վեղար և փիլոն թէպէտ զոյր, այլ միայն ի ժամ ազօթիցն զգենուին, և զկնի արձակման ժամուն ի բաց հանել յինքեանց, և իբրև զաշխարհականս շրջիլն։

Այլև զկարգ ժամատեղեացն սահմանեցին, զառաջին ժամ զիշերոյն պաշտամամբք կատարել ի սէրմնի աւուրն, նշանակաւ «Յիշեսցուք» այլովքն. և երիս կանոն ասղմոս և ի վերջն կանոնադրութիւն ձայնիւ. և հանգստեան շարականն և աւետարան, պաշտօն վանն ննջեցելոց. և օրհնութիւն ըստ խորհրդոյ աւուրն, և ի վերայ՝ քաղուածք շարականաց. և «Թագաւորք» և «Ալէլուք» ձայնիւ. նոցին զկնի ընթեռնուլ ղյայսմաւուրք, և ի վերայ նորա շարական ըստ պատշաճի ճաւին, որ ընթերցաւ. և զկնի երիս կանոն ևս սաղմոս. զհետ նորին «Հարցն» իւրովք սաղմոսովն. և զԱրևելից ժամն իւրով կանոնաւ սաղմոսովն. և զկնի առաւօտու ժամուն, և երեկոյի ժամուն, չիտ արձակելոյն՝ պիտ խրատականս ընթեռնուլ յամենայն աւուր։ Եւ զկիրակէ ժամ ցերեկին, և զվեցերորդ ժամն, և զինն երորդ ժամն, իւրեանց նշանակեալ սաղմոսովն, զատ և որիշ ի միմեանց յիւրաքանչիւր նշանակեալ ժամու ասէին. և զկնի պատարագին սուրբ մատուցանէին. և զարարողութիւն պատարագին՝ գործք և սարկաւագօք, և իւրաքանչիւր որ իւրովք նշանակեալ զգեստուքն. ամենևքեան խոստովանեալ և ապա զգեստաւորեալ, ահիւ և զգուխթեամբ կալ առաջի պատարագին, և մատուր և սրատուչ ազօթել և դիտել ի սրտի՝ թէ զինչ ազօթեն. և խնկբանէ պատարագին մինչև ի վախճան ցընթերցումն, իբրև ճաշեցին աւետարանին, անդադար և անմիջոց հնդուին արտասուս ի մէջ նկնղեցւոյն իբրև զբղխումն ազբերւ։ Եւ զկնի

1 Ա. *զպատարագ*
2 Ի. *մնծ և փոքր* ԲԳՆ *մարմնաւոր*
4-5 Ի. *այնպէս*
9 Ի. *բամբակեղէն*
10 Ա.ԲԳԴԵ *շապիքն*
13 Ա.ԲԳԴԵ *երէց*
21-22 Ա. *ննջեցելոց, օրհնութիւն ըստ խորհրդոյ*
23 ԱԴ *զյայսմաւուրք* ԲԳՆ *այսմաւուրք*
25 Գ *իւր սարկաւագն*
26 ԴՆ *իւր* Ն *չիտ իւրով կանոնաւ սաղմոսովն և այս նկնել այրս (էջ 220 տ. 26, էջ 221 տ. 25) (մի էջ պակաս է)*
26 ԲԳ *իւր կանոն* Դ *իւր կանոն* Բ *առաւօտի*
27 Ա. *զգիրս*
32 Գ *իւրով* ԲԳԴ *զգեստովն*
35 Ա. *յբսկսբանէ* ԲԳԴ *յբսկգրնէ*
Ա.Դ *վախճանն* Բ *մինչ ի վախճանն* Գ *մինչ ի վախճան*
37 Գ *նկնղեցւոյն*

պատարագին, ոչ վարդապետի առնուին կերակուր, այլ յԵլեանէն եկեղեցւոյն լուսեացն ընթանային իւրաքանչիւր ոք ի խուցն իւր, մի ընկալեալ շնորհն և զլուսաւորութիւն մատանն՝ զոր ընկալան ի սուրբ պատարագին, մի զուցէ փարատեսցի ի մատաց նոցա, և անդ ևս ի խցին ժամ մի առանձին աղօթիւք անցուցանէին մինչև հանդարտէր բորբոքումն արեան նոցա. և յորժամ հարկանէին զկոչնակ սեղանոյն՝ ապա ամենեքեան ժողովէին ի սեղանատունն՝ և միաձայն նաւէին ի սեղան՝ և ուտէին լուսեացն, և յոչ միանգամ առնուին կերակուր՝ ի բոլոր աւուրսն. և յուտելն զկերակուրն սահմանեցին վերս ընթեռնուլ, մի որպէս քիմք զհամս ճաշակեն, այնպէս և միտք զբանս Աստուծոյ քննեսցեն:

Արդ այս յայտնի կարգ և սահմանք նոցա, զոր վերոյասացեալ վարդապետքն սահմանեցին երկոքին արամբքս, իսկ զծածուկ առաքինութիւնս նոցա՝ զոր ունէին, նա միայն գիտէ, որ քննէ զսիրտս և զերիկամունսն որպէս մարդկան: Քանզի ամենեքեան զարթարեալք էին զանազան առաքինութեամբք, ոմանք ոտնակացութեամբ, ոմանք պահոց պնդութեամբ, ոմանք արթնակացութեամբ, ոմանք արտասուահեղութեամբ, ոմանք լսակացութեամբ, ոմանք հիւանդաց ապաստարութեամբ, ոմանք այլ կերպիւ, մինչ զի ամենեքեան արժանացեալք էին շնորհաց սրբոյ Հոգւոյն, առ որ հաճոյ լինէր սրբանուէր աղօթք նոցա: Որպէս պատմեն վասն տէր Կիրակոսի զայս ինչ: Էր ոմն այր եկեալ յաշխարհէ և լեալ միաբնակեաց, և ի սակաւ ժամանակս կացեալ յանապատին, թէպէտ և խոստովանեալ էր և զհանդերձս աշխարհականի փոխեալ. այլ ոչ էր հաղորդեալ. զի այնպէս էր կարգ անապատին, որ ի կատարել տարւոյն ապա զնորեկս հաղորդէին. և այս եկեալ այրս տակաւին ոչ էր լցեալ զտարին, վասն որոյ և ոչ էր հաղորդեալ. պատահեցաւ սմա հիւանդանալ և անհաղորդ մեռանիլ, և սորին անհաղորդ մեռանիլն՝ խղճմտանք մեծ եղև ի վերայ անապատաւորացն և ոմանք կամեցան յայնմ աւուր թաղել զնա: Իսկ տէր Կիրակոսն պատճառէր, և բարւոյս չօդէր. և ոչ թողոյր ի թաղել, և ասէր թէ՝ այրս այս եկն առ մեզ՝ և եկաց յայսքան աւուրս՝ և ոչինչ օգտեցաւ ի մէնջ, և արդ անհաղորդ ևս մեռաւ: Եւ արդ՝ առանց պաշտամանն և պատարագի թաղէ՞ք զսա, արդ՝ ողորմեցարուք սմա, և պահեցէք այսօր ևս՝ և ի վաղիւն զպաշտօն և զպատարագ արարեալ վասն Հոգւոյ սորա՝ և այնպէս թաղեցէք զդա. և միաբանքն հաւանեցան առնել այնպէս, և ոչ գիտէին զկիրս մտաց տեառն Կիրակոսի: Իբրև էանց գիշերն, և ի վաղիւն տեսին զմեռեալն յարուցեալ և նստեալ, որ խօսէր և շարժուր՝ և յիրուվի եկեալ մահճացն՝ զնոցա չեկեղեցին, և հաղորդեցաւ ի

2-3 Բ *ի խուցս... շնորհն և լուսաւորութիւն*
Գ *ի խուցն ... զի զնկալեալ շնորհն և լու(սաւորութիւնն)*
3 Գ *շնորհն* Ա. *երբոյն*
6 Գ *զկոչնակ*
10 ԱԳ *այնպէս*
11 Ա. *սահման*
14-15 Ա. *զանազանիւք*
16 ԱԳ *պնդութեամբ*
18 Ա. *այլով*
20 Ա. *տեառն* Գ *Կիրակոսին*
24 ԳԴ *զնորեկսն*
33 ԳԴն *պաշտօն և պատարագ*
35 ԳԴն *տէր* ԳԴն *Կիրակոսին*
36-37 ԲԳն *շարժէր*
37 ԱԲն *իրուվի*

սրբոյ մարմնոյ և յարևնէ Տեառն, և գնաց ի տեղի հանգստեան իւրոյ, և ի գալ միւսում դիշերին դարձեալ վախճանեցաւ, զոր տարեալ թաղեցին ի վիրս հղբարցն. զայս պատմէին վտեառնէ Կիրիակոսէն: Եւ այլ բաղում պատմութիւնս՝ արժանի լսելոյ, պատմեն ի միաբերաց անապատին. վասն որ Հոգին Աստուած վկայակոչ էր նոցա:

Եւ էր հոգաբարձու ի մարմնաւոր կողմանէ անապատիս Սարգիս եպիսկոպոսն, և դրոց ուսուցիչ ակն Կիրիակոս, և Պօղոս վարդապետն, և Մովսէս վարդապետն, և Նեղոսէս վարդապետն, և Թումայ եպիսկոպոսն, որք բաղում ժամանակս կացին ի միաբանին առաքս ամենեքեան. և ապա տէր Կիրիակոսն և Թումայ եպիսկոպոսն գնացին յերկիրն Քրզստազս մերձ ի դիւղն Հօչանց, շինեցին անապատ՝ և անդ բնակեցան: Իսկ Սարգիս եպիսկոպոսն մնաց ի նոյն Մեծ անապատին, և համբերութեամբ տանէր ամենայն նեղութեանց եկելոց ի վերայ, մինչև հնաս ի խորին ծերութիւն առաքինական վարուք, զննջեցաւ կատարեալ՝ և զհաւատոն պահեալ փոխեցաւ առաքելական երկիրն կենդանեաց ի նոյն Մեծ անապատին, որ և անդէն կայ թաղեալ պատուական նըշխարք մարմնոյ նորա. որում վախճանն եղև ի թուականութեան միրոմ ՈԿԹ: Իսկ տէր Կիրիակոսն, որ գնաց ի Հօչանց՝ կացեալ անդ կրօնաւորական ժուժկալութեամբ, ի նմին տեղւոջ մերձ ի դիւղն Հօչանց՝ յիւրում անապատին եղև վախճան սորա ի թուականութեան միրոմ ՈՀ. և գնաց առ սիրեցեալն իւր Քրիստոս, որում փափագեալ հանապազ կրէր ի հոգին իւր. և ի նմին տեղւոջ կայ թաղեալ պատուական նշխարք մարմնոյ նորա, ի փառս Քրիստոսի Աստուծոյն օրհնելոյն յաւիտեանս ամէն:

ԳԼՈՒԽ ԻԲ

ԱՅԼ ԵԻՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՍՈՅՆ ՄԵԾ ԱՆԱՊԱՏԻՍ

Շարադրեսցուք վասն սոյն Մեծ անապատիս միւս ևս պատմութիւն. զի յետ շինութեան անապատիս, իբրև անցին ի վերայ ամք քառասուն և հինգ կամ աւելի, արևմտեան կողմն անապատին, զետինն պատուհասեաւ ընդ կողմն հիւսիսի, և էհաս մինչև ի կողմն արևելից մինչ ի հանդիպոյջ լեռնաւէտին: Իսկ յարևմտից կողմանէ անցեալ զգիւրնմանօքն, էհաս մինչ ի լեառն արևմտեայ կողմանն, և այնքան

1 ԲԳԴՆ սուրբ Գնաս յարևնէն
3 ԲԳՆ զտէր ԿիրիակոսԳ զտէր Ա. զայլ
9 ԲԳԴՆ որ
11 Ա. վանապատ
13 Ա. ամենից
14 Ա. առաքինականիք
16 Ա. մեծի
16-17 Ա. նշխար
18-19 Ա. կրօնաւորականաւ
19 Ա. և ի նմին տեղւոջ
20 ԲԳԴՆ վախճանն
21 Գ առ Քրիստոս ԲԳԴՆ փափաքեալ
22 ԱԳ ի յոգին
23 ԱՏ նշխար ԲԴՆ չիՔ սաստուծոյն
23-24 Գ չիՔ օրհնելոյն յաւիտեանս ամէն
26 Ա. մեծի
27-28 ԱՏ չիՔ Շարադրեսցուք վասն սոյն մեծ անապատիս միւս ևս պատմութիւն. զի յետ
28 ԱՏ Զկնի շինութեան Բ շինութեան մեծ անապատիս Բ ամք
32 Ի հնաս վխ էհաս

պատուհասս լայն և ընդարձակ և խորագոյն, պէ՛ս թէ հզն և ձի և այլ անասուն դիպ լինէր անկանիլ ի խորափոս պատառուածին՝ ոչ կարէր ելանել. այլ և բաց ի սմանէ այլ ևս պատառուածք այսր և անդր յոլով լինէին օր յաւուր: Եւ յայսմ պատճառէ երկիւղալից կացեալ անկաւ ի սիրտս բնակչաց անապատիս, թէ գեհենն յորոյ վերայ շինեալ կայ անապատն՝ սահելոց է ի տեղւոջէ իւրմէ: Նաև սմենայն գազանքն, որք անդ պատահէին, ի տեսանելն պատառուածն զայն, զնոսն վկայէին:

Իբրև եհաս Մուսականն մեր Ծէկ. և յԱպրիլ սմին, եղև անձրևային զարունն այն, և այն պատառուածքն սկսան օր յաւուր լայնանալ, և Հաւատացեալ Հաւատացեալս ի սիրտս սմենեցուն՝ թէ այսօր կամ վաղիւն սահել Տանելոց է սատրակայ գեհին անապատիս: Եւ եղև յաւուր աշխարհամատրան կիրակէին, որ էր ապրիլ ամսոյ քսան և հինգ, ընդ Ժամանել ի ժամ երեկոյին՝ մեզ ի մուտս արեւուն, սկսաւ պատահիլ գեհենն ի Հարաւայնոյ կողմանէ անապատին ի բարձրել ի լեռնէ անտի, և իբրև զմրրկեալ սմպ դիմեալ զայր ի բարձանց լերին, սհադին գրգռմամբ և թնդմամբ, և որոտմամբ, և ճայթմամբ, իբրև զորոտումն կայծակնացայտ ամպոց, և այնքան սհադին էր որոտումն և թնդումն, մինչ զի սմենայն բնակիչք Շինահայր գեղջն, և Հալիճոր գեղջն լուեալ զձայնն, և երեալք յանդիմանակայ տեղւոջէ գեղն իւրեանց տեսանէին զարհաւիրն զայն: Զի յաւետենից Հաստատաւոյց լեռնական վէմք պատառեալք յինքեանց, ի մէմեանց ի բաց արձակեին, և ի սկզբանց կատուցեալ վէմք՝ որք հիմն էին գետնոյն, հատցեալ ի վեր գային յերեսս գետնոյն, և յոլով ժամանակաց ծառք և տունկք սմենայն, եթէ ընկուզի, և թէ կաղնի և ընդ նոսին մեծամեծ վէմք՝ զառ ի առատս սուգեալ ի ներքս յանդունդս կլեալք աներեւութանային: Եւ մեծամեծք վէմք հատեալք ի լեռնէն և գլխի մէմեանց հոլովեալ գային ի վայր, որոց ի բախիլն ընդ մէմեանս փշրեալ և խորտակեալ ի բաց ցնդէին. և ուժգնութիւն սոցին բախմանցն թնդումն առատիկ առնէր սմենայն վայրացն, և ձայն գոռալոյ և որոտման սոցա խլացուցանէր լսելիս՝ և որոտմանս առնէր զամենեսեան:

Եւ որովհետև երեկոյանալ էր օրն և սակաւ մնացեալ ժամ առաջին, և այն ևս էանց և ժամանեաց գիշերն ի վերայ, սկսաւ անձրև թո-

2 Ա.Ի անկանիլ Ա. ի խորափոս ԱԳԴՆԻ պատառուածին
4 Ա.ՐԴ օր աւուր Ա. յայսմանէ
6 Ա. ամենեքեան
7 Դ անառ Ր ի տեսանել
10 Ա.Ի չիք այն (պատառուածքն) սկսան Ա.ԲԳԴՆ օր աւուր
13 Ի կիւրակէին
15 ԲԳԴՆ Հարաւային
15-16 Ր անդի
16 Ա.Դ չիք և
18 Ա. կայծակնացայտից
19 Ա. ամենեքեան
20 Ա. յանդիմանակայէ տեղւոջէ Ի տեղւոջ
21 Ա. լեռնականք
21-22 ԲԳՆ պատահել
22 Ա. յսկզբանց կատուցեալք՝ ԲԳԴՆ յբսկզբանց
23 Ա. հիմունքն Ա. հատցեալք
24 Ա. գետնոյ Ա. յոլովից
24-25 Դ եթէ ... եթէ
25 Ա.Դ մեծամեծք
26 Ա.ԲԳԴՆ ի յանդունդս Ա.ԳԴՆ կլեալ՝ ԲԳԴՆ մեծամեծ
27 ԲԳՆ Հատեալ ԳԴՆ չիք և (գկնի)
28 ԲԳՆ ի բախիլն Ր ընդ միմեանց
29 Ա. ամենից

բիլ և լինել սաստիկ մթնապշնր, այնքան պի և առ ընթերակայ կացեալքն զմիմեանս ոչ տեսանէին: Եւ ամենայն բնակիչք անապատին ելին յանապատն. և գնացեալ ժողովեցան յարեւելեան կողմն անապատին՝ ի քարեայ լեառն, և անդ պետեղեալ վառեցին լապտերս և մեծամեծ մոմս, կային արթնիկ պահպանմամբ, և մնային կատարածին, և ըղձային լուսոյ առաւօտին:

Բազումք համարեցան ի՛ր անապատն միահոգւոյն քանդեցաւ ընդ այլ սահեալ գետնոյն, բայց արարչական խնամք զմեծին Անտոնիոս հայեցեալ ի մշտապատրաստ մաքառանս ոգորմելի եղբարցն՝ ոչ միոյ իսպառ աւերիլ, այլ սակաւ. քանզի արեմտեան կողմն անապատին, պարիսպն և հիւրատունն, և ախօռք անասնոցն, և համբարանոցքն, և մասն ինչ ի սենեկէ եղբարցն, և արեմտեան կողմն մեծ եկեղեցւոյն՝ չետուստ կուսէ արեմտեան սեանցն, որքա ամենեքեան աւերեցան:

Եւ յայժ ահագին և ահընկէց էր գործեցեալ իրն, քանզի որպէս լեռնացեալ կոհակք ալեաց ծովու՝ որք պահեն միմեանց սահեալ ընթանան, սոյնպէս և հասատահիմ վէմք քար և հող վայրացն այնմիկ եղեն: Զի ի սրտէ լեառն, յորոյ վերայ Թանահասի վանքն կայ շինեալ, ի խորոց անդնդոց բնական վէմք լերինն սկսան պատառիլ, և հողով և խճով և մեծամեծ վիմօք՝ իբրև զառուս եկեալ զառ ի վայր հոսէր. և ի վերուստ եկեալ հոսինն՝ իւրոյ բռնութեամբ և ուժգին հոսմամբն պիւր առաջի վայրսն ի բնական տեղւոյն ի բաց ոստուցեալ, առեալ ընդ իւր ի միասին ելկնի միմեանց ընթանային իբրև զյորձանս ծովուց և էջս առնելով: Եւ այսպէս սահելով գնացին և հասին ի գետն մեծ Որոտան, որ ի մէջ ձորոյն անցանէ, և արգելին զգնացս ջուրցն իբրև ժամս ութն. և ջուր գետոյն, որ ի վերուստ իջանէր, եկեալ ծովացաւ և լցաւ տեղին, և ապա ի կոզմանէ ինչ եգիտ ինքեան զտեղիս գնալոյ՝ և գնաց և քարինքն և հողքն, որք արգելան չկար գետոյն, եղեն բլուր մեծ:

Իսկ գերեզմանատունք անապատաւորացն էր յարեմտեան կողմանէ անապատին, և ընդ հոսել վայրացն այս գերեզմանատունքս ևս հասարակ միահոգւոյն ամենեքեան ի միասին, խորագոյն և անդնդային յատակաւն իւրեանց ոստեալ և տեղւոջէ իւրեանց սահեալ գնացին բազում հեռաւորութեամբ՝ ի վայրի ուրեմն զկայ առեալ կայացան:

1 Ն *լինիլ*
2 Ա. *ամենեքեան*
4-5 Ա. *զլապտերս և զմեծամեծ*
6 Ա. *ըղձանային* ԱԴՆ *առաւօտուն*
8 ԱՆ *խնամ*
9 Ա. *ոգորմելեաց*
11 Դ *հիւրատուն*
12 Ա. *մեծի*
15 ԲԳԵ *զլեռնացեալ ... որ*
16 ԲԳԵ *հասատահիմն*
17 ԱԴ *լերինն* ԲԳԵ *լեառնն*
18 Ա. *բնականք* ԲԳԵ *սկսան*
19 Ա. *մեծամեծիւք* Ն *հոսին*
20 Ա. *հոսանն* Դ *բռնութեամբն* Ա. *ուժգնիւ*
21 Ա. *բնականի* Ա. *շիւ առեալ*
22 ԱԴ *յորձանս*
25 ԲԳԴԵ *ջուրք*
26 ԲԳԴԵ *տեղիքն*
26-27 ԲԳԴԵ *եգիտ իւր տեղիք գնալոյ*
27 Ա. *շիւ և գնաց*
ԲԳԴԵ *հողն* Բ *յարգելան*
29 Ա. *գերեզմանատուն*
30 ԱԲԳԴԵՆ *հոսիլ* Ա. *գերեզմանատունս*
31 Ա. *ամենայն*
32 ԱԴ *իւրով ... իւրմէ* Դ *գնաց*
32-33 Ա. *գնաց բազմաւ*
33 Ա. *կայացան*

Այլ և ի սոյն տեղւոջ էին թաղեալ սուրբ վարպապետն Պօղոս, զորոյ զպատմութիւնն արարեալ եմք յայլում ճառի և Սարգիս պարոնտէրն՝ որոյ սակս յանցեալ ճառիդ պատմեցաք. և Արիստակէս վարդապետն, որ զկնի Սարգիս պարոնտէրին նա եղև առաջնորդ անապատին. և ճգնաւոր և ընտիր և առաքինազործ աբեղայն տէր Բարսեղ. սոքա չորեքեանս առընթեր միմեանց թաղեալք կային, և ի վերայ իւրեանց շինեալ կայր մատուռն. և ի ժամ հոսելոյ տեղւոյ գերեզմանատանցն խնամքն Աստուծոյ իբր զգործ ինչ սքանչելեաց արար ի վերայ սըրբոցս. զի ամենեքին գերեզմանք սոցա ոչ խախտեցան, որ և քարիւք տապանացն ոչ թիւրեցան, այլ զդիրս իւրեանց դէպ ուղիղ ընդ արևելս ընկալեալ կայացան, որպէս և նախկին թաղեալք էին. բայց մատուռն՝ որ ի վերայ սոցա կայր, փլուզեալ ցնդեցաւ։

Եւ ի լինելն այսմ ամենայնի գործոցս սոսկալի՝ խնամօքն Աստուծոյ ամենակալի՝ ոչ ումեք եղև վնաս մարդոյ կամ անասնոյ, այլ միայն եղբայրն ոմն մնաց ի մէջ իւրոյ խղին և անդէն մեռաւ ի ներքոյ հողոյն. զի ընդ սկսանել հոսմանն ի ժամ երեկոյին ոմանք յեղբարցն գնացեալ ազդեցին նմա ելանել անտի՝ զի մի մնասցէ ի ներքոյ հողոյ, և նա ի վաղ ժամանակաց ցանկանալով սպասէր մահու՝ ոչ ելն արտաքս, այլ մնաց անդէն՝ յուսով ակնկալեալ Տեառն, զի թերևս վասն անպարտ մահուան իւրոյ ընկալցի այցելութիւն հոգւոյ իւրոյ ի բազմագութ Տեառնէ Աստուծոյ։

Իսկ միւս այլք բնակիչք անապատին ամենեքեան ժողովեալք էին ի լեառն, որ կայ յարևելից կողմն անապատին, յորդաբուխ արտասուօք և մեծաւ հառաչանօք կոծէին զանձինս, և աղաչէին զԱստուած, զի թերևս զերծցին ի սատակմանէ, և փրկեսցի շինուածք անապատին ի փլմանէ. քանզի յուսահատեալ էին վասն ահագին արհաւրացն եղելոյ, և մինչև ցլուսանալ ի լոյս առաւօտու երկուշաբաթին, իբր զպատուական ոք՝ յերկունս կային։ Իսկ այն՝ որոյ գթութիւնն բնութեամբ է, աղբիւրն ողորմութեան Տէր Աստուած, ոչ միայն զնոսա փրկեաց ի սատակմանէն, այլ և զանապատն ևս ամբողջ պահեաց և ոչ ևթող աւերել. զի ամենազօր Աջովն իւրով անխախտ պահեաց զանապատն, բաց յառաջ ասացեալ աւերելոցն։

Եւ ումն յեղբարց անապատին պատմեաց այսպիսի տեսիլ երազոյ. ասաց թէ տեսանէի զոմն չքնաղատես, մեծաշուք, պայծառ զգեստուք՝ հնձեալ յըսպիտակ երիվար, և կայր ի վերայ տանեաց եկեղեցւոյն,

3 ՐԳ *յաղագոյ փխ սակս* Ե *յաղագս փխ սակս*
4 ԱԳ *շիմ նա*
5-6 ԲՆ *չորեքեան*
7 ԱՒ *գերեզմանատանն*
8 Ա *խնամն*
9 Ր *գերեզմանքս* ԴԳ *քարինքն*
13 ԱԳԴՒ *լինիլն* Ա *այսց ամենից*
16 ԱՐԳԴՆ *հողին* ԱԳԴՆ *սկսանիլ*
17 ԱՐԳԴ *անդի*
18 Ա *վաղուց*
19 ԲՆ *յուսալով*
20 Ա *անպարտի* ԱԳ *զայցելութիւն*
22 ԴԳՆ *այլ* ԲՆԳ *բնակիչքն*
23-24 Ա *յորդաբղխիւք ... մնծօք*
25 ԱԳ *շինուած*
26 Ա *յուսահատեալք* Բ *առհօրանացն* ԵԳ *առհօրացն*
30 ԴՆ *անբողջ*
34 Ա *պայծառիւ զգեստու* ԲԳՆ *զգեստիւ* Գ *զգեստիւք*

որում առաջի ժողովեալ եղբարցն, պատմէին զանցս ահագին վշտացն. իսկ երեսեալ փառաւոր այրն զնոյն երկրորդեալ խօսէր ընդ եղբարցն: Որ և ի կարգս խօսից իւրոց ասաց այրն փառաւոր. «Ես ևս վասն այսմ իրաց կամ և հոգամ, որոյ սակս սակաւ մի ցաւեաց ծունկս իմ, զի զոտս իմ եղեալ դէմ երեսաց քարանձաւիդ զդէմ կալեալ ունէի լինիմ, զի մի փլուզեալ ծածկեսցէ զանապատս եղբայրանոց. և զոր մի ծուլանայք ի գործոց առաքինութեան, և հանապազ զոհութեամբ փառաւորեցէք զՏէր Աստուած՝ որ փրկեաց զձեզ. և ես յուպայն ևս փրկեցէ ողորմութեամբն իւրով. որում փառք յաւիտեանս ամէն»:

ԳԼՈՒԽ ԻԳ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎՄՐԴԱՊՆՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՐՈՒՑ ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՊՕՂՈՍԻ

Սուրբ վարդապետան Պօղոս էր յերկրէն Մոկաց ի գիւղէն՝ զոր անուանեն Բար, եկեալ ի սուրբ և ի մեծահռչակ ուխտն Վարագայ առ Կարապետ վարդապետն, զորոյ զմականունն Ջուգ վարդապետ ասէին. որում աշակերտեալ ուսաւ զամենայն դիրս հին և նոր Կտակարանաց, և իբրև կատարեալ եղև գիտութեամբ և հասակաւ, նա նմա Ջուգ վարդապետն իշխանութիւն վարդապետութեան, և նա գնացեալ ի մէջ քրիստոնէից քարոզէր զպատուիրանս Աստուծոյ: Եւ քարոզելով եկն ի Թարվէզ քաղաք, և անդ ի կիր արկեալ զգործ վարդապետութեան իւրոյ, և յամենայն աւուր քարոզիւ և դասիւ և յորպատառ վարդապետութեամբ լուսաւորէր զժողովուրդս քրիստոնէից՝ որք և պատահէին անդ: Քանզի յամենայն կողմանց եկեալ վաճառականքն, որք գային ի Թարվէզ, իբրև պատահէին լսոյ քարոզութեան սրբոյ վարդապետին՝ մխիթարեալ զուարճանային հոգւով, և օրհնութիւն մատուցանէին Աստուծոյ՝ տուողին այնպիսեաց շնորհաց:

Եւ ինքն Պօղոս վարդապետն էր վարուքն սուրբ և առաքինի, հանապազորդ աղաղոսիւք, և արտասուօք և մաաւոր աղօթարար, որ զգիշեր շաբաթ աւուրն՝ յորում լուսանայր միաշաբաթի օրն, յերեկոյէ սկսեալ յոտին կանդնէր, և մինչ ի լուսանալն հակումն առնէր, և զամենայն շաբաթու դիշեր այսպէս առնէր. զ«Յիշեցարուքն», զԿանոնդպուխն, զ«Ալէլուն» խառնով ասէր՝ հանդիպ ումն կանոնաւ աղաղոսին, և յառաւօտին զփրկական խորհուրդ պատարագին մատուցանէր: Այլ և հրաժարեալ էր ի դինւոյ և ի մսոյ ամենևին, և շաբաթ օր և ի կիրակի

3 Ա. *այդց* փխ *այդմ*
4 ՐԳՆ *յաղագս* փխ *սակս*
5 ՐԳՆ *ընդդէմ ... զդէմ*
7 ԱՐՆ *ի գործոյ*
16 Ա. *զամենեսեան* Ս. *հնոց և նորոց*
18 ՍԴ *զիշխանութիւն*
21 Ս. *յորպառատիւ*
23 Ս. *յամենից*
25 Ս. *մխիթարեալք*
ն զուարճանային Ս. *օրհնութիւն*
26 ՐԳԴՆ *այնպիսոյ*
32 Դ *ումն* ՐԳՆ *կանոն*
33 ՐԳՆ *և ի յառաւօտին* ԱԴՆ *և յառաւօտս*
34 Ն *Կիւրակէ*

միայն հաշակէր ի նաւակատեանց կերակրոց. և զայլ ամենայն աւուրս տարւոյն պահօք կայր. այլ և ոչինչ առնոյր ինչս և զատացուածս յումեքէ, զի անարծաթ քարոզէր։ Եւ թէ տային ևս ժողովուրդքն ինչս, զայն ևս ի պէտս գերեաց և կարօտելոց և ի շինումն եկեղեցեաց ծախէր. այլ և՝ ուր և դնայր ի ճանապարհ թէ հետաւոր և թէ մօտաւոր՝ հետիոտն դնայր, քանզի զգիրս քարոզին և զայլ գրեանս ինքն և աշակերտքն իւր բառնային շալակով՝ և գնային։ Եւ ի Թարվէզ քաղաքի թէպէտ գոյր ժամատուն, բայց տեղի պատարագի ոչ գոյր ի նմա, իսկ սա ի նմին ժամատան շինեաց դեղեցիկ խորան պատարագի։

Եւ ժողովուրդքն յոյժ սիրէին զնա վասն ճշմարիտ վարուց նորա. և վաճառականքն՝ որք էին յերկրէն Գողթանց ազաչէին զնա գնալ յերկիրն իւրեանց ի քարոզութիւն, յորոց մի էր Յղնեցի խոջայ Հայրապետն և այլք ևս բնդ նմա. և զայս բան ի բազում աւուրս թախանձէին։ Իսկ վարդապետն հաճեալ ի բանս նոցա գնաց ի գաւառն Գողթանց, և եկեալ ի գիւղն Ագուլիս։

Կայր անդէն եկեղեցի մի առաքելաշէն զորմէ ասէին թէ՝ սրբոյ առաքելոյն Բարդեղոմէ շինեալն է, որ և յետ բազում ամաց պէտք բանալոյ պրանն, մինչ ևս տեսաք զնա։ Եւ էր դուռն եկեղեցւոյն այնմիկ ի բազում ժամանակաց փինքնին փակեալ առանց նզի և փակագակի, և թէպէտ բազում անգամ աշխատեալ էին և ջանացեալ զի բացցեն, և ոչ էր լեալ հնար բանալոյ, վասն որոյ վհատեալ էին և ի բաց կացեալ, և փակումն դրանս այսմիկ ամենայն որպիսութեամբ պատմեալ եղև վարդապետին։

Եւ յորժամ եհաս գիշեր շաբաթուն ի լոյս միաշաբաթին, եկեալ վարդապետին ըստ հանապազորդ սովորութեան իւրոյ եկաց առաջի փակեալ դրան եկեղեցւոյն՝ զի հակումն արարեալ զգայգապաշտօնն կատարեսցէ։ Եւ կացեալ առաջի փակեալ դրանն սկսաւ ի խորս սրտի իւրոյ ուժգին գոչմամբ և յորդահոս արտասուօք աղաչել՝ և խնդրել ի հեշտալուր Տեառնէ զբացումն դրան եկեղեցւոյն, զի բեկեալ սրտիւ հեղոյր զանձն առաջի Տեառն յորդահոս արտասուօք, զոր բղխէր յաչացն իբրև զաղբիւրս։ Եւ նախ քան զսկսանիլ հակմանն՝ արար դոնաբացէք, և իբրև բազմեաց զդուռն երից անգամ և ասաց. «Բա՛ց մեզ Տէր, բա՛ց մեզ Տէր, բայց մեզ Տէր զդուռն ողորմութեան քոյ՝ որ ողբալով կարդամք առ քեզ»։ Եւ շնորհօքն Աստուծոյ առանց ուրուք մերձենալոյ առ ժամայն փինքնին բացաւ դուռն։ Իսկ որք մերձն կային ի

1 Ն *կերակրոյ* Ա. *ամենեսեան։*
2 ԲԳՆ *կնայր* Ա. *զինչս* ԲԳԴՆ *առացուածս*
3 Ի *չիք ևս (ժողովուրդքն)*
4 Գ *և զայն*
5 ԲԷ *ի մօտաւոր*
9 Ա. *զդեղեցիկ*
10 Ա. *Ճշմարտուց*
11 ԲԳԴՆ *Գողթնաց* Է *Գողթնեաց*
12 ԲԳՆ *Յլղնեցի* Գ *Յլղնեցի*
13 ԲԳՆ *այլս*
14 Ա. *Գողթնեաց* Ն *Գողթնաց (ուղղված է Գողթնեաց)* Է *Գորթնեաց*
17 ԲԳՆ *առաքելոյ շինեալ է։* Գ *առաքելոյ* Ա*է բազմաց*
19 Ա. *բազմաց*
21.22 Ա. *վհատեալք ... կացեալք*
22 Ա. *ամենիւ*
29 Ա. *հեշտալուրոյ* Ա. *բեկելով*
30 Ա. *հորդահոսիւք* Գ *արտասուօքն* Բ *արտասուօքն, զոր բխէր*
31 Գ *զբսկսանիլ* Ն *զբսկսանլլ* Է *՝զսկսանիլ*
31-32 Ա. *զդռնաբացէք։*
32 ԱԲԳՆ *բախեաց*

քահանայից դեղջն և յաշխարհականաց հիացեալ զարմացեալ ապուշ կային, և ասէա եկեալ ի միտս վաղվաղակի ընթացեալ ապղ առնէին ամենայն ժողովրդեանն, որոց ի լսելն՝ թողեալ զտունս և զընտանիս՝ ի խոր գիշերին փութանակի անդր ժամանէին մեծամեծք և փոքունք, և ի տեսանելն՝ օրհնութիւն ի բարձունս վերառաքէին Աստուծոյ: Եւ իբրև բացաւ դուռն եկեղեցւոյն, մտեալ ի ներքս ամենայն ժողովրդեամբ՝ ուրախութեամբ և ցնծութեամբ անդէն ի նմին եկեղեցւոջ սկիզբն արարին պիշերային կարդին, և յառաւօտին մատուցին պիրրկական խորհուրդ պատարագին, և ամենեքեան ի մի բերան օրհնէին զհրաշագործն Աստուած, որ արար զնոսա արժանի այնմ պարգևաց. և հնչեաց հռչակ լրոյս այսմիկ ընդ ամենայն կողմանս գաւառին ի մէջ քրիստոնէից՝ և այլազգաց, և ոմք լսէին հիանալով օրհնէին զԱստուած:

Արդ՝ ի բանալ վաղեալ դրանս այսմիկ, մեծ իմն խորհուրդ յայտնեալ ցուցաւ, քանզի ընդ նմին բացաւ և դուռն քարոզութեան Բանին կենաց յաշխարհս արևելեան, որք ցայն վայր ի խոր խաւարի անգիտութեան նստեալ կային, որպէս թէ ի ժամանակս կռապաշտութեան, եկեղեցականք և աշխարհականք, և որպէս Տէրն Քրիստոս՝ արեգակն արդարութեան ծագեցաւ յաշխարհ, և լուսաւորեաց զամենեսեան հաւատով աստուածգիտութեան, այսպէս և սուրբ վարդապետն Պօղոս զկողմնս արևելեան. վասն զի եբարձ ի միջոյ զամենայն աւելորդ անկարգութիւնն եկեղեցականաց և յաշխարհականաց, և կարգաւարդեալ շքեղացոյց զամենեսեան ուղիղ քարոզութեամբ: Վասն զի չետ բանալոյ դրան եկեղեցւոյն, բացաւ դուռն հաւատոյ աշխարհիս արևելեան, քարոզութեամբ և ամբիծ և անկեղծ վարդապետութեամբ սորա, զի առաքելաբար շրջէր յամենայն տեղիս, քարոզէր զԲանն կենաց, կարգէր զքահանայս. շինէր զեկեղեցիս. և հաստատէր զբարի կարգս եկեղեցիս և ի գիւղս, ժողովէր մանկունսն յուսումն սրբոց պրոց, և ի տեղիս տեղիս հաստատէր դպրատունս, և չիւրոց աշակերտաց կացուցանէր դպրապետս, և զոմանս ի մանկանց զպատշաճաւորս ընդ իւր շրջեցուցանելով ուսուցանէր. որ և ամենեքեան հասին աստիճանի՝ աբեղայ և երէց, բաւական ինքեանց և ժողովրդեան: Եւ յամենայն տեղիս՝ ուր և շրջեցաւ նա, շինեաց զեկեղեցի, քանզի յառաջ քան զնա յամենայն տեղիս ոչ դոյր եկեղեցի, և թէ ուրեք դոյր ևս, և այն ևս անշուք, և անճահ եկեղեցի անուան՝ իրթին և նահիմ, խարխալեալ և

3 Ս. *ամենայնի* ԲԳԵ *ընդդանիս*
5 ԱԴ *զօրհնութիւն*
6-7 Ս. *ամենիւ ժողովրդեամբն* Բ *ժողովրդեամբն*
8 ԲԳԵ և *ի յառաւօտին* ԱԴԼ և *յառաւօտուն*
10 Ս. *այնց* Գ *պարգևացն*
11 Ս. *ամենեսեան*
15 Ն *քարոզութեանն*
16 ԲԳ *որ*
21 ԲԳԵ *գկողմս*
22 ԲԵ *անկարգութիւն* Գ *անկարգութիւնս*
23 Ս. *ուղիւ*
25 Ս. *ամբծիւ և անկեղծիւ* Գ *անբիծ* ԲԳԵ *վարդապետութեամբն*
26 Ս. *յամենեսեան*
27 ԲԳԵ *քահանայս* ԲԳԵ *եկեղեցիս*
28 Ս. *զմանկունս* ԲԳԵ *մանկունս ... սուրբ*
30 Ա. *զդպրապետս* Ս. *ի մանկաց*
32 Ա.ԲԳԵ *էրէց է երեց* Ս. *յամենեսեան*
33 ԲԳ *եկեղեցի*
34 Ս. *յամենեսեան*
35 Ս. *անուն* ԴԵ *խարխարեալ*

բլբլկալ, լցնալ հողով և մոխրով, որոց ձևն և դիրն թիւր և թևք։ Իսկ սա ուր և հասանէր, հիմնարկէր եկեղեցիս՝ պատշաճաւոր ձևով դէպ ուղիղ ընդ արևելս ունելով զդիրս՝ դեղեցիկ շինուածով խորանքն. և լուսամուտքն՝ և կաթուղիկէն և այլքն ամենայն։

Եւ ըստ այսմ սարսափ քարոզելով և զեկեղեցի շինելով, հասս մինչ ի դիւղաքաղաքն Աստապատ, և նախ զնոցին վանքն շինեաց՝ որ յանուն սրբոյն Ստեփաննոսի նախավկային է՝ ամուր պարսպով, և երկաթապատ դրամբք. և չետ աւարտմանց վանիցն՝ սկսաւ զգեղջն եկեղեցին շինել ըստ թախանձանաց ժողովրդեան գեղջն, և վասն զի եկեղեցին փոքր էր, և ոչ էր բաւական տանել զժողովուրդն, զի բազում էր ժողովուրդն. ընդ որոյ կամեցան ի խցերոյն, որք շուրջ զեկեղեցեան էին, քակել և խառնել յեկեղեցին, զի մեծասցի։ Իսկ աբեղայքն՝ որք բնակէին ի գեղջն և էին տեարք խցերոյն, խոժոռեալ ըմբոստացան. և ոչ թողուին քակել զխցերն, բայց ժողովրդոցն ոչինչ փոյթ առարին զամբոխմանէ նոցա, այլ դիմեալք ի վերայ քակեցին զխցերն։ Եւ որ դժուարեալ աբեղայիցն՝ գնացեալ ի վանքն առին զեպիսկոպոսունն և եկին ի գիւղն և արարին աղմուկ մեծ, և բանս անպատշաճս ասէին վարդապետին։ Իսկ սրբոյն բերեալ յինքեան զնմանութիւն ճըշմարիտ հեղոյն Յիսուսի, խորհելով ի մտի, թէ հալածեսցին զձեզ ի քաղաքէ յայսմանէ՝ փախիչք ի միւսն*. վասն որոյ զանխուլ յամենայնէ ելեալ ի գիշերի լռելեայն հետևեցաւ գնալ յայլ գիւղ։ Իսկ ժողովուրդքն իբրև զգացին զգնալն վարդապետին, յայնժամ դիմեալ ի վերայ աբեղայիցն, հարկանելով քարիւ և փայտիւ արտաքս վարեցին ի գեղջէն, և վաղվաղակի ընթացեալ զկնի վարդապետին՝ բազում աղաչանօք դարձուցեալ զնա ածին ի գիւղ անդր. և սկսան շինել զեկեղեցին լայն և ընդարձակ՝ և բարձր շինուածով, և կաթուղիկէ ի վերայ յօրինեալ նոյնպէս և զայլ յարկս տանցն և զպարսպին։ Իսկ աբեղայքն և եպիսկոպոսունքն իբրև տեսին թէ՝ ինքեանք ոչ կարացին ինչ ստնանել վարդապետին, գնացեալ ի Դարաշամբ և զամենայն եպիսկոպոսունս Նախավկայի վանացն միաբանեալ՝ ընդ ինքեանս առեալ եկին ի վերայ վարդապետին, ըստ օրինակի Թագաւորացն Ամաղեկայ՝

* Հմմտ. «Եւ յորժամ հալածիցեն զձեզ ի քաղաքիս յայսմիկ՝ փախիչք յայլ, և ասէ յայնմանէ հալածիցեն զձեզ՝ փախիչք ի միւսն։ Ամէն ասեմ ձեզ, ոչ սպառեսջիք զքաղաքս Իսրայէլի՝ մինչև եկեսցէ որդի մարդոյ։ Մատթ., Ժ, 23

1 Ա.Ն՝ որով
2 ՐՆ հիմնարկէր ԱԴ զեկեղեցիս Ս. պատշաճաւորիւ ձևով
3 Ա. գեղեցկիւ
4 Ս. ամենեքեան
5 ԲԳԴՆ եկեղեցի
7 Ա. ամրիւ Ա.Ն՝ պարսպիւ Ա. երկաթապատիւք
8 ԲԳԴՆ դրամբ ... աւարտման
10 Ա.Ն՝ տանիլ
11 Ա. ի խցից
13 ԲԳՆ ի գեղն Ա. ի խցից Ա. խոժոռեալք
14 Ա. զխուցսն
14-15 Ս. զփոյթ արարեալ Գ արարեալ
15 ԲԳԴ և քակեցին Ա. զխուցսն
16 Բ գնացին
17 Ա. զաղմուկ Ա. և զբանս
18-19 Ս. ճշմարտի
20 ԲԳՆ ի քաղաքէս
24 Ա. բաղմօք
25 ԲԳՆ ի գեղ
26 Ա. բարձու Գ կաթողիկէ
27 Ա. պարսպին։ Գ զպարիսպսն
29 Գ չիք և Ա. զամենեսեան
30 Ա.Դ միաբանեցուցեալ
31 Բ չիք վերայ

որք միաբանեալ եկին ի վերայ զօրավարին Աստուծոյ Յեսուայ. բայց որպէս նոքա անդ պարտեալ գտան, այնպէս և սոքա առ*. վասն զի թէպէտ բազում անգամ հակառակեցան վարդապետին, այլ նա ամենևին ոչ լքաւ ի բարւոք յառաջդիմութենէն։

Իսկ միաբանեալ աբեղայքն առաւել ևս դրդեալք ի նախանձուէ՝ գնացին առ Մելքիսէթ կաթուղիկոսն, որ պիշխանութիւն կաթուղիկոսութեան զաբալաւ առեալ էր ի Պարսից թագաւորէն, և այնքան դրդեցին զնա ի բարկութիւն՝ մինչ զի բազում անգամ առաքեաց առ վարդապետն բանս սպառնականս և յանդիմանութեան. թէ ելցես յերկրէս մերմէ, և գնասցես յերկիր քո՝ ուստի եկեալ ես, զի ոչ է պիտոյ մնալ խաբեբայ և նորահանուկ քարոզութիւն քո, և ոչ կնճռաւոր վարքն քո, ապա թէ ոչ, առակ նշաւակի, և այսպն կատականաց լինիցիս ի ձեռն իմ։ Իսկ վարդապետն բնաւ ոչինչ աւնէր փոյթ զայնմանէ, վասն զի յոյս նորա հաստատուն էր ի Տէր, այլ հանապազ շրջէր, և քարոզէր, և շինէր զեկեղեցիս, և յարդարէր զամենեսեան ուղիղ կարգօք և սահմանադրութեամբք։

Իսկ յետ ամաց ինչ անցելոց՝ կաթուղիկոսն Մելքիսէթ և վարդապետն Պօղոս պատահեցան միմեանց ի Նախշուան քաղաքին, և կաթուղիկոսն զթոյնս և զմաղձս դառնութեան՝ զոր ի բազում ժամանակաց մթերեալ ունէր ի սրտի, յայնժամ ժայթքեաց ի վերայ վարդապետին։ Եւ յետ բազում յանդիմանութեանց և կշտամբանաց և անպատեհ բանից՝ զորս խօսեցաւ կաթուղիկոսն յերեսս վարդապետին. և զայս ևս ասաց թէ՝ զամենայն եկեղեցիսդ, զոր դու շինեցեր, ի վերայ քումդ գլխոյ քակեցից։ Եւ հրամայեաց նմա ելանել յայսմ աշխարհէ, և գնալ ի տեղի իւր. և թէ այլ ևս յամի, այնուհետև մատնի ի ձեռս աշխարհակալ իշխանաց. և ոչ ոք գոյր օգնական ի կողմանէ վարդապետին, ոչ եկեղեցական և ոչ աշխարհական, վասն զի ամենեքեան երկնչէին ի կաթուղիկոսէն, զի թագաւորական իշխանութեամբ վարէր զկաթուղիկոսութիւնն։ Յաղագս որոյ անճար լեալ վարդապետին, ելեալ ի Նախշուանայ գնաց ի գիւղն Շամբ, զի գնասցէ ի տեղի իւր, և ըստ հանապազորդեան սովորութեան իւրոյ, որ ի մէջ գիշերի աղօթէր վարդապետն, և յայնմ գիշերին՝ յետ աղօթիցն խթեաց ի կողս աշակերտին՝ և զարթոյց զնա, զարթեան և այլք ոմանք ևս, սկսաւ հարցանել ցնոսա թէ, զինչ բարւոք թուի ձեզ, արժանալ ընդդէմ փորձութեանս, և դիմակայիլ խռովութեանս այսմիկ և քարոզել զԲանն կենաց, թէ տեղի տալ և հեռանալ ի շփոթէ սոցա։ Իսկ աշակերտացն տուեալ պատասխանի. «Դու ինքնին տեսանես զխաւար անգիտութեան,

* *Նլք, ԺԷ, 8—16*

7 Ս. *զաբալայիւ*
11 Բ *չիք և*
14-15 Բ *և քարոզէր, շինէր զեկեղեցիս*
15 ԴՆ *եկեղեցիս* Ս. *ուղղիւք*
18 ԱԴՆ *քաղաքի*
21 Ա.Ն. *բազմաց*
21-22 Ս. *անպատեհից*
22 ԲԶ *զոր*
23 Ս. *զամենեսեան* ԲԴՆ *եկեղեցիքդ*
24 Ս. *քոյ գլխոյ* Ն *գլխոյ քոյ* Ս. *յայսմանէ*
24-25 Ն *յայսմ յաշխարհէ*
26 Ս. *աշխարհակալաց*
28 Ս. *թագաւորականաւ*
31 Դ *ի գիշերին*
35 Ս. *չիք և (դիմակայիլ)*
37 Ս. *զպատասխանի*

թէ որպէս սիրեալ է ի վերայ ժողովրդեանս, և զայն ևս թէ, որպէս նոքա Տէր զդուն քարոզութեան. քանզի զոր ինչ և քարոզես՝ վաղվաղակի արդիւնանայ։ Արդ՝ մի գուցէ վհատիցիս, զի Տէր Աստուած ձեռնտու է քեզ, պարտ է քեզ արիանալ և համբերել փորձութեան վասն օգտի ժողովրդեանն և քարոզել զբանն կենաց»։

Իբրև ընկալաւ զքաջայերս զայս ի նոցանէ սուրբ վարդապետն՝ յայնժամ ասէ ցաշակերտան իւր. «Արդ՝ որդեակք իմ, որովհետև այդպէս ասացիք, պարտ է մեզ դնալ առ թագաւորն և առնուլ ի նմանէ հրաման վասն շինութեան եկեղեցեաց և ես ակն ունիմ ի տեառնէ՝ զի տացէ թագաւորն զխնդիրս մեր. արդ՝ եթէ առնումք ի նմանէ զհրամանս զայս՝ քաջութեան անուն է մեզ, և թէ սպանցեն զմեզ, վարձս բարեաց ընդունելոց եմք ի Քրիստոսէ ընդ վաստակաւոր ծառայից նորա». և աշակերտացն ևս զկայնալ, թէ յոյժ բարի է այդ խորհուրդ։

Եւ նոյն ժամայն ի նմին զիշերի յարուցեալք եկին ի Շամբայ՝ անցին զգետան Երասխ. և հետևեցան ի դնալ առ թագաւորն, որ էր ինքն առաջին Շահաբասն, վասն առնլոյ ի նմանէ հրաման շինելոյ եկեղեցի։ Եւ յետ աւարտման կանոնի սաղմոսին, որ ասէին, զճանապարհայն՝ մինչ երթային, պատահեցաւ լինել քարոզն այն որ ասէ. «Վասն ուղղելոյ զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան զտէր աղաչեսցուք» և միւս տունն որ ասէ. «Վասն խորտակելոյ զհակառակորդն վաղվաղակի ընդ ոտիւք մերովք զտէր աղաչեսցուք»**։ Յայնժամ՝ ասէ վարդապետն ցայնոսիկ, որք ընդ նմա էին. «Տեսէք որդեակք իմ, զի ուղիղ է ճանապարհս մեր ըստ սկզբան սաղմոսիս, որով առաւել հաստատեցան և ուրախացան, և մեծաւ յուսով երթային։*

Եւ եղև իբրև հասին ի գաւառն, զոր Արազբար ասեն՝ և ի տարաժամել աւուրն մտին ի գիւղ մի այլազգեաց առ ի օթել զգիշերն զայն, և տեսին՝ զի այր ոմն մահմետական հաւատով՝ եկն ընդ առաջ նոցա՝ աղաչէր և ասէր. «Խնդրեմ ի ձէնջ վասն Աստուծոյ՝ մի գարշիլ յայլազգութենէ իմմէ, այլ խոնարհիլ յաղաչանս իմ, և գալ ի տուն իմ, զի հիւրընկալ եղեց ձեզ. քանզի ուխտեալ եմ Աստուծոյ, զի յայսմ աւուր առանց հիւրի ոչ ճաշակեցից ինչ. և մինչև ցարդ սպաս կալեալ կամ ի մէջ շինիս, և նայիմ վասն հիւրի, և արդ՝ ղձեզ առաքեաց Աստուած, վասն որոյ յօժարութեամբ խնդրեմ զգալն ձեր ի տուն իմ»։ Իսկ երանելւոյ վարդապետին տուեալ ցնծութեամբ պատասխանի առնն, և ասէ. «Այդպէս եղիցի որպէս ասացերդ, երթիցուք ի տուն քո»։ Եւ զգիշերն զայն օթեցան ի տունն առն այնորիկ. և այսր յոյժ

* *Սաղմ., ե, 9*
** *Սաղմ., ե, 11*

5 ԲԳԴՆ *ժողովրդեան* Ա *քարոզելոյ*
8 ԲՆ *ասացէք*
9 Ա. *զհրաման*
12 Ա *վաստակաւորաց*
16-17 Ա. *զհրաման ... զեկեղեցի*՝ Դ *զեկեղեցի*
17 Ա.Դ *զոր փխ որ*
18 Ա.Դ *լինիլ*
20 Ա.Դ *չիք միւս տունն, որ ասէ*
21 Ա.ԲԴՆ *չիք աղաչեսցուք* Գ *զտէր Աստուած*
22 ԲԳՆ *որ փխ որք*
25 Ի *Արազբար*
27 ԲԳ *որ եկն* Գ *հաւատովն*։ Ն *հաւատովն որ եկն*
30 ԲԳՆՆ *եղէց*
31 Ի *ճաշեցից*
34 ԲԳՆՆ *երանելոյ* Ա. *զպատասխանի*
36 Ա *ի տուն առնն* ԲԳՆ *ի տուն առնն այնմիկ*

բարւոք սպասաւորեաց նոցա ամենայն սիրտոյիւք և հանդուցանելով. և յառաւօտին մինչ կամեցան ի գնալ՝ նկեալ այլազգին աղաչէր, խրնդրէր և ասէր թէ՝ «Ոչ դոյ ինձ զաւակ և չիշատակ յերկրի, խնդրեմ ի ձէնջ առնել զաղօթս վասն իմ. որպէս ղի լիցի ինձ զաւակ, քանզի կին իմ ամուլ է»։ Իսկ սրբոյ վարդապետին համբարձեալ զմշտաստարած ձեռն ի յերկինս, և անդառնալի աղօթիւքն խնդրեաց յԱստուծոյ տալ նմա ղզաւակ. իսկ հեշտալուր Տէրն՝ որ խոստացաւ ծառայից իւրոց, թէ զամենայն զոր ինչ խնդրիցէք հաւատով՝ առնուցուք*, աղօթիւք սրբոյ վարդապետին պարգեւեաց առնն այնմիկ զաւակ, որպէս և յայտնեաց նոյն այրն։ Քանզի չետ անցանելոյ ժամանակաց ինչ, այլազգի այրն այն եկեալ պատարագօք մատուցանէր ընծայ առաջի վարդապետին, երկիր պագանէր, պոհանայր և շնորհս խոստովանէր զնմանէ, թէ աղօթիւք քո շնորհեաց ինձ Աստուած զաւակ, արդ՝ խնդրեմ զի աղօթեսցես, որպէս զի պահեսցէ զնա Աստուած ընդ երկայն աւուրս, և սրբոյ վարդապետին աղօթս արարեալ ի վերայ նորա, և մխիթարեաց զնա բազում բանիւք, և առաքեաց ի տեղի իւր։

Արդ՝ պատահումն իրագործութեանս այսմիկ հանգոյն դասու այնմ, զոր Բանն Աստուած արար ընդ Աբրահամու մեծի նահապետին, զի որպէս նա էջ հիւր Աբրահամու և պարգեւեաց նմա զաւակ. սոյնպէս և վարդապետն նկն հիւր այլազգոյն, և աղօթիւք խնդրեաց յԱստուծոյ պարգեւել նմա զաւակ, որում փառաւորի անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ ըստ անսուտ բանին իւրոյ, թէ տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՀայր ձեր՝ որ յերկինս է**։

Յետ այսորիկ ել անտի վարդապետն, և գնաց յերկիրն Աղուանից ի Ղարաբաղ, ի տեղին որ անուանի Քօթուկլու, քանզի անդ էր բանակեալ թագաւորն Շահաբաս ամենայն սպայիւն իւրով։

Իսկ յորժամ յանդիման եղև վարդապետն թագաւորին, երևեցոյց Տէր՝ շնորհաւոր զծառայն իւր առաջի ահարկու և այլազգի թագաւորին. և ի հարցանելն արքայի ցվարդապետն, թէ զի՞նչ խնդիր կայ քո ի թագաւորութենէս մերմէ, պատասխանեալ ասաց վարդապետն. «Նախ՝ երկարութիւն կենաց արքայի, և հաստատութիւն աթոռոյ նորա, և երկրորդ՝ զի խաղաղարար թագաւորութեամբ քով, արքա՛յ, ոչինչ գոյ պակաս յամենայն բարեաց ազգիս Հայոց, բայց միայն աղօթից, զի ոչ դոյ տեղի աղօթից՝ զի աղօթեսցեն առ Աստուած վասն աշխարհի՝ և վասն կենաց թագաւորին. զայս խնդրեմ յարքայէ, զի

* *Մատթ., Իև, 21—22*
** *Մատթ., ե, 16*

1 Ա *ամենիւք*
2 ԲԳԴՆ *ի յերկրի*
3 ԱԴԷ *և յառաւօտուն Դն ի յառաւօտին*
4 ԲԳԴՆ *աղօթս*
6 Ս. *անդառնալեօք*
7 ԲԳԴՆ *զաւակ* Ա *զոր*
8 ԱԲԳ *հաւատովք* ԱԴՆ *և խնդրիցէք հաւատովք*
10-23 ե *այր*
10 ԱԴ չիմ *Քանզի չետ անցանելոյ ... փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է» (էջ 232 ա. 10—էջ 232 ա. 23)*
12 ԱԴԳԷ *երկրպագանէր*
15 Ա.ԵԷ չիմ *նորա*
21 ԲՆ *պարգեւել*
26 Ս. *ամենիւ*
31-32 ԱԴ չիմ *նախ երկարութիւն կենաց արքայի և հաստատութիւն աթոռոյ նորա, և երկրորդ*
32 Ս. *խաղաղարարաւ*
33 ԱԴ *կայ փխ դոյ* ԲԳՆ *ամենայն* Ս. *յամենից*
34 ԲԳՆ *որ ոչ դոյ*

տացէ ինձ զհրամանն, և հրովարտակ շինելոյ զնկեղեցի, և այսմ եթէ իցէ վարձք ինչ, եղիցի թագաւորին. և թէ իցէ մեղանք ինչ, եղիցի ինձ»։ Եւ ի լսելն զայս արքայի՝ զուարճացաւ յանձն իւր. և բարձր բարբառով ասաց նախարարաց իւրոց. «Իշխանք և դատաւորք, զինչ արժան և ուղիղ թուի ձեզ, հրամանս տա՞լ զնկեղեցի շինելոյ՝ թէ արգելուլ»։ Դարձեալ ինքն փութանակի արար պատասխանի իւրոց բանիցն՝ և ասաց. «Ոչ է պարտ արգելուլ, այլ արժան է տալ հրամանս շինելոյ, քանզի և այնք ևս Աստուծոյ տունք են»։ Եւ առժամայն հրամայեաց գրել նոմոս՝ կնքել և տալ նմա։ Եւ իբրև կատարեցին և ետուն ցվարդապետն զթուղթն, և նա տարեալ ի բացեայ՝ ետ ընթեռնուլ. և հետս ի ոչ էր այնպէս օգտակար, որ բաւական լինէր կարեաց ներկայ ամանակին. վասն որոյ ի պատճառէս հարկեալ՝ կրկին անգամ կացեալ յանդիման արքայի. և յուշ առնէ նմա զխնդրելին իւր զհրովարտակն. և իբրև վերահասու եղև թագաւորն ամենայն դիտաւորութեան մտաց վարդապետին, և յայնմ ժամու թագաւորն արտաքս ելեալ ի խորանէն երթևեկս առնելով ճեմէր, և նոյնժամայն կոչեաց զմի ոմն ի գրչացն, նստոյց ի գետնի առաջի իւր, և արքայ կացեալ յոտին՝ ինքն ասէր, և գրագիրն գրէր, մինչև կատարեաց զամենայն բանս գրոյն. և ապա հրամայեաց նոյն առնն գրչի շրջեցուցանել առ ամենայն իշխանս, զի ձեռնադրեսցեն և կնքեսցեն։ Եւ իբրև կատարեցաւ ամենայն՝ բերեալ հետն ցվարդապետն զհրովարտակն, և սրբոյ վարդապետին գոհացեալ զՏեառնէ, առեալ զհրովարտակն արքունական՝ եկն յարևելեայ երկիրս Հայոց, և այնուհետև աներկիւղ և ևս վայելուչ սկսաւ շինել զեկեղեցիս, և համարձակ շրջել և քարոզել։

Իսկ կաթուղիկոսին Մելքիսէթի առաւել մախացեալ ընդ վարդապետին Պօղոսի, խօսի բանս զրպարտանաց ի կողմանէ վարդապետին ընդ մեծի և հզօր իշխանին Ամիրգունայ խանին, որ էր իշխան Երևանայ, և ասէ. «Այր մի ստամբակ և անհնազանդ և օտար՝ յաշխարհէն Մարաց, քանի ամ է զի շրջագայի յերկրիս Պարսից, և մանաւանդ ի քում իշխանութեան գաւառս. և սուտ և խաբեբայ քարոզութեամբ և կեղծաւոր վարուք հաւանեցուցանէ զամենայն մարդ ինքեան. և ոչ մնաց ոսկի և արծաթ և այլ ինչ ստացուած առ ոք՝ այլ զամենայն կողոպտեալ յամենեցունց և առեալ, առաքէ յերկիր իւր։ Քանիցս անգամ պատուիրեցաք նմա բանիւ, նաև երես և երես ևս ասացաք նմա ելանել յաշխարհէ աստի և գնալ ի տեղի իւր, և նա ոչինչ արար փոյթ ի մերոց բանից, և կամ ակն էած թագաւորական հրամանին, որ կայ

1 ԲԳԴՆ *հրաման* Ս. *զհրովարտակն* ԲԳՆ *նկեղեցի*
1-2 Դ *թէ իցէ*
3 Ս. *բարձու*
5 ԲՎ *թըւի* Ս. *զհրամանն* ԱԴ և *թէ* ԲԳՆ *նկեղեցի*
6-7 ԲԳՆ *բանից*
7 Ի *թէ փխ ասաց* Ս. *զհրամանն*
11-12 Ն *ներկայի*
12 Աեև *ժամանակին*
14 Ս. *ամենայնի*
18 Ս. *զամենեսեան*
19-20 Ս. *ամենեսեան։*
20 Ի *ձեռնադրեսցեն*
23 ԲՆ *յերկիրս*
24 ԲԳՆ *նկեղեցիս* Ա Է *շրջիլ*
26 Ս. *զբանս*
27 ԲԳԴ *մեծ* Ս. *հզօրի*
29 Ի *ամք են*
30-31 Ս. *ստով և խաբեբայիւ ... և կեղծաւորիւք*
34 ԱԴ *բանիւք*
35 Ս. *զփոյթ*
36 Ս. *թագաւորականի*

*ի ձեռս մեր, այլ գործէ ըստ հաճոյից կամաց իւրոց, քանզի անհնա-
ղանդ է իշխանաց և պետաց»:*

*Վասն որոյ և խանին կոչեալ զոմն վինուր առաջի իւր՝ և ասէ. «Հրամայեմ է յիշխանութենէս մերմէ գնալ քեզ յերկիր աէրութեանն մե-
5 րոյ շրջիլ և գտանել զվարդապետան Պօղոս և ածել այսրէն առ մեզ»: Իսկ վինուրին գնացեալ որոնելով գտանէ զնա ի պիւղն Ագուլիս, և անտի առեալ զնա ածէ յերևան քաղաքն Նւ ի պալն՝ յորժամ եկեալ հասին ի Դուին, զայն դիշերն անդէն օթևցան, և կայր ի պիւղն յայն այր ոմն քրիստոնեայ՝ որոյ որդւոյ ձեռն զօսացեալ էր, զոր ածեալ
10 առաջի վարդապետին խնդրէր աղօթել ի վերայ նորա, որպէս զի բժշկեսցի ձեռն մանկանն: Իսկ սուրբ վարդապետն կալեալ զձեռանէ մանկանն, և աղօթեաց ի վերայ նորա. և ասաց՝ զՀայր մեր, որ յերկինս, և նա ցհայրն, որ առնել զնաց: Նւ յայդ յառաւօտին առնել զորդին և եկեալ առաջի վարդապետին երկիր պագանէր և համբուրէր զոտս նո-
15 րա, գոհանայր և շնորհս խոստովանէր զնմանէ. և ցուցանէր զձեռն մանկանն՝ ամենեցուն, թէ աղօթիւք վարդապետին բժշկեցաւ ձեռն մանկան իմոյ: Քանզի շնորհօքն Քրիստոսի և աղօթիւք սրբոյ վարդապետին բնաւին բժշկեալ էր ձեռն մանկանն այնմիկ, որով փառաւորեցաւ անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

20 Ելեալ անտի եկին ի քաղաքն Երևան. և վինուրն՝ որ էած զվարդապետան, ի նոյնում աւուրն յանդիման կացոյց զնա խանին. իսկ խանն որպէս ընկալեալ էր զնիւթ ի կաթուղիկոսէն, բաղում մախանս և դառնութիւնս ամբարեալ ունէր ի մտի, զի յոքնահի կիրս չարչարանաց անցուսցէ ընդ վարդապետն. այլ այն, որ թադաւոր է թագաւորաց՝ և
25 Տէր աէրանց, որ ի ձեռին ունի զսիրտ ամենայն բռնաւորաց՝ ըստ իմաստնոյն Սողոմոնի*, աւ ժամայն դարձոյց զսիրտ խանին ի քաղցրութիւն, որպէս Արտաշէս արքայի ի վերայ Մուսաքէի, և բարկութիւն ի վերայ Համանայ**, վասն զի ընդ ակնարկել խանին յերևոյս վարդապետին ոչ թէ զբանս բարկութեան ասաց կամ զայրագնեալ դէմս
30 երևեցոյց նմա. այլ մեղմ և հանդարտ բանիւ ասաց նմա. «Այսօր կացջիր առ մեզ, քանզի մեզ հիւր ես, իսկ ի վաղիւն տարայց զքեզ ընդ իս առ կաթուղիկոսն և հաշտեցուցից զնա ընդ քեզ», քանզի Մելքիսէթ կաթուղիկոսն հրաւիրեալ էր զխանն իւրովք բարեկամօքն ի պատիւ յերկրորդումն աւուր՝ որմին վասն ասաց խանն, թէ տարայց
35 զքեզ ընդ իս առ կաթուղիկոսն և հաշտեցուցից:

Իսկ ի վաղուեան աւուրն մինչ երթայր խանն ի կոչն կաթուղիկոսին, տարաւ ընդ իւր զվարդապետան, և իբրև եհաս ժամ խօսելոյ՝ ասաց խանն ընդ կաթուղիկոսին. «Արդ՝ յօժարութիւն արտի իմոյ զայս

* *Տե՛ս Առակք, ԻԱ, 1*
** *Տե՛ս Եսթեր, Ա—է*

4 Գն *աէրութեան*
5 Ա. շրջիլ
8 Բն Դուին Գ Դբւին
12 ԲԳԴն *չիք որ*
13 ԱԳՆ *առաւօտան*
15 Ա. *զշնորհս*
17 ԱԳ *չիք Քանզի ... Քրիստոսի*
22 ԲԴն *նիւթ Գ ի կաթուղիկոսէն նիւթ*
22-23 Ա. *զբաղում ... զդառնութիւն*
25 Ա. *ամենից*
27 Ա. *Արտաշէսի արքայի* Բն *արքայ*
29 ԲԴն *բանս*
30 Ա. *մեղմիւ և հանդարտիւ*
31 Գ *քեզ*

*կամի ի քէն՝ ղի դու հաշտեսցիս ընդ վարդապետին՝ և լինիք որպէս պ-
տայր և ղորդի, ղի թէպէտ և շրջի ի մէջ ժողովրդեանն, ոչինչ առնէ
ղգործ կամ ղվնաս արժանի պատապարտութեանն, ոչ ինձ՝ ոչ քեզ՝ և ոչ
ժողովրդեանն, և ես կամիմ ղի ի մէջ ձեր խաղաղութիւն և սէր հաս-
տատեսցի»: Իսկ կաթուղիկոսն իբրև եհաս, թէ ղոր ինչ խորհեալ էր
ի մտի, և իսօսեալ էր ընդ խանին, այնպէս ոչ էղև, այլ նորին ներ-
հակն. և թէպէտ ոչ կամէր հաշտիլ՝ այլ և ընդդիմանալ հրամանաց
խանին անմարթ վարկանէր, ղի ի շահել զսիրտն նորա կոչեալ էր, և
մանաւանդ սյնքան պատուական արանց միջի, և ի վերայ իւրոյ սե-
ղանոյ, և յիւրում տան: Վասն որոյ ակամայ կամօք վերերևութիւն կեղ-
ծաւորեալ սրտիւ առնէ դհաշտութիւն ընդ վարդապետին ըստ հրամա-
նաց խանին: Եւ յետ խրախութեան՝ յորժամ հանդերձեալ էր ի գնալ
խանն, ասէ ցկաթուղիկոսն. «Վարդապետս այս հոգւոյ քեզ յանձն
յայտմ դիշերի, և ի վաղիւն ի գալն քո առ իս ընդ քեզ բերցես, ղի
ունիմ գործ ինչ ընդ դմա»: Իսկ ի վաղիւն կաթուղիկոսն ինքն ոչ գնաց,
այլ զոմն եպիսկոպոսաց իւրոց եղեալ ընդ վարդապետին՝ առաքեաց
առ խանն, իսկ խանն պատուեալ խիլայեաց զվարդապետն, ղի էարկ
ի վերայ նորա պատուական և ոսկեհուռն կապայ: Եւ դարձեալ կո-
չեաց զնոյն զինուորն, որ բերեալ էր զվարդապետն, և ասաց նմա.
«Արդ առեալ զվարդապետս զայս տարեալ հասուսցես ի տեղին, ուս-
տի և դարձուցեր դդա, և յանձնեացես արանց տեղւոյն և ապա դարձ-
ցիս այսրէն»: Իսկ զինուորն և վարդապետն երկրպագեալ իշխանին
ելեալք յերեսաց նորա, գնացին դէպ ի դաւառն Գողթան:

Արդ՝ կատարումն գործոյս այսմիկ, հանդոյն գտաւ իրացն որ առ
Բաղակ Թադաւորն եղև՝ զի որպէս նա վարձեաց զԲաղայամ անիծանել
զիսրայէլ, իսկ Բաղայամու եկեալ օրհնեաց զիսրայէլ*. սոյն գունակ և
կաթուղիկոսն Մելքիսէթ դրկեաց զխանն, զի պատժեսցէ զվարդապե-
տըն, իսկ նա բերեալ պատուեաց առաջի ամենեցուն, և խիլայեալ ա-
ռաքեաց ի գործ իւր, և ասէն ևս կատարեալ տեսանի սաղմոսն Դաւ-
թի. «Հայր մեղաւորն ընդ արդարն և խնդրէ սպանանել զնա, այլ Տէր
ոչ թողու զնա ի ձեռս նորա և ոչ դատապարտէ զնա՝ յորժամ դատի
զնա»**:

Յորժամ վարդապետն և զինուորն եկեալք յերեւանայ գնացին ի
դաւառն Գողթան, հասին ի գիւղն Շօռօթ, և անտի եկեալք կամէին
գնալ ի գիւղն Ցղնայ, և մինչ զճանապարհայն գնային՝ իբրև մերձ եղեն
ի գետն, որ գայ ի Նորակերտու և գնայ ի Բզղևի ի տակաւին ոչ էին
հասեալ ի գետն, տեսին ի հովտի անդ զի արածէին վայրի այծեմունք՝
որք էին երկոտասանք. կոչեաց զնոսա վարդապետն առ ինքն և այ-

* *Տես՝ Թիւք, ԻԲ, 1—12, ԻԳ 1—12*
** *Տես՝ Սաղմ., ԼԶ, 32—33*

2 Ա.Գ.Դ.Ե *զի թէպէտ շրջի*
3 Բ.Գ.Դ.Ե *գործ կամ վնաս*
4 Ա.Բ.Գ.Դ.Ե *ժողովրդեան*
9-10 Բ.Գ.Դ.Ե *իւրում սեղանոյ:*
10 Դ.Ե *տանն* Ա. *ակամայիւք* Բ.Գ.Դ *յակամայ*
10-11 Ա. *կնդծաւորելով*
11 Բ.Գ.Դ.Ե *հաշտութիւն*
12 Գ.Դ *խրախութեանն*
13 Ա.Բ.Գ.Դ.Ե *յանձին*
18 Ա. *զպատուական և զոսկէհուռն* Բ *ոսկեհուռն*
24-38 Ա.Գ *չիմ Արդ ... անգամ ... ինքն և այ*
33 Գ *դինուորքն*
37 Գ *անտ*

ծեմունքն եկին առ նա, և ոչ գիտէր ղինուորն թէ վարդապետն կոչեալ է զայծեմունսն. քանզի հնուի էր ի վարդապետէն, որ իբրև ետես զայծեմունսն կացեալ, վաղվաղակի լցեալ զաղեղն՝ ի նետիւ հարցէ զայծեմունսն, և այծեմունքն վաղվաղակի խրտուցեալ ի բաց ոստեան ի տեղւոյն, ուր կանգնեալք էին, և սկսան փախչիլ ի կողմն լերինն։ Իսկ վարդապետին յետս հայեցեալ ետես, զի զայն գործէր ղինուորն, և սաստեալ ղինուորին դադարեցոյց, ապա կրկին անգամ կոչեաց զայծեմունսն և ասէ. «Եկայք, օրհնեալք Տեառն, եկայք, առիս, ոչ թողից ումեք մեղանչել ձեզ», և նոքա իբրև զմտացի մարդ և զբանաւոր, դարձեալ եկին առ վարդապետն և կացին առաջի նորա. իսկ վարդապետն մերձեալ նոցա՝ շիւէր ձեռամբն ի վերայ նոցա և քորքորէր զպարանոցս և զքամակս նոցա. ողջագուրէր զոսոսա գգուանօք և խօսէր ընդ նոսա իբրև ընդ բանաւորի։ Եւ ընդ յոլով պահս կային առաջի նորա. և յետոյ ասաց նոցա. «Արդ՝ երթա՛յք խաղաղութեամբ յարօտս ձեր և Տէր պաշտպանեսցէ ձեզ ըստ կարեաց ձերոց», և նոքա յուղի անկեալ գնային ընդ լեռնակողմն ի գնացս իւրեանց։ Իսկ ղինուորն այն կայր հիացեալ և ափշեալ ընդ այն. և սուրբ վարդապետն սկսաւ պատմել նմա զսրբոյ առաքելոյն Թադէոսի արարեալ զսքանչելիսն՝ որ զվայրի եղինսն երեր առաջի Ոսկեանցն[82]։ Եւ ղինուորն տարեալ զվարդապետն հասոյց ի գիւղաքաղաքն Ագուլիս և յանձն արար նոցա, և ինքն դարձաւ յերևան ի ծառայութիւն խանին, և պատմէր ամենայնի զսքանչելիսն զոր ետես, փառաւորելով զանունն Քրիստոսի Աստուծոյ մերոյ առաջի ամենեցուն։

Իսկ արքն, որք էին նախանձաւորք ընդ վարդապետին, իբրև տեսին, թէ մատնութեամբն, զոր արարին առ Ամիրգունայ խանն՝ ոչինչ կարացին ստանալ վարդապետին, վասն որոյ սուվիմբ օրինակաւ միւս ևս մատնութիւն արարին առ Ղառչղայ խանն, որ էր առաւել խրոխտ և մեծագոյն փառօք՝ և ամենայն որպիսութեամբ քան զԱմիրգունայ խանն. և էր Ղառչղայ խանն իշխող քաղաքին Թարվիզու, առ որ գնացեալ Մելքիսէթ կաթուղիկոսն ինքն և այլք ևս յեկեղեցականաց և յաշխարհականաց, և արարին ամբաստանութիւն զՊօղոս վարդապետէ, և Ղառչղայ խանն առաքեալ զղինուորս՝ տարաւ ի Թարվէզ զՊօղոս վարդապետն։ Իսկ կատարումն գործոյն եղև՝ որպէս և առ Ամիրգունայ խանին կատարեցաւ. և այսու ևս յամօթ լեալ պարտեցան նախանձաւորքն։

Այլ և գոյ միւս այլ պատմութիւն որպէս և գրելոց եմք յառաջիկայդ՝ ի ճառս պատմութեանն նահատակութեանն սէր Անդրէաս քահանային, թէ մատնեցին զՊօղոս վարդապետն և զՄովսէս վարդապետն

1 ԲԳԴՆ *վարդապետին*
6 ԲԳՆ *փախչել*
7 ԲԳԴՆ *և ասէ*
7-23 ԱՊ *չիւ կոչեաց ... մերոյ առաջի ամենայնցուն*
12 Գ *ողջագուրէր*
27 Ա *զմատնութիւն*
28 Ա *ամենայնիւ*
30 Բ *այլ ևս*
31 Ա *զամբաստանութիւն զՊօղոսէ*, ԲՆ *անբաստանութիւն*
31-32 ԲԳՆ *վարդապետէն*
32 Բ *առաքեաց* ԲԳՆ *զղինուորս*
36-38 ԱԳ *չիւ Այլ և ... վարդապետն* Ա՝ *մի այլ*
37 ԲԳ *նահատակ*

Շահաբաս թագաւորին. զորս կալեալ էառ երիք հարիւր թուման տուդանք և ապա ետող. որոց զկնի արձակմանն ելեալ ևս առաւել համարձակ քարոզէին զԲանն կենաց, զի ինքն նրբահայեացն Շահաբաս իւրովք մտօքն նկատեալ դիտեաց զնոսա, զի ոչ գոյ ի նոսա կեղծաւոր
5 *գործ ինչ. այլ են ճշմարիտ ծառայք Աստուծոյ:*

Կան այլ ևս պատմութիւնք վարուց և սքանչելեաց սրբոյ վարդապետին Պօղոսի, որ զցաւագարս և զդիւահարս բժշկեաց, և այլ ևս սոյնպիսիս, այլ այսքանս բաւական է ծանուցանել զամենայն որպիսութիւն նորա:

10 *Եւ յետ անցից պատմելոցս ամենայնի և ևս գերագունից՝ մինչ շրջէր Պօղոս վարդապետս քարոզութեամբ ի մէջ քրիստոնէից ըստ հանապազորդ սովորութեան իւրոյ, պատահեցան նմա Սահակ կաթուղիկոսն, եղբօրորդի Մելքիսէթի կաթուղիկոսին, և այլք ևս ի նոցին համախոհացն, և յոլով աւուրս խոշտանգեցին զնա ասելով՝ «Լռեա՛ դու*
15 *ի քարոզութենէդ». և Պօղոս վարդապետն ոչ կամէր լռել, զի կարի յօժար և փոյթ էր ի քարոզութիւնն: Բայց ներհակքն կարի յաւէտ և բազմահնար պարաւանդիւք խորամանկութեան և զրպարտութեան մեքենայիւք ճմլեալ կորացուցին զնա ասելով. «Դու մի ևս յաւելցիս ի շրջել աւ ժողովուրդս և քարոզել, այլ տուր մեզ ձեռնագիր վկայու-*
20 *թեամբ մահմետականաց, թէ այսուհետև քարոզես՝ լինիցիս թշնամի թագաւորին. և մահու և սպանման պարտական»: Եւ ի բազում աւուրս յոքնազան կերպիւ ճնշելոյ ներհակացն զվարդապետն՝ մնաց անճար. զի ինքն միայն էր ընդդիմակաց նոցա առանց օգնականի, թէպէտ ի քրիստոնէից բազումք կային բարեկամք և սիրողք վարդապետին, այլ*
25 *վասն երկիւղի ներհակացն, ոչ ոք իշխէր օգնել վարդապետին, վասն որոյ մնաց անճար, ետ նոցա ձեռնագիր այսպէս. «Ես Պօղոս վարդապետ ետու ձեռնագիր այսուհետև ո՛չ շրջել և ոչ քարոզել. և թէ զայսոսիկ առնեմ, լինիմ ես թշնամի թագաւորին»: Իբրև առին ներհակքն զայս ձեռնագիրս ի Պօղոսէն, ուրախ եղեն անճառելի խնդու-*
30 *թեամբ[83]. և այնուհետև Պօղոս վարդապետն գնաց ի Մեծ անապատն՝ կայր միակեցութեամբ, լռեալ ի խոցի, մշտամատոյց աղօթիւք խօսակցելով ընդ Աստուծոյ. եկաց անդէն և ոչ ել արտաքս յանապատէն մինչև ցվախճան կենաց իւրոց. որ հանգեաւ ի Քրիստոս, և անդէն թաղեցաւ: Եւ եղև վախճան սորա Ռկթ. ամի թուականի մերում. որ և*
35 *ի գերեզմանէ նորա բազում գործս սքանչելեաց լսեմք ի հիւանդս և*

1-9 Ա.Դ չիմ *Շահաբասու ... նորա*
1 Է *երիք հրիք հարիւր* փխ *երեք հարիւր*
6 Գ *պատմութիւն*
11 Ա.Դ՝ *վարդապետ*
12 Ա. *հանապազորդի*. Ա.Դ *պատահեցաւ*
13 Ն *եղբօրորդին* ԲԳԴ *Մելքիսէթ*
14 Ա. *խոշտանկեցին*
16 ԲԳԴՆ *քարոզութիւն*
17 Ա. *բազմահնարիւք*
19 Բ՝ *ձեռագիր*
20 ԲԳՆ *եթէ* փխ *թէ*
22 Ա. *յոքնալանիւ* Գ *ճնշելով*
26 Ա. *զձեռագիր* ԲԳԴՆ՝ *ձեռագիր*
26-27 ԲԳԴ *վարդապետս*
27 Ա. *զձեռագիր* ԲԳԴՆ՝ *ձեռագիր* Ա.Է *շրջիլ*
29 Ա.ԲԳԴՆ՝ *ձեռագիրս* ԲԳՆ *ի Պօղոսէ* Ա. *անճառելիաւ*
31 ԲԳՆ *կնայր* Ա. *մշտամատուցիւք*
35 Ա. *զբազում*

ի ցաւագարս, որք յուսով երթան առ նա. և առնուն զբժշկութիւնս իւրաքանչիւր ցաւոց՝ շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, զօրացուցանողին զնա. որում փառք յաւիտեանս, ամէն։

ԳԼՈՒԽ ԻԴ

ՎԱՍՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄՈՎՍԻՍԻ։ ԸՆԴ ՈՐՈՒՄ ԵՒ ՅԱՂԱԳՍ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԼՈՒՍԱԿԱՒՈՅՑ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՆ ԻՋՄԻԱԾՆԻ

Մեծահաւատ սրբասնունդ և բարեփառ հայրս մեր տէր Մովսէս կաթուղիկոս էր յաշխարհէն Սիւնեաց՝ ի գաւառէն Բաղաց, որ այժմ առ
10 *ամ Աճանան, ի գիւղէն՝ որ անուանի Խոտանան։ Եւ մինչ էր նա ամաց հնգեսաներից՝ աւելի կամ պակաս, հասեալ նմա ատենից քահանայութեան և օրհնեցին կուսակրօն արեզակ։*

Եւ դէպ եղև պատահիլ նմա տիեզերալոյս վարդապետին Սրապիոնի, և առ նա յարեալ աշակերտեցաւ նմա, բայց վախճանն Սրապիոնի
15 *փութով ժամանեաց ի վերայ, յորում ժամանակի տհաս էր տէր Մովսէս՝ ուսմամբ և հասակաւ։ Բայց Սրապիոն վարդապետն մտօք նկատեալ՝ իմանայր յոգի իւր՝ զի շնորհք Աստուածային երևի առ տէր Մովսէսն՝ ընդ որոյ ցաւակցաբար հոգաց զնա, վասն զի կոչեաց առ ինքն զաւագ աշակերտն իւր՝ զկնեարացի Գրիգոր վարդապետն, և յանձն արար*
20 *նմա զտէր Մովսէսն ասելով. «Յանձն առնեմ զսա քեզ, զի փոխանակ իմ հովուեալ պահեսցես զսա՝ և հասուցեալ յարբունս հաւատոյ, և վարդապետական ուսման, և տացես զգաւազան և զպատիւ վարդապետական. և հպիցի օրհնութիւն իմ ի վերայ քո և դորա»։*

Եւ յետ վախճանի Սրապիոնին մնաց տէր Մովսէս առ Գրիգոր վար
25 *դապետըն յաշակերտութիւն նորա, և զկնի սուղ ինչ ամաց խնդրեաց տէր Մովսէս զհրաման ի Գրիգոր վարդապետէն, զի գնասցէ յերուսաղէմ յուխտ և յերկրպագութիւն տնօրինական տեղեացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և նա նա զհրաման, որ և եղեալ տէր Մովսէս՝ գնացեալ հհաս յերուսաղէմ. և կատարեաց զուխտ ամենայն տնօրինականաց Տեառն։*
30 *Ապա անտի գնաց յաշխարհն Եգիպտոսի՝ և շրջեալ յամենայն վանօրայս և յանապատս ազգին Դիմոց, վասն զի վանօրայք և անապատք բազումք*

1-2 Ա. *խրատքանչիւրոց Դ շիմ և առնուն զբժշկութիւնս խրատքանչիւր*
2 Դ շիմ *ցաւոց*
2-3 ԱԴ շիմ *զօրացուցանողին գնա, որում փառք յաւիտեանս, ամէն*
3 Դ ավարտվում է Ավետիս գրչի ձիշատակարանով. *Բարեխօսութեամբ սուրբ վարդապետին ողորմեա տէր Յիսուս զմեղապարտ գրչիս աստանուն Աւետիս քահանայիս*
9 ԱԴՆ *կաթուղիկոս*
11 Ա. *զաստիճան*
17 ԱԴ շնորհ ԱԴ *երևիցի*
17-18 ՐՆ *Մովսէս*
19 ՐԴ *զաւազ*
20 ՐԴ *Մովսէս*
21 ՐՆ *հովուեալ*
22 ՐԴՆ *զաւազան և պատիւ*
24 ՐԴՆ *Սրապիոնի*
25 ՐԴՆ շիմ և
26 ՐԴՆ *հրաման* Ա. *Գրիգորէ*
27 Ա. *տնօրինականաց*
28 ՐԴՆ *հրաման ի հկնալ*
29 Ա. *ամենից* ՐԴՆ *տնօրինականացն*

գոն, յորում բնակեալ են բազմահոյլ միաբանք, կարգօք և սահմանօք կրօնաւորական, որք ունին զկարգաւորութիւն ամենայն իրաց. ժամատեղաց և սեղանատեղաց, և զգեստուց, և խցակացութեան, և կրօնաւորական ժուժկալութեան, և այլ ամենայն գործոց: Եւ ի մէջ նոցա շրջելով և հարցանելով և տեսանելով տեղեկանայր ամենայնի. և սմին այսմիկ ինքն տէր Մովսէս՝ թէպէտ անհոգ և անփոյթ էր, այլ տեսօրինիչ սուրբ Հոգին՝ յածեալ շրջեցուցանէր ի մէջ այսպիսի կրօնաւորական կարգաց առ ի ուսուցանել զնա, վասն ապագայ ժամանակաց՝ որպէս և պիտոյացաւ ի ժամանակս կարգադրութեան Մեծ անապատին. և տէր Մովսէս յնգիպտոսէ դարձեալ եկն յներուսաղէմ, և եղև լուսաբար սրբոյ Յարութեանն:

Յորում ժամանակի դէպ եղև անդ լինիլ Սարգիս պարոնտիրոջն, և տեսան կիրակոսի, որոյ վասն շարագրեցաք, թէ եղեն սկիզբն անապատի, և կրօնաւորական կարգաց. որք կային յներուսաղէմ, և շրջէին յաշխարհին յայնմիկ ի վանօրեայսն Յունաց՝ և յեգիպս Յորդանան գետոյ, և ի լեառն Փարանայ, և որոնեալ խնդրէին զտեղի անապատի անքոյթ և անշփոթ, և քան պատշաճին ոչ գտանէին: Առ որս ասաց տէր Մովսէս. «Զայդպիսի տեղի, զոր խնդրէք՝ յարևելեան յաշխարհին բազումք գոն, և մանաւանդ յերկրին Սիւնեաց, որոյ ես ականատես իսկ եմ, և յաշխարհին յայնմիկ կարի առատ պատշաճ է շինել զանապատ, զի բուն Հայաստան է, վանօրայք, և գեղօրայք, և ժողովուրդք քրիստոնէից բազումք գոն, ուստի ամենայն պիտոյք անապատին լցեալ լինին»: Այլ և ինքն տէր Մովսէս յանձն էառ, զի յորժամ նոքա ժամանեալ յերկիրըն յայն, և ուրեք անդորրացեալ զետեղեցին, ուր և իցէ ինքն տէր Մովսէս՝ թողեալ զամենայն անդր՝ առ նոսա ժամանեսցէ, և ընդ նոսին բնակեսցի միաբանութեամբ: Արդ՝ այսպիսի յորդորականաւ բանիւ զնոսա առաքեաց ի վերին աշխարհն արևելից, ինքն մնաց յներուսաղէմ: Եւ հրամանաւ Գրիգորի եպիսկոպոսին, որ էր առաջնորդ սուրբ Յակոբայ՝ գնաց ի նուիրակութիւն վասն ներուսաղէմի և զբաղում արդիւնս ժողովեալ ի քրիստոնէից եբեր յներուսաղէմ առաջի Գրիգոր եպիսկոպոսին:

Ապա եղեալ յներուսաղէմայ եկն առ վարդապետն իւր Գրիգոր Կեսարացի, որ էր ի Կոստանդնուպոլիս՝ քանզի թագաւորական հրամանաւ նստեալ էր առաջնորդ քաղաքին՝ պատրիարգ անուամբ: Եւ կացեալ յաշակերտութիւն Գրիգոր վարդապետին յամս ինչ պարկեշտ և սրբակրօն

1 Ա. *բազմահոյլք*
2 Ա.Ի: *կրօնաւորականօք*
ԲԳԳՆ *կարգաւորութիւն* Ա. *ամենից*
3 Ի: *խցակցութեան*
3-4 Ա. *կրօնաւորականի*
4 Ա. *ամենից*
7 Ա. *այսպիսեանց կրօնաւորականաց*
8 ԲԳՆ *նմա վխ զնա* Ա.Ի: *ապագայից*
9 Ա. *մնծի*
10 ԲԳՆ *Յարութեան*
11 ԲԳԳՆ *լինել*
12 ԲԳՆ *որոց* ԳՆ *տէր* ԳԳՆ *Կիրակոսին*
13 Ա. *կրօնաւորականաց*
15 Ի: *չիմ և (ի լեառն)* ԲԳՆ *տեղի*
15-16 Ի: *անփոյթ*
17 ԲԳՆ *աշխարհին*
18 Բ *յերկիրն*
19 ԲԳՆ *անապատ*
21 Բ *բազում* Ա. *ամենեքեան* ԲԳԳՆ *լինի*
23 ԳՆ *գնահղիցին*
25 ԲԳՆ *բնակեսցէ* Ա. *այսպիսեաւ*
ԲԳՆ *յորդորական*
26 ԱԳՆ *և ինքն մնաց*
27 Ն *Գրիգոր* Ա. *սրբոյ*
28 ԳՆ *վասն ներուսաղէմայ* ԲԳՆ *բազում*
29 Ա. *Գրիգորի*
32 Ի: *պատրիարգ*
33 Ա. *Գրիգորի* Ա. *պարկեշտիւ և սրբակրօնիւք*

վարուք՝ ո՛չ պաճոյճ և փափուկ հանդերձիւ որպէս և այլքն էին ի ժամանակին, այլ խոշորազգեստ և պահացող, որ ի շաբաթ օր և ի կիրակի օր լուծանէր ի կերակուրս նաւակատեաց, զատեալ ի մսոյ՝ և ի գինւոյ, և հանապազ սաղմոսերգ և պատարագամատոյց։ Առ որ հաճեալ և հաւանեալ ամենայն ժողովուրդքն Կոստանդնուպօլսի, եկեղեցականք և աշխարհականք, և երևելի արք՝ որպէս Շահին Չալապին, որ էր այր նշանաւոր ի դրան թագաւորին, և այլք ևս յոլովք։ Նաև վաճառականք արևելեան աշխարհին, որք պատահէին ի Կոստանդնուպօլիս, և մանաւանդ Ջուղայեցիք և Գողթնացիք. զի դիտէին թէ Մովսէսն յարևելեան աշխարհէն է. ամենեքեան մատուցեալ առ Գրիգոր վարդապետն, խընդրէին տալ տէր Մովսիսի՝ վարդապետութիւն։

Իսկ Գրիգոր վարդապետն էր այր ահարկու և յոյժ խրոխտ և դժուարահաւան, բայց տեսնելով զքաղցր և զսրբասէր բարս, և զպարկեշտ վարս տէր Մովսիսի, նաև զվկայութիւն ժողովրդեանն, ոչինչ եղև անլուր, այլ ըստ վկայութեան անձին նորա, և ամենայն ժողովրդեան եւս նմա գաւազան վարդապետական մեծաւ հանդիսիւ։ Այնուհետև տէր Մովսէս վարդապետն անխափան քարոզէր յամենայն եկեղեցիս զաւետարանն Քրիստոսի վճիտ և պայծառ քարոզութեամբ։

Եւ յետ ամաց ինչ՝ հրամանաւ Գրիգոր վարդապետին առաքեալ եղև Մովսէս վարդապետն գնալ և ինքնագլուխ քարոզութեամբ շրջագայել. և ելեալ ի Կոստանդնուպօլսէ եկեալ հասեալ ի քաղաքն Տիգրանակերտ՝ ուր էր տապանն Սրապիոն վարդապետին, համբուրեալ զնա սրբով տապանաւն. և առեալ ի նմանէ զօրհնութիւն։ Ելեալ անտի անցեալ զվասպուրական քաղաքաւն եկն ի Թարվէզ, և անտի ի հայրենի աշխարհն իւր, ի գաւառն Սիւնեաց ի վանքն Տաթևու. յորոյ գալստենէ եղև անպատում ուրախութիւն ամենեցուն եկեղեցականաց և աշխարհականաց։ Եւ զառաջինն սիրով ընկալան զնա միաբանք վանացն Տաթևու՝ եպիսկոպոսք և աբեղայք, բայց յետոյ յետս չդան ի նմանէ, քանզի ոչ ընկալան զքարոզութիւն նորա։ Յաղագս որոյ ելեալ ի Տաթևու վանացն, և գնաց ի Մեծ անապատն առ Սարգիս եպիսկոպոսն, և առ տէր Կիրակոսն, ըստ նախկին ուխտադրութեանն իւրեանց՝ զոր պայմանեալք էին յԵրուսաղէմ, և անդէն յանապատին կալաւ իւր դադար բնակութեան, և ի ժամանակս ժամանակս ելեալ շրջէր ի մէջ քրիստոնէից՝ և քարոզէր զպատուիրանս Աստուծոյ, և վերստին դառնայր յանապատն. վասն զի որպէս ձուկն ելեալ ի ջրոյ մերձի ի մեռանել և անդրէն ի ջուր անկեալ կենդանանայ, սոյնպէս և սա՝ յելանելն յանապատէն, և ի մտանելն յանապատն։

1 Ա. *պաճուճիւ և փափկիւ*
2 Ի. *պահեցող*
2-3 Ի. *կիւրակէ*
5 Ա. *ժողովուրդն*
9 ԳԴՆ *ջուղեցիք*
11 Ա. *տեառն*
14 Ա. *տեառն* ԲԳԴՆ *ժողովրդեան*
15 Ա. *ամենայնի* Ն *ժողովրդեանն*
16 Ա. *զգաւազան* Գի. *մեծ*
17 Գն *վարդապետ*
19 Ա. *Գրիգորի*
20 Ն *վարդապետ*
22 Ա. *Սրապիոնի*
23-24 Ա. *վաստուրականաւ*
26 Դ *ամենայն*
30 Դ *Սարգիսն* Ա. *նախկնոյ* ԳԴՆ *նախկի*
31 ԲԳՆ *ուխտադրութեան*
35 Դ չիք *ի (մտանել)*
36 Դ չիք *ի*

Իսկ զքարոզութիւն Մովսէս վարդապետին ամենայն ժողովուրդք ընդունէին և յօժարութեամբ կատարէին, և ուրախութեամբ փառաւորէին զԱստուած՝ զտուիչն այնպիսի շնորհաց մարդկան։ Բայց եպիսկոպոսք դաւառաց և արեղայք վանօրէից ո՛չ հաճէին ի քարոզութիւն Մովսէսի, վասն զի Մովսէս վարդապետն որպէս ինքն մերկ էր յամենայն աշխարհական նիւթոց, և պահօք և սրբութեամբ և կրօնաւորական վարուք կեայր ըստ հրամանաց դրոց. այնպէս և քարոզէր լինիլ ամենայն վանականացն, և նոքա անդադանեալ զբանս նորա՝ ո՛չ ընկալան։ Վասն զի ամենայն վանօրայք ազգիս Հայոց՝իւրաքանչիւր սնագլուխ ունէր իւր պինակ առանձին, այգի և բուրաստան, փէթակ և տուն, և մարան, և համբարանոցս, և գմուտս ստացուածոց. նաև գմուտս հաւատարակաց վանից մատունս արարեալ՝ յինքեանս բաժանէին։ Եւ զայն ամենայն ինքեանց և ազգայնոց՝ և իւրեանց հաճելեաց արանց ծախէին ի պէտս կարեաց։ Եւ գնուիրեալ տեղիսն Աստուծոյ՝ որք բնակարան են նշխարաց սրբոց և սքանչելագործ, և շնորհակիր նշանաց Աստուծոյ, լցեալ էին գայնոսիկ կանամբք և տանտիկնօք, և իւրեանց ազգայնօք։

Եւ բնաւ ո՛չ գիտէին թէ պարտ է կարգաւորի զվեղար և զփիլոն ունել գիւրեան, կամ հանդերձս խոշորս և ստուխս զգենուլ. այլ որպէս պաշխարհական, և գմարմնաւոր իշխանս փափուկ և ազնիւ զգեստիւ պճնէին. շաշիւր, և կապայ, և պատուական փակեղ ի գլուխս, և բալափուշ գիւրեան առեալ։ Այլ և ո՛չ վարկանէին թէ պարտ է վանականաց պահօք և ծոմաջան երկօք կենցաղավարիլ, այլ ի բոլոր տարին ուտիք և գինի և միս անխտիր։

Սոյնպէս և գեղական երիցունք անուամբ միայն քահանայք, այլ ամանք առեալ գիշխանութիւն մէլիքութեան, և ամանք տանուտէրութեան՝ և ամանք պռոնիկք և երկկանայք, ամանք յարեցեալք իշխանաց այլազգեաց. սրբանանակք չարեաց գործոց նոցա՝ և մատնիչք քրիստոնէից, ամանք ի մարմնաւոր արուեստս և ի հողագործութիւնս պատաղնալ իբրև զաշխարհականս. և բնաւին թողեալ գժամ և զպատարագ։ Ոչ կանխէին ի ժամ աղօթից յկեկղեցի, և ոչ լինէր լսելի ձայն ժամակոչի ի գեղօրայս, և բնաւին բարձեալ ի նոցունց շնորհ քահանայութեան, բայց տակաւին գինքեանս քահանայս անուանէին, և գործէին զգործ քահանայութեան,

1 Ա. *ամենեքեան*
3 Ա. *այնպիսեաց*
4-5 ԲՆ *քարոզութիւն Մովսիսի* Գ *Մովսիսի*
6 Ա. *ամենից աշխարհականաց*
6-7 Ա. *կրօնաւորականօք*
7 ԲՆ *հրամանի*
8 Ա. *ամենից* Ա.ԲԳԴՆ *վանականաց*
9 Ա. *ամենեքեան*
10 ԲԳԴՆ *ինչս*
10-11 Ա. *զայգի և զբուրաստան, զփէթակ և զտուն, և զմարան և զհամբարանոցս*
11 ԲԳՆ *մուտք* Գ *ըստացուածոյ* Դ՚ն *ստացուածոյ*
14 Ա. *բնակարանք* Բ *որ բնակարանք են* Գ *որ բնակարան են*
15 Ա. *սքանչելագործք ... շնորհակից*
17 ԲԳՆՔ *վեղար և փիլոն*
17-18 Ա.Ք *ունիլ*
19 Ք *աշխարհական* Ա. *փափկիւ և ազնիւ զգեստու*
19-20 Բ *պէճ նէին*
20 Բ *չախշուր*
22 Ա.Ք *ծոմաջանիւք*
24 Ա. *գեղականք* Բ *երիցունքն*
25 Ա. *տանուտիրութեան* Գ *տանուտերութեան*
26 ԲԳՆ *յարեցեալ* Ք *յիշխանս*
28 Ա.Գ *պատաղնալք*
31 ԲՆ *շնորհք* Գ *շնորք*

ոչ իբրև զքահանայ՝ այլ իբր զմարմնաւոր արուեստաւոր՝ վասն մարմնաւոր վարձու իւրոյ։

Եւ ոչ միայն զեղական երիցունք և արհեստք ըստ ասացելոցս անուղղայ կարգօք լեալ թափառականք, այլ և կաթուղիկոսքն՝ զի ոչ թէ մի էր, այլ երիք և չորք կաթուղիկոսք, վասն զի յաղագս փառամոլութեան, և ագահութեան իբրև զմաքսաւորս զաբեալսիւ և հարկիւ ի Պարսից թագաւորէն առնուին զիշխանութիւն կաթուղիկոսութեան՝ և զսուրբ Աթոռն էջմիածին. և ի շրջագայութեան իւրեանց ի մէջ ժողովրդեանն, թագաւորական ծառայ և այլազգի զօրականս շրջեցուցանէին ընդ ինքեանս, և պիրաւունս և դհասս՝ որք ի ժողովրդենէն՝ ճշդիւ և բռնութեամբ ուժգին առնուին որպէս զորդիսն Հեղհեայ*. և կաթուղիկոսքն՝ որպէս ինքեանք արծաթով և կաշառօք ընկալեալք զաստիճան կաթուղիկոսութեան, այնպէս և ինքեանց ձեռնադրեալ եպիսկոպոսունքն և քահանայքն, տղէտք, խառանք, և անպիտանք, ըստ սաղմոսին, որք էին լեալ պաշտօնեայք որովայնի** հանապազ ի դիներբուս դեգերեալք՝ գուսանօք իբր զմարմնաւոր իշխանըս, յառաւօտէ մինչև ցերեկոյ հետևեալ կաւոակայ և լկտի բանից՝ և դատարկութեան։

Եւ սոցին ամենեցուն ասիմ, ո՛չ այլ ինչ՝ եթէ ոչ հետացումն ի սուրբ գրոց և յերկիւղէն Աստուծոյ, ոչ բնաւ ընթեռնուին զիրս, այլ էին փակեալ և լռեալ մատեանք աստուածայինք, վասն զի էր խափանեալ ընթերցումն սուրբ գրոց, որք էին արհամարհեալ յաչս նոցա, հոգով և մոխրով լցեալ և անկեալ յանկեան ուրեք. վասն զի ոչ զգիրս գիտէին և ոչ զզօրութիւնս գրոց՝ ըստ Տեառն բանի։

Արդ՝ եթէ եկեղեցականք այնպէս, զի՞նչ ևս ասացից զաշխարհականացն, որք ոչ բնաւ գիտէին թէ պարտ է քրիստոնէից խոստովանիլ և հաղորդիլ. կամ յամենայն աւուր ի տեղի աղօթից կանխիլ, նաև զպահս ձիթով և գինեաւ ապականէին, ոմանք կնահանք, և ոմանք երկկանայք և ոչ զզօրութիւնս գրոց՝ ըստ Տեառն բանի***։

Իսկ եկեղեցիք և վանօրայք, ամենևեքեան անշուք և անպատիւք, բնաւին կողոպտեալք ի զարդուց և ի սպասուց, մինչ զի և սուրբ սեղանն ևս ամենևին մերկ և բացւ Բազմաժամանակեայ փակեալ դրամբք, խաւար և անլոյս, լռեալ ի պաշտամանց և ի պատարագաց, աւերեալ և խախտեալ շինուածք նոցա, տանիք և որմունք, իբրև զանտէր և այրի զրկեալ ի փեսայէն և օտարացեալ յորդւոց՝ նստեալ թախծեալ հոգւով և անմխիթար լայր ընդ երեսս մարդոյ։

* *Ա. Թագ., Բ, 12—13, 22—25*
** *Հռոմ., ԺԶ, 17—18*
*** *Համմ. Մատթ., ԻԲ, 29*

1 Բ *իբր*
3-4 Ա. *անուղղիւք լեալք* ԲԳՆ *անուղղա*
4 Գն *լեալք*
6 ԲԳՆ *զաբեալսւ*
10 ԲԳՆ *որ*
12-13 ԲԳՆ *իւրեանց փխ ինքեանց*
15 Գ *գօսանօք*
16 Ա. *լկտեաց*
19 Ա. *սրբոց* Ա. *զգիրս* ԲԳՆ *այլ էր*
21 Ա. *սրբոց*· Ա. *արհամարհեալք*
23 Գն *զիրս զօրութիւնս*
26 ԱԴ *կանխել* ԳԴ *զպահս*
27-28 Ա. *երկականայք և չհասիք և մեղօք ապգաշաղախիւ* ԲԳՆ *երկականայք*
30 ԲԳՆ *կողոպտեալ*
31-32 Բ *և խաւար*
32 Ա. *լռեալք* Գ *ի պաշտամանց*
33 Ա. *խախտեալք*
34 Ա. *թախծելով* Բ *ոգով* ԳԴՆ *սգով* Ն *ոգւով*

Արդ՝ բազմապատիկ յոլովութիամբ, քան զորս շարագրեցաք աղաւաղեալ եղծեալ էր բարեկարգութիւն ի վերին աշխարհէս Հայոց, և փոխանակ նորա արձանացեալ և արմատացեալ անկարգութիւն։ Որոյ վասն վշտանային և ցաւէին հոգւով չափ ընդ տգիտաբար մոլորութիւնս յայսոսիկ՝ երկոքին սուրբ վարդապետքն Մովսէս այս և Պօղոս, զոր յանցկլում ճառիղ ծանուցաք զորպէսն։ Եւ Պօղոս վարդապետն փոքր մի ժամանակաւ վաղագոյն հկեալ էր, քան զՄովսէս՝ ի վերին աշխարհս և ի սակս մենակութեան իւրոյ, հակառակորդքն հարստահարէին զնա. իսկ ի գալն Մովսիսի վարդապետին, իրերաց զօրաւիգն եղեալ համաձակ բարեղէին ընդ ամենայն գաւառս։ Եւ սոքա երկոքին վարդապետքս, և Սարգիս պարոնտէրն, և տէր Կիրակոս, ապրեալք յիշատակեալ արամբքն, զոր ի ճառին Մեծ անապատին յիշեցաք, նախ զամենայն գկարգս և զսահմանս անապատի և կրօնաւորութեան սահմանեցին, զորս ի գրոց ընթերցմանէ գտին, և զորս Մովսէս վարդապետն յանապատս Ղւիթայն տեսեալ էր և ուսեալ. և ապա նոքա ամենեքեան յանապատին կալով ազօթէին վասն փրկութեան աշխարհի, և նովին ազօթիւ նպաստ լինէին վարդապետացն՝ խնդրելով ի սրբոյ Հոգւոյն օժանդակել նոցա ի քարոզութիւն Բանին կենաց։ Իսկ երկոքին վարդապետքն Մովսէս և Պօղոս եղեն իրերաց ընկերք իբրև զսուրբ առաքեալսն Պետրոս և Պօղոս, լնալք ամօք հաւատոյ՝ շրջեցան յամենայն գաւառս արեւելեայ աշխարհիս, քարոզէին ամենեցուն զճշմարտութիւն, շինէին զեկեղեցիս, կարգէին քահանայս, հաստատէին դպրոց, ուսուցանէին մանկունս, վասն զի առաքելաբար շրջէին հետիոտս գնալով, ոչինչ առնուին յումեքէ, այլ միայն զկերակուրս, և զբոլոր շաբաթն պահէին, միայն ի շաբաթ օր և ի կիրակի օր լուծանէին նաւակատեաց կերակրովք ի բոլոր տարին, և ի գինւոյ և ի մսոյ մեկնեալք ամենևին։

Իսկ քրիստոնեայք վերին աշխարհիս տեսնելով զճշմարիտ քարոզութիւն նոցա, զի վկայէին բանից և քարոզութեան նոցա և գործք նոցա, ամենեքեան դարձան ի թիւր ճանապարհաց իւրեանց՝ և հնազանդեցան կարգաց և սահմանադրութեան նոցա, իշխանք և եպիսկոպոսունք, և երիցունք, և արք նշանաւորք ոամկօք ամենիւք։ Բայց յոլով արք անուանիք՝ եկեղեցականք և աշխարհականք, ո՛չ միայն ո՛չ ընկալան զքարոզութիւն նոցա, այլ և ներհականային ևս, և կեղծաւորս և խաբեբայ անուանէին. և զսահմանեալ կարգս նոցա խանգարէին ինքեանք և արարանեակք իւրեանց, ուր և հասանէին և ուր և կարէին։

Այլ գայս գործ հակառակութեան առնէին սուրբ թիւրք և օրինազանցք, որք ո՛չ հաճէին ընդ ճանապարհս ճշմարտութեան, լինէին չարա-

1 Ս. *բազմապատիկ*
5 Ս. *սուրբք*
9 Ս. *եղեալք*
9-10 ԲՆ *համարձակք*
10 Ս. *ամենեսեան*
12 Ս. *զամենեսեան*
20 Ս. *յամենեսեան*
21 ԲԳՆ *եկեղեցիս*
22 Ս. *զքահանայս* Ս. *զմանկունս*
25 Ի *կիւրակի*
28-29 ԲՆ *և ամենեքեան*
29 Ս. *թիւրից*
30 ԱԴԻ *եպիսկոպոսունք* փխ *և եպիսկոպոսունք*
31 ԲԳԵԻ *ամենիւ* Դ *ամենայնիւ* Ս. *յոլովք*
33 Ի *կենցաղաւոր* փխ *կեղծաւորս* Ս. *խաբեբայս*
34 Դ *չիմ զսահմանեալ* ԲԳՆ *խանգարէին*
35 ԱԴ *ուր և կարէին* Ի *չիմ ուր և*
36-37 Դ *օրինազանց*

համբաւք և ամբաստանք զվարդապետացն. և մինչև հնաս լուր ամբաստանութեան նոցա առ այլազգի իշխանս աշխարհաց՝ ի խան և ի սուլթան, և մանաւանդ առ կաթուղիկոսն Մելքիսէթ, որ թագաւորական բռնութեամբ վարէր զիշխանութիւն կաթուղիկոսութեան։ Եւ զի ինքն կաթուղիկոսն ևս ոչ էր ի ճանապարհս ուղղութեան, այլ սակս տեղի տալոյ ամբաստանութեան այնպիսեացն՝ և նիւթ առնել ի նոցունց նեղէր զվարդապետսն։ Բաղում անգամ պատահեալ կաթուղիկոսն ասա և անդ զսահմանեալ կարգս նոցա խափանէր. և զի նոցանէ չառաչ կոչեալ զարան չհաս ընկրկէր, և նոցին՝ պատգամս սպառնականս խրախատ բանիւ առաքէր։

Նա և պատահեցան վարդապետքն կաթուղիկոսին, զնոյն զսպառնական և զնեպերական բանս լուան ի նմանէ, զի թագաւորական իշխանութեամբ խրախտացեալ ի վերայ վարդապետացն, և այնքան վանգիցին զվարդապետսն, մինչև առին զձեռնադիր ի Պօղոսէ վարդապետէն ոչ ևս շրջել ի մէջ քրիստոնէից և քարոզել որպէս և չառաջդ պատմեցաք ի նորին ճառին։

Իբրև այն ինչ եղև՝ զի զՊօղոս վարդապետն հանին ի կողմն ինչ և միայն դտեալ զՄովսէս վարդապետն, սկսան սաստիկ մրցանօք մաքառիլ ընդ նմա, և այնքան ի նեղ արկին զնա ևս՝ մինչ որ ինքն Մովսէս վարդապետն զիւր փիլոնն և զգաւազանն և զխաչիչէն առաքեաց առ Մելքիսէթ կաթուղիկոսն առնելով. «Որովհետև ոչ կամիս զքարոզութիւնն մեր, ահաւադիկ ա՛ռ ի քեզ զիշխանութիւնն մեր, և մեք լռեալ դադարիմք ի քարոզելոյ, և ընդ այդ թէ իցեն մեղք ինչ՝ դու տացես զպատասխանի Աստուծոյ»։ Իսկ բարեաց կամեցողն Աստուած, որ զամենայն տնօրինէ, ոչ արար հաճելի զարարս Մովսիսի՝ խորհրդակցացն Մելքիսէթի, վասն որոյ հաւանեցուցին զՄելքիսէթ ոչ առնուլ զիշխանութիւնն Մովսիսի, այլ զգաւազանն իւր առ ինքն դարձուցանել և տալ Հրաման քարոզութեան. և Մելքիսէթն արար այնպէս։ Թէպէտ ևս Հրաման քարոզութեան Մելքիսէթն Մովսիսի, այլ ի նենգելոյ ոչ դադարեաց, զի հանապազ հարըստահարէր, դատափետեալ պարտաւոր առնէր, և զրպարտէր, ինքն և համախոհքն իւր անխնայաբար նեղութիւնս ի վերայ նորա ածէին։

Ընդ որոց արարս տագնապակեալ և հոգւով չափ պատնացեալ վարդապետին Մովսիսի, ձանձրացեալ և իբր զսրտիւ վհատեալ և լքեալ, մտածելով զբանն Տեառն, թէ հալածեսցեն զձեզ ի քաղաքէս յայսմանէ՝ փախիջիք ի միւսն*. խորհեցաւ հեռանալ յարեւելեան աշխարհէն՝ և գնալ յարեւմտեան աշխարհն, և անդ եղելոց քրիստոնէից քարոզել։ Որով

* Տես՝ Մատթ., ժ, 23

1 Ր՝ անբաստանք Ս. վարդապետացն Ա.ԲԳՆ չիմ և (մինչև)
2-3 Ա.Ի ի խանս և ի սուլթանս
3 Ս. թագաւորականաւ
6 Ս. զնիւթ
9 Ս. զպատգամս Ս. զսպառնականս Ս. խրոխտիւ
11 Ս. թագաւորականաւ
12 Ա.Ի վտանկեցին
13 ԲԳ ձեռագիր, Ե ձեռագիր Ս. վարդապետէ
ԳԴՆ ի Պօղոս Բ և ոչ ևս
14 Ա.Ե՝ շրջիլ
17 Ս. սաստկիւք
20 ԴԳ կաթուղիկոս
21 ԲԳԴՆ դադարիմք
22 ԲԳԴՆ պատասխանի
30 Ս. զնեղութիւնս
31 Բ հոգով Ա.ԴԵ՝ ոգւով
33 Ա.Ե՝ ի քաղաքիս յայսմիկ
35 Բ արեւմտեան Ա.Ի Ա.յսու փխ Որով

դիտաւորութեամբ եկեալ և եկեալ ի քաղաքն Երեան՝ ղի անցեալ ընդ այն՝ գնասցէ ի Բէդուպօլիս, որ է Արզրում քաղաք։

Յորում ժամանակի տէր և իշխան էր Երեան քաղաքի և Արարատեան աշխարհին մեծ և հզօր իշխանն՝ Ամիրգունայ խանն, որում դնալ եղև պատահմամբ ինչ տեսանել զվարդապետն Մովսէս, որոյ վասն հարցումն տարաւել խանն իւրոց առաջիկայից քրիստոնէից, որոց պատասխանեալ զուստին և զորպէսն։ Եւ եղև ղի այլ ևս պատահեցաւ խանն վարդապետին, և որքան տեսանէր և խօսէր՝ սիրոյ թուէր վարդապետն առաջի խանին. ղի խնամքն Աստուծոյ շնորհալի ցուցանէր զծառայն իւր առաջի բռնաւորին, որ և ոչ եթող խանն զՄովսէս գնալ յաշխարհն արևմտից, այլ անդէն արդել յԵրևան քաղաքի։ Եւ օր աւուր դայր խանն, և տեսանէր զպատարագն, և զայլ արարողութիւնս ժամակարգութեանն, և խօսէր ընդ նմա երբեմն ի պատճառս իմաստութեան և երբեմն ի պատճառս հաւատոյ, և լսէր զպատասխանիսն վարդապետին, սիրէր և համեղ և լի շնորհօքն Աստուծոյ. և վասն պարկեշտ վարուց նորա սիրեալ գնա խանին, վասն որոյ պահեալ գնա յԵրևան քաղաքի՝ ի կաթուղիկէ եկեղեցւոջն կացուցեալ գնա զամս երիս։

Կայր ի վաղեմի ժամանակաց վայելուչ մատուռ մի շինեալ ի վերայ դամբարանի սրբոյ առաքելոյն Անանիայի, որ էր ի հիւսիսային կողմանէ քաղաքին Երևանայ ի մէջ այգեստանացն, և էր աւերակ և սնմարդալբնակ, որոյ վասն ասաց խանն առ վարդապետն. «Տեսանես զայս եկեղեցիս, որ ամայի կայ. արդ՝ լուր ինձ, և մի՛ գնար յայլ աշխարհ, այլ արա զսա քեզ բնակութիւն՝ և դադարեա աստէն, զի իրերայ մերձակայութեամբ և տեսութեամբ միխիթարեսցուք»։ Այլ և ամենայն ժողովուրդք քաղաքականք և վաճառականք աղաչելով գնոյն խնդրէին ի վարդապետէն։ Յորոյ բանս հաճեալ սրբոյ վարդապետին՝ ձեռն ի գործ էարկ շինել զտեղին, արդեամբ և ձեռնտուութեամբ քրիստոնէից տեղականաց և վաճառականաց, որք յօժարութեամբ տային տուրս ողորմութեան ի շինումն տեղւոյն, վասն սիրոյ վարդապետին, զի բնակեսցէ ի մէջ իւրեանց. վասն որոյ փութանակի շինեցին, շուրջանակի պարիսպ և խցիկս և ժամատուն, և սարաւութ, և այլ տներ յոլով. և կատարեալ զամենայն շինուածսն, բնակեցաւ անդէն վարդապետն իւրովք միաբանօքն, կարգաւն և սահմանաւն այն, զոր կարգեցին ի Մեծ անապատն։ Եւ որ ժողովեցան միաբանք բազումք, միայնակեացք և զրոց աշակերտք իմաստունք և սրբակեացք. կային ի միասին մեծք և փոքունք սիրով հանդարտեալք ի խցի, հանապազօր կանխեալ յաղօթս և յընթերցումն սուրբ գրոց։

3 ԱՐԴՆ *Արարատեան*
4 Ա. *աշխարհի*
12 ԲՆ *ժամակարգութեան*
15 Ա. *պարկեշտից*
18 Ա. *վաղեմեաց*
20 ԱՐԴՆ *Երևանու ի այգեստանեացն*
24 ԱԴ *միխիթարիցուք* Ա. *ամենեքեան*
26 Ա.ՐԴՆ *Որոյ* Ա. *զբանս* Ա.Դ *զձեռն*
27 ԲԴՆ *ձեռնտուութեամբ*
28 Ա. *զտուրս*
29 Ա. *բնակեսցի* Դ *չի՛ բնակեսցէ*
30 Ա. *զպարիսպ և զխուցս* Դ *զպարիսպ*
31 Ա՛Ն *զժամատուն* Ա. *զսարաւութ* Ա՛Ն *զայլ տունս յոլովս*
33 ԱԴ *այնու*
34 Դ *միաբանովքն*
35 Ա.ԴՆ *սրբակացք*
35-36 ԴՆ *հանդարտեալ*

Որոյ ուղիղ վարդապետութեան և բարի քաղաքավարութեան համբաւ հռչակեցաւ ընդ ծագս աշխարհի, ի Հռոմայոցն, ի Քրդաստան, ի Վրաստան, ի Պարսկաստան. ոչ յամենայն աշխարհաց վաճառականք դային անդր և տեսանէին, և զհամբաւն տանէին: Զայս ամենայն յաջողութիւնս, զառաջդիմութիւնս Մովսէս վարդապետին տեսանելով Մելքիսէք կաթուղիկոսին ղշարէր և հնձամզուկ լինէր ի սրտի, բայց ո՛չ կարէր ղչար ինչ առնել Մովսիսի վասն երկիւղի խանին զի նա յոյժ սիրէր զվարդապետն:

Եւ եղև զի Մելքիսէք կաթուղիկոսն իւրովք խորհրդակցովքն սպառ այսպիսի խորհուրդ, ոչ վասն փառացն Աստուծոյ, և ոչ վասն օգտի Մովսէս վարդապետին, այլ վասն շահու և օգտի իւրեանց. զի մամոնայ և արծաթ բազում դումարեսցի ինքեանց: Սահմանեցին, թէ, ի սուրբ Աթոռն էջմիածին մեռոնօրհնէք առնեմք, և այն՝ ձեռամբ Մովսէս վարդապետին, որպէսզի ի նորին համբաւ ի բազում աշխարհաց բազում ժողովուրդք դումարեսցին, յորոց լիցի մեզ շահք յոլովից մամոնայից արծաթոյ: Վասն որոյ ոմանք չեպիսկոպոսացն Մելքիսէք կաթուղիկոսին ևկին առ Մովսէս վարդապետն, և մեծարեցին զնա բանիւ Մելքիսէքի կաթուղիկոսին, զալ էջմիածին և առնել մեռոնօրհնէք: Եւ յայնմ ժամանակի տակաւին ոչ ունէր պատուհան եպիսկոպոսութեան Մովսէս վարդապետն՝ վասն որոյ հրաժարէր ասելով.«Ես ո՛չ ունիմ պատուհան եպիսկոպոսութեան՝ ոչ է այդ իմ գործ, այլ այնոցիկ՝ որք եպիսկոպոսք են»: Յորոյ պատճառէ, ասաց Մելքիսէք կաթուղիկոսն. «Եթէ զնպիսկոպոսութիւնն պատճառէ, ես օրհնեմ զինքն եպիսկոպոս և մի ևս պատճառ յօդևսցէ, այլ ևկեալ օրհնեսցէ մեռոն». իսկ Մովսէս հրաժարէր չեպիսկոպոսական պատուհան ասելով. բայց նորին աշակերտքն, և ամենայն քահանայք և ժողովուրդք՝ թախանձէին յանձն առնուլ զպատուհան եպիսկոպոսութեան, վասն որոյ չանձն էառ վարդապետն Մովսէս լինել եպիսկոպոս:

Ապա Մելքիսէք կաթուղիկոսն ևկեալ ի դամբարանս սրբոյ առաքելոյն Անանիայի, ուր էր բնակութիւն Մովսէս վարդապետին, զոր անուանեցին զտեղին անապատ. և անդ օրհնեաց զնա եպիսկոպոս յաւագ երկուշաբթի աւուրն: Եւ ապա ևկին էջմիածին կաթուղիկոսն և վարդապետն, և ամենայն եկեղեցականք, և աշխարհականք. և յաւագ հինգշաբթի աւուրն օրհնեցին մեռոն. յետ օրհնութեան մեռոնին վաղվաղակի արձակեցին զժողովն, քանզի ի բազմաց աշխարհաց եկեալք էին ժողովուրդքն՝

1 Ս. *բարոյ*
2 Բ *ի Հռոմայոցն*
3 Ս. *ամենից*
4-5 ԲԳՆ *աջողութիւնս*
5 ԴՆ *և զառաջդիմութիւնս* Ս. *Մովսէսի*
5-6 Ս. *Մելքիսէքի*
7 ԲԳՆ *չար*
10 Ս. *զայսպիսի*
14 Ս. *ի բազմաց* Ս. *չիք բազում*
15 Ս. *շահ*
17 ԴՆ *բանիւն* ԲԳԴՆ *Մելքիսէք*
22 Ս.ԲԳԴՆ *Որոյ փխ Յորոյ*
22-23 ԴԳՆ *դեսպիսկոպոսութիւն*
23 Ս.ԴՆ *պատճառս*
24 Ս. *զմեռն*
24-25 Ս. *չեպիսկոպոսականէ*
26 Ս. *ամենեքեան*
28 ԴՆ *լինել*
30 Ս. *Մովսէսին*
31 Ս.Դ *չիք զանգին* ԴՆ *յաւաք*
33 Ս. *ամենեքեան* ԲԳՆ *յաւաքս*
34 Ս. *զմեռոն*
35 ԲԳԴՆ *բազում*
Գ *ևկեալ* ԲԳՆ *զժողովուրդն* Գ *ժողովուրդք*

որոց առնել զօրհնութիւն սրբոյ մեռոնին, և զէջմիածնի, գնացին ի տեղիս իւրեանց։

Իսկ վաճառականացն Ջուղայեցւոց հասեալք ի Սպահան քաղաքն առ Համայեղս իւրեանց՝ ամենեցուն պատմէին զբարեվայելուչ արարուղութիւնսն, զոր տեսեալ էին ի Մովսէս վարդապետէն։ Իսկ Ջուղայեցիք եկեղեցականք և աշխարհականք, լսելով զայն, տենչային ի սէր վարդապետին, և խանդակաթ սրտիւ փափագէին ի տեսութիւն նորին. որ և պատրաստեցին արս նշանաւորս՝ քահանայս և աշխարհականս, և առաքեցին հրաւիրակ Մովսէս վարդապետին, գալ ի Սպահան ի մէջ իւրեանց։ Նա և գլուխն Ջուղայեցւոց, ողորմութենանցն Քրիստոսի արժանին խոջայ Նաղարն գրեաց ի վերայ որդւոյ իւրոյ խոջայ Սարգրապին, որ յաւուրսն յայնոսիկ էր յաշխարհն Ատրպատականի, մեծարել զվարդապետն Մովսէս ի Սպահան. որոց եկեալ և առեալ զՄովսէս տարան ի Սպահան։ Եւ նա անդէն ըստ քրիստոսական վարդապետութեանն, և աւետարանական քարոզութեանն սփոփեալ արգահատէր զնոսա, և հաստատէր ի հաւատս քրիստոսական, ո՛չ միայն զբնակեալսն ի քաղաքին, այլ և զամենայն շրջակայս գաւառին. և կացեալ անդէն ժամանակս ինչ մեծաւ փառօք փառաւորեալ ի նոցունց, և ապա անտի դարձաւ յԵրևան քաղաք ի տեղի իւր։

Մինչ կայր Մովսէս վարդապետն անհոգ պարզմտութեամբ յԵրևան քաղաքի յիւրում տան, նիւթեաց նմա նենգութիւն Մելքիսէթ կաթուղիկոսն այսպիսի օրինակաւ, զի երևեցոյց թուղթ մի որպէս զթամասուկ, յորում գրեալ էր թէ ես Մովսէս վարդապետս տալու եմ Մելքիսէթ կաթուղիկոսին զհարիւր թուման, գնամ ի Սպահան և անտի եկեալ տամ։ Զայս թուղթս տարան ի դիւան Ամիրգունայ խանին, և ճշդիւ պահանջէին հարիւր թումանն։ Իսկ Մովսէս վարդապետն՝ որպէս և էր անպարտ զնոյն պատասխանէր թէ, անպարտ եմ ի դմանէ, վասն զի ո՛չ է իմ տուեալ զգիրդ զայդ, այլ դաւով և հնարիւք իմն գործեալ են զգիրդ։ Եւ թէպէտ պատասխանի առնէր Մովսէս վարդապետն բանիւք բազմօք, սակայն ո՛չ լինէր փրկութիւն, զի կողմն զրպարտողացն ճարտասանք էին և փորձք ի շարիս։ Իսկ խանն իւրովք իշխանօքն և ամենայն քրիստոնեայքն վերահաստատ եղեն զի թուղթն այն հնարք իմն է և Մովսէս անպարտ է, վասն որոյ ամենեքեան ջանային փրկել զՄովսէս՝ և ոչ կարէին. զի երկարեալ գործոյս այսմիկ դատաստանն յերկուս ամիսս. այլ ազատարարն Աստուած փրկեաց զնա այսպիսի կերպիւ։

3 Ա.Դ *Ջուղեցւոց* Ն *Ջուղեցոց* ԲԳՆ *քաղաք*
4 Ի *Համայեղս*
4-5 Ա.Դ *դարարողութիւնսն*
5 Ա. *ի Մօսիսէ* Ա.Դ.Ն *Ջուղեցիք*
7 Ա. *խանդակաթիւ* ԲԳՆ *փափաքէին*
8 Ա. *զարս*
10 Ա.ԲԳ.Դ.Ն *ջուղեցոց*
11 Գ *խօճայ*
12 ԲՆ *յաշխարհս*
14 Ա. *քրիստոսականի*
14-45 Ա. *աւետարանականի*
15 ԲՆ *քարոզութեան*
17 Ա. *զամենեսեան* Ա. *մեծիւք*
18 ԲԳԴՆ *անդի*
20 Ա. *պարզիւ մտութեամբ*
21 Ա. *զննգութիւն*
22 Ա. *այսպիսեաւ* Ա. *զթուղթ*
23 Ա.Դ *չիմ թէ*
24 Դն *հարիւր* Դ *ճ*
25-26 Ա.Ն *զհարիւր* ԳԴ *զճ*
31 Ա. *ամենեքեան*
32 Ա.Ի *հնար* Բ *չիմ է (վասն*
34 Ա. *այսոսիկ*
35 Ա. *այսպիսեաւ*

Մելքիսէթ կաթուղիկոսն և իւր եղբօրորդի Սահակ կաթուղիկոսն, ունէին ոմս նախանձու ընդ Համազասպ եպիսկոպոսին, որ էր Հաւուց թառայ վանացն և Երևան քաղաքին առաջնորդ, և էր սա այր խրոխտ և ճարտարաբան, որ մեծաբանութեամբ պահպանէր զկողմն Մելքիսէթեան, և թեւածէր ի վերայ նոցա. որ և Մելքիսէթեանք վասն այսմ քինու արկին զվնասն ի վերայ Համազասպ եպիսկոպոսին։ Եւ եղև մի յաւուր միում մինչ կային ի հանդէս պատարագին, Սահակ կաթուղիկոսն նկաց առաջի խանին ի մէջ առնին, և ասաց ի լուր հանդիսին. «Թուղթ այդ բնաւին սուտ է՝ զի ոչ իմ հօրեղբայր Մելքիսէթ կաթուղիկոսն գիտէ՝ և ոչ Նս. այլ ես դիտեմ, զի Համազասպ եպիսկոպոսն է արարեալ զայդ նենգութիւնդ»։

Յայնժամ խանն և ամենեքեան՝ որք կային անդ, ի ձայն ցնծութեան օրհնեցին զԱստուած, որ աղատեաց զանպարտն ի ձեռաց զրպարտողացն, և ի նմին հանդիսի պատուհասեցին զթուղթն գայն, և դնացին Մելքիսէթեանքն կորացուխս և ամօթով ի տեղիս իւրեանց։

Յետ այսորիկ անցին սակաւ ժամանակք ի վերայ՝ նկեալ նմա հրովարտակ ի մեծ Շահաբաս արքայէն առ Ամիրգունայ խանն վասն Մովսէս վարդապետին, յորում գրեալ էր թէ, ծանիր Ամիրգունայ խան՝ զՄովսէս անուամբ վարդապետն՝ որ բնակի ի քում քաղաքի առ քեզ, փութանակի առաքեսցես զնա առ իս, և ուր և իցեմ ես՝ նկեալ գայցէ զիս։

Եւ պատճառ այսմ խնդրանացս սպիտակացուցեալ մոմն էր[84], վասն զի Մովսէս վարդապետն ի ժամանակին յորում էր ի քաղաքին Երուսաղէմ, անդ ուսաւ զարուեստն մոմ սպիտակացուցանելոյ, և արդիս ինքն յամենայն ամի սպիտակացուցանէր, և զսպիտակ մոմ վաճէր յկիզիկեացւոջն ի պատարագն, և յամենայն ժամակարգութիւնսն, զի պոռնս տէրունականս և զնշանաւոր սրբոց՝ մեծաւ հանդիսիւ կատարէր սպիտակ և պայծառ մոմիկինօք՝ և մեծաւ ցնծութեամբ. որպէս գրեալ է ի պատմութիւնս սրբոյն Յօհաննու Օձնեցւոյ[85]։

Դարձեալ որպէս սովորութիւն է Բաղաւորաց՝ որ տղայս և աղջկունս ժողովեն յամենայն աշխարհաց, այսու սովորութեամբ և այս Շահաբաս թագաւորս ի նախարարաց իւրոց զոմն, որում անունն էր Բայինդուր բէկ, ընդ որում և այլ ևս ներքինիս առաքեաց յաշխարհն Ատրպատականի ժողովել զտղայս և զաղջկունս վասն թագաւորին. և նոքա գալով հասին ի քաղաքն Երևան։ Եւ յաւուր միում ի պրօսանս ելեալ շրջէին Բայինդուր բէկն և Ամիրգունայ խանն ի միասին, և պրոսնելով հասին յանդաստան ուր բնակեալ էր Մովսէս վարդապետն. և անդէն բերեալ

1 Ի: շիր *կաթուղիկոսն (և)*
2 Ս. *զոմս*: Ս. *Համազասպի*
3 Ի: *Երևանայ*
5 Ս. *այսոսիկ*
7 Ս. *հանդիսի*
16 Ս. *սակաւք*
18 Ս. *Մօսէսի*
21 Ս. *այսոցիկ փխ այսմ*
22 ՐԴՆ *ի քաղաքն*
23-24 Ս. *յամենայնի*
24 ՐԴՆ *սպիտակացուցանել* ՐԴ՝ *սպիտակ ԴՆ վաճէ*
25 Ս. *յամենեսեան*
26-27 Ս. *սպիտակօք և պայծառիւք*
29 Ս. *զտղայս և զաղջկունս*:
30 Ս. *յամենից*
31 Ս. *որոյ ե անուն*
33 ՐԴՆ *տղայս և աղջկունս*
Ն *տղայս և աղջկունս*
36 Ր և *յանապատն* Ս՝ *բնակէր*

Մովսէս վարդապետին յայն սպիտակ մոմէն աղերսեալ հօքն մոմ Բայինդուր բէկին, և հօքն մոմ Ամիրգունայ խանին: Եւ Բայինդուր բէկին տեսեալ առաւել պայծառ՝ չքնաղ և հրճուալի զսպիտակութիւն մոմին, յոյժ սքանչացաւ՝ և հաճեալ հատանիցաւ և ասաց. «Պահեմ զսա և տարեալ աղերս մատուցանեմ շահին»: Իբրև զայն լուաւ Ամիրգունայ խանն, ասաց. «Որովհետև այդպէս ասացիր՝ և դիմս բաժին եղիցի ընդ քումդ, դի ընդ դմին աղերսեալ լիցի առաջի թագաւորին»:

Իսկ Մովսէս վարդապետն իբրև հասս զբանս և զդործս իշխանացն, ասաց. «Որովհետև այդպէս արարիք՝ հօքն ևս մոմ բերեալ յաւելումք ի վերայ զոյս և այնպէս մատուսցես առաջի թագաւորին»: Իսկ ի գրաւ գործոյ իւրոց Բայինդուր բէկն գնաց առ թագաւորն՝ և ընդ բազում և զանազան աղերսիւն, մատոյց և զսպիտակ մոմն առաջի թագաւորին, որոց ի տեսանելն թագաւորն առեալ զմոմն ի ձեռն իւր տեսանէր և զընծէր, և հարցանէր թէ ուստի իցէ, և Բայինդուր բէկն ասաց զուստին: Այդ՝ վասն այսորիկ թագաւորն գրեաց հրովարտակ ի վերայ Ամիրգունայ խանին, զի առաքեսցէ զՄովսէս վարդապետն առ ինքն. զոր և առանց իրիք յապաղելոյ առաքեաց Ամիրգունայ խանն զՄովսէս վարդապետն առ շահն:

Վասն որոյ հասեալ վարդապետին Մովսիսի յԵրիանայ և գնաց ի քաղաքն Բաղդատ, զի անդ էր Շահաբաս թագաւորն, զի կամէր զքաղաքն Բաղդատ յետ առնուլ յՕսմանցւոց, զոր և էառ յետ սակաւ աւուրց. և մինչ տակաւին ոչ էր առեալ զԲաղդատ այլ շուրջ նստեալ պատերազմէր, անդ Մովսէս վարդապետն յանդիման եղև թագաւորին. յորում ժամանակի էր թուականն մեր ՌՀԵ, և թագաւորն հարցումն արարեալ վասն սպիտակութեան մոմին, իսկ վարդապետն առաջի կացեալ ըստ պատշաճին տայր զպատասխանին:

Ապա զրեաց շահն հրովարտակ և ետ զՄովսէս վարդապետն՝ և առաքեաց ի Սպահան քաղաք առ կալա բէկ իշխանն, որ ի թագաւորէն քաղաքապետ կարդեալ էր Սպահանու, զի տացէ հարիւր լիտր մոմ և նրբ ծառայ ի ծառայից թագաւորին՝ Մովսէս վարդապետին, և զամենայն ծախս նոցա հոգասցէ: Եւ այսպէստանեացն որոց և հատանիսցի Մովսէս վարդապետն, անպատճառ տացին նմա, զի անդ սպիտակացուսցէ զրմոմն, և ուսուսցէ դծառայսն՝ և տարցէ զնոսա առաջի թագաւորին, ուրև իցէ նա: Առեալ վարդապետին Մովսէսի զարքունի հրովարտակն և եկն ի քաղաքն Սպահան, նոյնչ կալա բէկին, և նա կատարեաց զամենայն հրամանս թագաւորին, տուեալ ի Մովսէս զմոմն և ծառայ երիս, որոց անուանքն էին Ցաւուս, Ղարչղայ, Բէհզատ, և զայն այդին զոր Թիլիմ խանի այդի ասեն: Եւ Մովսէս յամիս ումն աշխատեցաւ անդ,

1 Ա. յայնմանէ սպիտակէ Ա.Ի: զհօքն
2 Ա.Ի: զհօքն
2-3 ԲԳԴՆ բէկն
5 Ա. զաղերս
9 ն արարէք Ա.ՆԻ զհօքն
11-12 Ա. բազմայ և զանազանից
15 Ա. զհրովարտակ
21 Ա. սակաւուց
27 Ա. զհրովարտակ
29 Ա. զհարիւր
29-30 Ա. զերիս ծառայս
30 Ա. զամենեսեան
33 Ա. ուսուցանել Ա.Ի: չիմ և (տարցէ), չիմ զնոսա
36·37 Ա.Դ չիմ որոց անուանքն էին Ցաւլուս, Ղարչղայ, Բէհզատ, և զայն
37 Ա. և զայդին ԲԳՆ այդի զայն՝ Դ զայդին զայն

սպիտակացոյց ղմոմն՝ և ուսոյց զծառայսն, և ապա առնալ սպիտակացուցանել մոմն և զծառայսն գնաց ի քաղաքն Ցահրապատ. քանզի անդ էր շահն, զի զբաղդատ քաղաքն առնուլ էր և դարձ արարեալ գնացեալ էր ի Ցահրապատ առ ի ձմեռիլ անդ, վասն որոյ անդ գնաց Մովսէս:

Ի նմին աւուրսն անդ էր մեծ և փառաւոր իշխանն Ջուղայեցի խոջայ Նազարն՝ որ յոյժ բարեկամ էր Մովսէսի, և յարոյց տուաջի Շահաբաս թագաւորին: Որոյ ձեռամբն Մովսէս վարդապետն մատոյց զսպիտակ մոմն և զուսուցեալ ծառայսն առաջի թագաւորին, որոյ ի տեսանելն յոյժ զուարճացաւ սրտիւ՝ և ի ձեռս առեալ զբօսնոյր ի նոսա, և բազմաւ յուսադրական բանիւ արձակեաց առ ժամուն զվարդապետն:

Յաւուրսն յայնոսիկ եկեալ եհաս ասն Ծննդեան և Յայտնութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և որպէս սովորութիւն էր Մովսիսի հանապազ մեծաւ հանդիսիւ կատարել զտէրունական տօնսն, և ես առաւել զտօնս զայս բազում պատրաստութեամբ և յարմարապոյն կարգաւորութեամբ, քանզի ինքն թագաւորն ևս հանդիպեալ էր ի տեսութիւն և ի զբօսանս տօնին գալ, որ և եկն: Եւ վարդապետն Մովսէս թափեաց զերկու սպիտակ մոմս մարդաչափ և ի հրաձգուցի վիշերն ի լուսանալ տօնին լուցեալ յերեկորեայ յանուն սրբոյ Աստուածածնին և ինքն յոտին կացեալ հսկելով ցառաւօտն ջերմպոյն սիրով և հաստատուն հաւատով, յորդաբուխ արտասուօք աղօթելով առ Տէր, բարեխօս արկեալ առ միածին Որդին զսիրամայր սուրբ Աստուածածինն, զի շնորհալի ցուցցէ զտօնախմբութիւնն այլահաւատ թագաւորին, և արկցէ ղգութ և զողորմ ի սիրտ նորա ի վերայ քրիստոնեայ ազգին: Որ և ողորմութեամբ Աստուծոյ եղև քան խնդրոյ վարդապետին, զի յաւուր տօնին մինչ նստէր սրբազն ի զբօսանս տօնին՝ և վարդապետն զկնատաւորեալ իւրովք պաշտօնէիւքն կատարէր զկարգն ջրօրհնեաց, յոյժ հաճեալ և հաւանեալ էր սրբազն ընդ տօնախմբութիւնն. և դիպեալ ի վերայ Մովսիսի՝ որ և հարցումն ևս արարեալ էր թագաւորն յաղագս վարդապետին՝ ընդ խոջայ Նազարին, և նա զբանս բարիս յոլովս խօսեցեալ էր վասն Մովսիսի առաջի թագաւորին:

Իսկ զինի աւուրց ասաց սրբազն ընդ խոջայ Նազարին. «Զի՞նչ խընդիրք ունի վարդապետն ձեր ի կատարիսցուք, զպա՞տճ թէ դպատակիցա, թէ այլ ինչ, զոր ինքն կամի»: Պատասխանեալ էր խոջայ Նազարն՝ թէ սա այնպիսի այր է, որ զաշխարհաւ և զընչիւք նորին զանց արարեալ է՝ և բնաւ մի ոք ի զոցանէ ոչ է կարիք սորա. այլ թէ շնորհ առնես տալ

5 ԳԴ *Ջուղեցի*
7 Գ *վարդապետ*
9 ԳՆ *բազում*
10 Ա. *յուսադրականաւ* ԲԳՆ *առ ժամուն*
11 Բ *Յայտնութեան*
14 Ա. *բազմաւ ... յարմարապունիւ*
16 Գ *զոր և եկն*
16-17 ԳՆ *երկու* Գ Բ
17 ԲԳՆ *մոմ*
18 ԳՆ *սուրբ*
19 Ի: *յառաւօտն* Ա. *ջերմպունի* Ա. *Հաստատունով*
20 Ա. *հորդաբղխիւ*. Գ *հորդաբուղխ*
21 **Ե** *ցուցէ*
22 Ա. *այլահաւատոյ*
22-23 ԲԳԴ *զութ և ողորմ ի սիրտս* Ն *զութ և ողորմն ի սիրտս*
23 Ա. *քրիստոնէի* ԳՆ *Զոր*
29 Ա.Ի *բարիս և յոլովս*
31-32 Գ.Ի *խնդիր*
32 ԲԳՆ *զանձ թէ զպատակիցա*
33 Ա. *զայլ*
35 Գ *շնորհք* Ա. *շնորհս*

սմա զպարգևս, զլուսաբարութիւնն էջմիածնի տուր. զի անդ սպասաւորելով ակնկալեսցուն անմիկ աղօթիսցէ վասն կենաց թագաւորին»։ Յորոյ խնդիր յոյժ հաճեալ և հաւանեալ էր արքայ. և առեալ էր Մովսիսի զլուսաբարութիւնն սուրբ էջմիածնի թագաւորական նոմոսիւ[86]։

Ապա Մովսէս վարդապետն եկեալ ի Յահրատապատու մեծաւ փառօք և անպատում ցնծութեամբ, ոչ միայն իւր՝ այլ և ամենայն քրիստոնէից, ակնակալ եհաս յերևան քաղաք, որ և ի սուրբ էջմիածինն, և առանց յապաղելոյ զձեռն ի գործ էարկ նորոգութեան սրբոյ Աթոռոյն, ի թուականիս մերում ՈՀԶ ի Վարդավառի պահոդ երկուշաբաթի աւուրն սկիզբն արարին շինութեան և նորոգութեան։

Արդ լսես զնորոգութիւն և ոչ դիտես թէ որպէս էր աւերութիւնն. վասն որոյ Հարկիմ զրկել զաւետութիւնն, զի ծանիցես զթշուառութիւն սրբոյ Աթոռոյն. որով և ղցաւիլն և զկսկծալն զոր ունէին ամենայն ազգն Հայոց և վարդապետք ժամանակին վասն սրբոյ Աթոռոյն, ընդ նմին և գաշխատանս Մովսէս վարդապետին և զիւրոց աշակերտացն, և զտուրս և զողորմութիւնս քրիստոնէից ի նորոգումն սրբոյ Աթոռոյն[87]։

Որպէս ասէ մարգարէն Դաւիթ թէ, սրարին զներուսադէմ որպէս խուզս մրգապահաց*, և նաայի մարգարէն ասէ վասն Սիովնի, իբրև զրհովանի ի մէջ անխնեաց**. ըստ այսմ սարասի գոգցես և զատուածաբնակ սուրբ Աթոռս. զի ամենևիմբ ունայնացեալ էր սուացուածոց՝ և կողոպտեալ ի զարդուց, ոչ գիրք, զի ոչ էր անդ ժամասիւ և կամ բնթերցումն. ոչ գկնատ և շուրջառ, զի ոչ էր ժամակարգութիւն և պատարագ, մինչ զի Քրիստոսի իջման տեղն և սուրբ սեղանն ևս ոչ ունէին ծածկոց. ոչ կանթեղք, զի ոչ գոյր լոյս, այլ հանապազ ի խաւարի, բայց այլազգի մահմետական ումն վառէր ձիթոյ ճրագ և դնէր ի վերայ բեմին, և այն ևս երբեմն երբեմն, վասն անցաւոր ճանապարհորդաց. զի տեսանելով զայն՝ զողորմութիւն արասցեն նմա. ոչ խնկարկութիւն. զի ոչ գոյր բուրվառ և խունկ, և սալարկ յատակ եկեղեցւոյն քանդրանդևալ, եղևալ որջք գևանց, և սողնոց, և մեծամեծ լուսամուտքն՝ զորս ունի, ամենևին ի բաց կայր առանց վանդակի, ուստի մտեալ ի ներքս թռչունք՝ ընուին զեկեղեցին ծառուվք և ծղովք և այլ գեղխովք. զոր յամենայն աւուր Հարկիւ սրբէաք. և ընդ այգն ընդ առաւօտն ի լուսանալն, ձայնք թռչնոցն խափանէր զձայն ժամասիլոյն։

Իսկ յարտաքուստ կուսէ զլուխ կաթուղիկէին, և տանիքն ամենայն

* *Սաղմ., ՀՀ, 1*

** *Նաայի, Ա, 8*

1 ԲԳՆ *պարգևս* ԲՆ *զլուսաբարութիւն*
4 Ա. *սրբոյ* Ա. *թագաւորականաւ*
5 ԲՆ *վարդապետ* Ա.ԳՆ *Յահրատապատու*
5-6 Ա. *մեծիւք ... անպատում*
6 Ա. *ամենից*
7 ԲԳԴ *էջմիածին*
8 ԲԳ *ձեռն ... նորոգութեանն*
9 Ա. *աւուրն, որ է յունիսի ամսոյ քսան և չորսն, զակիզբն*
11 Ա. *լսելով* Ա. *չիք և* ԲԳԴ *նորոգութիւն*
12 ԲԳԴՆ *ծանիցէն*
17 Ա. *չիք թէ*
18 Ի *հիւսս վխ խուզս*
21 Ա. *ժամասացութիւն*
22 Ա.Դ *և ոչ շուրջառ*
24 Ա. *զծածկոցս*
25 Ա.Ի *զճրագ ձիթոյ*
26 ԲԳՆ *երբեմն և երբեմն* Ա. *անցաւորաց*
27 ԲԳՆ *ողորմութիւն*
28 Ն *հուովառ* Ա.ԲԳԴՆ *սալայարկ*
29 Ա.Ի *որջ* Ա. *մեծամեծք* Ա.Դ *ամէնն* ԲԳՆ *որ ունի ամենն*
31 ԲԳՆ *ծըրտով* Դ *ծառով*
Ա. *այլօք գեղխօք* ԳԴ *գեղխօք*
34 Ա. *ամենեքեան*

և երեսք որմոյն քանդքանդեալք և քարինքն թափեալք, և որմոյ յատակացայ վէմքն փշրեալ և ծակոտեալ։ Եւ ի վաղեմի ժամանակաց որ շուրջ վեհեղեցեան շինութիւն եղեալ էր, և դարձեալ աւերեալ և ի վերայ միմեանց փլուզեալ էր, այնքան բարձրացեալ էր հողն և մոխիրն, որ յամենայն կողմանց շուրջ վեհեղեցեան հօիճն կանգուն բարձրացեալ էր աղբիւսն և հողն՝ եկեալ և ծածկեալ էր զհիմունս և զաստիճանս եկեղեցւոյն, որք կան յարտաքուստ կողմանէ։

Իսկ ղարիպ և սպասաւ, և անօթք եկեղեցւոյն, և կամ տան բնաւ ոչ գոյր զի որ ինչ և լեալ էր ի հին ժամանակաց, կաթուղիկոսքն՝ զամենայն վաճառելով և պրաւ դնելով վատնեալ էին. և արդ՝ ես պրաւ եդեալ անօթքն գոյին առ մահմետական իշխանս. պրաս ապատեալ Մովսէս վարդապետն. որ էր Աջն Արիստակէսի Հայրապետին՝ որդւոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ. այլև վաչ Աղջոյ վանայ սրբոյն Սահակայ, ընդ որով և խաչ՝ և սկիհ և բուրվառ՝ և շուրջառ՝ և այլ ևս ինչք։

Եւ ասացեալ բանիս՝ որք ի մէնջ յուշացանն զտեղին անբնակ զոլ ի մարդկանէ, և ասեմ զիսկն, ոչ էր ամենևին անբնակ, այլ դու համարեա իբրև զանբնակս, վասն զի կաթուղիկոսունքն՝ անդ չէջմիածին ոչ բնակէին, այլ Երևան քաղաք ի Կաթուղիկէ չեկեղեցւոջն, և կամ թէ ի շրջագայութիւնս աշխարհաց. բայց սնապուխք ոմանք սինկքորք[88] և գունհիկք, որպես զգեղական հողագործս, որք վարնորդ մշակօք[89] բնակէին չէջմիածին, և զաւուրս տարւոյն զբաղումն ի դեղօրայսն անցուցանէին, քան թէ չէջմիածին։

Եւ յորժամ Մովսէս վարդապետն սկիզբն արար նորոգութեան, տարակուսէին վասն հողոյն և մոխրոյն, որ բլրացեալ կայր շուրջանակի, թէ պիտ՞ որդ լինի պահել. բայց որովհետև կամքն աստուածային քաղցրացեալ էր՝ և ձեռնարկութիւն գործոյն նորին հաճութեամբ էր՝ դիւրաւ հնարիւ եղև բարձումն հողոյն, վասն զի ածին ղջուր ի գետոյն յորդ և վարար. և կապեցին ի կողմն ինչ հողոյն, և բաղում մշակս արկին ի գործ, և սկսան մշակքն փորել զհողն և տալ ջրոյն, և այնպէս առնելով՝ ջուրն առեալ զհողն տանէր և քարն մնայր. որ ի սակաւ աւուրս փութանակի յամենայն կողմանց բարձաւ հողն, և բացաւ վայրն ամենայն. և եղև հարթայատակ գետին, և մնայեալ քարինքն շարեցան ի չորս տանցն, լեալ ձեռնաւու գործոյն. և ապա լայն և ընդարձակ սպարիսպ պատուցին շուրջանակի, յօրինեալ բուրգս ութն ի նմա։

Եւ զպարիսպն զոր շինեցին, այսպէս ձեռնցին։ Որպէս և տեսանի

1 ԲԳՆ *քանդքանդեալ* ԲԳՆ *թափեալ և որմոյ*
3 Ա. *փշրեալք և ծակոտեալք* Ա. *վաղնմեաց ն ի վաղնմի*
4 Ա.Գ *զեկեղեցւոյն*
4-5 Ա. *յամենից*
6 ԲԳՆ *և եկեալ ծածկեալ*
8 Բ *սպաս* Ա. *կամ անտ*
9 Ա. *հնոց*
10-11 Ա. *եկեալք անօթքն*
11 ԳՆ *անօթք է զայս փխ զորս Գ զոր*
12 Ա.Գ *Աջ*
14 Ա. *զսկիհ և զբուրվառ և զշուրջառ*
ԲԳՆ *այլ ինչ ևս*
15 ԲԳ *որ*
16 Ա.Բ *համարեաց*
17 ԳՆ *ի չէջմիածին*
18 Ա. *քաղաքի*
19 Ա. *սինկիքորք* ԲԳՆ *սնիկքորք*
20 Ա. *վարնորդիւք*
26 Ա. *դիւրահնարիւ*
27 ԲԳՆ *ջուր*
31 Ա. *յամենից փխ յամենայն*
33 Ա. *զկայն*
34 Գ *շուրջանակի* Ա. *զբուրքս*

եկեղեցւոջ անդ չորեքին խորանք եկեղեցւոյն, որք կան յօրինեալք ի նմա ընդ չորս կողմս աշխարհիս, յարտաքուստ կուսէ եկեղեցւոյն ի ճակատս այս չորից խորանացս։ Նախ՝ չափեցին ի ճակատէ արեւելեան խորանին ընդ արեւելս հս. գաղ, որ լինի ԿԳ. Հալաբի, և ապա արկին զարեւելեան կողման պարիսպն. այսպէս իմացիս և արեւմտեան կողմանն։ Սոյնպէս և հիւսիսային կողման խորանի ճակատէն չափեցին ընդ հիւսիս հս. գաղ, որ լինի ՇՀ. Հալաբի. և ապա արկին պարիսպ. այսպէս իմացիս և գհարաւային կողմանն։ Եւ ապա ի մէջ պարսպին արեւմտեան կողմն շինեցին պարտատ և տունք ի պէտս ինքեանց և հիւրոց. և ի հիւսիսային կողմն և յարեւելեան կողմն շինեցին խցեր ի բնակութիւն միաբանից. և ի հարաւային կողմն շինեցին սեղանատուն, անտեսատուն, փռնատուն, համբարանոց ցորենոյ և այլ նիւթոց։ Եւ ամենայն շինուածք այսոքիկ, միայն պարիսպն ի հողոյ եղև շինեալ, իսկ այլքն ամենեքեան լիատեալ քարիւ և թրծեալ աղիւսով և կրով և բոով շինեցան պեղեցիկ և վայելուչ յօրինուածով։

Յետ այսորիկ եկեղեցւոյ գմբէթի տանիքն նորոգեցին, քանզի սալերն քանդեալ և ի տեղւոյն ի բաց ոստեալք էին։ Եւ թէ որ տեղեացեալ գիտել կամիցի զչափ լուսակառոյց Քրիստոսանկար աստուածաբնակ տաճարի սուրբ էջմիածնի, այսքան է. Ծ. Հալաբի գաղ երկայնքն է յարեւելից դէպ յարեմուտս, եւ Ը. Հալաբի լայնքն է, հիւսիսոյ դէպ ի հարաւ, և Ե. Հալաբի բարձրութիւնն է ներսի կողմանէն, կաթուղիկէի պորտէն մինչ ի գետինն. այս չափերս եկեղեցւոյ մէջն է ներսի կողմն՝ թող զպատերն։

Եւ օր յաւուր նորոգեալ հաստատէր սուրբ Ամոռն, որով և ամենայն կարգ և կրօնք հաւատոյս քրիստոնէութեան. վասն դի համբաւ նորոգման սրբոյ Ամոռոյս հռչակեալ բաւալեցաւ ընդ ամենայն աշխարհ, ի Հոռոմաստան, ի Պարսկաստան, ի Քրդաստան, ի Վրաստան, և ամենեքեան գուարճացեալք ցնծային։ Այլ և յաշակերտաց իւրոց առաքէր Մովսէս վարդապետ ի քարոզութիւն յամենայն կողմանս, որք գնացեալ հոգեբուխ քարոզութեամբ և բարեկրօն վարուք հաստատէին զիւրգոյ և զկրօնս քրիստոնական հաւատոյս, և եկեղեցական աւանդութեան, վասն դի ուր և

3-9 Ա.Դ չիմ նախ ... կողմանն
4 Գ խ և ծ գաղ կ և Գ ԴՊ հալապի
5 ԲԳԴՆ զարեւմտեան
6 է ի հիւսիսային փխ հիւսիսային
7 Գ Ծ և Զ հալաբի
9 ԲԳ յարեւմտեան Ա. զդարպասս և զտունս
10 Ա. խուցս
11-12 Ա. զսեղանատուն, զփռնատուն, զաղբանոցատուն, զհամհարանոցս է սենեակատուն, փռնատուն, տնտեսատուն
12 ԳԴՆ համբարանոցք Ա. այլոց
13 ԲԳԴՆ շինուածքս
14 Ա. լիատելով ... թրծելով
15 Ա. շինեցին գեղեցիւ և վիյելչիւ
16 Ա. տանիսն
16-17 Ա. սալքն քանդեցեալք
17 Ա. ոստեցեալք
18 Ա. Քրիստոսանկարի աստուածաբնակի
19 Ա. տաճարիս սրբոյ ԲԳՆ տաճարիս սուրբ էջմիածնայ Դ տաճարիս
20 Ա.Դ հալապի
20-21 է դէպ հարաւ
22 են մինչև Ա. այսոքիկ չափքս Բ ի ներսի ԳԴՆ կողմանէն Ա. կողմանէն թող զպատսն
22-23 զպատսն
24 Գն օր աւուր Ա. զսուրբ
26 ԲԳՆ աթոռոյն
27-28 ԲԳՆ գուարճացեալ
28-29 Ա.Դ վարդապետս
29 Ա. հոգերդխի Դ հոգերուղիս
30 Ա. բարեկրօնիւք
30-31 Ա. քրիստոսականի
31 Ա. եկեղեցականի

գնային զՃշմարտութիան գործս ցուցանէին քան նմանութիան վարդապետին լուսանց. շինէին զեկեղեցիս, կարպէին քահանայս՝ և ընկրկեալ կոծանէին զհակառակորդս Ճշմարտութիան, որով զօրացեալ յառաջնայր Ճշմարտութիւնն։ Այլ և հողելից սուրբ վարդապետս տէր Մովսէս կարգեաց զպրաւուն ի մեծափառ սուրբ ուխտն Յոհաննավանք[90], ուր ժողովեաց մանկունս յոլովս, և պամիննեցան պծախոն և պէտան ինքն հոգայր, և մանկունքն անդրադ և անխափան ուսանէին զեկեղեցական ուսումն, և զգիրս Աստուածաշունչս, և զիմաստասիրականս, որք եղեն ամենեքեան արք ախտանիք և օգտակարք աշխարհի. վարդապետք, եպիսկոպոսք, և արեզայք, և երիցունք, և ամենայն վանօրայք, որք ամայացեալք ի խաւարի կային, եղեն լցեալք մխարանօք, արեզայիւք, և կրօնաւորօք, և զեղօրայք՝ վարժ երիցամբք։ Վասն որոյ ամենայն ժողովուրդք Հայոց՝ որք չընդհանուր աշխարհս բնակեալք են յառաջին կաթուղիկոսաց անկարգութենէն ձանձրացեալք՝ և ի սորին բարեկարգութենէն մխիթարեալք, կամօք և յօժարութեամբ կաթողին սրտիւ կամէին զի ինքն սուրբ հայրս մեր Մովսէս վարդապետս լիցի կաթուղիկոս, որք գրովք և աղաչանօք թախանձէին յամենայն տեղեաց, վարդապետք և եպիսկոպոսք և երեսփի արք, զի յանձն առցէ պատրիարքական կաթուղիկոսութեան, բայց նա հրաժարէր զանձն անարժան առնուլ առաքելական աստիճանին։

Այլ և այրս Աստուծոյ տէր Մովսէս վարդապետ հանապազ ի սրտի իւրում վարանէր և տխրէր, և ցաւէր, վասն ճ. թուման մուղապային, որ անտանելի ծանր բեռն և անխղելի անուր եղաւ՝ ի վերայ սրբոյ Աթոռոյն էջմիածնի, ո՛չ միայն սա, այլ և ամենայն ազգն Հայոց։ Որ և վասն փրկութեան Քրիստոսաբնակ սրբոյ Աթոռոյն՝ Մովսէս վարդապետս ոչ դանդաղեալ ծուլացաւ խնայելով յինքն կամ ի ծերութիւն տկարութեան, այլ ելեալ գնաց ի դուռն արքային ի քաղաքն Ղազբին. քանզի անդ էր թագաւորն Շահաբաս ի Ռշէ. ամի թուականիս միում, և մատուցեալ այսր և անդր առ նախարարս թագաւորին՝ աղաչէր զնոսա ծանուցանել արքայի առ ի բառնալ զճ. թուման հարկն ի սուրբ էջմիածնէ, և նախարարքն պատեհ ոչ համարեցան, ասելով. «Այս թագաւորս յոյժ արծաթասէր է և ագահ է, և յայդքան շահուց արծաթոյ ո՛չ զանց առնէ, և մանաւանդ զի գործդ այդ իւր է հաստատական, որով առնուլ տեսանի զի ոչ զանց առնէ զդրամս, վասն որոյ պարտ է քեզ լռել ի ժամս և յաւուրս յայս. այլ մեք գտեալ զպատշաճ ժամ, խօսեսցուք առաջի արքայի»։ Վասն որոյ տխրեալ և թախծեալ սրտիւ դարձաւ ի Ղազբինս և եկն ի սուրբ էջմիածին։

1 Ն *նմանութեանն*
2 ԲԳԴՆ *եկեղեցիս* Ա. *զքահանայս*
5 Ա. *զպրաւուն*
6 Ա. *զմանկունս*
8 ԲԳԴՆ *զիրս ... իմաստասիրականս*
10 Գ *երիցունք* Ա. *ամենեքեան*
11 Ա. *միաբանիւք*
12 Ա. *վարժիւք* Ա. *ամենեքեան*
15 Ա. *կաթուղիկոս*
16 Բ *արօք*
17 Ա. *ամենից* ԲԳՆ *ամենայն*
18 [illegible]
19 Ա. *առաքելականի*
24 Ա. *քրիստոսաբնակի*
24-25 ԱԳ չիք *Մովսէս վարդապետս* Բ *վարդապետ*
34 ԲԳ *յաւուրս* ԱԳ *այսոսիկ* ԲԳԴՆ *պատշաճ*
35 Ա. *տխրեցեալ և թախծեցեալ* Է չիք *տխրեալ*
36 ԱԷ *Ղազբինոյ*

Իսկ արքայն Շահաբաս եղեալ ի Ղազբինու դնաց ի Ջահրապատ ի քաղաքն, որ կոչի Աշրաֆ, առ ի ձմեռել անդ. և ըստ հիծական բնութեանս մարդկան հիւանդացեալ մեռաւ ի ՈՀԸ. ամի թուականութեանս մերում, և Յունվար ամսոյ է. և կտակաւ հանդուցանց տալ պատուհանին Բոռին իւրոյ. քանզի արատամիտ և բազմախորհուրդ արքայս Շահաբաս զորդիս իւր զոմանս սպան՝ և զոմանս կուրացոյց, վասն երկիւղի՝ զի մի գուցէ թագաւորեսցուցին իշխանքն, և մնացեալ էր Բոռն մի՝ որդի աւագ որդւոյ իւրոյ, վասն որոյ նա պատուհանին Բոռին իւրոյ: Եւ ժողովեալ ամենայն նախարարք՝ և հաւատարիմք ազն թագաւորին, թագաւորեցուցին պՈռն, և կոչեցին զանուն նորոյ թագաւորին՝ Շահսէֆի, զի վիճակաւ երկին զանուն նորա, որ և վիճակն՝ և կոչումն անուանն ուղղակի դիպեցաւ, զի և անուն նորընծայ թագաւորիս հօրն Սէֆի էր. և նստաւ թագաւոր նորընծայ Շահսէֆի ի նոյն թուականին ՈՀԸ. ամին, և Յունվար ամսոյ ԺԲ:

Եւ եղև ժամանակս այս պատշաճ և ըմբռն ժամ, վասն բանալոյ Ճ. Թուման մուղալային. վասն որոյ ժողովուրդն Ջուղայեցւոց բնակեալքն ի քաղաքն Սպահան, և մանաւանդ ողորմութեանցն Աստուծոյ արժանին քրիստոսասէր մեծ իշխանն իսօջայ Նազար գրեալ թուղթ՝ սրընթաց փայտիւ հասուցին յէջմիածին առ Մովսէս վարդապետն, վաղվաղակի հասանիլ ի դուռն նորընծայ թագաւորին, վասն բանալոյ Ճ. Թումանին. որ և անյապաղ ճնպով եղեալ Մովսէս վարդապետն դնաց ի Սպահան քաղաք ի դուռն թագաւորին. և կացեալ ի դրան թագաւորին ամիսս ութ. և տեսեալ զամենայն նախարարս, զհինս և զնորս և հաճեալ զմիտս նոցա բազմաբնծայ աղերսիւ:

Ապա սուրբ այրն Աստուծոյ պատրաստեաց զընծայ՝ որպէս վայել է թագաւորաց՝ սկուտեղամբ ղուտ ոսկի դահեկան, և այլ ևս ինչս պատուականս, և գրեալ գիրս յօժարութեան՝ որ է արդեայ. և վարդապետն և իսօջայ Նազարն միջնորդութեամբ նախարարացն ձօնեցին առաջի թագաւորին, որ ի հարցանելն արքայի վասն վարդապետին, իրազգած արար զնա իսօջայ Նազարն, պատմելով նմա զաղնուականութենէ վարդապետին: Այլ և թէ նախածանօթ և հաճելի ծառայ էր յառաջագոյն մեծի թագաւորին՝ հաւատն գրեմ. և այժմ ևս ազօթող է վասն կենաց թագաւորին. բայց զայս ինչ խնդիրս ոչն, զի այլ արարեալ զթագի ի տատապետ ժողովուրդս իւր արքայ՝ և զծանր բեռն, որ ընդ

1 ԱԴՆ *Ջահրատատպատ*
2 Ա.Է *Աշրաւ*
4 Ս. *Յունվարի*
4-5 ԲՆ *զթագաւորութիւն*
6 Ս. *յորդւոց* Ս. *իւրոց*
7 Է *թագաւորեացն*
8 Ս. *աւագի որդւոյն* ԲԳՆ *աւաքւ* Գ *որդոյն* ԴՆ *որդւոյն*
9 Ս. *ամենեքեան*
10 Ն և *թագաւորեցուցին*
11 ԲԳԴՆ *նոր*
13 Է *Սիֆի* ԲԳԴՆ *նորընծայն*
14 Ս. *Յունվարի*
15 Է *ի ժամանակս վխ ժամանակս*
18-19 Ս. *զթուղթ սրընթացիւ*
20 ԲԳԴՆ *հասանել*
21 Ս. *զոր և անյապաղիւ* ԲԳ *զոր և*
23 ԲԴՆ *յամիսս ութն* Գ *յամիսս ութ* ԲԳԴՆ *զհին*
24 Ս. *զբազմաս ընծայիւ և աղերսիւ*
25 ԲԳԴՆ *ընծայ*
26 Ս. *զայլ*
27 Ս. *զգիրս*
32 Է *հաւուն*
34 ԱԴՆ *զոր*

վայր և ի տարտապարտուց եղաւ ի վերայ մեր, այսինքն հարիւր թուման մուղադայնոչ հրամայեցէ արքայ բառնալ զայն:

Եւ արքայ Շահսէֆի անդէն ի հանդիսին յոլով բանս խօսեցաւ ընդ խօջայ Նազարին. այլ և հարց ի Մովսէս վարդապետէն վասն մուղադայ հարիւր թումանին, և ողորմութեամբն և շնորհօքն աստուածային՝ ամենայն բանք վարդապետին դիւրին և ախորժ մուէր առաջի թագաւորին: Քանզի ամենաթագաւորն Աստուած, որ ունի ի ձեռին զսիրտս թագաւորաց*, հաճեցոյց և քաղցրացոյց վկայս թագաւորին, որ ի յոյր ամենայն հանդիսին ասաց, թէ անցայ ի հարիւր թուման մուղադայէդ զոր տայիք ի դիւան թագաւորին, այսուհետև կացէք ազատ և աղօթեցէք՝ վասն մերոյ կենաց և յաջողութեան: Յայնժամ խօջայ Նազարն՝ և Մովսէս վարդապետն՝ և ամենայն իշխանքն՝ որք կային առաջի թագաւորին, ամենեքեան խոնարհեալ երկիր պագին թագաւորին. և համբուրեալ զձեռս իւրեանց. ի ձայն գոհութեան օրհնեցին զԱստուած և զթագաւորն. և ուրախութեամբ արձակեալք յերեսաց աւանին գնացին ի տեղիս իւրեանց: Այնուհետև Մովսէս վարդապետն և խօջայ Նազարն, հանապազօր շրջելով ի դրունս իշխանաց, և առ վերակացուս դիւանական մատենից, և առ գծագիրսն, և այնքան աշխատեցան, մինչ զի յամենայն մատենից ուր և գրեալ կայր բանն այն, յամենայնէ հանեալ արտաքսեցին:

Եւ ապա գրեաց միւս ևս արքայ խօջայ Նազարն և մատոյց առաջի թագաւորին խնդրելով՝ զի տացէ նմոն թագաւորական կնքով վասն բառնալոյ հարիւր թուման մուղադային. այլ և ընդ նմին խնդրեաց յարքայէ տալ իշխանութիւն կաթուղիկոսութեան Մովսէս վարդապետին: Եւ արքայ Շահսէֆի կատարեաց զամենայն խնդիրս նորա. զի եւ նմոն թագաւորական կնքով ազդու և հաստ բանիւ, թէ բարձի զհարիւր թուման մուղադէն, զոր ի մերոց թագաւորաց եղեալ էր ի վերայ Աթոռոյն ձեռոյ էջմիածնի[91]. այլ և նոյն զհրամանն կաթուղիկոսութեան Մովսիսի վարդապետին ըստ հայցուածոյ ամենայն ազգին Հայոց: Արդ՝ այսպէս բազմաւորկ աշխատութեամբ, և յոյժ բազում գանձս ծախելով իբր թէ Ն. թուման, հազիւ թէ կարաց բառնալ զծանր բեռն հարկին ի սրբոյ Աթոռոյն սուրբ վարդապետն Մովսէս առնել պթագաւորական նոմոս՝ դարձաւ մեծ ուրախութեամբ և եկեալ հնաս յաստուածաբնակ Աթոռն ի սուրբ էջմիածին. և սիրեցաւ համբաւ ա-

* Առակք, ԻԱ, 1

2 Ա.ԲԳՆ *մուղադէն*
4 Ա. *ի Մօսէսէ*
5 Գ *զողորմութեամբն*
5-6 Ա. *աստուածայնօք*
6 Ա. *ամենեքեան*
9 Ա. *ամենայնի*
10 Ն *մուղադաէդ*
11 ԲԳՆ *աջողութեան*
12 Ա. *ամենեքեան*
13 ԲԳՆ *երկրպագին*
18 Ա. *դիւանականաց* Գ *չիմ և (այնքան)*
19 Ա. *յամենից*
21 Ա. *զարզայ*
22 Ա. *զնոմոս* Ա. *թագաւորականաւ*
24 Ա. *զիշխանութիւն*
25 Ա. *զամենեսեան*
26 Ա. *զնոմոս* Ա. *թագաւորականաւ*
27 Ա. *մուղադայն*
28 Գ *հրբոման* ԴՆ *հրաման*
29 ԲԳԴ *Մովսէս* ԲԳՆ *հայցուածոց*
30 Ա. *բազմաերկիւ* Ա. *զբազում*
32-33 Ա *և առեալ ... զնոմոսն ... մեծաւ* ԲԳՆ *և առեալ ... նոմոսն ... մեծաւ*
33 ԲԳՆ *և եկն*

պատուիրան սրբոյ Աթոռոյն յընդհանուր աշխարհ յայգս Հայոց, և ամենևքեան լցեալք անպատում ուրախութեամբ ի ձայն ցնծութեան գոհանային զԱստուծոյ։

Եւ այնուհետև յամենայն աշխարհաց արք երևելիք, եկեղեցականք և աշխարհականք, սկսան առատապաբար առաքել թուղթս աղերսանաց առ Մովսէս վարդապետն՝ խնդրելին և աղաչելին զի մի ևս պատճառս յօդևսցէ, այլ վասն հաստատութեան հաւատոյ՝ և կարգի եկեղեցւոյ՝ յանձն առցէ զկաթուղիկոսութիւնն, և այս թուղթ աղաչանաց առաքեցաւ ի Պարսկաստանայ, ի Վրաստանայ, ի Քրդաստանայ, ի Հոռոմաստանայ։ Եւ սուրբ Հայրս մեր՝ ոչ թէ ի փառս անձին, որ փառատրեալ էր յԱստուծոյ և ի մարդկանէ, այլ վասն օգտի ժողովրդեան Աստուծոյ՝ և հոգևոր կրօնից հաստատութեան, լսող եղեալ աղաչանաց ամենեցուն, ընկալաւ զաստիճան կաթուղիկոսութեան, և օծմամբ ամենատուրը Հոգւոյն Աստուծոյ օծաւ Հայրապետ ամենայն ազինս Հայոց, պայծառ և պանծալի ժառանգորդ բարձրագահ Աթոռոյն սուրբ Էջմիածնի՝ ի մերում թուականութեանս ՈՀՀ ամի Յունվար ամսոյ ԺԴ. յաւուր անօրէնութեան Տեառն։ Եւ ըստ բանին Տեառն, ճրագ արփիաւորիչ եղաւ ի բարձր աշտանակի ի գերագահ Աթոռս. լինիլ լուսատու տանս Աստմանայ, և աստուածաշնորհ վարդապետութեամբն իւրով մխիթարէր զամենեսեան քաղցր քարոզութեամբ ուղղելով ի ճանապարհս արդարութեան։*

Եւ էր սուրբ Հայրս մեր մաքրակենցաղ՝ և սրբասնունդ, երկայնամիտ և ողորմած, որ և բազում և առաւել գերիք ազատեցան ի գերչաց՝ ձեռամբ սորա, վասն զի յաւուրս սորա անհաշտ խռովութիւն էր ի մէջ Պարսից և Օսմանցւոց, որոյ սակս աւար և գերութիւն կարի յոլով լինէր յերկուց կողմանց, և զորս և տեսանէր ի գերեացն, անվրէպ առնոյր զնով և ազատէր։ Եւ եկաց սա ի բարձրագահ Աթոռն ի սուրբ Էջմիածին՝ ուղիղ վարդապետութեամբ նորոգեաց զաւետարան նորոգ շինութեամբ, և պայծառացոյց միաբանօք և վարդապետօք, և յարմար և հաստատուն ժամակարգութեամբ, և փարթամացոյց եկեղեցական անօթով՝ և մարմնական առատաձեռնով. և եկաց սա կաթուղիկոս յերիս ամս և ի կէս և ի թուականիս ՌՁԱ. ամին ի Մայիս ամսոյ ԺԴ. վախճանեցաւ, պակասեալ աստի մահուամբ և յաւելեալ առ Տէր հանգրստեամբ. և դնաց առ անձկալին իւր Քրիստոս, որ հանապազ մշտապաղատ և սրբանուէր աղօթիւք կրէր յոգի իւր։

1 ԲԳՆ *աշխարհս*
2 Ա. *անպատմաւ*
4 Ա. *յամենից*
5 Ա. *պնուէս*
9 ԳԿ *Քրդաստանայ*
9-10 Ա.ԲԳՆ *Հռոմաստանայ*
12 Ա. *հոգևորաց*
15 Ա. *սրբոյ*
16 Ա. *յունվարի Ա. յօր Դ յաւր*
17 ԲԳՆ *հրագս*
18 Ա. *ի բարձու Դ աշտանակ ... լինել* Ն *լինել*
19 Ա. *աստուածաշնորհիւ*
20 Ա. *քաղցու*
23 Ա.Դ *շիմ և առաւել*
27-28 Ա. *էջմիածինն*
29-30 Ա. *յարմարիւ և հաստատանով*
31 Ա. *մարմնականաւ*
32 Կ *ԺԴ*
33 Կ *յաւելու*
34 ԳՆ *անձկալի*
34-35 Ա. *զոր ... մշտապաղատիւ. սրբանուիրիւ*
35 ՌՆ *սրբանըւէր*

Եւ պատահեցաւ լինիլ վախճանի սորա յՆիւևան քաղաքի ի վանս դամբարանի սրբոյ առաքելոյն Անանիայի, վասն որոյ և տարեալ ի հասարակաց գերեզմանատունս, ի Կողևո կոչեցեալ բլուրն. զի վասն գերեզմանի Կողևո վարդապետին, որ անդ է, այնպէս կոչեն զբլուրն, և յարահոսակ գերեզմանի Կողևո վարդապետին, և Մելքիսէթ վարդապետին, ի մէջ երկուցս այսօրիկ պատրաստացին զիւր հանգստեան սրբոյս այսորիկ, և անդէն ի մէջ երկուց կափուցեալ տապանաց եղին զսրբասանեալ նշխարսն մարմնոյ նորա, մեծաւ պատուով և փառօք, ի փառս Քրիստոսի և ի բարեխօսութիւն ամենայն քրիստոնէիցս: Եւ որպէս կենդանութեամբ սորա զուարճացեալ ցնծացեր ամենայն ոք, առնպէս և մահուամբ սորա սգագեալ լեալ տրտմեցաւ ամենայն ոք. ո՛չ միայն քրիստոնեայք, այլ և մահմետականք. նա և քաղաքապետն ինքն Թահմազղուլի խան որդին Ամիրգունայ խանին, և ամենայն իշխանք իւր՝ որք և եկին ի թաղումն Մովսիսի կաթուղիկոսին, և սգակից լեալ քրիստոնէից՝ ողբային զմահանալն նորին, զի այնպիսի աստուածահաճոյ և աշխարհաշէն այր պակասեալ յաշխարհէ, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի, և աղօթիւք սորա Տէր մեզ ողորմեսցի. ամէն[92]:

ԳԼՈՒԽ ԻԸ

ՎԱՍՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՏԵԱՒԻՆ ՓԻԼԻՊՊՈՍԻ: ՅՈՐՈՒՄ ԵԻ ՎԱՍՆ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԵԱՑ ՍՐԲՈՒՀԻ ԿՈՒՍԱՆԱՑՆ ԳԱՅԻՆՆԵՆԱՅ ԵԻ ՀԱՒՓՍԻՄԵԱՅ ԵԻ ՅԱՅՏՆԵԼՈՅ ՆՇԽԱՐԱՑ ՆՈՑԻՆ

Տէր Փիլիպպոս կաթուղիկոսն էր յերկրէն Բարմայ, որ այժմ ասի Աղբակ, ի գեղջէն՝ որոյ զանունն կոչեն Էրնկան: Գոլով սորա ի սիս տղայութեան չորեքտասան ամաց աւելի կամ պակաս, լուաւ զճգնողական վարս միայնակեաց Մեծի անապատին. մեծատենչ փափագմամբ ելեալ գնաց ի Մեծ անապատն՝ լինիլ կրօնաւոր, և հետևիլ առաքինական

1 ՐԴԵ *լինել* Ա. *վախճան*
3 Գէ *գերեզմանատունն* Ա.Դ չիք *զի*
4 Ա. *Կողոան* Ա.Դ չիք *այնպէս կոչեն զբլուրն*
5 Ա. *Կողոան*
6 Ա. *զդեր*
7 Ա. *կափուցելոց*
8 Ա. *նշխար*
9 Ա. *ամենեցուն*
9-18 Ա.Դ չիք *Եւ որպէս ... ամէն*
11 Բ *սրգաղդեացք*
12 ՐԳԵ *քաղաքապետն*
13 Դ *որդի*
13-14 Դ *իշխանքն*
15 Դ *լեալք* Ա.ՐԴԴԵ: *զմեռանիլն*
17 Ե *հզեցի փխ հզիցի*
18 Բ *Ամէն քառից ճետո գրչի՝ Ավետիս երեցի ճիշատակարանը. Եւ գտատապնալ գրչիս Աւետիս երիցու յերեանցի մեկ բերան հայր մերայիւ յիշեցէք ի Քրիստոս*
22 Ա. *սրբուհեաց*
23 Բ *նշխարհաց*
24 Դ չիք *տէր*
25 ՐԳԴԵ *զորոյ*
26 Ա. *չորեքտասանց*
27 ՐԳԵ *Մեծ անապատին* Ա. *մեծատենչիւ*
27-28 ՐԳԵ *փափաքմամբ լինել*
28 Ա. *առաքինականաց*

վարուց մաքրակենցաղ սրբութեամբ, որում կարի փափագէր։ Իսկ կրօնաւորք անապատին ո՛չ Թողին զնա յանապատն, վասն տղայական հասակին և անմօրուք դոլոյն. սակայն նա ոչ դարձաւ յաշխարհ՝ այլ անդէն ևկաց արտաքոյ անապատին ի մէջ մայրենացն, որ շուրջ էր զանապատիսն, և համբեր այնպէս զամիս ութն։

Ընդ այն ժամանակս Մովսէս կաթուղիկոսն տակաւին վարդապետ դոլով՝ քարոզութեամբ շրջէր յաշխարհի, և լուսաւորէր զամենայն մարդիկ իբրև զարեգական. իսկ Հայրն Մեծի անապատին Սարգիս պարոնտէրն նա զՓիլիպպոսն յաշակերտութիւն Մովսէս վարդապետին։ Առ որ կացեալ Փիլիպպոս ևհաս յարբունս հասակի ի տիս երիտասարդութեան, օրհնեցին զնա արեղայ կուսակրօն քահանայ. և նա ի տուէ և ի գիշերի հետևէր ճգնողական վարուց և գործոց առաքինութեան, և չընթերցումն և յուսումն աստուածային զրոց։ Զորոյ յառաջադիմութիւնն տեսանելով վարդապետին Մովսիսի՝ իւրով հաւանութեամբն և վկայութեամբ ամենայն եղբարց, նա նմա զիշխանութիւն վարդապետական, և չետ ամաց ինչ զպատուական վարդապետական. և ի ՌՀԲ թուին օրհնեաց զնա եպիսկոպոս։

Եւ ի ՌՁԱ թուին՝ յորժամ ևհաս վախճան Մովսէս կաթուղիկոսի, ժողովեցան առ նա եպիսկոպոսք և վարդապետք՝ և երևելի արք, նա և Թահմազդուկի խանն՝ իշխան քաղքին և ողբալով ասացին. «Որովհետև այդպէս հաճեցաւ վասն քո Տէրն և տուողն կենաց, զի մեկնիս և գնաս ի մէնջ. այլ արդ՝ խնդրեմք ի հայրապետէդ զքոյ քո, զի մի կարի Թողուցուս զմեզ որք՝ այլ յայտնեա մեզ թէ զո՛վ ոք տաս մեզ լինել հայր և հովիւ զկնի քո». և նա ասաց՝ «Դուք գիտէք, զո՛ր ոք և կամիք ընտրեցէք»։ Իսկ բոլոր ժողովոյն ասացին. «Մեք, բոլոր աշխարհ զքեզ ընտրեցաք, և այժմ դու զով ոք և ընտրես՝ ընդունելի է մեզ»։ Եւ նա ասաց. «Ես զՓիլիպպոս վարդապետն կամիմ լինել փոխանորդ իմ, և յաշորդ սրբոյ Աթոռոյն էջմիածնի». և նոքա ամենեքեան իբրև զայն լուան՝ յօժար կամօք հաճեցան, և ընկալան զՓիլիպպոսն լինել կաթուղիկոս։ Իբրև ծանեաւ համբաւ մահուանն Մովսիսի յամենայն աշխարհ յարևելս և յարևմուտս, նա և բանն այն Թէ՝ վասն Փիլիպպոսի պատուիրեալ է առնել կաթուղիկոս, ամենեքեան կամօք և յօժարութեամբ հաճեալ հաւանեցան. վասն որոյ յիւրաքանչիւր տեղեաց առաքեցին զթուղթս վկայականս, զի

1 Ա. մաքրակենցաղի Ա. սրբութեան, որոյ... փափագիւր ԴՆ սրբութեան ԲԳ փափաքէր
2 Ա. տղայականի
3 ԱԳ անմօրուս Գ անմուրուք դալոյն Ա. ոչ դարձաւ կրկին
4 Ա. մայրենացն
5 ԱԳ ութ
7-8 Ա. մարդ
8 ԲԳԴՆ Մեծի ... պարոնտէր
9 ԲԳՆ զՓիլիպպոս
12 Ա. ճգնողականաց Գ յընթերցմուն
13 Ա. որոյ զառաջդիմութիւն ԲՆ զորոյ զառաջադիմութիւն ԳԴ զառաջադիմութիւնն
14-15 Ա. ամենից
15 ԲԳՆ իշխանութիւն
16 ԲԳԴՆ զաւազան
18 Ա. Մօսէսի կաթուղիկոսին ԲԳՆ կաթողիկոսին
19 Ա. երևելիք
19-20 ԱԳ չի՛ նաև Թահմազդուկի խանն՝ իշխան քաղաքին
23 Ա. որբս ԱԴՆ լինիլ ԱԲԳԴ զոր ոք
27 ԱԴՆ լինիլ
28 Ա. յօժարիւք
29 ՐՆ զՓիլիպպոսս Գ զՓիլիպպոս ԱԴՆ լինիլ
33 Ա. յիւրաքանչիւրոց ԲԳՆ թուղթս

Փիլիպպոս վարդապետն լիցի կաթուղիկոս. և մինչ ի գալ թղթոցն էանց այն ամն, և եհաս ի վերայ թուականն ՈՋՐ. յորում ամի օրհնեցին զնա կաթուղիկոս օծմամբ Հոգւոյն սրբոյ, յամսեանն Յունվարի ԻԳ. ի տօնի անօրէնութեան Տեառն։ Եւ ապա Հայկազեան՝ թէպէտ ի վերայ մահուան Մովսիսի վշտալից լեալ սրտմտեցան, այլ ի յաջորդելն Փիլիպպոսի բերկրեալ զուարճացան, զի փոխանակ հօր եկաց որդի իշխան հանուր ազգի. ըստ վկայելոյ մարգարէին Դաւթի. և թէպէտ վախճանեցաւ Մովսէս, յաջորդեաց ընդ նմա Յեսու. և թէպէտ վերացաւ Եղիա, եկաց փոխանակ նորա Եղիսէոս նովին Հոգւով։*

Իսկ յորժամ ժամանեալ թուականն մեր եհաս ՈՋԴ. ամն՝ թագաւորն Սահմբօլայ սուլթան Մուրատ կոչեցեալ՝ այր կարի խրոխտ, հզօր, յաղթող և իմաստուն, ելեալ ի Սահմբօլայ հօրն հարիւր հազար հեծելապօրօք, և եկն յաշխարհս Աղթամառու. և շուրջ նստեալ զբերդին երեւանու՝ պատեալ պաշարեաց զնա. և յաւուրս իննէաւ զբերդն, և զիշխան բերդին զԹահմազղուլի խանն՝ զորդին Ամիրզունայ խանին, կալեալ առաքեաց ի Կոստանդնուպօլիս, և ի նախարարաց իւրոց զոմն բարեբարոյ և խելացի իշխան՝ որում անունն էր Մուրթուզայ փաշայ, հաստատեաց իշխան ի մէջ բերդին տասն և հինգ հազար սպառազէն և ընտրեալ հեծելօք. և ինքն անցեալ գնաց ի Թաւրէզ քաղաք, և անտի դարձաւ ի վերայ վանայ և գնաց ի տեղի իւր։

Իբրև էանց այն ամառն, և ի գալ ձմրանն՝ յորում էր թուականն մեր ՈՋԵ, ելեալ թագաւորն Պարսից Շահսէֆի հարիւր հազար հեծելօք եկեալ եմուտ յաշխարհս Արարատու, և նստաւ ի վերայ բերդին Երևանայ յաւուրս իննսուն և երիք. մեծաւ տաժանմամբ և բազում չարչարանօք, և բազում արիանց հեղմամբ հազիւ թէ կարաց յետ առնուլ զբերդն ի ձեռաց Օսմանցւոց։ Եւ ի շարժմանէ այս երկուց ինքնակալ թագաւորաց, աւերեալ ապականեցան աշխարհք՝ արեւելք և արեւմուտք և մանաւանդ աշխարհն Արարատու փուր շրջակայ գաւառօքն. վասն զի երկոքին թագաւորքն իւրեանց հեծելօքն և հետևելովքն անդր դումարեալ կատարեցին զգործս իւրեանց, և դարձան։

Իսկ Սուրբ Աթոռն էջմիածին բաց յեկեղեցւոյն և զմբէթաշէն տանցն, ամենևքեան բնաւին աւերեցան, զի որ ինչ և փայտակերտ տունք և շէնք կային քանդեցան. վասն որոյ ամէր Փիլիպպոս կաթուղիկոսն բազմաւորկ վաստակօք զամենայն շինուածսն վերստին շի-

* Դ Թագ., Բ, 4—15

1 Ա.ԲԳԴ*ե լինիցի*
5 ԲԳԵԶ *վշտալից* Է *յաջորդին*
7-9 Ա.Գ *չիմ ըստ վկայելոյ ... նովին Հոգւով*
7 Բ *վկայելոյն*
13 ԲԳԴ*ե Արարատու*
13-14 Բե *էրէվանայ* Գ *էրէվանու*
15 ԲԳ*ե խան*
18 Ա. *սպառազինիւք և ընտրելովք*
21 Ա.Գ *ձմռանն* Բե *ձմերանն*
22 Ա. *և եկեալ*
23 Ա.ԲԳԴե *Արարատու*
Ա.ԲԳԴ *էրէվանայ* ե *էրևանայ*
24 Ա.ԲԳԴե *նստաւ և երիք*
24-25 Ա. *բազմօք չարչարանօք և արեանց հեղմամբ*
26-27 Ա. *ինքնակալաց թագաւորացս* ԲԳԴե *թագաւորացս*
27 Ա. *արեւելից և արեւմտից*
28 Ա.ԲԳԴե *Արարատու* Ա. *իւրովք շրջակայիւք*
29 Է *հեծելօք և հետևելովք*
31 Է *ի զմբեթաշէն*
32 ԲԳԴե *զոր փխ զի որ*
33 Է *չիմ տունք* Աե ԲԳԴե *կայր*
33-34 ԲԳԴ *կաթուղիկոսաւ*
34 Ա. *բազմաւորկիւք* Ա. *զամենեսեան*

նաց բովանդակ. քանզի վասն միայն փայտեղէն շինուածոց Ո ղուռուշ նազտ դրամ նորին արհեստաւորացն եւ ի մէջ սեղանատանն Հայկերութի սեղանն՝ և որ ի նմա այլ կահք էին, յառաջն՝ որ շինեցաւ ի ժամանակս Մովսիսի՝ փայտակերտ շինեցաւ. վասն որոյ դիւրաւ աւերեցաւ, այլ այժմ Փիլիպպոս կաթուղիկոսն քարիւ շինեաց զսեղանն Հայկերութին. և զտեղի նստելոյն և զսալարկ յատակս նորին, զի մի՛ դիւրաւ աւերեսցի ի ժամանակս հնձելաշարժութեան: Եւ արեւելեայ կողման խցերն բովանդակ նոր շինեցաւ, վասն որոյ ոչ ըստ առաջին ձեւոյն է, այլ որիշ ձեւով շինեալ է: Նա և զեկեղեցւոյ տանիքն, զատ ի գմբէթի դպակէն, զբովանդակն նորոգեաց: Եւ քարակապ ֆարշն, որ շուրջ զեկեղեցւոյն է, և միւս ֆարշն, որ առաջի խցերոյն և այլ տանցն է: Եւ արտաքոյ պարսպին մերձ առ Հարաւային դրանն երկու դեռաշէն, ձիթհանք նոր շինեցան, զի ոչ դադր բնաւ: Ջատ յայսցանէ և զայլ ևս մասնաւոր շինուածս բազումս շինեաց աստ և անդ՝ զորս յանուանէ ոչ յիշեմք:

Իսկ Երևանայ անապատն՝ զորմէ ասացաք դամբարան դոլ Անանիայի առաքելոյ, որ ինչ և շինուածք դոյր անդ բովանդակն փայտակերտ էր, զատ ի մատուռէն. և սոքա ամենեքեան քանդեալ աւերեցան ի դալ վերոյասացեալ երկուց թագաւորացն. որ և զայնս ևս զբովանդակն ամենայն վերստին շինեաց, ոչ թէ փայտիւ, այլ քարիւ և բոով գմբէթիւայ՝ զժամատունն, զսեղանատունն, զտնտեսատունն, զխցերն, և զայլ ևս շինուածսն ամենայն:

Յետ կատարման ամենայն շինուածոց՝ որ յէջմիածին և որ յանապատն, ի թուին ՌՀՀ գնաց սուրբ հայրն մեր տէր Փիլիպպոս կաթուղիկոս ի Սպահան քաղաք՝ ի մէջ քրիստոնէիցն, որ անդ՝ եկաց յամս և ի կէս՝ քարոզելով նոցա զօրէնս Աստուծոյ՝ և հաստատելով ի հաւատս քրիստոսական, այլ և ժողովէր ի նոցուցն զնուիրակն սուրբ էջմիածնի. և Ջուղայեցիք և ամենայն քրիստոնեայքն ընդունէին զնա մեծաւ և բազմազան փառօք իբրև զհրշեստակ Աստուծոյ՝ վասն ճգնազգեաց և առաքինական վարուց նորա:

Եւ վասն սրբոյ Լուսաւորչի Աջին՝ որ տակաւին ի Սպահան էր, որպէս յառաջագոյն պատմեցաք վասն նորա, թէ հրամանաւ առաջին Շահաբասին տարան զԱջն ի քաղաքն Սպահան: Այս Փիլիպպոս կաթուղիկոս հանապազ ըղձատուչուր և խանդակաթ տենչմամբ փափագէր,

1 Ա. *փայտեղինաց* Ա. *զհազար փխ Ո*
5 ՐԳՆ *կաթուղիկոս*
6 Գ *հայկերութիւնն* Ա.ՐԳՆ *զսալայարկ*
7 ԲՆ *հնձելշարժութեան*
8 Ա. *խուցսն* Ա.Դ *առաջնոյ*
9 Ա. *այլով փխ որիշ* Ա. *տանիսն*
11 Ա. *խցացն*
12 Ա. *հարաւայնոյ* ՐԳՐ *դրան*
Ա.Ն *զմբէթաշէնք փխ դեռաշէն*
13 Ն *որ փխ զի* ՐԳՆ *այլևս*
16 Ա.ԳՆ *զերևանայ*
17 Բ *առաքելոյն* Ա. *բովանդակ*
21 Ն *չիմ զանանատունն*
21-22 Ա. *զխուցսն ... ամենեսեան*
21 Բ *խցերն*
22 Ա. *ամենից*
23 Ա.Դ *որք*
25 Բ *քրիստոնէից*
25-26 Ա.Ն *յամ մի և կէս*
27 Բ *ի նոցուց* Ա. *սրբոյ*
28 Ա.ԳՆ *ջուղեցիք* Ն *ամենեքեան*
28 29 Ա. *մեծիւք և բազմազանիւք*
30 Ա. *առաքինականաց*
31 Ն *Աջոյն*
33 34 Ա.Դ *կաթուղիկոսս*
34 Ա. *ըղձատուչուրիւ և խանդակաթիւ*
Գ *փափաքէր*

թէ որո՞վ արդեօք իցէ հնար դի առնալ զսուրբ Աջն բերել ի սուրբ էջմիածին, որոյ վասն ի բաղում աւուրս խնդրանօք խօսեցաւ ընդ քահանայս և ընդ ժողովուրդս Ջուղայեցւոց, և մանաւանդ ընդ մեծատաւսա և քրիստոսասէր իշխանին Խօջայ Սարգսային՝ որպէս Խօջայ Նազարին, որ յարդևանս ժամանակի սա էր աւագ Ջուղայեցւոց. խօսեր և աղաչէր Փիլիպպոս կաթուղիկոս, դի տացեն վկուսաւորչի Աջն ի նա, որ տարցէ ի սուրբ էջմիածինն, ի տեղի իւր:

Իսկ Ջուղայեցիք ոչ կամէին տալ զսուրբ Աջն և կամ հեռանալ նմին յիւրեանց միջէն, վասն դի ասէին. «Յօտարուստի աշխարհի և յայլասեռ ազգաց միջի բնակեալ եմք. և մանաւանդ ի մէջ ննիդժոտ և օձաբարոյ ազգին Պարսից, և ոչ ունիմք զնշան ինչ և առիթ հաւատաւորութեան հաւատոյս քրիստոնէական, ոչ վանօրայք և տեղիք ուխտից, և ոչ քրիստոսական սրբոց նշանաց կառուցմունք, ոչ պերճանք և պամբարանք սրբոց Աստուածոյ, և կամ մերոց հարց և հաւուց նախնեաց, այլ միայն այս սուրբ Աջս է՝ զորոյ զհրաշագործութիւնս տեսանելով նորաժաման պաւակաց մերոց՝ մնան ի հաւատս քրիստոսական. և թէ զայս ևս առնալ տարան, որո՞վ ևս մխիթարիցուք յերկրիս պանդխտութեան, յոր կամքս»: Սրտ՝ այսու պատճառաւ ոչ կամեցան Ջուղայեցիք տալ զԱջն. վասն որոյ պատճառս յօդևալ ասացին առ Փիլիպպոս կաթուղիկոս՝ թէ զԱջս սրբոյ Լուսաւորչիս՝ զոր դու խնդրես ի մէնջ, արքային Պարսից բերեալ և յանձնեալ է ի մեզ. և մեք զիա՞րդ կարեմք տալ զսա քեզ առանց թագաւորական հրամանի. վասն զի երկնչիմք ի թագաւորական պատժոց, և ի նենդութենէ մատնողաց:

Իսկ Տէր Փիլիպպոս կաթուղիկոսն, այնուհետև երեսփի արամբքն Հայոց՝ որք էին յերևանցւոց ժողովրդենէն, դի սոքա կամէին զգնալն Աջոյն յէջմիածին, սկսաւ շրջել ի դրունս իշխանաց թագաւորին, և առատաձեռն սրօք զսիրտս ամենեցուն հաճեցոյց: Եւ ապա յետ ամենեցուն լցեալ զուտ ոսկի դահեկան յսկուտեղ՝ և ընդ նմին պրեալ թուղթ արքայի՝ մատուցեալ առաջի Շահսէֆի արքային, խնդրելով ի նմանէ հրաման տալոյ զԱջ սրբոյ Լուսաւորչին: Իսկ Տէրն և Աստուածն ամենայն չարիսենից և ապգաց՝ որ ի ձեռին ունի զսիրտս ամենայն թագաւորաց՝ և յոր կողմն կամի շրջէ զնա*, ի ժամուս յայսմիկ քաղցրացոյց զսիրտ

* Հմմտ. Առակք, ԻԱ, 1

2 Ս. որոյ վասն բազում աւուրս
3 ԲԳ ջուղեցւոց Դե ջուղեցոց
5 Ա.ԲԳԴե ամանակի է չիք սա ԲՆ ջուղեցոց
6 ԲԳե կաթուղիկոս
7 ԲԳԴՆ էջմիածին Ա.ԲԳԴե ի տեղին
11 ԲԳԴՆ նշան
12 Ս. քրիստոնէականի Ա.Է քրիստոսական
13 Ս. քրիստոսականաց
13-14 Ս. զնդնդման և զամբարան
15 Դն զհրաշագործութիւնն
16 Ս. նորաժամանից ԲԳԴե նորաժամայն
17 Ս. տարցէս փխ տարան Ա.Դ չիք ևս (մխիթարիցեմք) Դն մխիթարեսցուք
18 ԲԳԴե որ փխ յոր
20 ԲԳԴՆ սուրբ
22 Ս. թագաւորականի
23 Ս. թագաւորականաց
24 ԲԳԴե կաթուղիկոս
25 ԲԳՆ ի յերևանցոց
26 ԲԳԴՆ Աջին Ա.ԲԳԴ և սկսաւ շրջել
26-27 Ս. առատաձեռնութիւք
28 Ս. զթուղթ
29 ԲԳՆ Շահսաֆի
29-30 Ս. զհրաման
30 ԲԳԴՆ զԱջն
30-31 Ս. ամենից յաւիտեանց
31 ԲԳԴՆ յաւիտեանց Ս. ամենից
32 Ն կամ Ս. և ի ժամուս Դ ժամայս Ա.ԲԳԴե զսիրտս

թագաւորին, որ արար ղշնորհս հայրապետին. և կատարեաց ղխընդրուածս նորին, և ետ հրաման գրով և թագաւորական կնքով. զի տացեն Ջուղայեցիք ղԱջն սրբոյ Լուսաւորչին ի տէր Փիլիպպոս կաթուղիկոսն: Իբրև էառ Փիլիպպոս կաթուղիկոսն զնոմոս հրամանաց թագաւորին՝ նբեր առ Թոռունան խօջայ Սաֆարին, զի որդիքն վախճանեալք էին, և անուանք Թոռանց էր Ջալալ, և Միքայէլ, և Սինան, և Պատիկ աղա և սորա ոչ կամեցան տալ ղԱջն, որոյ սաստեաց կաթուղիկոսն բարկութեամբ մնծաւ. և նոքա երկուցեալք ի սրբութենէ նորա և ի հայրապետական անիծից՝ Թուլացան ի պնդութենէ: Եւ հայրապետն ետր Փիլիպպոս բազում քահանայիւք ինքնին գնաց ի տուն խօջայ Սաֆարին, էառ անտի զԱջն և նբեր ի խօջենց եկեղեցին, և յաւուր կիրակէի, մատոյց պատարագ և նրաց զԱջն, յորոյ համբաւ ժողովեցան ամենայն Ջուղայեցիք և սրտարին զուարթ, և տակաւին ընդդիմանային Ջուղայեցիք, և ոչ Թողուին տանել զԱջն, վասն որոյ գաղտաբար հանեալ անտի զԱջն բերին ի վանքն Ջուղայու, և անտի ևս թաքուն տարան ի քաղաքն ի մէջ Երևանցւոց, և անտի ևս թաքնաբար հանեալ տարան ի Բրինձլուի քարվանսարէն, և եդին ի մէջ բեռանց առն ումեմն քրիստոնեայ վաճառականի, որում անունն էր Մարգարայ, որ էր ի գաւառէն Գողթան, ի գեղջէն Ցղնոյ, որ վասն վաճառականութեան եկեալ էր ի Սպահան. և նա առեալ զԱջն բեռամբն հանդերձ՝ ըստ կարդի վաճառականաց յառաջագոյն գնացեալ եհաս ի Թարվէզ. և յայտ ոչինչ բնաւ պիտէին Ջուղայեցիք: Եւ ապա Փիլիպպոս կաթուղիկոսն եւեալ և Սպահանայ գնաց ի Թարվէզ՝ էառ զԱջն ի Մարգարէէն և բերեալ հասոյց ի սուրբ էջմիածինն ի նորին սեպհական Աթոռն: Եւ եղև այս անպատում ուրախութիւն ամենայն Հայոց, զի ամենեքեան ի լսելն ի ձայն ցնծութեան մեծաւ պոհութեամբ օրհնէին զԱստուած զայցելուն քրիստոնէից: Եւ եղև դալն սուրբ Լուսաւորչի Աջոյն ի Սպահանայ ի սուրբ էջմիածինն յաթոռ իւր ՌՁէ Թուականիս մերում, ի սեպտեմբերի ամսոյ քսանւ

Եւ եղև սրբոյ Հայրապետիս Փիլիպպոսի կաթուղիկոսութեանն՝ օր յաւուր զօրանալ հաստատել, զի Տէր էր ընդ նմա. քանզի էր վարուք յոյժ ճգնող և պահող, և մտօքն սրբախորհուրդ, և անձանձիր յաղօթս և ի խօսակցութիւնս Աստուծոյ, որ զինչ և խնդրէր յԱստուծոյ՝ զամե-

1 ԲԳԴ շնորհս
2 Ա. զհրաման Ա. թագաւորականաւ
3 ԱԲԳՆ ջուղեցիք ԱԴ զաջ ԲԳՆ սուրբ
4 ԲԳՆ կաթուղիկոս
6-7 ԱԴ չիմ և անուանք Թոռանց էր Ջալալ և Միքայէլ, և Սինան, և Պատիկ աղա և սորա
6 Ա. և Թոռունքն փխ Թոռանց ԴԳՆ Թոռանցն
6-7 ԲԳՆ Պզտիկ աղայ
9 Ա. հայրապետականաց ԲԳՆ անիծից ԱԴ պնտութենէ Գ պնտութեննէն
10 Ա. բազմօք
11 Բ անդի
12 Ա. զպատարագ ԲԳՆ որոյ
13 Ա. ամենեքեան ԲԳՆ ջուղեցիք ... ուխտ
14 ԲԳՆ ջուղեցիք
18 Ա որոյ
22-23 ԲԳՆ կաթուղիկոս
24 ԲԳՆ էջմիածին ԲԳՆ սեպհական
24-27 ԱԴ չիմ եւ եղև ... քրիստոնէից
26 Դ և մեծաւ
27 Ա սրբոյ
27-28 ԲԳՆ Աջին ... էջմիածին յաթոռն
28 Ա յաթոռն
29 ԴՆ սեպտեմբեր Ա քսանին
30 Դ կաթուղիկոսութեան
31 ԱԲԳՆ աւուր ԱԲՆ վարուքն

նայն անթերի պարգևէր Աստուած: Վասն զի մերով աչօք իսկ տեսաք, զի բաղում դիւահարք նորին աղօթիւք ազատեցան, և հիւանդք. և պէս պէս ցաւադարք, և անդամալոյծք առողջացան, և ամուլ կանայք աղօթիւք նորա ծնան զաւակս: Յորոյ արարեալ բժշկութեանցն զերկուսն միայն աստանօր յիշեմ. մինչ էաք եղբարք յոլովք միաբանութեամբ բնակեալ ի սուրբ էջմիածին առ Փիլիպպոս կաթուղիկոսիս, պատահեցաւ ումեմն եղբօր այսահարիլ. և այնքան յաճախեաց չարն, մինչ զի առեալ վարէր զնա արտաքոյ շինութեան ի դաշտավայր և յանդն և այսր և անդր յածեցուցանէր բացեայ ի մարդկանէ, զոր կալեալ ածէին միշտ ի վանքն, և ապա յետոյ եդին երկաթեայ ոտնակապ յոտս նորա, և այնպէս պահելով՝ յամենայն աւուր կարդային աւետարան քահանայքն. և երկարեցաւ այսպէս յաւուրս յիսուն: Ապա յաւուր միում, որ էր կիրակի, յետ մատուցանելոյ փրկական խորհրդոյ սուրբ պատարագին, յորժամ ժողովուրդքն ամենեքեան ելեալք յեկեղեցւոյն զնացին, տէր Փիլիպպոս սուրբ հայրապետն հրամայեաց ածել զայսակիր եղբայրն յեկեղեցին՝ ի մէջ աւենին՝ զի պատարագող քահանայն սրբութեան զգեստուն աւետարան կարդասցէ ի վերայ նորա, զայս ասաց տէր Փիլիպպոս, և ինքն ելեալ գնաց ի տուն. զի ունէր գործ հարկաւոր, քանզի արդ ոմանք պատուաւորք եկեալ էին հիւր նմա, գնացեալ առ նոսա էած առաջի նոցա զսեղան, և սուղ ինչ յամեալ առ նոսա յաղագս շահելոյ զնոսա, ապա եթող զնոսա ի սեղան հացկերութիւն, և ինքն եկն յեկեղեցին, և յարմատեալ դրանէ եկեղեցւոյն մտեալ հանդարտութեամբ և խաղաղիկ եկն մինչև մերձ աւենին, և անդ անկեալ ի վերայ ծնկացն իւրոց՝ ունելով զդէմս իւր հանդէպ սեղանոյն սրբոյ. և ի չափ միոյ Գոբգայի սաղմոսի արտասուչ պաղատանօք և յորդ արտասուօք աղօթեաց. յայնժամ այսակիր այրն կամէր զերծանել և փախչել ի ձեռաց ունողացն, և իբրև ոչ կարաց զերծանել՝ յայնժամ ուժգին և բարձրաձայն զոչմամբ աղաղակեաց և անկաւ ի գետին, և ժայթքեաց և եղև իբրև զմեռեալ. ապա այնուհետև դադրեաց տէր Փիլիպպոս յաղօթից, և մերձակայիցն հրամայեաց բառնալ զնա և տանել ի տուն, և մատուցեալ սպասաւորաց եկեղեցւոյն սրբեցին զտեղին ժայթքեալ, և յայնմ օրէ և առ յապայ շնորհօքն Քրիստոսի, և աղօթիւք առնն Աստուծոյ տեառն Փիլիպպոսի ազատեալ եղև այն եղբայրն յախտէն յայնմանէ. և ազատեալ եղբայրն ինքն պատմէր՝ թէ մինչ կալեալ ունէին զիս եղբարքն ի ներքոյ աւետարանին, զոր կարդայր ժամարարն, տեսանէի զի կայր պատեալ զանձամբ իմով մեծ և ահագին վիշապ օձ մի տեառ ընդ մէջս, և ընդ պա-

6 Ա. *Փիլիպպոսիս* ԲԳԴՆ *Փիլիպոսիս*
8 ԱԳ *դաշտավայրս և յանդս*
11 ԱԳ *զաւետարան*
13 Ա. *կիրակէ* Է *կիւրակէ* Ա. *փրկականի... սրբոյ* ԲԳԵ *սրբոյ*
15 ԱՆԵ *չիք սուրբ*
17 Ա. *զաւետարան*
19 Ա. *զգործ*
20 ԲԳԴԵ *տեղան*
24 Ա. *ծնկաց* Գ *ծնկանց*
25-26 Ա. *արտասուչիւք ... և յորդիւ*
27 ԱԲԳԴՆԵ *զերծանիլ* ԱԳԵ *փախչիլ* ԱԲԳԴՆԵ *զերծանիլ*
31 ԱԳԵ *տանիլ*
32 Ա. *յայնմանէ*
34 ԲԳՆ *եղբայր*
35 ԲԳԴՆ *որ*

բանոցս, և ամենայն մարմնովս, այլ և տեսի զՓիլիպպոս հոգևոր տէրըն, զի ունէր ի ձեռին իւրում մերկ սուսեր յոյժ մեծ, և սրընթաց յարձակմամբ եմուտ ընդ դուռն եկեղեցւոյն, և հհաս մերձ առ իս, և այնու սրովն հհար զօձն, որ զինն պատեալ էր՝ և կտրատեալ ի վայր թափեաց յինէն, և զլուխ և կտորք օձին մեծաւ տագնապաւ փախուստ առեալ, ելին յեկեղեցւոյն, և կորեան։ Եւ ոչ միայն այս՝ այլ և զայսպիսիս բազումս բժշկեաց, բայց զայս միայն գրեցի առ յօրինակ այլոցն ևս։

Պատմեցից միւս ևս զսքանչելիս. մինչ քարոզութեամբ շրջէր տէր Փիլիպպոս կաթուղիկոս յաշխարհին Օսմանցւոց, այսպիսի գործ պատահեցաւ ի քաղաքին Անկիւրիա, յատուր կիրակէի մեծի ծօնի Զատկին, մինչ առանձնացեալ նստէր հայրապետն տէր Փիլիպպոս, և յաշակերտաց իւրոց ոմն Յովհաննէս անուամբ վարդապետ՝ այր երևելի կայր առաջի նորա։ Տեսին զի եկն պատանի մի իբրև հնգետասանամեայ և բարձեալ ունէր յողն իւր մանուկ փոքրիկ իբրև եօթնամեայ, զոր բերեալ եղ առաջի հայրապետին, այլ և ունէր նոյն պատանին ի ձեռին իւրում փակեղամբ միով խնձոր և ներկեալ հաւկիթ, և զայն ևս եդ առաջի հայրապետին. և աղաչանօք և աղերսանօք խօսեցաւ առ նա, և ասաց. «Ծառայ քո եմ տէր հոգևոր, այս փոքրիկ մանուկս զոր եղի առաջի սրբութեանդ քո՝ եղբայր իմ է, այսքան ամ է, որ ծնեալ է, ոչ կարէ խօսել, քանզի համր է, այլ և ոչ կարէ կանգնել քանզի ոտքն թոյլք են. վասն որոյ մեծաւ պաղատանօք խնդրեմք ի քումմէ սրբութենէդ՝ զի արասցես զաղօթս ի վերայ սորա. և ես հաւատամ ի Տէր՝ զի աղօթիւք քո լիցի առողջութիւն եղբօրս իմոյ»։ Իսկ հայրն մեր և հայրապետն սուրբ նկն ի վերայ ծնկաց իւրոց և համբարձեալ զձեռս ի վեր և յինքն ամփոփեալ զխորհուրդս, և զանսութիւն մտաց իւրոց յառնաց առ տեսողն ամենայն սրտիւ յԱստուած, թորելով արտասուս յաչաց իւրոց արար աղօթս ի ժամս բուսականս. և յետ աղօթիցն իբրև կատարեաց զ«Հայր մեր յերկինս» էառ ի խնձորէն գլորեաց ի բացեայ, և խանդաղատական բանիւ ասաց փոքրիկ մանկանն. «Ել որդեակ, ել և դնա զայն խնձորն բեր». յայնժամ շնորհօք և ողորմութեամբ բարերարին Աստուծոյ ելեալ մանուկն ի վերայ ոտից, և գնացեալ ի վեր էառ զխնձորն և եբեր առ Հայրապետն։ Միւս անգամ ասաց հայրապետն ընդ մանկանն. «Առե՞ր զխնձորն, որդեակ». յայնժամ շնորհօքն Աստուծոյ ետ պատասխանի համր մանուկն. «Այո՛ առի, և ահաւասիկ». ասաց սուրբ հայրապետն. «Արդ՝ տո՛ւր փառս Աստուծոյ, որդեակ, և գնացեալ զոհացող լեր զնմանէ». ասաց մանուկն. «Փառք Աստուծոյ»։ Եւ ապա ետ զմանուկն ցեղբայրն՝ որ առեալ գնաց փառաւո-

1 Ս. *ամենիւ*
2 Ս. *զմերկ*
3 ԲԳԳՆ և *այնմ*
6 ԱԲԳԳՆ *չիմ և (զայսպիսիս)*
9 ԲՆ *սքանչելիս*
11 Ս. *Անկիւրիոյ* Ն *կիւրակէի*
15 Ս. *զմանուկ*
17 Ս. *զխնձոր և զներկեալ* ԱԲԳԳՆ *զայնս*
21 ՍԳԳ *խօսիլ*
22 Ն *թոյլ են*
23 ԲԳԳՆ *աղօթս*
24 Ս. *քովք վիս քո էբայ*
25 ԱԲԳԳՆ *ծնկանց*
28 Ս. *զաղօթս*
30 Ս. *խանդաղատականաւ*
36 Ս. *զփառս*

բնլով զաքանչելագործն Աստուած՝ որ տայ զշնորհս զօրութեան ծառայից իւրոց: Կան և այլ գործք աքանչելեաց բազում, զոր արար սուրբ կաթուղիկոսն ած Փիլիպպոս, զոր մերովք իսկ աչօք տեսաք, այլ այսքանս բաւականացն:

Այլ և էր այր կարի խորհրդական և հանճարեղ՝ աշխարհաշէն և արդիւնարար. և ի միջս աստուածային՝ արամիտ և նրբաքննին, և ի խրատս և ի քարոզս համեղաբան և արդիւնաւոր. և զայսոսիկ ի շնորհաց աղօթից առացաւ սակաւ սակաւ յաւգայն, վասն զի յամենայն տեղիս ուր և քարոզէր՝ և կանոնագրէր, պատգաբերեալ արդիւնանայր ամենայն:

Այլ և էր յոյժ ուսնասէր պայծառացուցանող ուսից՝ զարդարող եկեղեցեաց՝ և պատուիչ ուսից ուխտականաց, և սրբոց Աստուծոյ, որպէս և գրեալ է վասն Յովհաննու Օձնեցւոյ վասն որոյ յոյժ հռչակեալ համբաւեցաւ անուն նորա յամենայն աշխարհ, ոչ միայն ի մէջ Հայոց, այլ և մահմետականաց և վրաց. և ամենեքեան սիրէին և պատուէին զնա: Եւ վասն առաւել հզնութեանն և սրբութեանն և հաճոյական ծառայ գոլոյն Աստուծոյ՝ յոյժ երկնչէին ի նմանէ ոչ թէ ռամիկք, այլ և աշխարհակալք՝ իշխանք և զօրագլուխք. քանզի զբազումս տեսին ի թշնամանաց նորա, որք կործանեալ բարձան ի միջոյ, և ի սիրելեաց նորա՝ որք զօրացեալ յառաջագէմ եղեն:

Եւ զդպրատունն զոր ի Յովհաննավանք հաստատեցին, սա ևս կարի հաստատուեաց, և ուսմամբ և առաքինութեամբ վարժեալ հասոյց ի կատարելութիւն. և յետ ամաց ինչ փոխեաց ի Յովհաննավանից և եբեր ի սուրբ Էջմիածինն, և անդ կարգեաց զդպրոցն, որ և ամենեքեան ուսան և եղեն արք պիտանիք, վարդապետք, և եպիսկոպոսք, և քահանայք: Եւ ի վաղնջուց խափանեալ վանօրայք լցան աբեղայիւք, և գիւղք, և քաղաքք երիցամբք, և դեռ ևս օր յաւուր աճէ նորին սահմանադրութեամբն: Եւ սովաւ բազում կիսաւեր և խախտեալ եկեղեցիք նորոգեցան, և ի գիւղս և ի քաղաքս յոլով եկեղեցիք նոր շինեցան հրաշալեան յօրինուածովք՝ պայծառ և փառաւոր ամենայն որպիսութեամբ[93]:

Եւ յետ ամենայն շինուածոցն էջմիածնի, զոր սուրբ Հայրապետն Փիլիպպոս արար, այնուհետև ձեռն ի գործ էարկ, զի և զառաքեալս սրբոյն Գայիանեայ և Հռիփսիմեայ նորոգեսցէ: Վասն զի որպէս սակաւ ինչ նշանակեցաք զաւերակս տաճարացն երկոցունց կուսանացն՝ ի ճառին Հռիփսիմէի, յորում վայրի պատմեցաք, թէ Ֆռանկ պատրիք եկին և զնոսին նշխարն գտին: Բայց սրբոյն Գայիա-

2 Դն *շնորհս*
2-4 ԱՊ *շիք Կան և ... բաւականացն (324 էջի 2 ա մինչև 4 ա)*
8 Ա *յամենեսեան*
16 ԲՆ *ճգնութեան և սրբութեան*
18 ԲԳԴՆ *աշխարհակալ*
19 ԲԳՆ *որ* ԱՊ *կործանեալք*
20 ԲՆ *որ* ԱՊ *զօրացեալք յառաջագէմք եղեն*
21 ԲԳԴՆ *զոր յՈհաննավանք*
23 ԱԲԳԴՆ *շիք ի (Յոհաննավանից)*
24 ԲԳՆ *էջմիածին*
27 Բ *քաղաք* Բ *երիցամբ* ԲԳԴՆ *աւուր վխ յաւուր*
29 Ա. *հրաշալանիւք*
30 Ա. *ամենիւ* Ա. *ամենից*
32 Ա. *գձեռն*
33 Ա. *սրբուհոց*
34 ԲԳԴ *զաւերսին*
36 ԱԲԳԴՆ *պատրիքք* ԲԳՆ *նշխարքն*

նեայ կուսի տաճարն առաւել աւերեալ էր, ըի տանիքն բովանդակ իջեալ էր, միայն շուրջանակի որմունքն և չորիքին սիւնքն կային կանգուն, գլուխն ի բաց, և յատակք որմոցն ատտ և անդ ծակոտեալ և իրամասեալ, որոց արար նորոգման սկիզբն կաթուղիկոսն տէր Փիլիպպոս, մեծաիղձ կարօտիւ և ջանիւ, և բազում դանձս ծախելով նորոգեաց գեղեցկաշէն, ի հիմանց մինչև ցգագաթն զմբէթին. յորոյ վերայ կառուցին զնշան տէրունական խաչին։

Եւ ի նորոգել զեկեղեցին սրբուհոյ կուսին Գայիանեայ՝ գտեալ եղև սուրբ նշխարք նորին՝ և նորին ընկերացն, և եղև ուրախութիւն և ցնծութիւն անպատում ամենայն հայոցդուն տոհմի իրրև զկանգնումն կործանելոյ թագաւորութեանն։ Վասն զի ամենեքեան խոկային և խորհէին վասն նշխարաց սրբոց կուսանացն՝ իչէ արդեօք ի տեղին իչ ոչ. քանզի աւագ խորանի ներքոյ շինեալ մատուռն՝ որ է դիր հանգըստեան նշխարաց սրբոցս, աւերեալ էր բնաւին, ոչ միայն մատուռն, այլ և ի վերայ նորին կառուցեալ աւագ բեմն աւերեալ և քանդեալ էր մինչև ցյատակն, և աղբիւսովք և դահճօք լցեալ մինչև ի վեր։

Եւ յաւուրս նորոգմանս այս՝ էր արեղայ ոմն տէր Յովհաննէս անուամբ, այր արդիւնաւոր և գործօնեայ· և խորհրդական խորհրդով, զոր և տէր Փիլիպպոսի կաթուղիկոսի կարգեալ էր զսա վերակացու և գործավար ի վերայ գործոյս այսորիկ։ Սա յաւուր միում պատճառանօք իմն յայլուր առաքեալ զամենեսեան գործողս՝ և առանձնացուցեալ զտեղին՝ գիշեր և ցերեկ մի, և ինքն իւրովի միայնակ պեղեաց զտեղին՝ ուր կարծիք մատց ապրեալ նշանակէր, և այնքան պեղեաց զհողն մինչև եհաս ցանշարժ հողն, յորոյ վերայ կառուցեալ էր հիմն եկեղեցւոյն, և անդէն եգիտ երիս տապանս ի ներքոյ հիմանն եկեղեցւոյն, որոց մինն էր ի կողմն հարաւոյ, և մինն ի կողմն հիւսիսոյ, և մինն ի կողմն արեւելից. և ընդ բանալ կափարիչ վիմաց տապանացն, խնկոյն բուրեաց հօտ անուշութեան նորատաքանչ և վարմանալի, զորոյ զանուշութեան որպիսութիւնն անկար է ումեք պատմել, որ և ծաւալեալ ելից զվայրն ամենայն. և տեսանէ զնշխարս իւրաքանչիւրոցն ի մէջ տապանացն՝ սպիտակ, փայլուն որպէս զձիւն ի բովանդակ նշխարն անպակաս ի մէջ տապանացն. առ որ բերկրական ուրախութեամբ լցեալ տէր Յովհաննէսն անկեալ ի վերայ երեսաց իւրոց երկիր պագանէր Աստուծոյ՝ և զոհանայր զնմանէ զի արժանի արար զինքն այնպիսւոյ շնորհաց. և առպա առեալ զնշխար մի յոսկերաց սրբոցն առ ի նշան հաւաստու-

1 Ա.ԲԳԴՆ *կուսին*
4 Ա. *զսկիզբն*
5 Ա. *մեծաւ իղձիւ* Ա. *զբազում*
6 Ն. *զգագաթին*
6-7 Բ *վերոյ*
8 ԲԳՆ *սրբուհոյ*
9 Ա. *նշխար*
10 Ա. *ամենայնի հայազնոյ* Ա.Ն *հայազին*
12 Գ *նշխարհաց*
13 ԲԳՆ *աւաք*
15 ԲԳՆ *աւաք*
17 Ա. *սորին փիւ այս*
18 Ն *զսրծունեայ*
19 Ա.ԲԳՆ *տեառն* Բ *վերակացուս*
20 ԳՆ *այսմիկ*
21 ԲԳՆ *զամենայն*
24 Ն *յանշարժ*
27 Ա. *բուրեցաւ*
28-29 Ա. *որոյ անուշութեան զորպիսութիւն*
29 ԲԳՆ *որպիսութիւն*
31 Բ *փայլուն* ԲԳՆ *նշխարքն*
3. Ա. *բերկրականաւ*
34 Ա. *այնպիսեայ*
35 ԳՆ *նշխար*

թեան, և ապա խփեալ ղկափարիչ վէմն ի վերայ տապանացն, և խճով և կրով ամրացուցեալ փակեաց շուրջանակի զտապանն, և անհետ արարեալ կորոյս զնշանն, և յարանց գործաւորաց ոչ ոք իմացաւ զայն. և չեմ կատարմանս այս՝ զառեալ նշխարսն բերեալ եղոյց վարդապետաց և եղբարց ամենեցուն, և պատմեաց զամենայն որպիսութիւնն. որոյ վասն ամենեքեան ի ձայն ցնծութեան զոհանային զԱստուածոյ և ուրախանային անպատմելի զուարճութեամբ: Եւ եղև գիւտ նշխարաց սրբուհոյ կուսին Դայիանեայ և ընկերաց նորա, և նորոգումն նորին եկեղեցւոյն ՌՃԱ. թուին, Հոկտեմբեր ամսոյ ԺԲ յաւուր երկշաբթի:

Իբրև կատարեալ աւարտեցան ամենայն շինուածք տաճարին Դայիանեայ կուսին, ապա զնացին ի տաճար սրբուհի կուսին Հռիփսիմեայ, և ձեռն ի գործ արկեալ սկսան և զայն ևս նորոգել: վասն զի յարտաքուստ կուսէ եկեղեցւոյն գլուխ կաթուղիկէին, և տանիքն բովանդակ, և երեսք որմոցն և յատակք նորին. իսկ ի ներսի կողմանէ բեմն, և սալարկ յատակն, և չորից խորանաց մէջն, այս ամենայն զոր ցիշեցի, աւերեալ և քայքայեալ էր. վասն որոյ բաղում ջանիւ և յոքնակի աշխատութեամբ, զոն գործեալ մինչև զամենայն նորոգեալ կատարեցին, և ի վերայ դագաթան եկեղեցւոյն կատուցին զնշան տէրունական խաչին: Եւ շնորհօք և ողորմութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի աստ ևս յայտ եկեալ գտաւ նշխարք սրբուհի կուսին Հռիփսիմեայ՝ ոչ միայն ի միում տեղւոջ, այլ յերիս տեղիս, զոր բաժին բաժին էին արարեալ և ամփոփեալ ի զգուշաւոր տեղիս. զերկու տեղեաց նշխարքն ի մէջ վիմաց եղեալ էին, և զմինն որ և բաղում էր նշխարքն եղեալ էին ի մէջ փայտեայ արկղի, որ է սնդուկ, և տեղի փոքրիկ իբրև զմատուռն շինեալ վասն նշխարացն, և անդ եղեալ էին զսնդուկն լի նշխարօքն. և ի յորմն մատրանն գրեալ կայր դիր, զորոյ զօրինակն առեալ ահաւասիկ գրեցի աստ, որ է այս:

† Ո՛վ հրաշափառ և երջանիկ վկայ անբաժանելի ծոցածին Հօր՝ և համազոյդ Հոգւոյն կամողին ընդ սուրբինս ասեմ, անոխակալ երկնաւոր փեսային հարսն, զբարեգործակ արքայն ունող, զոլով գլուխ, միշտ և անընդհատ յաղագս ծանօթ քեզ սպասաւոր սուրբ Հոգւոյն:

† Ո՛վ սրբուհի, աղաչեմ յիշատակողացս անուան քոյ բարեխօսութեամբ և անհնուաղ աղօթիւք լեր պահապան և անդ իս, որով հանդիսասցիս ստորնոցս լինիլ, սուրբ կոյս արագ օգնական, որ և պատրաստարան եղիցիս յամենայնի յաղթող բարեբան:

† Յիշեա՛ և զիս՝ զոր նուիրեցայց իսկապէս ըստ անուանս վերատին աստուածապործողին կամահաճոյ յարկիս, զոհն մատնատիպս՝

4 Ա. *այսորիկ* փխ *այս* Ա.ԳԴՆ *նշխարն*
5-6 ԲԳՆ *որպիսութիւն*
6 Ա. *գոհացան*
7 Ա. *ուրախացան անպատմելիաւ*
9 Ա. *Հոկտեմբերի*
11 Ա.Գ *աւարտեցաւ ... շինուած* ԲՆ *աւարտեցաւ*
16 Ա. *սալարկ* Ա.ԳԴՆ *զորս*
17 Ն *էին* փխ *էր*
17-18 Ա. *բազմաւ ... յոքնակիւ*
21 Ն *նշխար* Ա. *սրբուհոյ*
23-24 Ա.Գ *զերկուց ... նշխարն* ԲԳՆ *անզգայ*
25 Ա. *նշխարն*
27 Ա.Գ *նշխարօք* ԲԳՆ *մատուռին* Ա.Գ *չիմ է*
35 ԲԳՆ *լինել*

որոյ շնորհօքն բաւականացայց, աղաչեմ յանձն և յարանուն քեզ Հռիփսիմէ։

† Յակովբ քահանայ սուրբ կաթուղիկէ արհի եպիսկոպոսարանին։

† Ես Խոսրովիկ ծառայ սուրբ Հռիփսիմէի։

† Սուրբ Ղևոդին։

† Սահիանանոս։

Արդ՝ այսքան բանքս՝ յորոց սկիզբն նկարեալ եմ նշան խաչի, ուրոյն ուրոյն պրեալք էին յորմն մատրանն, յորում եղեալ էին զանդուկն լի նշխարօքն, և մեր անտի առեալ զօրինակն գրեցաք աստ ի զուարճութիւն ձեր առ յապայն պատահեալ ընթերցողացդ, և յիշատակ և առիթ վարձուց բարեաց ի Քրիստոսէ մեզ աշխատողացս, աղօթիւք ձեր և բարեխօսութեամբ սրբուհւոյն Հռիփսիմեայ։

Եւ սկիզբն և կատարումն երկուց վկայարանացս սրբուհւոյն Գայիանեայ, և սրբուհւոյն Հռիփսիմեայ, եղև յամս երիս. զի ՈՃ. թուին սկիզբն արարին նորոգութեան, և ի ՈՃԲ. թուին զերծան ի գործելոյ. բազում ծախիւք և յոլով աշխատութեամբ շինեալ կատարիցին ի փառս Քրիստոսի և սրբոց վկայից նորա։

Սրբազան հօրս մերոյ տեառնս Փիլիպպոսի կամեցեալ գնալ յԵրուսաղէմ, որ և ելեալ գնաց բազում ամբոխիւ, վարդապետօք, և եպիսկոպոսօք, և քահանայիւք և սպասաւորօք, որք էին իւր միաբանք։ Իսկ ի քաղաքաց և ի գաւառաց արք նշանաւորք յոյժ, բազում վարդապետք, և եպիսկոպոսք, և իշխանք, որոց լուեալ զհամբաւ գնալոյ հայրապետին սրբոյ, փութացան և նոքա ի գնալ։ Եւ յորժամ հասս Փիլիպպոս կաթուղիկոս ի քաղաքն Բէռդուպոլիս, որ է Արզրում, և համբաւն գնալոյ հասս ի մեծ քաղաքն Կոստանդնուպոլիս, իսկ հայկական ժողովրդոցն՝ որք բնակեալ են ի Կոստանդնուպոլիս, յաղագս մեծաշուք փառաց հայրապետին իւրեանց, մատեան առ եպարքոս Թագաւորին, որ է վէզիրն, և խնդրեցին ի նմանէ թագաւորական ծառայ ի դրանէ թագաւորին, ընդ նմին և նոմոս թագաւորական կնքով, որպէս զի ծառայ կոչեցեալ իշխանն հկեալ պաշտպանեալ սպասաւորեսցէ հայրապետին յամենայն շրջագայութիւնս աշխարհաց՝ որք ընդ իշխանութեամբն Օսմանցւոց, զի մի գուցէ ոք յիշխանաց կամ յաշխարհակալաց, զրպարտեալ խուիցէ և բռնադատեալ վշտացուսցէ զհայրապետն։ Յորոց խնդիր հաճեալ եպարքոսին նա նոցա նոմոս թագաւորական, և իշխան մի բարեպաշտօն, որ և հկեալ իշխանն առ հայրապետն, և կատարեաց զգործ իւրոյ պաշտպանութեան՝ սպասաւորելով

7 Ս. չիք Արդ Ր որոց ԱՐՌՆ յբսկիզբն Ր յսկիզբն
8 ԱՐ յորմ ՐՌՆ մատուռին
9 ԱՐՌՆ անդի
10 ԱՐՌՆ ձեզ
11 Ս. ձերովք
12 ԱՐՌՆ Հռիփսիմէի
13 Ս. զսկիզբն
16 Ս. բազմօք ... յոլովիւք
19-20 ԱՐ վարդապետօք, եպիսկոպոսօք և քահանայիւք
21 Ս. բազումք
22 Ս. համբաւ գնալոյն
25-26 Ս. հայկականք ժողովուրդք ... բնակեցեալք
26 ՐՌՆ որ փխ որք
28 Ս. զթագաւորական
29 Ս. զնոմոս
31 Ս. յամենեսեան ՐՌՆ որ փխ որք
33 ՐՌՆ խրիցէ
34 ՐՌՆ Հրոց փխ Յորոց Ս. զնոմոս
36 Ի պարտականութեան

հայրապետին յամենայն շրջագայութիւնս նորա: Քանզի յամենայն քաղաքս՝ որք են ընդ իշխանութեամբն Օսմանցւոցն շրջեցաւ կաթուղիկոսն, և իշխանն ընդ նմին շրջագայեալ սպասաւորէր, մինչև բերեալ հասոյց զնա յաթոռն նորին ի սուրբ Էջմիածին, և յանձնեաց իշխանի աշխարհին, Մահմատդուլի խանին, և առեալ ի նմանէ թուղթ նշանի և ապաստութեան՝ դարձաւ ի դուռն թագաւորին իւրոյ՝ ի Կոստանդնուպոլիս:

Եւ աէր Փիլիպպոս կաթուղիկոս եկաց յերուսաղէմ ամիսս չորս, և փաշայն քաղաքին և պատրիարգն Հոռոմոց, և վանաց պետն Ցոանիկաց, բազում սիրով և մեծաշուք փառօք ընդունէին և պատուէին զնա՝ որքան եկաց նա անդէն: Եւ զյատակս եկեղեցւոյ սրբոյն Յակովբայ՝ գեղեցիկ յօրինուածով և նկարակերտ յարմարութեամբ երանգ երանգ վիմօք սալարկ արար. զի թէպէտ յառաջն գոյր սալարկ՝ այլ ոչ էր հաւասար և դիւր, այլ բարձր և ցած, և անյարմար, և կոպիտ՝ և զաւագ խորանի բեմն բարձրացոյց, զի յառաջն կարի ցած էր:

Ի սմին ամի՝ յորում գնացեալ էր յերուսաղէմ՝ աէր Փիլիպպոս կաթուղիկոսն, եկեալ էր անդ յերուսաղէմ և կաթուղիկոսն Սսայ տէր Ներսէս, յորում ժամանակի էր առաջնորդ երուսաղէմի Աստուածատուր վարդապետն: Իսկ հոգիբնակալ հայրապետն տէր Փիլիպպոս կաթուղիկոսն, որ նման առաքելոյն Պօղոսի հանապազ ցաւէր և հոգայր վասն հիւանդութեանց և անկարդութեանց եկեղեցւոյ: Սա ամենայն ժառանգաւորօք իւրոյ վիճակին միակամ եղեալ կամեցաւ բառնալ ի միջոյ զանկարգութիւնս, վասն որոյ հանապազօր դասիւ և քարոզիւ, և առնին խօսելով յորդորէր զամենեսեան գալ ի միաբանութիւն և ի սէր, և բառնալ զանկարգութիւն և զաւելութիւն: Յորոյ քրիստոսածաւալ քարոզութենն և հոգեբուխ վարդապետութենն քաղցրացեալ հանուր ժողովն դումարեալ, եկեղեցականք և աշխարհականք, յորս էին պիտուրք՝ կաթուղիկոսն Սսայ տէր Ներսէս, և առաջնորդն երուսաղէմի Աստուածատուր վարդապետն. միաբանութեամբ խոնարհեցան ի հրամանս հայրապետին Փիլիպպոսի, և հաստատեցին կանոնական բանս երեքտասան պիսս, զորս համառօտիւ նշանակեցից առաջի. որոց Առաջինն է սէր և միաբանութիւն երկուց աթոռոց կաթուղիկոսացն էջմիածնի և Սսայ, և իւրաքանչիւր կաթուղիկոս զիւրոյ վիճակի նուիրեալսն ձեռնադրեսցէ և մի զայլոց. և թէ դէպ լինիցի զի ձեռնադրեսցէ յայլմէ վիճակէ զոք, յիւրում վիճակին տեղատուրեսցէ զնա. և ձեռնա-

1 Ա. *յամենայնման*
4 Ա. *էջմիածինն*
5 Ա. *զթուղթ*
8 Դ *կաթուղիկոսս*
9 Ա. *փաշայ Գ Ցոանդաց*
10 Ա. *բազմաւ Ա. մեծաշքօք*
11 Ե *սրբոյ*
11-12 Ա. *զեղեցկիւ ... նկարակիրթիւ*
12 ԴԴ *յօրինուածովք* ԲԳՆ *երանկ երանկ*
13 ԲԳԴԵ *սալայարկ* ԱԲԵ *սալյարկ (այլ ոչ)*
14 ԲԳԴՆ *զաւաք*
17 Ի: *Սսոյ*
18 ԴՆ *Երուսաղէմայ*
19 ԲԴ *վարդապետ*
19-20 ԲԴՆ *կաթուղիկոս*
21 Ա. *եկեղեցեաց ... ամենիւք*
25-26 ԲԴՆ *քարոզութեին ... վարդապետութեին*
26 Ա. *հոգեբուխ*
28 Ի: *Սսոյ* ԲԴԴՆ *Երուսաղէմայ*
29 ԲԴՆ *վարդապետ*
30 Ա. *զկանոնական*
31 Ա. *զբուխս*
33 Ի: *Սսոյ*

դրեալն՝ թէ յայնմ կաթուղիկոսի վիճակէ փոխեսցի յայլ կաթուղիկոսի վիճակ, անընդունելի լիցի։

Երկրորդ՝ զի ինքն նուիրեալն ևս մի համարձակեսցի առ այլ կաթուղիկոս գնալ՝ թողուլ զիւրն, այլ առ իւր կաթուղիկոսն։

Երրորդ՝ զի թարց խնդրանաց ժողովրդեան և վկայական թղթոյ մի ձեռնադրեսցի որ չեպիսկոպոսութիւն։

Չորրորդ՝ ամենևին զինչ և իցէ պատճառաւ որ եպիսկոպոս զայլոյ վիճակ մի յափշտակեսցէ։

Հինգերորդ՝ միոյ վիճակի մի լիցին երկու եպիսկոպոսք, և երկու առաջնորդք, քայց թէ կարի մեծ ինչ պատճառ ի մէջ գայցէ։

Վեցերորդ՝ մի համարձակեսցի եպիսկոպոս՝ յայլմէ վիճակէ զոք ձեռնադրել, ապա թէ համարձակեսցի լուծցի ինքն և իւր ձեռնադրեալն։

Եօթներորդ՝ զի եպիսկոպոս ոք թէ ոչ հրամանաւ կաթուղիկոսին իւրոյ՝ այլ կաշառօք և այլազգեաց բռնութեամբ համարձակեսցի իշխեսցէ այլոյ վիճակի, լուծցի ի կարգէն։

Ութներորդ՝ մի համարձակեսցի ոք վարդապետ անխտրաբար տալ իշխանութիւն վարդապետութեան ամենայն ումեք. եթէ ոչ իցէ նուիրեալն կատարեալ ումամբ՝ և առաքինութեամբ, և հասակաւ, և աստուածային երկիւղիւ՝ և վկայեալ յամենեցունց, զի այսու պատճառաւ բազում անկարգութիւնք և գայթակղութիւնք մտին յեկեղեցի, և թէ ստունգանեալ քամահիցին զայս հրաման, առաջ իշխանութենանն անկցի ի պատուոյն. և առաջ իշխանութենանն անընդունակ լիցի։

Իններորդ՝ քահանայ և այլ ժառանգաւոր չիրամէ եպիսկոպոսէ ընկալցի ձեռնադրութիւն հատանութեամբ իւրոյ ժողովրդեանն, և թէ ոչ այսպէս, լուծցի ի կարգէն։

Տասներորդ՝ զիրաւունս և զհասոյթս՝ որ ի ժողովրդենէն կարգեալ է եպիսկոպոսաց և երիցանց, ըստ հրամանի հայրապետական կանոնաց, առցեն եպիսկոպոսք և երիցունք, և մի զմիմեանս զրկեսցեն, որոց վասն արատուն և զժգոհութիւնս յոլովս լսեմք հանապազ։

Մեսասաներորդ՝ երիցունք մի զրկեսցեն զիրեարս՝ զմիմեանց ծուխն և զհասոյթն յափշտակելով. կամ կեղծաւոր բարեձեւութեամբ և կամ այլազգեաց բռնութեամբ, այլ իւրաքանչիւր ոք իւրով բաժնեաւն բաւականանայցի, և թէ ոչ այսպէս, վատահողն լուծցի ի կարգէն։

Երկոտասաներորդ՝ յորժամ հանդերձեալ իցեն դնել նշան ումեմն աղջկան յաղագս ումեմն երիտասարդի, մի իշխեսցեն առնել զայն

1 ԲԳՆ *այնմ փխ յայնմ*
3 Բն *նուիրեալն*
4 ն *կաթուղիկոս*
5 Ա. *վկայականի*
7 Գ *Չորրորդ*
9 ԲԳՆ *մի լիցի* ԲԳՆ *եպիսկոպոս*
10 ԲԳՆ *առաջնորդ*
13 Ի չիմ *ոք*
15 Ա. *այլոց վիճակաց* Գ *այլոց*
17 ԱԴ *զիշխանութիւն*
17-18 Բն *նըւիրեալն*
18-19 Ա. *աստուածայնով*
20 Ա. *բազումք* Բ *գայթակղութիւն*
21 Ա. *առունգանեալք* Բն *իշխանութենան*
22 Բն *իշխանութենան*
24 ԲԳՆ *ժողովրդեան*
27 Ա. *հայրապետականաց*
29 Ա. *զտրտունչ և զժժգոհութիւնս* Գն *ժժգոհութիւնս*
30 ԲԳՆ *զիրար* Դ *զիրեար*
33 Ա. *վատահանօղն*
34 Ա. *զնշան*
35 ն *աղջկան*

կանայք, կամ ժողովրդականք, կամ երիցունք առանց բաղում քննութեան. և կամ առանց գիտելոյ առաջնորդին. այլ քահանայքն քարոզեսցեն բաղում աւուրս ի մէջ եկեղեցւոյն, և ծանուսցեն առհասարակ ամենեցուն, զի գուցէ ոք տիղեակ իցէ աղպացեղութեան նոցա, որոյ ի լսելն՝ եկեալ յառաջագոյն ծանուսցէ. և այսպէս յետ բաղում քննութեանց՝ թէ ոչ գտցի աղպացեղութիւն ի մէջ նոցա, ապա յայտ յանդիման ամենայն քահանայից և ժողովրդոց՝ քահանայք օրհնեսցեն զնըշանն զայն՝ և հաստատեսցի գործն։

Երեքտասաներորդ՝ այրի երիցունք, թէ իցեն պարկեշտք և ծերք, և կամ ունիցին մանկունս սնուցանելոյ՝ կացցեն յեկեղեցին, և թէ ոչ այսպէս, գնասցեն ի վանս և յանապատս. և թէ ոչ գնասցեն, ի բաց կացցեն ի ժառանգութենէ և ի կարգէ։

Զայսքան պղտիս իրաւական բանիս իրրև զկանոն կարգեալ սահմանեաց. և քարոզեաց յամենայն աւուր առաջի ամենեցուն. առ որ հաճեալ և հաւանեալ և յօժարութեամբ յանձին կալեալ տէր Ներսիսի կաթուղիկոսին Սահ, և Աստուածատուր վարդապետին՝ և ամենայն վարդապետաց, և եպիսկոպոսաց, և իշխանաց. ձեռնադրեցին և կնքեցին, և կամակար յօժարութեամբ առին զօրինակն և տարան յաշխարհն իւրեանց, որ և ի բաղում տեղիս կայ լիակատար օրինակն այն, և տակաւին կան նուիրն ուխտիւն և սիրովն՝ շնորհօքն Քրիստոսի։ Եւ այլ ևս բազում արդիւնս և գործս ուղղութեան սահմանեաց անդէն յերուսաղէմ։

Ապա ելեալ յերուսաղէմէ եմուտ ի նաւ և ծովով գնաց ի Կոստանդնուպոլիս և եկաց անդ ամ մի բոլոր, և անդ ևս արդիւնս և գործս ուղղութեան յոլով հաստատեաց։ Եւ նախ քան զամենայն արար միաբանութիւն անջատեալ երկպառակութենէն նոցա, քանզի ի ժողովրդականացն որք բնիկ բնական տեղացիք էին ի քաղաքէն Կոստանդնուպոլսէ, բարձրամիտ, բարձրայօն պանծանօք հարստահարեալ թևս ածէին ի վերայ եկամուտ ժողովրդոցն, և իբրև զգազանիկ ի շմարդի ուներին զնոսա։ Եւ զամենայն իշխանական իրաւութիւնս, զգործս և զբաներս ի ձեռս իւրեանց գրաւեալ ունէին և գործէին. և զեկամուտսն ի բաց քեցնալ անհաղորդս պահէին։ վասն որոյ և նոքա հոգւով չափ վշտանային ընդ քամահանս իւրեանց, և հանապազ խոցոտիչ և տանելութեան բանիւ դիմագրաւ լեալ ընդ միմեանս մաքառէին. և հաստատեալ արձանացեալ էր խռովութիւն ի մէջ նոցա անհաշտ և արևամբ չափ տանելութեամբ։

Իսկ ի դալ կաթուղիկոսին Փիլիպպոսի անդ՝ և այնպէս տեսանել

1 Ա. *բազմի*
2 Ա. *շիմ և*
3 ԱԲԴԴ *գրազում*
5 Ս. *բազմաց*
7 Ս. *ամենից* ԱԲԴԴ *քահանայքն*
9 Ա. *այրիք*
15 ԱԲԴԴ *տեսան*
16 Ե *կաթուղիկոսի* Ս. *Աստուածատրոյ*
Ի *Սոյ* Ս. *ամենից*
17 Ս. *ձեռնադրեցին*
18 Ս. *կամակարիւ*
20-21 Ս. *գայլ ... գգործս*
23 ԲԴԴՆ *յերուսաղէմայ* ԱՊ *ծովու*
24 Ս. *գարդիւնս և գգործս*
27 Ս. *շիմ բնական Գ շիմ բնիկ բնական*
28 Ս. *բարձամիտ* Ս. *պարծանօք*
29 Ս. *եկամտից*
30 Ս. *զամենեսեան*

զնոսա, կարևոր քան զամենայն գործոց իւրոց՝ վասն նորին տարաւ հոգս. ի բազում աւուրս բազմազան կերպիւ, երբեմն հասարակ, և երբեմն առանձին առանձին խրատելով և ուսուցանելով, զամենեցուն զսիրտս և զկամս շահեալ էած ի հաւանութիւն բանից իւրոց, և հաշտեցուցեալ զարար միաբան զնոսա, համապատիւ եղբարս լինիլ, և զամենայն գործս և զբանս ի միասին հոգալ և կատարել։ Եւ այնուհետև ջերմագոյն սիրելիք և վշտակից եղբարք լեալ՝ կան ի սահմանադրութիւնս հայրապետին Փիլիպպոսի, գնդեցիկ սիրով և միաբանութեամբ, շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ օրհնելոյն։

Ապա յայնմ հետէ ձեռն ի գործ էարկ վճարել զպարտս եկեղեցեացն, վասն զի քառասուն հազար դուռուշ պարտք կայր ի վերայ եկեղեցեացն Հայոց՝ որ ի Կոստանդնուպոլիս։ Եւ պատճառ պարտուցս էին, նախ սոսկ միայն կոչմամբ և եթ պատրիարգք անուանեալ առաջնորդքն, որ նստին թագաւորական իշխանութեամբ, և արծաթոյ ընտրութիւնամբ սպրդեալ ի ներքս մտանեն՝ յանձանց, և ի սուտակասպասից ընծայեալք, և ոչ յԱստուծոյ։ Եւ երկրորդ՝ խազմասէրքն և խռովարարքն ի ժողովրդականաց, որք վասն փառասիրութեան, և վասն նախանձու, և վասն մարմնաւոր շահուց ակնկալութեան, գումարտակ լինէին, ոմանք ի վերայ այսմ առաջնորդի, և ոմանք այնմ առաջնորդի, և սուտակասպաս արբանեակք, և զօրավիգք լինէին նոցա. և ապա գնացեալ առ դավթարդար, և առ վէզիր, և առ թագաւորն, տային կաշառս յոլովս նոցա, և վանէին զախոյեանն, և առնուին զիշխանութիւն սոսկ անուն պատրիարգութեան և առաջնորդութեան։ Եւ այլ ևս բազմապատիկ կաշառս ի դրունս իշխանացն ցրուէին աստ և անդ, և այսպէս առնելով բազմացաւ բարդեցաւ, և դիզացաւ պարտքն և եհաս մինչ ի խմ դուռուշս։ Եւ յայսմ պատճառէ լցաւ խռովութեամբ մեծաւ քաղաքն Կոստանդնուպոլիս, և իբրև զխռովեալ ծով անդնդապատոյտ յաստակաւն, լեռնանման կոհակաւ՝ շարժմամբ՝ շաչմամբ՝ շառաչմամբ՝ և բարձրաձայն գոչմամբ. և իբրև զորոտումն պայծրնկէզ և հրացան ամպոց դղրդացուցանէր զամենայն մահիս։ Եւ համբաւ խռովութեանս այսմիկ ծաւալեալ տարածեցաւ յամենայն քաղաքս, և ի գիւղս, ընդ արևելս և ընդ արևմուտս, և ամենայն ոք զայն ի բերան առեալ խօսէր։ Եւ ի պատճառս այսմիկ բազում անգամ արք երևելիք և անուա-

1 Ա. *ամենից* ԲԳԽ *ամենայն*
2 Ա. *զհոգս* Ա. *բազմազանիւ*
2-3 ԱԴ *երբեմն առանձին խրատելով*
5 ԲԳԽ *լինել*
5-6 Ա. *զամենեսեան*
7 Ս. *ջերմագոյնք* Ա. *վշտակիցք*
8 Ս. *գնդեցկիւ*
9 ԱԴ *մերոյ փխ օրհնելոյն*; ԲԽ *մերոյ օրհնելոյն*
10 Ա. *զձեռն*
13 ԲԳԴ *պատրիարգ*; Ա. *անուանեալք*
14 ԱԴ *որք*
15-16 ԲԳԽ *սուտակասպասից*
17 ԱԲԳԴԽ *ի ժողովրդականացն*
18 Ա. *մարմնաւորաց*
20 ԱԲԳԴԽ չիմ և *(սուտակասպաս)*; ԲԳԽ *սուտակասպաս*; ԳԴԽ *զօրավիգն*
21 Ա. *վէզիրն* ԲԴ *թագաւոր*
21-22 Ա. *զկաշառս*
23 Ա. *զայլ*
26 Ա. *յայսմանէ* Խ *խռովութեամբ*
26-27 Ի *մեծաւ ի քաղաքն*
27 Խ *խռովեալ*
28 Ա. *լեռնանմանաւ*
29 Ա. չիմ և *(բարձրաձայն)* Ա. *հրացանից*
30 Ա. *զամենեսեան*
31 Ա. *յամենեսեան*
33 Ա. *այս*

նիք, երիցունք և երեսփոխանք և այլք ի Կոստանդնուպոլիս եկեալք երկարաձիգ ճանապարհաւ եկին ի սուրբ Աթոռն էջմիածին առ կաթուղիկոսն, առ ի հնարել ինչ վասն բառնալոյ խռովութեանցն և վճարելոյ պարտուցն։ Եւ կաթուղիկոսն յամենայն զօրութենէ ջան եղեալ հնարէր, երբեմն թղթով, և երբեմն մարդ ուղարկելով, և այլ կերպիւ հնարս հնարելով, և ոչ եղև խաղաղութիւն խռովութենանց ժողովրդեանն։ Եւ յայսմ պատճառէ՝ ժողովրդականաց քաղաքին բազմաց եղև վիշտ և վտանգ և վնաս, զի ոմանք եղեն տնանկք և աղքատք, զրկեալք չընչից և յապրանաց, ի տանց և ի հայրենեաց և ոմանք ի բանտս և ի կալանս մնոան. և ոմանք վտարական լեալ՝ ի հեռաւոր քաղաքս նզովեհութեամբ շրջէին, հեռացեալք չընտանեաց և ի ծանօթից, և այնպէս զաւուրս կենաց վճարէին։ Եւ յայս ումբ և տասն երկարեցաւ այս գործ դառնութեան, մինչև գնաց անդ ծառայն Աստուծոյ տէր Փիլիպպոս կաթուղիկոսն, և զի տէր ընդ նմա, որոյ շնորհօք վճարեաց զայնքան պարտքն ի նոյն քաղաքի ժողովրդականացն։ Վասն զի ժողովրդականացն ամենեցուն իւրաքանչիւր ումեք ըստ իւրում կարողութեան հրամայէր օգնական լինել առ ի վճարել զպարտսն. և այրն՝ առ որ լինէր հրաման հայրապետին, ոչ բնաւ իշխէր բան ինչ ասել, այլ յօժարութեամբ և սիրով կատարէր զհրամանս հայրապետին վասն օրհնութեան նորին։ Եւ կացոյց հոգաբարձուս արս հաւատարիմս գործոյս այսմիկ, որք բազում ջանիւ և աշխատութեամբ ժողովեցին զնուէրս ժողովրդեան յամիսս ումբ. և վճարեցին զամենայն պարտսն, և աղատեցին զեկեղեցիսն ի պարտուց, շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, օրհնելոյն յաւիտեանս ամէն։

Եւ հուշակ համբաւոյ արդիւնական գործառնութեան և աստուածաբան վարդապետութեան, և առաքինական ճգնութեան տեառն Փիլիպպոսի կաթուղիկոսի, որպէս յամենայն երկիր սփռեալ տարածեցաւ, սոյնպէս և յԻլով քաղաք հասաւ։ Եւ եպիսկոպոսն Իլովայ քաղաքին Նիկոլայոս[94] անուանեալն՝ դիտաց յոգի իւր, զի թարց բնաւին կարծեաց և երկբայութեան դեղ և սպեղանի վիրաց իւրոց՝ և ուղղութիւն իւրոյ ձախորդեալ գործոցն ի սոյն հայրապետէ և ի հոգևոր բժշկէ լինելոց է։ Վասն որոյ առանց դանդաղելոյ եկեալ յԻլովայ և եկն ի Կոստանդնուպոլիս առ ոտս հայրապետին, և հնազանդութեամբ յանձն էառ զկանոնս և զկարգս հրամանաց նորին, որով և զարձակումն կապանաց և զիշխանութիւն եպիսկոպոսութեան. և մեծաւ ուրախութեամբ դարձ արարեալ գնաց յԻլով ի քաղաքն իւր։ Եւ դու զամենայն որպիսութիւն

1 Ն՝ *երիցփոխանք*
2 Ա. *երկարաձգիւ*
4 Ա. *յամենայնէ*
5 Ա. *այլով ... զհնարս*
7 Ա. *յայսմանէ*
8 ԲԳԴԵ *վտանկ* Գ *տնակք*
10-11 Ա.ԲԳԴԵ *նզդհհութեամբ*
11 Բե *հեռացեալ չընդանեաց* Գ *չընդանեաց*
12 Գ *ութն*
14 Դե *կաթուղիկոս* Ն՝ *շնորհօքն*
15 Ա.Դ *պարտսն* ԲԳԵ *ժողովրդականաց*
17 Ա.Դ՝ *լինիլ*
21 Ա. *բազմաւ* ԲՆ *զնուէրս*
22 Ա.ԲԳ *ժողովրդեանն* Ա. *զամենեսեան* Գ *ութն*
24 Ա.Դ *չիք օրհնելոյն յաւիտեանս ամէն*
25 Ա. *արդիւնականի*
25-26 Ա. *աստուածաբանի*
26 Ա. *առաքինականի*
28 ԲԳԴԵ *և Իլով քաղաք*
32 ԲԳԴԵ *Իլովայ*
33 Բ *յանձ*
36 ԲԳԴ *Իլով* Ն *ի Լով*

այսմ պատմութեանս, եթէ կամիցիս՝ ի նոցին Իւլվացւոց ճառէն ուսցիս, որ յառաջիկայդ կարգեալ եմ. զի անդ լիով շարագրեալ եմ ըստ պատշաճին իւրոյ։

Եւ առաւն Փիլիպպոսի կելով ի քաղաքին Կոստանդնուպօլսի, բազում գործս բարութեան և կարգս ուղղութեան հաստատեաց անդէն եկեղեցականաց և աշխարհականաց. և ապա բազում երևելի եկեղեցական անօթով, և մարմնաւոր կարասիք, ելեալ ի Կոստանդնուպօլսէ՝ և ճանապարհ արարեալ եկն հասս ի բարձրագահ աթոռն ի սուրբ Էջմիածին. ի ոտն փոխման արքունւոյ կուսին Աստուածածնի եմուտ Էջմիածին։ Եւ եղև գնալն և գալն Փիլիպպոս կաթուղիկոսի յերիս ամս. զի ՌՃ. թուին գնաց յՍրուսաղէմ և ի ՌՃԱ թուին եկաց ի Կոստանդնուպօլիս, և ի ՀՃԲ թուին, եկն Էջմիածին։

Իբրև եմուտ թուականն ի ՌՃԳ յաւուրս աւագ պահոցն սկիզբն արար հիմն արկանել զանգակատան սրբոյ Էջմիածնի, զի յառաջմէ ոչ դոյր զանգակատուն Էջմիածնի. բայց տնընշումն բաղձանաց յոլովադոյն կայր ի սենեակ սրտի կաթուղիկոսին Փիլիպպոսի վասն զանգակատունն շինելոյ. և որ զկամս երկիւղածաց իւրոց կատարէ՝ կատարեաց զկամս սրտի նորա այսու կերպիւ։

Քանզի ի ժամանակին՝ յորում ի Կոստանդնուպօլիս էր տէր Փիլիպպոս կաթուղիկոսն, էր և անդ Հայ ազգաւ այր ոմն քրիստոնեայ՝ որոյ անունն էր Անտոն Զալապի, և էր սա ի քաղաքէն Բուրսայոյ՝ որոյ տուն և տեղիք և բնակութիւնն անդ ի Բուրսայ էր։ Այլ և յիմմիր քաղաքի ևս ունէր տունս և ապարանս, նա և ի Կոստանդնուպօլիս ունէր զտունս և զապարանս հոյակապս, և ոսկեզօծ զարդարեալ երանգ երանգ զունովք։ Եւ էր այրս այս Անտոն Զալապի յոյժ երևելի և հռչակեալ այնքան, մինչ զի յայտնի էր ի դուռն թագաւորին Օսմանցւոց, նա և ի հնուստր աշխարհս ի Ֆռանկաց, ի Պարսից, զի կարի ընչաւէտ և փարթամ էր ստացուածովք։ Եւ էր իւր գործ վաճառականութիւն, որոյ պատճառ երբեմն ժամանակաւ ի Կոստանդնուպօլիս լինէր, և երբեմն ի Զմիւռին լինէր, որ էր Իզմիր։ Եւ յորժամ գային կարաւանք վաճառականաց՝ յաշխարհէն Պարսից ի քաղաքն յիմմիր, զամենայն բեռինս կարաւանին միանգամայն գնէր, զինչ և լինէր, թէ ապրիշում

1 Ա. *այսորիկ*
2 Ա. *զոր վխ որ*
4-5 Ա. *զբազում... զկարգս*
6-7 Ա. *բազմաւ երևելեաւ եկեղեցականաւ*
7 Ա. *մարմնաւորօք*
8 ԱԴ *չիմ և (ճանապարհ)*
9 ԱԴ *էջմիածինն* ԲԳՆ *Աստուածածնին*
10 Գ *յամս* ԱԴ *կաթուղիկոսիս* ԲԳՆ *կաթուղիկոսին... յամս*
12 Գ *Եկաւ*
13 ԲՆ *էմուտ թվականն ՌՃԳ'ն* Գ *էմուտ թվականն ի ՌՃԳ'ն* ԲԳՆ *աւաք*
13-14 Ա. *զսկիզբն ... զհիմն*
14 ԳԴՆ *զանկակատան* ԲԳՆ *սուրբ*
15 ԲԳԴՆ *զանկակատուն*
16-17 Ա *զանգակատանն* ԲՆ *զանկակատուն* Դ *զանկակատունն*
21 ԲՆ *որում անուն էր Անտոն* Դ *որում անունն էր Անտոն*
22 Ա.Ն *տունն* ԲՆ *բնակութիւն*
23 Ա *զտունս և զապարանս*
24 ԲԴՆ *տունս և ապարանս հոյակապ* ԱԴ *ոսկեօծս*։ ԲԴՆ *ոսկեօծ*
27 ԱԴ *աշխարհս Ֆռանկաց*
30 ԱԴ *չիմ ի Ն որ է ԱԴ չիմ Եւ*
32 Դ *ապրիշում*

և թէ թաֆարիզ. և միանգամայն վճարէր զդինն։ Սոյնպէս և յաշխարհէն Ֆռանկաց՝ յորժամ գային ծովով նաւքն բարձեալ բեռամբ պատուական ստացուածովք. զնաւին բեռն միանգամայն ինքն միայն գնէր և վաղվաղակի զդինն վճարէր։

Եւ յաւուրն՝ յորում էր Փիլիպպոս կաթուղիկոսն ի Կոստանդնուպօլիս, պատահեցաւ և անդ լինել Անտոն Ջալապոյն, որոյ տեսանելով զառաքելաշնորհ վարդապետութիւնն, և զմաքրակենցաղ քաղաքավարութիւնն տեառն Փիլիպպոսի կապեալ եղև ի սէր նորին Ջալապին։ Ըստ որում ասաց տէր Փիլիպպոսն. «Վասն զի յԱստուածպետականէ ամենայն ինչ անպակաս պարգեւեալ է քեզ, եթէ ընչից յոլովութիւն, եթէ ծառայից բազմութիւն, եթէ անուան մեծութիւն. արդ՝ հարկ է քեզ զի ըստ արգոյաւոր անուան քում երևելի յիշատակ հոգևոր թողցես քեզ յերկրի, յորոց մինն այս է, որ առաջի կայ քեզ. որ է զանգակատունն էջմիածնի, որ կարի հարկաւոր է, և ոչ դոյ. արդ՝ կամիմ զի զայն պակասութիւն սրբոյ Աթոռոյն դու կատարեալ լցուսցես»։ Իսկ Ջալապին մեծաւ յօժարութեամբ և կամակար խոնարհութեամբ խոնարհեալ ի հրամանս հայրապետին յանձն էառ կատարել զհայցուածս նորին. զոր և ասաց առ հայրապետն. «Որովհետև այդպէս է յօժարութիւն քումդ կամաց, նա և հարկաւոր է սրբոյ Աթոռոյն էջմիածնի, յիմս կողմանէ դու լիցիս ինձ երեսփոխան և հայր։ Օգնութեամբն Աստուծոյ ի ժամանելն քո ի սուրբ էջմիածինն, որքան բաւ է և ախորժ է յօժարութիւն մտաց քոց, լայն և ընդարձակ, հաստահեղոյս և բարձրաշէն, գեղեցկազան նկարակերտութեամբ ձեռնարկեալ շինեսցես, և ամենայն ծախս գանձուց, որ անդ լինի, ես լիով և յօժարութեամբ նա և աւելեաւ հատուցանեմ»։

Արդ՝ այսու պայմանաւ յորժամ եհաս Փիլիպպոս կաթուղիկոսն ի սուրբ էջմիածին, սկիզբն արար շինութեան զանգակատանն, որոյ սկիզբն և հիմնարկութիւնն եղև ի թուականիս մերում ՈՀԹ յաւուրս աղուհացից. յարևմտից կողմն մեծի տաճարին Աստուծոյ սուրբ էջմիածնի, ի վերայ արևմտեան պրան նորին հուպ և կից որմոյ նորին. և յամին յայնմիկ բարձրացաւ շէնքն մինչև կապիցան ներքին կամարքն. և ժամանեաց ի վերայ ձմեռն, և փոխեցաւ թուականն ի ՈՀԹ և յորժամ հասին ի մարտի ամիսն՝ ի հինգերորդում կիրակէն աղուհացիցն, եղև վախճան մեծի հայրապետին, տէր Փիլիպպոսի կաթուղիկոսին. և խանդարեալ խափանեցաւ շինումն զանգակատանն։ Քան-

1 ՐԳԴՆ *թաֆարիզ*
2 Գ *Ֆռանգաց*
6 Ա.Ի *լինիլ* Բ *չալապոն*
7 Ն *վարդապետութիւն*
7-8 ՐՆ *քաղաքավարութիւն*
8 Ա. *Փիլիպպոս*
13-14 ԴԴՆ *զանկակատունն*
16 Ա. *կամակարիւ*
16-17 Ի *չիմ խոնարհեալ*
17 Ա.ՐԳԴ *ի հրաման*
20 Ն *կողմանէն*
21 ՐԳԴՆ *էջմիածնին*
23 Ա. *գնգիցկատանիւ*
23-24 Ա. *զամենայն ծախս*
24 ՐԳԴՆ *ծախք* ՐԳ *յաւելեաւ*
26 Ն *կաթուղիկոս*
27 Ա. *սկիզբն* ՐԳՆ *զանկակատանն*
28 ՐՆ *հիմնարկութիւն*
29 Ա. *սրբոյ*
33 Ի *կիւրակէն*
34 Ա.ՐԳԴՆ *տեառն*
35 ՐԳԴՆ *խանկարեալ* ՐԳԴՆ *զանկակատանն*

ղի իշխան քաղաքին Երևանու՝ որ էր Լալա բէկի որդի Մահմատղուլի խանն. այս այն Լալա բէկն է, որ ոչխարի քօդաւի ճառի մէջն յիշեցաք. սորին որդին Մահմատղուլի խանս էր այր գոռող և բռնագլուխ, այլ և կուռէճ խանս էր այր գոռող և բռնագլուխ, այլ և կուռէճ ընդ քրիստոնէից, թէպէտ կաշառօք և բաղում խնդրանօք խնդրեաց ի նմանէ կաթուղիկոսն Փիլիպպոս հրաման վասն շինութեան զանգակատանն, սակայն ոչ լուաւ նմա խանն վասն կուռէճութեանն, բայց կաթուղիկոսն՝ որպէս և էր յոյս նորա հաստատուն առ Աստուած՝ նովին յուսով էարկ հիմն զանգակատանն, և սկսաւ շինել. և յորժամ վախճանեցաւ կաթուղիկոսն Փիլիպպոս՝ մնաց կիսաշէն զանգակատունն վասն չարութեան խանին, ղի հանապազ ասէր՝ թէ ոչ թողում շէն զպանդակատունն՝ այլ քակելոց եմ զնա: Եւ յամին յայնմիկ նախախնամողն Աստուած պահեաց զպանդակատունն՝ և զխանն քակեաց, քանզի անուանի և մեծագոյն իշխանք առաքեցան ի թագաւորէն ի յերկրորդ Շահաբասէն յաշխարհս Արարատեան վասն թագաւորական գործառնութեանց. և վասն գոռող բարուց իւրոց Մահմատղուլի խանն, ի չմարդի համարեալ անպատիւ ունէր զիշխանսն, և զչարէր ընդ նոսա. և այնքան արար մինչ զայրացոյց զսիրտս իշխանացն. և նոքա յորժամ դնացին առ թագաւորն՝ սկսին ամբաստանութիւն առնել զխանէն, վասն որոյ ցասեցաւ թագաւորն ի վերայ խանին, և ընկէց զնա յիշխանութենէն. և յափշտակեալ կողոպտեաց զամենայն ստացուածս նորա, և կապանօք տարաւ ի Սպահան քաղաք. և զայլ ոմն ի թագաւորական ծառայից առաքեաց յԵրևան իշխող՝ որոյ անունն էր Նաջաֆղուլի խան: Առ որ մատուցեալ տէր Յակովբ կաթուղիկոսն և ի բաղում աւուրս երթևեկութիւն առնելով ի դուռն նորա. և բազում ոսկի և արծաթ տալով նմա և նորին իշխանացն, հազիւ թէ էառ զհրամանն շինութեան զանգակատանն: Արդ՝ մինչև այս ամենայն լեալ զրաւեցաւ, փոխեցաւ թուականն. և ևհաս մինչև ի ՌՃՉ և ցյուլիս ամիսն, և ապա այնուհետև սկսան շինել մինչև ցկատարումն զարմանալի արուեստիւ, յոքնաղան նկարակերտութեամբ քանդակեալ ի վէմսն յամենայն պատշաճաւոր տեղիս տեսակս զանազան կենդանեաց, գազանաց՝ առնասնոց, թռչնոց, բուսոց և տնկոց. այլ և յօրինուած շինուածոցն յոյժ գեղեցկայարմար. խարխոխքն, և սիւնքն և խոյակքն, և կամարքն և

2 Ա.Դ *զոր*
3 ԲԳՆ *որդի*
5 Ա. *բազմօք*
6 Ա. *ղհրամանն*
6-7 ԲԳԴ *զանկակատան* Ն *զանկակատաննն*
7 Ն *կուռէճութեան*
9 Ա. *ղհիմն* ԲԳԴՆ *զանկակատաննն*
10 ԲԳԴՆ *զանկակատաննն*
12 ԲԳԴՆ *զզանկակատունն*
13 ԲԳԴ *զզանկակատունն*
14 Ա. *անուանիք և մեծագոյնք*
15 Ա.ԲԳԴՆ *Արարատեան* Ա. *թագաւորականոց*
16 Ա. *զսուռզից*
19 Դ *անբաստանութիւն*
22 ԲՆ *զայր*
22-23 Ա. *թագաւորականաց*
23 ԲԳԴՆ *որում անունն էր*
24 Դ *կաթուղիկոս*
25-26 Ա. *զրաղում ոսկի և զարծաթ*
26 ԲԳԴՆ *հրամանն*
27 Ր *զանկակատան* ԴՆ *զանկակատաննն*
28 ԲԳՆ *ամիս*
29-30 Ա. *զարմանալեաւ... յոքնազանիւ*
30 Ա. *յամիննսնան*
31 Ա. *զանազանից*
32 ԲԳԴ *յօրինուածք* Գ *շինուածոյն*

այլքն ամենայն. և յաւուր օրհնութեան նորա անուանեցին սուրբ Հրեշտակապետ, խորհրդով Գաբրիէլեան փողոյն, որ ի բարձանց դոչէ: Եւ եղև կատարումն զանդակատանն. Ոճէ թուին և ի ստօնի խաչվերացին օրհնեցին զխաչն՝ որ ի գլուխ զանդակատանն և քակեցին զիսկալէն[93]:

Արդ՝ ստոյգ պատմութիւն զանդակատանն այս է, թէպէտ ի վերայ նորին գրեալ թուականքն այլասպէս են:

Եւ որքան եկաց Փիլիպպոս կաթուղիկոսն ի վերայ երկրի, թէ ի ժամանակս վարդապետութեան իւրոյ, և թէ ի ժամանակս կաթուղիկոսութեան, անդադար և անխափան արար և գործեաց նա արդիւնս ի մէջ աշխարհի, և մանաւանդ՝ բարձրագահ աթոռն սուրբ էջմիածին, սովաւ առաւել հաստատեցաւ և փարթամացաւ եկեղեցական անօթով, ոսկւով և արծաթով, և մեծագին զգեստուք, և պատուական գրենօք վարդապետականօք բազմօք. սոյնպէս և մարմնաւորօք սպասիւք, և կահիւք պղնձեղինօք և բրդեղինօք, և այլովք այսպիսեօք. այլ և հոյլք անբան կենդանեաց, ուղտք, և ջորիք, և ջոլիրք մատակ ձիոց, և ջոկք խաշանց և անդէոց, այլ և արուս և այդիս և բուրաստանս: Այլ և բազմազան կերպիւ հոգևոր և մարմնաւոր արդեամբ օգտակար լինէր աշխարհի. զի իբրև զբերդ ամուր էր նա շուրջ զազգին Հայոց ընդդէմ մահմետականաց, որք ոչ կարէին հարստահարել և ղղուել ղՀայս, վասն զի ամենայն ներհակք ախոյեանք՝ որք իբրև զլեառն հզօր ընդդէմ կային, ամենեքեան խորտակեալք ի միջոյ բարձան. եթէ եկեղեցականք, և թէ աշխարհականք. և թէ այլասեռ և այլազգի փառաւոր իշխանք:

Եւ եկաց նա ի վերայ երկրի մինչ ի ժամանակս ծերութեան, լեալ ամաց վաթսուն և երից, արգոյաւոր և մեծաշուք առաջի ամենայն ազանց՝ Հայոց, Հոռոմոց, Վրաց, Օսմանցւոց, և Պարսից մեծամեծ իշխանաց, նա և թագաւորաց իսկ:

Եւ յօրէ յորմէ հետէ էառ իշխանութիւն վարդապետական, անխափան ի քարոզութիւն և ի խրատել եկաց, ի գիւղս և ի քաղաքս, ի վանս և յանապատս, և յամենայն տեղիս, և ղոր ինչ քարոզեալ խրատէր ոչ սխալէր, այլ ամենայն արդիւնացեալ պտղաբերէր:

Եւ ի մերձակայ աւուրս վախճանի իւրոյ տէր Փիլիպպոս կաթուղիկոս էր ի սուրբ էջմիածինն յաւուրս աղուհացից ի չորրորդում կի-

1 Ա. *ամենեքեան* ԱՌ *յաւուրս*
2-3 Ի *Եւ եղև ... եղև*
3 ԲԳԴՆ *զանկակատանն*
4 ԲԳԴՆ *զանկակատանն*
5 ԲԳԴՆ *զանկակատանն*
6 ԲԳՆ *այլպէս են*
9 Ա. *զարդիւնս*
11 Ա. *եկեղեցականաւ*
12 Ա. *մեծագնիւք ... պատուականօք*
ԲԳԴՆ *զգեստիւք*
13 ԲԳՌ *մարմնաւոր*
14 ԲԳՆ *պղընձեղինօք* ԱԲԳԴՆ *այլօք*
15 Ա. *անբանից*
16-17 Ա. *բազմազանիւ ... հոգևորաւ և մարմնաւորաւ*
17 ԲԳՌ *արդեամբք* Ն *արդեամբ*
19 ԲԴՆԻ *ի հարստահարել և ի ղղուել*
20 Ա. *ամենեքեան* Ր *յամենայն,* ԲԳԴՆ *ներհակ*
21 ԲԳԴՆ *խորտակեալ*
22 Ր *աշխարհական*
Ա. *այլասեռք և այլազգիք փառաւորք*
25 ԲԳԴՆ *վաթսուն* Ա. *ամենից*
26 Ա. *մեծամեծաց*
28 ԱՌ *զիշխանութիւն*
30 Ա. *յամենեսեան*
31 Գ *սղալէր*
32-33 ԱՌ *կաթուղիկոս*
33 ԲԴՆ *էր նա ... էջմիածին* Գ *էր նա ... էջմիածինն*

րակէին, և ըստ հանապազորդ սովորութեան իւրում նստաւ յաթոռ և սկսաւ ասել քարոզ այնր կիրակէին, որոյ բնաբանն էր։ «Այր մի էր մեծատուն՝ որոյ էր տնտես. և եղև զնմանէ ամբաստանութիւն. որպէս թէ վատնիցէ զինչս նորա»։ Եւ մեկնելով ետես ի բանն յայն, որ ասէ. «Ոչ ևս կարես լինիլ տնտես», և աստէն վերջ արար բանին. և յաւուրն երկրորդի, որ էր երկուշաբաթի օր, տկարացաւ՝ և անկաւ ի մահիճս։ Ժողովեցան առ նա ամենայն միաբանք և աշակերտք իւր. հարցանէին վասն տկարութեանն, որոց պատասխանեալ ասաց. «Այս է վերջին տկարութիւնն իմ, որ ոչ ևս յառնեմ յառողջութիւն. քանզի մինչ ասէի զքարոզն, իբրև հասի ի բանն, որ ասաց. «Ոչ ևս կարես լինել տնտես», թուեցաւ ինձ որպէս թէ յայլմէ յումեքէ ազդեցաւ ի սիրտս իմ, թէ ոչ ևս ապրիս մարմնաւոր կենօք՝ և այլ ևս տնտեսես ի տան Աստուծոյ, այլ վճարիս մահուամբ. որպէս և բանդ վկայեալ ասաց, ոչ ևս կարես լինել տնտես։ Եւ ի լսել բանիցս ամենեքեան մորմոքեալ մաղկատէին ի վերայ ասացեալ բանիդ նորա. և նա ըստ աստուածատուր շնորհաց իւրոց մխիթարէր զամենեսեան։ Եւ մնաց տկար մինչև հասս ի հինգերորդ կիրակէն և յայնմ գիշերի դէպ ի լոյս առաւօտին սկսաւ հոգեվարիլ, ինքն ևս գիտաց որ հոգեվարի է, վասն որոյ հանապազ զաղօթս և զօրհնաբանութիւնս Աստուծոյ ունէր ի բերան իւր ասելով. «Արդ՝ արձակեա՝ ղծառայս քո, տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն» աւանդեաց զսրբատնեալ հոգին իւր ի ձեռս Աստուծոյ սուրբ հայրապետն Փիլիպպոս։ Եւ հռչակեալ ծաւալեցաւ համբաւ վախճանի նորա յամենայն շրջակայ գաւառս Արարատեան աշխարհին. և ամենայն ոք, որ լսէր, վհատեալ թալկացեալ յերկիր անկանէր. վասն զի ամուր պարիսպն՝ որ շուրջ զՀայոց էր, փլաւ։ Եւ որ ոք լսէր զվախճան նորա ջանայր հասանել նախքան զթաղումն նորա համբուրել զնա և ժառանգել զօրհնութիւնս նորա[96]։ *Եկին ժողովեցան ժողովուրդք յոյժ բազում ի շրջակայ գաւառաց. վասն զի մնաց անթաղ յաւուրս վեց. քանզի միաբանքն էջմիածնի և ամենայն վարդապետքն կամէին ի դրան սրբոյ էջմիածնի ի մէջ իւր շինեալ զանգակատանն թաղել։ Բայց իշխանն Մահմատղուլի խան՝ որ ոխս նախանձու յոլովս ունէր ընդ հայրապետին, վասն հղօր դոլոյ հայրապետին ի վերայ խանին, այլ*

1 Ա.Լ. *կիւրակէին* Ս. *հանապազորդեան*
2 Ա. *զքարոզ* ԲԳԴԵ *զայնր է կիւրակէին* Ն *բնաբանն է*
3-4 ԱԳ *չիք որպէս թէ վատնիցէ զինչս նորա*
4 Գ *մեկնելով*
5 ԲԳԴ *լինիլ*
7 Ս. *ամենեքեան* ԲԳԴ *աշակերտքն*
8 ԲՆ *տկարութեան*
9 ԲՆ *տկարութիւն*
10 Ս. *լինիլ*
12 Ս. *մարմնաւորք* ԱԳ *ոչ տնտեսես*
13 Բ *բանդ*
13-16 ԱԳ *չիք որպէս և բանդ... մխիթարէր զամենեսեան*
16 Ա.Լ. *մինչ*
17 Է *կիւրակէն* ԱԳԵ *առաւօտուն*
20 Բ *քու փխ քո*
23 Ս. *ամենեսեան* Ա.ԲԳԴԱ *Արարատեան*
24 ԲԳԴ *որ և լսէր*
25 Ա.ԲԳԴԱ *բլաւ*
25-27 Ա.ԳԴ: *չիք և որ ոք լսէր զվախճան նորա ջանայր հասանել նախքան զթաղումն նորա համբուրել զնա և ժառանգել զօրհնութիւնս նորա*
28 Ս. *շրջակայից*
29 Ս. *ամենեքեան*
30 ԲԳԴԱ *սուրբ* ԲԳԴԱ *զանկակատանն*
31 Ս. *զոխս փխ ոխս*

և վասն զանգակատան շինելոյն. զի խանն ո՛չ թողոյր ի շինել զղանգակատունն, և կաթուղիկոսն առ բռնութեան ուժոյ իւրոյ հիմն էարկ և սկսաւ շինել, և արդիս ի վախճանել հայրապետին, իբրև լուաւ թէ ի մէջ զանգակատանն կամին թաղել, կարի սաստկացեալ չարացաւ՝ և ոչ թողոյր թաղել ի մէջ զանգակատանն, այլ և մեծաւ խրոխտանօք ասէր թէ՝ զզանգակատունն քակելոց եմ ես։ Եւ մնաց կաթուղիկոսն անթաղ յաւուրս վեց վասն այսմ պատճառի. և եղեալ կայր դագաղով ի մէջ տաճարին էջմիածնի, և էր զուարթ երեսօք որպէս կենդանի մարդ ի քուն՝ և բուրէր ի նմանէ հոտ անուշութեան. և ամենեքեան որք հպէին ի համբուրել զնա՝ հիացեալ զարմանային ընդ յորդաբուխ հոտոյ անուշութեանն, և ընդ երեսացն զուարթութիւն. ոչ միայն քրիստոնեայք, այլ և այլազգի մահմետականք, և հիացեալ փառս վեր առաքէին Աստուծոյ, որ փառաւորէ զսուրբս իւր։ Եւ վասն դի Մահմատղուլի խանն ոչ կասեցաւ ի բիրտ բարուց իւրոց՝ ոչ կթող ի սուրբ էջմիածին թաղել զկաթուղիկոսն, վասն այսորիկ բարձեալ ի սուրբ էջմիածնէ զպատուական նշխարս մարմնոյ նորա, խաչիւ և աւետարանաւ, խնկօք և մոմեղինօք, և երգովք հոգևորօք, տարան ի տաճար սրբուհոյ կուսին Հռիփսիմեայ, և անդ ի մէջ տաճարին ի հիւսիսային կողման խորանին հանգուցին զնա. և է բարեխօս առ Քրիստոս վասն ամենայն քրիստոնէից և հոգեծնունդ որդեակս իւրոց։ Որև այժմ ամենայն բնակիչք աշխարհին՝ ցաւագարք և ախտաժէտք դան յուխտ և ի համբոյր սրբոյ տապանի նորա, և գտանեն զառողջութիւն ցաւոց իւրեանց. և փառաւորելով զՔրիստոս գնան ի տեղիս իւրեանց։

Եւ եղև վախճան սրբոյ և տիեզերալոյս հայրապետին տեառն Փիլիպպոսի ի մերում թուականութեանս ՌՃԴ. ի մարտի ամսոյ քսան և հնգին, ի հինգերորդ կիրակէին աղուհացից պահոցն. և արար նա կաթուղիկոսութիւն քսան և երկու ամ և երկք ամիս, և ինքն էր վաթսուն և երեք ամաց, յորժամ վախճանեցաւ։ Եւ յաջորդեաց զկնի նորա զկաթողիկոսութիւնն սուրբ էջմիածնի Ջուղայեցի Յակովբ վարդապետն. վասն զի ժողովեալ վարդապետքն, և եպիսկոպոսունքն, որք ի մահն Փիլիպպոսի ժողովեցան, կացին ի սուրբ էջմիածինն մինչև ցտօն Վաղկազարդին, և ի նմին տօնին օրհնեցին զՅակովբ վարդապետն կաթուղիկոս ի նոյն թուին, և յապրիլ ամսոյ յութն, և ապա գնացին յիւրա-

1 ԲԳԴԵ զանկակատան
1-2 ԲԳԴԵ զզանկակատունն
2 Դ առ բռնութիւն ԱԴ զհիմն
4 ԲԵ զանկակատան ԳԴ դանկակատանն
5 ԲԳԴԵ զանկակատանն, այլև Ա. այլև մեծօք է չիք և (մեծաւ)
6 ԲԴԵ զզանկակատունն
8 ԲԴ զկենդանի
10 է յորդաբուխ
11 է անուշութիւնն ԲԳԴԵ զուարթութեան
14-15 ԲԳԴԷ էջմիածին Ա. սրբոյ
16-17 ԱԴ չիք խաչիւ և աւետարանաւ, խնկօք և մոմեղինօք և երգովք հոգևորօք
17 է չիք խնկօք ԲԴ երգօք
18-19 Ա. ի հիւսիսայնոյ
20 Ա. ամենից
21 Ա. բնակիչ
23 Ա. չիք և փառաւորելով զՔրիստոս գնան ի տեղիս իւրեանց
24 Ա. տիեզերալուսոյ
26 է կիւրակէին
26-27 Ա. զկաթուղիկոսութիւն
27 ԲԳԴԵ վաթսոյն ԱԴ երից
28-29 ի զկաթուղիկոսութիւն
29 ԱԴԳ Ջուղեցի
31 Դն էջմիածին
33 Դ յապրիլի

քանչիւր տեղիս փառաւորելով զՀայր և զՈրդի և սուրբ Հոգին յաւիտեանս յաւիտենից ամէն։

ԳԼՈՒԽ ԻԶ

ՎԱՍՆ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԱՆՈՒԱՆԻ ՎԱՆՈՐԷՒՑ ԵՒ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԲԱԶՄԱԾԱԽ ԵՒ ՄԵԾԱՒԱՅԵԼՈՒՆ ԵԿԵՂԵՑԵԱՑ

Որպէս ի գարնայնոյ ժամանակի հարաւայնոյ հողմոյ շնչեալ ծննդապործէ զերկիր և բխեցուցանէ յոքնապան ծաղկանց սեռս և տեսակս, որովք երփնապարդեալ վայելչանայ երես երկրի. սմին սարսափ գոգցես և զժամանակս այս երկուց կաթուղիկոսացս Մովսիսի և Փիլիպպոսի. զի բազում վանօրայք և անապատք և եկեղեցիք շինեցան. յորոց մի է մեծ և անուանի վանքն սրբոյն Ստեփաննոսի նախավկային, որ ի Դարաշամբի ձորին է, որ յառաջագոյն էր անպարիսպ, նա և շինուածք տանցն և յարկացն խարխալեալ և բլբլկեալ, և դիրք շինուածոցն յոռի և անպիտան։ Իսկ Ջուղայեցի Յակովբ վարդապետն, որ յետ Փիլիպպոսի նա եղև կաթուիկոս, սա ի ժամանակս կաթուղիկոսութեան Փիլիպպոսի սկսաւ նորոգել, և միանգամայն զամենայն շինուածան բակեաց ի հիմանց, զեկեղեցին և զտներն, և զխցերն, և զայլն ամենայն, ապա ինքն զհիմն էարկ եկեղեցւոյն և շինեաց խաչանման եկեղեցի սրբատաշ վիմօք, վերամբարձ կաթուղիկէին, գեղեցկաշէն և զանազան արուեստակեալ նկարակերտութեամբ զարդարեալ։ Սոյնպէս և զպարիսպն շուրջանակի, և զտներն և զխցերն ամուր և հաստահեղոյս վիմօք շինեալ, որոց ձևն և դիրքն և յարմարութիւնքն կարի ըմբռն և պատշաճաւոր, զոր բազում աշխատութեամբ և յոլով ծախիւք յամս տասն ապա կատարեցաւ. զի զքարն և զկրմինտրն ի գեղջէն Աստապատայ բերէին տփով զերհասօք ջուրց երասխ դեւտոյն. և մասն ինչ ի քարանցն յԱրարգ գեղջէն բերին ձիով. սոյնպէս և զկիրն և զփայտն և զհացն ի հեռու վայրաց բերէին մեծաւ աշխատութեամբ և յոլով ջանիւ, կատարեալ յաւարտ ածին ի փառս Աստուծոյ և սրբոց նորա։

Սոյնպէս և Եսայի վարդապետն՝ որ էր ինքն ի Մեղրի անուանեալ գեղջէն, և սա ևս յաշակերտաց տեառն Մովսէսի կաթուղիկոսին էր,

1 Ա.ՐՆ *զսուրբ*
4 Ա. *անուանեաց*
5 Ա. *բազմածախից և ծնծաղայելլաց*
7 Ա. *յոքնագանից* Ա.ՐԴՆԻ *բղխեցուցանէ*
7-8 Ա. *զսեռս և զտեսակս*
8 ՐՇՆ *նրնսք Գ վայելչանան*
9 Ա. *այսոցիկ է այսք*
10 Ա.Գ *բազումք*
11 Է *մին է*
12 Ա.ՐԳՆ *զոր (ի)* ԳԴՆ *զոր*
13 ՐԳ *խարխարեալ*
Ա. *խարխալեալք և բլբլկեալք*
14 Գ *զոր*
15 Ա.Գ *չիք նա*
16 Ա. *զամենեսեան*
17 Ա. *զտունսն, և զխուցսն* ԳԴՆ *հիմն Գ զտունսն*
18-19 Ա. *զեկեղեցի սրբատաշիւք*
19 Ա. *վերամբարձիւ*
21 Ա. *զտունս Ա. զխուցսն*
23 Ա. *բազմաւ... յոլովիւք*
24-25 Ա. *Աստապատոյ*
25 Ա.Գ *գեաոյ*
26 ԲԳԴՆ *գեղչէն*
27 Ա. *յոլովիւ*
28 Ա. *և կատարեալ*
30 ՐԳՆ *գեղչէն... յաշակերտացն*

որ ի Փիլիպպոս կաթուղիկոսէ եպիսկոպոս և առաջնորդ կարգեցաւ սուրբ Կարապետի վանացն, որ ի դաւառին Երնջակայ։ Եւ սա ևս յաւուրս Փիլիպպոսի կաթուղիկոսի սկսաւ նորոգել զնոյն ինքն սուրբ Կարապետի վանքն, ղի միանգամայն զամենայն յառաջադոյն եղեալ շինուածոն քակեալ եբարձ ի միջոյ, զեկեղեցին, և զանկերն, և զխցիսն, և զպարիսպն, և ապա շուրջանակի լայն և ընդարձակ, ղհաստ և ղբարձրադոյն պարիսպ էարկ. և ապա ի մէջն տունք և սպարանք ի բնակութիւն ինքեանց և հիւրոց։ Եւս առաւել զեկեղեցին՝ ի տեղի հին եկեղեցւոյն, լայն և ընդարձակ և բարձրաբերձ կամարօք և կաթուղիկէիւ, ի վերայ չորից սեանց կառուցեալ սրբատաշ վիմօք, կատարեալ զամենայն եկեղեցին ի հիմանց մինչև ցծայրս նորին, յոլով աշխատութեամբ և բազում ծախիւք կատարեցան ամենեքեան շինուածքն, և ի ՌՃԲ. թուին, և Հոկտեմբեր ամսոյ ՃԷ. օրհնեցաւ եկեղեցին մեծահանդէս նաւակատեօք ի փառս Աստուծոյ։

Այսպէս և Զաքարիա վարդապետն, որ էր ի դիղջէն էջմիածնի. և էր նա առաջնորդ մեծափառ ուխտին Յոհաննավանից, և սա ևս յաշակերտացն Մովսիսի կաթուղիկոսին էր, այր երևելի և փառաւոր ի մէջ աշխարհի, յոյժ հանճարեղ և ճոռոմախօս, խորհրդով և խելօք կորովի, և դիմօք ահարկու. և սա ևս յաւուրս Փիլիպպոսի ձեռն ի գործ էարկ նորոգել զեկեղեցիսն և զանկերն Յոհաննավանից. զի պարիսպն որ շուրջանակի, նա միայն էր սիմանի, իսկ այլքն ամենեքեան անպիտան և յոռի և եկեղեցեացն ամենեցուն տանիքն աւերեալ և քանդեալ. և Զաքարիա վարդապետն ժողովեաց բազում վարպետս՝ քարահատ և փայտատաշ, և դարբին, և զձևոն ի գործ էարկ սկսաւ նորոգել զվանքն. նախ զտներն և զխցերն ամենայն շինեալ աւարտեաց, և ապա զեկեղեցիսն, բայն փութանակի՝ քանզի յերկուս ամս աւարտեցաւ նորոգումն եկեղեցեացն. քանզի առատագոյն յերկիր հնդ դանձս՝ որ տայր գործողաց, երեսուն քարտաշ հանապազ նստեալ քար տաշէին, և երկու ճարտար մէմար միշտ շարէին, և այլ վարպետք և գործաւորք յոյժ յոլովք. վասն որոյ փութով աւարտեցաւ. և զքարն և զկիրն յայնմ կողմանէ ձորոյն ձիով բերէին. և ի ՌՃԱ. թուին զերծան ի գործոյ, և ի տօնի խաչվերացին, օրհնեցին զխաչն, որ ի զլուխ կաթուղիկէին և զո-

1 Գե զոր Ս. սրբոյ
3 Ս. զնոյն ինքն զվանս սրբոյ Կարապետի
4 Ս. զամենեսեան Ս. լեալ վխ եղեալ Դ զհնգեալ
5 ԲԳԳԵ էբարձ Ս. զաւանսն և զխուցսն
6-7 ԲԳԳԵ հասս և բարձրագոյն
7 Ս. զտունս և զսպարանս Գ տունս և սպարանս
8 Է եւ առաւել
9 Ս. բարձրաբերձիւք
10 Ս. սրբատաշօք
11-12 Ս. յոլովիւ ... բազմօք
12 ԴԳ կատարեցաւ ԲԳԳԵ ամենայն
13 ԱԴ հոկտեմբերի Ս. մեծահանդիսօք
14 ԴԳԵ նաւակատեաւք
16 Ս. մեծափառի Ա.ԲԳԳԵԷ Յոհաննավանուց
19 ԱԴ զձևոն
20 Ս. զաւանսն
21-22 Ս. անպիտանք և հոռիք
22 ԱԴ աւերեալք և քանդեալք
22-23 ԱԴ չիմ և (Զաքարիա)
23 Ս. զբազում
24 Ս. զարբինս ԲԳԵ ձևոն Գ գործարկ Ս. զվանսն
25 Ս. զտունս և զխուցսն
27 Ս. առաւաւգունաբար Ս. զպանձս
28 Ս. զքար
30 ԲԳԵ յոլով Ս. յայնմանէ

հացան զԱստուծոյ։ Եւ ինքն Զաքարիա վարդապետն էր այր կատարեալ և յոյժ պիտանի աշխարհի, և թէպէտ յոյժ ծերացեալ էր այլ տեւաց նա մինչ ի ՈՃՐ. թիւ Թուականին մնրում, յորում վախճանեցաւ. և նախ քան զվախճանն իւր ինքն փորեաց զիւր դերեզմանն, և պատրաստեաց քար տապանի, և ի յուլիս ամսոյ տասն՝ յաւուր սօնի Վարդավառին վճարեաց զայս կեանս մահուամբ, և յանելոյ առ Տէր հանգըստեամբ, զոր յիւրում պատրաստեալ գերեզմանին թաղեցին իւրով տապանաւն. և պատահեցաւ վախճան նորա լինիլ ի սուրբ էջմիածինն, զի վասն ընտանեբար և ցաւակից հոգալոյ զսպասաւորութիւնն սուրբ էջմիածնի իւրով քաջագոյն խորհրդովն և կորովի խելօքն, որով պիտոյ և պատեհաւոր տրամատեալ ընտրէր զամենայն խորհուրդս և զբանս, անդ ի սուրբ էջմիածինն պահէին հանապազ. վասն որոյ անդ վախճանեցաւ, և անդէն թաղեցաւ առաջի զանգակատանն յարեւմտից կուսէ, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. և աղօթիւք նորա մեզ ողորմեսցի։ Ամէն։

Զայսու ժամանակաւ յաւուրս Փիլիպպոսի կաթուղիկոսի, շինեցաւ վերստին և վանքն սուրբ առաքելոյն Թադէոսի, որ է յԱրտազ գաւառին ի գիւղն Մակու. զի միանգամայն ամենայն շինուածքն աւերեալք էին, և ի սոյն ժամանակի եպիսկոպոս ոմն Մկրտիչ անուն իւրովք միաբանօքն՝ աբեղայիւք և սարկաւագօք, որք էին ամենեքեան ի նոյն գեղջէն Մակուայ. զի թէպէտ և աղքատք էին և յընչից թափուրք, այլ վառեցան ամենեքեան սիրով սրբոյ առաքելոյն Թադէոսի, յուսացան յողորմութիւն ամենաղօրին Աստուծոյ և ի բարեխօսութիւն սրբոյն Թադէոսի առաքելոյն, ձեռն ի գործ արկին, և սկիզբն արարին շինութեան վանացն. և նախ զտաճարն սկսան շինել, որոյ արեւելեան և հիւսիսային կողման որմոցն մինչև ցկէսն միայն շէն էր մնացեալ, և այլ ոչինչ բնաւ և սոքա զամենայն միանգամայն մինչև զգլուխ կաթուղիկէին շինեցին, ներքուստ և արտաքուստ սրբատաշ վիմօք, ամուր և գեղեցիկ. և եղև կատարումն գործոյ տաճարին ՌՂԹ թուին։ Յետ կատարման տաճարին նոյն յուսովն, որ առ Աստուած՝ սկսան զժամատունն շինել խրատեալ քարամբք և մածուցեալ կրով, և սորին կատարումն եղև ի ՈՃԲ. թուին։ Զկնի սորին շինեցին զվկայարան սրբուհւոյ կուսին Սանդխտոյ։ Ապա զնահատակ անուանեալ եկեղեցին, որ է տեղի նահատակութեան սրբոյ առաքելոյն Թադէոսի. և կատարեալ զամենայն շինուածս զայսոսիկ շնորհօք ի ողորմութեամբն

3 Ա. *մնրոյ* փխ *մնրում*
4 ՐԳՆ *իւր* Ա. *զքար*
5 ԱԴ *և յուլիսի ամսոյ* ՐԳ *և յուլիս ամսոյ* Ր *և յաւուր*
8 ՐԳՆ *լինել ... էջմիածին*
9 ՐԳՆ *ընդանեբար* Ն *զսպասաւորութիւն*
10 Ա.Ն *քաջագունով* Ա. *կորովովք*
11 Ա. *զամենասնան*
12 ՐԳՆ *էջմիածին*
13 ՐԳԴ *զանկակատանն*
14-15 ԱԴ *չիք և աղօթիւք նորա մեզ ողորմեսցի*
15 Ա.Ն *չիք ամէն*
17 Ա.ՐԳՆ *սրբոյ* Ն *չիք է*
18 Գ *գիղն* Ա. *ամենեքեան*
21 Գ *յընչից*
24 ԱԴ *զձեռն* Ա. *զսկիզբն*
25 Ն *յարեւելեան*
25-26 ՐԳ *յարեւելեան և ի հիւսիսային*
26 ՐԳՆ *որմանց*
27 Ա. *զամենեսեան*
28 Ա. *սրբատաշիւք* Ն *սրբոյատաշ վիմօք*
31 Ա. *խրատեցնելովք* Ա. *մածուցնելով*
35 Ա. *զամենեսեան* Գ *շինուածոս*

Աստուծոյ, նոյն եպիսկոպոսն Մկրտիչ և միաբանքն իւր կան անդէն և պաշտեն զԱստուած և զսուրբս նորա՝ ակնկալեալք ողորմութեանն Աստուծոյ՝ որում փառք յաւիտեանս ամէն։

Սոցին նման շինեցաւ յաւուրս տեառն Փիլիպպոսի կաթուղիկոսի, և վասն վանքն սրբոյն Գէորգայ զօրավարին, որ է ի գիւղն Մուղնի, որոյ մերձ գոլով գիւղաքաղաքին Կարփւոյ, սպասաւորութեամբ և արդեամբք Մարտիրոս եպիսկոպոսին, որ էր ի նոյն Մուղնի գեղջէն եպիսկոպոս նոյն վանացն. որոյ եկեղեցին յոյժ փոքրիկ էր՝ և այլ ամենայն շինուածքն անպէտ և անդէպ. վասն որոյ այս Մարտիրոս եպիսկոպոս զեղեալ եկեղեցին, և զայլ ամենայն շինուածս միահաղոյն ի բաց եբարձ, և զնոր պարիսպ պատեաց շուրջանակի չափաւոր, և եկեղեցի վայելուչ ի մէջ պարսպին ի վերայ չորից սեանց կառուցեալ. և առ պարսպօքն տներ և խցեր, զամենայն շինեալ աւարտեաց և եթող իւր յիշատակ բարի առաջի Աստուծոյ և մարդկան, և ինքն ևս անդէն թաղեցաւ, բարեխօս կալեալ զսուրբն Գէորգ վասն իւր և վասն ամենայն քրիստոնէից։

Այսպէս և վանքն սրբոյն Սարգսի զօրավարին՝ որ է ի գիւղն Ուշի՝ շինեալն ի սրբոյ Մեսրովբայ մեծ վարդապետէն մերոյ[97] որ և սա մերձ է ի գիւղն Կարփի, որ ի սահմանս Արագած լերինն. այս վանքս նորոգեցաւ ձեռամբ Ոսկան վարդապետին, որ էր ինքն յԵրևան քաղաքէն և յաշակերտաց Փիլիպպոսի կաթուղիկոսին։ Զի թէպէտ կայր եկեղեցին վայելուչ և սրբաշէն և բարձրաբերձ կաթուղիկէիւ, այլ տանիք եկեղեցեացն ամենեցուն քանդեալք և աւերեալք էին, եկեղեցիքն միայն կային ի տեղւոջն, և շուրջանակի շինութիւն ո՛չ բնաւ. այլ սահմանիկ քարուտ։ Իսկ Ոսկան վարդապետս թէպէտ ոչ կարաց նորոգել զտանիք եկեղեցեացն, զի ոչ ունէր այնքան գոյք, այլ մեծաւ տաժանմամբ և բազում աշխատութեամբ պնդեաց զչորս կողմն եկեղեցւոյն, և պատեաց շուրջանակի պարիսպ յոյժ ամուր, և ի մէջ պարսպին շինեաց ըստ պատշաճին խցեր և տներ և ինքն կայ անդէն բարւոք կարգաւորութեամբ յուսացեալ յողորմութիւն Աստուծոյ բարեխօսութեամբ սրբոյն Սարգսի զօրավարին[98]։

Այլ և զհոյակապ և զայնանիստ և զբարձրաբերձ տաճար փա-

1 Դ նոյնպէս Դ Մկրտիչն
2 ԲՆ ողորմութեան
5 Ա.Դ վանք Գ գնոցն
6-7 Ն արդեամբ
7 Ա. Մարտիրոսի Ա. Նունոյ Մուղնւոյ գնդէն ԲԳԵ գեղջէն Ա. Նունոյ
8-9 Ա. զայլ ամենայնեան շինուածքն
8-16 Բ չիմ ամենայն շինուածք ... քրիստոնէից
9-10 Դ եպիսկոպոսս
10 ԴԲՆ շինուածան
11 ԳՆ նոր
13 Ա. զտունս և խուցս
14 Գ անդրէն
17 Ա.Դ վանք ԲԳՆ ի սրբոյն
18 Ա. ի սրբոյն Մեսրոպայ մեծէ Ա.Դ չիմ մերոյ
19 ԲԳԵ գնդէն ԲԳՆ լերին
20 Ա. Ոսկանի Գ ինքս
21-22 Ա.ԲԳԴՆ եկեղեցիքն
22 Ա. բարձրաբերձիւ
24 Գ ի տնդոջն
25 Ա.Դ զտանիս Ն զտանիքն
26 Ա. զայնքան Ա.Ն զոյս
27 Ա. բակմաւ Ա. կողմունս
28 Ա. զպարիսպ ԲԳՆ և յոյժ
29 Ա. զխուցս և զտունս
30 Ա.ԴՆ յողորմութիւնն

ռացն Աստուծոյ, զհանգստարան մեծի վարդապետին սրբոյն Մեսրովբայ այնորիկ, որ եգիտ զգիրս Հայոց, որպէս և բանք պատմութեան նորա ճառեն թէ՝ տարեալ հանգուցին զնա ի գիւղն՝ որ անուանի Օշական[29]. արդ՝ այս տաճար հանգստարանի սրբոյն Մեսրովբայ՝ վարդապետին ի վաղ ժամանակաց բուռնդակ տանիքն փլուզեալ էջեալ էր, և միայն աւազ խորանն էր մնացեալ ծածուկ, և ի ժամանակս կաթուղիկոսութեան իւրոյ սուրբ Հայրապետն Փիլիպպոս սկսաւ զայն ևս նորոգել՝ որ և կատարեաց բազում ծախիւք և աշխատութեամբ, խրատեալ քարիւ և մածուցեալ կրով մինչև աւարտեաց զբուռնդակն ի Թուականիս մերոյ ՈՂԴ. ի փառս Աստուծոյ։

Այլ և զբարձրարերձ և զլայնանիստ և զմեծաշուք տաճարն՝ որ յանուն սրբուհոյ Աստուածածնին շինեալ կայ ի նախկին և ի վաղ ժամանակաց ի գիւղն Բջնի. որոյ տանիքն ամենայն աւերեալ և քայքայեալ էր, նորոգեցաւ հրամանաւ տեառն Փիլիպպոսի կաթուղիկոսի, ծախիւք և արդեամբք քրիստոսասէր մեծի պատրիկի Ջուղայեցի խոջայ Պետրոսին, զոր մականուամբ Բդուզ Պետրոս ասէին, և անուն եպիսկոպոսի վանացն էր Փիլիպպոս, յորում ժամանակի էր Թուականն մեր ՈՂԲ։ Եւ յետոյ եղև առաջնորդ նոյն վանացն Մովսէս վարդապետն, աշակերտ տեառն Փիլիպպոս կաթուղիկոսի, որոյ շուրջանակի պատեալ զվանսն պարիսպն գեղեցիկ յարմարութեամբ և ախորժ տեսողացն։

Իսկ կամուրջն որ է ի վերայ Քասախ գետոյն ի մէջ խորագոյն ձորոյն, որ մերձ է ի գիւղն Աշտարակ, որ էր մեծակն և բարձրաշէնն, կրով և գործուն քարիւ շինեալ, սա հնացեալ էր և խախտեալ և ական կէսն ևս փլուզեալ. բայց կարի հարկաւոր էր. քանզի բազում դաւառաց և բազում ճանապարհաց անցուրդ է։ Վասն որոյ բարեպաշտ և քրիստոսասէր այրն՝ մահտեսի խոջայ Գրիգորն՝ զոր մականուամբ Մոծակենց Գրիգոր ասէին որ է բուն տեղացի յերևան քաղաքէն։ Սա զհին կամուրջն՝ որ մերձենալ էր ի փլանիլ. քակեաց և ապա փոխեաց զանէն և սկսաւ ի հիմանէ նոր շինել, ամուր և հաստատուն կրով և գործուն քարիւ՝ ըստ պատշաճի և բարեվայելուչ, յօրինեալ ի հիմանէ մինչև ցկատարումն՝ վասն հոգւոյ իւրոյ փրկութեան և վասն աւ Աստուած յուսոյն, բազում աշխատանս կրեալ. և բազում զանձս ծախեալ մինչև ցկատարումն հասուցեալ, ի Թուականիս մերում ՌՃԺԳ. ի փառս Աստուծոյ։

1-2 Բ *բղսրբոյն Մեսրոբայ, այնմ որ* — Գ *այն որ* Դե *դսրբոյն … այնմ որ*
3 Ա. *չիք թէ*
4 Դ *Մեսրոբայ*
5 Ս. *վաղուց*
6 ԲԳե *աւազ* Գ *ի ժամս*
7 Ա *չիք սուրբ*
8 Ս. *բազմօք*
8-9 Ա *խրատեցեալով… և մածուցեալով*
11 Բնե *բարձրաբերձ*
12 ԲԳԴե *սուրբ* Գ *աստուածածին*
Ա. *ի նախկնաց և վաղուց* ԲԳԴե *ի նախկի*
Գ 15 Ա *քրիստոսասիրի և*
17 Ն *Փիլիպոս եպիսկոպոս, յորում*
18 Դ *Մովսէ* Բե *վարդապետ*
19 ԱԴ *Փիլիպպոսի* ԲԴե *Փիլիպոսի*
19-20 Աէ *պատեալ պարիսպ վանացն*
20 Ն. *զպարիսպ* Ա *գեղեցկիւ*
21-34 ԱՈԴ *չիք իսկ կամուրջն … ի փառս Աստուծոյ [էջ 352 տ. 17—էջ 353 տ. 4]*
26 Դե *մահդասի*
27 Դե *տեղացի ի յերևան*
33-34 ԱՈԴ *չիք ի փառս Աստուծոյ*

Կան և այլ ևս բազում վանօրայք նորոգեալ, և բազում եկեղեցիք ի հիմանց նոր շինեալք՝ ի քաղաքն Տփխիս, և ի գաւառն Լօռւոյ, և յաշխարհն Արարատոց, ի գաւառն Սիսակայ, և յաշխարհն Դափնայ, ի քաղաքն Նախչուան, և ի վերոյգրեալ նորա. որպէս չքնաղ և մեծաշուք և վայելուչ եկեղեցին Աստուածածնի, և քաղաքին Նախչուանու, և ճահկայ գեղին, և Շահկերտու գեղին և Գազ գեղին, որք շինեցան յաւուրս տեառն Յակովբայ կաթուղիկոսին. և Շօռօթու եկեղեցին, և Ապուլեաց վանքն ի գեղի չորս եկեղեցին, և Թարվիզու քաղաքի եկեղեցին, և Գարաշամբայ եկեղեցին, և Ցղնոյ եկեղեցին, սոքա և այլք յոլովք՝ զորս ոչ յիշեմ, նմանք յաւուրս Մովսէս կաթուղիկոսին շինեցան, և նմանք յաւուրս Փիլիպպոսի կաթուղիկոսի, զորս Տէր Աստուած պահեսցէ անսասան մինչև յաւիտեան։

ԳԼՈՒԽ Ի Ե
ՎԱՍՆ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՏԷՐ ԱՆԴՐԷԱՍ ՔԱՀԱՆԱՅԻՆ

Եւ եղև զի մեծ և առաջին Շահաբաս թագաւորն Պարսից ունկընդիր լեալ զրպարտողաց արանց՝ որք խօսեցան բանս չարս վասն բնակչացն Նախչուան քաղաքին, որ և բարկութիւնամբ մեծաւ ցասեաւ ի վերայ նոցա շահն և հրամայեաց հանել զամենայն բնակիչս քաղաքին, և արտաստահման արարեալ վարել և տանել ի քաղաքն Ֆահրապատ. և զքաղաքն Նախչուան աւերել, զառնան և զամենայն շինուածսըն քանդել, և զայգիստանան կոտորել, որ անխափան կատարեցաւ առ նոսա հրամանն թագաւորին. զի զամենայն բնակիչսն հանեալ վարեցին ի Ֆահրապատ։ Իսկ ի բնակչացն Նախչուանայ արք աննշանք և սինքորք փախուցեալք ի շրջակայ գեղօրայսն՝ թաքեան աստ և անդ, յորոց մի էին և ծնօղքն տէր Անդրէասին, որք գնացեալ ի գիւղն Ապուլիս, և անդէն գետեղեցան, և մինչ էր ի տիս մանկութեան տէր Անդրէասն՝ եառն զնա յուսումն գրոց, և ուսաւ զամենայն եկեղեցականն ուսմունս։ Իբրև զարդացաւ՝ և եհաս ի չափ հասակի, մուծին զնա ի կարգ աշխարհի[100] և արարին նմա հարսանիս։ Եւ որպէս գրեալ է թէ ըստ վկայութեան անձին իւրոյ, և ամենայն ժողովրդեանն, օրհնեցին

1 Ի: չիք ևս Ա. *բազումք ... նորոգեալք* Ա. *բազումք*
2 Ա.ԲԳԴՆ *Լօռոյ*
3 ԲԳԴՆ *Արարատոց* Ր *գաւառն*
6 Ա.Ի: *գեղջն* Ա. *Շահկերտու գիւղքն և Գազ գիւղին* Ի: *գեղջ ... գեղջ*
7 Ա. *Յակօբայ* Ր *Յակոբ* Ի: *Յակովբ կաթուղիկոսի* Գ *Յակօբ*
8 Ա. *գիւղի չորս եկեղեցիքն* Ի: *գեղջ չորս եկեղեցիք* Գ *Թարվզու*
8-9 Ա.ԲԳ *և Ցղնոյ եկեղեցին և Դարաշամբայ եկեղեցին, և Թարվիզու քաղաքի եկեղեցին—սոքա և այլք յոլովք*
11 Ե *կաթուղիկոսին*
14 Ա. *տէառն Անդրէի*
16 Ա. *զբանս*
18 Ա. *զամենեսեան*
19 Ա. *տանիլ*
20 Ա. *զամենեսեան*
22 Ա. *զամենեսեան*
24 Ա. *սինքորք* ԲԳԴՆԻ: *անլիքորք* Ն *փախուցեալ*
25 ԲԳՆԻ: *էր իխ էին* Ա. *գնացեալք*
26-27 ԲԳՆ *Անդրէաս* Ր: *նա*
27 Ա. *զամենեսեան*
29 Ա. *զհարսանիս*
30 Ա. *ամենայնի* ԲԳՆ *ժողովրդեանն*

զնա քահանայ, և նա պաշտէր զքահանայութիւնն որպէս և վայել է կարգի քահանայութեանն։

Եւ ի սոյն ժամանակս վարդապետն Մովսէս՝ որ յետոյ եղև կաթուղիկոս էջմիածնի, և վարդապետն Պօղոս՝ որ ի վերայ պատմեցաք, յայտնեալ եղեն յարևելեան աշխարհն Հայոց, ամբիծ և պարկեշտ վարուք, որ շրջէին յերկիր յերկիր և անխափան քարոզէին, շինէին եկեղեցիս, կարգէին քահանայս ըստ կարգի առաքելոցն։ Եւ վասն հաստատութեան հաւատոյս և կրօնից մերոյ հաստատեցին դպրատուն[101] ի պատշաճաւոր տեղիս՝ ի գիւղն Աստապատ, և ի Շօռօթ. որ ի շրջակայ գեղօրէից անդադար ժողովեցան մանկունք առ ի յուսումն։ Նոյնպէս և ի գիւղն Ագուլիս հաստատեցին դպրատուն, և կարգեցին ի վերայ մանկանցն դպրապետ զայր Անդրեասն, յորում տեղւոջ ժողովեցան մանկունք որպէս թէ չիսուն կամ վաթսուն, և տէր Անդրէասն էր վերակացու, որ հովուէր զմանկունսն և ուսուցանէր զուսումն հաւարակաց մերս եկեղեցւոյ։

Եւ եղև դալ Շահաբաս թագաւորին ի գիւղն Ագուլիս յայսպիսի իմն պատճառէ, որ յայգէն Օսմանցւոց եկեալ ումն սարդար՝ անուամբ Օքուզ Ահմատ փաշայ, բազում՝ զօրօք եկն ի վերայ բերդին Երևանայ, որ առեալ՝ ի Պարսից դարձուսէ ի կողմն Օսմանցւոց. վասն որոյ թագաւորն Պարսից Շահաբաս ժողովեալ զամենայն զօրսն Պարսից՝ եկն Երևան յօգնութիւն բերդին. և նոսաւ սարդարն ի վերայ բերդին և պատերազմեցաւ մինչև ցերկու ամիս և կէս՝ և ոչ կարաց առնուլ։ Ժամանեաց ի վերայ ցուրտ աշունն՝ և վշտացեալ ի ցրտէ և ի սովէ, դարձ արարեալ ամենայն բանակաւն իւրով՝ և չուեալ գնաց ի քաղաքն Կարին, յաշխարհն Օսմանցւոց։ Զկնի դառնալոյ սարդարին, շահն ևս դարձաւ Երևանայ և գնաց ի Նախիջուան, և անտի յԱգուլիս. Արդ՝ այսու պատճառաւ եկն շահն յԱգուլիս։ Եւ սովորութիւն էր շահին, որ ուր և մտանէր թէ ի քաղաք թէ յերկիր, ամենայն բնակիչք տեղւոյն միահաղոյն ընդ առաջ ելանէին, իշխանք, և ժողովուրդք, արք և կանայք և աղջկունք, երիտասարդք և մանկունք, ամենեքեան զարդարեալք ազնիւ և մեծագին զարդուք. քաղցրահամ մրգօք, և համադամ ճաշակելիօք և անուշահոտ և ծաղկեհամ գինեաւ. և վայելչահասակ և գեղեցկատես մանկունք և աղջկունք և կանայք ի ձեռս առեալ զգինին

1 ՐԳՆ *զքահանայութիւն*
3 Գն *զոր*
4 Ս. *չիք և*
6 Ս. *չիք վարուք*
7 Ս.Ն *զնկեղեցիս* ՐԳՆ *առաքելոց*
8 Ս. *մերոց փխ մերոյ*
11 Ս. *զդպրատուն*
13 ՐԳՆ *Անդրէաս*
14 Ր *հովուէր*
16 Ս. *Շահաբասի* Ս. *յայսպիսւոյ*
18 Ս. *բազմաւ զօրու*
19 ՍԳ *չիք զի առեալ ի Պարսից դարձուցէ ի կողմն Օսմանցւոց*
19-20 ԳՆ *և թագաւորն*
20 ՍԳ *զօրն*
23 ՐԳՆ *ի սովոյ*
23-24 Գ *և դարձ արարեալ*
24 *ամենայնիւ*
25 Գն *և ի յաշխարհն*
26-27 ՍԳ *չիք Արդ՝ այսու պատճառաւ եկն շահն յԱգուլիս*
27 ՐԳՆ *ի յԱգուլիս*
28 Ս. *ամենեքեան*
31 Ս. *ազնուով և մեծագնով զարդուք, քաղցրահամօք... համադամօք*
32 Ս. *անուշահոտով և ծաղկեհամօվ ի անուշահոտութեամբ*

ոսկի բաժակաւ մատուցանէին շահին։ Այլ և մարմնաւոր գուսանք և երգեցողք առաջի ընթանալով, և արուեստական երգարանօք քաղցրանուագ երգէին։ Այլ և նկեղեցականք քահանայք և պաշտօնեայք, զգեցեալ շուրջառս և շապիկս, և առեալ գխաչ և գաւետարան, և ամբարձեալ խաչալամ, խնկօք և մոմեղինօք, և գանգակօք և ծնծղայիւք եւանէին ընդ առաջ շահին, և երգելով գնային մինչև հասուցանէին յիւր իջեւանն։

Արդ՝ յորժամ Ագուլիս գեղջ քահանայքն եկին ընդ առաջ շահին՝ զգեցեալ զգեստուք, կային ընդ նոսա և ոմանք ի մանկանց դպրատանն որք զգեցեալ էին շապիկ և բարձեալ շամադան և մոմ, և երթային առ ընթեր խաչալամին. և մինչ երթային քահանայքն երգելով առաջի շահին, և շահն հայէր այսր և անդր. և ըստ չարայուշ մտաց և բարոյից իւրոց զննէր զամենեսեան, և ի զննելն հայեցեալ ի մանկունսն՝ եհաս գի ածելեալ էին գուլակք մանկանցն, և այն յոյժ ծանր և դժուարին թուեցաւ ինքեան. գի համարեցաւ թէ վասն ինքեան արարեալ իցեն զայն. որպէս գի մի՛ վայելչագեղ երեսացին մանկունքն յաչս նորա, և հաճեալ ի նոսա առցէ ի նոցանէ։ Եւ անդէն շարժեցաւ ի ցաւումն բարկութեան շահն ի վերայ առնն՝ որ ածելեալ իցէ զգուլակս մանկանցն։ Այլ և արք ոմանք մահմետական հաւատով՝ որք բնիկ բնակիչք են Ագուլեաց գեղջն՝ երեսելի իշխանք, որք ընդ շահին շրջէին, և մերձ նմին ի սպասու կային նորա, և վասն բնական նախանձուն, զոր ունէին ընդ քրիստոնէից առաւել ևս գրգռեցին և զայրացուցին զսրտմտութիւն թագաւորին ի վերայ քրիստոնէիցն, վասն որոյ ստէպ յուզմամբ հրամայեաց շահն զննել և գտանել, որ զայն արարեալ իցէ և սպանանել. և թէ ծնօղք մանկանցն արարեալ իցեն զայն, զնոսին սպանանել՝ և զինչսն յափշտակել և զմանկունսն գրաւել ի ծառայութիւն թագաւորին։ Իսկ առաջիկայք թագաւորին սկսան զննել և հարցանել ի սմանէ, և ի նմանէ, թէ ո՞ զայն արարեալ իցէ, և ամենեքեան զոչ գիտելն պատասխանէին. Ապա ի մէջ առեալ զտէր Անդրէասն և ստիպելով պահանջէին, թէ ասա՝ մեզ գի դու ևս վերակացու մանկանցն, և դու ևս գիտաք։ Իսկ տէր Անդրեասն խոկայր ի մտի. «Թէ զծնօղսն պատճառեմ, զնոսա սպանանեն, և զմանկունսն յափշտակեն. և թէ զայլ ոք պատճառեմ, զնա սպանանեն, և չինի այն

1 Ս. *ոսկեաւ*
2 Ս. *Արուեստականօք*
3 ԲԳԴՆ *նկեղեցական*
4 Ս. *զշուրջառս* Ա.ԲԳԴՆ *խաչ և աւետարան* Գ *աւետարան* փխ *և զաւետարան*
5 Գ *մոմեղինօք, զանկակօք և* ԲԳՆ *զանկակօք*
6 ԲՆ *մինչ*
8 Ս. *գիւղի* ԲԳԴՆ *գեղի է առաջի* փխ *ընդ առաջ*
9 Բ *ի մանկանցն*
10 ԱԴ *շապիկ* ԲԳՆ *շապիկ* Գ*ն որ* փխ *որք*
14 Ս.ԲԳԴՆ *էր* փխ *էին* Ա*է գուլակք*
18-19 Ա*է զգուլակս*
19 Ս. *մահմետականաւ* Գ *մահմետականք*
20 Ս. *բնակիչք էին* ԲԳԴՆ *որ* Գ *որ*
21 ՍԴ *չիք նորա* Ս. *բնականի*
22 Բ *գոգոնցին*
24-25 Ս. *և որ զայն արարեալ իցէ սպանանել*
25 ԱԴ *և եթէ* Ա.ԲԳՆ *արարեալք իցեն*
30 ԲԳՆ *Անդրէաս* Ա.ԲԴ *ստիպով* Դ*է չիք դու*
31 ԲԳՆ *Անդրէաս*

*ինձ խիղճ մատց և սոգաւանք անփարատելի, վասն որոյ լաւ համարեցաւ մատնել զանձն և փրկել զբազումս, ըստ վկայութեան սրբոյ Աւետարանին թէ, լաւ է զի այր մի մեռանիցի և մի ամենայն ժողովուրդս կորիցէ**. *վասն որոյ ի կարի ստիպելն զինուորացն, տէր Անդրեասն առ ի փրկելոյ զայլս ասաց, թէ ես եմ արարեալ զայն. և զինուորքն ծանուցին զբանն նորա շահին, և շահն հրամայեաց՝ ունել զնա և պահել ի կալանս։ Եւ զկնի աւուրց՝ հրամայեաց շահն ածել զնա առաջի իւր, և հարցանէր. թէ՝ զատոյկն ասա՝ ով ոք է արարող այդմ գործոյ. և տէր Անդրէասն ասաց. «Ոչ ոք, այլ ես միայն»։ Իբրև ետես շահն թէ զայլ ոք ոչ մատնեաց, յոյժ բարկացաւ ի վերայ նորա, և հրամայեաց տարածել ի վերայ գետնոյ և բրածեծ առնել անխնայաբար. և զկնի յոլով հարուածոցն՝ ասաց շահն. «Զայդպիսի վնաս և զպարտաւորութիւն արարեալ է քո, եթէ կամիս զկենդանութիւն անձին քո, ուրացիր զՀաւատն քրիստոնէութեան ձերոյ, և լեր օրինօքն մերովք՝ դաւանութեամբն մոլար առաջնորդին մերոյ, և ես տաց քեզ պատիւս և մեծութիւնս, և թէ ոչ հաւանիս, շանց և գազանաց առաջի արկանեմ զքեզ»։ Եւ նա ոչ կալաւ յանձն զուրանալն, այլ ևս պատասխանի թէ. «Քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ». և թագաւորն իբրև լուաւ զայն, զայրագին բարկութեամբ հրամայեաց դարձեալ ի բանտ արկանել։*

Եւ ի վաղիւն վերստին էած առաջի իւր. և հարցանէր թէ ուրա՞նաս զՀաւատն քո. և տէր Անդրէաս ասաց. «Ոչ ուրանամ»։ Կրկին անգամ ասաց արքայ. «Տամ քեզ պատիւս և մեծութիւնս՝ թէ ուրանաս զՀաւատն ձեր». և նա ոչ հաւանեցաւ. և դարձեալ հրամայեաց ի բանտ արկանել։

Իսկ քրիստոնեայքն մատեան առ նախարարս թագաւորին, և խոստացան զանձս բազումս, զի գուցէ ազատեսցեն զնա. և թէպէտ նախարարքն խնդրեցին երկիցս և երիցս, ոչ լուաւ արքայ։ Այլ և Ցղնեցի խօջայ Անձրևի կինն՝ որում մայր էր ասացեալ շահն, և ունէր պատիւ առաջի շահին, սա մեծաւ աղաչանօք անկեալ առաջի շահին, խնդրեաց արձակել զնա. սմա ևս ոչ լուաւ[102]։

Եւ դարձեալ ածին զտէր Անդրէաս առաջի արքայի, յետ բազում անգամ հարց և փորձ առնելոյ, խոստմամբ պարգևաց և սպառնալեօք տանջանաց. իբրև ետես թագաւորն, թէ ո՛չ հաւանի, հրամայեաց սպանանել։ Իսկ քաջ նահատակն և ճշմարիտ քահանայն տէր Անդրէաս հաստատուն հաւատով կայր ի վերայ անշարժ հիման հաւատոյս քրիստոնէութեան։

* *Համմտ.՝ Յովհաննէս, ԺԸ, 14*

1-2 Ի չիք *վասն որոյ լաւ համարեցաւ մատնել զանձն և փրկել զբազումս*
2-4 ԱԴ չիք *ըստ վկայութեան ... ժողովուրդս կորիցէ (էջ 357 տ. 29— 358 տ. 1)*
3-4 ԱԴ չիք *մեռանիցի ... կորիցէ*
4 Ս. *բայց փխ վասն որոյ*
4-5 Ի *վասն որոյ լաւ համարեցաւ մատնել զանձն և փրկել զբազումս*
9 ՐԳՆ և տեր ՐԳՆ Անդրէաս
15 ԱԴ չիք *մոլար* Ա. *զպատիւս*
16 Ա. *զմեծութիւնս*
17 Ա. *զպատասխանի*
21 Գ Անդրիաս
22 Ս. *զպատիւս և զմեծութիւնս*
26 Ա. *զգանձս*
28 Ս. *զպատիւ*
35 Ս. *Հաստատնով* Ա. *անշարժի*

Իսկ ղինուորացն առնալ զտէր Անդրէասն կապանօք տարան ի տեղի կատարման, և նա ուրախութեամբ և յօժար կամօք գնայր. և յորժամ եհաս ի տեղի կատարմանն՝ իւրովի արձակեաց զգօտին իւր. և մերկացաւ զհանդերձն իւր, և ասէր դահճացն կատարել ի վերայ ինքեան զհրամանս թագաւորին. բայց դահիճքն յամեցուցանէին, վի գուցէ հաւանեսցի հրամանաց արքայի։

Եւ մինչ կայր սուրբն ի տեղի կատարմանն, առաքեաց առ նա թագաւորն ի նախարարաց զոմանս երկիցս՝ թէ մի՛ կորուսանէր զդէղ և զմանկութիւն քո, եկեալ հաւանեաց իմոց բանից. և ա՛ռ յինէն պարգեւս և մեծութիւնս։ Իսկ քաջ նահատակն՝ ամենայն բանից նոցա տայր պատասխանի թէ, ընդունայն խոստմանց ձերոց ոչ հաւանիմ, և զճշմարիտ հաւատն իմ ոչ ուրանամ։ Եւ դահճացն հանեալ զսուրն խաղացուցանէին ի վերայ նորա՝ և ածէին ի վերայ որովայնին առ ի երկեցուցանել զնա և նա ո՛չ երկնչէր։

Եկին ի տեղի նահատակութեան ծնողք սրբոյն և կային առ ընթեր և աղիողորմ և յորդաբուղխ արտասուօք լային, և աղաչանօք ասէին առ սուրբն. «Քաղցրիկ որդեակ մեր, որ առեր զվարդ քահանայութեան և եղեր զինուոր Քրիստոսի, մի՛ երբէք լիցի քեզ ուրանալ զՔրիստոս և լինել զինուոր տիրատեաց, մի՛ թողուցուս զլուսապայծառ հաւատս Քրիստոսի, և մի՛ վասն առժամանակեայ կենացս զերկեսցիս ի յաւիտենական կենացն. այլ յիշեա՛ զճշմարիտ վկայն Քրիստոսի, զորոց զպատմութիւնսն հանապազ ընթերցեալ պատմէիր մեզ. համբեր որպէս և նոքայն, զի և նոցին պսակացն արժանասցիս». զայս և որ սոցին նման փղձկեալ սրտիւ, և յորդաբուղխ արտասուօք աղերսալի ասէին ծնողք սրբոյն առ նա։

Իսկ դահճացն զբազում ժամս յամեցուցին անդէն. զի թերևս երկմըտեալ թուլասցի. և սուրբն անդրդուելի կայր ի վերայ ճշմարիտ հաւատոյս. և ի խաչակնքելոյ զդէմն ոչ դադարէր։ Իբրև տեսին զհաստատութիւն մտաց նորա դահիճքն, թէ ոչ դառնայ, յայնժամ ձգեալ զսուրն պատառեցին զորովայնն նորա, և վաթնեցաւ աղիքն արտաքս ի փորէն, և սուրբն միով ձեռամբն ժողովէր զաղիսն ի փորն, և միով ձեռամբն խաչակնքէր զերեսն, և յիշէր զանունն Քրիստոսի. և ապա ծակեալ զջիլս սրունից ոտիցն, և պարանօք բարձրացուցեալ ի բարձունս, և կախեցին զսուրբն գլխիվայր. և նա կայր կենդանի մինչև ի մուտս արևուն. և ընդ երեկոյն աւանդեաց զմաքուր հոգին ի ձեռս Աստուծոյ. որպէս զխունկ անոյշ և ճշմարիտ զոհ ընդունելի։ Եւ յետ մահուան սրբոյն հրամայեաց շահն ձգել զմարմին նորա արտաքոյ շինութեան, զի կերակուր լիցի գազանաց և թռչնոց։ Իսկ քրիստոնէիցն

2 ՐԳՆ *կատարման*
4 Գ *ասէ*
8 Ա.Ն *ի նախարարացն*
10 Ա *զպարգեւս* ՐԳՆ *մեծութիւնս*։ Ա *ամենից*
13-14 Ն *երկուցանել*
15 Գ *ծնօղքն*
16 Ա *աղիողորմիւք և յօրդաբղխօք* Ն *յորդաբուխ*
19 Ա.Ն *լինիլ*
21 Ա.ՐԳՆ շիմ *ի* Ա *յաւիտենականաց*
24 Ա *փղձկելով... յորդարղխօք* Ր.Ն *յորդաբուխ* ԳՆ *փղձկեալ*
27 Ա *ճշմարտի*
30 ԳՆ *զորովայն*
33 ՐԳՆ *սրունից ոտացն* Գ *ոտացն*
36 Ա.Ն *զճշմարիտ*

բարձեալ անտի և բերեալ յԱգուլեաց ներքին եկեղեցին, որ այժմ ասի Խցաձորի եկեղեցի, և անդ թաղեցին. և այժմ անդէն կայ թաղեալ պատուական նշխարք ոսկերաց նորա, ի բարեխօսութիւն ամենայն քրիստոնէից։

Եւ եղև կատարումն և մարտիրոսական մահ սրբոյ քահանայիս Աստուծոյ տէր Անդրէասիս ի մեծ թուականիս Հայոց ՈԿԶ. տրէ ամսոյ ի տասն. և նոյեմբեր ամսոյ ի տասն և յութն։ Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. և աղօթիւք նորա տէր մեզ ողորմեսցի. ամէն։

Եւ յետ կատարման տէր Անդրէասի, իբրև անցին ի վերայ ամիսք երիք կամ չորք, ի մէջ խօսից և զրուցաց վերստին յիշեալ եղև առաջի Շահարասին որպիսութիւնք և իրակութիւնք անցուածոց տէր Անդրէասի։ Եւ անդէն ումն ի նախկի չարախօսացն ի բնակող մահմետականացն Ագուլեաց՝ զորոց վասն կանխաւ յիշումն արարաք. և սորա անունն էր Շահռուղ բէկ[108]. ասաց առաջի շահին, թէ տէր Անդրէասն, որ զդուլակս մանկանցն ածելեալ էր, ոչ թէ յիւրոց մտաց ինչ, այլ խրատով վերակացուին իւրոյ. քանզի ունի ինքեան խրատիչ. և անդէն արարին հարցումն վասն խրատողին թէ ով ոք իցէ։ Եւ որպէս ի համեմատութիւնս մարդկան և անասուն կենդանեաց, համեմատին Տաճկաց ազգն ի յօձ, վասն նախանձուն և նենգութեան, զոր բնական ունին ընդ ազգս և ընդ հաւատս քրիստոնէից. յորոց և ումն այս Շահռուղ բէկս նովին կրիւքն ախտացեալ մատնեաց շահին զՄովսէս վարդապետն ասելով. «է ումն այր, որոյ է անունն Մովսէս, որ է վարդապետ օրինաց քրիստոնէից, որոյ բնակութիւնն է ի վանքն Տաթեւու, և է ինքն յերկրէն Սիւնեաց, և նա է օրէնսուսոյց և դաստիարակ տէր Անդրէասին»։ Յաղագս որոյ հրաման եղև ի թագաւորէն առաքել զզօրականս և ունել զՄովսէս՝ և կապանօք ածել առ թագաւորն. և զօրականացն դնացեալ կալան զՄովսէս վարդապետն, ընդ նմին և զՊօղոս վարդապետն՝ և եդին զօղամանեակ զուգեալ ի միասին ի պարանոցս նոցա. և երկաթ ոտնակապ յոտս նոցա. յաւուրս ցրտութեան ձմերայնոյ, և բերին զերկոսեան վարդապետսն ի բանակն շահին, և ծանուցին նմա։ Եւ ի խոհարանս խորհրդոց իւրոց քննեալ էր շահն, թէ ապանանիմ զարս երկուս՝ ասակաւ լինի վնաս քրիստոնէից և օ-

1 Գ *անդի* ԲԳՆ *ներքի*
3-4 Ա. *նշխար* ԱԳ *չիք ի բարեխօսութիւն ամենայն քրիստոնէից*
5 Գ *մահն*
6 ԱԳ *չիք մեծ*
7 Ա *նոյեմբերի*
8 ԱԳ *չիք ամէն*
9 Ա *տեառն* ԲԳ *Անդրէասին*
11 Ա *տեառն*
11-12 ԲԳՆ *Անդրէասին*
13 Ա *որոյ վասն* ԱԳՆ *սորայս*
14 ԱԳ *Շահռուղբէկ* ԲԳՆ *Շահբռուղ բէկ է Շահռուղբէկ*
15 Ա *է զկուլակս*
16 Ա *զխրատիչ*
17 Ա *զհարցումն*
18 Ա *անասնոց*
20-21 ԱԳ *Շահռուղ բէկս* ԲԳՆ *Շահբռուղբէկս է Շահռուղ բէկս*
22 ԳՆ *որ փխ որոյ* Բ *անունն է։*
23 ԱԲՆ *օրինացն*
24 ԱԳ *ինքն է*
24-25 Ա *տեառն Անդրէի*
25-26 ԲԳՆ *զօրականս*
26 Ա *է ունել*
28 Գ *զողամանեակն*
30 Բ *զերկոսին*
31 ԲՆ *քննեալ*
32 է *արս*

գուտ մեզ, այլ առից զյոլով տուգանս արծաթոյ ի նոցանէ, որով լինի աւելի օգուտ մեզ և վնաս նոցա: Եւ այսպէս վասն ագահութեան և արծաթսիրութեան, էարկ տուգանս ի վերայ վարպետացն, թէ հինգ հարիւր թուման տան և ապա գնան աղատ. բայց քրիստոնէիցն աղերս մատուցեալ առ նախարարս արքայի, զի խնդրեսցեն յարքայէ թեթևացուցանել զտուգանսն, և վասն միջնորդելոյ նախարարացն իջաւ մինչ յերեք հարիւր թուման, և անդէն վճիռ եհատ թէ անպատճառ տացեն. որ և կարգեաց ի վերայ նոցա զլօրականս, զի առցեն: Իսկ վարդապետքն վասն ոչ ունելոյ ինչս, զի տացեն ի տուգանս, վասն որոյ ելին ի շրջագայութիւնս և ի խնդիր ողորմութեան յամենայն աղգս Հայոց:

Իսկ աստուածասէր քրիստոնեայքն, թէպէտ աղքատք և չքաւորք էին, այլ ըստ կարողութեան իւրեանց աղքատք և հարուստք, արք և կանայք, անխնայաբար թափէին զինչս և զողորմութիւնս առաջի վարդապետացն: Եւ նոքա առեալ զողորմութիւնն՝ ուր և լինէր, գերի և բանտարգել, և անզերծանելի պարտատէր, և այլ պակասաւոր, նախ նոցա տային և ազատէին, և յայսմ պատճառէ բազում գերիք, և բանտարգելք, և պարտատէրք ազատեցան, և ապա զմնացեալն տային իւրեանց ունող զօրականացն ի սակս տուգանին իւրեանց: Եւ այսպիսի շրջագայութեամբ մինչև ի չորս և ի հինգ ամիսս վճարեցին զերեք հարիւր թուման. և ինքեանք զերծան ի կապանաց ողորմութեամբն Աստուծոյ և տրօք քրիստոնէիցն: Բայց մինչև զերեք հարիւր թուման վճարեցին ի գանձարանս արքային. չորս հարիւր թուման նա ևս աւելի գնաց, որ այսր և անդր խարճ գնաց, և ապա զերծան վարդապետքն:

Իսկ Շահռուզ բէկն՝ որ մասանեաց զՄուվսէս վարդապետն, չետ սակաւ աւուրց սպանանել եղև սրով ի զօրականաց շահին, ընկալեալ աստէն զհատուցումն վաստակոց իւրոց զատակումն մարմնոյ, և անդէն զկորուստն հոգւոյ և զտանջանսն յաւիտենից. յորոց փրկեաց զմեզ Քրիստոս Փրկիչն մեր, որում փառք յաւիտեանս. ամէն:

1 ԲԳԴե *յոլով* Ա. *զտուգան*
3 Ա. *զհինգ*
5 Ա. *զաղերս*
7 Բ *մինչ ի յերեք*
8 ԲԳԴե *զօրականս*
9 Ա. *զինչս*
9-10 Ա. *չիք վասն որոյ*
17 Ա. *յայսմանէ*
19 Ա. *չիք ի*
19-20 Ա. *այսպիսեաւ*
20 Բ *չիք ի (հինգ)*
22-24 Ա.Դ *չիք բայց ... վարդապետքն*
23 Ե *ի գանձարան*
23-24 ԲԳԴ *նա և աւելի*
24 Դ *խարջ*
25 Ի *Շահռուզ բէկն*
26 Ա. *սակաւուց* ԲԴՆ *զօրականացն*
27 Դ *վաստակոց*
28 ԲԴՆ *փրկեսցէ*
28-29 Ա.Դ *չիք յորոց փրկեաց զմեզ Քրիստոս. Փրկիչն մեր, որում փառք յաւիտեանս. Ամէն*

ԳԼՈՒԽ ԻԸ

ՊԱՏՄՈՒԹԻԻՆ ՆԵՂՈՒԹԵԱՆՑ ԵԻ ՎՇՏԱՑ, ԶՈՐ ԿՐԵՑԻՆ ՀԱՅ ԱԶԳԱՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՅՔՆ, ՈՐՔ ԲՆԱԿԵԱԼՔ ԵՆ Ի ՔԱՂԱՔՆ ԻԼՈՎ

Ի վեր անդր ի կարդի պատմութեան, զոր դրեցաք վասն Մելքիսէթ կաթուղիկոսին, թէ գնաց նա յաշխարհն Իլախաց[105]։ Արդ՝ յորժամ եհաս նա անդր, և եմուտ ի քաղաքն Իլով, յետ անցանելոյ աւուրց ինչ, ի նոյն Իլով քաղաքէ ոմն աբեղայ, որում անունն էր Նիկոլայոս, զարս ոմանս միջնորդս և բարեխօսս արարեալ առաքեաց առ Մելքիսէթ կաթուղիկոսն, զի օրհնեսցէ զինքն եպիսկոպոս ազգին Հայոց, որք կան յԻլով քաղաքին և որոց շուրջ զնովաւ, վասն զի ի ժամանակին յայնմիկ ոչ գոյր եպիսկոպոս նոցա։ Եւ միջնորդացն մատուցեալ առ կաթուղիկոսն ընծայեցին ոսկի բազում, և խնդրեցին առնել զնիկոլայոս աբեղայն եպիսկոպոս. և կաթուղիկոսն տեսանելով զյոլովութիւն առ ձեռն պատրաստ ոսկւոյն, նա և ակնկալութիւն ևս յոլովից ոսկւոյ առ յապայն, հաճեցաւ օրհնել զնիկոլայոսն եպիսկոպոս Իլովայ[106]։

Իսկ քահանայք և ժողովուրդք քաղաքին՝ իշխանք և ռամիկք, ի վաղ ժամանակաց դիտելով զորպիսութիւն վարուց Նիկոլ աբեղային, զումարեցան միահաղոյն ամենեքեան, և եկեալ առ կաթուղիկոսն ծանուցին զբանս իւրեանց նմա, և ասացին. «Մեք գիտեմք զդա, և զորպիսութիւն վարուց դորա, վասն որոյ ոչ է դա մեզ ընդունելի, մի զդա՝ այլ զայլ ոք արասցես մեզ եպիսկոպոս»։

Իսկ կաթուղիկոսն քամահեալ անարգեաց զժողովուրդն և զբանս նոցա. և արտաքսեալ յերեսաց իւրոց յետս դարձոյց զնոսա. բայց ժողովուրդքն՝ ոչ թուլացան ի բանից իւրեանց, այլ ի բազում աւուրս՝ բազում բանիւք խօսեցան ընդ կաթուղիկոսին. և ոչ թողին օրհնել զնիկոլն եպիսկոպոս։

Ապա կաթուղիկոսն ելեալ ի քաղաքէն գնաց ի վանքն, որ անուամբ սրբուհւոյ Աստուածածնին կայ շինեալ արտաքոյ քաղաքին, զոր Իլովացիք Համկատար Աստուածածին ասեն, և անդէն առանց գիտելոյ ժողովրդոցն՝ մէկուսի յամբոխէ ի մէջ գիշերի սկսաւ օրհնել զնիկօլ աբեղայն եպիսկոպոս. որում իրազգած լեալ ժողովրդականաց քաղաքին, առ ժամայն նոյնում գիշերոյ իշխանք և ռամիկք վաղվաղակի գումարեցան ի միասին և ընդ փոքր դուռն քաղաքին ելեալ փութանակի հասին ի տեղին, աղաղակէին առ կաթուղիկոսն. «Մի՝ օրհնէր զդա, և մի մատնէր զմեզ և զեկեղեցիս մեր ի ձեռս անիրաւիդ այդմիկ. զի մեք գիտեմք զդա՝ և զորպիսութիւն վարուց դորա, վասն որոյ ոչ է

2 Գ *վշտացն* Ա. *զորս*
4-5 Ա. *մելքիսէթի*
7 Ան *ի նունոյ Իլովէ* Ա. *որոյ փխ որում* ԳԴՆ *ի նմին*
8 Բ *բարեխօս* Բ *շիմ առաքեաց*
8-9 ԲԴ *կաթուղիկոս*
12 Ա. *զոսկիս բազումս*
13 ԲԴՆ *կաթուղիկոսին*
17 Ա. *ի վաղուց* Ա. *Նիկոլայի*
21 Ա. *զեպիսկոպոս*
24 Ա. *բազմօք*
29 Ա.ԲԳՆ *լովացիք*
30 ԱԴ *շիմ մէկուսի յամբոխէ*
31 Գն *իրազգաց*
32 ԲԴԳ *գիշերին*

մեզ ընդունելի»[107]: *Եւ կաթուղիկոսն նստեալ ի վերայ աթոռոյ օրհնէր զնիկոլ աբեղայն եպիսկոպոս, և խաչին՝ որ ի ձեռին էր, սասաէր ժողովրդեանն, և բանս տգեղս, զոր ոչ է պարտ յիշել՝ ասէր նոցա. և թէպէտ ողորմելի ժողովուրդքն ամբոխեալ և աղմկեալ՝ յոդնակի աղաղակեցին, ոչ լուաւ նոցա կաթուղիկոսն, այլ օրհնեաց զնիկոլն եպիսկոպոս:*

Եւ յետ սուղ ինչ աւուրց կամեցաւ Մելքիսէթ կաթուղիկոսն ելանել յիլովայ և գնալ ի քաղաքն Կամենից, և ժողովուրդքն հնարէին, զի թերևս զնիկոլն ընդ կաթուղիկոսին ուղևորեսցեն ի դնալ. իբրև խօսեցան ժողովուրդքն ընդ Նիկոլին վասն գնալոյ ընդ կաթուղիկոսին, և նա խաբեաց զնոսա ցուցանելով զինքն կամայօժար ի գնալն: Եւ իբրև գնացին աւուրց ինչ ճանապարհ, ասաց կաթուղիկոսն ընդ Նիկոլին. «Բաւական է այսքան գալն քո՝ այսուհետև խաղաղութեամբ դարձիր ի տեղին քո, և ի գործ եպիսկոպոսութեան քո». ասաց Նիկոլն՝ «Քո իսկ աչօք տեսեր զի այնքան հակառակեցան քեզ՝ և ոչ հաճէին յիս, և այժմ զիա՞րդ իշխեմ գնալ ի մէջ նոցա»: Եւ այնքան հնարեաց Նիկոլն, մինչ որ կաթուղիկոսն գիրս բանադրանաց՝ նզովից և կապանաց գրեալ ի վերայ ժողովրդեանն ետ ի ձեռս Նիկոլ եպիսկոպոսին, որպէս զի թէ ոք ընդդիմակայեսցէ հակառակեսցի և ոչ ընկալցի զնա ի պատիւ եպիսկոպոսութեան, լիցի ի ներքոյ բանադրանաց: Եւ Նիկոլին առեալ զայս թուղթս և եկն յիլով, ասաց ժողովրդեանն. «Դուք ամենեքեան ժողովեցարուք յաւուր կիրակէի յեկեղեցին՝ քանզի ունիմ խօսք ինչ խորհրդական հասարակապէս ասել ձեզ ամենեցուն»: Եւ յաւուր կիրակէին յորում և ժողովուրդք ժողովեալ էին յեկեղեցին՝ հանեալ զթուղթն բանադրանաց ետ ընթեռնուլ ի լուր ամենեցուն, իբրև զայն տեսին և լուան ամենեքեան ժողովուրդքն՝ տրտմեալ մեծաւ սգով՝ վհատեալ սրտիւ ապուշ մնացին, և ափ ի բերան եղեալ լռեցին: Իսկ կաթուղիկոսն Մելքիսէթ՝ որ գնայր ի Կամենից, իբրև նհաս անդր, զկնի սուղ ինչ աւուրց հիւանդացաւ՝ և մեռաւ խա՝ յաղուհացից պահոցն, ի Մաղկազարդի շաբաթ օրն, ի ութն յոյրութեան Ղազարու, ի մերում թուականին ՌՀԵ. և անդէն թաղեցաւ: Յետ այսոցիկ զկնի անցանելոյ աւուրց և ամաց ինչ, դէպ եղև Նիկոլ եպիսկոպոսին գալ ի քաղաքն Կամենից, և ի նոյն քաղաքէն ղոմն սարկաւագ՝ որոյ անունն էր Խաչկո, օրհնեաց աբեղայ, փոխեաց զանուն նորա և կոչեաց Օնօփրիոս:

Եւ Կեսարացի Գրիգոր վարդապետն, որ առեալ էր դաւազան վարդապետական Մովսէս կաթուղիկոսին, էր այր երևելի զի վարուքն

3 Ա. *զբանս*
4 ԲԳԴԵ *յոքնակի*
5-6 Դ *եպիսկոպոսն*
8 Ա. *ի Լովայ* ԲԳԴԵ *Իլովայ* ԲԳԴ *կամէնից*
11 ԱԲԳ *չիմ Եւ*
17 Ա. *զգիրս*
18 Ա. *Նիկոլայ*
21 Ս. *ի Լով* ԲԳ *Իլով*
22 Է *կիւրակէի* ԲԳԵ *կիրակէին*
24 ԲԳԴԵ *ժողովուրդքն* Ա. *ժողովեալք իւն*
26 ԴԵԵ *ամենայն* Է *ոգով* ԲԵ *սրտով*
27 Ա. *և վհատեցեալով*
29 ԱԴ *որ և մեռաւ*
31-32 ԲԳԵ *անցելոց*
32 Ա. *Նիկոլայի*
33 Ա. *ի նունոյ*
34 Բ *Խաչքո* ԴԵ *Խաչքօ*
34-35 Է *Ոնոփրիոս*
36-37 Ա. *դպաւաղան... Մօսէսի*

կարի պարկեշտ էր և չորակաց, և իմաստութեամբն փարթամ, բանիբուն և յոյժ հանճարեղ, վասն որոյ անուանի էր նա ի մէջ աշխարհի, որ ամենայն աշխարհ կախեալ կային ընդ նմանէ. և եղև այս Գրիգոր վարդապետիս յաւուրս յայսոսիկ գալ յաշխարհն Իլախաց, և նախ եմուտ ի քաղաքն Կամենից, անդ ի Կամենից էր և Նիկօլ եպիսկոպոսն, և կամեցան Նիկօլ եպիսկոպոսն և այլք ոմանք ընորընծայ աբեղայն ղՕնօփրիոս արտաքս բերել ի քառասնից: վասն որոյ և եկեալ առ Գրիգոր վարդապետն՝ մեծարանօք հրաւիրէին գալ ի միւս եկեղեցին. յորում ղպատարագն մատուցանելոց էր նորընծայն, և նորընծայն դեռ ևս ոչ էր լիով պահեալ զքառասունքն. քանզի տասն և հինգ աւուր օրհնած էր՝ զոր կամէին արտաքս բերել. վասն որոյ ասաց վարդապետն՝ «Որովհետև ոչ է լցեալ ղթիւ քառասուն աւուրն, ո՛չ է պարտ հանել ի քառասնից, այլ պարտ է լիով պահել զքառասունքն ըստ աւանդութեան Հայաստանեայց եկեղեցւոյ, և ըստ կանոնաց հայրապետաց մերոց». և ապա հրաման է նորընծային մատուցանել պատարագ և արտաքս ելանել ի քառասնից, վասն որոյ և նոքա լռեցին զայն շաբաթն և ո՛չ բերին արտաքս նզորընծայն: Եւ ի գալ միւսում կիրակէին՝ կամեցան Նիկօլն և այլք արտաքս բերել զնորընծայն, վասն որոյ ի շաբաթոջն աւուր միւսանգամ եկին, հրաւիրեցին զվարդապետն, և վարդապետն ոչ գնաց, այլ ասաց «Խօսքն մէկ կուլինի», որքան չէ լցեր զքառասունքն՝ չէ պարտ որ պատարագ մատուցանէ, այլ կացէք մինչ որ կատարի քառասունքն, ապա առնէ պատարագ, և դուրս գայ ի քառասնիցն, որպէս որ աւանդութիւն է Հայոց աղգին, և կանոնած է ի մեր Հայրապետացն: Իսկ նոքա ոչ եղեն ունկնդիր բանից վարդապետին, և ո՛չ համբերեցին, այլ գնացին ի յայսմ կիրակէին արտաքս բերին զնորընծայն. որ մատոյց զպատարագն, և յայսմ կիրակէիս՝ յորում զպատարագն մատոյց նորընծայն, դեռ Իբ. օր էր նորա, որ քառասունք էր պահեր:

Այլ և եպիսկոպոսն Նիկօլ արար յոյժ յանդուգն և անպատշաճ գործ ի կիրակէիս յայսմիկ, յորում զպատարագն մատուցին, քանզի եկեղեցւոյն այնմիկ՝ յորում էր վարդապետն՝ զդուռն փակեաց եպիսկոպոսն և զբանալին առ ինքն կալաւ. ո՛չ յիշելով զհրաման Տեառն՝ «Եթէ մատուցանիցես զպատարագն քո և անդ յիշեսցես եթէ եղբայր քո ունիցի խէթ ինչ զքէն՝ թո՛ղ զպատարագն քո ի վերայ սեղանոյն,

3 Ա. *այսորիկ* փխ *այս*
7 Ի. *զՕնօփրիոս*
10 Ա. *զքառասունսն*
11 Ա. *օրհնեալ էր* ԳԴ *աւրհնած էր որ* Ե *օրհնած էր, որ* Բ *որ կամէին*
13 Ա. *զքառասունսն*
14 Գ *Հայաստանեաց* Ա. *չիք ըստ*
15-16 Ա. *զպատարագ*
17-18 Ի. *կիւրակէին*
19 Ա. *եկեալ* փխ *եկին*, ԲԳԴԵ *եկին և հրաւիրէին*
20-24 ԱԴ *չիք որքան... Հայրապետացն*
24 Բ *Հայրապետաց*
25 Ի. *կիւրակէին*
26 ԱԴԵ *այս* Ա. *կիրակէն* ԲԳԴԵ *կիրակիս* Ի. *կիւրակէիս*
27 Ա. *զպատարագս*
28 Ա. *պահեալ*
29 Ա. *զանդուգն*
29-30 Ա. *զանպատշաճ զգործ*
30 Ի. *կիւրակէիս*
31 ԲԴԵ *զեկեղեցւոյն*
31-32 ԱԴ *չիք եպիսկոպոսն*
32-2 (հաջորդ էջում) ԱԴ *չիք ոչ յիշելով ... զպատարագն քո*
32 ԲԴԵ *զհրաման*

և երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո»։ Ի վերայ այսմ գործոյ որ եպիսկոպոսն փակեաց զեկեղեցին՝ յոյժ վշտացաւ վարդապետն, վասն որոյ ասաց. «Այն մարդն անիծած եղնի, որ այսօր գնայ յայն եկեղեցին». և եպիսկոպոսն յետ կատարելոյ պատարագին, և արտաքս բերելոյ նորընծայիսն, զայնմ եկեղեցւոյ զդուռն ևս փակեաց, և եղեն փակեալք երկուց ևս եկեղեցեաց դրունքն. և էին աւուրք աւագ տօներոյն՝ որ ըկնի նոյն կիրակէին յետագայ երկուշաբաթոջ աւուրն Դաւթի մարգարէին և Յակովբայ Տեառն եղբօրն էր տօն և յերեքշաբաթոջն աւուր Ստեփաննոսի նախավկային էր տօն, և մնացին յայս աւուրքս եկեղեցիքն փակեալ առանց ժամի և պատարագի։

Ի վերայ այսոցիկ յաւել Նիկօլն այլ ևս նենգութիւն գործել առ վարդապետն և վշտացուցանել զնա. վասն զի գնաց առ վօյքն Կամենից քաղաքին, որ ի մեծ իշխանէն վերակացու էր կարգեալ Կամենից քաղաքին, որում անունն էր Լուքաշ, խօսեցաւ եպիսկոպոսն ընդ նմա և հաւանեցոյց զնա զի արգելցէ զվարդապետն, և մի թողցէ գնալ յԻլով և կամ յայլ քաղաքս, այլ ի Կամենից քաղաքէն դարձուսցէ գնա, յետ դառնալ ընդ իւր եկեալ ճանապարհն և գնալ յայլ աշխարհ։ Վասն որոյ և Լուքաշ անուամբ վօյքն առաքեաց պատգամս առ վարդապետն ասելով, թէ մեծ իշխանն մեր թուրք է ուղարկել մեզ, թէ «Այդ վարդապետդ, որ ի թուրքի աշխարհէն եկեր է, շաշուա է եղեր[108], հրամայ չկայ որ ի քաղաքէդ ելանէ, մի թողուք որ երթայ, թէ ոչ ձեր գլուխն կերթայ». և այսպիսի բանիւք արգելեցին ի գնալոյ զվարդապետն, և վարդապետն կայր անդէն իբրև ղրիպահոջ։ Ապա արք ոմանք բարեպաշտօնք ի ժողովրդոց քաղաքին մատեան առ վօյքն և ծանուցին զանմեղութիւն վարդապետին նմա, ապա թէ հրամայ եղև վասն վարդապետին, զի ելեալ գնասցէ ոչ թէ յԻլով այլ դէպ ի յետ՝ ընդ որ եկեալն էր. և վարդապետին ելեալ ի Կամենից և եկն ի Բուղդան և ի յՈւռումէլի, և ի ճանապարհէն գրեաց գիր բանադրանաց[109], զնովից և կապանաց ի վերայ Նիկօլին՝ և առաքեաց յԻլով. և Նիկօլն ոչինչ հոգաց ի կողմանէ բանադրանքին, այլ կայր ի կարգի իւրում և ի քահանայագործութեան։ Բայց քահանայք և ժողովուրդքն այնք՝ որք յառաջմէ

* *Մատթ., ե, 23—24*

1 ԲԳԴԵ *եղբօրն*
2-3 ԱԴ չիք *որ եպիսկոպոսն փակեաց զեկեղեցին*
4 ԱԷ *անիծեալ լինի* Ո *անիծեալ* փխ *անիծած*
5 Ա *նորընծայն* Դ *զնորընծային*
6 Է *դայնր եկեղեցւոյն* ԲԳԴԵ *փակեալ*
7 ԲԳԵ *աւաք* Ա *Նունոյ*
7-8 ԱԷ *կիւրակէին... երկուշաբաթոջն*
9 ԱԷ *յերեքշաբաթոջն աւուր*
9-10 ԱԴ չիք *և յերեքշաբաթոջն... էր տօն* ԱԴ *տեառն եղբօրն էր տօն և այլ ըստ կարգի, և մնացին այսոքիկ...*
10 Ա *փակեալք*
15 Ա. *որոյ* փխ *որում* Ա. *Լուկաշ*
16-17 ԲԳ *ի Լով... քաղաք* Ն *Իլով*
19 Ա. *պատգամս*
20 ԱԴ չիք *թէ (Այդ)* Դ *թուխթ* Ա. *ուղարկեալ* ԴԴՆ *ուղարկեր*
21 Ա. *եկեալ է*
23 Ա. *այսպիսեօք* Ե *արդիլեցին*
24 Ա.ԲԴԴ *իրև դիպահոջ*
26 Ա.Դ չիք *նմա*
27 Ա.ԲԴԴ *Իլով*
28 Ն *և եկեալն էր* Գ *Բուղտան*
29 Ա. *զգիր*
30 Ա. *Նիկօլային* ԱԲԳԴԵ *Իլով* ԲԳ *Նիկօլ*
31 Ա.Է *բանադրանացն*
31-32 Ա.ԲԴԵ *քահանայքն*

ներհակ էին Նիկոլին, ի բերան առեալ խօսէին. նա և յերեսաց ընդդէմ նմա, նա և ոմանք ներհականայինն ևս, և օր յաւուր զօրանային ներհակքն ի վերայ Նիկոլին։ Այլ և Գրիգոր վարդապետն, զամենայն որպիսութիւնն անցուածոցս այսմիկ, այլ և զանուղղայ վարս Նիկոլին թղթով ծանոյց Մովսէս կաթուղիկոսին սուրբ էջմիածնի, և խնդրեաց ի նմանէ զի և նա բարձր հրամանաւ սուրբ էջմիածնի և կաթուղիկոսական իշխանութեամբն բանադրեսցէ զնիկոլ եպիսկոպոսն, և Մովսէս կաթուղիկոսն ևս գրեաց գիր բանադրանաց, և առաքեաց ի վերայ Նիկոլ եպիսկոպոսին. և այսու պատճառաւ առաւել ևս զօրացան ներհակքն ի վերայ Նիկոլին և ի չմարդի ունէին զնա։

Ապա ոմանք ի ժողովրդականացն հարցումն արարին ընդ Նիկոլին թէ ընդէ՞ր ոչ գնաս առ Գրիգոր վարդապետն և առնուս զարձակումն ի նորին կապանացն, և նա պատճառեաց թէ ոչ ունիմ թոշակ ճանապարհի, և ժողովուրդքն ժողովեցին երեք հազար դուռուշ և ետուն նմա թոշակ ճանապարհի։ Այնուհետև եպիսկոպոսն՝ եթէ յիւրոց ինչ մտածութեանց, և եթէ ի սադրելոյ յիւրոց բարեկամացն, և թէ ի հարկելոյ ժողովրդոցն ելեալ յիլովայ գնաց ի կողմանս Կոստանդնուպօլսի և Կեսարիոյ. զի թերևս ուրեք գտեալ զԳրիգոր վարդապետն՝ տացէ մեղայ և առցէ արձակումն ի նորին կապանացն։ Եւ գալով հկեալ հաս ի քաղաքն Բուրսայ, պատահեցաւ զի յաւուրսն յայնոսիկ անդ էր և Խարբերդցի Արիստակէս վարդապետն. արդ՝ այս Արիստակէս վարդապետս և այն Կեսարացի Գրիգոր վարդապետն ունէին ընդ միմեանս ոխս նախանձու յոյժ սաստիկ, և թէ զինչ էր պատճառ նախանձու և ոխակալութեան սոցին, բազում ժամանակաւ որոնեցի և զհաւաստին ոչ գտի, և զանհաւաստին ոչ գրեցի։ Եւ ի պատճառէ այսմ նախանձու՝ բազում բանիւք և պէսպէս կերպիւ խօսեցաւ Արիստակէս վարդապետն ընդ Նիկոլ եպիսկոպոսին, և արգել զնա ի գնալոյ առ Գրիգոր վարդապետն. երբեմն ասէր. «Դու եպիսկոպոս ես և նա վարդապետ՝ չունի իշխանութիւն ի վերայ քո». երբեմն ասէր. «Ի զուր և ի նախանձու է բանադրելն զքեզ». երբեմն ասէր. «Եւ ես վարդապետ եմ իբրև զնա, ես արձակեմ զքեզ ի կապանաց». և այլ բազում կերպիւ խօսեցաւ և ոչ եթող գնալ ի Կեսարիայ առ Գրիգոր վարդապետն։ Այնուհետև Նիկոլն ինքն ոչ գնաց՝ այլ գրեաց թուղթ խնդրանաց և աղերսանաց առ Գրիգոր վարդապետն, թէ մինչ ի Բուրսայ էիմ, և ասէէ հիւան-

2 Ա.Դ.Ն *ոմանք ոմանք* Բ.Գ.Ի *օր աւուր*
3 Ա. *ամենայն*
4 Ա. *այսոսիկ փխ այսմիկ* Գ *յայսմիկ*
5 Է *կաթուղիկոսին ի սուրբ էջմիածնի* Ա *սրբոյ փխ սուրբ* Է *ի սուրբ*
6 Ա. *բարձու* Բ.Գ.Ի *հրամանաւն* Ա. *սրբոյ*
6-7 Ա. *կաթուղիկոսականաւ*
8 Ա. *զգիր*
8-9 Ա. *Նիկոլայի*
12-13 Բ.Գ.Ի *արձակումն*
13 Ա. *զթոշակ*
14 Ա. *զերիս հազար դուռուշս*
15 Ա. *ի թոշակ*
15-16 Բ.Գ. *եթէ... և թէ*
17 Ա.Գ.Ն *ի Լովայ*
18 Ա. *յուրեք* Բ.Գ.Ի *կեսարու... յուրեք*
19 Ա. *զարձակումն* Գ *արձակում*
23 Ա. *զոմս*
24 Ա. *բազմաւ*
25 Է *այնր*
26 Ա. *բազմօք* Ա. *պէսպէսեաւ*
27 Ա. *Նիկոլայի*
29-30 Ա. *ի նախանձու է բանադրեալ զքեզ* Է *ի նախանձուէ բանադրեալ է զքեզ*
33 Ա. *զթուղթ*

դացայ և անկեալ կամ ի մահիճս, վասն որոյ ոչ կարեմ գալ, խնդրեմ զի բարձցես զինէն զբանադրանքն և արձակեսցես ի կապանաց, և առաքեսցես ինձ և ժողովրդեանն թուղթ օրհնութեան, զի թեւս աղօթիւք և օրհնութեամբ քում աստի դարձայց և ողջութեամբ հասից ի տեղին իմ: Իսկ վարդապետն ի տեսանելն զպիրն անկեղծ մտօք հաւատոյ խօսից եպիսկոպոսին իբրև ճշմարիտ խօսից, գրեաց թուղթ արձակման և օրհնութեան եպիսկոպոսին, այլ և դիր օրհնութեան Իլուայ քաղաքին և առաքեաց առ Նիկօլն, որ ի Բուրսայ էր. և Նիկօլն առեալ զթուղթսն զայնոսիկ դարձաւ և գնացեալ հետս յիւրում, և Իլուացիք իբրև տեսին զթուղթսն Գրիգոր վարդապետին, ուրախացան և միաբանեցան ընդ եպիսկոպոսին: Իսկ Գրիգոր վարդապետն ի ձեռն ճանապարհորդաց և յարանց գիտողաց, հաւաստեաւ ի վերայ հետս, թէ Նիկօլ եպիսկոպոսն յորժամ եկեալ է ի Բուրսայ, ոչ հիւանդացեալ է և ոչ տկարացեալ, այլ խորհրդակցութեամբ Արիստակէս վարդապետին ղկայ առեալ կացեալ է ի Բուրսայ, և հնարիւք և պատրողական բանիւք արձակման թուղթ առեալ է և գնացեալ ի տեղի իւր: Եւ ի վերայ այսմ խաբէութեանս՝ զոր արարեալ է եպիսկոպոսն ընդ վարդապետին, կարի վշտացեալ է վարդապետն, և զամենայն խաբէութիւն գործոց նորա գրով ծանուցեալ է Իլուացւոց. այլ և գրեալ է թէ զնոյն առաջին նզովքն և բանադրանքն տակաւին կայ ի վերայ այդմ եպիսկոպոսիդ. վասն որոյ և Իլուացիք չետս կացին չեպիսկոպոսէն, և ոչ ընդունէին զնա, և անկաւ հակառակութիւն ի մէջ եպիսկոպոսին և ժողովրդոյն յոյժ սաստիկ:

Եւ մնացին այսպիսի հակառակութեամբ մինչև հասին ի թուականն մեր ՌՀԹ. յորում ժամանակի առաքեաց Մովսէս կաթուղիկոսն մեծ աշակերտն իւր, զԿեսարացի խաչատուր վարդապետն վասն նուիրակութեան սուրբ էջմիածնի յաշխարհն արևմտական՝ յԱսորեստան և ի Հոռոմաստան: Եւ էր խաչատուր վարդապետն այր հնդ և հանդարտ և քաղցրաբարոյ, ոչ անիմաստ և անբան. այլ իմաստուն և բանիբուն, որ լոկ տեսութեամբ միայն շահէր զառ ինքն պատահեալսն, որոյ վասն զնա կարգեցին նուիրակ. և խաչատուր վարդապետն անցեալ զամենայն տեղեօք՝ եկեալ հասս ի Կեսարիայ, և անդ պատահեցաւ մեծ վարդապետին Գրիգորի. և Գրիգոր վարդապետն բազում բանս հրա-

2 Ս. *զբանադրանսն*
3 Ս. *զթուղթ*
5 Ս. *անկեղծիւք*
6 Ս. *ճշմարտից* Ս. *զթուղթ*
7 Ա. *զգիր*
9 **ԱՐԴՆ** *ի լով, լովացիք*
10 **Ա. Գրիգորի**
14 ՐԳ *խորհրդակցութեամբն* Ս. *Արիստակէսի*
15 Ա. *պատրողականօք*
16 Ա. *զթուղթ*
17 Է *այսր փխ այսմ* Գ *խաբէութեան*
18 Բ *վարդապետին*
19 Ա. *լովացւոց* ՐԳ *իլուացոց* Դ *այլ գրեալ է* Բ *նոյն* ԴՆ *նթէ նոյն*
20 Է *այդր փխ այդմ*
21 Ա. *լովացիք*
24 Ա. *այսպիսեաւ*
25 Ա.ՐԳ *զմեծ*
26-27 Բ *նուիրակութեան*
27 Ա. *սրբոյ*
28 Ա.ԴՆ *Հոռոմաստան*
29 Գ *անբանն*
31 Բ *նուիրակ*
31-32 Ա. *զամենիւք*
32 Բ *տեղօք* Ա. *մեծի*
33 Ա. *զբազում*

մայականս պատուիրեաց հաչատուր վարդապետին. թէ ի հասանելն քո յԻլով՝ մի գուցէ թէ ընկալցիս զնիկօլն ի կարդ և ի պատիւ եպիսկոպոսութեան։ Եւ հաչատուր վարդապետն նուիրակեալ պամենայն տեղիս եկեալ եհաս յԻլով, առ որ մատուցեալ ժողովրդականացն ակնան բաղմօրինակ և կսկծալի ամբաստանութիւն առնել զնիկօլէն վասն պէսպէս անցուածոց և գործոց, որ ի նմանէ տեսեալ էին և կրեալ։ Իսկ վարդապետն ըստ իւրում քաղցր և հեզ բնութեանն ոչ առ երեսս յանդիմանէր զնիկօլն, այլ մեղմ և խրատօրէն ինքն և նա միայն խօսէր ընդ նմա, ըստ պատուիրանին Տեառն թէ, ասասջիր նմա, յորժամ դու և նա միայն իցէք*։ Իսկ Նիկօլն բնաւ ոչինչ հոգայր յամենայնէ, զի ոչ ի վարդապետէն ամաչէր, և ոչ ի ժողովրդոց ամբաստանութեննէն երկնչէր, այլ իբրև զանշարժ լեառն արձանացեալ կայր ի կամս իւր։

Եւ հղև երբեմն յաւուր կիրակէի աւետարան կարդալ, և Նիկօլ եպիսկոպոսն հրամայեաց իւրում աբեղային, թէ գնա՛ աւետարան կարդա, իսկ հաչատուր վարդապետն ասաց. «Թող նա չկարդա՝ այլ այն ոմն». իսկ Նիկօլն ո՛չ անսաց բանից վարդապետին, այլ իւրում աբեղային ետ կարդալ զաւետարանն. իբրև հետս վարդապետն թէ ի մէջ քահանայիցն և ժողովրդոցն յայտնի և համարձակ քամահեաց զբանս իւր, և ի չմարդի ունի զինքն, դարձաւ առ ժողովուրդն և ասաց. «Այն մարդն անիծած եղնի, որ սորա յետևն ծունր դնէ»[110] զայս ասաց վարդապետն, և ելեալ յեկեղեցւոյն գնաց ի տեղի իւր ի վերնատունն. ուր լինէր ի հաւսարակ աւուրսն։ Իսկ ժողովուրդն իբրև զայն լուան և տեսին՝ ինքեանք ևս ամենեքեան միահաղոյն դրոհ տուեալ ելին արտաքս յեկեղեցւոյն, և մնացին յեկեղեցին Նիկօլն և այլք ոմանք. և զկնի արձակելոյ ժամին նոքա ևս գնացին ի տեղիս իւրեանց. իսկ ի ժողովրդոցն Հայոց՝ դատաւորք և իշխանք եկին ի նոյն ցերեկին և փակնցին զդուռնն եկեղեցւոյն և առին յինքեանս զբանալին՝ և մնաց եկեղեցին փակեալ աւուրս ինչ։ Այլ և դատաւորքն և իշխանք Հայոց խօսեցան ընդ վարդապետին հաչատրոյ, և հաւանեցուցին զնա՝ զի նստցի յաթոռ և կարգեսցէ առեալն դատաստանի, առ ի դատել զնիկօլն վասն յանդգնութեանն, և այլ ևս անկարգութեանն և յանցանացն. իբրև իմացաւ եպիսկոպոսն զգործս զայս, եբեր առ ինքն զերկուս ոմանս ի վկայից Ֆռանկաց՝ որ ի մէջ ամենայն դատաստանի նոքա զան և տան վկայութիւն, և ըստ նոցին վկայութեանցն դատաւորքն

* *Համմ. Մատթ. ԺԸ. 15*

1 Ա. *հաչատրոյ* Ան. *ի հասանիլն* Ա*ՐԳԴԵ Իլով*
2 Ր *նուիրակեալ*
3-4 Ա. *պամենեսեան... ի Լով*
4 *ՐԳԴԵ Իլով*
5 Ա. *զամբաստանութիւն... զնիկօլայէն*
6 Ա. *պէսպիսից*
7 Ա. *քաղցու և հեզի*
14 Է *կիւրակէի*
15 Ա*ԴԵ չիմ աւետարան*
21 Ան *անիծեալ լինի* Ա. *զծունր է այս* Ր *ասացեալ*
22 Ա*ԴԵ տեղին*
26-27 Ա*ԴԵ իսկ ժողովրդոցն*
27 *ՐԳԴԵ դատաւորքն և իշխանքն*
28 *ԴԵ զդուռն*
29 Ն *իշխանքն*
30 *ՐԳԵ հաչատրի* Է *հաչատուր վարդապետին*
31 Ա. *յատեան*
33 *ՐԳԴԵ երկուս*
34 Ա. *ամենայնի*
35 Ան *զվկայութիւն*

տան ղվճիռ դատաստանին. քանզի այսպէս կարդ ունին աշխարհն Իլախաց ի մէջ իւրեանց։ Խօսեցաւ Նիկօլն ընդ վկայիցն այնոցիկ, և հաճեցոյց զկամս նոցա, զի յորժամ կոչեսցէ զնոսա, և նոքա անյապաղ եկեսցեն ի կոչ նորա. և յաւուր դատաստանին՝ յորում նստաւ վարդապետն ի դատաստան, նստան ընդ նմա և իշխանքն և դատաւորքն Հայոց, կոչեցին և զՆիկօլն առ ի դատել, բայց Նիկօլն յառաջագոյն զվկայսն զայնոսիկ բերեալ էր ի տունն յայն, և ի տեղի թաքուն կացուցեալ էր զնոսա առանց գիտելոյ եկեալ հրամայեաց իւրոց սպասաւորացն դնել զաթոռն իւր ի հանապազորդեան տեղին իւր, զի անդ նստցի ինքըն. իսկ իշխանքն ասացին առ Նիկօլն՝ «Զի՞նչ առնես, զի՞ նստիս՝ զի ի դատել կոչեալ են զքեզ, կաց ի յոտին այդր», և Նիկօլն ասաց՝ «Ես ով է դատողն իմ», ասեն իշխանքն. «Եկեալ նուիրակն՝ զոր տեսանես, և դատաւորքս, որք ահա կան»։ Յայնժամ բարձր ձայնիւ գոչեաց Նիկօլն առ թաքուցեալ վկայսն, թէ եկա՛յք արտաքս, և նոքա առժամայն եկին, և կացին ի մէջ հանդիսին, առ որս ասաց Նիկօլն. «Վասն Աստուծոյ՝ ձերովք աչօք տեսէք՝ և լերուք ինձ վկայք, զի ես եպիսկոպոս եմ, և սոքա աշխարհականք դոլով ժողովեալ են առ ի դատել զիս, և վարդապետս այս՝ որ ի Թուրքաց աշխարհէն եկեալ է աստ, ի շաշուտութիւն եկեալ է յայս երկիրս՝ ի գիտել զամենայն որպիսութիւնս մերոյ աշխարհին, և սա այժմ սոքօք նստեալ են առ ի դատել զիս»։ Եւ վկայքն ասեն. «Զոր ինչ մերովք աչօք տեսաք, սմին վկայեմք, և ուր և տանիս զմեզ, տամք վկայութիւն». յայնժամ ամենայն ժողովեալքն ի Հայոց եթէ քահանայք, և եթէ իշխանք և դատաւորք, եղեն պակուցեալք, և զարհուրեալք յերկիւղէն Ցռանկաց, և սկսան մի մի ելանել և փախչիլ, և վարդապետս ևս ելեալ դնաց ի տեղի իւր։

Զկնի այսոցիկ Նիկօլ եպիսկոպոսն սկսաւ ստութեամբ և կեղծաւորութեամբ առաքել միջնորդս, և պատգամաւորս առ վարդապետն, և առ քահանայսն, և առ իշխանսն վասն հաշտութեան՝ ասելով. «Բաւական է այսքան հակառակութիւնդ ձեր, և այլ մի ևս հակառակիք, և մի փակէք զեկեղեցին. այլ բացէք զդուռն եկեղեցւոյն», իսկ Իլովացիք ամենեքեան դիտելով զխարդախութիւն նորա՝ ոչ հաւատային նմա։ Բայց վարդապետն նկատեալ իւրովք մտօքն ետես զի, ցորքան դրդեն ի խռովութիւնն, և վէճ և պայքար դնեն ընդ եպիսկոպոսին, առաւել և բազում յորդեալ յառաջագայի ի նմանէ գործ չարութեան, վասն որոյ յաղագս վտանգիս այսմիկ ակամայ կամօք կամեցաւ առնել հաշտութիւն ընդ եպիսկոպոսին, զոր և խոստացաւ ընդ քահանայիցն, և ընդ իշխանացն, զի արասցեն հաշտութիւն՝ և նոքա ոչ կամեցան. ասաց վարդապետն. «Վասն ապաւգայից չարեացն, որ հանդերձեալ է գալ յեպիսկոպոսէդ, երկնչիմ ես և կասկած կրեմ, թէ մի գուցէ ի վերջ

1 Ա. գայսպիսի կարգս
11 Ա. կոչեցեալ Բ Նիկօլ
12 ԲԳՆ որ
13 Ա. բարձու
19 Ա.Դ որպիսութիւն
22 Ա. զվկայութիւնս... ամենեքեան։ Դ վկայութիւնք
25 ԲԳՆ փախչել
30-31 Ա.ԲԳՆ լովացիք
33 Ա.ԲԳՆ զդրդեն Ա. վէճ և զպայքար
35 ԴՆ վտանգիս Ի այսորիկ փխ այսմիկ Ա.ԲԳՆ յակամակամօք
36 Ա. զհաշտութիւն
37 Ա. զհաշտութիւն

յամառութեանս մերոյ մեծագոյն ինչ վնաս կրիցեմք ի ժամէ»: Եւ նա պատասխանի. «Ամենևին մի՛ երկիցես վարդապետ, զի մեք ունիմք բազում նմոյնաբ յառաջին և ի վաղնմի Թագաւորաց՝ զի ցորքան պատահիցի դատաստան իրիք ինչ գործոյ, մեր Հայոց ազգի դատաւորքն արասցեն զդատաստանս Հայոց, և ոչ թէ դատաւորք ազգին Ցունկաց. այլ և ունիմք ապրանք ընդ ապրանաց նոցա, և խելք ընդ խելաց նոցա, և դու զի՞ ևս երկնչիս»: Եւ վարդապետն ոչ բնաւ հաճեցաւ ի բանս յայսոսիկ, այլ երբեմն հատարակ, և երբեմն առանձին խօսէր ընդ նոսա գալ ի հաշտութիւն, և նոքա ո՛չ կամեցան, յայնմ հետէ կալեալ վարդապետին իւրով ձեռամբն զփողպատն իւր, թօթափելով ասաց. «Անպարտ եմ ես ի մեղապրումենէ դորին, դուք գիտացջիք»:

Իսկ Նիկոլ եպիսկոպոսն իբրև նոյնս թէ միջնորդութեամբ իւրոց առաքելոց՝ սուտ և կեղծաւոր պատգամաւորացն Իլովացիք ոչ գան ի հաշտութիւն, և ոչ բանան զնկեղեցին, այնուհետև դնաց առ եկեղեցականս Ցունկաց, որք կան ի մէջ քաղաքին Իլովայ, և մանաւանդ առ այնոսիկ որք ի կարգէն եզվայիտայ են, միաբանեցաւ ընդ նոսա՝ և նա ձեռագիր անլուծանելի թէ. «Ես Նիկոլայոս եպիսկոպոս Հայոց, իմովս կամաւ միաբանեցայ ընդ եկեղեցւոյն Հռոմայ, և մտի ի հնազանդութիւն սրափին ամենայն հետևելովքն իմովք՝ կատարել զամենայն հրամանս, որ առ ի նմանէ: Ի վերայ այսորիկ յարեաւ գլխաւորն եզվայիտայ կարգին, էառ և այլ ևս եկեղեցականս յայլ ևս կարգացն. առին ընդ ինքեանս և զՆիկոլ եպիսկոպոսն Հայոց, և տարան առ արքեպիսկոպոսն իւրեանց, և նա սոքօք առաքեաց պատգամս առ իշխան քաղաքին, զի հրամայեսցէ ժողովրդոցն Հայոց, զի կամ հնազանդեսցին եպիսկոպոսին իւրեանց և բացցեն զեկեղեցին, և կամ եկեալ յատեան դատաստանի՝ միմեանց յանդիման լիցին. և ըստ հրամանի արքեպիսկոպոսին արար իշխանն. բայց Ժողովուրդն Հայոց ոչ զեկեղեցին բացին, և ոչ դատաստան եկին, մինչև երիք անգամ այսպէս կրկնեաց իշխանն. և Հայք ոչ զեկեղեցին բացին, և ոչ դատաստան եկին:

Ապա յաւուր միում[111] ժողովեցան բազում եկեղեցականք յեզվայիտայ կարգէն, նա և յայլոց ևս կարգացն, առին և զբազում տղայս ի դպրոցացն, գնացին առ արքեպիսկոպոսն իւրեանց, առին և կարգաւորս ի նմանէ, գնացին առ իշխան քաղաքին և առ դատաւորս, առին ի նոցանէ զղօրականս և զդատաւորս ընդ իւրեանս, սոքա ամենեքեան եկին ի դուռն եկեղեցւոյն Հայոց՝ զոր իշխանք Հայոց փակեալ էին, և

2 Ս. *դպատասխանի*
3 Ս. *նոմոս յառաջնոց և ի վաղնմեաց*
4 ԲԳՆ *դատաւորն*
6 Ս. *դապրանս* Ս. *դխելս*
8 ԲԳՆ *ի բանքս*
12 Գ *չիք Նիկոլ Գ միջնորդութեամբն*
13 Ս. *առոյ և կեղծաւորաց* Ա.ԲԳՆ *Լովացիք*
15 Ս. *Լովայ*
16 Գ *կարգին* Ա.ԲԳՆ: *եզվայիթայ*
17 Ա.Գ *չիք թէ* Ա.Ն *եպիսկոպոսս*
19 Ս. *ամենիւք*
19-20 Ս. *զամենեսեան... որք*
21 Ս. *զայլ ևս... յայլոց*
23 Ս. *զպատգամս*
24 Ս. *չիք զի (կամ)*
27 Ա.Ն: *արհի եպիսկոպոսին*
31 Ս. *բազումք*
32 Ս. *յայլոցն* ԳԳ *բազում*
33-34 Ս. *զկարգաւորս*
35 ԲԳՆ *զօրականս և դատաւորս*
36 ԳՆ *իշխանքն*

առաքեցին առ իշխանս Հայոց, զի կամ ինքեանք ակնալ բացցեն զդուռն եկեղեցւոյն, և կամ զբանալին առաքեսցեն, և նոքա ոչ ինքեանք եկին և ոչ զբանալին առաքեցին։ Նայնժամ նոքա՝ որք կնալք էին, հարևալ խորտակեցին զդուռն եկեղեցւոյն[112], և առեալ զնիկոլ եպիսկոպոսն մուծին եկեղեցին, և ի նա յանձնեցին զեկեղեցին ամենայն ընչիւք, որ վերաբերի առ եկեղեցի։ Այնուհետև ելեալ զօրականացն Յունաց ի խնդիր երիցանց և իշխանաց Հայոց, զի իշխանական բըռնութեամբ կալեալ արկանիցեն ի բանտս և ի տուգանս, և նոքա փախուցեալ թաքեան և ոչ բնաւ երևեցան։ Եւ ի մէջ եկեղեցւոյն կայր գանձատունն, և ի նմա գիրք և անօթք յոյժ բազում, գրեանք աւելի քան զմի փերթ. ամենեքեան ընտիրք և պատուականք և վարդապետականք, յորս էին ոսկեյատուի աստուածաշունչք, և աւետարանք, և շարակնոցք, և այլք գրեանք բազում[113]։ Սոյնպէս և անօթք, սկիհք, և խաչք, քշոցք և բուրվառք, կանթեղք և աշտանակք, շուրջառք և եմիփորոնք, թագք և վակասք, սուրբ նշանք և սրբոց նշխարք, և որ ի հարց և ի հաւուց ի վաղեմի և ի նախկին թագաւորաց ունէին մուրհակք և նոմոսք, և այլ ևս ինչ յոյժ բազում. սոքա ամենեքեան ի մէջ եկեղեցւոյն էին ի նոյն գանձատանն, զորս գրաւեաց ընդ իւրով իշխանութեամբն Նիկոլն։ Ոչ միայն զայս եկեղեցիս՝ այլ և զայլ եկեղեցիսն և զվանօրայսն, որ ի քաղաքին, և որք շուրջ զքաղաքաւն էին. և զամենայն աւանդս նոցա, զաւուրս և զանդաստանս, զաղօրիս և զխանութս, կալաւ եպիսկոպոսն ընդ իւրով իշխանութեամբն՝ ասելով. «Ես եմ եպիսկոպոս, իմ են եկեղեցիք ամենեքեան և աւանդք իւրեանց»։ Իսկ նաշաւուր վարդապետն և ամենայն ժողովուրդքն Հայոց որ յիւով կային՝ մնացին արտաքոյ եկեղեցւոյ, քանզի թէ մտանէին յեկեղեցին, հարկէր նոցա մտանել ընդ իշխանութեամբ փափին, և ընդունել զնորին պատանութիւնն. այլ և պարտ էր հնազանդել Նիկոլ եպիսկոպոսին, և իւրովացիք ոչ ախորժէին զայսոսիկ. վասն որոյ եղեն վարանելք և տարակուսելք, և ոչ կարէին գտանել ճար ինչ, և մնացին ժողովուրդքն Հայոց՝ որք յիւով քաղաքին էին, առանց եկեղեցւոյ։

Եղև զի վարդապետն նաշաւուր ել ի քաղաքէն, և գնաց ի Սուրբ Նաշ կոչեցեալ վանքն, իսկ ի ժողովրդոցն ով ոք որ կամէր գնալ առ նա, համարձակութեամբ գնայր և գայր. և ահա տեսին զի յաւուր միում եկին բազում զինուորք և զօրականք զինուք և պատրաստութեամբ, և շուրջանակի պատեցին զվանքն, և ի հարցանելն տեսողացն պատասխանէին զինուորքն, թէ ի Թուրքաց աշխարհէն չաշուտ է եկեր՝ և ահա յայս տեղս է, կամիմք ըմբռնել զնոսա։ Եւ իբրև սուղ ինչ ժամս

5 Ա. *ամենիւք*
7 Ա. *իշխանականաւ*
8-9 Ա. *փախուցեալք*
10 Ա. *բազումք*
13 ԲԳԵ *այլ* Ա. *բազումք*
16 ԲԳԴՆ *ի նախկին*
17 ԲԳՆ *ինչս*
19-20 Ա. *որք... որք* ԲԳՆ *որ... որ*
20 Ա. *զամենեսեան*
24 Ա. *ամենեքեանք... որք* Ա.ԲԳԴՆ *ի լոյ*
26 ԲԳ *իշխանութեամբն* Ա.Դ՝Ե՝ *ընդունիլ*
27 Ա. *հնազանդիլ Նիկոլայի եպիսկոպոսին* ԲԳԴՆ *հնազանդիլ* Ա.ԲԳԴՆ *լոլացիք*
29 Ա. *զճար* Ա.ԲԳԴՆ *ի լոյ*
31 Գ *եւ եղև*
33 ԱԳ *չիճ տեսին զի*
34 Բ *բազումք*
35 Ա. *զվանն*
36 Ա. *եկեալ փխ եկեր*
37 ԲԳԴՆ *ի յայս* ԱԳ *չիճ եւ*

էանց ի վերայ, և տեսին զի ահա եկն Նիկոլ եպիսկոպոսն իւրովք սպասաւորօքն և փառօք, և ի մերձենալն իւր առ զինուորսն՝ հարցանէր ցնոսա, թէ վասն է՞ր ժողովեալ էք աստ, ասէն զինուորքն. «Ի Թուրքաց աշխարհէն չաշտա եկեալ է աստ, կամիմք ըմբռնել զնա», առ 5 որս ասաց Նիկոլ. «Ոչ է մարթ և պատշաճ ըմբռնելն ձեր զնա, այլ դուք դարձարուք և գնացէք ի տեղիս ձեր, և ես գնացեալ տեսանեմ և խօսիմ ընդ նմա», և զինուորքն ամենեքեան իսկոյն ցրուեցան և գնացին: Իբրև այսպէս եղև զրաւ դործոյն, որոյ վասն կարծեցեալ եղև ի ժողովրդոցն Հայոց թէ, ի հնարից եպիսկոպոսին եկեալ էին զինուորքն 10 վասն երկեցուցանելոյ զվարդապետն, իսկ եպիսկոպոսն գնաց առ վարդապետն՝ էառ զնա անտի, և եբեր զնա ընդ իւր ի քաղաքն: Եւ մինչ էր վարդապետն ի քաղաքին, հանապազ գային առ նա արեղայք և այլք ոմանք ի Ֆռանկաց, և առնէին հակաճառութիւն ընդ վարդապետին ի վերայ երկու բնութեան և մէկ բնութեան, և եբրև զնուիքէա- 15 կան հերձուածոյն[114] խոտորեալ զՀայս, և ի տգիտութենէ և յիմարութենէ մոլորեալ: Իսկ վարդապետին մտածելով զդործս անցելոյն, և խորհելով զապառնւոյն, և տեսանելով զներկայիս, գիտաց զի ո՛չ գոյ ինչ օգուտ, այլ զուր աշխատանք և ի նանիր վաստակ, վասն որոյ եւեալ յԻլովայ՝ և գնաց զճանապարհ իւր մինչև եկեալ հասս յէջմիա- 20 ծին առ Մովսէս կաթուղիկոսն, և առ այլ վարդապետսն, որ ամենեքեան ցաւագին սրտիւ՝ արտասուաթոյր աչօք սգային վասն ազգին Հայոց, որք էին յԻլով քաղաքին՝ թէ գիտ՞րդ լինի փրկութիւն նոցա:

Եւ որպէս Տէրն Քրիստոս ասաց՝ «Նախ զՀզօրն կապիցէ և ապա զտունն նորա առնու հարկանիցէ»*, այսպէս արար և Նիկոլ եպիսկո- 25 պոսն, զի յետ գնալոյ վարդապետին, որպէս զգազանն տեսեանն Դանիէլի՝ սկսաւ զամենայն ժողովուրդսն և զգանձս և զամենայն ինչս եկեղեցւոյն ուտել և մանրել և զմնացորդսն առ ոտս արկանել**: Քանզի որպէս ի ժամանակս կռապաշտ թագաւորացն ունէին քրիստոնեայքն զՀալածանս, այսպէս և յայսմ ժամանակի եղև ի վերայ ազգին Հայոց 30 բնակելոցն Իլով քաղաքին. քանզի կարի զօրութեամբ զօրացաւ Նիկոլ եպիսկոպոսն և բռնացաւ ի վերայ ժողովրդեանն Հայոց: Կալնոյր վերիցունս առ ով ոք և պատնէր սուր ինչ վնաս, և արկանէր ի բանտ, և առնոյր ի նոցանէ զտուգանս զերիս հարիւր և չորս հարիւր դուռուշս, սոյնպէս և զիշխանս, որք և դատաւորք էին կարգեալք՝ կալեալ տու-

* *Համմ. Մատթ., ԺԲ, 29, Մարկոս, Գ, 27*

** *Դանիէլ, է, 19*

4 Գ *չաշտա*
5 ԴՆ *Նիկոլն*
6-7 Ն *տեսանեմ զնա և խօսիմ ընդ նմա*
11 Գ *չիմ զնա (ընդ իւր)*
13 Ա. *զհակաճառութիւն*
14-15 Ա. *զնուիքէականաս*
15 Է *հերձուածոյզ*
15-16 ԴՆ *ի յիմարութենէ*
19 ԱԲԳԴՆ *ի Լովայ* ԲԴՆ *զճանապարհս*
20 ԱՆ *որք*
21 Ա. *ցաւագնիւ* Ա. *արտասուաթորօք* ԲԳԴՆ *և արտասուաթոր*
22 ԱԲԳԴՆ *ի Լով*
24 Է *զտուն*
26 Ա. *զամենեսեան... զամենեսեան*
28 Ա. *կռապաշտից*
29 ԲԳԴՆ *Հալածանս*
30 ԱԲԳԴՆ *Իլով*
31-32 Գ *զերիցունսն*
32 ԲԳԴ *յով ոք*
33 ԲԳԴՆ *տուգանս երիք հարիւր* ԲԳ *դուրուշ* ԴՆ *դուռուշ*

գանէր: Եւ հասարակ ղամննայն ժողովուրդսն վտանգէր, ո՛չ թողոյր ի թաղել զմեռեալսն՝ վասն գանձի, և յորժամ առնոյր գանձս ըստ հաճոյից կամաց իւրոց, ապա տայր զհրաման թաղելոյ և տեղի գերեզմանի առ ի թաղել: Եւ յետ թաղելոյն յորժամ զտապանաքարն ի վերայ գերեզմանին կամէին ձգել, յայնմ պատճառէ միւսանգամ առնոյր գանձս, և ապա հրաման տայր ձգել զքարն: Սոյն պատճառի վասն, և պսակք և մկրտութիւնք խափանեցան, զորս տարեալ յայլ քաղաքս պսակէին և մկրտէին, և զմեռեալս յայլ քաղաքս տարեալ թաղէին. և զայսոսիկ առնէին ի ծածուկ թարց գիտելոյ եպիսկոպոսին. և յորժամ իմանայր՝ մեծաւ ցաւմամբ վայրանայր, և ըմբռնէր զերէսն և զարտրօղ արան բազում խոշտանգանօք չարչարէր՝ և ծանրագոյն տուգանս առնոյր:

Եղև երբեմն զի զոմն երիտասարդ կամեցան պսակել ի ծածուկ թարց գիտելոյ եպիսկոպոսին, որոյ վասն երեք քահանայք բերին, զի ի տան անդր արասցեն զպսակն. և ծանուցեալ եղև այս եպիսկոպոսին, որոյ առաքեալ զօրականս ունել զերիցունսն և զտեարս հարսանեացն և արկանել ի բանտ. սմին իրաց իրազգած եղեալ տեարց հարսանեացն և երիցանցն, առ երկիւղէն սկսան թաքչիլ, զոմն յերիցանցն եդին ի մէջ սնդուկի և կողպայեցին իբր թէ կահ և զարդ կանացի գոլ և երկուքն յերիցանցն մտին ի մէջ սոբային, որ շինեալ էին ի մէջ տանն վասն հրաւառութեանն: Իսկ զօրականացն ի յուզելն և ի խրնդրելն զերիցունսն գտին ի մէջ սօբային, հանին զնոսա ի սօբայէն և կապեցին ձեռս ի յետս գլխիբաց և բոկոտամբ սկացեալ երեսօք և մարմնով, զի մուր սօբային սկացուցեալ էր զնոսա. և այնպէս տարան զնոսա առաջի եպիսկոպոսին: Եւ եպիսկոպոսն յետ բազմաց անարդանաց և սպառնալեաց էարկ զերիցունսն և զտեարս հարսանեացն ի բանտ. և էառ զչորս հարիւր դուռուշ յերիցանցսն և զչորս հարիւր դուռուշ ի տեարց հարսանեաց, և ապա ետող, որք գնացեալ արարին զհարսանիսն: Եւ բազում տղայք մեռանէին առանց մկրտութեան, և բազումք տղայք կային անմկրտեալք հնգետասան և վեշտասանամեայ. բազում հիւանդք առանց հաղորդութեան մեռանէին, և բազում մեռեալ մնացին անթաղք յամս բազումս, դնէին զմեռեալսն ի մէջ փայտեայ տապանի և լնուին զտապանսն կպրով մինչև որ ծածկէր զմեռեալն, և դնէին ի ցուրտ տեղիս և պահէին. սպասելով այցելութեան Տեառն:

1 Ս. *ղամննեսեան* ԱԲԳԴԵ *վտանկէր*
2 Ս. *զգանձս*
3 ԲԳԴԵ *հրաման*
3-4 Ս. *զտեղի... թաղիլ*
5 Ս. *յայնմանէ*
6 Ս. *զգանձս... զհրաման*
10 ԱԲԳԴԵ *զերէսն*
11 Ս. *բազմօք* Ս. *զծանրագոյն*
13 Բ *Երիտասարտ*
16 Ա.Ե.Է. *ունել*
18 Է. *առ երկիւղին* ԲԳԴԵ *թաքչիլ*
19 Է. *հղին* Է. *չիմ և (կողպայեցին)*
25 ԲԳԴԵ *բազում*
26 Բ *հարսանացն*
27 ԲԳԴԵ *չորս... չորս* ԱԲԳԵ *յերիցանցն*
28 ԴԴ *հարսանեացն* Ս. *գնացեալք*
29 Ս. *բազումք*
30 ԳԴԵ *բազում*
31 Ս. *չիմ բազում հիւանդք առանց հաղորդութեան* Ա.Դ *չիմ մեռանիէն*
31-32 Ս. *և բազումք մեռեալք մնային* Դ *չիմ և* ԲԳԴԵ *բազում մեռեալք մնային*

Եւ բովանդակ եօթն խորհուրդ եկեղեցւոյ և ամենայն ժամակարգութիւն խափանեցաւ. և մնացին ողորմելի ժողովուրդքն ի մէջ անհնարին նեղութեանց, առաւել քան զոր ի ժամանակս կռապաշտութեանն[115]*։*

Ապա ժողովուրդքն յաղագս յոգնակի նեղութեանց իւրեանց բողոք յարձին ի սուրբ Աթոռն Էջմիածին. վասն զի տէր Սիմօն անուամբ զոմն քահանայ և երևելի այր մի աշխարհական առաքեցին[116] *առ կաթուղիկոսն տէր Մովսէս, զի հոգասցէ և հնարեսցէ նոցա զփրկութիւն, և կաթուղիկոսն զրեաց զնամակս խոհեմականս՝ և լի իմաստութեամբ, յոնարհ և մաղթողական բանիւ առ թագաւորն Լհհաց և առ նորին Լիխանան, և առ արքեպիսկոպոսն քաղաքին Իլուվայ՝ որ յազգէն Ֆռանկաց, նա և առ փափն. և խնդրեաց թէ ողորմեցարուք տառապեալ ժողովրդեանն. և շնորհեցէք զեկեղեցին յինքեանս՝ և մի խափանէք զեօթն խորհուրդ եկեղեցւոյ. զոր ոչ է պատեհ առնել քահանայից Քրիստոսի։ Իբրև հասին նոմոսքս այսոքիկ յԻլով քաղաք, և ժողովուրդքն Հայոց տարեալ մատուցին իւրաքանչիւր տեառց՝ թագաւորին և այլոց. և նոքա հրամայեցին թարգմանել ի պիր և ի բարբառ Իլախաց, որոց յընթեռնուլն հաճեալ հաւանէին ամենայն բանից և որպիսութեանց. որոց բանից վերայ գթացաւ սիրտ թագաւորին, որում անունն էր Վլատիսլաւ, որ և հրամայեաց թէ տուք զեկեղեցին Հայոց յինքեանս, բայց եզվայիտայք ընդդիմացան և ոչ թողին՝ ասելով թագաւորին. «Այս եկեղեցական և հոգևորական գործ է, որ վերաբերի առ փափն, և առ արքեպիսկոպոսն. և նոքա պարտին հոգալ զսա՝ որոց անկ է և պատեհ, և ոչ քեզ, որ մարմնաւոր թագաւոր ես, վասն որոյ ոչ է քեզ պատեհ խառնիլ յայս գործ՝ որ է հոգևոր»։ Եւ թագաւորն վասն գթալոյ ի տառապանս ժողովրդեանն Հայոց, խնդրեաց յարքեպիսկոպոսէն իւրեանց տալ զեկեղեցին Հայոց. սմին ևս ընդդիմացան եզվայիտայքն, և ոչ թողին տալ։ Եւ վասն առաւել գթալոյ թագաւորին ի վերայ Հայոց ինքն թագաւորն յարեաւ և գնաց յեկեղեցին Հայոց՝ զի տացէ զեկեղեցին Հայոց՝ յինքեանս ի Հայս. իբրև զայն գիտաց Նիկօլ եպիսկոպոսն, իսկոյն զգեցաւ զգեստս պատարագի, և բարձեալ զհաղորդ պատարագին ի վերայ գլխոյ իւրոյ՝ և ելեալ եկն ընդ առաջ թագաւորին, որում ի տեսանելն թագաւորին զարհուրեցաւ ի տէրունական խորհրդոյն. և ոչինչ զօրեաց առնել, այլ թողեալ զամենայն՝ դարձաւ ի տեղի իւր և յապարանս։*

1-2 Դ *ժամակարգութիւնն*
2-3 Ս. *անհնարից է անհնարիցն*
4 ԱԳԴՆ *յոգնակի* ԲԳՆ *նեղութեան*
5 ԲԳՆ *ի սուրբ Աթոռն ի սուրբ Էջմիածին*
6 Ս. *զերևելի*
7-8 ԲԳԴՆ *փրկութիւն... նամակս*
9 Ս. *մաղթողականաւ*
11 Ս. *տառապելոյ*
12 ԱԴ *ինքեանց*
14 ԱԲԳԴՆ *Իլով*
16-17 Դ *ընթեռնուլն*
17 Ս. *ամենից*
17-18 Ս. *որոյ... զոր* ԲԳՆ *Վրլատիսլաւ, զոր*
19-20 Ս. *յեզվայիդայք* Բ *յեզվայիտայք է եզվայիդայք*
23 Դ *զքեզ*
26 Բ *եզվայիթայքն* ԱԳԴԵԷ *եզվայիդայքն*
29 Գ *չի Հայոց (յինքեանս)*
30 Ս. *զզգեստս* Դ *զգեստ*
32 Ս. *տէրունականէ*

Ապա հարկ եղև Հայոց գնալ ի Հռոմ առ փապին, զոր և բազում աղաչանօք առին թուղթս բարեխօսութեան ի թագաւորէն և յարքեպիսկոպոսէն առ փապին, և գնացին ի Հռոմ. եւուն ի փապն նախ զխընդրանաց թուղթն Մովսէս կաթուղիկոսին, և ապա զթագաւորին և զարքեպիսկոպոսին: Իբրև եւս Նիկօլ եպիսկոպոսն թէ ժողովուրդն գնացին ի Հռոմ, գնաց ինքն ևս ի Հռոմ, և անդ ևս անիրաւ Եզվայիտացքն ներհակացան Հայոց և ձախեցին զբանս նոցա՝ որ ոչ եղև տեւել եկեղեցին Հայոց, որ և ունայն դարձան ողորմելի ժողովուրդքն, և եկին յԻլով: Դարձաւ և Նիկօլ եպիսկոպոսն ի Հռոմայ և եկն յԻլով. և կայր ըստ առաջին կարգին՝ վաւանգելով զժողովուրդսն և ևս անաւակութեամբ:

Թող զառաջինն՝ երկիցս և երիցս ևս առաքեցին Իլովացիք քահանայս և վերնափոխանս յէջմիածին առ կաթուղիկոսն Փիլիպպոս[117], զի Մովսէս կաթուղիկոսն վախճանեալ էր, և Փիլիպպոս կաթուղիկոսն բազում անգամ զանազան կերպիւ թուղթս դրեաց յԻլով. և յիւրոց աշակերտաց և վարդապետաց առաքեաց յԻլով. սակայն այնու ևս ո՛չ եղև օգնութիւն ինչ Հայոց ժողովրդեանն: Այլ և յԻլովայ քաղաքէն եկեղեցական արք բարեպաշտօնք, որք էին աբեղայք և երիցունք, գրոց աշակերտք, վասն այս հալածանացս եկին յէջմիածին՝ և անդէն բնակեալ կացին, որք էին որդիք նշանաւոր արանց յորոց զոմանս ձեռնադրեաց Փիլիպպոս կաթուղիկոսն եպիսկոպոս յԻլովայ, և առաքեաց անդ առ ի հովուել զժողովուրդսն, սակայն և այնու ևս ոչ եղև օգտութիւն ինչ ժողովրդեանն Իլովայ: Այլ և ի սոյն ժամանակի՝ ի կարգէն Դօմինիկոսի Պօղոս անուամբ վարդապետ ոմն, այր իմաստուն և երեւելի՝ յաղգէն Ֆռանկաց, եկն յերկիրն Նախչուանայ ի մէջ ախթարմայեցւոց, որք անդ կան, և Փիլիպպոս կաթուղիկոսն բազում սէր և բարեկամութիւն արար ընդ Պօղոսին այն. վասն օգտի ժողովրդեանն մերոյ և փրկութեան եկեղեցւոյն Իլովայ. և Պօղոսն այն յետ կատարման գործոյ իւրոյ կամեցաւ գնալ ի Հռոմ, և գնալով զճանապարհս իւր հանդիպեցաւ յԻլով քաղաք. և Իլովացիք ևս բազում աղաչանօք խընդրեցին ի Պօղոսէ և բազում մեծարանս արարին նմա, և զանձս ևս յոլով առ ի թոշակ ճանապարհի եւուն նմա. զի թերևս օգնութիւն ինչ հնարեսցէ նոցա ի դուռն փափին: Եւ յորժամ հասս Պօղոս ի Հռոմ, և մինչ նա բանս ինչ բարեխօսութեան վասն Հայոց առաջարկեալ էր, և խօսէր ի դուռն փափին՝ վազվազակի գնաց զկնի նորա և Նիկօլ եպիսկոպոսն ի Հռոմ ի դուռն փափին. և խափանեաց զօգնութիւնն Պօղոսի՝

1 ԲԳՆ *ի Հռոմի փխ Հռոմ (ամենուրիք)*
1-2 Ա. *բազմօք... զթուղթս*
6 ԴՆ *գնաց և ինքն*
7 Ն *որ չեղև*
8 Ա. *զոր... ողորմելիք* ԴՆ *զոր .*
9 Ա.ԲԳՆ *ի Լով* Ա.ԲԳՆ *ի Լով*
10 Ա. *առաջնոյ* Ա.ԲԳՆ *վտանկելով*
12-13 Ա. *զքահանայս*
13 ԲԳՆ *երիսփոխանս*
15 Ա. *զանազանի... զթուղթս*
17-18 Ա.ԲԳՆ *եկեղեցականք*
19 Ա.Ն *այսց* ԲԳՆ *այսմ*
20 Ա. *նշանաւորաց*
21 Գ *կաթուղիկոս* Ա. *Լովայ* ԲԳՆ *Իլովայ*
22 ԲԳՆ *զժողովուրդն*
26-27 Ա. *զբազում... զբարեկամութիւնս* ԲԳՆ *բարեկամութիւնս*
27 Ի *այնր*
30 Ա. *բազմօք աղաչանօք*
31 Ա. *զբազում* Ա. *զզանձս*
32 Գ *նմայ զթերևս* Ա. *զօգնութիւն*
34 Ա. *զբանս*

ձեռնտուութեամբ Նզվայիտացն։ Եւ այսպէս յամենայն կողմանց խափանեցաւ փրկութիւն և օգնութիւն տառապեալ ժողովրդեան Իլովայ քաղաքին, և ընդ Պօղոսին գնացողքն տրտում և ունայն դարձան անտի։ Եւ Նիկօլ եպիսկոպոսն ևս դարձաւ ի Հռօմայ և եկն յԻլով քաղաք. և կայր ըստ առաջին վարուց իւրոց. և ևս առաւել անառակ։ Եւ վվերոյասացեալ պրեանն, և զսրբութեան անօթն, և զամենայն աւանդս եկեղեցւոյն, զորս վաճառեաց, և զորս կաշառս բաշխեաց, և զորս ձեռամբ հրէից խորտակեալ արար արծաթ և վաճառեաց. և զայնքան զբազում և զանթուելի զինչսն և զգանձսն ցիր և ցան արարեալ բնաւին վատնեաց՝ որ ոչինչ մնաց, միայն լոկ դատարկ քարեայ եկեղեցին, զի կնայր անառակ և զեղխ և շուայտ վարուք՝ յայտնի և համարձակ յոչ ումեքէ վեհերելով։ Եւ բազում զրեանք և անօթք ի նորին վաճառելոցն եկին յերկիրս Հայոց՝ և սո մեզ հասին. զորս վաճառականք գնով առեալ բերին, որ աչքանշելի էր տեսողացն։

Եւ ողորմելի ժողովուրդքն Իլովայ, վտանգս և չարչարանս բազումս կրեցին, վասն զեօթն խորհուրդս եկեղեցւոյ խափանելոյն. և բազում որք երկիւղածք, և վրէժխնդիրք հայրենի օրինաց՝ մեկնեցան ի տանց և ի տեղեաց, և ելեալ ի բնիկ աշխարհէն հեռացան, անջատեալք յընտանեաց և յազգաց, պանդուխտք, և նժդեհք շրջագայեալք յօտար աշխարհի. և այնպիսի կենօք հեծելով և յոգւոց հանելով վախճանեցան։ Եւ այլ ևս չարշարանս և նեղութիւնս յոգնակի կրեցին ժողովուրդքն Հայոց զի հալածումն մեծ էր իվ երայ նոցա, որք և զրկեցան յեկեղեցւոյն իւրեանց, և յայնքան ստացուածոցն. և զիւրեանց ևս զգանձս վատնեցին ի դրունս իշխանաց և թագաւորաց, և աստ և անդ յուղեղնացութիւնս։ Եւ այնքան աշխատեցան երկոքին կողմանքըն, այսինքն Նիկօլն և ժողովուրդքն, զի լքան ի բազմորակի հնարագործութեանց և ի բազմաժամանակեայ ներհակութեանց. քանզի սկիզբն խռովութեանս եղև ի ՌՀԹ. թուին. որ զեկեղեցին յափշտակեաց Նիկօլն, և մնացին այնպէս մինչև որ հասին ի ՌՃԲ. թիւն մեր։

Յորում ժամանակի տէր Փիլիպպոս կաթուղիկոսն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի գնաց յՆորուսաղէմ, և անտի եկն ի մեծահանդէս քաղաքն ի Կոստանդնուպօլիս, որոյ գալստեան համբաւն հռչակեցաւ ընդ ամենայն տեղիս, նա և յԻլով քաղաք ևս եհաս։

Ի սոյն ժամանակի հանճարեղ խորհրդական Նիկօլ եպիսկոպոսն, նկատեալ տեսչութեամբ իւրոց մտաց, թէ ժողովուրդքն այսքան չարչարեցան, և ո՛չ կասեցան ի բիրտ կամաց իւրեանց, այլ տակաւին ի

1 Ր *ձեռնտուութեամբ* Ա. *[ղ]վայիթոցն* Է 15-16 Ր *բազումք*
[նզ]վայիթացն ԲԳԴՆ *[հզ]վայիտոցն* Ա. 17 Ա. *հայրենեաց*
յամենից 18 Ա. *ելեալք*։ Ա. *բնի*
3 ԴՆ *և գնացողքն ընդ Պօղոսին* 19 Ր *յընդանեաց* ԱԲԳԴՆ *նշդեհք* Ե *նըշդեհք*
5 Ա. *առաջնոց* 20 Ա. *այնպիսեաւ*
6 Ա. *զամենեսեան* 21 Ա. *զայլ* Ա. *զնեղութիւնս* ԲԳԴՆ *յոգնակի*
8 Ա. *զարծաթ* 23 Ա. *յայնքանեաց* Ա. *իւրեանց*
11 Ա. *շուայտիւք* 29 ԱԴՆ *մինչ որ*
12 ԴՆ *ոչ յումեքէ* Ա. *բազումք* 32-33 Ա. *ամենեսեան*
15 Ա. *զվտանկս և զչարչարանս* ԲԳԴՆ *վտանկս* 33 ԳՆ *քաղաքն*

նոյն կամս յամառեալ կան, վասն որոյ խորհեցաւ գնալ ի Կոստանդնուպօլիս առ կաթուղիկոսն Փիլիպպոս, ղի թերևս բարձցի յինքնէ անուն բանադրեցելոյ, նա և ընկալցի ի նմանէ ի վերայ ժողովրդեանն Քուղբ օրհնութեան, և առ ինքն հնազանդութեան: Բայց ղի էր դատարկ և ունայն ի գոյից, և ո՛չ ունէր պաշար ճանապարհի, վասն որոյ խորհէր գտանել սմին հնար, զոր և ևգիտ այսպիսի կերպիւ: Եւ էր ի Թօխաթ քաղաքի յաղգէն Հայոց այր ոմն երևելի և անուանի, որում անունն էր Մահտեսի Մարկոս. որ ևս գանձս յոլովս Սիմոն անուամբ որդւոյ իւրոյ՝ և առաքեաց յաշխարհն Իլախաց վաճառականութեան աղագաւ: Եւ Սիմոնս այս ևկեալ հնաս յիլով քաղաք՝ հանապազ ուտէր և ըմպէր և կնայր ի խրախութեան, նա և ևղև ծանօթ և բարեկամ ընդ Նիկօլ եպիսկոպոսին, զոր և խոստացաւ եպիսկոպոսին, և ասաց. «Թէ ունիս գնամս գնալոյ առ կաթուղիկոսն, մի հոգար վասն պաշարի, ղի որքան և պիտոյացի քեզ դրամ վասն ճանապարհի, վասնենայն ես տամ» զոր և լսատ իւրում խոստմանն ետ եպիսկոպոսին զերկու հազար դուռուշ նազտ դրամ. իբրև զայն էառ եպիսկոպոսն, ապա ելևալ յիլովայ ևկն ի Բուղդան և գնայր առ կաթուղիկոսն Փիլիպպոս:

Զայս տեսեալ ժողովրդականացն Հայոց՝ որ յիլով, թէ գնաց Նիկօլ եպիսկոպոսն առ կաթուղիկոսն, սահմանեցին և նոքա պայր ոմն երևելի յիւրեանց կողմանէ, որ էր մի ի դատաւորացն Հայոց, որում անունն էր Խաչքօ, գնալ առ կաթուղիկոսն Փիլիպպոս, տուեալ նմա դրեալ թուղթս և պատուիրեալ բանս բազումս. և Նիկօլ եպիսկոպոսն և Խաչօք դատաւորն՝ որիշ ի միմեանց գնացեալ Հասին ի Կոստանդնուպօլիս՝ և պատահեցան կաթուղիկոսին:

Եւ ի յոլով ատուրս ղկնի բազում խօսից և գործոց, կատարումն գործոյն այն ևղև՝ ղի կաթուղիկոսն Փիլիպպոս հրամայեաց, որ բանս չորս գլխով յանձն առցէ Նիկօլ եպիսկոպոսն, և զայն ձեռնագրով իւրով դրոշմեացէ, և տացէ Փիլիպպոս կաթուղիկոսին: Նախ՝ ղի ղդաւանութիւն Լուսաւորչին, և զնորին աթոռակալ հայրապետացն դաւանեալ խոստովանեացի Նիկօլն, և իւր հետևողքն, այսինքն՝ եկեղեցականք և աշխարհականք: Երկրորդ՝ ղի զարարողութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ արասցէ և իւր հետևողքն: Երրորդ՝ ղի ղկնի վախճանի Նիկօլին՝ ի տեղի Նիկօլին եպիսկոպոս նստողն, ի կաթուղիկոսէն էջմիածնի լինիցի օծեալ եպիսկոպոս, և նորին հրամանաւն նստցի ի նոյն վիճակին, և նոյն կաթուղիկոսին հնազանդ և հետևող լիցի: Չորրորդ՝ ղի ինքն Նիկօլն

1 Ա. համառեալք
4 Ա. զթուղթ
5 Ա. զպաշար
6 Ա. այնպիսեաւ
7 Ա.Դ որոյ
8 Ա.ԲԳԴՆ մահդասի Ի մահդեսի Ա. զգանձս
11 Բ ծանութ
12 Ա. Նիկօլայի
13 ԲԳԴԵ կամք
14 Բ թէ փխ զի
14-15 Ա. զամենեսեան
16 Ա. զուռուշս
19 Ա. որք փխ որ
21 Ն որոյ փխ որում
22 Բ Խաչքօյ
23 Ա. զգրեալ... և զպատուիրեալ
27 Ա. զի փխ որ Ա. զբանս
28 ԲԳԻ զայնս
31 Ի չիք այսինքն
32 Դ Հայաստանեաց

միայն յիշեսցէ զանուն փափին, և զայն ևս ի պատարագն միայն, և ոչ յայլ ինչ բանս և յարարողութիւնս։ Նա և մի խառնեսցէ ջուր և բաժակ սրբոյ պատարագին[118], իսկ յհեղեղական ժառանգաւորաց և ի կղերիկոսաց՝ ոչ ոք բնաւ յիշեսցէ զանուն փափին։ Սոյնպէս և մի՛ յիշեսցէ զկնի Նիկոլին նստող եպիսկոպոսն զանուն փափին ամենևին. ո՛չ ի բանս և ո՛չ ի գործս՝ այլ միայն Նիկոլն, և զայն ևս ի պատարագն միայն։

Եւ վասն յիշելոյ զանուն փափին, Նիկոլն ինքն խնդրեաց ի կաթուղիկոսէն, զի այնմ միայն ներումն արասցէ, քանզի Նիկոլն ասաց թէ, ձեռնադրեան, զոր ևս տուեալ եմ Ֆռանկաց՝ ի կարգէ լուծանեն զիս, զուցէ մահապարտ ևս առնիցեն, վասն այսորիկ ներեաց կաթուղիկոսն։ Եւ զայս չորս բանս դրեալ ի քարտիսի, կնքով կնքեալ և ձեռնադրով դրոշմեալ Նիկոլն ետ կաթուղիկոսին Փիլիպպոսի, և կաթուղիկոսն ետ խաչքօ դատաւորին, զի ընդ իւր տարեալ ի քաղաքն Իլով ի պահեստի ունիցին վասն առ յապայն զգուշութեան։ Եւ ապա կաթուղիկոսն արձակեաց զնիկոլն ի կապանաց բանադրանաց, և ետ նմա նոմոս եպիսկոպոսական իշխանութեան՝ իշխել ի վերայ ժողովըրդոցն Իլովայ և պատուիրեաց նմա, զի զգաստացեալ ի թափառական և ի խէնէշ վարուց իւրոց եկեսցէ ի կրօնս և ի բարեշաւիղ ճանապարհս արդարութեան, որ վայել է անուան և աստիճանի եպիսկոպոսութեան։ Եւ Նիկոլ եպիսկոպոսն զամենայն հրամանս կաթուղիկոսին հոգւով չափ և չօժար կամօք յանձին. կալեալ, և արձակեալ ի նմանէ եկեալ ևհաս Իլով քաղաք։

Եւ ժողովուրդքն Իլովայ համարէին թէ զղջացեալ և թողեալ իցէ Նիկոլն զթիւր վարս իւր. բայց տեսանէին զի ի նոյն վարս կայ անփոփոխ. այլ և յիշէին զանչափ գանձուցն իւրեանց և զանօթոցն վատնումն, և զբազմապատիկ նեղութիւնսն՝ զոր հասոյց նոցա եպիսկոպոսն Նիկոլ, այրեալ, խորովեալ տոչորէին սիրտք նոցա։ Վասն այնորիկ ո՛չ կամէին միաբանիլ ընդ նմա, նա ևս առաւել փախչէին և կամէին նզովել լինիլ ի նմանէ։

Եւ մինչ տակաւին ոչ էր գնացեալ Նիկոլ եպիսկոպոսն ի Կոստանդնուպոլիս։ Փիլիպպոս կաթուղիկոսն ի Կոստանդնուպոլսէ զոմն վարդապետ յիւրոց աշակերտաց՝ որում անունն էր Յօհան վարդապետ[119], որ էր տեղեակ յԱրղնւոյ, այր փարթամ իմաստութեամբ, և հանճարեղ բանիւ, առաքեաց դնալ յԻլով. զի թերևս գուն գործեալ հնար իմն փրկութեան գտանիցէ եկեղեցեաց նոցա և ի գնալն Յօհան վարդապետին յԻլով, և գալն եպիսկոպոսին ի Կոստանդնուպոլիս, ի ճանապարհին պատահեցան միմեանց, և Նիկոլ եպիսկոպոսն ի Յօհան վարդապետէն ևս էառ թուղթ առ կաթուղիկոսն, վասն ինքեան յանձ-

2 Ս. *կջուր*
3 Ս. *յհեղեղականաց*
17 Ս. *զնոմոս եպիսկոպոսականի*
18-19 Ս. *թափառականաց*
19 Ս. *ի խէնէշից*
30 Խ *լինել*
32 Խ *Կոստանդնուպօլսոյ*
33 Ս. *որոյ*
34 ԲԴԴՆ *յԱրղնու*
35 Դ *գնաց Իլով*
36-37 Ս. *Յօհաննու վարդապետին*
38 Ս. *Յօհանէ*
39 Ս. *զթուղթ*

նարարութեան. և գնաց առ կաթուղիկոսն ի Կոստանդնուպոլիս։ Իսկ Յօհան վարդապետն հասեալ յիլով, մնաց անդէն մինչ որ Նիկօլ եպիսկոպոսն և խաչքօ դատաւորն ի Կոստանդնուպոլսէ դարձան և եկին յիլով։

Իբրև ետես Յօհան վարդապետն թէ ընդդիմանան ժողովուրդն եպիսկոպոսին, և ոչ կամին հնազանդիլ նմա, սկսաւ միջնորդել ի մէջ ժողովրդեանն ի Նիկօլին՝ վասն բառնալոյ զբազմաժամանակեայ զաղմուկն և զխռովութիւնն, և զբազում աւուրս բազում խրատով, քարոզիւ, և դասիւ և առանձնակի խօսելով ընդ ժողովրդեանն և ընդ եպիսկոպոսին, բազում ջանիւ և յոլով աշխատութեամբ հազիւ թէ կարաց հաւանեցուցանել զժողովուրդն հնազանդել եպիսկոպոսին։ Ապա ի միասին առեալ Յօհան վարդապետն զժողովուրդն և զեպիսկոպոսն եբեր եմոյծ յեկեղեցին իւրեանց, զոր յափշտակեալ էր եպիսկոպոսն։ Եւ եղև ի մտանել ժողովրդեանն յեկեղեցին, որպէս զխառնումն գառանց ի հօտս ոչխարաց մարց իւրեանց, գոռումն, և գոչումն, և ողբումն, և աղիողորմ լաց և փղձկեալ սրտիւ յորդառատ արտասուս հեղով ժողովրդոցն յաշաց իւրեանց, մեծաւ հառաչմամբ վասն տարփալի կարօտանաց և փափաքանաց՝ որ առ եկեղեցին իւրեանց։ Եւ անդէն յեկեղեցւոջն ի նոյնում ժամուն սկսաւ Յօհան վարդապետն մխիթարել զժողովուրդն յաստուածային գրոց և ի վարուց և յօրինակաց սրբոց, յորոյ բանից վերայ զովանայր սիրտ ժողովրդոց, և ածեալ ի համբոյր հաշտութեան զամենեսեան ընդ եպիսկոպոսին. և ժողովուրդն և եպիսկոպոսն մխիթարեալ ուրախացան ընդ արարս վարդապետին և գոհութեամբ օրհնէին զԱստուածն ամենայնի։

Եւ ևհաս համբաւ հաշտութեանս առ թագաւորն Լեհաց որում անունն էր Եան Դաժիմիր. քանզի ի քաղաքն Իլով էր թագաւորն յաւուրս յայսոսիկ, որ և կոչեաց թագաւորն առ ինքն զՅօհան վարդապետն և առանձին ի սենեկի խօսեցաւ ընդ նմա բանս բազումս. և լուաւ պատասխանիս հանճարեղ և համեղ բանիւ։ Եւ սիրեաց թագաւորն զվարդապետն և զընորհակալութիւն արար նմա վասն միջնորդութեան և հաշտեցուցանելոյն զժողովուրդն և զեպիսկոպոսն, և զբազմաժամանակեայ խռովութիւնն բառնալոյն։ Եւ մնաց անդէն վարդապետն Յօհան ամ մի ողջոյն և ապա դարձաւ և եկն ի սուրբ էջմիածին։ Իսկ ժողովուրդքն Իլովայ և Նիկօլ եպիսկոպոսն, կան ի վերայ նոյն պայմանադրութեանն, զոր սահմանեցին Փիլիպպոս կաթուղիկոսն, և Յօհան վարդապետն մինչև ցայսօր՝ յորում զպատմութիւնս շարա-

3 Ա.ԲԳԴԵ *Կոստանդնուպոլսէ*
8 Ա. *բազմաւ*
9 Ա. *և դասու*
10 Ա. *բազմաւ* Ա. *յոլովիւ*
11 Ա.Դէ *հնազանդիլ*
13 Ա. *եբերեալ*
17-18 Ա *տարփալեաց*
18 ԲԳեէ *փափականաց*
20 Ա. *յաստուածայնոց*
21 Բե *ժողովրդոցն*
22-24 Ա.Դ *չիւ և ժողովուրդքն... ամենայնի*
25 Ա *որոյ*
26 Ա.Դ.Եէ *Եան Դեաժիմիր*
28 Ա.ԲԴե *առանձինն* Ա. *դրանս*
29 Ա *զպատասխանիս հանճարեղս և համեղս*
30 Գե *շնորհակալութիւն*
31-32 Դ *բազմաժամանակեայ*
33-34 Ա.է *էջմիածինն*
35 Դ *պայմանադրութեանն*

գրեցաք ի թուականիս մերում ՌՃԾ, ի Մայիս ամսոյ Ժ. և խնդրեսցուք ի Քրիստոսէ, զի առ յապայն ևս խաղաղութեամբ և սիրով պահեսցէ ի հաճոյս բարեսէր կամաց իւրոց և ի գովեստ անուան իւրոյ օրհնելոյն յաւիտեանս. ամէն։

ԳԼՈՒԽ ԻԲ

ԹԷ ՈՐՔ ԵՒ ՈՐՊԻՆ ԵՂԵՆ ՊԱՏՃԱՌՔ ԳՏԱՆԵԼՈՅ ՁՈՃՍ ԵՒ ՁԳԻՏՈՒԹԻՒՆՍ ԱՐՏԱՓԻՆ[120] ՁՐՈՑ ՆԻ ՁԱՐՈՒԻՍՏՍ ՔՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՆՈՐՈԳԵԱԼ ՍՓՈՒԵՑԻՆ Ի ՎԱՐԴԱՊԵՏՍ ՀԱՅՈՑ, ՈՐ ԲՆԱԻԻՆ ԲԱՐՁԵԱԼ ԵՒ ԱՆՀԵՏ ԼԻՐ ԼԵԱԼ

Արդ՝ ի հին և ի վաղեմի ժամանակաց կայր պատատուն վարդապետաց ի քաղաքն Բաղէշ, ի վանքն՝ որում անուն Ամրդօլ ասեն, որ յաջորդելով մի ըմի հետս մինչև ի ժամանակս հարց մերոց։ Յորում ժամանակի էր յաջորդ և առաջնորդ, պետ և պլուխ վարդապետաց տեղույն այնմիկ ոմն վարդապետ Բարսեղ անուն, որ էր այր երևելի և մեծանուն, և յոլով աշակերտաց տէր. և նոյն վանքն Ամրդօլու յառաջագոյն խրթին և յոռի շինեալ էր և այն ևս խարխալեալ էր ի հնութենէ, սա զամենայն շինուածսն միահաղոյն քակեաց, և ինքն վերստին հիմնարկեալ շինեաց և կատարեաց զբովանդակն, զեկեղեցին և զտներն և զայլն, որ ի նոսա։

Այլ և էր ինքն Բարսեղ վարդապետն ի գաւառականէն՝ որ ի Տաթեւացւոյն յառաջ եկեալ և սերեալ, այսպիսի կարգաւ։ Նախ՝ Գրիգոր Տաթեւացին, նորին աշակերտ Դանիէլ. նորին՝ Յովհաննէս Համշէնցին. նորին՝ Զորթան Գրիգոր Արճիշեցին. նորին՝ Ներսէս, որ Մատաղ ասի. նորին՝ Ներսէս Բաղիշեցին. նորին՝ Ներսէս Ամկեցին. նորին՝ Բրգուէթ Յովհաննէս Ոստանցին. նորին՝ Բարսեղ Գաւառցին, որ է այս Բարսեղս, որոյ վասն բանս է։ Սորին աշակերտ Մոկացի Ներսէս ի գեղջէն Ասկնջաւսայ, զորոյ մականուն Բեղլու ասեն, զի մեծ էր բեղն։ Սորին աշակերտ Մելքիսէթ Երևանցի, ի գեղջէն՝ որում անունն էր Վժան։

Արդ՝ այս Բարսեղ վարդապետս յինքենէ իսկ գիտակ էր թէ, գիտութիւն արտաքին իմաստից և քերականութեան ո՛չ գոյ ի մէջ վարդապետացն Հայոց, և ինքն մեծաւ տարփանօք ըղձայր թերևս հասանել այնմ գիտութեան, ոչ միայն վասն իւր, այլ մանաւանդ վասն աղգին, զի արծարծեալ սփռեսցի ի մէջ աղգիս Հայոց, որպէս զի ամենեքեան հասցեն այնմ շնորհաց և գիտութեան։ Վասն որոյ յարաժամ առեալ ի ձեռս իւր զարտաքին գիրքն, և թէպէտ ոչ գիտէր, այլ անյապաղ և անձան-

1-4 ԱՊ չիք և *խնդրեսցուք... ամէն*
7 Ս. *արտաքնոց*
10 Ս. *ի հնոց և ի վաղեմեաց*
11 Ս. *որոց* ԱՊ անունն
16 ԲՆ *խարխարեալ*
18-19 Ս. *զաւառն... գայլսն*
20 ԱՊ *ինքն* ԲԳՆ *ինքս Բարսեղ վարդապետս* Դ *վարդապետս*
21 Ս. *այսպիսեաւ*
24 Ի *Բրգուտ*
25-26 ԱՊ չիք *որ է այս Բարսեղս*
26 ԲԳՊ *ի գեղջէ*
27 Ա *որոյ* Ս. *նորին*
28 ԱՊ *ի գեղջէն Վժանու։* ԲԳ *անուն է Դն անուն է։* ՏՊ չիք *անունն էր*
30 Ս. *արտաքնոց*
31 Ս. *Հասանիլ*
35 Ս. *գիրսն փխ գիրքն։* ԱԲՊ և *թէպէտ և*

ձիր ընթեռնույր. էր ղի ուրեք ուրեք հասանէր ի վերայ տեսութեան, և մտաց բանին, և էր ղի ոչ. բայց նա ամենայն ջանիւ առանց ձանձրանալոյ միշտ ընթեռնույր։

Եւ որպէս Տէրն Քրիստոս յառակս երեք նկանակին ասաց, թէ ոչ տացէ վասն բարեկամութեան, սակայն վասն ժուռթեան յարուցեալ տացէ նմա ղինչ և խնդրեսցէ*, այսպէս և սմա ետ. որ անդադար և անձանձիր տքնութեամբ յար հանապազ կացեալ ի դուռն իմաստից գիտութեան բաղխէր զցայգ և ղցերեկ աղօթիւք և ընթերցմամբ։ Իսկ աղբիւրն և տուողն ամենայն իմաստութեան սուրբ Հոգին Աստուած, որ բերանով էակցին իւրոյ խոստացաւ, թէ «խնդրեցէք, և տացի ձեզ, բաղխեցէք, և բացցի ձեզ, հայցեցէք, և առնուցուք»**, տեսեալ զանդադարելի զկանխելն և զբաղխելն սորա, շնորհեաց սմա զխնդրելին. ղի ետ տեսութիւն և հանճար մտաց սորա՝ խելամուտ լինել բառին և ոճոյն, և շաւղաց արտաքին գրոց, առանց ուրուք առաջնորդելոյ և ցուցանելոյ բնաւ։

Քանզի նախ սկիզբն արար «Սահմանաց գրոցն»[121], կարդայր մինչև ցվերջ պրակին, և դարձեալ դառնայր ի սկիզբն պրակին, այնքան կարդայր և դառնայր, մինչև ամենայն որպիսութեանցն տեղեկացեալ լինէր՝ և ապա անցանէր և միւս պրակն, այսպէս առնելով մինչև ի տասն պրակն «Սահմանացն» կարդաց, և վերահասու եղև՝ որ այլոց ևս կարէր ուսուցանել։ Եւ ապա թողեալ զ«Սահմանքն» էանց ի Պորփիւրն, տեսանել և փորձել զնորին ևս զորպիսութիւն, և սկսաւ մեծաւ ջանիւ ընթեռնուլ և մտածութեամբ խոկալ. և ի բազում աւուրս յոդնակի աշխատութեամբ ընթեռնուլով և դառնալով ի Պորփիւրէն՝ զսեռն և զտեսակն ևս եդիտ շնորհօք սուրբ Հոգւոյն։

Եւ յաւուրս ծերութեան իւրոյ այս Բարսեղ վարդապետս կոչեաց զամենայն աշակերտս իւր առաջի իւր, և զոր ինչ և գտեալն էր իմաստութիւն յարտաքին գրոց, դաս ասաց նոցա, զոր նոքա ամենեքեան ի միտ առին, և ուսան, և ապա սկսաւ խօսել ընդ նոսա և պատուիրել. «Որդեա՛կք իմ սիրեցեալք, զորս Հոգևոր երկամբք ծնայ ի Տէր, զի նախնի վարդապետաց գրեանց մէջն՝ զորս յիշեն սեռ, տեսակ և տարբերութիւն, և յատուկ, և պատահումն, և ստորասութիւն, և բացասութիւն, որոց բազմաց և յոլովից սպահատեալ էք ի մէջ «Պարապմանց գրոցն»[122] և «Գանձուց գրոցն»[123], և «Առ որս»[124] գրոցն, և այլոց այս-

* Ղուկաս, ԺԱ, 8
** Ղուկաս, ԺԱ, 9—10, Մատթ., է, 7—8

2 Ա. ամենիւ
5 Գ ժուռթեանն
8 ԳԴե բախեր
9 Ա. ամենայնի
10-11 ԲԳն բախեցէք
12 Բե զկանխիլն Բ զբախիլն ԳԴե զբախելն
13 ԱԴ զտեսութիւն և զհանճար
14 Ա. արտաքնոց
15 ԱԴ չիճ բնաւ
16 Ա. զսկիզբն
18 Ա. ամենից
21 Ա. զսահմանսն
22 ԲԴն ի փորձել Գ զորպիսութիւնն
23 Ա.ԲԳԴ յորնակի
25 Ա.Դն սրոյ
27 Ա. զամենեսեան
28 Ա. յարտաքնոց ԲԴե որ նոքա
29 Ա. խօսիլ
30 Ա. Հոգևորօք
31 Ա. նախնեաց ԳԴե սեռ և տեսակ
31-33 Ա. զսեռ և զտեսակ և զտարբերութիւն և զյատուկ, և զպատահումն, և զստորասութիւն և զբացասութիւն

պիսեաց, թէպէտ և ընթեռնումք, և անցանեմք, այլ թէ զի՞նչ են սոքա, և սոցին հետևմունքն, և բոլորն և մասունքն, և այլ որպիսութիւնքն մեր ոչ գիտեմք. և հարկ է վարդապետաց՝ որ սոցին ամենեցուն քաջ գիտակ դոլ, զի թարց սոցին գիտութեան, թէպէտ ընթեռնու ոք, զինչ և ընթեռնու, և կարծէ իմացեալ զնա, այլ ոչ է իմացեալ ըստ պատշաճին և պարտին. զի ամենայն իմաստութեանց և գրոց, ներածութիւնք սոքա են, եթէ նրբից և թէ արտաքնոց։

Վասն որոյ իբրև զանգառնալի կտակ մահու պատուիրեմ ձեզ, և մանաւանդ ծանր և անբառնալի հարկ ի վերայ ձեր դնեմ, զի որպէս զիս տեսիք, զի հանապազ ընթեռնուի զայս գիրս, և բազում խոկմամբ մտածէի, և երկնէի, այնքան մինչև գտանէի զտեսութիւն բանին. և զոր ինչ և գտի շնորհելովն Տեառն, զայն ամենայն ահաւասիկ դաս ասացի ձեզ։ Եւ այժմ մեծաւ հարկիւ պատուիրեմ ձեզ, զի և դուք այսպէս առնիցէք, որքան և իցէք կենդանի. և զայս՝ զոր ես դաս ասացի ձեզ, հանապազօր կարդացէք, և ի վերայ սորին դուք ևս աճեցուցէք, ընթեռնելով և յառաջ գնալով. և զոր ինչ և տացէ ձեզ Աստուած սուրբ Հոգին ղյիշել ուսեալն և զձեր գտեալն, ձեր աշակերտելոցն դաս ասացէք. և միշտ վարժեցէք զնոսա ի նոյն՝ մինչև ունակասցի ի միտս նոցա, և դուք ևս պատուիրեցէք ձերոց աշակերտելոցն՝ զի ըստ այսմ օրինակի արասցեն. և այսպէս յորդւոց որդիս առնելով՝ հաւատամ ի Տէր, զի բանայ և ցուցանէ զամենայն ճանապարհս և ղդրունս չքնաղ և պանծալի գիտութեանս այսմիկ»։ Արդ՝ լուսընկալ Հոգի Բարսեղ վարդապետ ըստ ասացելումս պատճառ եղև գտանելոյ արտաքին գրոց գիտութեան, և այսպէս պատուիրելով յաւելաւ առ Հարս իւր և հանգեաւ ի Քրխատոս, և եղին զնա ի հանգիստ դերեզմանի ի նոյն վանքն Ամրդօլայ, զոր ինքն նորոգեաց, որոյ հանգստեան տեղի ընդ սրբոց և երանելեաց եղիցի. ամէն։

Եւ ըստ պատուիրելոյ երջանիկ վարդապետիս Բարսղի՝ երեք ոմանք յաշակերտաց սորին արարին, որք էին ի Մոկաց գաւառէն, միոյն անունն Յովսէփ, ի գեղջէն որում անունն է Ողմի. և միւսոյն՝ Հայրապետ և սորին եղբօրորդւոյն՝ Ներսէս, որք էին ի գեղջէն որոյ անունն է Ասկնջաւս։ Եւ այս Ներսէս, Բեղլու Ներսէսն է[125], զոր ի կարդ վարդապետացն յիշեցաք ի վեր անդր։ Այս Ներսէս յոլով աշխատեցաւ՝ և առաւելացոյց քան զԲարսեղ վարդապետն և քան զընկերս իւր։ Եւ ապա ի միտս իւր եկեալ Ներսէս վարդապետս և խոկմամբ ի միտ ածեալ զամենայն ունայնութիւն կենցաղոյս, և զպատրաստումն սորա՝ և զպատրանս մեծութեան, զղջացաւ յաշխարհէ՝ և լքեալ թօթափեաց յինքենէ զաշխարհս, և զամենայն վայելչութիւնս սորին. քանզի Մեծ

3 Ա.Ր չիք *որ* Ս. *ամենից*
6 Ս. *ամենից*
10 ՐԳԻՆ *տեսէք* Ս. *բազմաւ*
12 Գ *շնորհելով*
17 Ս. *ձերոյ*
18 Ս.ՐԳԻՆ *նոյնն*
21 Ս. *զամենեսեան*
22 Ս. *պանծալւոյ... այսորիկ*
26-27 Ա.Ր չիք *որոյ հանգստեան տեղի ընդ սրբոց և երանելեաց եղիցի, ամէն։*
28 Ա. *երջանկի Գ Բարսղիս*
30 Գ *որոյ* ՐԳԻՆ *անուն*
31 ՐԳ *որում*
32 Ր *Ներսէս*
36 Ա. *զամենեսեան ունայնութիւնս*

անապատն նոր էր շինեալ և հաստատեալ, զորոյ զպատմութիւնն կանիաւ ճառեցաք, և ի նմին պատմութեան Ներսէս վարդապետի յիշումն արարաք, և այն յիշեալ Ներսէսն այս է. և սորա լուեալ զառաքինական ճգնութիւնս միաբանից Մեծ անապատին, եկեալ գնաց անդ: Եւ ի միաբանից Մեծ անապատին ոմանք աբեղայք սկսան դաս առնուլ զարտաքին գիրքն ի Ներսէս վարդապետէն. և վասն զի գործնական առաքինութիւնն յարգոյ, և նախապատիւ էր առ նոսա, զի հոգիս զարդարելոյ փոյթ ունէին և ոչ զբան, սորին վասն ոմանք ի դաս առնողացն յետս նացին. բայց ոմն աբեղայ տէր Մելքիսէթ անուամբ՝ որ էր յԱրարատեան աշխարհէն, ի գեղջէն զոր Վժան ասեն, սա ոչ թուլացաւ յընթերցմանէ արտաքին գրոց, և ոչ մեկնեցաւ ի Ներսէս վարդապետէն, այլ ցորքան ժամանակս եկաց Ներսէս վարդապետն ի Մեծ անապատն, եկաց անդէն և տէր Մելքիսէթն. և յորժամ եկեալ Ներսէս վարդապետն գնաց յերկիրն Վասպուրականի ի Լիմ կոչեցեալ կղզին, որ է ի մէջ ծովուն, և շինեաց անդ անապատ, այս տէր Մելքիսէթս ևս գնաց ընդ Ներսէս վարդապետին ի Լիմ:

Եւ յորժամ ժողովեցան յոլովք՝ և բազմացան միաբանք տեղւոյն, հինգ այլ ևս եղբարք միաբանեցան ընդ տէր Մելքիսէթին՝ և ամենեքեան ի ձեռս աւին դիրս արտաքինս՝ և սկսան ջանիւ կարդալ: Եւ յայտ արարեալ նշանեցին յաւուրն ժամ մի առ ի միասին ժողովելոյ, որպէս զի իւրաքանչիւր ոք ի նոցունց՝ զոր ինչ և գտեալ իցէ ի բանից գրոց անդէն ամենեցուն յայտնեսցէ, զի այլքն ևս ուսցին, որով աճեալ և արծարծեալ առաւելագոյն դիտութիւնն այն, և այսպէս արարին զամս երկուս, և յայնմ հետէ միաբանեալ եղբարքն ձանձրացեալք յետս կացին ընթերցմանէ արտաքին գրոց, զի աշխատութիւնն յոլով էր, և մխիթարութիւնն սկսաւ, զի տակաւին ո՛չ էին թագաւորեալ ի վերայ բանին, և զճաշակ քաղցրութեան ոչ էին առեալ. որով ամենայն աշխատութիւնքն նուաստ և երկրորդ նմին տեսանի, ըստ վկայելոյն Դաւթի Փիլիսոփային[126]:

Բայց տէր Մելքիսէթ՝ ոչ եթող զարտաքին գիրքն, և ոչ թուլացաւ ի նորին ընթերցմանէ, այլ անդադար տքնութեամբ զցայգ և զցերեկ ընթեռնոյր և մտածէր, և բերեալ առ Ներսէս վարդապետն ցուցանէր, և հարցանէր թերևս ուղիղ իցէ գտեալն բան: Եւ ընդ բազմաջան ընթերցմանն, զոր առնէր և խոկայր ցանգ. հանապազ ի տեսական իմաստութիւնն, և զգործնական առաքինութիւնն ևս ընդ նմին ի միասին

1 Ս. որոյ զպատմութիւնն ԲԵ զպատմութիւն Դ չիմ և
2 Ս. Ներսիսի
4 ՍԴ անդր
5 Ս. մեծի
6 Ս. գիրսն Ս. ի Ներսիսէ
7 ՍԲԳԴ զհոգիս
8-9 ՍԴ առնողացս
11 Ս. արտաքնոց Ս. ի Ներսիսէ
15 Ս. գանապատ
16 Ս. Ներսիսի
18 Ս. տնառն Մելքիսէթի
19 Ս. զգիրս Դ գիրսս
20 Դ յաւուրնն
22 Բ որովք
22-23 Ս. աճեցեալ և արծարծեցեալ
24 Ս. միաբանեալք ԲԳԻՆ ձանձրացեալ
25 Ս. արտաքնոց
27 Ս. ամենեքեան
31 Ս. անդադարիւ
33 Ս. բազմաջանի
34-35 ԲԳՆ իմաստութիւն
35 ԲԳՆ առաքինութիւն ՍԴ չիմ ընդ նմին

բարձնալ տանէր. ղի ղկարդ անապատին հաւասար ընդ հասարակ եղբարցն անսուկաս կատարէր. նա և գերագոյն քան զնոսա, ի գիշերի կանխէր յաղօթս և ի պաղատանս առ Տէրն և տուողն ամենայն իմաստութեան ի Տէր Աստուած, բանալ նմա ղդուռն իմաստութեան գրոց՝ և խնդամուտ առնել նորին հանճարոյ։

Եւ զոր ինչ վասն նախ ասացեալ վարդապետացն պատմեցաք՝ սա բազմապատիկ առաւել քան զնոսա, երկս և աշխատութիւնս կրեաց ի վերայ արտաքին գրոց, ղի թող զայլ ժամանակսն, զոր ընդ ընկերացն, և կամ չափաւոր ճգնութեամբ զոքնութիւն կրեալ էր, այլ յատուկ տասն ամ առանց թուլանալոյ և ներելոյ ինչ, զմարմինն իւր ի խաչ բարձեալ՝ կարեօք և ցանկութեամբ հանդերձ ըստ Պօղոսի*. և քան զայս ևս առաւել յամս երկուս յօրն մէկ հաց ճաշակեալ և ո՛չ այլ ինչ։ Եւ յայն երկու ամն ամենևին լուռ եկաց և ընդ ումեք ո՛չ խօսեցաւ, այլ ընդ Աստուած՝ և ընդ գրոց իմաստութեան. և ամենևին մերձ հրոյ ո՛չ գնաց, և ճրագ և կամ լոյս ի խուղն իւր ոչ տարաւ, այլ միշտ ի տուէ գիրս վերծանէր և ի գիշերի խոկայր։

Իսկ անքննելին յամենայն էից սուրբ Հոգին Աստուած՝ որ քննէ զամենայն և զխորս Աստուծոյ**, հայեցեալ յանդառնալի յոյսն և յանձանձիր խնդրելն նորա, եհեղ առ նա զշնորհս իմաստութեան և գիտութեան, և պարգևաց զխնդրելն, յաղագս ստէպ ժտելոյ նորա, և ըստ առակելոյ իւրոյ էակցին Տեառն Յիսուսի***։

Քանզի գիտութեան ամենայն արտաքին գրոց անտարակոյս ի վերայ հասեալ գիտող եղև. «Սահմանացն»[127], Պորփիւրին, «Ստորոգութեան»[128], «Պերիարմենիասին»[129], «Աշխարհացն», «Առաքինութեան»[130], «Վերլուծականին»[131]։

Այլ և զամենայն ազգաց տօմարն՝ որոց պատճէն գրեալ կայ ի միջի մերում, քաջ և անտարակոյս եհաս ամենայնի, գիտելով զսկիզբն և զպատճառն և զամենայն հետևմունս նոցա։ Այլ և բերականութեան գիտութեան եղև տեղեակ և գիտող առաւել քան որք էին ի ժամանակին։

Արդ՝ ոչ թէ այս միայն է շնորհք և գիտութիւն նորա՝ զոր պատմեմք, քանզի յԱստուածաշունչ գրոց, և ի բանից վարդապետաց, կարի յոլով բան ի բերան առեալ էր որ հանապազ քաղէր։ Այլ զայս արտաքին գրեանս յայն սակս յիշեմ և շնորհակալ լինիմ նմա, ղի զայսպիսի այլաշափ, և այլատեսակ, և այլանուն, և անընտել բանս, առանց վարժողի և թարգ ուրուք ուսուցանողի՝ իւրովի եգիտ զամենայն իսկզբանէ մինչև զկատարածն։

Եւ ի կատարել մարմնոյ հասակին քան զոր առաւել կատարեալ

* Համմ. Գաղատ., ե, 24
** Ա. Կորնթ., Բ, 10
*** Յովհ. ժԶ, 23—41

1 Ա. հասարակաց
3 Ա. ամենայնի
5 Ա. անել ի առնէր
7 Ա. զերկս և զաշխատութիւնս
8 Ա. արտաքնոց
9 Ա. չափաւորիւ ՐԴԴՆ տքնութիւն
17 Ա. յամենից
20 ԱԴՆ շիւ և (ըստ)
22 Ա. ամենից արտաքնոց
28 Ա. զամենեսեան Բ յամենայնի
35 ԱՐԴԴՆ անընդել
37 Ա. յսկզբանէ ՐԴԴՆ յբսկզբնէ

էր իմաստութեան և հոգւոյ-հասակն, կամովք իւրովք վարդապետեն Ներսէս և վկայութեամբ ամենայն եղբարց անապատին, յառաջ կոչնաց զնա ի բարձրադոյն տեղի և ի պատիւ ըստ հրամանի Տեառն, թէ «Բարեկամ ի վեր մատիր»*, և շնորհեաց նմա զդաւազան վարդապետութեան, որ յարաժամ քարոզութեամբ աղբերաբար իմաստութեան ջրով մխիթարեալ զովացուցանէր զլսողսն։

Եւ յաւուրս ժամանակին այնմիկ, Մովսէս վարդապետն՝ որ եղև կաթուղիկոս էջմիածնի, այն ինչ նոր սկսեալ էր նորոգութիւն սուրբ Աթոռոյն էջմիածնի և շինութիւն պարսպին, և համբաւ նորոգութեան սրբոյ Աթոռոյն էջմիածնի, և Մովսէս վարդապետի կաթուղիկոսութեանն հրատարակեալ էր ընդ ամենայն աշխարհ, որ առ ամենեքեան տենչացեալ գային ի տեսութիւն նորին. այսու ազդաւ Մելքիսէթ վարդապետ ելեալ ի Լմայ անապատէն և եկեալ ի բարձրագահ աթոռն ի սուրբ էջմիածին. և երկրպագեաց քրիստոսակոխ սրբոյ տեղւոյն և տաճարին, և հանդիպեցաւ տեսութեան Մովսէս կաթուղիկոսին, և նորին աշակերտացն, յորոյ գալստենէ ուրախութիւն անպատում եղև ամենեցուն։

Եւ լինէր յորժամ Մելքիսէթ վարդապետն կանխէր ի դաս և ի քարոզ, իբրև ղյորձանս ուղխից և հեղեղաց ընթանայր բանն ի բերանոյ նորա, յորոյ իմաստութիւնն ամենեքեան ապուշ եղեալ՝ հիանային և բաղձային։

Եւ յաւուրսն յայնոսիկ Մովսէս կաթուղիկոսն զմեծ աշակերտն իւր զկնեարացի եպաշատուր վարդապետն՝ եղբարբք ոմամբք առաքեաց ի Լէհաց աշխարհն յաղագս նուիրակութեան սուրբ էջմիածնի. և վասն զի ո՛չ ընդդիմակայ ախոյեանի պատահելք էին եղբարքն՝ որք ընդ եպաշատուր վարդապետին, վասն որոյ ի միում իւրեանց կարծէին զինքեանս դիտնականաս և կարողս ումանս գոլ։ Եւ անդ յիլով քաղաքի՝ յաղթէն Ֆռանկաց պատրիք ոմանք եկին առ աշակերտսն Մովսէսի վասն հակաճառութեան, և հարցին նոքա զմերսն նախ ի բերական արհեստէն, և ասացին՝ «վարեմ» բառս անո՞ւն է թէ բայ, և մերքն անհմուտ դոլով զայլ և այլ պատասխանիս ասէին. յայնժամ նոքա քամահելով և ծիծաղելով այսպէս եւ արարեալ են զմերսն և ի բաղում աւուրս վասն հակաճառութեան այսպէս են արարեալ։ Յայնժամ մերքն ի սիրտ և յոգի խոցեալք են. և իմացեալ թէ զայն, զոր զիտեն, ո՛չ է զիտութիւն,

* *Տե՛ս Դանիել, ԺԱ 10*

1 ԱԲԳԴՆ *կամօք*
2 Ա. *ամենից*
4 ԲԳԴԵ *զաւազան*
5 ԲԳՆ *աղբերաբար* Ն *իմաստութեանն*
7 Ա. *այնորիկ փխ այնմիկ*
8 ԲԳԴՆ *նորոգութեան* Ա. *սրբոյն* Գ *սրբոյ*
8-9 ԲԵ *սրբոյն աթոռոյն*
9 ԲԳԴՆ *շինութեան*
10 *[illegible]*
10 11 ԲՆ *կաթուղիկոսութեան*
11 Ա. *հրատարակեցեալ էր*
12-13 Ա. *և Մելքիսէթ վարդապետն* ԲԳԴ *Մելքիսէթ վարդապետս*
13 Ա.Գ *եկն փխ և եկեալ* ԲՆ *և եկն*
14 Ա *Քրիստոսակոխի*
19 Ա. *ընթայր*
20 ԲԳԴՆ *իմաստութիւն*
22 ԴՆ *կաթուղիկոս*
24 Ա. *սրբոյ*
25 Ա. *ախոյանի*
25-26 Ա.Գ *Խաչատրոյ*
27 Ա.ԲԳԴ *Իլով*
28 Ն *պատրիկք* Ա. *աշակերտս*
29 Ա. *քնքականէ*
32 Ա. *արարեալք են*

այլ պարտ է նոցա զարտաքին գիրքն կարդալ և անդէն ի մտի եդեալ ն հաստատութեամբ, թէ գնամք յէջմիածին առ Մելքիսէդէ վարդապետն, զայլ ամենայն ինչ թողեալ՝ արտաքին գիրքն կարդամք ի նմանէ: Եւ յորժամ հասին յէջմիածին առ ժամայն սկսան ի նոյն գործն ձեռն արկանել, և ոմանք ևս յեղբարց ի միաբանիցն էջմիածնի, ընդ նոսին յարեցան ի դաս առնուլ: Եւ յորժամ միաբանեալ եղբարքն եկին առ Մելքիսէդ վարդապետն, և սկսան դաս առնուլ, նախ՝ զբնութիւնն դաս առին, զկնի նորա զ«Սահմանքն» սկսան, և ապա զՊորփիւրն, զ«Ստորոգութիւն», զ«Պերիարմենիասն», զ«Աշխարհացն», զ«Գովելին»[132] զկնի սոցա ամենեցուն զամենայն ազգայ տօմարսն:

Եւ ի ղրաւ այսմ ամենայնի, զոր դաս առաց Մելքիսէդ վարդապետն աշակերտեալ եղբարցն, յայնժամ մեծաւ յնծութեամբ և բերկրեալ հոգւով համբարձեալ զձեռս իւր յերկինս սկսաւ գոհանալ զԱստուծոյ՝ և փառաւորէր և շնորհս խոստովանէր զՏեառնէ, և ասէր աշակերտեալ եղբարցն. «Ոչ այլ ինչ խոհումն կամ մտածութիւն գոյր ի սիրտ իմ, բայց միայն վասն իմասութեանս այսմիկ, զոր բազում և անթուելի չարակրութեամբ հազիւ թէ, գտի, և այն ևս շնորհելովն Տեառն, երկնչէի թէ առանց ումեք ուսուցանելոյ մեռանէի, և այս պանծալի և չքնաղ գիտութիւնս ընդ իս ի հող մտեալ ամփոփիւր. բայց արդ՝ որովհետև դաս առաց ձեզ, և ըմբռնեալեայն ի Տեառնէ զարծաթ բանին արկի ի սեղանաւորս* այսուհետև փոխանակ տրամութեան՝ ունիմ մխիթարութիւն, զի թէպէտ ես մեռանիմ, այլ սերմանեալն առ ձեզ բան Տեառն մնայ յաշխարհի. և զոր ինչ ես յամս հնգետասան, և այլ աւելի, մեծաւ տաժանմամբ հազիւ թէ կարացի գտանել, արդ՝ հեշտ և դիւրին յամիս ութ ձեզ ընծեռեցի: Բայց խնդրեմ ի ձէնջ, եղբարք իմ սիրելեալք ի Տէր, որպէս պատուիրեցին մեզ նախնի վարդապետքն մեր կատակ արարեալ և հարկ եդեալ ի վերայ մեր, նոցին նման և ես այսօր ձեզ պատուիրեմ, և զնոյն հարկ դնեմ ի վերայ ձեր, զի մի՛ թուլանայցէք՝ և մի՛ տայցէք հանգիստ աչաց կամ նինջ արտեանաց, այլ բուռն առեալ զշաւիղս իմասատութեանս այսմիկ, և յաւուրս կենաց ձերոց անդուլ և անդադար աշխատեցէք ի վերայ սորին մինչև ցօր վախճանի ձերոյ: Եւ ես յուսամ ի սուրբ Հոգին Աստուած, յաննախանձ պարգևատուն, զի բազմապատիկ առաւելեալ արդիւնաւորեսցէ զձեզ

* *Համմ. Մատթ., ԻԵ, 27*

1 Ա. *գիրսն* Ա. *հոգեալք*
3 Ա. *զարտաքին գիրսն* ՐԳԴ *զարտաքին գիրքն*
6 Ա. *զդաս*
7-8 Ա. *չիք զբնրականութիւնն դաս առին, զկնի նորա*
8 ՐԳԱ *չիք սկսան, և ապա*
10 Ա. *ամենից ազգաց զտոմարսն*
11 Ա. *զորս*
12 ԱԴ *չիք յայնժամ*
12-13 Ա. *բերկրելով*
14 Ա. *զշնորհս*
16 Ա. *այսորիկ*
17 ԱԴ *չիք թէ*
21 ԱԴԼ *սեղանաւորս*
22 Ա. *զմխիթարութիւն*
24 ԱԴ *չիք թէ*
25 ԳԱ *ութն*
26 ԱԴ *նախնիք*
27 Ա. *զկատակ... զհարկ*
28 ՐԳԱ *հարկն*
29 Ա. *զհանգիստ... զնինջ*
30 Ա. *այսորիկ*
31 Ա. *աշխատեցարուք* ՐԳԱ *աշխատիցէք* ԱՐԳԱ *յօր փխ ցօր*
31-32 Գ *վաղչանի*

շնորհօք քան զմեզ, և զօր ինչ պարգևեսցէ ձեզ, աննախանձաբար ուսուցէք այլոց խնդրողաց՝ ով ոք և իցէ»։

Յետ այսորիկ առնաւ ի մահիճս հիւանդութեան Մելքիսէթ վարդապետս, քանզի վասն առաջին վշտամբեր ճգնութեանցն, զոր ի լմայ անապատին դիմակայեալ տեսեալ էր ցրտոյ և սառնամանեաց ձմերայնոյ. ցուրտ քամի ունակացեալ էր ի մարմնոջ նորա, յորմէ պատճառէ ստէպ ստէպ հիւանդանայր. յայն սակս հառնեցուցեալ եղբարքն զՄելքիսէթ վարդապետն, և բերին ի վերայ նորա բժիշկ, զի թերևս բժշկական դեղօք փարատեսցէ զցուրտն ի նմանէ. իսկ բժշկին անհմուտ դոլով՝ յոլովագոյն ի գործ էարկ զջերմ դեղն ի մարմին նորա, յորմէ պատճառէ չորացեալ խշկեցան ամենայն մասունք ներսին փորոտեաց նորա. քանզի ուժգին ջերմութիւն դեղոյն այրեաց զմասունս ներքին անդամոց նորա, զսիրտ, զլեարդ, և զթոք, և զայլ մասունս, որով հիւծեալ մաշեցաւ ամենայն միսք անդամոցն, և այնու հիւանդութեամբ վճարեաց զկեանս զայս, և գնաց առ վերին իմաստութիւնն՝ ի Տէրն Քրիստոս։

Եւ եղև վախճան բազմաշխատ վարդապետիս Մելքիսէթի յերևան քաղաքի, ի վանս դամբարանի սրբոյ առաքելոյն Անանիայի, և տարեալ զնա ի հանդիստն հասարակաց՝ ի բլուրն, զոր անուանեն Կոզեռ. զի վասն զերեզմանի Կոզեռ վարդապետին, որ անդ է՝ այնպէս կոչեն զբլուրն, և անդ մերձ զերեզմանի Կոզեռ վարդապետին պատրաստեցին հանդիստ, և անդ հանգուցին զպատուական և զարբանունդ նշխարս մարմնոյ նորա, և գրեցին զանունն ի վերայ տապանին. և եղև վախճան սորին ի ՈՀ[133]. Թուականիս մերում։ Եւ ի սկիզբն ձառիս զոր ի կարգս վարդապետացն յիշեցաք զԳաւառացի Բարսեղ վարդապետն, և սորին աշակերտ Մոկացի Բնղլու Ներսէսն, և սորին աշակերտ Երևանցի Մելքիսէթն ի Վժան գեղջէ. այն Մելքիսէթն այս է՝ զորոյ զպատմութիւնն ճառեցաք. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի, և աղօթիւք նորա Տէր մեզ ողորմեսցի. ամէն։

Իսկ այնք եղբարք՝ որք միաբանեցան և դաս առին զարտաքինն ի Մելքիսէթ վարդապետէն, թէպէտ և ամենայն ոք ջանաց և աշխատեցաւ և կարդաց ըստ իւրում կարի, բայց մի ոմն ի նոցանէ Սիմէօն[134] անուամբ աբեղայ, նորոգ երիտասարդ, որ էր աղգաւ Ջուղայեցի, որք այժմ բնակեալ են ի Սպահան քաղաքի. այս Սիմէօնս յոյժ առաւելա-

4 Ա. *առաջնոց* Ա *վշտամբերից*
8-9 Ա. *բժշկականօք*
10 ԳԴԵ *զջերմն*
11 ԲԳԴ *խշկեցաւ* Ա. *ամենեքեան* Ա. *ներսին*
14 Ա. *մաշեցաւ ամենայն միս* ԲԳԴ *մաշեցաւ ամենայն միսք*
15-16 Դ *չիք և գնաց առ վերին իմաստութիւն՝ ի Տէրն Քրիստոս*
17 Դ *չիք Եւ եղև*
19 Ա. *Կոզեռն*
20 Ա. *Կոզռան*
21 Ա. *Կոզռան*
22 Ա. *զհանդիստ*
24 Ա. *մերոյ*
25 Ա. *զգաւառցի*
26 ԲԳԴ *Ներսէս*
27 ԲԳԴ *Մելքիսէթ*
28 ԲՆ *զպատմութիւն*
28-29 ԱԴ *չիք որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի, և աղօթիւք նորա տէր մեզ ողորմեսցի. ամէն։*
31 Ա. *ի Մելքիսէթէ*

ցոյց: վասն զի այն զոր կանխաւ պատմեցաք, թէ աշակերտքն Մովսէս կաթուղիկոսի գնացեալ յԻլով քաղաք պատահեցան հակաճառութեան Ֆռանկաց, ընդ որս էր և այս տէր Սիմէօնս. որոյ վասն և այժմ ի ժամանակս առնլոյ դասին կարի յօժարութեամբ և ջերմեռանդ սրտիւ և պատքատուչոր կատարեալ առնոյր զդասն՝ և յարաժամ կարդայր: Իբրև վերջ եղև դասին՝ ելեալ տէր Սիմէօնս յէջմիածնէ գնաց ի Սպահան քաղաք. քանզի տէր Սիմէօնիս վարդապետն, որ էր Կեսարացի Խաչատուր[136] վարդապետն, ուր յոլով հարանց վարք և ժամագիրք տպագրեաց, այս Խաչատուր վարդապետս, ի Մովսէս կաթուղիկոսէն առաջնորդ կարգեալ էր Ջուղայեցւոց ժողովրդեանն, որք ի Սպահան քաղաքին էին: Յետ աւարտման դասին էառ զտէր Սիմէօնն և գնաց ի Սպահան քաղաք ի վանս իւր՝ զոր ի մէջ Ջուղայեցւոցն շինեալ էին՝ և Խաչատուր վարդապետս զամենայն աշակերտս իւր ի մարմնական գործոց յապահով պահէր, վասն որոյ և աշակերտքն միշտ և հանապազ ի կարդալ և յընթեռնուլ կային: Եւ մանաւանդ ի վերայ տէր Սիմէօնիս առաւել գութ և խնամ ունէր, որոյ խնամարկութեամբն տէր Սիմէօնս կարի առաւել աճեցոյց զուսումն իւր, զի զարտաքինն՝ զոր դաս էր առնալ՝ յառաջ երեր և սկսաւ կարդալ կարգաւ, և մտախոհ լինէր զցայգ և զկնի անդուլ և անդադար տքնութեամբ, ոչ տալով հանգիստ աչաց, և ոչ ննջ արտևանաց: Այլ և ինքն տէր Սիմէօնս ի բնէ ունէր միտս սուր և ծննդական, և այս արտաքին իմաստութեանս կարդալն ևս պատահեցաւ նմա ի տիս երիտասարդական հասակին՝ որ առնու և պահէ և աճեցնէ. և ջան, և երկն, և վաստակն անչափ էր, զոր կրէր յընթեռնուլն, զի բերանն յընթերցմանէ, և միտքն ի խոկմանէ ոչ կայր պարապ ամենևին, ի տան, ի ժամատեղ և ի դուրս՝ ուր և լինէր:

Եւ զամս երիս ի յընթերցումն և ի խոկումն կապեալ ունէր զինքն բազում ջանիւ և յօժարութեամբ, այլ և մեծաւ պաղատանօք և արտասուօք խնդրէր ի հնշտալուր Տեառնէ, զի արժանի արասցէ զինքն այսպիսւոյ չքնաղ և պանծալի և գերադրական իմաստութեան. զի իբր զմոլի իմն առայն իմաստութիւն բևեռեալ ունէր զտարփումն ցանկական մասին:

Եւ ի բազմաժամանակեայ և ի մշտաջան աշխատութենէն, յաւելաւ տևսական իմաստութիւն ի միտս սորա շնորհօքն սրբոյ Հոգւոյն Աս-

1-2 Ա. *Մօսէսի* Դե *Մովսէսի*
4-5 Ա. *ջերմեռանդիւ.... պատքատուչորիւ*
6 ՐԳե *յէջմիածնայ և գնաց Իսպա(հան)*
8 Ա. *գհոլով* Ա. *վարս և գժամագիրս*
9 Ա. *ի Մօսէսէ*
10 Ս *Ջուղայեցոց*
12 ԱԴ *ջուղայեցւոց Է. չիմ էին*
13-14 Ա. *զամենեսեան... ի մարմնականաց գործոց*
15 Ա. *տեառն*
16 Ա. *զգութ և զխնամ*
19 Ա. *անդադարիւ Գ. լինել*
20 ԱԴ *զհանգիստ* Ա. *զննջ*
21 Ա. *զմիտս* Ա. *սուրս և ծննդականս*
22 Ա. *Երիտասարդականի*
23 ԱԴ *աճեցուցանէ*
24 Գ *յընթերցմանէ*
28 Ա. *բազմաւ* Ա. *մեծաւք*
29 Ս. *հնշտալրոյ*
29-30 ՐԳՍ *այնպիսւոյ*
30 Ա. *չքնաղի և պանծալւոյ և գերադրականի* ԱԴ *իմաստութիւնն*
31-32 Ա. *ցանկականի*
33 Ա. *բազմաժամանակէէ և մշտաջանէ*
34 Ս. *շնորհօքն*

աւուծոյ, որ հանապազ զարդարէ զեկեղեցիս Քրիստոսի ըստ բազմապան շնորհաց իւրոց. որպէս ուսուցանէ նորին առաքեալն սուրբն Պօղոս, թէ ումեմն ի Հոգւոյն տուեալ է բան իմաստութեան, այլում՝ բան գիտութեան, և այլն: Արդ նոյն սուրբ Հոգին պարգեւեաց սմա բան վճիտ և վերապանձ և շնորհալի ի քարոզութիւնս, ի հակաճառութիւնս, և մեկնութիւնս Աստուածաշունչ գրոց, կամ արտաքին գրոց, ի բնական քննութիւնս, և ի փիլիսոփայական արուեստս, անհամեմատ և դեր ի վերոյ եղև քան զամենայն վարդապետս ժամանակիս այսր, որ ամենեքեան խոնարհեալ առ նա ուսանէին ի նմանէ դասս և այլ կերպիւ: Եւ վասն զի ի մայրաքաղաքն ի Սպահան գոլով ասացաւ, որ բուն մայրաքաղաքն է Պարսից, յորմէ ազդէ արք փիլիսոփայք գային և հարցաքննութիւն և հակառաճութիւն առնէին. և աւեր Սիմէօնս զամենայն եկողս հիացուցանէր փիլիսոփայական արուեստիւ և բնական քննութեամբ՝ տալով նոցա պատասխանիս: Եւ ամենայն նախապատիւ արանց Ջուղայեցւոց տեսանելով զարժանաւորութիւն սորա՝ վկայեցին առաջի նաչատուր վարդապետին, այլ և իւր իսկ նաչատուր վարդապետին տեսանելով զնա ի շնորհս աստուածայինս, կոչեաց զնա, յիս գերադոյն պատիւ և յաստիճան, և եւս սմա գաւազան վարդապետութեան, զոր յորդառատ բանիւ քարոզութենանն բերկրեալ զուարճացուցանէր զմիտս լսողացն, և ոչ ունէր կարիս քարոզգրքի կամ հարցնատետի, այլ ա՛ռ ձեռն պատրաստ զինչ և պատշաճ պիտոյանայր ժամուն, բնաբան ինչ առեալ յԱստուածաշունչ գրոց. զեկեղեցիկ և կարգաւոր և պատշաճաւոր շարագրութեամբ յօրինեալ յարդարէր զբանն, ի փառս Աստուծոյ Հոգւոյն տուողին շնորհացն: Եւ քանզի յար և հանապազ վխտումն մտացն ունէր ի գիտութիւնս և յիմաստութիւնս ի խցի և յարտաքոյ և ի ժամատեղ, և ասէր ինքն Սիմէօն վարդապետս, թէ «Յաւուր միում կայի յեկեղեցին կանգուն, և բանս ինչ գրոց խոկայի, և քուն ծանրացեալ ի վերայ իմ կանգուն կալով ննջէի և ոչ գիտէի, տեսի թէ ի վերայ բեմին կայր կին ոմն որպէս թագուհի և շքեղ փառօք. և ունէր ի ձեռին իւրում գիրք մի, որ թուէր ինձ թէ Աստուածաշունչ իցէ. ձգեաց կինն զգիրքն ի գիրկս իմ և ասաց. «Առ զդա ի քեզ», ընդ նմին և ազդեցաւ ինձ թէ այն կինն Աստուածածինն էր: Եւ այնուհետև յա-*

* Ա. *Կորնթ., ԺԲ, 8*

1-2 Ս. *բազմազանից*
3 Դե *այլումն*
4 Ա. *զբան*
5 Գ *գերապանձ*
6 Ա. *աստուածաշնչոյ... արտաքնոց*
8 Ս. *զամենեսեան*
Ս. *այսորիկ, որք ՐԴԴ այս փխ այսր*
9 Ս. *այլով*
11-12 Ա. *զհարցաքննութիւն և զհակաճառութիւն*
12 Ս. *զամենեսեան*
13 Ա. *փիլիսոփայականաւ... բնականաւ*
14 Ս. *զպատասխանի Ս. ամենից նախապատուաց*
16 Ա. *նաչատրոյ ԱՐ նաչատրոյ վարդապետի*
17 Ն *գոչեաց*
18 Դե *աստիճան* Ս. *զգաւազան*
19 Ս. *զի փխ զոր* Ա. *յորդառատիւ*
ՐԴե *քարոզութեանմբ* Գ *քարոզութեան*
20 Ս. *զկարիս*
22 Ս. *յԱստուածաշնչոց*
22 23 Ս. *զեկեղեցիկ և կարգաւորիւ և պատշաճաւորիւ*
23 ԲՆ *շարագրութեամբ*
24-5 (նաչօրդ էջում) ԱԴ *չիմ եւ քանզի .. եւ ինձ զայս*
27 Դ *կայիս*
28 ՐԴԴե *քունն*

և կոչեն զնա ի վեր քան զբնականս, որ է ինքն Աստուածաբանութիւն դիրք, զի աստուածաբանութիւն է ամենայն բանք նորա, և է ինքն պրակք երեսուն և վեց։ Զորրորդն դիրք մի է՝ բանք առակաւորք[142], որ զվարուց և զկենցաղավարութենէ մարդկան պատմէ, իբր թէ օրինակ ամենայն մարդկան, որոյ մակագրութիւնն էր լատին լեզուաւն, «Հայելի վարուց». և յորժամ թարգմանեցին ի Հայոց լեզուս, այլուի զնոյն մակագրութիւնն մակագրեցին «Հայելի վարուց». և յայժ համեմ և աւրհ են բանք այս գրոյս։

Արդ՝ մինչև ցարդ, այսքան արդիւնս արար սա յեկեղեցիս Հայոց. խնդրեցուք[143] ի բարեպարգև Տեառնէ Աստուծոյ, զի ընդ երկար կենօք պահեսցէ զսա թարց իմիք վտանգի. զի այլ ևս արդիւնս յաւելցէ յաղգս և զեկեղեցիս Հայոց։

Այլ և պարտ վարկանիմ մեզ ականատես եղելոցս ոչ զանց առնել և այլուիք ևս շնորհալից արամբք. քէպէտ և են աշխարհականք, այլ զի են հաւատով քրիստոնեայք և յաղգէս Հայոց, որք են պարծանք և օգուտ մերում ազգի, որոց անուանքն են վարպետ Մինաս[144] և վարդապետ Յակոբջան[145], և են սոքա երկոքեանս ի ցեղէն Ջուղայեցւոց։

Այս վարպետ Մինասս ստացաւ իւր արուեստ պատկերահանութեան և ծաղկադարութեան. քանզի ի տիս տղայութեան իւրոյ ի պատճառէ իմեքէ եղև ամին գնալ ի քաղաքն Բէրիայ, որ է Հալապ. և անդ եդիտ զայր ոմն պատկերահան վարդապետ, որ էր ազգաւ Ֆռանկ, աշակերտեցաւ Ֆռանկ վարպետին և ուսաւ ի նմանէ. և յետ ուսանելոյն ինքնագլուխ եղև. և եկեալ ի քաղաքն Սպահան բնակեցաւ ի տան իւրում, որ էր ի մէջ Ջուղայեցւոց, և գործէր զարուեստն իւր զպատկերահանութեան։ Եւ վասն կարի առաւել վայելչակերտ դեղեցկատիպ չքնաղատես յօրինուածոյ արուեստին, մեծամեծքն Ջուղայեցւոց տանէին ի ծաղկել և ի պատկերագրել զյարկս տպարանից և տանց իւրեանց. այսպէս և խոջայ Նազարի որդի խոջայ Սարգիսն տարեալ ի տուն իւր առ ի զարդարել զտպարանս իւր ծաղկօք և պատկերօք։ Եւ մինչ տակաւին ոչ էր աւարտեալ զտունսն ի ծաղկելոյն, պատահեցաւ զի թագաւորն Պարսից Շահաբբասի եկն ի տուն խոջայ Սարգիսին, որոյ նստելով իբրև զննեալ հայէր ի ծաղիկս և ի պատկերս՝ զոր նկարեալ կայր տեսանէր զի չքնաղ և գեղապանծ և յոյժ նմանակի կերպարբեալք են ամենեքեան. սկսաւ հարցանել թագաւորն ի խոջայ Սարգիսէն վասն նկարիչ վարպետին, թէ ուստի իցէ, և նա ասաց. «ի մերմէ ժողովրդենէս և ի Հայոց ազգէս է, և ահաւասիկ այժմ կայն իմն տան ի գործի կայ», զոր և հրամայեաց թագաւորն կոչել զնա. և իբրև եկն՝ հարցեալ թագաւորն տեղեկացաւ ամենայն որպիսութենանցն։ Եւ անդէն ի նմին խրախութենան՝ որ բազմեալ կային, հրա-

1 ԱՌ չիք *ինքն*
2 Ա. *բանք*
3 ԱՌԻ չիք *մի է*
5 Բ *մակագրութիւն* Ա. *լատինականաւ*
6 Ի *լեզու* ԲԳԴՆ *այլուի*
7 ԲԴՆ *մակագրութիւն*
8 Ա. *այսոսիկ դրոյ* Դ չիք *այս*
9 Ա. *զարդիւնս*
10-20 Ադ չիք *խնդրեսցուք... սմին գնալ*
11 ԲԳԴՆ *վտանգի*
20-6 (ճաջորդ էջում) ԱՌ չիք *ի քաղաքն ... այլայլել*
36 Ի *Աղգէս փխ ազգէս է*

սպառնացի յաղդէս Հայոց, զոր օրինակ յանցեալ ժամանակս և ի մերս՝ էր լեալ, որպէս պատմեցաք, այս Սիմէօն վարդապետիս արարեալն՝ զոր անուանեաց «Տրամաբանութիւն», առանց ուսուցանողի՝ եթէ ոք կարդայ կարէ դիւրաւ հասկանալ և ի վերայ հասանիլ, և ապա սովաւ յարտաքին գիրքն ձեռնարկել:

Այլ և զդիրքն Պրոկղի իմաստասիրի[137], զոր ի Վրաց լեզուէն թարգմանեալ է ի մեր լեզուս, այլ ոմն նախապոյն եղեալ Սիմէօն անուամբ քահանայ, և այս Սիմէօն վարդապետս զայն դիրքն ևս ուղղեաց: Վասն զի առաջին թարգմանութիւնն աշխատութիւնս բազում տայր կարդացողին, զի հոլովք անուանցն և խոնարհմունք բայիցն, և շարադրութիւնք բառիցն, ոչ էր ըստ պատշաճին, և ըստ քերականն արհեստին, յաղագս որոյ և միտք բանին ընդ նմին այլայլիւր. այլ և յոլով տեղիս կրկնաբանութիւնք կային մերոյ բանի, և ընթերցողն բազում աշխատութիւնս կրէր և օգուտս սակաւ գտանէր: Իսկ սա ըստ քերականն արհեստին զամենայն ուղղեալ յարդարեաց, որ դիւրաւ իմանի կարդացողին, և բազում օգտութիւն շնորհէ մտաց մարդոյ:

Յետ այսոցիկ ձեռն էարկ «Հոդեաց պրքին»[137], զի և զնա ևս ուղղեալ դիւրացուսցէ, և մինչդեռ նոր սկսեալ էր գայն՝ քարոզութեան աղագաւ եղեալ գնաց յաշխարհն Յունաց, և հասս ի քաղաքն Եւդոկիայ՝ որ այժմ ասի Թօխաթ. և անդէն տկարացաւ ըստ հիւծական բնութեանս մարդկան, և այնու հիւանդութեամբն վախճանեցաւ՝ և անդէն թաղեցաւ. և սակաւիկն նորա յաղգէս Հայոց՝ եղև սուտ անմխիթար և տրտմութիւն անփարատելի ամենայն Հայոց, և մանաւանդ ընկերաց և աշակերտելոց նորա. զոր այժմ հոգւոց հանելով չիշն և խնդրեն և ոչ գտանեն:

Եւ եղև վախճան սորա ի մերում թուականիս ՌՃՂ ի Փետրվար ամսոյ քսան և հօթն, յաղուհացից պահոցն. որոյ չիշատակն օրհնութեամբ եղիցի և աղօթիւք նորա Տէր մեզ ողորմեսցի. ամէն:

Զկնի սոցին պատմեսցուք զայլոյ ումեմն զմաքրակենցաղ զառնն զարդիւնաւորութիւնն, որոյ անունն Ստեփաննոս վարդապետ[138] յորջորջիւր:

Որ էր ինքն ի մայրաքաղաքէն Իլովայ և յաղգէն Հայոց, յազատ և ի փարթամ տանէ, բարեպաշտ ծնողաց զաւակ, որ ի տիս տղայութեան իւրոյ վարժեցաւ ի դպրատունս Իլովացւոց՝ գրով և լեզուաւն Հա-

4 ԲԳԵ *հասանել*
7 Ա.Լ: *եղեալ*
9 Ս. *գաշխատութիւնս*
11 Ա. *քերականի*
12 Լ: *և ևս փխ և*
13 Ա. *զբազում*
14 Ս. *զօգուտս* ԳԵ *օգուտ* Ա. *քերականի*
14-15 ԲԳԵ *արհեստի*
16 ԱԴ *զբազում*
17 Ս. *չիք և* Գ *գիրքին*
18 ԱԳԵ *յայն*
19 Լ: *Եւդոկիայ* ԲԳԴԵ *Յեւդոկիայ*
20 Ա.Դ *տկարացեալ*
20-21 Ա.Դ *չիք ըստ հիւծական ... հիւանդութեամբն*
22-25 Ա.Դ *չիք և սակաւիկն ... ոչ գտանեն*
26 Ս. *փետրվարի*
27 ԲԳԵ *պահոց*
27-28 Ա.Դ *չիք որոյ... ամէն*
29 Ս. *առնն*
32 33 Ս. *յազատէ և իմարթամէ... բարեպաշտից*

ասինացւոց, և ուսաւ զարուեստ քերականութեան և զարտաքին գիրս փիլիսոփայից։

Եւ ի ժամանակին՝ յորում Նիկօլ եպիսկոպոսն Իլովայ նեղէր և վտանդէր զՀայազուն ժողովուրդն՝ որ յԻլով էին, ծնողք Ստեփաննոսի՝ վասն բարեպաշտութեան և վասն ուղղափառութեան, հանեալ զսա յԻլովայ՝ առաքեցին ի սուրբ Աթոռն Էջմիածին ի ժամանակս Փիլիպպոս կաթուղիկոսին։ Եւ յորժամ հասս Ստեփաննոս յէջմիածին, ուսաւ պլեղու և գիր Հայոց, և ի բերան էառ վարդմոս և զշարական, և զայլ եկեղեցական ուսմունս։

Այնուհետև սկսաւ ընթեռնուլ զԱստուածաշունչ գիրս և զերկոտասան վարդապետաց, և զփիլիսոփայից. և վասն զի յառաջմէ գիտէր պլեղու և զգիրս Լատինացւոց, յետոյ ուսաւ և զմերս, և զերկոսեանն ատ միմեանս համեմատելով խոհայր ի նոյնն և մտավարժէր, վասն որոյ առաւելաւ քան զայլ ընկերս իւր. այլ և էր մտօքն սուր և ծնընդական, առնող և պահող և միշտ ընթերցող. և վարուքն մաքրակենցաղ՝ և պարկեշտ։ Զորոյ զուսումն և զմաքրութիւն վարուց տեսանելով ամենայն վարդապետաց՝ վկայեցին առաջի Փիլիպպոս կաթուղիկոսին. այլ և ինքեան իսկ տեառն Փիլիպպոսի տեսանելով զարժանաւորութիւն նորա, կոչեաց յես դերադրական ի փառս, զի յետ օրհնելոյ զնա կուսակրօն քահանայ, եւ նմա իշխանութիւն վարդապետական, ասելով. «Բարեկամ ի վեր մատիր»՝ ըստ տէրունական առակին։*

Եւ ինքն Ստեփաննոս վարդապետ օր ըստ օրէ վարժէր և կրթէր զանձն ուսմամբ, և պարկեշտ վարուք. վասն որոյ ընկալաւ զշնորհս ի Հոգւոյն սրբոյ, և ի նորին պարգեւացն՝ թարգմանեաց չորս գիրք ի Լատին գրոյ և ի լեզուէ՝ ի Հայ գիր և ի լեզու։ Որոց մինն է Յօսէպոս պատմագիրքն[139], բայց ոչ զբովանդակն, այլ զայն միայն, զոր ի վերայ Երուսաղէմ քաղաքին, և Հրէից ազգին պատերազմունք յարեան, որ է վեց հատոր։ Եւ երկրորդ՝ Դիոնէսիոսի Արիսպագացւոյ գիրքն[140]. զի թէպէտ առաջին թարգմանեալն Ստեփաննոսի Սիւնեցւոյն գոյր ի մէջ մեր, այն համառօտախօս և դժուարհասկանալի էր. իսկ սորայս թարգմանեալն այլուի նոյն ինքն է. բայց դիւրահասկանալի է՝ որ ոչինչ մնայ անհաս յընթերցողէն, զի մեկնութիւն յաճախ է և դիւրահաս։ Եւ երրորդ գիրք մի է, որոյ անունն է «Գիրք պատճառաց»[141], այլ

---

* Ղուկաս, ԺԴ, 10

1-2 Ա.Դ չիմ *քերականութեան... փիլիսոյայից*
4 Ս. ԲԳԴՆ *վտանկէր* Ա.Դ չիմ *որ յԻլով էին*
5 Ա.Դ չիմ *վասն*
6 Ր *յէջմիածին*
7 Գ *Ստեփաննոսս* Ն *Ստեփաննոսս*
9 Ս. *զուսմունս*
10-11 Ա. *զերկոտասանից*
13 Ս. *մտավարժիւր*
16 Ս. *որոյ*
17 Ա.Դ *Փիլիպպոսի* Գն *Փիլիպոսի*Ս. *ամենից*
17-18 Ն *կաթուղիկոսի*
18 Ա.Դ *Փիլիպոսի* Ն *Փիլիպոսի*
19 ԲԳՆ *օրհնելոյն*
20 Ս. *դիշխանութիւն*
21 Ա.Դ չիմ *ասելով... առակին*
23 Ս. *պարկեշտիւք* ԲԳՆ *շնորհս*
24 Դն *պարգեւաց*
24-25 Ա *զչորս գիրս ի լատինականէ գրէ*
25 Ս. *գիր և լեզու* ԲԳԴՆ *գրէ*
26 Ա *պատմագիրն... բովանդակն* Գ *որ փխ զոր*
27 Ա *որ... էրուսաղէմի* Ր *էրուսաղէմայ* Գ
31 Ա.Դ և *նոյն է փխ այլուի նոյն ինքն է* ԲԳՆ *այլուի*
32 ԲԳԴՆ *մեկնութիւնն*
33 Ա.Դ չիմ *մի է*

և կոչեն զնա ի վեր քան զբնականս, որ է ինքն Աստուածաբանութիւն դիրք, զի աստուածաբանութիւն է ամենայն բանք նորա, և է ինքն պրակք երեսուն և վեց։ Չորրորդն գիրք մի է՝ բանք առակաւորք[142], որ զվարուց և զկենցաղավարութենէ մարդկան պատմէ, իբր թէ օրինակ ամենայն մարդկան, որոյ մակագրութիւնն էր լատին լեզուաւն, «Հայելի վարուց». և յորժամ թարգմանեցին ի Հայոց լեզուս, այլուի զնոյն մակագրութիւնն մակագրեցին «Հայելի վարուց». և յայժ համով և ախորժ են բանք այս գրոյս։

Արդ՝ մինչև ցարդ, այսքան արդիւնս արար սա յեկեղեցիս Հայոց. խնդրեցուք[143] ի բարեպարգև Տեառնէ Աստուծոյ, զի ընդ երկար կենօք պահեսցէ զսա թարց իմիք վտանգի. զի այլ ևս արդիւնս յաւելցէ յաղագս և զեկեղեցիս Հայոց։

Այլ և պարտ վարկանիմ մեզ ականատես եղելոցս ոչ զանց առնել և այլուիք ևս շնորհալից արամբք. քէպէտ և են աշխարհականք, այլ զի են հաւատով քրիստոնեայք և յաղթէս Հայոց, որք են պարծանք և օգուտ մերում ազգի, որոց անուանքն են վարպետ Մինաս[144] և վարդապետ Յակոբջան[145], և են սոքա երկոքեանս ի ցեղէն Ջուղայեցւոց։

Այս վարպետ Մինասս ստացաւ իւր արուեստ պատկերահանութեան և ծաղկադարութեան. քանզի ի տիս տղայութեան իւրոյ ի պատճառէ իմեքէ եղև ամին գնալ ի քաղաքն Բէրիայ, որ է Հալապ. և անդ եդիտ զայր ոմն պատկերահան վարդապետ, որ էր ազգաւ Ֆռանկ, աշակերտեցաւ Ֆռանկ վարպետին և ուսաւ ի նմանէ. և յետ ուսանելոյն ինքնագլուխ եղև. և եկեալ ի քաղաքն Սպահան բնակեցաւ ի տան իւրում, որ էր ի մէջ Ջուղայեցւոց, և գործէր զարուեստն իւր զպատկերահանութեան։ Եւ վասն կարի առաւել վայելչակերտ դեղեցկատիպ չքնաղատես յօրինուածոյ արուեստին, մեծամեծքն Ջուղայեցւոց տանէին ի ծաղկել և ի պատկերագրել զյարկս տպարանից և տանց իւրեանց. այսպէս և խոջայ Նազարի որդի խոջայ Սարգիսն տարեալ ի տուն իւր առ ի զարդարել զտպարանս իւր ծաղկօք և պատկերօք։ Եւ մինչ տակաւին ոչ էր աւարտեալ զտունսն ի ծաղկելոյն, պատահեցաւ զի թագաւորն Պարսից Շահաբբասի եկն ի տուն խոջայ Սարգիսին, որոյ նստելով իբրև զննեալ հայէր ի ծաղիկս և ի պատկերս՝ զոր նկարեալ կայր տեսանէր զի չքնաղ և գեղապանծ և յոյժ նմանակի կերպարեալք են ամենեքեան. սկսաւ հարցանել թագաւորն ի խոջայ Սարգիսէն վասն նկարիչ վարպետին, թէ ուստի իցէ, և նա ասաց. «ի մերմէ ժողովրդենէս և ի Հայոց ազգէս է, և ահաւասիկ այժմ կայն իմն տան ի գործի կայ», զոր և հրամայեաց թագաւորն կոչել զնա. և իբրև եկն՝ հարցեալ թագաւորն տեղեկացաւ ամենայն որպիսութենանցն։ Եւ անդէն ի նմին իրախութենան՝ որ բազմեալ կային, հրա-

1 ԱՌ չիք *ինքն*
2 Ա *բանք*
3 ԱՌԻ չիք *մի է*
5 Բ *մակագրութիւն* Ա *լատինականաւ*
6 Ի *լեզու* ԲԳԴՆ *այլուի*
7 ԲԴՆ *մակագրութիւն*
8 Ա *այսոսիկ գրոյ* Դ չիք *այս*
9 Ա *զարդիւնս*
10-20 Ադ չիք *խնդրեսցուք... սմին գնալ*
11 ԲԳԴՆ *վտանգի*
20-6 (ճաջորդ էջում) ԱՌ չիք *ի քաղաքն ... այլայլել*
36 Ի *Աղգէս փխ ազգէս է*

մայնաց արքայ՝ Մինաս վարպետին՝ և եցոյց ի նախարարաց իւրոց զոմն՝ որոյ անունն էր Զրաղ խան. որոյ կերպարանքն էին յոյժ անդեղ և դժպատհ, և ասաց. «Զպատկերս սորա այժմ աստէն նստեալ նկարեա», վասն իւրեանց ղբօսանաց ծաղու և խրախութեան: Իսկ Զրաղ խան իբրև նստաւ ի պատրաստ առնելոյ նկարն զպատկերն իւր. վասն որոյ սկսաւ թէքմէքիլ զաչս և զբերանն և այլայլել զկերպարանն և շրջմրջել կողմէ ի կողմն, զի թերևս նկարեալ պատկերն ոչ իցէ ամենևին համանման: Բայց Մինաս վարպետն ըստ հրամանաց թագաւորին առ ժամայն ի նմին տեղւոջ ի մէջ խրախութեանն նկարեաց զասացեալոյ զառնն զպատկերն, որ այնքան յար և նման էր համեմատութեամբ, որ ընդ թագաւորին ամենևքեան ի հանդիսին եղեալքն մեծաւ հիացմամբ զարմացեալք եղեն վասն առաւել նմանութեանն, և փառս վեր առաքէին Աստուծոյ՝ տուողին այնպիսւոյ շնորհաց մարդկան: Եւ յայնմ օրէ և առ յապայ թագաւորն և նախարարքն իւր ոչ թողին զնա ի ձեռաց, այլ հանապազ ի տունս իւրեանց պահէին վասն նկարակերտութեան:

Եւ եղև զի թագաւորն Ռուսաց սիրոյ աղագաւ հրեշտակ խաղաղութեան առաքեաց առ Շահսէֆի Պարսից թագաւորն, և ընդ բազմազան աղերսանացն կայր հաւք մի բազայ, զոր ազգն Պարսից իւրեանց բառիւն շունդար ասեն. այլ և այլ ոմն այր, որ և նա էր յազգէն և աշխարհէն Ռուսաց, որ վասն սպասաւորութեան հաւքին եկեալ էր. այս հաւքս և սորին սպասաւոր այրն յոյժ առաւել հաճելի և ախորժ թուեցաւ կամաց Շահսէֆի թագաւորին. յաղագս որոյ թագաւորն հրամայեաց Նաղաշ Մահմատ բէկին, թէ զկերպարանս սոցա երկոցունցն նկարեա զբազային և զիւր պահող սպասաւորին, որպէս և են որ տեսանես: Եւ այս Նաղաշ Մահմատ բէկս էր ազգաւ Պարսիկ, և գլուխ ամենայն պատկերահան և նկարիչ արուեստաւորաց, և անուանի յամենայն ազգս Պարսից, որ միայն ի տան թագաւորին և մեծամեծ իշխանացն ի գործի կայր, և այս Մահմատ բէկս ի բազում աւուրս նկարեաց, բայց ոչ ըստ որակին և անդամոցն համեմատ և նման: Եւ ապա հրամայեաց արքայ՝ Մինաս վարպետին նկարել զկերպարանս բազային և զնորին սպասաւորին. և նա ըստ աստուածատուր շնորհացն ի սակաւ աւուրս նկարեաց զկերպարանս նոցա, և այնքան համեմատ՝ որ թագաւորն ինքն և ամենայն նախարարքն իւր անպատմելի հիացմամբ սքանչացեալք՝ զարմացեալք կային ի վերայ նորա. և յապաղս այնմ որ կարի առաւել հաւանեցաւ թագաւորն հրամայեաց պարգևս տալ վարպետ Մինասին տասն և երկու թումանդրամ ինամ և յոտից մինչև ցգլուխն խլզաթ. այլ և գրել ի կարգս զինուորաց թագաւորին, զի ամ յամէ տացեն նմա օլոֆայ յարքունական գանձէ, որ-

6 ԲԳԴԵ *գաչան*
6-33 ԱՓ չիՓ *զկերպարանն ... շնորհացն ի*
9 ԲԳԵ *խրախութեան*
12 ԴՆ *զարմացեալ*
12-13 ԲԳԵ *նմանութեան*
17 ԲԳԴԵ *յղուսաց*
21 ԲԳԴԵ *ըռուսաց* ԲԳԵ *յաշխարհէն*
24 Ն *երկուցն*
26 ԱՒ չիՓ *Մահմատ*
33-19 (հաջորդ էջում) ԱՓ չիՓ *սակաւ ... մտօք իւրովք*
34 Բ *նախարարք*

պէս և այլոց զինուորաց Թագաւորին. և նա վասն Քրիստոսական հաւատոց՝ հրաժարեալ էր ի զինուորութենան անուանէն և ի նորին յարդեանցն և ի մերձակալութենէ այլազգեացն, և եկեալ ի տան իւրում գործէր զարուեստն իւր։

Եւ վասն առաւել չքնաղ և նմանագիր պատկերահանութեանն՝ յոլովք ոմանք աշակերտեալ ուսան ի նմանէ. բայց ոչ ոք հաւասարեաց նմա, զի բնական ունէր շնորհս և տեսութիւն մտաց, որ յառաջադոյն զորպէսն և զհանգամանս, զորակս, և զբանակս կերպարանաց ամենայն իրաց, կերպարացուցեալ ճշգրտապէս ի միտս իւր և ապա նկարէր։ Եթէ բուսոց և տնկոց, եթէ անասնոց և գազանաց, և թէ թռչնոց և մարդոց։ Եւ թէ մարդոց՝ որոց ազգաց և իցէ, թէ Պարսից, թէ Հայոց, թէ Եբրայեցւոց, թէ Հնդկաց, թէ Ֆռանկաց, թէ Ռուսաց, թէ Վրաց, քանզի որում ազգի կերպարան, որ նկարէր, ամենևին յար և նման նկարէր. սոյնպէս և ի ներգործութիւնս և ի կիրս մարդկան, յոր և ներգործութիւնս և ի կիրս լինէր մարդն. թէ ի ծիծաղել, թէ ի բարկանալ, թէ ի տրտմութեան, թէ յարբեցութեան, թէ յօրանջել, թէ ի իրախութեան, թէ ի մարտ պատերազմի և թէ որ և իցէ կրիւք նկարէր զկերպարանս մարդոյ, որում ազգի և լինէր, ամենևին յար և նման նկարէր։ Այլ և զժամանակն կենաց մարդոյն նկատեալ մտօք իւրովք, ըստ նմին և նկարէր զդեղն և զդոյնն, և զկերպարան հասակի մարդոյ նկարէր, ըստ իւրում տրոհութեան՝ որպէս տրոհեալ զանազանին ի միմեանց, ժ ամեան; և ի ամեան, և Լ ամեան. և Խ ամեան. և յորում հասակի լինէր նախագաղափարն, այնմ հասակի յարմարեալ նմանեցուցանէր զնկարեալ պատկերն, եթէ ձիթով պատկեր, և թէ առանց ձիթոյ, և քարտիսի, ի կտաւի, ի տախտակի, ի պղնձի, ի յորմն և այլ ինչ կերպիւ յոր և պիտոյանայր։ Այլ և գրոց էր ծաղկող, զինչ և գիրք հանդիպէր՝ ոսկով և լաջվարդով ծաղկեալ զարդարէր, քանզի զամենայն մասնաւոր արհեստ, որ այսմ նկարակերտ արուեստիս հետևի, զամենայնն անթերի դիտէր։

Այլ և հմուտ էր բժշկական արուեստի, մարդկայնոց ներհակ կրից և հիւանդութեան և չորից տարերաց խառնուածոց, և դեղօրէից բնութեան և կազմելոյն. ևս առաւել սպեղանեաց կազմելոյ և զվէրս բժշկելոյ։ Եւ այլ ևս բաղում և զանազան արուեստից հմուտ դոլով սորա. վասն որոյ յիշատակի արժանի համարեալ զրիցաբ, զոր տէր Աստուածն պահեսցէ հաստատուն հաւատով քրիստոնէութեան, և անխորձ կենօք իւրովք զաւակօքն ընդ երկայն աւուրս. ամէն։

1-2 ՐԳԴԵ *հաւատոցս*
5 ՐԳՆ *պատկերահանութենան*
7 ՐԳԴԵ *շնորհք*
9 ԷԴ *ճշգրտապէս*
12 ՐԳԴԵ *ըռուսաց*
14 Ա՝ չիք *և (ներգործութիւնս)*
19-26 Ա՝ չիք *[իւ]րովք... ամեն*
21 Ա՝ *զանազանին*
22 Բ *ամեան*
23 Ա՝ *գաղափարն*
25 ԳՐԴԵ *ձիթի* ՐԴԵ *պղընձի* ՐԳԴԵ *ի յորմ*

ԳԼՈՒԽ Լ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՄԵՐՈՅ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԱՋԻՆ

Որպէս աւանդութեամբ կայ կարդ և սահման ի մէջ ազգիս Հայոց, 5 ըի հայրապետ ազգին, որ է կաթուղիկոսն յամէն երեք տարին միանդամ հանէ նուիրակ յԱթոռոյն, որ գնայ առ ամենայն ազգս Հայոց նուիրել զմեռոնն և առնու պտուրս ողորմութեան ժողովրդեանն և բերէ ի սուրբ Աթոռն: Այսպէս և մեծ հայրապետն տէր Փիլիպպոս, որ էր կաթուղիկոս սուրբ էջմիածնի՝ առաքեաց զմեր նուաստութիւնս, որ 10 էաք ձեռնասուն աշակերտ նորին, ի գործ նուիրակութեան սուրբ էջմիածնի յաշխարհն Յունաց, որ է ընդ իշխանութեամբ Օսմանցւոց: Եւ եղև հասանել մեր ի քաղաքն Ամասիայ յորում ամի էր և թուականն մեր ՌՂԴ. պատահեցաւ անդ լինել և Սեբաստացի Ներսէս վարդապետին, որ յետոյ եղև կաթուղիկոս Սսայ: Եւ որ ի բազում աւուրս 15 ի կարգս ղրուցատրութեան, յաւուր միում ասաց Ներսէս վարդապետն առ մեզ. «Յորժամ օրհնէք զմեռոն՝ զո՞ր սրբութիւն բերէք ի վերայ». և մեք ասացաք. «զԱջն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, և զԱջն Թադէոսի սրբոյ առաքելոյն. և սուրբ նշանն, որ ի կենաց փայտէն, և զԳեղարդն, որ մխեցաւ ի կողն Տեառն»: Եւ նորա թողեալ զամե- 20 նայն, ասաց վասն Լուսաւորչի Աջին. «Ձայդ, որ Լուսաւորչի Աջ ասես, ա՞յդ աջն է թէ ձախոյ». մեք ասացաք թէ. «Աջոյ Աջն է»: Ասաց Ներսէս վարդապետն. «Բնակիչք կաթուղիկոսարանին Սսայ ասեն՝ թէ ստուգիւ և հաւաստեաւ Աջն սուրբ Լուսաւորչին այն է, որ ի Սիս է, և բերին վկայ ստուգութեան նորին զայն բանն՝ որ ի շարադրութիւնս հայ- 25 րապետաց գրեալ է վասն Ստեփաննոսի հայրապետին և վասն Լուսաւորչի Աջին, որ գրեալ պատճէն այս է: «Տէր Ստեփաննոս ամս չորս՝ ի սորա աւուրս եղև անհնարին աղետ, ըի անօրէն գուռզ սուլթանն Եգիպտոսի քանդեալ աւերեաց զաթոռ Լուսաւորչին սրբոյն Գրիգորի ղկլայն Հռոմէական և ի սուր սուսերի մաշեաց զամենայն և զմնա- 30 ցեալսն խաղացոյց ի գերութիւն, անդ որս և զհայրապետն սուրբ, և անդ վախճանի: Եւ զԱջ սուրբ Լուսաւորչին Գրիգորի անդ տարեալ. և յորժամ եմուտ ընդ առապարանս նոցա, պատուեցաց զնոսա մահուամբ, որպէս ի ձեռն տապանակին զայլագիրսն, մինչ ըի անհամար և անթիւ

2 Ա. շիմ *վասն*
3 Դ. *Աջոյն*
5 Է *յերիս ամս փխ յամէն երիք տարին*
6 Ա *զնուիրակ* ՐԳՆ *նըւիրակ* Ա. *գնացեալ առ ամենեսեան* Դ *զնացեալ առ ամենեսեան*
8 Ա.Դ շիմ *մեծ*
9 Ա. *սրբոյ*
11 ՐԳԴ *իշխանութեամբն*
12 Ա.Է *Հասանիլ*
13 ՐԳՆ *լինիր*
14 ԴՆ *զոր փխ որ* Է *Սսոյ*
16 ՐԳՆ *մեռոն*
17 Ա.Դ *զԱջ* Ա.Դ *զԱջ (Թադէոսի)*
18 Ա.ԴՆ *զսուրբ*
20 Ա.ԲԷ *Աջոյն*
22 Է *Սսոյ*
23 Ա *սրբոյ* Ա.Դ *Աջ*
24 Ա. *զվկայ*
26 Ա.ԴԷ *Աջոյն* Ա.ԲԴՆ *որոյ*
27 ՐԳՆ *գուռզն* Դ *սուլտանն*
31 Ա *սրբոյ*
32 Դ շիմ *եմուտ*

էին մեռեալքն, մինչև դարձուցին զԱջ ձեռն սուրբ Լուսաւորչին Գրիգորի յերկիրն Կիլիկիոյ առ բարեպաշտ թագաւորն Հռիփսիմ, և ապա դադարեաց ցասումն ի նոցանէ»: Արդ՝ նոքա այսու վկայութեամբս ասեն, թէ այն Աջն, որ ի Սիս էր, ստուգիւ այն է Աջն սրբոյ Լուսաւորչին, իսկ զայդ Աջդ, զոր արդ ունիք յեջմիածին. ո՞րպէս պիտէք, թէ այդ Լուսաւորչի Աջն է. եթէ ունիք վկայութիւն ի նախնեաց վասն դորին՝ ցուցէք»: Իսկ մեր լսելով զայս՝ լռեցաք, զի պարզմտութեամբ ունէաք հաւատ հաստատ առ Աջն այն, և ի նոյն հաւատոցն ոչ երկմըտեցաք, բայց բազում հոգաբարձութեամբ հնարեցաք գտանել վկայութիւն ի գրոց, ո՛չ թէ վասն մերոյս հաւատոյ հաստատութեան, այլ վասն յայտնելոյ ճշմարտութեանն, և հարցողաց պատասխանատուութեան:

Եւ ի շրջելն մերում յամենայն քաղաքս և ի գիւղս, եթէ յարևելից և թէ յարևմտից, ուր և գտանէաք ծերունի վարդապետ, եպիսկոպոս, կամ քահանայ, հարցանէաք վասն սորին խնդրոյ: Այլ և յամենայն եկեղեցիս՝ ուր և պատահէաք, զամենայն գրոց անդրէն եղելոց ղյիշատակարանն ընթեռնուաք, յորոց գտաք բազում վկայութիւն, զորոց զառաւել հաւաստին առեալ աստէն շարադրեցաք: Գնացաք ի Սպահան քաղաք և մինչ որոնէաք ղյիշատակարանս գրոց, գտաք աւետարան մի՛ որոյ յիշատակարանն էր այսպէս:

«Արդ՝ գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուիս Հայոց, ՊՋՐ. ձեռամբ Գրիգորի սուտանուն կրօնաւորի, ի վանս՝ որ կոչի Արդիլան, ընդ հովանեաւ մօրս լուսոյ սուրբ Աստուածածնին, և տեառն Յուսկայ որդւոյ սուրբ գերեզմանին, ի հայրապետութեան Լուսաւորչին. քանզի յայսմ ամի վերացեալ եղև Աջն ի Սսայ, և ո՛չ գիտեմք դինչ եղև, ի յառաջնորդութիւն սրբոյ ուխտիս Մկրտիչ վարդապետին»[146]:

Հանդիպեցաք ի Սեբաստիայ ի վանս սրբոյ հրեշտակապետին և անդ էր ճաշու գիրք մի, որոյ յիշատակարանն էր այսպէս գրեալ: «Եւ արդ՝ գրեցաւ ճաշու գիրքս ի քաղաքս Արծկէ, հանդէպ սրբարար ծովուս՝ որ մանր ձկունք ելանեն, ընդ հովանեաւ Պատերազմի սուրբ նշանիս, և ամենամաքուր սուրբ Աստուածածնի կաթուղիկէիս, ի հայրապետութեան մեծ աթոռոյն՝ որ էր ի Սիս, ի սահմանեալ. դի Աջն

2 ԳԵ *Կիլիկիոյ*
3 Ա *դադարեցաւ*
4 ԱԴ *Աջ* ԳԴԵ *ի Սիս է*
6 Ի *թէ արդ լուսաւորչի Աջն է*
8 Ա *զհաւատս* Ա *ի նմանոց հաւատոցն* ԼՒՒ *հաւատոցն*
9 Ա *չիմ բայց* Ա *բազմաւ*
9-10 Ա *զվկայութիւն*
11 ԲԴԵ *ճշմարտութեան*
13 Ա *ի շրջիլն* ԱԲԴԵ *արևելից*
14 ԱԲԴԵ *արևմտից* Ա *ծերունի*
15 Ա *ամենից*
17 Ա *զրաղում* Ա *որոց*
19 Ա *դաւետարան*
22 Ի *Արդիլան*
23 ԲԴԵ *աւէր*
23-24 Ա *սրբուհւոյ... սրբոյ*
25 Ի *Սսայ*
25-26 ԱԴ *յառաջնորդութեան վխ ի յառաջնորդութիւն*: ԲԴԵ *ի յառաջնորդութեան սուրբ*
26 Դ *սուրբ* Ա *Մկրտչի*
27 Բ *հրեշտակապետի*
29 Ա *սրբարարի*
30 Գի *մանար*
30-31 Ա *սրբոյ... ամենամաքուր սրբուհւոյ*
32 Ա *մեծի* ԲԴԵ *զԱջն*

սուրբ Լուսաւորչին անուն դողացան, և երկու ամ աղջս Հայոց անտեր մնաց, ի պառն և ի չար ժամանակիս՝ յորում շարժեալ էր պիղծ Ջհանշահն, պի թուականս Հայոց, ՊՂ. էր. որ այս ամենայն բանս եղև»[147]։

Գնացեալ յԱսպահան քաղաք ի մէջ Ջուղայեցւոց, գտաք Յայսմաւուրք մի՝ որոյ յիշատակարանն էր այսպէս գրեալ։ «Եւ արդ՝ դրեցաւ Յայսմաւուրքս ի թուականութեանս Հայոց ՄԼԵ֊ամին, ի յերկիրս Վասպուրական, ի քաղաքն Վան կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի տաճարիս և այլ սրբոցս, ի հայրապետութեան մեծի Աթոռոյն Սսոյ՝ որ յայսմ ամի ղևւսաւորչի Աջն դողացեալ տարան, և Աթոռն ունայն մնաց, ի պառն և ի չար ժամանակի, ի պարոնութեան Ջհանշահին, որ չարութեամբ իւրով լցեալ գնաց ի Վրացտուն, և Վրացիքն, զինչ քրիստոնեայք, որ կային ի Հայոց ազգէն, զամենեսեան բռնութեամբ ի Շամշուլտայ բերդն արգելեցին, և այլ ամենևին նոցա ո՛չ օգնեցին. և չար Ջհանշահն չար ղօրօքն իւրովք դնացեալ ի վերայ, և էառ զդղեակն Շամշուլտայ, և ինն հազար անձինք քրիստոնէից և այլ աւելի՝ հանդերձ քահանայիւք ի սուր սուսերի մաշեցին, և զկանայքն և զտղայքն գերեվարեցին. զորոց աղէտ տարակուսանացն ո՞վ կարէ պատմել կամ գրել, և այս ամենայն վասն մեղաց դան ի վերայ աշխարհիս»[148]։

Յետ այսորիկ ելաք ի Սպահանայ, դնացաք ի Նորին գաւառն զոր Գանդիման կոչեն, ի գիւղն որ անուանի Վաստիկան, գտաք անդ Յայսմաւուրք[149] մի՛ որոյ յիշատակարանն էր այսպէս. «Աւարտեցաւ սուրբ գիրքս Յայսմաւուրացս յամի ՊՂԱ. թուականութեանս Հայոց, ձեռամբ յոգնամեղ դրչի Կարապետ երիցու, ի խնդրոյ մահտեսի Մխիթարայ։ Եւ գրեցաւ սուրբ գիրքս ի քաղաքս Վան, ընդ հովանեաւ սուրբ առաքելոցս Պետրոսի և Պօղոսի, և սուրբ Ստեփաննոս Նախավկայի, և Սահակայ Հայրապետի. ի կաթուղիկոսութեան տեառն Կիրակոսի, որ ի յայսմ ամի եղև ժողով եպիսկոպոսաց և վարդապետաց, ի մայրաքաղաքն ի Վաղարշապատ[150]. որոց էր գլուխ մեծ բաբունապետն Թովմայ, և Յովհաննէս վարդապետն, և եղին զսէր Կիրակոսն չէջմիածին կաթուղիկոս ամենայն Հայոց. և նոր Նորոգեցաւ աթոռ սուրբ Լուսաւորչին Գրիգորի, ըստ տեսլեանն մեծին Ներսիսի հայրապետին և Սահակայ Պարթևին, և մերոյս առաջնորդի սուրբ ուխտին Վարագայ Յով-

1 Ա սրբոյ ԱՐԳԴՆ անդի Ա֊ի յամս երկու
1-2 Ա֊ԱՐԳԴՆ անտերունչ
4 ԲԳՆ եղաւ
5-6 Ա զայսմաւուր ԲԳՆ այսմաւուրք
7 Ա այսմաւուրս ԲԳՆ այսմաւուրքս
Ա չիք ի (յերկիրս)
8 Ա Վասպուրականի
9 Ա սրբուհոյ... այլոց սրբոց
10 ԲԳՆ մեծ փխ մեծի Ա ղևւսաւորչի
12 Բ Ջհանշային
13 Ա֊ԱՐԳԴՆ կայր
14 Գ արգիլեցին
15 Ի Ջհանշէն
16 Ա֊ԱՐԳԴՆ Շամշուլտայ
17 Ա անձինս
18 Ա զկանայսն և զտղայսն
Դն գերի վերցրին Ա֊ի որոց զաղէտ
19-20 Ա֊Դ չիք և այս ամենայն... աշխարհիս
21 Ա֊Դ չիք Յետ... ի նո(րին)
21-2 (ետաջորդ էջում) Ա֊Դ չիք (Նո)րին... և այս այսպէս
22-23 ԲԳՆ այսմաւուրք
24 ԲԳՆ այսմաւուրացս Գ յայսմաւուրաց
25 ԲԳՆ յոգնամեղ ԲԳՆ մահդասի Ի մահդեսի
30 Գ չիք ի
31 ԲԳՆ ի չէջմիածին
33 Բ մեծի Գ տեսլեան
34 Գ Պարթևի

Հանձն եպիսկոպոսին. ի թագաւորութեանն Ջհանշահի, որ ի յայսմ ամի էառ զանաւրիկ բերդն ղՋուղա և ղՋուլամերկ. և այս այսպէս»:

Այլ և գնացաք մեք ի քաղաքն Ուռհայ, և ի վանքն Ուռհայոյ, ուր կայ տապանն սրբոյն Եփրեմի Յունին Ասորւոյ. տեսաք ճաշոց մի՛ որոյ չիշատակարանն էր ըստ այսմ օրինակի:

«Եւ արդ՝ եղև սկիզբն ճաշոցիս[151] ի տուրբ ուխտս Մատնաւանք, և աւարտեցաւ ի քաղաքն Արծկէ, յամի ութհարիւրերորդի իննսունեւրորդի, և երկրորդ ամի. ի թագաւորութեան Ջհանշահի որդւոյ Ղարայիւսուֆին. և ի հայրապետութեան Աթոռոյ Լուսաւորչին մերոյ տեղապահի տէր Կիրակոս ընդհանուր Հայոց կաթուղիկոսի. զի մինչ ի սոյն ամս Աչն Լուսաւորչին մերոյ Գրիգորի ի Սիս էր. և ամենայն ազգս Հայոց հնազանդեալ էաք Աթոռոյն Կիլիկիոյ, և այժմ շնորհիւ նորին, և օժանդակութեամբ Հոգւոյն սրբոյ, վերստին նկն, ի նոյն վաղարշապատ էջմիածին Շողակաթի տաճարին, և հաստատեցաւ Աթոռ Հայկազեան ազգի, դերապատիւ և հրաշափառ, զոր պահեսցէ հաստատուն Տէր Յիսուս ամէն»: Եւ այս ևս այսպէս:

Այլ և դարձ Աւետարան մի[152], իբրև ընթերցաք զիշատակարանն, և էր գրեալ այսպէս: «Եւ արդ՝ սկսեալ եղև տուրբ աւետարանս յԱրղնի, ի վերադիտողութեան հայկազեան սեռի երկուց կաթուղիկոսաց տէր Գրիգորին և տէր Կիրակոսին, զի յորժամ գրեցաւ տուրբ աւետարանս այս Դ. ամ էր, որ Լուսաւորչի Աչն կորեր էր ի Սսայ՝ և ել համբաւն ի վաղարշապատ, վասն որոյ ժողովեցան վարդապետք, եպիսկոպոսք, քահանայք, եօթն հարիւր անձն, և հաստատեցին զԱթոռն էջմիածին, և եղին զոմն Կիրակոս անուն այր առաքինի և ճգնաւոր կաթուղիկոս, և հաստատեցին զաթոռ տուրբ Լուսաւորչին. արդ աւարտեցաւ տուրբ աւետարանս ի յամուր դղեակս յԱրղնի, ընդ հովանեաւ տուրբ Աստուածածնիս և տուրբ նշխարացս, որ աստ կան հաւաքեալ. յաւուրս ընդարձակութեան տուրբ ուխտիս, յեպիսկոպոսութեան տէր Մկրտիչ արքեպիսկոպոսին, և յերկայնատեւութեան Յոհաննէս կրօնաւորին ի դասն և ի նեղ ժամանակիս, ձեռամբ յոգնամեղ գրչի Աւետիս աբեղայի անարժանի, ի յաշխարհակալութեան Համզայ սուլթանին. ի թուականութեան Հայոց, ՊՂԴ. ամին». և այս այսպէս:

Եւ յետ գրելոցս այսոցիկ ունիմք այլ ևս հաստատագոյն պատ-

1 ՐԴՆ *ի թագաւորութեան*
2 ՐԴԴՆ *Զբռել և Զբիլ (վրպիակ)*
ՐԴ *և այս էր այսպէս*
4 Ա.ՐԴԴՆ *խորին Ա. դճաշոց*
6 Ա. *ուխտն*
7 Ա.Ի *յԱրծկէ*
8 Ա. *երկրորդի*
10 Ա. *տեառն Կիրակոսի ընդհանուրց*
12 Ա. *հնազանդեալք*
13 Ի: *օժանդակութեան*
15 Ա. *հայկազնի ՐԴՆ հայկազն*
16 Ա.Ի *չիմ և այս ևս այսպէս*
17 Ա. *դաւետարան*
19-20 Ա. *տեառն Գրիգորի*
20 Ա. *տեառն Կիրակոսի*
21 Ա. *կորեալ էր Ա.ՐԴՆ ի Սրսայ ի Սսոյ*
25 Ա. *սրբոյ*
25-31 Ա.Ի *չիմ Արդ ... անարժանի*
27-28 ՐԴՆ *ի յաւուրս ընդարձակութեան*
28 ԴՆ *և յեպիսկոպոսութեան*
29 ՐԴՆ *յհրեսփոխանութեան Դ կրօնաւորի*
30 Ա.ՐԴՆ *յոգնամեղ Ի չիմ գրչի Աւետիս*
30-31 *աբեղայի անարժանի*
31 Ն *սուլտանին*
32 ԴՆ *և այս ևս այսպէս*
33 Ա. *զայլ*

մութիւն վասն գալստեան Լուսաւորչի Աչին ի սուրբ Աթոռն Էջմիածին, զոր իմ պատահեալ ի քաղաքն Անկիւրիայ, գտի Ճայսմաւուրք[155] մի յեկեղեցին, զոր Սուրբ Հոգի անուանեն, որ ունէր յիշատակարան կարի երկարաբան, բայց վասն կարևոր գոլոյ բանին զամենայն բանն նոյն շարադրութեամբն անպակաս պահեցի ասել. և վասն երկարութեան ոճոյն մի՛ ինչ լեցից մեղադիր և մի՛ առաջին շինողին, զի ոճ պատմութեան այնպէս պահանջէ. քանզի երկար է պատմութիւն որոյ սկիզբըն է այս: «Արդ՝ գրեցաւ սուրբ գիրքս յամի թուականութեանս Հայոց ՋԺ. ամին, յեղկիրս Քաջբերունւոյ, ի քաղաքս Արճէշ, ընդ հովանեաւ ամենօրհնեալ սուրբ Աստուածածնի տաճարիս, ի հայրապետութեան տեառն Զաքարիայ կաթուղիկոսի ամենայն Հայոց, և ի բռնակալութեան ազգին Նետողաց Ջհանշահ փատշահին, որ եղև բազում հնութիւք և անթիւ զօրօք. և գնացեալ նմուտ ի տունն Իրաղայ և զամենեսեան գրաւեաց ընդ ձեռամբ իւրով, և հասեալ ի մեծ քաղաքն Սպահան, որ է Շօշ քաղաք, յոր մարգարէն Դանիէլ զտեսիլն նոցա, որ էր ամուր և բազմամարդ, որոց ընդդիմացեալ նմա պատերազմեցան, և չկարեցեալ նոցա էառ զքաղաքն, և զամենայն զօրսն որոյ ճարակ տուեալ և ի սուր սուսերի մաշեալ. քանզեալ և աւերեալ, և զջուր գետոյն կապեալ ի վերայ քաղաքին, զի որք ի նմանէս և ի ներքնատունս և ի պարանս մտեալ էին և թաքուցեալ, ամենեքեան ջրասոյզ և հնձամղձուկ եղեալ սատակեցան, որ և քաղաքն ամենայն տապալեցաւ ի վերայ նոցա զի հողաշէն էր: Եւ անտի գնացեալ նմուտ ի Հրէ և ի Խօրասան, և զամենայն տունն Թաթարաց նուաճեալ ընդ ձեռամբ իւրով, և դարձեալ ևկն ի թախտն իւր, ի քաղաքն Շահաստան ի Թարվէզ: Որոյ ընդ առաջ գնացեալ մեծ հայրապետն տէր Զաքարիայն աթոռակալ սուրբ Խաչին Աղթամարայ, որ էր թագաւորաղն ի թոռանց և ի շառաւիղէ արքային Գագկայ, բազում ընծայիւք և պատարագօք. զոր յոյժ սիրով ընկալաւ զնա արքայն արքայից Ջհանշահ փատշահն և դշխոյն Բէկում խաթունն, և պատուեալ մեծարեցին զնա. և նոյն նմա խլայ և պարգև զԱջ սուրբ Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի. և զպատիւ պատրիարգութեանն Որոյ առաջնորդութեամբն Աստուծոյ և կամաւ սուրբ Լուսաւորչին և հրամանաւ փատշահին, եկեալ յաստուածարեալ և յաստուածանկար սուրբ Գրիգորաշէն և երկնահանդէս կաթուղիկէ սուրբ Էջմիածինն, յատաքելաշնորհ աթոռ սրբոյն Գրիգորի,

1 Ա. Աջոյն
1-2 ԱԴ յէջմիածին
2 Ա. զի փխ զոր ԱՐԳԴՆ Անկիրիայ Ա. դայսմաւուր՝ ԲԳԴՆ այսմաւուրք
3 Ա. զյիշատակարան
4 Ա. կարևորի Ա. զամենեսեան
5 Ա. նունով
6 Ա. առաջնոյ
6-7 Ա. պատմութիւնն
7-8 Դ սկիզբն այս է
10 Ա. սրբուհւոյ
11 Ա. Զաքարիայի ... ամենից
12 ԱԴ աղգիս ... Ջհանշայի փաթշահին.
13 Ա. անթուով
16 Ա. ընդիմացեալ
17 Ա. զամենեսեան
24 ԲԳՆ ի թաղքն
25 ԱԴ Զաքարիայ
26 Ա. սրբոյ
27 Ա. բազմօք
28 ԱԴ չիմ գնա
30 Ն վիալայ Ա. գալարգև է չիմ սուրբ
31 է պատրիարգութեան
32 Ա. սրբոյ
34 Ր էջմիածնին, առաքելաշնորհ

և նստաւ ինքնակալ պատրիարգ ընդհանուր ամենայն քրիստոնէական ազգի, որք են ընդ ամենայն ոլորտս տիեզերաց, և արարեալ զաշխարհ ամենայն լինիլ մի հօտ և մի հովիւ* ըստ բանին Տեառն. և հովուէր զամենեսեան ի հաւատս ուղղափառ Նիկիական սուրբ դաւանութեանն։ Ընդ այնմ ժամանակին եղև ցաւնուլ փառաշահին ի վերայ ամիրային Բաղիշու. և բարկութեամբ առաքեաց Դ. զօրագլուխս երկոտասան հազար հեծելազօրօք ի վերայ քաղաքին Խլաթայ, և գնացեալ աւարեալ զանդնցին գնա՛ և բազում աւար ի մի ժողովեալ նստան ի վերայ բերդին և նեղէին յառնուլ գնա, և գնոյն հանդերձեալ էին առնել ի Բաղէշ՝ և ի Մուշ, ի Խութ և ի Սասունք և յամենայն գաւառսն նոցա։ Զոր տեսեալ նորընծայ պատրիարգն տէր Զաքարիայ զտարակուսանս աշխարհին այնորիկ զգերեվարիլն և զմատնիլն ի ձեռն անօրինաց, զաւերիլն և զբանդիլն. զխախտումն եկեղեցեացն, և զտապալումն սուրբ սեղանացն. զգերեվարիլ սրբութեանցն, և զխափանումն փառաբանութեանցն Աստուծոյ, և զտարաշխարհիկ լինիլն ամենայն խառնիճաղանճ ժողովրդեանն՝ զգերիլն և զտատանիլն։ Զայս ամենայն զմտաւ ածեալ մեծ հայրապետն տէր Զաքարիայն, և ի միտս իւր բերեալ զբանն տէրունական. որ ասէ՝ թէ «ես եմ հովիւն քաջ, հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»**, և կատարեալ գործով զբանն, եղ զանձն իւր ի վերայ բանաւոր հօտին Քրիստոսի ի վերայ ամենայն ժողովրդեանն Բաղիշու, և զօրացեալ ի Հոգւոյն սրբոյ և արարեալ զսիրտս իւր իբրև զկարծր վէմ, և մտեալ առաջի թագաւորին, ետ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց. տուեալ ձեռագիր և մտեալ դաման առնուլ հարկս յամիրայէն Բաղիշու և տալ կայսերն առ ի մնալ երկրին ի խաղաղութեան՝ և առնել աղօթս վասն կենաց թագաւորին և որդւոց նորա։ Որոյ հաւանեալ արքայն և զշխոյն նոցուն նմա նշանագիր և հրամանառնել զինչ և կամիսցի, և նորա ելեալ յերևսաց նոցա վաղվաղակի ձիընթաց արշաւմամբ գնացեալ հասս ի քաղաքն Բաղէշ։ Որոյ ընդ առաջի ելեալ ամիրայն հանդերձ ամենայն մեծամեծօքն իւրովք, և մեծարեալ փառօք տարաւ զնա ի պալատս բերդին, և խոստացան առնել զկամս նորա և տալ զինչ և խնդրեսցէ. բայց միայն զի չետս դարձուսցէ զամենայն հեծելազօրսն ի բերդէն Խլաթայ։ Եւ նա առեալ զկայսերական հրամանսն իւր բերանոյ նոցա գնաց ի Խլաթ, և նա զօրագլխացն կրկին ձեռագիր, և ցուցեալ նոցա զնշանագիր

* Դանիէլ, Ը

** Յովհ., ժ, 11, Համմ. Յեզեկիէլ, ԼԴ, 23

1 Է պատրիարք Ա. ամենայնի Ա. քրիստոնէական
2-3 ՐԳՆ դաշխարհս ՐԳԴՆ լինել
3 Ա. Նիկիականի սրբոյ
4-5 Գ դաւանութեանն
6-7 Ա. զչորս ... երկոտասանիւք հազարօք
10 Ա. և Մուշ և Խութ Ա. յամենեսեան
11 Է պատրիարքն
12 Ա.Է մատնիլն
14 Ա. սրբոյ սեղանոցն ՐԳՆ սրբութեանցն
15 ՐԳԴՆ լինիլն
17 Ա. Զաքարիայ
20 Ա. բանաւորի
21 Ա. ամենայնի
22 Ա.Գ զսիրտ
23 Ա. զձեռագիր
24 Ա. զհարկս
25 Ա. զաղօթս
27 Ա. զնշանագիր Ա. զհրամանն
29 Ա. ամենիւր
30 Ը տարեալ
34 Է զօրագլխացն

փառաշահին, և համոզեաց զնոսա՝ որք խաղաղութեամբ գնացին ի տեղիս իւրեանց, և ինքն դարձաւ ի Բաղէշ և նստաւ ամիսս երիս և առնալ զխոստացեալ հարկն կայսերական, և տարեալ մատոյց արքային փառաշահին, և արար խաղաղութիւն ի մէջ նոցա, ազատեաց զամենայն
5 խառնիճաղանճ ժողովուրդն զՀայ և զՏաճիկ ի ձեռաց անօրինաց և ի դառն գերութենէ. զոր Տէր Աստուած ազատեաց զնա յամենայն փորձութենէ հոգւոյ և մարմնոյ. ամէն: Եւ նորա գարձեալ ի փառաշահէն նստաւ յաթոռն իւր ի սուրբ էջմիածինն, և մեծարանօք խնկայեալ եղև յերկուց գոռոզաց յայլասեռից, ի Թուրքման փառաշահէն և ի Քուրդ
10 ամիրայէն, որպէս զՀօրաբաբել ի Դարհէ՛* առ ի հովուել զՏաւատացեալ ժողովուրդս իւր: Եւ եղև կրկին անգամ գնալ Ջհանշահ փառաշահին ի տունն Իրազայ, ի Շիրազ և ի Քրման, և էր նորա որդի մի Հասանալի անուն, որ շրջէր Թափառական գվէրին կողմամբ գաւառին Արաբատեան, և նա հնդգրեամբ չարախօսաց ոմանց կամեցաւ ըմ-
15 բռնել զմեծ պատրիարգն զտէր Զաքարիայն՝ և պահանջել ի նմանէ գանձս և ինչս. զոր իմացեալ մեծ հայրապետն զննդութիւն նորա, և առեալ զԱջն սուրբ Լուսաւորչին հանդերձ այլ սպասիւք յաւուրս ձմերայնոյ և գնացեալ մինչ ի Բագաւան և անտի եկեալ ի բերդն Բայազիտի, և անտի իջեալ ի սուրբ ուխտն Արգիլան, ուր հանգուցեալ կայ
20 պատուական նշխարք սուրբ վարդապետին Ստեփաննոսի տէր Յուսկայ որդւոյն: Եւ անդ հասեալ յայտնեաց զպանձն աստուածային, զԱջն սուրբ Լուսաւորչին մերոյ զսրբոյն Գրիգորի, հանդերձ խաչալամովն, որ նկարեալ կայր ի մի կողմն պատկերն տէրունական, և ի միւս կողմն Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի, և թագաւորին Տրդատայ, և չքնաղագեղ կուսին սրբոյն Հռիփսիմեայ, այլ և ոսկեթել
25 յօրինուածով և ազգի ազգի գունով, երանգ երանգ զարդարեալ սուրբ ուրարովն. որ զարմանալի է տեսողացն: Եւ դէմ եղեալ գալ ի Հայրենիի աթոռն իւր ի գեղեցկայարմար գմբեթայարկ Սուրբ Խաչն Աղթամարայ, և ել համբաւ գալոյ նորա հանդերձ սուրբ Աջովն և խաչալամովն, որ բարձրացեալ կայր ի ծայրս ձողոյ, և խաչ ոսկի կառուցեալ ի գլուխ նորա, քանզ որ գրոհ տուեալ ամենայն բնակչաց գաւառացն, քանզ որ գայր Հայրապետն և ամենեքեան քանզ առաջ ընթանային խնկօք և մոմեղինօք և ղեռմամբ խոյոց և զուարակաց և երկրպագութիւն մատուցանէին սուրբ Աջին և Հայրապետին և համբուրէին
35 զնա մեծաւ փափագանօք, մինչև եկեալ եհաս ի գաւառն Տոսբոյ, և մտեալ ի քաղաքն Վան, բազում եպիսկոպոսօք, քա-

* Ա նգրաս, Դ, Ե, Զ

1 ԲԳԴՆ որ փխ որք
4 Ա. գիաղաղութիւն Ա. զամենեսեան
6 Ա. ի դառնէ ԱԴ չիմ տէր Ա. յամենայնէ
9 Ա թուրքմանէ... քրդոյ
14 Ա.ԲԳԴՆ Արարատեան
15 Ե պատրիարքն
16 Ա. գինչս
17 Ա. զԱջ սրբոյ Գ զԱջ Ա. այլօք սպասուք Գ սպասուք
18 Ա. չիմ և անտի
20 Ա.Ե նշխար Ա. սրբոյ
21 Բ որդոյ Գ որդոյն
22 Ա. զԱջ սրբոյ Գ զԱջ Ա. սրբոյն
23-24 Բ չիմ ի (միւս)
25 Ա. չքնաղագնդի Ա. սրբուհւոյն
28 Բ գեղեցկայարմար
29 Ա. սրբով
31 ԱԴ գլուխս Ա. ամենից
31 Ա. սրբոյ Ե Աջոյն
35 Ա. մեծաւ Բն փափաքանօք ԱԲԳՆ Տոսբայ
36 Ա բազմօք

հանապիւք և բազմամբոխ ժողովրդովք՝ ձիոք և ձիաւորօք, և խաչալամն առաջի, և քահանայքն յառաջ և յետոյ երգէին քաղցր եղանակօք. և այնպէս պերճ և փառաւոր ճոխութ ի քաղաքն Վանայ։ Իսկ պարոնն՝ այն որ նստէր յամուրն Շամիրամայ ի բերդն Վանայ Մահմուտբէկ կոչեցեալ, որ էր կաթնղբայր Ջհանշահ փադշահին. հոխ պայծառութիւն քրիստոնէիցն և ցանկացաւ տեսութեան սուրբ Աջին, և չէնալ տարաւ ի պուխ բերդին, և եղև ընդ մտանել մեծ հայրապետին սուրբ Աջովն ընդ դուռն վերին բերդին, ընդ առաջ ել գոռողն Մահմուտբէկ, աւետեան մեծամեծօքն իւրովք, տաժ և Ամիրզայ որդւովքն, և ամենայն ընտանեօքն. և երիցպագութիւն մատուցանէին սրբոյ Աջին և համբուրէին, և աղերս պատարագաց նուիրէին, և մեծարեալ խիլաչնաց ղհայրապետն՝ և պարծոյց յօթևանս իւր. զոր տեսեալ բազմութեան քաղաքին և գաւառին օր բան օրէ գային երկրպագութիւն սրբոյ Աջին, և յաղջոյն մեծ հայրապետին բազում ընծայիւք և պատարագօք։ Եւ յետ աւուրց ինչ առեալ հրաման ի պարոնէն գնալ ի հայրենի աթոռն իւր ի յԱղթամար. և իբրև ել ի քաղաքէն՝ ելին ընդ նմա բազմութիւնք եպիսկոպոսաց, վարդապետաց, և քահանայից և ամենայն ազատապունդ խօջայիցն Վանայ, ձիոք և ձիաւորօք ապատաղինեալք. և եկեալ հասին մերձ ծովահայեաց քաղաքին Ոստանայ, որում ընդ առաջ ելին ամենայն բնակիչք քաղաքին քահանայիւք և բազմամբոխ ժողովրդօք ի մեծամեծաց մինչև ցփոքունս, իսկօք՝ և մանկունօք, և բարձրաձայն եղանակօք, մինչ դրնթէ քան զհազար մարդ աւելի կայր յառաջ և յետոյ մեծ հայրապետին. և խաչալամն առաջ դնայր ունելով ի գլուխն խոշ ոսկի փայլեալ լուսոյ նման. և այնպէս շքեղ վաոք ճոխութ ի քաղաքն յՈստան, իբրև տեսին այլազեա բնակիչքն որ յՈստան, դիմահանութիւնն զայն՝ ի խոր խոցեցան ընդ պայծառութիւն և ընդ համարձակութիւն հայրապետին, որ ի գաւառէն Տարբերունւոյ մինչ ի քաղաքն յՈստան, խաչալամով էր եկեալ, եպիսկոպոսօք, և վարդապետօք, և բազում կարգաւորօք և ժողովրդօք, վասն որոյ ժողովեցան ի միասին աւո իշխան քաղաքին, որ էր ազգաւ Քուրդ, ժանտ և անագորոյն ամենեցին թշնամի քրիստոնէից, և խորհեցան խորհուրդ չար վի գաղտագողի սննդեացն հովուապետին. զոր իմացեալ, զշարութիւն նոցա քաջ դիտապետն, և ընդ լուսանալ աւուրսն առեալ զսուրբ Աջն գնալ ի ձեղր ծովուն ուր նաւահանգիստն լինէր։ Զոր իմա-

1 Ա. *բազմամբոխիւք* Ն. *ժողովրդօք*
2 Ա. *քաղցրք*
6 Ա. *սրբոյ* Ա.Ն. *Աջոյն*
7 Ա. *մեծի*
8 Ա. *սրբով*
9 Ա. *ամենիւք* ԲԳՆ *որդւովքն*
10 Ա. *ամենիւք* ԲՆ *ընդ ամենեսեան* ԳԴ *ընտանեօք* Ա.Ն. *Աջոյն*
11 Ա. *զաղերս*
13 Ն. *Սուրբ*
14 Ն.Ա. *Աջոյն մեծի ... բազմօք*
15 Ա. *զհրաման*
16 Ն. *չիմ և (իբրև)*
17 Գ *չիմ և (քահանայից)*
18 ԲԳՆ *սպատազինեալ*
20 Ա. *ամենեքեան* Ա. *բազմամբոխիւք*
22 Ա. *բարձրաձայնիւք* ԲԳՆ *մարդն*
23 Ա. *մեծի*
24 Ա. *դիտաչ* Ա. *ոսկեփայլեալ* Ա. *շքեղիւք*
25 ԲԳ *բնակիչք* Ա.Դ *որք*
29 Ա. *բազմօք*
30 ԲԳՆ *ժանդ*
32 Ա. *զչար*
33 Ա.Ն. *առաւօտուն*

ցնալ ամենայն եկեղցն ընդ նմա. որք ի վանայ, և որք յայլ գաւառացն եկին զհետ նորա և եկին հանդէպ աստուածապահ կղզւոյն Աղթամարայ մեծ բնդին Մանաճիհրի, որ է Քարադաշտ։ Եւ անդ զտեղի առեալ օրհնեաց զամենեքեան շնորհաբաշխ սուրբ Աջովն և համբուրեալ զամենեսեան ի համբոյր սրբութեան, և սրձակեաց զնոսա խաղաղութեամբ և օրհնութեամբ գնալ ի յարկս իւրեանց։ Եւ ինքն էառ զսուրբ Աչն լուսաւորչին և եմուտ ի նաւն և զնաց յԱստուածաբնակ կղզին յԱղթամար ի հայրենի ժառանգութիւն իւր. զոր երբեմն եկին ի ցամաք ընդ առաջ եկին նմա ամենայն բնակիչք տեղւոյն չեղր ծովն խնկօք և մոմեղինօք՝ և քահանայիւք, քաղցրաձայն եղանակօք և առեալ տարան զսուրբ Աչն և եդին ի դիզեցկայարմար սուրբ խաչն Աղթամարայ, և երկրպագութիւն մատուցանէին սուրբ Աչին և հայրապետին. և օրհնութիւն և փառաբանութիւն վերառաքէին հրաշագործողին Աստուծոյ, որ արժանի արար զամենեսեան տեսութեան շնորհաբաշխ սուրբ Աչին լուսաւորչի, եմուտ ի յամուր կղզին Աղթամար և հանդեաւ ի գմբէթայարկ սուրբ Աչն[134] ի բուն տեղին իւր. ի թուականութեանս մերում ՋԺԱ. ային. ի սկիզբն տարւոյն, որ էր նաւասարդի ամսոյ ԺԲ. յաւուր ուրբաթի սուրբ Յակոբայ պահոցն եմուտ Սուրբ Խաչն յԱղթամար, ի պահպանութիւն մեզ ամենայն հաւատացելոց, որոց եղև ուրախութիւն ամենեցուն ոչ սակաւ։ Եւ զայս լուեալ ամենայն բնակչաց գաւառացն օր ըստ օրէ գային երկրպագութիւն սուրբ Աչին և յողջոյն մեծ հայրապետին բազում ընծայիւք և պատարագօք, և օրհնութեամբ, մեծաւ ուրախութեամբ դառնային ի յարկս իւրեանց՝ փառաւորելով զամենասուրբ զներրորդութիւնն, զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն»։

Արդ՝ այս պատմութիւն մինչև ցայս վայր ծանոյց մեզ թէ՝ Լուսաւորչի սուրբ Աչն հաւաստեաւ և ստուգիւ գտրձեալ է ի Սասայ և եկեալ է յէջմիածին, այլ և գնացեալ է յԱղթամար։ Այլ և ի կարգս թուականացն ևս գրեալ կայ թէ ՋԺԱ թուին Զաքարիայ կաթուղիկոսն էառ զԼուսաւորչի Աչն ընդ իւր և տարաւ յԱղթամար[135]։

Արդ՝ թէպէտ գոն և այլ ևս այսպիսի բանք և պատմութիւնք, զորս ժողովեցաք ի գրոց՝ վասն սուրբ Լուսաւորչի Աչին, թէ հաւաստեաւ եկեալ է Աչն ի սուրբ էջմիածին, սակայն զամենայն ոչ շարադրեցաք աստ, զի մի գուցէ լիցի երկարութիւն բանիցն, ձանձրութիւն ընթեր-

1 Ա. *ամենից* Ա *յայլոց*
2 ԲԳԴՆ *կղզոյն*
3 Ա. *մեծի բնդին Մանաճիհրի* ԲԳԴՆ *Մանաճիհրի* ԱԴԴՆ *Աղթամարայ*
4 Ա. *սրբով...*
5 *զամենայն*
7 ԱԴ *ի նաւ*
9 Ա. *ամենեքեան*
10 Ա. *քաղցրաձայնիւք*
11-12 Բ *Աղթամարայ*
12 Ա. *սրբոյ* ԱՒ *Աչոյն*
13 Ա. *զօրհնութիւն և զփառաբանութիւն*
1 Ա. *սրբոյ* ԲԳԴՆ *Աչի լուսաւորչին* ԱՒ *Աչոյն* Ն *Աղթամար*
18 Ա. *սրբոյ* ԱԴ *Յակօբի* ԲԳՆ *Յակոբի*
19 Ա.ԲԳ *Աղթամար*։ ԴՆ *Աղթամար* Ա. *ամենի*
21 Ա. *սրբոյ* ԱՒ *Աչոյն*
22 Ա. *մեծի* Ն *բազմօք*
23 Ն *և մեծաւ ուրախութեամբ*
24 Բ *զներրորդութիւն*
26 Գ *պատմութիւնս*
27 Ա.ԲԳԴՆ *Սբսայ Ի Սասոյ*
31 Ա. *այսպիսիք*
32 Ա. *սրբոյ* ԱՒ *Աչոյն*
33 Ա. *զամենեսեան* Գ *զամենայնն*

ցողացն, այլ զայսքանս բաւական համարեցաք շարադրել ասել, յայտ առնել անխարդախաբարոյ և ճշմարտասէր արանց իմաստնոց զորպիսութիւն անցուածոց ժամանակաց։ Այսուհետև ժամ է մեզ պատմել վասն սուրբ Լուսաւորչի Աջին, թէ որպէս գտաւ յԱղթամարայ և ևն ի սուրբ էջմիածին։

Մերձ մայրաքաղաքին Նախճուանու կայ գաւառ մի, որ անուանեն Շահբունուց ձոր, և յայսմ գաւառի կայ գիւղ մի՝ որ անուանեն Օծօպի, և մերձ այսմ գեղջս կայ շինեալ ի վաղիմի ժամանակաց վանք մի յանուն սուրբ Աստուածածնին՝ որ անուանեն Օծօպու վանք. և ի միաբանից այսմ վանիցս եպիսկոպոս ոմն, որում անունն էր Վրթանէս եպիսկոպոս, այր խորագէտ և խելամուտ ի գործս իւր, և ճարտարարան ի խօսս. սա գնացեալ յԱղթամար գողացաւ զԱջն սուրբ Լուսաւորչին և երկր դարձեալ ի սուրբ էջմիածինն. զայս արար Վրթանէս եպիսկոպոսն խորհրդով և կամօք կաթուղիկոսացն էջմիածնի, որոց անուանքն էին Սարգիս և Յովհաննէս։ Եւ նախ գնաց Վրթանէս եպիսկոպոս յանծանոթ աշխարհ և անդ այլափոխեաց զանունն և զգեստն, և հարթեալ թեթևացոյց զմօրուքն. և եղև ի կերպ մահտեսւոյ՝ անդէտ գրոց և կարդալոյ. այլ և ի վերոյ քան զծունկն կապեաց սպարանաւ զբարձն և կաղացոյց զչին, և եղև իբրև զբնական կաղ, և ի գնալն իւր կաղայր։ Եւ ապա գնացեալ ի կղզին Աղթամարայ՝ և անդ բնակեցաւ, և առնէր սպասաւորութիւն վանացն. և օր աւուր ընտելացաւ նոցա վասն բարւոք սպասաւորութեանն, մինչ որ կարգեցին զնա լուսարար եկեղեցւոյն և պահող անօթացն և սրբութեանն վանիցն, և մնաց նա ի լուսարարութիւն եկեղեցւոյն յամս հօմն։ Եւ ի ժամանակին յայնմիկ պատահեցաւ ի միում աւուր, զի եկին յոլովք արք վաճառականք՝ զոր Հայոց բառիւ փօրէղիկ ասեն, և այլազգեացք բառիւ չարչի ասեն, այս չարչիքս դրաստուք և իշովք շրջելով գիւղէ ի գիւղ՝ եկին և հասին մինչ ի նաւահանգիստն Աղթամարայ. և այնպէս իշովքն և դրաստովքն իւրեանց մտին ի կղզին Աղթամար, վաճառել կտաւ և աստառ, չիթ և ալաջայ՝ և այլ ինչ։ Եւ էին այս չարչի արքս ի գիւղաքաղաքէն Ջուղայոյ, քանզի ի ժամանակին յայնմիկ տակաւին շէն էր Ջուղայ, և մնացին երկու և երեք օր անդէն ի կղզին։ Իսկ Վրթանէս եպիսկոպոսն հերձեաց զիշոյ միոյ կուրդինն, որ է պաղանն, և բերեալ զԼուսաւորչի Աջն ընդ նմին և զվառն, որ է խաչալամն, և զուարն, զոր և ի մէջ անցեալ պատմութեանդ յիշեաց, և զայս երե-

2 Ս. անխարդախաբարուց և ճշմարտասիրաց
4 Ս. սրբոյ Ա.Ի: Աջոյն
7 Ի: Շահբունուց Դ գնդ մի
8 Ս. վաղնմնաց...
9 սրբուհւոյ
10 Ս. որոյ
12 Ա.ԲԳ ի յԱղթամար Ս. սրբոյ
13 ԲԳԵ էջմիածին
16 Ա.Ի: զգեստն ԲԳԵ զընգեստն Դ զգեստն
17 Ս.Դ զմօրուսն... մուղդասոյ ԲԳ զմուրքն ... մուղդասոյ է մուղդուսոյ
18 ԲԳԴԵ կարդալու
21 Ս. զկտաւ և զաստառ, զչիթ և զալաջայ
25 ԲԳԴԵ յոլով
26 Դ բառով
27 ԲԳԵ գնդէ
29-30 Ս. զկտաւ և զաստառ, զչիթ և զալաջայ և զայլ ինչ
31 Ա.ԲԳԵ Ջուղայու
3 Ս.Դ ի կղզւոջն ԲԵ ի կըղզւոջն Դ ի կըղօջն
33 Ս. զկուրդինն

քանս եղ ի մէջ իշոյ կուրդնին և դարձեալ կարեաց, որպէս և էր յառաջադոյն. և զայս արար թաքուն և անպիտելի յամենայն մարդկանէ, բայց միայն իշոյ տիրոջն յայտնեաց. որում և պատուիրեաց բարւոք պաշտպանեացէ, զի մի՛ վնաս ինչ պատահիցի Աջին. այլ և մի՛ ևս ուրեք յամեացի, այլ փութանակի առեալ հասցէ ի Ջուղայ: Եւ զկնի գնալոյ չարչոցն՝ յետ աւուրց ինչ և ինքն Վրթանէս եպիսկոպոսն պատճառանօք ինչ ելեալ ի կղզւոյն և գնաց ուրեք. և իբրև հեռացաւ ի վայրացն յանծանօթ տեղիս, տպա արձակեալ զկապ ոտիցն՝ զոր յառաջադոյն կապեալ էր, և յուղի անկեալ գնայր բազում ճնպով: Իսկ բնակիչք Աղթամար կղզւոյն իբրև տեսին թէ անցին պատմանեալ աւուրքն, և ոչ ևս լուսարարն իւրեանց, գնացեալ առտ և անդ հարցին և ոչ ոքին. և իբրև ծանեան թէ ոչ է Աջն ի տնղուջն իւրում, յայնժամ սկսան յամենայն ճանապարհս և յուղիս կարի ստիպով հետամուտ լինել, զի թերևս հասցեն. իսկ գնացող խնդրակքն իբրև պատահէին ևկող ճանապարհորդաց և հարցանէին, թէ ղեալ այր մի տեսի՞ք. և ևկողքն պատասխանէին, թէ չիք մեր տեսեալ զայր կաղ, և այսու կերպիւ զերծաւ Վրթանէս եպիսկոպոսն, և ևս հաս ի գիւղաքաղաքն Ջուղայ, և որոնմամբ ևս եգիտ զտուն առնն՝ որ էր աէր իշոյն: Եւ բազում տագնապաւ հոգայր զնաան Աջին, թերևս ամբողջ հասանել իցէ Աջն ի Ջուղայ: Իբրև լուաւ յառնէն, և ետես զպաղանն, յորում ինքն եղեալ էր զԱջն, զի ամբողջ կայր Աջն, յայնժամ մեծաւ ցնծութեամբ ուրախ եղև և փառս ետ Աստուծոյ: Ապա գնացեալ Վրթանէս եպիսկոպոսն առ առաջնորդն և առ քահանայսն Ջուղայոյ, և ծանոյց նոցա զարարն իւր, և նոքա զարմացան ընդ արարեալ գործն նորա, և լցան երկնային խնդութեամբ, և դնացեալ հանին զԱջն, և պիտաչալամն և զուրարն, և բերին յեկեղեցին. և վաղվաղակի առաքեցին աւետաւորս ի սուրբ Աթոռն էջմիածին առ կաթուղիկոսքն Սարգիս և Յովհաննէս, որոց կամօք և խորհրդակցութեամբն գնացեալ էր Վրթանէս եպիսկոպոսն յայս գործ: Իբրև լուան նոքա ևս առաւել ցնծացեալ զուարճացան և լցան երկնային խնդութեամբ, և վաղվաղակի եկեղեցականօք և աշխարհականօք և ամենայն երևելի արամբք աշխարհին Արարատու յուղի անկեալ գնացին ընդ առաջ սրբոյ Աջին. և գտին զԱջն ի Նախչուան քաղաքի զի մինչ ի գալ կաթուղիկոսացն, Ջուղայեցիք և Վրթանէս եպիսկոպոսն զԱջն բերեալ էին ի Նախչուան քաղաք: Եւ անդ ի Նախչուան քաղաքին պատուեալ փառաւորեցին զսուրբ Աջն լուսմամբ պայծառ մոմեղինաց՝ և բուրմամբ անուշահոտ

1 Դ *կուրդնինն*
2 Ա. *յամենայնէ*
3 Ա.Դ *պատուիրեաց զի*
4 ԲԳԴՆ *պատահիցէ* Ա.Է *Աջոյն*
7 Ա.Դ *չիք և (իբրև)*
9 Ա.ԲԳԴՆ *ուղի* Ա. *բազմաւ*
10 Ա. *Աղթամարի*
13 Ա. *յամենեսեան*
14 Ա. *լինիլ*
15 ԲԳԴՆ *տեսէք*
19 Ա. *բազմաւ* Ա.Է *Աջոյն* ԲՆ *անբոզջ*
22 *900*
23 Ն *Եպիսկոպոս* Ա.ԲԳԴՆ *Ջուղայու*
25 Ա. *Երկնայնով* Դ *երկային*
27 Ն *յէջմիածին*
29 Է *եպիսկոպոս* ԲՆ *եպիսկոպոսս*
30 Ա. *Երկնայնով*
31 Ա *ամենիւք երևելիւք*
32 Ա.ԲԳԴՆ *Արարատու* Ա.Դ.Է *Աջոյն*
33 Ա.ԲԳԴՆ *գալն*
34 Դ *Եպիսկոպոս*
36 Ա *պայծառաց* Ա. *անուշահոտոց*

խնկոց, և ղենմամբ խոյոց և ղուարակաց. և կատարեցին անդէն ուխտս և համբուրեցին մեծատունչ փափագանօք զսուրբ Աջն, և ապա աշխարհախառնմբ բազմութեամբ առին զսուրբ Աջն և բերին ի սուրբ Աթոռն էջմիածին. և հանգուցին և սեպհական և ի բնական Աթոռն իւր։ Իսկ կաթուղիկոսունքն և ամենայն արք աշխարհին՝ եկեղեցականք և աշխարհականք բազում և անթուելի պարգեւս բաշխեցին վրթանէս եպիսկոպոսին. այլ և որքան նուէրք և աջահամբոյր՝ զոր նուիրեցին ժողովուրդքն սրբոյ Աջին, զայն ևս զբովանդակն շնորհեցին վրթանէս եպիսկոպոսին. այլ և կարգեցին կաթուղիկոսունքն և ամենայն ժողովն՝ զի վրթանէս եպիսկոպոսն լիցի աթոռակալ կաթուղիկոսացն, որ ոք և իցէ կաթուղիկոս ի մէջ սուրբ Աթոռոյն՝ որքան և իցէ վրթանէս եպիսկոպոսն կենդանի. որ և արար աթոռակալութիւն մինչ ի ժամանակս ծերութեան իւրոյ. և ապա վասն անկարութեան մարմնոյն գնաց ի վանքն Օծոպու մերձ իւրոց աղգականացն վասն պաշտպանելոյ իւրոյ ծերութեանն, և անդէն վախճանեցաւ և թաղեցաւ ի թուին ճխԲ. որպէս և գրեալ է ի վերայ տապանին իւրոյ։ Իսկ կաթուղիկոսունքն էջմիածնի իբրև զհայրենապատուէր կտակ, աւանդութիւն ունէին ի մէջ իւրեանց, զի յամենայն ամի ի տարւոջն միանգամ գնային ի վանքն Օծոպու մատուցանէին պատարագ, և պաշտման դրամ բաժանէին վանականացն, և կերակրէին զաղքատս վասն հոգւոյ վրթանէս եպիսկոպոսին. և մինչ ի ժամանակս Դաւիթ կաթուղիկոսին, և Մելքիսէթ կաթուղիկոսին կայր այս աւանդութիւն՝ որ գային կաթուղիկոսունքն և կատարէին։ Իսկ վերոյ ճառիւ պատմութիւնս՝ որ վասն գալստեան սրբոյ Աջին է, որ յԱղթամարայ դարձաւ և ևկն ի սուրբ էջմիածին, ոչ թէ հարևանցի բանք և զրուցք են, այլ հաստատուն և հայրենատուր աւանդութեամբ պատմի յամենայն գաւառս՝ որք են շուրջ զնախչուան քաղաքաւն, և մանաւանդ ի գաւառին Շահբունուց ձորոյ, և որք մերձ նմա վանօրայք են, զի ամենեքեան եկեղեցականք և աշխարհականք միաբանութեամբ պատմեն զայս պատմութիւնս, թէ ձեռամբ վրթանէս եպիսկոպոսին եկն լուսաւորչի Աջն յէջմիածին, յորոց առեալ մեր հայաստին գրեցաք աստ։ Եւ կայր սուրբ լուսաւորչի սուրբ Աջն անդ ի սուրբ էջմիածինն մինչև ի ժամանակս առաջին Շահաբասին, որ տարաւ ի քաղաքն Սպահան, և ի ժամանակս Շահսէֆի թագաւորին գնացեալ Փիլիպպոս կաթուղիկոսն ի Սպահան քաղաք խնդրեաց ի Շահսէֆի թագաւորէն, և առեալ նբեր դարձեալ ի

1-2 Ա. *զուխտս ... մեծատունչիւք*
2 ԲԳՆ *փափաքանօք*
3 Ս. *աշխարհախառնմբով*
4 ԲԳՆ *սեպհական*
5 Ա. *ամենեքեան*
6 Ա. *զրազում և զանթուելի*
8 Է *Աջոյն*
8-9 Ա. *Վրթանէսի*
11 Ա.ԲԳՆ *սրբոյ*
12 Ա. *զաթոռակալութիւն*
13 ԲՆ *ծերութեանն*
19 Ա. *զպատարագ և զպաշտման* ԲԳՆ *պաշտամանն*
20 21 Ա. *Վրթանէսի*
21 Ա. *Դաւթի*
22 Ս. *Մելքիսէթի Գ աւանդութիւնս* ԲԳՆ *գնային*
24 Ա.Է *Աջոյն*
26 Ս. *ամենեսեան*
28 Ա.ԲԳՆ *ձորու*
30 Ա. *Վրթանէսի* ԲԳՆ *եկաւն ի էջմիածին*
32 Է *չիմ սուրբ* ԲՆ *էջմիածին*

սուրբ էջմիածինն ի սեպհական Աթոռն իւր, որպէս և գրեալ կայ ի պատմութեան Փիլիպպոս կաթուղիկոսին։ Եւ կայ նոյն սուրբ Աջն աստէն ի սուրբ էջմիածինն մինչև ցայսօր՝ և պատուի ըստ արժանւոյն իւրով փառաւորութեամբ բազմաւ, ի փառս իւր և զօրացուցանողին զնա Քրիստոսի։ Եւ այն զոր ի մէջ անցեալ պատմութեանդ յիշեաց զխաչալաման և զուրարն, ահաւասիկ սոքա երկոքին ընդ սրբոյ Աջին կան ի սուրբ էջմիածինն պահեալք, հաստատուն վկայ սրբոյ Աջին, և մանաւանդ սքանչելագործութիւնքն՝ որք լինին ի սրբոյ Աջէն ևս առաւել վկայ։

Եւ յարդարեալ շարականգիցաք զպատմութիւնս զայս ի թուականիս մերում ՌՃԺԱ. ամին, Յուլիս ամսեանն ի մէկն, ի սուրբ Աթոռն էջմիածին, ի ժամանակս կաթուղիկոսութեան տեառն Յակոբայ Ջուղայեցւոյ, և ի թագաւորութեան Պարսից երկրորդ Շահաբասին, և Օսմանցւոց թագաւորին սուլթան Մահմատին՝ որդւոյ սուլթան Իբրահիմին, բարեխօսութեամբ և աղօթիւք նոյն սրբոյ Աջին երջանիկ Հօր մերոյ սրբոյ Լուսաւորչին ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս. ամէն։

ԳԼՈՒԽ Լ.Ա

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱՑՆ ՄԵՐՈՑ, ԱՌԵԱԼ ԵՒ ՍԿՍԵԱԼ Ի ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԻՍԷ ԿԼԱՅԵՑԻՈՅ ԵՒ ԿԱՐԳԱԻ ԱՇԵԱԼ ԵՒ ՀԱՍՈՒՑԵԱԼ ՄԻՆՉԵՒ ՅԺԱՄԱՆԱԿՍ ՄԵՐ[156]

Զկարգս կաթուղիկոսացս վասն այն ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն ոչ առեալ գրեցաք, զի ի բազմաց սրբոց և իմաստնոց, և հաւատարիմ արանց գրեալ է այն՝ որպէս և յայտ է ամենեցուն. իսկ որ յետ սրբոյն Ներսիսի Կլայեցւոյն է, ոչ կայ բովանդակն ի մի վայր գրեալ, այլ մասն մի աստ՝ և մասն մի անդ. իսկ մեք զբովանդակն հաւաքեցաք աստ ի մի վայր։

Եւ զանուանքս կաթուղիկոսացս ամենեցուն՝ զորոց հաւաքեցաք, եթէ զՍսայ կաթուղիկոսացն, և թէ զէջմիածնի կաթուղիկոսացն, յերից տեղեաց հաւաքեցաք, մասն մի թուականաց՝ որք նախ քան զմեզ գրեալ էին, որոց ինքն Քրիստոս լիցի վարձահատոյց. և մասն մի ի

1 ՐԳՆ *էջմիածինԳ սեպհական*
2 Ա. *Փիլիպպոսի*
3 ՐԳԴՆ *էջմիածին*
6 Ա. *Երկոքինս* Ա.Ի՝ *Աջոյն*
7 ՐԳԴՆ *որ... Աջէն* Ա. *Աջոյն*
8 ՐԳԴՆ *էջմիածին պահեալ* Ա. *հաստատուն վկայք* Ա.Ի՝ *Աջոյն*
10-11 Բ *թվականին*
11 Ա. *յուլիսի*
12 Ա. *էջմիածին*
12 13 Ա. *Ջուղեցւոյ*
15-17 Ա.Դ *չիմ բարեխօսութեամբ ... յաւիտեանս. ամէն*
15 Ի՝ *Աջոյն*
19 Ա. *Շարագրութիւն*
20 Ա. *սրբոյն*
22 Ի՝ *այնր*
23-24 Ա. *հաւատարմաց*
25 ԴՆ *կլայեցւոյ է*
28 Ա. *զանուանս... յորոյ* ՐԳՆ *զամենեցունց*
29 Ի՝ *զՍսոյ*
30 ՐԳՆ *տեղեաց*

կոնդակաց վանօրէից՝ որ շնորհեալ էին կաթուղիկոսունքն իւրաքանչիւր վանօրէից. և մասն մի ի յիշատակարանաց գրոց, որ իւրաքանչիւր կաթուղիկոսաց ժամանակս գրելք էին. և մեր ժողովեալ զամենայն կաթուղիկոսաց անուանսն, սկսաք շարադրել զնոսա ըստ կարգի թուականին, զի որ ի նախկի թուջն էր նախադաս կարգեցաք, և որ յերկրորդում թուջն էր՝ երկրորդ դաս կարգեցաք. և որ յերրորդում թուջն էր՝ երրորդ դաս կարգեցաք, և որ ի չորրորդում թուջն էր՝ չորրորդ դաս կարգեցաք և այսպէս առնելով հասուցաք մինչև ի մեր ժամանակս. Եւ զայսպէս առնելով սկիզբն ՈՒ. թուէն սկսաք, և մինչ ի Պ թիւն ուղիղ էր. և յետ այնորիկ խառնակ և շփոթեալ և մանաւանդ զի բազումն և յոլովն ոչ կայր, զորս բազում աշխատութեամբ շարակարգեալ հասուցաք ի մեր ժամանակս:

Իսկ այն թուականն՝ որ իւրաքանչիւր կաթուղիկոսացն սկիզբն գրեալ կայ, ոչ թէ զնոցին կաթուղիկոսացն նատելոյ զառաջին ամն նշանակէ, այլ միայն նշանի վասն կարգեցաք, զի այն թուովն դիւրաւ ճանաչեմք զայն կաթուղիկոսն. այլ և թէ իցեն երկու կարապետ կամ երկու Պօղոս՝ ժամանակաւ մերձակայ միմեանց, այնու թուովն դիւրաւ բաժանեմք յիրերաց, և ոչ ևս տարակուսիմք արդեօք մի՞ են զոքա թէ երկուս:

Իսկ այն թիւքն որ զկնի կաթուղիկոսացն գրեալ կայ՝ որ ցուցանէ թէ այս անուն կաթուղիկոս, այսքան ամ յաջորդեաց.յայս թուոցս զբազումն ոչ գրեցաք, միայն զոմանս, քանզի երկու և երիք օրինակ ի միասին բերեալ՝ տեսաք՝ զի ոչ զուգաբան ասէին, վասն որոյ և ոչ գրեցաք. և որոց վասն զուգաբան ասացին զնոցին թիւսն գրեցաք և այս ասացեալ երկոքին թիւքս ի վերայ Սսոյ կաթուղիկոսացն կալ գրեալ. իսկ ի վերայ էջմիածնի կաթուղիկոսացն ոչ ի սկիզբն գտաք թիւ գրեալ՝ և ոչ ի վերջն. քանզի զէջմիածնի կաթուղիկոսաց անուանն զամենեցուն, ի յիշատակարանաց գրոց հաւաքեցաք, որ զկաթուղիկոսաց ոչ զսկիզբն և ոչ զվախճանն ցուցին: Նա և՝ էջմիածնի կաթուղիկոսունքն՝ որ ի մէջ միոյ թուի, երկու և երիք և չորք կաթուղիկոսք կան գրեալ, այս է՝ զի յիշատակարանք գրոցն և կարգ թուականին այնպէս ցուցին. այլ և ի կարծիս մեր թուեցաւ թէ այնքան կաթուղիկոսք լեալ են ի միում ժամանակի, և ի միում թուականի. այլ և ոչ եղաք հաստ, թէ ո՞ր ոք ի նոցանէ իցէ առաջին ամանակաւ՝ և ո՞ր

1-2 Ա. *իւրաքանչիւրոց*
2-3 Ա. *որք յիւրաքանչիւրոց*
3-4 Ա. *զամենեսեան*
4 Դ *շարագրել*
7-8 ԴԷ. չիՓ *և որ ի չորրորդում թուջն էր՝ չորրորդ դաս կարգեցաք*
8 Ա. *այսպէս* ԱՐԳՆ *առնելով*
11 Ա. *բազմաւ*
13 ՐԳՆ *թվականքն* Դ *թուականքն* Ն *իւրաքանչիւր*
13-14 Ա. *իսկ այնք թուականքն, որք իւրաքանչիւրոց կաթուղիկոսաց ի սկիզբն*
13 ԴԴԸ *կաթուղիկոսաց*
14 ԱԳԴՆ *կաթուղիկոսաց*
15 Ի: *դիւրեաւ*
17 Ի: *դիւրեաւ*
20 Ա. *այնք թիւքն որք* ՐԳ *որք*
21 Ա. *այսց* ՐԳԴՆ *այսմ*
24 Ա. *բայց որք վիս և որոց վասն*
25 Ի: *Սսոյ*
26 Ի: չիՓ *թիւ*
27 Ա. *զանուանսն*
28 Ա. *ամենեցուն* ՐԳ չիՓ *ի* ԱԳ *որք վիս որ*
30 ԱԳ *թուոյ*
31 Ա. *գրեալք*

ոք վևրջին, այլ և այնմ, թէ ո՞ր ոք իցէի նոցանէ ինքնակալ, և ո՞ր ոք ընդ ձեռամբ, և կամ լռեալ. այլ զայն միայն ցուցին մեզ յիշատակարանք գրոց, վասն որոյ և մեք այնպէս կարդեցաք։

Այլ արդ՝ օժանդակութեամբ Հոգւոյն սրբոյ ըստ խոստման մերում, արդէն այժմիկ սկսցուք զկարգ կաթուղիկոսացն ի սրբոյն Ներսիսէ Կլայեցւոյ կարգաւ, և հասուսցուք մինչև ի ժամանակս մեր։

ՌԺԴ. թ. մեռաւ Գրիգորիս կաթուղիկոսն, և նստաւ եղբայր նորին Ներսէս ամս է։

ՈԻԱ. թ. մեռաւ տէր Ներսէս, և նստաւ տէր Գրիգոր եղբօրորդի նորա, յՕգոստոսի ԺԳ. յաւուր հինդշաբաթի։ Տէր Գրիգոր Քարավէժն. Տէր Գրիգոր Ասիրատան. Տէր Յովհան Մեծաբարոյն. զսա ընկենուն և փոխանակ սորա եդին կաթուղիկոս զտէր Դաւիթ Արքակաղնեցին ամս Բ. մեռաւ տէր Դաւիթս և դարձեալ նստաւ կաթուղիկոս նոյն տէր Յովհան, յառաջ և յետոյ ամս ԺԵ։

ՈԿԹ. թ. Տէր Կոստանդին Բարձրաբերդցին ամս Խէ։

ՉԺԷ թ. Տէր Յակոբ Գիտնականն ամս ԺԸ։

ՉԼՉ թ. Տէր Կոստանդին Պրօնագործն Կեսարացի, Ախթարմայ ամս Գ։

ՉԼԸ. թ. աքսորեցին զԿոստանդին Պրօնագործն, և եդին կաթուղիկոս զտէր Ստեփաննոս Հռոմկլայեցին ամս Դ. զսա և զվուսաւորչի Աջն գերի տարան ի քաղաքն Մսըր։

ՉԽԲ թ. Տէր Գրիգոր Անաւարզեցին ամս ԺԳ։

ՉՇՉ. թ. Տէր Կոստանդին Կեսարացին, Հերձուածող, ամս ԺՆ։

ՉՀ. թ. Տէր Կոստանդին Լամբրոնացին ամս Գ։

ՉՀՉ. թ. Տէր Յակոբ Սսեցին ամս ԺԳ. զսա ընկենուն և եդին զտէր Միխիթար ի Թուին ՉՂՉ. ամս ԺԳ. մեռաւ այս Միխիթարս, նստաւ դարձեալ աքսորեալս Տէր Յակոբ Սսեցին ամս Գ։

ՊԺԳ. թ. Տէր Մեսրովբ ամս ԺԳ։

ՊԻԳ. թ. Տէր Կոստանդին։

ՊԻՆ. թ. Տէր Պօղոս։

ՊԻԹ. Տէր Թէոդորոս ամս Ը։

ՊԽԳ. թ. Տէր Կարապետ։

ՊԽՉ. թ. Տէր Դաւիթ։

ՊՇԲ. թ. միւս տէր Կարապետ։

ՊԿԷ. թ. Տէր Գրիգոր. զայս տէր Գրիգորս, որ մականուն Խանձողաւոր կոչի, աքսորեցին, և ի նոյն Թուին եդին զտէր Պօղոսն, վասն որոյ զնոյն Թիւն ի վերայ նոյն տէր Պօղոսին կրկին անգամ գրեմք։

ՊԿԷ. թ. Տէր Պօղոս։

3 Ա.ՐՊ *գրոցն*
7 Ա.ՐՊԻՆ *չիմ թ (տեսնուրիք մինչև էջ 436 տ. 15)* Ր *չիմ և*
10 Ա.ՐՊԻՆ *Օգոստոսի*
12 Ր *Արքայիպաղնեցին*
15 Ա.ՐՊԻՆ *չիմ Ր*
17 Ա *Պրօնպործն* Ա.ՐՒ *Աղթարմայ*
20 Ա.ՐՊԻՆ *Հռոմայեցին*
21 Ա.ՐՊԻՆ *Մըսր Գ Մըսըր*
24 ՐՊԻՆ *Լամբրօնեցին*
26 Ա *ի Թուին ՉՂ* ՐՊԻՆ *եդին ՉՂՉ զտէր Միխիթար ամս*
27 Ա.ՐՊԻՆ *աքսորեալն*
35 Ա.ՊԻՆ *չիմ տէր*
35-36 Ի *խանձողաթ*

ՊՀԲ. Թ. Տէր Կոստանդին։

ՊԶՋ. Թ. Տէր Յուլեսփ։

ՊԶԲ. Տէր Դրիգոր, որ մականուն Մուսաբէկենց կոչի։

Մինչև ցայս վայր՝ զոր գրեցաք կաթուղիկոսունք Սսայ էին, որ ի Սիս նստէին և վարէին զկաթուղիկոսութիւնն. զի տակաւին ոչ էր նորոգեալ սուրբ Աթոռն էջմիածին, և յայսմ ժամանակի նորոգեցաւ, քանզի Աչն սրբոյն Դրիգորի մերոյ Լուսաւորչին ի սուրբ էջմիածինն յայտնեցաւ, վասն որոյ ժողովեցան ի բազում աշխարհաց արք իշխանք և նշանաւորք եկեղեցականք և աշխարհականք. և օրհնեցին զտէր Կիրակոս կաթուղիկոս, և հաստատեցին զկաթուղիկոսութիւնն ի սուրբ էջմիածինն, որպէս և պատմէ Թովմայ վարդապետն։ Վասն որոյ յայսմ հետէ զայն կաթուղիկոսունսն շարադրեմք, որք ի սուրբ էջմիածինն նստան, որոց առաջինն է տէր Կիրակոս։ Եւ նովաւ նորոգումն սուրբ էջմիածնի, ՊՂ. թուին. վասն որոյ գրեմք թուական ՊՂ։

ՊՂ. Թ. կաթուղիկոս տէր Կիրակոս։

ՊՂԲ. Թ. զտէր Կիրակոսն հանին ի կաթուղիկոսութենէ, և նստաւ Մակուեցի Գրիգորն ղաբալով. այս Գրիգորս նորոգումն արարեալ է սուրբ էջմիածնի մասամբ ինչ։

ՋԴ. Թ. նոյն տէր Գրիգոր այլ և նովաւ կաթուղիկոս տէր Արիստակէս։

ՋԺ. Թ. նոյն տէր Գրիգոր և նոյն տէր Արիստակէս, այլ ևս նովաւ կաթուղիկոս տէր Զաքարիայ։

Այս տէր Զաքարիայս նախ կաթուղիկոս էր Աղթամարայ, և ի ՋԺ. թուականին յորժամ եկն Ջհանշահ փատշահն ի Թարվէզ, սա բազում ընծայիւք գնաց ընդ առաջ փատշահին ի Թարվէզ. և փատշահն նա սմա սպարգեւս կաթուղիկոսութիւնն սուրբ էջմիածնի և զԱչ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, այլ և ընդ նմին զիշխանութիւնն, և դուրարն. վասն որոյ Զաքարիայ կաթուղիկոսն ընդ իւր ունելով զԱչն՝ նկեալ ի սուրբ էջմիածին նստաւ կաթուղիկոս էջմիածնի. և նոյն իշխանութիւնն և ուրարն ահաւասիկ պահեալ կան ի սուրբ էջմիածինն. վկայ սուրբ Աչին՝ թէ անդ է։

ՋԺԱ. Թ. տէր Զաքարիայ կաթուղիկոսն առեալ ընդ իւր զԱչն սուրբ

3 է *Մուսաբեգենց*
4 Ա. *զորս* Ա. *Սսայ... որք* ԲԳԴԵ *Սրսայ է Սսոյ* ԲԳԴԵ *որք*
7 ԱԴ *Աչ* ԲԳԴԵ *էջմիածին*
8 Ա. *ի բազմաց*
11 ԲԳԵ *էջմիածին*
12 Ա. *զայնոսիկ* ԲԳԴԵ *կաթուղիկոսունքն* ԱԲԴԵ *շարագրեմք* Ա. *սրբոյ*
14 Ա. *զթուականն* Ա. *չիք ՊՂ*
15 Ա. *թուականն ՊՂ* ԲԳ *չիք ՊՂԲ* Ե *թվական ՊՂ ... կաթուղիկոս տէր Կիրակոս*
16 Ա. *թուականն ՊՂԲ* ԲԳ *թվական ՊՂԲ*
18 Ա. *սրբոյ*
19 Ա. *թուականն ՋԴ* ԲԳԵ *թվական ՋԴ Դ թուական ՋԴ*
21 Ա. *թուականն ՋԺ* ԲԳԵ *թվական ՋԺ Դ թուական ՋԺ* ԱԴ *այլ և նովաւ*
24 ԱԴ *թուին* ԲԵ *թվին* ԲԳԵ *փաշահն* Ա.Դ *փաթշահն*
24-25 Ա. *բազմօք*
25 Ա.Դ *փաթշահին... փաթշահն* ԲԵ *փաշահին* ԲԳԵ *փաշահն*
26 Ա. *սրբոյ* ԲԳԵ *զԱչն*
29 ԱԴ *էջմիածինն (նստաւ)*
30 ԲԳԵ *էջմիածին* ԱԴԵ *սրբոյ*
31 Ա.Է *Աչոյն*
32 ԱԲԳԵ *թու(վ)ական ՋԺԱ փխ ՋԺԱ թ. (և այսպիս ամենուրիք)* Ա. *սրբոյ*

Լուսաւորչին գնաց յԱղթամար. Նաւասարդի ԺԶ, յաւուր ուրբաթի սուրբ Յակոբայ պահոցն։

ՋԺՆ. թ. նոյն տէր Գրիգոր և նոյն տէր Արիստակէս. այլ և եղև կաթուղիկոս տէր Սարգիս։

ՋԻԳ. թ. նոյն տէր Սարգիս. այլ և եղև կաթուղիկոս տէր Յովհաննէս։

ՋԻՆ. թ. նոյն տէր Յովհաննէս. այլ և եղև կաթուղիկոս միւս այլ տէր Սարգիս։ Այս Յովհաննէս և Սարգիս կաթուղիկոսաց ժամանակին Լուսաւորչի Աջն դարձեալ է յԱղթամարայ՝ և նկեալ է ի սուրբ էջմիածնին ձեռամբ վրթանէս եպիսկոպոսին։

ՋԽԲ. թ. նոյն տէր Սարգիս. այլ և եղև կաթուղիկոս տէր Արիստակէս։

ՋԽԸ. թ. նոյն տէր Սարգիս. այլ և եղև կաթուղիկոս տէր Թադէոս։

ՋՄԳ. թ. նոյն տէր Սարգիս՝ այլ և եղև կաթուղիկոս տէր Եղիշէ։

ՋՄԵ. նոյն տէր Սարգիս՝ և նոյն տէր Եղիշէ. այլ և եղև կաթուղիկոս տէր Ներսէս։

ՋԿԴ. թ. կաթուղիկոս տէր Զաքարիայ։

ՋԿՐ. թ. կաթուղիկոս տէր Սարգիս։

ՋՀԲ. թ. կաթուղիկոս նոյն տէր Սարգիս։

ՋՁԵ. թ. կաթուղիկոս տէր Գրիգոր։

ՋՂ. թ. նոյն տէր Գրիգոր. այլ և եղև կաթուղիկոս տէր Ստեփաննոս Սալմաստեցի։

ՋՂԴ. թ. նոյն տէր Ստեփաննոս. այլ և եղև կաթուղիկոս տէր Միքայէլ։

ՌՋ. թ. նոյն տէր Ստեփաննոս՝ և նոյն տէր Միքայէլ. այլ և եղեն կաթուղիկոսք տէր Բարսեղ և տէր Գրիգոր։

ՌԺՋ. թ. նոյն տէր Միքայէլ և նոյն տէր Բարսեղ և նոյն տէր Գրիգոր. այլ և եղև կաթուղիկոս տէր Ստեփաննոս Առընջեցի։

ՌԻԵ. թ. նոյն տէր Գրիգոր այլ և եղեն կաթուղիկոսք տէր Թադէոս՝ և տէր Առաքեալ։

ՌԼԵ. թ. նոյն տէր Գրիգոր, և նոյն տէր Առաքեալ. այլ և եղև կաթուղիկոս տէր Դաւիթ։

ՌԽԲ. թ. նոյն տէր Դաւիթ. այլ և եղև կաթուղիկոս տէր Մելքիսէթ։

ՌՃԲ. թ. նոյն տէր Դաւիթ և նոյն տէր Մելքիսէթ. այլ և եղև կաթուղիկոս տէր Սրապիոն։

ՌՀԳ. թ. նոյն տէր Դաւիթ, և նոյն տէր Մելքիսէթ. այլ և եղև կաթուղիկոս տէր Սահակ։

1 Ա *սրբոյ*
9-10 ՐԳՆ *էջմիածին*
10 Ա *վրդանէսի*
11 Ի *չիք եղև*
22-23 ՐԳՆ *Ստեփանոս*
23 Գ *Սաղմաստեցի*
24 ՐԳՆ *Ստեփանոս*
26 ՐԳ *Ստեփանոս*
28 ՐԳԳ *թվ(ու)ական ՌԺՋ փխ ՌԺՋ. (և այսպէս ամենուրեք)*
29 ՐԳ *Ստեփանոս* Ն *Սոբփանոս*
34 Ա *չիք եղև*

ՌՀՐ. թ. կաթուղիկոս տէր Մովսէս ամս Գ. և կէս։

ՌՋՐ. թ. կաթուղիկոս տէր Փիլիպպոս ամս ԻԲ. և կէս։

ՌՃԴ. թ. կաթուղիկոս տէր Յակովբ Ջուղայեցի, որ կայ այժմ յաւուրս մեր, և վարէ զիշխանութիւն կաթուղիկոսութեանս։

Արդ՝ ի ՌԽԲ. թուին եղեալ կաթուղիկոսունքն, որք են Դաւիթ և Մելքիսէթ, այս Դաւիթ և Մելքիսէթ կաթուղիկոսունքն են, զորս ի պատմագրիս սկիզբն գրեալ եմք, թէ առաքեցին առ Սրապիոն վարդապետն դալ և լինիլ կաթուղիկոս. որ եկեալ եղև կաթուղիկոս սուրբ էջմիածնի ի ՌՄԲ. թուականին մերում և ի ՌՄԴ թուին Սրապիոնս դարձաւ և գնաց ի յԱմիթ. և ի ՌՄՆ թուին. և յապրիլի ԻԳ վախճանեցաւ։ Եւ յետ գնալոյ Սրապիոնիս՝ զիշխանութիւն կաթուղիկոսութեան նոյն Դաւիթն և նոյն Մելքիսէթն ունէին և վարէին։ Բայց նախանձ և գրգռութիւն և հակառակութիւն ոչ սակաւ անկաւ ի մէջ Դաւթի և Մելքիսէթի վասն կաթուղիկոսական իշխանութեանն. վասն որոյ Մելքիսէթն եմուտ ի ներքոյ ծանր ղաբալի, և ի բաց եհան զԴաւիթն՝ և ինքն միայն վարէր զկաթուղիկոսութիւն. և յաղագս ծանրութեան ղաբալին՝ որ ոչ կարաց վճարել, նա զկաթուղիկոսութիւնն Մելքիսէթն իւր եղբօրորդի Սահակայ, և ինքն փախեաւ յաշխարհն Օսմանցւոց. և գնաց յԻլով՝ և անդ վախճանեցաւ. և զիշխանութիւն կաթուղիկոսութեան վարէր Սահակ կաթուղիկոսն, և վասն ծանրութեան ղաբալին, որ ոչ կարաց վճարել, նա ևս փախեաւ յաշխարհն Օսմանցւոց։ Յետ փախստեան սորին ամենայն ազգն Հայոց արևելականք և արևմտականք միաբանեցան և արարին զՄովսէս վարդապետն կաթուղիկոս սուրբ էջմիածնի ի մերում թուականիս ՌՀՐ Յունվարի ԺԳ և ի ՌՋԱ թուին ի մայիս ամսոյ ԺԴ վախճանեցաւ։ Եւ ի ՌՋԲ թուին և յունվարի ԺԳ զՓիլիպպոս վարդապետն օրհնեցին կաթուղիկոս սուրբ էջմիածնի. որ վարեաց սա զիշխանութիւն կաթուղիկոսութեան ի ժամանակս իւր ճոխ և փառաւոր, մինչ ի ժամանակ թուականին մերոյ ի ՌՃԴ ամն. և ի նմին ամի, ի մարտի ԻԸ վախճանեցաւ սա։ Եւ զկնի սորա յաջորդեաց զաթոռ կաթուղիկոսութեան Ջուղայեցի Յակովբ վարդապետն. քանզի ի ՌՃԴ թուականին, և յապրիլ ամսոյ ութն օրհնեցին զՅակովբ վարդապետն կաթուղիկոս սուրբ էջմիածնի. և այժմ սա վարէ զիշխա-

1 Ա. *կաթուղիկոս նոյն տէր Դաւիթ և նոյն տէր Սահակ այլև եղև կաթուղիկոս տէր Մօսէս ամս երիք և կէս* Դն *ամս երիք և կէս*

2 Ա. *թուական ՌՋԲ նոյն տէր Դաւիթ և նոյն տէր Սահակ այլ և նդև կաթուղիկոս տէր Փիլիպպոս. ամս քսանևերկու և կէս։ Ի սորին առաջներորդում ամում. մնուաւ Դաւիթ յամսնանն օգոստոսի*

3 Ա. *Յակօբ Ջուղեցի* ԲԳԴԵ *Յակոբ Ջուղեցի*

5 Գ *կաթուղիկոսունքն են*

6-7 ԲԳԴԵ *զոր ի պատմագրիս*

8 ԴԵ *որ և եկեալ* Ա. *սրբոյ*

10 Է *ապրելի*

14 Ա. *կաթուղիկոսականի*

15 ԴԳԴ *զԴաւիթ*

16 Դ *զկաթուղիկոսութիւնն*

17 Ա. *զոր փխ որ* Դէ *չիե որ*

18 Ա.ԲԳԴԵ *Սահակին*

19 ԲԳԴԵ *Իլով*

20 Ա.Գ *կաթուղիկոսութեանն*

21 Ա. *զոր փխ որ*

24 Ա. *սրբոյ*

26 Ա. *սրբոյ*

29 Գ *վաղճանեցաւ*

30 Գ *կաթուղիկոսութեանն* Ա.ԲԳԴԵ *Ջուղեցի*

31 Ա.Գ *յապրիլի*

32 Ա. *սրբոյ*

նութիւն կաթուղիկոսութեան, մինչև ցայսօր, որ է թուականն մեր ՈԺՅԱ. յուլիսի ամսոյ Դ. որ և հայցեմք ի Տեառնէ, զի երկար ամօք պահեսցէ զսա յուրախութիւն սրտից մերոց և ի փառս անուան իւրոյ. ամէն։

5 ԳԼՈՒԽ Լ Ը

ԿԱՐԳ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՍԿՍԵԱԼ Ի ԳՕՇ ՄԽԻԹԱՐԱՑ ԳԱՒԱՋԱՆԱՒՆ, ՈՐ ԻՋԱՆԷ ՅԷՋՄԻԱԾՆԻ ԴԱՍԱՏՈՒՆՆ

Նախ առաքեալ վարդապետն Մխիթար՝ որ մականուն Գօշ կոչի. նորին աշակերտ Յովհաննէս՝ որ է Վանական, նորին աշակերտ Վարդան. նորին աշակերտ Ներսէս. նորին աշակերտ Նսայի, որ ի Նիչ գաւառէ. նորին աշակերտ Յօհան Որոտնեցին. նորին աշակերտ Գրիգոր Տաթեւացին. նորին աշակերտ Դանիէլ Ճգնաւոր. նորին աշակերտ Յովհաննէս Համշէնցին. նորին աշակերտ Թորոս. նորին աշակերտ Գրիգոր Տարօնացի. նորին աշակերտ Յովհաննէս, որ մականուն Շիրակ ասի. նորին աշակերտ Ղուկաս Կեղեցի. նորին աշակերտ Սրապիոն Ուռհայեցի, որ նոյն կաթուղիկոս սուրբ էջմիածնի. նորին աշակերտ Գրիգոր Կնսարացի. նորին աշակերտ Մովսէս Սիւնեցին, որ նոյն կաթուղիկոս սուրբ էջմիածնի և նորոգող նմին. նորին աշակերտ Փիլիպպոս կաթուղիկոս սուրբ էջմիածնի. նորին աշակերտ անարժան և մեղապարտ
20 *դրիչս Առաքեալ. և իմ աշակերտ Մակուեցի Վարդան։*

ԱՅԼ ՆԻՍ ԿԱՐԳ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ

Այսոքիկ են կարգ վարդապետաց մերոց՝ ոչ առաջնոցն այլ վերջնոցն։ Նախ՝ Գրիգոր Տաթեւացին. և նորին՝ աշակերտ Դանիէլ. նորին՝ Յովհաննէս Համշէնցին. նորին՝ Գրիգոր յԱրճիշոյ, որ մականուն Զորթան ասի. և միւս աշակերտն՝ Թորոս վարդապետն. իսկ Զորթանի աշակերտն Ներսէս՝ որ Մատաղն ասի. նորին՝ Ներսէս Բաղիշեցին. նորին՝ Ներսէս Ամկեցին. նորին աշակերտքն երկու՝ Յովհաննէս Ոստանցին ի դպրէն վառնուշատաց, և Ադարիս ի Հայոց Մեծաց ի գեղջէն Շահկերտաց, որ է մերձ քաղաքին Նախչուանու։ Իսկ աշակերտքն Յովհան-
30 *նէս Ոստանցւոյն՝ Սիմէօն Ակպարանցին, և Բարսեղ Գաւառցին. Սիմէօնի աշակերտն Կարապետ Կայծն. և նորին միւս փոքր Սիմէօն Ճգնաւորն. և Բարսեղի աշակերտքն Բուժիկ Յովհաննէս Բաղիշեցին, և այլք բազումք. և Յովհաննիսիս աշակերտ Խաչատուր Բաղիշեցին, և այլ արեւելեանքս ամէն ի Զորթանէն սերեցան։*

2 ԲԳԴՆ *յուլիս*
6 Է *Գօշէ*
8 ԱՊ *մականուամբ*
14 Գ *Տարօնացին* ԲԳՆ *Շիրաք*
16 Ա *սրբոյ*
17 ԲԳԴՆ *Սիւնեցի*
18 ԱԷ *սրբոյ*
19 Ա *սրբոյ*
22 ԲԳԴԵ *այս են Ան վարդապետացն*
23 ԱԲՆ *աշակերտն*
28-29 ԱԲԳԴՆ *Շահկերտաւոյ*
30 Է *Ոստանցւոն*
32 Ս *Բարսղի*
34 Է *ամէն*

Դարձեալ նոր սկսայց ի Յովհաննէ Համշէնցւոյն. նորին միւս աշակերտն Թորոս, որ ի վերոյ ասացաւ։ Թորոսի աշակերտն Գրիգոր Տարօնեցին. նորին՝ Յովհաննէս Շիրակն. նորին՝ Ղուկաս, որ էր ի խորձունեաց գաւառէն, որ է Կեղի. նորին Պետրոս Կարկուցին, և Սրապիոն Ուռհայեցին, որ եղև կաթուղիկոս սրբոյ Աթոռոյն էջմիածնի տարի մի և վեց ամիս. և փոխեցաւ առ Քրիստոս։ Այլ և նորին աշակերտքն Բարսեղ, որ է ի Սասնոյ ի Նիճ գաւառէն ի գեղջէն որ ասի Մարման. և Յովսէփ Հղուեցին. և Եսայի նուաստ Կարապետ բանի սպասաւոր Բաղիշեցի ի գեղջէն Փարխնդոյ[157]. զոր լուայ ի պատմագրացս, և զոր աչօք մերովք տեսաք. զի չէին ինչ պակաս յառաջնոց վարդապետացն՝ ուսմամբ՝ և գործովք, այլ ևս գերագոյն։ Այլ և երկու անուանի վարդապետ այլ գրեցից, Յովհաննէս Այնթափեցին, որ է կաթուղիկոս Կիլիկեցւոց, և Գրիգոր Դայսարցին յԱռաջին Հայոց, բանիբուն և սիրող իմաստասիրական հանճարոյ, Յովհաննէս ի մերոյ Ներսէսեանցն է և Գրիգոր ի Թորոսի աշակերտացն։

ԳԼՈՒԽ ԼԳ

ԹԷ ՎԱՍՆ ՈՐՈՅ ՊԱՏՃԱՌԻ ՉՀԱՅԱՉՈՒԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՅՍ ՀԱՆԻՆ Ի ՔԱՂՔԱՄԻՋԷՆ ՍՊԱՀԱՆՈՒ ԵՒ ՏԱՐԵԱԼ ՅԵՂՔ ՔԱՂԱՔԻՆ ՅԱՅՆԿՈՅՍ ԳԵՏՈՅՆ ԲՆԱԿԵՑՈՒԻՑԻՆ

Ի ժամանակս թագաւորութեան երկրորդ Շահաբասին, որ ունէր զգահոյս թագաւորութեան իւրոյ ի մեծահանդէս քաղաքն Սպահան։

Եւ եղև այս Շահաբաս թագաւորիս ելանել ի քաղաքէն Սպահանու ամենայն զօրօքն իւրովք և գնալ ի քաղաքն Ղազբին. և կարգեաց վերակացուս և իշխանս զոմանս յերևելի արանց ի վերայ քաղաքին Սպահանու, զի հովուեսցեն զքաղաքն ըստ պայմանի քաղաքական կարգացն։ Եւ ընդ բաղում պատուիրանացն, առաւել և կարևոր քան զամենեսին զայս պատուիրեալ հրամայեաց նոցա, զի արգելումն և խափանումն արասցեն դինւոյ, զի բնաւ մի՛ երևեսցի ի քաղաքին դինի, մի՛ բնաւ ոք ճմլեսցէ խաղող՝ և արասցէ դինի, և մի՛ ոք վաճառեսցէ դինի, և մի՛ արբցէ դինի. և բնաւ մի՛ երևեսցի նշան կամ հետ դինւոյ. ոչ առ ոսմիկս և ոչ առ վաճախանս, կամ սպասյաղօրս հեծելոց. և թէ առ ոք գտցի՝ թէ առ վաճառողս, և թէ առ գնողս, իրաւահացն զայնպիսիսն տուգանաւ. և հատցեն զունչս և զականջս, և թէ յես յանդգնեսցի գոցեն յաճախանալ, զայնպիսիսն գլխովին սպանցեն, զորովայնն պատառելով և գլուխն

1 ԲԳԴՆ *Հովանէս Համշէնցին*
2 Գ Դ Ն *զոր* Ս. *աշակերտ*
3 Ի *Շիրաքն*
7 Ա. *ի Նճոյ*
8 Ա *Հղուեցին* ԲԳԴՆ *Հըղվեցին*
9 ԲԳԴՆ *Բաղըշեցի* Ա. *զորս* Ի *լուաք* ԲԳԴՆ *պատմագրացն*
10 ԲԳԴՆ *յառաջին*
11-15 ԱԴ *չիմ Այլև... աշակերտացն*
12 Բ *Անփաթեցին* Դ *Անթափեցին*
14-15 Դ Ն *Ներսիսեանցն է*
17 ԲԳԴՆ *քրիստոնեայսն*
23 Ա. *ամենիւք* ԲԳԴՆ *զօրօք*
23-24 Ա. *զվերակացուս և զիշխանս*
25 Ա. *քաղաքականաց*
25-26 Ա. *բազմաց*
28-29 Ա. *զխաղող ... զդինի*
29 Ա. *զդինի ... զդինի*
33 ԱԲԴՆ *զունչսն և զականջսն*
34 ԱԴ *զգլուխն*

կարելով. և այլ ևս ազգի ազգի տեսակս տանջանաց ի վերայ ածելով. քան զամենայն բան զայս առաւել կարևոր պատուիրեալ շահին իւրոց կարգեալ քաղաքապետացն, և ինքն ելեալ ի Սպահանայ գնաց ի Ղազբինս։

Եւ յետ ամսոց ինչ անցանելոյ՝ նպարքոս Թագաւորին, զոր ինքեանք Էհտիմալ-Դօլվաթ ասեն, որում անունն էր Մահմատ բէկ, էր ի Ղազբին քաղաքին ի սպասու Թագաւորին, հարցանէր յեկողացն ի Սպահանայ վասն որպիսութեան քաղաքին, և վասն պէսպէս ինչ իրաց, և մանաւանդ վասն գինւոյ. և քանիցս որ նհարց ի սմանէ և ի նմանէ, ամենևքեան միապէս ասացին թէ, ոչ հաստատեցաւ արգելումն գինւոյ զի հանապազ շրջին արբեալ արք գինւով ի հրապարակս և ի փողոցս և յամենայն տեղիս։ Իսկ Էհտիմալ-Դօլվաթն յոյժ հոգալով հարցանէր ի սմանէ և ի նմանէ, թէ ընդէ՞ր ոչ հաստատի արգելումն գինւոյ ի Սպահան քաղաքի. և ամենայն ոք ըստ իւրում կարծեացն առնէր պատասխանի։ Բայց ոմանք՝ որք ոխս ունէին ընդ Սպահանայ քաղաքի տարուղին՝ զվնասն ի վերայ նորա բարդելով ասացին, թէ գուցէ տարուղէն թոյլ կուտայ վասն շահու իւրոյ, որպէս զի ինքն կալեալ զվաճառողսն և զգնողսն տուգանեսցէ և կաշառս առցէ, և յոլով գանձս շահեսցի ի նոցանէ։

Իսկ Էհտիմալ-Դօլվաթն՝ զայս բանս ընդ այլոց ևս բանից, զոր լուեալ էր ի պատմողաց՝ ծանոյց Թագաւորին. և ի մէջ զրուցաց Թագաւորն և Էհտիմալ-Դօլվաթն, որ ընդ միմեանս, ասաց Էհտիմալ-Դօլվաթն ընդ Թագաւորին. «Եթէ հրամայեսցէ արքայ, զոմն հաւատարիմ ի ծառայից Թագաւորին առաքեսցուք ի քաղաքն Սպահան, զի վերստին մունետիկ բարձր աղաղակաւ շրջեցուսցէ ի մէջ քաղաքին՝ և արասցէ արգելումն գինւոյ, և ինքն անդէն կացեալ ծածկապէս զննեալ դիտեսցէ, թէ ատո՞յզ են բանքն, որք վասն տարուղին ստացան». և առ այս բան հաւանեալ Թագաւորին հրամայեաց Էհտիմալ-Դօլվաթին՝ թէ արասցես ըստ ասացելումդ։ Իսկ Էհտիմալ-Դօլվաթն ընտրեաց ի Թագաւորական ծառայից զոմն յառաջիկայ սպասաւորաց Թագաւորին՝ այր ղպաստ և փոյթ ի գործս իւր՝ ի տիս երիտասարդութեան՝ որում անունն էր Նաջաֆղուլի բէկ. և պատուիրեաց նմա գնալ ի քաղաքն Սպահան, զի վերստին արգելումն արասցէ գինւոյ, որպէս զի բնաւ մի՛ երևեսցի գինի ի քաղաքն Սպահան. այլ և ծածկաբար քննեալ տեղեկասցի ամենայն բանից, որ վասն տարուղին ասացան։

Իսկ Նաջաֆղուլի բէկ՝ պատուիրանաւ Էհտիմալ-Դօլվաթին փքացեալ մտօք և դոռոզացեալ սրտիւ ելեալ ի Ղազբինու և եկեալ նմուտ

3 ԱՐԴԻՆ յԱսպահանու
5 Ա. նպարքոսի
8 Ա. պէսպիսեաց Ա. ընչից
11 Ա. արբեալք
12 Ա. յամենեսեան
15 Ա. զոխս
17 Ի տարուղին Ա. Ի տայ
18 Ա. զկաշառս
20 ՐԴԻՆ ընդ այլ փխ ընդ այլոց
25 ԱՐԴԻՆ մունետիկ Ա. բարձու Գ բարձ Դն շրջեցուսցէ
26 Ա. զարգելումն
27 ՐԳն զոր փխ որք
30 Ա. Թագաւորականաց... առաջիկայից
32 Ա. որոց
35 Ա. ամենից ՐԴԻՆ բանիցն Ա. որք փխ որ
36 Դն պատուիրանաւն ԱԴ բէկս
36-37 Ա. փքացեալք ... գոռոզացեալք

ի Սպահան քաղաք. և սաստիկ տագնապաւ և բաղում սպառնալիօք՝ և ահարկու բանիւք զարհուրեցուցանելով զամենայն, արգելումն արար գինւոյն. և ևհան յամենայն հրապարակս մունետիկ, որ է ջառչի, որ ելեալ քարոզեցին բարձր աղաղակաւ թէ, հրամանաւ թագաւորին արգելեալ է գինի, և առ ով և գտցի՝ թշնամի է թագաւորին և մահապարտ, որ անպատճառ զայնպիսին սպանանեն: Այլ և ինքն նաջաֆղուլի բէկն պատրաստեաց արս բաղումս. պատուիրեալ և հնարաւոր դործս ցուցեալ նոցա առաքեաց յամենայն տեղիս քաղաքին. և ուր և կարծիս ունէին լինիլ գինւոյ. գի արքն այնորիկ անդ յակճիռս կացեալ զգայլ և զգերեկ զննեալ գիտեացն զամենայն երթևեկս, և այսպէս առնելով յոլով արբեցելոց սրանց արար խրատու տուգանել, և գունչս և զականջս՝ և զձեռս և զոտս հատանելով. սակայն և այնու ևս ոչ կարաց խափանումն առնել գինւոյ: Եւ վասն բաղում և զանազան հնարագործութեանց ի վարանս խորհրդոց մտանէր, նաև հարցանէր ի սմանէ և ի նմանէ թէ, որպէս պարտի լինել կատարումն գործոցն:

Յայսմ վայրի ոմանք երևելի արք ի թագաւորի ծառայիցն՝ որք նախածանօթք էին այս Նաջաֆղուլի բէկիս, յաւուր միում հրաւիրեցին զնա ի տունս իւրեանց ի պատիւ սիրոյ աղագաւ, այլ և երևելի արք բաղումք կային յայնմ խրախութեանն: Ընդ որս էր և իշխան ոմն՝ որ էր զրապան թագաւորական գրեանց[158], գի ամենայն գրեանք տան թագաւորին նմա յանձնեալ է, գի պահեսցէ, և ում և պիտոյասցի, տացէ և առցէ. և ի մէջ հանդիսին այնմիկ ընդ բաղում խօսիցն ևկեալ խառնեցաւ և զրոյց գինւոյն, որոյ վասն բանս հարցողականս առաջարկեալ Նաջաֆղուլի բէկս, թէ զարմանամ գի ընդէ՞ր ոչ հաստատի արգելումն գինւոյ, զոր այսքան հրամայէ թագաւորն, և մեք ևս այսքան չարչարանս և զպատիժս ի վերայ ածեմք, և տակաւին ոչ կարեմք խափանումն առնել գինւոյ, և նատեալ արքն՝ ամենայն ոք ըստ իւրում կարծեացն խօսէր և առնէր պատասխանի:

Իսկ զրապան իշխանն ասէր պատասխանի Նաջաֆղուլի բէկին թէ, ի զուր է աշխատանք ձեր, և ոչ հաստատի արգելումն գինւոյ, գի պատճառք բաղումք գոն, և մանաւանդ այս, գի ամենայն ազգք ի միասին խառն ի խուռն ընդ միմեանս բնակեալ են. մահմետականք,

2 Ս. *առաքեալ... բազմաս սպառնալիսս և ահարկուս բանիւ*
2 ԱԲԳԴՆ *զամենեսեան* Ս. *զարգելումն*
3 ԱԲԳԴՆ *մունետիկ* ՍՊ *որք*
4 Ս. *ելեալք... բարձու*
5 ԱԲԳԴՆ *գինին* ԲԳԴՆ *առ յով*
6 ՍՊ *չիք որ*
7 Ս. *պարս* Ս. *գհնարաւոր*
9 ԲԳԴՆ *լքննել Գ յարկճիռս*
11 ԱԲԳԴՆ *յոլովից արբելոց* Ս. *գխրատս տուգանելով:* ԲԳՆ *արար խրատս տուգանելով Գ արար խրատս տուգանել*
13-14 Ս. *բազմից և զանազանից*
15 ԲԳԴՆ *լինիլ*
17 ԱՊ *երևելիք*
19 Ս. *երևելիք*
21 Ս. *թագաւորականաց... ամենեքեան է չիք տան*
22 ՍՊ *գի պահեսցէ, ում և պիտոյասցի*
23 Ս. *բազմաց*
24 ԲԳՆ *զրուց*
26 ԱՒ *և փխ ևս*
27 ԲԳԴՆ *պատիժս է զայսքան*
29 Ս. *իւրոց փխ իւրում*
30 Ս. *զպատասխանի*
31 ԱՆ *աշխատանքն*
32 ԱԲՊ *ազգ*

որք ոչ ըմպին գինի և այլ ևս ազգքն՝ որք ըմպեն գինի, այսինքն Ծռանկք, Հայք, և ՋՀուտք։ Արդ՝ դուք եթէ ընդունէք զոմն, ւր ունի ընդ ինքեան գինի, և ի հարցանելն ձեր, թէ ուստո՞ր բերիս, և ո՞ւր տանիս, նա պատճառէ յայս ոմն Հայոց տանիլ յայն ոմն Հայոց տուն տանիմ, յայնժամ խաւիանի հրամանն ձեր՝ և արգելուումն դիւրաց։ Այլ և ամենայն արք մահմետականք՝ որոց և չօժարի կամքն գինի ըմպելոյ, մտանել ի տունս նոցա և ըմպել գինի. նաև ի նոցունց գինէ յոլով գնով՝ և տանի յայլուր և ըմպէ, և այս ամենայն պատճառ է խառնիխուռն բնակիչն ազգացդ։ Արդ՝ եթէ հաւատասիաւ կամիցի թագաւորն. զի վերացի գինըմպութիւն ի քաղաքէս, բաժանեալ արտհասցէ զազգս զայսոսիկ ի միմեանց, զմահմետականսն անխառն յայլոց ազգաց բնակեցուսցէ ի քաղաքամիջի ւրում. և զայլ միւս ազգսն, զՀայք և զՋՀուտ հաննալ ի քաղաքէն տարեալ յեղր քաղաքին ի պատշաճաւոր տեղիս բնակեցուսցէ, և իւրաքանչիւր ազգաց բուռ իւրում պատշաճին կարգս և սահմանս կարգեսցէ և նոցին վերակացուս կարգեսցէ. ապա յայնժամ ղոր ինչ հրամայեսցէ թագաւորն և իշխանքն իւր՝ անխափան կատարի ամենայն։

Եւ բանս այս՝ զորխոսեցաւ գրապան իշխանն, Համոյ Բուեցաւ բազմականացն ամենեցուն ևս և Նաջաֆղուլի բէկին. զոր և միփոփեալ պարուրեաց ի պահարանս մտաց իւրոց, և խորհէր թէ ի պատշաճ ժամու ծանուցից էհտիմալ-Դօլվաթին. բայց ինքն բազում հոգաբարձութեամբ փոյթ յանձին կալեալ չանայր կատարել զհրամանն թագաւորին և արգելել զդիւնին։

Իսկ յաղագս բանիւն, զոր խոսեցաւ գրապան իշխանն ի հանդիսին յայն. ասացին ոմանք՝ ոչ լիւրոց մտաց յառաջարկեալ, այլ յայլոց յառաջարկութենէ, որ է այսպէս։

Վասն զի որպէս սովորութիւն է թագաւորաց ունել ներքինիս ի տան իւրեանց ի սպասաւորութիւն ինքեանց և կանանց իւրեանց, զայս կարգս այս երկրորդ Շահաբաս թագաւորս յոյժ առաւել բազմացոյց. քանզի բազում կանայս ժողովեաց յամենայն ազգաց. ըստ այսմ և բազում ներքինիս ստացաւ իւր. և ի բազմութենէ ներքինեացն, զոմանս ի նոցանէ վասն ծերութեան, և զոմանս վասն անհաճելութեան, և զոմանս յայլ ինչ պատճառէ հանեալ ի տանէ թագաւորին ի բաց արձակէին, գնալ յայլ ուրեք ինքեան զատ առանձին կեալ։

Եւ այս ներքինիքս, որք հանեալք լինէին ի տանէ թագաւորին,

1 Ա.Դ զգինի... ազգք... զգինի Գ ըմբին
2 Գ Ծռանկք
3 Ա.Դ զգինի
4 Ա.Դ յայն
5-6 Ա. ամենևքեան
6 Ա.Դ զգինի Գ ըմբելոյ
7 Ա.Դ զգինի Ա. յոլովիւ
8 ԲԴԵ զայս
12 Ա. զհայս Ա. զջհուտս ԴԴ զջհուտք
14 Ա. իւրաքանչիւրոց
14-15 Ա. զկարգս և զսահմանս
15 Ի. չիմ և նոցին վերակացուս կարգեսցէ Ա. զվերակացուս
16 Ա.ԴԴՏ զոր ինչ և փխ զոր ինչ
18 Ա. գրանս
19 Ի. չիմ ամենեցուն Ա.ԲԴԴՏ և ևս
20-21 Ա. պատշաճի
21 Ա. բազմաւ
26 ԲՏ առաջարկութենէ
27 Ա. ունել զներքինիս Ի. ունել
30 Ա. զբազում... յամենից ԲԴ ըստ այս փխ ըստ այսմ
34 Ի. ինքեանք
35 Ա. այսոքիկ (փխ այս)

եկեալ բնակէին ի մէջ քաղաքին, ի Շամշապատ[159] *անուանեալ թաղն, վասն այսց պատճառաց։ Նախ զի այս թաղս մերձ է տան թագաւորին, զի եթէ ինքեանք կամեսցին գնալ ի տուն թագաւորին, և թէ յբնակերաց իւրեանց ի տանէ թագաւորին կամեսցին գալ առ սոսա, դիւրին լինի և փոյթ վասն մօտակայութեան։ Երկրորդ՝ սոյնպէս և շուկային և վաճառանոցին մօտակայ է թաղն այն։ Երրորդ՝ և մանաւանդ վասն ջրոյն, որ ի բոլոր տարին անպակաս է չուր տեղւոյն այնմիկ. քանզի մեծ առու մի չուր, սակաւ ինչ փոքր քան զգետ, գայ յայն թաղն և դնայ ի Ջարբաղն, որ է թագաւորական այգի. և անտի գնայ ի տուն թագաւորին՝ որ ամենայն գործ և կարիք նոցա այսու ջրովս կատարի, մարդոց և անասնոց, այգեստանաց և ծաղկոցաց, և այլ գործոց։ Արդ՝ այսոքիկ այսպէս։*

Այլ և զայս ևս պարտ է գիտել. զի մեծ և առաջին Շահաբասն, աւերեղն Հայաստան աշխարհին և կործանողն Հայոց աղգին, ի ժամանակին յորում աղդն Հայոց քշէր և տանէր ի Պարսկաստան, յայնմ ի Հայոց աղդէն բաժին մի քրիստոնեայք, զոր Դաշտեցիք անուանեն, վասն լինելոյ նոցին ի Դաշտ անուանեալ գեղջէն՝ որ է ի գաւառին Գողթան՝ բերեալ բնակեցոյց յայսմ տեղւոջ ի Շամշապատ կոչեցեալ թաղս ի մէջ մահմետականաց։ Եւ վասն յաւութեան տեղւոյն յայլ տեղեաց քաղաքին մահմետականք բազում եկեալ ի թաղս այս բնակեցան. սոյնպէս և ի թագաւորի տանէն եկեալ ննջեհինքն, եկեալ աստէն բնակեցան։ Եւ յամենայն տեղեաց աստի և անտի անդր ժողովելոյ մարդկանց, ոչ բաւէր տեղին տանել զամենեսին. այլ ներքինս յոլովս կրէին վասն տեղւոյ. վասն որոյ միաբանեալ միւս մահմետականացն ընդ ներքինեաց թագաւորին, սկսան հարստահարել զԴաշտեցի քրիստոնեայսն, զի արտաքսեսցեն զնոսա ի տեղւոջէն, որպէս զի ինքեանց ընդարձակութիւն լիցի։ Եւ յայսմանէ պատճառէ բազում բանս ամբաստանութեան ասէին նոքա զԴաշտեցի Հայերուն՝ զորս ի զուր՝ և զորս իրաւ։

Եւ քանզի հրաման թագաւորին վասն արգելմանն գինւոյ էր, և այժմ ևս Պարսիկք յայնմանէ կողմանէ սկսան ամբաստանութիւն առնել զքրիստոնէից, եթէ նոքա գինարբու ազգ են և հանապազ գինեաւ պղծեն զջուրն, զի յորժամ զխաղողն ճմլեն զքաղցուն գինի առնեն և զկնճիռն վաթեն ի ջուրն՝ որով պղծի ջուրն. և յորժամ քաշեն զարաղ, զմնացեալ մրուրն վաթեն ի ջուրն՝ որով պղծի ջուրն, և յորժամ կամին լուանալ զկարաս գինւոյն, բերեալ դնեն ի մէջ առուին մէկ և

6-7 ՐԳԴ *վասն ջրին*
10 ՐԳԴ *այս ջրովս*
11 Ս. *այլոց փխ այլ*
14 Ա. *Հայաստանի*
15 ԱՐԳԴ *զազգն* Ս. *չիք յայնմ*
17 Ա. *գիւղէն* ՐԳԴ *գեղջէն*
19 Ս. *յայլոց*
22 Ս. *յամենից*
23 ԱԴ *մարդկան*
23-24 Ս. *տանիլ ... զննդութիւնս*
27 ՐԳԴ *յայսմ*
27-28 Ս. *զբազում*
28 Ա. *Հայոցս դաշտեցւոյ Գ զդաշտեցի հայերուն է զՀայոցն դաշտեցւոց*
31 ՐԳԴ *յայնմ կողմանէ* Ս. *զամբաստանութիւն*
32 ՐԳԴ *ազգ են*
34 Ա. *զկնճռեն* ՐԳԴ *արաղ*

երկու օր ի թրջոց, և ապա լուանան, և լուացունք ջուրն դարձեալ թափի յառուն ի մէջ ջրոյն՝ որով պղծի ջուրն։

Արդ զայսպիսի ամբաստանութեան բանս և զայն բանն ևս՝ զոր դրապան իշխանն ասաց Նաջաֆղուլի բէկին, և այլ բազում բանս զորս ի զուր ի զրոյս իրաւ, ասա ի Շամշապատ թաղն եկող և աստէն բնակող ներքինիքն ասացեալ էին դրապան իշխանին. զոր յայնմ ժամու դրապանն ասաց Նաջաֆղուլի բէկին։

Եւ յորժամ շահն և Էհտիմալ-Դօլվաթն դարձան ի Ղազբինու և եկին ի Սպահան. հաւատումն արարին վասն գինւոյ արգելմանն՝ կատարեցաւ թէ ոչ, յայնժամ Նաջաֆղուլի բէկն վշտացնեալ սրտիւ ասաց, թէ որքան ունէաք կար՝ ջանացաք, և ոչ եղև խափանումն գինըմպութեան։ Եւ ի բազում վարանս խորհրդոց մտայոյզ լինէր Էհտիմալ-Դօլվաթն սակս արգելման գինւոյ. քանզի ըստ անօրէն օրինաց իւրեանց և ըստ առասպելաբան գրեանց իւրեանց անսուրբ համարին զգինին, և ինքեանց մեղք ըմպելն նորին։

Իսկ Նաջաֆղուլի բէկն ի դիպող ժամու զդրապան իշխանի բանն խօսեցաւ առաջի Էհտիմալ-Դօլվաթին, և բանն հաճոյ թուեցաւ նմա, և այլոց ևս բազմականաց. և Էհտիմալ-Դօլվաթն ի պատշաճի ժամու զխօսեցեալ բանն դրապան իշխանին խօսեցաւ առաջի թագաւորին։ Ո՛չ միայն ի միում աւուր, այլ յամենայն դիպող ժամու Էհտիմալ-Դօլվաթն և այլ նախարարքն՝ որք խօսողք էին առաջի շահին, հանապազ այնու կերպիւ խօսէին առաջի թագաւորին. վասն զի Էհտիմալ-Դօլվաթն և այլք նախարարքն բազում փոյթ ունէին հանելոյ զքրիստոնեայսն ի քաղաքամիջէն[160]։ Եւ այնքան խօսեցան մինչև հաւանեցուցին զկամս թագաւորին, որ զրով հրամայն արար, թէ ով որ գինարբու անդք լինի, ելեալ բաժանեսցին ի մահմետականաց, և դնացեալ յեղր քաղաքին որիշ բնակեսցին։

Յետ ընդունելոյ զայս հրամանս ի թագաւորէն Էհտիմալ-Դօլվաթին, կոչեաց զԴաշտեցիսն առաջի իւր, և ծանոյց նոցա զհրամանս թագաւորին, և հրամայեաց նոցա ելանել ի քաղաքամիջէն և գնալ յեղր քաղաքին. և թէպէտ նոցա դժուարին էր ելանել ի բնակութեանց իւրեանց, յաղագս որոյ գնացին ի դրունս մեծամեծաց և յոլովս աղաչեցին՝ զի գուցէ մնայցեն ի տեղիս իւրեանց և ոչ ոք լուաւ բանից նոցա. զի իշխանքն՝ որք էին մահմետականք, ամենեցուն կամք և դիտաւորութիւնք միաբան էին առ ի հանել զնոսա։ Արդ՝ այսպիսի կերպիւ, եթէ ի հրամանէ թագաւորին, եթէ ի բռնութենէ իշխանացն,

1 ԲԳԴՆ *լուացօնք* Ա *ջուրցն*
2 Գէ *ի յառուն* ԲԳԴՆ *ջրին*
3 ԲԳԴՆ *բանքս*
4 Ա *զայլ*
9 ԱՔ *արգելման*
10 Ա *վշտացնեցնելով*
11 Ա *զկար*
11-12 Ի *գիներըմպութեան*
13 ԱԴ *չիք անօրէն*
14 Ա *առասպելարանից*
17 Գ *էհդիմալ*
18 ԲԳԴՆ *ի պատշաճ*
20 Ա *ամենայնի*
21 Ա *այլք*
23 Ա *այլ... զրազում* ԲԳԴՆ *այլ փխ այլք*
Ի *հաննլ*
25 Ա *զհրամանն*
26 ԱԻ *ելեալք բաժանեսցեն*
27 ԲԳԴՆ *բնակեսցեն*
35 ԲԳԴՆ *դիտաւորութիւն* Ա *այսպիսեաւ*
36 Դ *թագաւորէն*

ելէ ի հարստահարութենէ իւրեանց մերձակայ մահմետականացն, անճար մնացին Դաշտենցի Հայքն, եկին ի տանց և ի բնակութենանց իւրեանց. և գնացեալ ոմանք ի Ջուղայ, և ոմանք ի Գաբրպատ[151] *առն վարձեցին և անդէն հովանաւորեցան ընչիւք և ընտանեօք իւ-*
5 *րեանց:*

Իբրև եղև որ զԴաշտենցի ժողովուրդն ի բաց հանին մահմետականքն, այնուհետև սկսան զմիւս այլ ժողովուրդսն Հայոց հանել ի քաղաքէն: Եւ էին առաքս յապզէն Հայոց ժողովածու ժողովուրդք, որք յիւրաքանչիւր աշխարհաց վաստրանդի եկեալ էին և եկենալք յԱտրպատականի աշխարհի բնակեալք. որք էին ի յԱմմայ, ի Գալկու, ի Բաղիշոյ, ի Մշոյ, և ի Բերկրոյ, յԱբճիշոյ, ի վանայ, յԱրծկոյ, յՆշնկոյ,
10 *ի Դերջանայ, ի Բաբերդոյ, յԱրզրումայ. ի Սպերոյ, ի Բասենոյ, ի Կաղզուանայ, ի Շիրակունայ, յԱրարատեան մասնաւոր գաւառացն յամենեցունց, յԱլաշկերտոյ, ի Մակուայ, ի Խոյայ, ի Սալմաստայ,*
15 *յՈրմեայ, և այլ ևս իւրաքանչիւր աշխարհաց: Որոց վասն հրամայեաց առաջին Շահաբասն, զամենեսեան ժողովել և վարել յաշխարհն Պարսից. զոր և բնակել յԱսպահան քաղաք. և ի մէջ քաղաքին բնակեցուցին ի թաղան որոց՝ Բորոսկան, և Շիշաբանայ անէն զանազանեան: Նման սոցին հրամայեաց նոյն մեծ Շահաբասն, որ զԲերկանայ քա-*
20 *ղաքի բնաչեան տեղացի հայերը հանին յԲերկանայ և վարեալ տարան ի Սպահան քաղաք, և բնակեցուցին ի մէջ քաղաքին խառնիխուռն ընդ մահմետականացն ի թաղան, զոր Թաղիվղաբաջայ և Բաղաթ կոչեն:*

Եւ ի ժամանակիս յայսմիկ ի թագաւորութեան այս երկրորդ Շահ-
25 *աբասին, յետ հանելոյ զԴաշտենցւոց ժողովուրդսն, սկսան զԲերկանցւոց և զՇիշաբանցւոց ժողովուրդսն ևս հանել. քանզի կոչեաց էհտիմալ-Դօլվաթն առաջի իւր զաւագն Բերկանցւոց՝ որում անունն էր Խոջայ Յակոբջան, ընդ այլ ևս արանց, և ծանոյց նոցա զհրամանն թագաւորին, թէ պարտիք եղանիլ ի քաղաքամիջէ աստի և գնալ յեզր քա-*
30 *ղաքին բնակիլ: Եւ բազում բարութիւնս խոստացաւ առնել նոցա. քանզի կարի քաղցրութեամբ խօսեցաւ ընդ Բերկանցւոց: Իսկ ժողովուրդքն Հայոց թէպէտ ոմանք հաւանեցան, այլ ոմանք ոչ հաւանեցան, սոսկ*

1 Ա.Ր չիմ *իրեանց*
2 ԲԳԴՆ *հայերն*
3 ԲԳՆԻ *Գաւառպատ*
4 Ա. *զառն* ԲԳՆ *ընդանեօք*
9 Ա. *յիւրաքանչիւրոց* Ա. *վաստրանդիք* ԲԳԴՆ *և եկեալ*
9-10 Ա. *Ատրպատականի* ԲԳՆ *յԱտրպատականն աշխարհին բնակեալ* Գ *յԱտրպատականն... բնակեալ*
10 Ա. *ի Գալկոյ*
10-11 ԲԳՆ *ի Բաղըշու, և Մշու, ի Բերկրու, յԱբճշու* Գ *ի Բաղշու, ի Մշու*
11 ԲԳՆ *յԱրծկու, Ցերդ(ը)նկու*
12 ԲԳԴՆ *ի Բաբերդու* ԲԳ *յրՍպերու* ԲԳԴՆ *Բասենու* ԴՆ *յՍպե-րու*
13 Ա.ԲԳԴՆ *Կաղ(ը)զվանայ, ի Շիրակվանայ* Գ *յԱրարատիան* Ա. *մասնաւորաց*
14 ԲԳՆ *Ալաշկերտու* Ա.ԲԳԴՆ *ի Խօյայ*
15 Ա. *յՈրմայ... իւրաքանչիւրոց* ԲԳԴՆ *յՈրմու* Ն *յիւրաքանչիւր*
16 ԲԳՆ *զամենեսին*
18 Ա.Ր *թագն և Շիշաւանայ* Ր *թագն*
20 Ա. *Հայքն է Հայս*
22 Դ՝ *մահմետականաց*
25 ԲԳՆ *զԴաշտենցոց*
26 Ա.ԲԳՆ *Շիշաւանցոց*
27 Բ *ըաւաքն* Ա. *որոց* ԲԳՆ *անուն*
28 Ա. *այլոց* Գ *Յակոբճան*
30 Ա. *զրազում է ունիլ փխ առնել*

և բիրտ ազգս Հայոց. և սկսան դժկամակ և դիմադարձ լինիլ, և աղաղակ և շփոթս և զխռովութիւնս յարուցանել՝ որոյ կատարումն եղև վնաս ինքեանց։ Քանզի ամենեքեան ի միասին եկեալ ժողովեցան յանցս դնացից թագաւորին՝ և ի մերձիլ առ նոսա թագաւորին՝ սկսան ամենեքեան բողոք բառնալ առ թագաւորն, որոց այնպէս առնելն յոյժ դժուարին և ծանր թուեցաւ թագաւորին. վասն որոյ ցասեաւ զայրացմամբ թագաւորն ի վերայ ժողովրդեանն Հայոց. և ի պատճառէս յայտմանէ՝ որ ցասեալ թագաւորն ի վերայ Հայոց, քաջալերութիւն ընկալեալ և զօրացեալ առիւծացան այլազգիքն ի վերայ և սկսան բռնութեամբ վարել զնոսա։ Քանզի կարդեաց Էհտիմալ-Դօլվաթն զիշխանս հանդերձ զօրականօք ի վերայ ժողովրդեանն Հայոց, զի մի ևս տացեն նոցա դներումն ժամանակի՝ որ օր յաւուր կամկար ելանիցեն, այլ փութանակի առանց ներելոյ ժամանակի՝ ուժգին բռնութեամբ հանցեն ի քաղաքամիջէն։

Ու յայսմ վայրի անճար մնացին ժողովրդեանն Հայոց, զի յամենայն կողմանց հատաւ տեղի յուսոյ և ապաստանի նոցա բէ ի թագաւորէն և բէ յիշխանացն. զի զամենեսեան ցասուցին ի վերայ ինքեան, և նոցին ի վերայ կարգեալ իշխանքն և զօրականքն յոյժ նեղութեամբ ստիպէին զնոսա ելանել ի քաղաքէն։ Արդ յորժամ յաճախեաց բիրն ի վերայ գլխոցն Հայոց, ապա Թողին զբնական պտռտզութիւնն իւրեանց՝ զոր ի բնէ բնաւորեալ ունին յինքեանս. և զխելս և զգօնութիւնս յինքեանս բերեալ սկսան յողոք անկանիլ առ իշխանս. քանզի պրեցին արդայ և հասուցին ի ձեռն Էհտիմալ-Դօլվաթին, որպէս զի մի ևս նեղիացեն զինքեանս, այլ ներումն և ժամանակ տացեն, զի կամկար ելանիցեն։ Ու այսմ բանի հաւանեցաւ Էհտիմալ-Դօլվաթն և հրամայեաց այնպէս լինել, և ապա ի բաց կացին ի նոցանէ հանող զօրականքն։

Զկնի այսոցիկ շահն, Էհտիմալ-Դօլվաթն, և այլ նախարարքն, խորհուրդ արարեալ հաճեցան տալ նոցա տեղի բնակութեան յայնկոյս գետոյն մերձ առ Ջուղայեցւոց։ Քանզի նստուածք քաղաքին Սպահանու այնպէս է. զի մեծ գետն՝ որ գայ և մտանէ ի քաղաքն Սպահանու՝ յարևմտից գայ, և գնայ ի կողմն յարևելից. իսկ քաղաքն, և ամենայն մահմետականքն՝ և տուն թագաւորին, և վաճառանոցքն, և այլ ամենայն ինչ և իցէ, որ առ քաղաք վերաբերի՝ սոքա ամենեքեան ի հիւսիսային կողմն գետոյն են։ Իսկ Ջուղայեցիք ի հարաւային կողմն յայնկոյս գետոյն են տեղաւորեալ, զատ և ուրոյն յայլոց ազգաց, և

1-2 ԲԳԴՆ լինել... շփոթ Ս. զաղաղակս և գչիոթս
2 ԲԳՆ խռովութիւնս
5 Ս. զբողոք
10-11 ԲԳԴՆ իշխանս
12 ԲԳ ներումն ԴՆ աւուր
15-16 Ս. յամենից
19 Ա յաճախեցաւ
20 Բե գռռոզութիւն
21-22 ԲԳՆ զգօնութիւնս
22 ԲԳԴՆ անկանել առ իշխանսն
23 Ս. զարզայ
24 Ս. գներումն և զժամանակ
26 ԱԴԷ լինիլ ԱՒ հանօղք
28 Ս. այլք Բ շահն և
29 Ե սոցա փխ նոցա
Ա. գտեղիս ԲԳԴՆ տեղիք
32 ԲԳ արևելից
33 Ա ամենեքեան
35 Գ հարաֆային Դ ջուղեցիք ԲԳԴՆէ գետոյն է
36 ԱԴ տեղաւորեալք

այժմ զտեղին՝ զոր կամեցան տալ այսմ ի քաղաքէ հանեալ ժողովրդեանս, այլուսի մերձ Ջուղայեցւոց հաճեցան տալ. մերձ և հուսկ և կից Ջուղայեցւոց առ եղերք գետոյն, և այսմ խորհրդոյ ամենեքեան հաւանեցան, թագաւորն, և իշխանքն, և Հայոց ժողովուրդքն, և այլք ամենեքեան՝ որք լուան: Եւ ապա հրամանաւ թագաւորին, Էմիմալ-Թօլվաքն առաքեաց առս հրկիզաչափս՝ որ զնշանակեալ տեղին չափեցին և տուին ժողովրդեանն. և ժողովուրդքն բաժանեցին ինքեանս իւրաքանչիւրոց ըստ իւրում սակի: Եւ սկսան շինել տունս և տեղիս բնակութեան ինքեանց՝ ևթէ Երևանցիք, ևթէ Դաշտեցիք, ևթէ միւս այլ խառնիճաղանճ ժողովեալ ժողովուրդքն, ամենեքեան ի միասին յայսմ տեղւոջ զհաստեալ բնակեցան: Ապր՝ պատճառ հանելոյ քրիստոնէիցն ի քաղաքամիջէն Սպահանայ աշխարհն պինդ էին. ըստ այսմ օրինակի որպէս և պատմեցաք:

Բայց ժողովուրդքն քրիստոնէից՝ զառաջինն ի հանելն պինդեանս ի քաղաքէն դժուարէին, զի ծանր մուէր ինքեանց եւանելն ի բնակութեանց իւրեանց. բայց այժմ յոյժ դիւրասիրաք են և պոհանան վաստուծոյ, զի խնամարկութեամբն Աստուծոյ եղեալ կատարեցաւ այս գործս ի վերայ քրիստոնէից. և ի պոհանալն քրիստոնէից վասն բազում պատճառի: Նախ՝ զի անդէն ի մէջ քաղաքին քրիստոնեայքն և մահմետականքն խառնիխուռն ընդ միմեանս բնակեալ էին, և ոմանք ի թերահաւատ արանց քրիստոնէից հանապազօր տեսանելով զդիւր և զվայրապահ[162] և զմարմնապաշտ օրէնս մահմետականաց, և միշտ զքարոզս և զպատմութիւնս օրինաց նոցա լսելով, թերանային ի քրիստոնէական հաւատոցս, մինչև իսպառ վերջացեալ պառնային ի քրիստոնէութենէ ի կրօնս մահմետականս, և լինէին մահմետականք: Երկրորդ՝ ևթէ ուստերք քրիստոնէից հաճէին դստերաց մահմետականաց, կամ թէ ուստերք մահմետականաց հաճէին դստերաց քրիստոնէից, այնքան ի ծածուկ և ի գաղտնի հնարէին և խօսէին մահմետականքն ընդ քրիստոնէից ուստերացն և դստերացն, մինչ զի վամենայն կամս նոցա և ղյօժարութիւն ինքեանց հաւանեցուցեալ դարձուցանէին ի կրօնս Մահմետի: Եւ զայսպիսիս բազումս տեսաք մերովք աչօք, որք գնացեալ անկան ի տունս մահմետականաց. և թէպէտ բազումս չանային քրիստոնեայք հանել զնոսա անտի, ոչ լինէր՝ այլ ուրանային: Երրորդ՝ զիանդէն ի քաղաքամիջին տեղիք քրիստոնէիցն նեղ էր և անճուկ, և սակաւաջուր, որ վասն ջրոյ սղութիւնս յոլովս կրէին. և աստէն ի նորումս տեղւոջ ընկալան

2 Դ *ջուղեցւոց*
3 Ե *ջուղեցոց*
6 Ա. *զարս*
7 ԱԴ *հաւուն*
8 ԲԳԵ *իւրաքանչիւրոց*
8-9 Ա. *զտունս և զտեղիս*
9-10 Գե և *թէ փխ ևթէ (միւս այլ)*
12 Ա.ԲԳԴ *Աստահանու*
14 Գ *զառաջին*
16 ԲԳԴե *զիւրասիրս*
18-19 Ա. *բազմաց պատճառաց*
20 ԲԳե *ոմանք ոմանք* Ա. *բնակեալք*
22 Դէ *վայրահաս*
23-24 Ա. *ի քրիստոնէականաց*
25 ԲԳԴե *մահմետական*
29 30 Ա. *չիք զամենայն* Ա. *զկամս*
33 Ա. *զրազումս*
35 Գե *անճուկ*
36 Բ *տեղոջ*

տեղի լայն և ընդարձակ, յորում շինեցին տունս մեծածախս և վայելուչս. լայն և ընդարձակ զանազան յօրինուածովք. վերամբարձ վերնայարկօք և ամարաւուն հովանոցօք, որոց առաջի տեղիք զբօսանաց, պարտէզք, և ծաղիկք, և ծառք մրգաբերք։ Զորրորդ ժի անջատեալ սրոհեցան յօձարարոյ ազգէն մահմետականաց, որ հանապազօր խածատեալ նենգէին և զրուէին զքրիստոնեայսն, և այժմ ամենայն քրիստոնեայքն ի միում տեղւոջ գումարեալ կան և ուրախութեամբ գոհանան զՏեառնէ Աստուծոյ. որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Գիտելի է՝ ժի յորժամ սկիզբն արարին ի հանել զքրիստոնեայսն ի քաղաքէն, Թուականն մեր Հայոց էր ՌՃԴ, յորժամ հանին զԴաշտեցիսն. և ի ՌՃԵ. Թուին հանին զՆերսեհանցիսն. և այժմ, որ զպատմութիւնս գրեցաք, է Թուականն մեր ՌՃՀ, որք ելին ի քաղաքամիջէն և ժողովեցան ի նոր տեղին, ուր շինեցին յարկ բնակութեան, և ոչ մնաց ի քաղաքին ի ժողովրդենէն քրիստոնէից, այլ ամենեքեան ժողովեցան ի նոր տունսն տեղին։

Ա.ՅԼ. ՆԻՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԸՍՏ ՅՆՂԱՆԱԿԻ ԱՆՑԵԼՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑԴ

Զի որպէս յոլով տեղիս պատմեալ եմք, եթէ մեծ և առաջին Շահաբասն, ոչ թէ երկիցս և երիցս վարեաց զազգս Հայոց յԱտրպատական աշխարհէ՝ ի Պարսկաստան, այլ յոլով անգամ. այսպէս և այժմ։ Զի յորժամ էր Թուականն մեր ՌԿԷ. միւսանգամ հրամայեաց վերոյասացեալ թագաւորն առաջին Շահաբասն, վասն ազգին Հայոց արտասահման առնել զամենսեան յԱտրպատական աշխարհէն, և վարել յաշխարհն Պարսից։

Յորոյ հրամանէ եղեալ գնացին նորին իշխանքն բազում զօրօք ի քաղաքն Երևան և ի գաւառս նորա, ի Գանջայ և ի գաւառս նորա ի Թարվէզ և ի գաւառս նորա, յԱրտաւիլ և ի գաւառս նորա, և սկսան քննութիւն և որոնումն առնել ի մէջ ազգին Հայոց, թէ որ ոք իցէ բնիկ բնական ի հարց և ի հաւուց տեղական, և որ ոք ոչ է, այլ յայլմէ աշխարհէ եկամուտ և ժողովածու. զբնիկսն Թողին, և զեկամտացն զամենեցուն զանուանսն գրեցին ի քարտիսի, և կացուցին ի վերայ նոցա յազգէն Հայոց պետս և վերակացուս և անուանեցին զնոսա Մելիք, և նոցա յանձնեալ աւանդեցին զամենայն ժողովուրդսն, ի թէ ոք պա-

1 ԱԴ *զտեղի* ԱԴ *շի՛ շինեցին* Ա *զտունս*
1-2 Ա. *զվայելուչս*
2 Ա. *պանապանիւք* Ա *վերամբարձուք յարկօք*
3 Ա *ամարասնօք*
5 Բ *օձարարոյ*
6 Ա *ամենեքեան*
6-7 ԳԴ *քրիստոնեայք*
10 Ա *զսկիզբն*
11 ԱԴ *շի՛ Հայոցըս*
12 Ի *շի՛ ի (ՌՃԵ)*
14 ԲԳԴԵ *տնէն* Ա *զյարկ*
17 Ա՛ *պատմութեանց*
19-20 Ա *Ատրպատականէ*
20 Է *որպէս փխ այսպէս*
22 ԲԳԵ *Շահհաբաս*
23 Ա *յԱտրպատականէ*
25 ԱԳԵ *Որոյ փխ Յորոյ* Ա *բազմօք*
26 Ի *Գհանջայ*
26-27 Է *շի՛ ի գաւառս նորա, ի (Թարւէզ)...*
28 ԱԴ *զքննութիւն* ԱԴ *զորոնումն*
29 ԱԴՒ *ոչ այլ փխ ոչ է, այլ*
33 Ա *զամենեսեան*

կասեցի ի գրեալ ժողովրդոցն փախստեամբ կամ այլով կերպիւ, նոքա գտեալ ածցին ի գումարս ժողովրդոցն, և թէ ոչ գտցին, ինքեանք լիցին պարտաւորք թագաւորին և արժանիս սպանանելոյ: Արդ՝ այսպիսի օրինակաւ զամենեսեան հանին ի բնակիալ տեղեացն, և վարեալ տարան ի Պարսկաստան:

Եւ բաժանեալ, տրոհեցին ի նոցունց զքարադործ արուեստաւորան զամենայն, և տարան ի քաղաքն Սպահան վասն արուեստին, որ պիտոյանայր անդ ի գործս շինութեանց տան թագաւորին և համօրէն ազգին Պարսից. և անդ ի Սպահան բնակեցուցին:

Եւ զայլսն զամենայն վարեցին և տարան ի քաղաքն Ջահրապատ, և անդէն զոմանս ի քաղաքին, և զոմանս ի գեղօրայսն բնակեցուցին, որք ոչ մնացին և ոչ աճեցին, այլ օր յաւուր պակասեալ և վատնեալ սպառեցան, վասն դաժան և մգոհոտ և վնասակար օդոյն, որում ո՛չ էին ընտել. և թէպէտ բազումք կամեցան փախչիլ՝ ոչ կարացին, քանզի պատուէր ունէին ի թագաւորէն ճանապարհի պահողքն, զորս ոահդար կոչեն, թէ որք գան և մտանեն յաշխարհն Ջահրապատու՝ թողուլ, և որք ելանել և գնալ կամին յաշխարհէն՝ ոչ թողուլ. և թէ գտանիցեն զոք թաքուն գնացեալք՝ ըմբռնեալ սպանցեն. վասն որոյ ոչ ոք կարաց փախչիլ, և անդէն մնացեալ վատնեցան մահուամբ և կոտորմամբ, զի առաւել քան զԺՈ տուն հայք գնացեալք էին. և այժմ ԴՃ. տուն հազիւ թէ մնացեալք են[163]*: Եւ այժմու ժամանակիս եթէ պատահի ումեք քրիստոնէի գործ ինչ կարևոր ճանապարհորդութեան կամ այլ ինչ իրաց, պարտի գնալ առ քաղաքապետն և խնդրել թուղթ հրամանի և նշանի առ ոահդարն, զի մի՛ արգելցեն,՛ և մի՛ դարձուցեն զնա, զի թէ ոչ լինի թուղթ, ոչ թողուն գնալ, և քաղաքապետն նախ առնու ի գնացողէն փոխանակ անձին նորա զայլ ոք յերաշխի, և ապա տայ նմա թուղթ, և ապա ճանապարհորդն գնայ զճանապարհս իւր:*

Իսկ զքարահատ արուեստաւորսն, զոր բերին ի քաղաքն Սպահան, ի հարաւային կողմն քաղաքային յայնկոյս գետոյն բնակեցուցին, ի տեղին ուր զԳաւրի ազգն էին բնակեցուցանել, հուպ նաև խառն ընդ նոսին բնակեցուցին զքարահատ Հայս:

Եւ այժմ ի թուականիս Հայոց ՌՃՐ յամսեանն մայիսի տասնև վեցին հրամայեցաւ ի թագաւորէն յերկրորդ Շահաբասէն, զի այս Հայոց ժողովուրդքս, և ընդ սոցին ևս ազգն Գաւրի ելանիցեն յայսմ տեղւոջէ և գնասցեն ի տեղին ուր Երևանցիք՝ և Շիշաւանցիք, և Դաշտա-

1 Ա. *ի գրեցելոց* ՐԳԴՆ *այլ*
4 Ս. *այսպիսեաւ*
7 Ա. *զամենեսեան*
10 Ա. *զամենեսեան*
12 Ս. *աճեցան* ՐԳԴՆ *օր աւուր*
13 Ս. *դաժանի և մգոհոտոյ և վնասակարի*
14 Ս. *ընդելք* ՐԳԴՆ *ընդել* ՐԳՆ *փախչել*
17 Դ *հլանեն* Ի չիք *յաշխարհէն*
18 Ի *գնացեալ*
19 ՐԳՆ *փախչել*
20 Ն *հայ* Ի *գնացեալ*
23 Ա. *զթուղթ*
24 ԱԴ *ոահդարան* ՐԳՆ *բոահդարան*
25 ԱԴ չիք *զի թէ ոչ լինի թուղթ, ոչ թողուն գնալ*
27 Ա. *զթուղթ*
28 ԱԴ *զորս*
30 ԱԴ չիք *հուպ նաև*
31 Ա. *Հայսն* ՐԳԴՆ *հայերն*
32 ՐԳԴՆ *հայոցս*
32-33 ՐԳԴՆԻ չիք *տասնևվեցին*
34 Ա. *ընդ սոսա* Ա. *յայսմանէ*
35 Ի *գնայցեն*

ցիք բնակեցան. սոքա ևս անդ բնակեսցեն, զի ամենայն այլասեռ և այլահաւատ ազգ որոշեսցին ի մահմետականաց, զի մահմետականք անխառն ի նոցունց բնակելով սուրբ գտանիցին. վասն որոյ և ազգն Հայոց և ազգն Գաւրաց ելեալ գնացին և մերձ վերոյասացեալ քրիս-
5 *տոնէիցն բնակեցան։*

Իսկ ի՞ ոք հարցումն արասցէ վասն ազգին Գաւրի այս է։ Զի մեծ և առաջին Շահաբասն անվթար կամարարն սատանայի որպէս զազգն Հայոց յԱտրպատական աշխարհէն վարեալ էած ի Պարսկաստան, սոյնպէս և զազգն Գաւրաց արտասահման արարեալ յիւրեանց բնիկ
10 *աշխարհէն, ի Քիրմանայ, և յԵզդայ, և ի Շիրազայ, և յայլոց տեղեաց իւրեանց և բնրնալ էած ի հիմնաւերն ի Սպահան, և նոքօք լցուցեալ շինեաց և մարդաշատ արար զՍպահան։ Եւ այս Գաւրերս այսպէս եկեալ էին ի Սպահան և անդ բնակեալ, և այժմ զնոսա ևս հանեալ յայնմ տեղւոջէ, և տարան մերձ Հայոց ազգին ի կողմն ինչ, և անդ*
15 *բնակեցուցին։ Այս ևս այսպէս։*

ԳԼՈՒԽ ԼԴ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ԱԶԳԻՆ ԵԲՐԱՅԵՑԻՒՑ, ԲՆԱԿԵԼՈՑՆ Ի ՍՊԱՀԱՆ ՔԱՂԱՔԻ. ԵՒ ԱՅԼՈՑ ԵԻՍ ԵԲՐԱՅԵՑԻ ԱԶԳԻՆ ՈՐՔ ՆՆ ԲՆԱԿԱԿԱՆ ԸՆԴ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՄԲ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ
20 ՊԱՐՍԻՑ, ԹԷ ՎԱՍՆ ՈՐՈ՞Յ ՊԱՏՃԱՌԻ ԴԱՐՁՈՒՑԻՆ ՅԻՒՐԵԱՆՑ ՕՐԻՆԱՑՆ Ի ԿՐՕՆՍ ՄԱՀՄԵՏԻ

Յետ հանելոյ ազգին Հայոց ի քաղաքամիջէն Սպահանու, սկիզբն արարին և զազգն Եբրայեցւոց հանել։ Վասն զի ի ժամանակս թագաւորութեան այս երկրորդ Շահաբասին, և ի թուականութեանս Հայոց ՌՃՁ յաւուր միում որ էր ուրբաթ օրն այն ընդ մերձենալ երեկոյին,
25 *որ լուսանայր ի վաղուձան օրն շաբաթ, նոյն էհտիմալ-Դօլվաբն՝ որում անունն էր Մահմատ բէկ, որ և զազգն Հայոց եհան ի քաղաքամիջէն Սպահանու, և այժմ կամի զի և զազգն Եբրայեցւոց հանել. վասըն որոյ պատրաստեաց զօրականս և առաքեաց ի վերայ ազգին Եբ-*
30 *րայեցւոց, որք են Ջհուտ ազգն, թէ դուք ամենայն ազգդ Եբրայեցւոց պարտիք ելանել ի քաղաքամիջէ աստի և գնալ արտաքոյ քաղաքին ի միում յնկերաց քաղաքիս բնակիլ զի որովհետև ոչ էք հաւատովն Մահմետի. անսուրբ ազգ էք, ելէք ի քաղաքէս, և արտաքոյ քաղաքիս բնակեսջիք, քանզի այսպէս հրամայեցաւ վասն ձեր ի թագաւորէն։*

1 Ա. *բնակհսցին*
7 ԱԴ *նննգախտհն փխ կամարարն սատանայի*
8 Ա *յԱտրպատականէ*
10 Ի շիբ և *ի (Շիրազայ)*
11 ԱԴ շիբ *ի հիմնաւերն*
12 Բն *հմնաւերն Ասպահան*
14 Ա. *յայսմանէ* Ա. շիբ և
15 ԱԴ շիբ *Այս ևս այսպէս*
16 Ի ԼԳ փխ ԼԴ
19 Ն *թագաւորութեան*
24 ԱԴ *Շահաբասիս* ԲԳԻՆ *ի թվականութեան հայոցս*
26-27 Ա. *որոյ*
27 Բն *անուն էր*
29 Ա. *զպօրականս*
30 Ի *ազգք* փխ *ազգդ*

Առ որս աղերս արկեալ Եբրայեցւոց ասելով. «Որովհետև այսպէս հրամայեցաւ վասն մեր ի թագաւորէն, հրաման թագաւորին ի վերայ գլխոց մերոց՝ կատարմամբ անպակաս ղհրաման թագաւորին, բայց խնդրեմք ի ձէնջ ներումն յաւուրս երիս, զի ուստերօք և դստերօք, և ամենայն ընչիւք և ստացուածովք մերովք ելեալ գնասցուք։ Եւ մանաւանդ տեսանէք իսկ, զի օրս տարաժամեալ է, այլ և հիւանդք և ցաւադարք, ծերք և մատաղ մանկտիք յոլովք գոն, որք ոչ կարեն այժմ զգիշերայն գնալ, վասն որոյ խնդրեմք ի ձէնջ ներումն զերիս աւուրս»։

Իսկ եկեալ զօրականքն ոչ տային թոյլ և ներումն կելոյ մինչ ի վաղուեան օրն, այլ ստիպէին տագնապաւ և փութով ելանել յայնմ երեկոյին, քանզի այնպէս էր հրամայեալ նոցա էհտիմալ-Դօլվաթին, ոչ ներել և ոչ թողացուցանել մինչև ցառաւօտն, այլ ի նոյնում երեկոյին և ի նոյնում գիշերին հանել զնոսա զամենեսին ամենայն ընտանեօք իւրեանց. և թէ ոք մնասցէ ի վաղուեան օրն, գանս, և բանտս, և տանջանս ածիցեն ի վերայ այնպիսւոյ առնն, զի ոչ հնազանդեցաւ հրամանաց էհտիմալ-Դօլվաթին՝ և ոչ գնաց։

Զայս արար էհտիմալ-Դօլվաթն առ Եբրայեցիսն, որպէս զի նովաւ Եբրայեցիք լուծողք և անցաւորք գտանիցին շաբաթուն իւրեանց՝ զոր դատարկացեալք պահեն[165]։

Եւ զօրականքն էհտիմալ-Դօլվաթին, որք եկեալ էին ի հանել զեբրայեցիսն, տանջելով և հարկանելով, և սրօք և բրօք վիրաւորեալ բռնութեամբ արտաքս վարեցին զամենայն Եբրայեցիսն յիւրաքանչիւր բնակութենանց, զկահ և զկարասիս նոցա ցրուեցին, և ղդրունսն խորտակեցին։ Եւ Եբրայեցիքն ճիչ և կական բարձեալ աղաղակաւ լալով և ողբալով, իւրաքանչիւր ոք կալեալ զձեռանէ ուստերաց և դստերաց իւրեանց, և զանկողինս և զձորձս բարձեալ յոդն իւրեանց ելին ի տանց իւրեանց ի գիշերի ի տարադէպ ժամու. և շրջէին ի դրուներս մահմետականաց, ի փողոցս և ի պողոտայս՝ և ոչ ոք էր՝ որ գթայր ի նոսա։

Ապա ելեալ Եբրայեցւոցն ի քաղաքէն և գնացեալ ի մէջ Ջուղայու և Գաւրապատու, և անդէն ևս ոչ գտին տեղի կելոյ, քանզի եկին զօրականք ոմանք որպէս թէ յէհտիմալ-Դօլվաթէն առաքեալ, և պատուիրեցին Ջուղայեցւոց և Գաւրապատցւոց մի՛ տալ նոցա տեղի, վասն

1 Ա. *գաղերս* Դե *Եբրայեցոցն* Դ *եբրայեց-ւոցն*
4 Ա. *զննրումն* Բե *դստերովք* Գ *դստերօվք*
5 Ա. *ելեալք*
8 Ա. *զննրումն*
10 Ա. *զթոյլ և զննրումն*
11 Բե *վաղւեան*
12 Աէ *երեկոյի*
13 է *թուլացուցանել* փխ *թողացուցանել*
13-14 Աէ *երեկոյի... գիշերի*
14 Ա. *ամենիւք*
14-15 Բե *ընդաննօք... վաղւեան*
15-16 Ա. *զգանս և զբանտս, և զտանջանս ածցեն*
16 Դե *առն*
20 ԲԳե *դատարկացեալ*
22 ԱԲԳե *վիրաւորելով*
23 Ա. *զամենեսեան*
25 Ա. *զճիչ և զկական*
32 է *անդէն* և Ա. *զտեղի*
33 ԱԲԳե *առաքեալք*
34 ԱԲԳԴ *ջուղեցւոց*
ԱԲԳԴեէ *Գաւարապատւոց* Ա. *զտեղի*

որոյ և ոչ նոուն, և մնացին արտաքոյ յարկաց ամենայն ազգն Եբրայեցւոց։

Եւ եկն ի վերայ նոցա վտանգ և վիշտ մեծ, քանզի ժամանակն էր ցուրտ աշունն և սկիզբն ձմրան, և ցուրտն կարի վշտացուցեալ վտանգէր զնոսա, զի արտաքոյ յարկաց բացօթեայք կային։ Եւ բազում կային ի մէջ նոցա արք և կանայք ողորմելիք. վասնզի ոմանք էին ծերք և բազմօրեայք, հիւծեալք և պակասեալք զօրութեանց. և ոմանք հիւանդք և ցաւագարք և վտիտք մարմնով որք ոչ զօրէին ի շրջել։ Եւ յոլով կանայք մանկամարթ ունելով մանկունս դիւեցիկս ի սահինս իւրեանց, և ոմանք կանայք յղիք և ծանր ոտք. և ոմանք աղջկունք երիտասարդուհիք, և տղայք վայելչատեսք, առ որս տարփացեալ պիղծ և վաւաշոտ և շնաբարոյ արք յաղգէն Պարսից, խօսէին առ նոսա բանս տգեղս, ազտեղիս և ախտակիրս և ամօթս մեծամեծս ածէին ի վերայ նոցա։ Նա և այլք մահմետականք որք հանդիպէին՝ հայհոյէին, անարգէին, ղղուէին, հարկանէին, և բազում նեղութիւնս հասուցանէին ողորմելեացն այնոցիկ։

Զկնի այսորիկ իբրև ետես էհտիմալ-Դօլվաթն թէ՛ անհնար է նոցա կամաւ գալ ի տաճկութիւն, խորհեցաւ բռնութեամբ ածել ի տաճկութիւն. քանզի հրամայեաց ազգին մահմետականաց, և մանաւանդ արանց զինուորաց, զի ուր և գտցեն զայր Եբրայեցի, կալեալ բերցեն ի դուռն էհտիմալ-Դօլվաթին։ Վասն որոյ ամենայն արք մահմետականաց ուր և գտանէին զայր. Եբրայեցի՝ կալեալ կապեալ ածէին առաջի էհտիմալ-Դօլվաթին. և նա զառաջինն մեղմով խօսէր ընդ նոսա և ասէր. «Ընկայք դուք, մարդիկք, դարձարուք յունայն օրինաց ձերոց, և ծանեարուք չարարիչն և զՏէր Աստուածն երկնի և երկրի՝ և լերուք մեզ եղբարք»։

Իսկ Եբրայեցիք պատասխանեալ ասէին. «ԶՏէրն և զԱստուածն երկնի և երկրի ճանաչեմք և պաշտեմք, բայց ձեզ եղբայր լինիլ ոչ կամիմք, և յօրինաց մերոց ոչ դառնամք, զի օրէնքն մեր ճշմարիտ է՝ և աստուածատուր, զի ձեռամբ Մովսիսի մարգարէին ետ Աստուած, որում դու իսկ դիտակ ես»։

Ասաց էհտիմալ-Դօլվաթն. «եթէ գայցէք ի հաւատս մեր՝ լինիք մեզ եղբարք սիրելիք, այլ և բազում գանձս և պարգևս և մեծութիւնս տամք ձեզ»։

Առ այս բան՝ ոմն այր Եբրայեցի, որում անունն էր Յովսէփ պատասխանեալ ասաց. «Յորժամ աշխարհիս հողագործ արանցն ոք գայ առ մեզ ի գնել զարդ մարդոյ վասն պարտիզաց, մեք նախ զդինն աղբին առնումք և ապա տամք զարդն նոցա, իսկ դուք գանձս և պարգևս

3 Ա.ԲԴՆ *վտանկ*
4 Ա.ԲԴՆԻՆ *ձմռան*
5 Ա.ԲԴՆԻՆ *վտանկէր*
6-14 Ա.Ի չիմ *վտանգի... վերայ նոցա*
7 Բ.Ի *բազմօրեայք ԲԴՆԻՆ ի զօրութեանց*
11-12 ԲԴՆԻՆ *արտփացեալ պիղծ և վաւաշոտ*
14 Ա. չիմ *այլք*
15 Ա. *զբազում*
16 Բ *ողորմելեանցն*
18 Ի չիմ *գալ ի ԳԴ տաճկութիւնն*
21 Ա. *ամենեքեան*
28 ԳՆԻՆ *լինել*
33 Ա. *զբազում Ա. զպարգևս և զմեծութիւնս*
35 Ա. *որոյ փխ որում*
36 Ա. *հողագործաց*
38 Ա. *դգանձս և զպարգևս*

եղեալ ի վերայ ձերդ հաւատոյ ձգէք ի վերայ մեր». զայս ասաց այրն Յովսէփ՝ զի թերևս առ այն բան զայրասցի էհտիմալ-Դօլվաթն ի վերայ նորա և սպանցէ զնա։ Սոյնպէս և ամենայն հրէայքն ասէին. «Ապան դմեզ դամենևսևան. զի լաւ է մեզ ամենեցուն մեռանիլ, քան թէ յօրէնս ձեր մտանիլ»։

Եւ էհտիմալ-Դօլվաթն ասաց՝ «Գիտեմ զի այդպիսի զայրացուցիչ բանսդ այնր աղագաւ ասէք՝ զի ես զայրացեալ ի վերայ ձեր սպանից զձեզ, բայց այնպէս դիտակ լերուք՝ զի բնաւ ոչ զոք ձէնջ սպանանեմ, այլ մեղմագոյն և երկար չարչարանօք այնքան տանջեմ զձեզ՝ մինչ զի յամենայն կողմանց վհատեալք դառնայք յօրէնս մեր»։

Իսկ արքն Եբրայեցիք համախորհուրդ եղեալ, բանս աղաչանաց մատուցին առ էհտիմալ-Դօլվաթն խնդրելոյ տեղի բնակութեան՝ և ասացին. «Որպէս զազգն Հայոց հանեալ ի քաղաքամիջէ աստի, և յայլուր եառուր նոցա տեղի բնակութեան, սոյնպէս և մեզ տուր տեղի բնակութեան կելոյ ի վայրի ուրեք յեզերս քաղաքիս, զի առ սակաւ սակաւ շինեսցուք մեք իւրաքանչիւր ոք մեզ տուն բնակութեան, և ելեալ ի քաղաքէս անդ գումարեալ բնակեսցուք»։

Իսկ էհտիմալ-Դօլվաթն համախորհուրդ եղեալ ընդ այլ ևս իշխանացն Պարսից՝ ցուցին նոցա տեղի ուրեք հնոի ի քաղաքէն. և կանուն տեղւոյն Գօզալդաբայ կոչեն, որ է մերձ Մուսալաս իմամին և տեղիս այս էր անպատեհ և անձեռնտու. նախ՝ զի կարի հնոի էր ի քաղաքէն. և երկրորդ՝ առանց ջրոյ էր, և թէ ի հեռուստ ջուր բերէին ոչ գայր, և ոչ հասանէր, վասն վայրացն հեռաւորութեան, և թէ ի տեղին ջրհոր փորէին, ոչ բղխէր ջուր զի լեռնական և վիմային էր տեղին։ Զայս անպատշաճ տեղիս յայն սակս ցուցին, զի այսու ևս յանճար և ի տարակուսի մնայցեն Եբրայեցիքն, վասն որոյ Եբրայեցիքն ոչ կարացին զնալ ի տեղին յայն, այլ մնացին արտաքոյ և բացօթեայ։

Յաջմ հետէ մտահոգ եղեալ էհտիմալ-Դօլվաթին առ սակաւ սակաւ ի տանջանս մատնել զԵբրայեցիսն։ Եւ ի վաղ և ի հին ժամանակաց ի միում տեղւոջ յեզերս քաղաքին արտաքոյ շինութեանց և բնակութեանց ի վայրի ուրեք, կայր տեղի ինչ բարձր պարսպեալ և դուռն ի վերայ, բայց ի ներքս ի պարսպին տուն կամ բնակութիւն բնաւին ոչ դոյր, այլ լոկ միայն պարիսպ շուրջանակի բոլորեալ։

Հրամայեաց էհտիմալ-Դօլվաթն պարսիկ զօրականացն, զի երկու Եբրայեցի առն՝ մէկ զօրական կացցէ ի վերայ չարչարիչ, և զամենայն ըմբռնեալ և առ ձեռն դնեալ Եբրայեցիսն կապանօք տանիլ և լնուլ

3 Ա. *ամենեքեան*
5 Գ *յորէն փխ յօրէնս*
6 ԱՐԳԵ *զայդպիսի*
7 Ա. *այնու փխ այնր*
10 Ա. *յամենից*
11 Ա. *զբանս*
12 ԱԷ *խնդրելով* Ա. *զտեղի*
14 ԲԳԵ *տվեր փխ եառուր* Ա. *զտեղի... զտեղի*
15 Ա. *կալոյ փխ կելոյ*
16-17 Ա. *զառուն... ելեալք*
17 ԱԳ *բնակիցուք*
18-19 Ա. *այլոց... դտեղի*
23 ԲԳԵ *ջրխոր*
24 Ա. *ոչ բղխիւր* ԲԵ *ոչ բխէր*
26 Ա. *վասն որոյ և երբայեցիքն*
27 Ա. *բացօթեայք*
29 Ա. *ի վաղուց և ի հնոց*
35 Է *կայցէ փխ կացցէ*
36 ԲԳԵ *տանել*

ի մէջ պարսպին այն, և չուր ցանել յատակս նորա ի վերայ երեսաց երկրի. և զամենեցուն ձեռս ի չեռս կապել և հանել զվարտիս նոցա, և ի վեր հաւաքել ղդրօշակս զգեստուցն և մերկ մարմնով նստուցանել ի վերայ երկրի: Եւ էր ժամանակն ցուրտ աշունն, որ ի ցանել ջրոյն վերնասօք երկրի տամկանայր երեսք երկրի և մանաւանդ թէ սառնոյր. և ողորմելի Եբրայեցիքն մերկ մարմնով նստէին ի վերայ երեսաց երկրի սառուցելոյ, և Պարսիկ զինուորքն ի վերայ կացեալ հարկանէին. և ջերմս տիւս և ջերմս դիշերս այնպէս մնացին Եբրայեցիքն ա-նօթի և անսուաղ, զի ոչ ոք տայր նոցա կերակուր, և ապրդականք Եբրայեցւոցն եկեալ արտաքոյ կացեալ չեռուստ կուսէ պարսպին բերնալ հաց ձգէին ի մէջ պարսպին առ ի լինիլ կերակուր Եբրայեցւոցն. և զայն ևս զինուորացն յափշտակեալ ուտէին՝ և ոչ տային Եբրայեցւոցն. վասն որոյ անսուաղ մնացին զաւուրս երիս մինչև հրամայեաց Էհտիմալ-Դօլվաթին՝ որ հանեալ անտի բերին ի քաղաքն և արկին ի բանտ:

Յաղագս Եբրայեցւոց հարցումն արար Էհտիմալ-Դօլվաթին ընդ առաջնորդն և գլուխն օրինաց իւրեանց, որում Սադր ասեն ինքեանք, թէ սոքա կամաւ ոչ գան ի հաւատս մեր՝ զինչ արասցուք. մա՞րթ է բռնութեամբ դարձուցանել թէ ոչ. պատասխանի արար Սադրն. «Ոչ դոյ հրաման յօրինաց մերոց զոք բռնութեամբ դարձուցանել»: Կրկին եհարց Էհտիմալ-Դօլվաթին. «Ասա զի՞նչ արասցուք». ասաց Սադրն. «Ինձ ոչ է փոյթ, դու դիտես»:

Դարձեալ կոչեաց Էհտիմալ-Դօլվաթին զԵբրայեցիսն առաջի իւր և ասաց գալ ի հնազանդութիւն՝ և մտանել յօրէնս Մահմետի. զի ով ոք որ դայ յօրէնս մեր ոտամբ նմա պարգևս երկու թուման՝ և նա ազատի ի տանջանաց և նստի հանդարտութեամբ ի տան իւրում. և ով որ յառաջագոյն գայցէ ի հաւատս, ոտամբ նմա պետութիւն և իշխանութիւն:

Եւ էին յաղագս Եբրայեցւոց արք ումանք՝ որք էին թերահաւատ առ օրէնս իւրեանց, և խոտորեալք ի գործս թիւրս գողութեան և բո-զութեան և այլ սոյնպիսի չարեաց, և ի ներարամադրեալ խորհուրդս իւրեանց հաճեալք էին օրինաց Մահմետի: Իբրև տեսին զայս ամենայն անցս որ առ Եբրայեցիս. այլ և լուան զյորդորական բանս Էհտիմալ-Դօլվաթին, ոմն յայտ թերահաւատ արանցս, որ կարի անհաւատ և պիղծ էր, որում անունն էր Աւետիսյ. Նախ քան զամենեսեան սա եկեալ եկաց առաջի Էհտիմալ-Դօլվաթին, և յօժարութեամբ յանձն

1 Ա. *ղջուր*
2-3 ԱՊ *չիմ և զամենեցուն ... զգեստուցն*
9 Բե *կերակուր*
9-10 ե *Եբրայեցւոցն*
11 Ա. *զհաց Գէ լինիլ*
13 Ա *չիմ վասն որոյ... զաւուրս երիս մինչև*
ԱՊ *զկնի փխ մինչև*
17 Աէ *զոր փխ որում*
19 Գ *սատրն*
21 ԱԳե *սատրն*
25 Բե *և գայ փխ որ գայ* Աէ *ոք գայ փխ ոք որ գայ* ԲԳե *պարգևս*
27 28 Ա *պետութիւն և զիշխանութիւն*
29-35 Ա *չիմ Եւ էին ... և պիղծ էր*
29 ԲԳԴե *թերահաւատք*
31 Բ *սոյնպիսիք է այլ և*
32 ԲԳԴ *օրինացն*
35 ԱՊ *պիղծ էր –իյ հետո. Այր ոմն յայնցանէ, որում (Ա որոյ)*

էառ ուրանալ զհրէութիւն և դաւանել զտաճկութեան հաւատն։ Յորոյ բանից վերայ յոյժ ուրախացեալ բերկրեցաւ էհտիմալ-Դօլվաթն, և սնոտի պճով յարգեալ գովեաց և սիրեաց զնա. և կոչեաց զնա իւր եղբայրացիր, և զամենայն զգեստ անձին իւրոյ՝ զոր զգեցեալ էր, հա-
5 *նեալ զգեցոյց նմա, և մինչև ցմատանիս մատանցն հանեալ եդ ի մատունս նորա, և այլ ևս ինչս յոլովս պարգևեաց նմա և ինքն հանդոյց զմիտս նորա։*

Եւ այս ուրացող այրս Աւատիայ, եղև հնարացոյց իշխանացն Պարսից, քանզի ասաց. «Զարս Եբրայեցիս բազում ի միասին մի
10 *պահէք, և կամ թէ զչորս և զհինգ ի միասին չատեան մի բերէք. զի քաջալերեալ հաստատեն զսիրտս իրերաց, այլ երկու և երեք միայն բերէք. և բռնութեամբ դարձուցէք, զի նոքա կամաւ ոչ դառնան։ Այլ և նախ կալարուք զքահանայն նոցա՝ զոր խախամ ասեն, և ի վերայ նո-րա բազում ջանիւ ջանացէք, խոստմամբ պարգևաց և սպառնալեօք*
15 *տանջանաց, թերևս դարձուցանիցէք զնա, զի թէ նա դարձաւ, ամենեքեան դառնան»։ Ըստ այսմ օրինակի յոլով հնարս եգոյց Պարսից պիղծն և ուրացողն այն Աւատիայն։ Որոյ խրատուն ստէպ յուզմամբ որոնեալ Պարսիցն գտին զխախամն, որում անունն էր Սայիտ՝ և բե-րեալ կացուցին առաջի էհտիմալ-Դօլվաթին, առ որ ասաց. «Հաւանեա*
20 *բանից իմոց և կատարեա զհրամանս թագաւորին, եկ դարձիր յօրէնս մեր մահմետականս, և առ յինէն պարգևս և բարութիւնս յոլովս». իսկ խախամն ոչ էր յանձին կալեալ, այլ հրաժարեալ էր. և այլ ևս բանս բազումս խօսեցան իշխանքն ընդ խախամին, և նա ոչ հաւանեցաւ. այլ խնդրեաց հրաման գնալոյ ի տունն իւր, և իշխանքն եառն նմա*
25 *հրաման գնալոյ. և անդէն առժամայն ուրացողն Աւատիայ, ազդեալ իշխանացն ոչ թողուլ զնա գնալ ի տուն իւր, այլ առ ինքեանս պահել և այնպէս արարին իշխանքն։ Եւ ի վաղիւն պարձեալ կացուցին յա-տենի և ի նոյն բան հրամայեցին դառնալ յօրէնս Մահմետի. և յայնմ ևս նուագի ոչ հաւանեցաւ խախամն։ Եւ յերրորդումն աւուր ևս այս-*
30 *պէս կատարեցաւ գործն։ Իսկ յաւուր չորրորդի յետ բազում բանից, զոր խօսեցան ընդ խախամին, հատին ի վերայ նորա վճիռ, զի թէ ոչ դառնայ յօրէնս Մահմետի պատուհասցեն զորովայնն և կախեսցեն յուղտէ և շրջեցուսցեն ի մէջ քաղաքին և ղինչն և ղընտանիսն առ-ցեն յաւարի։ Զայս վճիռ հատին, և ուղտան բերեալ առ ժամայն նըս-*

1 Ա.Ր *Որոյ*
4 Ս. *զդեստս*
6 Ս. *զինչս*
6-7 Ա.Դ *հանկոյց զմիտս*
ՐԳ *հանկոյց Ն յանկոյց*
7 Ս. *նոցա փխ նորա*
9 Ա.Դ.Ր *զբազումս*
13 Գ *խաղամ*
14 Ս. *բազմաւ*
16 ՐԳԻՆ *պարսիցն*
17 Ա.Ր *չիմ պիղծն և ուրացողն*
ՐԳԻՆ *Աւատիայ*
18 Գ *զխաղամն* Ս. *որոյ*
19 Ս. *հաւանեաց* Ի *հաւանեալ*
20 Ի *կատարեաց հրամանս*
21 Ս. *զպարգևս և զբարութիւնս*
22 ԴԳ *խաղամն* Ս. *զբանս*
23 Գ *խաղամին*
24 Ս. *զհրամանն... ի տուն* ՐԳԻՆ *տուն*
25 Ա. *զհրամանն*
28 Ա.ՐԳԻՆ *և զնոյն փխ և ի նոյն*
29 Գ *խաղամն* Դ *աւուրս փխ աւուր*
30 Ս. *յաւուրն... բազմաց* Դ *յաւուրն*
31 Ս. *զվճիռ*
32 Ի *կախիցեն*
33 ՐՆ *զընդանիսն*

տուցին անդէն, և եկեալ դահճացն բացին զորովայնն, և հանեալ զսուրն իւրեանց Հարկէին զխախամն կամ ուրանալ կամ զորովայնն պատառել։ Եւ խախամն յահէ սպանմանն, այլ և առ ի գութս ընտանեացն Թուլացաւ. վասն որոյ դաւանեցուցին նմա զդաւանութիւն հաւատոյն իւրեանց՝ և դարձուցին յօրէնս Մահմետի, և ուրախացան ի վերայ նորա անպատում ուրախութեամբ։

Յետ այսորիկ՝ որ խախամն դարձուցին ի հաւատս իւրեանց, յարեանցն Բբրայեցւոց ածէին յատեան մի և երկու և ասէին ցնոսա. «Զի՞նչ ես ունիք ասել, զի ահա խախամն ես եկն ի հաւատս, և դուք զի՞ ես յամառեալ դիմադարձիք». և Բբրայեցիքն ոչ հաւանէին։ վասն որոյ հրամայէին իշխանքն զօրականացն տանիլ զԲբրայեցիսն ի բանտն. և նոյնժամայն միւսանգամ բերել և այնպէս բազում անգամ տանէին և բերէին. և ի տանիլն և ի բերելն՝ զօրականք և ծառայք և սպասաւորք իշխանացն, որք կային ի տեղիսն, թքանէին, հայհոյէին, հարկանէին, ապտակէին, զարկուցանէին զգետնի, և ընդ քարշս տանէին, և բերեալ կացուցանէին առաջի իշխանացն և Էհտիմալ-Դօլվաթին, և բռնութեամբ դաւանեցուցանէին զդաւանութիւն հաւատոյն Մահմետի, և Բբրայեցիքն առ վտանդի տանջանացն ակամայ կամօք դաւանէին։ Եւ յետ դաւանելոյն բերէին Պարսիկքն ագուցանէին դաւանողաց նոր կապայ, և տային նոցա պարգև յարքունական գանձէ իւրաքանչիւր առն երկու թուման դրամ. և Թողուին գնալ ի տունս իւրեանց. և որք ոչ ուրանային դարձուցեալ ի բանտն պահէին. և ապա կրկին և երեքկին և բազմակի բերեալ յառաջ կացուցանէին և Հարկէին ուրանալ։ Եւ այնպէս առնելով զամենայն կալեալ արսն դարձուցին ի կրօնս մոլար առաջնորդին Մահմետի, և ամսաչափ միոյ աւուրս երեք հարիւր և չիսուն այր դարձուցին յօրէնս Մահմետի։

Այսուհետև Բբրայեցիքն տկարացան առաջի Պարսից, զի կէս մասն ի նոցունց դարձան յօրէնս Պարսից, և Պարսիկքն զօրացան ի վերայ Բբրայեցւոց, և այլ ոչ ևս անսային նոցա կալ, այլ բռնութեամբ կալեալ զԲբրայեցիսն օր յաւուր ածէին առաջի Էհտիմալ-Դօլվաթին, և բռնութեամբ դարձուցանէին ի կրօնս Մահմետի։

Եւ այնքան հնարեցան Պարսիկք և բռնացան ի վերայ Բբրայեցւոց առ ի դարձուցանել զնոսա և ո՛չ արարին ներումն և ո՛չ սակաւ մի, մինչև զամենայն ազգն Հրէից զրնակեալսն ի մէջ քաղաքին Սպահանու դարձուցին ի կրօնս Մահմետի, վասն զի սակաւք էին ազգն Հրէից բնակեալք ի Սպահան քաղաքի, իբրև երեք հարիւր տուն, պակաս և ոչ աւելի։

Եւ ի զրաւել ամենեցուն կարգեցին ի վերայ նոցա Մահմետական

2 Գ զխաղամն
3-4 ԳՆ ընդանեացն
4 Դ զդաւանութիւնն
5 է յօրէնս իւրեանց Մահմէտի
6 Ա անպատմաւ
7 Գ հաւատն
11 ՐԳԴՆ տանել
13 ՐԳԴՆ տանիլն
18 Ա վտանկի... ակամայիք ՐԳԴՆ վտանկի... յակամայ
19-20 ՐԳԴՆ դաւանողացն
20 Ա զնոր... զպարգև ՐԳԴՆ պարգևք Ա յարքունականէ
21 Ա զնրկու
25 ԱԴ չիմ մոլար առաջնորդին Ա ամսաչափի ԳԵ յաւուրս ԱՐԳԴՆ աւուր

մօլլայ, որ ուսուցել նոցա զօրէնսն Մահմետի, և հանապազ տարցի յաղօթանոցն Պարսից. զի պարսկօրէն աղօթեսցեն. և մանկանց նոցա ուսուցել զգիրս և զաւանդութիւնս մահմետականս. այլ և օրինադրեցին Հրէից զի զղատևս իւրեանց տացեն մահմետականաց, և ի դրսեւրաց նոցա ինքեանք առցեն. այլ և մի՛ արասցեն զննումն կննդանեաց, որպէս յառաջն առնէին, այլ ի շուկայէն ի մահմետական զնողաց առցեն միս. և այլ ևս այսպիսի օրինադրութիւնս բազումս կարգեցին Պարսիկք ի վերայ Եբրայեցւոց:

Այնուհետև նոցա վերակացու մօլլայն հանապազ ժողովէր զնոսա և ի միասին գնային ի մաշիթ, և աղօթէին Հրէայք առ հառնուիս լինելով Պարսից ի տուղ ինչ աւուրս, և վասն զի՛ ո՛չ էին կատարեալ կամօք մտանել ընդ աւանդութեամբն Մահմետի, ի սակաւ աւուրս դնացին և այնուհետև թուլացաւ սակաւ սակաւ յեռանդնալը եղեն: Եւ յորժամ վերակացու մօլլայն հարցանէր Հրէից, թէ ընդէ՞ր ո՛չ գայք յաղօթանոցն, Եբրայեցիք զայս և զայն պատճառեալ անցուցանէին. և մօլլայն խրատէր զնոսա. և նոքա այնմ ևս ո՛չ անսացին. և ապա բարկացաւ մօլլայն ի վերայ նոցա, և այնմ ևս ոչ անսացին. և յայնմհետէ մօլլայն մատևաւ առ իշխանս մահմետականս և եղև ամբաստան զՀրէից, թէ ո՛չ մտանեն ընդ օրինօք մերովք: Եւ Եբրայեցիք ևս ամբաստան եղեն զմօլլայէն, թէ կաշառաց ակն ունի առ ի մէնջ, և յայն սակս ընդ վայր չարշարէ զմեզ և մեք զի ո՛չ տամք, վասն այն ամբաստան լինի զմէնջ: Եւ այնքան կերպակերպ կեղծիւք և հնարիւք վարեցան Եբրայեցիքն ընդ Պարսից՝ մինչ զի ձանձրացան Պարսիկ իշխանքն և մօլլայն և ի բաց կացին ի նոցունց. այլ և Պարսից ամենեցուն յայտնի եղև, որ Հրէայք ոչ կամին մտանել յօրէնս Մահմետի:

Իսկ որք Հրէայքն էին՝ ոչ գնային ի մաշիթն Պարսից, նա և ոչ բնաւ մօտենային նոցա. և ոչ գնէին միս ի շուկայէն, այլ ծածուկ ի տունս իւրեանց զննուին ոչխարս, և կամ թէ տեսանց մսոյ անցուցանէին աւուրս բազումս: Եւ լինէր զի երբեմն երբեմն վասն ահի և երկիւղի մատնողացն և Պարսիցն՝ գնային Եբրայեցիքն ի շուկայն և գնէին զննեալ միս ի Պարսիկ զննողաց, և ակնարկ բազ և համարձակ առաջի ամենեցուն բերէին ի տունս իւրեանց՝ որպէս թէ իւրեանց ուտելոյ վասն. և ոչ ուտէին. այլ ի ծածուկ ձգէին առաջի շանց՝ և շունքն ուտէին: Եւ այլ բազում այսպիսի գործս ունէին ազգն Եբրայեցւոց, որովք յայտնեալ սատկեաւ թէ ոչ կամին թողուլ զօրէնս հրէութեանն:

Բայց անօրէն և ուրացողն այն Աւետիայ և իւր գործակից չար

1 ԲԴԴՆ *տարցէ*
3 ԲԴԴՆԻ: *դիրս*
6 Ի: *ունէին* փխ *առնէին* Ա. *ի մահմետականաց*
7 Ա. *զմիս*
8 Ի: *Պարսիկ*
9 (բոլոր ձձ-ում ամենուրեք մօլայ, բաս որում ն նագրում երբեմն ճանդիպող մօնլա ձևը ճաճախ ուղղված է մօլայ-ի)
9-25 ԱՊ չիմ *Այնուհետև ... Մահմետի*
13 Ի *յետոնեալ*
26 ԲԴԴ *որ* փխ *որք*
27 Ա. *զմիս* ԱՊ *մօտանային*
31 Ա. *զննեալ*
34 Ա. *գայլ*
37 ԱՊ չիմ *անօրէն և ուրացողն այն* Դ *գործակիւ*

ընկերքն՝ որք ընդ նմա ուրացան, նոքա յոյժ ուրախ և հաստատ էին ի վերայ իւրեանց նորագիտ հաւատոյն՝ կրօնիցն Մահմետի, վասն որոյ շրջագայեալ ի մէջ Եբրայեցւոց յուզէին, զննէին, տեղեկանային, թէ ո՞ր ոք կամակար մտօք իցէ հաւանեալ օրինացն Մահմետի, և ո՛ր ոք ոչ. այլ տակաւին ունի ի ծածուկ զօրէնս Հրէութեան: Եւ յայսմ պատճառէ բազում նեղութիւնս հասուցանէին ազգին Հրէից, զորս իրաւ և զոչս անիրաւ. քանզի կալեալ զոմանս ի Հրէից հարստահարեալ և բանաւէճ լեալ զատափեա առնէին, և ասէին. «Ընդէ՞ր դու ոչ գնաս ի մաչիքն յաղօթել այլ գնաս ի ժողովարանն Հրէից»: Եւ ոմանց, թէ զորդին քո առ խաչեցան առաքեա՛ յուսանիլ՝ և ոչ առ մօլլայն. և ոմանց, թէ մի՛ ոչ առնուս ի շուկայէն, այլ ի տան քում գնեսցէ առնես. և այլ այսպիսի գործս բազումս առնէին ընդ Հրէից՝ ուրացողքն ի նոցունց. և Եբրայեցիքն՝ վասն երկիւղին Պարսից բազում աղաչանս արարեալ նոցա և կաշառս տուեալ, հազիւ ուրեմն կարէին զերծանիլ ի ձեռաց նոցա:

Այլ և այս ուրացողքս պատճառք եղեն զի զերից Եբրայեցի ազանց զդատերան առին Պարսիկք իւրեանց ի կնութիւն. քանզի յանուանէ յիշեցին զաղջկունան առաջի Պարսից և յորմէ գովեցին, և պրգռեցին զՊարսիկն առնուլ զաղջկունան ի կանայս, այլ և ինքեանք վրէժխնդիր լեալ հարկէին զտեառս աղջկանցն տալ Պարսիցն ի կնութիւն, իսկ Եբրայեցիքն ոչ կամէին տալ և տեառք աղջկանցն բազում կերպիւ հնարս գործեցին և կաշառս ետուն, զի գոնեա ազատեսցեն զաղջկունան, և ոչ կարացին, այլ առին Պարսիկք զերեսին աղջկունս: Եւ ազգն Հրէից յոյժ վշտացեալ ի սիրտ և յոգի՝ խոցեցան ի վերայ արարմանց ուրացողացն. և զայրագին սրտմտութեամբ և նախանձու լցեալք եղեն, և եղին հաստատութեամբ ի միտս իւրեանց սպանանել զուրացողսն, և նախ զԱւետիայ, զի նա կարի չարագոյն էր:

Եւ էր այր ոմն յազգէն Հրէից յոյժ վրէժխնդիր օրինացն Հրէութեան, որում անունն էր Փինհաս, սա նախանձախնդիր գոլով օրինացն հայրենի, հոգւով ի սիրտ և յոգի սպանանել զԱւետիայ. և հանճարեալ հնարիւք եգիտ այլ ևս արս երիս յազգէն Հրէից խորհրդակից և ընկեր ինքեան, վասն սպանման պղծոյն Ավետիայի, անուն միոյն Իսահակ՝ և երկրորդին՝ Մասիհ, և երրորդին՝ Յուդայ. սոքա չորեքեան միաբանեալ և հաստատութեամբ պայմանեցին ի միջի իւրեանց ի դէպ ժամու սպանանել զԱւետիայ:

Իսկ ի խնամոցն Աստուծոյ պատահեցաւ յաւուր միում գործ այս-

10 ՐԳԴն յուսանիլ
16-17 ԱԴ չիք Այլև ... իւրեանց
17 ՐԳԴն զդատերս
17-23 ԱԴ չիք ի կնութիւն... աղջկունս
18 Դ առաոի փխ առաջի է առ ի փխ առաջի
19 Դե գոգոնցին
20 ՐԳԴն վրէժխնդիրք Բ աղջկանցն
21 Բ աղջկանցն
23 Բ զաղջկունսն Բ պարսիկ ՐԳԴ աղջկունս
24 Ա և
27 ԱԴ չիք և
28 Ս. չիք Եւ
29 Ա որ
31 Ս. զայլևս արս է այրս
33 Ա չիք և (հրրորդին) Ա չորեքեանս
35 ԱԴ զոր և սպանին փխ սպանանել զԱւետիայ Դ սպանել փխ սպանանիլ
36 -4 (հաջորդ էջում) ԱԴ չիք Իսկ ի խնամոցն ... տաճկութիւն

պիսի, զի Աւատիայն ըստ հանապազորդ սովորութեան իւրում շրջէր ի տունս Հրէից յաղագս պղնելոյ և պիտելոյ պնոսա, և հանդիպեցաւ քահանային Հրէից, որ խախամ կոչէն. և ասաց նմա ահագուցանելով պնա։ «Դու ո՞չ Թողուս զՀրէայան դառնալ ի տաճկութիւն, վասն զի շրջիս ի տունս նոցա խրատանալ՝ քաջալերիս հաստատուն կալ ի հրէութեան. այլ և պննումն կենդանանաց առնես ի տունս նոցա». և խախամն թէպէտ յուրատ կայր և բազում բանիւք դնէր վկայութիւն և երդնոյր, զի գոնեա պերծցի ի ձեռաց նորա և ոչ կարաց։ Ասաց Աւատիայ։ «Եթէ իրաւ է ասացեալն ի քէն, որ ոչ առնես պննումն կենդանեաց, և ընդէ՞ր պահես առ քեզ զսուրն պննման. արդ՝ բե՛ր և տուր ցիս»։ Եւ սուրն պննման՝ զոր խնդրեաց Աւատիայ, այս է. զի ոչ է սուրն այն որպէս զայս հասարակ սուրքս, որ ամենայն ոք կրէ առ ինքն, այլ այն սուրն այլ իմն սուր է, մեծ և երկայն և կարի առաւել սուր, որ յառաջնում նուագին ի քաջելն ի պարանոցս ոչխարին հատցէ զգլուխն, և թէ ևս յաւելցի երկիցս՝ և ոչ ևս, իսկ թէ երիցս կրկնեսցէ, անընդունելի է պննեալն, և զայս սուր յատուկ վասն պննման շինեն և քահանայն ունի առ ինքն վասն պննիս առնելոյ և ոչ այլ ոք. վասն այնորիկ ասաց Աւատիայ քահանային, թէ տուր ցիս զսուրն պննման։ Եւ խախամն՝ զի ոչ կարաց պերծանիլ ի նմանէ, վասն որոյ ետ ի նա զսուրն պննման. և առեալ զայն Աւատիայ հեծաւ ի միջաց գօտին իւր, և թողեալ զխախամն սկսաւ գնալ ընդ պողոտայն՝ յորում պողոտայի էր և տուն Փինհասին. և գալով եկեալ հեծաւ մինչ ի դուռն տան Փինհասին, և ի նմին ժամու պատահեցաւ, զի Փինհաս ևս դուրս գայր ի տանէ իւրմէ, և առժամայն պատահեցաւ Աւատիային, և երկոքին սկսան բարեւել ընդ միմեանս և հարցանել զողջունէ իրերաց, և Փինհաս խորամանկ նենգութեամբ սկսաւ կեղծիք և առ աչս բարեկամ և սիրելի ձեւանալ՝ և լրջամիտ յօժարութեամբ և բազում թախանձանօք մեծարել զնա ի տուն իւր ի պատճառս պատուոյ, յորոյ պատճառէ Աւատիայ գնաց ի տունն Փինհասին։ Եկին անդ և երեքին ընկերքն և ախտադիրքն Փինհասին, Իսահակ և Մասիհ և Ծուդայ, բերին յառաջ սեղան, կերակուր և գինի, և զի էր ժամանակն գարնանային. վասնորոյ կայր ի մէջ սեղանին վարունգն, որ է խիար. և Փինհաս խնդրեաց ի մօրքն դանակ վասն կեղևելոյ զվարունգն. և մայրն քանզի գիտէր թէ վասն սպանանելոյ զԱւատիայ՝ պատճառանօք խնդրէ զդանակն, վասն որոյ ոչ ետ, այլ ասաց թէ ոչ գոյ ի տան աստ դանակ. և Փինհաս երկիցս և երիցս կրկնեալ խնդրեաց ի մօրքն դանակ և նա ոչ ետ։

Յայնժամ Աւատիայ զսուրն պննման զոր առեալ էր ի քահանայէն և ընդ իւր ունէր, հանեալ ետ ի Փինհաս, ասելով. «Ահա դանակ, առ և դուալ կեղևեա». և Փինհաս իբրև էառ զսուրն ի ձեռն իւր նոյնժա-

4-29 ՍԴ շիմ *թիւն... անդ և ե-*
8 Դ *դերծացի*
25 Բ *բարովիլ* ԴԴե *բարովիլ*
28 ԲԴԴե *որոյ*
29 Բ *ի տուն* Դ *Փնհասին*
29-6 (ճաչօրդ էջում) ՍԴ շիմ *երեքին... իւրոց*
34 Դ *զԱւատիայի*
38 Ա։ շիմ *ասելով*

մայն յարուցեալ ի վերայ Աւատիային, կալաւ ձախու ձեռամբն զմօրուացն նորա և ասէ. «Դո՞ւ ես որ ուրանաս զաստուածատուր օրէնս Մովսիսական. նաև բռնադատես զորդիս Իսրայէլի զնոյն գործել»: Եւ Աւատիայ թէպէտ զբաղումս աղաղակեաց, սակայն ոչ լուաւ նմա Փինհաս, այլ նոյնժամայն սրովն այնմիկ հարաւ զգլուխն Աւատիայի և ի բաց ընկէց ձեռնտուութեամբ երից ընկերաց իւրոց:

Զկնի սատակման պղծոյն Աւատիայի խորհեցան չորեքին արքն կորուսանել զպիղծ դէշ նորա. և թէպէտ բազում կերպիւ խօսեցան, ոչ կայացաւ խորհուրդն նոցա, այլ հաւանութեամբ չորիցն այսպէս արարին, զի իբրև հաս պիշերն, և ի մէջ պիշերին բարձեալ զդին պղծոյն Աւատիային և տարեալ հեռացուցին ի տանց իւրեանց և ի մէջ պողոտային ի կողմն ինչ ընկենին զնա և ինքեանք անկերևութացան:

Եւ վասն այսպէս առնելոյն ի բազմաց Հրէից հարցաք, թէ ընդէ՞ր այդպէս անմիտ և անպատշաճ գործս գործեցիք, որ չետ սպանանելոյն ի վայրի ուրեք ծածկաբար ընդէ՞ր ոչ կորուսիք, այլ տարեալ ի մէջ պողոտային յայտնի ընկեցիք: Եւ ամենեքեան զայս ասէին պատճառ. «Օրէնք է ի մէջ ազգին Հրէից, եթէ դէպ լինիցի առն ումեմն մեռանիլ, պարտ է զի կին նորա ինքն ականատես իցէ մահուան առն իւրոյ: Իսկ թէ ի տար աշխարհի իցէ մեռեալ այր կնոջն, հարկէ զի ականատես այր ոք նկեալ վկայեսցէ վասն մահուան առն նորա, և կամ հաւաստի համբաւ, և կամ վկայական թուղթ նկեալ ծանուսցէ զմահ առնն, և ապա հրաման տայ օրէնքն՝ կնոջն այնմիկ այլոյ ումեմն առն զուգաւորիլ, և թէ ոչ այսպէս իցէ, ոչ ունի հրաման կինն այն զուգաւորելոյ, այլ նստի այրի և անտէր, վշտօք և տառապանօք, մինչև ցօր մահուան իւրոյ: Եւ չորեքին արքս այսոքիկ ողորմելով կնոջն Աւատիայի, ընկենին զդէշ նորա ի պողոտայն, զի տեսանելով կնոջն նորա, հրաման լիցի նմա զուգաւորիլ ընդ առն այլում»:

Եւ ի դիշերին յորում զդին պղծոյն Աւատիայի արկին ի մէջ պողոտային, ընդ լուսանալ առաւօտին տեսեալ զդին՝ ի վերայ ժողովեցան բազումք, և ծանուցեալ ևղև թէ ով ոք է. սուդ ևղև Եբրայեցւոցն և ազգականաց սպանելոյն, որք ժողովեցան ի վերայ նորա և մեծաւ աղաղակաւ և խռովութեամբ յուզէին և խնդրէին զարարող նորին: Իսկ մայր և կին Աւատիային վաղվաղակի ընթացան ի դուռն Էհտիմալ-Դօլվաթին լալով և հառաչանօք կաւկան բարձեալ ծանուցին նմա ասելով, «Զեղբայրն քո զԱւատիայ սպանեցին»: Սոյնպէս և գնացին առ Դիւան-բէկին թաղաւորին, և նմա ևս ծանուցին: Եւ նոյնժամայն Էհտիմալ-Դօլվաթն և դիւան-բէկին հրամայեցին զօրականաց բազմաց զի վաղվաղակի հասցեն ի թաղն Եբրայեցւոց, և ի տունս, և ի պողո-

1-2 Բե *զմուրուաց* Գ *զմուրուացն* Դ *զմօրուացանց*
2 Դ չիք *նորա*
5 ԲԴե *Աւատիային*
8 Ա *բազմաւ*
10 Ա *զդի*
11 Ա *Աւատիայի* Ա *(Աւա)տիային տարեալ*
13 ԱԴ չիք *և վասն... հարցաք*
13 ԱԴ չիք *[հար]ցաք... ի պողոտայն*
13-14 Ե չիք *ընդէ՞ր*
18 ԲԴԵե *մեռանիլ*
22 **Բ** *հրամանք*
28 ԲԴե *Աւատիային*
35 Ե *սպանին*

տայս, և ի շուկայս, և յորում և իցէ վայրի, զամենայն Եբրայեցի արս գտնալս, կալեալ կապեալ ածցեն առաջի պիւան-բէկոյն. զոր և առժամայն կատարեցին զօրականքն. և զդէշն Աւատիայի հրամանաւ իշխանացն բարձեալ անտի և բերեալ արկին ի քաղաքի մեծ մէյդանի մէջն:

Եւ ապա սկսան յառաջ բերել յատեան յարանցն Եբրայեցւոց զերիսն և զչորսն և հարցանէին թէ ո՞վ ոք իցէ ապանողն, և Հրէայք ամենեքեան միաբեր ասէին, թէ ոչ գիտեմք, և թէպէտ զբազումս հարցին, սակայն ոչ կարացին գտանել. բայց դարձեալ այսպիսի կերպիւ:

Եւ մի էր այր մի Եբրայեցւոց ժողովրդենէն, որում անունն էր Սասուն, որում դայր ինչս և ստացուածս յոլովս, և էր սա քեռի ուրացողին և սպանելոյն Աւատիայի. բայց ինքն Սասուն ոչ էր ուրացեալ. և մինչ կինդանի էր Աւատիայ և ուրացեալ, հանապազ մեծաբանէր ի վերայ քեռոյն իւրոյ Սասունի. թէ որովհետև ես տաճկացեալ եմ, ամենայն ինչք և ստացուածք քո ինձ հասանի, զոր առնելոց եմ ի քէն օրինօքն և պատասխանւոքն Պարսից[166]: Եւ Սասուն ի լսելն զայսպիսի բանս ի նմանէ յոյժ երկնչէր, և հանապազ սպասաւորեալ պաշտէր զնա ուտելեօք և ըմպելեօք, և պատուական ինչս և արծաթս իւր թէ պարգևս կաշառս տալով նմա հանճարեցուցանէր զկամս նորա, զի մի գուցէ գործով կատարեսցէ, զոր բանիւ ասէ. և այսպէս անցուցանէր զաւուրս իւր. և յաւուրս և ի ժամս յայս՝ յորում խնդրէին զսպանողն Աւատիայի, և ոչ գտանէին, յայսմ պատճառէ կարծիս տարեալ կային զՍասուն և ժողովեցան ի վերայ նորա բազմութիւնք արանց ասելով. «Դու ես սպանեալ զԱւատիայ, վասն ընչից քոց զի մի՛ առցէ». և Սասուն թէպէտ զբազումս խօսէր և վկայութիւնս դնէր և երդնոյր, սակայն ոչ կարէր հաւանեցուցանել: Յայսմ պատճառէ յանհնարս անկեալ Սասուն՝ սկսաւ ինքն և բարեկամքն իւր ստէպ յուղմամբ որոնել ի մէջ Հրէից և հարցանել ի սմանէ և ի նմանէ, և այսպիսի յուղմամբ պատահեցաւ ումեմն յընկերաց Փինհասին և ցաւագին պաղատանօք հարցանէր ի նմանէ ինքն Սասուն. և մեծամեծ երդմամբ և բազում դաշամբ հաստատէր, թէ ոչ ումեք յայտնեմ. արդ՝ հնարեա գործ ինչ աս ի փրկել զիս. զի թէ զիս կալնուն, տուգանս և ինչս բազումս առնուն յինէն վասն հարուստ համբաւելոյ իմոյ անուան, իսկ ի քէն չափաւորս առնուն տուգանս. և զայն ևս զոր ի քէն տուգանք առցեն, զամենայն ևս ինձէն վճարեմ քեզ, միայն զայս խնդրեմ ի քէն, յայտնեա ինձ զորպէսն գործոյն: Եւ ի բազում թախանձանաց և աղաչանաց Սասունի, մինչեւ թուլացաւ այրն և յայտնեաց Սասունայ զսպանումն պղծոյն Աւատիայի. և Սասուն վասն ինքեանն փրկութեան ծանոյց Պարսից. և Պարսիկք վաղվաղակի կալան զերեսին ընկերսն Փինհա-

1-27 ԱՊ չիք *ի շուկայս... սկսաւ*
1 ԲԳ *և զամենայն*
2 Բ *դառնալ*
6-7 Բ *զերիսն և զչորսն հարցանէին*
10 Ն *անուն էր*
15 ԲԳԴՆ *առնելոց եմ*
17 ԲԳԴՆ *բանքն*
21 Գ *զսպանողն*
27-13 (հաջորդ էջում) ԱՊ չիք *ինքն... նմոտա*
32 ԳԴՆ *կալան*
34 ԲԳԴՆ *տուգանք*
39 Բ *պարսից*

սին, որք ընդ Փինհասին սպանեցին զԱւատիայ, և զՓինհաս ոչ կարացին գտանել, թէպէտ բազում ջանիւ որոնեցին, վասն զի ի գիշերին յորում զդին Աւատիային արտաքս ընկեցին ի պողոտայն, ընդ լուսանալ առաւօտին անդառնալի փախստեամբ ելեալ Փինհաս ի քաղաքէն և գնաց ի տար աշխարհ, վասն որոյ ոչ գտին։

Յետ այսոցիկ դիւան-բէկին նստաւ յատեան դատաստանի, և ածին առաջի նորա զերիս սպանողսն Աւատիայի. հարց ի նոցանէ վասն սպանութեանն. և նոքա յանձին կալան զարարսն իւրեանց. որոյ սակս վճիռ եհատ դիւան-բէկին և հրամայեաց վասն երից այս սպանող արանց, զի տարեալ ի մէջ մեծ մէյդանին առընթեր գիշոյ Աւատիայի սպանանել զերեսին և արկանել մերձ առ նմա, զոր և արարին այնպէս։

Եւ ի ժամուն յորում եկեալ դիւան-բէկին նստաւ ի դատել զսպանողսն ընդ որոց և ամենայն արք ազգին Հրէից, որք ըմբռնեալք էին ի ձեռս Պարսից, զամենեցուն նոցա ձեռս ի յետս կապեալ էին և պահէին զօրականքն Պարսից։ Նաև անդէն ժողովեալ էին ամենայն դահիճք և զինուորք և զօրականք և զօրագլուխք Պարսից. նաև գրեթէ միահաղոյն ամենայն ազգն Պարսից, ոչ թէ իբրև զերամս հաւուց տարմից, այլ իբրև զշիթս անձրևաց և զբազմութիւն աւազոց որ ոչ թուին, ժողովեալ էին անդէն ի դուռն դատարանին, որ ոչ բաւէր վայրն տանել զբազմութիւնն։ Եւ յորժամ դիւան-բէկին հրաման արար տանել զերեսին արսն և սպանանել, յոյնժամ բազմութիւնք ազգին Պարսից մահմետականաց, դահիճք և զօրականք, ազատք և ոամիկք սկսան ձեռս արկանել ի Հրէայս, հարկանել և կառափնատել և սրօք և բրօք և թրի քամակաւ և թֆանքի զոնդաղով, և ընդ երկիր ի քարշս տանել և ի ճիճս ջրոց հեղձուցանել և դարձեալ հանել և հարկանել. և այնքան չարշարանս ածին ի վերայ ողորմելի Հրէիցն, զորս ո՛չ բաւեմ թուել. և զերեսին արսն զսպանողսն Աւատիայի տարան ի մեծ մէյդանն մերձ գիշոյ պղծոյ Աւատիային սպանին. և յետ սպանանելոյ երից արանցն ինքեանք Պարսիկքն ի բազում առնելեաց իւրեանց ձանձրացան, զմնացեալ Հրէայսն լքին և ի բաց գնացին։ Եւ գէշք սպանելոցն յաւուրս երիս մնացին անդէն ի մէջ մէյդանին, և յետ երից աւուրց հրամանաւ իշխանացն Պարսից բարձեալ անտի տարեալ թաղեցին։

Եւ այնուհետև ազգն Պարսից, ոչինչ խօսեցան և կամ արարին ընդ ազգին Հրէից, ոչ պահանջէին ի նոցունց հարկս արքունի, և ոչ այլ ինչ ծառայութիւնս իշխանականս, այլ իբրև զազգն Պարսից համարեալ ունէին զնոսա և մտեալ յօրէնս Մահմետի, քանզի թողին զնոսա ի կամս իւրեանց կեալ. թէպէտ և գիտէին Պարսիկք զի ոչ են մտեալ Հրէայք յօրէնս Մահմետի, այլ առ ժամանակաւն այնպէս թողին։

1 ԱՊՒ *Սպանին*
8 ԲԳՆ *սպանութեան* ԱՀ *կալեալ* ԲԳԴՆ *փխ զարարն զարարսն*
10 ԲԳԴՆ *արանցս*
13 34 ԱԳ *չԼՐ ի դատել... թաղեցին*
19 ԲԳՆ *զբազմութիւնս*
23 ԱՀ *ազատ*
25 ԱՐԳՒ *թուանքի*
28 ԲԳԴՆ *Աւատիային*
30 Դ *պարսիկք*
32 Բ *սպանելոց*
36 Ա *զհարկս զայլ*

Այլ և Հրէայք ի ժողովս և յաղգս իւրեանց զօրէնս և պատուիրեանս Հրէականս կատարէին և ոչ զմահմետականս: Նա և ասէին, թէ մեք զամենայն ամի հարկն՝ զոր տալոց եմք արքունի, ամ յամէ որոշեալ զատեմք և արկանեմք ի դանձանակ և պահեմք զի յորժամ խնդրեսցեն, վազվազակի տամք և զերծանիմք: Այլ և ասէին. «Զայն երկու թուականն՝ որ յաւուրն ութաց[ութեան] հոտն մեզ պարգեւս, զայն ևս պահեալ եմք, և հանապազ իւրաքանչիւր տարւոյ շահն լնումք ի վերայ, զի յորժամ խնդրեսցեն՝ առնուլ զերծանիմք ի նոցանէ»: Եւ մինչև ցամս այս՝ յորում զպատմութիւնս շարադրեցաք, որ է թուականն մեր ՈՀՃՐ. և մարտի ամսոյ Ժ. այսպէս ըստ առասպելսն կան Պարսիկք և Հրէայք, և ապագայն Աստուծոյ է գիտելի:

* * *

Այլ և այս ևս գիտելի է, զի յաւուրս՝ յորում զՀրէայսն, որք էին ի Սպահան քաղաքի, զամենևսեան թէ կամաւ թէ յակամայ դարձուցին յօրէնս Մահմետի, այնո[ւ]հետև Ջամիմալ-Դօլվաֆն հրովարտակ հանեալ ի թագաւորէն առաքեաց ընդ ամենայն աշխարհս տէրութիւնն Պարսից, առ իշխանս աշխարհաց, զի ուր և իցեն ազգք և ժողովուրդք Հրէից թէ ի գիւղս և թէ ի քաղաքս ամենեքեան խոպանն զօրէնս Հրէութեան և առասցին զօրէնս Մահմետի. որք կամաւ հնազանդեսցին բարւոք է, և որք ընդդիմասցին՝ բռնութեամբ և առանջատօք ածցեն իշխանքն զայնպիսիսն ի հաւատն պղծոյն անապատի: Եւ իբրև հասանէր հրամանն արքունի ի տեղիսն՝ առժամայն որպէս հուր բորբոքեալ ընդ եղէգն՝ դիմարէին զամենայն Հրէայսն. և հարկէին կատարել հրամանս թագաւորին. և ամենայն ազգն Հրէից՝ ուր և կայցին, ոչ կամէին մատանել յօրէնս Մահմետի. այլ ոմանք կաշառօք, և ոմանք փախստեամբ, և ոմանք՝ այլ ինչ հնարիւք զերծանէին: Իսկ որք յանհնարս մնային՝ ակամայ կամօք և առ երիս կնդծաւորութեամբ մտանէին յօրէնս Մահմետի, և թէպէտ առ յաչս Պարսից ձևանային մահմետական գոլ, այլ ոչ էին, այլ Հրէութեան օրինիցն կային ամենեքեան ի ծածուկ:

Եւ ի ժողովրդականացն Հրէից՝ որ յիւրաքանչիւր քաղաքս Պարսից բնակեալք էին, որք անհնար լեալք ակամայ կամօք և առ երիսօք մտին յօրէնս Պարսից, այսոքիկ են. որք ի Քաշան, ի Ղում, ի Թարվէզ, յԱրտաւել, ի Ղազբին, ի Լաւ, ի Շիրազ, ի Բանդարիքում. և որք կաշառօք, և փախստեամբ, և կամ յայտնի ընդդիմակայելով ոչ մտին յօրէնս Պարսից՝ այսոքիկ են, որք ի Գուլփէքեան, ի Խունսար, ի Բան-

1 Ա.Գ *այլ հրեայք ի ժողովս*
3 Ն *տալոց եմ*
6 Ա.Ն *յաւուր* Ս. *պարգեւս*
7 Ա.Ե *զիւրաքանչիւր տարւոյ* ԲԳԳ *զիւրաքանչիւր տարւոյ*
9 ԲԳԳ *ցյամս* Ս. *որում* ԲԳԳ *շարադրեցաք*
12 ԲԳԳ *յաւուրսն*
14 Ս. *զհրովարտակ*
15 Ս. *ամենեսեան* փխ *ընդ ամենայն* Ա.ԲԳԳ *տէրութեան*
16 ԲԳԳ *ազգ և ժողովուրդ*
20 Ա.Գ *Մահմետի* փխ *պղծոյն անապատի*
22 Գ *զամենայն զհրամանն* Ն *զամենայն հրամանսն* փխ *հրամանս* Ա.ԲԳԳ *զհրամանս*
26 Ա.ԲԳԳ *յակամայ*
27 Ա.ԲԳԳ *առաչս*
29 Ա.Գ *որք* փխ *որ*
30 Ա.Գ *անհնարք* փխ *որք անհնար* Ս. *յակամայ... առ երիսս* ԲԳ *յակամայ* Դն *յակամա կամօք*

դար, ի Շուշտար, և Համադան, յնդղ, ի Քրման, ի Խորասան, ի Դումաւանդ, յԱստարապատ յերկիրն Դիլանու, ի գեղօրայսն Ֆահրապատու։

Իսկ ի Ֆահրապատ քաղաքի բնակեալ Հրէայքն յայտ յանդիման կացեալ ընդդիմացան հրամանաց արքունի՝ և ոչ մտին յօրէնս Մահմետի, և նոցա վերակացու իշխանն՝ որում անունն էր Միրզա Սադղ, իբրև լուաւ թէ զՀրէայսն՝ որք ի Սպահան քաղաքին էին ածին յօրէնս Մահմետի, այն իշխանն ևս սկսաւ ձևոն արկանել ի Ֆահրապատ քաղաքի բնակեալ Հրէայսն և բռնութեամբ ածել ի տաճկութիւն. և զայս արար իշխանն նախ քան զգալն թագաւորական հրովարտակին, և Հրէիցն վշտացեալ ի նորին բռնութենէն՝ խօսեցան առ երեսս իշխանին, թէ ո՛չ է հրամայեալ քեզ ի թագաւորէն վասն այդպիսի իրաց, և դիա՞րդ ընդ վայր տանջես զմեզ. և յայսմ բանէ սակաւ ինչ թուլացոյց իշխանն զբռնութիւնն, բայց յոյժ ոխակալ եղև ի սրտի իւրում և համբեր ցորժամ եկն հրովարտակն արքունի. այնուհետև կոչեաց իշխանն զՀրէայսն և ասաց. «Ջինչ ևս ունիք ասել, զի ահաւասիկ հրովարտակ հրամանաց թագաւորին. սրդ եկեալ կատարեցէք զհրամանս թագաւորին, և կալարուք յանձին զօրէնս Մահմետի»։

Եւ Հրէայքն յայտնի և համարձակ կացին ընդդէմ ասելով. «Ոչ ընդունիմք զօրէնս Մահմետի, և ոչ թողումք զհայրենի օրէնս մեր, և դու զոր ինչ կամիս, արա ընդ մեզ»։

Իսկ իշխանն բազում չարշարանս էած ի վերայ նոցա. բազում անգամ ի կախաղանի կախեալ բրածեծ՝ առնէր զնոսա այնքան՝ մինչև անշնչանալ նոցա. և բազում անգամ ի ջուր լճին հնձամզծուկ առնելով, և հանեալ դարձեալ բրածեծ առնէր. այլ և զօրականս ի տունս նոցա առաքէր առ ի պինչս նոցա յաւարել և զկանայս նոցա խայտառակել, զոր և կարի առաւել և անպատկառաբար արարին զայս գործ ընդ Հրէից կանանցն, ուստերաց և դստերաց։ Եւ Հրէայքս այսոքիկ հարուստք և ընչեղք էին, որք յոլովք ի տացանէ ունէին ի մէջ շուկային խանութս՝ որ է դուքան, յորում վաճառէին պատուական կումաշս և արծաթեղէն անօթս, որոց վասն հրամայեաց իշխանն ազգին մահմետականի, զի ամենայն ինչս խանութացն Հրէից յաւար հարցեն, զոր և առ ժամայն կողոպտեցին. և ոչ թէ չափաւոր էր ինչք խանութացն, այլ յոլովք։

Եւ ի Հրէից արանցն կալանաւորք էին ըմբռնեալք քան զհարիւր արս աւելի, որոց ամենեցուն պարանոցն արկեալ շղթայս երկաթեայ, ծանր և երկայն, և զամենեսեան այնու շղթայիւն կապեալ զկնի միմեանց շար ի շար. քանզի մի էր շղթայն, և հանապազօր բերէին ի դուռն իշխանին ի դատել, և տանէին ի բանտն ի պահել։

5 Դ *ընդդիմացան*
6 Ա. *որոյ*
9 Ա. *չիմ և Բ ածեալ*
10 Ա. *թագաւորականի*
22 Ա՝ *զբազում*
27 Ա. *որք փխ զոր*
28 Դն *կանանց* ԲԳԴն *այս փխ այսոքիկ*
29 ԴԴ *հարուստ*
30 Ա. *զխանութս*
32 ԱԳԴ *զամենայն*
33-34 ԱԴ *չիմ և ոչ... թէ այլ յոլովք*
34 ԲԳԴն *յոլով*
37 ԲԳԴն *այն*
38 ԲԳԴն *շարւիշար*

Եւ երկարեցաւ գործս այս մինչև յերիս և ի չորս ամիսս. և ի բազում չարչարանացն, զոր էած ի վերայ նոցա իշխանն՝ ինքն ևս ձանձրացաւ, ապա հրամայեաց նոցա, թէ որովհետև ոչ կամիք մեկնիլ ի Հրէութենէն, առէք ի վերայ ձեր զնշան ինչ յայտնի, որով ամենայն տեսողք ծանիցեն ձեզ, թէ Հրէայ էք. և զայս հրաման յանձին կալան Հրէայք մեծաւ յօժարութեամբ: Իսկ իշխանն առ ի այսպանիլ զնոսա, հրամայեաց շարանօք կապել ի միում լարանի բօժոժս պղնձի, կտրս երկաթից և պղնձեայ, և ունկունս ջրմոմիկ փարչից և պուտուկաց, և կախել ի պարանոցէ ամենայն արանց Հրէից և այնպիսի նշանաւ շրջիլ Հրէից ի փողոցս և ի հրապարակս և ի շուկայս և յամենայն տեղիս: Եւ Հրէայ՝ որ ոչ ունիցի զնշանն զայն, պարտաւոր լիցի կանխից և բանակից և տուգանաց. Հրէայքն յանձին կալեալ զայս հրաման, կատարեցին ամենեքեան ի պարանոցս իւրեանց զասացեալն իշխանին, և այնպէս շրջէին յամենայն տեղիս:

Եւ այլ ևս նեղութիւնս և տանջանս բազումս կրեցին Հրէայք, այնքան մինչ ել նեղիչք նոցա Պարսիկք ձանձրացան յ նեղելն զնոսա և յիսս կացին, և ի բաց լքին զՀրէայսն ի չարչարելոյ: Եւ նոքա այսպէս ազատեալք եղեն ի ձեռաց Պարսից, և տակաւին կան ի հայրենի հաստատս իւրեանց Հրէաստան, իսկ յապագայն Աստուծոյ է գիտելի. որում փառք յաւիտեանս ամէն:

ԳԼՈՒԽ Լ

ՎԱՍՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԵԾԻ ՔԱՂԱՔԻՆ ԹԱՐՎԻԶՈՒ

Ի Թուականութեանս Հայոց ՌՂ. փետրվար ամսոյ ի հինդն՝ յաւուր ուրբաթու ի քաղաքն Թարվէզ, և ի շրջակայ գաւառսն իւր, եղև յանկարծակի և յեղակարծում ժամու ահագին գետնաշարժ ուժգնակի բախմամբ, զի հաստատակառոյց թանձրութիւն երկրի դողայր որպէս պտեղ ինչ, զոր ունելով ոք ի ձեռին խաղացուսցէ, կամ ղջուր ինչ յամանի այսր և անդր տարաբերիցէ. քանզի ահագին որոտմամբ թնդաց երկիր գոռալով ի սանդարամետէ անդնդոց, և զկնի եղև շարժն և արար կործանումն և տապալումն և քայքայումն ամենայն շինուածոց քաղաքին: Զի մեծամեծ և լայնանիստ և բարձրաբերձ և զարմանատես շինուածք՝ որ կային ի մէջ քաղաքին, որ ի հին ժամանակաց և ի թագա-

1 Ե *մինչ*
1-2 Ա. *բազմաց*
4 ԲԳԴ *ի Հրէութենէ* ԲԳԴԵ *նշան* Ա. *ամենեքեան*
5 ԱԳԴՆ *զձեզ* Ա. *Հրէայք եք*
6-14 ԱԴ *շիմ իսկ իշխանն... տեղիս*
7 ԲԳԴՆ *բօժոժս պղընձի*
8 Բ *պղընձեաց ... ջրմոմիկ փարչից* Գ *պղնձեաց* ԴՆ *պղընձեաց*
12 ԲԳ *Հրէայք*
15 Ա. *զտանջանս*
18-19 ԱԲԳԴՆ *հաստատն*
22 ԴՆ *մեծ*
23 ԱԳ *փետրվարի*
25 Ա. *ժամում* Ա. *ուժգնակիւ*
29-30 Ա. *զկործանումն և զտապալումն*
30 Ա. *ամենից* Ա. *զքայքայումն*
30-31 ԱԳ *շինուած, որ կայր ... ի հնոց* ԲԳ *որ կայր*

ետրաց մնացեալ էին որպէս և տեսողացն յայտ է, զբազում ի նոցանէ ի վայրկեան ժամու փլուզեալ հողաբլուր առնէր։

Որպէս և անուանի շինուածն՝ զոր Ուստաշադրտ ասէին, այսու շարժմամբս փլաւ, և զբազում ուղտս և այլ անասուն ի ներքոյ իւր էաւ, որք ի ցրտոյ և ի ձնոյ ձմերանն հովանաւորեալք էին ի մէջ նորա։

Այլ և բարձրաբերձ յօրինեալ եղջիւրք և միանարայք մաշիցաց ի բարձրադիտակ և յերկնաբերձ բարձուէ բարձանցն խորտակեալ, բեկեալ, ոտրամատեալ գան ի ստորև սորեալ ի վայր դիմեալ, և զարկուցեալ յերկիր ի բաց ցնդէին։

Նաև անուանի և լայնանիստ և բարձրաբերձ և հոյակապ և հրաշակաւոր շինուածն, որում Շամղազան[167] ասեն, որ է ի քաղաքէն սակաւ ինչ հեռի ի կողմն Շօր[168] գետոյն, որոյ առաստաղն ամենայն փլաւ, և մնաց շուրջանակի որմունքն, և այն ևս ի հիմանցն խախտեցաւ և ի չորից կողմանց պատառեցաւ. և բաժանեցաւ ի չորս մասունս, որ կայ այնպէս կանգուն մինչև ցայսօր։

Իսկ վասն տանց և ապարանից, բաղանեաց և փութկայից, որ է քարվանսարայ, ո՞վ կարէ թուել, որք հիմն ի վեր տապալեցան, և բազում կենդանիք, մարդ և անասուն, կահք և կարասիք, գանձք և ստացուածք մնացին ի ներքոյ հողոյ, որոց խոյզ արարեալ աւուրս քանի, կամ հրեսուն, պեղեալ վհող և զբաւ հազիւ կարէին գտանել զմեռեալս և զինչս։

Թէպէտ եղև վնաս բազում քաղաքին Թարվիզու շարժմամբս այսու, այլ առաւելապատիկ վնաս շրջակայ գաւառին եղև, որպէս խոսրովշայ, և Ուսկու կոչեցեալ գաւառացն, և Դուխուրկան գեղջն քանդումն և տապալումն, և մարդոց և անասնոց կորնչումն։

Եւ ի սաստիկ և յուժգնակի շարժմանէ պատառեցաւ հաստակառոյց թանձրութիւն երկրի, և ելին սևաւ ջուրք բխեալ իբրև աղբիւր, և գնայր ջուրն զգնացս իւր։ Եւ յետ երից աւուրց դարձեալ եղև շարժ ուժգնակի, և կորեան այն աղբիւրքն. և յայլ տեղիս երևեցան այլք աղբիւրք մանունք, և ժողովք ջրոց որպէս զառաջին սևաւ ջուրն, և որքան ժամանակս կայր շարժն՝ կային և աղբիւրք սևաւ ջուրցն և յետ դադարման շարժին կորեան և նոքա։

Այլ և ասացին ոմանք թէ խաշնարած ոմն հովիւ, որոյ առաջի հօտք ոչխարաց արածէին ի վայրի ուրեմն, և յաւուր միում ընդ լինիլ շարժին՝ իսկոյն պատառեցաւ թանձրութիւն երկրի, և բացաւ խորու-

1 ԱՐԴՒՆ *մնացեալ էր որպէս որ* ԱԴ շիմ *և* Գ *մնացեալ էր որպէս և տեսողացն*
3 ԱՒ *զորս* ԳՆ *շինուածն*
4 Գ շիմ *այլ* ԱՐԴՆ *բլաւ* ԲԳՆ *ուղտք* ԴՆ *բազում* ԲԳՆ *անասունք*
5 ԲԳՆ *որ* Գ *զոր* Ա՚Ն *ի ձիւնոյ*
7 ԱՐԳԴ *մնիրայք* Ն *մընիրայք*
8 Ա. *ի բարձրադիտակ և յերկնաբերձէ*
12 Ն *շինուածն*
14 Ա. *մնացին* Բ *ի հիմանց*
16 Ա. շիմ *կանգուն*
17 Ա. *որոյ*
19 Ա՚Ն *բազումք... մարդք* Ա՚Ն *անասունք*
20 Գ *ի ներքոյ հողոյ*
22 ՊՆ *կամ փխ և (զինչս)*
24-25 Ն *խոսրով շահ*
28 Գ *թանձրութիւնն* Ա. *բխեալք* Գ *բղխեալք* Ա՚Դ *գաղբիւրս* ԲԳՆ *զաղբիւր*
30 ԳՆ *կորեան փխ կորեան* Ա՚Դ շիմ *այն* ԲԳՆ *այլ*
34 Գ *հովիւ ոմն*
35 ԲԳ *լինել*

թիւն անդնդոց, յորում սուզեալ ընկղմեցաւ հովիւն և մասն ինչ յոչխարացն, և կենդանոյն կլեալք յերկրէ, և ոչ ևս երևեցան։

Նա և գիւղ մի ողջոյն՝ որ շինեալ կայր ի ներքոյ քարանձաւ լեռան միոյ, և յորժամ եղև շարժն՝ պատառեալ բաժանեաց ղկարծրութիւն վիմաց լեռանն, և խորտակեալ քայքայեաց զնա, և իբրև զհողաբլուր սորեալ խճով, քարով և հողով ի վերայ գնդջն և ծածկեալ զդնդն ողջոյն, կորուսեալ անյայտ արար բնաւին։

Եւ ժամանակ շարժմանս այս էր ժամանակ ձմերան և սաստիկ ցուրտ. քանզի ձիւնամեծ եղև ձմեռն այն և ոչ թէ միանգամ կամ երկից և երից շարժեցաւ և դադարեցաւ, այլ կրկարեցաւ շարժումն մինչև ի վեց ամիս։ Բայց մինչ ի յերկուս ամիս ստէպ ստէպ լինէր շարժն. քանզի լինէր որ ի միում աւուր ընդ տիւ և ընդ գիշեր, հինգ անգամ և վեց անգամ շարժ լինէր, և էր որ ահեղի և պակաս լինէր. և մինչև յերկուս ամիս այսպէս լինէր յամենայն աւուր, և ցկնի երկու ամսոյն, ի տասն աւուրն մի անգամ, և ի քսան աւուրսն, և յերեսուն աւուրն մի անգամ գայր շարժն։

Եւ յայսմ պատճառէ ահաբեկ և սրտամոտ և խելաթափ էին լեալ ամենեքեան յահէ շարժին, որ յանկարծակի գայր, և թէպէտ բազում փախստեամբ ճողոպրեալք ելանէին ի տանց, նոքա ղներծանէին ի փլմանէն և ի մեռանելոյն, այլ յոլովք մնացին ի ներքոյ փլուզեալ յարկացն և հեղձամղձուկ լեալք սատակէին։ Վասն որոյ ոչ կարէին հանդուրժել և ընդ յարկաւ բնակիլ, այլ ելեալք իւրաքանչիւր ոք ի բացեաց արտաքոյ յարկաց, ոմանք առ դուրս տանց, և ոմանք յայգիս, և ի բուրաստանս, և ոմանք յայլ պատշաճաւոր տեղիս վրանօք և տաղաւարօք կացին զձմեռն զայն, մինչև ցանցանել բարկութեան Տեառն. քանզի յայտնի եղև բնակչաց աշխարհին, նա և ամենայն տիեղերաց, թէ ոչ էր այն ըստ կարգի սովորական շարժման, այլ յայտնի պատիժ պատուհասի բարկութեան Տեառն հասեալ էր ի վերայ նոցա ըստ նմանութեանն Նինուէացւոց*։

Իսկ բնակիչք քաղաքին և գաւառացն, իբրև տեսանէին զինքեանս պատժապարտս առաջի Տեառն, զի հանապազօր խրատէր զնոսա գաւազանաւ բարկութեան, և նոքա եկեալ ի միտս մշտապատրաստ աղօթիւք և խնդրուածովք, ուխտիւք և պատարագօք, դիմեալ կարդային առ այն, որ կարողն էր ապրեցուցանել զնոսա ի վտանգէն, զի թէպէտ վասն պարտեաց մեղաց՝ բարկութեամբ խրատէ և սրտմտութեամբ յանդիմանէ, այլ արարչական գթութեամբն և նախախնամական ողորմու-

* Յոհան Ա

3 ԲԳԴԵ գիղ մի
6 Ա. շիմ և հողով Գ գդնդջն
7 ԱԴ և կորուսեալ
8 Ի: շիմ այս Ա. այսորիկ փխ այս
9 Դ ձմեռնն
10 Ի: կրկարացաւ
11 ԱԴ շիմ ի (վից) ԱԴ ամիսս
14 ԱԴ ամիս
15 ԲԻ: երեսուն
17 Ա. յայսմանէ ԱԴԻ: սահաբեկք ԱԴ սըրտամտութեամբ Ա. խելաթափիր
18 ԱԲԴԵ բազումք
20 ԱԴԵ մնային
21 Ա. հեղձամղձուկք ԱԴԵ լնալ
25 Ի: կային փխ կացին
26 Ա. ամենից
27 Ա. սովորականի
34 ԱԲԴԵ վտանգէն
35 Ա. խրատեաց
35-36 ԱԴ յանդիմանեաց
36 Ա. արարչականաւ... նախախնամականաւ

թնամբն ողորմեցաւ նոցա. որոյ բնութեամբ իսկ է ողորմիլն արարածոց իւրոց, ըստ մարգարէին բանի. «Դթած ողորմած է Տէր, երկայնամիտ և բազումողորմ»: Որ և ոչ իսպառ մնաց ի բարկութեան և ոչ յաւիտեան պահեաց ոխս. այլ հնոի արար ի սոցանէ զմեղս նոցա՝ ըստ բազմաողորմութեան երկնի և երկրի, և զբացաւ ի ստեղծուածս իւր որպէս զհայր և զմայր ի վերայ զաւակաց՝ վասն զի յիշեաց թէ մարդիկք են և բաղկացեալք ի հողոյ: Սփռեալ տարածեաց ի վերայ նոցա զգութ և զողորմութիւն իւր, և նբարձ ի նոցանէ զպատուական և ետ հաւատաւորութիւն երկրի և հանդարտութիւն աշխարհին, և խաղաղութիւն մարդկան, որք կեան՝ դոհանալով զնմանէ յամենայն ժամ, զի թէպէտ խրատեալով խրատեաց, այլ ի մահ ոչ մատնեաց: Որովք յայտնեալ ցուցաւ ամենակարող զօրութիւնն անմահ. իշխանութեան նորա, և գութ և ողորմութիւն մարդասէր կամաց նորա. վասն որոյ ամենեքեան առհասարակ ի ձայն դոհութեան փառաւորեն զքաղցր տէրութիւն Աստուծոյն մերոյ, օրհնելոյն ի բարձունս յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԳԼՈՒԽ ԼԶ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ԵՒ ՌՍԿԵՐԱՑՆ ՎԱՐԴ ՊԱՏԱՐԿԱՅ[169]

Որպէս գրեալ է ի պատմութիւնս Վարդ պատարկայ, որ նենգութեամբ և հնարիւք ետ կոտորել զազգն Հոռոմոց՝ Պարսից ազգին. և պայս նախանձս և ոխս տակաւին ունին ի մտի ազգն Հոռոմոց, և մինչև ցայսօր հնարեն վրէժիմնդիր լինիլ նախանձուն այնմիկ: Եւ ամաց յամս դան մարդիկք ի Հոռոմոց ազգէն առ ի գողանալ զնշխարս ոսկերաց Վարդ պատարկայ, զի տարեալ ի մէջ իւրեանց կատարեսցեն ի վերայ նորա ըշար կամս իւրեանց որպէս և յօժարի սիրտք իւրեանց:

Եւ եղև զի յամս և ի ժամանակս յետինս՝ ի թուականիս Հայոց ՒԺՓ. դարձեալ եկին յազգէն Հոռոմոց արք երկու գողանալ զոսկերս Վարդ պատարկայ, որ թաղեալ կայ ի մէջ եկեղեցւոյն ի գիւղն Խորգոմ ի Հայս ձոր կոչեցեալ գաւառին՝ ի վասպուրական աշխարհին: Արդ՝ զոսկերսն Վարդ պատարկայ թաղեալ են ի մէջ եկեղեցւոյն որ նախկի շինեալ է ի վերայ երեսաց երկրի ի վերայ բնական գետնոյ. և ապա հողով ծածկեալ են զայն եկեղեցին և կուտեալ են բազում հող ի վե-

* *Նայն տեղում, Դ, 2*

1 ԲԹՆ *ողորմեցաւ*
4 Ա. *զոխս* ԲԹՆ *ի նոցանէ*
6 Է չիմ և
9 Ա. *զիշխութիւն*
16 Ա. *յամենայնու ժամում* Դ *իւէ փխ զկպէտ*
12 Ա. *անմահի... նոցա*
13-16 ԱՒ չիմ *վասն որոյ... յաւիտենից. ամէն*
18 Դ *ոսկերաց*
20 Է չիմ *ի*
21 ԴՆ *հնարուք*
23 ԱԲԳՆ *հնարին* ԲԹ *լինել*
24 Դ *ի Հռոմ*
24-25 Ա. *զոսկերս փխ զնշխարս ոսկերաց*
30 Ա. *ի վասպուրականի*
31 Է *թաղեալ է փխ թաղեալ են*
32 Ա. *բնականի*
33 Ա *գհող բազում*

բայ նորա, որ եղեալ է մեծ բլուր, որ կարծի ի տեսողացն թէ ի սկզբանէ յաւիտենից աստուածաստեղծ բլուր է և ոչ շինուի. և հողն ծածկեալ է զնկեղեցին և առաւել ևս բարձրացեալ, և ապա յետոյ ի դլուխ բլրին միւսանգամ նոր եկեղեցի են շինեալ ի վերայ դադաթան ներքին եկեղեցւոյն. և յայսմ եկեղեցւոջ կատարեն քահանայքն զժամակարգութիւնն և զնօթին խորհուրդս եկեղեցւոյ. նաև դեղչականքն անդադան և աղօթեն: Եւ գիւղն ոչ է շուրջ բոլոր զնկեղեցեաւն՝ այլ յարևելից կողմն եկեղեցւոյն ի սիրտ բլրին և յարևմտից կուսէ եկեղեցւոյն և բլրին ծովն է՝ զոր Վանայ ծով կոչեն, իբրև քսան կանգուն հեռի յեկեղեցւոյն: Այլ և գետ ջրոյ ի յարևելից կողմանէ դեղչն և եկեղեցւոյն գայ, և ի հարաւային կողմանէ նոցին անցանէ և խառնի ի ծովն: Եւ կնալ երկոքին Հոռոմքն նախ՝ ձևացուցեալ են զինքեանս իբր զայլ առաքինի և հաւատարիմ և հրաժարեալք յաշխարհական իրաց. այնքան մինչ որ քահանայք և ժողովուրդք հաւատացեալ են նոցա և զբանալին եկեղեցւոյն ի նոսա տուեալ և զնոսա լուսարար եկեղեցւոյն և ժամկոչ են կարգեալ: Եւ նոքա թէ յետ յոլովից և թէ յետ սակաւուց ժամանակաց, ի դիպող ժամանակի յարևմտից կուսէ յեկեղեցւոյն իբրև տասն և հինգ կանգնաւ հեռի յեկեղեցւոյն ծակեալ են զդետինն, փորեալ են նաղմ, և այնպէս նաղմն փորելով յառաջ գնացեալ են զի թերևս մտցեն ի ներքին եկեղեցին, յորում ոսկերքն վարդ պատրկայ թաղեալ կան. և զփորեալ հողն նաղմին բերեալ են ի ծովն թափեալ ի գլխոյ փլին. քանզի եզր ծովուն փուլ է՝ զոր ալիք ծովուն արարեալ է: Եւ որովհետև գիւղն ի յարևելից կողմն բլրին էր՝ և յարևմտից կողմն անբնակ էր, յայսմ պատճառէ անքոյթ էր ի մարդկանէ տեղին. վասն այսորիկ արքն վստահացեալ զայս դործէին: Արդ՝ ի թափեալ հողոյն և ի հարելոյ ալեաց ծովուն՝ պղտորեալ են ջուրքն և պղտորութիւն ջուրցն խառնեալ է ընդ ջուրց գետոյն և դառ ի վեր ընդ գետն դնացեալ, քանզի ջուրք գետոյն ուղևան տուեալ կանգնեալ կան յեղր ծովուն: Իսկ գեղչականքն տեսանէին զի ջուրն, որ հանապազօր պարզ և յստակ էր, այժմ պղտոր է, ասէին. «Անձրև ոչ է եկեալ և հեղեղ ոչ է իջեալ՝ և վասն է՞ր են ջուրքս պղտոր», ասէին ընդ միմեանս և հիանային և խնդրէին զպատճառն, և շրջելով և որոնելով պատահեալ են թափած հողին, և ապա գտեալ են զծակն և զնաղմն. ապա կալեալ են զարան զայնոսիկ և ի ծածուկ և ի ներսագոյն տան արգելեալ և այնքան հնարեալ են դեղչականքն մինչ արքն այնոքիկ զստոյգն ասացեալ են, թէ եկեալ եմք զի զոսկերսն Վարդ պատրկայ հանցուք՝ և տարցուք: Ապա ի դեղչականացն, որք խորհըր-

4-5 Ա. *ներքնոյ*
5 Ն *քահանայք*
6 Աէ *գիւղականքն*
7 ԲԳԴԵ *գեղն* Ա. *բոլորիւ*
8 Բ *կողմ*
11 Ա. *հարաւայնոյ*
13 Ա. *յաշխարհականաց*
14 ԱԳԴԵ *քահանայքն* ԱԲԳԴԵ *ժողովուրդքն*
17 Ն *եկեղեցւոյն*
19 Դն *նաղմ*
21 ԳԴ *կամ փխ կան*
22 ԲԳԴԵ *ծովին*
23 ԲԳԴԵ *գեղն*
24 Ա. *յայսմանէ*
27 Ա. *ջուրս*
31 Է *եղեալ փխ իջեալ* Բ *ջուրք*
33 Է *հողոյն*
37 Գ *չիք ի*

դականքն են լեալ թաքուն ի խառնիճաղանճ արանց ի գիշերի միում վերկոսին զարան զայնսոսիկ հղեալ են ի վերայ ափի և հանեալ ի վերայ ծովուն և յառաջ խաղացուցեալ առեալ ի մէջ ծովուն և կապեալ են քար ի սպանոցս նոցա, և այնպիսի թողեալ են ի խորս ջուրց ծովուն։ Արդ՝ կատարումն գործոյս այսպէս եղեալ է, զոր ծերք և վաղեմի մարդիկք պատմեցին, իսկ դեղականքն այնուհետև առաւել զգուշութեամբ պահեն վկեղեցին զայն ի հանապազորդեան ժամանակի. իբր զաւանդութիւն ստացեալ յորդիս ի հարց, ի փառս Աստուծոյ։ Եւ այս ևս այսպէս։

ԳԼՈՒԽ ԼԷ

ՅԱՂԱԳՍ ՇԱՐԺԻՆ, ՈՐ ԵՂԵՒ Ի ՎԱՆ ՔԱՂԱՔԻՆ, ԵՒ ԻՐՈՒՄ ՇՐՋԱԿԱՑ ԵՐԿՐԻՆ

Արդ ի թուականութեանս Հայոց ՌՂԷ. յապրիլ ամսոյ յերկոսն, յաւագ ուրբաթու գիշերն՝ որ լուսանայր ի լոյս աւագ շաբաթ աւուրն. անցեալ հասարակ գիշերոյն և ժամանեալ ժամ առաւօտին որ և զառաւօտի սկզբան կատարէին։ Եղև յանկարծակի թնդիւն և զոռումն՝ որով զկնի շարժ ահագին, որ ի բնակչաց այնքան պատահացն ոչ ոք էր տեսեալ այնպէս ահագին շարժ։

Յորմէ շարժմանէ փլաւ ներքին բերդի պարիսպն վանայ քաղաքին ի Թարվիզու դարպահէն մինչ ի Ղարի բուրջն, և այլ ևս այսր և անդր բազում տեղիք ի պարսպէն փլուզան և փլան, և որք ոչ փլան՝ խախտեցան, զորս յետոյ քակեցին զամենայն և նոր շինեցին։

Եւ եկեղեցիքն վանայ քաղաքին ոմանք խախտեցան, և ոմանք աւերեցան, Սուրբ Սահակ անուամբ եկեղեցին բնաւին աւերեցաւ, զոր յետոյ խոջայ Ախիջանն շինեաց։ Եւ Էջմիածին անուամբ եկեղեցին խախտեցաւ, զոր սոյն խոջայ Ախիջանն զայն ևս նորոգեաց առաւել քան զառաջինն։ Եւ սուրբ Առաքելոց եկեղեցին ներսի կողմանէն առաստաղն փլաւ, զոր խոջայ Ասումանք նորոգեցին։ Եւ սուրբ Պօղոս եկեղեցւոյ կաթուղիկէն բլաւ, զոր Գևրաբենց Ջիրաքն շինեաց։

Եւ ի մաչիթներացն, միայն Մուստաֆայ փաշայի մաչիթն մնաց և սորա մինարէն, իսկ այլ մաչիթներն և իրեանց մինարէքն ամեն փլան։ Եւ վերին բերդի մաչիթի մինարայն ևս փլաւ։

1 ԱՐՆ *խառնիճաղանճ*
2 Ի *ափոյ փխ ափի*
4 Ա *այնպէս*
4-5 Ա. *այնպէս ն չիմ ջուրց*
5-6 ե *ի խորս ծովուն*
7 Ի *հանապազորդեան*
14 ՐԴՆ *յաւաք* ՐԴՆ *աւաք*
15 ԱՐԳԴԵՒ *առաւօտուն*
15-16 ԱՐԳԴԵՔ *առաւօտու*
19 ԱՐԳԴՆ *բլաւ Գ բերդին*
20 Ա. *ի զանի Ի Իղարի*
21 Ա. *բազումք* ԱՐԳԴՆ *բլան... բլան*
26 ԱՐԴՆ *Ախիջանս*
27 Ա. *սրբոց... ի ներսնոյ*
28 Ա.ՐԳԴՆ *բլաւ* ՐԴՆ *Ասումինք*
29 ԱՐԳԴԵ *բլաւ*
30 Ա *ի մաչիթացն... փաշի* ՐԴԵ *փաշի*
31 Ա. *մնիրէն... մաչիթքն* ՐԴՆ *մնիրէն Գ մչիթներն* ԱՐԳԴՆ *մնիրէքն*
32 ԱՐԳԴԵ *մնիրայն*

Եւ բաղում տունք և ապարանք և շինուածք վիան, և ի ներքոյ իւրեանց առին բաղում մարդ և անասուն, և այնքան բաղումք էին մեռեալքն՝ որ սայլիւ բարձեալ տանէին արտաքս ի քաղաքէն. և ի թաղն ոչ բաւէին հասանել դիւրիզման, այլ պատառեալ վերկիր վիհ մեծ առնէին և ի մեռելոցն զոմն և զատան պատեալ կատաւղ պնէին ի վիհն և հողով ծածկէին։

Եւ յաւուրս ութն անդադար ի շարժման եկաց երկիրն, որ ոչ կարէին ի տունս բնակիլ, այլ ի բացեայ վայրի վրանով կային. վասն յայն ութն օրն անդադար ի շարժման եկաց երկիրն, որպէս պնաւ ի վերայ երեսաց ջրոյ. և զկնի այնորիկ սակաւ հանդարտեցաւ որ ի չորս օրն, և ի հինգ օրն, և ի տասն օրն միանգամ շարժէր, և այնպէս մնաց մինչ որ յունիս ամիսն լմնցաւ, և ապա հաստատեցաւ երկիր ողորմութեամբն Աստուծոյ։

Եւ զկնի առաջին շարժին իւրաքանչիւր որ, որք կերծան ի մեռանելոյ, եկին ի տունս իւրեանց սկսան պեղել զհողն, և ի ներքոյ հողոյն հանէին զինչս և զմարդս՝ որք ի ներքոյ հողոյն մնացեալք էին. թէպէտ մեռեալքն անթիւք էին, այլ և բաղումք ևս կային՝ որք խնամօքն Աստուծոյ կային կենդանի, զորս հանին ի ներքոյ հողոյն. վասն զի յետ տասն հինգ աւուր կենդանի մարդ հանին ի հողոյ։

Այլ և յաւուրս այսմ շարժմանս եղև գործ ինչ, յորոյ վերայ բաղումք զարմանային. այր ոմն աղքատ և չքաւոր, ազգաւ Հայ և հաւատով քրիստոնեայ՝ ի նոյն քաղաքէն վանայ. այրս այս նախ քան զշարժն եղեալ ի քաղաքէն գնաց ի Քարափոս անուանեալ գիւղն վասն մուրանալոյ։ Եւ կայինն այսմ առն երկու որդիք, փոքր իբրև տասն ամաց աւելի կամ պակաս. և այս երկու աղայքս մնացին ի տունս իւրեանց և հասեալք ի յիրեկոյն ըստ հանապազորդեան սովորութեան ննջեցին, և ի գիշերին յորում շարժն եղև՝ սոցա տունն ևս փլաւ, և ի ներքոյ մնացին մանկունքն։ Եւ սոցա հայրն՝ որ գնացեալ էր ի Քարափոս գիւղն, ննջեալ էր ի տան ուրումն, և ի լինիլն շարժին անկեալ էր զերան տանն և խորտակեալ զոտս առնն, և յայսմ պատճառէ մնաց այրս այս ի գիւղն Քարափոս մինչ ի Համբարձումն, որ ողջացան բնկեալ ոտք նորա. ապա եղեալ նկն ի քաղաքն և հանս փլուզեալ զտունն իւր, և համարձր ինքն և այլք ամենեքեան թէ մանկունքն ի ներքոյ տանն մնացեալ մեռան։ Եւ ապա ժողովեալ զորս ոմանս երեր անդր՝ որք պեղեցին զհողն ամենայն, ուսին զմանկունսն կենդանի ի ներքոյ հողոյն, և հիացեալ փառս մատուցին Աստուծոյ. վասն զի էր անցեալ աւուրք քառասուն և չորս զկնի շարժին՝ որք մնացին մեռ-

1 Ս. բազումք Ս. չիք ի
1-2 Ս. զբազում մարդիկս և զանասուն
4 ԱՓ զգնիրիզման... զերկիր
7 Ս. որք
8 ԲԹԽ բնակել Բ այն
10 Ս. սակաւ ինչ
18 Ս. կենդանիք
19 Ս. չիք տասն (հինգ աւուր) Բ տասն և տասն այլ և հինգ աւուր ԴԽ տասն և տասն և հինգ
23 Ս. զշարժումն
24 ԲԼ փոքրն
25 Ս. այսոքիկ Լ տղայքն
27 ԱՓ բլաւ
29 ԴՆ ուրեմն ԲԹ լինել Լ լինելն
30 Ս. յայսմանէ
31 Ի զկղն
33 ԱԲԳԴՆ զտուն
36 Ս. զփառս

կունքն ի ներքոյ հողոյ. և շնորհօք և ողորմութեամբն Աստուծոյ կենդանի արտաքս ելին մանկունքն. և որք լուան և տեսին հիացեալ զարմանային, որոյ լուրն հնչաս մինչև ի փաշայն քաղաքին, զոր տարեալ փաշային զմանկունան առաջի իւր և հարցեալ ստուգեաց զամենայն, և պրեալ ի բարեխիս զայս գործ՝ որ կատարեցաւ ի վերայ մանկանցն. և սահեաց առ իւր ի յիշատակ սքանչելեացն Աստուծոյ։ Այլ և հարցին ցմանկունսն վասն կերակրոց, թէ զի՞նչ ուտէիք, և նոքա ցուցին սակաւ փշրանս հացի, թէ զայս ուտէաք երբեմն երբեմն, և վասն ջրոյ ցուցին աման ինչ, յորում կայր բաղկի թիթու, որ ի ծարաւիլն զայն ուտէաք և գովանայաք. բայց զտիւ և զգիշեր ոչ դիտէաք։ Եւ մանկունքն այնուրիկ կան ցարդ ևս կենդանի շնորհօքն ամենակարողին Աստուծոյ։

Այլ և ամենայն վանօրայք երկրին Վանայ[170] փլուզեալք աւերեցան. վերին Վարագ՝ և ներքին Վարագ՝ և եկեղեցի սրբոյ հօրն Թոդկայ, և մեծ եկեղեցին Սալնապատայ վանից, Շուշանից վանքն, Դուռուպաշայ վանքն, Խէքուց վանքն, Էրէմերայ վանքն, Սրխու վանքն, Բերդակու վանքն, Կենդանանից վանքն, Կոնկու վանքն, Անգուաներու վանքն, Ալերու վանքն, Արջակու վանքն։ Եւ յայս ասացեալ վանօրէիցս երկու Վարագ՝ և Կոնկու վանքն, և Խէքուց վանքն միայն շինեցան, իսկ այլքն մնացին աւերակ։ Եւ դեղօրայք որք ի վանայ բոլորն կային ամիննեցուն շինուածքն փլան, և նոցին եկեղեցիքն ևս ընդ նոսին աւերեցան։ Իսկ Նորագեղի եկեղեցին մէկ արտաչափ չիւր տեղւոյն ի բաց ոտնեալ հեռացաւ և ապա փլաւ։

Եւ յայս շարժմանէս բաղում աղբիւրք՝ որք յաւիտենից ժամանակաց բղխէին, ցամաքեցան, որպէս և Սղնաբերդի աղբիւրքն, որք վեց ջաղաց կուբանեցնէին, ամիննեքեան ցամաքեցան, որ զբերդն անտի փոխանցին վասն չգոյոյ ջուրց՝ և տարեալ ի Ղասրիկ շինեցին։ Սոյնպէս և գներքին Փապախ անուանեալ դիւղն՝ որոյ աղբիւրքն ցամաքեցան և առ ի չգոյէ ջուրց, տարան զայս ևս ի Ղասրիկ շինեցին։ Եւ աղբիւրք Աւանայ գնղջն՝ որք էին աղբիւրք երկոտասանք, ամիննեքեան ցամաքեցան, որ ոչ երևին այժմ։

Եւ ի ձորն մեծափառ ուխտին Հոգւոց վանից կայր լեառն մի մերձ վանից, որև զանուն լերինն Աբեղներ կոչէին. ի գիշերին՝ յորում շարժն եղև, հաստատակառոյց, արարչակերտ, կարծրագոյն վիմական լեառնն այն յահագին շարժմանէն խախտեալ բնկբեկեալ քայքայեալ զառ ի ստորև սորեալ ի ձոր անդր փլուզեալ զձորն ամենայն լնոյր. և երիս արս ի ներքոյ իւր առեալ սպան. և զճանապարհն խափանեաց,

1 Ր հողոյն
3 Ս և փխ զոր
9 ԲԳԴԵ ծարաւիլն
11 ԱԴ շնորհօք Ն ամենակարողին
13 Ա ամիննեքեան ԲԳԴՆ փլուզեալ
14 ԲԳՆ եկեղեցին
21 ԱԲԳԴՆ բլան
22 ԱԴՆ ի չիւր տեղոյն ԲԳՆ ի չիւր տեղւոյն
23 ԱԲԳԴՆ բլաւ
24 Ս յայսմանէ
25 ԲԳՆ բխէին ԲԳԴ որ
26 Ա հանեցնէին Դ անդի Ե ամենայնն
28 ԲԳԴՆ գներքի
30 Դ որ էին

որ յայլ կողմանէ արարին ճանապարհ, և ջրաղացն խափանեաց որ յայլ տեղի շինեցին. և զձորն լցեալ զրաղում աւուրս արկել զգնացս ջուրց գետոյն, որ յետոյ գինի բազում աւուրց առ սակաւ սակաւ ապա արար ջուրն ինքեան գնալոյ ճանապարհ՝ և գնա զգնացս իւր: Եւ ի պատառն խաւու ձորոյ մերձ ի վանքն էրէմներու արտաչափ տեղ մի գտին սուղեալ յերկիր կլաւ. և եղև խոր և ահագին փոս մինչև յանդունդս, և ի միջոյ փոսոյն ի յանգնդոց ելեալ սեաւ ջուր և ծովացաւ անդէն ի մէջ փոսին, և կայ այնպէս մինչև ցայսօր:

Եւ վանայ քաղաքի փաշայն և այլ իշխանքն, զամենայն եղեալ դործս զայսոսիկ զրով շարադրեալ առաքեցին ի քաղաքն Կոստանդնուպօլիս, և ծանուցին թագաւորին Սուլթան Իբրահիմ խանդքարին, թէ այսքան շինուածոց քաղաքաց և դիղօրէից, մաչիթաց և եկեղեցեաց աւերումն եղև: Այլ և վանայ քաղաքի իսջէքն առաքեցին առ իսջայ Ռոհիջանն որ յաւուրսն յայնոսիկ ի Կոստանդնուպօլիս էր, հրաման առնուլ ի թագաւորէն վասն վերստին շինութեան աւերեալ վանօրէիցն և եկեղեցեացն, զոր և իսջայ Ռոհիջանն առեալ հրաման ի թագաւորէն և առաքեաց ի վան առ իսջայսն, և նոքա սկսան շինել զեկեղեցիսն քաղաքին, որպէս նախ պատմեցաք և գվարդապայ վանից: Եւ նախ՝ Պրակոս վարդապետն, որ էր առաջնորդ վարդապայ վանիցն՝ յանձն էառ շինել զժամատունն՝ զոր և շինեալ կատարեաց. և իսջայ Ամիրխանն՝ զՍուրբ Խաչի եկեղեցին. և Մարխաս Զալապին՝ զԱստուածածնի եկեղեցին. և իսջայ Դիլանչին՝ զսուրբ Սիոնի եկեղեցին. և իսջայ Յովհաննէսն՝ զՍուրբ Նշանի եկեղեցին: Զայս եկեղեցիսն շինեցին՝ և մնաց Բերդոյ եկեղեցին[171], և Քառասուն աբեղայից եկեղեցին, և զվանից պարիսպն ևս շինեցին շուրջանակի բուլանդակ: Եւ կատարեցաւ շինումն ներքին Վարագայ վանացն՝ և այլ վանօրէից և եկեղեցեաց. և կան իւրաքանչիւրք ի տեղիս իւրեանց ողորմութեամբն Աստուծոյ. որում փառք յաւիտեանս. ամէն:

ԳԼՈՒԽ Լ.Ը

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏՃԱՌՔ ԿՈՂՈՊԱՏԵԼՈՅ ՋԱՆՈՒԱՆԻ ՎԱՆՔՆ ՎԱՐԱԳԱ ԿՈՉԵՑԵԱԼ. ԵՒ ՏԱՆԵԼՈՅ ՋԱՒԱՓ ՅՈՒՐՔ ՆՇԱՆԱՆ Ի ԲԵՐԴՆ ԽՕՇԱՐԱՅ ԵՒ ԴԱՐՁՈՒՑԱՆԵԼՈՅ ԱՆՏԻ Ի ՎԱՆ ՔԱՂԱՔ

Տէր խօշաբայ բերդին որում Սուլէյման բէկ տասէին, եղև երբեմն դի զճանապարհորդ կաթուանան որ ի վանայ գնային ի Թաւրէզ և ի

1 Ա. *յայլմէ*
1-2 Ա. *զճանապարհ... զջրաղացն... յայլում տեղւոջ Գ տեղ*
4 Ա. *զճանապարհ*
5 Ա. *Հաւու է Հայոց* ԱՐԳ *էրմէրու*
9 Ա. *այլք*
11 Գ *խոնթքարն*
16 Բ *եկեղեցացն* Ա. *որ և* Ա. *գՀրաման*
17 Ա. *չիմ և (իսջայ)* ԲԳՆ *առ իսջայքն*
18 ԲԳՆԻ: *զրաղարին* ԲԳՆ *վանիցն*
21 Գ: *Ամբրան* Ա.ԲԳՆ *չալապին*
22 ԲԳՆ *Սիոնի*
23 Ա. *զայսոսիկ եկեղեցիսս* ԲԳՆ *եկեղեցիքս*
26 Ա.Գ *վարագայ վանիցն*
27 Ա. *իւրաքանչիւրք*
28 Ա.ԲԳ *չիմ ամէն*
31 ԲԳՆ *դաւաք*
34 Բ *զճանապարհ* Ա. *որք*

Թարվիզու ի վան, սա ղկարաւանաց բևռինան բռնութեամբ բանայր և որ ինչ իրաց և հատանէր, սուղ ինչ գին ձգէր ի վերայ տիրոջն և կորզնայ ի տիրոջէն յինքն առնոյր զինչան, և պատճառէր թէ գնով գնեցի։

Այլ և ի սոյն ժամանակի էր իշխան և հրամանատու Վանայ քաղաքին ումն մնծապոյն իշխան, զոր Հուսէյն աղայ ասէին. որ էր ի նոյն քաղաքէն Վանայ, առ որ մատուցեալ ազանցն, որոց ինչքն և ապրանքն յափշտակեալ էր Սուլէյման բէկն, և արարին բազում ամբաստանութիւն զՍուլէյման բէկէն. իսկ Հուսէյն աղայն զբարեխաղն Սուլէյման բէկին՝ ծանոյց ի դուռն թագաւորին յՍտամբօլ. վասն որոյ հրաման եղև ի թագաւորէն առ Հուսէյն աղայն վասն Սուլէյման բէկին, թէ զառնալ ինչսն զարձուսցէ առ տեարսն՝ և Սուլէյման բէկն ոչ զարձոյց։ Վասնորոյ և Հուսէյն աղայն առնալ զամենայն զօրս Վանայ, այլ և ժողովեալ զամենայն շրջակայ իշխանսն աղգին Մարաց, ընդ որս էր և մեծ իշխանն Մարաց Նղդիշէր, որ էր աէր Ջուլամերկայ, և Շատախայ, և այլ բազում գաւառաց և բերդօրէից, և նոքօք գնացեալ նստաւ ի վերայ հոշաբայ բերդին՝ յորում ամրացեալ նստէր Սուլէյման բէկն, և չերիս ամիս նստեալ մնացին՝ և զերկիրն ամենայն աւերեցին։ Վասն որոյ Սուլէյման բէկն անճար և ի տարակուսի լեալ անհնար մնաց, բազում կաշառս ոսկւոյ և արծաթոյ տուեալ Նղդիշէր մեծ պարոնին, զի թերևս զՀուսէյն աղայն և զայլսն զամենեսեան առեալ ի բաց գնասցէ. որ և կատարումն գործոյն եղև այնպէս, զի առին ինչս բազումս ի Սուլէյման բէկէն և ի բաց գնացեալ ցրուեցան չիւրաքանչիւր տեղիս։

Զկնի գնալոյ նոցա իբրև սակաւ ինչ աւուրք ի վերայ անցին, յայնժամ ևկն առ Սուլէյման բէկն այր ումն դոռոզ արիւնարբու և արիւնահեղ, յաղթող պատերազմող և անպարտելի ախոյեան՝ զորոյ անունն Ջօմար ասէին։ Որում պարգևեալ էր խոնդքար թագաւորն Օսմանցւոց պատիւ և իշխանութիւն փաշայութեան, և առաքեալ էր երկիցս և երիցս ի քաղաքս և յաշխարհս իշխել նոցա ըստ կարգի օրինացն Օսմանցւոց, բայց սա ի գնացեալ տեղիսն կարի բռնութեամբ և անիրաւութեամբ վարեալ էր զիշխանութիւնն կեղեքելով, կողոպտելով յափշտակելով, և ընդ ամենեսեան անիրաւութեամբ վարելով, եթէ ընդ սպայից եթէ ընդ ռամկաց։ Եւ ուր և գնացեալ էր յամենայն տեղեաց համբաւ անիրաւութեան և ամբաստանութեան ելեալ էր առ թագաւորն և առ վէզիրն։ Վասն որոյ յորժամ լուծեալ ի փաշայութենէ քաղաքաց՝ և ևկն ի դուռն թագաւորին ոչ ևս յաւելին տալ նմա իշխանութիւն և փաշայութիւն. և այս գործս յոյժ ծանր և վշտագին երևեցաւ Ջէմաբին. վասն

5 Ե *Հիւսէյն*
6-7 Ա. *զինչսն և զապրանսն*
7 Ա. *չիՓ և* Ա. *զբազում*
7-8 ԱՐ *անբաստանութիւն Ր անբաստանութիւնն*
11 ԱԳԴԵ *զինչսն*
12 Ա. *զամենեսեան զօրսն*
13 Ա. *զիշխանսն Գ իշխանս*
15 Ա. *այլոց բազմաց*
17 Ա.Դ *ամիսս*
19 Ա. *զբազում*
22 Ա. *զինչս*
26 Ա. *որոյ զանունն ԲՆ զորոյ զանունն*
28 Ա. *զպատիւ և զիշխանութիւն*
31 ԱԲԴՆ *զիշխանութիւն Ե զիշխանութիւնսն*
32 Ե *անիրաւութեամբն*
33 Ա. *յամենից*
36-37 Ա. *զիշխանութիւն և զփաշայութիւն*

որոյ ապատամբեալ ի կողմանէ թագաւորին ել ի Կոստանդնուպօլսէ. և եկեալ ի կողմանս Բուրսայու և Անկիւրիոյ: Եւ որս յարեցան արք սրիկայք և ելուզակք. որք էին ամենեքեան գողք և աւազակք, և աշխարհաւերք և նմանողք նմին չարագործութեամբն. և նոքօք բնակէր ի լերինս և յանապատս՝ և այնպէս անցուցանէր զկեանս իւր: Եւ յորժամ յօժարէր կամք իւր նոքունքն իջանէր ի լեռնէն՝ և դարանամուտ լինէր ի վերայ ճանապարհաց և երթևեկ կարաւանաց և ի վերայ բախեալ զորս կոտորէր, և զոչս փախստական առնէր, և զոսկի և զարծաթ և այլ զոր ինչ և կամէր առեալ գնայր: Եւ ոչ թէ ի սակաւ աւուրս և ի ծածուկ զայս առնէր, այլ յայտնի և համարձակ և ի բազում աւուրս, այնքան մինչ զի երթևեկութիւն ճանապարհաց խափանեցաւ, որոյ համբաւն գնաց ի Կոստանդնուպօլիս և հնչաս առ թագաւորն: Վասն որոյ հրաման ել ի թագաւորէն կանգնել զօրապլուխ բազում զօրօք և գնալ պատերազմիլ ընդ նմա և սպանանել. և կարգեալ զօրապլուխն յոլով զօրօք եկեալ պատերազմեցաւ ընդ նմա, ոչ կարացին սպանանել՝ սակայն փախուցին ի տեղւոջէն: Եւ Ջօմարն ուր և գնայր գնոյն գործն գործէր. վասն որոյ հրաման եղև ի թագաւորէն առ իշխանս և զօրագլուխս ամենայն աշխարհաց, զի ուր և գնասցէ Ջօմարն, այնմ աշխարհի իշխանքն և զօրքն մարտուցեալ պատերազմեսցին ընդ Ջօմարին և սպանցեն և թէ իցէ ոք որ բերցէ զգլուխն և ընշանն Ջօմարին, բազում պարգևս և մեծութիւնս առնիցէ ի թագաւորէն. քանզի աջոյ ձեռաց ծկիկ մասն ի մէջ ձեռաց ափին մածեալ կապած էր անմիկնելի, որին վասն ասացին զնշանն բերցէ: Եւ յաղագս այսպիսի հրամանաց թագաւորին ուր և գնաց Ջօմարն, ամենայն զօրք և իշխանք աշխարհացն հալածական արարին զՋօմարն. և յոչ գտանելն տեղի դադարման ի հալածելն իւրում Ջօմար, և գալով եկն և հնաս մինչ ի Սուլէյման բէկն: Եւ յաղագս առիւծասիրտ արիութեան նորա և յաղթական պատերազմին ընկալաւ զնա Սուլէյման բէկն, և ասաց. «Եղիցուք երկոքեանս եղբարք, և պահեսցուք զհայրենի իշխանութիւնս մեր, և ի միասին վայելեսցուք»:

Դարձեալ այլ ևս պատմութիւն որ պիտոյ է ի մէջ այսմ պատմութեանս: Այն վերոյասացեալ Հուսէյն աղայն ի պատճառէ իմիք արար սէր և միաբանութիւն ընդ մեծ իշխանին Մարաց Եղդիշերին՝ զի զդուստր եղբօր իւրոյ ետ ի կնութիւն եղբօր Եղդիշերին, որում անունն էր Խոսրով փաշայ. և սոքա երկոքեանս Եղդիշերս և Հուսէյն աղայս կարի սիրով միաբանեցան, և եղեն խնամիք և բարեկամք:

1 Գ *Կոստանդնուպօլսէ*
2 Բ *Անկիւրոյ*
4 ԱԴՆ *չարագործութեամբ*
6 Գ *նոքօքմբ*
7 ԱԴ *չիմ և (ի վերայ)* Է չիմ և *(երթևեկ)*
7-8 Ա. *բաղխեալ*
12 ԲԴՆ *որում*
13 Ա. *կարգիլ զզօրագլուխ բազմօք*
14 ԲԴՆ *պատերազմիլ*
15 Ա. *յոլովիւք*
18 Ա. *ամենից* Ա. *այնորիկ* Է *այնր փխ այնմ*
19 Գ *մատուցեալ*
20-21 Ա. *զրազում... գմեծութիւնս առնիցէ է*
21 ԲԴՆ *առնիցէ է*
23 Ա. *այսպիսոյց*
24 Ա. *ամենեքեան*
25 Ա. *գտեղի*
25-26 Բ *ի հալածելն*
27 Ա. *յաղթականի*
29 Ա. *զիշխանութիւնս*
30 Է *այսր փխ այսմ*
32 Ա. *զսէր և զմիաբանութիւն* Ա. *մեծի*
33 Ա. *որոյ* Եէ *անուն էր*
35 Է *չիմ և (եղեն)*

Դարձեալ այլ ևս պատմութիւն: Այս Հուսէյն աղայս, յոյժ զօրացաւ և մեծացաւ ի մէջ քաղաքին Վանայ. այնքան որ սորին հրամանաւն էին փաշայն և զաղին, և ենկիչար աղասին, և զուլլար աղասին և այլքն ամենեքեան. և սպան յիշխանաց քաղաքին տասն իշխան, ընդ որս էր և զուլլար աղասին. իսկ այլ իշխանքն փախստականք եղեն յաշէ սորա:

Այլ և պատահեցաւ գործ ինչ այսպիսի: Արտէս սովորութիւն է Օսմանցւոց աղգին, որ վհին փաշայն մատուլ առնուն և ի տեղի նորա ի դրանէ թագաւորին նոր փաշայ առաքին. այսպէս և զՎանայ քաղաքի հին փաշէն մատուլ արարին, և նոր փաշայի Մուսալիմ անդարկեցին ի Վան ի դրանէ թագաւորին: Իսկ Հուսէյն աղայն և հին փաշայն միաբանեալ ոչ ընկալան զնկեալ Մուսալիմն նոր փաշային, այլ յետս դարձուցին ի Սատմբօլ: Իսկ Վանայ քաղաքի պարոնայքն, որք վշտացեալք էին ի Հուսէյն աղայն, դաղտ ի նմանէ և ի ծածուկ յղով բանս ամբաստանութեան դրեցին զնմանէ, և զնոր դարձուցեալ Մուսալիմին ուղարկեցին ի դուռն թագաւորին:

Եւ յետ սուղ ինչ աւուրց՝ ի դրանէ թագաւորին նկն Սինան անուամբ իշխան ոմն ենկիչարի աղասի ի քաղաքն Վան, եմուտ ի բերդն և տիբանց վերին բերդին, և ամենայն ենկիչարացն: Եւ յետ սուղ աւուրց՝ այս նոր նկեալ Սինան աղայս՝ որ ենկիչար աղասի էր, ի վերին բերդէն սկսաւ ձօփ ձգել ի վերայ ապարանից փաշային՝ ասելով թէ, հրաման է թագաւորին ի վերայ քո՝ գնալ վասն որոյ ելեալ գնասցես ի քաղաքէս. այլ և ձգէր ձօփ ի վերայ տան Հուսէյն աղային և առաքեր պատգամս առ նա, թէ մի պահեր զփաշայն, այլ ուղևորեաւ: Իսկ Հուսէյն աղայն և փաշայն երկուցեալք ի ձօփէն, ելեալ գնացին ի ներքի բերդի հիւսիսային կողմն մերձ Թարվիզու դրանն, և մտին ի տեղին, զոր ասեն Պալթի տունք և անդ ամրացան, զի ձօփն՝ որ գայ ի վերին բերդէն, ոչ պատահի այնմ տեղւոջ, զի քարափ լեառնն ի վերուստ հովանի է ի վերայ նորա, իսկ Վանայ ղուլն թէպէտ և շնամիք էին Հուսէյն աղային և առեին զնա, այլ զի կարի երկնչէին ի նմանէ, վասն որոյ ժողովեցան և նոքա անդ առ Հուսէյն աղայն:

Իսկ ենկիչար աղասին առաքեաց արս ի բերդն խօշաբայ և զկոյց Սուլէյման բէկին զնկեալ հրաման թագաւորին, և զղօղնէն զՀուսէյն աղային և զփաշային. իսկ Սուլէյման բէկն վասն անցելոյ քինուն՝ և նախանձուն վրէժխնդրութեան, բազում ցանկութեամբ ցանկայր այնպիսւոյ լրոյ, ոչինչ դանդաղեալ, այլ շնշատակի յարուցեալ ինքն յղով զօրօք, առեալ ընդ իւր և զՋօմարն՝ զոր յառաջդ յիշեցաք. և գնացեալ հասին ի

2 Ա. *զի փխ որ*
3 Գ *զաւակն ենկիչարի աղասին* ԱՐԴՆԷ *զուլար*
4 ԱՐԴՆ *իշխան*
4-5 ԱՐԴՆԷ *զուլար*
5 ՐԴ *փախստական*
7 ԱՐՆԷ *մանգուլ* ՐԴՆ *անն փխ առնն*
9 ԱՐՆ *մանգուլ*
18 Ա. *ամենից ենկիչարեացն* Ա. *սղից* ՐԴՆ *ենկիչարոցն*
21 Ր *քոյ գնալոյ* ԱԴՆ *գնալոյ*
22 Ա. *ազին* Ա. *գպատգամս*
24 ՐԴՆ *երկուցեալ* ՐԴՆ *ելեալք* Ա. *ի ներքնոյ* Բ *շիմ ի*
25 ՐԴ *որ*
25-26 Ա. *Պալթի տունք*
27 Ա. *լերինն* ՐԴՆ *լեառնն*
29 Ա. *չիմ առ*
31 Ա. *զարս*
32 Ա. *Հուսէյն*
34 Ա. *բազմաւ*
35 Ա. *յոլովիւք*

Վան քաղաք. և ի շրջակայ վիղօրայս քաղաքին այսր և անդր շրջէին հանապազ, մի գուցէ ի ձեռս ածցեն զՀուսէյն աղային, որ և շրջելով գնացին ի գիւղն Արջակ, և անտի ի գիւղն Խառակոնիս. և գիւղս այս Հուսէյն աղային էր, և առ ի վրէժխնդրութիւն քինու Հուսէյն աղային՝ զգիւղ առնուուէրն ի ձող բարձրացուցանել սպան Սուլէյման բէկին:

Եւ անտի ելին Սուլէյման բէկին և Զօմարն գօրօքն իւրեանց գնացին ի Վարագայ վանքն, և զոր ինչ համբաւ յառաջէ լուեալ էին զմեծահանդէս ուխտէն Վարագայ, այժմ աչօք տեսեալ և մօտ նկատեալ զննէին զամենայն, և մտախոհ եղեալ խոհային, թէ այսպիսի հոյակապ և հռչակաւոր մեծաշէն վանից դոն բազմաժամանակեայ մխիթեալ ինչք և սուրբ ուածք, կահք և կարասիք պղնձեղինաց, արծաթեղինաց և ոսկեղինաց, և արդ՝ ժամ է մեզ, զի ի ձեռս մեր զրաւեսցուք զամենայն: Եւ յայսմ պատճառէ յանկարծակի կալան զամենայն բնակիչս վանացն, կապեցին և պահէին ի կալանս, և մի մի բերեալ առաջի իւրեանց հարցանէին վանասպասուածոց վանացն՝ և խնդրէին ի նոցանէ. և նոքա զոր ինչ յայտ էր ցուցանէին, և վասն այլոցն ասէին, թէ ի քաղաքն են սարեալ զամենայն և անդ պահեն, զի վասն ահի զողոց և աւազակաց ասուէն ինչ ոչ թողուն:

Իսկ ի բնակչաց վանիցն, թէպէտ չարչարեցին զոմանս առեալ՝ և զոմանս սակաւ, այլ զնոսա զամենեսեան թողին, և ի նոցանէ ոչ ոք եգիտ հնար փախչելոյ՝ փախեաւ անդադանալի: Բայց երեք աբեղայք ծերք ի մխաբանից վանացն, որոց անուանքն էին տէր Յովհաննէս և Տէր Սահակ և տէր Մովսէս, զոսոսա կալան և պահէին կապանօք և բազում զգուշութեամբ, և ասէին. «Այլ բնակիչքն մանկագոյնք են՝ ոչ են տեղեակք պահարանաց վանիցս, սոքա հին աւուրքք և ծերք են, սոքա գիտակք են ամենեցունց»: Եւ բերեալ առաջի՝ նախ հաւանական բանիւք, և ապա սպառնալեօք խնդրէին ցուցանել նոցա զպահարանս վանացն, և սբեղայքն ասէին. «Մեք բնաւ ոչ եմք գիտակք, յորոց դուք ասէք». քանզի ամօք և յօժարութեամբ սրտի յանձին կալան զմահ և մեռանիլ և ոչ ցուցանել:

Եւ յետ բազում հարցման և պատասխանւոյ՝ սկսան չարչարել զնոսա. և նախ կախեցին զնոսա յոտից նոցա և խստագոյն հարին բրօք կարի անողորմ և անչափ:

Եւ ապա իւրաքանչիւր աբեղայից զերկոսին ձեռն տարան յետս կոյս, և զերկու բոյմս ձեռացն կապեցին ի վերայ իրերացն, և արկին սպարանս ի մէջ երկուց ձեռաց նոցա, և ի բարձր տեղւոջէ կախեցին զնոսա, և բերեալ ծանր վէմս եդին ի վերայ թիկանց նոցա: Եւ թո-

3 Դ *անդի*
9 Ա. *այսպիսեաց* ԲԳՆ *այսպիսոյ* Դ *այսպիսւոյ*
9-10 Ա. *հոյակապից և հռչակաւորաց մեծաշինից*
11 Դ *պղնձեղինաց*
12 ԴՆ *զամենայնն*
12-13 Ա. *յայսմանէ... զամենեսեան*
15 Ա. *որ*
17 Դ *գողոց*
21 Ն *անուանք*
22 Ա. *բազմաւ*
23 ԲԳՆ *տեղեակ*
24 ԲԳՆ *ծեր են* ԳՆ *գիտակ են*
25 Դ *ամենեցուն*
26 ԱԴ *վանիցն*
27 ԳՆ *գիտակ*
28 Դ *զմեռանիլ*
30 Ա. *բազմի*
34 Բ *բոյս* Ա.ԲԴ *իրերաց*
36 Ա. *զծանր*

ղին այնպէս ի կախաղանին, որ մնացին մինչև ցերեկոյ, որով քակուեցան յօդուածք երկոցունց ձեռաց նոցա, և սբեղայքն ողբալով աղաղակէին, թէ ոչ գիտեմք զխնդրելին ձեր՝ և անօրէնքն ոչ անսային։

Ետ այսորիկ արկին գալարան չուան ի գլուխս աբեղայիցն, որ է այսպէս. զի զպարանս կանթեղին, որ բարակ է և պինդ, կապեցին և արկին ի գլուխս աբեղայիցն բոլոր իբրև զօղ, և անցուցին փայտ ի մէջ պարանին, և սկսան կանել զփայտն, և ի կանել փայտին՝ պարանն ևս ոլորեալ և մանեալ եղև սաստիկ պնդութեամբ, և թաղեցաւ ի մէջ մսոյ և մորթոյ գլխոց աբեղայիցն, և իբրև ի մամուլս պնդեալ սեղմեալ եղեն գլուխք նոցա, և ամենայն միսք և մորթք և երակք գլխոցն և պարանոցացն, այտուցեալ արիւնաբուղտ եղեն, և երկոցունց աչաց նոցա համարձին ի բաց ոստել ի տեղեացն, և աբեղայիցն անշնչացեալ և ուշագնաց եղեալ իբրև զմեռեալ անկանէին ի գետնի։

Եւ ապա բերին զպարանս բարակ և պինդ՝ և կապեցին յերանս աբեղայիցն, և քարշեալ ի վեր՝ կախեցին ի բարձր տեղեաց զիւրաքանչիւրսն և շուրջ զնոքօք բոլորեալ անօրէնքն և զօրքն իւրեանց հայհոյէին, թքանէին, այպանէին ասելով. «Զայդքան չարշարանս կրէք և ընդ՞ր ոչ ցուցանէք զդարմանն վանացն». և սբեղայքն ոչ ցուցանէին, վասն զի զմահ յանձն առեալ էին։

Զկնի սորա եկեալ Զօմարն ինքն եբաց զծածուկ մարմինս աբեղայիցն, և էարկ դաստառակ ի վերայ առնացի անդամոց նոցա. և ինքն ի բերան իւր առեալ՝ ատամամբն ծամէր զայն, յորմէ յոյժ վըշտացան աբեղայքն և անշնչացեալ անկան իբրև զմեռեալս։

Արդ՝ զայսքան սարսռելի տանջանս կրեցին ողորմելի աբեղայքն, և գրեթէ յիւրաքանչիւր չարշարանս յատուկ մեռանէին և կենդանանային, և մանաւանդ ի վերջին չարչարանս յայս, որ կարի սարսռելի տանջանք էր և ի բազում տանջանացն ճնշեալ մաշեալ և վտանգեալք եղեն մարմնով. որք ոչ զօրէին ի վերայ ոտից կանգնիլ։ Զայսքան չարչարանս, զորս յանուանէ յիշեցաք երևելիք և յայտնիք էին, զորս ի շարադրութիւնս բանի բերեալ գրեցաք. իսկ որք փոքրագոյնք էին, զորս մեք թողաք, դու զայն մտովք քովք իմացիս, և զայս ամենայն հնարեալ ներգործէր անիծեալ և անողորմ, անաստուած և մարդադէմ գազանն այն Զօմարն։

Եւ յետ այսքան վշտաց և նեղութեանց, իբրև գիտաց Զօմարն, թէ աբեղայքն ոչ ցուցանեն զդարանսն, ինքնին իսկ յարուցեալ ի խնդիր. որոնել և յուզել զդարանս վանիցն. քանզի էառ ի ձեռն իւր մուրճ, որ

1 Ա.Դ *որք*
1-2 Ա.ՐԴՆ *քակեացն*
2 ՐԴՆ *օգուածք*
4 Ի *կալարան Է ի գլուխ*
5 Ա.ՐԴՆ *պինդ*
7 Ա.Դ *մանել... մանել փխ կանել... կանել*
8 Ա.ՐԳՆ *պ(ը)նդութեամբ* Ա.Դ *գլխոյ*
9 Ա.Դ *պնդեալ*
10 Ա.ՐԴՆ *եղեւ* Ա.Դ *գլուխ* Ա. *ամենեքեան*
11 Ա.Դ *արիւնաբուղտ*
14 ԳԴՆ *պարան* Ա.ՐԴՆ *պինդ*
16 *իւրոց*
18 ՐԳ *զդարանս*
19 Ա.Դ *յանձ*
24 Ա *ողորմելիք*
27 Ա. *բազմաց*
28 ՐԳԴՆ *ոտաց*
29 Ա.Ն *յայտնիքն*
31 Ա.ՐԴՆ *մտօք*
34 Ա *այսքաննաց*
35 Գ *ինքն իսկ*
36 Ա *զմուրճ*

է քլունկ և սկսաւ շրջագայիլ ի մէջ վանից եկեղեցիան և ի տներն և յամենայն տեղիս. կանգնէր և հայէր, և դիտեալ նկատէր զամենայն տեղիս, ապա ուր և համարէր զոլ կարծիք և նմանութիւն դարանի, մրճուկն այնմիկ՝ զոր ի ձեռին ունէր, բաղխէր զտեղիսն։ Եւ այսպէս շրջագայելով եկին և մտին ի մի յեկեղեցեացն, և յորժամ եհաս զկարծեցեալ տեղին, նոյնժամայն ել ձայն թնդման։ Վաճառոյ վաղվաղակի քակեցին զտեղին և գտին խոր մի լի պղնձեղինօք. վասն զի զամենայն պղնձեղէն անօթս վանից անդ լցեալ թագուցեալ էին, զորս զամենայն արտաքս բերեալ ժողովեցին ի մի վայր։ Եւ ի գտանելն այնմիկ առաւել յորդորեցան և բազմաց այսպիսեացս գոլ կարծիս տային, և կարի որոնմամբ սկսան հարկանել զամենայն տեղիսն։ Եւ անտի գնացին յայլ եկեղեցի, և ի բաղխելն թնդաց տեղիս, և վաղվաղակի քակեցին, և գտին դարան մի դատարկ, զի ոչինչ գոյր ի նմա։

Եւ թողեալ զայն՝ գնացին ի միւս այլ եկեղեցին, և ի բաղխելն՝ պատահեցաւ տեղին, ուր էր մեծ դարանն, յորում պահեալ էին պատուական սուրբ Նշանն և զամենայն անօթս եկեղեցեացն. և վաղվաղակի քակեցին և գտին զդուռն դարանին, և մտեալ ի ներքս տեսին լի դանձիւ, և զԱւետ սուրբ Նշանն բազում դաստառակօք պատեալ և ի մէջ գեղեցկաշէն արկղ եդեալ. և ի վերոյ քան զամենեսեան անօթսն բազմեցուցանել, զոր Սուլէյման բէկն ինքնին ի գիրկն իւր առեալ զսուրբ Նշանն և եբեր արտաքս։ Եւ ապա արտաքս բերին զայլ ևս անօթս, որ էին բազում արծաթեղէնք, սկիհք, և խաչք, և խաչ մի մարդաչափ. որոյ կշիռն էր մէկ խոնդքարի լիտր, և ի վերայ իւր գրեալ ունէր. «Դաւթի խաչ». և բազում ոսկեհուռի և արծաթապատ աւետարանք, և այլ գրեանք և արծաթեղենք, քշոցք և բուրվառք և կանթեղք, և պատուական և մեծագին շուրջառք, և վարագոյրք, և բեմի ծածկոցք, և այլ ևս կահք և կարասիք բազումք, զորս անդէն պահեալ էին. զամենայն հանեալ բերին արտաքս։ Զոր ինչ արծաթեղէնք իրք էին, եդին ի մէջ անդկի և զոր ինչ պղնձեղէն էր խորտակեցին, և այլ զոր ինչ և գտին բարձին ձիոց, նա և զսուրբ Նշանն իւրով զարդուքն. և կալեալ երէց մի բերին և կարգեցին գնալ ընդ սրբոյ Նշանին վասն սպասաւորելոյ նմա. և Սուլէյման բէկն և Ջօմարն զօքօքն իւրեանց առեալ զայն ամենայն և գնացեալ հասին ի Խօշաբ։

1-2 Ա ի տունն և յամենեսեան
2 Ա զամենեսեան
4 է այնուհիկ ՐԳՆ բախէր
7 Ա զխոր... զամենեսեան
7-8 ԴԻԵ պղ(ը)նձեղինօք... պղ(ը)նձեղէն
8 ԴԻԵ քաքուցեալ
10 է չիք և (բազմաց) Ա կկարծիս ՐԳՆ կարծիք
11 Գ անդի
12 ԱՐԳՆ բախելն
13 Ա զդարան
14 ԳՆ եկեղեցի ՐԳՆ բախելն
15 ՐԳՆ զաւաք
17 Բ ի ներք
18 ՐԳՆ զաւաք Ա բազմօք
19 ԱՐԳՆ յարկիղ ԴԻԵ զամենայն
22 Ա անօթսն, որ էր բազում արծաթեղէնք էին ՐԳՆ անօթսն, որ էր բազում արծաթեղէնք
24 Ա չիք և, բազումք փխ բազում
25 Ա այլք ՐԳՆ արծաթեղէնն
26 Ա պատուականք և մեծագինք ՐԳՆ ծածկոց
28 Ա Որ ինչ ՐԳՆ արծաթեղէն
29 Ա որ ինչ ԱՐԳՆ պղ(ը)նձեղէն
31 ՐԳՆ էրէց ՐԳՆ մի և բերին կարգեցին
33 Ա չիք և

Արդ՝ ամենայն անօթք և ինչք վարագայ այսպիսի կերպիւ գնաց ի խօշաբ, յորում ժամանակի էր Թուականն մեր ՌՃ։

Իսկ երեքին աբեղայքն՝ որք այնքան տանջեցան, թէպէտ և տեսեալ սպրեցան զամ մի, այլ իբրև զմեռեալ զնոսուն, զի ճլլամահ[172] կենօք կային և ըղձային մահու, որ և զկնի ամի միոյ հասեալ ի վերայ նոցա մահ՝ հանգոյց զնոսա ի տառապանաց իւրեանց։

ԳԼՈՒԽ Լ Թ

ՎԱՍՆ ԳՆԱԼՈՑ ՀՈՒՍԷՅՆ ԱՂԱՅԻՆ Ի ՋՈՒԼԱՄԵՐԿ

Իսկ Հուսէյն աղայն և փաշայն՝ որք ի Պալթի տներն մտեալ էին և ղօղեալ, մնացին անդէն այնպիսի մինչև յերկուս ամիս, և թօփն ի վերին բերդէն հանապազ զներքին բերդն ի ղբաղաքն ծեծեր և աւերեր։ Ապա Հուսէյն աղայն նկատեալ խորհրդով գիտաց զի, ոչ ուստեքէ գոյ նմա փրկութիւն, եթէ ոչ ի խնամոյն իւրոյ Չըղդիշէր մեծ պարոնէն. վասն որոյ յիւրոց հաւատարմաց զոմանս թարց բնաւին ումեք գիտելոյ առաքեաց առ Չղդիշէր ասելով. «Յայտ է քեզ, զի իշխանքն Վանայ և Սուլէյման բէկն իմ թշնամիքն են, արդ ոչ ուստեքէ գոյ ինձ հնար փրկութեան, եթէ ոչ ի քէն. վասն որոյ վաղվաղակի պարտիս հասանել ինձ յօգնութիւն»։ Իսկ մեծ իշխանն Չղդիշէր հրաման արար իւրոյ իշխանի ումեմն՝ որոյ անունն էր Միրաբէկ, առնուլ զզօրս և գնալ. և նա առեալ ընդ իւր զզօրս հազար և հինգ հարիւր, պատրաստութեամբ յոլով զինուց և մանաւանդ թֆանքով. որոց փութանակի հասին յերկիրն Վանայ և ի պատեհաւոր տեղիս և ի մերձակայս քաղաքին շրջէին, զի թերևս զՀուսեյն աղայն ի ձեռս ածեալ, առեալ գնասցեն։

Իբրև զայս ետես փաշայն, թէ զօրքն Չղդիշերին եկին ի տանել զՀուսէյն աղայն, խորհեալ ի միտս իւր գիտաց, զի չետ գնալոյ նորա ինքն միայն մնայ. վասն որոյ փութացաւ ինքն և յառաջ քան զՀուսէյն աղայն ելեալ ի Վանայ քաղաքէն իւրովք պաշտօնէիւք, և գնաց՝ յո՛ և կամեցաւ։

Բայց թօփն հանապազ ի վերին բերդէն ծեծեր զներքին քաղաքն և աւերեր, զի յառաջին շաբաթու աղուհացիցն սկիզբն թօփ ձգելոյ՝ և մինչև ի Հոգւոյ գալուստն[173] ձգեցին, որոյ վասն ձանձրացան ամենայն քաղաքացիքն՝ իշխանք և սպայք և ռամիկք. խորհուրդ արարին մեծամեծքն և դուլլար աղասիքն, թէ վասն առն միոյ ընդէ՞ր է այսքան

1 Ա *ամենեքեան անօթքն և ինչքն... այսպիսեաւ* Բե *անօթքն և ինչքն*
4 Բ *զեռն* Ա *ճլլամահօք*
5 ԱԲԳԴ *մահն*
9 ԲԳԴե *որ փխ որք* Ա *տուման*
10 ԱԲԳԴե *յերկու*
11 ԲԳե *զներքի*
12 ԲԳե *աղայ է նկարեալ*
14 ե *հաւտարմաց*
16 ԱԳԴե *թշնամիք*
18 Ա *զհրաման*
19-20 ԲԳԴե *զօրս... զօրս*
21 Ա *յոլովից*
21-22 Ա *թֆանքաց... հասեալ* Բե *թֆանկով*
22 ԱԲԳԴե *տեղիս ի մերձակայ*
30 ԲԳԴե *զներքի*
32 Ա *ամենեքեան*
34 Բե *դուլար* Ա *զայսքան*

չարչարանս կրել մեզ, կալցուք զՀուսէյն աղայն և տացուք ի ձեռս իւրոյ խնդրողացն. և ոմանք զայս խորհուրդ ծանուցին Հուսէյն աղային, և նա կամեցաւ պի, զվխաւորս այնմ խորհրդեանն, որք էին դուլլար աղասիքն հնարիւք իմն սպանանել. և այս խորհուրդ ևս յայտնեցաւ դուլլար աղասոցն և այլ զվխաւորացն: Վասն որոյ ընդ լուսանալ առաւօտին, դուլլար աղասիքն և այլ զվխաւորքն իրաքանչիւր որ առնել զդրօշն նշանաց իւրեանց և դնացին ի ներքին բերդի յայն դուռն, զոր Իսկալի դուռն սանն, անկեցին զդրօշն ի վերայ պարսպին և աղաղակեցին թէ դուլն դարձաւ, դուլն դարձաւ: Իբրև զայն լուան սպայազօրքն, ամենևքեան առնել զվէնս իւրեանց ընթացան ի ներքոյ զրօշին իւրեանց, և մնաց Հուսէյն աղայն ինքն միայն և որդիք և ծառայք իւր, որ և երկուցեալ Հուսէյն աղայն զի մի դուցէ ըմբռնեսցին զինքն, յայնժամ ծառայքն Հուսէյն աղային պարանաւ կախեցին զնա ի ներքի բերդի պարիսպէն, որ իջեալ՝ դնացեալ խառնեցաւ ի զօրս Սղդիշէրին և զօրքն Սղդիշէրին առեալ զՀուսէյն աղայն գնացին ի Շաւախ և անտի ի Ջուլամերկ առ Սղդիշէր. և այս ևս այսպէս:

ԳԼՈՒԽ ԽԱ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՍԱՏԱԿՄԱՆ ՊԻՂՏ ՋՕՄԱՐԻՆ

Յորժամ Սուլէյման բէկն և Ջօմարն առարեալ կողոպտեցին զվանքն: Վարագայ և առեալ գնացին ի խօշաբ, անդէն մնացին մինչև Յայտնութեան յիսնակն, ապա եկեալ լրտեսացն պատմեցին նոցա, թէ ահաւասիկ Հուսէյն աղայն յայս նիշ աւուր ելանէ ի Ջուլամերկայ և գնայ առ խոնդքար Թագաւորն. յայնժամ կամօք և խորհրդակցութեամբ Սուլէյման բէկին, առեալ Ջօմարն հարիւր այր և ի վերայ Բիրկրու և Արճիշու գնաց ի պահել զճանապարհն Հուսէյն աղային, զի թերևս սպանցէ զնա:

Իսկ այն հրամանն Թագաւորին՝ որ ի վաղ ժամանակաց ելեալ էր վասն Ջօմարին, թէ ուր և երևեսցի Ջօմարն այնմ աշխարհի զօրապետքն զօրօքն իւրեանց մարտիցեն ընդ նմա և սպանցեն, որոյ սակս և փաշայն Արղրումայ ի լսելն իւր զգալն Ջօմարին, զոմն իշխան չորս հարիւր արամբք առաքեաց զկնի Ջօմարին. որոյ եկեալ հանդիպեցան Ջօմարին ի դաւառին Կեղոյ, ուր և մարտուցեալ կռուեցան ընդ Ջօմարին և յաղթեցին նմա. քանզի զօրքն Ջօմարին հարիւր էր և նոքա չորս հարիւր: Վասն որոյ զզօրսն Ջօմարին զոմանս սպանին և զո-

2 ԲԳՆ *իւրոց*
3-4 Բե *զուլար*
5 Բե *զուլար* Ա. *այլոց*
6 ԱԴԷ *առաւօտուն* Բե *զուլար* Ա *այլք*
7 ԱԲԳՆ *զդրօշ* ԱԴ *չիք և* ԲԳՆ *ի ներքի*
9 Ի: Թ: *զուլն դարձաւ թէ զուլն դարձաւ*
12 ԲԳՆ *աղայ փխ աղային*
13 ԱԴ *ներքին*
14 Գն *պարսպէն*
15 ԲԳՆ *Շաւախ*
15-16 Գ *անդի*
20-21 Ի: *մինչև ի Յայտնութեան*
22 ԱԲԳՆ *աղէն*
24 Ա. *զհարիւր... Բիրկրոյ*
27 Ա. *վաղուց*
32 ԱԴ *կեղոյ*
33 ԱԴ *էին փխ էր*

մանս փախուցին, և ինքն Զօմարն ուխն միայն արամբք ևլեալ ի կողմն ինչ և զերծաւ ի նոցունց, և կամեցաւ դառնալ գնալ ի Խօշաբ առ Սուլէյման բէկն, և յուղի անկեալ եկեալ մինչև հասս ի կապն[174] *Ոստանայ։*

Իսկ բաջ առնողն Ոստանայ որ զճանապարհն պահէ և զբաջն առնու ի ճանապարհորդաց, նաև զՋօմարն ի հետաստանէ և իմացաւ որ Զօմարն է, և վազվազակի ինքն զխանջալն իւր ի բաց ձգեաց չինքննէ, և սկսաւ այսր և անդր որոնելով շրջագայիլ. զայս արար պատճառանօք, զի մի դիտասցեն զնա Ոստանցի գոլ և սպանցեն։ Այլ և Զօմարն ևս նաև զայրն ի հետաստանէ և ասաց իւրոց արանցն. «Մեզ թէ վնաս ինչ հասանէ՝ յառնէս յայսմանէ հասանէ, վասն որոյ ի հասանելն ձեր առ նա, սպանջիք զնա և մի թողուք». իբրև եկեալ հասին առ այրն Զօմարն և արքն իւր, հարցին զայրն, թէ վասն է՞ր շրջիս, և նա խաբեաց զնոսա և ասաց. «Ճանապարհորդ եմ և աստ եկեալ կորեսի զխանջալն իմ և շրջելով որոնեմ, զի գուցէ գտայց զնա»։ Եւ ի լսելն զայս յառնէն սկսան ինքեանք ևս շրջագայիլ առ ի իմանալ զատոյգն, և փոքր ինչ շրջեալ այսր և անդր գտին զխանջալն, և այնու համարեցան իրաւացի ճանապարհորդ գոլ զայրն, վասն որոյ ոչ սպանին, այլ թողին ի գնալ. և այրն քանզի հմուտ էր վայրացն, ընդ թաքնագնայ ձորակ ինչ, նախ քան զանցանելն Զօմարին վկապն, փութանակի եհաս ի գիւղն, զեկոյց զօրականացն, թէ ահաւասիկ Զօմարն եկեալ է ի կապն, և այս համբաւ վազվազակի հռչակեցաւ առ ամենայն զօրականս, որոց ամենեցուն շեշտակի ձիարշաւ ընթացմամբ գնացին ոմանք դէպ ի կապն, և ոմանք դէպ ի վերին ճանապարհ. և զերկոսին ճանապարհսն կալան։ Իսկ Զօմարն ոչ գնաց ընդ վերին ճանապարհն այլ ընդ ճանապարհս կապին եկեալ եմուտ ի կապն, և ընդ այն կամէր անցանել։

Եւ է կապս այս այսպիսի իմն, զի է քարանձաւ բարձրագոյն, և ի ներքոյ քարանձաւին ծովն է ծովացեալ անհուն խորութեամբ, որ Աստուծոյ միայն է գիտելի որքանութիւն խորութեանս նորա. բայց ի հին և ի վաղեմի ժամանակաց զսիրտ քարանձաւին իմաստութեամբ և բազում աշխատութեամբ քարահատ արուեստաւորօք հատեալ են զքարն և արարեալ են ճանապարհ ընդ որ ուղևորք գնան, բայց ոչ թէ յայն, այլ այնքան՝ որ միայն մի բեռնատար գնայ և ոչ երկու։

Իսկ Զօմարն՝ որ ճանապարհաւ կապին մտեալ էր և գնայր, ոչ դիտէր թէ ժողովեալ են անդ մարդիկք վասն ինքեան՝ և պահնն զբեռան կապին, վասն որոյ և անհոգ գայր։ Եւ յորժամ եհաս յայսկոյս

2 Ա և գնալ
3 ՐԻՆ մինչ հասս
8 Գէ որոնել
11-12 է հասանիլն
12 ԱԳ սպանէք
13 ԱԳ զի՞ փխ վասն է՞ր ԲԵ զի վասն
16 է շրջագայել
19-20 է քաղնագնայ Ե քաքնագնա
20 է ընդ կապն փխ զկապն
23-24 Ա ամենեսեան
25 Գ ճանապարհ Գ զերկոսին ԱԳԵ Զօմար
29 Ա ծովն ծովացեալ է անհնով ԱՐԴՆ զոր
30 Ա հնոց
31 Ա վաղեմեաց
32 Ա բազում... քարահատիւք
33 Ա զճանապարհ
36 Բ անդր

յԵզր կապին, իմացաւ զայն և յանհնարին վտանգս աղետից և տարակուսանաց ըմբռնեալ եղև, զի յառաջ ընդդէմ նոցա գնալ երկնչէր՝ թէ մի գուցէ թֆանքով հարեալ սպանցեն, և յետս դառնալ ընդ որ եկեալ էր ոչ կարէր, զի յոյժ նեղ էր տեղին, վասն որոյ յամենայն կողմանց անճար լեալ մնաց յանհնարինս։ Եւ հայեցեալ Զօմարն տեսանէ մերձ ինքեան փոքր ինչ զաւս ի վայր տեղի, և սորք վիմաց իբր գստուղ ինչ ձորակ իջեալ յեզր ծովուն, և թէպէտ դժուարին էր այլ ի տագնապէ սպանմանն՝ Զօմար իջեալ ի վայր ի ձիոյն, կայաւ զպահուցն և ընդ այն ինքն և ձին իջին յեզր ծովուն։ Ապա հեծաւ ի վերայ ձիոյն և կալեալ զպահուց երիվարին, քաջադոյն պատրաստութեամբ զսպեաց զինքն՝ և ուղղեալ վարեաց զերիվարն ի մէջ ծովուն. և յորժամ վարեաց զերիվարն ի մէջ ծովուն, զառաջինն խորասուղեալ ընկղմեցաւ, և գրեթէ եհաս մինչ ի յատակս ծովուն. քանզի բազում ժամս անյայտ լեալ ոչ երևեցաւ։ Եւ իբրև անցին ի վերայ պահք ինչ, տեսին արքն, որք զբերան կապին սլահէին, զի ի հետու վայրի ելին յերեսս ջրոյն երիվարն և Զօմարն, և յայնքան հետու վայրի ելին և երևեցան մինչ զի թֆանք ոչ հասանէր, քանզի կամեցան ձգել թֆանք և սպանանել զնա, և զի ոչ հասանէր, վասն որոյ և ոչ ձգեցին։ Եւ բազում գովութեանց արժանին այն երիվար բարձեալ զվերնելեակն իւր և տանէր՝ ոչ թէ իբրև զցամաքային կենդանի, այլ իբրև զջրային կենդանի գնայր լողալով, շնչէր, փնչէր, փունգայր, զամբաւ խորութիւն ջուրց ծովուն յուզմամբ հատանէր, և գնայր լողալով և եկեալ եհաս յեզր ծովուն և ել ի ցամաք ի կողմանս Ոստանայ։

Եւ յորժամ ել Զօմարն ի ցամաք, ոչ գիտէր զսահմանս և զճանապարհս, կամ զցամաքային և զտղմային տեղիս վայրացն, և առ տագնապէ երկիւղին վարեաց զերիվարն հանդէպ երեսաց և գնայր, ոչ թէ ի վերայ երկրի այլ ի վերայ օդոյ. որ և ի գնալն հանդիպեցաւ յոյժ սաստիկ տղմային տեղւոջ, որում լայնութիւնն և խորութիւնն բազում էր։ Այլ և գիտէր ինքն Զօմար նաև տեսանէր իսկ, զի բազմութիւնք զօրաց զաւառին զրոհ տուեալ ընթանալով միտեն զկնի ինքեան, եթէ դառնայ գնայ ընդ ցամաքային վայրս երկնչի անկանիլ ի ձեռս նոցա. վասն որոյ անդէն ևս մտրակեալ զերիվարն վարեաց ի մէջ տղմոյն, և թէպէտ ի սակաւ ինչ տեղի գնաց, այլ յոլովութիւն տղմոյն արգել զնա ի մէջ իւր զբազում ժամս, և բազում ջանիւ և աշխատութեամբ այսր և անդր տարաբերելով հազիւ ուրեմն ել ի տղմոյն երիվարն և ընդ իւր եհան զՁօմարն։ Եւ յորժամ ել ի տղմոյն Զօմարն, միւսանգամ վարեաց զերիվարն հանդէպ երեսաց առ ի փախչիլ, և որպէս

1 Ա.ՐԴԴՆ *վտանկս*
2 Ա *ըմբռնեցեալ*
3 Ա.ՐԴՆ *թֆանքաւ*
4 Ա *յամենից*
5 ՐԴԴՆ *յանյնարս... Զօմար*
6 Դ *յինքեան*
13 Ա.ՐԴՆ *մինչև յատակս* Ա.ՐԴ *զրազում*
15 Ա.Է *զի հետու*
16 Ր *յերեսս* ՐԴԴՆ *այնքան*
17 Ր *ոչ հանէր*
19 Ա *բազմաց*
25-26 Ա *ի տագնապէ*
27 ՐԴԴՆ *ի գալն*
28 Ա *սաստկի*
29 Ա *բազմութիւնք*
31 Ա *դարձեալ գնալ* Ր *դառնա գնալ* ԴԴՆ *գնալ* ՐԴԴՆ *անկանիլ*
32 Ա.Դ *անդրէն*
37 ՐԴԴՆ *երեսացն... փախչիլ*

ասացաք անհմուտ էր որպիսութեան վայրացն, ոչ գնաց ի կողմն ճանապարհին և կամրջին, որ և մօտ իսկ էր նաև ղերծանէր իսկ, թէ գնացեալ էր, այլ գնաց հանդիպ ելեւնաց իւրոց։ Եւ ի գնալն իւրում պատահեցաւ Շամիրամայ առուին. որում ոչ զոյ հնար անցանելոյ բաց ի կամրջէն, զի յոյժ լայն է և խոր և երկուց կողմանց թմբեր՝ բարձր՝ մինդ որ մարդ և ձի ոչ կարէ իջանել և ելանել, և առ եղերբ այս առուիս գնաց Զօմարն սակաւ մինչ զառ ի վեր և դարձաւ՝ և եկն ի դիւղն Կեմ կոչեցեալ։

Մինչ այս ամենայն անցք անցին ընդ Զօմարին՝ զօրք երկրին, որ զրոհ տուեալ շնչատակի ընկճանային զկնի Զօմարին, հկեալ հասին յառուն Շամիրամայ, և փութացեալ կալան զանցս կամրջին, քանզի հմուտ էին վայրացն։ Եւ ոմանք ի նոցանէ հկին ի դիւղն Կեմ և գտին անդ զՁօմարն՝ որ իջեալ էր ի ձիոյն ի յանդաստանի ուրեք զօղեալ, որք և շուրջանակի պատեալ պաշարեցին զնա. և Զօմարն ունէր ընդ ինքեան չորս տապանչայ թղթանք, զորս ուղղեաց ի ձգել և ոչ էառ հուր, քանզի բարուրն թրջեալ էր ի մէջ ջուրց ծովուն և տղմոյն, և կայր ի տարակուսի, զի քաղէին ոգիք նորա. և զօրք երկրին՝ որք շուրջ զնովաւ պատեալ կային, ոմն ի նոցանէ, որում անունն էր Շեխուբէկ՝ քաջութեամբ աճապարեալ ուղղեաց զթղթանքն հանդէպ Զօմարին և ձգեալ եհար զգլուխն և անդէն սատակեաց զչարն և զանիծեալն զայն Զօմար։ Եւ նոյն ժամայն կտրեցին զգլուխն և զաջոյ ձեռն, առին և զձին և տարան առ Եզդիշէր պարոնն իւրեանց։ Եւ Եզդիշէրն զձին պահեաց առ ինքն, և զգլուխն Զօմարին և զաջոյ ձեռն նշան ընդ նմին առաքեաց ի Կոստանդնուպոլիս առ թագաւորն։ Եւ թագաւորն տեսեալ զգլուխն և լուեալ զորպիսութիւն սպանմանն, և ուրախացեալ ընդ այն՝ պարգեւաց բազում պարգեւս պատուականս Եզդիշէրին. այլ և զերկիրն Սղերտու նմա ինամ[175] ետ. որ և արդէն իսկ Եզդիշէրն տիրէ երկրին Սղերտու, և որքան ինքն կենդանի է՝ տիրէ։

Բայց պատմողն ասացին թէ տիկ մի գինի կապեալ ունէր Զօմարն ի փոր երիվարին, յորժամ վարեաց ի մէջ ծովուն և տղմոյն։ Այլ և ջուլ ձիոյն հանապազ ի վերայ ձիոյն պահէր Զօմարն, ուր և գնայր, և յորժամ վարեաց զձին ի մէջ ծովուն և տղմոյն, ի վերայ ձիոյն էր ջուլն, և բամբակն՝ որ ի մէջ ջլին եղեալ էին և կարեալ, ասացին թէ երեք լիտր էր։ Եւ է ձին հսկայաձև, բարձրահասակ, հաստաբազուկ, լայնալանջ, երկայնավիզ, կապուտագոյն, գեղեցկատես, սիգաճեմ, իբրև զբանաւոր ընտրող ժամանակին, և դիպուածոյն, և ճանաչող տեառն իւրոյ. և կայ նա այժմ առ Եզդիշէր պարոնն. և ստացեալ են ի նմանէ հինգ քուռակ։

2 Ա զերծանիւր
4 ԱՐՔ գոյր Դ բայց
7 Գ ի գիօղն
9 Ա այսոքիկ ամենքեան Ա որք ՐԴ զոր
15 Ա զչորս
17 Ր ոգի
17-18 ԲՆ որ... պատեալք
18 ԱԴ պատեալք Ա որոյ անուն Դ որում անուն էր
26 Ա շրազում
27 ԱԳՆ գոր և է ինամ փխ ինամ
29-34 ԱԴ չիմ Բայց... լիտր էր
30 ԲԳՆ ի փորն
31 ՐԳ զջուլ
33 ԲՆ բամպակն
34 ԱԴ Բայց էր ձին
36 ԱՐԳ և իբր
37-38 Գ ստացել են

Արդ՝ սատակումն պղծոյն Ջօմարին այսպէս եղև, որպէս և պատմեցաք. ժամ է մեզ այսուհետև զսատակումն Սուլէյման բէկին, և զդարձումն սրբոյ Նշանին պատմել ի վանայ քաղաքն. քանզի և պատմութիւնս մեր վասն սրբոյ նշանին է, և ոչ վասն ամբարիշտ արանց։

ԳԼՈՒԽ ԽԱ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՍԱՏԱԿՄԱՆ ՍՈՒԼԷՅՄԱՆ ԲԷԿԻՆ

Որպէս պատմեցաք յառաջդ՝ թէ Սուլէյման բէկն կողոպտեաց զվանքն Վարագայ, առեալ զամենայն անօթսն և զաւագ սուրբ Նշանն և տարաւ ի բերդն Խօշաբայ՝ և անդ պահէր։

Եւ զի Հոգւոց վանքն՝ որ յիշի ի մէջ պատմութեան վերափոխման սրբուհւոյ Աստուածածնին, որ ի սրբոյ առաքելոյն Բարդուղիմէոսէ շինեալ է, և անդ ամփոփեալ զկենդանագիր պատկեր սրբուհւոյ Աստուածածնին[176], այս վանքն յերկիրն Խօշաբայ է ընդ իշխանութեամբն Սուլէյման բէկին։ Սորին վասն յորժամ եկն Սուլէյման բէկն ի Խօշաբ, կոչեաց առ ինքն զառաջնորդն Հոգւոց վանից զտէր Պետրոս եպիսկոպոս, և իբրև երախտաւոր ձևանալով նմա ուրախութեամբ ասէր. «Բերի ի Վարագայ զձեր մեծ սուրբ Նշանն, արդ տպմ ընա քեզ, զի տարեալ դիցես ի վանքն մեր՝ զի անդ կացցէ»։ Իսկ եպիսկոպոսին նկատեալ մտօք և խորհեալ թէ ոչ է մնալոյ այն իւրեանց, վասն որոյ պատասխանեալ էր. «Ոչ դոյ հնար այդմ սրբոյ Նշանիդ առ մեզ մնալոյ, զի ի բնէ, ի հարց և ի հաւուց նոցա է այդ ստացուած՝ և ոչ մեր»։ Եւ ոչ էր տարեալ Պետրոս եպիսկոպոսն՝ զսուրբ Նշանն ի Հոգւոց վանքըն, թէպէտ Սուլէյման բէկն բազում անգամ ասացեալ էր։ Այլ և ասացեալ էր Սուլէյման բէկն, թէ դու ոչ տանիս, ես այլոց քահանայից տամ և առաքեմ ի վանքն. պատասխանեալ էր եպիսկոպոսն. «Յորժամ դու զսուրբ Նշանն առաքես ի վանքն, ես ըմիաբանս իմ առեալ ելանեմ անտի և գնամ, դու գիտես և քո վանքն». ապա Սուլէյման բէկն թոյլ էր տուեալ և ոչ էր առաքեալ։

Իսկ Հայազունք քրիստոնեայքն՝ որք ի վան քաղաքի և ի գաւառս նորա էին, միահաղոյն սրտաբէկ և միջակատոր, տրամաթախիծ անմխիթար լեալ զյափշտենից սուգ զգեցան. վասն կողոպտելոյն Վարագայ, և մանաւանդ վասն սրբոյ Նշանին, և հանապազորդ հաշէին, մաշէին, հեծէին, և հառաչէին, թէ ւիարդ արդեօք իցէ հնար փրկութեան սրբոյ Նշանին։ Յորոց այր ոմն երևելի և բարեպաշտօն քրիստոնեայ

4 Ա *ամբարշտաց* Դ *նշան ինքն է*
8 Ա *զամենեսեան* ՐԳԵ *զաւաք*
11 ՐԳԴԵ *սրբոյ* ԱՐԴԵ *զոր*
12 ԱԴ *և անդ ամփոփեալ է կենդանակիր*
Բ *և անդ ամփոփեալ է կենդանադիր*
ՐՇԴԵ *սրբոյ*
13 ԱՐԴԵ *վանքս*
19 ԱԴ *իւրեանցն*
21 ԱՐԴԷ *ի բնէ հարց*
23-24 Բ *Այլև Սուլէյման բէկն ասացեալ էր, թէ*
29 ԱՐԵ *հայազուն*
31 Ա *լեալք* Ա *չիք զյափշտենից*
Ա *զսուգ* Դ *սուգն*
32 Է *հանապազորդ*
34 Ա *Յորոյ*

ի խօջայից քաղաքին Վանայ, որ է սա ինքն Խաննից խօջայ Թումայի որդին, որոյ անունն էր Մարխաս Զալապի, այս Մարխաս Զալապիս առևալ բազում աղերս և ևկևալ ի խօշաբ առ Սուլէյման բէկն, մատոյց դաղերսն, և դբազում աւուրս կացեալ անդէն. նա և բազում արս միջ-
5 *նորդս արկեալ աղաչէր զՍուլէյման բէկն վասն փրկութեան սրբոյ Նշանին. և նա ոչ հաւանեցաւ զի տացէ: Եւ ի հազար դուռուշէն սկիզբն արար Մարխաս Զալապին տալով, և եհաս մինչ յեօթն հազար դուռուշն, զի տացէ զսուրբ Նշանն, և Սուլէյման բէկն ոչ կա. և յետ յոլով աւուրց անդէն կելոյ Մարխաս Զալապուն, իբրև ոչ կաւն զսուրբ*
10 *Նշանն, ելևալ ի խօշաբայ արտմևալ և թախծևալ սրտիւ գնաց ի Վան քաղաք:*

Եւ որպէս ասէ մարգարէն թէ, զայր մեղաւոր՝ չարիք իւր որսան ի կորուստ, սոյնպէս և չարիք Սուլէյման բէկին որսացին զինքն ի կորուստ, այսպիսի կերպիւ. քանզի իշխանքն Սուլէյման բէկին՝ արք*
15 *տասն կամ ևս աւելի, խորհեցան ի միասին սպանանել զՍուլէյման բէկն, զի ասէին թէ, որքան Սուլէյման բէկն պարոն եղևալ է՝ երկիր և աշխարհ մեր բնաւին աւերեցան, զի ոչ երբէք դադարեցաւ հնծել շարժութիւն՝ և հինահարութիւն, և աւար, և կռիւ, և վրդովութիւն, և որքան սա կենդանի է, գիտեմք զի ոչ լինի խաղաղութիւն, վասն որոյ*
20 *սպանցուք զսա՝ զի խաղաղասցի խռովութիւն աշխարհիս մերոյ:*

Զայս խորհուրդս արք ոմանք իմացեալ զգացուցին Սուլէյման բէկին, թէ երեքին փառաւոր իշխանքն քո՝ որ է Մալաղաստում, և Մուստաֆայ բէկ, և Իբրահիմ բէկ, զլուխ եղևալ են և այլովք իշխանովք խորհևալ են առ ի սպանանել զքեզ, և Սուլէյման բէկն կալեալ զերե-
25 *սին զպշխանսն զայնոսիկ էարկ ի բանտ՝ կապեալ երկաթի շղթայիւք, և ըմբռնումն երից իշխանացս եղև յառաջին շաբաթին աղուհացից, իսկ կապեալ իշխանքս թղթով և միջնորդով, բազում կերպիւ աղաչանս և խնդրուածս արարին առ Սուլէյման բէկն զի արձակեսցէ զինքեանս, և նա ոչ արձակեաց:*

30 *Իբրև դիտացին իշխանքն թէ ոչ արձակէ, այլ սպանանէ, խորհեցան այլ ևս հնարս, զի բերին առ ինքեանս զանէրն Սուլէյման բէկին. որում անունն ևս Մուստաֆայ բէկ էր. և ի բազում աւուրս յոլով կերպիւ խօսեցան ընդ նմա, զի թերևս կարասցէ զհնար ինչ գտանել վասն փրկութեան նոցա: Եւ ի խորհիլն և ի խօսիլն ասացին իշխանքն ընդ*
35 *աներոջ Սուլէյման բէկին. «Թէ կարէիր դու փրկել զմեզ, մեք զքեզ իշխան և սարոն կարգէաք մնել ի տեղի Սուլէյման բէկին. քանզի և որ-*

* *Հմմտ. Սաղմ., ՃԼԹ, 12*

1 ԲԳԴԵ *ի խօջաններաց* Ա.Ե *որ էր*
2 Գ.Ե *Զալաբիս*
3 Ա. *զբազում*
4 Ա.Դ *զբազում*
5 Ա.ԲԳԵ *աղաչէին*
7 Ա.Գ.Դ *ի հօթն* Ե *մինչ ի յեօթն*
8-9 Ա *յոլովից*
9 ԲԳԵ *Զալաբուն*
10 Ա *սրտմնցելով և թախծեցելով*
11 Է *քաղաքն*
22 Ա.Գ.Ե *Մալայ Ղասում* Է *Մօլլայ Ղասում*
23 Ա.ԲԵ *այլովք ևս իշխանովք* Գ *այլովք ևս իշխանօք*
27 Ա *բազմաւ*
27-28 Ա *զաղաչանս և զինդրուածս*
31 Ա *զայլ*
32 Ա *որոյ* Ա *յոլովիւ*
33 ԲԳԴԵ *հնար*
34 ԲԳԴԵ *խորհելն* ԲԴԵ *ի խօսելն*
36 Բ.Ե *ի տեղին*

դի իշխանի ևս դու (և արդարև որդի իշխանի էր այս Մուստաֆայ բէկս). արդ՝ եթէ դու սպանցես զՍուլէյման բէկն, անպատճառ զքեզ կացուցանեմք իշխան ի տեղի Սուլէյման բէկին». և յոչ հաւատալն ա-
ներոջն բազում երդմամբ և պէսպէս բանիւ ուխտ հաստատացին, այն-
5 *քան մինչ որ հաւանեցաւ բանից իշխանացն. քանզի ոչ էր այր խորա-*
գէտ այլ պարզամիտ, վասն որոյ հաւանեցաւ։

Զկնի սորին հնարեցին գործ այսպիսի. զի երից իշխանացս այ-
սոցիկ կապելոցս՝ ումեմն որդին և երկոցունցն երկու ծառայք, թաքու-
ցին զսուրս ի ներքոյ հանդերձից իւրեանց, և յարտաքուստ գոնեցան
10 *զգեստ կանացի՝ և ածին սաւանս ի վերայ իւրեանց, և ձևացան որպէս*
հաւաստեալ կին։

Այս երեքին արքս՝ որք և կերպացան կանայք, և Սուլէյման բէկի
աներ Մուստաֆայ բէկն, յաւուր միում ընդ ծագել լուսոյ առաւօտն ելին
և ուղղեցան՝ և գնացին ի բերդն. եկին և հասին յառաջին դուռն բեր-
15 *դին, և դռնապանքն բերդին և այլ արքն տեսանէին զի Սուլէյման բէկի*
աներն գնայ՝ և ունի առաջի իւր զփոքրիկ մատաղ մանուկ որդին իւր,
և երեք կանայք զկնի նորա։ Իբրև եկեալ հասին ի դուռն բերդին, յայն-
ժամ դռնապանքն հարցումն արարին ի Մուստաֆայ բէկէն վասն կա-
նանցն, և նա ասաց թէ կանայք կապելոց իշխանացն են, և երթան առ
20 *կինն Սուլէյման բէկին աղաչել զնա, զի և նա բարեխօս լիցի առ Սու-*
լէյման բէկն վասն արանց սոցա։ Զայս բան իբրև լուան դռնապանքն
թոյլ եւտուն ի գնալ, և նոքա անցանելով ընդ ամենայն դրունս բեր-
դին հասին մինչև ի վերին դուռն, և անդ ևս հարցումն արարին դրու-
նապանքն, և Մուստաֆայ բէկն սոցին ևս արար զպատասխանի քան
25 *առաջին կերպին, վասն որոյ դռնապանքն թոյլ եւտուն. քանզի ել ոք*
և տեսանէր զՄուստաֆայ բէկն՝ և առաջի նորա զտղայն, և լսէին
զպատասխանին, աներկբայ հաւատացին, զի համարէին թէ որպէս
յերեկն և յեռանդն գնալ և գայ Մուստաֆայ բէկն առ Սուլէյման բէկն,
սոյնպէս և այժմ, վասն որոյ թողուին ի գնալ։
30 *Եւ նոքա անցանելով զամենայն դրունս եկեալ հասին յապարանս*
Սուլէյման բէկին, և եկեալ կացին ի դուռն տանն՝ յորում Սուլէյման
բէկն ննջէր ի գիշերի, որ և յայնմ ժամու տակաւին ի մէջ անկողնոյն
կայր՝ բայց էր արթուն, և կինն Սուլէյման բէկին և երկու աղախինքն
ևս ի տան անդր։ Եւ նախ եմուտ ի ներքս ի տունն Մուստաֆայ բէկն,
35 *եբաց Սուլէյման բէկն զերեսն և ետես զանեն իւր ի տանն՝ և երեք*
կանայք արտաքոյ դրան տանն, և դարձեալ ծածկեաց զերեսն անկող-
նաւն. զի համարեցաւ զկերպացեալ էանայսն ստուդիւ կին գոլ, և

1 է *իշխան է (այս)*
4 Ա. *բազմաւ... պէսպիսով... դուխտ*
5-6 Ր *խորհագէտ*
7 Ա. *գործ*
9 Գե *սուրս*
10 Ա. *զգեստ*
11 Ա. *զհաւաստի կանայք* ՐԳԴե *զհաւաստեալ կին*
12 Ա. *այսոքիկ*
19 ԳԴե *չիմ և (երթան)*
24 ՐԳԴե *պատասխանի*
25 Ա. *առաջնոյ*
27 ԱԴե *հաւատային*
31 Ա. *զամենեսեան* Գ *դրունսն*
33 ՐԳԴե *աղախին*
35 է *զերեսն*
36 Եէ *զերեսն*

կարծեաց թէ վասն կապելոց իշխանացն բարեխօսելոյ գան, վասն որոյ ծածկեաց զերեսն իւր։ Եւ առ ժամայն շնշոտակի ընթացեալ կերպացեալ կանանցն, և անկան ի վերայ Սուլէյման բէկին. և սրովն իւրեանց ծակոտեալ խողխողեցին և սպանին. և սատակումն Սուլէյման
5 բէկին եղև յաղուհացից հինգերորդում շաբաթու յուրբաթ օրն. վասն զի յորում աւուր Սուլէյման բէկն զվարագ կողոպտեաց, ի բոլորել տարւոյն ի նոյնում աւուր և ինքն սպանաւ։

Յետ սպանման Սուլէյման բէկին, եկին երնջին արքն սպանողք Սուլէյման բէկին, փութանակի բացին զդուռն բանտին, և հանին ի
10 կապանաց և ի բանտէ զերեսին կապեալ իշխանսն. որոց ելեալ ի բանտէն եկին ի դուռն բերդին, եկին և ժողովեցան առ նոսա և այլ ևս ուխտադիրք ընկերքն իւրեանց, և այլ ևս արք յոլովք, և աղմկեալ խօսէին։ Ինք երեքին սպանող արքն դարձեալ մտին ի բերդն, և գնացին ի տունն, յորում սպանին զՍուլէյման բէկն, և առին զդի մարմնոյ
15 նորա՝ պատեցին ձորձով ինչ. և բերին արտաքս ի դուռն բերդին ի մէջ ամբոխեալ արանցն, թէ տեսէք ձերովք աչօք և հաւատացէք, զի անկարծիք և ստուգիւ սպանաւ Սուլէյման բէկն։ Իբրև արկին զգէշն ի մէջ նոցա, նոյնժամայն նոքա երեքին սպանողքն և անէրն Սուլէյման բէկին, փութանակի դարձան և մտին ի բերդն՝ և փակեցին զդուռն
20 բերդին, և յինքեանս կալան զբերդն. այնու մտօք թէ մեք սպանաք զՍուլէյման բէկն, վասն որոյ մեք լինելոց եմք իշխան ի տեղի նորա։

Իսկ կինն Սուլէյման բէկին ելեալ ի գլուխ պարսպի բերդին բաղում աղաղակեաց դէպ ի քաղաքն, և յաղագս բարձրութեան ոչ ոք լուաւ. իբրև հետս կինն թէ ոչ եղև լուեալ ձայն նորա ի քաղաքին, էառ
25 զգլխոյ զաւուխն Սուլէյման բէկին և զբիշմիրի շալն նորա, զի յորժամ սպանին զնա, ի գլուխն էր՝ և էր արիւնաթաթախ, պատեաց զղաւուխն շալովն և ձգեաց ի մէջ քաղաքին, և զաւուխն գնացեալ անկաւ առաջի տան ումեմն հայոյ քրիստոնէի, որոյ անունն էր Խօջայ Վասօյ, որ ի տեսանելն ծանեաւ, զի պարոնի չաւուխն էր, բայց վասն արիւնա-
30 թաթախ գոլոյն երկիւղակարծ եղև թէ մի գուցէ սպանեալ իցեն զպարոնն. զոր և առժամայն փութացեալ հասին ի դուռն բերդին, և տեսին զի հաւաստեաւ սպանեալ էր Սուլէյման բէկն։

Այս Խօջայ Վասօյ ասացեալս, վասն զի բարեկամ էր Սուլէյման բէկին, զի զսիրալի խնամս և զայցելութիւնս բազումս տեսանէր ի
35 նմանէ, սա ծածկաբար առաքեաց զարս՝ և զեկոյց երկուց եղբարց Սուլէյման բէկին, որոց անուանքն էին, աւագին Իբրահիմ բէկ, և կրտսերոյն Էվլիայ բէկ. քանզի նոքա իւրաքանչիւր ոք յիւրեանց բերդոջն կային, որք և ոչ կարի հեռի էին ի Խօշաբայ, որոց ի լսելն փու-

7 Գ չիմ ի
8 ՐՆ սպանօղքն
12 ՐԳ ուխտադիր... և այլք
13 Ա սպանօղք
16 ՐԴ անբոխեալ Գ աչովք
17 Ր ստուգիւ
22 Գ ի խլուխ
23 ԳԴԵ բարձրութեանն
28 է Հայոց Ա խօճայ
31 Աէ որք փխ զոր Գ առժամայ
34 ՐԳԴԵ սիրալի խնամք և այցելութիւն ՐԳ բազում
35 ՐԳԴԵ արս է չիմ երկուց
36 ՐԳԵ աւագին
37 ԱՐԴԴԵէ կրսերոյն
37-38 է բերդոջն
38 ՐԳԴԵ որ և ոչ կարի հեռիք էին Ա հեռիք էին

Թանակի զօրականօք Հասին ի խօշաբ։ Իբրև ակին ի դուռն բերդին, ոչ բացին նոցա զդուռն սպանող արքն՝ որք մտեալ էին ի մէջ բերդին, և ի սակաւ աւուրս մնացին այսպիսի աղմկաւ ամենևքեան արք. և յաւուր միում աղմկեալ ժամու եղբայրն Սուլէյման բէկին էվլիայ բէկ, 5 եհար սուսերը զմալաղասումն և սպան զնա, քինախնդիր լեալ արեան Սուլէյման բէկին։

Ապա զկնի անցելոցս այսոցիկ՝ կինն Սուլէյման բէկին, որ տակաւին ի մէջ բերդին էր, ի միում դիշերի թարց բնաւին ումեք դիտելոյ ինքն միայն կախեալ պարան ի բերդէն և ի վեր քարշեաց այր մի յա- 10 րանցն Իբրահիմ բէկին ի վեր ի բերդ անդր, և նոքա քարշեցին ի վեր այլ ևս տասն այր, ընդ որս և զԻբրահիմ բէկն։ Ապա այս Իբրահիմ բէկս և արքն իւր հետամուտ եղեն սպանող արանցն Սուլէյման բէկին՝ որք անդ ի բերդին էին, և նոքա փախուցեալ մտին ի ջաբախանէն, և Իբրահիմ բէկն հուր էարկ ի ջաբախանէն, յորմէ հրոյ հրդեհեալ բա- 15 րութքն ի վեր էառ զտունն՝ ընդ նմին և զարսն, և ընդ յօդս ցնդեցաւ՝ որք և փերթ փերթ եղեալ հոսեալ ի վայր իջանէին։

Այնուհետև Իբրահիմ բէկն տիրացաւ բերդին և ամենայն երկրին, և սորին եղբայր էվլիայ բէկն գնաց ի տեղի իւր յառաջին բերդն, տէր և նախ բնակէր, զորոյ անունն Ապաղայ ասէին։ Արդ՝ զսատակումն 20 Սուլէյման բէկին պատմեցաք, այսուհետև պատմեսցուք զպարոնութիւն Իբրահիմ բէկին և դարձն սրբոյ Նշանին ի Վան քաղաք։

ԳԼՈՒԽ ԽԲ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՊԱՐՈՆՈՒԹԵԱՆ ԻԲՐԱՀԻՄ ԲԷԿԻՆ ԵՒ ԴԱՐՁԻ ՍՐԲՈՅ ՆՇԱՆԻՆ Ի ՎԱՆ ՔԱՂԱՔ

25 *Արդ ի գրաւ այսմ ամենայնի, որ էվլիայ բէկն դարձաւ և գնաց յառաջին բերդն իւր՝ յԱպաղայ կոչեցեալն. և Իբրահիմ բէկն եմուտ ի բերդն խօշաբայ, և ընդ իւրով իշխանութեամբ նուաճեաց զբերդն և զամենայն գաւառս նորա, և յաւուրց յաւուրս առ սակաւ հարցեալ տեղեկացաւ ամենայն թշնամեաց իւրեանց. նաև այնոցիկ՝ որ ի սպանումն Սու- 30 լէյման բէկին համախոհք էին։ Եւ օր յաւուր սակաւ սակաւ զամենասեան զնոսա կոտորեաց, և ոչ ումեք խնայեաց, ո՛չ ծերոց և ո՛չ տղայոց, ո՛չ արանց և ոչ կանանց, այլ զամենեսեան իսպառ ջնջեաց։ Այլ և կալաւ զկինն և զքոյրն Սուլէյման բէկին և եդ ի բանտի, և բազմակերպ չարչարանօք չարչարեաց զնոսա, դի ցուցանիցեն զմնացուածս*

2 Ա. *սպանողք*
3 Ա. *այսպիսեաւ* ՐԴԵ *ամենայն*
4-5 Գ *բէկն էհար... զմալաղասում* ՐԻ *զմալաղասում* Ե *զմալաղայսում*
9 ՐԻ *կախեաց* Ա. *զպարան* Ա. *զայր*
11 Ա. *զայլ*
17 Ա. *ամենայնի*
19 Ա. *որոյ զանունն* ՐԴԵ *զանունն Աբաղայ*
21 ԱԴԴԵ *զդարձն*
28 Ա. *զամենեսեան* Ա. *յաւուրց յաւուրսս* ՐԴԵ *աւուրց յաւուրս*
29 Ա. *ամենից... իւրոց* Ա. *որք*
30 ՐԴԵ *օրաւուր*
31-32 ԱԴ *չիմ ոչ ծերոց... ջնջեաց*
33-34 Ա. *բազմակերպիւ*

դանձուց Սուլէյման բէկին. իբրև էառ զոր ինչ եգիտ՝ և չեաոյ զնոսին ևս սպան։

Սոյն այս Իբրահիմ բէկս վերստին կոչեաց առ ինքն զառաջնորդն Հոգւոց վանից պՊետրոս եպիսկոպոսն և ասաց. «Տամ ի քեզ զսուրբ Նշանն, տար ի վանքն մեր, և անդ պահեա զնա, զի անդ կացցէ». և Պետրոս եպիսկոպոսն սմին ևս արար պատասխանի որպէս և արար Սուլէյման բէկին. և ոչ տարաւ զսուրբ Նշանն ի վանքն, այլ մնաց ի բերդն Խօշաբայ։

Եւ յօրէ յորմէ հետէ Սուլէյման բէկն զսուրբ Նշանն հանեալ ի վարագայ երեր ի Խօշար, դրնթէ ցասումն և պատուհաս տեղացեալ լցաւ յերկիրն Խօշարայ, զի երկիրն ոչ տայր պտուղ, և թէ լինէր՝ հապիւ զսերմն առնուին, և հնձել շարժութեամբ և խռովութեամբ լցաւ գաւառն, այլ և կենդանիքն ոչ աճէին, այլ տակաւին պակասէին. այլ և յաւուրս ամռան ի սուրբ Գրիգորի պահոցն սաստիկ և անչափ ձիւն եկն՝ որ բաղումք ասէին թէ, երկու կանգուն նստաւ, և անասունք ամենեքեան առանց արօտի մնացին վասն ձեանն յոչովութեան և այնու պատճառաւ անասունք յոչուէք սուվամահք եղեն։ Զինի այսոցիկ անկաւ մահ անասնոց յերկիրն նոցա, և որում գոյր հազար գլուխ ոչխար, հարիւր գլուխ ուրեմն մնաց. վասն որոյ բնակիչք երկրին Խօշաբայ ժողովեցան առ Իբրահիմ բէկն՝ և ծանուցին զաւերումն աշխարհին, և աղաչէին դարձուցանել զսուրբ Նշանն ի տղեի իւր, զի վերացցի պատուհասն ի նոցանէ։ Այլ և ինքն Իբրահիմ բէկն գողեցաւ, զի ցաւ գողութեան յայտնեցաւ ի մարմինն. այլ և ցաւ իմն որպէս թէ քամի գոյացաւ ի նա, որ կալաւ զմէջքն և զբարձն և զսրունսն և հանապազ տանջէր զնա. այլ և կինն Իբրահիմ բէկին հանապազ թախանձէր զնա. և սէս սէս բանիւք խօսէր ընդ նմա, զի դարձուսցէ զսուրբ Նշանն ի տեղի իւր, և վասն վերոյասացեալ պատճառացդ հաճեցաւ Իբրահիմ բէկն, զի դարձուսցէ զսուրբ Նշանն ի տեղի իւր։

Որ և ազդեցաւ այս՝ վանայ քաղաքի ժողովրդոցն, և նոքա լցան երկնային խնդութեամբ, և նոյնժամայն վերոյասացեալ Մարխաս Զալապին առեալ ընդ իւր զոմանս ի ժողովրդականացն, և փութանակի հասին ի բերդն Խօշարայ, մատեան առաջի Իբրահիմ բէկին, խօսեցան առ նա բանիւք աղաչանաց, և եդին առաջի նորա դրամ երկու հազար ղուռուշ նազտ, և առին զսուրբ Նշանն և զմնացորդս անօթոցն, եթէ խաչ և եթէ այլ ինչ, եկին ի վան քաղաք։ Վասն որոյ գրոհ տուեալ ամենայն բնակչաց գաւառին քրիստոնէից գային յերկրպագութիւն սրբոյ Նշանին, և արտասուօք գոհանային զԱստուծոյ, որ եբեր զսուրբ Նշանն միւսանգամ առ նոսա։ Իսկ ի շուրջառանցն զերկուսն առեալ էր

4 ԲԳԵ *Եպիսկոպոս*
6 ԲԳԵ *Եպիսկոպոս* Ս. *զպատասխանի*
11 Ա. *զպտուղ*
14 Գ։ *ամառան*
15 ԲԳԵ *եկաւ* Ա. *որք*
18 Ա.ԲԳԵ *յերկիր*
24 Ա. *զմէջսն* ԲԳԵ *զսրսնսն*
26 Ա. *պէսպիսովք*
27 Է *պատճառացն*
30 Ա *երկնայնով*
30-31 ԳԵ *Զալաբին*
33-34 Ա. *զդրամս... զուռուշս*
35 Ա. *զխաչ... զայլ*
36 Ա. *ամենից*

Ջօմարն, և վասն իւր կարեալ էր չընթիան և զգեցեալ։ Իսկ զսուրբ Նշանն ոչ ևս տային ի վանքն Վարագայ, կասկած և երկիւղ կրեալ, մտաւ ածելով զանցեալ արհաւիրքն, այլ պահեցին ի Վան քաղաքին ի Տիրամայր անուանեալ եկեղեցին։ Եւ եղև դարձ սրբոյ Նշանին ի Վան քաղաք Ռշդ. Թուականիս մերում, շնորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ որում փառք յաւիտեանս. ամէն։

ԳԼՈՒԽ ԼԳ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՆՇԽԱՐԱՑ ՍՐԲՈՅՆ ՅՈՎՀԱՆՆԻՒ ԿԱՐԱՊԵՏԻՆ, ՈՐ ՅԱՅՏՆԵՑԱՒ Ի ԺԱՄԱՆԱԿՍ ՅԵՏԻՆՍ ՈՐ Ի ՀԻՆ ՋՈՒԼԱՅ ՊԱՀԵԱԼ ԿԱՅՐ Ի ՎԱՂՈՒՑ ԺԱՄԱՆԱԿԱՑ

Արդ՝ ի ժամանակին յորում Թագաւորն Պարսից Շահարաս կոչեցեալն, մեծն և առաջինն՝ եհան զժողովուրդսն Ջուղայեցւոց ի հին Ջուղայէ, և վարեալ տարաւ զնոսա յերկիրն Պարսից ի քաղաքն Սպահան։ Իսկ ժողովուրդքն Ջուղայեցւոց ոչ կարացին զինչս և զստացուածս իւրեանց զամենայն բառնալ և տանել ընդ ինքեանս. քանզի հրաման Թագաւորին սաստիկ էր ի վերայ իշխանացն, որք սրով փութացուցանէին զնոսա ճեպով ելանել ի տեղւոյն և գնալ. վասն որոյ ոչ կարացին առնուլ ընդ ինքեանս զինչս իւրեանց, այլ իւրաքանչիւր ոք պահելով Թաքուստ և գաղուստ արարեալ ի յարկս, և ի խորս, և ի վիհս և ի պատշաճաւոր տեղիս, և այնպիսի Թողեալ գնացին։ Իսկ շրջակայ գեղօրէից բնակիչքն և գաւառականքն՝ որք մերձ էին հին Ջուղայէ, գիտէին զպահուստն, զոր Ջուղայեցիքն արարին. վասն որոյ գային նոքա յարաժամ և յուզէին, որոնէին, և պեղէին զհող և զքար յաղագս գիւտի ընչից, և բազումք բաղում ինչս գտանէին։

Եւ եղև՝ զի այր ոմն այլազգի և կրօնինքն մահմետական, ի գեղջէն՝ որում անուն ասեն Մեհրամ, եկեալ ի հին Ջուղայ, ի յորոնումն և ի յուզումն ընչից. և եկեալ յեկեղեցին՝ զոր Վերին կաթան ասեն, անդ ի յորոնելն իւրում ի յարևելեան որմն աւագ խորանին եգիտ ամանի ինչ խեցեղէն՝ եդեալ և ի մէջ ամանոյն զփայտեղէն արկղ մի փոքրիկ, որ է զրութի. իբրև եհան զարկղն փայտեայ ի միջոյ խեցեղէն ամանոյն՝ և եբաց զփայտեայ արկղն, իսկոյն բուրեաց ի նմանէ յորդագոյն անուշահոտութիւն, և այնու զգաց ի յոգի իւր այրն այլազգի թէ՝ նշխարք սրբոց է այն, և էր ի մէջ արկեղն մասունք ոսկերաց մանր և մեծ, և ընդ նոսա կտոր մի մագաղաթ, և ի վերայ գիր ինչ գրեալ։ Եւ առեալ

1 Ա. *զչնթիան* Ի *չընթեան*
2 Ա *զկասկած և զերկիւղ*
3 ԱՐԴԵ *մտածելով* Ա. *արհաւիրսն*
4 ՐԳԵ *դարձն*
5 Ա *մերոյ* ԱԴ *չիմ և մարդասիրութեամբ*
9 ԱՐԴԵ *զոր փխ որ*
12 ՐԵ *առաջին* ԱԻ *մեծն առաջիննն*
14 Ա *ժողովուրդն* Ի *ժողդվուրդք*
15 *զամենեսեան* Ա *տանիլ*
16 Գե *որք որով*
18-19 Ա *պահելովք զթաքուստ և զգաղուստ* Ի *թագուստ*
20 Ա *այնպէս*
24 Ա. *զրազոմ*
2 ւ Ա *որոյ զանուն*
28 ՐԳԵ *աւաք* Ա *զամանն*
29 ՐԳԴ *փայտեղէն*
30 Ա *խնցեղինի*
31 ԱՐԳԴԵ *նմա փխ ի նմանէ*

այրն զարկղն զայն ոսկերքն և մագաղաթիւն և տարաւ ի տուն իւր, առնանել թէ զինչ պարտ է խորհել վասն նորա, և մնաց նշխարհն ի տան նորա աւուրս բազումս, և սկսաւ ինչք և ստացուածք նորա օր յաւուր նուազիլ, և կենդանիքն և անասունքն մեռանիլ և ամենայն ինչք նորա ջնջեցան մինչև որդիքն ևս մեռան: Եւ նկեալ այրն ի միտս իւր դիտաց թէ՝ ի նշխարացն է պատահումն այն, որ դիպեցան նմա. վասն որոյ հաննալ զնշխարսն ի տանէ իւրմէ այնուհետև տարեալ ի վայրի և ի բացեայ տեղիս ի մէջ քարակուտաց ինչ պահեաց զնա, զի թերևս վերացի ցասումն Տեառն ի տանէ նորա, և ոչ եղև վերացեալ:

Յետ այսորիկ եկեալ այլազգի այրս այս, ի հռչակաւոր ուխտն ի վանքն սրբոյ Նախավկային, որ ի Դարաշամբ կոչեցեալ գեղջն է[177], և անդ յայտնեաց զամենայն որպիսութիւնն եպիսկոպոսի ումեմն, որում անունն էր Շմաւօն, որ էր նախաձանօթ այլազգւոյն այնորիկ ի վաղ ժամանակաց, իսկ եպիսկոպոսն պատուիրեաց բերել զայն առ ինքն. և իբրև եբեր այլազգին զարկղն և ետ ցեպիսկոպոսն, և ի բանալն առժամայն բուրեաց հոտ անոյշ և ելից զտունն, և ետես զմասունս նշխարացն և առեալ զկտոր մագաղաթն և ընթերցաւ՝ և էր գրեալ ի վերայ նորա այս ինչ:

«Այս է մասն նշխարաց սրբոյն Յովհաննու Կարապետին, զոր Գրիգոր Լուսաւորիչն եբեր ի Հայս, և եդ ի քաղաքն Խրամ[718], իսկ ի յաւերման Խրամ քաղաքին, ի ՆԻԱ թուին Հայոց բերին ի Ջուղայ»: Այսքան բանքս գրեալ էին ի վերայ մագաղաթին, և եպիսկոպոսն Շմաւօն գոհացեալ վԱստուծոյ ընդ գիւտ նշխարաց սրբոյն Յովհաննու, և լցեալ ուրախութեամբ մեծաւ, և հաճեալ զմիտս այլազգւոյն՝ տուեալ նմա ինչս, և առեալ զնշխարսն ի նմանէ, և այրն գնաց ի տեղի իւր:

Եւ յետ աւուրց ինչ յայտնի եղև այս ժողովրդականացն Ջուղայեցւոց գնացելոցն ի Սպահան, որոց պետ և գլուխ էր խօջայ Նազարն, ոչ միայն Ջուղայեցւոց, այլ և ամենայն հայազուն քրիստոնէից բնակելոցն ընդ թագաւորութեամբ Պարսից, քանզի յոյժ հզօր և երևելի էր խօջայ Նազարս, նաև սիրելի թագաւորին Պարսից Շահաբասին: Եւ այս խօջայ Նազարս առաքեաց զարս ոմանս ի Ջուղայեցւոց առ եպիսկոպոսն Շմաւօն՝ և խնդրեաց ի նմանէ զմասն նշխարացն. այլ և բանս սպառնականս և երկիւղալիս. և առաքեալն ի խօջայ Նազարէն եկեալ պահանջէին յեպիսկոպոսէն զմասն նշխարացն, յորոյ երկիւղ զանգիտեալ եպիսկոպոսին, ոչ կարաց թաքուցանել կամ զերծանել ի Ջուղայեցւոց, խորհեցաւ տալ ի նոսա զնշխարսն: Բայց ի մասանց զմեծ

1 Ա.Դ *մագաղաթին, տարաւ...*
2 Ա. *խորհիլ* Ա. *նշխարն*
3-4 ԱՐԳԴԲ *օր աւուր*
4 Ա. *ամենեքեան*
6 ԲԳԲ *զոր*
7 Է *այնուհետև և*
10 Բ *արս*
10-11 Ա. *ի վանք*
11 ԲԳԴԲ *գեղն է*
12 Ե *որպիսութիւն*
12-13 Ա. *որոյ*
13 Գ *անուն* ԲԳԲ *այլազգոյն*
14 Ա. *վաղուց*
16 Ա. *բուրեցաւ է անուշ*
20 Է *Լուսաւորիչ* ԲԳ *և եդիր* Ե *և էդիր*
23 Բ *գոհացեաց* Գ *նշխարհաց*
25 Ա. *զինչս*
30 Է *Նազարն*
32 Ա. *զբանս*
35 Է *թագուցեալ կամ զերծանիլ* Ե *զերծանիլ*
36 Ա.ԴԵ *ի մասանցն*

կտորն պահեաց առ ինքն թաքնաբար, որ էր պլուխ թիակին՝ որ է տեղի բոլոր ոսկերն, որ է ի վերայ ուսին, իսկ զայլ ևս մասունսն և զմասպաղաթն գրեալ՝ եդին ի նոյն յարկեղն, և եաւն Ջուղայեցւոց, որք տարան ի Սպահան քաղաք առ իօջայ Նազարն։

Իսկ եպիսկոպոսն Շմաւօն պահեաց զնշխարն զայն առ ինքն մինչ ի ժամանակս յայս, յորում է թուականն մեր Հայոցս ՌՃԹ և ի սոյն ժամանակի մեծ վարդապետին Յակոբ, որ էր և սա Ջուղայեցի, նորոգեր զնոյն վանքն սրբոյն Ստեփաննոսի նախաւկայինն, բազում և անթիւ ծախիւք և մեծաւ աշխատութեամբ. սկիզբն արար եկեղեցւոյն ի հիմանէ մինչև ցկատարումն կոփածու վիմօք, այլ և զպարիսպն ամենայն և զամենայն շինուածոն որք ի նմա, զամենեսեան ի հիմանէ ձեռնարկեալ վերատին նորոգեաց։ Եւ եպիսկոպոսն Շմաւօն եկեալ առ մեծ վարդապետն Յակոբ ծանոյց նմա վասն նշխարացն, և ասաց թէ կամիմ խաչ շինել յազգս իմոյ յիշատակի, և անդ հանդուցանել զնշխարն զայն, իսկ վարդապետն ծանոյց եպիսկոպոսին թէ ոչ գոյ հրաման ի կանոնաց՝ դնել զնշխարս սրբոց ի մէջ խաչին, այլ յայլ արկեղ. վասն որոյ կազմեցին վասն նշխարացն զայլ իմն արկղ արծաթեայ աղիւսաձև, և արարեալ ոսկեզօծ և ընդելուզեալ ակամբք պատուականէք, և անդ հանդուցին զնշխար սրբոյն Յովհաննու Կարապետին։ Եւ գրեցին ի վերայ պահարանի համառօտ բանիւ զամենեսեան անցուածք պատահմանցս ւյսոցիկ, և եդին ի նոյն վանս սրբոյ Նախաւկային ընդ այլ բազմահատաք սրբութեանցն՝ որք կան անդէն, որք են բարեխօս վասն ամենայն քրիստոնէից, մանաւանդ պահապանք և պարծանք աշխարհիս Հայոց, որք կատարեն զամենայն բժշկութիւնս առ ամենայն նեղեալս, որք դիմեն առ նոսա. որովք փառաւորի անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի օրհնելոյն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԳԼՈՒԽ ԽԴ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՆՄԵՂ ՄԱՆԿԱՆՆ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ

Այս երանելի նահատակս Նիկողայոս էր ի քաղաքէն Տիգրանակերտու, որ այժմ ասի Ամիթ, ծնեալ և սնեալ ի նոյն քաղաքին, և էր

2 Ա.Դ *որ էր*
3 ԲԳՆ *ջուղայեցւոց* Գ *ջուղայեցւոցն* ԲԳԴՆ *որ* ԳՆ *յարկղն*
5 Ա.ԲԴ *այն*
6 Ա.Դ *չիք մեր*
8 Ա *բազմօք*
8-9 Ա *անթուօք*
10 Ա *կոփուածովք*
11 Ա *զամենեսեան* ԲԳՆ *շինուածքն, որ ի նմա* Գ *որ*
14 Ա *զխաչ*
16 Ա.ԲԳՆ *խաչի*
18 Ա *զոսկեօծ* ԲԳԴՆ *ոսկեօծ*
19 ԲԳ *զնշխարն*
20 Ա *պահարանին համառօտիւ* ԲԳԴՆ *պահարանին... զամենայն*
21 Ա.Գ *անցուածո* Գ *պատահմանց*
22 Ա *այլոց բազմահատաքից*
23 Ա *ամենից* Ա.ԲԳ *պահապան*
24 Ա *զամենեսեան*
25 Ծ *ամենեսեան*
26 Ա.Գ *չիք յաւիտենից*
27 Բ *չիք ամէն*
30 Ա.ԲԳԴՆ *Նիկո[ո]ղայոսին*
31 ԲԳԴՆ *քաղաքի*

մանուկ տիօք իբրև տասն և հնգից ամաց, տեսլեամբն գեղեցիկ՝ և հասակաւն վայելուչ, զաւակ քրիստոնէից, և աղգաւ ի Հայոց։

Եւ յաւուր միում մինչդեռ շրջէր Նիկողայոս ի մէջ շուկային ըստ հանապազորդ սովորութեան իւրոյ, յայնժամ այր ոմն հաւատովն մահմետական, որոյ այլւի անունն Մահմետ էր, մերձեալ առ Նիկողայոս ձեռն ածէր զերեսօքն՝ և փարէր ախտաւոր ցանկութեամբ՝ որպէս հանապազ սովորեալ առ մահմետականս. իսկ Նիկողայոս սաստիկ բարկութեամբ դժուարացեալ ընդ այն ի բաց վարէր յինքենէ. և էր այլ ոմն այր, որ նա ևս անուամբն Մահմետ էր և հաւատովն մահմետական, այս Մահմետ, որ այժմ խաղայր ընդ Նիկողայոսին, ասաց նմա վասն այնմ Մահմետի, թէ զի՞րդ է զի ընդ այն Մահմետն առնես զսէր և յարակցութիւն, և ընդ իս ոչ առնես, և Նիկողայոս ասաց. «Զքո մայրն և զնորա մայրն այսպէս առնեմ»։ Եւ նոյն ժամայն այս Մահմետս ասաց մերձակայ արանցն, և խանութպանացն. «Վասն Աստուծոյ վկայք լերուք՝ զի դուք ձեզէն լուայք, որ Հայհոյեաց զօրէնսդիրն մեր զմարգարէն Մահմետ». և ժողովեցան բազում մահմետականք իբրև զշուն կատաղիք անդր ի վերայ նորա, և յափշտակեցին զՆիկողայոս և տարան ի դատարանն առ դատաւորն, և ի նոցանէ լինէին ոմանք դատախազք, և ոմանք վկայք, և ոմանք վրէժխնդիրք, և դատապարտէին ի մահ զՆիկողայոս։

Եհարց դատաւորն ի Նիկողայոսէ՝ թէ արդարև հայհոյեցե՞ր զպատգամաբերն զՄահմետ, եւ զպատասխանի Նիկողայոս. «Ես ոչ հայհոյեցի, և ոչ բան ինչ ասացի պատգամաբերին Մահմետի, այլ այրս այս ախտաւոր ցանկութեամբ խարէր զինև ի մէջ մարդկան՝ և ամօթով առնէր, զիս, վասն որոյ և ես զմայր սորա քֆրեցի»։ Իսկ այս Մահմետս որ խաղայր ընդ Նիկողայոսի, դատախազ լինէր թէ, զՄահմետ զպատգամաբերն քֆրեաց։ Այլ և ասաց. «Ունիմ ահաւասիկ երկու այր վկայ», զոր և ածեալ կացոյց զարսն առաջի դատաւորին, միոյն անուն ասէին Պաղալ Ալլահվերտի և միւսոյն Հալվաչի Սէիդ, որոց եկեալ առաջի դատաւորին վկայեցին, թէ՝ մեք լուաք ի դմանէ, որ քֆրեաց Մահմետին։ Ասաց դատաւորն Նիկողայոսին՝ «Որովհետև այդքան մահմետականք ժողովեան են ի վերայ քո և այդու կերպիւ դատապարտեն զքեզ, գիտեմ զի ոչ թողուն զքեզ կենդանի՝ այլ սպանանեն, վասն որոյ լուր բանիդ իմոց և լեր մուսուրման՝ զի զերծցիս ի մահուանէ»։ Եւ Նիկողայոս ոչ կալաւ յանձին լինել հաւատովն Մահմետի։

1 ՐԳԴՆ *հինգ* Ր *գեղեցիկ*
4 Ա. *հանապազորդի*
5 ՐԳ *որ փխ որոյ* Գ *այլուի*
6 Ս. *ախտավորիւ*
8 Ա *սաստկիւ*
10-11 ՐԳՆ *Նիկողոսի* Գ *Նիկողոսիս*
12 Ա. *Մահմետին... զհարակցութիւնս* ՐԳԴՆ *Մահմետին... սէր*
13 ՐԳԴՆ *մայրն էլ* Ա. *մայրն ևս այսպէս առնեմ* ՐԳԴՆ *մայրն էլ*
14 Ա.ՐԳ *Մահմետ* Ա. *մերձակայից*
16 Ի *զօրէնսգիրն* Գ *զմարգարէնն* Է և *մարգարէն*
17 Ա. *բազումք* ՐԳԴՆ *նոցա փխ նորա*
21 Գ *ի Նիկողայոսէն է հայհոյեա՞ց*
22 ԳԴՆ *պատասխանի*
23 Ա *զբան*
24 Ա *ախտաւորիւ է մարդկանց*
28-29 ԱԴ *չիք միոյն... Սէիդ*
29 ՐԳԴՆ *բազալ* Գ *հալուաչի*
30 Է *վկայիցեն*
31 Ա *Նիկողայոսի*
32 Ա *ժողովեալք են*
35 ԱԴ *լինիլ*

Բազում անգամ ասաց դատաւորն. «Տամ քեզ բազում գանձս և ստացուածս պատուականս, և կին գեղեցիկ, եթէ գաս ի հաւատս Մահմատի». և Նիկողայոս ասաց. «Ես զլոյս հաւատս իմ ոչ թողում, և զուղիղ օրէնս Քրիստոսի Աստուծոյ իմոյ ոչ փոխանակեմ ըն զձերդ օրինաց, և դուք թէ անպարտ սպանանէք զիս՝ դուք գիտէք»։ Իսկ որք վրէժխնդիր մահմետականքն էին հարկէին զդատաւորն առնել սիջիլ մահուան ի վերայ Նիկողայոսի՝ զի սպանցեն զնա, և դատաւորն արար սիջիլ։

Իսկ մահմետականքն, որք իբրև զչար գազան ծարաւի են արեանց քրիստոնէից, առին զսիջիլն և զՆիկողայոսն տարան առաջի փաշային, որում անունն էր Մուստաֆայ փաշայ, և ծանուցին նմա զամենայն՝ յոլով ամբաստանութեամբ. և փաշային ասաց առ Նիկողայոս. «Լո՛ւր բանից իմոց և գարձիր ի պայծառ հաւատս Մահմետի, որով պայծառացեալ է ամենայն աշխարհ, որպէս և տեսանես, և ես կարգեմ զքեզ ինձ հանապազորդ առաջակայ սպասաւոր, և իբրև զորդի ընդունիմ զքեզ, և տամ քեզ բազում գանձս և պատուական ստացուածս, և կին գեղեցիկ զդուստր իշխանաց՝ զորոյ և կամիս, և պետական իշխանութիւնս, և այլ բարութիւնս բազում»։ Եւ պատասխանի Նիկողայոս. «Ի բարութեանցդ այսի ոչինչ պիտոյ է ինձ ամենևին, այլ թէ առնես ինձ բարութիւնս, թող ինձ կեալ իմովս հաւատով, և թէ ի զուր դատապարտէք զիս և սպանանէք՝ դուք գիտէք»։ Բազում անգամ ասաց փաշային. «Տամ քեզ մեծութիւն, և փառս՝ եթէ դառնաս ի քոյդ հաւատոց ի հաւատս Մահմետի». և Նիկողայոս ոչ դարձաւ։ Իսկ մահմետականքն բազում բանիւ թախանձէին զփաշային տալ հրաման և վճիռ սպանանել զՆիկողայոս, իբրև գիտաց փաշային թէ ոչ դառնայ Նիկողայոս, ապա ետ վճիռ և հրաման սպանանել զնա։

Յայնժամ ժողովեցան գունդք դահճացն ի վերայ նորա, և մերկացուցին զնա ի հանդերձից՝ և գլուխ ի բաց և բոկոտն, և ձեռս ի յետս կապեալ, և առեալ տարան զնա ի շրջեցուցանել յամենայն տեղիս քաղաքին, և մունետիկն առաջի նորա հրատարակելով գնայր. և բերին զնա ի մէջ մեծ մէյդանին, ի տեղին ուր զմահապարտսն զոտս և զձեռս խորտակեն ի վերայ վիմին՝ որ կայ հաստատեալ անդ, և անդ ևս բազում անգամ ասացին դահիճքն. «Դարձիր ի քոյդ հաւատոց ի հաւատս Մահմետի՝ և մի ևս յամառիր, զի ահաւասիկ այժմ խորտա-

1 Ա. *զբազում*
1-2 Ա. *զատացուածս... զկին*
3 ԲԳ *Նիկողոս*
5 ԲԳԽՆ *որ*
6 Ա. *զսիճիլ* ԲԳԽՆ *սիճիլ*
8 Ա. *զսիջիլ*
9 ԱԴ *գազանք* Ա. *ծարաւիք*
10 ԲԳԽՆ *զՆիկողոսն*
11 Ա. *որոյ*
12 Ա. *յոլովիւ*
16 Ա. *զբազում*
16-17 Ա. *զկին... զդուստր*
17-18 Ա. *զպետական... զայլ*
18 Ա. *զպատասխանի*
19 Ն *ի բարութեանց* Ա.ԲԳԽՆ *այդի*
20 Ա. *զբարութիւնս*
22 Ա. *զմեծութիւն, և զփառս, ...հաւատոյ*
24 Ա. *բազմաւ* Ա. *զհրամանն և զվճիռ*
25-26 Գ *չիք Նիկողայոս ապա*
26 Ա. *չիք ապա* Ա. *զվճիռ և զհրամանն*
28 Ա. *զձեռս*
29 Ա. *յամենեսեան*
30 Ա.ԲԳԽՆ *մունեդիկն*
32-33 Ա.ԲԳԽՆ *անդր և անդր*
33 Ա.ԲԳԽՆ *հաւատոյ*

կնմբ զձեռս քո և զոտսդ». սոյնպէս և այլ մահմետականքն ասէին, և Նիկողայոս ոչ ումեք հաւանեցաւ բնաւ։ Եւ յայնմ պահու յերիցանց քաղաքին Մարտիրոս անուամբ ոմն քահանայ եղեալ հաղորդ ի մէջ արմատոյ և բերեալ ետ ցՆիկողայոս, զոր առեալ ճաշակեաց, և ի տեսանելն զայն դահճացն, աղմկեցան, և սկսան հարցումն առնել. Թէ ինչ էր այն, զոր երէցն ետ ցՆիկողայոս, և երէցն փութով խոյս տուեալ փախեաւ ի տեղւոջէն՝ և փրկեցաւ։ Իսկ դահճացն ի բազում անգամ առնելն ցՆիկողայոս Թէ ո՛վ, դարձիր յօրէնս Մահմետի, և փրկիր ի մահուանէ. իբրև ոչ դարձաւ, ապա ասացին զդահիճքն ցՆիկողայոս. «Որովհետև ոչ լսես մեզ՝ և ոչ հաւանիս մտանել յօրէնս Մահմետի, արդ՝ տարածեա՛ զձեռս քո ի վերայ վիմիդ դի խորտակեսցուք»։ Եւ երանելին Նիկողայոս ինքն իւրովի տարածեաց զերկոսին ձեռսն ի վերայ վիմին, և դահիճքն հարին կացնաւ և խորտակեցին զբազուկս երկոցունց ձեռացն, և ապա խնդրեցին զոտսն, ։ նա տարածեաց, և դահիճքն խորտակեցին զոլոքս երկոցունց ոտիցն։ Եկաց Նիկողայոս այնպէս խորտակեալ անդամօք յայնմ աւուր անպէն ի մէջ թէատրոնին անկեալ, և յերկրորդումն աւուր մատուցեալ քրիստոնէիցն առ փաշայն և առ դատաւորն, և խնդրեցին տալ հրաման բառնալոյ զնա անտի և տանել ի տունն իւրեանց, և նոքա ետուն հրաման, և եկեալ քրիստոնէից բարձեալ զնա տարան ի տունն իւրեանց, և մնաց կենդանի Նիկողայոս յետ խորտակելոյ զձեռսն և զոտսն աւուրս երիս, և ապա աւանդեաց զսուրբ հոգին իւր իբրև զխունկ անոյշ ի ձեռս Աստուծոյ։

Եւ ի գիշերին այնմիկ Տէրն Քրիստոս փառաւորեաց զնա երկնային լուսովն, որ էջ ի վերայ նորա, զոր քրիստոնեայքն ամենեքեան, որք անդր էին ժողովեալք, ակներև տեսին ամենեքեան և ուրախացան մեծաւ խնդութեամբ և ցնծութեամբ փառաւորէին զԱստուած, այլ և ինքն սուրբն Նիկողայոս մինչ կենդանի էր պատմեաց Թէ՝ ի ժամուն յորում խորտակեցին զձեռս իմ և զոտս, տեսի զի լոյս պայծառ շողացեալ յերկնից իջեալ եմուտ ի բերանս իմ։ Եւ յետ մահուան սրբոյն, ի վաղիւ անդր ժողովեցան բազմութիւնք քրիստոնէից բարձեալ զնահատակն Քրիստոսի սաղմոսիւք և օրհնութեամբ և տարան ի դիրս գերեզմանացն Հայոց, և անդ ի կարգս սուրբ նահատակացն հանգուցին ի գերեզմանի. և այժմ ցաւագարք և հիւանդք գնան ի սուրբ գերեզման նորա, և գտանեն զառողջութիւն իւրաքանչիւր ցաւոց՝ աղօթիւք սուրբ նահատակին Նիկողայոսի և շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ որում փառք յաւիտեանս ամէն։ Եւ եղև կատարումն նահատակութեան սրբոյն Նիկողայոսի ի թուականութեան Հայոց ՈՂԱ. յապրիլ ամսոյ

5 Ս. *զհարցումն*
6 ԱՐԳՈՒՆ *էրէցն է երեցն* ԱՐԳՈՒՆ *զնիկողոս և էրէցն է երեցն*
8 Գ *ցնիկողոս*
11 ԱԴՈՒՆ *զձեռն*
13 ԱՐԳՈՒՆ *զբազուկսն*
15 ՐԳՈՒՆ *ոտացն*
16 Ս. *խորտակեցեալովք*
18 Ս. *զհրամանն*
19 ԱԴ *տանիլ ի տուն* Ա. *զհրամանն*
23 Ս. *երկնայնով*
25 Բ *անդ էին* ԱԴՒ՝ *չիմ ամենեքեան*
27 ԱՐԳՈՒՆ՝ *կենդանին էր*
28 Ա *զլոյս*
31 ԱԴ *չիմ և (տարան)*
32 Ա *սրբոց*
34 Ա՝ *իւրաքանչիւրոց* ՐԳՈՒՆ *սրբոյ*
37 ՐԳՈՒՆ *սրբոյ*
ԱԴ *Նիկողայոսին* ՐԳՆ *Նիկողայոսին*
ՐԳՈՒՆ *Հայոցս* Ս. *յապրիլի է յապրիլ*

տան հինգ, ի թագաւորութեան ալգին Օսմանցւոց սուլթան Իբրահիմին, որ նստէր ի մեծ քաղաքն Ստամբօլ, և ի կաթուղիկոսութեան բարձրագահ աթոռոյն սրբոյ էջմիածնի տէր Փիլիպպոսի պատուական հայրապետի:

Այլև մինչ կենդանի էր սուրբն Նիկօղայոս, պահանջաւ անդ ի Յամիթ քաղաքի վարդապետ ոմն, զորոյ զանունն ոչ պատաք. որոյ եկեալ առ սուրբն Նիկօղայոս, և կալեալ ղջախջախեալ աջն նորա համբուրեաց, և խնդրեաց ի նմանէ թէ սուրբ աջ քո զայս շնորհեա ինձ, զի ես հանդերձեալ եմ եկեղեցի շինել, և դնեմ ի հիմն եկեղեցւոյն այնմիկ զսուրբ աջս, և սուրբն Նիկօղայոս յոժարութեամբ եւս. քանզի ասաց. «Արդէն իսկ կտրեա և ա՛ռ ի քեզ», և մինչ կենդանի էր ոչ կտրեցին՝ այլ յետ մահուանն կտրեցին, և վարդապետն չինքն էառ զսուրբ աջն Նիկօղայոսի մեծաւ փափաքանօք և տարեալ եդ ի հիմն եկեղեցւոյն, զոր շինեաց: Այլ և զվէմն զայն ևս յորոյ վերայ խորտակեցին զձեռս և զոտս սրբոյն Նիկօղայոսի, զայն ևս գողացաւ վարդապետն և տարեալ եդ ի հիմն եկեղեցւոյն՝ զոր շինեաց, որով վարուցի անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յաւիտեանս յաւիտենից, ամէն:

ԳԼՈՒԽ ԼԵ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՂ ՎԿԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՐԲՈՅՆ ԽԱՉԱՏՐՈՅ

Այս երանելի նահատակս խաչատուր էր ի քաղաքէն Տիգրանակերտու՝ որ այժմ ասի Ամիթ[179], ծնեալ և սնեալ ի նմին քաղաքի, և էր ինքն յազգէն Հայոց, և կային սմա ծնողք և եղբարք և այլ ընտանիք բազումք. և էր ինքն իբրև ամաց քսանից՝ աւելի կամ պակաս, գեղեցկատես և վայելչահասակ. այլ և էր յոյժ աղօթասէր և ունկնդիր գրոց ընթերցման, զոր ինչ և կարդան քահանայքն յեկեղեցիս՝ Աւետարան և Ճաշու գիրք, և մանաւանդ թէ Յայսմաւուրք և պատմութիւնք վկայից, և յամենայն աւուր անպակաս էր նա յեկեղեցւոյն և յաղօթից իւրաքանչիւր կարգեալ ժամս. և մերձ առնէին՝ ուր ընթեռնուն զամենայն գիրս, կալեալ էր իւր ի տեղի աղօթից, և յորժամ ընթեռնուին զպատմութիւն նահատակութեան վկայից, իբրև զյորդառատ աղբիւր բղխէին արտասուքն յաչացն, և ցանկայր ինքն մեծաւ յօժարութեամբ նահատակից լինիլ սրբոց վկայիցն. և հանապազ ի տան իւրեանց իւրոց ըն-

3 Ռն *սուրբ* Ա.ՐԳՈՒՆ *տեառն*
6 Ա. *որոյ*
7-8 Ռ: և *համբուրեաց*
8 Ա.Ռն *զսուրբ*
9 Ա. *զեկեղեցի*
13 ՐԳն *Նիկողայոսին* Ռն *փափաքանօք*
15 Ա. չիք *ևս*
20 Ա. *խոստովանողի*
21 Ա. չիք *սրբոյն* Ռ *խաչատրի* Գ *խաչատուրին* Դն *խաչատրին*
22 Ա.Դ չիք *խաչատուր*
24 Ռն *ընդանիք*
27 Ա.Դ *կարդային*
27-28 Ա.Դ *զաւետարան և զճաշու գիրք*
28 Ա.ԳՈՒՆ *այսմաւուրք*
29-30 Դ *յիւրաքանչիւր*
30 Ա. *զամենեսեան*
31 Ա.ՐԳՈՒՆ չիք *ի*
32 ՐԳն *բխէր*
34 ՐԳնէ: *լինիլ*

տանեաց, և արտաքոյ ընդ իւրոց յարակից ընկերացն ասէր թէ, ես ոչ կամիմ իմով բնական մահուամբ մեռանիլ, այլ կամիմ նահատակիլ, և ի վերայ իմոյս ճշմարիտ հաւատոյս մեռանիլ։ Եւ էր սա աշակերտեալ առն ումեմն քրիստոնէի որ ունէր արուեստս չընկարութեան, որ շինէ կոպղայք և այլ այսպիսի մանր իրք, և հանապազ ընդ իւրում վարպետին նստեալ ի խանութին ի մէջ շուկային դործէին զարուեստն իւրեանց, և էր խանութ սոցա մերձ մեծ մզկիթին՝ զոր Ջումայ մաչիթ ասեն։

Եւ յաւուր միում ի մէջ խանութին ասաց խաչատուրն ընդ իւրում վարպետին թէ, աւասիկ իջեալ ի խանութէս գնամ, բայց կարծեմ թէ այլ ոչ ևս դամ ի խանութս. և ոմանք ասացին թէ ասաց խաչատուրն. «Յայսմ դիշերի տեսիլ երազոյ երևեցաւ ինձ, և հրամայեցաւ ինձ նահատակութիւն, և երթամ ես ի նահատակիլ, վասն այն ասեմ, թէ ոչ ևս դառնամ ի խանութս»։ Ապա յետ այսց բանից իջեալ ի խանութէն գնաց ի Մեծ մաչիթի բակն, և կացեալ առ ընթեր ջրոյն լուանայր զձեռն ջրովն՝ որ հեղանէր ի բարձր տեղւոջէն. և յայնմ ժամու եկեալ այր ոմն մահմետական, որ էր ինքն ամիր և կանաչագլուխ[180], հայհոյեաց զխաչատուրն և ասաց. «Ի բաց գնա ի տեղւոջէդ, զի և ես լուացայց», և խաչատուրն հայհոյեաց զնա և զկանաչն նորա. և ի խօսիլ սոցա երկոցունց ընդ միմեանս, ժողովեցան բազում մահմետականք ի վերայ նոցա, և յափշտակեցին զխաչատուրն և տարան առ դատաւորն, և սկսան ոմանք դատախազ լինել՝ և ոմանք վկայք, և ոմանք վրէժխնդիրք, և դատապարտէին ի մահ զխաչատուր։ Եւ ի մէջ դատարանին խօսեցաւ դատաւորն ընդ խաչատրոյն և ասաց. «Որդեակ, դու մանուկ ես, և նորոդ երիտասարդ, խնայեա ի մանկութիւն քո, և փրկեա զանձն քո. քանզի այսքան մահմետականք՝ որ ժողովեալ են ի վերայ քո, ոչ թողուն զքեզ մնալ կենդանի, այլ հաւանեա բանից իմոց, դարձիր ի ձեր մոլար օրինացն, և եմուտ ի հաւատս Մահմետի, որ բարի է և երանելի, որպէս և տեսանես, զամենայն մահմետականս, որք բարգաւաճեալք են բարեկեցիկ կենդանութեամբ՝ և հզօրացեալք են թագաւորութեամբ, և ժառանգողք են աստի կենցաս և հանդերձելոյն»։ Իսկ երանելի խաչատուր ետ պատասխանի և ասաց՝ «Մոլար օրէն ձեր օրէնքն է, որպէս և է մարգարէն և պատգամաբերն ձեր սուտ մարգարէ, իսկ մեր օրէնս ճշմարիտ է և քրիստոսադիր, որպէս և ինքն

1 է ընդ իւրում ԲԳԴԵ ընկերաց
2 Ա. բնականաւ
3 Ա ճշմարտի
4 Ա. զարուեստս ԲԳԵ արուեստս
5 Ա. զկոպղայս և զայլ է կոպղայս Ա. իր
9 ԲԳԵ խաչատուր
10 Գ ահաւասիկ
11 ԲԳԵ խաչատուր
15 Ա. մեծի
15-16 ԱԲԳԵ զձեռս Գ զձեռն
16 Ա. հեղանիւր Ա.է հեղանի
18 ԲԳԴ զխաչատուր
19 ԲԳԵ խաչատուր Բ խօսել նոցի ԳԵ խօսել ընդ նոսա Ե խօսել նոսին Ե խօսել
20 Ա. բազումք Գ մեմանց
22 ԱԴ լինիլ
24 ԱԲԳԵ խաչատրին Գ խաչատրրին
26 ԳԵ որք փխ որ
27 Ա. հաւանեաց Գ հաւանեալ
28 Ա. չիք ձեր մոլար
29 ԲԳԵ որ փխ որք
30 Ա. բարեկեցիւ
32 ԲԳԵ երանելին Ա. զպատասխանի
32-33 Ա ձեր օրէն է
33 ԲԳԵ օրէնք
34 ԲԳԵ օրէնքս

Քրիստոս ճշմարիտ է՝ որում դուք ևս վկայէք, և ես զՔրիստոս Աստուածն իմ ոչ ուրանամ, և զլոյս հաւատս իմ ոչ թողում, և սուտ օրինաց ձերոց ոչ հաւանիմ, եթէ թողուք զիս և եթէ սպանանէք, և թէ իբրև զնասիմի[181] քերթէք զիս՝ ես ի հաւատոյս իմոյ ոչ դառնամ». և պատուերն բազում բանս խօսեցաւ ընդ նմա, և բազում բարութիւնս խոստացաւ տալ նմա՝ գանձս և ստացուածս, և կին, և պետական իշխանութիւնս, և խաչատուրն բնաւ ոչ հաւանեցաւ. եւ ոմանք ի մահմետականացն գնացեալ առ մուֆթին ծանուցին, թէ այր, որ զպատգամաբերն զՄահմետ և զնորին հաւատն հայհոյէ՝ զի՞նչ պարտ է նմա առնել, և մուֆթին ետ ֆաթվայ. «Որովհետև զպատգամաբերն զՄահմետ, և զնորին հաւատն հայհոյեաց, և ինքն ասաց, թէ իբրև զնասիմի քերթէք զիս, յիմոյս հաւատոյս ոչ դառնամ, պարտ է զնա քերթել»: Եւ զայս ֆաթվայս առեալ մահմետականացն քերին առ զադին, և սիջիլ արարին. և ապա առեալ զխաչատուրն տարան առ փաշայն և ծանուցին նմա զամենայն: Իսկ փաշայն իբրև ետես զվայելուչ մանկութիւն խաչատրոյ, բազում խանդաղատական բանիւք խօսեցաւ ընդ նմա և ասաց. «Տամ քեզ բազում գանձս, և զպատուական ստացուածս՝ և պետական իշխանութիւնս. և կին գեղեցիկ դուստր իշխանաց, որում և դու հաւանիցիս. եթէ դառնաս ի քոյդ հաւատոյ և ընդունիս զհաւատս Մահմետի, լինիս այսքան բարեաց տէր՝ նաև զանձն քո փրկես ի մահուանէ»: Իսկ երանելին խաչատուր ետ պատասխանի «Զայդ ամենայն բարիքդ, զոր խոստացար տալ ինձ՝ սուտ է և ընդունայն. քանզի անցաւոր է. նա և հաւատն ձեր սուտ է՝ զի սուտ մարգարէի է կարդալ, իսկ իմս հաւատ ճշմարիտ է՝ և սուրբ, զի ի Քրիստոսէ է կարդալ, որոյ ճշմարտութեան դուք իսկ վկայ էք. ոչ թէ հարևանցի սպանանէք զիս, այլ թէ կենդանւոյն քերթէք զիս, ես զՔրիստոս Աստուածն իմ և զնորին ճշմարիտ հաւատն ոչ ուրանամ»: Ասաց փաշայն «Գուցէ բանդագուշակեալ և ի խելաց թափեալ իցէ. տարեալ պահեցէք, զի թերևս ի խելս և զգօնութիւնս գայցէ». և տարեալ պահեցին ժամս երկու. և մահմետականքն ամենեքեան առ նա եկեալ աւաղէին, և խնայէին, և ասէին. «Մի կորուսաներ զվայելուչ մանկութիւն քո». և նա ոչ հաւանեցաւ բանից նոցա: Դարձեալ կոչեաց փաշայն զխաչատուրն առաջի իւր, և քան զառաջին բարութիւնս աւելի խոստացաւ տալ նմա, միայն թէ ուրանայ զքրիստոսական հաւատն, և դաւանի զմահմետական հա-

3 Ա.ՐԴԴԵ *և թէ սպանանէք*
5 Ա. *զբազում (բանս)* Ա. *զբազում*
6 Ա. *զգանձ* Ա. *զստացուածս և զկին և զպետական*
7 Դե *խաչատուր*
10 Ա. *զֆուրվայ* ՐԴԵ *թէ որովհետև*
13 Բ *սիճիլ*
14 Դե *զխաչատուր*
15-16 ՐԴ *մանկութիւնն խաչատրի*
16 Դ *խաչատրին* Ե *խաչատրի* Ա. *բազմօք* Ա. *խանդաղատականօք*
17 Ա. *զբազում* ՐԴ *պատուական*
17-18 Ա. *զպետական*
18 Ա. *զկին... զդուստր* ՐԴՆ *կին... զդուստր*
19 ՐԴԵ *հաւատոյդ*
20 ՐԴԵ *բարիացս*
21 Ա. *զպատասխանի*
23 Բ *ձերս*
25 ԴԴ *և ոչ թէ* Դ *ճշմարտութեանն*
26-27 Ա. *զՔրիստոս աստուածն իմ ոչ թողում և զնորին* Դ *իմ ոչ և զնորին*
28 Է *պահիցէք*
32 ՐԴԵ *զխաչատուր*
33 Ե *բարութիւնսն*

ւատն, և խաչատուր ոչ ուրացաւ. ապա այնուհետև փաշայն ետ հրամայեաց և վճիռ սպանանել զնա։

Յայնժամ նկեալ դահճացն իբրև զգազան արիւնախանձ պատեցան շուրջ զնովաւ, և մերկացուցին զնա ի զգեստուցն և կապեցին ձեռս ի յետս. և առեալ տանէին ի տեղի սպանման, և մունետիկն՝ որ է ջաուշի, հրատարակելով զնայր առաջի նորա։ Եւ ժողովեցան ի վերայ նորա բազմութիւնք մահմետականաց իբրև զաւազ ծովու անթուելի, որ ոչ բաւէր վայրն տանիլ զնոսա. և իբրև զգազան կատաղի կրճտէին զատամունս իւրեանց ի վերայ նորա. հարկանէին, կռփահարէին, և ընդ քարշս տանէին, և այնպիսի հանին զնա ի միջին բերդէն, և իբրև նիին ի դրանէ բերդին, անդէն առաջի դրան միջին բերդին, որում Նոր դուռն ասեն, ասաց սուրբն Խաչատուր դահճացն թէ, քերթեցէք զիս վասն հաւատոյ իմոյ և սիրոյ զոր ունիմ առ Քրիստոս Աստուածն իմ։ Յայնժամ անօրէնն և մարդապէմ դազան դահիճքն պատառեցին զմորթ մարմնոյ նորա յաջոյ ուսէն մինչև ցձախոյ ուսն. և քերթեցին զկաշին թիկանցն և իջուցին մինչև ցքամակն, և շրջեցին զկաշին ի վերայ միջացն, այլ և յառաջուստ կողմանէ քերթեցին զմորթ լանջացն մինչ ի ներքոյ ստեանցն, և շրջեցին զմորթն ի վերայ փորին, և ապա տարեալ շրջեցուցանէին ի մէջ քաղաքին ի շուկայս և ի պողոտայս, և ի փողոցս և ի հրապարակս, և ի տեսիլ զարմանալի գործոյն ամենայն ոք ճեպով ընթանայր, այր և կին՝ ծեր և տղայ, միանգամայն և տնարգել աղջկունք, և ամենայն տեսողաց մարմինքն սոսկացեալ սարսռէին։ Իսկ տեսիլ կերպարանաց սրբոյն Խաչատրոյ զուարթ էր և պայծառ, իբրև զհրեշտակի Աստուծոյ, և ոչինչ կասիւր յայնքան տանջանացն։ Այլ և ինքն Խաչատուր յառաջագոյն ուսեալ էր բազում Նասիմի խաղեր, զոր Նասիմին ինքն ասացեալ է ի վերայ իւրում նահատակութեանն և ի վերայ անօրէնութեան Քրիստոսի աստուածաբանութիւն, զայն խաղերն արդէն այժմ այս Խաչատուրս ի վերայ իւրում քերթուեւոյն բարձրաձայն եղանակաւ երգեր և շրջէր ի մէջ քաղաքին յամենայն տեղիս, ուր և տարան զնա դահիճքն։ Իբրև աւարտեցաւ շրջեցուցանելն, ապա ածին զնա դահիճքն ի մէջ մեծ մէյդանին, ի տեղին՝ յորում զմահապարտաց զձեռս և զոտսն խորտակեն. և մահմետականքն պահէ ի պահ առաւել ևս ժողովէին և բազմանային. այլ և քրիստոնեայք ևս բազումք եկին, և ժողովեցան ի տեղին՝ և տեսանէին զայն։ Խօսեցան դահիճքն ընդ Խաչատրոյն թէ մի՛ ևս յամառիր և դիմանար հրամանաց իշխանաց՝ դարձիր յօրէնս մեր, և փրկեա զանձն քո ի մահուանէ,

1-2 Ա. *զհրամանն և զվճիռ*
4 ԲՆ *ի զգեստուց*
4-5 ԱԴ *ի զգեստուց... զձեռս*
5 Ա.ԲԴԻՆ *մունետիկն*
8 ԲԴԻ *տանիլ*
10 ԱԴ *այնպէս*
21-22 Ա.ԲԴ *(միանգամ)այն անարդել աղջկունք*
22 Ա. *ամենից*
23 ԲԴԻՆ *Խաչատրի*
24 Ա. *յայնքանեաց Դ կասիւր* (բանաւոր վրայից ուղղված է *կասէր*)
25-26 Ա. *զբազում... խաղս*
26 Ա. *իւրում*
26-27 ԲՆ *նահատակութեանն*
27 *անօրէնութեանն*
27-28 Ա. *զաստուածաբանութիւն զայնոսիկ* ԴԴ
28 Ա. *վխաղսն... իւրոյ*
28-29 Ա.ԲԴԻ *քերթվելոյն*
29 Ա. *բարձրաձայնիւ* Ա. *յամենեսեան*
31 Ա. *մեծի*
35 ԲԴԻՆ *Խաչատրին*

զի տակաւին գոյ քեզ հնար կելոյ և դեղօք բժշկելոյ. սոյնպէս և այլ մահմետականքն, և իշխանք ասէին, թէ գոնեա բան մի միայն ասա ի դաւանութենէ մերոյս հաւատոյ, և այն բաւական է մեզ առնել զպատճառ՝ և այնու ապրեցուցանել զքեզ. այլ և ոմանք ի մոլլաներ-
5 բացն ասէին ցնաչատուր. «Թէպէտ և մնասանիս, և կորուսանես զմանկութիւն քո և զրկիս յայսմ կենացս, այլ զի մի՛ և զհոգի քո մնասուցես, և յայնմ կենաց ևս զրկիցիս. արդ՝ ի զրաւ քոյոյ կենացդ տուր դաւանութիւն հաւատոյն Մահմետի. զի կեցցէ հոգի քո, և ժառանգեսցէ զանանց կեանսն»։ Եւ սուրբն նաչատուր բնաւ ոչ ումեք հաւանեցաւ, այլ իւրաքանչիւրոց ըստ պատշաճին տայր պատասխանի, և անշարժ կայր ի վերայ հաւատոյս քրիստոնէութեան, և համարձակ և անխափան զՔրիստոս Աստուած դաւանէր։

Եւ յառաջ ժամանակաւ հաստատեալ էին ի մէջ մէյդանին վէմ մի՝ յորոյ վերայ խորտակէին զձեռս և զոտս մահապարտաց, ասացին պահիճքն ցնաչատուր. «Որովհետև յամառիս՝ և ոչ լսես մեզ, արդ՝ տարածեա զձեռսդ քո ի վերայ վէմիդ զի խորտակեսցուք». և նա յօժար կամօք իւրովք տարածեաց զձեռսն ի վերայ վիմին, և դահիճքն հարին կացնաւ և խորտակեցին ղբազուկսն երկոցունց ձեռացն. ապա խնդրեցին զոտսն, և նա տարածեաց ղերկոսին ոտսն, և դահիճքն խորտակեցին զոլոքս երկոցունց ոտացն. և սուրբ արիւն նորա՝ որ յորդառատ հեղանէր յանձնէն, թաթաւեալ էր զամենայն մարմինն, և թացեալ էր զվայրն ամենայն, այնուհետև ոչ ևս կարաց նստիլ, այլ անկեալ պարզեցաւ ընդ երեսս դետնոյն։ Իսկ քրիստոնեայք, որք շրջապատեալ հայէին աղիողորմ ողբօք և արեան արտասուօք լային, սոյնպէս և մահմետականք բազում լային արտասուօք՝ և հայհոյէին զօրէնս և զառաջնորդս և զիշխանս և զդատաւորս իւրեանց և ամենևքեան սոսկացեալք զարմացեալք ապուշ մնային. և հարցանէին ցմիմեանս թէ արդեօք իցէ՞ ումեք ի ձէնջ տեսեալ այսպիսի գործ. քանզի յոյժ սարսուելի էր տեսիլ գործոյն։ Եւ այնուհետև սուրբն նաչատուր յոյժ նուաղեցաւ ի սաստիկ և ի կարծրագոյն տանջանացն. և տապէր, և պապակէր ի ծառաւոյ. վասն որոյ աղաչեաց զարսն, որ շուրջն կային, և խնդրեաց ի նոցանէ ջուր, և զթացեալ առ նա ոմանց գնացեալ բերին նմա ջուր խեցեաւ ամանով ինչ՝ և այնու խեցեաւն էարբ զջուրն. այլ և աղաչեաց սուրբն նաչատուր զմերձ կացեալ քրիստոնեայսն գնալ առ քահանայս
35 և բերել ինքեան հաղորդ, և քահանայքն վասն երկիւղի մահմետականաց ինքեանք ոչ եկին, այլ զհաղորդն նոքին ի մէջ հացի, և նոյն

2 Դ *մահմետականք է չիմ մի*
4 ԲԳԴ *պատճառ*
4-5 ԲԴԵ *ի մոլլաներացն*
6 Ա *յայսց կենացս*
7 Ա *յայնց... քոյոց*
8 ԱԴ *դդաւանութիւն*
8-9 Գ *ժառանգեսցես*
10 Ա *զպատասխանի*
13 Ա *յառաջնով* Ա *զվէմ*
17 ԲԴԵ *իւրովի*
20 Է *ոտանցն*
21 Ա *հնղանիւր*
24 Գ *ողբովք*
25 ԱԳԵ *բազումք*
26 Ա *իւրոց է իւր*
30 Ա *ի սաստկից* Ա *ի կարծրագունից... և տապիւր* Ա *և տապէր, պապա(կէր)*
31 ԱԴ *որք*
32 Ա *զջուր*
33 ԲԳԴ *այնմ փխ այնու*
35 Ա *զհաղորդ*
35-36 ԲԳ *մահմետականացն*

ցքրիստոնեայսն՝ և նորա բերեալ հատուն ցխաչատուր, և նա առեալ ճաշակեաց ղհացն հաղորդեան և գոհացաւ ղԱստուծոյ, և այնպիսի խողխողեալ անդամօք անկեալ կայր ի մէջ թէատրոնին մինչ ի նսեմանալ երեկոյին: Իսկ Բաղիշնցի խաչատուր վարդապետն, և Բալուեցի Սամուէլ աբեղայն ի նսեմանալ երեկոյին եկին առ սուրբն խաչատուր, և ի վերայ սրբոյ մարմնոյն անկեալ կսկծագին այրմամբ լային և համբուրէին զսուրբ գլուխն նորա, և արգահատեալ մխիթարէին զնա յուսադրական բանիւք՝ և հաստատէին ի հաւատս: Ասաց սուրբն խաչատուր ցխաչատուր վարդապետն. «Գիտես իսկ, ղի ոչ ունիմ ձեռն որով կալեալ զսուրբ աջն քո համբուրեմ. վասն որոյ խնդրեմ ի քէն մատո՛ զսուրբ աջդ քո ի շրթունս իմ, զի համբուրեցից», և վարդապետն մատոյց զաջն իւր ի սուրբ շրթունս խաչատրոյ. որ համբուրեաց փափագանօք, այլ և ասաց սուրբն խաչատուր առ վարդապետն. «Խնդրեմ ի քէն աղօթել վասն իմ». պատասխանեաց վարդապետն. «Որդեակ, մեք թէպէտ ունիմք զկարգ և զաստիճան քահանայութեան, այլ մեղաւոր եմք և պարտական առաջի Աստուծոյ. իսկ դու շնորհօքն Քրիստոսի և քոյով նահատակութեամբդ գտեր ողորմութիւն ի Տեառնէ և բացեր քեզ զճանապարհ արքայութեան Աստուծոյ, և ունիս համարձակութիւն առաջի Քրիստոսի, վասն որոյ դու բարեխօսեա վասն մեր». և վասն երկիւղի մահմետականացն ոչ կարացին յոլով ժամս կալ առ նա, այլ առին զաղօթս սրբոյն և փութանակի դարձան ի տեղիս իւրեանց:

Եւ մնաց սուրբն խաչատուր այնպէս խողխողեալ մարմնով կենդանի, մինչ որ Էանց մէջ դիշերոյն, և ապա աւանդեաց զսուրբ հոգին իւր առ Աստուած որպէս խունկ անոյշ: Եւ յետ աւանդելոյ հոգւոյն սրբոյ, փառաւորեաց զնա Տէրն Քրիստոս, զի լոյս պայծառ էջ յերկնից ի վերայ նորա, և նկաց չօգուտ ժամս. զոր և տեսին զօրականքն, որ մերձն կային և պահէին զնա. այլ և խանութպանք յոլովք, որք մերձ էին և արթունք. այլ և արքն՝ որք ի մէջ մէյդանին ի վերայ տախտակացն ննջեալք էին, զի ամառնային էր ժամանակն, ամենեքեան տեսանէին պլոյսն, և փառաւորէին զԱստուած, և երանի տային սրբոյն խաչատրոյ, և նկայէին վասն հաւատոյս քրիստոնէութեան ճշմարիտ գոլ, որոյ վասն այսպիսի նշան յերկնից երևեցաւ. և ի ծագել լուսոյ առաւօտուն ընդ ամենայն տեղիս հռչակեցաւ համբաւս այս և որք լսէին, փառաւորէին զԱստուած: Իսկ ի լուսանալ աւուրն քրիստոնեայքն մատեան

2-3 Ա *այսպէս խողխողեցիլովք*
4 ԲՆ *Բաղըշնցի* Դ *Բաղշնցի*
4-5 ԱԴ *Բաղուեցի*
6 Դ *սրբոյ* Ա *կսկծագնիւ*
8 Ա *յուսադրականօք*
9 Բ *վարդապետ*
9-10 Ա *զձեռն... աջդ* ԲԴՆ *աջդ*
11 Ն *աջդդ*
12 ԲԴԴՆ *խաչատրին* Ա *զոր*
13 ԲՆ *փափաքանօք*
15 Դ *որդեակք*
16 Ա *մեղաւորք* ԱԲ *պարտականք*
17 Ի: *նահատակութեամբն* ԱԴ *զողորմութիւն*
18-19 Ա. *զհամարձակութիւն*
23 Ա. *խողխողեցիլով*
24 Ի: *ի մէջ*
25 ԲԴ *հոգոյ*
25-26 ԱՆ *դխունկ... հոգւոյ սրբոյն*
26 ԲԴ *սրբոյն*
27 Դ *որք*
29 Բ *արթուն*
31-32 ԲԴՆ *խաչատրի*
33 Դ *այսպիսւոյ* ԲԴՆ *առաւօտին*
34 Ա *ամենեսեան*

առ ղաւիթն՝ և առ փաշայն, և խնդրեցին հրաման տալ թաղել զսուրբն. և նորա հատուն հրաման, այլև տասն և հինգ զուտուշ էառ սուպաշին, և ապա քահանայ մի և ութն աշխարհական ելին և բարձին զմարմին սրբոյ նահատակին ի վերայ դագաղի և տարան ի դիւղմանատունս Հայոց. ուր ժողովեցան անբաւ բազմութիւնք քրիստոնէից, ոչ միայն Հայք՝ այլ և Հոռոմք, և Ասորիք և Եաղուբիք, այլ և յոլովք մահմետականք ոմանք ի զբօսնուլ, և ոմանք ի զննել. և քրիստոնեայք ամենեքեան ջերմեռանդ փափաքանօք համբուրէին զսուրբն, որ և պահեցին զնա մինչև ցվերջին աւուրն վասն համբուրելոյ ժողովրդոցն, զի դրեթէ ոչ էր մնացեալ ժողովուրդ ի քաղաքին, որ ոչ էր եկեալ ի թաղումն սրբոյն, որք ողբային զինքեանս և երանէին զսուրբն, և մխիթարէին զծնողս նորա, և մեծաւ փառօք թաղեցին զսուրբն ի կարգս նահատակացն: Իսկ ի գիշերին յայնմիկ միւսանգամ Տէրն Քրիստոս փառաւորեաց զնահատակն իւր, զի միւսանգամ լոյս պայծառ էջ յերկնից ի վերայ սրբոյ դերեզմանի, նորա, զոր տեսին պահնորդ քրիստոնեայքն, որք վասն խորամանկելոյ մահմետականացն զդուշացան գերեզմանին զի մի ննջեսցեն. այլ և բազում արք քրիստոնէից որք վասն սիրոյ սրբոյն մնացին զգիշերն զայն անդէն ի գերեզմանատունսն, տեսին զլոյսն, և յառաւօտին ևկեալ պատմէին ամենեցուն: Եւ արդէն իսկ բժշկութիւնք բազում կատարին ի սրբոյ գերեզմանէ նորա ի վերայ ցաւագարաց՝ և հիւանդաց, որք հաւատով դիմեն առ նա. այլ և խնդին այն, որով ջուր էարք սուրբն Խաչատուր՝ բժշկութիւն կատարէ, զի հիւանդաց որոց վերայ հեղուն ջուր խնգնան այնմիկ, գտանեն առողջութիւն աղօթիւք սրբոյ Խաչատրոյն, և շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. որում փառք յաւիտեանս ամէն:

Այլ և շնորհքն աստուածային վասն պատուոյ և սիրոյ նահատակին իւրոյ սրբոյն Խաչատրոյ՝ արար այսպիսի խնամս ի վերայ ժողովրդեան իւրոյ քրիստոնէից, զի յաւուր թաղման սրբոյն՝ մահմետականք՝ որք եկեալ էին անդ ի գերեզմանատունսն, ոմանք ի նոցանէ. չարացան և նախանձաբեկք եղեն ընդ փառաւոր թաղումն սրբոյն Խաչատրոյ, և գնացին առ փաշայն և չարախօսք եղեն զքրիստոնէիցս, թէ ժողովեցան քրիստոնեայքն ամենեքեան ի վերայ սպանելոյն այնորիկ, և իբրև զվկայ և զնահատակ բազմախումբ հանդիսիւ և մեծաւ փառօք թաղեցին զնա, և այնու ցուցանեն զիւրեանց հաւատն ճշմարիտ զոլ,

1 Ս. *զհրաման*
2 Ս. *բայց փխ այլև տասն և հինգ*
3 Ա.ՐԴ *աշխարհականք*
5 Գ *բազմութիւն*
6 ՐԴԴ *յոլով*
8 Ս. *ջերմեռանդութիւք* ՐՆ *փափաքանօք*
9 ՐԴԴ *ցվերջինք*
12-13 ՐԳՆ *նահատակաց*
15 Ի: *գերեզմանին* Ս. *պահնորդք, պահանորդք*
17 ՐԻ: *ի քրիստոնէից*
19 ԱԴԻ: *յառաւօտուն*
20 Ա *բազումք*
22 Ս. *դջուր* Ա *զբժշկութիւն*
23 Ս. *հիւանդք* Ա. *դջուր* ԴԻ: *այնուիկ*
23-24 Ա.Դ *զաւտղջութիւն* Գ *աւտղջութիւնք*
24 ՐԴԴԵ *սրբոյն* ՐԳՆ *Խաչատրի*
26 Ս. *շնորհն*
27 ՐԳՆ *Խաչատրի* Ս. *զայսպիսի* ՐԴԴՆ *խնամք*
29 ԴՆ *որ*
30 Ա.ՐԴԴԵՔ *զչարացան* ՐԴ *նախանձաբեկ*
30 31 ՐՆ *Խաչատրի* Գ *Խաչատուրի*
31 Ա.ՐԴ *զքրիստոնէից*
32 Գ *ամենայն փխ ամենեքեան* ՐԴԴԵ *այնմիկ փխ այնորիկ*
33 Ս. *բազմամբոխիւ*

և զմեր հաւատս սուտ: Վասն որոյ հրամայեաց փաշային, թէ զգոյշ կացցին զօրականք յանցս ճանապարհաց, զի ի վաղուեան աւուրն՝ յորժամ գնասցին քրիստոնեայք ի դերեզման սպանելոյն վասն այգահող կատարելոյ, յայնժամ զամենեսեան կալեալ և բերեալ արասցեն ի կալանս, զի ես դատապարտեալ զնոսա տուգանեցից. և զայս չարախօսութիւնս և զխորամանկութեան խորհուրդս ոչ դիտէին բնաւ քրիստոնեայքն, այլ Աստուած ճիրկեաց զժողովուրդն իւր սուտ ինչ պատճառաւ: Զի յայնմ աւուր այր մի փաշալու, և այր մի քաղաքացի սպահի պատուաւոր կուռեցան ընդ իրեարս, և որք քաղաքացի սպահիք և երկիչարիք էին զինուորական դասք, քամահանս ինքեանց համարեալ զայն՝ վրէժխնդիրք եղեն, և կանգնեցան ի կռիւ ընդ փաշային, և արգելեալ փակեցին զփաշայն զօրօքն իւրովք ի մէջ միջին բերդին շաբաթ մի. և փաշայն և քաղաքացիքն այնու խռովութեամբն պատաղեալք եղեն, և քրիստոնեայքն աղատեցան բարեխօսութեամբ սրբոյն Խաչատրոյ և ողորմութեամբն Աստուծոյ բարերարին: Եւ եղև նահատակութիւն սրբոյն Խաչատրոյ ի թուականութեանս Հայոց ՌՃԱ. յՕգոստոս ամսոյ Ի. ի կաթուղիկոսութեան տեառն Փիլիպպոսի որ ի բարձրագահ աթոռն ի սուրբ Էջմիածին, և ի թագաւորութեան Օսմանցւոց սուլթան Մահմետին, որ նստէր ի Կոստանդնուպոլիս մեծ քաղաքին: Եւ արդ խնդրեսցուք մեք հաւատացեալքս, զի զամենայն քրիստոնեայս աղաւեսցէ ի մարդադէմ գազանաց և յանիրաւաց, բարեխօսութեամբ սրբոց իւրոց Տէրն մեր Յիսուս Քրիստոս. որում փառք յաւիտեանս. ամէն:

ԳԼՈՒԽ ԽԶ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՍԻՐՈՒՆ ԱՆՈՒԱՄԲ ՔՐԻՍՏՈՆԷԻՆ

Այր ոմն՝ որում անունն էր Սիրուն, և էր սա յաշխարհէն Վասպուրականի ի գաւառէն Գնունեաց՝ որ այժմ ասի Ամուկ, ի գեղջէն՝ որ կոչի Ալիւր. և էր ինքն ազգաւ Հայ և հաւատով քրիստոնեայ. և քրիստոնէից զաւակ, ունէր մայր և եղբայր, որք մուծին զնա ի կարգ աշխարհի, և ածին նմա կին. և վասն մարմնաւոր կարեաց իւրոց այրս այս Սիրուն յարեցաւ առ այլազգի մահմետական ոմն, առնոյր ի նմանէ վարձս, և ծառայէր նմա պաշտաւականութեամբ վասն վարձուն: Եւ եղև յաւուրս գարնանոյ, զի տէրն Սիրունին առաքեաց զնա ի քա-

1 Ր*ն զգուշ*
3 Ա*Դ չիք վասն Դ դերեզմանն Ա. սպանանելոյն*
5-6 Ա.Բ*Գ*Դ*Ե զչարախօսութիւնս*
9 Բ*Գ*Դ*Ե որ*
10 Գ*Ե ընկիչարիք Ա. զինուորականք*
14-15 Բ*Գ*Ն խաչատրի*
16 Ա*Գ*Դ*Ն սրբոյս Բ*Գ*Ի խաչատրիս Բ*Գ*Դ*Ե հայոցս*
16-17 Դ *յօգոստոսի*
17 Գ *չիք որ*
18 Ա *աթոռն սուրբ էջմիածին*
19 Ա. *մեծի*
20-23 Ա*Դ չիք Եւ արդ... ամէն*
27 Ա.Բ*Դ*Ե *որոյ անունն էր* Ա*Դ չիք և*
28 Բ*Ն *յԱմուկ*
30 Ա *զմայր և զեղբարս* Բ*Գ*Ե *եղբարք* Դ *զմայր և եղբարս*
31 Ա *զկին* Ա *մարմնաւորաց*
33 Ա *զվարձս*
34 Դ *զայրնայնոյ* Բ *Սիրուն*

զաքն Նլաթ, զի բերցէ միրգ վասն ընտանեաց իւրոց առ ի ուտել. և նա գնացեալ էառ կնոաս նբարձ ձիոյն, և նբեր ի վան քաղաք, և մինչդեռ ի մէջ քաղաքին վանայ քարշէր զձին բեռամբն ի մէջ պողոտայիւն, եկին ժողովեցան ի վերայ նորա մանկունք մահմետականաց, և իւրաքանչիւր որ ընթացեալ յափշտակէր կնոաս ի բեռանէ անտի, իսկ Սիրուն ոչ թողոյր յափշտակեալ, այլ հալածէր զմանկունսն. և ոմն ի մահմետականաց մանկանցն առեալ բռնաբար և հնար զՍիրուն քարիւն. իսկ Սիրուն առեալ զքարն ձգեաց առ ձգողն, և զիպեցաւ քարն ի գլուխ տղային և վիրաւորեաց, և այնու պատճառու անկաւ մանուկն ի մահիճս և հիւանդացաւ յամիսս երկու, և յետոյ սատակեցաւ տղայն ի պատճառէ վիրացն։ Իսկ տէրն Սիրունին փախոյց զՍիրունն, զի թերևս փրկեսցի ի ձեռաց մահմետականաց, իսկ Սիրունն գնաց ի դիւղն իւր յԱլիւր ի տուն իւր։

Իսկ Ալիւր գնդջ շահնէքն՝ որք էին մահմետականք, ըմբռնեցին զՍիրուն և արարին ի կալանս. իսկ քրիստոնեայք գնդջն յոլով կաշառս նուէն շահնոցն, զի թողցեն զՍիրուն, և նորա ոչ թողին, այլ զդացուցին ընտանեաց սատակեալ մանկանն, և նոքա լեալ վրէժխընդիր արեան մեռելոյն՝ գնացին առ փաշայն, առին զօրականս և առաքեցին զկնի Սիրունին, որոց գնացեալ ածին զՍիրունն ի քաղաքն վան առ փաշայն։ Իսկ փաշայն առաքեաց առ դատաւորն և առ մուֆթին, և հնարց թէ դի՞նչ հրամայեն օրէնքն Մահմետի վասն առնս այսորիկ, մահապա՞րտ դոլ և մեռանիլ, թէ անպարտ դոլ և ազատիլ. և նոքա ոչ համարեցան զՍիրունն մահապարտ, այլ անպարտ և ազատ, վասն որոյ և փաշայն ոչ սպան զՍիրունն։

Բայց սուխտէք քաղաքին, որք ծարաւիք են արեան քրիստոնէից, ոչ անէսային փաշային և զադուն և մուֆթոյն, այլ գումարեալք ի միասին երկու և երեք հարիւր սուխտաւք և պրոհ տուեալ ժողովեցան ի վերայ անպարտ երիտասարդ Սիրունին, ամենեքեան մերկացուցեալ զսուրս իւրեանց ի վերայ Սիրունին թուր և խանջալ, մեծաբան խրոխտանօք ահացուցանէին զնա թէ դարձիր ի հաւատս Մահմետի և տաճկացիր, ապա թէ ոչ սրախողխող և քարկոծ լեալ մեռանիս ի ձեռաց մերոց։ Այլ և բերին բարակ պարան, և նովաւ ամրապոյն պատեցին զերկոսին քաղուկսն ուսոցն մինչև ցթաթք ձեռացն սաստիկ պնդութեամբ, և ի սաստիկ պնդութենէն պայթեալ հերձան բերան

1 Ա.Դ: *զլաթ* ՐԳՆ *զըլաթ* Ա.ՐԳՆ *ի յուտել*
2 Ս. *զկնոաս*
3 Գ *քաշէր*
5 Ա. *զկնոաս*
7 ՐԳՆ *մահմետական*
8 Ա. *զիպաւ*
10 Ա.Դ *երկուս*
11 ՐԳՆ *զՍիրուն*
12 ՐԳՆ *Սիրուն*
14 Ս. *Ալիր* ՐԳՆ *դիղի*
15 Ա. *գյոլով*
17 ՐԳՆ *ընդանեաց*
19 ՐԳՆ *զՍիրուն*
21 Ա.Գ.Ն *այսմիկ*
23 ՐԳՆ *զՍիրուն*
24 Գ.Ն *զՍիրուն*
26 Գ *զադոյն*
28 Ա *անպարտի երիտասարդին* ՐԳՆ *երիտասարդին*
29 Ա.ՐԳՆ *թիւր* Ա. *մեծաբանօք*
32 Ա. *զրատակ*
33-34 Ա. *սաստիկ պնդութեամբ... ի սաստկէ պնդութենէն* Ր *պնդութեամբ... պնդութենէն* Գ *պնդութենէն*
34 ՐԳՆ *բերանք*

եղնգացն, յորոց հոսեալ արիւնն հեղանէր ի ձեռացն. այլ և ղբազմագոյն տեսակս տանջանաց ածին ի վերայ նորա, հարկանել և կառափնատել և ընդ քարշս տանել և անստուագ պահել ի կալանս, և ամենևքեան իբր ղկատաղի գազան զատամունս ի վերայ կրճտել, և իւրաքանչիւր ոք զսուր իւր ի վերայ նորա շողացուցանել, և ասել թէ տաճկացիր, ոչ միայն փրկիս ի մահուանէ, այլ և բազում արդիւնս և բարութիւնս հաստուցանիմք քեզ: Իսկ Սիրունն ոչ բաւանէր ասելով. «Զլոյս հաւատս իմ ոչ թողում, և խաւսար օրինաց ձերոց ոչ հաւանիմ»: Այլ և մայրն և եղբարքն և այլք բարեկամք նորա հանապազ ասէին նմա լալով, թէ այժմ վասն փրկելոյ զանձն քո առ երեսս զաւանիս զնոցա զաւանութիւնն, և յետոյ դնասցես յայլ յաշխարհս և յիշխանութիւնս քրիստոնէից, և անդ պաշտնացես համարձակ զքրիստոնէական հաւատն քո: Եւ թէպէտ բազում աղաչեցին, սակայն նա ոչ էառ յանձն ասելով, թէ առօրեայ մահս՝ որ արդ հասեալ է ի վերայ իմ, նաև·անդէն ուր և լինիմ պատահելոց է ինձ, և վասն սուղ ինչ ամաց կենացս զիա՞րդ կորուծից զհաւատս իմ, և եղէց դատապարտեալ յԱստուծոյ: Եւ փնքն Սիրուն ուրախ էր և բերկրեալ սրտիւ վասն իւրոյ խոստովանութեանն և նահատակութեան, և վկայ էր գոյն երեսացն, որ օր յաւուր առաւել պայծառանայր տեսիլ երեսացն և դիմացն:

Իսկ մարդադէմ գազանք սուխտայքն յաւուրս քսան կապեալ զձեռս ի յետս գլուխ ի բաց շրջեցուցանէին ի մէջ քաղաքին Վանայ, զի փաշային և զադին և մուֆթիին ոչ տային հրաման սպանանելոյ. և վասն քինու նոցին միակամ եղեալ սուխտայիցն ամենեցուն՝ յաւուրս երիս արգելեալ խափանեցին զկանչելն, զոր ի գլխոյ մինարային կանչեն ի ժամ աղօթիցն իւրեանց, ասելով թէ, խանդարեալ խափանեցաւ, և յերկիր սուզաւ հաւատս մահմետական, զի անհաւատ Հայ զմուսուրման սպանեալ է: Եւ ըստ հանապազորդ սովորութեան, զոր կապեալ շրջեցուցանէին զՍիրուն, բերեալ հասուցին ի նալբանդոցի շուկայն, և անդէն ի սուխտայիցն ոմն չարագոյն, որ ի ձեռին իւրում ունէր մերկ ղխանջալն, ուժգին բախմամբ եհար ի թուլակուշտն Սիրունին, և նա անկաւ ի վերայ երեսացն. և այլ ոմն սուխտայ առեալ ծանր վէմ մի եղարկ ի վերայ գլխոյ Սիրունին և ջարդեաց զգլուխն, և ի բաց ցնդեցաւ ուղեղ գլխոյն, և այնու էառ Սիրուն զվախճան կենաց, և մեռաւ:

1 ԴԳԽ *եղընգանցն* ԱԳ *հեղանիր*
2 Խ *բազմագոյն* Գ *տանջանացն*
3 ՍԳ *տանիլ*
7 Ա. *զբազում* Ա. *զբարութիւնս* ԲԳՍԼ *հաստուանիմք*
8 ԲԳՆ *Սիրուն*
8-9 Ա. *խաւարից*
9 ԲԳԳ *այլ*
11 Ա. *զդաւանութիւնն նոցա* ԲՆ *դաւանութիւն*
12 Գ *աշխարհս*
13 Ա. *բազմից*
16 Ա. *սղից* ԲԳՆ *կենաց*
18 ԲԳՆ *խոստովանութեան*
19 ԱԲԳԴՆ *օրաւուր*
20 Խ *երեսացն*
21 ԲԳ *ձեռս*
23 Ա. *զհրամանն*
24 Գ *յերիս*
25 ԱԲԳԴՆ *մինարային*
26 ԲԳՆ *խանկարեալ*
28 Ա. *հանապազորդի* Գ *սովորութեանն*
29 ԱԲԳԴՆ *նալբանտոցի*
30 Գ *անտէն*
32 Բ *էառ փխ առեալ* Ա. *զծանր*
34 ԱԳՆ *ուղիղ*

Ապա եդին պարան յոտանս, և քարշեցին տարան արտաքոյ քաղաքին ի տեղին ուր զմահապարտան սպանանեն, և անդէն զմեռեալ մարմինն քարկոծեցին, այնքան՝ մինչ որ ծածկեցաւ ի քարանցն, և ապա թողեալ ի բաց գնացին արեանաթոյր գազան սուխտէքն։

Եւ ի նմին գիշերի Տէրն Քրիստոս փառաւորեաց զնա լուսովն երկնային, որ էջ ի վերայ նորա, զոր ոչ միայն քրիստոնեայք, այլ և յոլով մահմետականք տեսին՝ և առ ամենեսին պատմէին. մինչև եհաս համբաւն առ նորին սպանող սուխտայան, յորոց ոմանք եկեալ հաւատեաւ տեսին՝ և գնացեալ պատմեցին այլոցն. և նոքա առաքեցին ի սպասաւորաց իւրեանց արս, որոց եկեալ գտին զմարմինն շանց մեռելոց, և բերեալ արկին ի վերայ սրբոյ մարմնոյ Սիրունին, զի թերևս ամփոփեսցի լոյսն, այլ լոյսն ոչ ամփոփեցաւ մինչև ցլուսանալ տունջեան՝ շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Իսկ ի վաղուեան աւուրն մատուցեալ քրիստոնէիցն առ փաշայն և առ զադին խնդրեցին հրաման թաղելոյ, որոց հրամանաւ եկին քրիստոնեայքն և բարձեալ տարան ի դիրս հասարակաց քրիստոնէից, և անդ թաղեցին զՍիրուն անուն խոստովանողն հաւատոյս քրիստոնէութեան։ Եւ եղև նահատակութիւն Սիրունիս ի ՌՃԴ. թուականիս մերոյ, յամսեանն օգոստոսի, որ օր հինգն էր ամսոյն, ի կաթուղիկոսութեան տեառն Յակոբայ, որ ի գերագահ աթոռն ի սուրբ էջմիածին, և ի թագաւորութեան Օսմանցւոց սուլթան Մահմատին, որ նստէր ի Կոստանդնուպոլիս մեծ քաղաքին։ Իսկ վէմն այն՝ որով ջարդեցին զգլուխ սրբոյ Սիրունին, այժմ լուանան և ի վերայ հիւանդաց հեղուն ջուրն, և հիւանդն առողջանայ շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որում փառք յաւիտեանս. ամէն։

ԳԼՈՒԽ ԽԷ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՄԽԻԹԱՐ ԱՆՈՒԱՄԲ ՔՐԻՍՏՈՆԷԻՆ

Այր ոմն Մխիթար անուամբ քրիստոնեայ՝ որ էր ի քաղաքէն Վանայ և յազգէն Հայոց, քրիստոնեայ ծնողաց պատակ, և էր այրս այս Մխիթար երևելի ի մէջ քաղաքին Վանայ առաջի փաշային, և զադոյն և ենկիչար աղատոյն և այլոց իշխանացն ամենեցուն, վասն զի կարի ձիավարէր և զինախաղաց և ուժնդակ, այլ և խելօք կորովի, և խօսիւք քաջաբան, վասն որոյ ամենայն ենկիչարիքն և սպահիքն և յոլովք փշխանացն նմա բարեկամք էին։

1 Ա. *քարշեալ* ԲԳ և *քարշեցին և տարան* Դ *քարշեցեալ*
3 Բ *չիք և*
4 ԲԳՆ *արիւնարբու*
6 Ա. *երկնայնով*
7 Ա *յոլովք*
8 ԲԳՆ *սուխտայքն*
10 Ա. *զարս* Ա.ԲԳԴՆ *մարմինս*
15 Ա. *զհրաման*
16 ԲԳԴ *հասարակ*
17 ԲԳՆ *քրիստոնէութեանս*
18 Է *Սիրունին* ԲԳԴՆ *մեռեալ* Է *չիք օգոստոսի*
19 Ա.Դ *հինգ*
21 Ա. *մնծի*
22 ԲԳՆ *զգլուխն սրբոյն*
24 Դ *չիք ամէն*
30-31 Է *զադուն... Աղասուն*
33-34 Ա.ԲԳԴՆ *իշխանացն*

Եւ եղև ղի ասացեալ Մխիթարս յաւուր միում ընդ իւրոց յարակից արանց նստեալ ի տան իւրում քնարիւք և երաժշտական նուագարանօք գինի ըմպելով ուրախանային, և ի լուր երաժշտական եղանակին ժողովեալ յոլով տղայք մահմետականաց ի դուրս և յերդիս և ի վերայ որմոց զբօսնուին։ Իսկ հայրն Մխիթարայ եկեալ առ տղայսն ի բաց վարէր ի տեղւոջէն, և ոմանք ի տղայոցն հակառակեալ հարին ընդ նա, և նա դնացեալ ի տուն պատմեաց՝ թէ տղայքն հարին ղիս. յայնժամ Մխիթար ըստ արիական քաջութեան իւրոյ շարժեալ ի ցասումն բարկութեան՝ եկեալ ի տանէն մերկ ունելով զխանջալն ի ձեռին իւրում, և սկսաւ հետամուտ լինել զկնի մանկանցն, և հալածելով հայհոյութեամբ անարգէր զհատատս և զօրէնս մահմետականաց։ Եւ ի նմին ժամու այր ոմն մահմետական անունն Հաջի էիբ, որ էր մերձակայ գրացի Մխիթարին, տեսանէր, և լսէր զհայհոյանս և զանարգանս, զոր տայր Մխիթար մահմետական մանկանցն, ասաց մեղադրանօք առ Մխիթար. «վասն՛ի հայհոյանացդ, զի անպատեհ է զայդքան հայհոյանս ասել մանկանց, որք են մահմետականք հաւատով»։ Իսկ Մխիթար թողեալ զմանկունսն, և սկսաւ հետամուտ լինել զկնի Հաջի էիբին և հալածելով հայհոյէր, և ի հալածելն պատահեցաւ անդէն եղբայր Դուլլար աղասոյն, և նա ևս մեղադրանօք ասաց Մխիթարին. «Մի՛ առներ զայդպիսի անպատեհ գործդ». իսկ Մխիթար դարձեալ ի նա, և սկսաւ բարկութեամբ զնա ևս հայհոյել։

Իսկ որ Հաջի էիբն էր գնացեալ առ սուխտայսն և ամբաստան լինելով զՄխիթարէն, սկսաւ վշտագին սրտիւ պատմել նոցա զբանս և զգործս Մխիթարի, յայնժամ ժողովեալ բազում սուխտայք ի միասին եղեն վրէժխնդիրք անարգանացն հատատոյ Մահմետի, գնացեալ ծանուցին փաշային, և սորին ի նմանէ զզօրականս և եկեալ կալեալ կապեցին զՄխիթարն և տարան ի բանտն փաշային, և արարին բանտարգել։ Իսկ վանայ վերին բերդի ենիչարիքն՝ որք էին բարեկամք Մխիթարին, անտեղեակք էին այսոցիկ, և յորժամ լուան թէ կալան զՄխիթար և արկին ի բանտ, յայնժամ չիսուն ենկիչարի և երկու շօրվաջի եկեալ ի դուրս հանին ի բանտէն զՄխիթար և առեալ տարան ի վերին բերդն ի մէջ իւրեանց, և անդ պահեցին աւուրս երկուս, եբրև տեսին թէ հանդարտեցան սուխտայքն՝ և այլ մահմետականքն, և ոչինչ ասեն զՄխիթարէն, թողին զնա, որ գնաց ի տուն իւր։

2 Դն *քնարուք*
2-3 Ս. *երաժշտականօք... զգինի*
3 Ս. *երաժշտականի*
5 ՐԳԴն *Մխիթարին*
6 ՐԳԴն *ի տղոցէն*
8 Ս. *արիականի*
10 Ս. *չիմ և (սկսաւ)* ԱՌ *լինիլ*
13 Ս. *Մխիթարայ*
14 Ա. *մահմետականաց*
16 Ա. *մահմետականաւ*
18 Դն *եղբայրն*
19 Ս. *Մխիթարայ*
22 ՐԳԴն *առ սուխտաներն* ՐԴն *անբաստան*
23 Ս. *վշտագնիւ*
24 Ս. *Մխիթարայ* ՐԳԴն *Մխիթարին*
Ս. *բազումք*
25 ՐԳԴն *հաւատոյն*
26 ՐԴն *զօրականս*
27 ԱՐԳԴն *զՄխիթար*
28-29 Ա. *Մխիթարայ*
29 ՐԳԴն *անտեղեակ*
30 Գ *շօրուաչի*
31 Գ *զՄխիթարն*
34 ՐԳն *զՄխիթար փխ զնա*

Իսկ անօրէն սուխտաւքն վերստին ժողովեցան՝ և գնացեալ կալան զՄխիթար, կապեցին և տարան առ փաշային, և փաշային առաքեաց առ մուֆթին և առ զադին էհարց, թէ զինչ հրամայեն օրէնքն Մահմետի վասն առնս այսմիկ սպանանիլ թէ ոչ, և նոքա ոչ ետուն զհրաման սպանման. վասն որոյ և փաշային ոչ սպան, այլ հրամայեաց թողուլ աղաւս: Իսկ որ սուխտէքն էին ոչ թողին, այլ կապեալ զձեռսն ի յետս և դլուխ ի բաց և բոկոտն, այր և անդր շրջեցուցանէին ի դրունս իշխանաց, հարկանէին, կառափնատէին, թքանէին, և պէսպէս կերպիւ տանջէին, և ասէին. «Ուրացի՛ր զՀաւատսն քո՝ և պաշտեա զմեր հաւատս, ապա թէ ոչ սրախողխողեալ և քարակոծ լեալ մեռանիս ի ձեռաց մերոց»: Զայսպիսի բանս ասելով մերկացուցանելով զսուրբ իւրեանց, զոր ի ձեռսն ունէին, խաղացուցանէին ի վերայ նորա: Իսկ որ Մխիթարն էր յամենայն տեղիս ուր և շրջեցուցին զնա բարձրաձայն և համարձակ առաջի ամենեցուն հայհոյէր զՄահմետ՝ և զնորին հաւատս, և զօրէնսն. և բազում բանիւք անարգէր, ոչ թէ զմի օր՝ այլ յամենայն աւուր, և արիւթիամբ սրտի իւրոյ ասէր. «վասն անտի և դուղնաքեայ մահուան մխթէ երկուցեալ ի ձէնջ ուրանա՞մ զՀաւատսն իմ ճշմարիտ, և զՏէր Աստուածն իմ զՔրիստոս: Այլ և ամենայն բարեկամք Մխիթարին և ծնողքն և յարակիցք երիտասարդն եկեալ առ նա մաղթելով ասէին թէ, առ ի հաճել զկամս սուխտայիցն առ երեսս և առ ժամուս ասա՛ բան ինչ, և յետոյ գնացեալ յայլ աշխարհ պաշտեացես զՀաւատսն քո»: Իսկ Մխիթար ամենևին ոչ հաւանեցաւ բանից նոցա, այլ արիական սրտիւ, և պայծառ դիմօք և համարձակ դաւանէր զՔրիստոս Աստուած առաջի սուխտայիցն՝ և անարգէր զօրենս Մահմետի: Այլ և փաշային և ենկիչար աղաւսին առաքեցին առ Մխիթար և խոստացան տալ նմա բազում գանձս և ստացուածս. և պատուական ձիս և ղէնս, և պետական իշխանութիւնս. զի թերևս ասասցէ զբան ինչ ի հաճուկս սուխտայիցն, և ազատուցէ զանձն իւր ի մահուանէ. քանզի կարի յօժար կամօք խնայէին ի նա վասն արիագոյն և զարմանալի քաջութեան նորա, և Մխիթար ոչ հաճեցաւ ի բանս նոցա վասն քրիստոսական հաւատոցն: Իսկ սուխտէքն հանապազօր այր և անդր ի դրունս իշխանացն շրջեցուցանէին, քանզի փաշային, և զադին, և մուֆթին ոչ ետուն հրաման սպանանելոյ, որոյ վասն զայրացան սուխտէքն, և զամենայն մաչիթաց կանչելն արգելին, զոր ի ժամ աղօթից իւրեանց ելեալ ի գլուխ մինարայիին կանչեն. զայս կանչելս յաւուրս

1 Ա.ՐԳԴՆ *սուխտէքն*
3 Ի: *չԻՔ էհարց*
4 Ա.ԴՆ *սպանանել* ԲԳԴՆ *հրամայն*
8 Ա. *պէսպիսաւ*
10 ԲԳԴՆ *սրախողխող լեալ փխ սրախողխողեալ*
11 ԲԳՆ *զմերկացուցեալ սուրս Դ սուրս*
12 Ա. *զորս*
12-13 Ա.Դ Ի *Իսկ Մխիթար*
13 Ի: *զնոսա*
15 Ա. *բազմօք*
18 Ա. *ամենեքեան*
19 Ա *յարակից*
20 Ի *մաղթելով* Ի: *չԻՔ զկամս*
21 ԲԳՆ *առժամուս* Ա. *զբան*
23 Ա. *արիականաւ* Ա. *պայծառօք*
26 Ա. *զբաղում*
27 Ա. *զղէնս և զպետական* ԲԳՆ *բան*
29 Ա. *արիագունի և զարմանալւոյ*
30-31 Ա. *քրիստոսականաց*
33 Ա. *զհրաման*
34-35 Ա.Դ *չԻՔ զոր... կանչելս*
35 ԲԳԴՆ *մնիրային*

երիս խափանէին ասելով. «Հաւատան Մահմետի խանգարեալ խափանեցաւ՝ և յերկիր սուզաւ, զի այր անհաւատ զհաւատան մարգարէին Մահմետի յայտնի և համարձակ հայհոյէր»։

Եւ յաւուր միում մինչդեռ շրջեցուցանէին ի պողոտայս քաղաքին, ոմն չարապոյն ի սուխտոցն, որ և մերկ ի ձեռին ունէր զխանջալն, ուժգին բախմամբ եպարկ ի թիկնամէջն Մխիթարին, և թռուցեալ ցայթևեցաւ արիւնն ընդ երեսս որմոյն՝ որ մերձ էր, յորմէ բախմանէ անկաւ Մխիթար ի վերայ երեսացն, և միւս ևս սուխտայիցն դիմեալ ի վերայ՝ սրախողխող արարեալ ծակոտեցին զնա՝ և անդէն մեռաւ։ Եւ ապա հդին զպարան յոտս նորա և քարշեալ տարան արտաքս ի քաղաքէն ի անդն, յորում զամենայն մահապարտսն սպանանեն, և անդէն ժողովեալ բազում մահմետականաց քարկոծեցին զմեռեալ մարմինն, այնքան, զի ի ներքոյ քարանցն ծածկեալ անյայտ եղև մարմինն և ապա թողեալ ի բաց գնացին արիւնարբու և մարդադէմ գազան սուխտէքն։

Իսկ ի նմին գիշերի գիշերապահ ենիչարիքն, որ ի վերին բերդին էին, տեսանէին զի լոյս մեծ փայլատակեալ և ճառագայթեալ կայր ի վերայ նորա, որոց ընդ լուսանալ առաւօտուն ևկեալ ի մէջ քաղաքին ամենեցուն պատմէին զտեսիլն զայն, և յերկրորդումն աւուր մատուցեալ քրիստոնեայքն առ փաշայն, և առ ղադին խնդրեցին հրաման թաղելոյ զսուրբն, և նոքա եւուն հրաման. վասն որոյ գումարեալ ամենայն եկեղեցւոյ քահանայք և ժողովուրդք բազմախուռն հանդիսիւ, բարձին զպատուական մարմին նորա, և տարեալ ի դիրս Հայոց, ի կարգս քրիստոնէից թաղեցին զնա սաղմոսիւք և օրհնութեամբ ի փառս Քրիստոսի պսակողին զնա։ Եւ եղև նահատակութիւն սորա ի Թուականիս մերում ՌՃԵ. ի Նոյեմբեր ամսոյ ԺՐ. ի կաթուղիկոսութեան մեծափառ Աբրոսայն սրբոյ էջմիածնի տեառն Յակովբայ, և ի թագաւորութեան Օսմանցւոց սուլթան Մահմետին, որ նստի ի Կոստանդնուպոլիս մեծ քաղաքին։ Արդ՝ խնդրեսցուք ի Քրիստոսէ, զի բարեխօսութեամբ սրբոց իւրոց ողորմեսցի ամենայն քրիստոնէից և նմա փառք յաւիտեանս ամէն։

1 Ա.Դ *յերիս* Ա.Դ չիք *խափանեցին* ԲԳՆ *խանգարեալ*
2 Բ *յերկիրս*
3 Ա.ԲԳԴՆ *հայհոյէ*
4 Է *պողոտայս*
5 Բ *իւեր*
6 Ա. *ուժգնիւ* Է *բաղխմամբ*
7 Բ *արիւն* Ա.Դ *բաղխմանէ*
8 Ա. *և այլեւս սուխտայքն* ԲԳՆ *սուխտայքն*
10 ԲԳԴՆ *պարան*
12 Ա. *անթիւ բազմութիւն* ԲԳՆ չիք *բազում* Դ՚Է *բազում անթիւ*
13 ԲԳԴՆ *որ փխ զի*
14 Ա.ԲԳՆ չիք *և (ապա)*
15 ԲԳՆ *սուխտայքն*
18 ԲԳՆ *առաւօտին*
20 Ա. *զհրամանն*
21 Ա. *զհրամանն...*
22 Ա. *ամենայնի* Բ *ժողովուրդ*
26 Ա.ԳԴՆ *ի Նոյեմբերի*
27 Ա. *մեծափառի* Է *տէր*
29 Ա *մեծի*
29-30 Ա.Դ չիք *Արդ խնդրեսցուք... սրբոց*
30-31 Ա.Դ չիք *իւրոց... ամէն*

ԳԼՈՒԽ ԽԸ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱԻՏԻՍ ԱՆՈՒԱՄԲ ՔՐԻՍՏՈՆԵԻՆ

Այր ոմն ազգաւ Հայ և հաւատովն քրիստոնեայ, որում անունն էր Աւետիս, և էր յերկրէն Ոստանայ, և վասն կարեաց աղքատութեան իւրեանց ամենայն ընտանեօք իւրեանց, ելեալ գնացին յերկիրն Բարմայ, որ այժմ ասի Ախբակ. և բնակեցան ի վիւղն Բաբլատան: Եւ այսպս այս Աւետիս վասն մարմնաւոր կարեաց իւրոց յարեցաւ առ քուրդ իշխան ոմն, որում անունն էր Բաքդար աղայ, որ էր իշխան բերդին, որ Լօռիքան կոչէն, և ետաց Աւետիս ի սպասաւորութիւն Բաքդար աղայ իշխանին առս երկուս:

Եւ եղև դի ոմանք ի ծառայից Բաքդար աղային, որք էին հաւատով մահմետականք և աղգաւ քուրդ, և ծառայակիցք Աւետսի, նախանձեալ ընդ նմա, յաւուր միում կացին առաջի Բաքդար աղային ասելով զԱւետսէ, թէ մեք բազում անգամ լուաք ի դմանէ, դի ասէր. «Դառնամ ի քրիստոնէական հաւատոցս՝ և լինիմ մահմետական հաւատով», կարի ճշդիւ լինէին վրէժխնդիրք. և առիպէին զպարոնն դարձուցանել զԱւետիսն ի քրիստոսական հաւատոցն: Իսկ իշխանն Բաքդար աղայ հարց յԱւետսէն վասն ճշմարտութեան իրացն, և լուաւ պատասխանի, թէ ոչ ուրանամ զքրիստոսական հաւատս իմ, այլ դոքա զուր ասեն ի վնաս իմ զբանդ զայդ: Վասն որոյ ոչ լուաւ Բաքդար աղային վկայութեանց իւրոց ծառայիցն, այլ սաստեաց իւրոց ծառայիցն լսել, և նեղեաց Աւետիսն ասելով. «Թոյլ տուք դմա կեալ ի հաւատս իւր»: Եւ թէպէտ Բաքդար աղային սաստեաց չարախօսացն, զի խանգարեսցի բանն, սակայն ոչ խանգարեցաւ, այլ օր յաւուր առաւել ճարակեցաւ բանն մինչև հասս առ մեծ իշխանն Խոսրով փաշայ:

Եւ էր Խոսրով փաշայ եղբայր Սղդիշէր մեծ պարոնին՝ և տէր աշխարհին, և իշխան ի վերայ Բաքդար աղային, զոր և վկայքն չար կալեալ զԱւետիսն տարան առաջի Խոսրով փաշային, որ բնակէր ի բերդին՝ որ կոչի Փիզան, և զնոյն վկայութիւն վկայեցին առաջի նորա: Եհարց Խոսրով փաշայ զԱւետիսն վասն իրացն ճշմարտութեան, և նա դաւանեաց զքրիստոսական հաւատն, և Խոսրով փաշայ հրամայեաց ունել զնա ի կալանս. և զկնի աւուրց բերեալ առաջի իւր եհարց զնա,

4 Ա. *որոյ*
6 Ա. *ամենիւք Ռն ընդանեօք*
9 Ա. *որոյ* Ա. *զոր*
13 Ա. *քուրդք* Գ *մահմետական*
14 Է *կային*
14-15 ՍՊ *զԱւետսէն*
16 Ա. *քրիստոնէականաց* Ա. *մահմետականաւ* Բ *հաւատով*
16-17 ՐԳԴՆ *և կարի... վրէժխնդիր*
17-18 ՐԳԴՆ *զԱւետիս*
18 Ա. *քրիստոսականաց* Գ *ի քրիստոնէական*
19 ՐԳԴՆ *յԱւետսէ* Ա. *զպատասխանի*
22 ԱԴՆ *ծառայից*
24 ՐԳՆ *աղայ*
24-25 ՐԳԴՆ *խանկարեսցի... ոչ խանկարեցաւ*
25 ԱՐԳԴՆ *օր աւուր*
26 Բ *մինչ որ էհաս*
27 Ա. *փաշայս... եղդիշերի մեծի*
29 ՐԳԴՆ *զԱւետիս*
31 ՐԳՆ *զԱւետիս*
33 ՐԳԴՆ *ունել*

և հգիտ հաստատուն ի հաւատս Քրիստոսի, դաւանելով զինքն քրիստոնեայ։ Եւ ասէր ի պատասխանին իւր թէ, զիա՞րդ մարթ է ինձ թողուլ զերկս և գնալ զհետ խաւարի, զի Քրիստոս ինքն լոյս է, սոյնպէս և հաւատն՝ որ առ ի նա. իսկ առաջնորդն ձեր՝ զոր մարգարէ ասէք, ինքն պատրիչ է և խաբեբայ, և ամենայն բանք իւր սուտ են։ Այնուհետև կամեցան նախ ողոքական բանիւք և հնարիւք՝ որսալ զնա. զի առաց խոսրով փաշայ. «Տամ քեզ զպարոնութիւն և զվիւղ, և զդուստր իշխանի, որում և դու հաւանիս», և բերեալ զպատուական երիվարն իւր ամենայն ոսկիակազմ սարուքն և կացոյց առաջի նորա, և առաց. «Լինդ իս հանապազ պահելով փառատուր, և մեծապատիւ իշխան ունիմ զքեզ եթէ հաւանեացիս իմոց բանից», և Աւետիս ոչ հաւանեցաւ։

Ապա կոչեաց խոսրով փաշայն զառաջնորդս ընդունայն օրինաց իւրեանց, հարցանէր ցնոսա թէ, զիա՞րդ հրամայեն օրէնքն գրոց ձերոց վասն առնս այսորիկ, որոց պատասխանի արարեալ՝ թէ առացեալ բանքն, որ զդմանէ իրաւացի, և հաւատոյ վկայիւք, անհնարին է կեալ դմա, եթէ ոչ հաւատովն Մահմետի, և կամ թէ անպատճառ մեռանիլ։ Եւ առ այս բան նախկին սուտ վկայքն եկեալ անդէն առաջի նոցա ևս վկայեցին զառաջին սուտ վկայութիւնն իւրեանց, և խոսրով փաշայն բազում անգամ առաջի իւր բերեալ զԱւետիսն և զնոյն բանն հրամայեաց նմա, թէ ուրացի՛ր զքրիստոնէական հաւատն քո, և ընկալ զմահմետական հաւատն, և ես զոր բարիս և խոստացեալ եմ առատիւլաբար տամ քեզ. և Աւետիս ոչ ուրացաւ զքրիստոսական հաւատն իւր։ Իսկ խոսրով փաշայն իբրև նաեւս թէ Աւետիս պինդ կայ ի հաւատն քրիստոսական, և ոչ կամի դառնալ ի նմանէ, վասն որոյ հրամայեաց արձակել ի կապանաց և թողուլ ի կամս իւր՝ կեալ հաւատովն Քրիստոսի։ Իսկ կարդացողք օրինացն Մահմետի մօլլայք և մուդարիսք ժողովեցան առ խոսրով փաշայն, և ի բանից գրոց իւրեանց խօսէին ընդ նմա թէ, պարտական ես դու բռնութեամբ ածել զնա ի ճշմարիտ հաւատս մեր, և թէ ոչ հաւանեացի սպանանել, և խոսրով փաշայն թօթափելով զօձին իւր ասաց. «Անպարտ եմ ես յարենէ առնդ այնմիկ, և անմասն յայդմ դատաստանաց, եթէ լսէք բանից իմոց, թողէ՛ք զդա, զի անպարտ է. և թէ ոչ թողուք դուք գիտէք»։

Իսկ մօլլայք և մուդարիսք ամենեքեան գումարեալք ի վերայ Աւետին, յափշտակեցին և տարան զնա ի մէջ իւրեանց, և սկսան զարդարել զնա աղնիւ և պատուական հանդերձիւ և անուշահամ կերակրօք և ըմպելեօք, և ախորժ բանիւք զուարճացուցանել զնա, և զամենայն

5 Ա. *բան իւր սուտ է* ԲԳՆ *բանքն իւր սուտ է*
6 Ա. *ողոքականօք*
7 ԲԳՆԵՆ *պարոնութիւն և վիւղ*
9 Ա. *ամենիւք ոսկիակազմօք* ԱԲԳՆ *չիք և (կացոյց)*
11 ԱԴ *Աւետիսն*
12 ԲԳՆ *փաշայ* Ա. *ընդունայնից*
13 ԴՆ *օրէնք*
14 ԲԳԴՆ *այսմիկ փխ այսորիկ*
14-15 Ա. *զպատասխանի... բանդ*
17 Ա.ԲԳԴՆ *նախկի*
19 ԲԳԴՆ *փաշայ*
20 Ա.Դ *չիք և* ԲԳՆ *բան*
22 ԲԳԴՆ *բարիք* Ա. *Աւետիսն*
24 ԲԳՆ *պինդ կայ*
28 ԲԳՆ *փաշայ*
31 Ա. *այդորիկ* ԲԳԴ *այդմիկ* Ա. *յայդ*
35 Է *չիք զնա*
36 Ա. *աղնուով և պատուականաւ* Ա. *անուշահամիւք*
37 Ա. *ախորժիւք*

խոստացեալն Խոսրով փաշային և կրկնակի տալ նմա խոստացան, և Աւետիս ոչ դարձաւ ի քրիստոսական հաւատոյն, այնուհետև իբրև տեսին թէ ոչ դարձաւ Աւետիս, սկսան չարչարել զնա պէս պէս օրինակաւ. և մանաւանդ զի ի պարանոցէն մինչև ցոտան զամենայն փափուկ տեղիս մարմնոյն ծակոտեցին ծայրիւ սրոյ, յորոյ մարմինն ոչ մնաց ձեռնաչափ տեղի մի անծակ, յորոյ յարևնէն նևրկևցաւ ամենայն մարմինն և զգեստ անձինն, որ պահողաց մարմինն սոսկացուցանէր: Իսկ Խոսրով փաշայն միւսանգամ խնդրեաց զԱւետիսն, իբրև ածին զնա առաջի նորա, տեսեալ զնա այնպիսի արիւնաթաթաւ մարմնով, սոսկացեալ զարմացաւ, և սաստիկ բարկութեամբ մեղադիր եղև մօլլայիցն. և յայնժամ ևս հրամայեաց թողուլ զԱւետիսն կեալ ի հաւատս իւր, իսկ արիւնարբու մօլլայքն ոչ թողին: Այլ առեալ տարան ի մէջ մէյդանին արտաքոյ բևրդին, և անդ ևս բազում անգամ սահիպեին զնա ասելով. «Ուրացիր զքո հաւատն և ընկալ զմեր հաւատն, ապա թէ ոչ հատանեմք զգլուխ քո»: և Աւետիս ոչ հաւանեցաւ և ոչ ուրացաւ. վասն որոյ սրով հատին զգլուխ նրանեալ առն Աւետսի. և ի ժամ նահատակութեան իւրոյ Աւետիս զերեսն իւր դէմ ընդ արևելս ունէր. և չարեաց արբանեակ մօլլայքն բռնութեամբ դարձուցանէին զդէմս նորա ի կողմն հարաւոյ, և սուրբն ոչ անսաց նոցա, այլ ուղղեաց զդէմս իւր ընդ արևելս, և այնպէս կատարեցաւ ի վերայ քրիստոսական հաւատոյ՝ դաւանելով զՔրիստոս Աստուած ճշմարիտ:

Եւ ի դիշերին յայնմիկ Տէր Քրիստոս փառաւորեաց զվկայն իւր նշանաւ երկնային լուսոյ, որ էջ ի վերայ նորա, որում եղևն ականատեսք ամենեքեան բնակիչք Փիլանայ բևրդին, և որք շուրջ զնովաւ էին, այլ և ինքն Խոսրով փաշայ՝ որ ի բարձրաւանդակէ տան իւրոյ հայեցեալ տեսանէր զսիւնաձև ճառագայթեալ լոյսն ի վերայ նորա. այլ և սպանող մօլլայքն. վասն որոյ սպանող մօլլայք փութացեալ բարձին անտի զմարմինն Աւետսին, և տարան յայլ իմն տեղի ի տան ուրումն պահեցին մինչև լուսացաւ օրն, և ապա կոչեցին զեղբայր Աւետսին, որում անունն էր Թաբաւուկ, հրամայեցին նմա բառնալ զմարմին Աւետսին և տանել թաղել: Որոյ ժողովեալ արս քրիստոնեայս, քահանայս և աշխարհականս՝ բարձեալ զնահատակն տարան ի գիւղն, զոր անուանեն Առակ, և անդ հանգուցին զնա ի դիրս տապանին սաղմոսիւք և օրհնութեամբ և երգօք հոգևորօք: Եւ եղև կատա-

37-1 (նախորդ էջում) Ա. *զամենեսեան*
1 ԱԲԳԴՆ չիք և *(կրկնակի)* ԱԲԳԴՆ *խոստացեալն*
2 Ա *ի քրիստոսականաց հաւատոյն* ԲԳԴՆ *հաւատոցն*
3 ԱԴԻ չիք *Աւետիս* Ա *պէսպիսեաւ*
4 ԱԲԳԴՆ *ցոտան*
8 ԲԳԴՆ *փաշայ... զԱւետիս* Բ և *ածին*
9 Ա *արիւնաթաթաւով*
11 ԲԳԴՆ *զԱւետիս* Ա. *կալ*
15 ԱԴԻ *նա փխ Աւետիս*
16 Ա. *երանելոյ առնն Աւետիսն* ԲԳԴՆ *երանելոյ առնն Աւետիսն*
20 Ա. *քրիստոսականի հաւատոյս* ԲԳԴՆ *հաւատոյս*
22 ԲԳՆ *զվկայն*
22-23 Ա. *զվկայն... երկնայնոյ*
29 ԴՆ *ուրումն* ԲՆ *զեղբայրն*
30 Ա. *որոյ*
31 ԱԴ *նորա փխ Աւետիսն և տանիլ*
31-32 Ա *զարս... զքահանայս և զաշխարհականս*
32 ԲԳՆ *և տարան*
33-34 ԲԳԴ *տապանի*

րումն նահատակութեան երանելի առնս Աւետիս ի թուականութենանս մերում Ռձե. յամսեանն մարտի Ի. ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս յաւիտենից ամէն։

ԳԼՈՒԽ ԼԹ

ՅԱՂԱԳՍ ՍՔԱՆՉԵԼԱՑՆ ԱՍՏՈՒԾՈՅ, ՈՐ ԵՂԵՒ Ի ՎԵՐԱՅ ԱՌՆ ՈՒՄԵՄՆ, ՈՐ Ի ԺԱՄ ՄԱՀՈՒԱՆ ԻՒՐՈՑ ՈՒՐԱՑԱԻ

Ի ժամանակս յետինս՝ յամս թագաւորութեան Պարսից արքային մեծ և առաջին Շահաբասին, ի Նախչուան քաղաքի, որում քաղաքի իշխան էր Մախսուտ սուլթանն. եղև սքանչելիքն Աստուծոյ ի վերայ առն ումեմն քրիստոնէի, որոյ զանունն ասէին Ղարաչօրակ։ Եւ էր այրս այս հաւատովն քրիստոնեայ, և քրիստոնեայ ծնողաց զաւակ, բայց էր ինքն ծոյլ և պղերգ յօրինացն Աստուծոյ, և հեռացեալ յամենայն կարդաց և կրօնից քրիստոնէութեան, ոչ երթայր ի ժամատեղ և յաղօթս, ոչ խոստովաններ՝ և ոչ հաղորդէր, ոչ խոկայր թէ մահկանացու է և մեռանելոց, ոչ յիշէր զհատուցումն ըստ գործոց, որպէս և պատմեն աստուածային դիրք. այլ էր հեռացեալ յամենայն պատուիրանացն Աստուծոյ, և զամենայն աւուրս կենաց իւրոց շրջէր ի կրպակս և ի շուկայս, ի փողոցս, և ի հրապարակս, ի դրունս այլազգեաց և իշխանաց վաճառել ինչս. քանզի արուեստ իւր ստացեալ էր դալալութիւն, որ այլոց ինչս առեալ վաճառէ այլոց, և այսպէս մնաց նա զամենայն ժամանակս կենաց իւրոց. քանզի ասեն պատմողքն՝ որք ականատեսք են գործոյս թէ, մինչ ի վաթսուն ամն հասս նա, աւելի և կամ պակաս։

Եւ եղև դի հիւանդացաւ այրս այս Ղարաչօրակ զհիւանդութիւն մահու, և կոչեցին առ նա քահանայ՝ որ խոստովանեցոյց զնա, բայց վասն դի գիտէր քահանայն զանուղղայ վարս նորա և զմոլար կենցաղավարութիւն նորա. և յաղագս փրկութեան հոգւոյ նորա ասէ ցնա քահանայն. «Եղբայր, դու ինքնին գիտես զկեանս քո՝ զի ծոյլ և պղերգ անցուցեր, և ոչ երբէք յիշեցեր զօրս զայս, թէ մահ կամ դատաստան կայ քո առաջի. արդ՝ եկեալ այսօր եհաս քեզ, խնդրեմ ի քէն լուիցես ինձ, և սակաւ ինչ ապաշխարանք յանձն առցես, որպէս պահս և աղօթս, և եթէ մեռցիս այսու հիւանդութեամբս, Աստուած ինքն թողութիւն շնորհելոց է քեզ, դի խոնարհեցար կամօք քովք, և զապաշխարութիւն յանձն առեր, նաև վարձս բարեաց ընդունիս դու յԱստուծոյ,

1 Ա. *երանելւոյ* Ն։ *ի թուականութենան*
5 Ա. *պատժոյն* փխ *սքանչելեացն* ՐԴ *սքանչելեացն*
7 Դ *թագաւորութեանն*
8 Ա. *մեծի և առաջնոյ*
9 Ն։ *սուլթան*
10 Ա.Դ *ուրացողի* փխ *քրիստոնէի* ՐԴԴՆ *զորոյ* փխ *որոյ*
12 Ա. *յամենից*
13 Ն։ *երթար*
14 Ա.Դ *հաղորդիւր*
16 Ա. *յամենից*
19 Ա. *զինչս* Ա. *զդալալութիւն*
20 Ա.ԴԴՆ *զայլոց* Ա. *զամենեսեան*
22 Ր *չիք և*
27 Ա. *զի կեանս քո* Ա. *չիք զի*
30 Ն։ *չիք ինչ* Ա. *ապաշխարանս* Ա.Դ *չիք որպէս, զպահս* փխ *պահս*
33 Ա. *զվարձս* ՐԴԴՆ *ունիս* փխ *ընդունիս*

ասաց նմէ ողջասցիս, և ելցես ի հիւանդութենէ անտի, յայնժամ կատարեսցես զուխտեալ ասպաշխարանս քո, և ես հաւատամ յԱստուած, որ վասն այս սակաւ ասպաշխարանացս՝ զոր յանձն առնուս, տացէ քեզ Աստուած առողջութիւն կատարեալ, զի ելցես ի հիւանդութենէդ»։ Զայս
5 *ամենայն լսօսեցաւ ընդ նմա քահանայն զի թերևս ողջասցի։*

Իսկ նա ոչ միայն ոչ ողջացաւ, այլ և մեծագոյն մեղս և չարիս գործեաց, քանզի դժուարեալ և խոժոռեալ ընդ բանս քահանային. վաղվաղակի կոչեաց առ ինքն զոմանս ի մահմետականաց, և ասաց նոցա բերել առ ինքն մօլլայ և մուղրի. և իբրև բերին, 10 *յայնժամ ձեռամբ նոցա ուրացաւ զՔրիստոս և զհաւատս նորա, և նովն մահմետականն հաւատով և դաւանութեամբ, և իբրև զայս գործեաց ողորմելի և թշուառական այրն այն Ղարաչօրակ, ամենեքեան քրիստոնեայք՝ որք էին ի քաղաքին, սուգ անմխիթար զգեցան, ոչ միայն վասն կորստեան նորա, այլ և վասն քրիստոսական հաւատոցս, զոր ծաղր և այպն ա-*
15 *րարեալ քամահանօք հայհոյէին մահմետականքն. այլ և մահմետականքն ուրախացեալք ի ձայն ցնծութեան հրճուէին, և խայտային վասն ուրանալոյ առնն այնմիկ, վասն զի նրևելի ոք էր ուրացողն։ Եւ յետ ուրանալոյ նորա անցին ի վերայ աւուրք չորք՝ մնռաւ ուրացող հիւանդքն, և ժողովեալ ամենայն բազմութիւն մահմետականաց քաղաքին,*
20 *ոչ միայն կարդացողք և հասարակ մարդիկք, այլ և երևելի և անուանի արք և իշխանք, և զարդարեցին զինքեանս ի զէնս և ի զարդս երևելիս և պայծառ հանդերձից, և զդագաղ նորա առաւել պճնազարդեալ պաճուճեցին, և ի պատիւ նորա արտաքս բերին ալամ և բարձրացուցին թուղ աւելի քան զբսան, և բազմաշուք և երևելի փառօք տարան ի*
25 *դիրս մեռելոց իւրեանց, թաղեցին զնա և դարձան ի տունս իւրեանց։*

Իսկ արդարադատն Աստուած՝ ոչ իսպառ անտես արար զժողովուրդս իւր, և զհաւատս քրիստոնէութեան, այլ իսկոյն շարժեալ ի նախանձ արար դատաստան և վրէժխնդրութիւն, զի որպէս յետ չորից աւուրց ուրանալոյ իւրոյ. ապա սատակեցաւ Ղարաչօրակ, սոյնպէս և
30 *յետ չորից աւուրց թաղման իւրոյ, յաւուր միում ընդ մերձենալ երեկոյին տեսին զՂարաչօրակ ուրացողն, զոր թաղեցին մահմետականքն, զի ելեալ էր ի վէրն՝ յորում թաղեալն էր, մերկ և խայտառակ, և գարշադէմ, և այլագունակ, իբրև զշուն կատաղի, և զպատանն իւր արկեալ ի վերայ ուսոց իւրոց և գայր ընդ մէջ քաղաքին, ի շուկայն և ի կըր-*

1 Ա.ՐԴԴՆ *այդի փխ անտի*
3 Ա.Դ *զորս*
4 Ա.Դ *զառողջութիւն*
6 Ա. *զմեծագոյն* Ա. *զչարիս*
7 Ա.Ր.Ի. չիք *քանզի*
7-8 Է *քանզի վաղվաղակի փխ վաղվաղակի*
9 Գէ *նմա փխ նոցա*
10 Ր *զհաւատս նորա, եղև*
10-11 Ա. *մահմետականաւ*
12 ԲԴԴԵ *ամենայն* Ր *որ*
14 Ա. *քրիստոսականաց*
21 ԲՌԵ *նրևելի*
22 Դ *զդագաղն*
23 Ա. *զալամ*
24 Ա. *զԹուղ... բազմաշքովք և երևելեօք*
25 Ա. *իւրոց* Ա.Դ չիք *և յարձան ի տունս իւրեանց*
28 Ա. *զդատաստան* Է *դադաստան*
Ա. *զվրէժխնդրութիւն*
29 Ա.Դ *Ղարաչօրակն*
31 ՐԵ *զոր և թաղեցին* Դ *զոր և մահմետականքն թաղեցին* Ե *զոր և մահմետականք...*
34 Ա.Դ չիք Ն *(գայր)*

պակն շրջէր, և որք տեսանէին զահի հարեալ ահաբեկ լինէին. քանզի ամենեքեան ճանաչէին զնա, և ի զարհուրելի տեսլենէ նորա ամենայն ոք թողեալ զգործս և զխանութիս իւրեանց հապճեպ տագնապաւ հազիւ ճողոպրեալք փախչէին ի տեղւոջէն անդառնալի գնացիւք։

Եւ ոմանք յայլազգեացն բանս ինչ արկին ի մէջ հրապարակին, թէ ոչ է սա Ղարաչօրակն, այլ այլ իմն նոր երևեալ ինչ. յայսմ պատճառէ և վասն ստուգելոյ զիրն, միաբանեցան արք տասն ևս աւելի, և դիտեալ նկատեցին զժամն՝ յորում Ղարաչօրակն ևկն ի շուկայն, յայնժամ միաբանեալ արքն գնացին ի վիհն՝ յորում եդեալ էր Ղարաչօրակն, տեսին զի ոչ էր անդ, և այսպէս արարին ոչ միանգամայն, այլ չորս անգամ, որով առաւել ստուգեցաւ թէ, նա է։ Եւ յամենայն աւուր ելանէր ընդ մերձենալ երեկոյին, նոյնպէս զպատանն ի յուսն արկեալ և դայր ի շուկայն, և մինչ ի լուսանալ առաւօտին շրջէր և ընդ լուսանալ առաւօտին դարձեալ գնայր ի դիրն իւր մտանէր. և յաւուրս ևօթն այսպէս առնէր, յորոյ զարհուրելի տեսլենէն սարսեալ սասանեցաւ քաղաքն ամենայն, և ընդ մերձենալ յերեկոյին յորում պահու ժամանէր ժամ գալստեան նորա, թողին ամենեքեան զխանութիս և զգործս իւրեանց, և փախչէին ի տունս իւրեանց. այլ և դասք գիշերապահ զինուորացն, որոց հասաս ասէն, նոքա ևս լռեցին ի դիշերի շրջելոյ, քանզի երկնչէին։

Իսկ մահմետականացն զամօթի հարեալք շառագունեալ, կորագլխեալք, կարկեալք, ապշեալք, յերկիր նայէին. ապա խորհրդականքն ի նոցանէ զկնի ևօթն աւուրց ևկեալք ի միասին խորհուրդ արարին. քանզի ընտրեցին արս արիասիրտս, և քաջազօրս, և կորովիս աւելի քան զերեսուն և վառեցին զնոսա զրահիւք և պատերազմական զինուք նետիւք, և աշեղիւք, սուսերօք և այլ զինուք, և պատուիրեցին նոցա սպանանել զՂարաչօրակն և կորուսանել և պատրաստեալ արքն դէտ ակնկալեալք կային զգուշութեամբ և երկիւղիւ տագնապեալք սպասէին գալստեան ուրացող մեհեանոյն։ Եւ յերեկոյեան պահուն ի մերձենալ հանապազորդեան ժամուն տեսին զի գայր, և պատրաստեալ արքն ընթացան առաջի նորա զի սպանցեն, իսկ նորա ընդ կրունկն դարձեալ, փախուստ առեալ և գնացեալ եմուտ ի յորջն, յորմէ ելեալն էր, յորում թաղեցին զնա։ Իսկ զինակիր արանցն հասեալ ի տեղին

34-1 (նախորդ էջի) — Ս. *կրպակսն*
2 Ա. *դարհուրելոյ*
4 Ս. *անդառնալեօք*
5 Ս. *զրանս* ԲԳԴՆ *հրապարակի*
6 Ի *այլ իմն փխ այլ այլ ամն* Ս. *յայսմանէ*
7 ԲԳ *և աւելի*
8 ԲԳԻ *Ղարաչօրակ*
12 ԱԴ *չիմ նոյնպէս* Բ *ի ուսն*
13 Ի *գար փխ գայր* ԱԹԻ *առաւօտուն*
13-14 Ի *չիմ շրջէր և ընդ լուսանալ առաւօտին*
16 Ա. *հրեկոյին*
17 ԱԲԳԴՆ *թողուին*
17-18 Բ *իւրեանց, փախչէին*
18 Ս. *պիշհրապահիյ*
19 Ա. *զհասաս*
21 ԱԲԴՆ *եւ փխ իսկ* ԱԲՆ *շառագունեալք*
22 ԱԴ *ապշեալք*
23 Ա *եօթնից* ԲԳԴ *աւուրցն էկեալ* Ա *զխորհուրդ*
24 Ս. *զարս... զքաջազորս... զկորովիս*
25 Ս. *պատերազմականօք*
26 ԱԴ *աշդիւք* Ս. *այլովք*
27 Ս. *պատրաստեալք*
28 Ի *ակնկալեալ է տագնապեալ*
29 Ա. *ուրացողի* Դ *երեկոյեան*
32 Ս. *գփախուստ* ԲԳՆ *չիմ և*
33 Ս. *դինակից*
33-1 (հաջորդ էջում) ԱԲԳԴՆ *հասեալք... սրովք*

անդէն խողխողեցին զնա սրով, և կտրեցին զգլուխն, տարան յայլ հեռաւոր տեղի և կորուսին. և այսպիսի օրինակաւ բարձաւ չարն ի միջոյ, և ամենայն այլազգիքն սկսան հայհոյել զուրացողն Ղևբրաչօրակ, և վկայէին վասն հաւատոյս քրիստոնէութեան ճշմարիտ գոլոյն: Եւ զայս ամենայն գործեաց սատանայ, զի խախտեսցէ զհաւատս քրիստոնէութեան. բայց սուաւ առաւել յաստատեցաւ ճշմարիտ հաւատս քրիստոնէութեան, և բարձրացաւ անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և ամենայն քրիստոնեայք առաւել հաստատեցան ի վերայ հաւատոյս Քրիստոսի, և մեծաւ գոհութեամբ փառաւորէին զԱստուած վասն յայտնելոյն զճշրարիտն, որով փառաւորի Աստուած յաւիտեանս յաւիտենից ամէն:

ԳԼՈՒԽ Ը

ՅԱՂԱԳՍ ՄԱՍՆԱԿԱՆ ՀՐԿԻԶՈՒԹԵԱՆ, ՈՐ ԵՂԵՒ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ ՄԵՆ ՔԱՂԱՔԻՆ

Այսմ հրկիզութեան ոչ էաք մեք ականատեսք, քանզի մեք ի սուրբ Աթոռն էջմիածին էաք յայնս աւուրսն. այլ յեղբարց մերոց վարդապետաց պատահեցաւ ումն անդ ի Կոստանդնուպօլիս լինիլ, որոյ անունն յորջորջիւր Ստեփաննոս վարդապետ, տեղեաւ գոլով ի գեղջէն Մեղրւոյ, որ իւրոց կենցաղավարութեանց զիրակութիւն գրեաց առ եղբարս, որք էին յէջմիածին, յորում քարտիսի և Կոստանդնուպօլսի մեծ քաղաքի հրկիզութիւնն էր գրեալ, որում ինքն անդէն էր լեալ ականատես: Զորոյ ղքարտէսն առեալ զնոյն գրեալն նովին շարադրութեամբ արդէն աստ գծագրեցի այսմ պատճառաց վասն՝ նախ՝ զի զառ ձեռն պատրաստ գրեալն ոչ ի դէպ համարեցայ երկրորդել. և երկրորդ՝ վասն իմոյս բազմակի աշխատանացս, որով ձանձրացեալ եմ, զի արդէն ի մետասան ամն մտի, որ աշխատիմ ի վերայ այսմ պատմագրիս, վասն զի ի հարիւր թուին սկիզբն արարի դրել, և արդ ի հարիւր և ի տասն և մէկ թիւն մտի, և տակաւին աշխատիմ ի վերայ սորա. և երրորդ՝ զի ծերացեալ եմ և կարի պակասեալ ի զօրութենանց, և մահն նկեալ հանապազօր յանդիման իմոյս աչաց կանգնեալ է, և զիտեմ թէ ես մեռանիմ և այս գիրքս մնայ կիսակատար, կրեալ աշխատանքն իմ ամենայն ընդ վայր կորնչին, զի ոչ ումեք փոյթ է մտանել յաշխատութիւն

2 Ս. *այսպիսեաւ*
3 ԱԲԻՒ *զղարաչօրակ* ԱՐԴԻ *զղարաչօրակ զուրացողն*
8 Ս. *ամենեքեան* ՐԳԴՈՒ *քրիստոնեայքն*
8-9 Բ *հաւատոցս*
10-11 ԱԴ չիմ *որով փառաւորի... ամէն*
13 Ա *մասնականի* Գ *հրակիզութեան*
14 Ա *մեծի*
15 Գ *հրակիզութեան*
17 ԱԴ չիմ *լինիլ* ՐԳԵՔ *լինել*
17-18 Ե *որոյ անուն*
19 ՐԳԻՒ *գիւրոց*
20 Ա.ՐԳԴ *կոստանդնուպօլսի*
20-21 Ս. *մեծի... զհրկիզութիւնն*
21 ՐԳ *զհրկիզութիւն* Գ *հրակիզութիւնն*
22 ՐԳԻՒ *գրեալսն* Է *շարադրութեամբ*
23 Ս. *այսց փխ այսմ*
26 Է *այսր փխ այսմ*
27 Է չիմ *ի (հարիւր)* Դե *ի գրել*
28 Դե *ի մեկ*
30 Ա *իմոցս* ՐԳԻՒ չիմ Է ՐԳ *զի թէ ես փխ թէ ես*
31-32 Ս. *ամենեքեան*
32 ՐԳԻՒ *կորնչի* Գ *կորընչի*

և ի գրաւ հանեալ կատարել, վասն որոյ վուխտամ, ճնպիմ, զի թերևս հանից յաւարտ՝ զի մի անկատար մնասցէ, և աշխատանքն իմ կորիցէ։ Եւ գրեցելոյն Սահփաննոս վարդապետին, զոր ի Կոստանդնուպօլսէ առաքեալ էր, այս է սկիզբն, որ զնոյն շարադրութիւն գրեմ։

«Բայց սակայն յաղագս Բիւզանդիոյ իրագործութեանց և վշտաբերականաց եղելութեանց, անբերելի տառապանաց, և վսեմական դիպուածոց, ո՞վ կարէ արտայայտել վիպասանութեամբ ի ձեռն ներտառական քարտիսի ըստ նոյն տեսակի. վասն զի աստուածասաստ էր այն բարկութիւն, և ստպտանք մեղանաց ամենայն անձանց ներհակ շարժութեանց։ Վասն որոյ ըստ նախախնամութեան էին հասարակական վճիռ առ մի ենթակային, իբր առ ի զգաստութիւն բոլորին, ապա թէ ոչ և զընդհանրականացն շահեսցին պատիժ յերկու կեանս, ըստ տէրունական հրամանի և պայմանին, ըստ աւուրց Նոյին գալ. և ըստ ապագային առ վախճանականաւ յաւիտենին. ուստի իրք զարհուրականք և տեսութիւնք երկիւղալիք, ձայնք սաստկաբեղունք, և ճայթմունք յոգնորակք, աղաղակք բազմազանք՝ և տարակոյսք անսպառականք։ Այսպէս և ըստ այսմ եղանակի արդիս նշանագործեցաւ, որոյ վասն տկարանամ առ այս վիպասանութիւն։ Քանզի յամսեանն Յունիսի իքսաներորդի և նախկնորդի ըստ Յունական տումարի. և ի թուականութեանս Արամազեան վիճակի, հազարերորդի և հարիւրերորդի և յիններորդի կալուածի՝ յաւուր շաբաթու, յիններորդում պահու պատահի իրս չարաբաստութեան, և գործ կսկծալիրս յայսմիկ քաղաքի մեծի։ Զի ի հիւսիսական կողմանէ քաղաքին՝ մերձ առ ծովու նորին լինի հրաձգութեան դիպուած յոյժ յոյժ անընդհատ երևակայութեամբ քան վախճանի նշանի, քանզի սկսեալ ի նորակերտ պալատէն արքայի զառ ի վեր, լայնատարած և բազում միջոցաւ և սահմանաւ առնու ղբորբոքումն վառման հրայրեցութեան, մինչ ի կամարն ջրաբերական, և անտի ապա դարձեալ լայնանա և երկայնանա զառ ի վայր մինչ ի նոյն տեղին ուստի սկսաւն, սաստիկ վօռէատական հողմոյն[128] նպաստութեամբ։ Եւ այսպէս յաւուրս երկուս բաժանեալ ճարակմամբ և սպառմամբ հասանէր մինչև ի գագաթ բլրին, ուրանօր ժողովարանք մեծամեծք այլազգեաց կառուցեալք երևէին, առ արտաքին տեսութիւնս

1 ԲԳՆ *կատարէ*
2 Գ *աշխատանք*
3 Ս. *գրեցեալն Սահփաննոսի*
4 ՍԴ *չի՛ սկիզբն... գրեմ*
6 Ս. *անբերելեաց* Ս. *վսեմականաց*
7-8 Ս. *ներտառականի*
8 Ս. *նունոյ*
9 Ա. *ներհակաց*
12 Ա. *յերկուս*
13 Ս. *սէրունականի... պայմանի* *հրամանին*
14 ԳՆ *վաղճանականաւ*
15 ԲԳ *երկիւղալիրք*
16 ԲԳ *յոգնաորակք*
19 Ս. *հռոմայականի* փխ *յունական* Գ *տումարի*
20 ԲԳՆ *հարիւրորդի*
22 ԱԲԳ *այսմիկ*
23 Ս. *հիւսիսականէ*
24 Ս. *անընդհատիւ*
25 Գ *վաղճանի* Ս. *նորակերտէ*
26 ՍԴ *և լայնատարածիւ* փխ *լայնատարած* Ս. *բազմաւ*
ԲԳՆ 26-27 ԲԳՆԷ *առնուլ*
27 Ի *գրոյբորբումն*
28 Ի *լայնանալ* Ի *երկայնանալ*
29 Ս. *սաստկի վօռէատականի*
30 ԲԳՆ *Երկու*

պատշաճագործնեալք արժանի դոլ հիացման ըստ նոյն դիտաւորութեանն։ Եւ անդուստ հապա իսկոյն և կանխագոյն յառաջս երիս բաժանէր, և ըստ իւրաքանչիւրոց ծայրից բաժանելոյ փութացեալք լինէին առաջի եդեալս ինքեանց յիրին կատարագործութիւն, ըստ սոփման և բախման յաջողակ հողմոյն. իբր պայմանաւ սահմանաւ և տրոշղու իմն՝ ըստ բանականացն որակութեանն։ Քանզի և որպէս գրեցաւն ճախր առեալ երկուց եղերաց հանդերձ առ միջոցաւն համանգամայն ի մի վայր կողոպտչին լրապէս տապալմամբ և ապականութեամբ ամենայն շինուածոց ղկատուցմունս. այսինքն բարձրաբերձ աշտարակաց, և ոսկեզօծ պալատաց, գեղեցկադիր սարավանդակաց, և յոգնածախակերտ ապարանից և տանց։ Եւ զի երկուց ծայրից, որպէս ասացաւն, միոյն իջանելովն ի զապաթէ անտի առ արեւելս կոյս՝ պարտեալ ընդ ծովեզերօքն, և անցանելովն ընդ դրունս Մաքսապետականին, և Աւազակոչականին վախճան առեալ առ տունն վանից։ Իսկ ծայրն երկրորդի առ արեմուտս ճեմեալ սաստիկ ըստ իւրոյն զօրութեանն, շառաչմամբ և պարփակմամբ ըստ նոյն եղանակի դիմեալ առ աշտարակօքն եօթնակերտեան և դոյզն ինչ բացակայութեամբ միջոցին, առ ծովու ստորակայեալ և անցեալ ընդ դուռն Նորակոչիկ, հանդերձ միջոցական եղերբն ղեռնղանան առ ծայրն առաջին։ Այսպէս և ըստ այսմ օրինակի վնասից տեսանց և երից ժամու յամենայն զարդուց իւրոց ունայնացեալ գտաւ մայրաքաղաքն Երեւելի ըստ հողմոց այլայլականաց պատահմանց, վօռէասականաց և նոտոսաց[163], փոթորկաց և այլոց բազմաց. մինչ զի զքարիւնս այրեալ բնաւին յաճիւն կացոյց։ Եւ արդ՝ անդ էր տեսանել զտագնապ հասարակաց, ցվիշտ բոլորից և ցկականումն ընդհանրից, անդ էր լսանել ղբախումն կրծից, զաղաղակ բարբառից և զարտօսր աչաց։ Անդ էր տեսանել ղգալարումն աղեաց, զմորմոք սրտից, և ղճիչ ձայնից։ Անդ էր տեսանել զանուրաձեւութիւն անձանց, ղբեկումն միջաց՝ և ղթափումն մատաց, զի հուրն սոսիպէր, յաւէտ բորբոքէր և զարհուրելոցուցանէր, ապարանք փլանէին, որոտմունք լինէին, և ցոլմունք երեւէին։ Ուստի փարթամք տարակուսէին, ռամիկք յուսահատէին և աղքատք վարանէին. վիրաւորք դոչէին, ծնողք սգային, և որդիք դառնապէս լային, վասն զի բարձաւ յոյս նոցա, վերացաւ օգնութիւն յինքեանց, և մեռկացան յամենայն ընչից իւրեանց։ Տի՛ միանգամայն մեկուսացան, ի միմեանց հեռացան՝ և անյայտ եղեն. զի քայքայեցան, փեռնկտեցան և բաժանեցան, հարք

1 Ա. չի՛ դոլ, նունոյ վխ նոյն
2 ԱԲԳԴ անտուստ
2-3 Ա. բաժանիւր
4 Ա. կատարակործութիւն
5 Ա. յաջողակի ԲԳԴ աջողակ
7 ԲԳԴ զառ
9 Ա. ամենից ԲԳԴ չի՛ ղկատուցմունս
Ա. բարձրաբերձից
10 Գ ոսկեզօծ Ա. զկղեցկակարից
11 Ա. յոգնածակերտից ԳԴ յոգնածախակերտ
12 ԲԳԴ իջանելով Է դադաթանէ
13 ԱԲԳԴ անցանելով
14 ԱԲԳԴ աւազակոչականին Գ վաղճան
16 ԱԲԳԴ առաչմամբ Ա. նունոյ ԲԳ յեղանակի
17 Գ երթնակերտեան Գ բացակայութեամբ
19 Ա. միջոցականաւ
20 Ա. ժամուց յամենից
25 ԲԳ զկականումն ԱԴ՝ զբաղխումն
29 Գ փլէին
29-30 ԲԳԴ փլէր... լինէր
30 ԲԳԴ երեւէր
32 ԱԴԴ բարձան
33 Գ յօգնութիւն ինքեանց Ա. յամենից

յորդւոց, և որդիք ի հարց, մարք ի դստերաց և դստերք ի մարց, բարեկամք ի բարեկամաց, և սիրելիք ի սիրելեաց իւրեանց. անգիւտ լեալ տակաւին ի միմեանց ըստ տէրունական հրամանի։ Նա և ճանաչել ոչ կարէին զմեռեալս իւրեանց ի թաղումն դիականց, վի ըստ երից հարցայ ասացին դոլ արանց մեռելոց, ըստ յայտնի տեսութեանց, ըստ պննողաց հոգւաբարձութեանց կարգեցելոց։ Ուստի տրամութիւնք, ուստի հնձութիւնք, ուստի խռովութիւնք առաւելապէս ներ տարածեցաւ ընդհանուրս. ըստ գրոյն թէ՝ տարեկանք ձեր ի սուգ դարձցին։ Ահա կատարեցաւ այս ամենայն վասն մեղաց մերոց, ի խրատ և ի զգուշութիւն անձանց հաւատացելոց, ի կորուստ և ի կործանումն հակակային ծայրից։ Եւ արդ՝ սիրելիք, ոչ անկ. վարկանիմ արկանել ընդ. ոտիւք զայսպիսի իրագործութիւն, այլ մանաւանդ արժանի առնել պատմութեան՝ ապա թէ ոչ, դուք ողջ լերուք ի տէրն ամենի ամէն»։*

ԳԼՈՒԽ ՄԱ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՕՍՄԱՆՑԻՈՑ ԹԱԳԱՒՈՐԱՑ. ՕՍՄԱՆ ՕՂԼՈՒ ԿԱՐԳՆ[184] ԱՅՍ Է, ՈՐ ԿՈՉԻ ԽՈՆԴՔԱՐ

Օսման օղլու կարգն և սկիզբն, որ ելեալ են և բազմացեալ, բազում քաղաքաց և գաւառաց տիրեալ և թագաւորեալ։ Հայոց թուին ՈՉԱ, ի յՕսմանճուկ գիւղաքաղաքէն, ումն Օսման անուն մեծատուն[185] ժողովեալ զիւր նմանիսն և ելեալ պատերազմեցաւ ընդ իւր բոլորի պարոնայսն[186], և էառ զնոսա. և փոքր փոքր մեծացաւ, և նղւն թագաւոր բազում քաղաքաց և գաւառաց։ Յետ վախճանելոյ սուլթան Օսմանին, նստաւ յաթոռն որդի նորա երկրորդն սուլթան Օրխանն։ Երրորդն՝ սուլթան Մահմատն։ Չորրորդն՝ սուլթան Մուրատն։ Հինգերորդն՝ Իլտրում Պայազիտն։ Վեցերորդ՝ սուլթան Մուրատն։ Եօթներորդ՝ սուլթան Մահմատն։ Ութերորդ՝ սուլթան Բայազիտն։ Իններորդ՝ սուլթան Սէլիմն։ Տասներորդ՝ սուլթան Սուլէյմանն։ Միհատասաներորդ՝

* *Տովբ, Բ,6, Ամովս, Ը, 10։ Ա. Մակաբ., Ա, 39*

3 Ա *տէրունականի հրամանին* ԴԹՆ *հրամանին*
4 Է չիք *իւրեանց*
8 Սն *յընդհանուրս*
10 Ա. չիք *հաւատացելոց ի կորուստ և ի կործանումն* (այս բառերը տպված են 18 տ)
10-11 *հակակային*
11 ԱԲԳԴՆ *սիրելի* Դ *վայրկանիմ* Ա. *այստեղ ոչ անկ և վարկանիմ* բառերի միջն գնտնված են 10 տ. բացակայող
12 բառերը։
17 Է չիք *այլ*
ԱԴ *որք* Գ *կարգն ու սկիզբն*
17-18 Ա.Դ *ելեալք են և բազմացեալք, բազմաց*
18 Ա.Դ *տիրեալք* Ա.Դ *թագաւորեալք* Գ *ի հայոց*
19 Ա. *ի յՕսմանճուկէ* Գ *յՕսմանճուկ*
20 Ա. *նմանիս* Գ *ընդ իւրոյ*
21 Գ *պարոնացն*
22 Ա.Դ *բազմաց*
22-27 Ա.Դ չիք *Յետ վախճանելոյ... մեհատասաներորդ*
24 ԲԴ *Չորրորդ*
24-25 ԴԹՆ *Հինգերորդ*
25 ԲԴԳՆ *Պայազիտն*
26 ԲԴ *Պայազիտն* ԳՆ *Բայազիտն*
27 ԳՆԼ *Սելիմն* Դ *Սըլէյմանն*

սուլթան Սէլիմն։ Երկրորդաննեորդ՝ սուլթան Մուրատն։ Երեքտասաննեորդ՝ սուլթան Մահմատն։ Չորեքտասաննեորդ՝ սուլթան Ահմատ-ի Ջհանգիրն, տղայ հասակաւ։ Մանրամասն ոչ կարեմ պատմել գհանդամանս սոցա. այլ կարճ ի կարճոյ ասացից։ Յորժամ որ Լանկթամուրն եկեալ է, նա Իլտրում Պայազիտն ի Բուրսայ եղեալ է աթոռն, որ է Թախտն[187]։ Յետոյ որդի նորա սուլթան Մուրատն առեալ է զԱտրանայ։ Յետոյ սուլթան Մահմատն առեալ Ստամբօլ ի թուին Հայոց ՋԲ. էառ զքաֆան և զԱղքրմանն, և զՏրապիզօն։ Եւ բազում քաղաքս և գաւառս անցեալ սուլթան Մահմատն։ Եւ սուլթան Պայազիտն հասեալ ի սուլթան Սէլիմն ի թուին ՋԿԳ։ Սուլթան Սէլիմն յորժամ թագաւորեաց՝ եւ բազում զօրօք գնաց ի վերայ Շահիսմայիլին և պատերազմեցաւ ի Ջալտրան, և ոչ կարաց առնուլ զնա։ Դարձաւ յետ և էառ զԴիամախ ՋԿԴ. թուին։ ՋԿԵ թուին էառ զԱմիթ։ Եւ յետոյ ՋԿԶ թուին էառ զՄսր բազում բանիւ։ ՋԿԷ թուին առին այլազգիքն ի յԱմիթ զմեծ կաթուղիկէն զսուրբն Թէոդորոս ի Հայոց և արարին իւրեանց աղօթանոց։ ՋՀ թուին մնաւ սուլթան Սէլիմն, նստաւ սուլթան Սուլէյմանն։ ՋՁԴ թուին սուլթան Սուլէյմանն բազում զօրօք եւ գնաց ի վերայ Շահթահմազին ի Թարվէզ, և ոչ կարաց յաղթել զնա. դարձաւ և էառ զԲաբիլոն, որ է Բաղդատ։ Բայց ի ճանապարհին բազում նեղութիւնս կրեաց, քանզի հանդիպեալ նմին ահագին մեծ վէմ մի, որ թուրքի բառիւ Տօղուզօլում ասի, որ է ինն ճիւղ, և տարեալ է բազում մարդ և շատ խաղինայ գետն այն։ Ռե թուին բացին զնոր դուռն[818] Ամթայ, որ հայի ընդ արևելս, զի առաջին շինողն չորս դուռն էր բացեալ, և անցեալ էր բազում ժամանակ ի վերայ, յետ ժամանակաց էառ թուրքի թագաւորն զԱմիթ, նաեւ, որ մէկ դուռն ի մէջ բերդին էր, եւ և մուտն խցեալ զնա, որ անուանի Ջրդուռն[189] հրամանաւ թագաւորին։ Ռ թուին նորոգեցաւ յԱմիթ սուրբ Կիրակոս։ ՋՂԹ թուին սուլթան Սուլէյմանն կրկին եւ բազում զօրօք և գնաց ի վերայ Շահթահմազին ի Թարվէզ և ոչ կարաց առնուլ, դարձեալ ի վերայ Շամիրամակերտին, որ է Վան և էառ զնա։ Յետոյ մնաւ սուլթան Սուլէյմանն, նստաւ որդի նորա

1 Ր *Սէլիմն բառիցդ ետու լուսանցքում մի այլ ձեռքով ավելացված է. ասէն թէ հրէի որդի էր, քանզի սորա հայրն անգաւակ էր, իսկ մայրն .... աւ աղչիկ մի և չհուտ կին մի...աւ տղայ մի, և դանձիւք ...ուհին հաւանեցոյց զչը... ան և փոխանակ զաղչիկն տղային։ Ր Մուրատն բառիցդ ետու ավելացված է։ Սնաւ զտակոն ադոյդ ... առնէից ադրին*

1-4 Ա.Ղ *չիք սուլթան ... ասացից*

4 Ա.Ր *չիք որ*

5 Ա.Ղ *Պայազիթն փխ նա Բ.Ն որ հկեալ է, Պայազիթն. Ա.Ր զաթոռն*

6 Ա.Բ.Ն *Թախթն*

7 Ա. *զբոսամբօլ* Բ.Ն *զբօսարմբօլ* Ր *զբսամբօլ*

8 Ա. *զկաֆայն, զբազում* Բ.Ն *զՏրապիզոն* Գ *զՏպազիոն*

9 Ա. *զգաւառս... Մուհամատն* Ա.Բ.Գ.Ն *Պայազիթն*

10 Ն *ի թվի*

11 Ա. *բազմօք* Բ.Ն *Շահիսմայէլին* Գ *Շահիսմայլին*

14 Ա. *բազմաւ*

17 Ա. *բազմօք*

18 Ա.Գ *նմա*

19 Ա. *զբազում*

20 Ա. *հանդիպեալք... մեծի* Ա.Գ *միոյ*

21-22 Ա.Բ.Ն *տարեալ* Ա *զբազում մարդս և զբազում դանձս*

22 Ա. *դրունս*

24 Ա. *և յետ*

26 Ա *խցին* Բ *խնցեալ* Գ.Ն *խըցեալ*

28 Ա *բազմօք*

սուլթան Սէլիմն. ի ՌԺԲ թուին սուլթան Սէլիմն բազում զօրս առաքեաց ի վերայ Կիպրոս կղզոյն, երկու ամ պաշարեաց զնա և էառ, բազում քրիստոնեայս կոտորեաց: Այս թագաւորս ունի ամ թագաւորեաց: Յետոյ որդին սորա թագաւորեաց՝ սուլթան Մուրատն: Ի ՌԻԲ թուին նեղացաւ թագաւորն ի Հրէից համարձակութենէն և վերացոյց զփակկեղն ի գվխոց Հրէից և քրիստոնէից ամենայն. ապա ի տեղիս տեղիս կաշառ ետուն և առին հրաման, փակել եղին յետ ԺՐ ամաց: ապա ի Կոստանդնուպօլիս և յայլ բազում քաղաքս մնացին գդակով[180]: Եւ այս թագաւորս սուլթան Մուրատս առաքեաց բազում զօրս ի վերայ Պարսից աշխարհին և էառ զԹաւրէզ և զերևան, զԳանջայ, և զՇաբշար, և զՇամախի մինչև ի Դուռն Ալանաց, զոր եղեալ է Աղէքսանդր Մակեդոնացին, ի ատուր ճանապարհ զլայնութիւնն և զերկայնութիւն: Տիչեաց աշխարհացն ԺԸ ամ, հնձելակոխ եղեալ, ի սովու և ի սրոյ բազմաց մնաման, և բազում երկիր աւերեցան, յետոյ սակաւ մի խաղաղութիւն եղև: Յետ մնանելոյ սուլթան Մուրատին, նստաւ որդի նորա սուլթան Մահմատն, ի թուին Հայոց ՌՆԴ և ոչ արար խաղաղութիւն: Ի սորա ժամանակն բազում քաղաք և երկիր աւերեցաւ, զի ոչ կարէր վարել թագաւորութիւն, ծառայքն և պարոնայքն ամենեքեան ապստամբեցան և երես դարձուցին ի նմանէ: Քանզի ինքն միայն ոչ էր իշխանատուր, յորժամ որ տայր քաղաք մի փաշայի մի, կամ պարոնի մի, յետ Ժ. աւուր կամ Ի. աւուր մայրն կամ քոյրն, կամ իւր կինն, կամ վէզիրն տային այլ փաշայի և առնէին բազում կարմիր դահեկան: ՁՏիգրանակերտն Ամիթ ի վեց ամիսն՝ ինն փաշայի եառն, կայր որ փաշայն կուգայր, կայր որ փաշայի վաքիլն կուգայր, նոքա որ կուդային, գիտէին որ բանի յետքն փուչ էր, նոքա այլ կու սկսանէին ի կողոպտել և ի թալանել զքաղաքն և զերկիրն: Զինչ երկարեմ որ դրով ոչ կարեմ պատմել, ի ՅԱմիթ ասեի և անտի շինութիւն կայր. ապա ի ՅԱմթայ կէս աւուր հողէն որ ի դուրս ելանես, մինչ ի մեծ քաղաքն Ստամբօլ աւերութիւն է, ուր ուրեք գտանի շինութիւն: Ի յայս սուլթան Մահմատի ժամանակն ի Ջօռում գիւղաքաղաքին յայտնեցաւ նաղիւի

1 Ա զբազում
2 Ա. կիպրոսի կղզւոյն
2-3 ԱԴ և զբազում Բ էառ զնա և բազում
4 ԱԴ որդի
7 Ի գաշառ Ա. զհրաման եղին զփակել ԱԲԳԴՆ ամի
8 Ա.ԲԳՆ չիմ ի ԱԲԳԴՆ այլ... քաղաքէ Ի քաղաք
9 Ա զբազում
10 ԱԴ զԱրաշ
11 Ի մինչ
11-12 ԱԴ չիմ զոր եղեալ է Աղեքսանդր Մակեդոնացին
12 ԲԳԴՆ զլայնութիւն
13 Ա. ի սուղէ ԲԳՆ ի սովոյ
14 Ա. բազումք երկիրք ԴՆ երկիրք
16 Ա. զնահատղութիւն
18 ԱԴ զթագաւորութիւնն
19 Ա զերևս
20 ԱԴ չիմ որ ... զքաղաք միոյ... միոյ
22 ԲԳՆ կուտային Դ տային այլոց Ա այլոց... առնուին
22-23 Ա. զբազում... զԱմիթ
23 ԲԳԴՆ զՅամիթ
23-24 ԱԴ կայր զի փաշային գայր
24 ԱԴ կայր զի փաշայի վաքիլն գայր Բ վէզիլն կուգայր Ի փաշի
24-25 Ա. նոքա նոր գային Դ գային
25 Ա գիտէին զի բանի յետքն փուչ է ԱԴ չիմ կու
26 ԱԴ զի փխ որ
27 ԱԴ ասա և անտ
27-28 Ա. չիմ ի Ա ՅԱմթոյ Դ ի Յամթոյ ԲԳՆ ի յամետոյ
28 ԲԳԴՆ ելնաս փխ որ ի դուրս ելանես
29 ԱԴ աւերութիւն էր ԱԴ գտանիւր
30 Ա. Մուհամատի

անուն, և ունէր եղբայր մի Հասան անուն, ոչ ի թագաւորական տոհմէ էր և ոչ ի մեծ ազգէ, այլ դեհկիկ և ոչինչ քան զամենայն մարդիկ. բաղում աւերութիւն արար. և հարկապահանջութիւն ձգեաց ի գիւղ և ի քաղաք մինչ ի դուռն Բիւզանդիոյ քաղաքին: Ժողովեցան դանգատորք և գնացին առ սուլթան Մահմատն թէ երկիր և քաղաք ամենեքեան աւերեցան ի յոչինչ ումեքէ: Թագաւորն հրաման արար ժողովեցան ի յԱմիթ քաղաքի ՕՈ. մարդ աւելի ոչ պակաս, զօրագլխաւն իրեանց գնացին ի վերայ նորա և ոչ կարացին յաղթել. այլ ինքեանք յաղթեցան: Ի յՈւրհայ էր խլատար լեալ և զՈւրհայոյ բերդի մեծաւորն ի բերդէն ձգեաց, և տիրեաց բերդին և քաղաքին, և պուխ քահանայ մի և տանուտէր մի նահատակեաց վասն զանձ ժողովելոյ, և մեծամեծ ի Տաճկաց շատ սպան և շա տվնաս արար Ուրհայ քաղաքին ի պատմել չի գայ, երեք ամ ի վերայ գնացին և յաղթեցան զօրագլխաւն իրեանց և ոչնչացան: Յետոյ նեղացաւ թագաւորն և հնարք իմացաւ, առաքեաց բազում զանձս և խիլայս և կոչեաց զնա և անցոյց զմեծ ծովն, և արար զօրագլուխ զօրացն իւր ընդդէմ Ֆռանկին և Մաճառին. այնքան ակարացաւ այս թագաւորս, որ ոչ կարաց յաղթել, այլ հնարք իմացաւ և արար զայս, ինն տարի թագաւորութիւն արար առ. ի սորա ժամանակն խանգարեցաւ Օսման օղլու թագաւորութիւնն: Ի ՌՆԴ. թուին մեռաւ սուլթան Մահմատն, նստաւ որդին սուլթան Ահմատն Ջհանգիրն տղայ հասակաւ: Թուին ՌԿԷ. մեռաւ սուլթան Ահմատն և թագաւորեաց եղբայր նորին սուլթան Մուստաֆայն. արարին բեզամայ[191], կեցեալ չորս ամիս թագաւոր, և հարկիւ նստուցին ի վայր և թագաւորեցուցին զեղբօրորդի նորա զսուլթան Օսման տղայ հասակաւ ԺԴ. ամեայ, և յայսմ ամի թուին ՌՀ դնաց ի վերայ Լհհաց ի պատերազմ սուլթան Օսմանն հանդերձ թաթար խանիւն, և դարձան բազում գերիօք, և բեզամայ արարին ամենայն երկիր նորա, ի յայսմ ամի Աստուած էառ զվրէժ գերեացն ի սուլթան Օսմանէն, յարեան զօրքն ի վերայ իւր և սպանին և թագաւորեցուցին զսուլթան Մուստաֆայն, զհօրեղբայր նորին հանեալ ի յարգելանոցէն: Աւարտ եղև այսմ պատմութեանս:

1 Ա. *զեղբայր* Ա. *թագաւորականէ*
2 Ա. *մեծէ*
3 Ա. *դրազում*
4 ն *Բուզանդիոյ* ԲՆ *ժողեցան*
5 ԲԴ *չիք և (գնացին)* Ա.Ը *չիք առ* Ա.Ը *ի սուլթան Մահմատան* Ա.Դ *երկիրք և քաղաքք*
6 Ա.Դ *չիք ի* Ա. *զհրամանն*
7 Ա.Դ *չիք ի* Ա.Դ *քաղաքին*
8 Ի *չիք իւրեանց*
9 Ա. *հաւր լեալ* Դ *խասր լեալ*
11 ԲԴԴԵ *չիք վասն*
11-12 Ա. *մեծամեծս*
12 ԲԳԵ *շատք սպանեց* Դ *սպանեց*
13 Ա.Դ *գալ փխ գայ*
14 ԲԴԴԵ *ոչչընչացան·*
15 Ա. *զբազում... զխիլայս*
16 Ա.Դ *իւրոց*
17 Ա. *զհնարս*
19 ԲԴՆ *խանկարեցաւ* ԲՆ *թագաւորութիւն*
20 Ա. *Մուհամատն, Ահմատ*
22 ԴԴՆ *բէզամայ*
24 Բ *զդուլ Ուսման* ԴԴՆ *Ուսման*
25 Ա.ԲԴԴՆ *Լհհայ*
26 Ա. *բազմօք*
26-27 ն *զերեաւք*
27 ԴԴՆ *բէզամայ*
28-30 Դ *չիք յարեան... յարգելանոցէն*
29-30 Ա. *զհօրեղբայրն*
30-31 Ա.Դ *չիք Աւարտ եղև այսմ պատմութեանս*

ԿԱՐԳ ՕՍՄԱՆՑԻՈՑ ԹԱԳԱՒՈՐԱՑՆ[192]

Ա. Օսման. Բ. Օրհան. Գ. Մուհամատ. Դ. Մուրատ. Ե. Բայազիտ. Զ. Մուրատ. Է. Մուհամատ. Ը. Բայազիտ: Թ. Սէլիմ. Ժ. Սուլէյման. ԺԱ. Սէլիմ Հրէի որդի[193]. ԺԲ. Մուրատ. ԺԳ. Մահմատ. ԺԴ. Ահմատ. ԺԵ. Մուստաֆայ. ԺԶ. Օսման. ԺԷ. այլուի, նոյն Մուստաֆայ. ԺԸ. Մուրատ. ԺԹ. Իբրահիմ. Ի. Մահմատ:

ՎԱՍՆ ՕՍՄԱՆՑԻՈՑ ԹԱԳԱՒՈՐԱՑ ԹԷ Ո՞ՅՔ ԵՆ ՄԻ ՉԿՆԻ ՄԻՈՑ

Այսոքիկ են թագաւորք Օսմանցւոց, զոր պիտք աստուածայինք օձ կոչեցին զնոսա, որք յոլով ժամանակաւ յառաջ տիրեցին աշխարհի, և այս է նոցա զարմն մէկն ի մէկէն մինչև ցայսօր ժամանակիս: Այս է Օսմանցւոց Տաճկաց թագաւորաց սկիզբն և պատճառն որ Օսմանցի կոչեցան: Առաջին անունն Օսման որ էր ի ձորն գեղջէն այր մի շինական հողագործ տաճիկ, որ թողեալ զհողագործութիւնն, և ժամանակ մի դող եղև. և սակաւ սակաւ զօրացաւ, և գնացեալ յարեցաւ ի սուլթան Ալադինն, և առեալ զօրս ի նմանէ գնաց էառ զԲուրսայ քաղաքն: Բ. Եւ յետ նորա թագաւորեաց որդի նորա սուլթան Օրհան, և սա էառ Զննկիշէհէրն և Եքաց[194]: Գ. Եւ յետ նորա թագաւորեաց որդի նորա սուլթան Մուհամատ: Դ. Եւ յետ նորա որդին իւր Մուրատ թագաւորեաց: Եւ յետ Մուրատին որդի նորա Պայազիտ, որ Իլտրում կոչիւր, դա Լանկթամուրն յերկաթի դաֆասն եդ: Զ. Եւ յետ նորա միւս այլ Մուրատ: Է. Եւ յետ նորա միւս այլ Մուհամատ, որ էառ զՍտամբօլ քաղաք ի թուականիս մերոյ. ՋԲ: Ը. Եւ յետ նորա թագաւորեաց սուլթան Բայազիտ. ի սորա ժամանակն էր Մաոթէոս վարդապետն ի Սևաստու վանքն: Թ. Եւ յետ սորա որդին իւր Սէլիմ, որ սահմանեաց զաղայ ժողովիլն[195]: Ժ. Եւ յետ նորա թագաւորեաց որդին իւր Սուլէյման խոնդքարն[196], որ քան զամենն շատ թագաւորեաց և շուրջ եկն

1 Դ *Այլ ևս պատմութիւն Օսմանցոց թագաւորացն*
Ա *Այլ ևս բան և Բ Այլ ևս պատմութիւն վս Օսմանցոց թագաւորացն* Բ *(էջ 356բ)* Գ *(էջ 368բ)* Դ *(369բ)* գետեղված է ոլորած օձի ևկար, որի մեջ գրված է օսմանեան թագաւորների ազգաբանութիւնը, սկսած Օսմանից և վերջացրած Մահմատով:*

1-3 Դն *կարգ...ը* չիմ Այս տեղեկութիւնները գրված են կարմիր թանաքով նախորդ գլխից ետու, ապա *(365բ)* ևկարած է օձը՝ օսմանեան թագաւորների ազգաբանութեամբ

2 ԲԳԴն *Բայազիտ*

3 Ա չիմ *ե.Զ.է.Ը Բայազիտ*

5 Գ *այլուի նոյն*

6 Գ *Մահամատ* Դն *Մուհամատ* Բ *Իբրահիմ*

7 ԲԳԴն *թագաւորացն*

7-22 Դ չիմ

11 ԲԴն *օսմանցոցս* Ե և Է *պատ(ճառն)*

12 ԲԴն *անուն* Գ *Ուսման* ԱԴ *իսկ ըստ ոմանց այր մի*

14 Բն չիմ Է *(գնացեալ)*

14-15 ԱԲԴն *սուլտան Ալատինն* Գ *սուլտան*

16 Ա *սուլտան* ԲԳԴն *սուլտան Օհրան*

17 ԲԳԴն Է *բացնց* Ի *որդին իւր*

18 ԱԲԴն *Մուհամատն*

19 Ի՛ *որդին* ԱԳԴ *Պայազիթ*

20 Բն *Նդիր*

21 ԱԴ *Մուրատն* Ի *Մուհամմատ*
ԲԳԴն *առաւ* Գ *զբսամբօլ* Դն *զբսամբօլ*

22-23 Բ *սուլտան Պայազիթ*

23 ԳԴն *Բայազիթ* Ա *Բայազիթն* ԱԲԴն *Մաթէոս*

25 Բ *թագաւորեց*

26 ԱԴ *զամեն* Բն *զամէն* ԲԳԴն *երեկ փխ եկն*

զերկրաւ[197]: *ԺԱ. Եւ յետ սորա թագաւորեաց որդի իւր միւս այլ Սէլիմ: Զսա ասեն թէ Հրէի որդի էր. քանզի սորա հայրն անզաւակ էր և մայրն ծնաւ աղջիկ մի, և ջհուտ կին մի ծնաւ տղայ և գանձիւք թագուհին հաւանեցոյց զջհուտն և փոխանաց զաղջիկն ընդ տղային և անուանեցին Սէլիմ, այս է սորա պատճառն: ԺԲ. Եւ յետ սորա որդին իւր Մուրատ, որ զսև դդակներն հագոյց քրիստոնէից աղգին: ԺԳ: Եւ յետ սորա որդին իւր միւս այլ Մուհամատ: ԺԴ. Եւ յետ սորա որդին իւր Ահմատ: ԺԴ. Եւ յետ սորա որդին իւր Ահմատ: ԺԵ. Եւ յետ սորա թագաւորեցուցին զիւր եղբայրն զՄուստաֆայն երիք ամիս: Եւ յետ երիք ամսոցն մատուլ արարին իշխանքն զՄուստաֆայն և թագաւորեցուցին զԱհմատին որդին զՕսմանն: ԺԶ: Եւ յետ չորս տարուոյ եննիչարիքն սպանանեցին զՕսմանն և թագաւորեցուցին միւս անգամ զՄուստաֆայն, որ ասէին թէ, պակասախելք էր, ի թուականիս մերում ՌՀՍ. թագաւորեաց մէկ տարի և վեց ամիս. և վերացուցին և թագաւորեցուցին զՕսմանին որդին զՄուրատն. ի թուին ՌՀԲ: ԺԷ. Ի սորա ժամանակն և ի սոյն ամին կարմիր դդակներն, որք են Ղզըլպաշներն, առին զԲազդատ: Այս սուլթան Մուրատիս հայրն սուլթան Օսմանն հանապատ թագրիր սուրաթ եղեալ շրջէր ի մէջ քաղաքին Ստամբօլայ, ի զահվախանէքն և ի մէյխանէքն, և յայլ տեղիս, լսէր և տեսանէր զանկարգութիւնս, և զանիրաւութիւնս եննիչարացն և սպայոցն և անխնայ կոտորէր զնոսա, զմեծս և զփոքրս: Վասն որոյ միաբանեցան դասք եննիչարոցն և սպանին զսուլթան Օսման թագաւորն: Եւ ի նմին ժամանակի էր ի յԱրզրում քաղաքին Ասպազա փաշայն*[198]*, յոյժ արի և քաջ պատերազմող և բազմահնձել, սա վասն թագաւորի արեան վրէժխնդրութեան սկսաւ կոտորել զեննիչարիսն, և յԱրզրումայ սկսեալ յամենայն քաղաքս և ի դաւառս կոտորելով գնաց մինչ ի յԱնկիւրիայ, և յոյժ անխնայ և սաստիկ չարչարանօք սպանանէր մինչև սպառել ամենայն եննիչարաց, և յԱնկիւրիոյ դարձաւ և եկն դարձեալ յԱրզրում, զբերդն ամրացոյց և նստաւ ի մէջն: Այլ և զկարաւանսն՝ որ յարևելից և յարևմտից գային յԱրզրում և գնային, արգել զամենեսեան հնարիւք և խաբէութեամբ՝ մինչ որ բազում կարաւանք ժողովեցան, ապա յաւուր միում զամենեցուն զատացուածսն յափշտակեաց, եթէ նաժտ և եթէ վէճ. և յետոյ ապստամբեցաւ ի թագաւորէն և եղև ջալալի. այլ և կա-*

1 ԲԳ *թագաւորաց որդիս*
3 Ա *զաղջիկ* Ա *զտղայ*
6 Ա *դդակսն*
9-10 Ա *երիս ամիսս... երից ամսոց*
10 Է *մանզուլ*
11 ԱԳ *զԱհմատի* Ա *չիք զՕսմանն*
12 ԱԳ *սպանին*
13 Գ *զոր փխ որ*
14 Ա *բարձին փխ վերացուցին* ԲՆ *վերացին*
15 ԱԳ *զՕսմանի* Գ *որդի*
15-16 Ա *ժամանակին... գդակքն*
16 Ա *զղզլպաշն* Է *զզըլպաշներն*
16-17 Գ *զԲազդատատ*
17 Բ *Օսման*
18-19 Ա.ԲԷ *զահվախանէքն*
19 Բ *և ի յայլ*
21 Ա.Գ *զփոքրսնս*
21-22 Ա.ԲԳԴՆ *եննիչարոցն և (ը)սպահոցն*
22 Բ *Օսմանն*
25 ԲԳՆ *զեննիչարիքն*
26 Գ *քաղաք* Է *Անկիւրեայ*
27 Ա *սաստկօք* Ա *ամենից*
28 ԱԲԳԴՆ *եննիչարոց* Ա *չիք և (յԱնկիւրիոյ)*
29 Ա *ի միջին* Ա *որք*
31 Ա *բազումք*
32 ԲՆ *զբաժանսն*

Օսմանական թագավորների ցանկն ըստ Աւաքել Դավրիժեցու։

մեցաւ միաբանել ընդ Պարսից, զի զքուէր որդին իւր բազում զօրօք առաքեաց առ Շահաբաս թագաւորն Պարսից։ Իսկ սուլթան Մուրատ թագաւորն առաքեաց ի վերայ այս Ապազա փաշայիս զիւր վէզիր խոսրով փաշայն. որ եկեալ էառ զբերդն Արզրումայ և զԱպազա փաշայն կալեալ տարաւ ի Ստամբօլ ի Ռշէ. թուին մերոյ. և թագաւորն նդ զԱպազայ փաշայն ի բանտի և յետոյ սպան ի ՌՁԳ. թուին յՕգոստոս ամսոյ։ Այս սուլթան Մուրատս առաքեաց զիւր վէզիրն զխոսրով փաշայն թէ, գնայ ի վերայ Բաղդատայ յառնուլ գնա, և խոսրով փաշայն գնացեալ եմուտ յերկիրն Պարսից ի կողմն Համադանայ, և եհաս մինչ ի քաղաքն Դարգազին, ձմեռն և ցուրտն եհաս ի վերայ, դարձաւ և եկն ի Թօխատ։ Վասն որոյ թագաւորն սուլթան Մուրատ առաքեաց զՄուրբուզայ փաշայն՝ սպանանել զխոսրով փաշայն, և նա եկեալ ի Թօխատ՝ սպան զխոսրով փաշայն ի ՌՀԲ. թուին։ Այս այն սուլթան Մուրատն է և վէզիր խոսրով փաշայն է, զոր ի Սահակ կաթուղիկոսի ներհակութեան ճառին յիշեալ եմք։ Թուին ՌՁԲ յՕգոստոս ամսոյ սուլթան Մուրատն սաստիկ եասախ արար թուխունին ընդ ամենայն աշխարհս տէրութեան իւրոյ, զամենայն դահվախանէք, որ յամենայն քաղաքս կային, քակեալ աւերեաց և խափանեաց. վասն զի ի ժամանակին՝ յորում ենկիչարիքն զսուլթան Օսմանն սպանին՝ ի դահվախանէքն նստեալ զսպանման խօսքն խօսէին խմելով զղահվայն և քաշելով զթուխունն։ Թուին ՌՁԳ. սուլթան Մուրատն գնաց ի վերայ Լհհաց ի պատերազմ. և Լհհացիք հնազանդեալ նմա դարձուցին յինքեանց։ Թուին ՌՁԴ ի ժամանակս այս սուլթան Մուրատիս ծառազատիկ արարին ազգն Յունաց, յորում ժամանակի էր վէզիր Բայրամ փաշայն, որ էր ինքն յազգէն Յունաց։ Վասն որոյ արար ելեւսպաշտուհին ազգին Յունաց, և զազգն Հայոց՝ թիւր ծանոյց թագաւորին, որոյ վասն բարկացաւ թագաւորն և սպան ի Հայոց մէկ քահանայ և երկու աշխարհականս։ Թուին ՌՁԴ յամսեանն Մարտի ել սուլթան Մուրատն ի Ստամբօլայ, և գնաց ի վերայ Երևանայ ի պատերազմ, յամսեանն Օգոստոսի ևհաս անդ, և ունէր ընդ իւր հօթն հարիւր հազար պատերազմող հեծեալ, թող զծառայականս և զբեռնակիրս, և մեծաւ զօրութեամբ ծեծեաց զբերդն, որ ի մէկ օրն ընդ ութ և ընդ տիշր վեց հարիւր և այլ աւելի թօփ զարնուին բերդին. վասն որոյ յինն օրն էառ զբերդն[150] և զիշխան բերդին՝ զորդին Ամիրգունայ խանին զԹահմազղուլի խանն

1 ԱՐԳԴՆ *միաբանիլ* Ա. *քեռորդին* Ա *բազմօք* ՈԳԴՆ *զքվեր որդին*
3 ԱՈՐ *Ապազայ*
4 Դ *էկեալ*
5 ԱՐՆԴ *մերում* Ա. *չիք և*
6 ՈՆ *զԱպազայն* Դ *զԱպազա* ԱՐՆ *չիք փաշայն*
6-7 Ա *յՕգոստոսի*
8 ԱԴ *չիք թէ* ԱԴ *գնալ* ԱԴ *և առնուլ*
10 Ա. *Դարգազին և ձմեռն բառերի միջև ավելացված է. քանզի զբաբիզօն ոչ կարաց առնուլ, զի (ըստ երևույթին Ոսկան Երևանցու կողմից)*
11 Ա. *Թօխաթ*
12 ԱՈՐԴ *Մուրբուզա*
13 Ա. *Թօխաթ Ր չիք ի*
14 Է *չիք ի*
15 Ա. *օգոստոսի ամսոյն*
16 Ա *զԲուխունն... ամէնեսեան Դ Թուխուն*
17 Է *զդահվայխանէք* Ա *յամենեսեան*
19-20 Ա *զդաֆախանայան Դ ի զդաֆվախանէքն Ե իդահվայխանէքն*
20 Ա. *խօսն է սպանման*
22 ԱՐ *հնազանդեալք*
28 ԲԳԴՆ *ելաւ*
33 Ա. *հարին փխ զարնուին*

իւրովք իշխանօքն առաքեաց ի Ստամբօլ, այնքան պահեաց, որ անդէն մեռան[200]: Այս այն Թահմազղուլին է՝ որ զէջմիածնի քարերն առաքեաց ի Սպահան. ապա սուլթան Մուրատ զՄուրթուզայ փաշայն ժեՌ. քաջ պատերազմող զօրօք եդ ի մէջ բերդին Երևանայ, և ինքն էանց գնաց մինչ ի Թարվէզ, ձմեռն և ցուրան ետաս ի վերայ, այլ և համբաւ եկն ի Ստամբօլայ, վասն որոյ անտի դարձաւ ի վերայ Վանայ և գնաց ի Ստամբօլ: Թուին ՌՁԵ. յամենայնն Դեկտեմբերի, ի ժամանակս այս սուլթան Մուրատիս, թագաւորն Պարսից Շահաէֆի եկեալ պատեաց զբերդն Երևանայ, և ունէր ընդ իւր զօրս պատերազմող հարիւր հազար, թող զբեռնակիրս և զայլս. երեք ամիս նստաւ ի վերայ բերդին, և բազում չանիւ և չարշարանօք հազիւ կարաց առնուլ զբերդն, և ի զօրաց Օսմանցւոց կարի բազում կոտորեաց, և յինքն կալաւ զաշխարհն ամենայն. և յՕսմանցւոցն երեք փաշայ և այլ նշանաւոր իշխանս ընդ իւր տարաւ յԱսպահան, որք և անդէն մեռան: Թուին ՌՁԷ Ապրիլի ԻՀ նոյն սուլթան Մուրատն գնաց ի վերայ Բաղդատայ, և ի Նոյեմբերի Զ եհաս ի Բաղդատ, և ծեծեաց զբերդն հզօր զօրութեամբ ԼՀ օր, և ի Դեկտեմբերի Դ էառ զբերդն. և զզօրսն Պարսից, որ անդ էին, իսպառ կոտորեաց քինախնդրութիւն արարեալ վասն իւրոց զօրացն, զորս կոտորեցին Պարսիկք յԵրևան, և զփաւաւոր իշխանն Պարսից, որ էր ի մէջ բերդին, որում անունն էր Խալաֆ բէկ, բազում իշխանօք առաքեաց ի Ստամբօլ, և անդ մեռան. և յիւրոց իշխանացն կարգեաց իշխան ի Բաղդատ, և զամենայն աշխարհն յանձն արար նմա. ապա դարձաւ ի Բաղդատայ և գնացեալ նմուտ ի Ստամբօլ մեծաւ փառօք ի Թուին ՌՁՐ Յունիս ամսոյ յերկուսն: Թուին ՌՁԹ եղև բարիշութիւն ի մէջ երկուց ազգացն, և թագաւորացն Օսմանցւոց և Պարսից. զի թագաւորն Պարսից Շահաէֆի զԵրևան էառ, և թագաւորն Օսմանցւոց սուլթան Մուրատն զԲաղդատ էառ, յետ առնլոյ զքաղաքս զայսոսիկ միաբանեցան երկոքին թագաւորքն և արարին բարիշութիւն, պայման եդեալ մինչև ցերեսուն տարի պահել զբարիշութիւնն: Վասն որոյ ամենայն աշխարհք արևելեայք և արևմտեայք օրհնեն և ողորմի տան երկուց թագաւորացն, զի կեան ի խաղաղութեան. զի նախ քան զբարիշութիւնն ի փախստեան և ի թաքստեան կային, ի յափշտակութեան և յաւարառութեան, ի գերութեան և ի սպանութեան, ի սուլ և ի սուր, և մանաւանդ ողորմելի ազգս Հայոց: Այս սուլթան

1 ՐԳ չիք ի
3 ԱԴ Մուրատն Դ Մուրթուզա փաշայ
3-4 Ա. զՄուրթուզա... պատերազմօղիւք
4 ԱՐԳԴԵ Երևանու
5 Ա. անցեալ
6 Դ անդի
9 Ա. զզօրս Դ պատերազմօղն
11 Ա. բազմօք չանիւք
12 ԱԳԴԵ ի զօրացն Ա. զբազումս
13 Ա. զերիս փաշայս և զայլ
17 ԱՐԳԵ չիք ի ԱԴ որք
18 Ա. զքինախնդրութիւն
20 Ա. որոյ Ա. բազմօք
22 Ա. զիշխան
24 Ա. յունիսի Ա. յերկուսին
25 Ա. հաշտութիւն փխ բարիշութիւն Ր օսմանցւոցն
27 Ր Մուրատ ԱԳԴԵ զքաղաքս
28-29 Ա. զհաշտութիւն փխ բարիշութիւն
29 Ա. տարիս Ա. զհաշտութիւն փխ զբարիշութիւնն Ր զբարիշութիւն
30 Ա. ամենեքեան ԱՐԳ արևմտեայք
32 Ր զբարիշութիւն
33 ԱՐԳԴԵ կայ՝ն յափշտակութեան

Մուրատ թագաւորս կարի առաւելաւ արիութեամբ և քաջութեամբ, և սրտեղութեամբ և խելօք և յոյժ հնազանդեցոյց զՕսմանցիսն, որ ի չիշխել զանունն սարսէին, զի թագքիր սուրաթ եղեալ հանապազ շրջէր ի մէջ քաղաքաց և ի մէջ բանակի զօրացն և ի մէջ ենկիչարոցն և սպայոցն, և տեսանէր և լսէր զչարութիւնս և զանիրաւութիւնս նոցա. այլ և ի մէջ գունդիկ շինականաց շրջեալ հարցանէր և տեղեկանայր ի նոցանէ զանիրաւութիւնս և զյափշտակութիւնս փաշաներաց և իշխանաց. և ի վաղուանն աւուրն առժամայն չարամահ արարեալ սատակէր, և բազում զօրեղ և նշանաւոր փաշայք և իշխանք, և շեխ և զաղի և մուֆթի կոտորեաց, և անխնայ կոտորէր իբրև զոչխար, վասն որոյ ամենեքեանքն սարսեալ դողային ի նմանէ: Այլ և որ զիւրև շրջակայ ազգ և թագաւորք կային, սարսեալ դողային ի նմանէ. զի որպէս զառիւծ յաղթող և զօրեղ էր ի վերայ ամենեցուն. և այսպէս մնծաւ փառօք և յաղթող զօրութեամբ վարէաց զ[illegible] զթագաւորութիւնն ի կեանս իւր. իսկ ի թուին ՌՁԹ ի սուրբ Սարգսի շաբաթու հինգշաբթէջ աւուրն մեռաւ այս սուլթան Մուրատ թագաւորս և ամենայն աշխարհ կսկծաց ընդ մեռանելն նորա. և մինչ տակաւին յոգւոջ կայր սուլթան Մուրատս՝ էած առաջի իւր զեղբայրն իւր, որում անուն էր սուլթան Իբրահիմ. և կացոյց զնա թագաւոր ի տեղի իւր՝ և ինքն մեռաւ ի նոյնում աւուր: ԺԸ. Թուին ՌՁԹ. նստաւ թագաւոր սուլթան Իբրահիմն. և ոչ արար դործ ինչ արժանի յիշատակի, ո՛չ արիութիւն և ոչ ուղղութիւն: Բայց ի սորա ժամանակն ազգն Օսմանցւոց կազմեցին բազում նաւս և լցին պատերազմող արամբք, և համբաւեցին թէ գնամք ի վերայ Մալթայու կղզւոյն. և խաբ տուեալ գնացին ի վերայ կրիտէ կղզւոյն, որ էր ի ձեռն վենէտիկցւոց, և դիւրաւ առին զնա, զի բնակիչք կղզւոյն չօժարէին յառնուլն Օսմանցւոց, և առին Օսմանցիք զկրիտէ կղզին ի վենետիկցւոց ի թուին ՌՂե: Այս սուլթան Իբրահիմս հետևեցաւ զորովայնս և զախտս բուծանել, քանզի խոտորեցաւ յախտս իգամոլութեան կարի առաւել. զի թող զկանայս և զհարճս իւր՝ բազս ևս պահէր առ ինքն, այլ և զկանայս և զդստերս իշխանաց բռնութեամբ ածեալ կատարէր զկամս իւր յայտնի և համարձակ, վասն որոյ վշտացան ազգ և իշխանքն իւր, և միաբանեալ՝ զորդին նորա, որում անունն էր Սուլթան Մահմատ, եդին ի տեղի նորա թագաւոր. և սպան զսուլթան Իբրահիմն սպանին ի թուին ՌՂէ: ԺԲ. Թուին ՌՂէ

2 Ա.ՐԳԴ *խելօք*
3 Ա.ՐԳ *բազպիր*
5 ԱԴ *սպահոցն* ՐԳՆ *բսպահոցն*
ն *զչարութիւնսն*
6 Ս. *գունէկաց*
7 Ա. *փաշայից*
9 Ա. *զբազում*
9-10 Ա. *զնշանաւոր փաշայն և զիշխանս, և զշեխս և զդադիս* Դ *փաշայս և իշխանս, և շեխս և զադիս*
10 Ա. *զմուֆթիս* Դ *մուֆթիս*
11 Բ *ամենեքեան* Ա. *ի սմանէ*
12 ԱԲ *ի սմանէ*
13 Ա. *յաղթօղու*
14 ն *զթագաւորութիւն*
15 Ա. *ի սրբոյ* Բ *շարաթուջ*
18 Ա. *որոյ անունն էր* ԳՆՆ *անունն*
21 Ս. *գդործ*
21-22 Ա. *զարութիւն... զուղղութիւն*
23 Ս. *զբազում* Ա. *պատերազմողիւք*
24 է *Մալլթայու* Բ *Մալթայոյ կղզոյն* ԳՆ *կղզոյն է խափ*
25 Ա. *կրիտայ* ԲԳՆ *կղզոյն... վէնէտիկցոց*
26 ԲԳՆ *կղզոյն* ԲԳՆ *յՕսմանցոց*
30 ԱԴ *զբազս* ԲԳՆ *բազք*
32 Ա.ՐԳ *ազգն*
33 Ա. *որոյ... Մուհամատ*

Յուլիս ամսոյ Իէ նստաւ սուլթան Մահմատ թագաւոր և ոչ արար գործ ինչ յիշելոյ արժանի, զի տկար է զօրութեամբ այլ և մարմնով, նաև հաւտկաւ՝ տղայ և հաղիւ թէ զաշխարհ տէրութեան իւրոյ նուաճեալ պահէ, և այնպէս կայ մինչև ցայսօր, յորում է թուականն մեր ՌՃԺԱ և ապագայն Տեառն Աստուծոյ է գիտելի. որում միաւք յաւիտեանս ամէն։

ՍՅԼ ԵԻՍ ԲԱՆ ՎԱՍՆ ՕՍՄԱՆՅԻՒՅ ԹԱՓԱԻԻՐԱՅ

Տաճկաց թագաւորութիւնն։ Օսմանն որ առաջին եղև թագաւոր մեր թուականին ՈՂԱ. նստաւ, ՆԸ ամ թագաւորութիւն արար, և յիւրանց թուականին ՈԼԲ. նստաւ, Կ. ամ թագաւորութիւն արար։

Օրխանն՝ մեր թուականին ՉԼԲ. նստաւ, ԻԲ ամ թագաւորութիւն արար և յիւրեանց թուականին ՈՂԲ նստաւ. Լ. ամ թագաւորութիւն արար։

Մուրատն՝ մեր թուականին ՉՀԸ. նստաւ, ՆԸ. ամ թագաւորութիւն արար և յիւրեանց թուականին ՉԻԲ. նստաւ, Կ. ամ թագաւորութիւն արար։

Պայազիտն՝ մեր թուականին ՊԼՉ. նստաւ, ԺԴ. ամ թագաւորութիւն արար, և յիւրեանց թուականին ՉՉԲ. նստաւ, ԺԴ. ամ թագաւորութիւն արար։

Մահմետ՝ մեր թուականին ՊՇ. նստաւ, ԺԲ. ամ թագաւորութիւն արար. և յիւրեանց թուականին ՊԴ. նստաւ Ի. ամ թագաւորութիւն արար։

Մուրատն՝ մեր թուականին ՊԿԲ. նստաւ, ԻԲ ամ թագաւորութիւն արար, և յիւրեանց թուականին ՊԻԴ, նստաւ. Լ. ամ թագաւորութիւն արար։

Մահմետն՝ մեր թուականին ՊՂԸ. նստաւ, ԼԱ. ամ թագաւորութիւն արար. և յիւրեանց թուականին ՊՇԴ. նստաւ, ԼԲ. ամ թագաւորութիւն արար։

Պայազիտն՝ մեր թուականին ՉԻԲ. նստաւ, ԼԱ. ամ թագաւորութիւն արար և յիւրեանց թուականին ՊՉԸ. նստաւ, ԼԲ. ամ թագաւորութիւն արար։

Սէլիմն՝ մեր թուականին ՉԿ. նստաւ Թ. ամ թագաւորութիւն արար. և յիւրեանց թուականին ՉԺԷ. նստաւ, Թ. ամ թագաւորութիւն արար։

Սուլէյմանն մեր թուականին ՉԿԲ. նստաւ, ԽՉ. ամ թագաւորութիւն արար. և յիւրեանց թուականին ՉԻՉ. նստաւ, ԽԷ. ամ թագաւորութիւն արար։

Սէլիմն՝ մեր թուականին ՈԺԸ. նստաւ, Թ. ամ թագաւորութիւն ա-

1 Ա յուլիսի ԱԴ Մուհամատն Ա. գործ
2 ԱԴ արժանի յիշելոյ
5 ԲԴԸ գիտելի է Դե յաւիտեան
7-22 ԱԴ չիք
7 ԲԴԴՆ թագաւորացն
8 Դ ի մեր
11 ԲԴԸ Աւրխանն
17 ԲԴԴՆ Պայազիթն
18 ԲԴ չիք և
23-16 (հաջորդ էջում) ԱԴ չիք

րար. և յիւրեանց թուականին ՋՀԳ. նստաւ, Թ. ամ թագաւորութիւն արար։

Մուրատն՝ մեր թուականին ՌԻԴ. նստաւ, Ի. ամ թագաւորութիւն արար. և յիւրեանց թուականին ՋՋԲ. նստաւ, ԻԱ. ամ թագաւորութիւն արար։

Մահմետն՝ մեր թուականին ՌԽԴ. նստաւ, Ժ. ամ թագաւորութիւն արար. և յիւրեանց թուականին ՌԴ. նստաւ, Ժ. ամ թագաւորութիւն արար։

Ահմատն՝ մեր թուականին ՌՃԴ. նստաւ, ԺԴ. ամ թագաւորութիւն արար, և յիւրեանց թուականին ՌԺԴ. նստաւ, ԺԴ. ամ թագաւորութիւն արար։

Մուստաֆայն՝ մեր թուականին ՌԿԷ. նստաւ Գ. ամիս թագաւորութիւն արար. և յիւրեանց թուականին ՌԻԷ. նստաւ, Գ. ամիս թագաւորութիւն արար։

Օսմանն՝ ի նոյն թուին նստաւ, մեր և նոցա հաշուովն Դ ամ թագաւորութիւն արար։

Դարձեալ նոյն Մուստաֆայն մեր թուականին ՌՀԱ. նստաւ. և յիւրեանց թուականին ՌԼԱ։

Եւ դարձեալ այս ստոյգ։ ՈՂԲ. թուականին մերում Օսմանն նըստաւ. և ՃԸ. ամ թագաւորեաց։

ՋՃ. թուին Օրխանն նստաւ. ԻԹ. ամ թագաւորեաց։

ՋՀԹ. թուին Մուրատն նստաւ. և ՃԸ. ամ թագաւորեաց։

ՊԼԷ. Թուին Պայազիտն նստաւ. ԺԴ. ամ թագաւորեաց։

ՊՃԱ. թուին Մահմետ նստաւ. ԺԹ. ամ թագաւորեաց։

ՊՀ. թուին Մուրատն նստաւ. ԻԹ. ամ թագաւորեաց։

ՊՂԹ. թուին Մահմետ նստաւ. ԼԱ. ամ թագաւորեաց։

ՋԼ. թուին Պայազիտն նստաւ. ԼԱ. ամ թագաւորեաց։

ՋԿԱ. թուին Սէլիմ նստաւ. Թ. ամ թագաւորեաց։

ՋՀ. թուին Սուլէյման նստաւ. Խե. ամ թագաւորեաց։

ՌԺե. թուին Սէլիմ նստաւ Թ. ամ թագաւորեաց։

ՌԻԴ. թուին Մուրատ նստաւ. Ի. ամ թագաւորեաց։

ՌԽԴ. թուին Մահմետ նստաւ. Ժ. ամ թագաւորեաց։

ՌՃԴ. թուին Ահմատ նստաւ. ԺԴ. ամ թագաւորեաց։

ՌԿԷ. թուին Մուստաֆայ նստաւ. Գ. ամիս թագաւորեաց։

ՌԿԷ. թուին Օսման նստաւ Դ. ամ թագաւորեաց։

ՌՀԱ. թուին դարձեալ նոյն Մուստաֆայ նստաւ։

ԱՅԼ ԵՒՍ ԲԱՆ ԵՒ ԿԱՐԳ ՕՍՄԱՆՑԻՈՑ ԹԱԳԱՒՈՐԱՑՆ

ՈՂԲ. թագաւորեաց Օսման յազգէ Տաճկաց, ամս ՃԸ, որոյ անուամբն Օսմանլու կոչեցան։

15 Բն *հաշուովն*
17-36 ԱԴ չիք
17 Գ *ՌԼԱ նստաւ*
22 Բն *թագաւորից* փխ *թագաւորեաց* (գրե- իե ամենուրեք)
25 ԲԴն *Մուրատ*
27 ԲԴԴն *Պայազիթն*
38 Ր *թագաւորեց*

ՉԾ. մեռաւ սուլթան Օսմանն և թագաւորեաց Օրխանն որդի նորա ամս իԲ։ ՉԿԱ. էառ սուլթան Օրխաննն վԱտրանայ։ ՉՀԲ. թագաւորեաց Մուրատ ամս ԾԲ։

ՊԼԷ. թագաւորեաց Պայազիտ ամս ԺԴ։

ՊԾԱ. մեռաւ Պայազիտն և թագաւորեաց Մահմետ որդի նորա ամս ԺԲ։

ՊԾԱ. թագաւորեաց Մահմետ ամս ԺԲ։

ՊՀ. թագաւորեաց Մուրատ ամս իԲ։

ՊԾԱ. թագաւորեաց Մահմետ ամս ԺԲ։

ՊՂԲ. թագաւորեաց Մահմետ ամս ԼԱ։

ՋԲ. էառ սուլթան Մահմետն զԲիւզանդիայ։

ՋԼ. մեռաւ սուլթան Մահմետն, և թագաւորեաց Պայազիտ որդի նորա։

ՋԼ. թագաւորեաց Պայազիտ ամս ԼԱ։

ՋԿԱ. թագաւորեաց Սէլիմ ամս Ք։

ՋԿԱ. Սէլիմն սպան զհայրն իւր զսուլթան Պայազիտն և ինքն թագաւորեաց ամս Ք։ Եւ եղև խռովութիւն ի մէջ երկու եղբարցն սուլթան Սէլիմին և Ահմատին, և եղև սուլթան Ահմատի որդին Մուրատն Սօֆի։

ՋԿԱ. եղև խռովութիւն ի մէջ որդւոցն սուլթան Պայազիտին. և թագաւորեաց Սէլիմ փոքր որդի նորա։

ՋԿԲ. Սէլիմն սպան զհայրն իւր զսուլթան Պայազիտ և ինքն թագաւորեաց։

ՋԿԲ. առաւ սուլթան Ահմատն որդւովք և դստերօք իւրովք և փախստական եղեն զօրք նորա։

ՋԿԲ. սուլթան Սէլիմն կոտորեաց զզօրս Շահիսմայիլին։

ՋԿԴ. կամ ՋԿԴ. սուլթան Սէլիմն դնաց ի վերայ Շահիսմայիլին. և պատերազմեցան ի Չալդրան, և ոչ կարաց առնուլ զնա։

ՋԿԴ. էառ սուլթան Սէլիմն զԿամախ։

ՋԿԵ. էառ զԱմիթ։ ՋԿՉ. էառ զՇամ և զՄսըր։

ՋԿԸ. չարացաւ Սէլիմն և արար զառաջին տղայ ժողովումն ի քրիստոնէից.

1 ԲՆ *սուլտան ... թագաւորեց* Դ չիՓ *Օսմանն և* ԲԴՆ *Օրխան*

3 Դեի՛ *ամս ԾԲ* –ից ետոյ ավելացնում են. *ՉՀԲ թագաւորեաց Մուրատ ամս ԾՀ* (այս տողը Բ ձեռագրում չնչված է)

4 Բ *թագաւորեց* (Բ և Դ ձձ. գրեթե ամենուրեք տալիս են *թագաւորեց* ձևը) Ի *ամս ԺԴ* –ից ետոյ ավելացնում է. *ՊԼԸ թագաւորեաց Պայազիտ ամս ԻՀ* ԱՐԴՆ *Պայազիթ*

5 ԱՐԴՆ *Պայազիթն*

9 ՐԳեի՛ *ամս իԲ* –ից ետոյ ավելացնում են. *ՊՀԲ թագաւորեաց Մուրատ ամս իԲ*

12 ԱՐԴՆ *Պայազիթ*

14 ՍՐԴՆ *Պայազիթ* Բ *թագաւորեց*

16 ԱՊ չիՓ *ՋԿԱ, զի Սէլիմ* ՐԲ *Սէլիմ* ՍՐԴՆ *Պայազիթն*

17 ԱՊ չիՓ *ամս Ք* Ա *վս որոյ փխ* Ե*ւ* Ա *երկուց եղբարց* Դ *երկուց*

18 Ա *որդի*

19 ԱՊ չիՓ *ՋԿԱ եղև... սուլթան* ԲՆ *որդոց* Գ *որդոցն* Դն *Բայազիթին*

20 ԱՊ *որդի նորա փխ Պայազիտին* ԲՊ *Պայազիթն* ԲՊ Ե *թագաւորեց*

21 ԲՊ *Պայազիթն*

21-22 ԱՊ չիՓ *ՋԿԲ Սէլիմն... թագաւորեաց* Դն *Բայազիթն... թագաւորեց*

23 ԲԳե՛ *որդովք*

24 ՍՊ *փախստականք*

25 ԲՆ *Շահիսմայէլին* Գ *Շահիսմայելին*

27 ՍԲԴՆ *Չալտրան*

29 Դդե՛ *զԱմիթ* ԲԴՆՀ *զԱմիթ* –ից ետոյ ավելացնում են. *ՋԿՉ էառ զՄսըր* Բ *զՄսըրր*

30 ՍԲԳԴե՛ *ժողովն*

ՋՀ. մեռաւ Սէլիմն, և թագաւորեաց Սուլէյման որդի նորա ամս ԽԵ։

ՋՀ. մեռաւ սուլթան Սէլիմն և թագաւորեաց Սուլէյման որդի նորա։

ՋՀԵ. գնաց սուլթան Սուլէյման ի Պուտուն ի թախտն Ընկռուզաց և էառ զնա։

ՋՁԴ. էառ սուլթան Սուլէյման զԲաղդատ։

ՋՂԲ. Մաղաքիայ վարդապետն Դերջանցի գնաց առ սուլթան Սուլէյմանն, և վերացոյց զաղայ ժողովելն, հրամանաւ նորին ի Դերջանայ և ի Բաբերդու։

ՌԺԵ. գնաց սուլթան Սուլէյմանն ի վերայ Փէջայ և անդ մեռաւ ի Սէյիթվար։ Եւ թագաւորեաց Սէլիմ որդի նորա ամս Թ։

ՌԺՋ. թագաւորեաց սուլթան Սէլիմն։

ՌԻԴ. մեռաւ սուլթան Սէլիմն և թագաւորեաց Մուրատ որդի նորա ամս Ի.

ՌԽԴ. Յունվարի Ջ. մեռաւ սուլթան Մուրատն. և թագաւորեաց Մահմետ որդի նորա, Յունվարի ԻԲ. ամս ԺԲ. սա էառ երկու բերդ ի Մաճարէն։

ՌԽԴ. Դեկտեմբերի ԼԱ. մեռաւ սուլթան Մուրատ և թագաւորեաց Մահմետ որդի նորա Յունվարի ԺԷ։

ՌԽԴ. մեռաւ սուլթան Մուրատն և թագաւորեաց որդի նորա ամս Թ։

ՌՃԴ. մեռաւ Մահմետ, և թագաւորեաց Ահմատ որդի նորա ամս ԺԴ։

ՌԿԷ. առաքեաց սուլթան Ահմատն զթաթար խանն և զխալիլ փաշայն ի վերայ Շահաբասին, և ոչ կարացին առնուլ զնա, այլ աւերեալ զթարվէզ և զշրջակայս նորա՝ դարձան յետս։ Եւ յայսմ ամի մեռաւ սուլթան Ահմատն և թագաւորեաց Մուստաֆայ եղբայր նորա Նոյեմբերի ԺԹ. օրն Չորեքշաբաթի. յամիսս երեք։ Եւ ի սոյն ամի ընկեցին իշխանքն զսուլթան Մուստաֆայն, և թագաւորեցուցին զՕսման զորդի սուլթան Ահմատին, Փետրվարի ԺՋ. օրն երկուշաբաթի, որ թագաւորեաց ամս Դ։

3 Բ *թագաւորեց*

3-4 ԱԴ չիմ *ՋՀ մեռաւ սուլթան... որդի նորա*

5 ԱԲԴԳԵ *Սուլէյմանն ի Պուտուն է ի Պուտունի Բ ի թախթն*

6 ԲԳԵԼ *էառ զնա* –ից ետու ավելացնում են. *ՋՀԼ գնաց սուլտան Սուլէյման ի Պուտուն յաթոռն Ընկռուզաց և էառ զնա*

7 ԲԳԵԼ *զԲաղդատ*–ից ետու ավելացնում են. *ՋՁԲ էառ սուլթան Սուլէյման զԲաղդատ։* Ա *Սուլէյմանն*

8 ԲԳԵԼ *Դերջնի*

9-10 ԲԳԴԵԼ *Դերջնայ*

12 ԲԳԵԼ *ի Սէյիթվար*–ից ետու ավելացնում են. *ՌԺԵ— Մեռաւ սուլթան Սուլէյմանն Բ թագաւորեց* ԲԳԵԼ *ամս Թ*–ից ետու ավելացնում են. *ՌԺԵ թագաւորեաց Սէլիմն*

13 Դ *թագաւորեց*

14 ԲԴ *թագաւորեց*

16 ԲԴ *թագաւորեց*

17 Ա. *զերկուս բերդս*

19 ԱԴ *սուլտան Մուրատն* ԲԴԵ *սուլտան Մուրատ* Դ *թագաւորեց*

21 ԱԴ չիմ *ՌԽԴ... ամս Թ* Բ *թագաւորեց* Դ *թագաւորեց*

25 Ա.Է *այլ և աւերեալ փխ այլ աւերեալ*

27 Դ *թագաւորեց*

28 Ա *ամիսս երիս*

29 Ա *որդի*

30 Դ *երկուշաբթի* Դե Բ *շաբաթի* Դե *թագաւորեց*

Ոկէ. թագաւորեաց Մուստաֆայ ամիսս երիք. և ի սոյն ամի թագաւորեաց Օսման ամս Դ. տասներիք ամաց, Փետրվարի ԺԶ. օրն երկուշաբաթի։

ՌՀԱ. սպանաւ սուլթան Օսմանն ի զօրաց իւրոց, և հանեալ ի բանտէն զսուլթան Մուստաֆայն զեղբայր սուլթան Ահմատին, վերստին թագաւորեցուցին Մայիսի ԺԲ։

ՌՀԲ. ընկեցին զսուլթան Մուստաֆայն և թագաւորեցուցին զսուլթան Մուրատն յՕդոստոս ԼԱ յաւուր կիրակէի։

ԳԼՈՒԽ ԾԲ

ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՒՈՐԱՑՆ[201]

Սկիզբն Շխասֆին է[202], որ է իշխան Արտաւիլու, որոյ որդի է Շըխ-Հայդար. այս Հայդարս էառ իւր կին զքոյր Եաղուբ[203] թագաւորին Թարվիզոյ, որ էր թոռն Ջհանշահ թագաւորին[204]. և ի Շըխ-Հայդարէն[205] և ի քուերէն Եաղուբ թագաւորին ծնանի որդի և անուանի Իսմայիլ։ Այս Հայդարս և իւր կինն խորհին սպանանել դեղով զԵաղուբ թագաւորն[206], զի ինքեանք առցեն զթագաւորութիւն, և սիրոյ պատճառանօք կոչեն զԵաղուբ թագաւորն ի ճաշ, և տան ուտել նմա զդեղեալ կերակուրն. և չետ ուտելոյն զգաց թէ դեղեալ է կերակուրն, և բռնութեամբ նոցունց ևս տայ ուտել ի կերակրէն։ Եւ սոքա երիքեանքն մնռանին ի միասին՝ Եաղուբ թագաւորն և քոյրն իւր և Շըխ-Հայդարն[207], և ապա անտէրանալ աշխարհն և լինին խռովութիւնք և պատերազմունք[208]. և զմանուկն Իսմայիլ փախուցանեն ի կղզին Աղթամար և անդ սնանի և հասանէ յարբունս հասակի[209]. յայնժամ առեալ զնա աղգականաց իւրոց բերեալ յայտնեն ամենեցունց, թէ սա է երկուց կողմանց ժառանգն, քանզի որդի է Շըխ-Հայդարին, և քուէր որդի Եաղուբ թագաւորին[210]։ Վասն որոյ ամենեքեան հաւանեալ կացուցանեն զնա թագաւոր ի տեղի Եաղուբ թագաւորին. և այս Իսմայիլս ծնանի զՇահթահմազն[211], և նա՝ զերկրորդ Շահիսմայիլն[212], և զՇահխուդաբանդէն[213], զկնի Շահթահմազին թագաւորէ երկրորդ Շահիսմայէլն, և զկնի այս Իսմայիլիս՝ Շահխուդաբանդէն։ Զկնի սորա թագաւորէ որդի սորա առաջին Շահաբասն[214]. զկնի սորա թագաւորէ թոռն սորա Շահսէֆի[215]. զկնի սորա

1 Դե *թագաւորեց*
1-2 Դե *թագաւորեց Օսմանն*
2 ԱԲԳ *Օսմանն*
2-3 ե Բ *շաբթի*
8 Ա *յօգոստոսի ամսոյն է կիւրակէի*
11 ԲԳե *Շըխսաֆին է* ԱԲԳ *որ էր իշխան* Գ *Արտաւիլոյ*
12 ԱԴ *շէխ*
13 ԲԳե *Ջահրնշայ* Դ *Ջահնշայ* ԱԴ *շէխ*
14 ԲԴԳե *քվներէն*
16 ԱԲԳե *առնիցեն* ԴԳե *զթագաւորութիւնն*
19 ԱԳԴե *հրնքեանս* ԱԴ *մնռան*
20 Ա *շէխ*
21 ԱԲԴԳե *անտիրանալ* ԲԳԴ *լինի*
22 ԲԴ *Ախթամար*
25 Ա *շէխ* ԲԴԳե *քվներ*
27 ԱԲԴէ *զՇահթահմազն*
28 ԱԲԴԳե *զշահ Խուդաբանդէն*
28-29 Գ *շահ Թամազին*
29 ե *չիբ և*
30 Բ *զշահ Խուդաբանդէն*

թագաւորէ որպի սորա երկրորդ Շահաբասն[216]*։ Եւ*[217] *ի Ռճժե. թուին մերոյ յամսեանն Սեպտեմբերի ժ. մեռաւ այս երկրորդ Շահաբասն, և ի նոյն թուին և ի նոյնում ամսեանն, եդին ի տեղի նորա թագաւոր զնորին որդին զՇահսէֆին*[218]*, ըստ անուան իւրոյ պապոյն, վասն որոյ զսա անուանեմք երկրորդ Շահսէֆի։ Եւ յետ նստելոյ Շահսէֆոյս թագաւոր ինքս հանապազ ցաւագար կայր, այլ և շրջակայ թշնամիք ապստամբեցին յերկիր սորա, վասն որոյ հմայողք ասացեալ են, օրն և ժամն, յորում նստեալ էր թագաւոր՝ ոչ է լեալ օր բախտաւոր. վասն որոյ հմայելով ընտրեցին օր բախտաւոր և վերստին եդին յաթոռ, և փոխեցին զանունն և անուանեցին Շահ-Սուլէյման, և այժմ Շահ-Սուլէյման ասեն սմա։*

ԱՆՈՒԱՆՔ ԱԿԱՆՑ[219]

Հայերէն.	Ալապերէն.	Թուրքերէն	Փարսերէն	Ֆռանգերէն	Եբրայեցերէն
կայծ եաղուբ ժ.Զ. գոյն ուշի, կարմիրն Գ. գոյն. լուբջն Գ. գոյն. դեղին Գ. գոյն. սիպտակն Գ. գոյն. բայց կայծագոյնն լաւ է կարկեհան ասեն։		*եաղուբ քարբուկ*	*նաղուբ*	*Րուբինի*	*Ռուբէն*
Սարդիոն դեղին լինի և սահագոյն կարմիր	*Դեղին սէլեյան*		*Պիճայի*	*Տպազիօ*	
Տպազիոն բացագոյն կարմիր	*Բաւական սէյլան, բաց կարմրագոյն*	*պիճաահ և տպազիօ*			
Զմրուխտ փրանկի սլիտի կանաչագոյն	*Զմրուտ*			*Ծըմըռալօ*	
Շափիւղայ ծլրանգոյն	*Ճաղալադում՝*			*Ակեթով*	*կրկէհան*

1 Ա *երկրորդ շահարասն-իյ ետու ավելացնում է. որ էր կարի քրիստոնէասէր և ուղղադատ, զկնի սորա թագաւորէ որպի սորին շահսէֆի անուամբ. զկնի սորա թագաւորէ եղբայր սորին շահիսմայիլն։*

1.-11 ԱԴ *շիմ Եւ ի... ասեն սմա*

2 Ն *յամսեան* ՐԳՆ *Շահարասս*

4 ՐՆ *զՇահսէֆի*

5-11 Ր *շիմ Եւ յետ... ասեն սմա* Ն—*վերջին նախադասությունը ավելացված է այլ ձեռով*

5 Ի *Շահսեֆոյս (թագաւոր)*

8 ԱՐԻ *բաղդասար*

12 Ա *շիմ Անուանք ականց* (և ամբողջ աղյուսակը)։ ԳԴՆ *շիմ Անուանք ականց*

13 ՐԴՆ *ֆռանկերէն* ՐԳԴՆ *աղյուսակում առկա է «ետոմէրէն» խոտագրով ևս մեկ չլրացված սյունակ*

14 Գ *գուն*

16 ՐԴՆ *դեղին*

17 Գ *սպիտակն*

29-30 ՐԳԴՆ *կանաչագոյն է*

32 ՐԴՆ *ծիրանիգոյն*

	Յասպիս դեղնագոյն կանաչ	Զապարճատ			Ցիասպ	Ցիասպիսէ
5	Լիդրիոն ժբ. գոյն, սպիտակն լաւ է	Ալմաս			Տիամանթօ	
	Ակատ բազում գոյն է սևն լաւ է	Յայնըլհըր				
10	Ամէթիւստոս ալ գոյնն լաւ է	Լալ			Պալաշխ	
15	Ոսկէքար խոր ու դեղին և սաֆն լաւ է	Թիւրիա և կամ դեղին եաղսւթ			Սաֆիր	
	Բիւրեղ սպիտակ և սաֆն լաւ է	Պլօր	Նաճաֆ			
20	Գոճագմ.	Լազուարտ որ է լաճուարտ				

Սէյլան ասէլն ի Հնդուստան մէկ քաղաքի անուն է.

ԳԼՈՒԽ ՃԳ*

ՎԱՍՆ ԱՆՈՒՆՑ ԵՒ ՈՐՊԻՍՈՒԹԵԱՆՑ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԱԿԱՆՅ[220]

Կայծ, որ է եաղութիւն[221], խասխաթն[222] այն է, որ թէ մարդ ի բերանն առնու զծարաւն կտրէ, և թէ գոսկին հալես և գեաղութիւն ի մէջ հալած ոսկւոյն ձգես, նա չի այրիր և գոյնն չի աւերիր և ոչ պայծառութիւնն, այլ և ասացեալ են. թէ ով որ ի հետն պահէ՝ նա մօտ ի մարդիկ ընդունելի լինի, և գարկուածի լաւ է։

Սարդիոնն, որ է սէյլանն[223], արիւն որ երթայ չինքենէ, ի քթէն կամ յայլ տեղեաց, որ երկաթի կամ քարի եարայ չլինի. նա գսէյլանն ի ետն պահելն գարիւնն կտրէ, և ի կրակ չի այրիր որպէս գեաղութիւն՝ որպէս որ ի կրակն մտանէ՝ նոյնպէս ելանէ, և ոչ գոյնն աւերի և ոչ

* *Այս գլուխը նախորդ հրատարակութիւնում համարակալված չէ։*

7-19 Ա. չիֆ
25 Ա. *բարքն փխ խասխաթն*
26 ԴԻԵ *որ հալես*
27 Ա. *այրի և ոչ գոյնն աւերի* ԲԴԴ *աւիրիր*
28-29 Ա. *ով որ լինի հետն պահէ... մարդկան ընդունելի է* ԲԴՆ *մարդիք*
30 ԲԴՆ *սարդիոն* ԲԴԻՆ *ինքն իւրնէ փխ չինքենէ*
30 31 ԲԴՆ *ի քընթէ... տեղաց* Դ *ի քնթէ... տեղաց*
31 Ա. *խոց փխ եարայ, չիֆ նա*
31-32 Բ *ի հետն*
32 Ա և ներ *կրակում ոչ այրի* ԲԴԵ *կրակն ն եաղութիւն*
33 Դէ *նոյնպէս և ելանէ, և ոչ գոյնն...* ԲԴ *աւիրի*

ճիլան: Նոյնպէս և դեղին սէյլանն, որ է թիլայ և սիճաւտի և տպազիոն ասէն:

Զմրուխտին ըզսյիտին[224], թէ որ օձին դէմ բռնես, նա տեսանելուն պէս օձին աչացն ջուր կու իջանէ՝ և կուրանայ օձն[225], և բազումք են վկայած սյս բանիս փորձելով բազում անգամ, և թէ պահվարանաւ[226] ի վերայ սմաղի քարի[227] լաւ լոսես և յաչքն քաշես՝ զաչաց լոյսն աւելցնէ. և թէ զմրուխտն ի մասն լինի կամ ի հնոն, նա վնասակար թունաւորք չմերձենան ի նա. այլ և սնաւ խազ ասեն, որ այլ ի յայն խազալուն մարդ չի ազատիլ՝ և արիւն ձգելոյ, փորցաւութեան լաւ է, փորձած է:

Յասպիս, որ է զապարճատ[228] կանաչ դեղնագոյն է սակաւ մի, խասիաթն այն է, որ ի յինքն շատ հայիլն զաչաց լոյսն աւելցնէ, և կամ թէ սղկեն ի յաչքն քաշեն զաչաց բորն տանի՝ և ճուտամ զահմաթին[229] լաւ է:

Լիգրոն[230] որ է ալմաստ, որ հին և նոր լինի, հինն լաւ է՝ և զամեննայն քար ուտէ՝ և կտրէ և ոչ մաշի. և եաղուրի և սէյլանի պէս ոչ կրանայ ի կրակն, որպէս մտանէ՝ նոյնպէս ելանէ ի կրակէն. և թէ կտրտեն դինքն, թէ մեծ կտրի և թէ փոքր, նա եռանկիւնի կտոր լինի, կամ քառանկիւնի, կամ վեցանկիւնի. և սէրթիլ փէրթիլ. այսինքն գլուխն սուր և թևն սուր[231] և արճճով կտրի, ապի նօսրացնեն զարճիճն և դնեն զալմաստն ի մէջ արճճին, և բլլեն[232] և դնեն ի վերայ երկաթի օսրին և երկաթի կռանով հարեն ի վերայ արճճին որ ալմաստն ի մէջն է, կոտորի ալմաստն և մնայ ի մէջ արճճին, և չի սփռիլ այսինքն տաղըլմիշ լինիլ. այսինքն արճճի գիջութիւնն ղինքն ժողով կու պահէ. յետոյ բանան զարճիճն և հանեն զկոտորեալ ալմաստն և բան տանին. և թէ արճիճ չի գտանի, նա դնեն ի մէջ մնդրէ մոմի, և տասն երկու տակ թղթով բլլեն[233] և հարեն կռանով ի բլած[234] թղթին վերայ, ուր է ալմաստն. ի մէջն կտրտի ալմաստն, ձգեն ղթուղթն մոմովն ի մէջ

1 ՐԳՆ *տպազիո*
3 ՐԳՆԻՆ: *Զմրութի* Ն Ա. *նյէ փխ թէ որ* ՐԳՆ *դէմն*
3-4 Ա *ի տեսանելն օձի... ջուր իջանէ* ՐԳՆ *տեսանելուն պէս ի օձին* Ի *տեսնալուն պէս*
5 Ա. *վկայեալք* Ա *զաֆարանաւ*
6 Է *քար* ԱՐԳՆ *ի աչքն* ՐՆ *զաչացն*
7 ՐԳՆ *զմրութն* Ա *վնասակարք*
8 ՐԳՆ *սև*
8-9 Ա. *հազ... հազալուն*
9 ՐԳՆԻՆ *ազատիր* Գ *ձգելու, փորցաւութեանն*
10 Ա. *և փորձած է*
13 Գ *բորնն*
13-14 Ա. *գոթութեան* փխ *ճուտամ զահմաթին*
15 ՐԳՆ *ալմաս* Է *ալմազ*
17 Դն *որպէս որ մտանէ* փխ *որպէս մտանէ*
17-18 Ա. *նոյնպէս և ելանէ... կտրեն*
18 ՐԳՆ *չիմ* և ՐԳՆ *եռանգիւնի*
19 Ր *քառանգիւնի* Գ *քառանկունի*
20 Ր *գլուխ*
21 ՐԳ *զալմասն* Ա. *պատատեն* փխ *բլլեն* ՐԳՆ *պլըլեն* Գ *պլըլըլեն*
22 Ա. *հարկանեն* փխ *հարեն* ՐԳՆ *ալմասն*
23 ՐԳՆ *կտրի ալմասն* Գ *արճիճըն*
24 ՐՆ *լինիր* Ա. *չիմ այսինքն (արճճի)* ՐԳՆ *գիջութիւն* Ա. *ժողով պահէ*
25 ՐՆ *ալմասն* Գն *ի բան*
26 Ա. *ոչ գտանի* Ա. *չիմ նա* ՐԳ *չի գտնուի* Դն *չի գտնի* ՐԳՆ *մոմին*
27 Ա. *պատատեն* փխ *բլլեն* ՐԳՆ Գ *պլըլեն* Ա. *հարուն* Ր *հարնեն* Ա *պատատեալ* փխ *բլած* ՐԳՆ *որ է* փխ *ուր է* ՐԳՆ *ալմասն* ԳՐ *պլած* Գ *թըխտին*
28 ԱՐԳՆ *կտրատի* ՐԳՆ *ալմասն*

հոացնալ ջրոյն, հալի մոմն և թուղթն յերևան ելանէ. և մնայ կտրած ալմասան ի ջրոյ տակն, յետոյ հանէն և ծեծեն ի պղպատ ալմասան հաւանն և ի բան տանին զի այս լոսած ալմասուկն զմեծագին ալմասան թրաշ կու անեն հաղագնեն[235]. և ի հետ պահելն ուրախութիւն բերէ: Այլ և ասացնալ են ի «խասիաթի դիրքն»[236] թէ, երկու պատառազմողի՝ որ կողմն որ աւելակշիռ ալմասա լինի, այն կողմն յաղթող լինի, և պատոյգն Աստուած դիտէ. և թէ կինն՝ որ ի ծնունդն յամենայ, զալմասա քարն ի բազուկն կապեն արձակի Աստուծով: Եւ զայս գործս ունի անդամանդնայ քարն, որ ի ձախ ձեռն բռնէ ծնող կինն. և բազում անգամ փորձնալ են զայս:

Ակատն՝ որ է յայնըլհըր, խասիաթն զինչ որ ի չեաղուքն խասիաթ կայ ամենն յակատն կայ[237]. զի ի հետ վերցնողն նակբէթ դոդուքիւն[238] և քոր և այլ այսպիսիք չի լինիր. մալն և շնորհքն չի պակասիր. և մօտ ի մարդիկ ինքն և խօսքն ընդունելի լինի՝ և խելաց շահ ունի. և թէ որչափ դինի խմէ նա խելքն զինքն ոչ թողուր, ասեր են[239]. և հս չեմ հաւատար. զի դինին առուծի կաթն է, ով որ ըմպէ ագահութեամբ, ի փառաց, ի խելաց, և յապրանաց թափի:

Ամէթիօստոս՝ որ է լալն[240]. խասիաթն այն է, որ թէ ի բերանդ առնուս նա զծարաւն տանի, որպէս նաղուքն ունի զայս. և ի յուրախ արար մաջունն[241] թէ ծեծեն և խառնեն նա սրտին ուրախութիւն, և զհոգն և զցնորքն տանի ի սրտէն, և թէ յաշաց դեղերն խառնեն, նա աչաց լուսոյն լաւ է՝ սրատես առնէ:

Ոսկէ քարն՝ որ է թիլայ[242]. խասիաթն այն է, որ թէ բարակ շորով փաթաթիս և կայծ տնեն ի վերայ՝ չի այրիր շորն. և ով որ որ ի հետն վերցնէ պիշերավախ և յերազոյ անհոգ կենայ և ի չար պատահմանէ ազատի Աստուծով:

Բիւրեղն՝ որ է պիլօրն[243], խասիաթն այն է՝ որ ծեծեն և հին խոց լինի ցանեն ի վերայ՝ ողջանայ, և թէ զակռան սրբեն ակռին զժանկն տանի. և ի հետ պահելն վատերազ և գիշերավախաբ չի լինի. և ներկուի

1 Ա. *ջրոյ* ՐԳԴԵ *ջրին*
2 ՐԳԴԵ *ալմասան ի ջ(ը)րի* ԴԵՆ *ալմասային*
3-4 ՐԳՆ *ալմասովն... ալմասան*
4 Ա. *տաշեն* փխ *թրաշ կու աննն* Ա. *ուրախութիւն*
5 ՐԳԴԵՆ *եւ այլ* Ա. *բարոյից* փխ *խասիաթի*
5-6 Ա. *պատերազմողաց յոր կողմն*
6 ՐԳԴԵ *ալմաս*
7 ՐԳ *զբատոյգն*
8 ՐԳԴԵ *զալմաս*
9 Ա. *զոր Գ կին*
10 ևն չիմ *անգամ*
11 Ա.ՐԳԴԵ *յէյնըլհըր Գ յընյըլհըր, յէյնըլհր* (լուսանցքում) Ա. չիմ *խասիաթն Բ և խասիաթն* Ա. *բարք* փխ *խասիաթ*
12 Բ *ի յակաթն* ԴԵ *ամէնն ի ակատն* Ա. *դարշ* փխ *նակբէթ*
13 ՐԳԴԵ *բոր* փխ *քոր*
14 Ա. *մարդկան* փխ *մարդիկ* ՐԵՆ *մարդիք Գ մարդիկք*
15 Ա. *ասացնալ են*
16 Ա. *առիւծոյ* Ա. *ով որ*
18 Ա. *բնութիւնն* փխ *խասիաթն*
19 Ն *յաղուքն*
20 Ա. չիմ *նա* Ա. *ուրախութիւն է*
21 Ա.Ն չիմ *թէ* Ա. *դնդան* Ա. չիմ *նա*
22 ՐԳԴԵ *լուսոյն*
23 Ա. *բնութիւնն* փխ *խասիաթն*
24 ՐԳԴԵ *փաթաթիս* Ա. *ոչ* փխ *չի*
27 Ա. *բնութիւնն* փխ *խասիաթն* ԱՐԵ *թէ որ*
28 ՐԳԴԵ *յակատն... զակռին*
28-29 Բ *զժանկն կուտանի*
29 ԴԵՆ *կուտանի* ԴԵ *լինիր* ՐԵՆ *ներկուի*

կարմիր, և կանաչ, և դեղին և ալմանայն գոյն ընդունի. և ի կրակն կրանայ՝ և չի դալարիր, և կրացնալն յաշաց դեղերն մտանէ։

Գոճաղմն՝ որ է լազուարտ[244] *երկնից գունովն է կապոյտ, և լաւն այն է՝ որ տամարտ և սպիտակ չի լինի, և ի կրակն զգոյնն չփոխէ՝ և սակի նօգտանիր ունենայ, և թէ ի թէղապի ջուրն*[245] *ձգես ղլազուարտն նա նոյն ժամն սպիտակի և լինի որպէս զձիւն. և ի ֆռանկն մաղպուլ է*[246]*. և մեծ մեծ կտոր լինի. և հազար դրամ կտոր տեսի. և վեց հարիւր դրամն ի ՌՃ. թուին ծախուեցաւ ի Հալապ՝ տասն և հինգ ռիալ. և յառաջմէ քառասուն ռիալ էր ծախուիր. յՕզբեկէն կուգայ*[247]։

Մարգարիտն[248] *յայտնի է և երկու ցեղ է. մէկ ցեղն փուրթգալ, և մէկ ցեղն Հարմուզի. և Հարմուզի մարգարիտին շիրին ասեն. բոլոր լինի և դիւր և փայլուն և ծակն փոքր, այդ է մարգարիտին լաւն. Հարմուզին, այսինքն շիրին. և փուրթգալն դուր չի լինիր և փայլուն չէ՝ որպէս զշիրինին. և փուրթգալն զշիրին մարգարտին ռուպ դինն արժէ, այլի ի կրակն և կրանայ։*

Մարջան[249] *որ Հայերէն բուստ ասեն, լաւն խոր ու կարմիրն է. և լինի բաց կարմիր, և լինի սպիտակ, և ծառի պէս ի ծովն բուսանի*[250]*. և փայտի պէս ցնցկերուխ, և որդնոտի, և ծածկի. և թէ ի թիռն ձգեն՝ սպիտակի. և ի կրակն կրանայ և սպիտակի։*

Յեմանի[251] *լաւն սեալին է, այսինքն որ թափանցնի, խոր ու կարմիր է՝ և միջակ կարմիր, և բաց կարմիր լինի, և քառասուն դրամէն աւել մարդ չէ տեսեալ, և ասեն թէ տումն փլելոյ կամ պատ անկանելոյ լաւ է, որ չէ տեսեալ յեմանի Հագնողն ի տան ներքեւն կամ պատի ներքև մնացեալ. և մօտ Օսմանցիք և Պարսիկք և յամենայն Ռումիք մախպուլ*[252] *է այս քարս, ղի զանունն գրեն ի վերայ և ի մատնին դնեն*[253]*. բայց լինի սպիտակ գոյն՝ և դեղին, և մաւի*[254] *այլ լինի. բայց խոր ու կարմիրն՝ որ միագոյն լինի և առանց տամարի՝ այն լաւ է. ի մատանու քարն՝ որ լաւ լինի երկու ռիալ կամ երեք արժէ։*

Աղեղն[255] *կարմիր լինի՝ բաց կարմիր, և ալ լինի. լաւն մէկ գոյն լինի և առանց տամարի, դինն յեմենուն ռուպ*[256] *դինն արժէ։*

2 ԱՐԳՆ *չի դադարիր փխ չի դալարիր (Սարգիս Բանանայի մուտ «չի դալարիր»)* Ա *դեղին*
3 Է *լազուարդ*
4 ԱԳՆԵՆ *չլինի*
5 Գ *նաղտանիր* ԱՐԳՆ *թիղապի* Է *թեղապի*
6 ՐԳՆ *նաև ի նոյն*
7 Ա.Ր *մեծամեծ* ՐԳՆ *տեսայ*
8 ՆԷ *դրամն ծախուեցաւ* Ա *ծախեցաւ*
ՐԳՆ *ըռիալ* Գ *ըռեալ*
9 ՐԳՆ *ըռիալ* Գ *ըռեալ*
10 ԱԳ *փուրթգալ*
11 ԴՆ *մարգարտին* Է *չիմ բոլոր*
12 ՐԳՆ *դուր* ԳՆ *մարգարտին*
12-13 Է *բոլոր Հարմուզին*
13 ԱԳ *փուրթգալն*
14 ԱԳ *փուրթգալն* ԳՆ *մարգրտին*
ՐԳՆ *ըռուպ գինն աժէ* Գ *աժէ*
16 Ա *զոր*
17 ՐԳ *բուսնի*
18 Ա.Է *ծակծակի*
20 ՐԳՆ *Յիեամանի... սէալին է*
22 ԳՆ *տեսել*
22-23 ՐԳՆ *ասել... փլելու... անկանելու*
23 ՐԳՆ *յիեամանի... ներքև*
24 Ր *պարսիք* ԳՆ *փարսիք* Ն *ամենայն*
25 ՐԳՆ *կու գրեն*
26 ՐԳՆԵՆ *մայի*
27 ՐԳՆ *տումար*
27-28 Գ *լաւն է*
28 Է *ռեալ*
29 ԳՆ *աղեղ*
30 ՐԳՆ *յէմէնուն* Գ *յէմէնիուն* Գ *յոռւպ*
ՐԳՆ *աժէ*

Օձի քարն[257] *չորս ցեղ է՝ սև և դեղին և կարմրագոյն է և այլ գոյներ*[258]*. լինի որ բոլոր բոլոր վարդ լինի, և լինի որ նօղատայ լինի, և լինի որ երկայն երկայն և նաղաշ լինի, և ամենայն ցեղն ի չօձու խորխ կու նմանի, և ամենայն ցեղ օձու քար թէ որ ի դուր քարի վերայ քացախ կամ լէյմոնի ջուր դնես, և զայս քարն ի վերայ քացախին դնես և երկու քար լինին օձու քարն, նա պէտ կենդանի շարժին՝ և դան ողջունեն զմիմեանս և հետանան ի միմեանց. և խասիաթն այն է, որ թէ օձ որ թունէ զմարդ, նա ի վերայ լեառնին սրբեն, պուտ մի խըմցընեն և սրբեն ի վերայ թոյնին, նա ի նոյն օրն ազատի Աստուծով*[259]*. և Հնդիկքն խիստ խիստ կու խնդրեն զայս քարս, և գնով կու առնուն, և իւրեանց թագաւորն ի թագն և ի մատն զայս քարս կու դնէ, և մէկ մասալն երկու ոսկի արժէ։*

Եւ է քար մի, որ օձի քար ասեն, և թուրքերէն խարելիազ աշչասի[260] *ասեն, բոլոր և սպիտակ լինի, ի սատափի ջրնէն*[261] *է, մէկ երեսն ղուբայ*[262] *է և մէկէլ երեսն դուր*[263]*. և ի դուր երեսն ունի մարդուբայ*[264] *բարակ ոսկի թիլ, և է այսպէս* ◎ [265]*։ խասիաթն նորա այն է, որ թէ ուտպ, որ է պէգմազով ի վերայ օձիկ ցաւոյն*[266] *կարմիր տեղին դնես, նա կպի ի վերայ կարմիր տեղին, և ումն օր չի փրթիր ի վերայէն մինչև որ ողջանայ Աստուծով։*

Եասբ[267] *որ է դոյնն կանաչ փէրփէրի*[268] *դոյն, և կայ ի չինքն կարմիր կետեր շատ, և մօտ ֆռանկն մախազուլ է, և պինդ է ի բանելն, և շատ է, ամեն տեղ կայ։*

Խամահի՝ որ է երկաթ չինի[269]*. որ է սանկհատիտ՝ և հայերէն աղուն քար ասեն, և ծիրանի գոյն է ամենն. և երբ որ ի լեառնն սրբես նա կարմիր ելնէ, և կայ որ ալ ելնէ սրբածն, և կայ որ մաւի լինի, որ է ծիրանին, և դեղին ելնէ, և սպիտակ ելնէ, բայց կարմիրն՝ որ ի սրբածէն ելնէ, ուռուցի լաւ է, թէ վարդի ջրով ի լեառնն սրբես և զսրբածն ի վերայ ամենայն ցեղ ուռուցին սրբես, նա օգուտ Աստուծով։*

Ճղահ՝[270] *որ թուրք պապաղօրի ասէ յամենն դուներուն շաղկապեալ*

1 ԲԳԴԵ *Աւձի*
1-2 Ա. *գոյնք* ԲԳԴԵ *գուներ*
2 Ի: *չիմ և լինի որ*
3 Ի: *երկայն փխ երկայն երկայն*
5 Ա.ԲԳԴ *լէյմոնի* Ի: *լիմոնի*
6 Ա. *քարի... քարքն* Ա. *որպէս փխ նա ղէտ* Ի: *չիմ նա* Ե *քար լինի* Ի: *կենդանիք*
6-7 Գ *ուղջանին*
7-8 Ա. *զի թէ օձ թունէ*
8 Ա. *չիմ նա* ԲԳԴԵ *կուտ փխ պուտ*
8-9 Ա. *արբուցանեն փխ խմցնեն*
9 Ա. *քանն փխ սրբեն* Ա. *չիմ նա* ԲԳԵ *թունին* Գ *թիւնին*
10 ԲԳԴԵ *Հնդիքն* Ա.Ի: *առնուն փխ կու առնուն*
11 Ա. *չիմ կու*
12 ԲԳԴԵ *աժէ*
13 Ա. *զոր*
15 Ա.ԲԳԴԵ *ղուպայ* Գ *մեկել* Դ *մէկել*
16 Ա. *որպէս զօձ կուտացնել փխ այսպէս* ◎ *բարբ սորա փխ խասիաթն նորա* ԲԳԵ *սորա փխ նորա*
17 ԲԳԵ *բռուպ* Գե *ցաւուն*
18-19 Բե *վերայէն* Գ *ի վրայէն*
20 Գե *կանանչ*
21 Ա.Գ *պինա է ի բանիլն* Գե *ի բանիլն*
24-25 Ա. *նա կարմիր լինի*
25 Ա. *ալ լինի սրբածն* Ա. *մօտ փխ մաւի* ԲԳԴԵ *մօտ ելնէ*
26 Ա. *դեղին լինի, և սպիտակ լինի*
27 ԲԳԴԵ *նա ուռնցի լաւ է*
28 ԲԳԴԵ *ուռնցին* Ա. *քանս փխ սրբես* Բե *օգնէ*
29 Ա. *թուրքաց բառով* Ա. *յամենից գունից* ԲԳԴԵ *ի ամէն*

է յինքն և չեամանու երկրէն ելանէ. և ի փռանկն մախպուլ է և մեծ մեծ լինի՝ և չոր է և պինդ։

Մղնադիս[271] *թուրքերէն մղլաւուզ՝ հայերէն անդամանդ՝ սևագոյն է, յայտնի է, թէ որ ի հետն պահեն նա չղացաւին*[272] *լաւ է. և այլ* 5 *զբևեռն ցուցիչին զխաղիչն այսով առնեն. և թուրք զպլայ նումայի ասէ՝ որ է հարաւացոյց. և զերկաթն յինքն քաշէ և անշարժ հոգի են ասացեալ այսոր, և թէ որ մէկ դիշեր դնես զայս քարս և զխուրն կամ զդանակն ի մէկ տեղ, նա վաղիւն այն թուրն և դանակն զերկաթն ի յինքն կու քաշէ, և աժան է ամեն տեղ։

10 *Յեաշմ, ամեն լեզուաւ յեաշմ ասեն՝ լաւն*[273] *սպիտակ թղթի գոյն է, և այլ ցածն պապլամին*[274] *և ախմարաց փերփերի*[275] *գոյնն և ձիթապըտղի գոյն՝ և այլ ցածն սևն՝ և տամարոտն ամեն գոյն լաւ չէ, և լինի, որ երեք հազար դրամ և այլ աւելի լինի մէկ կտորն. և մօտ թուրքն մախպուլ է՝ և սպիտակն ի Պարսիկն մախպուլ է, և սպիտակին խա-*15 *թայի ասեն*[276]*, ի յաշխարհու Հնդկաց երկրէն գայ*[277]*. և ասեն թէ կայծակի լաւ է որ տեղ որ լինի կայծակ չի ընկնիր. սպիտակին սաֆն*[278] *որ հարիւր դրամ լինի, չորս ռիալ*[279] *արժէ. և այլքն ցած գին արժեն։*

Նիլումի[280]*. յարապի՝ փըհամ ասեն. լաւն սաֆի է՝ լուրջ գոյն ունի՝ և ի թափանձի՝ և ի լուրջ հաղութ նմանի. բայց ջուրն չի խաղալ զերդ* 20 *հաղութ, և մեծ երկու և երեք մսխալ*[281] *այլ կուլինի՝ և աժան է։*

Սլէյմանի[282] *որ է տակտակ, մէկ տակն սպիտակ և մէկ տակն սև. և մաւին և սպիտակն լաւ է. և խիստ պինդ է ի բանիլն, և մօտ ի փըռանկ պատուական է այս քարս։*

Սևպաճ[283]*. է սև քար և թեթև և խիստ խորու, սև է գոյնն, և թէ* 25 *ի ջուրն ձգես նա ի ջրին երեսն ելնէ. և իւր խասիաթն այն է՝ որ ի փոքր տղեկան աչաց դէմն կախեն ի օրանն, նա զփոքր տղեկանն լուրջ աչքն սևացնէ. փորձած է՝ և հայիլն ի յայս քարս զաչաց լոյսն աւելցընէ*[284]*։*

Տէհնէ ի փռանկի[285]*, որ արապի տըհնէճ ասեն, թէ քացխով կամ* 30 *լէյմոնի ջրով ի վերայ չօհարդար դանկին սրբես՝ նա ոսկեգոյն կամ արծաթի գոյն ելնէ ի դանակն, ինքն քար է կանաչ և ֆսֆուղի*[286] *գոյն*

1 Ա *յեամանու* ԲԳԴԵ *ի Յեամանու... ելնէ*
1-2 Դ *մեծամեծ*
2 Ա *պինտ*
3-4 ԱԷ *սևագոյն է և յայտնի է*
5 Բ *բևեռն* ԲԳԴԵ *զխաղիչ*
6 ԲԳԴԵ *ի յինքն* Ա *քարշէ*
7 Ա *այսմիկ*
9 Ա. *քարշէ է արժան է*
10 ԲԳ *հաշմ* Ա *թղթոյ*
11 ԱԲԳԴԵ *պալղամին*
12 ԱԳԴԵ *ի ամէն*
14 Բե *պարսիք* Գ *պարսիկք* Դ *պարսիկ*
15 Ա *յաշղարու* Բ *ի աշխարհու* ԳԴԵ *ի աշղարու* Գ *յերկրէն*
16 ԱԲԳԴԵ *ընկնիր*
17 է *ռիալ* ԲԳ *աժէ... աժեն* Գ *աժէ... աժէն* Ն *աժեն*
19 ԱԲԳԴ *ի թափանցնի* (Սարգիս Խահնայի մոտ *Թափանձի*)
20 Է *արժան է*
21 ԲԳԴԵ *Սըլէյմանի*
22 Ա. *պինտ*
22 23 Գե *ֆռանկն*
24 ԱԲԳԴԵ *սէպաճ և է սև* ԲԳ *խորու է*
26 ԱԲԳԴԵ *զլուրջ*
27 ԲԳԴԵ *քարն*
29 Ա *Տէհնէֆռանկի* ԲԳ *տէհնէճ* ասեն Դե *տէհնէ ի ֆրանկի... տէհնէճ*
30 ԱԷ *լէմոնի* ԱԳ *դանակին*
31 Բե *գոյն է*

է. նօղպա[287] մի ֆսթուղի գոյն, նօղպա մի կանաչ, և ոսկեգոյն որ ելանէ սրբածն՝ լաւ այն է, և ի յաչաց դնողքն կումատանէ, մէկ մսխալն երեք ռիալ, և չորս ռիալ արժէ՝ և ի կրակն չեմ փորձեր։

Փիրուզայ[288], երեք ցեղ է՝ իսհաղի[289], նշապուրի[290], և շապաէքի[291], լաւն սաֆին է՝ որ առանց տամարի լինի, և գունով իսհաղին է, և այլ բացագոյն նշապուրին է, և շապաէքին սպիտակագոյն է, շուտ ծերանայ և կանաչի. ասացեր ևն վասն փիրուզային՝ թէ ով որ ի մատն հագնի՝ ի դրամէ պակասութիւն չգաշէ. և խօսքն ընդունելի լինի, և չէ պարտ հագնողին որ անպատճառ խօսք խօսի, և մտածէ, թէ փիրուզայ եմ հագել, խօսքս ընդունելի է, և կու այրի ի կրակն. և իսհաղին՝ որ թէ միջակ բակլայի չափ լինի, չիսուն ռիալ արժէ, և նշապուրին կէս դին արժէ, և շապաէքին երկու դրամ արծաթ արժէ։

Մղնադիս ֆղայ[292] որ է արծաթի քաշօղ, որ զարծաթն ի չինքն քաշէ, թէ հանց որ ոսկւոյ և երկաթի և պղնձի և այլ խարդուք[293] որ ի մէ տեղ լինի, նա այս քարս զարծաթն կմբռնէ՝ որպէս մղլադուզն զերկաթն. և ժանկահարի գոյն է այս քարս. և թափանցկի, և սուղ է, և Հապաշու երկրէն կուգայ[294]. ապա Հնդիկքն խիստ կուզեն զայս, և ասեն մղնադիս ֆղայ, որ է արծաթի անդամանդ, և զարծաթն քաշէ չինքն որպէս զագահ մարդ, որ միշտ արծաթասէր և արծաթ քարշող է։

Զայս բանքս, որք վասն ականց են՝ զոր ահաւասիկ գրեցաք, այժմու ժամանակին ժամանեալ ումն քահանայ Սարգիս[295] անուամբ ի մերս աղգէ, հմուտ և տեղեակ բանից դրոց[296], որ բնակեալ էր ի քաղաքն Բերիայ՝ որ այժմ ասի Հալապ։ Ես էր կարի վարժ ի լեզուն Արապի, և Օսմանցւոց և Ֆռանկին. այլ և ծանօթ Հոռոմի լեզուին և Ջհուի լեզուին[297]. և էր ինքն արուեստիւ ակնագործ՝ որ զպատուական ակունս հարթէ և շինէ. այլ և դնող և վաճառող սոցին. և եղև ի գնալն մեր յԵրուսաղէմ յորժամ հասաք ի Հալապ՝ պատահեցաք այս Սարգիս քահանայիս, որ ի կարգս զրուցաց հանապազ խօսէր ընդ մեզ զորպիսութենէ ականց՝ և բանք նորա իբր ոչհաւաստի թուելով ի միտս

1 Ր*ն գոյն է* Ա*ն է չիմ է, նօղպա մի ֆըսթուղի գոյն* Ա*գ ֆսաուղի* Բ *ֆսաուղի* Ա*ըգն ոսկեգոյնն*

1-2 Ր*գն որ ելնէ... լաւն է գ ոսկէգոյնն, որ ելնէ... լաւն*

2 Ա*.բ ի սրբածն* Ա*. ի աչաց դնողն մատանէ* Ա*.ըգն ի աչաց ...մաղալն*

3 Բ*գդն է ռնալ... ռնալ*

4 Ա*.ըգդն փիրօզայ է շապաէքի*

5 Բ*գն տամառի*

6 Ա*.դէ չիմ է (շուտ)*

7 Ա *և ասացեալք են վասն փիրօզային* Բ*գդն ֆիրօզային*

8 Դ*ն հագնէ* Բ*գդն չի քաշէ գ ընդունել*

9-10 Ա*.ըգն փիրօզայ եմ հագներ գ փիրոզայ եմ հագներ*

11 է *ռնալ* Բ*գդն ածէ*

12 Ա*.ըգն դինն ածէ* Բ*գն շապաէքին* Դ*ն ածէ* Ա*.ըգդ ածէ*

14 Ա*. քաշէ* Ա*.ըգդն խարտուք* Ր*ն պղընձի գ պղնձի*

15 Ա*.ըգդն չիմ նա* Ա*. ըմբռնէ* Բ*գդն կուբռնէ գ մղդալուզն*

16 Ա*. ժանկաւոի* Բ*գդն ժանկարի*

17 Ա*. գայ* Ա*.ըգն հնդիքն*

18 Ա*. քարշէ*

19 Բ*գդն քաշօղ է*

20 Ա*. Զայսոսիկ բանսա... զորս և* Բ*գ ականց է, զոր և ահաւասիկ գրեն որ վասն ականց է*

21 Ա*.ըգ ժամանակիս*

22 Ա*.ըգն ընակեր*

23 Բ*գն Հալապ*

24 Ա*.ըգդն օսմանցու և ֆռանկի*

25 Ր *ակունսն*

27 Գ *Հալապ*

27-28 Ա*. այսմիկ Սարգսի քահանայի*

28 Բ*գդն քահանայիս*

29 Բ*գն բանքն*

խան[707]: *Դարձեալ ի սոյն ԹուԻն ղԴաշտեցի հայերն ի Սպահան քաղաքի միջէն հանին և յեղր քաղաքի բնակեցուցին հրամանաւ երկրորդ Շահաբասին: ԹուԻն ՌՃԾ. ղերևանցի և զայլ ևս հայերն հանին ի Սպահանայ քաղաքի միջէն, և յեղր քաղաքին բնակեցուցին հրամանաւ երկրորդ Շահաբասին*[708]: *Դարձեալ ի սոյն ԹուԻն ազգն քրդաց նահատակեցին զայր ոմն քրիստոնեայ Աւետիս անուն՝ հայ ազգաւ՝ յաշխարհին Մարաց՝ ի բերդն որ կոչի Փիզան, և տէրն Քրիստոս փառաւորեաց զնա երկնային լուսով, որ էջ ի վերայ նորա*[709]: *ԹուԻն ՌՃՂ. զՋհուտ ազգն՝ որ ի մէջ Սպահան քաղաքին բնակեալ էին, բռնութեամբ և չարշարանօք տաճկացուցին զնոսա ազգն Պարսից. ընդ սոցին և զայլ ևս ջհանեըն, որ յայլ քաղաքս Պարսից բնակեալ են, բռնութեամբ տաճկացուցին*[710]: *Դարձեալ ի սոյն ԹուԻն Դադիանայ թագաւորն մեռաւ և թագաւորութիւնն խանգարեցաւ՝ վի ոչ գոյր նմա որդի ժառանգորդ թագաւորութեան նորա*[711]: *Դարձեալ ի սոյն ԹուԻն և ի Փետրվարի ամսոյ Իէ. վախճանեցաւ Ջուղայեցի Սիմոն վարդապետն ի Թոխաթ քաղաքի՝ և անդէն թաղեցաւ. սա կարի վարժ էր քերականութեան արուեստին. և հանճարոյ արտաքին դրոց՝ և քաջաբան հակաճառող ընդդէմ ամենայն ազգաց*[712]:

ԹուԻն ՌՃԷ Ղարաղալխանի[713] *տէր մեծ երիսթաւն, որոյ անունն էր Ջալ*[714], *դնաց յԱսպահան ի դուռն շահին և ձեռնտուութեամբ շահի էհտիմալ դօլվաթին ոչ սպանաւ, այլ կենդանի դարձաւ յաշխարհն իւր: ԹուԻն ՌՃԹ. Մարտի ամսոյ Ա. Պաշիայուխի թագաւոր Աղէքսանդրն մեռաւ*[715] *և իւր փոխանակ որդին թագաւորեաց, անուն Բագրատ*[716]: *Դարձեալ ի սոյն ԹուԻն այս Բագրատս՝ որ փոխանակ իւր հօր Աղէքսանդրին թագաւոր նստաւ, իւր խորդ մայրն զսորին ղերկոսին դաչան խաւարեցոյց*[717] *վի ներհակութիւն անկաւ ի մէջ նոցա. այլ և իշխանքն իրերաց անմիաբանք եղեն, երկիրն աւերեցաւ, և թագաւորութիւնն խափանեցաւ: Դարձեալ ի սոյն ԹուԻն և յԱպրիլի ամսոյ Ա. աղուհացից հինգերորդ կիրակէին զործեցաւ այս, քանզի կարի ցրտային ծանր ձմեռն եղև՝ և պակեցաւ ծովն Գեղամայ և Սևան կղզին, որ է ի մէջ ծովուն, սորին բնակիչքն՝ որքան ամուր էր պաղն՝ ղերեսօք պաղին երթային և գային, և յորժամ թուլացաւ պաղն՝ որ ոչ բառնայր մարդ, յայնժամ կամեցան ջարդիլ զսառն, վի ճանապարհ արարեալ արտաքս գային ի ծովէն, վասն որոյ առաջնորդ վանից կղզւոյն Բարսեղ ան-*

2 Է *մէջէն*
3 ԱՐ *դերևանցիան*
7 Է *Ժիզան*
8 Ա *երկնայընով* Բ *Թվին ՌՃ*
9 Ա. *որք*
10 ԱԴ *չիմ զնոսա*
11 Ա. *քաղաքն*
12 Է *Դատիանայ*
12-13 Դ *չիմ Դադիանայ թագաւորն մեռաւ*
13 ԲԴԴ *խանկարեցաւ*
14 Գ *չիմ և*
15 Իէ *Իճ վիս Իէ Գ վաղճանեցաւ* ԱԲԴ *Ջուղայեցի*
16 Ա *ամենայն*
18 Ա. *ամենից*
19 ԲԴ *երիսթաւն*
20 ԲԴ *ձեռնտուութեամբ*
23 ԲԴ *թագաւորնց* Գ *անունն*
24 ԱԷ *հօր իւրոյ*
24-25 Ա *Աղէքսանդրու*
25 Գ *աչքն*
28 ԲԴԴ *յապրիլ*
28-29 Գ *յաղուհացից հինգերորդ*
29 Է *կիւրակէին*
29-30 Գ և *ծանրաձմեռն*
32 ԱՐ *զմարդ*

ուամբ վարդապետ, էառ ընդ իւր մէկ աբեղայ, և մէկ սարկաւագ, և երիք աշխարհական, մտին ի տուփ և սկսան կոտորել զպատն, և կոտորելով հատին և կէս ծովուն, յայնմհետէ սկսաւ շնչել հողմն ուժգին, և կամեցան չկաս գտանել ի կղզին՝ ոչ նմով հողմն, որ ալեօք ջուրցն զկոտորեալ սառան բերեալ բառնայր ի վերայ ափանցն, որով ծանրացեալ տուփքն ի ներքոյ սառին, և սուզան ի ծովն, վարդապետն և աբեղայն և երկու աշխարհականք, իսկ սարկաւագն և մէկ աշխարհական փրկեցան ի հնձմանէ, ողորմութեամբն Աստուծոյ[718]: Դարձեալ ի սոյն թուին և յԱպրիլ ամսոյ ԼԱ. յերկուշաբաթի աւուր, կայծակն եհար մէկ ձի ապան, զոր մերով աչօք տեսաք: Դարձեալ ի սոյն թուին և Յուլիս ամսոյ ԻԱ. յաւուր շաբաթու կրակ անկաւ ի մեծ քաղաքն Ստամբօլ մին; ի վախտն և վեց ժամս այրեցաւ յայժ բաղում տեղի[719]: Դարձեալ ի սոյն թուին հրաման արար թագաւորն Պարսից երկրորդ Շահաբասն, որ յազգէն մահմետականաց, ՌՇ. տուն թուրք տարան ի Կախէթ լցին՝ որ անդ բնակին[720]:

Թուին ՌՃԺ. Կովկաս լեռան բնակեալ վրացիք՝ ազգն, որ ասի Թուշ և Փշաւ ևկին ի պիշկի, և զայս ՌՇ. տուն թուրքս ի տուր քաշեցին ի ծերոց մինչև յաստեղնացու: Դարձեալ ի սոյն թուին շահն[721] ղեհտամալ զօրվաքն ընկից յիշխանութենէ վասն արձակման երիսթաւին, քանզի ասացաւ առաջի խաներուն նաև առաջի շահին, թէ թելադրութեամբ երիսթաւին[722] կատարեցին վրացիքն ՌՇ. տուն թուրքսն: Դարձեալ ի սոյն թուին նոյն երիսթաւի եղբօր որփիքն զիւր զլուխն կտրեցին և տարան առ ոտն շահին[723]. այս գործեցաւ թելադրութեամբ Շահնաւազ խանին[724] Թիֆլիզու, որ և ինքն ևս յազգէն վրաց էր, որպէս զի ինքն հատատարիմ երևեսցի առաջի շահին: Դարձեալ ի սոյն թուին Թամրազ թագաւորն, որ էր աէր Կախէթու, ելեալ ի վրաստանայ՝ գնաց ի Սպահան առ երկրորդ Շահաբասն հնազանդ նմա, և որպէս սովորութիւն է նմանատեր ազգին Պարսից, զառաջինն սիրով և մեծարանօք ընկալան զնա, բայց չետոյ ամանք քրիստոնեական հաւատոյն և օրինացն՝ բանիւ իշխանացն նմանեցաւ զնա շահն և ձգեաց ի բերնաց, և առաքեաց յաքսորս յաշխարհն Ֆահրապատու, ի քաղաքն Աստարապատ, և անդ մնաւ, և բաղումք ասէին, թէ կամօք շահին զնացեալ մնաւցին զնա[725]:

Ի թուին ՌՃԺ. գնաց Թամրազն ի Սպահան, և ի ՌՃԺԲ. մեռաւցին

1-2 Ս. *և զմի սարկաւագ և զերիս աշխարհականս*
3 Բ *հողմ*
5 Ա.ԲԳԴ *սառն*
7 ԲԴԵ *մեկ փխ երկու* Բ *մին* Գ *և փխ իսկ*
7-8 Ա.ԲԳԴ *աշխարհականն*
9 Ս. *յԱպրիլի Է Լ*
10 Ա.Դ *մերովք*
11 Ս. *յուլիսի Գ ընկաւ*
12 Ա.Դ *չիմ յայժ* ԲԳ *անդիք*
14 Գ *Շահնազարն*
16 Է *յերան* ԲԳԴ *վրացիքն*
18 Ս. *յաստղնդիայն* ԲԳ *յզրսաբնդիայ* Գ *յսանդիայն*
20 Ա.Գ *խանացն*
21 ԲԳ *երևսթաւին* ԲԳԴ *թուրքերն* ԳԴ *զՌՇ*
22 ԲԳ *երևսթաւի*
23 24 Ս. *շահնուազ... ինքնս*
24 Բ *Թիֆլիսու...ինքս* Գ *Թֆլիզու... ինքս* Դ *ինքնս է ինքնն*
28 Ս. *ննդատեր* Բ *զառաջին*
29 Ս. *քրիստոսասեան*
32 ԳԴ *կամօքն*
33 Ս. *հազար և հարիւր և տասներկուսին* Է *ՌՃԺ փխ ՌՃԺԲ*

գնա[726]*, այլև յարանցն, որք ընդ Թամրապիս էին, զընտիրան ապանին, բայց զմարմին Թամրապին հրամանաւ շահին տարան յերկիրն իւր ի Կախեթ*[727] *առ Լառն նմին Թամրապի*[728]*։ Թուին ՌՃԺԹ*[729] *յամսեանն Դեկտեմբերի, յետ անցանելոյ մէջ պիշերին, ի խոր առաւօտուն, երևեցաւ վարսաւոր աստղ մի յերկինս ի մէջ յարևելից և հարաւոյ, և ղվարսն իւր զկոյ յարևմուտս ունէր ձգեալ՝ և յելանելն իւրում, օր առաւ՝ շուտ ելանէր, և այնպէս շուտ ելանելով գնաց մինչ ի յերևիկոյն, և յորժամ էանց զմէջ պիշերոյն զարձոյց զվարսն իւր և ձգեաց զկոյ յարևելս, և այնպէս գնալով հետս մինչ ի յերևիկոյեան լոյսն և ապա անյայտ եղև*[730]*։ Այլ և ի սոյն Թուին, և յամսեանն Ապրիլի, զարձեալ երևեցաւ աստղ մի պիտաւոր ընդ արևելս ի կողմն հիւսիսոյ՝ յառաւօտու պահուն, և զվարսն իւր ունէր ձգեալ ի կողմն արևմտեան, և յելանելն իւրում օր առաւր յուշ ելանէր, և այնպէս գնալով հետս մինչև ի լոյս առաւօտուն, և անյայտ եղև*[731]*։*

Թուին ՌՃԺԸ. ի Սեպտեմբերի ամսոյ Ժ. վախճանեցաւ Պարսից թագաւորն երկրորդ Շահաբասն, սա յոյժ բարեբախտ էր, որ իւր շրջակայ թշնամիքն ինքեանց կամօք գային ի սէր և ի հնազանդութիւն սմա այլ և ունէր խնամս բարեգութ ի վերայ աղքին Հայոց։ Եւ յետ սորա թագաւորեաց որդին սորա, զորոյ զանունն կոչեցին Շահսէֆի, ըստ անուան պապոյն իւրոյ, վասն որոյ զսա անուանեմք երկրորդ Շահսէֆի[732]*։ Եւ յետ նստելոյ Շահնէֆոյս թագաւոր՝ ի շրջակայ ազգաց թշնամիք յարևան և ասպատակեցին զերկիր սորա, այլ և ինքն հանապազ հիւանդ և ցաւագար մարմնով կայր, վասն որոյ ըստ ձգողք և այլ հմայողք հմայելով ասացել են, Շահսէֆի անունն, որ ի վերայ դորա՝ ոչ է բախտաւոր. այլ և օրն և ժամն, յորում եդեալ են յաթոռ թագաւորութեան, ոչ է լեալ բախտաւոր. վասն որոյ փոխեցին զանունն և անուանեցին Շահ-Սուլէյման, և հմայելով ընտրեցին բախտաւոր օր. և վերստին եղին յաթոռ թագաւորութեան, և այժմ առողջ կայ և բարւոք, և զանունն Շահ-Սուլէյման ասեն և զրեն յամենայն տեղիս*[733]*։*

1 Բ *արանցն, որ*
2 Ի չիմ *ի*
3 Գ *Թամրապին* ԲԴ *զարձեալ Թուին փխ Թուին* ԲԴ *յամսեանն*
6-7 Ա. *աչ... յուշ փխ շուտ... շուտ* Գ *յուշ... յուշ ուղղած է շուտ... շուտ*
9 Ի *մինչ ի յերևիկոյն*
10 Գ *այն և փխ այլ և*
11 Ի *առաւօտու*
12 Ի *զզվարսն*
13 ԲԴ *մինչ ի լոյս* Գ *յառաւօտուն*
15 Գ *ի սեպտեմբեր*
15-29 Ա.Գ *այս ամբողջ հատուածը բացակայում է։ Բ ձեռագրում 15—21 տողերը գրած են այլ ձեռքով*
16 Ա.ԲԳԻ *բարեբաղդ*
17 Բ *կամօքն*
21-29 Բ չիմ

ԳԼՈՒԽ ԾԷ*

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՆՑԻՑ ՀԻՒՑ ԱՂՓԻՒՆ ԵՒ ԱՍՊԷՔԱՑ ԱՆՈՒՆ ՋՀՏԻՆ, ՈՐ ԱՒԷՐ ԹԷ ԵՒ ԵՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՓՐԿԵԼ ՀԻՒՑ ԱՂՓԻՆ. ԵՒ ԱՐՔ ԵԿԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՒ՝ ՉԻ ՓՐԿՑԻՑ ՉՆԱՍՑ, ԵՒ ԱՅԼՈՑ ԻՐԱՒՄԲԵԱՑՑ, ՈՐՔ ՈՒՑՈՒԵՑ ՀԵՏՕԲՑՈՅՆ[734]

*Ի թուին կնաարարին մերոյ Քրիստոսի Աստուծոյ ՈՒՈՒԿ.[735] ամին. և ի Հայոց թուականիս ՌՃԺԵ. ի կամուրիկոսութեան դերապայն և բարձրագոյ սիմոնայն տերէ Էջմիածնի տեառն Յակոբայ Ջուղայեցւոյս և ի թագաւորութեան Օսմանցւոց սուլթան Մահմատին, որուց սուլթան Իբրահիմին Յայտնեցաւ հարտար հրէայ մըն և անուն նորա Սապէթայ[736], ի Զմիւռին քաղաքի ծնեալ և սնեալ և յոյժ վարժեալ գրովն և ուսմամբն Հրէից, այլ և ինքն ի բնէ կարի հարտասան էր. և օր աւուր յառաջանայր և յաւելոյր ուսմամբ գրոց և հակաճառութեամբ, գորոյ զառաջադիմութիւնն տեսեալ բազումք աշակերտին նմա. և նա բանս արուեստակեալս և հնարաւորս ուսուցանէր իւրոց հետևելոցն. քանզի զանունն Աստուծոյ անդրադարձ գրէր և իւր աշակերտելոցն ուսուցանէր ընթեռնուլ։ Ապա գրեանս բանայր և առեալն և հանդէս յարդարէր և ընդ գիտունս օրինաց իւրեանց ի քննութիւն մատնէր և հարտասանութեամբ բանից դնոսին յաղթահարէր. և զանունն Աստուծոյ, որ անդրադարձ գրէր՝ դնէր առաջի նոցա առ ի ընթեռնուլ, և նոքա ոչ կարէին, ապա զաշակերտան իւր կոչէր և հրամայէր ընթեռնուլ, և նոքա՝ քանզի յառաջագոյն ուսեալք էին, գերծ բանից և խրոխտ ձայնիւ հռամարձակ ընթեռնուին, առ որ հիացեալ՝ զարմացեալ ապուշ մնային ամենայն ժողովք հանդիսին։ Եւ յետ ընթեռնելոյ գրին՝ ընթերցող գրին սկսանէր սարսափիլ և դողալ և լկիլ գլխոյ հարկանիլ և խեղդիլ, և այլ ընդ այլ ձայն արձակել։ Եւ Սապէթայն յարուցեալ սրսկման ջուր՝ դոր ունէին հրէայք[737], առեալ սրսկէր ի վերայ սխրացելոյն և անդրէն վազվազակի բուժէր զնա յառաջինն, զայն որոյ ամենայն տեսողքն հիանային և ապուշ մնային, և զարմանալի և մեծագոյն սքանչելիացս գործ համարէին լինել զայն ի Սապէթայէն։ Եւ Սապէթայն զինքն հրաշագործ երևեցուցանէր նոցա և զԱստուծոյ սաստիկ և օծեալ, և զվկայութիւնս մարգարէիցն՝ զորս զայն զարմանն Քրիստոսի ասացեալ են, զորս ի կարէր՝ առեալ ի վերայ իւր մեկնէր. և ասէր թէ Մեսիան, զոր զուշակեցին մարգարէքն, թէ գալոց է և սրկելոց է զխաչեալն, այն ես եմ, զոր եկեալ եմ սրկել զխաչեալն[738], Եւ ասէր ժողովրդեանն լուծանել զշաբաթս և զպահս[739] և հանապազ

* *Այս գլուխը նախորդ երկու հրատարակութիւններում համարակալված չէ։*

1-36 ԱՐԻ չիք Գ ձեռագրում այս ամբողջ հատվածը գրած է այլ ձեռով

3 Գ *գրկիչն*

12 Ի: *կարճ արտասանէր վիս կարի հարտասան էր*

13 Ի: չիք և (*յաւելոյր*) Ի: չիք *գրոց և հակաճառութեամբ*

13-14 Ի: *գառաջադիմութիւնքն*

25 Գ *լլկիլ և դգեանի*

28 Գ *անդրէն*

30 Ի: չիք *Սապէթայէն Իսկ*

34 Գ Ի: *Մեսիան*

կնալ յուրախութեան, և իմպայ և պրոշմ իւրոյ անունն հռչակեցուցանել և պինդն փառաւորել, և օծնալ յԱստուծոյ և առաքնալ փրկիչ ազգին Հրէից։ Եւ բազում փառօք և մեծարանօք պատուէին զնա և առնէ ի աւն ի պատիւ և ի կոչունս հրաւիրէին զնա, և ի գնալն՝ ի ճանապարհին հովանի ի վերայ գլխոյն նորա կալնուին, և ամանք զդրօշակս հանդերձիցն ի վեր կալնալ ի ձեռս ունէին և առաջի և ի ներքոյ ոտիցն բեհեզս և կամաշս տարածանէին՝ և երեք կոյս աղջիկ նմա մատուցին և նա ժամանակս ինչ առ ինքն կալաւ և ապա արձակեաց[740], և ազգն իրեանց ամենեքեան գինի նորա ընթանային[741], և զբանս սիրատացոյցն՝ զոր կանխաւ յիշեցաք, թէ անկանէին և խնդրէին և քոա լկելոյ գիւին և բարբառեցուցանելոյն զիւահարքն այլ ընդ այլոյ բարբանջէին. զայն զիւահարաց բանսն և այլ ինչ աչքախոտ գործք՝ զոր ինքեանք տեսանել էին ի մոլորեցուցիչ Սատէթայէն, և այլ ևս ինչ զոր ինքեանք չինքեանց յօգին, զամենայն ի թուղթ գրեալ և ի քարտէզ տողեալ՝ գրեալ առաքեցին ի հեռաւոր տեղիս բանս ասելոյս, թէ ասեմս ձեզ ցրուեա՛լք տառապեալք, Սատէթայ փրկիչ ազգիս, արդ՝ ցուցեալ, թագաւոր գոլով չիզմիք՝ եւեթ օրէնս նորոգել, պատգան ծաղկեալ, զմեզ ապաստանալ, ազգօք ճոխացեալ և գիսրայէլի ցրուեալս ժողովեալ։ Իսկ որք ի Հրէից ազգէն գիտունք և իմաստունք և կարդացողք էին՝ տեսանէին, զի ազգն ամենայն գինի նորա գնաց, և ամանք ի նոցանէ չակամայ և առ ակամէ գնացեալ եղեն իբրև գնդապանգեալս նմա. և ամանք պատճառանօք գնացեալ յօտար աշխարհ՝ հեռացան ի նմանէ, և ամենեքեանք՝ որ խնդացիքն էին, երկնչէին թէ մի գուցէ համբաւս այս ի լսելիս այլազգի մահմետականաց անկցի և համայն ազգաւ ջնջեսցեն զմեզ. և խաժամուժ ամբոխ ազգին այնօրիկ ընդ միմեանս առացին, մինչ որ եհաս համբաւն ի լսելիս մահմետական իշխանաց Իզմիր քաղաքին. և իշխանքն խորհեցան ընդ միմեանս թէ գրեսցուք և ծանուսցուք վեզիրին. և առա թնեին ինչ և վեր ի վերոյ համարեալ գայն՝ թոյլ եաուն և ոչ ծանուցին վեզիրին, այլ կալեալ գհրեայսն և ծանրագոյն առեալ՝ ի բաց թողին։ Բայց հռչակ համբաւեաց առաջ Մահմետին օր առաւ առաւելագոյն և հասանէր ի հեռաւոր աշխարհս, մանաւանդ ի Կոստանդնուպօլիս. և որք լսէին չեմեհանդն սիրով վառեալ բորբոքէին, ամանք ինքնին յուղի անկեալ գայթին նմա ընծայաբերութիւնս, յուխտ և չիրկրպագութիւն, և ամանք պատուհասնու ինչս, ոսկի և արծաթ նմա ընծայս առաքէին, և ամանք պատնս և զկարասիս թնեին գնոյ վաճառէին և տային, թէ գնամք չերուսաղէմ[742], քանզի տեսին թէ, ինչ գալոց է Սատէթայն և թագաւորելոց է և զգրուեալ ազգին ժողովելոց է. և ընդ առաւել տարածանիլ համբա-

3 Գէ չիմ և (մեծարանօք)
4 Գէ չիմ և (ի կոչունս)
4-5 Գ ի հանապարհի... գլխոյ
1-38 ԱՐԳ չիմ
10 Գ խնդրգրէին... լկելոյ
13 է Սաբէթայէն
14 Գ քարտէս
18 Գ ըզմեզ
23 Գ սմենեքեան
38 է գցուցեալ ազգն վիս և գրուեալ ազգին

ոչս այս, ամենայն որ պարծանայր, վասն որոյ մանկունք և փոքունք Հանուրց ազգի, մարմնաւոր և քրիստոնէից,
Փաթթամբ և սամիկս Սահմոլ քաղաքի
Հարցանեն, նեղեն զազգն Հրէից,
«Չիա՞ւտ կէլաի մի՞, խաղաղ կէլաի մի՞»[743]*։*
Կանայք ընդ արանց ւ երիտասարդի,
Մնծամեծք, փոքունք, ծերք ընդ ազգի
Հարցանեն Հրեայն, ուր որ Տանիէլն,
«Նաւի կէլաի մի՞, թէճալ կէլաի մի՞»[744]*։*
Զայս յաւուրս արիւնալ Համայն աշխարհի։
Ծալեն, կառավեն յառ ւ ի փողոցի,
Բերան և լեզու ի յայս սովորի
«Նէպի կէլաի մի՞, մըսհի կէլաի մի՞»[745]*։*
Ի տուն ւ ի փողոց այս ջիշնալ Ճառի,
Երգս և խաղս շինեալ առ սոյն յաղմարի,
Նազը և շշնջումն սուտ մարգարէի
Չհրեայս կշտամբեն «թէճալ կէլաի մի՞»[746]*։*

Այլ և Նաթան[747] *անուն ոմն այլ Հրէայ, որ էր յաւուրսդմին ուխտաւոր և պաշտօնեայ և ընկեր ընդ այս Սապէթայիս, և էր ինքն ի Գազայ քաղաքին, որ և անուն արկ առ Հրեայսն՝ որ ի Կոստանդնուպօլիս վասն Սապէթային և ասաց վկայութիւն, թէ նա է Մեսիան և Օծեալն*[748]*, որ արդ ի Զմիւռնի կայ. և առ այս բան յոյժ բորբոքեցան Հրէայքն Կոստանդնուպօլսի, և հաշակեալ բարձրացաւ Համբաւն, որ գնմանէ, մինչև ևհաս առ մարմնաւոր իշխանս Սահմոլ քաղաքին։ Իսկ պատին և սարսեան Սահմոլու պատրաստակին առն գնալ առնել զՍապէթայն և բերել։ Եւ Սապէթայն լուեալ զայն եկեալ ի փախչել գնալ ի Թեսաղոնիկէ, իսկ պահապանք Ճանապարհին կալան գնա ի ծովին և բերեալ ի Սահմոլ՝ հանին ի ցամաք առաջի Գօմրուկ խանին. իբրև հաշակեցաւ թէ զՄեսիան Հրէից բերին, հապարք հապարաց և բիւրք բիւրց ի տես փութային. և ի տեսանելն զՍապէթայն՝ ամենեքեան հայհոյէին, այպանէին, կառակ և ծաղր առնէին զՀրէայսն վասն մոլորութեան իւրեանց։*

Եւ ապա առան առ վէզիրն, զոր և Հարցանէք վասն անուանն և Համբաւոյն. և նա յամենայնի հրաժարի և յետուստ լինի, և ասէ ինքն վասն իւրն, թէ այր մի եմ վերծանող և օրինապահ և աղօթարար. իսկ վէզիրն պատուխանէ, թէ կաց ի կալանս մինչև ցայսր վասն քո վկայութիւնս լիցմիբէ, և ծանիցուք պատուհասին բանից քոց։ Յայնժամ առաքեցին ածել զայրատակ չհրեան Սապէթային և կառափնատելով

1-38 ԱԼՊ չիմ
2-3 Գ *քրիստոնէից... բոամիկք*
3 Ի: *Սահմոլ*
3-4 Գ *քաղաքի... հրէից*
6 Գ *և փխ ւ*
7 Գ *ծեր*
8 Գ *զգՀրէայսն*
11 Գ *և ի փողոցի փխ ւ ի փողոցի*
19 Ի: *պաշնափեր*
20 Գ *զոր և*
22 Ի: *Իզմիւռին*
24-25 Գ *զառին*
25 Գ *առնել*
27 Գ *քհսաղոնիկէ*
28 Ի: *ի Սպանոլ* Գ *հանեն*
37 Գ *յԻզմիւռ*

առեալ արկել ի բանտի. ի ՌՃԺԵ. ետուն Հայոց, և Յունվար ամսոյ ԻԴ. արկին զնա ի բանտ: Իսկ Հրէից ապղն յամօթոյն ոչ ի շուկայ ելին և ոչ ի խանութ նստան, և մանկունք մանկեամսականաց ոտ և հասանէին, այպանելով ասէին «ջահուտա կէտի մի՛, ԲԼՃալ՝ կէտի մի՛». և վասն այսր նպերանացս Հրէայք կաշառս յոլով նստուն եննիչէք ապաւային, զի հրամայեսցէ իւրոց պաշտօնէիցն և զինուորացն, զի արգիլեսցեն զայնոսիկ, որ ասեն զկէտին. իսկ ասողքն հպարտապատառիկ և նս յաւելին ասել: Իբրև զՄատէթայն ի բանտի արգելին, արս առաքեալ զինչս նորա բերին, քանզի ինչս բազումս ժողովեալ էր, զոր Հրէայք կարի ատեն նմա մատուցանէին. և յորժամ զինչս նորա ի հաս-քօյն բերին, մոլորեալ ապղն Հրէից ամենեքեան ընդ առաջ ընթանային և աղջատուրէին՝ ի հետուստ և ի մօտոյ զձեռս տարածեալ փրկութիւն անձանց խնդրէին: Յետ այսորիկ ի մահմեատական իշխանաց նպիրակ և ԲՂԲիշէի զնացին ի բանտն և հարցին ի Մատէթայէն, Թէ «Ասա՛ մեզ զառոյգն, արդարեւ Քրիստո՞ս ես, որպէս և ապղն քո ասեն զքեզ, զառոյգն ասա, զի՞նչ ասես վասն քո». և նա յամենայնի յուրուստ լինի, Թէ ոչ եմ Քրիստոս և ոչ մարգարէ և ոչ ի նշանաւորաց, այլ այլ գոհիկ եմ և արուեստիւ ընթերցող: Իսկ նորա զրանս Մատէթային զրկեցին և սիրել և ճօճաթ արարին և տարան՝ վէպիրին ծանուցին: Իսկ որ Հրէայքն էին, ոչ զգացին յերթեկութենէ առ Մատէթայն, և քանզի բանտն ի մէջ Ստամբօլ քաղաքին էր՝ ոչ կարէին Հրէայքն համարձակ գնալ առ նա և դալ. վասն որոյ կաշառեցին զառապաշին, զի թերևս հնար իմն գտանիցէ նոցա, զի համարձակ լիցին ի գնալն և ի գալն. և նա խօսի ընդ վէպիրին, Թէ Հրէայք զրանտն ի կոխ առին վասն յաճախ երթեկութեան. յայնժամ ասաւ Հրամայէ վէպիրն, Թէ տարէք ի Բօզպան, ի մէջ բերդին և անդ ի բանտի պահեցէ՛ք զնա[49]. և յետ աւուրց հինչ եկեալ վէպիրն ի Ստամբօլայ գնաց ի յարևմուտս, զի պատերազմ մեծ կայր առաջի նորա. իբրև գնաց վէպիրն՝ և նա համարձակութիւն գտեալ Հրէից սկսան՝ կարի յաճախագոյն երթեկութիւն առնել առ նա կանամբք և որդովք. ծերք և տղայք, աղքատք և Հարուստք, մինչև տնարգել աղչկունք և Հարսունք գնային յուխտ և յեկեղեցութիւն նմա. ոչ միայն ի մերձակայ գաւառաց՝ այլ և ի հեռու աշխարհաց. ի Բուղդանայ, յԻրմայ, ի Կաֆայոյ, յԵրուսաղէմէ, յԱնատօլէ, նս առեալ ի Ստամբօլ գային առ նա և առնուին զօրհնութիւնս նորա, և արտասուօք ապաչէին, Թէ «Ե՛րբ իցէ զի ելցես և Քաղաքիցս և գմեզ փըրկեսցես». և վասն յաճախ երթեկութեան նոցա ի նախանձ շարժեցան Համեմատականքն, և իշխանն զոր Բօզպանչի պաշի ասեն՝ զձեռնադարձն նոցա սկսաւ պահել և զերեսել սմանս ի Հրէից, որ գնային առ Մատէթայն, կալեալ էած առ դատաստանն և ի Հարցանել դատաստանին, Թէ «վասն է՞ր երթայք առ նա, դառոյգն ասացէք. մարգարէ՞ն է նա, Թէ Քրիստոս ոմն է նա, և Թէ ինչ է, զառոյգն ասացէք». և

1-41 ԱՐԴ չիք
5 Գ այսմ փխ այսր
24 Գ զրանտս
30 Գ որդովք
33 Գ ի Լովայ
33-34 Գ ի ՅԱնատօլու... ի Ստամբօլու է ի Ստանբօլէ
34 է առնուէին

Հրէայքն Թադուհին և ոչ սասցին պատչին, այլ պատճառս յօդեցին, թէ «Անմահ է և ի տարապարտուց պատապարտանալ և ի բանս մահու ազօթատուր և ընթերցող ամն ի միտս ապրէ, ուստի մխիթարելոյ զնա և զօրհնութիւնս նորա շահելոյ զնամբ առ նա». և առ այս բան պայմանին ոչինչ սասց նոցա, այլ արձակեաց, որ գնային և զնացին, իսկ առ պրան կացեալ մահմետականքն բարկութեամբ և այպանօք ասեն Հրէային, թէ «Մոլորեալը, ընդ՞նչ շահ ձեզ յառնէն յայնմանէ, որ այդքան մոլեալ էք առ նա». և Հրէայքն պատասխանեն, թէ «Յետ առեալ ինչ առուց այդ ձեր տեսցեն». և մահմետականքն խնդան զնկուցին զայ-մադամին, զոր և վտիճանակի զարձուցին զՀրէայն և առաքեալ զան Հարին և ասեն Թագին. Թէպէտ զայս գործ յառնն այլ Հրէայքն և երկիան՝ այլ չընդունայն յառնն իւրեանց ոչ Թուլացան:

Եւ ի ժամանակս նախնեացն Հրէից յոթեմ Նաբուզոդոնոսոր արքայն Բաբելոնի զերեաց զՀրէայն և տարաւ ի Բաբելոն[1], զայն օրն նախնիքն իւրեանց մեծագոյն ասեն զոյ կարգեալ են[2], յայնմ օրէ մինչև ցարդ, պահօք և ծոմով, զոհ և աշխատանօք և զանձինս կոծելով կատարեն զառաւօտ զոյն այնորիկ, նա և զոգին նիւթեալ մարգարէին ընթեռնուն յառաւօտն յայնոսիկ, որ ի յՕգոստոս ամսոյ յոթեմ յուսինն ԺԵ. աւուր լինի, կատարեն զոհսն զայն, և մահմետականք զանուն ասեն այնմիկ զարտարագրամ ասեն. իսկ զիւարնակն Սապէթայն իբրև հառս զկատարել զոգն յոյժ մոլեալ առ ինքն, սկսաւ ինս առաւել մոլորեցուցանել առ ինքն. քանզի զրնոց Թագին յոթեմ և առաքեաց առ Հրեայսն յամենայն տեղիս և չքնաղ իմն Համբառեալ նոցա և ասէ. «Եմ որդի Աստուծոյ ծնեալ, ձեզ ապաւոյ յարդենիս հասեալ». և է պատճէն և օրինակն զրոյ նորին այս:

«Մխածին որդի և անպարտիկ Աստուծոյ Եօսեմպէսէվի[3] Մեսիա զրկիչ Իսրայէլի: Առ Համայն որդւոցդ Իսրայէլի սիրելեացդ Աստուծոյ, խաղաղութիւն: Որպէս աւուրն մեծի Տեառն, որում ցանկացին երանելին Աբրահամ և Իսահակ և Յակոբ տեսանել, յաւուրս յայսմիկ արժանաւորեցայք տեսանիլն, զիս ընկալեալ զառն ապաստանիլն և փրկութեան Իսրայէլի, ըստ ուխտին Տեառն մերոյ, զոր ուխտեաց բանիւք մարգարէից և Հարցն մերոց սիրելեացդ Իսրայէլի: Այդ՝ ամենայն աւուր ձեր զարձցի յուրախութիւն, և պահք ձեր եղիցի ի ոճն և ի բանայիրս. քանզի այսուհետև այլ ևս ոչ լայցիք, ո՛ մանկունք իմ Իսրայէլ, և զանցեալն ձեր մի՛ ևս հոգայցիք. քանզի առաւ փրկութիւն ուրախութեան, որ է անպատմելի. արդ՝ ի ժամանակս ազօթից ձերոց ընդ մերկօք և նուազօք երաժշտական արուեստիւ բարձր ցնծութեամբ զոհացարուք զնմանէ, որ կատարեաց զուխտն իւր յաւիտենից, զոր ուխտեալ էր ընդ Հարսն մեր, և յամենայն աւուր և ի դչուխս ամսոց՝ զատ նոյն օրինի ցնծացջիք: Եւ զսուգ սերտութեան զաւուր և զիշխուցն ձերոց, որ կոչի

1-40 Ա.ՔԴ չիմ
2 Ն: բանդ
8 Ն: մոլորեալ փխ մոլեալ
12 Գ ի չընդունայն
14 Ն: Բաբիլոնի... ի Բաբիլոնի
16 Գ որ պահօք
17 Գ որպոյն
20 Գ Սապէթայ
25 Գ աւրինակն Ն: զրոց փխ գրոյ
26-27 Գ Մէսիա... որդոցդ
36 Գ ի ժամու փխ ի ժամանակս Գ ընդ մերկօք

բարիս[755] *զայն պարծուչիք ի յօր լամբրան*[754]*, ուրախութիան լուսաբեր, որ ի յայտնութիանս իմում. և մի՛ ոք ի ձէնջ յայլ գործ ինչ պատապիցի, այլ միայն յուրախութիւն և ի ցնծութիւն, քանզի առաւ ձեզ ի վայելչութիւն ամենայն աւարք ազգաց և հեթանոսաց, և ոչ միայն որ ցիրեաս երկրի տեսանէք, այլ և որ ի խորս ծովու վտան ձեր պահեալ կան ի վայելչութիւն ընդդիմեան. ողջ լիրուք»*[755]*:

Մոլորեալ և դիւաբեկ Սապէթայն զկիրս զայս լիզուան և գրավն հրէից պրեաց և առաքեաց յամենայն տեղիս[756]*. բայց յետոյ թարգմանեցաւ ի Հրէից լիզուէ ի Հռոմ լիզու և ի Հռոմ լիզուէ թարգմանեցաւ ի յՕսմանցոց լիզու ձեռամբ ումեմն իմաստնոյ և մեծ քարգմանի սուլթան Մահմատ թագաւորին որդոյ սուլթան Իբրահիմին այլ և ի Հռոմ լիզուէն թարգմանեցաւ ի Հայ լիզու և ի դիր ձեռամբ ումեմն Հարտաք գրչի Երեմիա կոչեցեալ*[757]*, որ ի նոյն Կոստանդնուպոլիս քաղաքին էր: Իսկ դիր մոլորելոյն յոր վայր և հասանէ, զօր ապոյն այնմիկ ցնծութեամբ ասնեալ. մինչ քարկոք, նուագօք էին յանդգնեալ*[758]*, որ երբէք զհրէայս չիք այնպէս տեսեալ: Վտան դի հրամայեաց Սապէթայն՝ զօր և զքաշատակ մեծի ապոյն այնմիկ զոր նախնիքն նոցա կարգեցին վտան զերի դնալոյն ի Բաբիլովն՝ պարծուցանել ի տօն ցնծութեան և ուրախութիան, ատեալ և ըմպելով և պէսպէս զարդուք զարդարելով, ի խրախութիան կեալ և կատարեալ, դի աւուրք ապոյ բարձաւ և արդ՝ աւուրք ուրախութիան եկեալ հասաւ:*

Եւ ոմանք ի մերս ի Հայոցս ապուկ խորհրդարար հարցումն արարին ընդ դիտունս և ընդ խոհեմս ազգին հրէից վտան Սապէթային, թէ զի՞նչ ասէք, թէկուս մարգարէ ո՞մն իցէ, կամ աւուգիս Մեսիա՞ն իցէ, կամ Քրիստո՞ս իցէ. և կամ այլ ոք ի յարժանաւոր ծառայիցն Աստուծո՞յ իցէ. և նոքա ասացին, թէ ամենևին սուտ է և խաբեայ և մոլորեցուցիչ և դիւաբեկ[759]*, և ահա արք Ջ. և աւելի ի մէնջ, որ միաբանեալ եմք և ոչ ընդունիմք զնա, դի հակառակ է հայրենի օրինացն մերոց: Եւ միաբանեալ արքս այսոքիկ գնացին առ ազգն հրէից և սկսան կապել և վիճել և յանդիմանել վտան Սապէթային և ասել. «Զի՞ ընդունիք զնա, և զի՞ անսաք նմա և զիա՞րդ հնարեալ էք զկնի նորա, դի նա բախերայ է և մոլորեցուցիչ և հակառակ հայրենի օրինաց մերոց. դի այսքան ժամանակ է որ նախնիքն մեր եկին յաշխարհս և գնացին և ոչ ոք ի նոցանէ կարդ ինչ խախտեաց և կամ եղոյծ՝ ի փոփիդաց օրինաց*[760] *կարգեալ. իսկ դա զշաբաթս և զտօն մեծի ապոյն լուծանել հրամայէ*[761]*, և զինչ խօսի և գործէ առ աչօք և առումեամբ լի է. զի՞նչ նշան մարգարէական և կամ զի՞նչ գործ սքանչելեաց տեսէք ի գմանէ: Թէպէտ առքա այսպէս հակառակէին ընդ հրէից, սակայն ապուկն հրէից ըմբռնացան ընդդէմ նոցա և գնացին հայհոյէին և վիճէին և ի հարկանել ևս մտադիրէին. և գնացեալ առ Սապէթայն ամբաստան լինէին գնոցանէ*

1-40 ԱՔԳ չիմ
3 Գ *ցընծութիւն*
4 Ի *աւուրք* փխ *աւարք*
7 Գ *դիւաբեկն Սապէթայ*
9 Գ *ի Հռոմ... ի Հռոմ*
10 Ի *ուրեմն* փխ *ումեմն*
19 Ի *պէսպէս* փխ *և պէսպէս*
20 Ի *եկեալ* փխ *կեալ*
31 Ի չիմ *նա*
36 Գ *զինչ և խօսի*

և հակառակութիւն և հերձուած մեծ անկաւ ի մէջ հրէից[762], ոմանք ընդունելի զոյ ասէին և ոմանք ոչ, և բաժանեցան որպէս ի հօրէ և եղբայրք չկրօրէ և սիրելիք ի միմեանց. իսկ որք ընդունողք էին, սիրով կապակալ էին առ նա, եբթալին և պային և սղջունէին. և բազում ի ցեղին ոչ կարէին առ նա մատանել՝ բազում արհուիւամբ ազատ կալեալ ի պիշերի մատանէին և սղջունէին և անտի եղեալ զարմացուցիչ և հիացական բանս տպեալ հաշակեցուցանէին, և միմեանց աւետաբեր ասէին, թէ Սապէթայն, Մանէ և ապատիչ և փրկիչ նիկալ հասեալ մեզ. պիտուի պատրաստի նմա զահոյք թագաւորութեան և ուղղի սիրտ զառդութեան և աջողի գաւազան արդարութեան, զբրիտանեայս խոպան ջնջել, և զմահմետականս հարկառու առնել. և այսպիսի առաւ և անուամբ յոյսով ակնկալեալ ազատչին նմա. և ուան գալստեան նորա ոմանք ընդ երկինս պշուցեալ հայէին, և ոմանք ընդ ծովն միշտ հայէին և ոմանք ընդ երեսս ծովու ի պիշերի նայով շրջէին, և ոմանք ասէին, թէ երկնիւք թռչի և պայ և մեզ լոյս ծագէ, և ամենայն որ գնա մեծ ոմն համարէր և չնաւուծոյ աւարեալ. քանզի առ նա վերաբերէին գրանն Յովհաննայ մարգարէին, որ ասէ. «Յաւուրս յետինս, ասէ Աստուած. հեղից յոգոյ իմմէ ի վերայ ամենայն մարմնոց. և մարգարէացցին ուստերք ձեր և դստերք ձեր. և երիտասարդք ձեր տեսիլս տեսցին և ծերք ձեր երազովք երազիցին»* և այլն։ Այլ և յայտ ամի Յունից ամաոյ երկուան արեգակն խաւարեցաւ, և այն բնական խաւարումն էր, որ ի ծնունդ լուսնի հանդիպի. իսկ մոլար ապին հրէից գայն նշան համարեցան և ասէին տեսէք, զի յերկնից ևս նշան երեւեցաւ ուան սորա. և գմիմեանս ի հացկերոյթ և ի կոչունս հրաւիրէին. և ոմանք ասացին, թէ հրէայք զէնս և սուրս ի պատրաստի ունէին, զի չելանել Միսիային ջնջեցին զայլ ազգս։

Եւ իբրև կարի յաճախեցաւ համբաւն սուտ Քրիստոս Սապէթային և հետս յաշխարհ թագաւորութեան քրիստոնէից, վասնորոյ ընդ հրէից, որք յայն երկիրսն էին, մաքառեալ սկսեալ քրիստոնեայքն, որք յայնմ աշխարհին էին, և ի մէջ իրեանց գրաւս կապէին. քրիստոնեայք ասէին, թէ իրք Սապէթային ճշմարտասցի, մեր ամենեքեան պատճառամբ ի հրէութիւն, և հրէայք ասէին, եթէ սուտ լինի բանք Սապէթային, զմեզ դառնեսանան ազգաւ ջնջեցէք սրով սուսերի. և զայս ուխտեալ պայմանեցին և ժամանակ կարգեցին. և պատուղական յաւետիս կացեալ դրեցին և վճռեցին, և պատուերաց և իշխանաց կնքով կնքեցին և ազատէին պայմանին։ Բայց յաշխարհին Իլախաց պրպտեմս ի հրէից կոտորեցին, յորոց բազումք փախեան և գնացին յայլ աշխարհս. Եւ ոմանք եկին առ նոյն ինքն առ Սապէթայն[763]; ի սոյն ուսուս յաշխարհին Իլախաց կայր մին հրէայ, որ էր ինքն խախամ[764], որ լսէր զհամբաւն Սապէթային և ոչ հաւանէր, այլ ասէր, գնամ ևս առ Սապէթայն այն և առնեցայ իրաց նորա առուգրաբար հաւատ լինիմ. որ և եկեալ մատ-

* Համմ. Յովել, Բ, 28

1-41 ԱԲԳ չիք
3 Գ *բնդունողքն*
8-9 Գ *իրովք*
12 Գ *յետոյ*
22 Գ *ի ծնունդն*
23-24 Գ *սոս վխ սորա*
24 Գ *գմիմեանս* վխ և *գմիմեանս*
33 Գ *գառնեսանան*
41 Գ *զոր* վխ *որ*

նէր առ Սապէթայն և ի յոլով աւուրս դիտեալ նկատեաց և խօսեցաւ ընդ նմա և հաւատաեաւ վերահասու եղև, որ սատփեամբ էին բանք նորա. վասնորոյ համարձակեալ ասէ. «Ընդէ՞ր պատահապեալ և զողորմելի ազգս մեր մոլորեցուցեր և զքեզ Քրիստոս և Մեսիա քարոզեցեր, 5 զո՞ր նշան ցուցեր դու ի յերկինէ կամ ի յերկրէ. զի՞նչ գործ փրկութեան ներգործեցեր, որպէս և բանք ճշմարտացս մերոց վկայեն. և զի՞նչ հրաշք ի ծնունդ և ի անունդս քո եղեն. ահա ծնողք քո և ծնունդ և անունդ քո, ահա եղբարք քո, ահա կին քո և որդիք, զորս պարտուք լցեր. ահա կնանք և վարք քո հաւատար մեր, ուսեալ և քմին, երկնչիս և քմրո- 10 նիս, որպէս և եկեր ի փախչիլ և եղեր քմրոնեալ. ի բանս մտեալ և ի կապանս արգելեալ», և այլ բազում բանիւք զՍապէթայն կշտամբեալ: Իսկ հնազանդեալքն Սապէթային քմրոնացեալ ընդդիմացան խաթամին այն, և ի վերայ յարեան հայհոյանօք և անարգանօք և կամէին ի ներքոյ ոտից առնուլ, և բազում կսկծալի բանս նմա ասացին, և ի 15 ժողովոյն իւրեանց նզովեցին և արտաքս հանին[705]: Իսկ խաթամն այն կսկծալի արտիւ զայրացեալ ընդ կուրութիւնն և ընդ արարս հրէից, և այնպիսի զայրագին արտիւ գնաց առ մահմետականսն, ուրացաւ զհրէութիւն և եղև պատանեալ մահմետի[706]. և առաւիկ զայրագին սըրտիւ ամբաստան լինի զհրէից և զՍապէթայէն. և մահմետական իշ- 20 խանքն զամբաստանութիւնն նորա ծանուցանեն պայմազամին: Ի վերայ այսմ ամբաստանութեան, զոր խաթամն արար զՍապէթայէն և զհրէից, յաւել և այլ ևս մեծագոյն ամբաստանութիւն զՍապէթայէն Մահմետ անուամբ ոմն շինի, որ ի Բօղազն բնակէր: Սա հանապազ տեսանէր զհամարձակութիւնն հրէից, որ երթային և գային առ Սապէ- 25 թայն, նաև գիտաս և զպատիւս, որ կանամբք և սիրելիօք ի հանգըստեան կեացր, գնաց առ պային և ծանուցց զերթս Սապէթային և մեծամեծ առաքիւ բերեալ վկայս կացոյց, որք և մահառ էառ ի գադոյն և գայն մահառն և այլ ևս որս ի առաքաց էառ և գնաց ի քաղաքն Յառչանայ. քանզի անդ էր յաւուրան յայնոսիկ թագաւորն և պայմազամն 30 և այլ ամենայն մեծամեծքն. մտանէ առաջի պայմազամին և լինի ամբաստան զՍապէթայէն և զհրէիցն. վասնորոյ զայրանայ պայմազամն և հրամայէ գտուչի պաշի գնալ և անգէն ի Բօղազն կախել զնա. և զի այլք ոմանք այլ ինչ ծանուցին պայմազամին վասն Սապէթային, վասն որոյ կրկնակի և փութանակի միւս ևս գտուչի առաքէ զկնի Սապէ- 35 թային ոչ կախել այլ բերել Յատրանայ. զոր և արարին այնպէս: Քանզի առնեալ տարան ի Յատրանայ առ պայմազամն. և նա ոչինչ խօսեցաւ ընդ նմա ի ժամուն յայնմիկ, այլ առաքեաց ի դուռն արքային, զի պահպանեցին զնա մինչև փութացէ արքայն և բան ինչ հրամայեսցէ վասն նորա:

1-39 Ա.ՐԹ չիք
2 Գ *ի վերայ հաւատ. եղև*
4 Գ *զՔրիստոս*
7 Ի չիք *ծնունդ և*
9-10 Ի չիք *և (քմրոնիս)*
14 Ի կրկնված Ն և *բազում*
20 Գ *զամբաստանութիւն*
21 Գ *ամբաստանութեանն*
24 Գ *զհամարձակութիւնն*
38 Գ *պահեսցեն* Գ *արքայ*

Եւ իբրև ծանուցին պիտս Սապէթային Բագատրին որ էր ինքն սուլթան Մահմատ խոնդքարն, որին սուլթան Իբրահիմին. և Բագատրն ինքն նոատ ի պատասխան. կային ի յատենին և զպիտաքարն և մուֆթին և դպմադամն և այլ ամենայն իշխանքն արքայի[767]:

Իսկ ի հնծկաց և առիկաց բազմութենէ պիտ՞ըզ գոյր թիւ այլ որպէս զատահաս երկնից և զատագ ծովու, որք ժողովեալ էին ի պրօսանու: Անդէն կացուցին և բանակ օթականս ագիզամբ և նեսիբք և Բատանբով, և հաւր բորբոքեալ և զամբարս վառեալ, և այլ պատրաստութիւնս առնջարանաց վասն Սապէթային. յատաջ ածին ի մէջ Հանդիսին և զայր ոմն, որոյ անուն կոչէին Հայաթի զատագ[768]. այս այր յատաջադոյն էր ապստամ և հաւատով հրէայ. բայց չհաւոյ Բողեալ զհրէութիւն և մտեալ յօրէնս Մահմետի և եղեալ առաքել, զոա յատաջ ածին զի լիցի Բարգման ի մէջ Սապէթային և Բագատրին, և անդ ի Հանդիսին ասէ Հայաթի զատագն առ Սապէթայն. «Տեառնես զոյս ամենայն պատրաստութիւնս զինուց և առնջարանաց, զոյս ամենայն վասն քո պատրաստեալ են. արդ, որպէս դուն որ իմն Համբաւ Հանես և զաշխարհս զրդիցուցեր. նորագոյն առնջանօք և մահառամբ նշաւակիւք սպանանելոց է զքեզ արքայ, արդ եթէ ունիս զօրութիւն ինչ և քարտմամ՝ արա աքանչելիս և ցոյց զքօրութիւնդ քո և փրկեա զքեզ և զազգն քո»: Իսկ Սաբէթայն յանէն և երկիւղէն այնքան երկեաւ որ համարեա թէ սիրտն յաբիւն դարձաւ, վասն որոյ սկսաւ ուրանալ և ապստին իւրոյ մեղադիր լինել թէ. «Ապդն իմ կոյր և մոլորեալ զոյս անդէպ անունս վասն իմ Համբաւելոյն և ես ոչ եմ որպէս նոքայն ասեն, այլ ես այր մի եմ վերծանող և զամենայն գիրս ընթերցայ և հասու եղէ որ միայն մարգարէն ձեր Ճշմարիտ մարգարէ՛ է և վասն ուղղութեան ամենայն մարդկան եկեալ է յաշխարհ. և այս Ի. ամ է որ ես նմա հետեւեալ եմ և զնա ընկալեալ»: Եւ անդէն ի մէջ առնելին ուրացաւ զհրէութեան հաւատն և զատանեցուցին նմա զհաւատն Մահմետի. և այսպէս եթող զհաւատն իւր և առեկացաւ[769]: Յայնժամ ամենայն ազգք և ազինք զՍապէթայն զայն և զամենայն ազգն հրէից սկսան անարգել և հայհոյել, նախատել և թքանել, այլ և ինքեանք իսկ հրէայք եղեն ամաչեցուցք կրօնադրժեալք և ի տանց իւրեանց ոչ ելանէին վասն ամօթոյ Իսկ Սապէթայն՝ որ երբեմն պարծէր թէ յերկինս ելանեմ, արդ էջ ի չանդունդս, և որ ի յԱբրահամ և յԻսահակ և ի Յակոբ և ի Մովսէս խրախուսէր՝ արդ ուրացաւ զնոսա և եղև ծաղրուրդ Մահմետի, և որ ասէր թէ զաշխարհս ամենայն դարձուցանեմ ի հաւատս, ինքն զհայրենի և զառաւտածառուր հաւատն իւր ուրացաւ. քանզի կառավարն նորին մտացն ապականայ զնա յայսպիսի փառս հասոյց. և որ սուտ համարէր զեկեալ Ճշմարիտ Քրիստոսն մեր, ինքն խաչատակեցաւ զօրութեամբն

1-39 ԱՔԹ չիք
1-2 Գ *սուլտան... խոնդքարն*
2 Գ *սուլտան*
5 Գ չիք ի Գ *բազմիցս*
7-8 Գ *թքանքով*
8 Գ *վառելս*
14 Գ *զատէն*
17 Գ *առնջանաւք*
20 Գ *յիրկիւղէն*
23 Ի չիք *այր*
28 Ի չիք *նմա* Գ *այնպիսի*
29 Գ *զՍապէթայն*

Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և կատարեցաւ բան Քրիստոսի որ և ասաց թէ. «Գայցեն սուտ քրիստոսք և սուտ մարգարէք», և ահաւասիկ տեսաք ի մերում ժամանակիս. և փառաւորեցաւ անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի իւրով շնորհօքն և ողորմութեամբն, որ և եղիցի անուն նորա յաւիտենից յաւիտեանս յաւիտենից ամէն[770]:*

Թուին ՌՃԺԶ. Նոյեմբերի ԺԴ. յաւուր չորեքշաբաթիկ յիններորդ ժամու, շարժ եղև ի յՆդնկայն քաղաքի. յառաջ ի խորոց անդնդոց գոռալոյ ձայն ակն, ապա յանկարծակի ի թարթիլ ական շարժ եղև, բազում շինուածք՝ տունք և մաչխլներ և եկեղեցիք և բաղանիքներ և փութկաներ, և քաղաքի պարիսպն և այլ շինուածք փլան, և բազում մարդիկք սպանին, զորոց որբանութիւնն Աստուած միայն գիտէ[771]:

Թուին ՌՃԺԷ. Յունվար ամսոյ Դ. սաստիկ և ահագին շարժ եղև յամենայն սահմանս Աւորպատականի, ի յառաւօտուն մինչ զհարցի ժամն ասէաք, եղև թնդումն և զկնի նորին ակն շարժն. և այնքան ուժգին եղև մինչ զի կանթեղք և ջահք, որք կախեալք էին յեկեղեցւոջն ամենեքեան տատրակեալք երթային և գային. և մարդիկք որք ընդ երիս որմոց յեցեալք կանգնեալք կային ի տեղւոյն ի բաց ձգեաց, և եղև շարժս այս յԱրտաւիլ քաղաք, ի Թաւրէզ, յԵրևան, ի Տփղիս ի Գանջայ, ի Շամախի, ի Դամուրղափուն, և յամենայն սահմանս իւրեանց, և յայսմ շարժմանէ Հաղպատայ վանից եկեղեցւոյ ներսի երեսէն որմոյ քարինքն թափեցան, և եկեղեցին որում անուն Տեսեանց ասէին, որ ի մէջ Հաղպատայ և Սանահնոյ կայր շինեալ՝ բնաւին փլաւ, և ի Տփղիս քաղաքին մէկ նոր շինեալ եկեղեցւոյ որմն, և վերին բերդի որմն խախտեցաւ: Իսկ Շամախի քաղաքն հիմն ի վեր լեալ ամենեւին տապալեցաւ, որ բնաւին ոչ մնաց շինուածք, և անթիւ մարդիկք մեռան, զորոց զթիւն Աստուած միայն գիտէ[772]:

ԳԼՈՒԽ ԾԸ**

ՊԱՏՃԱՌ ԱՌՆԵԼՈՅ ՉԳԻՐՍ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ, ՅՈՐՈՒՄ ԵՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԱՌՆՈՂԻՆ

Օրհնութիւն՝ գոհութիւն՝ բարեբանութիւն՝ Տեառն իմոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ եւս զկարօղութիւն ինձ առաստի և տկարի և չանարդի բանի սպասաւորի Առաքեալ կոչեցելոյ, ի վերջին դարուս և յերեսկոյացեալ ժամուս. ի բնէ նորոգ սկսանիլ յառնել և ի շարաշու-

* *Տես Մատթ. ԻԴ, 24*

** *Այս գլուխը նախորդ երեք հրատարակութիւններում տրված է ԾՋ համարի տակ*

1-27. ԱՔԴ չիմ
1 Գ *բանն*
1-2 Լ չիմ *և (առաց)*
2 Լ *Քրիստոսք փխ սուտ Քրիստոսք*
4 Գ *շնորհաւքն*
8-9 Գ *անդրնդոց... եկաւ*
16 Գ *յեկեղեցւոջն*
18 Գ *որմոյ*
21 Լ *Հախպատայ*
23 Գ *բլաւ*
26 Գ *մարդիք*
29 ՐԳԴ *զպատուհանց գիրս*
31 ՐԳ *աւրհնութիւն*
32 Գ *կարողութիւն*
34 Ա *սկսանիլ*

գիւղ ընտրոյ յատաջ ածեալ զիւրս զայս, որ կոչի Պատմագիրք. նա և հաստնիլ յատարտ սրբին, որ կատարիցայ: Վասնորոյ զերեսս ի գետնի եղեալ արտասուալից ազաչանօք կարգամ առ նա և ասեմ. «Գոհանամ զքէն Քրիստոս Աստուած իմ, և օրհնեմ զքեզ և զսուրբ ծնօղն քո, և զլուսակատոյց առաքեալն քո և զինակարան քո սուրբ էջմիածին: Տէր իմ և Աստուած իմ Յիսուս Քրիստոս, քո և քոյոցն է ամենայն պարգեւական բարիքս՝ զոր ես քան և առուր բանիւ, գիր և գրով, և ամենայն պատարաստութիւն գրոյ, եղիցես Դու օրհնեալ ընդ Հօրդ առեղծողի, և ընդ Հոգւոյդ զարդարողի յամենայն արարածոց և յամենայն յաւիտեանս. ամէն»:

Այսուհետև զարձուցից զրանս իմ և յայտ արարից յարդոյապատիւ և վհատական անձանց, և յարհնապան արուեստիս փիլիսոփայականաւ յղփացեալ իմաստասիրաց, և գործնական առաքինութեամբ մաքրագարդեալ սրբոց և Համօրէն ծննդոց սրբոյ աւազանին ի Քրիստոս հաւատացելոց եղիցի ծանուցեալ. նաև մեծաւ ազերսանօք խնդրեալ, որպէս զի մի լինիցիմ մեղապրանօք քամահեալ իրրև ի վեր քան զկար ձեռնարկեալ. և որպէս զմատեամ չանզգնեալ՝ և չանձին քաջութիւն յատարով ձեռնհիկ լեալ, և չայս գործ՝ որ չափս ի վեր է քան զկար մեր՝ ձեռն մխեալ: Այլ ի հարկեցուցիչ հրամանէ երիցս երջանկի և Քրիստոսատպատակ հայրապետի և սրբոյ Աթոռոյ էջմիածնի չաջորդի Տեառն Փիլիպպոսի ամենայն Հայոց կաթուղիկոսի, զան զի ինքն, բազմահանճար Հայրապետս Տէր Փիլիպպոս և ամենայն արք իմաստունք և առաքինիք և ծերագոյնք, որք զկեանս իւրեանց ձգեցին չատաջ ժամանակաւ և առ սովաւ, որոց և տեսեալ էին զամենայն իրակութիւնս և զանցուածս՝ որք ճառեցան ի վիրս պատմութեանս այսմիկ, այսինքն զաւետիսն աշխարհին Հայոց և զգիրիչն և զվատնիչն քրիստոնէից, այլև զնուագիչն և զպակասիչն եկեղեցական կարգաց, և զանշքանալն և զաւերն բարձրագահ և Քրիստոսանման Աթոռոյն սրբոյ էջմիածնի, այլ և զսոցին նորոգութիւն և այլ ևս բանք պատմութեանց՝ որք և գրեցան չայսմ շարադրութեանս, որոց զան այնք մարդիկք ամենեքեանքն մեծաւ տարփանօք և չաէտագունիւ ըղձիւ բազձային արձանացուցանել ի վիրս չիշատակի ի գիտութիւն չապայ եկելոց, որք չանցնիւր գրոս և ժամանակս չատաջագային, նաև հանապազ մատղաչական բանիւ խնդրէին ի Փիլիպպոս կաթուղիկոսէ՝ զի հրամայեսցէ ումեք կատարել զայս գործառնութեան պատմագրու-

2 ԲԳ *հաստնել* ԲԳԴ *ի գետին*
5 ԲԳԴ *զսուրբ*
7 Ա. *բարիս* ԲԴ *տրվող*
9 Ա. *չամենից*
11-12 Ա. *արդոյապատուից և վհատականաց* ԲԳԴ *արդոյապատիւ*
12 Ա. *չոքնապանիւ* Ի. *չոքնաչան*
13 Ա. *չղփացեալ* ԲԳԴ *չղճացեալ* Ա. *գործնականաւ*
21 Ա. *ամենից հայոց*
22 Ի. *ինքնս*
23 Ի. *իմաստուն*
24 Ա. *չատաչնով*
25 ԲԳԴ *զանցս ածս* Ա. *ի դիրս*
26 Բ *զաւերիչն*
28 Ա. *բարձրագահի* Ա. *քրիստոսաբնակի*
29 Ա. *սոցին Գ նորոգութիւնն*
30 Ի. *շարադրութեանս*
31 ԲԳ *ամենեքեան* Բ *չաւետագոյն* ԳԴ *չաէտագոյն*
34 Ի. *մատղաչական* Ա. *Փիլիպպոսէ*

թեանս: Նա և ինքն կաթուղիկոսն Փիլիպպոս պատուելապոյն փոյթ ունէր քան զամենեսեան սակս սմին իրաց, վասն որոյ հարկէր երբեմն զայս՝ և երբեմն զայն՝ զի կատարեսցեն զայս գործս, և յոլովից ոմանց իւրոցն աշակերտաց նովն հարկադիր, զի թերևս ոք յանձն առեալ կատարեսցէ: Իսկ նոքա, հմուտ գոլով զիտակին զբազմազան աշխատութիւնեան, որ ի սմա. ոչ հաւան գանձինս ի տաժանումնս յայս, այլ չինքեանց ի բաց քեցնել ճողոպրեցան: Իսկ նուաստս և սրուպս յամենեսին Առաքեալ կոչմամբս՝ սպասաւոր բանի, գոլով իմ տեղեաւ ի քաղաքն Թաւրիզու, և չաշակերտութենէ սոյն տեառնս Փիլիպպոսի կաթուղիկոսի, և ի միաբանութենէ լուսակատոյց աթոռոյն սրբոյ էջմիածնի, որ և ասէն իսկ սննալ և վարժեալ, և չատուրս ծերութեան ժամանեալ, նաև ակն ունիմ զի ընդ հովանեաւ սորին ամփոփել ի հող, զի թերևս որ ի սմա խորհրդակատարութենանցն լինիցիմ հաղորդեալ: Վասն որոյ չետ ամենեցունց իբրև անարգի միջոց եղև ահեղ հրամանն հայրապետին ի վերայ ինձ տկարիս, և որպէս զտկար կենդանի ոմն ըմբռնեալ ի վարմից և չորոգայթից և ոչ կարիցէ զերծանիլ, սմին սաստիւ գոգջիք և զեղկելիս ըմբռնեալ ի վարմ դործոյս այսմիկ, և այս չաղագս այսքանեաց պատճառաց:

Առաջին՝ որպէս ի վերոյ ցուցաւ, զի ոչ կարացի զերծանիլ ի հրամանէ հայրապետին, թէպէտ և բազում միջնորդօք չայտարարեալ խոստովանեցայ զիմն տկարութիւն՝ ոչ դոլ բաւական այսմ իրագործութեանս: Երկրորդ՝ ոչ միայն ի հարկելոյ Փիլիպպոսի կաթուղիկոսին, այլ մանաւանդ ի հարկելոյ մեծահոդի և երկայնամիտ հայրապետիս տեառն Յակոբայ կաթուղիկոս Զուղայեցւոյ, որ զկնի Փիլիպպոսի կաթուղիկոսին չաջորդեաց զպատն հայրապետական, զաթոռն սուրբ էջմիածնին, սա ևս հարկեաց զիս չայս գործ՝ որ զկնի վախճանի Փիլիպպոս կաթուղիկոսին ի բաց փողեալ էի, զի կարի բազմախոնջ և աշխատաւոր և տաժանելի գտեալ ինձ այս գործ, վասն որոյ ի բաց կացի և հրաժարեցայ ի սորին առնելոյն. և մնաց խափանեալ այս գործառնութիւնս ի ժամանակս ինչ: Ապա այնուհետև սրբազան հայրապետն մեր Յակոբ կաթուղիկոսն վերստին չիշումն արար այսմ գործոյ՝ և էած զիս իւր առաջի և բազմազան կերպիւ բանից, միւսանգամ զիս եմոյծ ի սոյն չայս գործ: Ու այնուհետև յոդնակի վշտամբերիւք կրիւք հազիւ թէ զայսքան պատմութիւնս հաւաքեցի և գրեցի: Երրորդ և ես ինձէն իսկ տեսանելով զաւերս Հայաստան աշխարհին և զնուազիլն մերոյս ազգին և զչարութիւն մահմետականաց, կսկծալի մորմոքմամբ այրիւր սիրտ իմ, վասն որոյ չօժարեցայ չարձանագրութենան սոցին:

1 ԲԳԴ *առաւելապոյն*
12 Ա.ԲԳԴ *ամփոփիլ*
13 Ի *լինիմ*
14 Ա.Դ *իրր*
18 ԲԳԴ *այսքան*
23 Ա. *մեծահոդւոյ և երկայնամտի է մեծահոդ*
24 ԲԳԴ *տէր Յակոբ*
26 Գ *էջմիածնի*
28 Ի *արժանի փխ տաժանելի*
32 Ա. *բազմաջանաւ*
33 Ա.Դ *չիմ եւ* Ա. *յոքնակի վշտամբերիւք* ԲԳԴ *յոքնակի*
35 Ա. *Հայաստանի*
36 Գ *զչարութիւնն* Ա. *կսկծալեաւ*
37 Բ *այլեր* ԳԴ *այրէր* ԳԴ *չարձանագրութիւն*

Զորորդ՝ և մանաւանդ յապաղս առ Տէր յիշատակի ի մասն բարի, պի հայելով ի յոլովութիւն յանցանացս, և ի սաղատանս խղճի մտաց և բնաւին ոչ ունելոյ ներանձին մասն ինչ նշուլից բարեաց, յուսալով յառաջ ողորմութիւն մարդասիրին Աստուծոյ՝ որ և զվարձս բաժակի միոյ ջրոյ ոչ անտես արար, հապա, և իբրև զլմայս այրոյն** արկի ի դանձանակն Տեառն, զի թերևս սովաւ զառաջ ներումն առնիցէ իմոց պարտացս, որ զսիրտկանն պատկեր տպեղացուցի ի տղմալի դայռի։ Նա և մնծաւ յուսով ապաւինեալ ի բարեխօսութիւն ընդունական ձերդ մաղթանաց, զի սրտի մտօք խնդրիցէք յապկնիալ Տեառնէ զի ինձ չանարգիս պարգևեսցէ զիւրն զողորմութիւն և զմեղացն իմոց զթողութիւն, որպէս և քերցն Ղազարու մաղթանօք շնորհեաց նմին զյարութիւն***։ Վասն զի և ես այսու դիտաւորութեամբ և յուսով յանձն առի զայսպիսի յոգնաշխատ և զբազմանկի և զտաժանելի դործս՝ և աւուրս յոլովս ի սմին դեգերելով և ի յոլով երկիրս և յաշխարհս շրջադայելով ի խնդիր զրուցաց պատմութեանն, ոչ միայն ի քրիստոնէից, այլ և յայլոց ազանց հարցանելով, և ամենեցունց զասացեալսն գրելով, և վասն զսուտ պատմութիւն բանին պատանելոյ, նդև զի զմի պատմութիւն տասն անգամ և այլ աւելի կրկնելով գրեցի, և զամս ինն ի սմին դեգերելով, և զինչս ծախելով, հազիւ թէ զայսքան պատմութիւնս ի մի վայր հաւաքեցի և գրեցի, և բնաւ ոչ ոք նդև ինձ ձեռնտու, այլ միայն Տէրն իմ Քրիստոս էր ինձ օգնական։ Այլև յորժամ հրամայեաց ինձ Փիլիպպոս կաթուղիկոսն առնել զայս գործ, և ես սկսայ առնել, էր թուականն մեր ՌՃ. և յամս չորս աշխատեցայ, և հաւաքեցի զմասն ինչ պատմութեանն. իսկ զկնի վախճանի Փիլիպպոսի կաթուղիկոսի լքեալ թողի և ի բաց կացի ի սմանէ՝ տեսանելով զյղձկակի վտանգն և զմատաղանջ երկն աշխատանաց որ ի սմա, որ ի վէր, քան զկարն իմ ծանր թուեցաւ իմում տկարութեանն, և մնաց խափանեալ այս գործ ցժամանել թուականին մեր յամն ՌՃԿ. և այնուհետև հրամանաւ Յակոբայ կաթուղիկոսին կրկնակի մատաք յայս գործ՝ և սկսաք առնել մինչև ղհասանիլ թուականին մերոյ ՌՃԺԱ. ամն, և յայսմ վայրի եղև դադարիլ մեզ ի գործառնութենէս այսմիկ։ Այլ և թէպէտ ի շրջադայութիւնս*

* *Մարկ., Ը, 41, Մատթ., Ժ, 42*
** *Ղուկաս, ԻԱ, 1—4, Մարկ., ԺԲ, 41—44*
*** *Յովհ., ԺԱ, 1—45*

1 Ի Զորորդ
3 ԴԻ ներանձին
5 ԱՒՐ չիՔ և ԲԳԴ այրոյն
6 ԲԳԴ անհրկի
7 ԲԳԴ իմոյս Ա. ի տղմալոյ
9 Ա յապէնիազէ
10 ՐԻ զմեղանացն ԲԳԴ իմ
11 Ի զբևրցն
11-12 ԲԳԴ յարութիւն
13 ԱԲԳԴԷ յոքնաշխատ ԱԳԷ բազմաևրկ
14 ԴԻ յաւուրս
16 ԲԳԴ յայլմէ ազանց Ա ամենից ԲԳ դամենեցուն ասացեալսն Գ զամենեցունց ասացեալսն
17 ԲԻ զբաւտւղութիւն
19 Գ գնդերելով ԲԳԴ ինչս
21 Ա՚Է Տէր
22 Գ կաթուղիկոսս Գ կաթուղիկոս
23 ԲԳ մասն
24 ԲԳԴ պատմութիւն ԲԳ Փիլիպոս կաթուղիկոսին Գ Փիլիպոս կաթուղիկոսի
25 ԱԲԳԴԷ զյոքնակի ԱԲԳԴ վտանկն
27-28 Ի ցժամանեալ
28-29 ԲԳԴ Յակոբ
29 Գ մասք Գ յաւնիլ
30 Ի հասանիլ Գ ղհասանեալ

աշխարհաց ի բազում տեղիս մանաւորաբար եղև դրեալ ի սմանէ, սակայն սկիզբն սմին եղև ի բարձրագոյ սիոնն ի սուրբ էջմիածին, և կատարումն ևս ի նոյն տեղին, շնորհօք սմին սրբոյ և Աստուածաբնակ տաճարիս եւ ունի զիրքս այս պատմութիւնս ամաց վաթսնից, և այն ևս որ ինչ եղև պտեալ և ի տեղանուրս արկեալ* շնորհօքն Քրիստոսի. իսկ ինձին և ինձին և այլ սոյնպիսիքն չիմս ապիտութենէ և ի տկարութենէ, վասնորոյ աղաչանօք խնդրեմ ի ձէնջ ներումն. Այլև պիտեցաւ պատահել ինձ այս գործ, ոչ ի ժամանակս առոյգ երիտասարդութեան, այլ ցողորմելի ծերութեան, վասն զի ծեր էի. նաև յոյժ ցաւագար մարմնով, և ի լուսոյ աչքս պակասել և ի պնդութենէ ձեռքս թուլացեալ դողայր. սոյնպէս և յայլոց յամենայն կարողութեանց տկարացեալ և մահու հրաւէրք ամենեքեան հանդէպ աչացս եկեալ կացեալ, և սպառնալիք դիւացն ևս քան զևս ի վերայ իմ յաճախեալ։ Վասն որոյ զերեսս իմ առաքուր ձեր եղեալ և զսէրն Քրիստոսի առ ձեզ բարեխօս ածեալ, մի՛ ստունգանիլ անտես առնիցէք զաղաչանս իմ. այլ հայցեմ, մաղթեմ, խնդրեմ, ժտեմ մեծաւ պաղատանօք, զի շնորհեցէք մեզ զ«Աստուած ողորմին» և զ«Քրիստոս որդին», զ«Հայր մեր որ յերկինս» ի նոյն կարգին։ Եթէ նստեալ կայք և թէ կանգուն ի յոտին, խնդրեմ ոչ դանդաղիլ և ծուլանալ յասելոյ սոցին և զոր դուք մեզ ընձեռէք՝ և ձեզ լիցի մասն և բաժին յաւուրն ահեղին, առաջի արդարոյ դատաւորին Յիսուսի Փրկչին։ Որում պատիւ և երկրպագութիւն և անդրաւ փառաբանութիւն յամենայն արարածոց. յիմանալեաց և ի սպառնաց, անլռելի արտատոչութեամբ. Ամէն։

ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ ԳՐՉԱՑ

Փա՛ռք անբաժանելի և միասնական սուրբ երրորդութեան. Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ յաւիտեանս ամէն։ Որ ևս կարողութիւն անարժան մեզսամած և փծուն գրչի, Ամենայս գպրի, աւարտել զգիրքս ի յետին ժամանակս շարադրեալ յԱռաքեալ վարդապետէն, որ այժմ կոչի Առաքեալ պատմագիր։ Ի թուականութեանս մերում ՌՃԺԲ. թուին ի Հայրապետութեան ընդհանուր աղկիս Հայոց Տեառն Յակոբի՝ սրբազան հայրապետի, ի թագաւորանիստ քաղաքէն Շօշ կոչեցեալ, որ այժմ Ասպահան ասի. և էր աղգայ Ջուղայեցի։ Ի թագաւորութեան Պարսից երկրորդ Շահաբասին, յիշխանութեան Արարատեան երկրին Ամիրգունայ խանի որդի Աբասղուլի խանին, որ յայսմ ամի ընձայեցաւ Աբասղուլի խանն ձգեցին, և տուին ընծան Աբասղուլի խանին։ Արդ՝ գրեցաւ գիրքս ի

* Տե՛ս Մատթ., Իե, 27

2 Ա սորին փխ սմին Բ չիմ սմին
3-4 Ա աստուածաբնակի
8 ԱԲԴԴ պատահիլ
10 Ա.Ի պնդութենէ
11 ԲԴ յայլ Ա. յամենից
15 Ի սատւգանալ
17 Ա.Դ շնորհիցէք
18 Դ չիմ որ Դի. եղէ կանգուն փխ և թէ կանգուն
19 ԲԴ դանդաղել
21 ԲԴԴ արդար
22 Ա. ամենից
23 ԲԴ զպալեաց Դ և ի դալեաց Ա. անլռելիաւ
24 ԱԲԴ չիմ է յիշատակարան գրքիս
28 Ի շարադրեալ
29 Դ կոչեն Դ ՌՃ և ԺԲ
33 Դ Արարատեան

յերկիրն Արարատեան ի վիզաբակաբն Կարբի ընդ Հովանեաւ Գաբրիէլի և Միքայէլի հրեշտակապետացն և ամենայն սրբոց որք առաջ հաւաքեալ կան։ Բէմ և վիճակ մեծափառ ուխտին Յովհաննուայ սուրբ Կարապետին սուրբ Սահականնոսի աջին և սուրբ Աստուածածնի վարշամակին, ի յառաջնորդութիւնն սուրբ ուխտիս Տէրունդի խոհեմ հնազանդ Յովհաննէս արհիեպիսկոպոսի, ի բնիկ վիզաբակաբէն Կարբու, զոր Տէր Աստուած զուխան իւր Հաստատ և վինքն անփորձ պահեսցէ մինչ ի խորին ծերութիւնն ամէն։

* * *

Փա՛ռք ամենասուրբ Երրորդութեան, Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ամէն։

Շնորհօք և ողորմութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, գրեալ եղև գիրքս որ կոչի պատմագիրք. ի մեծ Թուականիս Հայոց ՌՃԺԵ. ի մայրաքաղաքս Երևան, ի գուռն սրբոյ Լկեղեցւոյս, որ կոչի Կաթուղիկէ, հոգաբարձութեամբ, ծախիւք և արդեամբք՝ Առաքեալ վարդապետի, որ է նոյն ինքն այս պատմագրիս շինօղն և արարօղն, Թաւրիզեցի Առաքեալ վարդապետն՝ որ վասն զօրինակն բազմացուցանելոյ եւս գրել զայս գիրքս, որ և այս հինգերորդ գիրք է որ ինքեան Առաքեալ վարդապետի ձեռագրիր օրինակէն զազափարեցաւ. որ յոյժ չանիւ և բազում հոգաբարձութեամբ ծախիւ ինչս և ձեռամբ գրչաց գրել տայ. առաջին վասն օրինակին բազմանալոյ. և երկրորդ վասն առ աէր յիշատակի Արդ որք հանդիպիք զմա կարդալով կամ օրինակելով, կամ գրօսնելով, սրտի մտօք յիշեցէք ի Քրիստոս զվերոյ յիշեալ զԱռաքեալ վարդապետն, որ զանազան և զկնպէս կերպիւ բազում աշխատանս կրեաց վասն պատմագրքիս, և տակաւին ևս ի նոյն աշխատանացս կայ, վասն որոյ ապաչեմք, յիշել ի աէր զինքն իւրայնօքն, և զամենայնն, որք ունին աշխատանս ի սոյն գործառնութեանս։ Ընդ սոցին մաղթեմ յիշել ի Քրիստոս զիս զփանաքի գրիչս զԱւետիս երեցս որ հրամանաւ Առաքեալ վարդապետին գրեցի զգիրքս վասն հաւատարկաց օգտի։ Արդ՝ որք յիշէք զմեզ ի Քրիստոս և բաշխէք մեզ «Աստուած ողորմի» և «Քրիստոս որդի» և «Հայր մեր որ յերկինս» մինչ հաղարապատիկ առնուցուք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս. Ամէն. Հայր մեր որ յերկինս սուրբ եղիցի անուն։

1 Գ *Արարադեան*
9-32 ԱԳ *չիմ*
9 Գ *երրորդութեանն* Գ *Յիշատակարանի խոտոգիրն է. Յիշատակարան գրքիս Գ սրբոյ Հոգւոյն*
13 Գ *ՌՃԺԴ ... սուրբ* ԲԳ *անուանի փխ կոչի*
16 ԲԳ *Թաւրիզեցի*
17 Գ *չորրորդ փխ հինգերորդ*
25 ԲԳ *իւրայօքն*
30 Է *որ յերկինս ես* Գ *յերկինս բառը և նախադասության վերջը բացակայում են.*

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՆԹԱՓԻԹՅՈՒՆՆԵՐ

1 Մ. Օրմանյանի տվյալների համաձայն Առաքել անունով կաթողիկոս չի եղել։ Այս տարիներին կաթողիկոս էր Դրիգոր ԺԲ Վաղարշապատցին (1570—1590), որի հետ միասին Առաքել Դավրիժեցին նշում է նաև Առաքելի անունը (տե՛ս էջ 458), հավանաբար վերջինս Դրիգոր Վաղարշապատցու աթոռակիցն է եղել։

2 Տիգրանակերտ, որ է Ամիդ. Հայադիտության մեջ հաճախ է հանդիպում Տիգրանակերտի և Ամիդի նույնացումը։ Ըստ որում, ինչպես ցույց է տալիս Ն. Քասունին, հայ պատմիչներից ջրերն են պերճ մնացել այդ շփոթից, որն ունի բազմադարյան պատմություն։ (Մանրամասն տե՛ս Նուռանդ Հ. Քասունի, Ամիդ (Տիարպէքիր) Տիգրանակերտ (Ճարպին) շփոթը հայ պատմագրության մեջ, Պէյրութ, 1968։ «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց Հ. Ի. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 123)։

3 Խամամուղ (հիշյալ՝ Խամամ Ռըզա)—Շիա մուսուլմանների ամենահարգված սրբավայրերից մեկը՝ Իմամ Ռըզայի դամբարանը։ Գտնվում է Խորասանի մայրաքաղաք Մեշհեդում։ Դավրիժեցու հաղորդումը հիմնականում համընկնում է Թուրքական աղբյուրներում պահպանված փաստերի հետ։ Սակայն վերջիններս Սահդ փաշայի փոխարեն նշում են Շեհրիֆ-փաշայի անունը, Սալեյման փաշայի փոխարեն՝ Խոզը փաշայինը։ Տարբերություն կա նաև այս գնդերի ավարտի նկարագրության մեջ՝ Թուրք պատմիչը չունի Ս. Դավրիժեցու հաղորդած մանրամասնությունները (տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հ. Ա, կազմեց Ա. Սաֆրաստյանը, Երևան, 1961, էջ 55)։

4 Անհասկանալի պատճառով հայ պատմագրության մեջ «ժամանակս Մօրկայ» (582—602) համարվում է հազվադեպ իսպառ ժամանակահատվածներից մեկը։ Մորիկի մասին պատմում են կարծեցյալ Շապուհ Բագրատունին (տե՛ս «Պատմութիւն անանուն գրուցագրի», Երևան, 1971, էջ 47—51, նաև ծան. 18—29, էջ 207—211) և Կիրակոս Գանձակեցին (տե՛ս «Պատմության Հայոց», Երևան, 1961, էջ 46—50, նաև Առաջարան, էջ ՍԹ—ՄՆ)։ Ջրույցը, սակայն, իրականությանը չի համապատասխանում, քանի որ նշված տարիներին երկրում սրվել էին սոցիալական հարաբերությունները, ժողովրդական ապստամբություններն ու հուզումները գորբերում ծայր առաիճան ուժեղացել էին։ Այդ ամենի հետևանքն էր Փոկասի պլեսավորած ապստամբությունը, որի ժամանակ Մորիկը, նրա որդիներն ու եղբայրները սպանվեցին։

5 Դասում (Դասրմ) Դյունյու կոչվող տոնը նշվում էր հոկտեմբերի 26-ին։ Այդ օրը պաշտոնական գործադուլությունները սովորաբար դադարում էին և վերսկսվում ապրիլի 23-ին։

6 Հայ ժողովրդի այս ոչնչացության մասին ավելի մանրամասն պատմում է գնդերի ականատես և մասնակից Ավգուստինոս Բաջեցին (տե՛ս «Նշխարք մատենագրութեան հայոց», ի լոյս ընծ. Ք. Պատկանեան, Ս.—Պ., 1884, էջ 5—7)։

7 Այս երկու եղբայրները որդիներն են խոջա Խաչիկի, որը հյուրընկալել Շահ Աբբասին Հին Ջուղայում։ Ջուղայեցի սուն հարուստ վաճառականների մասին տե՛ս Հ. Քյուրթյան, Ջուղայեցի խոջայ Նազար և իր կերդաստանը, Բոստոն, 1943։

8 Շիա մուսուլմանների ժառանգական իրավունքը այսպես կոչված Իմամ Ջաֆարի օրենքի համաձայն՝ քրիստոնյայի մահից հետո նրա ժառանգությունը փոխանցվելիս նախապատվությունը տալիս է մահացածի այն ազգականներին, որոնք իսլամ էին ընդունել։ (Մանրամասն տե՛ս Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом (документы), СПб., 1898, стр. XII; Հ. Ի. Փափազյան, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը («Բանբեր Մատենադարանի», 1956, №3, էջ 85—99)։

9 Առաքել Դավրիժեցու երկը առաջնակարգ աղբյուր է Ղարա Յազիջու պետավորած շարժման պատմության ուսումնասիրության համար (տե՛ս մեր Առաջաբանը, նաև А. С. Тверитинова, Восстание Кара Языджи Дели Хасана в Турции, М.-Л., 1946. И. Ч. Զուլալյան, *Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI—XVII դդ.), Երևան, 1966)։*

10 Հրատարակության վրիպակը կրկնվել է ուսերեն հրատարակության մեջ՝ 1052 փխ. ցույց է տված 1042 թվականը։

11 Վերջին նախադասությունը Մ. Բրոսսեն թարգմանել է այսպես. „Karh Oghli, l'auteur même de beacoup de mauvais tours, chantés par les romanciers„ *(տե՛ս* „Livre d'histoires, ‹ompose par le vartabied Arakel de Tauriz„.—Collection d'historiens arméniens, t. I St.-Pbg, *1874*, p. *311*; *Ի. Պ. Պետրուշևսկին հիմնվելով, ըստ երևույթին, այս թարգմանության վրա սխալ է հաղորդում Առաքելի արտահայտությունը.* «Кер—оглы — —это тот,—*դրում է նա*„—о котором сложено много песен, ныне распеваемых ашугами„ *(տե՛ս* „Сборник статей по истории Азербайджана„, т. I, Баку, 1949, стр. 283)։ *Մինչդեռ Առաքելն ասում է, որ Ջյոլ օղլին «բռնում խաղ է ասացնում», խաղեր, որ մինչ այժմ էլ աշուղները երգում են (տե՛ս Լ. Դանիելյան, Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, Երևան 1978, էջ 124)։ Այսուհետև՝ Առաքել Դավրիժեցու երկը. . .։*

12 XVII դ. Բուրք պատմիչ Իբրահիմ Փեչևին գրում է. «Դենջեյի բեյլերբեյին՝ Մուհամմեդ փաշան յոթ ամիս պաշարված մնաց։ Դիշեր և ցերեկ անդադար կռվեց,—բայց ի վերջո, երբ պաշարվածները օդնության ստանալու հույսը կորցրին «ամանով» հանձնվեցին» («Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հ. Ա, էջ 55)։

13 Իբրահիմ Փեչևին Դանձակի փաշային անվանում է Մուհամմեդ փաշա (նույն տեղում, էջ 55)։ Ինչպես երևում է, վերջինս պարձել է այդ երկրի բեյլերբեյը, Առաքելի հիշատակած Ջընջիլղան Ալի փաշայի մահից հետո։

14 Դավրիժեցու հաղորդածը լիովին համապատասխանում է Թուրքական աղբյուրների տեղեկություններին (տե՛ս նույն տեղում, էջ 55)։

15 Երևանի պաշարումը (1604 թ.) շարունակվեց 9 ամիս և 10 օր (մանրամասն տե՛ս Փեչևիի հաղորդումը, նույն տեղում, էջ 54—55)։

16 Իբրահիմ Փեչևին գրում է. «Վրաստանի իշխաններից Ազբուղանդի խանի որդին՝ Լևվինդ խանը և Սիմոնի որդին Լևասաբ խանը իրենց դինվորներով նրա (շահի) մոտ եկան» (էջ 54)։

17 Հմմտ. Вахушти Багратиони, История царства Грузинского, Тбилиси, 1976 стр. 141—143. (*Այսուհետև՝ Вахушти*)

18 Առաքել Դավրիժեցու այս տեղեկությունը հաստատվում է վրացական աղբյուրների տվյալներով (տե՛ս Вахушти, стр. *42—43*, *նաև Կ. Կուցիա, Առաքել Դավրիժեցու տեղեկությունները Վրաստանի մասին, Բբիլիսի, 1974, պլ. II, ծան. 14, էջ 61—62 վրացերեն)։*

19 Մանրամասն տե՛ս Вахушти, стр. *47—48*։

20 Ըստ Վախուշտի Բագրատիոնիի (էջ 49) Երևանի պրավման ժամանակ, բերդը մտնում են առաջինը վրացական զորքերը, նրանք պրավում են քաղաքը, որից հետո քաղաք են մտնում պարսիկները՝ շահ Աբբասի հետ։

21 Վախուշտի Բագրատիոնին մանրամասն պատմում է (տե՛ս էջ 42—49), թե ինչպես Շահ Աբբասը ջլատում է վրաց ժողովրդի ուժերը, քայքայում երկիրը, խլելով առանձին քաղաքներ ու գավառներ, ոդնշնչելով և սրելով երկպառակությունները տարբեր վրացական իշխանությունների միջև, բայց մահաբեր դեղի մասին ոչինչ չի ասում։ Կ. Կուցիան (տե՛ս «Առաքել Դավրիժեցու տեղեկությունները Վրաստանի մասին», պլ. II, ծան. 18, էջ 63) նշում է, որ Դավրիժեցու այս հաղորդումը այլ աղբյուրները չեն հաստատում. Գևորգի թագավորը մահացել է բնական մահով 1606 թ.։

23 Վրաց աղբյուրները վկայում են, որ Դավիթը բռնությամբ էր գրավել թագավորական սիրտը (տե՛ս Вахушти, стр. *142*, *նաև Կ. Կուցիա, նշված աշխ., պլ. III, ծան. 1, էջ 63)։*

24 Հմմտ. Вахушти, стр. *142*։ *Աղբասաղդր թագավորի երկրորդ որդին՝ բեև եղբոր դեմ պավեր էր նյութում գահը խլելու համար, սակայն Դավիթին նա չէր սպանել։ Վախուշտին*

Հաղարդում է, որ գահը զավթելուց վեց ամիս անց Դավիթը մահանում է (տե՛ս նաև Կ. Կուցիա, նշված, աշխ., գլ. III, ծան. 2, էջ 63):

25 Վրաց պատմագիրը պատմում է, թե ինչպես շահ Աբբասը հորդորում է իսլամ ընդունած վրաց բագրատիոնյաց գնալ Վրաստան, ոչնչել իր պատասխալ հորն ու եղբորը և տիրանալ Կախեթի բագրատիական աթոռին (էջ 143): Ըստ էության այս ամենը համապատասխանում է պատմական իրողություններ, քանի որ Առաքելի և Վախուշտիի բերած խոսքերի մեջ էական տարբերություն չկա: (Տե՛ս ավելի մանրամասն Կ. Կուցիա, նշված աշխ., գլ. III, ծան. 3, էջ 63—64):

27 Վրաց աղբյուրը այլ կերպով և փոքր ինչ ավելի մանրամասնություններով է հաղորդում Կոստանդինի մահվան մասին (էջ 143—144):

28 «Եւ այս ժամանակից վարում է Բագրատ Քաքաևանը, որը գանվում էր Դրեմիում»— հակիրճ հաղորդում է Վախուշտին (էջ 144): Առաքել Դավրիժեցին, ըստ իր սովորության, բացատրություններ, բերելով բացատրությունների նրանք կամ:

29 Այսուհետ ևս Դավրիժեցին բերում է նրանց պատճառների՝ իրեն ընորոշ կատարված համառոտարար, մինչդեռ վրաց պատմագիրը սոսկ արձանագրում է փաստեր, Вахушти, стр. 144:

30 Համեմ. Вахушти, стр. 50.

31 Առաքելը սխալվում է. Գևորգի Սահակաձեն պետ չէր: Նա ինքը, իր հայրը և եղբայրները, բեև բավական չէին, այլ միայն ազնվատոհմներ, սակայն բագրատիական արքունիքում բարձրաստիճան պաշտոնյաներ էին, և այդ ժամանակ մեծ ուժ էին ձեռք բերել: Вахушти, стр. 49—50:

32 Համեմ. Вахушти, стр. 51.

33 Վրաց աղբյուրը այլ կերպ է հաղորդում այս դեպքերը (տե՛ս նույն տեղում, էջ 51—52):

34 Ըստ Վախուշտի Բագրատիոնիի, երբ Գևորգի Սահակաձեի քույրը դառնում է Լուարսաբ Բագրատիոնի կինը, ընդամենը մի քանի ամիս անց, վրաց թավադները, և հատկապես Շադիման Բարաթաշվիլին, Բագրատիոնիից պահանջում են ազատարգան տալ կնոջը և հաշվհարդար տեսնել մուրալին (էջ 52):

35 Նկատի ունի Մեգրելիան:

36 Համեմ. Вахушти, стр. 52:

37 Վախուշտին գրում է. «Այս մասին լսեց Բագրատիոնի պարեջուխուցեսի (արքունի ծառայների պետ—Խ.) Կախաբեր Խերխեուլիձեն և իսկույն նեղ հաղորդեց մուրալին» (էջ 52), համեմ. Կ. Կուցիա, նշված աշխ., գլ. IV, ծան. 5, էջ 65:

38 Առաքել Դավրիժեցու այս գեղարվեստորեն շարադրված պատմությանը վրացական աղբյուրում համապատասխանում է մի նախադասություն: (Вахушти, стр. 52):

39 Համեմ. „И после этого подговаривал моурави шаха к захвату Картли, так как он (шах) намеревался захватить и омусульманить Картли" (Вахушти, стр. 52).

40 Առաքելի այս խոսքերը գրեթե բառացիորեն համապատասխանում են վրաց աղբյուրին (Вахушти, стр. 53).

41 Այս ամբողջ հատվածը՝ նվիրված վրաց երկու պետությունների միաբանությանը, որա պատճառներին և ազատելիք արդյունքներին, շատ բնորոշ է Առաքել Դավրիժեցու երկի համար՝ հեղինակի բազմաթիվ իդեալների պարզաբանման տեսակետից: Պատմիչը համոզված է, որ երկպառակությունները և թշնամանքը ջլատում են ժողովրդի ուժերը, հեշտացնում թշնամու գործը: Վախուշտին գրում է. «...Քանզմարդ Բագավորը առաջարկեց Լուարսաբ Բագավորին միանալ իրեն, և Բագավորը, չվատահելով շահին, ...համաձայնվեց. և պայմանավորվեցին ուժեղ (դիմակայել)» (էջ 53), իսկ Առաքելը բացատրում է այդ միաբանության անհրաժեշտությունը և գեղարվեստորեն նկարագրում գործողությունները:

42 Ինչպես հայտնում է Վախուշտին, շահ Աբբասի օգնությամբ Լուարսաբ Բագավորի քույրը զարձավ Քեյմուրազի կինը: (Вахушти, стр. 52—53): Լուարսաբի քույրերից մեկը՝ Քինտիթին, շահ Աբբասի կինն էր (տե՛ս Вахушти, стр. 49): Վերը խոսքը, ըստ երևույթին, երկորդ քրոջ՝ Խորեշանի մասին է: Թվում է, որ հակասություն Առաքելի և Վախուշտիի տվյալների մեջ չկա. Փարի անունը առկա է նաև եվրոպական աղբյուրներում: Շարդենը (տե՛ս „Les Voyages de Iean Mr. Chardin en Perse et autres lieux de l'Orient", Paris, 1811, t. II, p. 52—53) *Լուարսաբի այդ քրոջ գեղեցկությունը գովերգելով՝ ասում է, որ նրա*

անունը Դարեջան է, սակայն պարսիկներն անվանում են Փերի („Son nom de baptême etoit Darejan. La fiction persane lui donna celui de Perri„). *Հետևաբար Առաքելին Խորեջանի մականունը հասել է որպես անձնանուն (Մանրամասն տե՛ս Կ. Կոպեյա, նշված աշխ., պլ. IV, ծան. 10, էջ 66—67)։*

43 «Աշխար Պարիաչախ»—իմևրիին է, որտեղ փախստական վրաց թագավորներն ապաստան գտան Իմևրիի թագավոր Դևորդի Փ-ի (1605—1639) մոտ։ Վրաց պատմիչը հայտնում է, որ 1615 թ. հոտորարին ու Քեչմուրազը, փախչելով շահ Աբբասից, եկան Քութախի, որտեղ նրանց մեծ հարգանքով ընդունեց Դևորդի թագավորը։ Այդ ամենը շատ զայրացրեց շահ Աբբասին, որն իր դեսպանի միջոցով պահանջեց Դևորդից թագավորներին հանձնել իրեն (Вахушти, стр. 243)։

44 Համմա. Вахушти, стр. 54։

45 Վրաց պատմիչը նշում է, որ հոտորարին շահ Աբբասի մոտ գնալ համոզել էր Շատիման Բարամիշվիլին (Вахушти, стр. 53—54)։ Հարկ է նշել, որ շահի հետ Կախեթի վերաբերմունքը նման դեպքերում միշտ անհանդուրժողական է պատճառում մատրաքի հակառակորդներին։ Հոտորարի իմևրիից հայրենիք չվերադառնալու որոշումը ավելի է բարդացնում վրաց ամազանու վիճակը։ Ելը փնտրելով թագավորներից մեկը գնում է հոտորարի մոտ, նրան համոզելու՝ գալ շահին ընդառաջ։ Դավրիժեցին պատմում է Շատիման Բարամիշվիլու դավաճանության և նրա մխիթարի սպրդյանների մասին։

46 Համմա. Вахушти, стр. 54։

47 Սիմոն Ա-ի մահվան տարեթիվը տարբեր է հայկական, վրացական և եվրոպական աղբյուրներում։ Այդ տարաձայնությունների մասին մանրամասն տե՛ս Կ. Կոպեյա, նշված աշխ., պլ. IV, ծան. 21—22, էջ 69։

48 Ըստ Կոպեյայի, Սիմոն թագավորի անչյունը գտնվում է Մծխեթում (տե՛ս նշված աշխ., պլ. IV, ծան. 23, էջ 69)։

49 Ոսկանի հրատարակած բնագրում և ձեռագրերում Ղարբին (Ջարբին), երբոր հրատարակության մեջ սխալմամբ—Ղաբրին Մ. Բրոսսեն (տե՛ս «Livre d'Histoires...» էջ 333) նշում է, որ իրեն հայտնի չէ, որտեղ է գտնվում այդ Ղարբինը, արդյոք դա Խուզաֆքին չէ՞ Արաքսի ափին։

50 Առաքելի տեղեկությունները Կ. Կոպեյան հաստատ է, հայտնելով, որ շահ Աբբասը կրկին անգամ է արշավել Կախեթ—1614 և 1616 թթ. (տե՛ս նշվ. աշխ., պլ. IV, ծան. 25, էջ 69—70)։

51 Համմա. Вахушти, стр. 54.

52 Հոտորարին շահը ուղարկում է Շիրազ և բանտարկում Դուլար-կալա բերդում (տե՛ս նույն տեղում)։

53 Առաքելը նկատի ունի Մոսկովյան Ռուսիայի թագավոր Միխաիլ Ֆեոդորովիչի դեսպանությունը Իրան։ Դեսպաններ Տիխոնովը և Բոլխարովը իրենց թագավորի անունից առաջարկում են շահ Աբբասին բարեկամություն, ինչպես նաև օգնություն՝ պինդած ուժերով և զրամով (Տե՛ս С. М. Соловьев, История России с древнейших времен, т. I, стр. 67)։

54 Ռուսերեն թարգմանությունում սխալմամբ. „...к реке Исфахан"—Аракел Даврижеци, Книга историй, М., 1973, стр. 132 պետք է լիներ. „К реке Исфахана".

55 Ավիբերան կամ Արիբերան գետից հանվող ջրանցքի կառուցման հետ է կապվում «արիբերան» կոչվող հարկը Պարսկաստանում, որը դանձվել է նաև Անդրկովկասի բնակչությունից։ Մանրամասն տես Թաղ. Ավդալբեկյան, Ար-ի-Քուրան ջրանցքը Պարսկաստանում և համանուն արիբերան հարկը, Պատմա-բանասիրական հանդես, 1958, № 1, էջ 190—193։

56 Համմա. Вахушти, стр. 54.

57 Քեչմուրազը 1615 թ. շահին ուղարկում է իր կրտսեր որդուն, մոր՝ թագուհի Քեռեվանի հետ։ Շահ Աբբասը զայրացած պահանջում է ուղարկել որպես պատանդ Քեչմուրազի ավագ որդուն, իսկ հետագայում՝ նաև Քեչմուրազին (տե՛ս Вахушти, стр. 146)։

58 Նույն տեղում, էջ 149։

59 Քեչմուրազի մոր անունը Քեռեվան է (տե՛ս նույն տեղում, էջ 148)։

60 Համմա. նույն տեղում, էջ 150։

*61 Ըստ վրացական աղբյուրների իման Դուլի խանը շատ հարգանքով և պատվով էր վերաբերվում թագուհի Քեռեվանին, աշխատում էր որևէ կերպ օգնել նրան։ Խոսքը ոչ միայն

պատմական (Բերի էզնաբիշվիլի. Նոր Քարթլիի պատմությունը), այլև վարքագրական (Խնձուրազ. Բագրատի Քեթևանի նահատակությունը), ապրյուրների մասին է (Ն. Կուցիա, Նշված աշխ., պր. V, ծան. 5, էջ 72)։

62 Թեյմուրազ Ա-ն իր վարքագրական պոեմի մեջ պատմում է, որ Քեթևանը գերության մեջ անց է կացրել 10 տարի, իսկ Վախուշտի Բագրատիոնին նշում է վրաց Բագրատու մահը 1624 թ. սեպտեմբերի 12-ին (Вахушти, էջ 150, ծան. 10)։

63 Հ. Տեր-Հովհաննիսյանի «Պատմությունն Նոր Ջուղայու, որ յԱսպահան» երկում հատուկ գլուխ է հատկացված Նոր Ջուղայի կաթոլիկական եկեղեցիներին ու վանքերին և առհասարակ հայ կաթոլիկների վիճակին։ Հեղինակը թվարկում է այնտեղ հիմնված 7 եկեղեցիները, ի թիվս որոնց՝ և «Օգոստինի վանք ի Հռավենիա» (հ. II, էջ 265)։

64 Արապատան—Պարսկական Իրաք։

65 Խոսքը Հրապդան գետի հովտում գտնվող Կարևնիս գյուղի Առաքելոց (Անդրկի և Մատթևի) վանքի մասին է (Տե՛ս Գ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 288։ Ս. Էփրիկեան, Պատկերազարդ ընդհանրական բառարան, հ. I, Վենետիկ, 1902, էջ 297—298)։

66 Պատմիչը նկատի ունի Ավարտա-Քարքալական պատերազմը (1592—1606), որն ավարտվեց Սիամարոկում կնքված քառնամյա զինադադարով։

67 Ապարաներ (Ապարան) կամ Բանանեաւ։ Ինչպես գրում է Գ. Ալիշանը, «գլխաւոր չէն բնակութեան Մխարանոզացն եղեալ և աթոռ եպիսկոպոսի նոցին, փոխադրելոյ այսր ի նախճավան բազաքէ, բարգաւաճեալ ոչ միայն կրօնական կարգօք, այլ և մշակութեամբ և արդաւեօք երկրի, ի ձեռն կարգաւորաց նոցին և աշխարհականաց» («Սիսական», Վենետիկ, 1893, էջ 369։ Ս. Էփրիկեան, հ. I, էջ 230—231)։

68 Խոսքը Հնդուստանի արևմտյան ափին գտնվող Դոա քաղաքի մասին է, որը XVI դարից լինելով Պորտուգալիայի արևելյան տիրույթների կենտրոն, կաթոլիկ հոգևորականների միսիոներական գործունեության հենակետն էր։

69 Խոջա Սաֆարի և մյուսների մասին տե՛ս Հ. Քյուրտյան, Ջուղայեցի խոջայ Նազար և իր ներդաստանը։

70 Առաքելոցների վերատոհման տոնին (օգոստոսի 15-ին) նախորդող պասը։

71 Հիշյալ՝ Օքյուզ Մհմեդ փաշան։

72 «Իմ փադիշահ, Ջանգի գետից ինձ մի բուռ ջուր էլ չեն տալիս» (Թուրք.)։

73 Տե՛ս «Գիրք պատմութեանց», գլ. ԻԷ։

74 Ինչպես ընդգծում է Գ. Պ. Պինգերյանը, Մելքիսեք կաթողիկոսի ժամանակով (1626 թ.) և նրա կողմից Նիկոլ Թորոսովիչին սպօրինարար եպիսկոպոս օծելը պատճառ դարձավ Լվովի հայոց գաղութում սկսված երկարատև հակաունիթորական շարժման (տե՛ս Г. П. Пингерян, «История» Аракела Даврижеци и ее источники об антиунитском движении в армянских колониях на Украине в 20—50-х гг. XVII в. — Исторические связи и дружба украинского и армянского народов». *Ժողովածուում, պ. III, Երևան, 1971, էջ 360*)։

75 Առաջին հրատարակությունում (էջ 230) Ջուբլուկ բառը դրված է փոքրատառով։ Հետևելով երրորդ հրատարակության օրինակին, ռուսերեն թարգմանության մեջ մենք այդ բառը գրել ենք մեծատառով, մինչդեռ չուբլուկ, չիֆլիկ. նշանակում է տպարակ, հողային տարածություն։

76 1624 թ. Իսֆահանում Մովսես Սյունեցու ջանքերով հիմնադրվել էր մոմ պատրաստելու մի գործարան։

77 Այդ հրովարտակը (1627 թ.) պահպանվել է (տե՛ս Հ. Գ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հ. I, Հրովարտակներ, պրակ 2, Երևան, 1959, վավ. № 18, էջ 104։ Այսուհետև՝ ՄՊՀ)։

78 Երրորդ հրատարակությունում սխալմամբ Յաբենիի փխ. Յաբենի։ Վրիպակը փոխանցվել է նաև մեր ռուսերեն թարգմանությունը, որտեղ Арени բառի փխ. Абени է («Книга историй», էջ 207)։

79 Ստաթէ կամ նստաթէ—նստաթէոս առաքեալ, Բագէոս առաքելի աշակերտներից։

80 Տե՛ս գլ. ԻԹ։

81 Քառակուսին—Մ. Բրոսսեն թարգմանում է «bonnet carrè», սակայն գրում է, թե հավաստացած չէ, որ թարգմանությունը հիշյա է (տե՛ս «Livre d'Histoires»... էջ 393)։

82 Պատումը լայն տարածում է ունեցել հայ միջնադարյան մատենագրության մեջ, այն

կարելի է դանել նաև Հայոմամատուրքներում։ (Տե՛ս Մ. Ալվերյան, Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, որք կան ի հին օրենացոյց եկեղեցւոյ Հայաստանեայց, 12 հատորով, Վենետիկ, 1810—1815, հ. Բ, էջ 121—130, հ. Դ, էջ 18—19։ Քննական բնագիրը տե՛ս Н. В. Абуладзе, Грузино—армянские литературные связи в IX—X вв. Исследование и тексты, Тбилиси, 1944, стр. 9—21).

83 Պարսկական իշխանությունների կողմից հայ հոգևորականների միջև հրահրվող երկպառակությունները ապացույց են Սեֆևիների կրոնահալած ներքին քաղաքականության։ Առաքել Դավրիժեցու երկը պարունակում է փաստեր հայ հոգևորականության նկատմամբ Սեֆյան իշխանությունների վարած «հովանավորչ» քաղաքականության մասին։ (Տե՛ս Լ. Պաճեկյան, Առաքել Դավրիժեցու երկը..., էջ 164—168)։

84 Տե՛ս «Դիրք պատմութեանց», պլ. ԺԲ։

85 Հմմտ. «Վասն մեծի Յայտնութեան, զոր կարգեցին առաքեալքն ... ի յունուարի Ը-ն կատարել մեծ առատութեամբ ի փառս Աստուծոյ...» «Վասն սուրբ աւծման Ախոյն, զոր կարգեցին առաքեալքն, յաւուր Յայտնութեան ապտռոսիք եւ արշնութեամբ եւ երգով հոգեւորաւք եւ մաղթինաւք, ջաղիք բարբոքելով ընդ արեւտպան ի ջուրն երկան եւ ի նմին աւուր աւրհնակաւ Յորդանանու, զոր Տէրն կատարեաց...» և այլն (տե՛ս «Կանոնագիրք Հայոց», աշխատասիրությամբ Վ. Ա. Հակոբյանի, գ. Բ, Երևան, 1971, էջ 246, 247—248)։

86 Հրամարտակը գրված է Հիջրեի 1036 թ. ջումադի առաջին ամսին (1627 թ. հունվարի 18—փետրվարի 16)։ (Տե՛ս ՄՊՀ, հ. 1, պրակ 2, էջ 104)։

87 Հրամարտակում բնդդծվում է. «...Քրիստոնյա [Մովսես] վարպապետ Աչբիլիսայում քրիստոնեական օրենքի համաձայն պրպտված է այդ [վանքի] բարեգավաճման և բարեկարգման գործով և կատարում է լուսաբարբություն և հարակից այլ գործեր... ուստի որոշեցինք, որ ոչ մի մարդ արարած, լինեն գրանք հարզարժան հաքիմներից, թե ուրիշներից, երբեք արգելք չհարուցեն և նեղություն չպատճառեն և ուշադիր լինեն նրա նկատմամբ» (ՄՊՀ, հ. 1, պ. 2, էջ 104)։

88 «Սինկրորբ» (ԲԳԿՆ ձեռագրերը տալիս են «սնիկրորբ» ձևը—փուչ, անպետք բան, լքած) քաղաքի կամ հասարակության տարին մասը, տականքը (Առ. Աղաթանգեղոս, Հայկական բազմաբարական բառարան, հ. 4, էջ 215)։

89 Վարձորդ մշակ—հետևելով Մ. Բրոսսեին (որը վարձորդ թարգմանում է salaries տե՛ս Livre d'Histoires, էջ 416, ծան. 4, այն է վարձկան), մենք ռուսերեն թարգմանության մեջ տվել ենք «наемные работники» (տե՛ս «Книга историй», стр. 247), մինչդեռ վարձորդ նշանակում է վար անող, հերկող գործավոր, մաճկալ։

90 Հովհաննավանքի պարսպի (1629 թ.) մասին տե՛ս Գ. Ալիշան, Այրարատ, էջ 173։

91 Շահ Սաֆիի հիջրեի 1038 թ. զիհաջջա ամսի (1629 թ. հուլիսի 22—օգոստոսի 20) հրովարտակի պատճեն պահվում է Մատենադարանում, բնագիրը տե՛ս ՄՊՀ, հ. 1, պ. 2, էջ 104—106։

92 Այսանկ Բ ձեռագրում գրչի հիշատակարանն է. «Եւ պատապանել գրչիս, Աւետիս երիցու, յերեանցի մէկ բերան Հայր մեղայիւ յիշեցէք ի Քրիստոս»։

93 Փիլիպոս կաթողիկոսին հաջողվել էր Շահ Աբբաս Բ-ի օրոք (1645 թ. մարտ-ապրիլին) թագավորական հրովարտակով թուլյավության առանալ ավերված եկեղեցիները վերականգնելու մասին (տե՛ս հրովարտակի բնագիրը ՄՊՀ, հ. 1, պ. 2, էջ 121)։

94 Առաքել Դավրիժեցու երկի ԻՐ գլուխը նկարագրում է այդ դեպքերը։

95 Ճիշտը՝ իսբէլէ (Բուրք.)—«Մանդուղք կազմած ի պէտս շինուածոց, նշանելիք ի ծովեզերս»։ (Տե՛ս Յ. Պօզաճեան, Համառօտ բառարան ի տառկականէ ի հայս, Վիեննա, 1841)։

96 Վերջին նախադասությունը բացակայում է Ոսկանի հրատարակության մեջ։ Քան երեվույթին հրատարակիչը դիտավորյալ է բաց թողել այս տողերը, քանի որ Վիեննայի ձեռագրում այդ նախադասությունը չնչած է Յանտթով։ Առաջին հրատարակության օրինակով երկրորդ և երրորդ հրատարակություններն էլ են բաց թողել, թերևս՝ ոչ միտումնավոր։ Բնագրին հավատարիմ մնալու համար, մենք հարմար գտանք վերականգնել այն, հետևելով ԲԳՆ ձեռագրերին։

97 Գ. Ալիշանը գրում է. «Ըստ աւանդութեան Յայսմաւուրց՝ մեծին Մեսրովպայ բնակ «գմարմին ս. Սարգսի (ի Համիան քաղաքէ Պարսից), տարաւ ի Կարբի և նա պատատով ի յՈւշի, և տարար գանդին վանք հռչակաւոր, որ է մինչև ցայսօր»։ «Սակայն,—ավելացնում է հեղինակը,—աւանդութիւն Տայսմաւուրց. այն զի և

լիք արձանագիր նրաշխաւոր հնութեանն, և ոչ շէնքն ի կայի կան, այլ բնակարանք իսպառ քայքայեալ և աւերեալ են» (տե՛ս «Այրարատ», էջ 181)։

98 Շուտով՝ 1662 թ. սեպտեմբերի 27-ին, Ոսկան Երևանցին մեկնում է Նվրոպա. «Ելեալ յերկրէ և յազգէ իմմէ,— գրում է նա իր հրատարակած Աստվածաշնչի հիշատակարանում,— դիմեցի ի կողմանս Նւրոպիոյ յաղագս տպման մատենիս այսորիկ աստուածայնոյ և բազմաւ վշտիւ և տառապակրութեամբ եկեալ հասի ի սահմանս Իտալիոյ՝ յերկիրն Թուսգանու, ի քաղաքն Լիվռնայ» («Աստվածաշունչ», Ամստերդամ, 1666—1668, հիշատակարան։ Մեջ է բերվում ըստ Ռ. Իշխանյանի «Հայ գրքի պատմություն», հ. 1, Երևան, 1977, էջ 431)։

99 Տե՛ս Կոբիւն, Վարք Մաշտոցի, Երևան, 1981, էջ 142։

100 «Հայ Եկեղեցւոյ Եկեղեցականութիւնը երկու մեծ խմբերու կը բաժանուի, վանական կուսակրօնը և աշխարհական ամուսնացեալը։ Այդ երկրորդ խումբը կը կազմուի այն անձերէ, որ իրօք աշխարհական են, ամուսնացած, ընտանիքի տէր և աշխարհի մէջ ապրող»,— ա-ռ-ում է Մ. Օրմանյանը (տե՛ս «Հայոց Եկեղեցին», Կոստանդնուպոլիս, 1912, էջ 133)։

101 Այդ տարիներին ստեղծված դպրոցների մասին տե՛ս նաև «Գիրք պատմութեանց», գլ. ԻԴ, գլ. ԻՆ և գլ. ԻԲ։

102 Վերջին նախադասությունը դուրս է մնացել ռուսերեն թարգմանությունից (տե՛ս «Книга историй», стр. *285)։*

103 Այս անունը ռուսերեն հրատարակության մեջ ամենուրիք սխալմամբ մնացել է «Շահռուզ բէկ» (տե՛ս էջ 286—288)։

104 Առաքել Դավրիժեցու՝ ստուգապատում պատմիչի համատարած հռչակն ապացուցելու տեսակետից կարևոր է Գ. Պ. Պինգիրյանի վերը նշված հոդվածը (էջ 354—375)։ Հոդվածագիրը մանրակրկիտ ուսումնասիրելով Լվովի հայկական գաղութի XVII դ. վերաբերող արխիվային փաստաթղթերը, գալիս է այն եզրակացության, որ Լվովում մինչև այժմ պահպանված լատիններեն և լեհերեն վավերագրերը հնարավորություն են ընձեռում ստուգելու, ճշտելու և լրացնելու Առաքել Դավրիժեցու տեղեկությունները և նրա պատմական երկի այդ մասը համարելու արխիվային տվյալներով վավերացված, իսկ տեղանքին դնդքերում թույլ են տալիս ճշտել և որոշել Առաքել Դավրիժեցու նկարագրած այս կամ այն դեպքի տարեթիվը։ Այս աշխատանքի շնորհիվ հնարավորացող հնարավորություն է ստանում պնդել, որ Առաքել Դավրիժեցու հաղորդած տեղեկությունների մեծ մասը, հաճախ՝ անգամ մանրամասնություններում՝ լիովին հաստատվում է արխիվային վավերագրերով (տե՛ս նշված հոդվածը, էջ 360)։ Ստորև ծանոթագրություններում մենք կաշխատենք ցույց տալ բոլոր այն դեպքերը, որտեղ պատմիչի տեղեկությունները հաստատվում են կամ լրացվում արխիվային փաստաթղթերի տվյալներով։

105 Առաքել Դավրիժեցին վերը (տե՛ս «Գիրք պատմութեանց», էջ 228) ևս հիշատակում է այս փաստը, սակայն չի նշում ճիշտ ամսաթիվը։ Արխիվային փաստաթղթերը հայտնում են, որ այն տեղի է ունեցել 1626 թ. մայիսի 2-ին (տե՛ս Г. Пингирян, նշված հոդվածը, էջ 360—361)։

106 Արխիվային փաստաթղթերը ցույց են տալիս, որ իրոք, Մելքիսեդեկ կաթողիկոսը Նիկոլ Թորոսովիչին եպիսկոպոս ձեռնադրելու համար ստացել էր նախ 300 թալեր, ձեռնադրումից հետո՝ ևս 100 թալերւ վերջին գումարը կաթողիկոսին հանձնելու համար Լվովի քաղաքացիները ստացել էին Թորոսովիչի քրոջից (տե՛ս Г. Пингирян, նշված հոդվածը էջ 362)։

107 Այս դեպքը տեղի է ունեցել 1627 թ. հունվարի 3-ին Լվովի Կրակովյան արվարձանում գտնվող հայկական վանքում, որտեղ քաղաքացիներն իրենց զայրույթն են հայտնել և խնդրել չձեռնադրել եպիսկոպոս Նիկոլին, «человека неугодной нам позиции и самого по себе не способного к епископству, ибо ему всего лишь 22 года» *(Г. Пингирян, նշված հոդվածը, էջ 362)։*

108 Այս տեղեկությունը լիովին հաստատվում է Ուկրաինայի պատմական արխիվի վավերագրերի օգնությամբ (տե՛ս Г. Пингирян, նշված հոդվածը, էջ 363)։

109 Լվովի պատմական արխիվում պահպանվել է Նիկոլ Թորոսովիչի գրավոր պարտավորությունը, որտեղ հեղինակը երդվում է մեկնել Արևելք պատրիարք Գրիգոր Կեսարացու մոտ և ստանալ նրանից «արձակումն ի նորին կապանացն» (Г. Пингирян, նշված հոդվածը, էջ 363)։

110 Մեզ հասած արխիվային ավյալները հաստատում և լրացնում են Առաքել Դավրիժեցու նկարագրած այս դեպքերը (Г. Пигирян, նշված հոդվածը, էջ 363)։

111 1630 թ. նոյեմբերի 4-ին (Г. Пигирян, նշված հոդվածը, էջ 364)։

112 Այս դեպքերի նկարագրությունը՝ առանձին մանրամասնությունների գրեթե բառացի համընկմամբ, կարելի է գտնել Լվովի քաղաքային արձանագրություններում (Г. Пигирян, նշված հոդվածը, էջ 364)։

113 Սիմեոն Լեհացին մանրամասն թվում է հեկեղեցու գանձերը, որոնք նիկոլ Թորոսովիչը վաստնել էր (տե՛ս «Ուղեգրություն», Վիեննա, 1936, էջ 411—412)։ Լվովի հայկական համայնքին հասցրած վնասը կազմում էր 100.000 ոսկի դրամ (злотый)։ Այդ գումարն էին նշել համայնքի ներկայացուցիչները, որ գային էին հարուցել Թորոսովիչի և կաթոլիկ մագիստրոսի առջև իրենց հասցրած վնասը հաստատելու մասին (տե՛ս Г. Пигирян, նշված հոդվածը, էջ 364)։

114 «Ծուխքէական հերձուած» (մոնոֆիզիտություն, միարնակություն)—Եվտիքեի (V դ.) անվան հետ կապված քրիստոսաբանական հերձվածի էությունը՝ Հիսուս Քրիստոսի մի (աստվածային), այլ ոչ թե երկու (աստվածային և մարդկային) բնության հաստատումն էր։ Եվտիքեությունը դատապարտվել էր եկեղեցական 4-րդ (Քաղկեդոնի) տիեզերական ժողովում 451 թ. հոկտեմբերի 8-ին։

115 Այս հատվածի կապակցությամբ Գ. Պինգիրյանը բերում է բազում օրինակներ, որոնք ապացուցում են, որ Թորոսովիչն արգելել էր դիակների թաղումը։ Կային ընտանիքներ, որոնք մեռած հարազատների դիակները պահում էին տանը անգամ 10 շաբաթ։ Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ այս իրավիճակը շարունակվում էր և 1633 թ. հուլիսին, երբ համաճարակ հիվանդությունների վտանգ էր սպառնում քաղաքին (էջ 364—365)։

116 Լվովի հայկական համայնքի կողմից էջմիածին ժամանել էին Սեֆեր Մուրատովիչը, Սիմոն Միկոլայևիչը, Զախարիա Դեր-Կասպարովիչը, Կրիշտոֆ Սահակովիչը և ուրիշներ։ Նրանք կաթողիկոսին հանձնել էին բողոքագիր՝ թվագրված 1631 թ. հուլիսի 25-ով, որի միայն լեհերեն թարգմանությունն է պահպանվել (տե՛ս Г. Пигирян, նշված հոդվածը, էջ 357—358, ծան. 15)։ Նամակի վերջում լվովի քաղաքացիները գրել էին, որ կաթողիկոսի մոտ ուղարկում են իրենց հատուկ պատգամավորներին, որոնք պետք է բանավոր ավելի ընդարձակ տեղեկություններ հայտնեն Լվովում տեղի ունեցած իրողությունների մասին (նույն տեղում)։

117 Լվովի քաղաքային արձանագրությունների մատյանում (Львовская гродская актовая книга) *1646 թվականի տակ պահպանվել են պերճախոս վավերագրեր այն մասին, որ դեսպանության անդամներին Թորոսովիչը ձերբակալել է, գանահարել, ենթարկել վիրավորանքի և ծանակի, վերջում կեղեքել և միայն դրանից հետո արձակել (տե՛ս նույն տեղում, էջ 359, ծան. 12)։*

118 Հայոց եկեղեցին, ի տարբերություն հունականի և հռոմեականի՝ պատարագի ծիսակատարության ժամանակ գործածում է միայն դինի, առանց ջրի։ 1165 թ. կաթողիկոս Գրիգորիսի (1113—1166) եղբայր՝ ապագա կաթողիկոս Ներսես Շնորհալին (1166—1173) իր «Գիր հաւատոյ»-ի մեջ բերում է այդ սովորության պատճառները և հիմնավորում այն (տե՛ս Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 138—139)։*

119 Խոսքը Հովհան Արդնցու մասին է։ Պահպանվել է այս վարդապետի մանրամասն հիշատակարանը (Մատենադարան, ձեռ. № 5350, թ. 415—417), որտեղ հեղինակը նկարագրում է դեպքերը։ Գ. Պինգիրյանը, համեմատելով այդ հիշատակարանը Առաքել Դավրիժեցու իր գլխի վերջին մասի հետ, գալիս է այն եզրակացության, որ պատմիչը նշված գլուխը շարադրելիս օգտվել է Հովհան Արդնցու հիշատակարանից (տե՛ս Г. Пигирян, նշված հոդվածը, էջ 356—357)։

120 Արտաքին, նաև ներքին, նույնը և լայն գրքերի, գրականության և գիտության մասին տե՛ս М. Тэр-Мовсесян, История перевода Библии на армянский язык, СПб., 1902, *էջ 101, 228—229, Ն. Ակինյան, Մատենագիտական հետազոտություններ, հ. Ա., Վիեննա, 1922, էջ 11—36։ Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտություն, V—XVIII դդ., հ. 1, Երևան, 1959, էջ XII—XIII։ Ռ. Իշխանյան, Հայ մատենագիտության պատմություն, պր. 1, Երևան, 1964, էջ 34—35։*

121 «Սահմանաց գիրք» կամ «Սահմանք»—խոսքը Դավիթ Անհաղթի (V—VI դդ.) «Սահմանք իմաստասիրութեան» երկի մասին է (տե՛ս Դաւիթ Անյաղթ, Սահմանք իմաստասի-

բութեան, աշխատասիրությամբ Ս. Արեշատյանի, Երևան, 1960)։

122 «Պարապմանց գիրք»—հեղինակը նկատի ունի Կյուրեղ Աղեքսանդրացու (V դ.) «Վասն մարդեղության բանին Աստուծոյ» երկը (տե՛ս Գ. Զարպհանալյան, Մատենադարան հայկական բարգմանությանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 510, 520, 522—523)։

123 «Գանձուց գիրք»—«Գանձագիրք» կամ «Գանձ». Կյուրեղ Աղեքսանդրացու երկերից մեկն է։ Այդ գործի գրաբար թարգմանությունների մասին տե՛ս Գ. Զարպհանալյան, նշված աշխ., էջ 522—523)։

124 «Առ որս»—խոսքը Գրիգոր Աստվածաբանի (IV դ.) գրքի մասին է, որն սկսվում է «Առ որս...» բառերով (տե՛ս M. Тэр-Мовсесян, История перевода..., стр. 102, Գ. Զարպհանալյան, նշված աշխ., էջ 346)։

125 Սկսած «(ի գնդ)ջին» մինչև «Բնդլու Նիրսէսն է» բառ առաջին հրատարակության մեջ մեկից անկախ պատճառով բացակայում է, նրա տեղը զրաղված է մեկ այլ տառաձ. որը քիչ ներքև (վերևից 8 տողը) կրկնվում է (տե՛ս «Книга историй», стр. 310)։

126 «Մի գառաջիկայսդ գժուարաձևն համարելով, այլ առ նգր աստուածային խոստմանց զերա բացահայտելով, զամենայն աշխատութիւն նուաստ և երկրորդ նորին գոլ վարկցուք» Գաւիթ Անյաղր. Սահմանք իմաստասիրութեան, էջ 2)։

127 Ուսաներեն թարգմանության մեջ այս ստորակետի բացակայության պատճառով նախադասության իմաստն աղավաղվում է, ասացվում է, իբր «Սահմանքն» երկի հեղինակը Պորփյուրն է։

128 «Սաորգութիւն»—Արիստոտելի այս և մյուս աշխատությունները դեռևս VI—VII դարերում հունարան դպրոցի թարգմանիչների ջանքերով թարգմանվել է հայերեն և մեծ դեր կատարել միջնադարյան Հայաստանի փիլիսոփայական մտքի ծագման և զարգացման գործում։ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են այս երկի, ինչպես նաև տարբեր հեղինակների ներածությունների, վերլուծությունների և մեկնությունների բազմաթիվ օրինակներ (տե՛ս „Философские труды в армянских рукописях Матенадарана," «Բանբեր Մատենադարանի», № 3, Երևան, 1956, էջ 387—457)։

129 Խոսքը Արիստոտելի «Յաղագս մեկնութեան» գրքի մասին է, որի բազմաթիվ ընդօրինակությունները գտնվում են Մատենադարանում (նույն տեղում, էջ 397)։

130 Խոսքը «Յաղագս աշխարհաց» և «Յաղագս առաքինութեանց» աշխատությունների մասին է, որոնք սխալմամբ վերագրվում էին Արիստոտելին (նույն տեղում, էջ 398—401)։

131 Հեղինակը նկատի ունի Արիստոտելի «Վերլուծականք» (Անալիտիկա) երկը։ Այդ գործի հնագույն մեկնություններից է Դավիթ Անհաղթի «Մեկնութիւն ի վերլուծականն Արիստոտէլի» (տե՛ս նշված երկի հրատարակությունը Ս. Ս. Արեշատյանի աշխատասիրությամբ, Երևան, 1967)։

132 Առաքել Դավրիժեցին նկատի ունի վերը (ծան. 130) նշված Արիստոտելին վերագրված «Յաղագս առաքինութեանց» երկը, որը սկսվում է «Գովելի են գեղեցիկքն և պարսաւելի գարշելիքն» նախադասությամբ։ (Տե՛ս Գ. Զարպհանալյան, նշված աշխ., էջ 322)։

133 Այստեղ երրորդ հրատարակության վերսկակը (ՌՉ փխ ՌՉ) թափանցել է ուսաներեն հրատարակություն և Մելքիսեթ Երևանցու մահվան տարիքիվը 1631 փոխարեն հետ է քաշվել մինչև 1567 թ.։ (Տե՛ս «Книга историй», стр. 315)։

134 Սիմեոն Ջուղայեցու կյանքի, գործունեության և փիլիսոփայական հայացքների մասին տե՛ս Հր. Միրզոյանի «Սիմեոն Ջուղայեցի» մենագրությունը (Երևան, 1971)։

135 Խաչատուր Կնսարացին (1590—1646), Մոլոկա Սյունեցու ավագ աշակերտը, որը որոշ ժամանակ աշակերտել է նաև Գրիգոր Դարանաղցուն, 1620—1646 թթ. եղել է Նոր Ջուղայի հայկական համայնքի հոգևոր առաջնորդը և այդ պաշտոնում մեծ ու օգտակար աշխատանք է կատարել։ Նրա օրոք Ջուղայում բացվում է դպրոց, 1639 թ. հիմնվում է հայկական տպարան, որն առաջինն է Պարսկաստանում և ամբողջ Միջին Արևելքում։

136 Սիմեոն Ջուղայեցու «Գիրք տրամաբանութեան» երկը առաջին անգամ լույս է տեսել Կ. Պոլսում 1728 թ.։

137 Խոսքը Պրոկլ Դիադոխոսի (412—485) «Շաղկապք աստուածաբանականք» աշխատության մասին է, որն, իրոք, 1248 թ. վրացերենից հայերեն էր թարգմանվել Սիմեոն Պղնձահանեցու ջանքերով։ (Մանրամասն տե՛ս Հր. Միրզոյան, նշված աշխ., էջ 48—60)։

137ա Այստեղ ուսաներեն հրատարակություններում սխալ թարգմանված է «Духовные книги» (էջ 319)։ Մինչդեռ խոսքն «Արտադրութիւն վասն անձին մարդոյ» աշխատության մասին է

(մանրամասն տե՛ս Հր. Միրզոյան, Սիմեոն Ջուղայեցի, էջ 63—66)։

138 Ստեփանոս Լեհացու մասին տե՛ս В. К. Чалоян, История армянской философии. Ереван. 1959, стр. 319—333; *Դ. Տեր-Մկրտչյան, Հայկականք, Հայագիտական ուսումնասիրություններ, դ. Ա, Սբևան, 1979, էջ 148, 158—162, Ն. Ակինյան, Վարդապետ Ստեփաննոս Լեհացի, «Հանդէս ամսօրեայ», 1912, № 1, էջ 61—63, № 3, էջ 147—153։*

139 Յօսէպոս պատմագիրքն—խոսքը Հովսեփոս Սրբայեցու «Յաղագս պատերազմի Հրէից ընդ Հռովմայեցւոց և աւերելոյ Երուսաղէմի» երկի մասին է։ Այս թարգմանությունը Ստ. Լեհացու առաջին գործն է, կատարված, ինչպես հետևյալ նշում իր հիշատակարաններից մեկում, 1660 թ. (տե՛ս Գ. Տեր-Մկրտչյան, նշված հոդվածը, էջ 160—161։ Ն. Ակինյան, նշված հոդվածը, էջ 147—148)։ Այս թարգմանությունը Սաեփաննոս Լեհացին կատարել է կաթողիկոս Փիլիպպոսի ցանկությամբ. «Ես Ստեփաննոս Լեհացի...,—գրում է նա,—բազում անգամ յառաջագոյն հարկեալ ի հրամանէ նրից նրանեալ Փիլիպպոսի կաթուղիկոսի, և ապա աղաչեցեալ ի թախանձանաց եղբարցն... ի թուականութենեան տումարին Հայոց ՌՃՔ (1660) ...զայս պատմութիւն Յովսէպոսի թարգմանեցի ի լատինացւոց բարբառոյ ի Հայոց լեզու...» (Գ. Տեր-Մկրտչյան, նշված հոդվածը, էջ 161)։

140 Խոսքը «Դիոնեսիոս Արիսպագացւոյ Յաղագս երկնայնոյ քահանայապետութեանց» գրքի մասին է, որը Ստեփանոս Լեհացին թարգմանել է ՌՃԺԱ (1662) թվականին (տե՛ս Գ. Տեր-Մկրտչյան, նշված հոդվածը, էջ 160։ Ն. Ակինյան, էջ 149)։

141 «Ի գրոց Պատճառաց Արիստոտէլի կամ ոմանց թուի Պրոկղի»։ Ըստ Գ. Տեր-Մկրտչյանի, թարգմանվել է 1660—1662 թթ. մեջ (տե՛ս էջ 160, նաև Ն. Ակինյան, նշված հոդվածը, էջ 150)։

142 «Հայելի վարուց, որ կոչի Գրանկաց Հարանց վարք» (տե՛ս Ն. Ակինյանի և Գ. Տեր-Մկրտչյանի նշված հոդվածները, նաև Ք. Տեր-Դավթյան «Հայելի վարուց»-ի հայերեն թարգմանության հարցի շուրջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», № 10, 1981։

143 «Խնդրեսցուք» բառից սկսած մինչև իր գլխի վերջը չկա Ոսկան Սրևանցու հրատարակության մեջ (էջ 400)։ Նույն հատվածը Վիեննայի ձեռագրում առկա է, բայց չնշված է թանաքով։

Այս փաստը դժվար թե պատահականության արդյունք լինի (տե՛ս Հր. Միրզոյան, Առաքել Դավրիժեցու պատմության առաջին հրատարակությունը, «Բանբեր Սրևանի համալսարանի», 1971, № 1, էջ 192)։

144 Մինաս վարդապետի մասին ավելի մանրամասն տե՛ս Մ. Ղազարյան, Հայ կերպարվեստը XVII—XVIII դդ., Սրևան, 1974, էջ 25—32։ Ա. Սրեմյան, Նկարիչ Մինասի կյանքի ու ստեղծագործության հիմնական գծերը, «Անահիտ», Փարիզ, մայիս-օգոստոս, 1938։

145 Պարսից շահի «դուրգար» վարպետ Հակոբջանի մասին տեղեկություն է հայտնում իր «Օրագրության» մեջ Ջաքարիա Ագուլեցին. «...թվին ՌՃԻ (1671) մարտի ԻԲ-ումն Ջուղայ որ ջուղէցի ուստայ Յակոբջանն մեռաւ, սայ շահի դուրգար էր։ Շատ թուղ ջրի հորեր կու շինէր։ Տարին լ թուման շահիցն դօնլուղ կուտէր» («Ջաքարիա Ագուլեցու Օրագրությունը», Երևան, 1938, էջ 103։ Մ. Ղազարյան, նշված աշխ., էջ 30)։ Համմ. Аракел Даврижеци, Книга историй, стр. 533.

146. Ըստ երևույթին նշված ձեռագիրը կորել է և հիշատակարանը պահպանվել է Առաքել Դավրիժեցու շնորհիվ (տե՛ս «Ժէն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, մ. 1, Երևան, 1955, էջ 500։ Այսուհետև՝ «Ժէն դարի հիշատակարաններ»)։

147 Հիշատակարանը (աննշան շեղումներով սկզբից) գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանի № 1771 ձեռագրում, որտեղ այլ նյութերի հետ միասին ժողովված են նաև Լուսավորչի աջին վերաբերող հիշատակարանները։ Լ. Ս. Խաչիկյանը ենթադրում է, որ հենց Առաքել Դավրիժեցին է հավաքել այս ձեռագրում նշված հիշատակարանները (տե՛ս «Ժէն դարի հիշատակարաններ», մ. 1, էջ 517, ծան. 2)։

148 Հայմավուրքը չի պահպանվել, սակայն Առաքել Դավրիժեցու մեջ բերած հիշատակարանը (տե՛ս «Ժէն դարի հիշատակարանները», մ. 1, էջ 515, № 581) պահպանվել է նաև Ղ. Ինճիճյանի («Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի», հ. 1, Վենետիկ, 1835, էջ 106—107) և Մ. Ավգերյանի («Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, որք կան ի հին օնացուցի եկեղեցւոյ Հայաստանեայց», հ. 11, Վենետիկ, 1814) մոտ, որտեղ ընդօրինակված է լրիվ։

149 Հայտամավուրքը չի պահպանվել։ Լ. Ս. Խաչիկյանը («Ժե դարի հիշատակարաններ», մ. 1, էջ 536, № 604) բերում է Առաքել Դավրիժեցու ընդօրինակած հիշատակարանը։

150 Խոսքը 1441 թ. մայիսին Էջմիածնում կայացած ժողովի մասին է (մանրամասն տե՛ս Թովմա Մեծոփեցի, Հիշատակարան, Թիֆլիս, 1892)։

151 Ձախողը չի պահպանվել, հիշատակարանը տե՛ս «Ժե դարի հիշատակարաններ», մ. 1, էջ 548, № 622։

152 Ավետարանը մեզ չի հասել։ Հեղինակի ընդօրինակած հիշատակարանը պահպանվել է այլ հիշատակարանների հետ Մաշտոցի անվան Մատենադարանի № 1771 ձեռագրում (տե՛ս նաև «Ժե դարի հիշատակարաններ», մ. 1, էջ 575—576, № 647)։

153 Այս հայտամավուրքը գոյություն ուներ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը։ Բ. Կյուլեսերյանն իր ցուցակի մեջ (տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց և շրջակայից», Անթիլիաս, 1957, № 160) նկարագրել է այն։ Սակայն Բ. Կյուլեսերյանի ընդօրինակած հիշատակարանը Առաքել Դավրիժեցու մոտ բերվող ընդարձակ հիշատակարանի մի մասն է միայն։ Նշելով այս հանգամանքը Բ. Կյուլեսերյանը ենթադրում է, որ թերևս հիշատակարանի իր ցուցակում բացակայող մասը կորել է ձեռագրի թերթերի հետ միասին։

154 Այստեղ բնագրում ամիսուրք (ձեռագիր և տպագիր օրինակներում) եղել է «և հանգեաւ ի դմբէթայարկ սուրբ Աչն...», փխ. «սբ. Խաչն»։ Այս շփոթությունը ժամանակին նկատել է Մ. Բրոսսեն, որն իր ֆրանսերեն թարգմանության մեջ սխալն ուղղել է (տե՛ս «Livre d'histoires», p. 473, ծան. 1)։

155 Տե՛ս օրինակ, «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», հ. 1, Երևան, 1951, էջ 143։ Այսուհետև՝ ՄԺ։

156 Հայոց կաթողիկոսների կարգին նվիրված այս գլուխը առանձին հետաքրքրություն է ներկայացնում մասնավորապես հայկական եկեղեցու և Էջմիածնի կաթողիկոսարանի պատմության հետազոտողների համար։ Ուստի մենք այն չենք ծանոթագրում և բավարարվում ենք միայն վկայակոչելով ցուցակի մասին հայագետների հայտնած կարծիքը։ «Դավրիժեցու այս գավազանագրությունը...,—գրում է Հ. Անասյանը,—իրավամբ առաջնորդող սկզբնաղբյուր է եղել վերոհիշյալ (Մ. Ջամչյանի—Լ. Խ.) և այլ պատմագետների համար և դեռ շարունակում է լինել՝ Ստեփանոս Սալմաստացու, նրա աթոռակիցների և հաջորդների կաթողիկոսության հետ կապված թվականների վերաբերյալ» (տե՛ս «Դիտողություններ Ստեփանոս Սալմաստեցու կենսագրության վերաբերյալ», «Էջմիածին», 1956, № 8—9, էջ 95)։

Հիշեցնենք միայն, որ Առաքել Դավրիժեցու բերած թվականները, ինչպես հեղինակն է ընդգծում (տե՛ս «Գիրք պատմութեանց», էջ 433—434), բնավ չեն նշում այս կամ այն կաթողիկոսի իշխանության սկիզբը կամ վերջը, այլ միայն՝ թե որ կաթողիկոսի անունը որ թվականին է հիշատակվել։

157 Այս բառերից երևում է, որ գավազանագրության հեղինակը Կարապետ Բաղիշեցին է։ Առաքել Դավրիժեցին օգտագործել է այն՝ կցելով իր կողմից հորինված վարդապետների գավազանագրություններին։

158 «Իշխան ումն՝ որ էր գրապան թագաւորական գրանց»—Լ. Դանեղյանը («Առաքել Դավրիժեցու երկը...», էջ 143) գտնում է, որ Առաքելն այստեղ նկատի ունի «առաջամնեխսին», կամ ավելի ճիշտ՝ «հոքմնեխսին», որը «տնօրինում էր հաստատված և կնքման ենթակա փաստաթղթերը»։

159 Ճիշտը՝ Շամսարադ։

160 Պատմիչը հետևողականորեն ընդգծում է, որ դինու գործածությունը հայերին արտաքսելու համար պատրվակ էր միայն։ Շահի պաշտոնյան, ինչպես գրում է հեղինակը,—«ոչ յիւրոց մտաց յառաջարկեալ, այլ յայլոց յառաջարկութենէ» («Գիրք պատմութեանց», էջ 447) է այդպես ներկայացրել իրողությունը։ Այս միջադեպը՝ մեկն էր Սեֆևիների ներքին քաղաքականության մեջ նոր ուղղություն նշանակող երկրի այլադավան համայնքների մեկուսացման պրակտիկայում, որը սկսեց կիրառվել մասնավորապես XVII դ. 50-ական թվականներին (տե՛ս Լ. Դանեղյան, Առաքել Դավրիժեցու երկը..., էջ 161—199)։

161 Ճիշտը՝ Գերբաբադ։

162 Այստեղ երկրորդ և երրորդ հրատարակությունների բնագրում վայրահաս։ Ձեռագրերը (ԲԴԹ) տալիս են վայրասան ձևը, նույնը՝ Ոսկանի հրատարակություններ։ Մենք ռուսերեն թարգմանության մեջ գործել ենք «վայրասահ», որն իմաստով ավելի դիպուկ է։

163 Առաքել Դավրիժեցու հաղորդած թվերի մասին տե՛ս Լ. Դանեղյան, Առաքել Դավրի-

ժեցու երկը..., էջ 103—106։

164 Այս նյութը ժամանակին թարգմանել է անվանի հայագետ Քուչուկ Հովհաննեսովը և հրատարակել Առաքելի երկի վերջին դլխի թարգմանության հետ միասին (տե՛ս Х. И. *Кучук-Иоаннесов,* Армянская летопись о евреях в Персии XVII в. и о мессии Сабатае-Цеви, „Еврейская старина", т. X, Петроград, 1918. *Ինչպես երևում է խմբագրի ծանոթագրությունից (նույն տեղում, էջ 62) Առաքելի հրեա ժողովրդի պատերազմի այս նկարագրությունը պատրաստ է եղել հրատարակման դեռևս 1902 թ. Ֆրանսիական „Revue des études juives" ամսագրում, սակայն չի իրագործվել աշխատասիրողի մահվան պատճառով։*

165 Հեղինակը նկատի ունի դավանափոխությունը. շարունակելով իր միտքը նա գրում է. «Զկնի այսորիկ իբրև նաես էհտիմալ-գոլվային, թէ անհնար է նոցա կամաւ տաճկութիւն, խորհեցաւ բռնութիամբ ածել ի տաճկութիւն» («Դիրք պատմութեանց», էջ 461)։

166 Խոսքը իմամ Ջաֆարի օրենքի մասին է (տե՛ս այստեղ գլ. Ե, ծան. 3)։

167 Խոսքը Բավրիգի արվարձանում Ղազան խանի (1271—1304) օրոք կառուցված շինությունների մասին է (տե՛ս Фазлуллах Рашид ад-Дин, Джами ат-Таварих, т. III, Баку, 1957, стр. 235).

168. Առաքելը Շօր է անվանում Աջի (աղի) չայ գետը։

169 Վարդ պատրիկի անվան հետ կապված միջադեպը լայնորեն արտացոլված է պատմական սկզբնաղբյուրներում՝ նրան անդրադարձել են Ղևոնդ վարդապետը, Կղեմ Շասլուճ Բագրատունին, Վարդան Արևելցին։ Մանրամասն տե՛ս Մ. Հ. Դաբրինյան-Մելիքյան, Պատմութիւն անանուն ըրուցագրի, ուսումնասիրություն և ծանոթագրություններ, Երևան, 1971։

170 Պատմիչի թվարկած նկեղեցիների և վանքերի, ինչպես նաև 1648 թ. ապրիլի 2-ի երկրաշարժի՝ նրանց հասցրած վնասների մասին մանրամասն պատմում է Հ. Ոսկյանը (տե՛ս «Վասպուրական-Վանի վանքերը», երեք հատորով, Վիեննա, 1940—1947 թթ.)։

171 Մ. Բրոսսեն թարգմանում է. «...celle de Berdov» (տե՛ս «Livre d'Histoires...», p. 501)։ *Սակայն Ոսկյանը այդպիսի վանք չի նշում։ Հնարավոր է, խոսքը Տոսպի Բերդակ դյուղի սբ. Աստվածածնի վանքի մասին է, քանի որ Ոսկյանը այդ վանքի մասին խոսելիս նշում է նաև հրկրաշարժից նրան հասած վնասների մասին (տե՛ս «Վասպուրական-Վանի վանքերը», հ. Ա, էջ 231), Ե. Քասունին (տե՛ս նշված աշխ. էջ 29) Դիարբեքիրի վիլայեթում քուրդ ցեղերին ժառանգական իրավունքով պատկանող 8 այսպես կոչված օջակլըկների թվում հիշատակում է նաև Փերիենք (կամ՝ Բերդիկ) օջակլըկը։*

172 Մ. Բրոսսեն ճլլամահ թարգմանում է—„a'demimorts" կիսամեռ (տե՛ս „Livre d'Histoires...", p. 506). *ճլելք, ճլերք (վրաց. glerk'i, gleik'i)—թոքախտ։*

173 Մեծ պասի սկզբից մինչև «Հոդւոց դալուստը» տևում է 14 շաբաթ, ուստի բերդը ամրակոծվել է 14 շաբաթ շարունակ։

174 Կապ—ըստ երևույթին մաքսատան մասին է (կապանլը թուրք. նշանակում է փակում, արգելում)։

175 Երրորդ հրատ. (էջ 511) նդել է. «նմա խնամ նա»։ Ռուսերեն հրատարակությունում մենք թարգմանել ենք. «отдал ему на попечение» (էջ 393)։ Իրականում ոչ թե խնամ է, այլ ինամ (արաբ. նվեր, պարգև)։ Արտակարգ դեպքերում բարձրաստիճան դինվորականությանը, պաշտոնյաներին, հոգևորականությանը տրվող պարգև, տարեկան ռոճիկի չափով, ամեն տարի կանոնավոր ստանալու իրավունքով (տե՛ս Հ. Դ. Փափազյան, ՄՊՀ, 1, պր. 2, էջ 219)։

176 Հոգվոց վանքի հետ է կապված հայ պարականոն գրականության ամենահետաքրքիր նմուշներից մեկը. տե՛ս И. Элиш, Сказание о преставлении святой богородицы и об ее образе, написанном евангелистом Иоанном, Апокриф I в. Переводы, и статьи М. 1897, стр. 1—16, *որի հեղինակն է համարվում Մովսես Խորենացին։ (Հոգվոց վանքի և նրա սրբությունների մասին տե՛ս Հ. Ոսկյան, Վասպուրական—Վանի վանքերը, հ. 3, էջ 759—778)։*

177 Դարաշամբի սբ. Նահատակաց կամ Մաղարդա սբ. Ստեփանոս վանքի մասին մանրամասն պատմում է Ղ. Ալիշանը (տե՛ս «Սիսական», էջ 516—522, № 185)։ Դարաշամբը նույն խրամ քաղաքն է, որի մասին հայտնում է Առաքել Դավրիժեցու հիշատակած մադաղաթը (տե՛ս նույն տեղում, էջ 514, № 184)։

178 Պատմիչներից ոմանք հաղորդում են Հովհաննես Մկրտչի մասունքների մասին, որը,

ըստ ավանդության, Գրիգոր Լուսավորիչը բերել էր Հայաստան և հանձնել հողին այնտեղ, որտեղ ցույց էր տվել նրան տեսիլքը։ (Տե՛ս օրինակ, «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1914, էջ 422—423)։

179 Այդ մասին տե՛ս այստեղ, ծան. 2։

180 «...Ամիր և կանաչագլուխ»—կանաչագլուխ էին անվանում սեիդներին (Ալիի հետնորդներին) կանաչ գլխափաթիթի համար։ Նրանք մուսուլմանական երկրներում առանձին արտոնություններ էին վայելում։

181 Նասիմի—Ադրբեջանի ժողովրդական բանաստեղծ, մահացել է 1417 թ. Հալեպում, որտեղ նրան՝ որպես Հուրուֆյան մուսուլման աղանդավորների ղեկավարներից մեկը, մահապատժի էին ենթարկել՝ մեջքից մաշկը քերելով։ Նասիմի տանջանքները և մահը միջնադարում դիտվում էին որպես հերոսություն, իսկ անունը դարձել էր նրա գաղափարների համար մարտնչողի հոմանիշ։

182 «Սաստիկ վօռվասական հողմ»—բորէաս, բորեազ (հուն.)—հյուսիս-արևելյան սաստիկ քամի։

183 «Ըստ հողմոց... նոտոսաց»—նոտոս (հուն.) հարավային տաք քամի։

184 Նման ազգաբանությունները հայ պատմիչների մոտ բացառիկ երևույթ չեն, ուստի Առաքելի կազմած ցուցակը մասնագետների համար առանձին հետաքրքրություն չի ներկայացնում, առավել ևս, որ այն զերծ չէ սխալներից և վրիպումներից (տե՛ս օրինակ, Аракел Даврижеци, „Книга историй", էջ 543, և ուրիշներ։ Այս դիտողությունները, սակայն, որոշ դրախոսողներ ժամանակին սխալ են հասկացել (տե՛ս М. Гейдаров, Замечания о предисловии и комментариях Л.А. Ханларяна к сочинению Аракела Даврижеци „Книга историй", „Известия АН Азерб. ССР, серия истории, философии, права, 1975, № 2, стр. 106; տե՛ս նաև Л. А. Ханларян, По поводу Замечаний М. Гейдарова, „Вестник общественных наук", АН Арм. ССР, 1977, № 6, стр. 88; նաև Аракел Даврижеци, Книга историй, стр. 543—547, коммент. I—36 к гл. 51.

185 Հիշյալ դեպքերի նկարագրումը Առաքել Դավրիժեցին կրկնում է 571 էջում։ Ոսկան Երևանցին իր հրատարակության մեջ խմբագրում է հատվածը և բերում դեպքերի նոր շարադրանքը։ Այդ մասին տե՛ս Հր. Միրզոյան, նշված հոդվածը, էջ 192—193։

186. Այս հատվածը Առաքել Դավրիժեցու երկի ռուսերեն հրատարակության մեջ սխալ է թարգմանված (Османчук... выступил войной против своих господ», պետք է լինի «...против окрестных паронов, захватил их", стр. 430):

187 Նախադասությունն անհասկանալի է։ Հայկական աղբյուրներում ամենուրեք, երբ խոսք է լինում Բայազիթի և Լենկթեմուրի մասին, հեղինակները նշում են այլ դեպքեր (տե՛ս «Գիրք պատմութեանց», էջ 627)։

188 Համմա. «ՌՇՆՔ=ՌՋ... եւ յայսմ ամի բացին զնոր դուռն յԱմթայ» (տե՛ս Ն. Պողարյան, Ժամանակագրություն, «Բանբեր Մատենադարանի», № 9, Երևան, 1969, էջ 278)։

189 Համմա. «Քաղաքին դռները թուով չորս են և շատ ամրակուռ։ Հիւսիսի կողմինը կոչուի Դուռ, Արևմուտքինը՝ Հոռոմ Դուռ, Հարաւինը՝ Մարտին Դուռ և Արևելքինը՝ Նոր Դուռ կը կոչուին։ Հինգերորդ դուռ մ'ալ կայ, որ բերդի մէջէն Տիգրիս գետին վրայ կը բացուի, քաղաքին արևելյան կողմը, բայց հիմա փակով պատուած է». (P. J. Garden, Description of the Diarbekir, 1867; տե՛ս Ե. Փասունի, նշված աշխ., էջ 51)։ «Այս դռները,—ավելացնում է Ե. Բասունին,—տակաւին ծանօթ են իրենց նախկին անուններով, բացի Հոռոմ դուռեն, որ այժմ ստացած է Ուռֆա Դուռ անունը»։

190 Տե՛ս Դ. Այվազովսքի, Պատմութիւն օսմանեան պետութեան, հ. 1, Վենետիկ, 1841, էջ 504—505։ Մանր ժամանակագրություններ հաճախակի նշում են այդ օրենքը և նրա հետ կապված՝ օսմանյան պետության այլադավան ժողովուրդների հարստահարման դեպքերը (տե՛ս ՄԺ, 1, էջ 172, 2, էջ 267, 394, 516, 518 և այլն)։

191 «Արարին բեզամայ» արտահայտությունը Մ. Բրոսսեն թարգմանել է. „Par suite d'un complot. . ." և ծանոթագրել. „բեզամայ—assemblée („Livre d'Histoires" p.539): Թվում է, որ այստեղ բնագրում եղել է. արարին բէզամաղ (պարս. bi—ան, թուրք. damagh—քիմք, անհաճոյ)—վիրավորված, արհամարհված։

192 Այս ազգաբանության մեջ, ինչպես նախորդ և հաջորդ ցուցակներում, Առաքել Դավրիժեցին թույլ է տալիս միևնույն սխալը. Մուհամմեդ Ա (1413—1421), օսմանյան հինգերորդ սուլթանը Առաքելի մոտ նշված է որպես երրորդ սուլթան, Օրհանի հաջորդ։

193 Սելիմ Բ-ին (1566—1574) հայկական աղբյուրները հաճախակի են այդպես ան-

վանում։ Վարդան Բաղիշեցին գրում է. «...թագաւորեաց... Սելիմն... զսա, ասեն ոմանք, թէ Հրէի որդի էր, քանզի սորա հայրն անզաւակ էր, և մայր ծնաւ աղջիկ մի, և չհուտ կին մի ծնաւ որդի արու և դանձիւք հաւանեցոյց թագուհին ղչհուան և փոխեաց զաղջիկն ընդ տղային և անուանեցին զնա Սէլիմ»։ (ՄԺ, 2, էջ 394, հմմտ. 1, էջ 167)։ Ստորև (տե՛ս «Դիրք պատմութեանց», էջ 572) Առաքելը կրկնում է այդ մանրամասնությունները։

194 Նախադասությունն անհասկանալի է։ Սակայն Վարդան Բաղիշեցու ժամանակագրությունը հաղորդում է. «Սա էառ զէնդիշահարն, որ թարգմանի նոր քաղաք, և նրարձ և ընդարձակաց զիշխանութիւն» (ՄԺ, 1, էջ 322)։ Վարդան Բաղիշեցին իր ժամանակագրությունը շարադրել է 1659 թ. (տե՛ս Վ. Ա. Հակոբյանի դիտողությունը—ՄԺ, 2, էջ 389), մինչդեռ Առաքել Դավրիժեցին իր Ծ գլ. սկզբում նշում է, որ այդ գլխի վրա նա աշխատում է 1662 թ. (տե՛ս «Книга историй», էջ 543, Ծ գլ. ծան. 1)։ Ուստի հնարավոր է, որ այս հատվածում Առաքել Դավրիժեցին օգտագործել է Բաղիշեցու նյութը, կամ երկուսի աղբյուրն էլ նույնն է եղել։

195 Մանրամասն տե՛ս այստեղ, ծան.

196 Խոսքը Սուլեյման Կանունիի (1520—1555) մասին է։

197 Համմտ. «Եւ յետ նորա թագաւորեաց Սուլայման խոնդքարն ՋՀԸ (1526) թուին, որ բան զամէն շատ թագաւորեաց ամս քառասուն և շուրջ երիք զերկրաւն» (ՄԺ, 2, էջ 393)։

198 Այս մասին Առաքելը պատմում է նաև ՃՁ գլ. (էջ 638—640, 642)։ Արաղա փաշայի ապստամբության մասին մանրամասն տե՛ս նաև Սիմէոն դպիր Լեհացի, Ուղեգրութիւն, Վիեննա, 1936, էջ 363—375։

199 Տե՛ս «Ջաքարեայ Սարկավագի Պատմագրութիւն», Վաղարշապատ, 1870, հ. 2, գլ. Գ։ Օսմանյան զորքերը Մուրադ Դ-ի գլխավորությամբ 1635 թ. մարտին դուրս եկան Կոստանդնուպոլսից, հուլիսի վերջին հասան Երևան և օգոստոսի 8-ին Երևանի բերդը հանձնվեց նրանց։

200 Թահմասպ-ղուլի խանը աքսորվել էր Կոստանդնուպոլիս ընտանյոք և ծառաներով հանդերձ։ Երևանի բերդը դրեթե առանց մարտերի օսմաններին հանձնելու համար Սուլթան Մուրադ Դ-ն Սկյուտարում նրան շնորհել էր հողային տիրույթներ։

201 Առաքել Դավրիժեցու երկի սույն գլխի շարադրանքը, ընդհանուր առմամբ պատմական որոշ արժեք ներկայացնելով հանդերձ, զերծ չէ անճշտություններից։ Լ. Դանեղյանի «Դիրք պատմութեանցին» նվիրված մենագրության մեջ հատուկ գլուխ է հատկացված պատմիչի այս «Ազգաբանութեանը»։ Նշված գլուխը՝ որոշ տվյալներ ճշտելով և պատմիչի սխալներն ու վրիպումներն ուղղելով, մեկ անգամ ևս ցույց է տալիս Առաքել Դավրիժեցու երկի արժանահավատությունը։ Մյուս կողմից էլ այդ գլխում առանձին արժեք է տրվում Առաքել Դավրիժեցու երկի մեջ զետեղված Պարսից շահերի տոհմաբանությանը։ Ստորև մենք ծանոթագրություններում աշխատել ենք համեմատել Առաքել Դավրիժեցու տվյալները Լ. Դանեղյանի դիտողությունների և Կ. Է. Բոսվորտի (որին, ցավոք, Լ. Դանեղյանն անտեսել է) կազմած ու ճշտած ցուցակների հետ (տե՛ս «Мусульманские династии», М., 1971).

Առաքել Դավրիժեցուն ՃՐ գլուխը շարադրելու համար աղբյուր է ծառայել, ամենայն հավանականությամբ, Ամիրաս Երզնկացու ժամանակագրությանը կցված «Սկիզբն ղըզլպաշին որ եղև թագաւոր» խորագիրը կրող հետևյալ հատվածը.

«(Ն)ախ և յառաջ շըխ Սաֆին էր, որ էր իշխան Արտաւիլու, որդի էր շըխ Հայտարին. այս Հայտարըս էառ իր կին զքոյր Նաղուպ թագաւորին որ էր ի Թարվէզ։ Նաղուպ թագաւորն թոռն էր Ջիհանշահ թագաւորին, ի շըխ Հայտարէն և ի բներէն Նաղուպ թագաւորին ծնանի որդի և անուանին Իսմայէլ։ Այս Հայտարս և իր կինն խորհեցան սպանանել զեղով Նաղուպ թագաւորին, զի ինքեանք առցեն զթագաւորութիւնն. և սիրոյ պատճառաւ կոչեն զնաղուպ թագաւորին ի ճաշ. և տան ուտել նմայ զդեղեալ կերակուրն... և բռնութեամբ նոցանց ևս տայ ուտել ի կերակրէն. և սոքա երեքեանս մնասանին ի միասին. Նաղուպ թագաւորն և քոյրն իր և շըխ Հայտարն. և ապա անտիրացաւ աշխարհն և լինի խռովութիւն և պատերազմունք։ Եւ մանուկն Իսմայէլ փախուցանեն ի կղզին Յաղթամարա և անդ սնանի և հասանէ յարբունս հասակի. յայնժամ առեալ զնայ ազգականքն իր բերեալ յայտնեցին ամենեցուն, թէ սայ է Բ-ց կողմանց ժառանգ թագաւորաց. քանզի որդի է շըխ Հայտարին և քուերորդի Նաղուպ թագաւորին Իսմայիլս այս»։ (Մատենադարան, ձեռ. № 10200, թ. 389)։

Այս հատվածի համեմատությունը Առաքել Դավրիժեցու երկի ՃՐ գլխի առաջին մասի հետ բացահայտում է նրանց նույնությունը։ Միևնույն ժամանակ նշված հատվածը արձա-

գանդում է Մարտիրոս դի Առաքելին վերագրվող ժամանակագրության առաջին մասին (տե՛ս Մժ, 2, էջ 427)։

202 Սեֆյան հարստության հիմնադիր շեյխ Սեֆին Հեյդարի հայրը չէր, նրա հայրը Սեֆիի չորրորդ սերնդի ներկայացուցիչ Ջունեյդն էր, որը հաջորդել էր սուլթան Իբրահիմին, վերջինիս նախորդը եղել էր Աշշահիր-շեյխ-շահը, որն իր հերթին հաջորդել էր Սեֆի-էդ-Դինի որդի և հաջորդ Սադր-ադ-Դինին (տե՛ս Լ. Դանելյան, նշված աշխ., էջ 200)։

203 Իրականում Յաղուբը Թուրքմենական Ակ-կոյունլու միավորման առաջնորդ Ուզուն Հասանի որդին և հաջորդն էր, որ գահ բարձրացավ 1478 թ. և իշխեց 12 տարի (տե՛ս Լ. Դանելյան, նշված աշխ., էջ 200։ Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1977, էջ 412։ К. Э. Босворт, Мусульманские династии, стр. 223)։

204 Ջհանշահը Կարա-կոյունլու Կարա Յուսուֆի որդին էր, որն, ըստ Կ. Է. Բոսվորտի, իշխել է 1438—1467/68 թթ. (տե՛ս էջ 221, Լ. Դանելյան, նշված աշխ., էջ 200)։

205 Հեյդարի հայրը՝ Ջունեյդը, աքսորվելով հայրենի Արդաբիլից, գնում է Ուզուն Հասանի մոտ, որտեղ լավ ընդունելություն է գտնում և շուտով ամուսնանում Ակ-կոյունլու միավորման առաջնորդի (Ուզուն Հասանի) քրոջ հետ։ Հեյդարը վայելելով Ուզուն Հասանի համակրանքը, հետագայում ամուսնանում է վերջինիս դստերերից մեկի հետ (տե՛ս Լ. Դանելյան, նշված աշխ., էջ 200—201)։

206 Այս մանրամասնություններին, որոնք առկա են նաև հայկական այլ աղբյուրներում (Մժ, 2, էջ 427։ «Ջաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն», հ. Ա, գլ. Ե) հակասում են պարսկական աղբյուրները (Լ. Դանելյան, նշված աշխ., էջ 201)։

207 Իրականում շեյխ Հեյդարը, ըստ Իսքանդար Մունշու, սպանվել է կռվի ժամանակ, Թաբարսարանի մոտ, շիրվանշահ Իբն Խալիլի դեմ պայքարելիս (տե՛ս Լ. Դանելյան, նշված աշխ., էջ 201) և ըստ Հ. Մանանդյանի «ճակատամարտում Շիրվանի շահ Փառուխ Յեսարի և նաղուր մեծ վեզիր Սուլեյմանի հետ՝ 1489 թվին» (տե՛ս «Քննական տեսություն...», հ. Գ, էջ 416, 413—414)։

208 Առաքել Դավրիժեցու այս տեղեկությունները կրկնվում են նաև հայկական մյուս աղբյուրներում (տե՛ս Խաչատուր Ջուղայեցի, Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 96։ Մժ, 1, էջ 145, 195։ «Ջաքարեայ Սարկավագի Պատմագրութիւն», հ. Ա, գլ. Զ)։

Այլ աղբյուրների համաձայն՝ հետագայում Իսմայիլն ապաստան է գտնում Գիլանի տիրակալ Քարբիա Միրզա Ալու մոտ։ Իսքանդար Մունշին հաղորդում է երրորդ պատումը։ Բոլոր դեպքերում հայտնի է, որ Իսմայիլը մանկուց հեռացված էր հայրենի կրկրից, ուր վերադարձավ դեռևս պատանի հասակում և ներգրավվեց գահի շուրջը բռնկված պայքարի մեջ (Տե՛ս Шараф—хан ибн Шамсаддин Бидлиси, Шараф—наме, т. II, М., 1973, стр. 146. այսուհետև՝ Бидлиси; И. П. Петрушевский, Азербайджан в XVI—XVII вв., Сборник статей по истории Азербайджана, вып. I, Баку, 1949, стр. 228—229, այսուհետև՝ Азербайджан в XVI—XVII вв.)։

209 Այստեղ վերջանում է Ամիրաս Երզնկացու ժամանակագրությունից ընդօրինակած հատվածը։

210 Իսմայիլ Ա-ն թագավորել է 1501—1524 թթ. (տե՛ս К. Э. Босворт, Мусульманские династии, стр. 226), ըստ Լ. Դանելյանի՝ 1502—1524 (տե՛ս նշված աշխ., էջ 202)։

211 Շահ Թահմասպ Ա (1524—1576)։

212 Շահ Իսմայիլ Բ (1576—1578)։

213 Խոսքը շահ Մուհամմադ Խուդաբանդայի (1578—1587) մասին է (տե՛ս К. Э. Босворт, նշված աշխ., էջ 226։ Լ. Դանելյան, նշված աշխ., էջ 203)։

214 Շահ Աբբաս Ա (1587—1629)։ Դեռևս 1581 թ. Խորասանի շամլու և ուսթաջլու դեղերի առաջնորդներն ապստամբություն բարձրացնելով շահ հայտարարելին անչափահաս Աբբաս Միրզային, այդ է պատճառը, որ շահ Աբբաս Ա-ի թագավորության սկիզբը շատ աղբյուրներում համարվում է ոչ թե 1587, այլ 1580 թ. (մանրամասն տե՛ս Լ. Դանելյան, նշված աշխ., էջ 203—204)։

215 Շահ Սաֆի Ա (1629—1642)։

216 Շահ Աբբաս Բ (1642—1666)։

217 Այստեղ վերջանում է Առաքել Դավրիժեցու երկի ՈՐ գլխի բուն բնագիրը։ Ամենայն հավանականությամբ մայր ձեռագիրը և հինգ ընդօրինակություններն ավարտվել են (1662 թ.) այս բառերով, քանի որ Ոսկան Երևանցու ձեռքի տակ եղած ձեռագիրը (Դ) սրանով է

ավարտվում։ Նույն Ոսկանի հրատարակած բնագրում (Ա) «երկրորդ Շահաբասն» բառերից հետո գալիս է հետևյալ նախադասությունը. «որ էր կարի քրիստոնէասէր և ուղղադատ։ Զկնի սորա թագաւորէ որդի սորին Շահսէֆի անուամբ. զկնի սորա թագաւորէ եղբայր սորին Շահիսմայիլն (...)» (էջ 555)։ Ավելացված է, ըստ երևույթին, հրատարակչի կողմից։

Բ ձեռագիրը ավարտվում է, «անուանմամբ երկրորդ Շահսէֆի» բառերով։ Պատմիչի օրոք ընդօրինակած հինգ ձեռագրերից միայն երկու ձեռագիր (Գ և Ե) ունեն լրիվ բնագրի այն մասը, որտեղ շարադրվում են 1662 թ. հետո տեղի ունեցած դեպքերը։ Ըստ որում, այդ մասը նշված ձեռագրերում գրված է բուն գրչի ձեռագրերից տարբերվող մեկ այլ ձեռագրով (վերջին նախադասությունը՝ կարծես դադարող ձեռքով)։ Այս հատվածը ՕՋ պլ. վերջին հատվածի (երկրորդ հրատ., էջ 650) և Սարբաղայ-Յևիի պատմությանը նվիրված գլխի հետ միասին գրված է, ինչպես ենթադրում են հետազոտողները, Առաքել պատմիչի ձեռքով։

218 Սաֆի Բ (Սուլայման Ա) 1666—1694։

219 Այս աղյուսակն առկա է բոլոր ձեռագրերում և երկու վերջին հրատարակություններում։ Այն բացակայում է Ոսկան Երևանցու հրատարակությունից։ Ձեռագրերում աղյուսակն ունի մի սյունակ ևս՝ «Հռոմերեն» վերնագրով, սակայն այն ամենուրեք մնացել է դատարկ։ Ինչպես հայտնում է Ա. Սյուրմելյանը, աղյուսակը կազմել է ինքը՝ Սարգիս քահանան (տե՛ս «Պատմութիւն Հալէպի հայոց», հ. 3, Փարիզ, 1950, էջ 447)։

220 Հատվածի վերջին կցված հիշատակարանից երևում է, որ գլխի հեղինակն Առաքել Դավրիժեցին չէ, այլ Սարգիս քահանա Հալեպցին, «Հմուտ և տեղեակ բանից գրոց... կարի վարժ ի լեզուն Արապի և Օսմանցւոյ և Ֆռանկին... արուեստիւ ականագործ՝ որ պատուական ակունս հարթէ և շինէ, այլ և գնող և վաճառող սորին»։ Այս Սարգիս քահանայի մասին տե՛ս Ա.. Սյուրմելյան, Պատմութիւն Հալէպի հայոց, հ. 3, էջ 425—463։

Առաքել Դավրիժեցու երկում սույն գլխին հաջորդում է ԾԴ գլուխը. «Այս է գիրք գոհարներուն, որ կան ի վերայ աշխարհի՝ թէ յոր տեղաց հասել կու լինին՝ նախ և առաջին ալմաստն» խորագրով։ Այդ գլուխը, ինչպես հեղինակն է ասում, «յառաջ ժամանակաց կայր օրինակն, զայն ևս ի սոյն կարդ դասեալ գրեցաք վասն օգտի ընթերցողաց»։

Նշված երկու գլուխները և «Այլ ևս բան վասն փանզահրին» խորագիրը կրող հատվածը, խիստ տարբերվելով իրենց բովանդակությամբ և լեզվաոճային առանձնահատկություններով Առաքել Դավրիժեցու երկի մյուս մասերից, միևնույն ժամանակ ունեն շատ ընդհանուր գծեր և լրացնում են մեկը մյուսին։

1873 թ. Սանկտ-Պետերբուրգում Ք. Պատկանյանի աշխատասիրությամբ լույս տեսան այս հատվածների տեքստը և նրանց ռուսերեն թարգմանությունը К. П. Патканов, Драгоценные камни, их названия и свойства по понятиям армян в XVII веке, СПб., 1873 (այսուհետև՝ К. П. Патканов).

Այս գրքույկը ըստ էության ոչ թե բնագրի հրատարակությունն է և նրա ռուսերեն թարգմանությունը, այլ պարզապես մի նոր աշխատության՝ նվիրված թանկագին քարերին և նրանց բուժիչ ու այլ հատկություններին։ Անվանի հայագետը Առաքել Դավրիժեցու երկում եղած նյութը պատրաստել է հրատարակման, ապա վերադասավորել է, պատրաստել մի նոր բնագիր ռուսերեն լեզվով, ծանոթագրել, կազմել բառարան և ավել ներածական ուսումնասիրություն։

Ինչպես ընդգծում է Ք. Պատկանյանը, այդ հատվածները պարունակում են հանքագիտության պատմության հետաքրքիր տեղեկություններ, մինչդեռ բուն հանքագիտության համար գրեթե ոչ մի նորություն չեն ներկայացնում։ Դրությունը գրեթե չի փոխվել անցած մի դարի ընթացքում։ Եվ եթե Ք. Պատկանյանը Սարգիս քահանայի տեղեկությունները համեմատել է XIII դ. ականավոր հանքագետ Ահմեդ Թայֆաշիի գործի հետ (տե՛ս К. П. Патканов, стр. IV), մենք փորձ ենք արել համեմատել նույն նյութը XII դ. հայ բժշկապետ Մխիթար Հերացու թանկագին քարերի բուժիչ հատկություններին նվիրված աշխատության հետ (տե՛ս Л. А. Оганесян, История медицины в Армении, т. II, Ереван, 1946, стр. 129—133)։ Համեմատությունը ցույց տվեց, որ այդ երկու երկերը միմյանց հետ կապ չունեն, երկուսն էլ միանգամայն ինքնուրույն շարադրանք են, ընդհանուր են միայն հանրահայտ թանկագին քարերի անունները. նրանց բնութագրումը և հատկությունների նկարագրումը տարբեր են։

Գ. Պ. Միխալևիչը (տե՛ս „О персидской и армянской минералогиях XVII в.“, „Культура и искусство народов Средней Азии в древности и средневековье“, М., 1979, стр. 113—119) համեմատում է Առաքելի երկի խնդրո առարկա հատվածները (Ք. Պատկանյանի թարգմանությամբ) իրանական դիանական Թադի Բինիշի 1964 թ. հրատարակած անանուն

երկի՝ «Ջալահիր-նամեի» հետ, որը հոդվածագիրը համարում է Առաքելի համապատասխան հատվածների «վերջնական աղբյուր» («конечный источник»)։ Հոդվածի վերջում հեղինակը հայտարարում է, որ Պատկանյանի թարգմանած երկը անառարկելիորեն նշված պարսկական աղբյուրի տարբերակն է («является изводом персидского источника», էջ 118)։ Սա, մեր կարծիքով, միանգամայն սխալ դրույթ է, այն ցույց է տալիս նաև Միխալևիչի համապատասխան հատվածների բաղդատումը և բանասիրական քննությունը։ Ավելի ճիշտ եզրակացության է հանգում հոդվածագիրը հետևյալ դրույթում՝ «Մերձավոր Արևելքում միջին դարերում գոյություն է ունեցել (դրական իմացությունների փոխանցման—Լ. Ռ.) արաբա-պարսկական հանրաբանական ավանդություն, որի դիտական արմատները սկիզբ են առնում XI դ. դիտնական Աբու Ռայհան Բիրունուց, իսկ գործնական-արհեստագործական տեղեկությունները ... արտացոլում են մի շարք հաճախ անհայտ արհեստավորների և բուժակների բազմադարյան դործունեությունը» (էջ 118)։

Շատ ընդհանրություն կարելի է դտնել քննարկվող հատվածների և վերը հիշատակված միջնադարյան խոշորագույն դիտնական Աբու-ր-Ռայհան Մուհամմեդ իբն Ահմեդ ալ-Բիրունու հանրագիտական երկի մեջ (տե՛ս Абу-р-Райхан Мухаммед ибн Ахмед ал-Бируни, Собрание сведений для познания драгоценностей (Минералогия), М., 1963; այսուհետև՝ Бируни)։ Ինչպես վերջինս, այնպես էլ Առաքելը նախ տալիս են թանկագին քարերի անունները, ապա նկարագրում նրանց արտաքին տեսքը, գույները, տարատեսակները, առաջացման վայրը, մշակման ձևը, «բուժիչ» և «կախարդական» հատկություններ, շուկայում ընդունված գները և այլն։ Բվարկվում են նրանց արատները և վերջինների վերացման ճանապարհը։

Ընդհանուր է նաև քարերի ցուցակը (տարբերությունները աննշան են)։ Հաճախ հանդիպում են միևնույն աշխարհագրական անունները և ակնագործության մեջ ընդունված օտար ազգի բառեր-տերմիններ։ Քիչ չեն դևպքերը, երբ և Բիրունին, և հայ հեղինակը այս կամ այն թանկագին քարի «կախարդական» հատկությունները նկարագրում են գրեթե նույն բառերով։ Այսպես, զմրուխտի մասին հայ հեղինակը գրում է. «... քէ որ օձին դէմ բռնես, նա տեսանելուն պէս օձին աչացն ջուր կու իջանէ և կուրանայ օձն. և բազումք են վկայած այս բանիս փորձելով բազում անդամ» (էջ 588—589)։ Բիրունին գրում է. «Զմրուխտի (հատկություններից է) այն, ինչ որ նրան միաձայն վերագրում են գրուցողները, այն է՝ (զմրուխտին) նայելիս թունավոր օձերի աչքերը դուրս են գալիս»։ Եվ ավելացնում է ասածին, որ դրա իսկությունը փորձով չի հաստատվում (Бируни, стр. 156, 157)։

Առաքել Դավրիժեցու երկում բերված ամբողջ ցանկը գրեթե կրկնում է Բիրունու մոտ նշված քարերը։ Ըստ որում՝ տեղեկությունները, աշխարհագրական անունները մեծ մասամբ համընկնում են, ընդհանուր են նաև մասնագիտական տերմինները։

Ուշադրավ է, որ Սարգիս քահանայի երկը, ունենալով շատ ընդհանրություններ Բիրունու երկի հետ, միևնույն ժամանակ խիստ տարբերվում է Մխիթար Հերացու նույն հարցերը շոշափող երկից (տե՛ս Л. А. Оганесян, История медицины в Армении, т. II, стр. 129—133)։ Սարգիս քահանայի աշխատությունը, որքան էլ նման է Բիրունու ձեռնարկին, ինքնուրույն երկ է, գործնական դեր խաղացող և կիրառական նշանակություն ունեցող։ Այստեղ ի մի են բերված ակնագործի փորձից բխող դիտելիքները՝ «հրաշալիքների» մասին տարիներ շարունակ լրված բանավոր դրույցների հետ միասին։ Հայ ակնագործի աշխատությունը մեկ առավելություն ևս ունի Բիրունու ձեռնարկի համեմատ։ Բիրունու մոտ կան բազմաթիվ ավելորդաբանություններ, հաճախ միջնադարյան հեղինակներից և արևելյան քնարերգության նմուշներից։ Սարգիս քահանան ավելի լակոնիկ է, բայց բոլոր դեպքերում նրա աշխատության մեջ միշտ զգացվում է հեղինակի ներկայությունը, նրա ակտիվ մասնակցությունը գործերին (հաճախ ակնագործը հաճախ վերջում ավելացնում է «փորձած է», «բազում փորձեալ են զայս» և այլն)։ Նա իրագործում է արաբ հանքագետի հիմնական պահանջը՝ բոլոր դեպքերում դիմել փորձին։ Չի բացառված նաև, որ հեղինակը ծանոթ եղած լինի Բիրունու գործի հետ, քանի որ միջնադարում Բիրունու ձեռնարկը համընդհանուր ճանաչում էր ստացել։ Անհավանական է անգամ, որ դիտության այդ ասպարեզին նվիրված որևէ գործ, այն էլ արաբական աշխարհում, կրած չլիներ իր վրա Բիրունու ազդեցությունը, քանի որ, ինչպես գրում են մասնագետները, այն «իրենից ներկայացնում է բացառիկ մի երևույթ. Բիրունին ի մի է բերել հանքաբարերի թագավորության ուսումնասիրման նախկին էտապը և միաժամանակ ցույց տվել հետագա զարգացման ուղիները» (տե՛ս А. М. Беленицкий, Место минералогического трактата Бируни в истории восточной минералогии. *Бируни*, стр. 413)։

Ավելացնենք նաև, որ Առաքել Դավրիժեցու երկի՝ թանկարժեք քարերին նվիրված հատվածների լեզուն չափազանց խրթին և բարդ է։ Բազմաթիվ օտար բառերը (արաբերեն, պարսկերեն, թուրքերեն), հաճախ աղճատված ձևով, որոնք հնարավոր չէ դտնել ոչ մի բառարանում, ավելի են դժվարացնում ընթերցողի գործը։ Այդ հանգամանքը ընդգծում է նաև Ք. Պատկանյանը։ («Драгоценные камни», стр. II). *Ժամանակին մեծանուն հայագետը, ձեռնամուխ լինելով նշյալ հատվածների թարգմանությանը, ընդգծել է, որ Առաքելի երկի կեսը թարգմանելն ավելի հեշտ է, քան այդ 19 էջի հշդրիտ փոխադրումը ռուսերենի (անդ)։*

Ք. Պատկանյանի աշխատությունը, Բիրունու ձեռնարկի դիտական հրատարակությունը ռուսերեն բնագրով և ծանոթագրություններով, ինչպես նաև մասնագետների (երկրաբանական դիտությունների թեկնածու Վ. Սեյրանյանի և արևելագետ Ն. Դևորդովի) դիտողությունները մեծապես նպաստել են մեր դործին, որի դժվարությունները այսուհանդերձ լրիվ չենք կարողացել հաղթահարել։

221. Հմմտ. Бируни, стр. 34—73; *Л. А. Оганесян,* История медицины в Армении, т. II, стр. 131.

222 Ոսկանը հավատարիմ մնալով օտարազգի բառերը որքան հնարավոր է հայերենով փոխարինելու իր ընդհանուր սկզբունքին, խասիարը փոխարինել է «բարեն» բառով։ Խասիաթ (արաբ.)—բնավորություն։

223 Տե՛ս К. Патканов, Драгоценные камни, стр. *16—17։ Բիրունին հատուկ գլուխ է նվիրել «Биджази-гранат»-ին, որի լավագույն տեսակը «ցեյլոնինն է, մուգ կարմիր, մաքուր կրակի գույնի» (Бируни,* стр. *78—81)։*

224 Հմմտ. «Зуммуруд-изумруд» *(Бируни,* стр. *151—158)։ «Ըզմյուխին» բառը անհասկանալի է։ Ք. Պատկանյանի կարծիքով թերևս նշանակում է «գլուխը իջեցնել, կախել» (տե՛ս* «Драгоценные камни», стр. *25)։ Բիրունին ասում է, որ զաբարջադի (զմրուխտի) հանքերը գտնվում են Նեղոս գետից դեպի հարավ ընկած տափաստանում՝ Սահիդում (էջ 152)։ Արդյո՞ք բնագրի «ըզսյիտին» նույն այս «Սահիդ» բառի աղավաղված ձևը չէ, մանավանդ որ այլ դեպքերում նույնպես հանքի տեղանունը շփոթված է թանկագին քարի անվան հետ (տե՛ս К. Патканов,* Драгоценные камни, стр. *16)*

225 Այս պատկերացումը վաղ միջնադարից պահպանվել էր մինչև XVII դար։ Բիրունին էլ է նույնը գրում. (էջ 156)։ Մեր հեղինակը նշում է. «բազում են վկայած այս բանին փորձելով բազում անգամ» (էջ 588—589)։

226 Զաֆրան (шафран) *կամ երկաթի վրա կուտակված ժանգը, որը կարմիր գույնի համար կոչվում է զա՛ֆարան։*

227 Հանք. ծիրանաքար, порфир*։ Այսպես է թարգմանում և Ք. Պատկանյանը* («Драгоценные камни», стр. *22)։*

228 Յասպիսը (զաբարջադը) Ք. Պատկանյանը թարգմանում է «берилл», և նշում, որ զաբարջադը յասպիսը չէ (էջ 26)։ Հարկ է նշել, որ Բիրունու մոտ զաբարջադ նշանակում է և՛ զմրուխտ և՛ խրիզոլիտ (էջ 62, 93 և այլն)։ Բիրունին այս զաբարջադը նույնացնում է մեկ օլիվին խրիզոլիտի (էջ 62, 93, 253), մեկ զմրուխտի (էջ 151, 152, 154, 156, 261) հետ։

229 «Ճուտամ զահմաթին լաւ է» արտահայտությունը Ք. Պատկանյանը թարգմանում է. «Он полезен против проказы» стр. *25)։ Այս բարդ բառի առաջին մասը «ճուտամ» (արաբ.) իրոք նշանակում է «բոր», «զահմաթ») (արաբ.)—«գարշահոտ»։*

230 Ք. Պատկանյանը նշում է, որ հեղինակն իր ժամանակի թանկարժեք քարերը ձգտել է համեմատելու աստվածաշնչային քարերի անուններին (էջ 7)։

231 Հմմտ. Бируни, стр. 83 и 440.

232 Ոսկանը (էջ 556) այս բառը փոխարինել է «պատատանն» բառով։

233 Տե՛ս Ոսկանի հրատարակությունը, էջ 557 «պատատոնն» վրա «բլլնն»։

234 «Պատատանալ» վրա «բլած» (Ոսկանի հրատարակությունը, էջ 557)։

235 Հագատ—թանկարժեք քարերի հղկիչ, ողորկիչ։ (Տե՛ս «Драгоценные камни», стр. *67)։*

236 Հեղինակն ըստ երևույթին նկատի ունի միջնադարում լայնորեն տարածված «Քիթաբ ալ-Հավաս» հանրագիտական աշխատությունը, որին հաճախ դիմում է նաև Բիրունին (տե՛ս «Минералогия», стр. *66, 156 և այլն)։*

237 Ք. Պատկանյանը գրում է, որ այնուհետև ոչ թե ապաթն է, այլ այսպես կոչված

կատվի աչքը (кошачий глаз) (էջ 27)։Սխալ է նաև ագաթի և յաղութի հատկություններն (խասիաթի) նույնացումը։ Եվ իրոք, Բիրունին ագաթն անվանում է մուհատակ (էջ 164), «Յայնըլ-Հրրը» ավելի շատ հիշեցնում է «այն հիրը» (կամ «այս աս-սինաաուր») քարը, որը պատկանում է «յաղութ» (կամ «կայծ») քարի ենթախմբին (տե՛ս Бируни, стр. 213, 478)։

238. Նակրէի դոդոբիւն—գարշ (Ոսկանի հրատարակությունում «նակրէքը» փոխարինված է «գարշ»-ով, էջ 557)—բորոտություն։

239 Այս բնութագրումը համապատասխանում է հաջորդ քարին՝ ամէթիստին կամ մեղսիկին (ամէթիստաս հունարեն նշանակում է ոչ հարբած)։

240 Ք. Պատկանյանը լալը թարգմանում է «шпинель» (էջ 20), Բիրունին ամէթիստը կոչում է «ջամաստ» (էջ 181)։ Դրանից բացի նրա գրքում կա «լալ» (շպինել) և Բադաշխանի լալ՝ ալ-լալ ալ-Բադախշի» (էջ 73—78)։ Հայաստանում ամէթիստի և նրա հանքատեղերի մասին տե՛ս В. Б. Сейранян, Аметист—древнейший самоцвет, ж. „Промышленность Армении“, 1980, № 10, Ереван, стр. 16—18.

241 Մաջուն—Electuarium. pâte medicinale; electuare, confitures—род лекарственного экстракта“.—թարգմանում է Ք. Պատկանյանը („Драгоценные камни“, стр. 21)։

242 Տե՛ս К. Патканов, стр. 17—18։ Բիրունին («Минералогия», стр. 269) խրիզոլիտը անվանում է «գարարջադ», մինչդեռ Սարգիս քահանայի մոտ զաբարջադը նույնացվում է Յասպիսի հետ (տե՛ս «Գիրք պատմութեանց», էջ 589, և այստեղ, ծան. 228)։

243 Համմ. „Буллур—горный хрусталь“ (Бируни стр. 169—177): Ք. Պատկանյանը այս քարը նույնացնում է «զապարճատի» (Aquamarina, Beryll) հետ (տե՛ս „Драгоценные камни“, стр. 25—26):

244 Համմ. Лазвард—Лазурит. Բիրունին ասում է, որ լագուրիտը (լագվարդը) հռոմները կոչում են «արմինակուն» (և՛ որ այս բառը «Արմենիա» բառից է), քանզի նշված քարը նման է հայկական քարին, որն օգնում է մելամաղձության դեպքում։ (Бируни, стр 182)։

245 Թևզատի ջուր (պարսկ.)—արքայաջուր։

246 Մաղպուլ (արաբ.)—ընդունված։ Ք. Պատկանյանը թարգմանում է «հաճույքով գնում ենք» (էջ 44)։

247 Համմ. Бируни стр. 182.

248 Համմ. „Лулу—жемчуг“, որին Բիրունին ընդարձակ մի գլուխ է նվիրում (էջ 93—151)։ Տե՛ս նաև К. П. Патканов, Драгоценные камни, стр. 54—57:

249 Համմ. „Буссаз—коралл“ (Бируни, стр. 177—181; К. П. Патканов стр. 54—57):

250 Արաբ հեղինակները մարջանը համարում են ֆռանկների ծովի բույս, որն աճում է Միջերկրական ծովի Աֆրիկյան ափին։

251 Ք. Պատկանյանը նամանին բացատրում է «սերդոլիկ», սակայն նա նշում է, որ սերդոլիկը մեծ մասամբ նույնացվում է աղեղ (акик) քարի հետ (էջ 32—33)։ Եվ իրոք՝ Բիրունու մոտ նամանի անունով քար չկա, սակայն սերդոլիկ-աղեղին նվիրված գլխում նշվում է որ աղեղի հանքերը գտնվում են Սինդում և Յեմենում (տե՛ս էջ 160)։

252 Ինագրում գրված է «մախպուլ» ձևով։ Տե՛ս ծան. 246։

253 Համմ. Бируни, стр. 160.

254 Մաւի (թուրք.)—կապույտ, կապուտակ, երկնագույն, ծովագույն։

255 Ըստ երևույթին այս քարը հենց «Акик-сердолик» -ն է։

256 Ռուպ—քառորդ։

257 Համմ. „Хараз ал—Хайат—камень змей“ (Бируни, стр. 194—195).

258 Ք. Պատկանյանը նշում է, որ առաջինն այս քարերից, անկասկած, այսպես կոչված «змеевик»-ն է (Serpentin), որը տարբեր գույների է՝ կարմիր, դեղին, սև, կապույտ և այլն (էջ 41)։

259 Համմ. Бируни, стр. 194.

260 Անհասկանալի է, թե ինչ քարի մասին է խոսքը։ Ք. Պատկանյանը գրում է. «Ես ոչ մի կերպ չհասկացա թե հեղինակն այս հոդվածի երկրորդ մասում որ քարի մասին է խոսում» (էջ 41)։ Թևևս «խտրելիազ աղչասի» նշանակում է «խզբր Իլյասի (այսինքն՝ Ղիյա մարգարեի)—սպիտակ»։

261 Սատաֆ—գաղտակուր, ջենս—ցեղ։

262 Ղուբա (պարս.)—գմբեթ։

263 Դար—ուղիղ, հարթ։ Մի շարք բարբառներում (Մուշում, Ապարանում) դուրկ նշանակում է հարթել, հավասարել, ուղղել, հորդել։

264 Մարդուր (արաբ.)—գրված, գծված, նկարված դիծ։

265 Այստեղ Առաքել Դավրիժեցու երկի բոլոր ձեռագրերում ու երկրորդ և երրորդ հրատարակության մեջ նկարված է ոլորված, կծկված օձ։

266 Օձիկ ցաւ. մեզ չհաջողվեց պարզել, թե ինչ հիվանդության մասին է խոսքը։ Ք. Պատկանյանը օձիկցաւը թարգմանում է «ужаленный змеей» (էջ 41), սակայն թարգմանությունը տալիս է հարցական նշանով։ Ստ. Մալխասյանցի բառարանը (կրկնելով Հր. Աճառյանի Հայկեան պատմական բառարանի տվյալները) տալիս է բավականին անորոշ բացատրության, որից պարզվում է, որ «օձիկը» մի տնասկ վերք է...» (Հ. 4, էջ 606)։ Միջնադարյան բժշկարաններում այս հիվանդությունը չի հիշատակվում։ Հավանական է օձիկ ցաւը պարանոցային ջղերի բորբոքումն է։

267 Բիրունու մոտ նասրը (йашб-яшма) հիշատակվում է որպես նշմի տարատեսակ՝ դիղնավուն, սպիտակ կաթնագույն քար, որն օգտագործվում է աստամոքսի ցավի դեմ (տե՛ս էջ 185)։ Մինչդեռ Դավրիժեցու նկարագրությունից պարզ երևում է, որ խոսքը խալցեդոնի տարատեսակ՝ արևքար-հելիոտրոպի մասին է, որն ակնագործները «кровяная яшма» են անվանում (տե՛ս նաև *К. Патканов*, стр. 31)։

268 Փէրփէր (պարսկ.)—դանդուռ, փրփրիմ, փրփրևան։

269 Ք. Պատկանյանը այս քարը նույնացնում է հնմատիտի (Hämatite, Кровавик) հետ (տես՝ էջ 38—40, հմմտ. *Бируни*, „Хумахан—гематит“, стр. 202—204)։ Հեմատիտը (երկաթօքսիդը) սև, ոչ-թափանցիկ քար է մետաղյա փայլով, կտրվածքը՝ կարմիր. բնագրում նշված է ծիրանագույն։ Ամասհին թերևս Բիրունու շագանաչն է (տես՝ էջ 294, 474), հեմատիտի մյուս տարատեսակը։

270 Հմմտ. „Джза—оникс“ (*Бируни*, стр. 168—169)

271 „Магнатис—магнитный камень“ (Бируни, стр. 200—202; տե՛ս նաև *К. Патканов*, стр. 46—47)։

272 Զղացաւ—Հայկական բժշկարաններն այդ հիվանդության մասին չեն խոսում։ Ըստ երևույթին, հեղինակը նկատի ունի նեվրիտի տարբեր տնասկները։

273 Տես К. Патканов, стр. 34—36, հմմտ. „Йашм—нефрит“ (*Бируни*, стр. 184—186)։

274 Պաղլամ (արաբ.)—Հայերենի մի շարք բարբառներում այդպես է կոչվում խորիսը։

275 Ախմարաց փերփեր—անհայտ մի բույս։ Ղ. Ալիշանը («Հայ բուսակ», Վենետիկ, 1985, էջ 628, 636) նշում է փրփրիմ, փերփեր, փրփրևան (Portulaka), անգամ՝ «քարի (հորի, վայրի) փերփերը», սակայն «ախմարաց փերփեր» հեղինակը չի ճանաչում։

276 Խալաթի—չինական (Տե՛ս նաև *Бируни*, стр. 185, 466)։

277 Հմմտ. *Бируни*, стр. 184. Բիրունու տեղեկությունները ճշգրիտ են. չինական Թուրքեստանի Խոթան նահանգի Քարա-քաշ դաշտավայրում մինչև այժմ արդյունահանվում է նեֆրիտ։

278 Սաֆ (արաբ.)—մաքուր, թափանցիկ, վճիտ։ Ռուսերեն հրատարակությունում (էջ 152) մենք թարգմանել ենք «прозрачная»։ Սակայն չափը թափանցիկ չի լինում։

279 Ռիսալ (իսպ.)—իսպանական հին արծաթյա դրամ։

280 Ք. Պատկանյանը նիլումը թարգմանում է «Кианит» (էջ 28—29)։ Բիրունին կիանիթ չի ճանաչում, բայց հիշատակում է նաղութ քարի կապույտ (ինդիգո) տարատեսակը՝ նիլի անվամբ (տե՛ս «Минералогия» стр. 69)։

281 Մսխալ, մղալ, մթխալ (արաբ. mithkal, պարս. miskal)—քաշի չափ=6 դանիկի=24 թուսուջա=4,464 գր.։

282 Ք. Պատկանյանը թեև նույնացրել է այս քարը «Ленточный агат» կամ «Bandachat» քարի հետ, սակայն ծանոթագրության մեջ նշում է, որ բառի ճշգրիտ նշանակությունը չի գտել (տե՛ս էջ 37—38)։ Բիրունին ի միջի այլոց նշում է «агат (муаррак)», բայց չի խոսում նրա հատկությունների և արտաքին տեսքի մասին (տե՛ս *Бируни*, стр. 164)։

283 Սեպաճը, ըստ Ք. Պատկանյանի՝ գագաթն է (էջ 42—43)։ Այս քարի մասին Բիրունու տեղեկությունները դրեթե միանգամայն համապատասխանում են տվյալ հատվածին (*Баруни*, стр. 186).

284. Հմմտ. *Бируни*, стр. 186

285 Համմ. *Бируни*, стр. 182, տես նաև *К. Патканов*, Драгоценные камни, стр. 51—52.

286 Ֆըսթուղի (պահլ. pistak-ից)—պիստակ (*Бируни*, стр. 50, 68, 69. 71 :

287 Նոզդա (Բուրբ.)—բիծ, կետ, նիշ, արատ, նշանախնդ։

288 Տես *Бируни*, стр. 158—160; *К. Патканов*, стр. 48—50:

289 Բիրունին փիրուզայի մասին գրում է. «Սրա ընտիր տեսակն այն է, որ արտահանվում է Ադրբարի և Բուղտակի հանքերում» (*Бируни*, стр. 158)։

290 Համմ. *Бируни*, стр. 158.

291 Շպաղբի բառը Բիրունու մոտ չկա, կա «молочный, называемый шафран» կամ «цвет молока (ширбамйа)» (էջ 158, 456)։ «Շպաղբին» բերվա արաբ. schabbe—«շիր», «պաղել» բառից է։ Ս. Ամատունին «Հայոց բառ ու բան»-ում հիշատակում է Վանի բարբառում գործածվող «շպամանիկ» բառը, որը նշանակում է ինչ-որ կապույտ բար (էջ 524)։

292 Բիրունին իր երկի մի գլուխը նվիրել է մագնիսին (էջ 200—202), սակայն արծաթի մագնիսի մասին այնտեղ խոսք չկա։ Ք. Պատկանյանը ծանոթագրություններում նշում է, որ արծաթի մագնիսը հիշատակվում է նաև Բեն-Մանսուրի մոտ (էջ 47)։ Բանկարժեք քարերին նվիրված միջնադարյան երկերում հաճախ են հանդիպում ոսկու, արծաթի, պղնձի, մսի, մազի, եղունգների և այլոց «մագնիսներ» (տե՛ս *Бируни*, էջ 473, ծան. 9)։

293 Խարդութ (հիշոր՝ խարտութ) խարտել—խարտոցով մաշկել, փշրել—խարտածի փշրուտք (Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973, էջ 348—349)։

294 Բիրունին խոսելով ոչ թե «Մգնադիս-ֆլայի», այլ մագնիսի մասին, հիշատակում է Աղվանատանում գտնվող Հաշրաչի գյուղը, որտեղ հանդիպում են մագնիսի կիրճեր (էջ 200)։ Հավանական է, որ արաբների այս «Хашбаджи» տեղանունը վերածվել է «Հապաշու երկրի»։

295 Խոսքը Մուրատ Սարգիս քահանա Հալեպցու (1592—1662) մասին է (տե՛ս Ա. Սյուրմեյան, Պատմութիւն Հալէպի հայոց, հ. 3, էջ 425—463)։

296 Ա. Սյուրմելյանն այս խոսքերին ավելացնում է. «որ է ոչ միայն ծանոթ Հին և Նոր Կտակարանաց և Աստուածարանական ուսմանց, այլև ծանօթ դրաւոր գիտութիւնից՝ բժշկութիւնն, աւետարանութիւնն, տոմարագիտութիւնն, հաշուակալութիւնն, թանկագին քարերու գիտութիւնն և վերջապես ինքնաշխատութեամբ և համբերատարութեամբ հասած էր ուսման և գիտութեան այնպիսի աստիճանի մը՝ որ «ամէն բանէ խոպարտար էր». այսինքն համալսագէտ մըն էր» («Պատմութիւն Հալէպի հայոց...», էջ 427—428)։ Դրանից բացի, Սարգիս քահանան «բժիշկ ալ է միանգամայն ու կարդացած է Ամիրատվէպն ու Մխիթար Հերացին» (նույն տեղում, էջ 447)։

297 «Այսքան չէ սակայն Տէր Սարգիսի հմտութիւնը,—ասում է Ա. Սյուրմելյանը,—սա լայնածաւալ միտք է, համալսնագէտ, ամէն բան գիտնալու հետաքրքրութեամբ, և այս՝ շնորհիւ իր լեզուագիտութեան... Նոյնը կվկայէ նաև իր բնաւանկան մտահոգութիւնը՝ որով Սարգիս քհյ. «կարի վարժ էր ի լեզուն աւազի, օսմանցւոյ և ֆռանկին, այլ և ծանօթ հռոմի լեզուին և ջհուի լեզուին», ու ասոնք հայերենէ զատ՝ որ իր մայրենի լեզուն էր և որուն լիովին տիրացած էր դրաբարով և իր ժամանակի աշխարհաբարով։ Հայերէնը, թուրքերէնն ու արաբերէնը ծննդավայր Հալէպի մէջ ուսած և շատ բնական էր իրեն և շատերու համար. իսկ մասամբ Հալէպի և աւելի Իզմիրի մէջ պատեհութիւն ունէր սորվելու ֆրանկի կամ ֆրանսերէն լեզուն, լատիներէնի ծանօթութեամբ և ջհաի լեզուն, որ սպանիերէնէ ըլլալէ աւելի հրեայերէնը ըլլալ կ'ենթադրեմ։ «Ես կարդացող հինդ լեզուէ». ասա նաև վկայութիւնը իր ընտանեկան արձանագրութեանն»։ (Նույն տեղում, էջ 455)։

298 Առաքել Դավրիժեցին նախորդ գլխի վերջում զետեղված հիշատակարանում այս գլխի մասին գրում է. «Յառաջ ժամանակաց կայր օրինակն»։ Կարելի էր ենթադրել, որ այս գլուխը «յառաջ ժամանակաց» պատրաստ կար հենց իրեն՝ Առաքել Պատմիչի մոտ։ Սակայն Ա. Սյուրմելյանը, կարծես չի կասկածում, որ բանկարժեք քարերին նվիրված ինչպես առաջին, այնպես էլ երկու հաջորդ գլուխները պատկանում են Սարգիս քահանայի գրչին. «Ինչպէս որ յայտնի կ'երևայ,—գրում է նա,—խորագիրներէն ու աշխատասիրութեան ամբողջական խմբագրութենէն, Սարգիս քհյ առաջին և հաջորդ երկու գլուխներուն տակ նախ վեց լեզուեան տախտակը կը պատրաստէ իրեն ծանօթ հղող բոլոր թանկագին քարերուն...» (տե՛ս Պատմութիւն Հալէպի հայոց, էջ 447)։ Ք. Պատկանյանն, ընդհակառակ, ենթադրում է, որ երեք հատվածները շարադրված են տարբեր հեղինակների կողմից. առաջինի հեղինակը հայտնի է, երկրորդը՝ անհայտ հեղինակի գործ է, իսկ երրորդը՝ ինչ որ բժշկարանի մաս է (Տե՛ս «Драгоценные камни», стр. I—II)։ Անկասկած կարելի է ասել միայն, որ այս հատվածները

Առաքել Դավրիժեցու երկին չեն պատկանում. նրանց ոճն ու լեզուն պատմաբանի ոճից ու լեզվից շատ են տարբերվում։

299 Ինչպես հայտնի է, հնում և միջնադարում ալմաստի միակ ճանաչված հանքերը գտնվում էին Հնդկաստանում։ Ըստ երևույթին, հնդիկական «Ջուլումաթ» երկիրը՝ հենց Հնդկաստանն է։ Բիրունու հաղորդմամբ՝ ալմաստի հանքերը գտնվում էին «Սարանդիբի դիմաց ընկած խավար պետությունում», (Бируни, стр. 86)։ Բերվս «Սարանդիբի (Ցեյլոն կղզու) դիմացի խավար պետությունը՝ նույն Ջուլումաթն է, քանի որ հայերեն «խաւար» բառը նշանակում է «մութ, մթություն» (տես Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973, էջ 351)։ Պարսկերեն «խավէր» նշանակում է «արևելք» և «Արևելք», գրավոր լեզվում «արև», հնացած՝ «արևմուտք» «Արևմուտք»։ Կա նաև «խավէրան»—Խորասանի գավառներից մեկը (տե՛ս Персидско—русский словарь, под ред. Ю. А. Рубинчика, т. I, М., 1970, стр. 536)։ *Համմ. Բիրունու՝ գմբեթախի մասին պատմածի հետ։* (Бируни, стр. 156)։

300 Պետք է նշել, որ միջնադարյան գրականության մեջ ալմաստը հաճախ կապվում է Ալեքսանդր Մակեդոնացու անվան հետ։ Միջնադարյան արաբական և պարսկական գրականության մեջ օգտագործվող Ալեքսանդր Մակեդոնացու մականուն Զու-լ Քարայնը հիշատակում է նաև Բիրունին (տե՛ս նույն տեղում, էջ 87, 442)։

301 Խուդայի (պարսկ.)—աստվածային։

302 Համմ. Бируни, стр. 50։ *Նման պատմվածքներ հաճախ են հանդիպում տարբեր ժողովուրդների գրականության մեջ (Նախիջան Կիպրացի, Մարկո Պոլո, 1001 գիշերվա հեքիաթները, «Азбуковник» և այլն)։*

303 Ղիմաթ (արաբ.)—ճիշտ ձևը զըյմէթ—արժեք, գին։

304 Այտաղ Ք. Պատկանյանի հրատարակած բնագրում «չօհարջիք» (էջ 83)։ Ջոհարիք (Բուրք.) կամ ջոհարջիք—ակնագործ, գոհարավաճառ։

305 Թարկ (պարսկ.)—ծալք, հնաք, նիստ, երնսակ։

306 Ղիրաթ (արաբ.)—ծանրության փոքր կշիռ=1/5 գրամի (0,20275 գր.), որ գործ է ածվում ակնագործության մեջ, կարատ։

307 Կուճրաթ—Գուջարաթ։

308 Տաքան—Դնկան։

309 Քալբարկայ—Գուլբարգա, հետագայում Ահսանարադ։

310 Առաքել Դավրիժեցու երկի բոլոր ձեռագրերում «ի մէջ Մհուռոյ Տէվիպենճանայ, Կարուճանի, Փոռայ կղնայ...»։ Նույնը՝ Ա. Սյուրմելյանի «Պատմութիւն Հալէպի հայոց» աշխատության 441 էջում։ Առաջարկած վերծանումը Ք. Պատկանյանինն է (տե՛ս К. Патканов, стр. *4)։*

311 Մանջալի—կարատի $1^3/_4$։ Գոլկոնդում և Վիզապուրում=կարատի $1^3/_6$, իսկ Գոա-յում=5 գրանի (К. Патканов, стр. *9*).

312 Ք. Պատկանյանի մատ (стр. 4)—«леденцового».

313 Ձէյթի (Ք. Պատկանյանի մոտ, էջ 4 «оливковый») *զայթի. և զայթունի ըստ երևույթին ընդունված մասնագիտական տերմին է, հանդիպում է նաև Բիրունու մոտ* (Бируни, стр. *50, 68, 112)։*

314 Տես այտաղ, ծան. 286։

315 Պիլար—բյուրեղ (տես «Գիրք պատմութեանց», էջ 591)։ Ք. Պատկանյանը թարգմանում է. «хрустальный» (К. Патканов, стр. 4) *նույն տերմինն օգտագործում է և Բիրունին (էջ 86)։*

316 Ա. Սյուրմելյանի մոտ («Պատմութիւն Հալէպի հայոց», էջ 441) «պաղինքն»։ Ք. Պատկանյանը «այլ պաղինքն» թարգմանել է «остальные цвета *(պաղինքն)»* (стр. 4)։ *Պաղ նշանակում է նաև «բյուրեղակերպ ապակի, ապակի հայելւոց», «գէջ կամ արածի վերայ ադամանդի, որ նուագէ յոյժ ղյարգ նորա» (տես Մանուէլ վ. Քաջունի, Բառադիրք արուեստից և գիտութեանց և գեղեցիկ դպրութեանց, հ. 1, Վենետիկ, 1891, էջ 947)։*

317 Ցլօրի (իտալ.)—արծաթեն (հնում ոսկյա) դրամ զանազան արժողությամբ։

318 Բնագրի հրատարակություններն էլ ունեն «բրաշէն հլնու ծակելն, զատ ի ֆրանկըն էլ մարդ չի գիտեար»։ Այսպես է ընկալել և Ք. Պատկանյանը, որ թարգմանել է այս արտահայտությունը հետևյալ կերպ. „Кроме франков никто не умеет сверлить алмаз после шлифовки". (Драгоценные камни, стр. 4)։ *Այդ ընթերցվածքը մենք կրկնել ենք Առաքել Դավրիժեցու երկի ռուսերեն թարգմանության մեջ։ (Տե՛ս Аракел Даврижеци,* Книга историй, стр. 455)։ *Սակայն, թվում է, որ խոսքը ոչ միայն ծակելու, այլ և բրաշ անելու*

(Էնելու) մասին է. ուստի պետք է լինի «Քրաշ էնելն ու ծակելն դատ ի ֆրանկն. . .»

319 Օթման (Սաման)—դրամական միավոր սամանյան պետությունում։

320 Մալում (արաբ.)—որոշակի, հայտնի։

321 Մատատնայ (պարսկ.)—պինարրի, հարրած։

322 Դաղուլ (արաբ.)—գնալուն, դյուրավառուն։ Ընդունելի (ծան. Ք. Պատկանյանինն է)։

323 Տայիմ (արաբ.)—ընդմիշտ, միշտ։

324 Հասլ, հասիլ լինել (արաբ.)—գոյանալ, ծնանիլ, ծագիլ, բխիլ, ելանել։

325 Դաղիմի (արաբ.)—հին, հնադարյան.

326 Սէյլան—Ցեյլոն կղզին։ Բիրունին նշում է Հիրկանդ ծովի (Բենգալյան ծոցի) Սարանդիբ (Ցեյլոն) կղզուց բացի նաև կղզուն զուգահեռ ծովեզրին գտնվող սարերը (Бируни, стр. 39)։

327 Ըստ Թայֆաշիի, Ցեյլոն կղզու երկարությունը 60 փարասանգ է, լայնությունը՝ նույնչափ։ (Տե՛ս «Драгоценные камни» стр. 14)։ Փարասանգ (արաբ.-պարսկ.)—երկայնության չափ=5004,30 մետրի։

328 Ք. Պատկանյանը գրում է. «Պետք է կարդալ. Սարանդիբ... ինչպես կոչում են Ցեյլոնը Արուլ-Ֆեդան և Սղիլին։ Նրանք պատմում են նաև Ադամ լեռան մասին..., ուր իջավ դրախտից արտաքսված Ադամը։ Ամենայն հավանականությամբ, սա նորատյուն շրջանի հնդինակաների. Pic d'Adam-ն է։ («Драгоценные камни» стр. 14)։ Առաքել Դավրիժեցու մոտ էլ Սալանդիր դաշին այն լեռն է, որտեղ դրախտից իջել էր Ադամը։

329 Չմոռա. Бируни, стр. 68.

330 Ծովագույն կարմիր—այս արտահայտությունը Ք. Պատկանյանը բացատրում է. „т. е. красный морского цвета. Здесь слово морской имеет, по всей вероятности, смысл. . . purpureus", стр. 15)։

331 Բամամ այար (պարսկ.-արաբ.)—լրիվ, բարձրագույն հարգ։

332 «Թաուսի» Ք. Պատկանյանը թարգմանում է. „Павлиным" և բացատրում. „Павлиным мы назвали тот цвет. . ., который в древних русских рукописях называется таусиным", стр. 15)։

333 Բաղպանա (պարսկ.)—Բաղիտուր, Բումբակալ, փորքաշ, գոտի։

334 «Ուշակի խիստ աղեկ է»—Նախադասությունից երևում է, որ ուշտիկ (խուշտիկ ըստ Ք. Պատկանյանի, էջ 85) մեզ անծանոթ ինչ-որ հիվանդություն է։

335 Տե՛ս Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, էջ 590, նաև այստեղ, ծան. 237)։

336 «Թրմիլ» բառը Ք. Պատկանյանը չի թարգմանում (տե՛ս էջ 11 և 67)։ Մենք Առաքել Դավրիժեցու երկի ռուսերեն թարգմանության մեջ նույնպես չենք թարգմանել (տե՛ս Аракел Даврижеци, Книга историй, էջ 457)։ Գ. Գ. Լեմմլեյնը Բիրունու երկի հանքագիտական նշանակության նվիրված իր ուսումնասիրության մեջ գրում է. «Ք. Պ. Պատկանովի հրատարակած XVIII (պետք է լինի XVII—Լ. Խ.) դարի մի ձեռագրում՝ յաղութին նվիրված գլխում, հիշատակվում է «կանաչ-կարմիր գույնի թիրմիլ» քար։ Ի դեպ նշենք, որ Ցեյլոնի բնակիչների՝ սինգալեզների լեզվում Բուրեմալի անվամբ հայտնի են ինչպես տարբեր երանգի Բուրմալինը, այնպես էլ ցիրկոնը» (Бируни, стр. 229)։

337 Տե՛ս Գիրք պատմութեանց, էջ 589 և այստեղ, ծան. 228։

338 «Կահ կահ քար կու էնայ»—երբեմն քար է դուրս գալիս, կահ կահ (պարսկ.)—երբեմն։

339 «Ա. մարդ ղունար կանաչ ջրով»—նախադասությունն անհասկանալի է։ Առաջին և երկրորդ հրատարակություններում—«ղունար», նույնն է Ք. Պատկանյանի հրատարակած բնագրում (տե՛ս էջ 85)։ Ա. Սյուրմելյանի հրատարակած բնագրում այստեղ բաց է թողած երկու և կես տող (տե՛ս «Պատմութիւն Հալէպի հայոց», էջ 442)։

340 Թվում է, որ «Միլի» ինչ-որ տեղանուն պետք է լինի։

341 Ք. Պատկանյանը թարգմանում է. «Հակինթի նոր հանքերը գտնվում են Բենգալյան ծովեզրի ծոցերում և Բանկոկ կղզում» («Драгоценные камни», стр. 11)։

342 «...Մանուր է ըրքնակի որ քարսիկ կակուղ է»—նախադասությունը անհասկանալի է։

343 Տե՛ս Գիրք պատմութեանց, էջ 590 և այստեղ, ծան. 240։

344 Բաղախշանի մոտ՝ Շունգանում լալի հանքեր կան, այդ պատճառով լալը հանքագիտության մեջ հայտնի է Բաղախշան անունով (ալ-լալ ալ Բաղախշի)։

345 Մ. թ. VII դ. Բաղախշանի շրջանի լալի հանքերը մեծ ճանաչում էին գտել։ Մար-

կո Պոլոն էլ է հիշատակում Բադախշանի լալը (տե՛ս „Книга Марко Поло“, М., 1955, стр. 74).

346 «Վառան»—անհայտ բառ է։ Մի գուցե պարսկերեն «var»—լաք, ողորկալաք, փայլալաք բառի՞ց է։

347 Փաք (պարսկ.)—մաքուր, ջինջ, անարատ, անբիծ, կատարյալ, բովանդակ։

348 Բնագրում՝ «Մարախլի»։ Բ և Դ ձեռագրերն ունեն «մարախղի» («մաուախղի») ընթերցվածքը։ Ոսկանի մոտ՝ «մարազի» (էջ 567)։ Հավանական է, որ հեղինակի մոտ եղել է «մարազլի» (բուրք. «մարազլը» բառից), որը նշանակում է «սխտոաժէտ, հիվանդոտ, ցավ»։

349 «Մաուալ բանալ»։ Ք. Պատկանյանը հարցականով բարգմանել է. „поддерживает желудок в порядке“, стр. 20): Մադդա (արաբ.) նշանակում է նյութ, նյութեղեն, հումք, թարախ։ Ըստ երևույթին խոսքը թարախոտ վերքը բուսելու մասին է։

350 Ձմրուխտի մասին տե՛ս «Գիրք պատմութեանց», էջ 588—589 և այտեղ, ծան. 225։

351 Ըռթլ, ռաթլ, ռիթլ (հուն.)։ Ըստ Վ. Հինցի՝ «Ռաթլը՝ Արաբական Արևելքի ամենագործածական չափն է»։ Սակայն տարբեր երկրներում տարբեր ժամանակաշրջաններում ռաթլը տարբեր քաշ է նշանակել (Տե՛ս B. Хинц, Мусульманские меры и веса с переводом в метрическую систему“, М.“, 1970, стр. 34—39): Մեր բնագրում հեղինակն ինքը որոշակի ասում է. «եղնիք յորենն մեկ ըռթլ էր»։ Տավերնյեն ասում է. „Ratis est 7 8 de carat ou 3½ grains“ (Տե՛ս „Драгоценные камни“, стр. 25):

352 Բ Գ Դ և ձեռագրերը տալիս են «ըռամանին» ընթերցվածքը։ Սակայն ռամանի (ռումանի)—նռան գույնն է (տե՛ս Бируни, стр. 297, К. П. Патканов, стр. 25)։ Իսկ զմրուխտը լինում է կանաչի տարբեր երանգների՝ «ըռզիանի, ռհհանի, բանջարի»։ Ըստ երևույթին հեղինակը սխալմամբ գրել է ռամանի փոխ ռեհանի։

353 Այստեղ բնագրում՝ «Թապիաթ» էր։ Թապիաթ (արաբ.)—նշանակում է բնություն, բարք, միտումն։

354 Փանիզահր (կամ փարվնհր—պարսկ.)—դնդաթափ, հակաթույն, զահր (զնհր—պարսկ.) թույն, մահադեղ, ժանգ։ Այսինքն զմրուխտը հակաթույն է բոլոր թույների դեմ։

355 Այստեղ կրկնվում է սխալը (տե՛ս ծան. 352)։

356 Տե՛ս «Գիրք պատմութեանց», էջ 588—589 և այտեղ, ծան. 225։

357 Տե՛ս նույն տեղում, էջ 591 և այտեղ, ծան. 248։

358 Ըստ երևույթին խոսքը Բահրեյնի մասին է (Պարսկական ծովածոցում գտնվող 20 կղզիներից բաղկացած խումբ, որոնցից ամենախոշորներն են՝ Բահրեյնը, Մուհարրաքը, Ումմը, Նահասանը, Սիտրան և Խավարը)։ Համմ. Бируни, стр. 115։

359 Ք. Պատկանյանը այս բառը իր փոքր բառարանում բարգմանում է. „берег, город в Счастливой Аравии“ („Драгоценные камни“, стр. 68): Այս կապակցությամբ Գ. Լեմլեյնը գրում է. «ալիքները գրանք գուբս են նետում ափը». Արաբական բնագրում գործածված է «կազաֆա»—«գուբս նետել» բայը։ Այս բառը անցել է հայերեն հանքագիտական երկը և ընկալվել որպես մարգարիտի արտահանման վայրի տեղանուն կամ նրա տեսակի անվանում—эль кадиф“. („Минералогия“, стр. 540, прим. 138):

360 Արդյո՞ք Բահրեյնից ոչ հեռու Հուրմուզյան նեղուցում գտնվող Քեշմ կղզու մասին չէ խոսքը։ Ք. Պատկանյանն էլ հաստատ չգիտի, թե որ կղզու մասին է խոսում հեղինակը։ (К. Патканов, стр. 57).

361 Դահրեեհ—«կարող է պատահի, որ սա՝ Բենգալյան ծոցի արևելյան եզրին գտնվող Oyster-Rock կղզին է»,—ասում է Ք. Պատկանյանը։ (стр. 57)։ Բիրունին թվարկելով մարգարիտով հարուստ վայրերը, գրում է. «...Դահլակ կղզու մոտ Կուղլումում (Կարմիր ծովում)» Бир уни, стр. 133).

362 Պանկալայ Քապուլ։ Պանկալ (Բանգալ)—Հնդկաստանի պատմական երկրամասերից մեկը, երկրի պատմության մեջ երբեմն նշանավոր դեր խաղացած, 1575 թ. նվաճված Մեծ Մողոլների կողմից։ Քապուլ—Ինդոս գետի խոշոր վտակներից մեկը։

363 Մանշուր (արաբ.) ընդհանուր տարածված՝ ընդունելություն գտած, ընտիր, նշանավոր։

364 Կայշաման ծովը մենք չգտանք։ Բիրունին իր տրակտատի «Жемчужные ловли» գլխում գրում է, որ այդ առումով հատկապես հայտնի է կանաչ ծովը (Հնդկական օվկիանոսը —Լ. Խ.), որի նեղուցներում և ծոցերում կան շատ նշանավոր վայրեր. և թվարկում է Սարանդիբ կղզու նեղուցը, Պարսկական նեղուցը, Բահրեյնը, Դահլակ կղզու շրջակայքը, Կուզլումը (Կարմիր ծովը) և Սաֆալաթ-ազ-Ջինջը (Бируни, стр. 133)։

365 Բանտար (պարսկ.)—առևտրական նավահանգիստ, վաճառաշատ քաղաք։

366 Ջանավար (պարսկ.)—շնչավոր, անասուն, գազան, կենդանի։

367 Համմա՝ Բիրունու բնագրի հետ (էջ 127)։

368 Համմա. Бируни, стр. 135

369 «Խացակ»—արտասովոր, վրան բծեր ունեցող (մարգարտի մասին)։ (Տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայկեան բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1944, էջ 251)։

370 Վամաշ (արաբ.)—մետաքսյա կտոր, կերպաս։ Այսաեղ (փոխ.) նուրբ, բարակ։

371 Քաֆուրի գույնը ակնագործների մոտ նշանակում էր անթափանցիկ դեղին գույնի քարերի որոշ երանգ։ Համմա.՝ „Кафури-камфорный (цвета ослиных зубов)“ (*Бируни,* стр.298)

372 Շաբրա—Շուկար—Հուկար։

373 Ալաջայ (թուրք.)—խայտաբղետ, գույնզգույն, շերտավոր։

374 Տե՛ս «Գիրք պատմութեանց», էջ 594—595 և այստեղ, ծան. 289։

375 Մադան, մաատն (արաբ.)—հանքահոր, հանքատեղ։

376 Համմա.՝ Бируни, стр. 158:

377 Քան (պարսկ.)—հանք։

378 Բիրունին, ոսկու հանքերի մասին պատմելիս, գրում է. «Նու ասում են, թե Շահվահանում, այն մարդի դաշտերից մեկում, գտել են ոսկու մի կտոր՝ 60 ռաթլ քաշով» («Минералогия», стр. 222—223) (ընդգծումը մերն է—Լ. Խ.)։ Ք. Պատկանյանի հրատարակած բնագրում այս անգանունը բերված է «Շահնաւաճ» ձևով («Драгоценные камни», стр. 88)։ Նույն ձևը պահպանվել է նաև Ոսկան Երևանցու հրատարակության մեջ (էջ 569)։ Թերևս մեր բնագրի «Շահպուռք» և «Շահատաբ» ձևերը նույն «Շահ-Վահանի» աղավաղված ձևե՞րն են։

379 Արմուխ—հիշոր՝ ալմաղ (թուրք.)—առնել, գնել։

*380 Ք. Պատկանյանը բնագրի «իսպիրէ» բառը թարգմանել է «в Сибре» (*ի Սիբրէ*) («Драгоценные камни», стр. 48)։ Մենք ռուսերեն հրատարակության մեջ նույնպես թողել ենք «в Сибре», բեև չենք կարողացել հշտել և որոշել այս Սիբրի անդը։ Փիրուզի հանքավայրեր կան Սինայում (Սահարի հովիտը), Իրանում (Նիշապուր), Միջին Ասիայում (Խոջենթ և Սամարղանդից 50 կմ հեռու), Տիրեթում։ Բնագրում «նշաւուր»-ի փոխ եղել է «նշանաւոր»։*

381 Տե՛ս այստեղ, ծան. 278։

382 Ջաւալն (թուրք.)—ողորմելի, թշվառ, եղուկ։

383 Խշմ (պարսկ.)—կատաղություն, գայրույթ, սրտմտություն, բարկություն, ցասում։

384 Վաղվնէքն—ապագան (՞)։

385 Պարագաթ (արաբ.)—արդյունավետություն, օգտակարություն, առատություն, լիություն։

386 Մալ (արաբ.)—ապրանք, հարստություն, դույք։

387 Փանդահր (հինդ ձևը բազիդահր)։ Պարսկերեն այս բառը նշանակում է. «հակաթույն, դեղաթափ»։ Արաբական գրականության մեջ տարբերվում են երկու տեսակ բեզոար՝ հանքային (մադանի) և կենդանական (հայվանի) ծագում ունեցող (տե՛ս «Минералогия», стр. *47,* «Драгоценные камни», стр. *63)։ Բիրունու մոտ նկարագրված է հանքային բեզոարը, մինչդեռ հայ հեղինակի նյութը վերաբերում է կենդանականին։*

388 «Մաթօլի Հայաթ»—Ք. Պատկանյանը թարգմանում է —«пища жизни» стр. *60։ Այս կապակցությամբ Գ. Գ. Լեմմլեյնը գրում է. «...Այս բառերը սխալ են թարգմանված... Սա աղավաղված արաբական արտահայտություն է, որը նշանակում է «օձի վրա հենված»։* (*Бируни,* стр. 468).

389 Էլմով—կամաց, լրիկ, ասա ու փուս։

390 Զարար (արաբ.) վնաս։

*391 Բիրունին հենվելով իրեն նախորդող հեղինակների գործերի վրա հանքային բեզոարի հանքավայրերն է անվանում„... Крайние пределы Индии и начало страны Китай“ (*Бируни,* стр. 188): Տավերնյեն պատմում է վայրի այծերի մասին, որոնք սնվում էին Փալկոնդայում աճող թփերի հյութերով։ (Տե՛ս* „Драгоценные камни“, стр. 63):

392 Մումիայի մասին տե՛ս Бируни, стр. *191—194։ Հետաքրքիր տեղեկություններ է պարունակում մումիայի և նրա բուժիչ հատկությունների մասին Ն. Ս. Սիրովայի* „Раскрывая тайну мумиё“... *գրքույկը* (Ташкент, 1970):

393 Բիրունին, պատմելով մումիայի մասին, գրերն նույն բուժիչ հատկություններն է ընդգծում, սակայն երբեմն մումիան շփոթում է ակնամոմի (прополис) *հետ (Бируни,* стр. *193)։*

394 Համմա. Бируни, стр. *192։*

395 Ճրոր—ատամոքսի խախացող կամ փորոտիք, աղիք։

396 Համմ. Бируни, стр. 191.

397 Ամալիւ Ամալ (ածել—բաժիլ, լցնել, հոսեցնել) բառից։

398 Նախադասությունը միանգամայն անհասկանալի է։ Նույն կարծիքին են Մ. Ի. Բրոսսեն (տե՛ս «Livre d'Histoires», p. 551) և Ք. Պատկանյանը (տե՛ս «Драгоценные камни», стр. 64, прим. 4)։ Առաքել Դավրիժեցու ռուսերեն թարգմանության մեջ նույնպես այս տողերը չեն թարգմանված (տե՛ս «Книга историй», стр. 460)։ Պարզապես բառերն աղավաղված են և այդ պատճառով նախադասությունը անընթռնելի է դարձել։ Կասկած չկա, որ խոսքը այստեղ էլի Փանդահրի հատկությունները փորձելու մասին է։ Դուցե Բուրքհրեն վէտ (դիտուն, փորձ) և ութիպ (զարմանալի, սքանչելի) բառերի օգնությամբ կազմած ինչ-որ ածականն է, որպիշ կրի համար, որով փորձում են Փանդահրը։

399 Աղավաղված Հայթար ըթ-Թայս բառն է, որը նշանակում է «այծի քար»։

400 Բիրունին գրում է. «Այսպես կոչվող քարը պարսկական Բիրյակն է» (Бируни, стр. 190)։

401 Համմ. նույն տեղում։

402 Համմ. նույն տեղում, էջ 191։

403 Համմ. նույն տեղում։

404 Համմ. նույն տեղում։

405 Թվում է Ք. Պատկանյանի թարգմանությունը՝ «Эта порция стоит пол-данга» (стр. 62) *սխալ է։ Այստեղ, ըստ երևույթին, խոսքը ընդունման դոզայի (դեղաքանակի) մասին է։ Նախադասության շարունակությունը հաստատում է այդ միտքը։*

406 Համպար (արաբ.)—արաբական աշխարհագրական գրականության մեջ հաճախակի օգտագործվում է որպես անհրաժեշտ նյութ՝ օծանելիք և դեղորայք պատրաստելու համար։ Երկար ժամանակ համպարը համարվում էր բուսական նյութ։ Հետագայում պարզվեց, որ համպարը գոյանում է կաշալոտի ստամոքսում։ Հավանորեն արաբական հանրար բառը ծագել է սոմալիական «նիբիրի» (կաշալոտ) բառից (տե՛ս Бируни, стр. 464)։

407 Տե՛ս այստեղ, ծան. 299։

408 Տէվէ, թէվէ (թուրք.)—գագաթն, ծայր, սար, բլուր։

409 «յայն ծառերուն քանց տըփս քանց մեղր իջնու»—այս նախադասությունը Ք. Պատկանյանը թարգմանել է այսպես. „На эти деревья сходит нечто (քանց տըփս) вроде меда („Драгоценные камни", стр. 58): «Դիրք պատմութիւնից»-ի ռուսերեն հրատարակության մեջ մենք թարգմանել ենք На эти деревья, так же, как и на землю, выпадает нечто вроде меда" (*տե՛ս* „Книга историй", стр. 462), *մինչդեռ պետք է լինի* „На эти деревья [вплоть] до верхушки выпадает нечто вроде меда".

410 Պազարկեան (պարսկ.)—վաճառական։

411 Մսղալ, մթղալ (արաբ., պարսկ)—4,08 գր ծանրությունով կշռի չափ։

412 Տամաղն կամ տիմաղ (թուրք.)—քիմք։

413 Սէվտա (արաբ.)—սիրություն, սեր մարգ, սեամաղձություն։

414 Քէր (պարսկ.)—խուլ։

415 Համմ. Бируни, стр. 182.

416 Քաշը Բիրունու մոտ նշանակում է սպիտակ նաշմի (ննֆրիտի) հանքավայր («Минералогия», стр. 184)։ *Քաշը կամ Քաշին՝ Արևելյան Թուրքեստանում գետափի մի զաշտավայր էր, որը ըստ Հուշիդ ադ-Դինի մտնում էր Տանգուտ երկրի մեջ* («Минералогия», стр. 466)։

417 Թերևս «Շամիշայդ»-ը Արշամաշատն է, Ջորրորդ Հայքի Երրիմնի մայրաքաղաքը։

418 «Ճինար ցաւ»—միջնադարյան բժշկարանները ոչինչ չունեն այս հիվանդության մասին։ Ք. Պատկանյանն իր ռուսերեն թարգմանության մեջ «ճինար» բառը չի թարգմանել („Драгоценные камни", стр. 44)։

419 Թուս քաղաքը հիշատակվում է և Բիրունու մոտ («Минералогия», стр. 188)։

420 Սահրիբ—բառացիորեն արևմուտք. որպես աշխարհագրական տերմին նշանակում է հյուսիս-արևմտյան Աֆրիկա—Թունիս, Ալժիր և Մարոկկո։ Ըստ Բիրունու վարդագույն մարջանը բերվել է Մահրիբից («Минералогия», стр. 180)։

421 Բիրունու ասածը բառացիորեն համընկնում է սրան («Минералогия», стр. 177)։

422 Քիսայ քաղաքը Ֆռանգստանում։ Մարկո Պոլոն բազմիցս հիշատակում է Քիսա (Киса, Киси, Киш, Кейш, Кейс) *քաղաքը, որը դռնվում էր Պարսկական ծոցի շե-*

մին (տե՛ս «Книга Марко Поло», стр. 59, 184, 194, 211 և այլն)։ Այս կղզին ու քաղաքը Հորմուզի հետ միասին հայտնի էին մարգարիտի որսով և կարևոր դեր էին կատարում Եվրոպայի ու Հնդկաստանի առևտրական կապերի մեջ։ Հեղինակը «Ծաննդստանի» տակ նկատի ունի այնտեղ ապրող եվրոպացիներին։

423 Ուսը—բառ Սա. Մալխասյանցի «մի տեսակ քանկագին սև քար, որից համրիչներ են շինում, գիշեր (?)» (Հայկեն բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1944, էջ 609)։

424 Բութիայ—այս անվան տակ հասկանում էին մետաղյա ցինկը, ինչպես նաև ցինկի սպիտակ օքսիդը։ Միջնադարում այն շատ տարածված էր, հատկապես աչքի հիվանդությունները բուժելու դեղ պատրաստելու համար։ Մարկո Պոլոն նկարագրում է Բութիայի պատրաստման եղանակը «Книга Марко Поло», стр. 69)։

425 Տե՛ս «Գիրք պատմութեանց», էջ 592 և այստեղ, ծան. 225։

426 Չմմտ. Бируни, Минералогия, стр. 190:

427 Բիրունին նշում է, որ սա՝ Բահրույն է, որ գտնվում է Միհրանի (Ինդի—Լ. Խ.) գետաբերանի և Սարանդիբ (Ցեյլոն) կղզու ծոցի միջև, բավարիչների (ծովահենների) երկրում։ („Минералогия", стр. 160):

428 Դղաչկան—«Դխիկ դնել»—«գրգռութիւն առաջ բերել, բանսարկութիւն անել, սադրել, չնչին բանից բան շինել» (Սա. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան հ. 1, էջ 531)։

429 Տե՛ս «Գիրք պատմութեանց», էջ 593—594 և այստեղ, ծան. 273։

430 Չմմտ. «Թիրմեզի բնակիչները այն [յաշմ-նեֆրիտը Լ. Խ.] կոչում են յաշբ, իսկ Բուխարայի բնակիչները՝ աշ-շաբ և աշաբ, ու ասում են, որ սա՝ չինական սպիտակ քար է»։ („Минералогия", стр. 185—186):

431 Ղոդիանի—սամիրի (Ք. Պատկանյանը թարգմանում է «укропный» («Драгоценные камни», стр. 35, 66)։

432 Լհտիպար—ճիշաբ՝ էյթիբար—վստահություն (Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, աշխատասիրությամբ Մ. Հասրաթյանի, Երևան, 1963, Բառարան, էջ 287)։

433 Հայտնի է, որ անցյալում շատ մատենագիրներ կորուստից փրկելու նպատակով մանր ժամանակագրությունների առանձին նմուշներ կցել են իրենց աշխատություններին։ (Մանրամասն տե՛ս Վ. Ա. Հակոբյան, Մժ, 1, Առաջաբան, էջ 12—13)։ Հովհաննիսիկ Սարեցու ժամանակագրությունը այդ օրինակով կցվել է Առաքել Դավրիժեցու երկին և որպես ինքնուրույն՝ Ոն պլուս առկա է պատմագրի աշխատությունը պարունակող մեզ հայտնի բոլոր ձեռագրերում ու տպագիր օրինակներում։ Բացի դրանից, այս ժամանակագրությունը հրատարակվել է Մ. Մսերյանցի կողմից «Ճռատաղ»-ում (Մոսկվա, 1859) և Սամուել Անեցու ժամանակագրության կից (Վաղարշապատ, 1893)։ Այն առանց խորագրի կարելի է գտնել Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի № 2776 (էջ 266ա—271ա) և 8245 (էջ 93ա—95բ) ձեռագրերում։ (Ժամանակագրությունը՝ առաջաբանով և ծանոթագրություններով տե՛ս Մժ, հ. 2, Ե., 1956, էջ 235—255)։

434 Սույն ժամանակագրության հեղինակի անունը հասել է մեզ տարբեր տառադարձությամբ (Մժ, 2, էջ 235, 238)։ Միօրինակություն չկա նաև Առաքել Դավրիժեցու երկի մեզ հասած ձեռագրերում։ Ուստի, կիրառելով մեր կողմից ընդունված՝ անձնանունների և տեղանունների վերաբերյալ սկզբունքը, մենք ամենուրեք ուղղում ենք հեղինակի անվան գրությունը, հարկ չհամարելով առդատակում ներկայացնել տարբերվածները։ (Տե՛ս մեր առաջաբանը՝ «Ներկա հրատարակության հանգամանքները», էջ 2)։

435 Վ. Ա. Հակոբյանի հրատարակած բնագրում Հովհաննիսիկ Սարեցու ժամանակագրությանը նախորդում է հեղինակի բավականին ընդարձակ հիշատակարանը (Մժ, 2, էջ 240), որը բացակայում է «Գիրք պատմութեանց»-ի բոլոր ձեռագրերում։

436 Ձեռագրերում և տպագիր օրինակներում ամենուրեք «Դահմանն» ձևով։ Կան նաև «Դահմազ» և «Թահմազ» ձևերը (տե՛ս «Գիրք պատմութեանց», էջ 607)։

437 Ըստ Կ. Է. Բոսվորտի շահ Թահմասպ Ա-ն գահակալել է 1524—1576 թթ.։

438 Տե՛ս Бидлиси, Шараф-намэ, стр. 133։ Չմմտ.՝ «...շահ Իսմայիլն Ղահղայ բերդումն բանդի էր» (Մժ, 1, էջ 195)։

439 Չմմտ. Մժ, 1, էջ 393։ Ամենայն մանրամասնությամբ այս դեպքերը նկարագրում է Բիթլիսին։ (Տե՛ս էջ 231—232)։

440 Հովհաննիսիկ Սարեցու տված բնութագիրը համապատասխանում է վրացական աղ-

բյուրների ավյալներին («...շահ Խուդաբանդան կույր էր, չնչին և ակար»,—գրում է Վախուշտին (տե՛ս նշված աշխ., էջ 41)։ Շարաֆ-խան Բիթլիսին արտահայտվում է ավելի մեղմ և ավելացնում, որ «Նրանցի ղըզըլբաշ էմիրները Իրանական պետության բոլոր գործերը առել էին իրենց ձեռքը, կույր շահին թողնելով միրակալի սուտ կոչումը» (էջ 234)։

441 Կ. Կուցիայի վկայությամբ Առաքել Դավրիժեցու այս տեղեկությունները հաստատվում են վրաց աղբյուրներով (Տե՛ս նշված աշխ., էջ 61—62, 2-րդ պլ., ծան. 14)։

442 Սիմոն խանի մասին Առաքել Դավրիժեցին հանդամանորեն պատմում է Դ և Ե գլուխներում և սույն գլխում, էջ 616—619։ Նրա մահվան մասին հաղորդող աղբյուրներում միօրինակություն չկա։ Ոմանք հայտնում են, որ Սիմոն խանը մահապատժի է ենթարկվել 1601—1602 թթ.։ Դրիգոր Դարանաղցին գրում է. «Եւ նզնւ վաղճան նորա թվ. ՌՕՀ (1608)»։ (Տե՛ս Ժամանակագրութիւն, էջ 31)։ Այլ հեղինակներ պնդում են, որ 1609 թ. Սիմոն խանը դեռ կենդանի էր։ Այդ հարցին է նվիրված Ս. Սվանիձեի հոդվածը։ (Տե՛ս մանրամասն Կ. Կուցիա, նշված աշխ., էջ 69, գլ. 4, ծան. 21)։

443 Խոսքը Օնման Յուղդիմիրի մասին է։

444 Այս եկեղեցու մասին տե՛ս Ե. Շահազիզ, Հին Երևանը, Երևան, 1930, էջ 200—204։

445 Առաքել Դավրիժեցին իր երկի առաջին գլխում և կաթողիկոսների ցուցակներում հիշատակում է այս Առաքել կաթողիկոսին (էջ 6, 138)։ Սակայն Մ. Օրմանյանի վկայությամբ, Առաքելը եղել է Դրիգոր Վաչարշապատակցու աթոռակիցը։ (Տե՛ս «Ազգապատում», էջ 2286—2288)։

446 Բոլոր բնագրերում պահպանվել է «Դադիու» ձևը։ Բայց Ոսկան Երևանցին արդեն (էջ 581) նկատելով սխալը, ուղղել է այն «Դադիու» ձևը տակա է և Վ. Հակոբյանի հրատարակած բնագրում (ՄԺ, 2, էջ 244)։ Նույն բնագրի ծանոթագրություններում հետազոտողը ղգուշացնում է ընթերցողին չշփոթել այս վանքը Դադի վանքի հետ։ Սա Բադեի վանքն է, որը գտնվում է պատմական Աղահեճ գավառում (Փոքր Սյունիք) (տե՛ս ՄԺ, 2, 253, ծան. 24)։

447 Այժմյան Բասարդեչար գյուղը։ Այստեղ գտնվող Հովհաննես Շարեցու և Սարգիս վարդապետի դամբարանները տեսել է Մ. Սմբատյանցը։ (Տե՛ս ՄԺ, 2, էջ 253, ծան. 29)։

448 Այս դեպքերը տեղի են ունեցել 1585 թ.։ (Տե՛ս ՄԺ, 2, էջ 253—254, ծան. 31)։

449 Ամիր Համզա Միրզայի մասին տե՛ս այստեղ, գլ. ԾԶ, ծան. ։

450 Հեղինակը նկատի ունի Կոստանդնուպոլսում 1590 թ. կնքված խաղաղության պայմանագիրը։

451 Խոսքը 1592 թ. սկսված թուրք-ավստրիական պատերազմի մասին է։

452 Վրաց թագավոր Սիմոն Ա-ին օսմանցիները դեմ են վերցրել 1600 թ. վրացիների համար անհաջողությամբ ավարտված Փարցխիսիի ճակատամարտում։

453 Ջալալի Ղարա Յազիջու մասին Առաքելը մանրամասն խոսում է իր երկի է գլխում։

454 Հիշատակարանը տակա է Առաքել Դավրիժեցու երկը պարունակող բոլոր ձեռագրերում և տպագրություններում։ Սակայն յուն դեռևս չի եղել նախորդ գլխի վերջում և արհեստականորեն անջատված ԾԶ գլուխը կազմող ժամանակագրություն։ Խախտելով ընդունված ավանդույթը, մենք տեղափոխել ենք հիշատակարանը և դեռևս ԾԶ գլխի սկզբում։

455 Անխուսափելի է այս գլուխը պատկանում է հայ պատմագրության մեջ յայն տարածում գտած մանր ժամանակագրությունների ժանրին։ Ինչպես երևում է հեղինակի հիշատակարանից՝ ժամանակագրությունը Առաքել Դավրիժեցու ձեռքով կազմված կոմպիլիացիա է, որտեղ տարբեր տեղերից («մասն ինչ ասա, մասն ինչ անդ, և այնպէս ըիր ե ցաճ») հավաքած ժամանակագրական տեղեկությունները ի մի են բերված, շարադրված ըստ ժամանակագրական սկզբունքի («ոչ էր կարգաւ ըստ կարգի թուականին, և մեք կարգաւորեցաք») և լրացված Առաքել Դավրիժեցու օրոք տեղի ունեցած նշանավոր դեպքերի մասին տեղեկություններով («զոր ինչ ի մեր ժամանակս գործեցաւ նշանաւոր բանք՝ զայնս ևս ընդ սոցին զաւանորնալ զրեցաք...»)։*

Նյութի մանրակրկիտ քննությունը, նրա բաղդատումը այլ ժամանակագրական երկերի հետ ցույց են տալիս, որ Առաքել Դավրիժեցին տեղեկություններ է քաղել ժամանակագրական այն երկերից, որոնց մի մասը հետագայում մտել է Վ. Ա. Հակոբյանի կազմած երկհատորյա ժողովածուի մեջ կամ հիմք է ծառայել նրանց համար։ Այդ հատվածները հետևյալն են.

---

* *Այս կարելի է նկատել անգամ անձնանունների և տեղանունների տառադարձությունից։*

Հ. I 1) IV Սարգիս Պիծակ Սանցուն վերագրված ժամանակագրությունը (XV դ.)

2) VI Կիրակոս Ռշտունցու ժամանակագրությունը (XV դ.)

3) IX Անանուն ժամանակագրությունը (XVI ? դ.)

4) XI եւ Հոռոմաց թագաւորաց կարգն այս է, զոր օսմանցիք վերակոչեն նոցայ անուն...

Հ. II 1) XI Դրիդոր Կամախեցու խմբագրած ժամանակագրությունը (XVII դ.)

2) XV Վարդան Բաղիշեցու ժամանակագրությունը (XVII դ.)

3) XXV Ժամանակագրական մանր հատվածները (մասնավորապես Բ հատվածի շարունակությունը (էջ 512), Դ հատվածի շարունակությունը (էջ 513) և է հատվածը (էջ 515):

ՕՋ գլխի նյութերի մեծ մասը բառացիորեն կամ աննշան տարբերությամբ համապատասխանում է նշված աղբյուրների տվյալներին: Սակայն այդ գլխի մի քանի հատվածների աղբյուրները մեզ համար երկար ժամանակ մնում էին անհայտ: Եվ միայն վերջերս հայտնի դարձած մի անտիպ ժամանակագրության (Մատենադարանի № 10200 ձեռագիր, էջ 766—776) բնագրի (որը որոշ մասով բառացիորեն համապատասխանում է Առաքել Դավրիժեցու ժամանակագրությանը) ուսումնասիրությունը մեզ հանգեցրեց այն եզրակացության, որ նշված ժամանակագրությունը (խորագիրն է «Անարժան Ամիրասէ Եզընկացոյ արարեալ է ժողուածոյ») ժամանակին ծառայել է աղբյուր «Դիրք պատմութեանցի» համար: Ամիրաս Երզընկացու ժամանակագրությունն իր հերթին պարունակում է մի այլ ժամանակագրության տեղեկություններ՝ նվիրված սոսկ Երզնկայում տեղի ունեցած երկրաշարժերին (ձեռ. № 10200, էջ 761) և կազմված, ըստ երևույթին, նույն Ամիրաս Երզնկացու կողմից:*

Հետաքրքիր է, որ ՕՋ գլ. նյութերի մեջ տեղ են գտել նաև հիշատակարաններ, որոնցից մեկը պատկանում է Կիրակոս Ռշտունցու գրչին և հրատարակված է Մանր ժամանակագրությունների I հ. 113—114 էջերում, իսկ մյուսը, որի հեղինակն է, ինչպես մեզ հաջողվել է պարզել, Առաքել գրիչը (Տարոնի դավառի Ղազարի վանքից, 14-րդ դ.), առկա է Ամիրաս Երզնկացու ժամանակագրության լուսանքցներում, որտեղից և ընդօրինակել է Առաքել Դավրիժեցին:

Ինչպես հայտնի է, Առաքել Դավրիժեցու երկի ՕՋ գլուխը ունի բազմաթիվ բացեր: Դրանք ձեռագրերից (որոնցում բացերն ամենուրեք առկա են) տեղափոխվել են տպագիր օրինակները (I—1669, II—1884, III—1898): Ֆրանսերեն և ռուսերեն թարգմանությունները նույնպես զերծ չեն այդ թերություններից:

Ստորև ծանոթագրություններում մենք աշխատել ենք տալ Առաքել Դավրիժեցու կազմած ժամանակագրական բարդ խճանկարի բաղկացուցիչ մասերի աղբյուրները, հնարավորության սահմաններում ուղղելով մեր նկատած թերությունները և լրացնելով նշված բացերը:

456 Տե՛ս ՄԺ, 2, էջ 263:

457 Հմմտ. ՄԺ, 1, էջ 148:

458 Հմմտ. ՄԺ, 2, էջ 263: «Թվին 80 (631) տիրեցին Ապուպաքր, Օմարն, Օսմանն ամս ԼԲ (32)»: Ըստ կ. է. Բոսվորտի, այս երեք խալիֆները տիրել են 632—656 թվականներին К. Э. Босворт, Мусульманские Династии, стр. 27):

459 Տե՛ս ՄԺ, 1, էջ 24, 148:

460 Տե՛ս ՄԺ, 1, էջ 24, 148, հմմտ. Սամուել Անեցի, էջ 53:

461 Տե՛ս ՄԺ, 1, էջ 148, 24. Նշված երեք աղբյուրները տալիս են տարբեր տարեթվեր:

462 Տե՛ս ՄԺ, 1, էջ 148. Մի այլ աղբյուր (ՄԺ, 1, էջ 24) ավելի մանրամասն տեղեկություններ է տալիս. «ՃՀԱ (722) թվականին սուրբ իմաստասէրն Յոհան Աւձնեցին պայծառ կարգաւ զարդարեաց զեկեղեցի. երբեմն առ ամիրապետն դարձաւ պատուով»:

463 Տե՛ս ՄԺ, 1, էջ 148. Հմմտ. ՄԺ, 1, էջ 24:

464 Տե՛ս ՄԺ, 1, էջ 148. Հմմտ. նույն տեղում, էջ 24:

465 Տե՛ս ՄԺ, 1, էջ 148. Հմմտ. նույն տեղում, էջ 24: Սամուել Անեցի. էջ 95:

466 Անախրոնիզմ է: Սմբատ Տիեզերակալը գահակալել է 977—989 թթ.: Իսկ կաթուղիկէի հիմնարկումը տեղի է ունեցել ՆԼԸ (989) թվին (Մ. Ջամչյան, Պատմութիւն Հայոց, Բ, Վենետիկ, 1785, էջ 850—851):

467 Հմմտ. «ՅՂԸ (949) թվին Սմպատ Տիեզերակ(ա)լն հիմնարկեաց զկաթուղիկէն Հանի» (ՄԺ, 1, էջ 148):

---

* *Այդ ձեռագրի, ինչպես նաև մեզ համար շատ կարևոր մի քանի հիշատակարանների մասին մեզ տեղեկացրել է Մատենադարանի ավագ գիտ. աշխատակից Ա. Մաթևոսյանը, որին մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում:*

468 Հմմտ. «...շինեցաւ Յաղբատ քան զԱնահին ԺԱ (11) ամաւ առաջ» (Մժ, 1, էջ 148)։

469 Հմմտ. «ՆՆՐ (993) կաթարնաց Կատրամիտէ զսոյն կաթուղիկէ» (Մժ, 1, էջ 148։ Տե՛ս նաև «Սահիաննոսի Ասողկայ Պատմութիւն տիեզերական», Փարիզ, 1859, էջ 247—248)։ Անանուն ժամանակագրության մեջ այս տեղեկությունը, խախտելով ժամանակագրական կարգը, ընկել է ՅՂՐ (949) և ՆԺԴ (965) տարեթվերի արանքը. թվում է, որ պատճառն այն է, որ հիշյալ տեղեկությունը անմիջականորեն առնչվում է նախորդ տեղեկության հետ։ Այլ աղբյուրներում (Մժ, 1, էջ 25) նույն տեղեկությունը բերված է ՆՆԷ թվի ներքո։ Բերված օրինակներից երևում է, որ Առաքել Դավրիժեցին (կամ մեկ ուրիշը, որի գործից հետագայում օգտվել է Առաքելը), առատորեն օգտագործել է Դրիգոր Կամախեցու խմբագրած և XVI դ. Անանուն ժամանակագրությունները, մասամբ անփոփոխ վերարտագրելով, մասամբ դուրս նետելով կամ ներս մուծելով այլ տեղեկություններ, երբեմն էլ վերադասավորելով շարադրանքը։ Օրինակ, դրանցից մեկի՝ Անանուն ժամանակագրության հետևյալ հատվածին՝

«ՀՋ (627) [վ]ականի[ն] տէր Կամիտաս շինեաց զսրբոյն Հռիփսիմէի վանքն։

ՋՐ (639) թվականին եկն տաճկաց ի Հայս։

ՃՐ (653) թվականին շինեաց Ներսէս հայրապետն զսուրբն Սարգիս ի Դվին և զվիրապն սուրբ [Գրիգոր]։

ՃԺՐ (այս տեղեկությունը Առաքել Դավրիժեցու մոտ չկա—Լ. Խ.)։

ՃԻԴ (674) թվին հրեեցաւ խաչն Վարագայ։

ՃՀԱ (722) թվին Յոհան Օձնեցին պայծառացաւ ի Հայս։

ՄԻԴ (774) թվին շրջի տէր Յնսայի Մուրացիկ։

ՄԼՆ (736) տէր Սողոմոն շինէ զՄաքենիս։

ՄԽԷ (798) թվին Սահակ և Յովսէփ կաթարեցան ի Կարնոյ քաղաքն։

ՅԽԱ (892) թվին տէր Մաշտոց Ժ (10) ճգնաւորաւ պայծառանայր։

ՅՂՐ (949) թվին Սմպատ Տիեզերակա[լ]ն հիմնարկեաց զկաթուղիկէն Հանի։

ՆՆՐ (993) թվին կաթարնաց Կատրամիտէ զսոյն կաթուղիկէ։

ՆԺԴ (965) թվին շինեցաւ Յաղբատ քան զԱնահին ԺԱ (11) ամաւ յառաջ։

ՆԻԸ (979) թվին թագաւորն Սմպատ պարսպէ զՀանի։

ՆՀԹ (1040) թվին Սմպատ Մաքրիտոսն զԲգնայրն Դունայ շինեաց»։ Առաքել Դավրիժեցու երկի ԾՋ գլխում համապատասխանում է ստորև ներկայացվող հատվածը։

«Թուին ՀՋ Տէր Կամիտաս շինեաց զՀռիփսիմէի վանք՝ և ասաց զԱնձինքն։ Թուին Զ (այս տեղեկությունը չկա Անանունի մոտ—Լ. Խ.) Թուին ՋՐ. եկն տաճկաց ի Հայս։ Թուին ՋՐ Տէր Ներսէս հայրապետն զսուրբն Սարգիս շինեաց ի Դուին և զվիրապն սուրբ։ Թվին ՃԺՐ երևեցաւ սուրբ խաչն Վարագայ։ Թուին ՃՀԱ Յոհան Օձնեցին պայծառացաւ ի Հայս։ Թուին ՄԻԴ շրջի Տէր Նսայի Մուրացիկն։ Թուին ՄԼՆ Տէր Սողոմոն շինէ զՄաքենիս։ Թուին ՄԽԷ Սահակ և Յովսէփ կաթարեցան ի Կարնոյ քաղաքն՝ որ է յԱրզրում։ Թուին ՅԽԱ Տէր Մաշտոցն տաս ճգնաւորաւ պայծառանայր։ Թուին ՅՂԹ Սմբատ Տիեզերականն հիմնարկեաց զկաթուղիկէն ի յԱնի։ Թուին ՆԺԴ շինեցաւ Հախպատ և Սանահին։ Թուին ՆԻԸ թագաւորն Սմբատ պարսպէ զԱնի։ Թուին ՆՆՐ կաթարնաց Կատրամիտէ զկաթուղիկէն յԱնւոյ»։

Այս երկու հատվածի բաղդատումը ցույց է տալիս նրանց միջև եղած առնչությունը՝ Առաքել Դավրիժեցին մշակել է անանուն երկը, ուղղել որոշ տարեթվեր, վերադասավորել, ներմուծել այլ ժամանակագրություններից փոխառված տեղեկություններ, դուրս նետել անանուն երկից որոշ փաստեր։ Անանուն ժամանակագրության մեր բերած հատվածի վերջին երկու նախադասությունները Առաքելի երկում իրարից անջատված են մի լրիվ էջ պարունակող տեղեկություններով։ Եվ այսպես ամբողջ պլոխը կազմված է տարբեր հատվածներից։ Հարկ չհամարելով ցույց տալ բոլոր տեղեկությունների աղբյուրները (կան նաև տեղեկություններ, որոնց աղբյուրը մինչ այժմ հայտնաբերված չէ), հետագայում մանրամասն քննության կառնենք աղբյուրները միայն այն դեպքերում, երբ նշված աղբյուրների օգնությամբ կարողացել ենք ճշտել, ուղղել կամ լրացնել Առաքել Դավրիժեցու բնագիրը։ Ամիրաս Երզնկացու ժամանակագրությունը, աղբյուրների շարքում առանձնահատուկ տեղ գրավելով (այդ երկի որոշ մասը Առաքել Դավրիժեցու ժամանակագրության նախապատվաբերներից մեկը կարող էր լինել), ղերծ չի մնացել ճշգրտումներից, ներմուծումներից, ուղղումներից և այլ խմբագրական աշխատանքից, որոնք պարզ երևում են երկու բնագրի բաղդատման ժամանակ։

470 Տե՛ս Մատթէոս Ուռհայեցի, *ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 52—55։ Այդ տեսիլին ուշադրավ ուսումնասիրություն է նվիրել Ն. Յա. Մառը։ (Տե՛ս Н. Я. Марр,* Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерне, СПб., 1895).

471 Հմմտ. ՄԺ, 1, էջ 25 և 148։ Ասոլիկ, III, էջ 41։ Սամուել Անեցի, էջ 103։

472 Ամբողջ հատվածը գրված է բառացիորեն կրկնում է Ամիրաս Երզնկացու տեղեկությունները, սակայն, վերջինիս մոտ «պատուհանին» փոխ «պատուհանին»։ Նշված դեպքերի մասին տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, էջ 90—91։

473. Առաքել Դավրիժեցու մոտ (որը բառացիորեն կրկնում է Ամիրաս Երզնկացուն՝ անելանելի տարընթերցվածքներով) նախադասությունը ազճատված է։ Ընդհանուր շարադրանքը, որն այս հատվածում (սկսած հայոց Ժ թվականից մինչև ՌՀՔ թիվը) չնչին բացառություններով կրկնում է Դրիգոր Կամախեցու խմբագրած ժամանակագրությունը, մասամբ բառ առ բառ, մասամբ էլ՝ վերապատավորված, Առաքել Դավրիժեցու մոտ լրացվում է այլ աղբյուրներից ընդօրինակված տվյալներով։

Այսպես՝

Դրիգոր Կամախեցի	Առաքել Դավրիժեցի
Թվին ՇԺԴ բարձան թագաւորութիւնք յԱնւոյ, որ էր վերջին թագաւորն Յովանէս։	*Թուին ՇԺԴ բարձան թագաւորք յԱնւոյ որ էր վերջին թագաւորն Յովհաննէս։*
Թվին Շնե ֆռանգ էառ զերուսաղէմ։	*Թուին Շնե. ֆռանկն էառ զերուսաղէմ։ Թուին ՇնԲ Յոյնքն ծառայութիւն են արարեալ։*
Թվին ՇԾ ոչ վառեցաւ լոյսն յերուսաղէմ յաւուր շաբաթու, այլ ի կիրակի յինն ժամն։ Ծառայութիւն արին ամենայն ազգն, Հայք և Ասորիք ուղիղ կացին։	*Թուին ՇԾ ոչ վառեցաւ լոյսն յերուսաղէմ յաւուր շաբաթու՝ այլ ի կիրակի յինն ժամ կիրակէին։*
	Թուին ՇԾԱ ի ծոնի ծառայարդարին ծառայութիւն արարին՝ Ժ ազգք, Հայք և Ասորիք ուղիղ կացին։
	Թուին ՇՀԱ թագաւորն Դաւիթ էառ զՏփխիս։
	Թուին ՇՀԴ թագաւորն Դաւիթ էառ զԱնի ի տաճկէն՝ և մնաւ. և թագաւորեաց որդի նորա Դեմետրէ։
	Թուին ՈԷ փոխեցաւ առ Քրիստոս թագաւորն Դեմետրէ. և նստաւ որդի նորա Դաւիթ։
	Թուին ՈԺ թագաւորեաց մեծն Գորգի, և նմա զՇահի-Արմէնն տասնիկ պատերազմաւ։
	Թուին ՈԺԲ և զուղ Աթաբեկն ի յԱնի մեծն Գորգի էառ զնա։
	Թուին ՈԺՆ շարժ եղև յերկնից։
Թվին ՈԺԷ ահագին շարժ եղև յերզնկան ԺԲՈ մարդ մեռաւ։ (ՄԺ, 2, էջ 263)	*Թուին ՈԺԷ ահագին շարժ եղև յերկնից, ԺԲՈ մարդիկ մեռան։ («Գիրք պատմութեանց», էջ 623)*

Սակայն որոշ դեպքերում ներմուծումները խախտում են նախկին նախադասության միտքը և տեղեկությունը դարձնում անհասկանալի։ Այսպես է եղել Դրիգոր Կամախեցուց ընդօրինակված հետևյալ հատվածի հետ. «Թվին ՇՁ տէր Խաչիկ կաթուղիկոսն, որ էր քոյր որդի տէր Պետրոս կաթուղիկոսին, թագաւորն Սահմաղեայ՝ Տուկիծ անուն տարեալ ի մօտն զտէր Խաչիկն, էարկ ի բանտն Դ ամ, և պահանջէր ի նմանէ զգանձս տէր Պետրոս կաթուղիկոսին» (ՄԺ, 2, էջ 263)։ Այս նախադասությունը Առաքելի մոտ այսպիսի տեսք է ստացել. «Թուին ՇՁ նստաւ տէր Խաչիկն, որ է քեռորդի տէր Պետրոս կաթուղիկոսին մինչ ի յայս տէր Պետրոս Ծն կաթողիկոսք անցեալ են, այս ՇՁ զսա ախտորեցին ի տարապարս, և կացուցին զայրն Աստուծոյ զԴիոսկորոս զհայրն հռչակաւոր վանիցն Սանահնայ, և ապա դարձեալ կաթուղիկոսն Աղուանից բնակց զտէր Դիոսկորոսն յաւուր մկրտութեանն Քրիստոսի պատառեցին զԹոյն Հայրապետական և դարձուցին զտէր Պետրոսն ի տեղի իւր։ Ի սմա ատեսն առին

զՍնի ի բուրկն, կատարեցաւ *Թագաւորն Աստմբօլայ Տուկիծ անուն, տարեալ ի մօան զայր Խաչիկն էարկ ի բանտ երեք ամ, և պահանջէր ի նմանէ զդանձն ալր Պետրոսի կաթուղիկոսին»* («Դիրք պատմութեանց», էջ 622). ընդգծված մասը ներմուծում է, այն արհնաւակատնորէն կցված է կանոնավոր շարադրանքին, ուստի հասկանալի է, որ «կատարեցաւ» բայը վերաբերում է ոչ թե «Թագաւոր» բառին, այլ մեկ այլ, մեզ չհասած բառի։ Ավելացնենք, որ Ամիրասի ժամանակագրությունը այս հատվածում լիովին համապատասխանում է Առաքել Դավրիժեցու բնագրին։ Երուսաղեմի ժամանակագրությունն այս տեղեկություններին ավելացնում է ևս երկուսը (ՇՉ և ՇՐ տարեթվերի ներքո), որոնք, սակայն, լույս չեն սփռում մեզ հետաքրքրող տեղամասի նախադասության վրա։ (Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 9, էջ 257—258, համմ. Սամուել Անեցի, էջ 112)։

474 Այս տեղեկություններն ընդօրինակված են Երիզոր Կամախեցու ժամանակագրությունից (տե՛ս Մժ, 2, էջ 263)։ Ամիրաս Երզնկացու մոտ սխալմամբ տարեթիվը՝ ՇՆ փխ ՇԽՀ (տե՛ս նաև Մժ, 2, էջ 133—134), խոսքը ներքին Լոթարինգիայի դուքս Գոդֆրուա որ Բույոնի խաչակիրների կողմից Երուսաղեմի գրավման մասին է, որն իրականում տեղի է ունեցել 1099 թ. հուլիսի 15-ին։ Երուսաղեմի պաշարման և գրավման մասին հետաքրքիր տեղեկություններ է հայտնում Մատթեոս Ուռհայեցին (տե՛ս ժամանակագրություն, էջ 266—268)։

475 Վրաց ժողովրդի պատմությանը նվիրված ամբողջ հատվածը (3—11 տողերը) գրեթե բառացիորեն կրկնում է XVI դ. Անանուն ժամանակագրության տվյալները (Մժ, 1, էջ 148—149, համմ. նաև Մժ, 1, էջ 25, 2, էջ 512), տարբերությունը հիմնականում առանձին բառերի՝ տեղանունների, անձնանունների գրության մեջ է (Ամրատ—Ամպատ, Գորգի—Գուրգի և այլն)։

476 Մանր ժամանակագրություններից մեկում (1, էջ 148) սխալ փխ որդի։

477 Առաքելը գրում է. «Բուին ՈԺԲ ևլ գուզ Աթաբակն ի յԱնի, մեծն Գօրգի էառ զնա» (Գ ձեռագրում այստեղ տեղ է բաց թողած)։ Նախադասությունը անհասկանալի է և, ըստ երևույթին, աղճատված։ Այն չի պարզաբանվում նաև այլ աղբյուրներում պահպանված տեղեկությունների օգնությամբ։ Եվ դա պատահական չէ. Հ. Մանանդյանը նշում է, որ Գեորգի Գ-ի դիվանագրած վրաց զորքի վայլուն հաղթանակները ծայրագույն ապշանք պատճառեցին սելջուկյան ամիրաներին, որոնք անմիջապես անցան հարձակման։ Ելուզուզ սպարեկի զորքերը գրավեցին Դվինը, 30 օր պաշարեցին Անին ու շարժվեցին վրաց Թագավորի դեմ, և, Սամուել Անեցու արտահայտությամբ, «զազատագողի, աղուէսարար» հարձակվեցին նրա բանակի վրա, ծանր պարտության մատնեցին և մեծ ավար վերցրին։ Դարձյալ Հ. Մանանդյանի դիտողությամբ՝ 1163 թ. սկզբին Գեորգի Գ-ի զորքերի կրած պարտության մասին տեղեկությունները «սրոդված ու լռության են մատնված վրացական և հայկական աղբյուրներում», սակայն դրանք մանրամասն հիշատակում են Իբն ալ-Ասիրը և Ջամալլահ Ղազվինին։ Այս ավյալներին հակասում է հայկական և վրաց աղբյուրների հաղորդումը։ (Տե՛ս Հ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 3, Երևան, 1977, էջ 118—119)։ Պարզ է, որ Դավրիժեցու մոտ պահպանված նախադասությունը պետք է ճշդումի և լրացվի (Անանուն ժամանակագրության մեջ ուղղված է. «Ելե(ղ)կուզ աթաբակն»։ Թվում է, որ մեր առաջարկած ձևը՝ «Ել (Ելղ)դուզ Աթաբակն»—հիշատ է։ (Համմ. «Ի ՈԺԲ թվին հկն ելուզուզ Աթաբակն բազմօք զօրօք ի դաշտն Դագայ...» (Սամուել Անեցի, էջ 138)։

478 Ամիրաս Երզնկացու մոտ. «Թվին ՈԻՆ. Թագաւորն Երուսաղէմի հմար զԱհալատին սուլթան ի զուռն Երուսաղէմի, որ հկեալ էր Ճեմ հզօրավ առնալ զԵրուսաղէմ»։ (Մատենադարան, ձեռ. № 10200, էջ 385բ)։

479 Տեղեկությունը, որը կարելի է դասել վարդան Արևելցու երկում (տե՛ս «Պատմութիւն տիեզերական Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ», Մոսկվա, 1861, էջ 180—181) վերաբերում է Մխիթար Անեցուն։ (Տե՛ս Գ. Վ. Աբգարյան, Մատենագրական նորույթներ, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր հաս. գիտ., Երևան, 1964, № 1, էջ 75—77)։ Այն լրիվ ընդօրինակված է Ն. Պողարյանի հրատարակած ժամանակագրության հեղինակի կողմից։ (Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 9, էջ 259)։

480 Տե՛ս Մժ, 1, էջ 149 (Ամիրասի ժամանակագրությունից այս տեղեկությունը բացակայում է)։

481 «Խորտակն..., որ հայր Յովհաննու հատաւաց ի Քրիստոս» (համմ. Մժ, էջ 149, տող 11—12) նախադասության իմաստը պարզ չէ։ Ռուսերեն թարգմանության ծանոթագրություններում (տե՛ս Аракел Даврижеци. Книга историй, стр. 559, гл. 56 прим. 55) նույնպես հիշ հնք այս «հայր Յովհաննին» վարդապետ Հովհաննես Դաստնեցու հետ։ Սակայն թևևս խոս-

քը միջնադարում լայն տարածում գտած պրեսբիտեր Հովհաննէի և նրա թագավորության առասպելի՝ մասին է: (Տե՛ս Ֆ. Брун, О странствиях царя—пресвитера Иоанна", Одесса, 1870; Л. Н. Гумилев. Поиски вымышленного царства (Легенда о государстве пресвитера Иоанна, М., 1970).

482 Ինպրում «թագաւորն», սակայն ձեռագրերից մեկում (Մատենադարան, № 1773) և այլ աղբյուրներում (Մժ, 1, էջ 149, 2, էջ 512) «թաթար» բառն է, որն ավելի է համապատասխանում իմաստին:

483 Առաքել Դավրիժեցու նշած մոնղոլների կողմից Դանձակի ավերման տարեթիվը համապատասխանում է հայոց պատմության մեջ ընդունված տարեթվին: (Տե՛ս Հ. Ա. Մանանդյան, Քննական տեսություն..., հ. 3, էջ 463—464):

484 Թեև բոլոր ձեռագրերը, ինչպես նաև մյուս ժամանակագրությունները (տե՛ս 1, էջ 149) տալիս են ՈՁէ թվականի տակ «էառ բազաւորն զԼոռէ և զԱնի» (ընդդծումները մերն են—Լ. Խ.) տեղեկությունը, թվում է, որ «բազաւոր»-ի փոխարեն նրբեմնի եղել է «բարաւն» բառը: ՈՁէ (1238) թվին վրաց թագավորական գահին (խոսքը, անշուշտ, կարող էր լինել միայն վրաց թագավորի մասին) նստած էր Թամարի դուստր Ռուսուդան թագուհին (1223—1247), որին ոչ մի հայկական աղբյուր «թագաւոր» չի անվանում: (Տե՛ս, օրինակ, Կիրակոս Դանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 254, 266, 289 և այլն): 1236 թ. գարնանը թաթար-մոնղոլների առաջապահ հրոսակները հայտնվեցին Հայաստանում և արագորեն սկսեցին գրավել Հայաստանի բերդերը, քաղաքներն ու գավառները: Անին և Լոռին պատկանում էին մոնղոլների կողմից առաջին գրաված քաղաքների թվին: Կիրակոս Դանձակեցին, մանրամասն նկարագրելով այդ դեպքերը, տարեթիվը չի նշում, սակայն նրա շարադրանքից երևում է, որ այդ դեպքերը տեղի են ունեցել մոնղոլների արշավանքի առաջին տարիներին:

Մանր ժամանակագրություններից մեկում («Թվականք առ հասարակ մինչև առ մեզ», Մժ, 1, էջ 149), որից, ըստ մեզ, օգտվել է Առաքել Դավրիժեցին, մեծ թվով տեղեկություններ են պահպանվել թաթարների մասին:

«ՈՁ թվին թաթարն ը(ղ)ե(ո)րադմն կոտորեաց և գԴանձակ էառ.

ՈՁէ թվին էառ թագաւորն զԼոռէ և գՅանի...

Չ թվին և Մանկուն խանն թագաւորեաց.

ՉԳ թվին Արղուն խանն նստաւ...

ՉԺԱ թվին Հուլայուն խանն նստաւ.

ՉԺԴ թվին Արաղայ խանն նստաւ (և այլն մինչև վերջ):

Թվում է, որ այս կոնտեքստում «բազաւորն» բառը սխալմամբ գրավել է «բարաւ» բառի տեղը՝ վրիպակ, որն այնքան էլ հազվադեպ չէր (տե՛ս այստեղ, ծան. 482):

485 Կարնո քաղաքի գրավման մասին տե՛ս Կիրակոս Դանձակեցի, գլ. ԼԴ, էջ 278—280, Մժ, 2, էջ 264, համմ. 2, էջ 139:

486 Առաքել Դավրիժեցին կրկնում է «Թվականք առ հասարակ մինչև առ մեզ» խորագիրը կրող Անանուն ժամանակագրության սխալ տեղեկությունը (Մժ, 1, էջ 149): Ամիրաս երզնկացու մոտ այդ սխալը բացակայում է. «Թվին ՉԳ շարժ հղև յերզնկան ի սոյն ամի Արղօն համարեաց զաշխարհն և եղ հարկ ի վերայ ամենայն գլխոյ» (ձեռ. № 10200, էջ 385բ): Այստեղ Առաքել Դավրիժեցին (իր աղբյուրի հեղինակի հետ միասին) շփոթել է հարկահավաք Արղունին, որի մասին մանրամասն պատմում է Կիրակոս Դանձակեցին «Պատմութիւն Հայոց»-ի ԽԴ և այլ գլուխներում, Հուլավու իլխանի հաջորդներից մեկի՝ Արղուն խանի (1284—1291) հետ: Հարկահավաք Արղունը գործել է Հայաստանում 1246 կամ 1247 թթ., քանի որ, ըստ Կիրակոսի, նրան Բուղայի հետ միասին ուղարկել էր հարկ հավաքելու Գույուկ խանը (1246—1248), մեծ խան դառնալուց անմիջապես հետո: ՉԳ (1254) թվին այդ ոստիկանը Մունկէ խանի հրամանով անց է կացնում մարդահամար և սկսում ամենայն դաժանությամբ հարկ հավաքել Հայաստանում, Վրաստանում և Աղվանքում: (Տե՛ս Կիրակոս Դանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 312—314, 361—363): Վարդան Արևելցին նշում է Հայոց 702 թ.: (Տե՛ս «Պատմութիւն տիեզերական Մեծին Վարդանայ», էջ 195):

487 Հուլավու խանն, ըստ Կ. Է. Բոսվորտի (տե՛ս էջ 200), գրավել է իլխանության գահը 1256—1265 թթ.: Մանր ժամանակագրությունները (1, էջ 119) պահպանել են այս տարեթվի ներքո այլ տեղեկություն. «Չէ (1258) Հուլաւուն էառ գԲաղդադ»: Ամիրաս երզնկացին այս տեղեկությունը չունի:

488 Խոսքը Ռուսուդանի որդի՝ վրաց թագավոր Դավիթ Չ Նարինի (1245—1293) մասին է (տե՛ս Կ. Կուցիա, Նշվ. աշխ., էջ 75, գլ. VII, ծան. 7):

489 Առաքել Դավրիժեցու երկի բոլոր ձեռագրերում և տպագիր օրինակներում, ինչպես նաև այլ աղբյուրներում (ՄԺ, 2, էջ 264, Մատենադարանի ձեռ. № 10200, թ. 385բ) պահպանվել է Իբրոտայ (Եփրատա) սխալ ձևը։ Մանր ժամանակագրություններից մեկը (2, էջ 144) տալիս է Քիբրոտա։ Հեղինակը նկատի ունի Կիրակոս Գանձակեցու, Վարդան Արևելցու և Գրիգոր Ակներցու երկերում նկարագրված դեպքերը (տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 388—389, Վարդան Արևելցի, Պատմութիւն տիեզերական, էջ 199, «Մատենաբան արձակ պատմութիւն վասն ազգին նահապետ», Ս. Պետերբուրգ, 1870, էջ 35)։

490 Համմ. ՄԺ, 1, էջ 149, մանրամասն այս մասին տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, պլ. ԿԴ, էջ 393, նաև Кираков Гандзакеци, История Армении, М., 1976 прим. 1 к гл. 64, стр. 312.

491 Վերը (տե՛ս այստեղ, ծան. 487) Առաքել Դավրիժեցին նույն տեղեկությունը տալիս է 21 տարեթվի ներքո։ Ըստ երևույթին երկրորդ դեպքում տեղեկությունը ընդօրինակված է մեր կողմից բազմիցս վկայակոչած ժամանակագրությունից (ՄԺ, 1, էջ 149) «ՋԺԱ թ. Հուլայուն խանն նստաւ»։ Նույն աղբյուրի IX տարեթվակը (ՄԺ, 1, էջ 142), որի տեղեկությունները ևս մեծ չափով համընկնում են Առաքելի տեղեկությունների հետ, ՋԺԱ տարեթվի տակ տալիս է հետևյալ տեղեկությունը. «...Դուլ խանն նստաւ» (Հուլավույի մասին այստեղ խոսվում է Չէ տարեթվի տակ)։ Դրիչները շփոթել են այս Դուլին Հուլավույի (Հուլայունի) հետ (Արդյո՞ք այս Դուլը Կիրակոս Գանձակեցու հիշատակած (տե՛ս Կիրակոս Գանձակեցի, պլ. ՍՐ, էջ 374) Դուլին և Գրիգոր Ակներցու նույն (տե՛ս Մագաքիա Աբեղա, էջ 23) չէ, որին Ք. Պատկանյանը համարում է Ջինգիզ խանի որդի Ջուչիի որդի Օրդայի որդի (տե՛ս К. Патканов, История монголов по армянским источникам, պրակ 1, ՍՊԲ, 1873, էջ 100)։ Այս Դուլին հիշատակված է նաև այլ աղբյուրներում (տե՛ս „Сборник материалов, относящихся к истории золотой Орды", под ред. В. Г. Тизенгаузена, т. II, М—Л., 1941, стр. 45—46 и др. Ն. Ողոլյանի հրատարակած ժամանակագրությունը կրկնում է Առաքել Դավրիժեցու այս սխալ տեղեկությունը (էջ 261)։

492 Տե՛ս ՄԺ, 2, էջ 264, համմ. նույն տեղում, էջ 144։ Մանրամասն տե՛ս Վարդան Արևելցի, էջ 204—209։

493 Առաքելի մոտ՝ «Աբայ խանն» (տե՛ս ՄԺ, 1, էջ 149 — «ՋԺԴ թ. Աբաղայ խանն նստաւ»)։ Խոսքը, ըստ երևույթին, Հուլավույի որդի Աբաղա խանի (1265—1282) մասին է։

494 Այս տեղեկությունը մենք չգտանք ո՛չ Սամուել Անեցու մոտ, ո՛չ մանր ժամանակագրություններում։ Այն ընդօրինակել է Երուսաղեմի ժամանակագրության հեղինակը (տե՛ս էջ 261)։ Այդ հարցերին նվիրված է հատուկ (Իե) կետ Հայոց կաթողիկոս Կոստանդին Բարձրբերդցու «Սահմանք կանոնականք»-ում (տե՛ս Կիրակոս Գանձակեցի, պլ. ԽԳ, էջ 309)։

495 Տե՛ս ՄԺ, 1, էջ 149։ Սակայն տեղեկությունը սխալ է, քանի որ Հուլավույի որդի Արղունը իշխան ընտրվեց 1284 թ. Կուսուլթայում և սիրեց մինչև 1291 թ., իսկ ժամանակագրությունում նշված է 1267 թ., երբ սիրում էր դեռ Աբաղայ խանը (1265—1282) (տե՛ս, էջ 200)։

496 Լևոն Գ (1270—1289)։

497 Այս ժամանակահատվածում Հովհաննես անունով կաթողիկոս Մ. Օրմանյանը չի ճանաչում։ Ինքը՝ Առաքել Դավրիժեցին, ևս ոչինչ չի ասում այդ կաթողիկոսի մասին կաթողիկոսների կարգին նվիրված իր երկի IX գլխում։ Սակայն Հովհաննեսի անունը պահպանվել է նաև այլ աղբյուրներում։ (Տե՛ս ՄԺ, 1, էջ 105), Դ. Փիրզալեմյանը և Վ. Հակոբյանը կարծիք են հայտնում, որ թեև խոսքը Հեթում II թագավորի եղբայր՝ Դոնների վանքի արքեպիսկոպոս Հովհաննեսի մասին է (տե՛ս ՄԺ, 1, էջ 107, ծան. 17)։

498 Համմ. ՄԺ, 1, էջ 119։

499 Բնագրում եղած «կացնալք» բառի փոխարեն Ամիրասի ժամանակագրությունում՝ «արարեր»։

500 Առաքել Դավրիժեցու երկի երրորդ հրատարակությունում (տարընթերցվածքները տե՛ս համապատասխան էջի տողատակում) նախադասությունը պահպանվել էր աղճատված ձևով. «Քուին Չհ մոլորեցան յոյնք և սրարին ծռապատիկ, և ի յայնմ ժամանակին ի Կիլիկիոյ երկիրն կային թագաւորք Հայոց... (անդ է բաց թողած—Խ. Խ.) մեր Հայոց ազգս երկու են բաժանուել կէսքն ընդ յունաց են կացնալք, և կէսքն ուղիղ են կացնալք»։ Նշած բացը առկա է բոլոր ձեռագրերում, այլ աղբյուրներն էլ չէին լրացնում այն։ Ամիրասը երկնկային հետևյալն է հաղորդում (տե՛ս ձեռ. № 10200, էջ 386ա). «Քուին Չհ. մոլորեցան յոյնք և սրարին ծռապատիկ, և ի յայմ ժամանակին. ի Կիլիկիոյ երկիրն թագաւորք Հայոց են լեալ մեր

Հայոց ազգս. Բ ևն բաժաներ և կէսք ընդ յունաց ևն արարէր, և կէսք ուղիղ ևն կացէր»: Այս տեղեկութիւնը պահպանել է նաև Ն. Պողարյանի կազմից ընտրովի հրատարակված Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի Մատենադարանի № 3701 ձեռագրում մեզ հասած ԺԴ դարում խմբագրված ժամանակագրութիւնը (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 9, էջ 257—281): Նշված ժամանակագրության մեջ մեզ հետաքրքրող տեղեկությունը հասել է հետևյալ ձևով. «ՌՄՂԴ. Ջհ. Մոլորեցան յոյնք և արարին զծոռազատիկ: Եւ յայնմ ժամանակին ի Կիլիկիոյ երկիրն կային Թագաւորք Հայոց, որ նոքա ընդ Յունաց արարին, և կէսքն ուղիղ ևն կացեալք» (տե՛ս էջ 262): Այս տեղեկությունը որոշ չափով պրկվել բառացի համընկնում է Առաքել Դավրիժեցու և Ամիրտա Երզնկացու մոտ պահպանված նախադասությունների հետ: Համենայն դեպս, խմբագրը լրիվ պարզելով, լրացուցիչ տղեյտերները թույլ են տալիս վերականգնել բնագիրը և լրացնել բացերը:

501 ՋԽԱ, ՋԽԴ և ՋԿ տարեթվերին վերաբերող տեղեկությունները բացակայում են Ամիրթաի ժամանակագրության մեջ, սակայն այնտեղ տակա է մի այլ տեղեկություն, որը փոխառված է Երզնկայի երկրաշարժերին նվիրված ժամանակագրությունից (Մատենադարան, ձեռ. № 10200, էջ 382բ), բայց չի մտել Առաքելի ժամանակագրության մեջ. «Թվին ՋՂԴ. շարժ եղև յերկրնկան շատ սար երերցաւ զերդ նաւն ի մէջ ծովուն անդադար կայր ասասած պահեց որ ոչ փլաւ» (Ջեռ. № 10200, էջ 386ա, համմտ. «Թվ. ՋՂԴ շարժ եղև երզնկան շատ օր էրեաց զերդ կնան ի մէջ ծովուն, ասասած պահեաց ոչ փլաւ»: Նույն տեղում, էջ 382բ):

502 Բնագրում (ձեռագիր և տպագիր օրինակներում)՝ «աւերել» (Դ ձեռ. —աւերեալ): Սակայն խոսքը այստեղ Ղազան խանի Հէթումին շնորհած հայկական նկեղեցիները չավերելու հրամանի մասին է, ուստի «աւերել» բառը մենք փոխարինել ենք «[չ]աւերել»-ով: Համմտ. «ՌՄՂԶ—ՋԽԴ խան Ղազանն մեծ հալածանս յարոյց նկեղեցւոյ, և բարնպաշան Հեթում խաղացոյց զնաւով յարևկս պատահիով զառնութեան ժամանակին»: («Բանբեր Մատենադարանի», № 9, էջ 262):

503 Համմտ. Սամուել Անեցի, էջ 154—156, Մժ, 1, էջ 106, 120: Հայոց Հեթում Բ արքան 1295 թ. հանապարհորդության է կատարում Իլան՝ Քեյղաթուի (1291—1295) հաջորդ՝ Բայդու խանին ներկայանալու համար, սակայն գահակալական հնդաշրջումի հետևանքով իշխանության գահն անցավ (1295 թ. հոկտեմբերին) Արղունի որդի Ղազան խանի ձեռքը: Մարաղայում երկու ամիս սպասելուց հետո Հեթումը ներկայացավ Ղազան խանին, որը սիրալիր ընդունեց հայոց արքային և ի պատասխան արքայի աղերսին՝ հրամայեց հայերին և նրանց եկեղեցիներին վնաս չհասցնել: Այդ մասին պատմում է դեպքերի ժամանակակից, պատմիչ Սմբատ Սպարապետ Օրբելյանը (տե՛ս «Պատմութիւն նահանգին Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 474, տե՛ս նաև Մ. Զամչյան, Պատմութիւն Հայոց, Գ, 294, Г. Г. Микаелян, История Киликийского армянского царства, Ереван, 1952, стр. 427—428).

504 Բյուրմացություն է: Բազմաթիվ աղբյուրներ վկայում են, որ Հեթում Բագավորահայրը վեճն Դ Բագավորի, Օշին սպարապետի և այլ բազում իշխանների հետ միասին նենգորեն սպանվել է 1307 թ. նոյեմբերի 17-ին մանդղու զորավար Բիլարդուի կողմից (տե՛ս Սամուել Անեցի, էջ 153, Г. Г. Микаелян, նշված աշխ., էջ 435—437):

505 ՋՈՆ տարեթվի ներքո տրված տեղեկությունը ոճով և լեզվով խիստ տարբերվում է Ոն գլխի ամբողջ շարադրանքից, անկասկած այդ տեղեկությունը ընդօրինակված է եղել հիշատակարանից: Մ. Բրոսսեն (տե՛ս «Livre d'Histoires...», ծան. էջ 569) նշում է, որ Առաքելն այս հատվածը ընդօրինակել է իրեն անծանոթ մի ձեռագրի հիշատակարանից: Մեզ հաջողվել է գտնել խնդրո առարկա հիշատակարանին լեզվով և ոճով հարազատ, նույն տեղում և ժամանակահատվածում գրված երեք այլ հիշատակարաններ (տե՛ս Ս. Մուրադյան և Ն. Մարտիրոսյան, Ցուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Բարգմանչաց վանքի և շրջակայից, Երուսաղէմ, 1967, էջ 19—21, № 17—18—19), որոնցից մեզ հայտնի դարձավ հիշատակարանի հեղինակի անունը: № 17 Ճաշոցի հիշատակարանում ասվում է. «...գրեցաւ սա ի գաւառիս Տարաւնոյ յասատուածապատիւ և ի հրեշտակացոյց սուրբ ուխտիս Ղազարու վանք կոչեցեալ՝ ընդ հովանեաւ սուրբ Առաքելոցս՝ ... ի հայոց թուին ՋՂԴ ձեռամբ բազմամեղ կրաւնաւորի և անիմաստ զրչի Առաքելի ի հայրապետութեան հայոց տեառն Կոստանդիա և ի թագաւորութեան Կիլիկեցւոց Աւշինին՝ և յասաջնորդութեան սուրբ ուխտիս մերոյ տէր Թադէոսի, և ի կայսերական բռնակալութեան ազգին նեռոդոս Ղարպանդա զանին՝ որ ի սորա տէրութեան մեծ տառապանք և հարկ յաւելաւ ի վերայ ազգաց քրիստոնէից և եղաւ խարաճն և ամենայն ուրեք բարեկարգութիւն նուազեալ և անկարգութիւն յամենայն կողմանց զաւրացեալ, զոր և հայցեմք յողորմածէն յասատուծոյ զի այլ սրասցէ նուազեալ և տառապեալ քրիս-

առնէից՝ և ընդ փորձութեանս զնոսն արասցէ վաղվաղակի»։ Հաջորդ երկու հիշատակարանները (№ 18 և 19) պատկանում են նույն Առաքելի գրչին, գրված են 1315 և 1316 ԹԹ. նույն վանքում և պատմում են նույն դեպքերի մասին։ Կասկած չկա, որ մեզ հետաքրքրող հատվածի հեղինակն այդ «բազմամեղ կրաներար և անիմաստ գրիչ» Առաքելն է։ Արդեն նշված № 10200 ձեռագրում զետեղված ժամանակագրությունն էլ է պարունակում Առաքել գրչի հիշատակարանը (ԹԹ. 386ա—388բ), որն հենց Ամիրաս Երզնկացու ժամանակագրությունից գրեթե անփոփոխ ընդօրինակել է Առաքել Դավրիժեցին։ Հարկ է նշել, որ այս հիշատակարանը պարունակում է նաև Ն. Պողարյանի կողմից հրատարակած ժամանակագրությունը (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 9, էջ 263), սակայն սկզբից և վերջից թերի և զգալի տարբերություններ։

506 Ամիրասի մոտ՝ «... և ի գայլերական...»։

507 Ամիրասի մոտ՝ «Պարպանոտայ զանին»։ Խոսքը Արղունի կրտսեր որդու Մուհամմադ Ոլջայթուի (1304—1317) մասին է, որին մանղլները խուդաբանդա էին անվանում։ Տե՛ս Սահմանոս Օրբելյան, էջ 482։

508 Ամիրասի մոտ՝ «պատրիկ»։

509 Ամիրասի մոտ՝ «և աղանդօր շինեցուն»։

510 Ամիրասի մոտ՝ «Հրամարատաք»։

511 «Ի վերայ այնու բրիստոնէից, կամ պատնալ ի մոլար դօանութիւն Մահմէտի...»։ Տարբերությունն այս տիպի է։

512 Հիշատակարանը պատմում է հայ ժողովրդի պատմության ծանր ժամանակահատվածի մասին և արձագանքում այլ ժամանակագրություններին և աղբյուրներին (տե՛ս Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, Գ, էջ 299։ Հ. Մանանդյան, Քննական ուսումնասիրություն հայ ժողովրդի պատմության, էջ 325—327։ Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերին ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 46—47)։

513 Այս տեղեկությանը Ամիրաս Երզնկացու գործում և երկրաշարժերի տարեգրության մեջ նախորդում է մի այլ տեղեկություն՝ նույնպես Երզնկայում տեղի ունեցած երկրաշարժի մասին։

Երզնկայի երկրաշարժերի տարեգրություն	*Ամիրասի ժամանակագրություն*
«Թվ. ՉՂԴ. շարժ եղև Երզնկան շատ օր էր [եր]-ացը զերիվ զնօն ի մէջ ծովուն. ատաուած պահեաց ոչ փլաւ»։ (ձեռ. № 10200, էջ 382բ)	«Թվին ՉՂԴ շարժ եղև յԵրզնկան շատ աւր **եբերցուց** զերիվ նաև ի մէջ ծովուն անդադար կայր ատաուած պահից որ ոչ փլաւ»։ (ձեռ. № 10200, էջ 386ա)

514 Այս տեղեկությունը Ամիրասի մոտ չկա։ Համմս. Սամուէլ Անեցու շարունակողի հետ (տե՛ս էջ 169. «ՌՅԾԲ։ ԶԱշրօֆն Նասան Ջանիբէկն և Յահին Նասաւ. սատիկ պատերազմաւ կռուեցան Սուլտանոյին և Ախին, յետոյ ձերբակալ արարին զԱխին՝ և ածին առաջի սուլտանին, և նա ևս սպանանել զնա և ինքն Նասաւ խան՝ ամս է»)։ Սակայն, ինչպես երևում է ամբողջ կոնտեքստից և անձնանունների տատադարձություններից, Առաքելի աղբյուրն եղել է կիրակոս Ռշտունցու ժամանակագրությունը, (ՄԺ, 1, էջ 118)՝ «ՊՋ (1357) զԱշրաւն Նասան Ճանիբէկն և Յահին Նասաւ»։ Առաքելը պատմում է Ոսկի Հորդայի խան Ջանիբեկի (1341—1357) և Մալիք Աշրաֆի միջև եղած Ադրբեջանի համար մղվող պայքարի մասին, երբ Ջանիբեկը, գերելով և հետագայում սպանելով Աշրաֆին, գահը հանձնից իր որդի Բերդի-բեկին, որից Ադրբեջանը շուտով անցավ Ախի-Ջուկին»։ (Համմս. Бюллет, стр. 77—78)։ Երուսաղեմի ժամանակագրությունը, բան երևույթին, օգտվելով այլ աղբյուրից, արձանագրում է նաև հետագա դեպքերը (որոնց մասին Բիբլիսին պատմում է հաջորդ գլխում, տե՛ս էջ 78—79). «ՌՅԾԲ=ՊՋ. ԶԱշրաֆ Նասան Ղանբէկն, և Ախին Նասաւ, սատիկ պատերազմաւ կռուեցան սուլթան Վայիսն և Ախին. յետոյ ձերբակալ արարին զԱխին և ածին առաջի սուլթանին, և նա ևս սպանանել զնա և ինքն նասաւ խան ամս ԺԸ» (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 9, էջ 265)։

515 Անշնան տարբերությամբ այս տեղեկությունը երկրաշարժերի տարեգրից (ձեռ. № 10200, թ. 382բ) անցել է Ամիրասի ժամանակագրությունը, որտեղից, նույնպես անշնան տարբերությամբ, ընդօրինակել է Առաքել Դավրիժեցին։

516 Համմս. ՄԺ, 1, էջ 118։ Այս տարեթիվը սուտ չէ (Տե՛ս վ. Հակոբյանի ծան. 20, էջ 122)։ Շարաֆ խան Բիդլիսին հիջրիի 788 (1386) թվի տակ նշում է. «Այս նույն տարին

էմիր Խմաորը լանց Քողթամիշի զորքի՝ Քևրիդ և Ագրևջան կատարած արշավանքի և այդ վայրերում հաստրած ավերումների մասին...» (էջ 91):

517 Դրանցումը անհասկանալի է: Ամիրան երդնկացու մոտ այս տարեթվի տակ առկա է միայն դրանցման երկրորդ մասը «Քևդայոյ խանին» մասին ոչինչ չկա: (Համմտ. Մժ, 1, էջ 167): Սակը ժամանակագրություններում հանդիպում են մի քանի նույնատիպ արձանագրություններ. «Չև (1291) Քազաբոնն» (1, էջ 118): «ՉԼԴ (1285) Հզրայը իր Քևդաբոնն» (1, էջ 85, տող. ծան.): «ՉԼԴ (1284) թվին Քևդա խանն նստաւ» (1, էջ 142): «ՉԼԸ (1289) մեռաւ Արղուն խանն և նստաւ Հզրայը իր Քևդաբոնն» (1, էջ 36): «ՉԼԴ (1284) թվին Քևդաբու խանն նստաւ» (1, էջ 149):

Ամենայն հավանականությամբ այս դրանցումները վերաբերում են Արղուն Էլխանի Հզրայը և հետևորդ՝ Քայխաթու խանին (1291—1295): (Տե՛ս Ստեփաննոս Օրբելյան, գլ. Հ, էջ 467—469): Բոլոր նշված և այլ դեպքերում (տե՛ս Մժ, 1, 85, 86, 87, 118, 142, 149: 2, էջ 149), երբան էլ ազնաուված են անձնանուններն ու տարեթվերը, խոսքը այս Քայխաթուի մասին է: Տարեթվերը տատանվում են 1284 և 1291 թթ.-ի միջև, բայց ոչ մի տեղ չկա ՊԼԴ (1384) թիվը: Ուստի Առաքել Դավրիժեցին պարզապես շփոթել է ՉԼԴ (1284) և ՊԼԴ (1384) տարեթվերը, նրբ արտագրել է ինչու հետևյալ XVI դ. այն Անանուն ժամանակագրությունը, որից, ինչպես մենք ցույց ավելցինք, նա առատորեն օգտվել է, մանավանդ որ այս ժամանակագրությունը պարունակող ձեռագրերից մեկը (Մատենադարան, ձեռ. № 1737) տալիս է հենց Քևդայոյ ձևը: (Տե՛ս Մժ, 1, էջ 149 առդատակի տարբերվածներում): Հատկանշական է, որ Երուսաղեմի ժամանակագրությունը, կրկնելով Առաքելի սխալը, գրանցում է. «ՌՅՉՉ=ՊԼԴ—Քևդայոյ խանն նստաւ: Ի սոյն թվին Բուրհան զսաին հոգան զալրն Սևրաստիոյ, և զՍահապետնոս եպիսկոպոսն Սևրաստիոյ նահատակեաց. և զսրբոց Քառասնից վանքն քակեաց» (էջ 266): Այստեղ դժվար չէ նկատել, որ վերը բերված նախադասությունը բառ առ բառ կրկնում է Առաքել Դավրիժեցու: Ոն գլխի գրառումը, մինչդեռ ավելի վաղ ժամանակահատվածի վերաբերող արձանագրությունների շարքում, Չև տարեթվի տակ Երուսաղեմի ժամանակագրությունը, մի փոքր տարբերություններ, կրկնելով Առաքել Դավրիժեցու տեղեկությունը Ծուղտաղիի և Կիլիկիայի հայոց թագավորների մասին, հաղորդում է. «ՈՄՂԴ—Չև ... Քաղաբոն խան նստաւ ամն Դ» (էջ 266): Կարծում ենք, որ սխալված չենք լինի, եթե այս «Քաղաբոնին» նույնացնենք այլ աղբյուրների «Քաղաթոնի» հետ, ինչպես նույնացրինք նրա հետ Առաքելի «Քևդայոյ»-ին:

518 Տե՛ս Մժ, 1, էջ 167: 2, էջ 265, 381, 392:

519 Այս վկայությունը Ամիրաս Երզնկացին չունի: Կիրակոս Ռշտունցու (XV դ.) ժամանակագրությունը (Մժ, 1, էջ 118) արձանագրում է «ՊԼԴ (1385) Բուրքն հառ զՈրոտն. և Կախիկն և Մաղաքիա վարդապետքն մեռան»: (Տե՛ս նաև Վ. Հակոբյան, ծան. 21—23, էջ 122): Նույն տեղեկությունը տարեթվի փոքր շեղումով (ՊԼՅ փխ ՊԼԴ) և ավելի մանրամասն հաղորդում է Սամուէլ Անեցու ժամանակագրությունը (տե՛ս էջ 170): Աղբյուրները (Սամուէլ Անեցի, Թովմա Մեծոփեցի) վկայում են, որ այդ ժամանակահատվածում գրանցված է հղել Մաղաքիա վարդապետ Զրհմեցու մահը: Վարդապետ Երեմիայի անունը թյուրիմացության հետևանքով գրանցվել է Առաքելի ժամանակագրության մեջ և այնտեղից թափանցել Հ. Աճառյանի Հայոց անձնանունների բառարան (տե՛ս հ. Բ, Երևան, 1944, էջ 138—139): Երուսաղեմի ժամանակագրությունը (էջ 266) նույն եղելության մասին հետևյալն է վկայում. «ՌՅՉԷ—ՊԼԴ —Բուրքն էառ զՈրոտն և Կախիկ վարդապետն զնաց փախստական ի Ծարայ, և պարոն Գորգունէն զարդամահ եղև, ընդ նմին Մաղաքիայ հզնաւորն, ի նոյն աւուրս ի տարեկից նոցին, ակարացաւ և ի նոյն օրն մեռաւ, և եղաւ մերձ յերբնջակոյ վանքն» (հմմտ. Սամուէլի շարունակողի տեղեկությունների հետ, էջ 170):

520 Առաքելի բոլոր ձեռագրերում և հրատարակություններում թյուրիմացաբար՝ «Քամրազ խանն» փխ «Քամուր խանն»: Կիրակոս Ռշտունցին (տե՛ս Մժ, 1, էջ 118) վկայում է. «ՊԼՆ (1386) Քամուրն եկաւ ի Դաւրէժ և ի նախշվան և զվան. կոտորեաց աւելի քան ԸՌ մարդ» (հմմտ. Սամուէլ Անեցի, էջ 171): Մի այլ ժամանակագրություն (Մժ, 1, էջ 142) նույն տարեթվի ներքո արձանագրում է. «ՊԼԵ (1336) թվին Քամուր խանն նստաւ. գնաց մինչև ի Դմիլիս և անդ արարեալ բազում կոտորած և անդի եկն ի Հայս ժէ (17) տարի[ս] եկաց»: Այս ժամանակագրության մյուս տարբերակում նշվում է. «ՊԼՆ (1386) թվին Քամուր խանն նստաւ և գնաց մինչև ի Դրմբշիս և եկն ի հայս, եկաց ամս ժէ (17) ի Սամարղանդ մեռաւ» (նույն տեղում, էջ 149): Այս տեղեկությունների մեջ շատ ընդհանուր տեղեր կան: Սակը ժամանակագրությունների վկայությունները աղճատված ձևով (Քամրազ փխ Քամուր) անցել են

Առաքելի ժամանակագրությունը, և այդ աղճատումներով ու բացերով պահպանվել բոլոր ձեռագրերում և հրատարակություններում։ Թվում է, որ աղբյուրները հնարավորություն են տալիս բնագիրը հշտելու և բացերը լրացնելու (հմմտ. «ՊԼԶ (1387) թվին Լանկ Թամուր գնաց մինչ ի Դմբշխ և ևկն ի Հայս, ևկաց ամս ժէ (17) գնաց ի Սմբրղանտ մեռս» (ՄԺ, 2, էջ 515)։ Այս տեղեկությունը Ամիրան Սրղնկացին չունի, իսկ Նրուսաղեմի ժամանակագրությունը (էջ 266—267) բառացիորեն կրկնում է Առաքելի վկայությունը նրա սխալներով և բաևերով, բայ որում բառերի տատապարձությունն էլ նույնն է (բացառությամբ Դմբշխ փխ Դիմիշխ)։

521 Հմմտ. ՄԺ, 1, էջ 118։ Նրուսաղեմի ժամանակագրությունը, կրկնելով այս վկայությունը, «Նախշուան» բառից հետո ընդհատում է նախադասությունը ու շարունակում. «... և անտի ի միում յաւուր կալաւ մինչև ի Կարբի, և ի Բշնի, ի Դաունի, ի Սուրմարի, ի Կաղր, և անտի գնաց ի վրաց տուն, և արար շատ վնաս Տըպխիս քաղաքին, և կալեալ զիապատուն Բագարատ՝ տաճկացոյց, և գնացեալ ձմերեաց ի Մուշան» (հմմտ. Սամուել Անեցի, էջ 171)։

522 Հայտնի է, որ Լանկ Թիմուրը Անկյուրիայի ճակատամարտից (1402 թ. հուլիս) հետո գերել էր սուլթան Բայազիդ Յըլդըրըմին։ Առաքելն ինչո՞ւ է նրան անվանում «խոնդքարին հղբայր»։ Խոնդքարը (ճիշտ՝ խութալվենդիգյար (պարսկ.՝ տեր, տիրակալ) օսմանյան փադիշահների պաշտոնական տիտղոսը դարձավ Մուրադ Ա-ի (1360—1389) օրոք։ Վերջինս Բայազիդի ոչ թե հղբայրն էր, այլ հայրը։ Գրիգոր Դարանաղցին (տե՛ս ժամանակագրություն, էջ 5) գրում է. «Թվին ՊԼԶ ել Լանկթամուրն բազում զօրօք ի Սմրղանտայ և ամերևաց զրազում աշխարհ, մանաւանդ զՍևրասուիա և գնաց յԱնկուրիա, զղուանթքարին իլտրում Պայազիտն ի խաւտան հղեր»։ «Հղբայր» բառը բացակայում է Ամիրան Սրղնկացու մոտ, այն չկա նաև այլ աղբյուրներում (տե՛ս ՄԺ, 2, էջ 265, 392)։ Սակայն ժամանակագրություններից մեկում՝ Անանուն Սևրասուացու (XVI դ.) երկի մեջ (1, էջ 167) կա հետևյալ վկայությունը. «Ի թվին ՊԼԶ (1387) ելևալ Լանկ Թամուրն անթիւ զօրօք յարևելից ի Սմրղանդայ և ևկևալ բազում աւերմունս արար։ Աւերեց զՍևաստ, գնաց մինչև յԱնկուրիա և բոնեց զխոնդքարին որդին զիլտրում Պայազիտն ի Ղաֆտան. և գնաց մինչև ի Շամպ...» (ընդգծումը մերն է—Լ. Խ.)։ Այս վկայության «որդի» բառը հասկանալի է, քանի որ Բայազիդը խոնդքարի տիտղոս կրող առաջին օսմանյան սուլթանի որդին էր։ Թվում է, որ այդ «որդի» բառն է ընդօրինակելու ժամանակ շփոթված դրիչների կողմից և վերաիմաստված «եղբայր» բառին։

523 Տե՛ս ՄԺ, 1, էջ 118—119։ Խոսքը Ջելաիրյան Ահմեդ սուլթանի որդի Տահիրի մասին է։ (Մանրամասն տե՛ս Սամուել Անեցի, էջ 171, 175)։

524 Տե՛ս ՄԺ, 1, էջ 118։ Վ. Ա. Հակոբյանը, ըստ երևույթին իրավացի է, երբ այս Թորոսին և Զաքարիային նույնացնում է Սսի կաթողիկոս Թեոդորոս Բ-ի (1382—1392) և Աղթամարի կաթողիկոս Զաքարիա Բ-ի (1378—1393) հետ (տե՛ս ՄԺ, 1, էջ 122, ծան. 24 և 25)։ Նրուսաղեմի ժամանակագրությունը արձանագրում է. «ՌՅՂՆ—ՊԽՐ— ՉՏէր Թէոդորոսն ի Սիս սպանին, և նստաւ ի տեղի նորա Բոկիկ Կարապետն, ամս ժԲ։ Յորժամ զՏէր Թէոդորոսն ի Սիս սպանին, ի նոյն ամի զՏէր Զաքարիայն, զԱղթամարայ կաթողիկոսն, քարկոծ արարին յՈստան. զերկուսն ի միում ամի» (տե՛ս էջ 267, հմմտ. Սամուել Անեցի, էջ 172)։ Այս տեղեկությունները Ամիրան Սրղնկացին չունի։

525 Տե՛ս ՄԺ, 1, էջ 119։ Սամուել Անեցին (էջ 173) այս դեպքերն ավելի մանրամասն է շարադրում. «ի ՊԾՆ թվին Ղարաիւսուֆն Թուրքմանն՝ որ բազում տարիք փախստական լեալ էր ի Թամուրէն՝ յորժամ էջ Թամուրն ի Շամտունն և կալեալ զԻւսուֆն կապանօք տարաւ յՆգիպտոս՝ և նա ի խաւտագոյն բանդս ներբինաւ Ու յորժամ առաւակնցաւ Թամուրն, և անտի արձակեալ Իւսուֆն՝ ևկն ի վերայ Հայոց աշխարհիս և արար շատ ասիր և գնաց ի Բավրէզ և այլ յաոաջ, և մլքնաց բազում տեղիս մինչև ի Սուլտանիայ՝ և Օրէլ քաղաք»։

526 Հմմտ. Թովմա Մեծոբեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 70։ Խոսքը Հալաբի, Մուշի և Բիթլիսի գործ ամիրա Շամս էդ Դինի մասին է։

527 Ընագրում ամենուրիք հղել է Լաւուան (այդպես է նաև Նրուսաղեմի ժամանակագրության մեջ, էջ 267)։ Ուղղել ենք ըստ Կիրակոս Ղշուանցու (տե՛ս ՄԺ, 1, էջ 119)։

528 Խոսքը Ոսմանի տեր քուրդ Ամիր Նզդինի մասին է (հմմտ. «ի թվին ՊՀՐ մեռաւ մելիքն Վասպուրականայ և հայրն նորա ամիր նզդին և իւր որդին», Սամուել Անեցի, էջ 173)։

529 Տե՛ս Սամուել Անեցի, էջ 173, ՄԺ, 1, էջ 119։

530 Տե՛ս ՄԺ, 1, էջ 119, 2, էջ 514։ Հմմտ. Թովմա Մեծոբեցի, էջ 80—81։

531 Տե՛ս ՄԺ, 1, էջ 119, 2, էջ 514։ Թովմայ Մեծոբեցի, էջ 105—106։

532 Տե՛ս ՄԺ, 1, էջ 119, 2, էջ 514։

533 Տե՛ս ՄԺ, 1, էջ 143, 2, էջ 515։ Խոսքը Շահռուհի առաջին արշավանքի մասին է։

534 Հմմտ. «ՊՀԱ (1422), Շահռուխն, Լանկին որդին, երկ Դարարաղն» (ՄԺ, 2, էջ 515)։

535 Հմմտ. «ՊՀԲ (1423) վրացին՝ Ալեքսանդրն երկ» (ՄԺ, 2, էջ 515)։

536 Տե՛ս ՄԺ, 1, էջ 355, 2, էջ 482։ Արդյո՞ք Առաքելը սխալմամբ չի վերագրում 1429 թ.՝ 1440 թ. տևող ոչնչացած պատերազմը, որի մասին ստորև պատմում է նորից (տե՛ս այստեղ, ծան. 540)։

537 Ըստ երևույթին, խոսքը Շահռուխի առաջին արշավանքի մասին է (տե՛ս այստեղ, ծան. 530)։ Ամբողջ տեղեկությունը հմմտ. ՄԺ, 2, էջ 515։

538 Խոսքը Երզնկայի տեր Օթմանի մասին է (տե՛ս Թովմա Մեծոփեցի, էջ 102—103)։

539 Հմմտ. ՄԺ, 1, էջ 119 (նաև էջ 123—124, ծան. 41, 42)։

Այս դեպքերը մանրամասն նկարագրում է Մ. Քամչյանը (Գ, էջ 470)։ Տե՛ս նաև Бидлиси, նշված աշխ., էջ 113—114։

540 Հմմտ. ՄԺ, 1, էջ 119, 2, էջ 514։ Ավելի մանրամասն այս մասին պատմում է Թովմա Մեծոփեցին (տե՛ս էջ 119—121)։ Ամրոցի գրավման մասին շատ պերճախոս տեղեկություններ են պահպանվել նաև ժամանակակիցների հիշատակարաններում (տե՛ս Լ. Ս. Խաչիկյան, Ժե դարի հիշատակարաններ, մ. 1, էջ XXX—XXXII)։

541 Մանրամասն տե՛ս Թովմա Մեծոփեցու հիշատակարանը, Թիֆլիզ, 1892։

542 Հմմտ. ՄԺ, 1, էջ 119։ Տեղեկությունը ընդօրինակված է, ինչպես երևում է, Կիրակոս Ուշաունցու գրառումից, տե՛ս ՄԺ, 1, էջ 113—117, նաև «Դիրք պատմութեանց», է գլ.։

543 Հմմտ. «ՊՂԴ (1444) թվին Ջհանշէն Ախլցխա գերեցուց» (ՄԺ, 2, էջ 515)։ Ղ. Ալիշանը վկայակոչում է հիշատակարանների տեղեկությունները. «Ի թվին Հայոց ՊՂԷ (1448) Ջհանշահ փառաշուք արևելից կողմանէ Ախալցխա գերեաց» («Այրարատ», էջ 327)։ Արդյո՞ք նույն դեպքերը չեն հիշատակված տարբեր տարեթվերի տակ։

544 Առաքելի աշխատության բոլոր ձեռագրերում և հրատարակություններում այս նախադասությունը պահպանվել է աղճատված ձևով. «Թուին ՊՂԸ (1446) Ջաղաթէն գնաց ի վերայ... (այստեղ բառեր են բաց թողած—Լ. Ս.) Շահրուխն իւր մահուամբն մեռաւ»։ Նախադասությունը անհասկանալի է։ Մի այլ վկայության (ՄԺ, 2, էջ 515) «ՊՂԸ (1446) Ջաղաթէն գնաց ի վերայ Շաուռխին իւր մահովն մեռաւ», ոչնչով չի օգնում նախադասությունը վերծանելու։ Ժամանակակից աղբյուրները (Թովմա Մեծոփեցի, էջ 108) և ինքն Առաքել Դավրիժեցին (տե՛ս այստեղ, ծան. 533) Լանկ Թամուրի որդի Շահռուխին անվանում են Ջաղաթայ, Ջաղաթայ, Ճաղաթաւ Մյուս կողմից, նույն աղբյուրները (տե՛ս ՄԺ, 1, էջ 143, և ծան. 31, էջ 151), հաղորդելով Ջհան շահի մահվան մասին (1467 թ.) վերջինին նույնպես անվանում են Ջաղաթաւ Այսպես, «...նրեք անգամ է այս, որ Շահ-Ռուհ Ջաղաթայն...»,—ասում է Թովմա Մեծոփեցին։ XVI դ. Անանուն ժամանակագրությունը հաղորդում է. «ՊՀ (1421) թվին Ճաղաթէն երեկ աշխարհս Հայոց» (խոսքը Շահռուխի առաջին արշավանքի մասին է), իսկ քիչ ստորև նույն ժամանակագրությունը արձանագրում է. «ՋԺԶ (1467) թվին Ջաղաթէն սպանաւ Հասան Ալին նկաւ ի Մակու. է (7) ամիս թագաւորեաց... Հասան պէկն սպանէց զՀասան Ալին, ինքն թագաւորեաց ի Թավրէզ Ը (9) տարի»։ Այս դեպքում խոսքը Կարա-կոյունլու ցեղի վերջին գահակալների՝ Ջհանշահի (1438—1467) և Հասան Ալիի (1467—1468) ու նրանց և Աղ-կոյունլու գահակալ Ուզուն-Հասանի մեջ եղած պայքարի մասին է (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, բազմահատորյակ, հ. IV, Երևան, 1972, էջ 45—47), ուստի այստեղ աղբյուրը Ջաղաթայի տակ նկատի ունի Ջհանշահին։ Մանր ժամանակագրություններում պահպանված համապատասխան վկայություններն էլ («ՊՁԴ (1435) թվին Շախռուխն երեկ և [Ջ]այնշէն թագաւորեաց և ինքն գնաց հանապարհին մեռաւ»—ՄԺ, 1, էջ 143։ «ՊՂԸ (1446) Ջաղաթէն գնաց ի վերայ Շաուռխին իւր մահովն մեռաւ»—ՄԺ, 2, էջ 515) լույս չեն սփռում մեզ հետաքրքրող նախադասության վրա։ Այստեղ միաձուլվել են երկու նախադասություն. 1) Ջաղաթայի (Շահ-Ռուխի) 1446 թ. կատարած ինչ-որ արշավանքի մասին. 2) Շահռուխի բնական մահով մեռնելու մասին։ Քանի որ մեջ բերված աղբյուրները նշում են 1446 թ., իսկ այդ տարեթվի տակ կատարված եղելություններից Բիդլիսին ամենակարևորն է համարում Շահռուխի արշավանքը Խորասանից դեպի Իրաք և Ֆարս, որտեղ նա պետք է պատժեր այնտեղի ապստամբ գահակալին, կարելի է ենթադրել, որ խոսքը հենց այդ արշավանքի մասին է, առավել ևս, որ Բիդլիսին շարադրանքը այդ արշավանքի մասին վերջացնում է Շահռուխի մահով 850 (1446—1447) թ.։ «Այս թվականին Միրզա Շահրուխն, կամենալով պատժել անհնազանդության դրոշ պարզած Միրզա Սուլթան Մուհամմադին, Խորասանից գնաց դեպի Իրաղի թագավորության բնակատեղն և Փարս ... Միրզա Շահրուխն Իրաղում և Փարսում կարգ հաստատեց և վերադարձավ Հռէ.։ Ջու-լ-հիջջայի 25-ին Ֆաշայուրն բնակավայրում Հռէի մոտ

նրա առաքելքը սկսեց ցավել, ապա ցավերը սաստկացան և նույն պահին [Միրզա Շահրուհն] հրաժեշտ տվեց այս անցավոր աշխարհին և մեկնեց հավերժության աշխարհ...» (տե՛ս Бидлисе, *նշված աշխ., էջ 7)։ Ամիրաս Երզնկացին և Երուսաղեմի ժամանակագրությունը այս տեղեկությունը չեն հաղորդում։*

545 Հմմտ. Սամուել Անեցի, *էջ 175։*

546 Հմմտ. ՄԺ, 1, էջ 163, (ծան. 1) 319, 2, էջ 265։ Այս Չիլթաղը հանդիպում է նաև մի այլ վկայության մեջ. «ՋԻԲ (1473) թվին նկն ի վերայ Չիլթաղին և մատաւրծուն ժախըստական եղև» (նույն տեղում, 1, էջ 143)։ Ղ. Ալիշանը այդ անվան կապակցությամբ գրում է. «Յատուկ անուն է ցեղի՝ թէ տապատակող զօրք նշանակել չգիտեմ» («Հայապատում», էջ 599, ծան. 1)։

547 Հմմտ. «ՋԺԶ (1467) Հասան բէկն գնաց վրաց տուն գնացուց» (ՄԺ, 2, էջ 515)։ Նախադասությունը անավարտ է թվում։ Հասան բէկի (Ուզուն-Հասան Ակ-կոյունլու) դեմ Վրաստան կատարած արշավանքի մասին մեր աղբյուրները հետևյալն են հաղորդում. «ՋԻՆ (1476) թվին Հասան պէկն վրաց տուն գնաց և բաղում գերիս արար, բուռվ կին (60.000)» (ՄԺ, 1, էջ 143), «[ՈՒԾ]ՀԶ (1476) թին Հասան բէկին գնաց գվրաստուն, թալանէց ու անթիւ անձինք կոտորէց և գերի արար» (նույն տեղում, էջ 194)։ ՋԱ թվից մինչև ՋԼԱ թիվը ներառյալ բոլոր տեղեկությունները փոխառված են Ամիրաս Երզնկացու ժամանակագրությունից (տե՛ս ձեռ. № 10200, էջ 386ա—386բ), բացառություն է կազմում նշված նախադասությունը, որը ներմուծելիս Առաքելն ընդօրինակել է երևի ոչ լրիվ։

548 Մանրամասնությունները տե՛ս Հ. Մանանդյան և Հր. Աճառյան, Հայոց նոր վկաններ, Վաղարշապատ, 1903, էջ 386—412։

549 Խոսքը XV դ. հայ նշանավոր հասարակական գործիչ, բանաստեղծ և նկարիչ Մկրտիչ Նաղաշի և նրա ստեղծագործությունների մասին է (տե՛ս Մ. Ջամշյան, Պատմութիւն հայոց, հ. Գ, էջ 474, 483—84, նաև «Մկրտիչ Նաղաշ», աշխատաս. Է. Խոնդկարյանի, Երևան, 1965)։

550 Հմմտ. Սամուել Անեցի, *էջ 175։*

551 Հմմտ. ՄԺ, 2, էջ 264։

552 Ընագրում ամենուրիք եղել է «Թուին ՋԼԲ Աղուր բէկն... բիայ տաղն էառ». վերականգնել ենք ըստ ՄԺ, 2, էջ 515։

553 Թյուրիմացարար այստեղ երկու անգամ կրկնվում է նույն տեղեկությունը, ըստ որում՝ առաջին դեպքում նախադասությունը մեզ հասել է բաց թողած բառերով։ Ժամանակագրական մանր հատվածներում կան հետևյալ վկայությունները.

«ՋԼԲ (1483) Յաղուբ բէկն շրխ Հայտաղն առաւ»

«ՋԼԲ (1490) Նաղուբ բէկն մնաւ Սունդարն կանգնեցաւ» ՄԺ, 2, էջ 515)։

Հատվածը ամբողջովին, միայն մի բացառությամբ և աննշան շեղումներով, ընդօրինակված է Առաքելի երկում։ Մեր կարծիքով, ընդօրինակելու ժամանակ պատմիչը սխալմամբ արտագրել է առաջին նախադասությունը երկու անգամ (կամ գուցե երկրորդ անգամ նախադասությունը ընդօրինակված է մեկ ուրիշ աղբյուրից)։ Նկատելով սխալը, հեղինակը ջնջել է առաջին նախադասությունը, որը գրիչները հետագայում վերականգնել են սխալներով և բաց տեղերով։ Բոլոր դեպքերում՝ վերը բերած նախադասություններին Առաքելի ժամանակագրության մեջ համապատասխանում են հետևյալ վկայությունները.

«Թվին ՋԼԲ. Աղուր բէկն ... բիայ տաղն էառ.

Թվին ՋԼԴ Նաղուբ բէկն Շէխ Հայդարն էառ.

Թվին ՋԼԲ Նաղուբ բէկն մնաւ, Սունդարն կանգնեցաւ» (էջ 629)։ Հետաքրքրական է, որ Առաքելի հաջորդ տեղեկությունն էլ փոխառված է նույն հատվածից (տե՛ս ստորև ծան. 554)։ Թվում է, որ սխալված չենք լինի, եթե Առաքելի բնագրում պահպանված անհասկանալի բառերը ընթեռնենք որպես շրխ (կամ շխ—տես Շեռաֆի—«Գիրք պատմութեանց», էջ 584) և Հայտաղն (ինչպես պահպանվել է մեզ հետաքրքրող հատվածում) բառերի աղճատված ձևը։ Ուստի, տեղեկությունը կարելի է կարդալ այսպես. «Թուին ՋԼԲ [3]աղուբ բէկն [2]շրխ [2]Հայտաղն էառ»։ Ըստ որում «[3]աղուբ» բառը ժամանակին կարող էր գրված լինել նաև Աղուբ, քանի որ աղբյուրները պահպանել են նաև այս ձևը (տե՛ս ՄԺ, 1, էջ 392)։ Նկատի ունենալով, որ ՕՋ գլխում կան այնպիսի դեպքեր, երբ նույն տեղեկությունը կրկնվում է տարբեր ձևակերպմամբ միևնույն կամ տարբեր տարեթվերի տակ (տե՛ս էջ 628, նաև այստեղ ծան. 536 և 543) և այս հանդամանքը գալիս է ապացուցելու, որ Առաքելի ժամանակագրության մեջ հասած բնագիրը վերջնականապես ավարտված գործ չի եղել, այն

լրացուցիչ աշխատանքի և մշակման կարիք է ունենալ, մենք բառանկյունի փակագծերում լրացնելով բացակայող բառերը, այդ տեղեկությունները ընդունում ենք փակագծում:

554 Համմ. «Ջկի (1490) նաղարա բկկն մնոռ Սուլթան կանկնեցօ» (Մժ, 2, էջ 515), «Ջկ (1491) նաղարա փաթշահ մնռաւ ի մէջ Ամնաան և Սուիի խալիլն թագաւորեցոյց պ[պայ]սանդուրն» (Մժ, 1, էջ 144): 1490 թ. Յակուբի մահից հետո Ակ-կոյունլու ցեղի գահակալների ամրողջ անցավ Բայսոնղուրին (1490—1493): Մանրամասն տե՛ս Бидлиси, նշված աշխ., էջ 141; И. Петрушевский, Государства Азербайджана в XV в., стр. 176:

555 Առաքել Դավրիժեցու բնագրում պահպանվել էր հետևյալը. «Թուին ՋԽՀ. Սպահան կանկնեցաւ և յետ նորա Ալվանդն»: «Սպահան» բառը յուրիմացաբար գրավել է «Հռոստամ» բառի տեղը: Բազմիցս վկայակոչված ժամանակագրական մանր հատվածներում («ՋԽՀ (1499) Հռոստամն կանկ[ն]եցաւ և յետ նորա Ալվանդն 2, էջ 515) ճիշտ ձևով է պահպանվել անունը (բանի որ Ակ-կոյունլուների գահը Բայսոնղուրից հետո անցել էր Ռուստամին (1493—1497), որից հետո՝ Ալվանդ Փադշահին (1498—1504): (Տե՛ս К. Э. Босворт, Мусульманские династии, стр. 293, Бидлиси, նշված աշխ., էջ 141—143; И. П. Петрушевский, Государства Азербайджана в XV в., стр. 175—179).

556 Բիլիսին Հիջրիի 907 թվի տակ (1501—1502) հաղորդում է. «Ձմռանը շահ Իսմայիլը գրավից Շիրվանի մարզերի մի մասը, ձմեռից Մահմուդաբադում և այնտեղից մեկնեց գնալ Նախիջևան՝ պատերազմելու Ալվանդ-բեկ բ. Յուսուֆ-բեկ բ. Հասան-բեկի դեմ: Հակառակորդները հանդիպեցին Շարուրում: Ալվանդ-բեկը և թուրքմեն էմիրները..., ինչպես նաև 8000 [զինվորներ] սպանվեցին: Այնտեղից շահ Իսմայիլը մեկնեց Ուրրիզ մայրաքաղաքը և իր փառավոր անվամբ գարդարեց հուշքան և կարած դինարը» (Бидлиси, стр. 146):

557 Համմ. Մժ, 2, էջ 266:

558 Վ. Ս. Հակոբյանի հրատարակած երիհատար ժողովածուում ՋԿԴ (Լբբևմն ՋԿԴ) տարեթվի նկրա բազմիցս տեղեկություններ են հաղորդվում հենց այս դեպքերի մասին. այն է՝ սուլթան Սելիմի (1512—1520) և շահ Իսմայիլի (1501—1524) զորքերի միջև տեղի ունեցած Ջալդրանի ճակատամարտը (տե՛ս 1, էջ 144, 169, 321, 392, 2, էջ 355, 515): Ժամանակագրությունները վկայում են. «Ի թվին ՋԿԴ (1515) եկաւ սուլտան Սելիմն ի վերայ Սոֆուն բազում զաւրաւք և էառ գնաց, որ ասէն Ջալտրանի կռիւ» (1, էջ 156), «Ի թվին ՋԿԴ (1515) եկաւ սուլտան Սելիմն...» (1, էջ 169), «ՋԿԴ (1515) Սուլթան Սելիմն եկ ի վերայ Սօֆուն...» (1, էջ 321), «ՋԿԴ (1514) Սելիմն կռնից դշահն» (1, էջ 392): Այս բոլոր վկայությունները ակնարկում են նույն դեպքը (Ջալդրանի ճակատամարտը) և նշում են սուլթան Սելիմի անունը: XVI դ. Անանուն ժամանակագրությունը (1, էջ 144) արձանագրում է. «ՋԿԴ (1514) թվին [փադ]շէն գօրս շահին կոտորեաց և գարձեալ բագաւորեաց շահն»: Դժվար չէ նկատել այս վերջին վկայության և Առաքելի մոտ պահպանված նախադասության մեջ եղած ընդհանրություններ: Երկու դեպքում էլ նախադասության վերջին մասը (բագաւորեաց շահն) նույնն է: Նույնն են նաև տարեթիվը (ՋԿԴ) և գործողությունը (գօրս շահին կոտորեաց—շահի հնձելն կոտորեաց): Տարբեր են նախադասությունների ենթակաները՝ (փադ)շէն և Սալիշմէն: Թերևս Առաքելի աղբյուրում եղել է «Սալիմ փաղշահ», որը սխալմամբ արտագրվել է որպես «Սալիմշահ» և ապա դարձել է «Սալիշմա»: Ուստի, այս վկայությունը վերաբերում է նույն այն դեպքերին, որոնց մասին խոսվում է հետևյալ նախադասություններում ՋԿԴ (1515) թվի տակ: Ջալդրանի ճակատամարտը տեղի է ունեցել հիջրիի 920 թ. ռաջաբ ամսի 1-ին (ըստ Բրոսսեի՝ 2-ին, տե՛ս «Livre d'Histoires...», էջ 573, ծան. 2), այսինքն 1514 թ. օգոստոսի 22-ին (տե՛ս И. П. Петрушевский, Азербайджан в XVI—XVII вв., стр. 239—242, Бидлиси, նշված աշխ., էջ 163; К. Э. Босворт, Мусульманские династии, стр. 188—223): Ֆրանսիացի հայագետը ժամանակին նկատել է «Սալիշմայի» հետ կապված թյուրիմացությունը և նշել այն իր թարգմանության մեջ (տե՛ս „Livre d'Histoire..." էջ 573, ծան. 1):

559 Հայկական աղբյուրները պահպանել են բազմաթիվ վկայություններ Հայաստանում բռնի կերպով իրագործվող մանկահավաքների մասին: Այդ հարցին է նվիրված Մ. Կ. Ջուլալյանի «Դևշիրմե»-ն (մանկահավաքը) Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների» հոդվածը, «ՊԲՀ», 1959, № 2—3, տե՛ս նաև М. К. Зулалян, Армения в первой половине XVI в., 1971, стр. 47—51.

560 Համմ. Մժ, 1, էջ 169:

561 Տե՛ս Սամուել Անեցի, էջ 176, Գրիգոր Պարանաղցի, Ժամանակագրութիւն, էջ 5, Մժ,

1, էջ 169, 2, էջ 266 տողատակի ծան.։ Աղբյուրներում երբեմն նշվում է նաև տեղը՝ ի Սևվաստ։

562 Մ. Բրոսսեն, վկայակոչելով Համմերին, տողատակում նշում է (էջ 573), որ տեղեկությունը վերաբերում է Եղիպատոսի փաշա Ահմեդի 1523 թ. ապստամբությանը, երբ վերջինս իրեն սուլթան էր հռչակել (Համմ. Վ. Այվազովսկի, Պատմություն Օսմանեան պետութեան, հ. Ա, էջ 361—363)։ Այլ աղբյուրներում Աբմաջայ խալիֆայի մասին տեղեկությունները գրանցված են Ջէլ տարեթվի ներքո (տե՛ս Մժ, 1, էջ 169, 2, էջ 266)։ Նույն տարեթիվն է տալիս Ամիրաս Երզնկացին, բեև տեղեկությունը բառացիորեն համընկնում է նշված տեղեկության հետ Մանր ժամանակագրություններից մեկը՝ XVI դ. Անանուն Սեբաստացու երկը, վկայում է. «Ի թվին ՋՀէ (1528) եկաւ Սոֆին, զոր Աբմաճայ խալիֆայ ասէին, Սեաստու փաշան դնաց ի վրան կոտրեցաւ և անկաւ ի Սեաս[տ], և մեռաւ, և չհասոյ քարդն կոտորից»։ Թերևս այս վկայությունը ժամանակակից հեղինակի երկրում տեղի ունեցած անցքերի՝ այն է Շահ Թահմասպի (1524—1576) գահակալության առաջին տարիներին դժլրաշ ցեղերի միջև ծավալված պայքարի առանձին մի դեպքի արձագանք է։ Այս պայքարի մասին տե՛ս Бидлиси, նշված աշխ. էջ 172—177, И. П. Петрушевский Азербайджан в XVI—XVII вв., стр. 263—264

563 Շահ Իսմայիլ Ա-ի մահը և Շահ Թահմասպի գահ բարձրանալը տեղի է ունեցել հիջրեթի 930—մեր թվականության 1524 թ.։ Տե՛ս Бидлиси, *նշված աշխ., էջ 170—171, К. Э Босворт,* Мусульманские династии стр. 226:

564 Այս դեպքերը դրեթե նույն բառերով հիշատակվում են Մանր ժամանակագրություններում (1, էջ 169, 2, էջ 266, 355, 393), որոնցից մեկը պարունակում է նաև ինչ-որ մանրամասնություններ. «Ի թվին ՋՀՋ (1527) գնաց Հուսէին փաշան ի Տոռիլ և ի Կուկան ի Հոռոմին վերայ, որ պլուխ էին քաշել, շատ ջարդից և գերեց ԺՐՌ (12.000) հոգի» (1, էջ 169)։

*565 Համմ. Մ. Չամչյանի մոտ. «Ի նմին ամի՝ կամ ըստ այլոց ի թուին ՋՀԲ կատարեցաւ հրով ի Սեբաստիա արևգայ ոմն Հայրապետ անուն՝ ի վանացն Տևոյ» (հ. Գ, էջ 516)։ Ամենուրեք (տե՛ս Մժ, 1, էջ 170, 2, էջ 266, 284, 382, «Դիւան հայոց պատմութեան», գ. ժ, Թիֆլիս, 1912, էջ 62, 499) այս տեղեկությունը կապված է Սեբաստիայի «Տևու (Տևոյ, Տևոցու, Տևոցայ) վանաց» հետ։ Բրուսաղեմի ժամանակագրությունը (էջ 274) հաղորդում է. «ՌՇԼԵ—ՋՀԲ—Յայսմ ամի այրեցին զՀարապետ արիզայն ի Սառուցու (փխ. «Տևոցու») վանացն ի Սեբաստիայ»)։ Հետևելով Մ. Բրոսսեին („En 982 (ven. 8 nov.) 1532, Abegha, supérieur du convent de [Tha]thev est brûle". Livre d'Histoire p.579) *Առաքել Դավրիժեցու երկի առաջերն թարգմանության մեջ մենք կրկնել ենք սխալը՝ վերագրելով Սեբաստիայում կատարված դեպքերը Սյունիքին և Հայրապետ անձնանունը կարդալով երբեմն «վանահայր»* (*Տե՛ս* Аракел Даврижеци, Книга историй, стр. 484).

566 Համմ. Ս. Անեցի, էջ 176, Մ. Չամչյան, հ. Գ, էջ 516, Մժ, 2, էջ 266, 284, 382։ Քիչ ավելի մանրամասն տեղեկություններ է հայտնում Անանուն Սեբաստացու ժամանակագրությունը (Մժ, 1, էջ 170)։

567 Համմ. Вахушти, стр. *35—36։ Մժ, 1, էջ 144, 171, 2, էջ 427,* Бидлиси, стр. *189.*

568 Խոսքը Հնդկաստանի կայսր Բաբուրի որդի Նասիր ադ-դին Խումայունի (1530—1540, 1555—1556) մասին է, որը Աֆղանստանի Շիր շահ Սուրի դիմադրության պատճառով ստիպված էր փախչել Սինդ, հետագայում Աֆղանստան (տե՛ս К. Э. Босворт, Мусульманские династии, стр. *269)։ Միայն 15 տարի անց նա կարողացավ վերադառնալ և վերահաստատվել Դելհիում և Ագրայում, ինչպես հայտնում է Բիդլիսին՝ շահ Թահմասպի օգնությամբ (տե՛ս նշված աշխ., էջ 192)։ Այս դեպքերը հիշատակում են նաև Մանր ժամանակագրությունները (1, էջ 144, 2, էջ 427, 435, 443. վերջինը պարունակում է «կարգ թագաւորաց Հընդկաց»)։*

569 Խոսքը շահ Թահմասպի և նրա եղբոր՝ Ալիհաս միրզայի պայքարի մասին է (Մանրամասն տե՛ս Զաքարիա Քանաքեռցի, *գ. Ա, գլ. 7, Մժ, 1, էջ 136, 157, 171 և այլն,* Մ. Չամչյան, *հ. Գ, էջ 513,* И. П. Петрушевский, Азербайджан в XVI—XVII вв., стр. *266—267;* Бидлиси, *նշված աշխ., էջ 192—195)։ Բրուսաղեմի ժամանակագրությունը ՋՂՒ տարեթվի ներքո հաղորդում է (էջ 275—276) «Յայսմ ամի Ալիասս Իմիրզան, շահ Թահմազին եղբայրն, որ փախեաւ ի նմանէ, ընդ Տէմիր-զափին անցաւ ընդ չերքէզու երկրէն, եւ ի թաթարի երկրէն, ևկն ի Կաֆայ, եւ նաւով էանց յՊստամպոլ եւ եղեւ ծառայ թագաւորին»։ Իսկ քիչ ստորև ՋՂէ տարեթվի տակ բերում է Առաքելի մոտ առկա տեղեկությունը, բայց ավելի ընդարձակ հաղորդմամբ։*

570 Տե՛ս և հմմտ. Ներսեսյանի ժամանակագրություն, էջ 276, ՄԺ, 1, էջ 136, 144, 145 և այլն։

571 Նույն տեղեկությունները՝ աննշան շեղումներով պարունակում են Ամիրաս Երզնկացու և Դրիդոր Կամախեցու խմբագրած ժամանակագրություններըւ Սամուէլ Անեցու շարունակողը ավելի հակիրճ է պրանցում դեպքերը. «ՋՂԲ ՅԱրզրում զՀ աղատսորդիս ի միում գիշերի կոտորեցին» (տե՛ս էջ 176)։ Ժամանակագրական մանր հասվածներում (տե՛ս ՄԺ, 2, էջ 518, 531) մենք նորից հանդիպում ենք նույն դեպքերին։ Այսպես. «Թուին ՌԼԲ (1590) էր Արզրում քաղաք այլազգի որդիքն ի պատիւ կուչեին զԲրիստոնեայսը և ի մէկ գիշեր հինգ հոգի ջարդեցին. և մեծ սուգ եղև քաղաքին, քանզի զԲորդումու ձորերն տիրեցին, և զամենայն վրաց տուն ընդ ձեռամբ Տաճկաց սրարին» (ՄԺ, 2, էջ 518) և այդ նույն դեպքերի նկարագրությունը մեկ այլ ժամանակագրության մեջ ՋՂԲ (1550) թվի ներքո. «Թվին Հայոց ՋՂԲ (1550) ղԱրզրում քաղաքն ազգի որդիքն պատիւ կանչեցին խարկանոք, մէկ գիշերն Հ (70) ոգի ջարդեցին, մեծ սուգ եղև, զԲորդումու ձորերն տիրեցին և զամենայն վրաստուն ձեռամբ Տաճկաց սրարին» (ՄԺ, 2, էջ 531)։

Բնն երկու տարբեր աղբյուրներում այդ տեղեկությունը բերվում է տարբեր տարեթվերի ներքո և դրանից բացի կան նաև այլ տարբերություններ, սակայն, քանի որ ընդհանրությունները ավելի շատ են, թվում է, որ խոսքը միևնույն տեղեկության մասին է։ Իսկ 40 տարվա տարբերությունը և մյուս շեղումները կարող են գրչական սխալի հետևանք լինել։

572 Հմմտ. ՄԺ, 1, էջ 144, 145։

573 Հմմտ. «Թվին ՌՀ (1557) Կեղեցի Ղուկաս վարդապետն զՀայոց տօմարն ի յոտք հանեց» (ՄԺ, 2, էջ 267. ընդգծումը մերն է—Լ. Ս.)։ Նույնն է հայտնում Ամիրաս Երզնկացու ժամանակագրությունը (տե՛ս էջ 386բ)։ Այս աղբյուրներում, ըստ երևույթին, սխալմամբ խոսվում է Հայոց տոմարի մասին, սակայն իրականում Ղուկաս Կեղեցու չափածո երկը նվիրված է հենց Հռովմայեցոց տոմարին (այդ մասին տե՛ս Ա. Աբրահամյան, Ղուկաս Կեղեցու չափածո տոմարը, «Էջմիածին», 1952, հունիս, էջ 57—63, հմմտ. Սամուէլ Անեցի. էջ 176, «Բանբեր Մատենադարանի», № 9, էջ 278)։

574 Այս դեպքերը նկարագրում է նաև Բիթլիսին (տե՛ս էջ 203—208)։ Մանր ժամանակագրությունները բազմիցս անդրադառնում են նրանց (տե՛ս ՄԺ, 1, էջ 145—146, 172, 323, 2, էջ 267, 355)։

575 Սույն տեղեկությունը կրկնում է նախորդի բովանդակությունը։ Մանր ժամանակագրություններն բազմաթիվ վկայություններ են պարունակում այս դեպքերի մասին.

«ՌՁ (1557) ... Խոնդքարին տղայն սուլթան Պայազիթն սպանաւ» (1, էջ 145)։

«ՌՀ (1559) թվին սուլթանն Պայազիթն երեկ ի շահ Թահմազի մօտն»

«ՌԺ (1561) թվին Խոնդկարն մարդ յղղարկեց Պայազիթն սպանի նեռաւ» (ՄԺ, 1, էջ 145—146)։

«Ի թվին ՌՀ (1559) Խոնդքարին որդիքն կռվեցան ի Կոնիայ. և Սելիմն կոտրեց զՊայազիտն և փախուց մինչ ի Բասէն, և նա գնաց ի շահ Թահմազն և անտ սպանել տւին Գ (3) որդովն» (1, էջ 172)։

«ՌՀ (1559) ... [Սուլթան Պայազիտն] դարձեալ գնաց ի Կոնիայ ի վերայ եղբօրն և յաղթեցաւ ի նմանէ և փախստական գնաց ի Ղզլպաշն և անտ մնաւ հրամանաւ հօրն իւրոյ՝ սուլթան Սուլէյմանին» (1, էջ 323)։

«Թվին ՌՁ (1557) որդիք Խոնթքարին կռուեցան ի Ղոնիայ, Սէլիմն զՊայազիտն փախուց մինչև յԱրզրում, և նա գնաց ի շահն Գ (3) որդովն անդ սպանին գնաց» (2, էջ 267)։ Այս վերջինս բառացիորեն համընկնում է Առաքել վկայության հետ։

«Թվին ՌՀ (1559) որդիք Խոնդքարին [կռվեցան] ընդ միմեանս ի Կոնիայ։ Սէլիմն զԲայազիտ փախուց մինչև յԱրզրում, և նա գնաց ի շահն Գ (3) որդովն անդ սպանին» (2, էջ 355)։ Դրեթե այս բոլոր մեջբերած աղբյուրներից Առաքել Դավրիժեցին օգտվել է այս կամ այն կատարկությամբ։

Խոսքն այստեղ Խոնդքար Սուլէյմանի (1520—1566) որդի Բայազիդի մասին է, որը գահակալական վեճերի հետևանքով լքել էր Ղոնիան և գնացել շահ Թահմասպի մոտ հիջրեթի 966 (1558—1559) թվին տե՛ս Բաձլուսւ, նշված աշխ., էջ 203)։ Բայազիդի և նրա որդիների սպանությունը, ըստ Բիթլիսիի, տեղի է ունեցել հիջրեթի 969 (1561—1562) թվին։ Ամենայն հավանականությամբ Առաքել Դավրիժեցին՝ տարբեր աղբյուրներից քաղելով իր տեղեկությունները, չի նկատել, որ նրանք փաստորեն նույն դեպքերն են արտացոլում (տարեթվի և մի քանի այլ աննշան տարբերությամբ)։

576 Համմ. Երուսաղեմի ժամանակագրություն, էջ 278։

577 Տե՛ս Вахушти, стр. 39—41։

578 Համմ. ՄԺ, 2, էջ 267։ Մ. Բրոսսեն ֆրանսերեն հրատարակության ծանոթագրություններում գրում է. «une fill d'Ezencan se fit prostituée...» (էջ 575)։ Թարգմանությունը սխալ է։ Խոսքը, անկասկած «պողավոր աղջկա» մասին է։ Նույն ժամանակագրությունները հաճախակի հաղորդում են Երկզլխանի երեխայի ծննդյան և այլ «հրաշքների» մասին (տե՛ս ՄԺ, 2, էջ 283)։

579 Խոսքը Օսմանյան Թուրքիայի կողմից Կիպրոս կղզու գրավման մասին է։ (Մանրամասն տե՛ս Ֆաբրիել Այվազովսկի, նշված աշխ., հ. Ա, էջ 473—480)։

580 Համմ. ՄԺ, 1, էջ 145։ Այս ժամանակագրությունը նշում է ՈՒԴ թիվը։ Իրականում Շահ Թահմասպը գահակալել է՝ ըստ Կ. Է. Բոսվորթի, 1524—1576 թթ. (մահացել է հիջրեի 984 թ.)։

581 Շահ Թահմասպի մահից հետո անմիջապես գահի շուրջը սկսվում է պայքար, որը պսակվում է նրա որդու՝ Կահկահ ամրոցում տառապող Իսմայիլ Միրզայի (1576—1578) հաղթանակով (տե՛ս Бидлиси, стр. 228—232)։

582 Ըստ Կ. Է. Բոսվորթի Սելիմ Բ-ն գահակալել է 1566—1574 թթ.։

583 Համմ. Ամիրաս Երզնկացու մոտ. «Թվին ՈՒԵ ադեռ ասախ ելաւ և ահագին շարժ եղև յերընկան ի նոյեմբերի Ե. ի մէջ գիշերի մարդ ի շէն չի կարաց պահիլ Դ ամիս և ապա դադարեցաւ» (ձեռ. № 10200, էջ 387ա)։

584 Համմ. ՄԺ, 1, էջ 145, 146։ Տե՛ս նաև այստեղ, ծան ?։

585 Շահ Թահմասպի մահը իրականում տեղի է ունեցել 1576 թ. (տե՛ս այստեղ, ծան. 580)։ Ինչ վերաբերում է նրա մահվան հանգամանքներին՝ Առաքելի մոտ նշված մանրամասնությունները հաճախակի են հայտնվում հայկական աղբյուրներում (տե՛ս Զաքարիա Սարկաւագ, Պատմագրութիւն, հ. Ա, գլ. 7, ՄԺ, 1, էջ 302, 323, 2, էջ 515)։ Սակայն արդեն Լեոն (տե՛ս Երկերի ժողովածու, Հայոց պատմություն, հ. 3, գ. 1, Երևան, 1969, էջ 193—194) այդ տեղեկություններին չի անդրադառնում և հաղորդում է մանրամասնություններ, որոնք հիմնականում համընկնում են Բիթլիսի վկայությունների հետ (տե՛ս Бидлиси, стр. 228—230)։

586 Խոսքը շահ Թահմասպի որդիներից մեկի՝ սուլթան Հայդար-Միրզայի մասին է։ Սա հոր մահվան դիշերը իր մերձավորների՝ վրաց իշխաններ Ալի-խան Դուրջիի և Ջալ Դուրջիի աջակցությամբ իրեն շահ հռչակեց, սակայն ստիպված էր փախչել պալատից և սպանվեց հակառակորդների կողմից (Տե՛ս Бидлиси, стр. 229)։

587 Հեղինակը նկատի ունի ապագա շահ Իսմայիլ Բ-ին (1576—1578)։

588 Տեղեկությունը ճիշտ չէ։ Ամիր Համզա միրզան Իսմայիլ Բ-ի հաջորդ՝ շահ Մուհամմադ Խուդաբանդայի (1578—1587) ավագ որդին էր։ Պատանի թագաժառանգը ակտիվ մասնակցում էր երկրի քաղաքական և ռազմական կյանքին և մեծ դեր էր կատարում թուլամորի և պետական գործունեության անկարող կույր հոր օրոք։ Հենց այդ պատճառով նա արժանացել էր զղջաշների կենսառնախանձ ավագանու ատելությանը, որի հետևանքով սպանվեց 1586 թ. նոյեմբերի 4-ին։ Ամիր-Համզա միրզայի մասին տե՛ս Հովհաննես Ծարեցու մոտ («Դիրք պատմութեանց», էջ 613, նաև И. П. Петрушевский, Азербайджан в XVI—XVII вв. стр 272—273; ավելի մանրամասն՝ Бидлиси, стр. 247—254)։

589 Այս շահի մասին՝ «Դիրք պատմութեանց», գլ. ՆԵ, էջ 607։

590 Համմ. «Թվին ՈՒԸ զերևան զերկրացին» (ձեռ. № 10200, էջ 387ա)։ «Ի թվին ՈՒԸ (1579) ...զերևան քաղաք զերկին ԺԸ (18) զկով և զրուցին զկին և զոչխայ յամենայն աշխարհ» (ՄԺ, 1, էջ 172)։

591 Համմ. «Ալա փաշէն, որ Երևան զերկոցայց, թիւն ՈՒԽ (1578) էր» (ՄԺ, 1, էջ 145)։ «Թուին ՈՒՁ (1577) Խարա Մուստաֆա փաշան զնոյց զերկոցայց զերևան. և ՈՒԽ (1027) զերիք նկին ամենայն աշխարհ. և Ըստամբոլ շատ զերիք նկին հայէր՝ այր և կին» (ՄԺ,1, էջ 272)։ Հովհաննես Ծարեցու ժամանակագրությունը հայտնում է. «...Եւ Լզնալ ամն զօրագլուխ Լալայ կոչեցեալ բազում զօրօք Նկն և Նհաս յերկիրն Արարատեան, և զերեայց ընդ Հայ և ընդ Տաճիկ՝ Թուալ կիր ... և ի միւս ամին դարձեալ շարժեալ խաղայց ի վերայ Վրաց...» (ընդգծումը մերն է—Լ. Ս.) (տե՛ս «Դիրք պատմութեանց», գլ. ՆԵ, էջ 607)։ Մի այլ աղբյուր (տե՛ս Ե. Լալայան, Յուցակ հայերեն ձեռագրաց վաստուրականի, Թիֆլիս, 1915, էջ 9—10)՝ ժամանակակից հիշատակարանը, պատմում է. «Խանդքարն առաքեաց զծառայն իւր զԼալա փաշէն ծանր

գարօք և ԶՃԻ հնձելուք և էր յայնժամ թուին հայոց ՌԻԷ, որ մահն երկիր Հայոց և վրաց և Պարսից, Ափհազից և Իլամացոց (!) ...մինչ պի քաղաքին Երևանա և երկրէն Արարատեան և ի քաղաքէն Նախչուանա և այլ գաւառաց ասելի քան զքառասուն Ի անձինք գերեցան...»։ Այս տեղեկություններում հստակություն չկա, և դժվար է կռահել, թե Առաքելն արդյոք նույն դեպքերի մասին չի՞ հաղորդում, քան իր նովորության, տեղեկությունները քաղելով տարբեր աղբյուրներից և հրամցնելով որպես տարբեր դեպքերի գրառում։ Կամ գուցե 1578—1580 թթ. Երևանը թուրք-պարսկական կռիվների ժամանակ ձեռքից ձեռք անցնելով՝ իսկապես երկու անգամ գրավվել է Լալա փաշայի զինավորած օսմանյան զորքերի կողմից։

Հստակություն չկա և այդ ժամանակաշրջանին նվիրված գրականության մեջ (տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հ. 3, գ. 1, էջ 197—198)։ Հենվելով Իսքանդար Մունշու և Վ. Ա. Հակոբյանի աշխատասիրությամբ լույս ընծայած Մանր ժամանակագրությունների տվյալների վրա, Հ. Դ. Փափազյանը նշում է, որ 1578 թ. գարնանը Լալա Մուստաֆա փաշան 100 հազարանոց բանակով շարժվում է դեպի Վրաստան, Ջելալըի դաշտում նրան դիմադրություն է ցույց տալիս և պարտվում Երևանի բեկլարբեկի Մուհամմադի-խան Թոխմախը։ Հաջորդ տարին (այսինքն՝ 1579 թ.) Երևանի վրա Մուստաֆա փաշան ուղարկում է 40 հազարանոց մի բանակ Էրզրումի Հասանին փաշայի հրամանատարությամբ, որը գրավում է Երևանը, սակայն շատ շուտ (միայն մեկ օր են մնում օսմանցիները Երևանում) նրանք ստիպված են լինում թողնել քաղաքը։ Չնայած արագ նահանջին, օսմանցիները կողոպուտի մատնեցին Երևանը և մերձակա 18 գյուղերը (համմտ. այստեղ, ծան. 590, Լեո, Հայոց պատմություն, հ. 3, գ. 1, էջ 491, ծան. 41)։

592 Հեղինակը նկատի ունի Խորասանում տեղի ունեցած դեպքերը (1581 թ.), երբ այնտեղի ղզլբաշ ամիրաները՝ Մյուրշիդ Խուլի-խան ուստաջլուն և Ալի Ղուլի-խան շամլուն, ապստամբելով Խուդաբանդայի դեմ, շահ Հռչակեցին տասնամյա Աբբաս-Միրզային, ապագա շահ Աբբաս մեծին (տե՛ս Библиот, стр. 238).

593 Համմտ. «Ի թվին ՌԻԲ (1580) ... դեկտեմբերի ԺԸ (18), որ է աւր Ամենամատին, եկաւ ի Թոխաթ հրաման ի սուլտան Մուրատէն ի մեր մեղացն. և առին զալսֆայ գօտին ի գլխընուս և գտակ մորթի դնել ամին» (ՄԺ, 1, էջ 159, 2, էջ 516)։ Նույն դեպքերը գրանցված են նաև ՌԼ տարեթվի ներքո (տե՛ս ՄԺ, 1, էջ 172, 2, էջ 267, 394, 518)։ Ավելին, աղբյուրները մանրամասնություններ են հայտնում ոչ միայն օրենքի, այլև այն շրջանցելու միջոցների մասին. «...բայց ի տեղիս տեղիս կաշառս նուաւն և առին զհրաման դնել զփակիդ...» (տե՛ս ՄԺ, 2, էջ 516)։

594 Համմտ. «...Սուլթան Մուրադ-խանը զորագլուխ նշանակեց երկրորդ վեզիր Ֆարհադ-փաշային։ Ֆարհադ-փաշան... մեկնեց Ստամբուլից... Բուքմաքին քշեց Զոխուր-Սահադից և Երևանում բերդ հիմնեց—նրա [շինության] ժամանակին համապատասխանում է ասար-ի Ֆարհադ [քրոնոգրամման]»։ Իսկ այս քրոնոգրամմայի վերծանությունը տալիս է հիջրեթի 992 (1583) թ. (տե՛ս Библиот, стр. 245).

595 Այս տեղեկությունը պրկին բառացիորեն կարելի է գտնել Ամիրաս Երզնկացու ժամանակագրության մեջ (տե՛ս ՁԼո. № 10200, էջ 387ա, համմտ. նույն տեղում, թ. 382բ), Սամուէլ Անեցու շարունակողի մոտ (էջ 176) և Մանր ժամանակագրություններում (տե՛ս ՄԺ, 2, էջ 268, 284)։

596 Համմտ. ՄԺ, 1, էջ 173, 2, էջ 345, 394։

597 Համմտ. «Փարհատ փաշեն, որ Դանճայ առաւ թիւն ՌԼԸ (1589) էր» (ՄԺ, 1, էջ 145)։ Մի այլ ժամանակագրություն այս տեղեկությունը հաղորդում է հայոց ՌԼՉ տարեթվի ներքո (ՄԺ, 1, էջ 324)։ Ռիթլիսին այս դեպքերը վերագրում է հիջրեթի 995 (1586—87) թվականին (էջ 260), իսկ թուրքական աղբյուրներում կարելի է գտնել նույն դեպքերի մանրամասն նկարագրությունը հիջրեթի 996 (1588) թվականի տակ (տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հ. Բ, Երևան, 1964, էջ 133—135)։

598 Առաքել Դավրիժեցին այստեղ ակնարկում է 1590 թ. Եկեղեաց գավառում տեղի ունեցած դեպքերը, որոնք արտացոլված են նաև Գր. Դարանաղցու երկում։ Պատմելով այդ թվականի հուլիսին արեգակի խավարման մասին, Դարանաղցին շարունակում է. «Եւ այս էր գուշակումն՝ որ ի սոյն ամի յելոն օգոստոսի ամսոյն ազգն Բղդաց զօրաժողով Հղնն, ոչ ի մեծաց երեւելի արանց, այլ յանճշահից՝ ի գողոց եւ յաւազակաց եւ ի ճոլուաց եւ ըռամիկ շինականաց, գնալով ի վերայ Կնկու պարոնին, սպանանելով զնա եւ զտուն նորա աւար հատկանելով, եւ ապա դարձեալ դիմեցին ի վերայ Եկեղեաց գաւառին երգընկոյ եւ շատ վնասա-

կարուիին եւ հրձգուիին արարին, եւ ոչ որ էր իշխան եւ կամ պարոն, որ ընդդէմ գնայր նոցա» (Ընդգծումը մերն է.—Լ. Խ.): Տե՛ս Դե. Դաբանաղցի, Ժամանակագրութիւն, էջ 23, Համմ. Ամիրաս Երզնկացու (ձեռ. № 10200, էջ 387ա) և Երուսաղեմի («Բանբեր Մատենադարանի», № 9, էջ 278) ժամանակագրությունների հետ, որոնք գրեթե անփոփոխ կրկնում են միմյանց։

599 Ըստ երևույթին խոսքը Քյոսեղլու գինակիցներից մեկի՝ Ջալալի Դգիր Օղլի Մուստաֆա բեկի մասին է, որն ազգությամբ քուրդ էր։ «Դիրք պատմութեանց»-ում (էջ 87) Առաքել Դավրիժեցին գրում է. «...սա ևս ընկեր է Քօսօղլուին՝ զոր յղով տեղիս ի մէջ իւր խաղին զսա յիշէ»։ Ավելի մանրամասն տեղեկություններ է հաղորդում Գրիգոր Դարանաղցին. «Թվ. ՌԽ (1591) նախ եւ ոմն քուրդ, որ Դգիր Օղլի ասէին էր սա ի սահմանացն Տիւրիկոյ եւ Կամախոյ, ի գեղջէն՝ որ Տոստալի կոչի, եւ են ամենեքեան զազր և աւազակք։ Ի սոցանէ եւ Դգիր տղան այն և գօրացաւ, որ ահ եւ երկիւղ համբաւոյ նորա տարածեցաւ ընդ երկիր՝ մինչեւ յԸստամբօլ, որ ծանուցին Բագատորին՝ սուլթան Մուրատին, որ ամենայն փաշայից և պարոնացն հրաման զրկեց իւր՝ ինչ հնարիւք որ է՝ բռնել եւ յԸստամբօլ զրկել։ Որ որսացին բազում ժամանակս, մինչև միայն գին ի գօրացն գինն և զբոհիան, եւ ըմբռնեցին ի գիշերի ի տուն կնոջ մի, որ շնութեան ազգաւ էին գնացեալ, և Տիւրիկոյ պարոնն ըմբռնեաց զԴգիր Օղլին և զբոհիան ի միասին և տարաւ յԸստամբօլ... և անդ նոքին ի վերայ ուղտոյ և նաւերեցին հրով տուչորեցին և զբոհիան ի չանկալն հարին և չար մահուամբ սպանին զերկոսեանն և բարձին ի միջոյ» (տե՛ս էջ 32—33)։ Դևոնդ Տոսպեցու ժամանակագրության մեջ Առաքելի նշած տեղեկությունը հասել է հետևյալ ձևով. «ՌԽ (1591) Դգիր օղլին նղև Շավալի Քուրտ ազգաւ» (տե՛ս «Դիւան հայոց պատմութեան», դ. ժ, էջ 502)։

600 Համմ. «Թվին ՌԽԱ (1592) տաճիկքն առին զԽուսաւորիչ նկեղեցին ի Սեաստ և արարին ուրբաթ մզկիթ. և զԱստուածածին տաճարն, որ ի մօտն կայր, քակեցին և ի տեղն միւնարայ շինեցին։ Զգերեզմանքն քակեցին և զոսկրսն ի դուրս լցին և յամենայն տեղ շատ ոտ արարին և ասէին թէ մեր Իւիսն Ռ (1000) լցաւ» (ՄԺ, 1, էջ 173, 2, էջ 268, 518)։

601 Տե՛ս «Դիւան հայոց պատմութեան», դ. ժ, էջ 502։ Երուսաղեմի ժամանակագրությունն էլ է (էջ 278) հաղորդում նույնը՝ կրկնելով, չնչին տարբերությամբ, Առաքելի դրառումը։

602 Սուլթան Մուրադ Գ-ն մահացել է, ըստ Կ. Է. Բոսվորտի, 1595 թ.։

603 Գրիգոր Կամախեցին (ՄԺ, 2, էջ 269) գրում է. «Թվին ՌՂԶ (1597) հարաւ նոպիճին նլաւ Ճալալի»։ Ղարա Յազիջու ապստամբության սկիզբը Առաքել Դավրիժեցին վերը (էջ 86) նշում է ՌԽԷ (1598) թվի ներքոյ։ Նույն տարեթիվն են հաղորդում և այլ աղբյուրներ (ՄԺ, 2, էջ 517)։ Ա. Ս. Տվերիտինովան նշում է, որ Ղարա Յազիջին սկսել է անհնազանդության ցուցաբերել դեռ 1596 թ., իսկ 1599 թ. նրա անունը՝ որպես ապստամբության ղեկավարի՝ արդեն լայնորեն հռչակված էր (տե՛ս նշված աշխ., էջ 54), թվում է, որ Առաքել Դավրիժեցու ժամանակագրական խայտաբղետությունը պատճառ է այն բանի, որ նրա երկի տարբեր մասեր քաղված են տարբեր աղբյուրներից։

604 Տե՛ս ՄԺ, 2, էջ 269։ Համմ. «Թվին ՌԽ (1598) եւ ոմն զօրավար Ներքինի Ջաֆար փաշայ անուն ի յարևելս, նստաւ ի Թարվէզ Գ (3) ամ և տարածեաց զիւոյն դառնութեան իւրոյ յամենայն տեղիս, անմարդաբնակ արար զամենայն. և յետ Գ (3) ամաց բռնբաւ չարն ի միջոյ» (ՄԺ, 2, էջ 356)։

605 Համմ. ՄԺ, 2, էջ 271, 272։ Տե՛ս վ. Հակոբյանի բացատրությունը նույն տեղում, էջ 278, ծան. 54 (տեքստում վրիպակ կա՝ 1698 փոխ 1598)։

606 Տե՛ս ՄԺ, 2, էջ 271, 272։

607 Համմ. ՄԺ, 2, էջ 271, 272. այս երկու աղբյուրները ամանամահը վերագրում են 1595 թ.։ Նույնն է հաստատում նաև Գրիգոր Դարանաղցին (տե՛ս Ժամանակագրութիւն, էջ 24) և վ. Հակոբյանի վկայակոչած ժամանակակցի հիշատակարանը (տե՛ս նույն տեղում, էջ 278, ծան. 55)։

608 Տե՛ս ՄԺ, 2, էջ 271։ Առաքել Դավրիժեցին դևպերի նկարագրումը ընդօրինակել է ականատես գրչից։

609 Պատմիչի օգտագործած աղբյուրը (տե՛ս ՄԺ, 2, էջ 271) Կարա Յազիջու ապստամբության մասին հաղորդում է արձանագրային ոճով հակիրճ տեղեկություն. «Ի թվին ՌԽԸ (1599) չար բռնաւորն, զոր Ղարա Ազիճի կոչիւր, աւիրեաց զՈւռհայ քաղաք ի բնակչացն»։ Այս դրառումը Ամիրաս Երզնկացու և Երուսաղեմի ժամանակագրություններում բացակայում են, իսկ Առաքելի մոտ հանդես է գալիս պատմական տեսակետից չափազանց հետաքրքրիր մանրամասնություններով, որոնք Կարա Յազիջու մասին փաստական տվյալների սակավության պայ-

մաններում լայնորեն օգտագործվում են ջալալիների ապստամբությունը հետազոտողների կողմից (տե՛ս A. C. Тверитинова, նշված աշխ., էջ 53)։

610 Համմ. թուրքական աղբյուրների տեղեկություններ հետ, A. C. Тверитинова, նշված աշխ., էջ 64—65։

611 Վերը Առաքել Դավրիժեցին ևս իր մի ներբո արդեն հաղորդել է. «Գարձաւ ի սոյն ժամին Հասէնն փաշայն ապստամբեցաւ ի Բագաւորէն և կողոպտեաց զբազում տեղիս և ինքնալ պաշարեաց զՆախճաւան, և ի նոյն ամին գնացեալ յՈւրմա միաբանեցաւ ընդ նոսին» (էջ 533)։ Կասկածից վեր է, որ այս երկու դրառումը նույն տեղեկություններն են հաղորդում՝ տարբերվի մեկ տարվա տարբերությամբ, մի բան, որ յուրահատուկ է Առաքելի երքի այս գլխի համար։

612 Տե՛ս «Դիւան հայոց պատմութեան», գ. Ժ, էջ 502, ՄԺ, 2, էջ 284։

613 Ջալալի Ղարաղաշի և նրա ոճրագործությունների մասին մանրամասն տե՛ս Դրիդոր Դարանաղցի, Ժամանակագրութիւն, էջ 41—48։

614 Համմ. ՄԺ, 1, էջ 324։

615 Համմ. ՄԺ. 2, էջ 271։ Մ. Չամչյանը գրում է. «Այլ մինչև էր սիրեալ նմուզակաց ի Հայաստան, մին ի նոցանէ՝ որոյ անուն էր Սաթրճի Լևվենա՝ յաւարի էառ զՍիս քաղաք Կիւլիկիոյ, և կողոպտեաց զկաթուղիկոսարանն, ընդ որ սխրեալ յոյժ Ազարիայ Ջուղայեցւոյ կաթուղիկոսին Սսոյ անկաւ ի հիւանդութիւն և մեռաւ յամի 1601 ՌՁ ի յունիս 2» (հ. Գ, էջ 536)։

616 Նոսքը Բաղդատի բեկլերբեկի Հասան փաշայի մասին է, որին սուլթանի կառավարությունը ներքար (պլնավոր հրամանատար) էր նշանակել՝ Մուսմրուլ նա կանչված Մեհմեդ փաշայի փոխարեն (տե՛ս A. C. Тверитинова, նշված աշխ., էջ 69, 70)։

617 1602 թ. ապրիլին ջալալիները՝ Դևլի Հասանի գլխավորությամբ հարձակվում են օսմանյան հրամանատար Հասան փաշայի Բոխաթ գնացող զորքի վրա և ավարի մատնում այն։ Հասան փաշան, դուրս գալով Բոխաթից, մարտի է բռնվում ջալալիների հետ և պարտվում (տե՛ս Մ. Չուլումյան, Ջալալիների շարժումը..., էջ 157—158, A. C. Тверитинова, նշված աշխ., էջ 75—76)։

618 Ըստ Դրիդոր Դարանաղցու (Ժամանակագրութիւն, էջ 25—26) Կարա Յազըջին մնում է իր բնական մահով։ Թուրքական աղբյուրների (տե՛ս A. C. Тверитинова, նշված աշխ., էջ 74, Մ. Չուլալյան, Ջալալիների շարժումը..., էջ 156) համաձայն, Աբդալ Հալիմի (Կարա Յազըջու) գործունեությունը և տեղատարած ամբողջ շարժումը զրկում էր ապստամբներին վերջիններիս համարում սկսված ներքին հակասությունների հետևանքով 1601 թ. դեկտեմբերին Կարա Յազըջին սպանվեց (Լուրն այդ մասին Ստամբուլ է հասել, ըստ երևույթին, քիչ ուշ՝ 1602 թ. սկզբին)։ Այդ աղբյուրները չեն հաստատում սպանման վարկածը (Տե՛ս A. C. Тверитинова, նշված աշխ., էջ 74)։

619 Դևլի Հասանի պավճանությունից հետո օսմանյան կառավարությանը հաջողվեց հիմնականում ճնշել ջալալիների ապստամբությունը։ Ապստամբների փոքր խմբերից մի քանիսը՝ Բալթիի և Ղարաղաշի գլխավորությամբ որոշել էին շարունակել գործը, սակայն հենց նույն՝ 1603 թ. կանոնավոր զորքերը ցրեցին նրանց։

620 Երևանի բերդը պարսիկները գրավեցին 1604 թ. հունիսի 8-ին գրեթե յոթ ամիս պաշարումից հետո (Տե՛ս Լ. Դանիելյան, Առաքել Դավրիժեցու երկը..., էջ 73—75)։

621 Ըստ Կ. Է. Բոսվորթի, սուլթան Մուհամմադ Դ-ն (1595—1603) մահացել է և գահը անցել է Ահմադ Ա-ին (1603—1617) 1603 թ.։

622 Սինան-փաշա Ջղալօղլու առաջին արշավանքին է նվիրված Առաքել Դավրիժեցու երկի Դ գլուխը։

623 Այդ արշավանքի մասին հետինակը մանրամասն պատմում է իր երկի Զ գլխում։

624 Տե՛ս այս մասին երկի է գլ.։

625 Տե՛ս գլ. Ը։

626 Այս մասին մանրամասն պատմում է Դրիդոր Դարանաղցին (տե՛ս Ժամանակագրութիւն, էջ 101)։

627 Համմ. ՄԺ, 2, էջ 270։ Նասֆ փաշայի մասին մանրամասն տե՛ս Դրիդոր Դարանաղցի, Ժամանակագրութիւն, էջ 19, 101, 165։ Վերջինիս համաձայն, նա բռնությամբ հաջորդել է Մուրադ փաշային և այդ պատճառով «բարձաւ խաղաղութիւն յաշխարհէ և լցաւ ամենայն աշխարհն վայիւ և աղաղակաւ և դարձեալ փախստական եղեալ մեր ի յահէ նեղչացն և հազիւ անկար չըստամբօլս ի թվին ՌԿԱ (1612)» (էջ 19)։

628 «...Յամի 1612—ՌԿԱ,—գրում է Մ. Չամչյանը,—...առաքեաց (Շահ Աբբասը—Լ. Խ.) անտի դեսպան ի Կոստանդնուպոլիս առ սուլտան Ահմէտ վասն հաշտութեան ... Եւ այս հաշտութիւն տեւեաց ամս իրր վեց, յորում ժամանակի փոքր մի հանգստանալոյ աշխարհն. վասն որոյ բազումք ի հայոց, որք փախուցեալ էին անտի, դարձան վերստին և բնակութիւնս իւրեանց, մանաւանդ այն հայք, որք գնացեալ էին Կոստանդինուպոլիս և ի Յունաստան, զի ի նմին ամի նեղութիւն մեծագոյն պատուիրին Նասուֆ փաշայ Հրաման Լինի, զի ամենայն ակր հայոց ելցեն ի քաղաքէ անտի և ի սահմանաց նորա և գնասցին իւրաքանչիւր ի տեղիս իւրեանց. ամին իրի և բազումք յայնցանէ, որք ի Հայաստանի եկեալ էին, դարձան անդրէն ի նոյն» (Տե՛ս Պատմութիւն հայոց, հ. Գ, էջ 579)։ Թէպէտ այս դեպքերն նկատի ունի Առաքելը։ Այսինքն, ամն Հասան փաշայի և նրանի հետ Հայաստան են վերադառնում նաև զաքսից հայ պաղիականները։

629 Այս մասին տե՛ս Вахушти, стр. 53։ Նույնը մանրամասն նկարագրում է Առաքել Դավրիժեցին իր երկի ԺԱ գլխում։ Կ. Կոստիան (տե՛ս նշված աշխ., էջ 76, ծան. 19) նշում է, որ շահ Աբբասի առաջին արշավանքը Վրաստան տեղի է ունեցել 1614 թ.։

630 Տե՛ս գլ. ԺԷ։

631 Համմ. ՄԺ, 2, էջ 271, 278, ծան. 58։ Ուլաշը Սերասթիայի 300 դյուղերից մեկն է։ (Տե՛ս Ն. Սարգիսեան, Տեղագրութիւն ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 65)։

632 Տե՛ս «Գիրք պատմութեանց», էջ 355—356։

633 Համմ. ՄԺ, 1, էջ 161, 208, 2, էջ 268, 394, նաև Ռուսաստանի ժամանակագրությունը («Բանբեր Մատենադարանի», № 9, էջ 279)։ 1616 թ., երբ ռուսական պետության պատվիրակությունը Կոստանդնուպոլսում բանակցություններ էր վարում սուլթանի ներկայացուցիչների հետ, Դոնի կազակները անակնկալ հարձակվում են Քուրքերի վրա և Սև ծովում ոչնչացնում օսմանյան և այլ վաճառականների մի շարք նավեր։ Ավելին՝ նրանք «գրավեցին Տրապիզոն և Սինոպ քաղաքները, հրդեհեցին, շատ մարդ կոտորեցին և գերի առան»,—ասում է Ս. Մ. Սոլովյովը (տե՛ս „История России с древнейших времен", т. 5, М., 1961, стр. 63)։ Նույնն է նշում Վ. Բրոնևսկին իր „История донского во"ска" աշխատության մեջ (տե՛ս ч. I, М., 1834, стр. 106—107)։

634 Համմ. «Դիտան Հայոց պատմութեան», գ. ԺԱ, էջ 504, ՄԺ, 2, էջ 284։ Առաքելի երկի իէ գլ. նվիրված է Անդրեաս քահանայի նահատակությանը։

635 Խալիլ փաշան օսմանյան զորավարներից էր, 1627 թ. նշանակվեց վեզիր։ 1628 թ. մեծ զորքով գնաց ապստամբ Աբազա փաշայի դեմ, 3 ամիս պաշարողմնելուց հետո պարտության կրեց, որից հետո՝ 1629 թ. սուլթան Մուրադի հրամանով սպանվեց (Տե՛ս «Գիրք պատմութեանց», էջ 639, ՄԺ, 1, էջ 241)։

636 Տե՛ս ՄԺ, 2, էջ 283։

637 Վերը (այս նույն էջի XV տողում) Առաքել Դավրիժեցին գրում է «երկու ամիս», իսկ 584 էջում, անդրադառնալով նույն դեպքին, նա խոսում է երեք ամսվա մասին և բերում ավելի ստույգ տեղեկություններ։ 18-ամյա Ոսմանը գահ բարձրացավ ՌԿԷ թ. փետրվարի 16-ին, երկուշաբթի օրը։ Ըստ Բ. Ե. Թումանյանի կազմած տոմարի (տե՛ս «Տոմարի պատմություն», Երևան, 1972, էջ 98) հայկական ՌԿԷ թվականի նոր տարին (նավասարդի 1-ը) համընկել է նոր տոմարի հոկտեմբերի 18-ին, այսինքն Առաքելի 637 էջում նշած նոյեմբերի 18-ից հաշված մինչև փետրվարի 16-ը կազմում է 3 ամիս։

638 Սույն տեղեկությունը, գրեթե անփոփոխ, արտագրված է Ամիրաս Երզնկացու ժամանակագրությունից (ձեռ. 10200, էջ 387բ)։ Այստեղ պատմիչը մի փոքր շփոթել է. նույն այս պատմական իրողությունները վերը զրանցված են ՌԿԶ տարեթվի ներքո. («...սուլթան Մուստաֆայն նստաւ թագաւոր երկու ամիս՝ այլ և ի նոյն ամին փոխեցին զնա՝ և նստուցին զսուլթան Օսմանն թագաւոր»)։ Ըստ Կ. Է. Բոսվորթի Մուստաֆան գահակալել է 1617 թ., Ոսմանը՝ 1618 մինչև 1622, երբ գահը նորից անցնում է Մուստաֆայի ձեռքը։

639 Համմ. «Թվին ՌԿԷ ասաի նլաւ որպէս կնո թուր և մկ այլ պոչով աւտի գլուխն յարևնք և պոչն յարևմուտս կու հասանէր և ի սոյն ամի մահ անկաւ ձև տղա մեռս ի Կիմիշխանան Ա տարն և ի սոյն ամի մեռս սուլթան Ահմատն և նստաւ տղայրն սուլթան Մուստաֆան» (ձեռ. № 10200, թ. 387—387բ)։ Այս հատվածը Առաքելի մոտ մանանավանդ և վերապատմվածն տեսքով է շարադրված։

640 Այս արշավանքը Սիմեոն գպիր Լեհացին վերագրում է Հայոց ՌՀԱ թվականին (1622)։ (Տե՛ս «Ուղեգրութիւն, տարեգրութիւնք և յիշատակարանք Սիմէոն գպրի Լեհացւոյ», Վիեննա, 1936, էջ 356—368)։ Ինչպես հայտնի է, XVII դ. առաջին լեհ-թուրքական պատերազմը

(1620—1621 թթ.) ավարտվել է 1621 թ. հոկտեմբերի 9-ի վիճակագրով, իսկ հաշտության պայմանագիրը կնքվել է 1623 թ.։

641 Համմա. ձեռ. № 10200, էջ 387բ, նաև Առաքելի երկի ամանյան ընդօրինակներին նվիրված գլուխը (էջ 584)։ Դրիգոր Դարանաղցին հատուկ գլխում պատմում է այդ մասին (Տե՛ս «Ժամանակագրութիւն», էջ 205—210)։

642 Այս տեղեկությունը բացակայում է Ամիրաս Երզնկացու ժամանակագրության մեջ, բայց տակա է Սամուել Անեցու շարունակողի մոտ (տե՛ս էջ 177) և Հարությոն Խալիֆայանի ժամանակագրութեան մեջ (տե՛ս «Դիւան հայոց պատմութեան», գ. ժ, էջ 124), սակայն վերջինս նշում է հունվարի 12-ը։

643 Համմա. «Թվին ՌՀԱ (1622) նոյեմբեր կրկին սուլթան Մուստաֆան. կալաւ զաթոռ Բաղդատոյ ձի աւր կրկին մազուլ արին զսուլթան Մուստաֆան» (ձեռ. № 10200, էջ 387բ)։ Այս տեղեկությունը մի փոքր լեզվական վերամշակման է ենթարկել և աննշան ընդլայնել Առաքել Դավրիժեցին։

644 Այս երկու տեղեկությունը Ամիրաս Երզնկացին չունի։ Սակայն մանր ժամանակագրություններից մի քանիսը (տե՛ս Մժ, 1, էջ 145, 302, 2, էջ 428) պարունակում են այն։

«... Թվին ՌՀԱ (1622) դնաց ի Դանդահար և էառ պատերազմաւ զբերդն, և զհարեմ էառ նա։

Ի սոյն թվին գնաց Իմամղուլի խանն էառ զՀուրմուզ»,— գրում է Մարտիրոս ի Առաքելը (տե՛ս Մժ, 2, էջ 428)։

Քանի որ նշած ժամանակագրությունների փաստերը բազմիցս համընկնում են Առաքելի տեղեկությունների հետ, պետք է ենթադրել որ այս ժամանակագրությունների հեղինակներն էլ օգտվել են Առաքելի երկի 56-րդ գլխի համար աղբյուր հանդիսացած նյութերից։

645 Վերը (տե՛ս «Գիրք պատմութեանց», էջ 584) Առաքելը ասում է. «յօդոստոս ԼԱ յաւուր կիրակի»։

646 Արազա փաշայի և նրա ապստամբության մասին Առաքելը պատմում է. «Վասն Օսմանցւոց թագաւորաց իէ ո՞յր են մի կնի միոյ» խորագրված գլխում (տե՛ս էջ 573)։ Այդ մասին բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել Սիմեոն Լեհացու (էջ 368—370, 373) ու Դրիգոր Դարանաղցու մոտ (էջ 212—234) և մանր ժամանակագրություններում։

647 Տե՛ս այստեղ, ծան. 560, համմա. Գրիգոր Դարանաղցի, Ժամանակագրութիւն, էջ 210—212։

648 Սամուել Անեցու շարունակողը գրում է. «ՌՀԴ յօդոստոսի ի գիշեր Համփայ, որ կոչի Քասիկ՝ կին մի ծնաւ զմեռած զաւակ Բ. գլխեան, միոյն մարդոյ և միւսն հորթոյ և մարմինն բովանդակ հորթոյ. ոտքն, կճղակքն և ագին» (տե՛ս էջ 177)։ XVII դ. Անանուն մի ժամանակագրություն (տե՛ս Մժ, 2, էջ 283) հայտնում է. «Դարձեալ ՌՀԴ (1625) թուին յերկիրն Յամփայ, ի գիշեր, որ կոչի Քասիկ, եղև մեծ նշան, որ կին մի ծնաւ զաւակ մեռած. Բ (2) գլխեն. մէկ գլուխն մարդոյ և մէկ գլուխն հորթոյ և մարմինն անարատ հորթոյ, ոտքն, կճղակն և ագին ամէն հորթու նման, բայց միայն գլուխն մարդոյ»։ Առաքել Դավրիժեցու գրածներից երևում է, որ Ամիրաս Երզնկացին այս տեղեկությունը չունի։

649 Ամիրաս Երզնկացին գրում է. «Թվին ՌՀԴ ուտուան ԿՀ[ել զՏրապիզոնու վարի բերդն ոտաւ ապրիլի ԻԴ աւրն կիրակի, կնցաւ Դ աւր և ապա գնաց Մխ զայիին էր, ՌՇ ուտուս ջարդեցին» (ձեռ. № 10200, էջ 387բ, նաև Մժ, 2, էջ 269)։ Համմա. «Թվին ՌՀԴ (1625) ուտուգն ոտաւ զՏրապիզոն Մխ (240) զայիիններով, և ի սոյն ամի վրացի Մավրով ջարդեցաց» (Մժ, 2, էջ 358) և նույնը Երուսաղեմի ժամանակագրությունում (տե՛ս էջ 279)։

650 Համմա. Մժ, 2, էջ 269, Вахушти, նշված աշխ., էջ 56—57։ Հեղինակը նկատի ունի Մարտիրոսի ճակատամարտը (1625 թ. մարտի 25-ը)։ Տե՛ս Н. Бердзенишвили, Н. Джавахишвили, С. Джанашиа, История Грузии, т. I, Тбилиси, 1946, стр. 360—361.

651 Խոսքը Մարաբդայի ճակատամարտի մասին է (1625 թ. հուլիս ամսին)։ Սամուել Անեցու շարունակողը այս տեղեկությունները հաղորդում է ՌՀԶ (1627) տարեթվի ներքո (էջ 178)։

652 Տե՛ս այստեղ, ծան. 646։

653 Համմա. Մժ, 2, էջ 269։ Այս տեղեկությունը նույնությամբ կրկնում է Երուսաղեմի ժամանակագրությունը (էջ 279)։ Ինքն Առաքելը, մեր կարծիքով, ընդօրինակել է այն Ամիրաս Երզնկացու հետևյալ հատվածից. «...Եւ գարձեալ ի սոյն (ՌՀԴ—Խ. Խ.) ամի Հաֆիս Ահմատ փաշան վագիր եկաւ գնաց ի վիրս Պաղտատայ, Մի ասքարով, Բ ամիս նստաւ չկարաց առնուլ,

ասքարին կ'ըսեն ջարդեցու և կ'ըսեն փախստական դարձեալ եկան» (Ձեռ. № 10200, էջ 387բ—388ա), կրճատելով և ուղղելով որոշ բաներ։

654 Տե՛ս ՄԺ, 2, էջ 270։

655 Տե՛ս ՄԺ, 2, էջ 269։ Համմտ. Ամիրաս Երզնկացու համապատասխան հատվածի հետ։ Այստեղ էլ նկատելի է Առաքել Դավրիժեցու խմբագրական աշխատանքը։

656 Այդ մասին հեղինակը ամենայն մանրամասնությամբ պատմում է իր երկի ԻԴ գլխում։ Ամիրաս Երզնկացու ժամանակագրության մեջ Մովսես կաթողիկոսի մասին ոչինչ չկա։

657 Համմտ. «Թվին ՌՀԷ խոսրով փաշան վազիր եղև եկեալ ի վերա Յարդրումա ԺՆ յաւրն ՌՇԴ թաւի կռուց Դ դիհաց Մովրովն ի հետ փլուց դպարիսպն բոնից գԱպազան առաւ գնաց Ըստամպօլ» (Ձեռ. № 10200, էջ 388)։ Գրեթե նույնն է հայտնում Դրիզոր Կամախեցու խմբագրած ժամանակագրությունը (տե՛ս ՄԺ, 2, էջ 269), միայն ԺՆ-ի փոխ այստեղ ԺԷ թիվն է և «դիհաց»-ի փոխ «դիմաց», ինչպես և Առաքել Դավրիժեցու մոտ։

658 Վերը («Դիրք պատմութեանց», պլ. ԻԴ, էջ 308—309) Առաքելը նշում է շահ Աբբասի մահվան (1629 թ. հունվարի 7-ը) և շահ Սեֆիի գահ բարձրանալու (նույն թվի հունվարի 18-ը) օրերը։

659 Տե՛ս «Դիրք պատմութեանց», պլ. ԻԴ, էջ 312։

660 Մանրամասն այդ մասին տե՛ս Առաքելի երկի ԻԴ գլ., էջ 309—311։

661 Համմտ. Երուսաղեմի ժամանակագրության վկայության հետ («Բանբեր Մատենադարանի», № 9, էջ 279)։ Այս անցքերին է նվիրված Առաքելի երկի ԻԸ գլուխը։

662 Համմտ. «Թվին ՌՀՔ խոսրով փաշան վազիր գնաց ի վերա Պաղտատա մատւ դմի Համատան (?) մինչև ի Տարկագին երեց եկաւ գնաց ի Բոխարթ թագաւորն գդլուխն կարեց» (Ձեռ. № 10200, էջ 388ա)։ Պատմիչն ակնարկում է սերտար խոսրով փաշայի կառավարության դեմ ապստամբությունը։ Նրա դեմ ուղարկվեց կառավարական զորք՝ Մուրթազա փաշայի գլխավորությամբ։ Խոսրով փաշան պարտություն կրեց և 1632 թ. մարտի 11-ին գլխատվեց։ Տե՛ս նաև Առաքելի մոտ, էջ 573։

663 Համմտ. ՄԺ, 2, էջ 283 և Սամուէլ Անեցու շարունակողի մոտ (էջ 178)։

664 Համմտ. նույն տեղում։

665 Համմտ. Սամուէլ Անեցի, էջ 178։ Առաքել Դավրիժեցին այս մասին պատմում է իր երկի ԻԴ գլխում (էջ 312—313)։

666 Մ. Բրոսսեն (տե՛ս Livre d'Histoires..., էջ 585, ծան.) գրում է, որ «Հղկը» բառը սխալ է, պետք է լինի «հկկը»։ Սակայն թվում է, որ Առաքելը ճիշտ է, քանի որ խոսքը ոչ թե խոզը ուտելու մասին է, այլ մարդու «խոզ դառնալու» մասին։ Այս միտքը հաստատվում է նաև մանր ժամանակագրություններից մեկի վկայությունով. «Եւ գարձեալ ի ՌՁՐ (1633) թուին ի Բլլըրլաթ տաճիկ մի խոզ գարձաւ» (ՄԺ, 2, էջ 282)։

667 Տե՛ս երկի պլ. ԻԵ, էջ 315—316։ Համմտ. Սամուէլ Անեցի, էջ 178։

668 Տե՛ս ՄԺ, 2, էջ 270, 395։ Ավելի մանրամասն՝ Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, էջ 574 և Վ. Ա. Հակոբյանի վկայակոչած հիշատակարանը (ՄԺ, 2, էջ 400, ծան. 39)։

669 Ամիրաս Երզնկացին գրում է. «Թվին ՌՁԴ մոլսրնցան յոյնք Ը ազգ և տրտրին ծառադաւրիկ, իսկ հայոց ազգս, հագպաշն, ասորին և իւիթին պարս (?) կացին որ էս ճշմարիտս» (Ձեռ. № 10200, էջ 388ա)։ Համմտ. ՄԺ, 2, 395 և Սամուել Անեցու շարունակողի վկայության հետ (էջ 178)։ Առաքելը, ընդօրինակելով Ամիրաս Երզնկացու վերը բերած տեղեկությունը, մի փոքր խմբագրել է այն, բայց որում, «պարս կացին որ էր ճշմարիտ» արտահայտությունը փոխարինել է՝ «ուղիղ կացին և ճշմարիտ» արտահայտությունով։ Համմտ. «Դիրք պատմութեանց», էջ 574։

670 Տե՛ս ՄԺ, 2, էջ 270, 395։ Վերը (էջ 574) Առաքելը գրում է. «Թուին ՌՁԴ սուլթան Մուրատն գնաց ի վերայ Լհհաց ի պատերազմ և Լհհացիք հնազանդեալ նմա գարձուցին յինքեանց»։ Ավելի մանրամասն այս արշավանքի մասին պատմում է Սիմեոն Լհհացին (տե՛ս նշված աշխ., էջ 375—376)։ Ամիրաս Երզնկացու ժամանակագրությունը այս տեղեկությունը չունի։

671 Համմտ. ՄԺ, 2, էջ 270, 395։ Մանրամասն տե՛ս Դրիզոր Դաբռանցի, ժամանակագրութիւն, էջ 227—234։

672 Այս վկայությանը Ամիրաս Երզնկացու մոտ համապատասխանում է հետևյալ հատվածը. «Թվին ՌՁԴ սուլթան Մուրատն երկի, լաւ պերճն յուլիս ամսոյն Բ օրն աւօ, անցեալ գնաց ի Թավրէզ երեց աւիրից նաւաւ Դ օր ի յետ գարձօ գնաց ի յԱսամպօլ ի Ամիրկու-

նային արդան հետ ձմռանից. վազիրն մնաց ի Յամիր, դարձավ շահն Հրեկ ի նոյն ձմեռն էառ գերեանս» (ձեռ. № 10200, էջ 383ա)։

Առաքել Դավրիժեցին այս դեպքերին անդրադառնում է իբ (էջ 316—317) և «Վասն Օսմանցւոց Բազատրաց իւ ա՛յլ ևս մի գիրի միոյ» խորագրված (էջ 574) գլուխներում ևս։ Բոլոր դեպքերում պատմիչի տվյալները չեն հակասում միմյանց. ՌԶԴ (1635) թվի մարտին դուրս գալով օսմանյան զորքերը (700.000 հեծյալ) ոգոստոսին հասան Երևան, պաշարեցին բերդը և ինն օրից հետո գրավեցին այն։ (Համմ. Մժ, 2, էջ 395, 1, էջ 242)։ Սակայն այդ տեղեկությունների և Ամիրաս Երզնկացու ժամանակագրության վկայության մեջ կա անհամապատասխանություն։ Ամիրասը նշում է հուլիս ամիսը։ Թվում է, որ այդ է պատճառը, որ Առաքել Դավրիժեցին խմբագրում է Ամիրասի տվյալները։ Տարբեր աղբյուրներում անհամապատասխանության կա նաև Երևանի գրավման տարեթվի վերաբերյալ։ (Այդ մասին տե՛ս Վ. Ա. Հակոբյանի հոդվածը—Մժ, 1, էջ 196 և 199, ծան. 36)։

673 Երրորդ հրատարակության «Զէլ» փոշան—«զէլէդ» (զելիպ) փոշան է։

674 Համմ. «Թվին ՌԶԴ (1635) գՀուսէն էֆէնեին Մուֆաին սպան Բազաւրն»։

Թվին ՌԶԴ (1635) գԻամամ Օղլին (!) բերեալ Ստամպօլ սպան Բազաւրն և Զէլէդ փոշայն ի նոյն ամն» (Մժ, 2, էջ 270)։

«Թվին ՌԶԴ (1635) սպան գՅուսէն աֆանդին, գՄանօղլին և գէլէդ փոշայն» (նույն տեղում, էջ 358)։ «Իսկ ի ՌԶԴ (1635) գՀուսէն էֆէնեի Մուֆթին, և գՄանօղլին և զէլէդ փոշայն սպան Բազաւրն» (նույն տեղում, էջ 395)։ Կասկած չկա, որ այս բոլոր վկայությունները նույն դեպքերի մասին են խոսում։ Նշված չալալիների և նրանց սպանման մասին պատմում է Դրիգոր Դարանաղցին (տե՛ս «Ժամանակագրութիւն», էջ 560—567)։

675 Վ. Ա. Հակոբյանի կարծիքով «ԺԴ» պետք է ուղղել «ԺԴ», քանի որ 1635 թ. մայիսի 13-ն է համընկել չորեքշաբթի օրվա հետ (տե՛ս Մժ, 2, էջ 278, ծան. 59)։

676 Համմ. Մժ, 1, էջ 340 և Վ. Հակոբյանի նշած այլ աղբյուրները (տե՛ս Մժ, 1, էջ 348, ծան. 48, 2, էջ 270)։ Հայերի այդ արտաքսմանը մի փոքր կլուսի է նվիրել Սիմեոն Լեհացին (տե՛ս նշված աշխ., էջ 378—379)։

677 Համմ. «ի սոյն ամի (ՌԶԴ—Լ. Ս.) Հղև լիառմ լհղակն Ըէ զաշ» (ձեռ. № 10200, էջ 388ա)։

678 Համմ. Մժ, 1, էջ 196, 2, էջ 395, 523։ Առաքելը մանրամասն նկարագրում է այս դեպքերը («Գիրք պատմութեանց», էջ 317, 575)։

679 Այսպես (ռուսերեն հրատարակության մեջ՝ Аракел Даврижеци, Книга историй էջ 495, ծան.) մենք ենթադրել ենք «փարախ» փխ «փագախ»-ի, սակայն իրականում պետք է լինի «փագախ» («փարախ»-ի բարբառային ձևը), որը նույնպես նշանակում է «փարախ»։*

680 Համմ. Ամիրաս Երզնկացու վկայության հետ. «Թուական ՌԶ սուլթան Մուրատն դնաց ի վերայ Պաղտատայ էառ զՊաղտատ ի ե դեկտեմբերի է (?) և ինքն դարձավ հրեկ ի յամիր» (ձեռ. № 10200, էջ 388բ)։ Սամուել Անեցու շարունակողը գրում է. «ՌԶ սուլտան Մուրատն էառ զՊաղտատ դեկտեմբերի ԺԴ օրն հրկուշաբաթ» (էջ 178)։ Վարդան Բաղիշեցու ժամանակագրությունը հաղորդում է. «ի ՌԶ (1638) թուին ապրիլ 28 նոյն սուլթան Մուրատն դնաց ի վերայ Բաղդատու ի պատերազմ և հետս ի Բաղդատ ի նոյն նոյեմբեր 26, և ծնեցաւ գպարիսպն 38 օր մեծաւ գօրութեամբ և էառ զքաղաքն դեկտեմբերի 14 օր և անհամար մարդիկ մեռան» (Մժ, 2, էջ 395)։ Մյուս աղբյուրները բառացիորեն կամ փոքր շեղումներով նույնն են հաղորդում (Մժ, 2, էջ 270, 358, 1, էջ 302)։ Առաքելն այստեղ կրկնում է իր վկայությունը (տե՛ս այստեղ, էջ 575)։ Միօրինակ չեն նաև թուրքական աղբյուրները (տե՛ս J. de Hammer, Histoire de l'Empire Ottoman, t. IX, Paris, 1837, էջ 337, ծան. 1)։ Համմերը պնդում է, որ Բաղդադը օսմանյան զորքերը գրավել են 1638 թ. դեկտեմբերի 25-ին (հիջրեի 1048 թ., շաբան ամսվա 18-ին)՝ քառասուն օր պաշարելուց հետո (նույն տեղում, էջ 337)։

Այսպիսով, Ամիրաս Երզնկացու, թեև ոչ շատ հստակ («իե» թվի վրա բնագրում պատիվ չկա, կա այդ նշանը «է» թվի վրա), տեղեկությունները համապատասխանում են Համմերի տվյալներին։

681 Տե՛ս Առաքել Դավրիժեցի, գլ. իե, էջ 318—321։

682 Ամիրաս Երզնկացու մոտ այս տեղեկությունը չափազանց հակիրճ է և չի համապատասխանում Առաքելի տվյալներին։ Պատմիչը այս փաստը նշում է վերը (տե՛ս էջ 575) և այստեղ կրկնում գրեթե նույնը։ Համմ. Մժ, 2, էջ 395։

683 Համմ. եւկում էջ 576—577, Մժ, 2, էջ 395։

684 Այդ մասին Առաքելը հատուկ պատմում է (լե) գլխում, էջ 481—485։

685 Այս տեղեկություններն ընդօրինակված են Ամիրաս Երզնկացու ժամանակագրությունից։ Ամիրասը գրում է. «Իվին ՌՂ ուռուն նկաւ ըզազախ առօ շատ մարդ ջարդեց։ Իվին ՌՂ դարձեալ բուրքն առաւ ըզազախ» (ձեռ. № 10200, էջ 388բ)։ Առաքել Դավրիժեցին երկու տեղեկությունները անջատում է իրարից ու ներ է մուծում ՌՂԱ իվի տակ պարսից շահերին վերաբերող մի տեղեկություն և մի փոքր խմբագրում Ամիրասի նախատապությունը։

686 Այստեղ, երբորդ հրատարակությունում՝ «Բուին ՌՂԲ», իսկ առաջին հրատարակությունում դրան նախորդում է հետևյալ նախադասությունը. «Դարձեալ ի սոյն Բուին ևկն մարախ երկիրն Արարատոյ» (էջ 615)։ Համմ. Սամուէլ Անեցու շարունակողի մոտ ՌՂԱ իվի տեղեկության հետ (էջ 179)։

687 Համմ. «Իվն ՌՂԴ սուլթան Իսրահիմն վտիր գրկեցին (!) ի Մալթայու վերա գնացին առին զկիրիմ» (ձեռ. № 10200, էջ 388բ)։ Առաքել Դավրիժեցին այս մասին գրելիս նույն բառերով գրում է նաև վերը (էջ 577)։

688 Տե՛ս՝ «Գիրք պատմութիւնց», պլ. Լէ, էջ 489—494։

689 Համմ. Ամիրասի վկայության հետ. «Իվն ՌՂ մազալ արին զսուլթան Իսրահիմն և յետոյ զեղբայր սպանին և գրին ի յաթոռ զսուլթան Մահամմատն։ Իվն ՌՂ սուլթան Մահամատն նստաւ յաթոռս» (ձեռ. № 10200, էջ 388բ)։ Համմ. նաև Սամուէլ Անեցի, էջ 179։ Մանրամասնություններն Առաքելը հայտնում է իր երկի նախորդ մասերում (էջ 577)։

690 Խոսքը Աֆղանստանի մասին է։

691 Այս տեղեկությունը բացակայում է Ամիրասի մոտ։ Մանր ժամանակագրությունները բազմիցս հիշատակում են Շահ Աբբաս Ա-ի օրոք 1622 թ. Ղանդահարի գրավումը, մինչդեռ 1648 թ. գրավման մասին խոսում է միայն Մարտիրոս դի Առաքելը (տե՛ս Մժ, 2, էջ 429)։

692 Համաձայն վրացական որոշ աղբյուրների (տե՛ս Կ. Կուցիա, Առաքել Դավրիժեցու տեղեկությունները Վրաստանի մասին, էջ 76—77, ծան. 24) Բեյմուրազի որդի՝ թագաժառանգ Դավիթը զոհվել է Ուլթիսի հակաոամարտում՝ Բեյմուրազի և Քարթլիի թագավոր Ռոստոմի (1632—1658) մեջ եղած պատերազմի ժամանակ։ Սակայն մի այլ աղբյուր՝ վախուշտի Օրբելիանիի «Վրաց թագավորության պատմությունը» պարզություն է մտցնում այս հարցում. «Իսկ Մարագայի մոտ,—գրում է վախուշտին,—զբղբլրաշներն սպանեցին Բեյմուրազ թագավորի որդի Դավիթին և նրա գլուխը մատուցեցին Ռոստոմին՝ Քրիստոսի 1648 թ., վրաց 336, թաթարաց՝ 1058... Իսկ Ռոստոմը մտավ Կախեթ, գրավեց այն, և Դավթի գլուխն ուղարկեց շահին, ծանուցելով նրան ամենը» (նշված աշխ., էջ 67)։

Այսպիսով, Առաքելի տվյալները համապատասխանում են պատմական իրողություններին։ Ամիրաս Երզնկացին այս տեղեկությունը չի հաղորդում։

693 Տե՛ս Առաքել Դավրիժեցու երկի Իե գ., էջ 334—338։ Համմ. «Իվն ՌՃ Փիլիպպոս կաթողիկոսն (!) ևկաւ գնաց ի յերուսաղէմ դարձաւ յերուսաղէմ ևկեալ գնաց ի յՍամաստիա նստաւ բազում շատ հարկեցին և յետոյ ևկեալ գնաց ի յէջմիածին» (Ամիրաս Երզնկացու ժամանակագրությունը, ձեռ. № 10200, էջ 388բ)։

694 Ամիրաս Երզնկացին ոչինչ չի հաղորդում այս դեպքերի մասին, որոնք մանրամասն նկարագրված են Առաքել Դավրիժեցու երկի Ե գլխում, էջ 385—387։

695 Խոսքը Մեծ Մողոլների դինաստիայի կայսեր Նուր ադ-դին Ջիհանգիրի (1605—1627) որդիներից մեկի՝ Շիհար ադ-դին Շահ-Ջահան Ա-ի (1626—1657) մասին է։

696 Այսինքն՝ 700.000 (տե՛ս Մժ, 2, էջ 429)։

697 Խոսքը Շահ-Ջահանի որդի Աուրանգզիբի մասին է, որը նշանակվել էր Դեկանի սուբադար (կուսակալ), ապա, 1658 թ. Շահ Ջահանին ձերբակալելուց հետո, գրաված փաթշահ։ Այստեղ բնագրում ևվրզանկել է։ Բայց քանի որ ճիշտ ձևը Աուրանգզիբ է և Մարտիրոս դի Առաքելի ժամանակագրության մեջ (տե՛ս Մժ, 2, էջ 429) պահպանվել է Օվրանգզիբ ձևը, հնարավոր դատնք ուղղել առաջին տառը՝ չփոխելով անվան հնդկական նախընտրած ձևը։

698 Համմ. Մժ, 2, էջ 429։

699 Խոր (պարսկ.)—բարդ բառերի մեջ երկրորդ տարրը «ուտող», «լափող», «խմող» նշանակությամբ։ Հալալ—խոր (պարսկ.) բանակում ամենածանր և սև աշխատանք կատարող, դիակներ հավաքող և այդ աշխատանքի չնորհիվ տանկրներով «հալալ» անվող մարդիկ։ XVIII դ. հնդկական Մարտիրոս դի Առաքելը իր արդեն մեր կողմից վկայակոչած ժամանակագրության մեջ նույն այս դեպքերը նկարագրելիս, գրում է. «...ԻՌ (20.000) մարդ սպահի ջարթվեցան, ևող զօրավիրապարի մարդն և բռնակիրոն...» (Մժ, Ը, էջ 429)։

700 Տե՛ս Առաքել Դավրիժեցի, պլ. Իե, էջ 338։

701 1635 թ. Մեծ Մողոլի հետևորդները հրթռող անգամ փորձելին պարսիկներից հա վերցնել Վանդահարը։ Այս անգամ հնդկական զորքերի հրամանատարն էր Դարա Շիկոհը։

702 Համմ. Մժ, 2, էջ 429։

703 Տե՛ս պլ. Իե, էջ 338։

704 Համմ. «Իվն ՌճԴ ասպատատի Բ աբեն Դ շաբթի արեգակ խաւարեցաւ և եղև Ե աւուր լուսնի պես. ի կէս աւուրն որ հրեշեան ասաւղքն» (Ձեռ. № 10200, էջ 388բ)։

705 Տե՛ս պլ. Իե, էջ 340—341։ Համմ. Երուսաղեմի ժամանակագրություն, էջ 280—281։

706 Տե՛ս նույն տեղում, էջ 345։ Համմ. Երուսաղեմի ժամանակագրության, էջ 280—281։

707 Այս իրադարձությունների մանրամասն նկարագրությունը տալիս է Դավիթ Բաղիշեցին իր ժամանակագրության մեջ (տե՛ս Մժ, 2, էջ 361)։ Սակայն դնգրերը Դավիթ Բաղիշեցին տեղադրում է ՌճՁ (1657) թվականի տակ։ Նույն երկրամասի մի այլ ժամանակագիր՝ Վարդան Բաղիշեցին, ավելի հանգամանորեն պատմելով վանի Մալաք-Մահմադ փաշայի և Բաղեշի ամիրա Ավգալ բեկի մեջ եղած պայքարի մասին, թվագրում է այն ՌճԴ (1654) թվականով (տե՛ս Մժ, 1, էջ 395—397)։

708 Այդ մասին Առաքելը մանրամասն պատմում է իր երկի ԼԴ գլխում (էջ 442—455)։ Համմ. Երուսաղեմի ժամանակագրության, էջ 281։

709 Տե՛ս «Գիրք պատմութեանց», պլ. ԻՀ, էջ 552—556։ Համմ. Սամուել Անեցու շարունակողի հետ (էջ 179)։ Համմ. Երուսաղեմի ժամանակագրություն, էջ 281։

710 Տե՛ս «Գիրք պատմութեանց», պլ. ԼԴ, էջ 458—480։

711 Խոսքը Մկրտիչի իշխան Լևան Բ Դադիանիի (1611—1657) մասին է (տե՛ս Կ. Կուցիա, նշված աշխ., էջ 77, պլ. 7, ծան. 25)։

712 Սիմեոն Ջուղայեցու կյանքին ու գործունեությանը Առաքելը բավական տեղ է հատկացրել իր երկի ԻԲ գլխում (էջ 402—407)։ Հայտնելով նրա մահվան մասին, Առաքելը գրում է. «Եւ եղև վախճան սորա ի մերում թուականիս ՌճՁ ի փետրվար ամսոյ քսան և ևթին, յաղուժագից պատճոյն» (էջ 407)։ Փետրվարի 27-ն է նշում և Երուսաղեմի ժամանակագրությունը։ Երրորդ հրատարակությունը, կրկնելով ձեռագրերից մեկի (Բ) վրիպակը, սխալմամբ ավել է փետրվարի 25։

713 Խոսքը Արագվիի էրիսթավության մասին է (տե՛ս Կ. Կուցիա, նշված աշխ., էջ 77, պլ. 7, ծան. 26)։

714 Այս Ջաալը գլխավորել էր Կախեթի 1658 թ. ապստամբությունը։ Համմ. Вахушти, նշված աշխ., էջ 68—69։

715 Խոսքը Իմերիի թագավոր Բեյմուրազի դաշնակից Ալեքսանդր Գ-ի (1639—1661) մասին է։

716 1661 թ. Բագրատը թագավորել է վեց ամիս միայն։

717 Իրոք, Բագրատին կուրացրել էր իր խորթ մայրը՝ Ալեքսանդր Գ-ի երկրորդ կինը, Բեյմուրազ Ա-ի դուստր Դարեջանը (տե՛ս Կ. Կուցիա, նշված աշխ., էջ 77, պլ. 7, ծան. 29)։

718 Այս միջադեպը նկարագրում է նաև Սամուել Անեցու շարունակողը (տե՛ս էջ 180)։ Հետաքրքրական է, որ Առաքել Դավրիժեցու բնագիրը բոլոր ձեռագրերում ջրում խեղդվածներին և զոհվածներին թվարկելիս նշում է. «վարդապետն և արեզայն և մեկ աշխարհական»։ Այս սխալը ժամանակին նկատել և ուղղել է Ոսկան Երևանցին, որի հրատարակության մեջ ասված է «երկու աշխարհական», տես. «մեկ»-ի։

719 Տե՛ս «Գիրք պատմութեանց», պլ. Ծ, էջ 561—565։

720 Ղզլբաշները վաղուց ծրագրել էին Կախեթում բուրքմեն քոչվոր ցեղեր բնակեցնել։ 1656 թ. այդ ծրագրի իրականացման մի փորձ կատարվեց, սակայն Արագվիի Ջաալ էրիսթավի գլխավորությամբ 1659 թ. ապստամբած տեղի բնակչությունը թույլ չտվեց պարսիկներին իրագործել որոշումը։

721 Շահ Աբբաս Բ (1642—1666)։

722 Խոսքը Ջաալի մասին է։

723 Այս դնգրերը վրաց աղբյուրները թվագրում են 1660 թ. մայիսի 9-րդ օրով (տե՛ս Вахушти, նշված աշխ., էջ 69)։

724 Շահնավազ խանը վրաց Վախթանգ Ե (1658—1675) թագավորի մուսուլմանական անունն է։

725 Տե՛ս Վախուշտի Բագրատիոնիի նշված աշխատության 157—158 էջերը։

726 Ըստ Վախուշտի Բագրատիոնիի, Բեյմուրազը Պարսկաստան ժամանելով, 1663 թ.

կուսակրոնության ընդունից և մահացավ նույն ամռանը։

727 Վախուշտի Բագրատիոնին գրում է. «...Այդպես եղած կախերը խնդրեցին շահին թույլ տալ Բեյմուրադի գերակը առնել Կախեթի, եւ քանի որ Վախթանգ Բագավորն էլ էր խնդրել այդ մասին, շահը թույլ տվեց Բեյմուրադի անչյունը տեղափոխեցին Վրաստան և հանձնեցին Ալավերդիում՝ 1664 թ. (էջ 158)։

728 Բեյմուրադի թոռը՝ Դավիթ Բագավորի որդի Նիկոլոզն (կամ Հերակլն) էր (մուսուլմանական անունը՝ Նազար Ալի-խան)։ 1652 թ. նա գտնվում էր Մոսկովյան պետության արքունիքում, Ալեքսեյ Միխայլովիչ Բագավորի մոտ, իսկ հետագայում վերադարձավ հայրենիք և դարձավ Կախեթի Բագավոր՝ Հերակլ Ա. (1688—1703) անունով։

729 ՌՃԺԴ տարեթվի ներքո Սրուանձտեի ժամանակագրության միակ գրանցումը հայտնում է. «Աստանօր ղկայ տեին վիպասանութիւնք Առաքել վարդապետին Բաւրկացւոյ, որ ունի զպատմութիւն վասպուր ամաց» («Բանբեր Մատենադարանի», № 9, էջ 281)։

730 Ամիրաս Երզնկացու ժամանակագրությունը հակիրճ հաղորդում է. «Թվին ՌՃԺԴ պոչով ասեմ ելաւ» (Համմ. Սամուել Անեցու շարունակողի՝ «ՌՃԺԴ. Սրևեցաւ ասող մի գիսաւոր» վկայության հետ—էջ 180)։

731 Այս հաղորդումով ավարտվում են Առաքել Դավրիժեցու Պատմության պարունակող որոշ ձեռագրեր (Վիեննայի ձեռագիրը և Ոսկանի 1669 թ. հրատարակությունը)։

732 Սույն հատվածով ավարտվում է Բ ձեռագիրը (Մատենադարան, ձեռ. № 1772, 1666 թ.)։

733 Վերջին պարբերությունը դուրս է գալիս Առաքել Դավրիժեցու երկի ժամանակագրական շրջանակներից։ Այժմ մեզ հայտնի ձեռագրերից այն պարունակում է միայն Գ օրինակը (ձեռ. № 1773, 1663 թ.)։ Բայց քանի որ և ձեռագրում (№ 7296) կա ՌՃԺԵ թվին վերաբերող մի հավելյալ հատված (տե՛ս երկում էջ 585), որն առկա է և օրինակից բացի նաև Գ ձեռագրում և պատմում է նույն այս դեպքերի մասին, բացառված չէ, որ և ձեռագիրը ժամանակին ունեցել է նշված հատվածը (և ձեռագիրը վերջից թերի է, բնագիրը վերջանում է Ծե գլ. կեսից, 613 էջում)։ Հարկ է նշել, որ լրացուցիչ հատվածներն երկու ձեռագրերում էլ գրված են բուն տեքստի ձեռագծերից միանգամայն տարբերվող ձեռագծերով։

734 Այս գլուխը բացակայում է Առաքել Դավրիժեցու Պատմության Բ և Դ ձեռագրերից, չկա Ոսկանի տպագրության և ֆրանսերեն թարգմանության մեջ, չի պահպանվել (կամ չի եղել) և ձեռագրում։ 1918 թ. Ս. Հ. Քուշուկ Բռանննսովի ռուսերեն թարգմանությամբ այս գլուխը, ԼԴ գլխի հետ միասին, լույս տեսավ «Еврейская старина» ամսագրում։ Այդ իսկ պատճառով, ռուսերեն թարգմանությունը հրատարակելիս, խմբագրությունը՝ համարելով այս գլխի վերաբերյալ Առաքել Դավրիժեցու հաղորդությունը վիճելի, հարմար գտավ չհրատարակել «Պատմութիւն անցից հրէից ազգին» գլուխը։ Այն, ռուսերեն թարգմանությամբ և ծանոթագրություններով, տե՛ս „Кавказ и Византия", вып. 3, Ереван, 1982, стр. 216—231.

Նշված գլուխը առկա է միայն Գ ձեռագրում։ Նրա գրությունը, տարբերվելով ամբողջ բնագրի գրությունից, միաժամանակ նմանվում է նախորդ գլխի վերջին պարբերության ձեռագրին։ Ժամանակին կարծիք է հայտնվել, որ այս գլուխը, նախորդ գլխի վերջին հատվածի և ՃԲ գլխի վերջին պարբերության հետ միասին, ավելացված է բանգրում հեղինակի՝ Առաքել Դավրիժեցու ձեռքով։ Հաշվի առնելով այս փաստը և նաև այն հանգամանքը, որ վերջին երկու (երկրորդ և երրորդ) հրատարակությունները պարունակել են այս նյութը, ստեղծելով ինչ-որ ավանդույթ և, վերջապես, գիտակցելով, որ XVII դ. երկրորդ կեսում լայն տարածում և հռչակ ստացած մեսիական շարժումներից մեկի՝ Սաբբաթայ-Ցևի գլխավորած և նրա անունը կրող շարժման արտացոլումը հայ ժամանակակից պատմագրության մեջ չի կարող հետաքրքրություն չներկայացնել ուսումնասիրողների համար, նպատակահարմար դատեք այս գլուխը թողնել նոր հրատարակության մեջ։ Սաբբաթայի անվան հետ կապված մեսիական շարժմանն անդրադարձել է իր ժամանակագրության մեջ Իսահակ վարդապետը (XVIII դ.). «Ի թուին կինարարին մերոյ Քրիստոսի աստուծոյ ՈՒԿԷ (1667) ամին և ի Հայոց թվականին ՌՃԺԵ սրևեցաւ սուտ Քրիստոսն ի Զմիւռին և ապա դարձաւ օրէնս Մահմատի» (ՄԺ, 1, էջ 311)։

735 Թևրևս սխալ հաշվումների հետևանք է այս տարեթիվը։ Իրականում Հայկական ՌՃԺԵ=1666 թ.։ Այս սխալը նկատել է ժամանակին Քուշուկ-Բռանննսովը (տե՛ս «Еврейская старина», т. X, Петроград, 1918, стр. 76, прим. 4)։

736 Սաբբաթայ Ցևին ծնվել է 1626 թ. Հրեական Արա ամսվա 9-ին Իզմիր (Զմյուռնա) քաղաքում, չքավոր մի ընտանիքում։ Տարրական կրթությունը ստացել է տեղի խոխամի՝

ականավոր քամուդպրա Իսրիֆ Իսկաֆայի մոտ (տե՛ս «Еврейская энциклопедия», т. XIII, стр. *781—797)։*

737 Հեղինակն, ըստ երևույթին, նկատի ունի ջուրը, որ հրեաները գործածում էին ջրբաժանության հանդիսավոր արարողության ժամանակ։ Ջրբաժանության արարողությունը կատարվում էր մեծ հանդիսավորությամբ և ուղեկցվում ժողովրդական տոնով, որը կոչվում էր «ջրբաժանության ուրախ տոն» («веселый праздник водочерпания»)։

